Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՄԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ

ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ. ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ freebooks@rambler.ru



Ф.М. ДОСТОЕВСКИЙ

Преступление и наказание

ПЕРЕВОД
АМБАРЦУМА МАЗМАНЯНА

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН – 1980

ՀԱՄԱՍՏԵՂԻՆԿԻ

ՊՈՒՇԿԻՆ ԵՎ ԱՆՏԻԿԱ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԷՋԻՑ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ— 1980

Ինդեքս ԳՄԴ 84. Ռ 1

Դոստոևսկի Ֆ.

Դ 798 Ոճիր և պատիժ։ Վեպ (թարգմ. Հ. Մազմանյան)— Եր.։ Սովետ. գրող. 1980.— 704 էջ.— (Ռուս դասականների գրադարան).

«Ոճիր և պատիժը» Ֆ. Մ. Դոստոևսկու ամենանշանավոր ստեղծագործություններից է. գրողի մտահղացումները, նրան հուզող պրոբլեմները հանրագումարի բերող վեպ։

Հայերեն լեզվով I հրատարակությունը լույս է ընծայել «Հայպետհրատ» հրատարակչությունը, 1962 թ.։

4702010010(89)137
Դ ——————— 80 «Տ»
705 (01)80

Բ 1
ԳՄԴ 84. Ռ 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1980

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ի

Հուլիսի սկզբին, չափազանց շոգ ժամանակ, իրիկնագնամին մի երիտասարդ դուրս եկավ իր խցիկից, որ վարձել էր Ս... նրանցքում ապրողներից, փողոցի կողմում, ու դանդաղ, ասես տատանվելով, գնաց դեպի Կ... կամուրջը։

Նա բարեհաջող խուսափեց սանդուղքի վրա իր տանտիրուհուն հանդիպելուց։ Նրա խցիկը գտնվում էր հինգհարկանի մի բարձր տան հենց կտուրի տակ և ավելի շուտ նրմանվում էր պահարանի, քան՝ բնակարանի։ Իսկ բնակարանի տիրուհին, որից նա վարձել էր այդ խցիկը, ճաշով և սպասուհու ծառայություններով հանդերձ, ապրում էր մի սանդուղքով ներքև, առանձին բնակարանում, ու ամեն անգամ փողոց դուրս գալիս երիտասարդը անպայման պետք է անցներ տանտիրուհու խոհանոցի կողքից, որի դուռը համարյա միշտ բոլորովին բաց էր դեպի սանդուղքը։ Ու ամեն անգամ այդտեղից անցնելիս երիտասարդը ինչ-որ հիվանդագին ու երկչոտ զգացում էր ապրում, որից ամաչում էր և որից կնճռոտում էր դեմքը։ Նա պարտք էր տանտիրուհուն և վախենում էր նրան հանդիպելուց։

Սակայն նա ոչ վախկոտ էր, ոչ էլ ընկճված, նույնիսկ բոլորովին հակառակը. բայց որոշ ժամանակից սկսած նա ջղայնոտ ու լարված վիճակում էր, որը մելամաղձության էր նմանվում։ Նա այնքան էր ինքնամփոփվել ու առանձնացել բոլորից, որ վախենում էր ոչ միայն տանտիրուհուն հանդիպելուց, այլև ամեն տեսակ հանդիպումից։ Աղքատությունը խեղդել էր նրան. բայց նույնիսկ ճնշված վիճակն էլ վերջին

ժամանակներում այլևս չէր նեղում նրան։ Նա բոլորովին չէր զբաղվում և չէր ուզում զբաղվել իր առօրյա գործերով։ Էապես նա ոչ մի տանտիրուհուց էլ չէր վախենում, ինչ էլ որ սա ձեռնարկեր նրա դեմ։ Բայց կանգ առնել սանդուղքի վրա, լսել ամեն տեսակ բարբաջանք այդ ամբողջ առօրյա անհեթեթության մասին, որի հետ նա ամենևին էլ գլուխ չուներ, լսել վճարի վերաբերյալ այդ բոլոր ձանձրալի պահանջները, սպառնալիքները, գանգատները, ու դրա հետ մեկտեղ խույս տալ, ներողություն խնդրել, ստել. ոչ, ավելի լավ է կատվի նման մի կերպ գաղտագողի իջնել սանդուղքից ու ծլկել, որպեսզի ոչ ոք չտեսնի։

Սակայն այս անգամ, փողոց դուրս գալուց հետո, իր պարտատիրուհուն հանդիպելու վախը նույնիսկ իրեն էլ ապշեցրեց։

«Ի՞նչ գործ եմ մտքիս դրել ու միևնույն ժամանակ ինչպիսի՞ դատարկ բաներից եմ վախենում, մտածեց նա տարօրինակ ժպիտով։ Հըմ... այո... ամեն ինչ մարդու ձեռքումն է ու ամեն ինչ նա աչքաթող է անում հենց միայն վախկոտության պատճառով... այդ արդեն աքսիոմա է... հետաքրքիր է, թե մարդիկ ինչի՞ց են ամենից շատ վախենում. նրանք ամենից շատ վախենում են նոր քայլից, սեփական նոր խոսքից... Բայց ես չափազանց շատ եմ շաղակրատում։ Ոչինչ չեմ անում հենց այն պատճառով, որ շաղակրատում եմ։ Սակայն, թերևս նաև այսպես է, շաղակրատում եմ այն պատճառով, որ ոչինչ չեմ անում։ Այս վերջին ամսում է, որ ես սովորեցի շաղակրատել՝ ամբողջ օրերով անկյունումս պառկած ու մտածելով... Ինչի մասին ասես։ Հըմ, այժմ ո՞ւր և ինչո՞ւ եմ գնում։ Մի՞թե ես ընդունակ եմ այդ բանին։ Մի՞թե դա լուրջ բան է։ Բոլորովին լուրջ չէ։ Այնպես, էլի, երևակայությամբ եմ սփոփվում. մտքի խաղ է. այո, հավանորեն մտքի խաղ է»։

Փողոցում սարսափելի շոգ էր, ծանր օդ, հրմշտոց, ամենուրեք կիր, փայտամածներ, աղյուս, փոշի և այն առանձնահատուկ ամառային գարշահոտությունը, որ այնքան ծանոթ է ամառանոց վարձելու հնարավորություն չունեցող յուրաքանչյուր պետերբուրգցու. այս ամենը անհաճո ցնցեց նրա նյարդերի առանց այն էլ արդեն քայքայված դրությունը։ Իսկ

բաղաքի այդ մասում առանձնապես շատ օդեստների անտանելի գարշահոտությունը ու հարբածները, որոնք հանդիպում էին ամեն բոպե, չնայած ցի օրվան, լրացրին պատկերի գարշ ու տխուր կոլորիտը։ Ամենախոր նողկանքի զգացում մի ակնթարթ նշմարվեց երիտասարդի նրբին դիմագծերում։ Ի դեպ՝ նա խիստ սիրունատես էր, գեղեցիկ ու թուխ աչքերով, մուգ-շիկահեր, միջին հասակից բարձր, բարակ ու վայելչակազմ։ Բայց շուտով նա ընկղմվեց մի տեսակ խորին մտածմունքի մեջ, նույնիսկ ավելի ճիշտ կլինի ասել՝ ինչ-որ մոռացման մեջ, ու քայլեց արդեն առանց շրջապատը նկատելու և չէր էլ ցանկանում այն նկատել։ Սովոր լինելով մենախոսություններին, միայն երբեմն ինչ-որ քրթմնջում էր նա և այժմ դա խոստովանեց ինքն իրեն։ Հենց այդ բոպեին ինքն էլ գիտակցում էր, որ մտքերը երբեմն իրար են խառնվում, և որ ինքը շատ թույլ է։ Երկրորդ օրն էր, որ նա գրեթե բոլորովին ոչինչ չէր կերել։

Նա այնքան վատ էր հագնված, որ որևէ մեկը, նույնիսկ դրան սովոր մարդը, կամաչեր այդպիսի ցնցոտիներով ցերեկը փողոց դուրս գալ։ Ասենք, թաղամասը այնպիսին էր, որ այնտեղ դժվար էր կոստյումով մեկնումեկին զարմացնել։ Սեննայա փողոցի մոտիկությունը, հանրահայտ տների շատությունը և առավելապես համքարական ու արհեստավոր ընակչությունը, որ խոնված էր Պետերբուրգի այդ միջանկյալ փողոցներում ու նրբանցքներում, երբեմն ընդհանուր շրջապատները խայտարղետ էին դարձնում այնպիսի սուբյեկտներով, որ տարօրինակ կլիներ զարմանալ այլ կերպարանքի հանդիպելիս։ Բայց երիտասարդի հոգու մեջ արդեն այնքան ցասկոտ արհամարհանք էր կուտակվել, որ չնայած իր ողջ, երբեմն զուտ երիտասարդական, փափկանկատության, նա փողոցում ամենից քիչ էր ամաչում իր ցնցոտիներից։ Այլ բան էր որոշ ծանոթների կամ առաջվա ընկերներին հանդիպելը, որոնց հետ նա ընդհանրապես չէր սիրում հանդիպել... Այնինչ երբ մի հարբած մարդ, որին այդ ժամանակ հայտնի չէ ինչու և ուր էին տանում փողոցով, ահագին բեռնակիր ձի լծած մի մեծ սայլով, անցնելիս հանկարծ բղավեց՝ «է՛յ, դո՛ւ, գերմանացի գլխարկագործ», ու սկսեց գոռալ կոկորդով մեկ, ձեռքով ցույց տալով նրան.

երիտասարդը հանկարծ կանգ առավ ու ձեռքը ջղաձգարար տարավ իր գլխարկին։ Հայնեզը այդ գլխարկը բարձր էր, կլոր, ցիմերմանյան[1], բայց արդեն ամբողջովին մաշված էր, բոլորովին խունացած, ծակծկված ու բծերով պատած, առանց բոլորքի, ու ամենասյանդակ ձևով մի կողմ էր թեքված։ Բայց երիտասարդին համակեց ոչ թե ամոթը, այլ բոլորովին այլ մի զգացում, որը նույնիսկ վախի էր նմանվում։

— Ես այդպես էլ դիտեի,— շփոթված փնթփնթում էր նա,— ես այդպես էլ մտածում էի։ Սա արդեն վատթարագույնն է։ Ահա այսպիսի մի որևէ հիմարություն, որևէ ամենագռեհիկ մանրուք ամբողջ մտադրությունդ կարող է փչացնել։ Այո, խիստ նկատելի գլխարկ է... ծիծաղելի է, այս պատճառով էլ նկատելի է... Իմ ցնցոտիներին անպայման հարկավոր է հովարավոր գլխարկ, թեկուզ մի որևէ հին թասակ, և ոչ թե այս այլանդակը։ Ոչ ոք այսպիսի գլխարկ չի գնում, մի վերստից կնկատեն, կհիշեն... գլխավորն այն է, որ հետո կհիշեն, ահա քեզ և հանցանշան։ Պետք է որքան կարելի է աննկատելի լինել... Մանրուքը, մանրուքն է գլխավորը... Ահա այդ մանրուքն էլ միշտ գործանում է ամեն ինչ...

Նա երկար չէր գնալու. նա նույնիսկ չմտեր, թե իր ապրած տան դարպասից քանի քայլ է անցնելու. ուղիղ յոթհարյուր երեսուն։ Մի անգամ դրանք հաշվել էր նա, երբ արդեն շատ էր տարվել երազանքներով։ Այն ժամանակ նա դեռ ինքն էլ չէր հավատում այդ երազանքներին ու ինքն իրեն սոսկ զրգռում էր դրանց այլանդակ, բայց գայթակղիչ հանդգնությամբ։ Իսկ հիմա, մի ամիս անց, նա արդեն սկսում էր այլ կերպ մտածել, ու չնայած իր անզորության ու անվճռականության վերաբերյալ շարունակ զրգռող մենախոսություններին, մի տեսակ ակամայից սովորեց «այլանդակ» երազանքը արդեն ձեռնարկում համարել, թեպետ դեռևս ինքն իրեն չէր հավատում։ Նա այժմ գնում էր նույնիսկ իր ձեռնարկման վերջ անելու, և յուրաքանչյուր քայլափոխում ավելի ու ավելի ուժեղ թափով էր աճում նրա հուզմունքը։

---

[1] Ցիմերմանի խանութից գնված (Ծ. Թ.)։

Սրտի նվաղումով ու ջղային դողով նա մոտեցավ մի հսկայական տան, որի մի պատը հասնում էր մինչև ջրանցքը, իսկ մյուսը՝ փողոցը։ Այդ տունը ամբողջովին բաղկացած էր մանր բնակարաններից, և այնտեղ բնակվում էին ամեն տեսակ զբաղմունք ունեցողներ՝ դերձակներ, փականագործներ, խոհարարուհիներ, այլևայլ գերմանացիներ, իրենց մարմնով ապրող աղջիկներ, մանր աստիճանավորներ և այլն։ Ներս մտնողներն ու դուրս եկողները արագ անցնում էին երկու դարպասներից և տան երկու բակերից։ Այստեղ ծառայում էին երեք կամ չորս դռնապաններ։ Երիտասարդը շատ գոհ էր, որ դրանցից ոչ մեկին չհանդիպեց, ու իսկույն աննկատելիորեն անցավ դարպասից, դեպի աջ կողմը, և բարձրացավ սանդուղքով։ Սանդուղքը խավար էր ու նեղ, սակայն, բայց նա այդ ամենը արդեն դիտեր և ուսումնասիրել էր, ու նրան այդ ամբողջ շրջապատը դուր էր գալիս։ Այդպիսի խավարում նույնիսկ զննող հայացքն էլ անվտանգ էր։ «Եթե այս պահին ես այսպես վախենում եմ, ապա ի՞նչ կլիներ, եթե իրոք որևէ կերպ բանը հենց գործին հասներ...», ակամա մտածեց նա՝ անցնելով չորրորդ հարկը։ Այստեղ նրա ճանապարհը փակեցին ինչ-որ պաշտոնաթող զինվորներ՝ բեռնակիրներ, որոնք մի բնակարանից կահույք էին դուրս բերում։ Նա արդեն առաջուց գիտեր, որ այդ բնակարանում ապրում էր մի ընտանիքավոր գերմանացի, աստիճանավոր. «Ուրեմն այդ գերմանացին հիմա մեկնում է, և ուրեմն չորրորդ հարկում, այս սանդուղքից և այս հարթակից վերև որոշ ժամանակ զրաղեցրած կմնա միայն պառավի բնակարանը։ Այդ լավ է... համենայն դեպս...», դարձյալ մտածեց նա և զանգահարեց պառավի բնակարանը։ Զանգը թույլ հնչեց, կարծես ձուլված էր թիթեղից և ոչ թե պղնձից։ Այդպիսի տների հար և նման մանր բնակարաններում համարյա միշտ այդպիսի զանգեր են լինում։ Նա արդեն մոռացել էր այդ զանգակի հնչյունը, ու հիմա այդ առանձնահատուկ հնչյունը հանկարծ կարծես նրան ինչ-որ բան հիշեցրեց և պարզ պատկերացրեց... Նա ուղղակի ցնցվեց, այս անգամ արդեն չափից դուրս թուլացած էին նրա ջղերը։ Քիչ հետո դուռը բացվեց մի քիչ, նեղլիկ ճեղքի չափ. բնակչուհին նկատելի անվստահությամբ ճեղքից նայում էր եկող-

յին, ու միայն երևում էին խավարում փայլող նրա փոքրիկ աչքերը։ Բայց տեսնելով հարթակում շատ մարդկանց, նա սիրտ արեց և բոլորովին բացեց դուռը։ Երիտասարդը շեմքից ոտք դրեց խավար նախասենյակը, որ միջնորմով երկու մասի էր բաժանված, և դրա ետևում գտնվում էր փոքրիկ խոհանոցը։ Պառավը լուռ կանգնել էր նրա առաջ և հարցական նայում էր նրան։ Դա մի կարճլիկ, նիհար, գլխաբաց, մոտ վաթսուն տարեկան պառավ էր սուր ու շար աչքերով, փոքրիկ, սուր քթով։ Նրա բաց-շիկավուն, քիչ սպիտակած մազերը առատորեն յուղված էին։ Նրա բարակ, երկար, հավի ոտքի նմանվող պարանոցը փաթաթված էր ինչ-որ ֆլանելե լաթով, իսկ ուսերի վրա, չնայած շոգին, կախ էր ընկած ամբողջովին մաշված, խունացած, մորթե կոֆտան։ Պառավը ամեն րոպե հազում էր ու տնքտնքում։ Երևի երիտասարդը նրան նայեց ինչ-որ առանձնահատուկ հայացքով, որովհետև պառավի աչքերում հանկարծ նորից երևաց նախկին անվստահությունը։

— Ռասկոլնիկով, ուսանող, մի ամիս առաջ եղել եմ ձեզ մոտ,— շտապեց փնթփնթալ երիտասարդը, թեթևակի գլուխ տալով, հիշելով, որ հարկավոր է ավելի սիրալիր լինել։

— Հիշում եմ, որդի, շատ լավ եմ հիշում, որ դուք եկել էիք,— հստակ ասաց պառավը՝ առաջվա պես իր հարցական հայացքը չկտրելով նրա դեմքից։

— Հա... եկել եմ էլի նույնպիսի գործով... — շարունակեց Ռասկոլնիկովը՝ մի քիչ շփոթվելով և զարմանալով պառավի անվստահության վրա։

«Ասենք, գուցե սա միշտ էլ այդպես է, իսկ ես այն անգամ չնկատեցի», անախորժ զգացումով մտածեց Ռասկոլնիկովը։

Պառավը մի փոքր լռեց, ասես մտածմունքի մեջ ընկավ, հետո մի կողմ քաշվեց ու մատնացույց անելով սենյակի դուռը, ճանապարհ տվեց հյուրին ու ասաց.

— Անցեք ներս, որդի։

Փոքրիկ սենյակը, ուր մտավ երիտասարդը, դեղին պաստառներով, պատուհանների մարմաշե վարագույրներով ու դրանց վրա դրված խորդենիներով, այդ րոպեին պայծառ լուսավորված էր մայր մտնող արևով։ «Ուրեմն այն ժամա-

նակ էլ արեր այսպես լուսավորելու է...», ասես պատահաբար մտածեց Ռասկոլնիկովը, ու շեշտակի հայացքով դիտեց այն ամենը, ինչ-որ կար սենյակում, որպեսզի հնարավորին չափ ուսումնասիրեր ու հիշեր դրանց դիրքը։ Բայց սենյակում առանձնապես ոչինչ չկար։ Ամբողջ կահույքը շատ հին էր ու դեղին փայտից. մի բազմոց՝ փայտե ահագին, կորընթարդ թիկնակով, կլոր, ձվաձև սեղան՝ բազմոցի առաջ, միջնապատի տակ դրված ՝արդուզարդի սեղան՝ փոքրիկ հայելիով, աթոռներ պատերի տակ ու դեղին շրջանակներով երկու-երեք հատ գրոշանոց նկարներ, որոնց վրա պատկերված էին գերմանացի օրիորդներ, ձեռքերին թռչուններ,— ահա և ամբողջ կահույքը։ Մի անկյունում, փոքրիկ սրբապատկերի առաջ վառվում էր կանթեղը։ Ամեն ինչ շատ մաքուր էր. թե՛ կահույքը և թե՛ հատակը խնամքով սրբված էին, ամեն ինչ փայլում էր։ «Լիզավետայի աշխատանքն է»,— մտածեց երիտասարդը։ Ամբողջ բնակարանում մի փոշեհատիկ անգամ չէր կարելի գտնել։ «Այսպիսի մաքրություն ցասկոտ ու պառավ այրիների մոտ է լինում».— շարունակեց մտածել Ռասկոլնիկովը ու հետաքրքրությամբ շեղակի նայեց երկրորդ, փոքրիկ սենյակի դռան չթե վարագույրին. այդ սենյակում գտնվում էր պառավի անկողինը և մի կոմոդ, ու երիտասարդը դեռ ոչ մի անգամ այնտեղ չէր եղել։ Ամբողջ բնակարանը այդ երկու սենյակից էր բաղկացած։

— Ի՞նչ եք կամենում,— խստորեն հարցրեց պառավը՝ մոտենալով սենյակ ու դարձյալ կանգ առնելով ուղիղ նրա առաջ, որպեսզի ուղիղ նայեր նրա դեմքին։

— Գրավական եմ բերել, ահա,— ու երիտասարդը գրպանից հանեց մի հին, տափակ արծաթե ժամացույց։ Դրա հակառակ կողմում երկրագունդ էր պատկերված։ Շղթան պողպատից էր։

— Բայց չէ՞ որ նախորդ գրավականի ժամկետը լրացել է։ Դեռ երկու օր առաջ մի ամիս էր անցել։

— Ես ձեզ մի ամսվա համար էլ տոկոս կվճարեմ. մի քիչ համբերեք։

— Համբերել, թե հենց այժմ վաճառել ձեր իրը, այդ իմ բարի կամքն է, որպի։

— Որքա՞ն կտաք ժամացույցի համար, Ալյոնա Իվանովնա։

— Դատարկ բաներ ես բերում, որդի, համարյա ոչինչ չարժե։ Անցյալ անգամ մատանու համար ձեզ երկու թղթե մանեթանոց տվի, իսկ այդպիսի նոր մատանի կարելի է ոսկերչից գնել մեկ ու կես ռուբլով։

— Գոնե չորս ռուբլի տվեք, ես ետ կվերցնեմ, հորս ժամացույցն է։ Ես շուտով փող կստանամ։

— Մեկ ու կես ռուբլի, ու տոկոսն էլ սկզբից, եթե ուզում եք։

— Մեկ ու կես ռուբլի՞,— ճչաց երիտասարդը։

— Ձեր կամքն է։ — Ու պառավը վերադարձրեց ժամացույցը։ Երիտասարդը դա վերցրեց և այնքան բարկացավ, որ արդեն ուզում էր դնալ. բայց իսկույն միտքը փոխեց, հիշելով, որ այլևս գնալու տեղ չկա և որ ինքը նաև ուրիշ բանի համար է եկել։

— Տվեք,— կոպիտ ասաց նա։

Պառավը ձեռքը տարավ գրպանը՝ բանալիները հանելու, և անցավ վարագույրի ետևը, մյուս սենյակ։ Երիտասարդը մենակ մնալով, ուշադրությամբ ականջ էր դնում և դատողություններ անում։ Լսվեց, թե ինչպես պառավը բացեց կոմոդը։ «Երևի վերին արկղն է», մտածեց երիտասարդը։ «Ուրեմն նա բանալիները աջ գրպանումն է պահում... Գրանք բոլորը մեկտեղ կախված են պողպատե օղակից... Մի բանալին եռակի մեծ է մյուսներից, ատամնաձև լեզվակով է, իհարկե, կոմոդի բանալին չէ... Հետևաբար կա նաև մի որևէ գաղտատուփ կամ սնդուկ... Հըմ, սա հետաքրքիր է։ Սնդուկների բանալիները միշտ այդպես են լինում... Սակայն ինչ ճողկալի է այս ամենը...»։

Պառավը վերադարձավ։

— Ահա, որդի, թե որ ամսական մեկ ռուբլուց հաշվենք տասը կոպեկ, ուրեմն մեկ ու կես ռուբլուց ամսական կանի տասնհինգ կոպեկ, որը հիմա դուրս կգամ այդ դումարից։ Հետո, առաջվա երկու ռուբլուց նույն հաշվով պահում եմ քսան կոպեկ։ Ուրեմն ընդամենը երեսունհինգ կոպեկ։ Ձեր ժամացույցի համար այժմ դուք պետք է ստանաք մեկ ռուբլի տասնհինգ կոպեկ։ Ահա, ստացեք։

— Ինչպե՞ս, հիմա էլ մեկ ռուբլի տասնհինգ կոպե՞կ։

— Ճիշտ այդպես։

Երիտասարդը չվիճեց ու վերցրեց դրամը։ Նա նայում էր պառավին ու չէր շտապում հեռանալ, կարծես ուզում էր էլի ինչ-որ բան ասել կամ անել, բայց թե ինչ, ասես ինքն էլ չգիտեր...

— Ես ձեզ, Ալյոնա Իվանովնա, գուցե մոտ օրերս էլի մի բան բերեմ... արծաթե... մի լավ ծխախոտատուփ... հենց որ ընկերոջից ետ վերցնեմ...— Երիտասարդը շփոթվեց և լռեց։

— Երբ բերեք, այն ժամանակ էլ կխոսենք, որդի։

— Էհ, բարով մնաք... Հա, դուք էլի մենա՞կ եք մնացել, Ձեր քույրիկը այսօրվա չի՞ լինում,— որքան կարելի էր անփույթ հարցրեց երիտասարդը՝ դուրս գալով նախասենյակ։

— Իսկ դուք ի՞նչ գործ ունեք նրա հետ, որդի։

— Առանձնապես ոչինչ։ Ես հենց այնպես հարցրի։ Դուք այժմ... բարով մնաք, Ալյոնա Իվանովնա։

Ռասկոլնիկովը դուրս եկավ բոլորովին շփոթված։ Այդ շփոթմունքը հետզհետե ավելի էր ուժեղանում։ Իջնելով սանդուղքից, նա նույնիսկ մի քանի անգամ կանգ էր առնում, ասես հանկարծակի ապշած ինչ-որ բանից։ Ու վերջապես արդեն փողոցում նա բացականչեց.

«Օ, ատված իմ, որքա՞ն գարշելի է այս ամենը։ Եվ մի՞թե, մի՞թե ես... ոչ, դա հիմար բան է, դա անհեթեթություն է,— վճռականապես ավելացրեց նա։ — Եվ մի՞թե գլխումս կարող էր այդպիսի սարսափելի բան ծագել։ Այնուամենայնիվ, տիրտս ինչպիսի՞ աղտեղության է ընդունակ։ Գլխավորն այն է, որ դա կեղտոտ, նողկալի բան է, գարշելի է, գարշելի... Ու ես, մի ամբողջ ամիս...»։

Բայց ոչ խոսքերով, ոչ էլ բացականչություններով նա չէր կարող արտահայտել իր հուզմունքը։ Անսահման գարշանքի զգացումը, որ սկսել էր ճզմել ու պղտորել նրա սիրտը դեռ այն ժամանակ, երբ գնում էր պառավի մոտ, հիմա այնպիսի չափի էր հասել ու այնքան ուժեղացել, որ նա չգիտեր ուր փախչեր իր վշտից։ Նա մայթով քայլում էր հարբածի նման, չնկատելով անցորդներին ու դիպչելով նրանց,

և ուշքի եկավ միայն հետևյալ փողոցում։ Նայելով շուրջը, նա նկատեց, որ կանգնած է մի օդեստան մոտ, որի մուտքը մայթից էր, պետք էր սանդուղքով իջնել ներքև, գետնահարկը։ Հենց այդ րոպեին դռնից դուրս էին գալիս երկու հարբածներ, և օգնելով ու հայհոյելով միմյանց, բարձրանում սանդուղքով։ Ռասկոլնիկովը, առանց երկար մտածելու, իսկույն իջավ ներքև։ Մինչ այդ նա երբեք չէր մտել օդեստները, բայց հիմա դուխը պտտվում էր, ու բացի դրանից, այրող ծարավը տանջում էր նրան։ Նա ուզում էր ստոր գարեջուր խմել, մանավանդ որ իր հանկարծակի թուլությունը վերագրում էր քաղցածությանն։ Նա նստեց մթին ու կեղտոտ մի անկյունում, թաց սեղանի մոտ, գարեջուր պահանջեց և ագահությամբ խմեց առաջին բաժակը։ Ամեն ինչ իսկույն թեթևացավ, և նրա մտքերը պայծառացան։ «Այդ ամենը դատարկ բան է,— հուսադրվելով ասաց նա,— շփոթվելու բան չկար. ուղղակի ֆիզիկապես քայքայված եմ. մի բաժակ գարեջուր, մի կտոր պաքսիմատ, և ահա մի ակընթարթում ամրանում է խելքդ, պայծառանում է միտքդ, կայունանում են դիտավորություններդ։ Թյու, ինչպիսի ոչնչություն է այս ամենը...»։ Բայց, չնայելով այդպես արհամարհաբար թքելուն, նա արդեն ուրախ էր նայում շուրջը, կարծես հանկարծակի ազատվել էր մի ինչ-որ զարհուրելի բեռից ու բարեկամաբար նայեց ներկաներին։ Սակայն նույնիսկ այդ րոպեին նա որոշ չափով նախազգում էր, որ լավագույն պայմանների նկատմամբ այդ ամբողջ ընկալունակությունը նույնպես հիվանդագին էր։

Այդ պահին օդեստանը քիչ մարդ էր մնում։ Բացի այն երկու հարբածներից, որ հանդիպեցին սանդուղքի վրա, հենց նրանց ետևից դուրս եկավ մի ամբողջ խումբ, հինգ մարդ, հետները մի աղջիկ և հարմոն։ Նրանցից հետո օդեստանը հանդարտվեց և ավելի ընդարձակ թվաց։ Մնացին՝ քիչ հարբած մի մարդ, որը գարեջուր էր խմում և տեսքով քաղքենի էր, նրա ընկերը, հաստ, հսկայամարմին, ճերմակած մորուքով ու կարճ վերնազգեստով մի մարդ, որը թունդ հարբած էր, ննջել էր նստարանի վրա ու երբեմն, հանկարծ, ասես քնաթաթախ, ձեռքերը տարածելով, սկսում էր շրխկացնել մատները և ճոճել իրանի վերին մասը, առանց նրա-

տարանից վեր կենալու, ու միաժամանակ քթի տակ երգում էր ինչ-որ մի անհեթեթություն՝ ճգնելով վերհիշել տողերը.

Ողջ տարին կնկանս շոյեցի,
Ողջ տա-րին կըն-կանս շոյեցի...

Ու հանկարծ արթնանալով, շարունակում էր.

Պողյալնյան փողոցով գնալիս
Գոտա առաջվա սիրածիս...

Բայց ոչ ոք չէր արձագանքում նրա երջանկությանը. նրա լուսկյաց ընկերը նույնիսկ թշնամանքով ու թերահավատությամբ էր նայում այդ բոլոր պոռթկումներին։ Այնտեղ մի մարդ էլ կար, որը տեսքով կարծես պաշտոնաթող աստիճանավորի էր նման։ Նա նստած էր մենակ, իր խմիչքի ամանի առջև, երբեմնակի խմում էր ու նայում շուրջը։ Նա էլ կարծես մի փոքր հուզված լիներ։

II

Ռասկոլնիկովը ամբոխին ընտելացած չէր, ու ինչպես արդեն ասված է, փախչում էր ամեն տեսակ հասարակությունից, մանավանդ վերջին ժամանակներում։ Բայց հիմա նրան հանկարծ ինչ-որ մի բան քաշեց դեպի մարդիկ։ Նրա մեջ ասես մի նոր բան էր կատարվում, ու դրա հետ մեկտեղ նա մարդկանց հետ լինելու տենչանք էր զգում։ Նա այնքան էր հոգնել մի ամբողջ ամսվա իր այդ լարված թախծից ու մռայլ հուզմունքից, որ ուզում էր գեթ մի բոպե շունչ քաշել մի այլ աշխարհում, թեկուզ ինչպիսին էլ որ այն լիներ, ու չնայելով շրջապատի ամբողջ կեղտին, նա այժմ հաճույքով էր մնում օդետանը։

Զեռնարկության տերը ուրիշ սենյակում էր, բայց հաճախ մտնում էր գլխավոր սենյակը՝ իջնելով ինչ-որ սանդուղքից, ու ամենից առաջ աչքի էին ընկնում նրա ալճնամոլական, փայլեցրած սապոգները՝ մեծ ու կարմիր ծալերով։ Նա անթև ներքնազգեստով էր ու սարսափելի ճարպոտված, սև, ատլասե բաճկոնակով, առանց փողկապի, իսկ նրա ամբողջ դեմքին կարծես յուղ էր քսված, ինչպես եղկաթե

փոսկանքն են յուղում։ Վաճառասեղանի ետևում գտնվում էր մոտ տասնչորս տարեկան մի տղա, կար նաև նրանից փոքր մի ուրիշ տղա, որը մատուցում էր, ինչ-որ պահանջում էին։ Վաճառասեղանին դրված էին կտրտած վարունգներ, սև պաքսիմատ և ձկան կտորներ. այդ ամենից խիստ վատ հոտ էր գալիս։ Օդը հեղձուցիչ էր, այնպես որ նույնիսկ անկարելի էր նստած մնալ, ու ամեն ինչ այնքան էր ներծծվել օդու հոտով, որ թվում էր, հենց միայն այդ օդից կարելի էր հարբել հինգ բոպեում։

Երբեմն լինում են հանդիպումներ նույնիսկ մեզ անծանոթ մարդկանց հետ, որոնցով մենք սկսում ենք հետաքրքրվել հենց առաջին հայացքից, մի տեսակ անակնկալ կերպով, հանկարծակի, նախքան մի խոսք կասենք։ Ռասկոլնիկովի վրա ճիշտ այդպիսի տպավորություն թողեց այն հաճախորդը, որը նստած էր քիչ հեռու և պաշտոնաթող ատիճանավորի էր նմանվում։ Երիտասարդը հետո մի քանի անգամ հիշում էր այդ առաջին տպավորությունը և դա նույնիսկ իր նախազգացումին էր վերագրում։ Նա անընդհատ նայում էր ատիճանավորին, իհարկե, նաև այն պատճառով, որ սա ինքն էլ համառորեն նայում էր նրան, ու երևում էր, որ շատ էր ուզում խոսակցություն սկսել։ Իսկ մրնացածներին, օդեսանը գտնվողներին, ինչպես նաև օդեսան տիրոջը, ատիճանավորը նայում էր մի տեսակ սովորական ձևով, նույնիսկ ձանձրույթով, ու դրա հետ մեկտեղ մի քիչ ամբարտավան քամահրանքով, ասես ստորին դիրք ու զարգացում ունեցող մարդկանց, որոնց հետ ինքը խոսելիք չունի։ Նա արդեն հիսուն տարին անց մարդ էր, միջահասակ ու ամրակազմ, ալեխառն էր ու ճաղատ, մշտական հարբեցողությունից ուռած, դեղին, նույնիսկ կանաչավուն դեմքով և մի փոքր ուռած կոպերով, որոնց տակից փայլում էին նեղլիկ ճեղքի պես փոքր, սակայն ոգևորված, կարմրավուն աչքերը։ Բայց նրա մեջ մի ինչ-որ խիստ տարօրինակ բան կար. նրա աչքերից կարծես նույնիսկ խանդավառություն էր ճառագայթում, թերևս նրանց մեջ կար և իմաստ, և խելք, բայց միևնույն ժամանակ ասես նաև խելահեղություն էր նկատվում։ Նա հագել էր հին, իսպառ պատռռտված, կոճակները պոկված ֆրակ։ Մնացել էր միայն մի կո-

հակ, այն էլ թույլ պահված, և նա դրանով էր կոճկվում, բստ երևույթին ցանկանալով շխորշել պատշաճությունից։ Նանկայից կարված բաճկոնակի տակից երևում էր կրծքակալը, որ ամբողջովին ճմռթված էր, կեղտոտված ու թրջված։ Դեմքը չինովնիկավարի սափրված էր, բայց արդեն վաղուց, այնպես որ արդեն սկսել էին խիտ դուրս տալ թխադորշ մազերը։ Նրա շարժուձևն էլ իրոք մի տեսակ սոլիդչինովնիկական էր։ Բայց նա անհանգիստ էր, խճճում էր մակերը, ու երբեմն թախծոտ տեսք առած, գլուխը գնում էր երկու ձեռքերին՝ պատռտված արմունկները հենելով թրջված ու կպչուն սեղանին։ Վերջապես, նա շիտակ նայեց Խատկոյնիկովին ու բարձրաձայն, կտրուկ ասաց.

Կհամաձայնվե՞մ արդյոք, հարգելի պարոնս, դիմել ձեզ պատշաճ խոստակցությամբ։ Գանդի, թեև դուք նշանավոր տեսքով լինք, բայց իմ փորձառությունը հանձին ձեզ կրթված ու խմիչքին չընտելացած մարդ է տեսնում։ Ինքս միշտ էլ հարգել եմ կրթվածությունը, միացած սրտագին զգացումների հետ, ու բացի դրանից, տիտուլյար խորհրդական եմ։ Ազգանունս Մարմելադով է, տիտուլյար խորհրդական։ Համարձակվում եմ հարցնել՝ բարեհաճել եք ծառայե՞լ

— Ոչ, սովորում եմ...— պատասխանեց երիտասարդը՝ մասամբ զարմացած լինելով թե այդ խոսքերի ճոռոմ բնույթից ու թե նրանից, որ այդպես ուղղակի, դեմ առ դեմ դիմեցին իրեն։ Չնայած քիչ առաջվա վայրկենական ցանկությանը՝ թեկուզ որևէ չափով շփվել մարդկանց հետ, նա իսկապես իրեն ուղղված առաջին իսկ խոսքից հանկարծ զարշանքի անախորժ ու ջղայնացուցիչ զգացում տածեց դեպի յուրաքանչյուր օտար անձ, որը կարող էր շոշափել կամ թեկուզ միայն ուզում էր շոշափել իր անձնավորությունը։

— Ուրեմն ուսանող եք կամ նախկին ուսանող, ես այդպես էլ կարծում էի,— գոչեց աստիճանավորը։ — Փորձված եմ, հարգելի պարոն, հաճախակի փորձվել եմ։ — Ու իբրև ինքնագովության նշան, նա մատը տարավ ճակատին։ — Ուսանող եք եղել կամ մասնագիտություն անցել։ Թույլ տրվեք... — Նա վեր կացավ, ճոճվեց։ վերցրեց խմիչքի իր տոմանը, բաժակը ու նստեց երիտասարդի մոտ, նրանից մի

փոքր շեղակի գիրքով։ Նա խմած էր, բայց ճարտար ու զգուշավարթ էր խոսում՝ միայն երբեմն տեղ-տեղ քիչ շեղվելով ու երկարացնելով խոսքը։ Նա նույնիսկ մի ինչ-որ ագահությամբ նեռվեց Ռասկոլնիկովի վրա, ասես ինքն էլ մի ամբողջ ամիս ոչ ոքի հետ չէր խոսել։

— Հարգելի պարոն,— գրեթե հանդիսավորությամբ սկսեց նա,— աղքատությունը արատ չէ, սա ճշմարտություն է։ Ես գիտեմ, որ հարբեցողությունն էլ առաքինություն չէ, և սա առավել ևս ճշմարտություն է։ Բայց մուրացիկությունը, հարգելի պարոն, մուրացիկությունը արատ է։ Աղքատության մեջ դուք դեռ պահպանում եք բնածին զգացմունքների ձեր ազնվությունը, իսկ մուրացիկության մեջ ոչ ոք ու երբեք չի կարող այդ անել։ Մուրացիկության համար նույնիսկ ոչ թե մահակով, այլ ցախավելով են դուրս քշում մարդկային ընկերությունից, որպեսզի դա առավելապես վիրավորական լիներ. և դա արդարացի է, քանի որ մուրացիկության համար ես ինքս առաջինը պատրաստ եմ ինձ վիրավորել։ Այստեղից էլ առաջանում է խմելը։ Հարգելի պարոն, մի ամիս առաջ պ. Լեբեզյատնիկովը ծեծեց կնոջս, իսկ իմ կինը այն չէ, ինչ որ ես եմ։ Հասկանո՞ւմ եք։ Թույլ տվեք նաև հարցնել, հենց այնպես, թեկուզ սովորական հետաքրքրության կարգով, արդյոք դուք բարեհաճե՞լ եք գիշերել Նևայի վրա, խոտ փոխադրող բեռնանավերում։

— Ոչ, չի պատահել,— պատասխանեց Ռասկոլնիկովը։ — Այդ ի՞նչ բան է։

— Հըմ, ես այնտեղից եմ եկել, այն էլ հինգերորդ գիշերը անցկացնելուց հետո...

Նա լցրեց բաժակը, խմեց ու մտածմունքի մեջ ընկավ։ Իսկապես, նրա հագուստին ու նույնիսկ մազերին տեղ-տեղ խոտի ցողուններ էին կպել։ Շատ հավանական էր, որ նա հինգ օր չէր հանվել ու չէր լվացվել։ Առանձնապես կեղտոտ էին նրա ճարպակալած, կարմրավուն ձեռքերը, եղունգները սև էին։

Նրա խոսակցությունը կարծես թե ընդհանուր, թեպետև թույլ, ուշադրություն դրավեց։ Վաճառասեղանի եռևում տղաները սկսեցին քթի տակ ծիծաղել։ Օղետան տերը ասես դիտմամբ էր իջել վերին սենյակից, որպեսզի լսեր «մաս-

խարայինն», ու նստել քիչ հեռու, ծուլորեն, բայց զոռոզաբար հորանջում էր։ Մարմելադովը ակներևաբար այստեղ գաղուց էր հայտնի։ Ճոռոմաբար խոսելուն էլ ընտելացել էր հավանորեն օդեռներում այլևայլ անծանոթների հետ հանախակի խոսակցություն ունենալու հետևանքով։ Որոշ հարբեցողների այս սովորությունը պահանջ է դառնում, առավելապես այն հարբեցողների, որոնց հետ տանը խիստ են վարվում և որոնց բանի տեղ չեն դնում։ Այս պատճառով էլ նրանք կարծես թե միշտ աշխատում են խմողների խմբում արդարացում գտնել, իսկ եթե կարելի է, նույնիսկ հարգանք վայելել։

— Ա՛յ մասիարա,— բարձրաձայն ասաց օդեռան տերը, հապա ինչո՞ւ չես աշխատում, ինչո՞ւ չեք ծառայում, թե սատիճանավոր եր։

— Ինչու չեմ ծառայո՞ւմ, հարգելի պարոն,— վրա բերեց Մարմելադովը՝ բացառապես դիմելով Իվանովիչովին, կարծես թե սա էր նրան հարց տվել,— ինչու չեմ ծառայո՞ւմ։ Իսկ մի՞թե սիրտս չի ցավում, որ զուր տեղը քարշ եմ գալիս։ Երբ պ. Լեբեզյատնիկովը մի ամիս առաջ իր սեփական ձևոքով թակեց կնոջս, ու ես հարբած պառկել էի, մի՞թե չէի տանջվում։ Ներեցեք, երիտասարդ, պատահե՞լ է, որ դո՛ւք... ըմ... ասենք անհուսալիորեն, փոխարինաբար փող խնդրեք։

— Պատահել է... այսինքն՝ ի՞նչպես թե անհուսալիորեն։

— Այսինքն՝ միանգամայն անհուսալիորեն, առաջուց դիտենալով, որ դրանից ոչինչ չի գուրս գա։ Այ, զորօրինակ, դուք նախապես ու հաստատ գիտեք, որ այսինչ մարդը, այսինչ ամենաբարեմիտ և ամենաօգտակար քաղաքացին ոչ մի կերպ ձեզ փող չի տա, որովհետև, հարցնում եմ ես, ինչո՞ւ պետք է տա։ Եթե նա գիտե, որ ես չեմ վերադարձնի։ Կարեկցելո՞վ պիտի տա։ Բայց պ. Լեբեզյատնիկովը, որը հետևում է նոր մտքերին, օրերս բացատրում էր, որ մեր ժամանակներում նույնիսկ դիտությունն էլ է արգելում կարեկցությունը, որ այդպես են վարվում Անգլիայում, ուր կա քաղաքատնտեսություն։ Ինչո՞ւ նա պետք է տա, հարցնում եմ ես։ Եվ ահա, առաջուց դիտենալով, որ չի տա, դուք այնուամենայնիվ գնում եք նրա մոտ և...

Եվ ինչո՞ւ դնալ։ — ավելացրեց Սարգսիանովը։

Իսկ էլ ինչ մեկ ուրիշը, որի մոտ գնա՞ս, եթե գնալու էլ ոչ մի տեղ չկա։ Չէ՞ որ ամեն մարդ պետք է կարոտանա գոնե մի որևէ տեղ գնալ։ Որովհետև այնպիսի ժամանակ է լինում, երբ անպարտադիր հարկավոր է գոնե մի որևէ տեղ գնալ։ Երբ իմ մեկ դուստրը աստուծին անդամ դեղին տոմսով գնաց տանից. ես էլ այդ ժամանակ գնացի... (որովհետև իմ դուստրը դեղին տոմսով է ապրում...— փաֆֆերի մեջ ավելացրեց Սարգսիանովը՝ մի փոքր անհանգիստ նայելով երիտասարդին)։ Այնինչ, հարգելի պարոն, ոչինչ, անմիջապես, բան երևույթին հանդիստ կերպով շտապեց ավելացնել նա, երբ վաճառասեղանի ետևում փլոթկացին երկու տղաները, ու ժպտաց օդեստան տերը։ — Ոչինչ, գլուխների սույն շարժումից չեմ շփոթվում, քանի որ բոլորին ամեն ինչ հայտնի է, ու ինչ որ գաղտնի է, բացահայտ է դառնում. և ոչ թե արհամարհանքով, այլ հեզությամբ եմ վերաբերում այս բանին։ Թող այդպես լինի, թող, «ահա մարդը»։ Ներեցեք, երիտասարդ, արդյոք դուք կարո՞ղ եք... բայց ոչ, պետք է ավելի ուժեղ ու պատկերավոր ասել. ոչ թե դուք կարո՞ղ եք, այլ դուք կհամարձակվե՞ք այժմ նայելով ինձ, հաստատապես ասել, որ ես խոզ չեմ։

Երիտասարդը ոչինչ չպատասխանեց։

— Էհ,— շարունակեց հռետորը լրջորեն և այս անգամ նույնիսկ ընդգծված արժանապատվությամբ, սպասելով, մինչև որ գադարեր սենյակում լսվող քրքիջը,— թող ես խոզ լինեմ. իսկ կինս՝ հարգելոր տիկին։ Ես գազանի կերպար ունեմ, իսկ Կատերինա Իվանովնան, իմ կինը, կրթված անձնավորություն է ու բարձրակա սպայի աղջիկ։ Թող, թող ես սրիկա լինեմ, իսկ նա թե վեհ սիրտ ունի և թե դասաիարակությամբ ազնվացած զգացմունքներով է լեցուն։ Այնինչ... Ը. եթե նա խղճար ինձ, հարգելի պարոն, հարգելի պարոն, չէ՞ որ հարկավոր է, որպեսզի ամեն մարդ այնպես տեղ ունենա, որ նրան էլ խղճան։ Իսկ Կատերինա Իվանովնան թեպետև մեծահոգի կին է, բայց անարդարացի է... Ու թեև ես ինքս էլ հասկանում եմ, որ երբ նա քաշքշում է մազերիցս, քաշքշում է ոչ այլ կերպ, քան սրտագին կարեկցությունից դրդված (հարկավ կբինում եմ առանց շփոթմունքի, նա քաշ-

քլշում է մազերիցս, երիտասարդ,— թունդ արժանապատվությամբ հաստատեց Մարմելադովը՝ դարձյալ լսելով քըրքիջը),— բայց, ասված իմ, ինչ կլիներ, եթե նա գոնե մեկ անգամ... բայց ոչ, ոչ, այս բոլորը իզուր է ու չպետք է ասել, չպետք է ասել... որովհետև շատ անգամ է եղել ցանկալին, ու շատ անգամ են խղճացել ինձ, բայց... բայց այսպես է իմ բռնած գիծը, իսկ ես ի ծնե անասուն եմ։

— Անշուշտ,— հորանջելով ասաց օղեատան տերը։

Մարմելադովը բռունցքով վճռականապես խփեց սեղանին։

— Այսպես է իմ բռնած գիծը։ Գիտե՞ք արդյոք, գիտե՞ք արդյոք, պարոնս, որ ես նույնիսկ նրա գուլպաներն էլ եմ խմելու ոտիս։ Խմելու եմ ոտիս գուլպաները, գուլպաները և ոչ թե կոշիկները, թեև սա գոնե մի քիչ բանի նման կլիներ։ Խմելու եմ ոտիս նաև այնի բլրից գործած նրա գլխաշորը, ուրիշի նվերը, որը նրա սեփականն էր, իմ գնածը չէր, իսկ մենք ապրում ենք մի ցուրտ անկյունում, ու նա այս ձմռան մրսեց, սկսեց հազալ և արդեն արյուն թքել։ Ունենք երեք փոքրիկ երեխա, Կատերինա Իվանովնան առավոտից մինչև գիշեր գործի մեջ է, ամեն ինչ մաքրում է, լվանում, լողացնում երեխաներին, որովհետև փոքրուց սովոր է մաքրության, իսկ կուրծքը թույլ է, թոքախտի հակումով, ու ես այդ զգում եմ։ Մի՞թե ես չեմ զգում։ Որքան շատ եմ խմում, այնքան շատ եմ զգում։ Հենց նրա համար եմ խմում, որ խմելու մեջ կարեկցություն ու զգացմունք եմ փնտրում... խմում եմ, որովհետև խիստ տանջվել եմ ուզում։ — Ու Մարմելադովը ասես հուսալքված, գլուխը թեքեց սեղանին։

— Երիտասարդ,— շարունակեց նա գլխով անելով,— ձեր դեմքի վրա ես ինչ-որ տխրություն եմ կարդում։ Հենց որ ներս մտաք, ես այն կարդացի, դրա համար էլ խոսքս դիմեցի ձեզ։ Հարկավ, ձեզ հաղորդելով իմ կյանքի պատմությունը, ոչ թե խայտառակվել եմ ուզում այս անբաններ-ների առաջ, որոնց առանց այդ էլ ամեն ինչ հայտնի է, այլ զգայուն և կրթված մարդ եմ փնտրում։ Գիտցեք, որ իմ կինը նահանգապետի ազնվականական ինստիտուտում էր դաստիարակվել և ավարտելու ժամանակ շալով պարել էր նահանգապետի և այլ անձանց ներկայությամբ, որի համար

ոսկե մեդալ ու գովասանաթերթ էր ստացել։ Մեդալը... հա, մեդալը ծախել ենք... արդեն վաղուց... հրմ... գովասանաթերթը մինչև այժմ նրա անդուկումն է, ու դեռ վերջերս այն ցույց էինք տալիս տանտիրուհուն։ Ու թեև տանտիրուհու և նրա մեջ անընդհատ խռովություններ են լինում, բայց և այնպես ուզեցինք պարծենալ գոնե որևէ մեկի առաջ, ու տեղեկություններ հաղորդել անցած երջանիկ օրերի մասին։ Ու ես այդ չեմ դատապարտում, չեմ դատապարտում, որովհետև հենց սա է մնացել նրա հուշերում, իսկ մնացածը ամբողջովին հող ու մոխիր է դարձել։ Այո, այո, նա տաքարյուն, հպարտ ու անդրդվելի կին է։ Հատակը ինքն է լվանում և սև հացով է ապրում, բայց չի հանդուրժում, երբ իրեն չեն հարգում։ Այս պատճառով էլ չուզեց ներել պարոն Լեբեզյատնիկովի կոպտությունը, իսկ երբ պարոն Լեբեզյատնիկովը թակեց նրան, նա, կինս, անկողին ընկավ ոչ այնքան հարվածների հետևանքով, որքան զզայնությունից։ Երբ ես ամուսնացա նրա հետ, նա արդեն այրի էր, ուներ երեք երեխա, մեկը մյուսից փոքր։ Առաջին ամուսնու, հետևազորի մի սպայի հետ ամուսնացել էր սիրով, ու նրա հետ փախել էր ծնողների տանից։ Չափազանց սիրում էր ամուսնուն, բայց սա տարվեց թղթախաղով, դատի ենթարկվեց ու այնուհետև մեռավ։ Վերջին շրջանում նա ծեծում էր կնոջը. փաստաթղթերից ինձ քաջ հայտնի է, որ կինը թեև չէր նեղում նրան, բայց մինչև այժմ արցունքներով է նրան հիշում ու նրան ինձնից ավելի լավ մարդ է համարում, ու ես ուրախ եմ, ուրախ եմ, որովհետև գոնե սփոփվում է երևակայությամբ, մտածելով, որ մի ժամանակ երջանիկ է եղել... Ամուսնու մահից հետո նա մնացել էր երեք փոքրահասակ երեխաներով, հեռավոր ու խուլ մի անկյունում, ուր այն ժամանակ գտնվում էի նաև ես, ու մնացել էր այնպես անհուսալի աղքատության մեջ, որը ես նույնիսկ անկարող եմ նկարագրել, թեև այլևայլ շատ արկածներ եմ տեսել։ Բոլոր հարազատները ձեռք քաշեցին նրանից։ Իսկ նա էլ հպարտ էր, չափից դուրս հպարտ... Ու հենց այդ ժամանակ, հարգելի պարոն, հենց այդ ժամանակ ես, որ նույնպես այրի էի և առաջին կնոջիցս տասնչորս տարեկան աղջիկ ունեի, առաջարկեցի իմ ձեռքը. որովհետև չէի կարող անտարբեր լինել այդ տառապանքի

հանդեպ։ Կարող եք պատկերացնել, թե նրա դժբախտությունները ինչ աստիճանի էին հասնում, որ նա լինելով կրթված ու դաստիարակված, այն էլ հայտնի տոհմից, համաձայնեց ամուսնանալ ինձ հետ։ Եվ ամուսնացավ։ Լալով ու հեկեկալով, մորմոքալով ամուսնացավ։ Որովհետև էլ ուրիշ ճանապարհ չկար։ Հասկանո՞ւմ եք արդյոք, հասկանո՞ւմ եք, հարգելի պարոն, երբ այլևս ուրիշ ճանապարհ չի լինում։ Ոչ, դուք այդ դեռ չեք հասկանում... Ու մի ամբողջ տարի ես իմ պարտականությունը բարեպաշտությամբ և սրբությամբ էի կատարում և ձեռք չէի տալիս սրան (նա մատը խփեց կիսաշտոֆին), որովհետև զգացմունքով մարդ եմ։ Բայց դրանով էլ չկարողացա նրան գոհացնել. հետո էլ պաշտոնից դրկվեցի, ոչ թե իմ մեղքով, այլ հաստիքի փոփոխման հանգամանքով, ու այդ ժամանակ սկսեցի խմել... Մեկ և կես տարի առաջ, թափառումներից ու բազմաթիվ փորձություններից հետո, մենք, վերջապես, ընկանք բազմաթիվ հուշարձաններով զարդարված այս փառահեղ մայրաքաղաքը։ Ու այստեղ ես պաշտոն գտա... գտա և դարձյալ կորցրի, հասկանո՞ւմ եք։ Այս անգամ արդեն հենց իմ մեղքով կորցրի, հենց իմ բռնած գծի պատճառով... Հիմա մենք ապրում ենք մի անկյունում, տանտիրուհի Ամալյա Ֆեոդորովնա Լիպևեխզելի մոտ, իսկ թե ինչով ենք ապրում և ինչպես ենք վճարում, չգիտեմ։ Այնտեղ մեզնից բացի շատերն են ապրում... Ամենաայլանդակ Սոդոմ է... Հրմ... այո... Իսկ այդ ժամանակների ընթացքում աղջիկս էլ մեծացավ, առաջին ամուսնությունից է, ու մեծանալով, նա, աղջիկս, ինչե՞ր ասես, որ չքաշեց խորթ մոր երեսից, այդ մասին ես լռում եմ։ Որովհետև Կատերինա Իվանովնան թեև համակված է մեծահոգության զգացումներով, բայց տաքարյուն և ջղայնոտ կին է ու նեղում է նրան... Այո։ Էհ, կարիք չկա հիշել այդ բանը։ Ինչպես և կարող եք պատկերացնել, Սոնյան գաստիարակություն չի ստացել։ Չորս տարի առաջ ես փորձեցի նրան աշխարհագրություն և համաշխարհային պատմություն սովորեցնել, բայց դրանից բան դուրս չեկավ, որովհետև այդ գիտություններից ես թույլ էի և բացի դրանից, կարգին ձեռնարկներ չկային, որովհետև ինչ գրքեր որ կային... հրմ, այժմ արդեն դրանք չկան էլ, ու

այդպես էլ վերջացավ նրա ուսուցումը։ Պարսից Կյուրոսի* վրա կանգ առանք։ Հետո արդեն հասունության հասնելով, կարդաց վիպական բովանդակությամբ մի քանի գիրք, վերջերս էլ, պարոն Լեբեդյատնիկովի միջամտությամբ, կարդաց մի գիրք, Լյուիսի «Ֆիզիոլոգիան», բարեհաճո՞ւմ եք գիտենալ*, կարդաց մեծ հետաքրքրությամբ և նույնիսկ հատվածներ էր կարդում մեզ համար. ահա և նրա ամբողջ կրթությունը։ Իսկ հիմա, հարգելի պարոնս, ինքս իմ կողմից դիմում եմ ձեզ մասնավոր հարցով. աղքատ, բայց մաքուր աղջիկը ձեր կարծիքով արդյո՞ք շատ բան կարող է վաստակել աղնիվ աշխատանքով... օրական տասնհինգ կոպեկ էլ չի վաստակի, պարոն, եթե ազնիվ է և առանձին ձիրքեր չունի, եթե առանց ձեռքերը ծալելու էլ աշխատի։ Այն էլ ասեմ՝ պետական խորհրդական Իվան Իվանովիչ Կլոպշտոկը, բարեհաճե՞լ եք լսել, կես դյուժին հոլանդական շապիկներ կարելու համար մինչև հիմա ոչ միայն փող չտրվեց, այլև վիրավորական ձևով, ոտքերը հատակին խփելով ու անվայել խոսքերով վռնդեց նրան, իբր թե շապիկների օձիքները չափին անհամապատասխան ու ծուռ կարելու համար։ Երեխաները քաղցած են... Կատերինա Իվանովնան գլուխը կորցրած քայլում է սենյակում, այտերի վրա կարմիր բծեր են դուրս տալիս, որ միշտ լինում է այդ հիվանդության հետևանքով։ «Ապրում ես մեզ մոտ, ձրիակեր աղջիկ, ուտում-խմում ես, օգտվում տաքությունից», իսկ ի՞նչ կարելի է ուտել-խմել, երբ երեխաներն էլ երեք օրով մի կտոր հաց չեն տեսնում։ Ես այդ ժամանակ պառկել էի... Էհ, ինչ ասեմ, պառկել էի հարբած ու լսում եմ՝ իմ Սոնյան ասում է (հլու հնազանդ է նա, ձայնը այնպես անուշ է... շեկլիկ է նա, ու երեսը միշտ գունատ է, նիհար), հա, ասում է՝ «Հիմա ի՞նչ, Կատերինա Իվանովնա, մի՞թե ես պետք է գնամ այդ տեսակ բանի»։ Իսկ Դարյա Ֆրանցովնան, որը շարամիտ կին է ու վազուց հայտնի է ոստիկանությանը, երեք անգամ հետամտում է տանտիրուհու միջոցով։ «Ինչ կա որ,— ծիծաղելով պատասխանում է Կատերինա Իվանովնան,— ինչ կարիք կա դա պահել, հո գանձ չէ՞»։ Բայց մի՛ մեղադրեք, հարգելի պարոն, մի մեղադրեք։ Այս բանը ասվել էր ոչ թե առողջ դատողությամբ, այլ հուզված, հի-

վանդ վիճակում, ոսկած երեխաների լացը լսելիս, այն էլ ասվել էր ավելի շուտ վիրավորելու համար, քան ճշգրիտ իմաստով... էհ, այդպես է Կատերինա Իվանովնայի բնավորությունը, ու երբ երեխաները թեկուզ սովից լաց լինեն, իսկույն սկսում է ծեծել նրանց։ Ու տեսնում եմ ես, ժամը մոտ վեցն է, Սոնեչկան վեր կացավ, կապեց գլխաշորը, հագավ վերարկուն, գնաց տանից ու ժամը իններին ետ եկավ։ Եկավ, դիմեց ուղղակի Կատերինա Իվանովնային, լուռ հանեց երեսուն ռուբլի ու դրեց սեղանին, նրա առջև։ Ոչ մի խոսք չասաց, ոչ ոքի չնայեց, այլ վերցրեց մեր դրադեղամե կանաչ աղյուսը (մենք ունենք այդպիսի ընդհանուր դրադեղամե աղյուս), դրանով բոլորովին ծածկեց գլուխն ու երեսը ու պառկեց մահճակալին, երեսը դեպի պատը, միայն ուսերն ու մարմինը հա՛ ցնցվում էին... Իսկ ես, ինչպես և դրանից քիչ առաջ, պառկած էի նույն վիճակում... Ու ես այդ պահին տեսա, նրիտասարդ, ես տեսա, թե ինչպես այնուհետև Կատերինա Իվանովնան, նույնպես ոչ մի խոսք չասելով, մոտեցավ Սոնեչկայի անկողնուն ու ամբողջ երեկո նրա ոտքերի մոտ ծունկ չոքած, համբուրում էր նրա ոտքերը, չէր ուզում վեր կենալ, հետո էլ նրանք երկուսով քնեցին միասին, գրկված... երկուսն էլ... երկուսն էլ... այո... իսկ ես... հարբած պառկել էի։

Մարմելադովը լռեց, կարծես խզվեց նրա ձայնը։ Հետո հանկարծ հապճեպ լցրեց բաժակը, խմեց ու կոնչաց։

— Այն ժամանակներից, պարոնս,— շարունակեց նա մի փոքր լռելուց հետո,— այն ժամանակներից աղջիկս, Սոֆյա Սեմյոնովնան, ստիպված եղավ դեղին տոմս ստանալ և այս պատճառով չէր կարող մեզ մոտ մնալ։ Դրան առանձնապես նպաստեց Դարյա Ֆրանցովնան, այն բանի համար, որ իբրև թե իրեն պատշաճ հարգանք չենք ցույց տվել։ Տանտիրուհին՝ Ամալյա Ֆեոդորովնան, էլ չէր ուզում այդ թույլ տալ (իսկ հենց ինքը առաջ աջակցում էր Դարյա Ֆրանցովնային), պարոն Լեբեզյատնիկովը նույնպես չէր ուզում թույլ տալ... հըմ... հենց Սոնյայի համար էլ նա գժտվեց Կատերինա Իվանովնայի հետ։ Սկզբում նա ինքն էր հետամտում Սոնեչկային, իսկ հետո մեջտեղ եկավ պատվասիրությունը։ «Ինչպե՞ս,— ասում էր նա,— ես, լինելով կրթված մարդ,

այդ տեսակ կնոջ հետ մի բնակարանո՞ւմ պիտի ապրեմ։ Իսկ Կատերինա Իվանովնան չհամբերեց, միջամտեց... ու նրանք գժտվեցին... Հիմա Սոնեչկան մեծ մասամբ մութն ընկնելուն պես է գալիս մեզ մոտ, օգնում է Կատերինա Իվանովնային, ուժերի ներածին չափ փող է բերում... Ինքը ապրում է դերձակ Կապերնաումովի տանը, նրանից բնակարան է վարձել, իսկ Կապերնաումովը կաղ է ու թլվատ, ու նրա ամբողջ բազմանդամ ընտանիքը նույնպես թլվատ է։ Նրա կինն էլ է թլվատ... Մի սենյակում են տեղավորված, իսկ Սոնյան ունի միջնորմով բաժանված իր առանձին սենյակը... Ը-ըմ, այո... աղքատ ու թլվատ մարդիկ են... այո... Առավոտը ես վեր կացա, հագա ցնցոտիներս, ձեռքերս դեպի երկինք բարձրացրի ու գնացի նորին գերազանցություն Իվան Աֆանասևիչի մոտ։ Բարեհաճե՞ւմ եք ճանաչել նորին գերազանցություն Իվան Աֆանասևիչին։ Մ՞չ։ Ուրեմն չեք ճանաչում աստծու մարդուն... Բարեհաճելով ինձնից ամեն ինչ լսել, նույնիսկ արտասվեց։ «Էհ, Մարմելադով,— ասում է նա,— մի անգամ դու արդեն չես արդարացրել իմ հույսերը... Մեկ անգամ էլ եմ քեզ պաշտոնի վերցնում իմ անձնական պատասխանատվությամբ»,— այսպես էլ ասաց։ — «Դե հիշիր ուրեմն այդ, գնա»։ Մտքումս ես համբուրեցի նրա ոտքերը, որովհետև բացահայտ կերպով նա այդ չէր թույլ տա՝ լինելով մեծ աստիճանավոր և պետական ու կրթական նոր մտքերի տեր մարդ. վերադարձա տուն ու հենց որ ասացի, թե դարձյալ ծառայության եմ ընդունվել և ոռճիկ եմ ստանում, տեր աստված, ինչե՞ր կատարվեցին տունը...

Մարմելադովը դարձյալ կանգ առավ ուստիկ հուզված։ Այդ ժամանակ փողոցից ներս մտավ հարբեցողների, արդեն առանց այդ էլ հարբած, մի ամբողջ խումբ, ու մուտքի մոտ լսվեցին վարձված երգեհոնի հնչյունները և յոթ տարեկան մի երեխայի մանկական դողդոջ ձայնը. նա երգում էր «խուտուորկը»։ Աղմուկ բարձրացավ։ Օդեստան տերը և ծառաները զբաղվեցին ներս մտած մարդկանցով։ Մարմելադովը նրանց վրա ուշադրություն չդարձնելով, շարունակեց իր պատմածը։ Թվում էր, որ նա սաստիկ թուլացել էր, բայց որքան ավելի էր հարբում, այնքան շատախոս էր դառնում։ Վեր-

հիշելով երբեմնի իր հաջողությունը ծառայության գծով, նա կարծես թե աշխուժանում էր ու նրա դեմքին ինչ-որ ժըպիտ էր փայլում։ Ռասկոլնիկովը ուշադրությամբ լսում էր։

— Հա, պարոնիս ասեմ, սա եղավ մի հինգ շաբաթ առաջ։ Այո... Հենց որ նրանք երկուսն էլ, Կատերինա Իվանովնան և Սոնեչկան, իմացան այդ լուրը, տեր աստված, ասես ես երկնային արքայություն տեղափոխվեցի։ Առաջ պատահում էր՝ պառկում ես անասունի պես, միայն հայհոյանք ես լսում։ Իսկ այժմ ոտքերի մատների վրա են քայլում, երեխաներին են սաստում՝ «Սու-ուսս, Սեմյոն Զախարիչը պաշտոնավայրում հոգնել է, հանգստանում է։ Ծառայության գնալուց առաջ ինձ սուրճ են խմեցնում, սերուցք են եռացնում։ Սկսել են իսկական սերուցք ճարել, լսո՞ւմ եք։ Եվ ո՞րտեղից տասնմեկ ռուբլի հիսուն կոպեկ գտան ինձ համար վայելուչ հագուստ ճարելու մտադրությամբ, չեմ հասկանում։ Սապոգներ, կալենկորե հիանալի կրծքակալներ, համազգեստ,— այս բոլորը ճարեցին տասնմեկ ռուբլի հիսուն կոպեկով, այս բոլորը գերազանց տեսքով էր։ Առաջին օրը առավոտյան եկա պաշտոնավայրից ու ի՞նչ եմ տեսնում. Կատերինա Իվանովնան պատրաստել է երկու տեսակ կերակուր՝ սուպ ու աղած միս, ծովաբողկով, որոնց մասին մինչ այդ հասկացողություն էլ չունեինք։ Նա ոչ մի շրջազգեստ չունի... ոչ մի շրջազգեստ, բայց ասես պատրաստվեց հյուր գնալու, հագնվեց, այնպէլ ոչ թե որևէ բան կար, այլ այնպես, էլի, կարողանում է չեղած տեղից ամեն ինչ անել, սանրվում է, մի որևէ մաքուր օձիք կապում, թևնոցներ հագնում, բոլորովին ուրիշ անձնավորություն է դառնում, թե ջահելանում և թե գեղեցկանում։ Սոնեչկան, իմ աղավնյակը, օգնում էր փողով, ասում էր՝ առայժմ ես ձեզ մոտ չեմ լինի, դա վայելուչ չէ, կարող եմ անցնել մութն ընկնելուց հետո, որպեսզի ոչ ոք չտեսնի։ Լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք։ Հա, մի անգամ ճաշից հետո պառկեցի քնելու, և ի՞նչ եք կարծում, Եկատերինա Իվանովնան չհամբերեց, դեռ մի շաբաթ առաջ կռվել էր տանտիրուհու, Ամալյա Ֆեոդորովնայի հետ, իսկ հիմա նրան կանչեց մի բաժակ սուրճի։ Երկու ժամ նստեցին և հա՜ փսփսում էին՝ «Հիմա Սեմյոն Զախա-

դիշը ծառայում է ու ոռճիկ է ստանում,— ասում է Կատերինա Իվանովնան,— հենց ինքը գնաց նորին գերազանցության մոտ, ու նորին գերազանցությունը ինքը դուրս եկավ, բոլորին պատվիրեց սպասել, իսկ Սեմյոն Զախարիչին թևից բռնեց ու բոլորի կողքից տարավ կաբինետս։ Լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք։ Ու նորին գերազանցությունը ասում է՝ «Սեմյոն Զախարիչ, ես, իհարկե, հիշում եմ ձեր ծառայությունները, ու թեև դուք ձեռք չեք քաշում այդ թեթևամիտ թուլությունից, բայց քանի որ հիմա խոստանում եք ձեռք քաշել, ու քանի որ առանց ձեզ մեր գործը վատ է դնացել (լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք), ուստի ես հույս եմ դնում ձեր ազնիվ խոսքի վրա»,— ասում է նորին գերազանցությունը, այսինքն՝ Կատերինա Իվանովնան մոգոնում էր այս բոլորը, այն էլ ոչ թե թեթևամտությունից, միայն ինձ գովաբանելու համար։ Ոչ, ինքը հավատում է այս ամենին, երևակայությամբ տփոփում ինքն իրեն, հոգիս վկա։ Ու ես չեմ դատապարտում, ոչ, այդ չեմ դատապարտում... Իսկ վեց օր առաջ, երբ ես իմ առաջին ոռճիկը, քսաներեք ռուբլի քառասուն կոպեկը տուն բերի, ինձ թութուշիկ անվանեց. «թութուշիկս», ասաց նա, երբ երկուսով էինք, հասկանո՞ւմ եք։ Էհ, իմ մեջ ի՞նչ սիրունություն կա, ու ես ի՞նչ ամուսին եմ որ։ Բայց ոչ, կսմթեց թուշս ու ասաց՝ «թութուշիկս»։

Մարմելադովը կանգ առավ, ուզում էր ժպտալ, սակայն հանկարծ նրա կզակը սկսեց ցնցվել։ Ասենք, նա իրեն պահեց։ Այդ օդեստունը, խոսակցի բարոյալքված տեսքը, խոտ փոխադրող բեռնանավերում նրա անցկացրած հինգ գիշերները և օղու շտոփը, և այդ ամենով հանդերձ նրա հիվանդագին սերը դեպի իր կինն ու ընտանիքը,— այս ամենը շփոթեցնում էր նրան ունկնդրողին։ Ռասկոլնիկովը լսում էր լարված, բայց և հիվանդագին զգացումով։ Նա ջղայնանում էր, որ մտել էր այդ օդեստունը։

— Հարգելի պարոն, հարգելի պարոն,— ուշքի գալով, բացականչեց Մարմելադովը,— Օ, պարոնս, գուցե այս ամենը ծիծաղելի է ձեզ համար, ինչպես և այլոց համար, գուցե ես ձեզ անհանգստացնում եմ իմ տնային կյանքի այս բոլոր հիմար, շնչին մանրամասնություններով, իսկ ինձ համար ծիծաղելի չէ։ Հարկավ, ես այս ամենը կարող եմ ղգալ...

Կյանքիս այն ամբողջ դրախտային օրվա և այն ամբողջ երեկոյի ընթացքում ես ինքս էլ թռուցիկ երազանքներով էի ապրվել, այսինքն՝ թե ինչպես պիտի կարգավորեմ այդ ամբոխը, թե հաղցնեմ երեխաներիս, թե հանգիստ տամ Կատերինա Իվանովնային և թե միակ աղջկաս անպատվությունից վերադարձնեմ ընտանիքի գիրկը... էլ ո՞ր մեկն ասեմ... Հույլատարելի է, պարոն։ Հա, պարոնիս ասեմ՝ (Մարմելադովը հանկարծ կարծես ցնցվեց, գլուխը բարձրացրեց ու դեմ առ դեմ նայեց իրեն ունկնդրողին), հենց մյուս օրը, այս բոլոր երազանքներից հետո (այսինքն՝ դա կլինի ուղիղ հինգ օր ու կիսներ առաջ), իրիկնադեմին ես խորամանկ խաբեությամբ, ինչպես գող, հափշտակեցի Կատերինա Իվանովնայի սնդուկի բանալին, ինչ որ մնացել էր բնրածս ռոճիկից հանկարծ, չեմ հիշում, թե սրբան էր, և ահա, նայեցեք ինձ, ամեն ինչ պարզ է։ Հինգերորդ օրն է, որ հեռացել եմ տանից, ու այնտեղ փնտրում են ինձ, ծառայությանս էլ վերջ, համալսարանս Սրբիպետսկի կոչվող կամրջի մոտակա օդեռանն է, փոխարենը սուն հագուստն եմ ստացել... ու ամեն ինչ վերջացավ։

Մարմելադովը բռունցքով խփեց ճակատին, սեղմեց ատամները, փակեց աչքերը և արմունկով պինդ հենվեց սեղանին։ Բայց մի րոպեից հետո նրա դեմքը հանկարծ փոխվեց, և նա ինչ-որ կեղծ խորամանկությամբ և շինծու լրկտությամբ նայեց Ռասկոլնիկովին, ծիծաղեց ու ասաց.

— Այսօր եղա Սոնյայի մոտ, գնացել էի խմելու փող խնդրելու, հա՛-հա՛-հա՛։

— Մի՞թե տվեց,— գոչեց ներս մտածներից մեկը, գոչեց և ամբողջ կոկորդով մեկ քրքջաց։

— Ահա այս կեսշտոֆը նրա փողով է գնված,— ասաց Մարմելադովը՝ դիմելով բացառապես Ռասկոլնիկովին։ — Ներեսուն կոպեկ տվեց, հենց իր ձեռքով, նրա վերջին փողն էր, ինքս տեսա... Ոչինչ չասաց, միայն լուռ նայեց ինձ... Այդպես ոչ թե երկրում, այլ այնտեղ... մարդկանց վրա լալիս են, թախծում ու նրանց չեն կշտամբում, չեն կշտամբում. իսկ դա ցավալի է, ցավալի է, որ չեն կշտամբում... Ներեսուն կոպեկ, այո։ Իսկ չէ՞ որ դրանք այժմ նրան էլ են հարկավոր, հը՞, ի՞նչ եք կարծում, իմ թանկագին պարոն,

Չէ՞ որ այժմ նա պետք է մաքրություն պահպանի։ Փող արժե այդ մաքրությունը, որ առանձնահատուկ է, հասկանո՞ւմ եք, հասկանո՞ւմ եք։ Պետք է պոմադ դնի, առանց դրան հոտ չի՞ կարելի. պետք է ունենա օսլայած յուրկաներ, կարգին ոանամաան, որ ցուցադրի տոտիկը, երբ պետք է անցնել լճափոսից։ Հասկանո՞ւմ եք արդյոք, հասկանո՞ւմ եք, պարոն, թե ինչ է նշանակում այդ մաքրությունը։ Հրմ, իսկ ես, նրա հարազատ հայրը, այդ երեսուն կոպեկը հափշտակեցի, որ խմելու տամ։ Ու խմում եմ ու արդեն խմելու եմ տվել... էհ, ո՞վ կխղճա այնպիսի մեկին, ինչպիսին ես եմ, հը՞։ Հիմա դուք, պարոն, խղճո՞ւմ եք ինձ, թե ոչ։ Ասա, պարոն, խղճո՞ւմ եք, թե՞ ոչ, հա՛-հա՛-հա՛։

Նա ուզում էր լցնել բաժակը, բայց արդեն լցնելու բան չկար։ Կեռ շտոֆը դատարկ էր։

— Ինչո՞ւ պետք է քեզ խղճալ,— բղավեց օղետան տերը, որ դարձյալ մոտեցել էր նրանց։

Լսվեց ծիծաղ ու նույնիսկ հայհոյանք։ Միծաղում ու հայհոյում էին թե լսողները և թե չլսողները՝ հենց միայն նայելով պաշտոնաթող աստիճանավորի կերպարանքին։

— Խղճա՛լ, ինչո՞ւ ինձ խղճալ,— հանկարծ վեր կենալով, ձեռքը դեպի առաջ պարզելով, վճռական ոգեշնչմամբ գոչեց Մարմելադովը, կարծես հենց միայն այդ խոսքերին էր սպասում։ — Ասում ես ինչո՞ւ պետք է խղճալ։ Այո, ինչի՞ համար պետք է ինձ խղճալ։ Ինձ պետք է խաչել, խաչել խաչելափայտի վրա և ոչ թե խղճալ։ Բայց ի խաչ հան, դատավոր, ի խաչ հան, ու խաչելով, խղճա նրան։ Եվ այն ժամանակ ես ինքս քեզ մոտ կգամ խաչվելու, որովհետև ոչ թե ուրախություն, այլ տրտմություն և արցունքներ եմ տենչում... Մի՞թե դու կարծում ես, առևտրական, որ քո այս կես շտոֆը ինձ բերկրանք պատճառեց։ Տխրություն, տխրություն էի ես փնտրում սրա հատակում, տխրություն և արցունքներ, և ճաշակեցի ու գտա, իսկ կխղճա մեզ նա, ով խղճացել է բոլորին և ով հասկանում է ամենքին և ամեն ինչ, նա միակն է, նա էլ դատավոր է։ Կգա նա այն օրը ու կհարցնի՝ «Ո՞ւր է այն դուստրը, որ իրեն մատնել էր չար ու թոքախտավոր խորթ մորը, ուրիշի փոքրահասակ երեխաներին։ Ո՞ւր է այն դուստրը, որ իր երկրային հորը, անպիտք հարբ-

բնցողին, խղճաց՝ չսարսափելով նրա գազանությունից»։ Ու կասե՝ «Եկ, ես արդեն ներել եմ քեզ մի անգամ... Ներել եմ բեզ մի անգամ... Հիմա էլ ներվում են քո մեղքերը բազում, բանի որ շատ ես սիրել...»։ — Ու կների իմ Սոնյային, կների, ես գիտեմ, որ կների...— Ես դա այսօր զգացի իմ սրտում, երբ եղա նրա մոտ... Կդատի ու կների ամենքին, թե բարիներին և թե չարերին, իմաստուններին և հնազանդներին... Ու երբ այդ կվերջացնի ամենքի հետ, կասի մեզ՝ «Հայտնվեք դուք էլ, հայտնվեք, հարբեցողներ, հայտնվեք, թույլեր, հայտնվեք, անամոթներ»։ Ու մենք դուրս կգանք բոլորս առանց ամաչելու և կկանգնենք։ Ու կասի՝ «Խոզեր եք դուք, պոպանի կերպարանք ու նրա դրոշմն ունեցողներ, բայց դուք էլ եկեք։ Ու կրառաուն իմաստունները, կրառաուն խելամիտները՝ «Տեր, ինչո՞ւ ես սրանց ընդունում»։ Ու կասի՝ «Նրա համար եմ սրանց ընդունում, իմաստուններ, նրա համար եմ ընդունում, խելամիտներ, որ սրանցից ոչ մեկն ինքն իրեն չի համարել սուլնին արժանի...»։ Ու կտարածե դեպի մեզ յուր բազուկները, ու մենք ծունկ կչոքենք... լաց կլինենք... և ամեն ինչ կհասկանանք, այն ժամանակ ամեն ինչ կհասկանանք... ու ամենքը կհասկանան... Կատերինա Իվանովնան էլ... Նա էլ կհասկանա... Տեր, եկեսցե արքայությունդ։

Ու Մարմելադովը ընկավ նստարանին, հյուծված և ուժասպառ, ոչ ոքի չնայելով, ասես մոռանալով շրջապատը ու ընկնելով խոր մտածմունքի մեջ։ Նրա խոսքերը որոշ ազդեցություն թողին. մի բոպե լռություն տիրեց, բայց չուտով լսվեցին առաջվա ծիծաղն ու հայհոյանքները։

— Բա՞ն ասաց, էլի։

— Փչում է, հա՞-ա։

— Աստիճանավորի՞ս մտիկ։

Եվ այլն, և այլն։

— Գնանք, պարոն,— հանկարծ ասաց Մարմելադովը՝ բարձրացնելով գլուխը ու դիմելով Ռասկոլնիկովին,— ինձ տեղ հասցրեք... Կոզելի տունը, բակը։ Ժամանակն է... վերադառնալ Կատերինա Իվանովնայի մոտ...

Ռասկոլնիկովը արդեն վաղուց էր ուզում գնալ։ Ինքն էլ մտածում էր օգնել նրան։ Բանից դուրս եկավ, որ Մարմե-

լադովը ոտքերից ավելի թույլ է, քան լեզվից, ու պինդ հենվեց երիտասարդին։ Հարկավոր էր անցնել երկու-երեք հարյուր քայլ։ Որքան մոտենում էին տանը, այնքան շփոթմունքն ու վախը ավելի ու ավելի էին համակում հարբեցողին։

— Ես հիմա չեմ վախենում ոչ Կատերինա Իվանովնայից, ոչ էլ այն բանից, որ նա կսկսի քաշքշել մազերիցս։ Մազերն ի՞նչ են որ... Դատարկ բան են մազերը։ Սա ե՛ս եմ ասում։ Մինչև իսկ լավ է, եթե սկսում են քաշքշել, իսկ ես դրանից չեմ վախենում... ես... նրա աչքերից եմ վախենում... այո... աչքերից... Նրա այտերի կարմիր բծերից էլ եմ վախենում... ու մեկ էլ նրա շնչառությունից եմ վախենում... Դու տեսե՞լ ես, թե այդ հիվանդությունն ունեցողները ինչպես են շնչում, երբ հուզված են լինում... Ծրեխանների լացից էլ եմ վախենում... Որովհետև եթե Սոնյան չի կերակրել, ապա... չգիտեմ, ինչ կլինի, չգիտեմ։ Իսկ ծեծվելուց չեմ վախենում... Գիտցիր, պարոն, որ ծեծը ինձ ոչ թե ցավ, այլ հաճույք է պատճառում, որովհետև առանց դրան ես ինքս էլ չեմ կարող յոլա գնալ։ Դա ավելի լավ է։ Թող ծեծի, սիրտը հանգստացնի... դա ավելի լավ է... Ահա և տունը։ Կոզելի տունը։ Նա փականագործ է, գերմանացի է, հարուստ է... Տար ինձ։

Նրանք բակից ներս մտան և անցան չորրորդ հարկը։ Քանի բարձրանում էին, այնքան մթնում էր սանդուղքը։ Ժամը համարյա տասնմեկն էր, ու թեև այդ պահին Պետերբուրգում իսկական գիշեր չէ, բայց սանդուղքի վերևում շատ մութն էր։

Սանդուղքի ծայրում, բոլորովին վերևում փոքրիկ, մրոտած դուռը բաց էր։ Այրված մոմի մնացորդը լուսավորել էր տասը քայլ երկարությամբ աղքատիկ սենյակը. դա ամբողջովին երևում էր հաշտից։ Ամեն ինչ թափթփված էր խառնիխուռն վիճակում, մանավանդ մանկական այլևայլ լաթերը։ Հետին անկյունը վարագուրված էր ծակծկված սավանով։ Հավանորեն դրա ետևում մահճակալ էր դրված։ Սենյակում կար ընդամենը երկու աթոռ և մոմլաթով պատած ու խիստ պատառոտված մի բազմոց, որի առջև կար սոճու փայտից շինած մի հին, խոհանոցային սեղան, որը ներկ-

ված չէր և ոչնչով չէր ծածկված։ Սեղանի մի ծայրին դըրված էր մարմրող ճարպամոմ՝ երկաթե մոմակալով։ Բանից դուրս էր գալիս, որ Մարմելադովը տեղավորված էր առանձին սենյակում և ոչ թե անկյունում, բայց նրա սենյակը միջանցուկ էր։ Հետևյալ սենյակները կամ վանդակները տանող դուռը կիսաբաց էր. Ամալյա Լիպևեխզելի բնակարանը այդպիսի վանդակների էր բաժանված։ Այնտեղ աղմուկ և ճղճղոց էր։ Քրքջում էին։ Երևի թուղթ էին խաղում ու թեյ խմում։ Այնտեղից երբեմն բոլորովին անպատկառ բառեր էին լսվում։

Ռասկոլնիկովը իսկույն ճանաչեց Կատերինա Իվանովնային։ Դա սարսափելի նիհարած, բարալիկ, բավական լարվածամակ ու գեղակազմ մի կին էր, գեղեցիկ, մուգ խարտյաշ մազերով և իրոք ըծավորվելու չափ կարմրած այտերով։ Նա ետ ու առաջ էր քայլում իր փոքրիկ սենյակում, ձեռքերը կրծքին դրած, շրթունքները չորացած, ու շնչում էր ընդհատ, անհամաչափ։ Նրա աչքերը փայլում էին ինչպես տենդով տառապողի աչքերը, բայց նայվածքը սուր էր ու անշարժ, և հիվանդագին տպավորություն էր թողնում այդ խորախտային ու հուզված դեմքը, որի վրա երևում էին մարմրող մոմի վերջին ցոլքերը։ Ռասկոլնիկովին թվաց, որ նա մոտ երեսուն տարեկան է և իրոք Մարմելադովին սազակոռ չէ... Կատերինա Իվանովնան չլսեց ներս մտնողների ոտնաձայները և նրանց չնկատեց. թվում էր, թե ինչ-որ մոռացման մեջ էր, ոչինչ չէր լսում ու տեսնում։ Սենյակում ոգի ծանր էր, բայց նա չէր բացել լուսամուտը. սանդուղքից կարչահոտություն էր փչում, բայց դեպի սանդուղքը տանող դուռ չէր ծածկված. մյուս սենյակներից, լաց դանից ծխախոտի ծխի քուլաներ էին գալիս. նա հազում էր, բայց այդ դուռ չէր ծածկում։ Ամենափոքր, մոտ մեկ տարեկան աղջիկը նստած, դունդ ու կծիկ եղած ու գլուխը բազմոցին հենած, քնել էր հատակի վրա։ Նրանից մի տարով մեծ տղան ամբողջ մարմնով դողում ու լալիս էր մի անկյունում։ Հավանորեն նրան քիչ առաջ ծեծել էին։ Այդ անկյունում, փոքրիկ եղբոր կողքին, կանգնել էր ավագ աղջիկը և նրա վիզը գրկել լուցկու պես բարալիկ, երկար իր թևով։ Սա մոտ ինը տարեկան էր, բարձրահասակ ու նույն-

պես լուցկու նման բարալիկ, հագած էր միայն մի հնամաշ, ամեն տեղից պատռված շապիկ, ու մերկ ուսերին գցել էր գրադեղամե մաշված վերարկու, որը կարված էր հավանաբեն երկու տարի առաջ, որովհետև հիմա մինչև ծնկներն էլ չէր հասնում։ Ըստ երևույթին նա հանդստացնում էր եղբորը, ինչ-որ փսփսում նրա ականջին, ամեն կերպ ջանում, որ նա մի կերպ դադարեցնի լացը, ու միևնույն ժամանակ նայում էր մորը իր մեծ-մեծ, թուխ աչքերով, որոնք էլ ավելի մեծ էին թվում նրա նիհարած ու վախեցած դեմքի վրա։ Մարմելադովը դեռ ներս չմտած, ծնկաչոք եղավ հենց դռան շեմքին, իսկ Ռասկոլնիկովը նրան դեպի առաջ հրեց։ Տեսնելով անծանոթին, կինը մտացրիվ կանգ առավ նրա առաջ՝ մի ակնթարթ սթափվելով և կարծես մտածելով, թե նա ինչո՞ւ է եկել։ Կինը, սակայն, մտածեց, թե նա գնում է մյուս սենյակները, քանի որ իրենց սենյակը միջանցուկ էր։ Հանգելով այդ մտքին և արդեն այլևս ուշադրություն չդարձնելով նրա վրա, կինը քայլեց դեպի հաշտի դուռը, որպեսզի դա ծածկեր, ու հանկարծ ճչաց՝ տեսնելով հենց շեմքին չոքած իր ամուսնուն։

— Հը՛-ը, եկա՞ր,— կատաղի գոռաց նա,— սրիկա, հրեշ ... հապա ո՞ւր են փողերը, ի՞նչ կա գրպանումդ, ցույց տուր։ Այդ քո զգեստը չէր, ո՞ւր է զգեստդ, ո՞ւր են փողերը, ասա...

Ու կինը նետվեց ամուսնուն խուզարկելու։ Մարմելադովը իսկույն հլու հնազանդությամբ աջ ու ձախ տարածեց ձեռքերը, որպեսզի դրանով հեշտացներ իր գրպանի խուզարկումը։ Ոչ մի կոպեկ փող չկար։

— Հապա ո՞ւր են փողերը,— բղավում էր կինը։ — Օ, տեր աստված, մի՞թե սա բոլորը խմելու է տվել։ Չէ՞ որ սնդուկում տասներկու ռուբլի էր մնում...— և հանկարծ նա կատաղաբար բռնեց ամուսնու մազերից ու քարշ տվեց նրան սենյակ։ Մարմելադովը ինքն էր հեշտացնում նրա ջանքերը՝ խոնարհությամբ, ծնկաչոք սողալով նրա ետևից։

— Սա էլ է ինձ համար հաճույք, սա էլ ինձ ոչ թե ցավ, այլ հաճույք էր պատճառում, հար-գելի պա-րոն,— ճղճղում էր նա։ Կինը քաշքշում էր նրա մազերից, նրա ճակատը մի անգամ նույնիսկ զարկվեց հատակին։ Հատակի վրա քնած

երեխան արթնացավ ու սկսեց լաց լինել։ Անկյունում գտնվող տղան չհամբերեց, դողաց, ճչաց, ու սարսափելի վախեցած, համարյա ուշաթափվելով, նետվեց դեպի քույրը։ Մեծ աղջիկը, ասես քնից վեր թռած, դողում էր տերևի նման։

— Խմելու է տվել, բոլորը, բոլորը խմելու է տվել,— հուսահատ ճչում էր խեղճ կինը,— շորն էլ այն չէ։ Սոված են, սոված են (ու հեծկլտալով, նա ցույց էր տալիս երեխաներին)։ Օ, անիծված կյանք։ Իսկ դուք, դուք չե՞ք ամաչում, որ օղեանից եք գալիս,— հանկարծ հարձակվեց նա Ռասկոլնիկովի վրա,— դու սրա հետ խմել ես հա՞, դու էլ ես սրա հետ խմել։ Կորի գնա։

Որբուտարդը առանց մի խոսք ասելու շտապեց հեռանալ։ Միջանցքում նրանց դուռ բոլորովին բացվեց, ու այնտեղից նայեցին մի բանի հետաքրքրվողներ։ Գոված էին լկտի, ծիծաղող գեմքեր՝ բերաններին պապիրոսներ, ծխամորճներ, գլխներին՝ թասակներ։ Երևում էին բոլորովին չկոճկված խալաթներով, ամառային անվայելուչ կոստյումներով կերպարանքներ, ոմանց ձեռքերին խաղաթղթեր։ Նրանք մի առանձին զվարճությամբ ծիծաղեցին, երբ Մարմելադովը մազերից քաշքշելով բղավում էր, թե դա հաճույք է իր համար։ Նույնիսկ սկսեցին մտնել նրա սենյակը. վերջապես, լսվեց չարագուշակ ճղճղոց. վրա էր հասնում հենց ինքը Ամալյա Լիպևեխզելը, որպեսզի յուրովի կարգ ու կանոն հաստատեր ու խեղճ կնոջը հարյուրերորդ անգամ վախեցներ նախատական հրամանով՝ վաղն ևեթ ազատել բնակարանը։ Ռասկոլնիկովը հեռանալիս ձեռքը տարավ գրպանը, հանեց պղնձադրամը, որ մնացել էր օղեատանը մանրած ռուբլուց, ու անենկատելի դրեց պատուհանի գոգին։ Հետո, արդեն սանդուղքի վրա, միտքը փոխեց և ուզեց ետ դառնալ։

«Ի՞նչ հիմար բան արեցի ես,— մտածեց նա,— նրանք Սոնյա ունեն, իսկ այդ դրամը հենց ինձ է հարկավոր»։ Բայց պատելով, որ արդեն անկարելի է ետ վերցնել, որ առանց այդ էլ ինքը ետ չէր վերցնի, նա ձեռքը թափ տվեց ու գնաց իր բնակարանը։ «Չէ՞ որ Սոնյային պոմադ է հարկավոր,— շարունակեց նա՝ քայլելով փողոցում, և կծու քմծիծաղ տը-

վեց,— փող արժե սույն մաքրությունը... Հըմ, բայց հո Սոնեչկան էլ թերևս այսօր դատարկ նստի, թերևս չօգնի նույն պիտակը, խոշոր գազան որսալը... իր զբաղմունքը... հետևաբար նրանք բոլորը առանց իմ փողի էլ վաղը ձեռնունայն կմնան... Կեցցես, Սոնյա։ Այնուամենայնիվ ինչպիսի՞ ճահիճ են նրանք առաջացրել ու օգտվում են։ Հո օգտվում են, էլի։ Ու ընտելացել են դրան։ Ողբացել են ու ընտելացել։ Սառը մարդը ամեն բանի ընտելանում է։

Ռասկոլնիկովը մտածմունքի մեջ ընկավ։

— Իսկ եթե ես սատանի,— հանկարծ ակամա բացականչեց նա,— եթե իսկապես սատանը չէ մարդը, ընդհանրապես ողջ մարդկային ցեղը, ապա նշանակում է, որ մնացածը ամբողջովին նախապաշարմունք է, միայն շինծու վախ, ու չկա ոչ մի անջրպետ, ու դա այդպես էլ պետք է լինի։

III

Մյուս օրը նա արթնացավ այդպես ուշ, անհանգիստ քնից հետո, որը չէր թարմացրել նրան։ Նա արթնացավ մաղձոտ, ջղային, չարացած վիճակում, ու ատելությամբ դիտեց իր խցիկը։ Դա մի փոքրիկ վանդակ էր վեց քայլ երկարությամբ, ամենաողորմելի տեսք ուներ իր դեղնավուն, փոշոտ ու ամեն տեղ պատից պոկված պաստառներով, և այնքան ցածր էր, որ մի քիչ բարձրահասակ մարդու համար այնտեղ անտանելի կլիներ. շարունակ թվում էր, որ ահա, հենց այն է, գլուխդ կդիպչի առաստաղին։ Կահույքը համապատասխանում էր խցիկին. կար երեք հին, ոչ բոլորովին սարքին աթոռ, մի անկյունում՝ ներկած սեղան, որի վրա մի քանի տետրակներ ու գրքեր էին դրված. դրանք խիստ փոշոտված էին, և դա ցույց էր տալիս, որ արդեն վաղուց ոչ ոք դրանց ձեռք չէր տվել. և, վերջապես, կար մի անճոռնի, մեծ բազմոց, որը բռնել էր համարյա ամբողջ պատը ու ամբողջ սենյակի լայնության կեսը. մի ժամանակ պատած էր եղել ջութով, բայց հիմա ցնցոտիապատ էր, ու Ռասկոլնիկովը դրա վրա էր քնում։ Հաճախ նա քնում էր հենց այնպես, առանց հանվելու, առանց սավանի, ծածկվում էր իր հին, մաշված,

ուսանողական վերարկուով, գլուխը դնում մի փոքրիկ բարձի, որի տակ դնում էր իր ունեցած մաքուր ու հնամաշ ամբողջ ապիտակները, որպեսզի գլխատակը բարձր լիներ։ Բազմոցի առաջ մի փոքրիկ սեղան էր դրված։

Դրանից ավելի խղճուկ ու անմաքուր դրություն դժվար էր պատկերացնել. բայց Ռասկոլնիկովին դա նույնիսկ հաճելի էր իր այժմյան հոգեվիճակում։ Նա վճռականապես մեկուսացել էր բոլորից, ինչպես կրիան իր պատյանում, և նրա մեջ մոլեռություն ու ջղաձգություն էր առաջացնում նույնիսկ սպասուհու դեմքը, որ պարտավորված էր սպասարկել նրան ու երբեմն մտնում էր նրա սենյակը։ Այդպես են լինում որոշ ժենամոլներ, որոնք չափից դուրս կենտրոնանում են որևէ բանի վրա։ Երկու շաբաթ էր, որ բնակարանի տիրուհին նրան ուտելիք չէր տալիս, և նա չէր էլ մտածում գնալ նրանից բացատրություն պահանջելու, թեև առանց հույի էր մնացել։ Նաստասյան, խոհարարուհին ու տանտիրուհու միակ սպասուհին, մասամբ ուրախ էր կենվորի այդպիսի տրամադրության համար և ձեռք էր քաշել ամեն օր նրա խցիկը հավաքելուց ու ավլելուց, միայն շաբաթը մեկ անգամ անհրաժեշտ գալիս էր ավլելու։ Հենց նա էլ հիմա արթնացրեց Ռասկոլնիկովին։

Վեր կաց, ի՞նչ ես քնել, ժամը տասն է,— բղավեց նա։ — Ես քեզ թեյ եմ բերել, գոնե թեյ խմիր։ Տես, ոնց ես լպարել։

Կենվորը բացեց աչքերը, ցնցվեց ու ճանաչեց Նաստասյային։

Թեյը տանտիրուհի՞ն է ուղարկել,— հարցրեց նա՝ դանդաղորեն ու հիվանդոտ տեսքով քիչ բարձրանալով բազմոցից։

Ի՞նչ տանտիրուհի, է՛։

Նաստասյան նրա առջև դրեց իր սեփական, ճաքճքած, արծաթե կիսատ թեյամանը ու շաքարի երկու դեղին կտոր։

- Հա՛, Նաստասյա, խնդրեմ վերցրու,— ասաց Ռասկոլնիկովը՝ խառնշտորելով գրպանը (նա այնպես էլ քնել էր առանց հանվելու) ու հանելով մի քիչ պղնձադրամ,— գնա ինձ համար հաց գնիր։ Երշիկանոցից էլ գոնե մի քիչ էժան երշիկ վերցրու։

— Հացը ես քեզ այս րոպեիս կբերեմ, իսկ երշիկի փոխարեն շշի չե՞ս ուզում։ Լավ շշի է, երեկվանն է։ Դեռ երեկ էի թողել քեզ համար, բայց դու ուշ եկար։ Լավ շշի է։

Երբ շշին բերվեց, ու Ռասկոլնիկովը սկսեց ուտել, Նաստասյան նստեց նրա կողքին, բազմոցին, ու սկսեց խոսել։ Նա գյուղացի կին էր, խիստ շատախոս կին։

— Պրասկովա Պավլովնան ուզում է քո դեմ գանգատվել ոստիկանությանը,— ասաց նա։

Ռասկոլնիկովը խիստ կնճռոտեց դեմքը։

— Ոստիկանությա՞նը։ Ի՞նչ է ուզում նա։

— Փող չես վճարում և սենյակը չես ազատում։ Հայտնի բան է, թե ինչ է ուզում։

— Է-է՛, գրո՛ղը տանի, այդ էր պակաս,— ատամները կրճտացնելով փնթփնթաց Ռասկոլնիկովը,— ոչ, ես հիմա... ժամանակ չունեմ... Հիմար է այդ կինը,— բարձրաձայն ավելացրեց նա։ — Ես այսօր կմտնեմ նրա մոտ, կխոսեմ։

— Հիմարը հիմար է, ոնց որ ես եմ, իսկ դու խելո՞ք ես, ինչ է, հա՞ պառկում ես ու պառկում, քեզնից ի՞նչ կարելի է տեսնել։ Ասում ես, թե առաջ գնում էիր երեխեքին դաս տալու, իսկ հիմի ինչո՞ւ ոչինչ չես անում։

— Ես անում եմ...— դժկամ ու խստորեն ասաց Ռասկոլնիկովը։

— Ի՞նչ ես անում։

— Աշխատանք...

— Ի՞նչ աշխատանք։

— Մտածում եմ,— մի փոքր խորհելով, լուրջ պատասխանեց Ռասկոլնիկովը։

Նաստասյան քա՛հ-քա՛հ ծիծաղեց։ Նա ծիծաղկոտ էր, ու երբ իրեն զվարճալի բան էին ասում, ծիծաղում էր կամացուկ, ամբողջ մարմնով դողում և ցնցվում այնքան, որ ինքն էր զզվում։

— Մտածելով շա՞տ փող ես դիզել,— վերջապես, կարողացավ ասել Նաստասյան։

— Առանց կոշիկների չի կարելի գնալ երեխաներին դաս տալու։ Ասենք, թքել եմ այդ բանի վրա։

— Ջրհորի մեջ մի թքի։

— Երեխաներին դաս տալու համար կոպեկներ են վճարում։ Դրանով ի՞նչ պիտի անես,— դժկամորեն ասաց Ռասկոլնիկովը՝ ասես պատասխանելով հենց իր մտքերին։

— Իսկ քեզ մի ամբողջ կապիտա՞լ է հարկավոր։

Ռասկոլնիկովը տարօրինակ հայացքով նայեց Նաստասյային։

— Այո, մի ամբողջ կապիտալ,— մի փոքր լռելուց հետո կտրուկ պատասխանեց նա։

— Է՜հ, դու շատ ես վերևից բռնում, մի քիչ ցած իջիր-մարդ ես վախենում։ Հաց բերելու գնա՞մ, թե՞ չէ։

Ինչպես կուզես։

Հա, մոռացա, երեկ բեզ նամակ եկավ, տանը չէիր։ Նամա՞կ։ Ի՞նչ, Ումի՞ց է։

Գրիբեյոդովից է։ Իմ փոքրից երեք կոպեկ տվի փոստատարին։ Կուզե՞ս, թե՞ ինչ։

Վե՜ բեր, ի սեր աստծո բեր,— սաստիկ հուզվելով գոչեց Ռասկոլնիկովը,— Օ, տեր աստված։

Մի բոպե հետո բերվեց նամակը։ Այդպես էլ գիտեր, մորից է, Ռ... նահանգից։ Ընդունելով նամակը, նա նույնիսկ գունատվեց։ Վաղուց էր որ նամակ չէր ստանում. բայց հիմա նաև ինչ-որ մի բան ճմլեց նրա սիրտը։

— Նաստասյա, ի սեր աստծո, գնա, առ քո երեք կոպեկը, միայն թե, ի սեր աստծո, շուտ գնա։

Նամակը դողում էր նրա ձեռքերում. նա չէր ուզում այն բացել Նաստասյայի ներկայությամբ. ուզում էր նամակը կարդալիս մենակ լինել։ Երբ Նաստասյան դուրս եկավ, նա իսկույն նամակը մոտեցրեց շրթունքներին ու համբուրեց. հետո դեռ երկար զննում էր հասցեի ձեռագիրը, իր մոր ծանոթ և իրեն սիրելի մանր ու ծուռտիկ ձեռագիրը. մի ժամանակ մայրը նրան կարդալ-գրել էր սովորեցրել։ Ռասկոլնիկովը հապաղում էր. նա կարծես վախենում էր ինչ-որ բանից։ Վերջապես, բացեց ծրարը. նամակը մեծ էր, խիտ, երկու լոտ (12,8 գրամ) քաշով. փոստային երկու մեծ թերթերի գրոտած էին մանրիկ տառերով։

«Սիրելիդ իմ Ռոդյա,— գրել էր մայրը,— ահա արդեն երկու ամսից ավելի է, որ ես նամակով չեմ զրուցել քեզ

Հետո, դրանից ինքս տանջվել եմ և նույնիսկ երբեմն գիշերը չեմ քնել, մտածել եմ։ Բայց դու երևի ինձ չես մեղադրի իմ այս ակամա լռության համար։ Դու գիտես, թե ես քեզ ինչպես եմ սիրում. դու միակն ես մեզ համար, ինձ և Դունյայի համար, դու մեր ամեն ինչն ես, մեր ամբողջ հույսը, ապավենը։ Որքա՜ն ես տանջվեցի, երբ իմացա, որ դու արդեն մի քանի ամիս է, ինչ թողել ես համալսարանը, որովհետև քեզ պահելու հնարավորություն չես ունեցել, և դասերն ու այլ միջոցները վերջացել են։ Ես ինչո՞վ կարող էի քեզ օգնել, երբ տարեկան հարյուր քսան ռուբլի կենսաթոշակ եմ ստանում։ Տասնհինգ ռուբլին, որ քեզ ուղարկել էի չորս ամիս առաջ, ինչպես ինքդ գիտես, փոխարինաբար վերցրել էի այստեղի վաճառական Վասիլի Իվանովիչ Վախրուշինից՝ այդ նույն կենսաթոշակի հաշվին։ Նա բարի մարդ է, քո հոր ընկերն է եղել։ Բայց նրան իրավունք տալով իմ փոխարին ստանալու թոշակը, ես պետք է սպասեի, մինչև որ վճարվեր պարտքը, իսկ դա միայն այժմ կատարվեց, այնպես որ այդ ամբողջ ժամանակ ես ոչինչ չէի կարող քեզ ուղարկել։ Բայց հիմա, վառք աստծո, կարծում եմ, որ կարող եմ քեզ փող ուղարկել, և առհասարակ, հիմա մենք կարող ենք պարծենալ մեր բախտով, որի մասին շտապում եմ հաղորդել քեզ։ Նախ, սիրելի Ռոդյա, գուցե դու գլխի ես ընկնում, որ ահա մեկ և կես ամիս է, որ քույրդ ապրում է ինձ հետ, ու մենք այսուհետև այլևս չենք բաժանվի։ Փառք քեզ աստված, վերջացան նրա տանջանքները, բայց քեզ ամեն ինչ կպատմեմ ըստ կարգի, որ դու իմանաս, թե ինչպես է եղել ամեն ինչ, ու մինչև այժմ մենք քեզնից ինչ էինք թաքցնում։ Երբ երկու ամիս առաջ դու ինձ գրել էիր, թե ինչ-որ մեկից լսել ես, որ Դունյան շատ կոպտություններ է տանում պարոնայք Սվիդրիգայլովների տանը և ինձնից ճշգրիտ բացատրություններ էիր խնդրում, ես այն ժամանակ քեզ ի՞նչ կարող էի պատասխանել։ Եթե ես քեզ գրեի ամբողջ ճշմարտությունը, ապա դու անշուշտ ամեն ինչ կթողնեիր ու թեկուզ ոտով կգայիր մեզ մոտ, որովհետև ես գիտեմ թե քո բնավորությունը և թե քո զգացմունքները, և դու թույլ չէիր տա վիրավորել քո քրոջը։ Ես ինքս հուսալքված էի, բայց

ինչ արած։ Այն ժամանակ ես ինքս էլ չգիտեի ամբողջ ճշմարտությունը։ Իսկ գլխավոր դժվարությունն այն էր, որ Դունեչկան անցյալ տարի մտնելով նրանց տունը իբրև դաստիարակչուհի, առաջուց վերցրեց ամբողջ հարյուր ռուբլի, պայմանով, որ ամեն ամիս պահեն ռոճիկից, ուրեմն առանց պարարը վճարելու չէր կարելի թողնել պաշտոնը։ Իսկ այդ դումարը (հիմա կարող եմ քեզ ամեն ինչ բացատրել, անգին Ասպյա) նա վերցրեց առավելապես նրա համար, որ քեզ ուղարկեր վաթսուն ռուբլի, որը քեզ շատ էր հարկավոր, և որը դու անցյալ տարի ստացար մեզնից։ Մենք այն ժամանակ քեզ խաբեցինք, ասեցինք, որ դա Դունեչկայի առաջվա կուտակած փողերից է, բայց դա այդպես չէր, իսկ հիմա քեզ հայտնում եմ ամբողջ ճշմարտությունը, որովհետև հիմա ստացած կոմբոյ ամեն ինչ փոխվել է դեպի լավը, և որովհետև դու պետք է գիտենաս, թե Դունյան ինչպես է սիրում քեզ և ինչպիսի անգին սիրտ ունի։ Հա, պարոն Սվիդրիգայլովը ակզբում նրա հետ շատ կոպիտ էր վարվում և սկսեցին շուրջը նրան անքաղաքավարի ու հեգնական վերաբերմունք էր ցույց տալիս... Բայց չեմ ուզում հիշատակել այդ բոլոր ծանր մանրամասնությունները, որպեսզի իզուր տեղը քեզ չհուզեմ, երբ հիմա արդեն ամեն ինչ վերջացել է։ Կարճ ասած, չնայելով Մարֆա Պետրովնայի՝ պ. Սվիդրիգայլովի կնոջ, ու բոլոր տնեցիների բարի ու ազնիվ վարմունքին, Դունեչկայի դրությունը շատ ծանր էր, մանավանդ, երբ պ. Սվիդրիգայլովը գնդում ունեցած իր հին սովորությամբ Բաքուի ապրելցության տակ էր գտնվում։ Բայց հետո ի՞նչ դուրս եկավ։ Երևակայիր, այդ խելացնորը արդեն վաղուց կիրք էր տածում դեպի Դունյան, բայց ամեն ինչ քողարկում էր կոպտությամբ և արհամարհանքով։ Գուցե նա ինքն էլ ամաչում էր ու սարսափում՝ լինելով տարեց մարդ և ընտանեհայր, փայփայելով այդպիսի սին հույսեր, դրա համար էլ ակամայից չարանում էր Դունյայի վրա։ Գուցե և ուզում էր իր վարմունքի կոպտությամբ ու ծաղրանքներով ուրիշներից թաքցնել ամբողջ ճշմարտությունը. Բայց, վերջապես, շամբրեց, ու համարձակվեց բացահայտ ու կեղտոտ առաջարկություն անել Դունյային՝ խոստանալով զանազան պարգև-

ներ տալ, և բացի այդ, թողնել ամեն ինչ ու նրա հետ մեկնել ուրիշ գյուղ կամ թերևս արտասահման։ Կարող ես պատկերացնել Դունյայի բոլոր տանջանքները։ Պաշտոնը չէր կարող թողնել ոչ միայն դրամական պարտքի պատճառով, այլև խնայելով Մարֆա Պետրովնային, որը կարող էր հանկարծ կասկածներ ունենալ, հետևաբար ընտանիքում կարող էր երկպառակություն ծագել։ Դունեչկայի համար էլ դա մեծ խայտառակություն կլիներ, բանը այլ կերպ չէր լինի։ Այստեղ կային նաև ուրիշ շատ այլևայլ պատճառներ, այնպես որ Դունյան ոչ մի կերպ չէր կարող հուսալ, թե վեց շաբաթից ավելի շուտ կհեռանար այդ սարսափելի տնից։ Իհարկե, դու գիտես Դունյային, գիտես, թե որքան խելացի է նա, և ինչպիսի կայուն բնավորություն ունի։ Դունեչկան կարող է շատ բան հանդուրժել և նույնիսկ ամենածայրահեղ դեպքերում իր մեջ այնքան մեծահոգություն գտնել, որ չկորցնի իր հաստատակամությունը։ Նա ինձ նույնիսկ չգրեց ամեն ինչի մասին, որպեսզի ինձ չտխրեցներ, իսկ մենք հաճախ միմյանց լուրեր էինք հաղորդում։ Վրա հասավ անսպասելի վախճանը։ Մարֆա Պետրովնան լսեց, թե ինչպես այդում իր ամուսինը Դունյային աղերսում էր իրեն պատկանել, ու ամեն ինչ թարս հասկանալով, մեղադրեց հենց միայն Դունյային, կարծելով, թե նա է այդ ամենի պատճառը։ Հենց այնտեղ, այդում նրանց մեջ սարսափելի վեճ տեղի ունեցավ։ Մարֆա Պետրովնան նույնիսկ խփեց Դունյային, ոչինչ չէր ուզում լսել, մի ամբողջ ժամ ճղճղում էր, ու վերջապես, հրամայեց իսկույն Դունյային ինձ մոտ, քաղաք տանել գյուղացու հասարակ սայլով, որի մեջ շպրտել էին նրա բոլոր իրերը, սպիտակեղենը, շրջազգեստները, ինչ որ պատահել էր, և այդ բոլորը չկապված, չդասավորված։ Ճանապարհին հորդ անձրև եկավ, ու վիրավորված և խայտառակված Դունյան ստիպված էր մուժիկի հետ ամբողջ տասնյոթ վերստ անցնել շծածկված սայլով։ Հիմա մտածիր, թե երկու ամիս առաջ քեզնից ստացած նամակին ես ի՞նչ կարող էի պատասխանել և ինչի՞ մասին պիտի գրեի իմ նամակում։ Ինքս հուսահատված էի. չէի համարձակվում քեզ հաղորդել ճշմարտությունը, որովհետև դու քեզ շատ դրժբախտ կզգայիր, կվշտանայիր ու կզայրանայիր, և ի՞նչ կա-

լող էիր անել, թերևս դու քեզ կործանեիր, Դունեչկան էլ արգելում էր այդ մասին գրել քեզ. իսկ ես չէի կարող նամակը լցնել դատարկ բաներով, գրել որևէ բանի մասին, որովհետև շատ և շատ վշտացած էի։ Մի ամբողջ ամիս մեզ մոտ, ամբողջ քաղաքով մեկ բամբասանքներ էին պտտվում այս պատմության մասին, ու բանը այնտեղ հասավ, որ ես ու Դունյան նույնիսկ եկեղեցի էլ չէինք կարող գնալ արհամարհական հայացքների և փսփսոցների պատճառով, նույնիսկ մեր ներկայությամբ այդ մասին ասեկոսներ էին լինում։ Բոլոր ծանոթները մեզնից երես դարձրին, բոլորը մեզ նույնիսկ չէին էլ բարևում, ու ես հշգրիտ իմացա, որ վաճառականների գործակատարները և մի քանի գրասենյակային ծառայողներ ուզում էին մեկ սուր վիրավորանք պատճառել՝ կուզը բռնել մեր տան դարպասին, այնպես որ տանտերերը ակամայից պահանջեն, որ մենք հեռանանք բնակարանից։ Այս բոլորի պատճառը Մարֆա Պետրովնան էր, որը բոլոր տներում մեղադրում և խայտառակում էր Դունյային։ Նա մեկանում բոլորի հետ ծանոթ է և այս ամսում բոպեն մեկ գալիս էր քաղաք. ու որովհետև նա մի քիչ շատախոս է և սիրում է բոլորին ու ամեն մեկին պատմել իր ընտանեկան գործերի մասին և մանավանդ գանգատվել իր ամուսնուց. մի բան որ խիստ վատ է,— ուստի կարճ ժամանակում ամբողջ պատմությունը տարածեց ոչ միայն քաղաքում, այլև գավառում։ Ես հիվանդացա, իսկ Դունեչկան ինձնից ավելի պինդ էր. օ, եթե դու տեսնեիր, թե նա ինչպես էր ամեն ինչ տանում, ինձ էլ մխիթարում ու քաջալերում։ Նա հրեշտակ է։ Բայց աստծո գթությամբ մեր տանջանքները կրճատվեցին. պարոն Սվիդրիգայլովը խելքի եկավ ու գլուխ, ու հավանորեն խղճալով Դունյային, նրա ամբողջ անմեղության մասին լիակատար ու ակներև ապացույցներ ներկայացրեց Մարֆա Պետրովնային, այն է, մի նամակ, որը Դունյան ստիպված էր գրել ու այգում հանձնել պ. Սվիդրիգայլովին և որով մերժում էր վերջինիս պահանջած անձնական բացատրությունները ու գաղտնի տեսակցություններ։ Դունյան այդ նամակը գրել էր այն ժամանակ, երբ Մարֆա Պետրովնան գեռ նրանց չէր տեսել այգում։ Դունեչկայի մեկնելուց հետո նամակը մնացել էր պ. Սվիդրիգայլովի

մոտ։ Դունյան այդ նամակում բուն, լիակատար ցասումով ու դայրույթով կշտամբում էր նրան՝ Մարֆա Պետրովնայի նկատմամբ անազնիվ վարքի համար, հիշեցնում էր նրան, որ նա հայր է և ընտանիք ունի և վերջապես, նողկալի է նրա մտադրությունը— տանջել ու դժբախտացնել առանց այդ էլ դժբախտ և անպաշտպան աղջկան։ Մի խոսքով, սիրելի Ռոդյա, այդ նամակը այնպիսի աղնվությամբ ու սրբատառուչ է գրված, որ ես կարդալիս հեկեկում էի, ու մինչև այժմ չեմ կարող կարդալ առանց արտասվելու։ Բացի դրանից, իրրև Դունյայի արդարացում, վերջապես, հայտնի դարձան նաև ծառաների վկայությունները, իսկ նրանք ավելի շատ բան էին տեսել ու ավելի շատ բան գիտեին, քան ենթադրում էր ինքը՝ պ. Սվիդրիգայլովը, ինչպես սովորաբար լինում է։ Մարֆա Պետրովնան բոլորովին ապշած էր և «նորից սպանված», ինչպես նա ինքն էր մեզ խոստովանում, բայց նաև լիովին համոզվել էր Դունչկայի անմեղության մեջ, ու հենց մյուս օրը, կիրակի օրը ժամանելով ուղղակի տաճար, ծնկաչոք և արտասվալից աղերսում էր աստվածամորը, որ իրեն ուժ տա տանելու այդ նոր փորձությունը և կատարելու իր պարտքը։ Այնուհետև, առանց որևէ մեկի մոտ անցնելու, ուղղակի տաճարից եկավ մեզ մոտ, ամեն ինչ մեզ պատմեց, դառն լացեց ու լիովին զղջալով, գրկում ու աղերսում էր Դունյային՝ ներել իրեն։ Նույն առավոտյան, ամենևին չհապաղելով, հենց մեր տանից գնաց քաղաքի մյուս տները ու ամենուրեք գովասանական խոսքեր ասելով Դունյայի մասին, արցունք թափելով, վերականգնեց նրա անմեղությունը և նրա զգացմունքների ու վարքի աղնվությունը։ Դեռ ավելին. բոլորին ցույց էր տալիս ու բարձրաձայն կարդում էր Դունչկայի նամակը պ. Սվիդրիգայլովին և նույնիսկ թույլ էր տալիս հանել դրա պատճենը (ինձ թվում է, որ դա ավելորդ էր)։ Այսպիսով, նա ստիպված եղավ մի քանի օր քաղաքում այցելել բոլորին, որովհետև ոմանք նեղանում էին, որ մյուսներին նախապատվություն է տրված, ու այս կերպ հերթեր առաջացան, այնպես որ յուրաքանչյուր տանը արդեն նախօրոք սպասում էին, ու բոլորը գիտեին, որ այս ինչ օրը Մարֆա Պետրովնան այսինչ տանը կարդալու է այդ նամակը, ու յուրաքանչյուր ընթերցմանը

պարձյալ հավաքվում էին նույնիսկ այն մարդիկ, որոնք նամակի ընթերցումը արդեն մի քանի անգամ լսել էին իրենց տներում ու հերթով նաև ուրիշների, ծանոթների տներում։ Իմ կարծիքն այն է, որ այստեղ շատ բան, խիստ շատ բան ավելորդ էր, բայց այդպես է Մարֆա Պետրովնայի բնավորությունը։ Գոնե նա միանգամայն վերականգնեց Գունեշկայի պատիվը, և այս գործի ամբողջ գարշելիությունը, իբրև անջնջելի խայտառակություն, ընկավ նրա ամուսնու, որպես դիմավոր հանցավորի վրա, այնպես որ, կարելի է նույնիսկ խղճալ նրան. չափից դուրս խիստ վարվեցին այդ խեղճի հետ։ Անմիջապես սկսեցին Գունյային հրավիրել պատեր տալու մի քանի տներում, բայց նա հրաժարվեց։ Ընդհանրապես բոլորը հանձնած սկսեցին մի առանձին հարգանքով վերաբերվել նրան։ Այս ամենը նպաստեց գլխավորապես այն անհաղթելի վեպրին, որի շնորհիվ, կարելի է ասել, փոխվում էր մեր ամբողջ բախտը։ Իմացիր, սիրելի Սոֆյա, որ մի փեսացու խնդրել է Գունյայի ձեռքը, և սա արդեն իր համաձայնությունն է տվել, որի մասին շտապում եմ քեզ հայտնել։ Ու թեև այս բանը առանց քո խորհրդի է արվել, բայց դու հավանորեն չես նեղանա ոչ ինձանից, ոչ էլ քո քրոջից, որովհետև հենց գործից կտեսնես, որ մենք չէինք կարող դա հետաձգել և սպասել մինչև քեզնից պատասխան ստանալը։ Դու ինքդ էլ չէիր կարողանա հեռակա կարգով ամեն ինչ ճշտությամբ կշռադատել։ Բանը այսպես եղավ։ Նա, Պյոտր Պետրովիչ Լուժինը, արդեն արքունի խորհրդական է և հեռավոր ազգականն է Մարֆա Պետրովնայի, որը շատ բաներով աջակցեց այս գործին։ Փեսացուն նրա միջոցով ցանկություն հայտնեց ծանոթանալ մեզ հետ, ինչպես հարկն է ընդունվեց մեզ մոտ, սուրճ խմեց, իսկ մյուս օրը նամակ ուղարկեց, որով շատ քաղաքավարի հայտնեց իր առաջարկությունը և խնդրեց շուտափույթ և վճռական պատասխան տալ։ Նա գործունյա և կրթված մարդ է, հիմա շտապում է մեկնել Պետերբուրգ, այնպես որ յուրաքանչյուր բոպեն թանկ է նրա համար։ Հասկանալի է, որ մենք սկզբում խիստ զարմացած էինք, որովհետև այդ ամենը չափազանց շուտ և անսպասելիորեն կատարվեց։ Այն ամբողջ օրը մենք երկուսով մտածում ու կշռադատում էինք

այս ամենը։ Նա հուսալի ու ապահովված մարդ է, երկու տեղ է ծառայում և արդեն սեփական կապիտալ ունի։ Ճիշտ է, նա արդեն քառասունհինգ տարեկան է, բայց բավական հաճելի արտաքին ունի և դեռ կարող է կանանց դուր գալ, և առհասարակ նա միանգամայն պատկառելի ու վայելուչ մարդ է, միայն թե մի քիչ նոթոտ է ու մի քիչ էլ հպարտ։ Բայց դա դուցե լավում է հենց այնպես, առաջին հայացքից։ Նախազգուշացնում եմ քեզ, սիրելի Ռոդյա, երբ Պետերբուրգում անանվես նրա հետ, որ շատ շուտով տեղի կունենա, ու երբ առաջին հայացքից նրա մեջ մի որևէ անցանկալի բան նկատես, ապա մի դատիր չափից դուրս արագ ու հապճեպ, ինչպես այդ հատուկ է քեզ։ Սա ի միջի այլոց եմ ասում, թեև հավատացած եմ, որ նա քեզ վրա հաճելի տպավորություն կթողնի։ Բացի դրանից, մի որևէ մարդու ճանաչելու համար պետք է աստիճանաբար և զգուշությամբ հետամտել նրան, այդ կերպ խուսափել սխալից ու նախապաշարումից, թե չէ հետո դժվար կլինի դրանք ուղղել և հարթել։ Իսկ Պյոտր Պետրովիչը միանգամայն հարգելի մարդ է, գունե շատ նշաններ այդ են վկայում։ Հենց առաջին անգամ այցելելով մեզ, նա հայտարարեց, որ ինքը դրական մարդ է, ու ինչպես ինքը արտահայտվեց, շատ բաներով համամիտ է «մեր նորագույն սերունդների համոզմունքներին» և բոլոր նախապաշարմունքների թշնամի է։ Նա էլի շատ բան էր ասում, որովհետև կարծես թե մի քիչ սնափառ է և շատ է սիրում, որ իրեն լսեն, բայց չէ՞ որ դա համարյա արատ չէ։ Ես, իհարկե, քիչ բան հասկացա, բայց Դունյան ինձ բացատրեց, որ նա թեև մեծ կրթություն ունեցող մարդ չէ, բայց խելացի է և կարծես թե բարի է։ Դու հո գիտես քրոջդ բնավորությունը, Ռոդյա։ Նա հաստատակամ, խելոք, համբերատար և մեծահոգի աղջիկ է, թեև դյուրաբորբոք սիրտ ունի, մի բան, որ ես լավ եմ ուսումնասիրել։ Իհարկե, ոչ նրա, ոչ էլ Պյոտր Պետրովիչի կողմից մի առանձին սեր չկա, բայց Դունյան բացի խելոք աղջիկ լինելուց, միևնույն ժամանակ նաև հրեշտակի պես աղնիվ էակ է և իր պարտքը կհամարի երջանկացնել ամուսնուն, որը իր հերթին կհոգա նրա բախտավորության մասին, իսկ դրա նկատմամբ մենք առայժմ կասկածելու մեծ պատճառներ չունենք,

ինձ պետք է խոստովանել, որ գործը շուտ կատարվեց։ Այն էլ ասեմ՝ նա խիստ հաշվենկատ մարդ է, և, իհարկե, ինքը կտեսնի, որ իր ամուսնական երջանկությունը այնքան հաստատուն կլինի, որքան Դունյան նրա հետ իրեն երջանիկ կզգա։ Իսկ եթե կան բնավորության ինչ-որ անհարթություններ և նույնիսկ մտքերի որոշ անհամերաշխություն (որը ամենաերջանիկ ամուսնություններում էլ կարող է լինել), ապա այդ մասին Դունեչկան ինքը ինձ ասաց, որ ինքն իր վրա հույս է դնում, որ այստեղ անհանգստանալու բան չկա, և որ ինքը շատ բան կարող է տանել, պայմանով, որ հետագա հարաբերությունները ազնիվ ու արդարացի լինեն։ Օրինակ, Պյոտր Պետրովիչը ինձ էլ սկզբում կարծես թե խքաստասիրա թվաց, բայց չէ՞ որ դա կարող է առաջանալ նրա տիտակությունից, դա անպայման այդպես է։ Օրինակ, երկրորդ տեսակցության ժամանակ, արդեն համաձայնություն ստանալով, նա ասաց, որ առաջ էլ, երբ չէր ճանաչում Դունյային, որոշել էր առնել մաքուր, բայց անօժիտ աղջիկ, ու անպայման այնպիսի աղջիկ, որը աղքատ է ապրել. որովհետև, ինչպես բացատրեց նա, ամուսինը ոչնչով չպիտի պարտական լինի իր կնոջը, այլ շատ ավելի լավ է, եթե կինը ամուսնուն իր բարերարն է համարում։ Ավելացնում եմ, որ նա մի փոքր ավելի մեղմ ու սիրալիր արտահայտվեց, քան ես գրեցի, որովհետև ես մոռացել եմ նրա ասած խոսքերը, այլ միայն միտքն եմ հիշում, և բացի դրանից, նա այդ բնավ չասաց կանխամտածված ձևով, այլ ըստ երևույթին խոսակցության ընթացքում թոցրեց բերանից, այնպես որ հետո աշխատում էր շտկել ու մեղմել իր ասածը, բայց և այնպես դա ինձ մի քիչ խիստ թվաց, ու ես հետո այդ մասին հաղորդեցի Դունյային։ Բայց Դունյան նույնիսկ սրտնեղելով ինձ պատասխանեց, որ «խոսքը դեռ գործ չէ», և դա, իհարկե, ճշմարիտ է։ Նախքան վճիռ ընդունելը Դունյան ամբողջ գիշերը չքնեց, ու կարծելով, թե ես արդեն քնած եմ, վեր կացավ անկողնուց ու ամբողջ գիշեր սենյակում ետ ու առաջ էր քայլում. վերջապես, ծունկ չոքեց սրբապատկերի առաջ և երկար ու ջերմ աղոթեց, իսկ առավոտյան ինձ ասաց, որ որոշել է համաձայնություն տալ։

Ես արդեն հիշատակեցի, որ Պյոտր Պետրովիչը հիմա

մեկնում է Պետերբուրգ։ Նա այնտեղ մեծ գործեր ունի, ուզում է Պետերբուրգում հանրային փաստաբանական գրասենյակ բաց անել։ Նա արդեն վաղուց զբաղվում է այլևայլ հայցերով ու դատերով և հենց մոտ օրերս մի խոշոր դատ շահեց։ Նրան անհրաժեշտ է Պետերբուրգ մեկնել այն պատճառով, որ այնտեղ, սենատում մի խոշոր գործ ունի։ Այսպիսով, սիրելի Ռոդյա, նա քեզ էլ շատ օգտակար կլինի նույնիսկ ամեն ինչով, և ես ու Դունյան արդեն որոշել ենք, որ դու նույնիսկ հենց այժմյանից կարող էիր անմիջապես սկսել քո ապագա կարիերան ու քո վիճակը արդեն պարզ որոշված համարել։ Օ՜, եթե այդ իրագործվե՜ր։ Դա այնպիսի օգուտ կլիներ, որ կհամարվեր ոչ այլ բան, քան մեր նկատմամբ ամենակալի ուղղակի ողորմածություն։ Դունյան հենց միայն այդ մասին է երազում։ Մենք արդեն ռիսկ արեցինք դրա վերաբերյալ մի քանի խոսք ասել Պյոտր Պետրովիչին։ Նա զգուշությամբ արտահայտվեց և ասաց, թե քանի որ ինքը չի կարող քարտուղար չունենալ, ուրեմն, իհարկե, ավելի լավ է ուճիկ վճարել աղգականին, քան օտարին, եթե միայն նա այդ պաշտոնին ընդունակ լինի (այդ էր պակաս, որ դու ընդունակ չլինես), բայց նաև իսկույն կասկած հայտնեց, որ դու զբաղված կլինես քո համալսարանական պարապմունքներով և ժամանակ չես ունենա իր գրասենյակում աշխատելու համար։ Այս անգամ գործը դրանով էլ վերջացավ, բայց Դունյան դրանից բացի, հիմա ուրիշ ոչ մի բանի մասին չի մտածում։ Այժմ նա արդեն մի քանի օր ուղղակի ինչ-որ տենդով է բռնված և կազմել է մի ամբողջ նախագիծ այն մասին, որ հետագայում դու կարող ես լինել Պյոտր Պետրովիչի օգնականը կամ նույնիսկ կոմպանիոնը նրա դատական զբաղմունքներում, մանավանդ որ դու իրավաբանական ֆակուլտետումն ես։ Ես, Ռոդյա, միանդամայն համաձայն եմ նրա հետ և համամիտ եմ նրա բոլոր պլաններին ու հույսերին, որոնք լիովին հավանական եմ համարում։ Ու չնայած Պյոտր Պետրովիչի միանգամայն հասկանալի այժմյան խուսափողականության (որովհետև նա դեռ քեզ չի ճանաչում), Դունյան հաստատ համոզված է, որ ամեն ինչ կհաջողեցնի ապագա ամուսնու վրա իր բարերար ազդեցությամբ, և նա դրանում հավատացած է։ Դե, իհար-

կե, մենք Պյոտր Պետրովիչին որևէ բան չասացինք հետագայի վերաբերյալ մեր այս երազանքների մասին և, որ գըլխավորն է, այն մասին, որ դու կլինես նրա կոմպանիոնը։ Նա դրական մարդ է, ու թերևս սառն վերաբերվեր, որովհետև այդ ամենը նրան լոկ երազանքներ կթվային։ Ինչպես նույնպես ոչ ես, ոչ էլ Դունյան նրան դեռ ոչ մի խոսք չենք ասել, թե մենք լիահույս ենք, որ նա մեզ կօգնի քեզ փողով օժանդակելու, քանի դեռ դու համալսարանումն ես. չենք ասել, որովհետև դա նախ՝ ինքնին կլինի հետագայում, և նա հավանորեն առանց ավելորդ խոսքերի ինքը կառաջարկի այդ օգնությունը (այդ էր պակաս, որ նա այդ բանը մերժեր Դունյային), մանավանդ որ դու ինքդ էլ կարող ես գրասենյակում գտնել նրա աչ Ֆեոքը և նրա այդ օգնությունը ստանալ ոչ թե իբրև բարեգործության, այլ իբրև քո վաստակած ռոճիկը։ Դունեչկան այսպես է ուզում կազմակերպել գործը, ու ես միանգամայն համաձայն եմ նրա հետ։ Երկրորդ, չենք ասել, որովհետև ես առանձնապես ուզում էի սոսրիկա մեր հանդիպման ժամանակ քեզ և նրան հավատար վիճակում տեսնել։ Երբ Դունյան քո մասին հիացմունքով էր խոսում նրա հետ, Պյոտր Պետրովիչը պատասխանեց, որ յուրաքանչյուր մարդու մասին դատելու համար պետք է անձամբ և մոտիկից դիտել նրան, և որ ինքը քո մասին կարծիք կկազմի այն ժամանակ, երբ կծանոթանա քեզ հետ։ Գիտե՞ս ինչ, իմ անգին Ռոդյա, ինձ թվում է, որ մի քանի նկատառումներով (որոնք, սակայն, ամենևին չեն վերաբերվում Պյոտր Պետրովիչին, այլ հենց այնպես, իմ անձնական, դուցե նույնիսկ պատավական, կնոջական քմահաճույքներն են) թերևս ավելի լավ կլինի, եթե նրանց ամուսնությունից հետո ես ապրեմ ոչ թե նրանց հետ, միասին, այլ առանձին, ինչպես որ հիմա ապրում եմ։ Ես միանգամայն հավատացած եմ, որ նա այնքան աղնիվ ու քաղաքավարի կլինի, որ ինքը կհրավիրի ինձ և կառաջարկի այլևս չրաժանվել իմ աղջկանից, ու եթե մինչև այժմ այդ չի ասել, ապա, իհարկե, այն պատճառով, որ առանց խոսքերի էլ այդպես է ենթադրվում. բայց ես կհրաժարվեմ։ Ես կյանքում հաճախ նկատել եմ, որ զոքանչները այնքան էլ փեսաների սրտովը չեն լինում, իսկ ես ոչ միայն չեմ ուզում

թեկուզ որևէ մեկին նույնիսկ ամենաշնչին բեռ լինել, այլև ուզում եմ ինքս լիովին ազատ լինել՝ քանի դեռ ունեմ թեկուզ մի կտոր հաց և այնպիսի զավակներ, ինչպիսին դու և Դունեչկան։ Եթե հնարավոր լինի, կբնակվեմ ձեզ երկուսիդ մոտիկ, որովհետև, Ռոդյա, ամենահաճելի բանի մասին ես նամակիս վերջում եմ գրելու. իմացիր, սիրելիդ իմ, որ գուցե շատ շուտով մենք բոլորս լիննենք միասին, ու երեքս էլ դրկվենք համարյա երկար տարվա անջատումից հետո։ Արդեն հաստատ որոշված է, որ ես ու Դունյան մեկնում ենք Պետերբուրգ, թե երբ, չգիտեմ, բայց համենայն դեպս շատ, շատ շուտ, գուցե նույնիսկ մեկ շաբաթից հետո։ Ամեն ինչ կախված է Պյոտր Պետրովիչի կարգադրություններից։ Հենց որ նա Պետերբուրգում ընտելանա շրջապատին, անմիջապես մեզ իմաց կտա։ Որոշ նկատառումներով նա ուզում է որքան կարելի է շտապեցնել ամուսնության արարողությունը, ու եթե հնարավոր լինի, հարսանիքը անել հենց այժմյան ուտիսին, իսկ եթե չհաջողվի ու ժամանակ չլինի, ապա աստվածածնա պատից՝ անմիջապես հետո։ Օ, ինչպիսի երջանկությամբ ես քեզ կսեղմեմ սրտիս։ Քեզ հետ տեսնվելու բերկրանքը չափազանց հուզում է Դունյային, և նա մի անգամ կատակով ասաց, որ հենց միայն դրա համար ինքը կամուսնանար Պյոտր Պետրովիչի հետ։ Նա հրեշտակ է, նա այս նամակում քեզ ոչինչ չի գրում, այլ միայն պատվիրեց ինձ գրել, որ ինքը պետք է քեզ հետ այնքան շատ խոսի, այնքան շատ, որ հիմա չի էլ կարողանում գրիչ վերցնել, որովհետև մի քանի տող գրելուց բան չի դուրս գա, այլ միայն հուզմունք կդգաս. ասաց, որ քեզ պինդ գրկեմ և անթիվ համբույրներ հաղորդեմ, բայց չնայելով, որ մենք գուցե շատ շուտով անձամբ կհանդիպենք, ես այնուամենայնիվ մոտ օրերս քեզ փող կուղարկեմ, ինչքան որ կարող եմ։ Հիմա, երբ բոլորը իմացել են, որ Դունեչկան ամուսնանում է Պյոտր Պետրովիչի հետ, իմ վարկն էլ հանկարծ բարձրացավ, ու ես հավատացած եմ, որ Աֆանասի Իվանովիչը հիմա թոշակիս հաշվին ինձ կտա նույնիսկ մինչև յոթանասունհինգ ռուբլի, այնպես որ ես քեզ կուղարկեմ գուցե քսանհինգ կամ նույնիսկ երեսուն ռուբլի։ Ավելի շատ կուղարկեի, բայց վախենում եմ, որ մնացածը ճանապարհին չբա-

վականանաս։ Ու թեև Պյոտր Պետրովիչը այնքան բարի եղավ, որ իր վրա վերցրեց մայրաքաղաք գնալու մեր ծախսերի մի մասը, այն է՝ հանձն առավ իր հաշվով տեղ հասցնել մեր իրերը, նաև մեծ սնդուկը (իր ծանոթների միջոցով թե ինչ), բայց և այնպես մենք պետք է հաշվի առնենք Պետերբուրգ ժամանելու ծախսերը, ուր չի կարելի առանց փողի մնալ, դոնե առաջին օրերին։ Սակայն ես ու Դունյան ամեն ինչ ճշտությամբ հաշվեցինք ու դուրս եկավ, որ ճանապարհը բիչ փող կնստի։ Մեր բնակավայրից մինչև երկաթուղին ընդամենը միայն իննսուն վերստ է, ու մենք արդեն համենայն դեպս պայմանավորվել ենք մի մուժիկ-կառապանի հետ. այնուհետև ես ու Դունյան երրորդ կարգի վագոնով հայրդությամբ տեղ կհասնենք։ Այնպես որ, հավանորեն ես կկարողանամ բիչ ուղարկել ոչ թե բանհինդ, այլ երեսուն ռուբլի։ Է՛հ, բավական է, երկու թերթ արդեն գրված է, էլ տեղ չի մնում. սա մեր ամբողջ պատմությունն է, ու որքա՜ն շատ բաների մասին գրեցի։ Իսկ այժմ, իմ անգին Ռոդյա, գրկում եմ քեզ մինչև մեր մոտալուտ տեսակցությունը, ու օրհնում եմ քեզ իմ մայրական օրհնությամբ։ Սիրիր Դունյային, քո քրոջը, Ռոդյա, սիրիր այնպես, ինչպես նա քեզ է սիրում, ու գիտցիր, որ նա քեզ անսահմանորեն, իրենից ավելի շատ է սիրում։ Նա հրեշտակ է, իսկ դու, Ռոդյա, մեր ամեն ինչն ես, մեր ամբողջ հույսը և ամբողջ ապավենը։ Դու որ երջանիկ լինես, մենք էլ երջանիկ կլինենք։ Արդյոք դու, Ռոդյա, առաջվա պես աղոթո՞ւմ ես աստծուն ու հավատո՞ւմ ես արարչի ու մեր փրկչի ողորմածությանը։ Սրտումս վախ կա, թե չլինի՞ դու էլ ես տարվել նորագույն մոդայական անհավատությամբ։ Եթե այդպես է, ապա ես աղոթում եմ քեզ համար։ Հիշիր, սիրելիս, թե ինչպես մանկությանդ օրերում, քո հոր կենդանության ժամանակ աղոթքներ էիր թոթովում իմ գրկում, ու ինչպես այն ժամանակ մենք բոլորս երջանիկ էինք։ Բարով մնաս, կամ ավելի լավ է՝ ցտեսություն։ Պինդ, պինդ գրկում եմ քեզ ու անթիվ համբույրներ հղում։

Մինչև գերեզման քո
Պուլխերիա Ռասկոլնիկովա»։

Համարյա ամբողջ ժամանակվա ընթացքում, երբ կարդում էր Ռասկոլնիկովը, նամակի հենց սկզբից նրա դեմքը լցված էր արցունքներով, բայց երբ վերջացրեց, դեմքը գունատ էր, ջղաձգությունից ծռմռված, ու ծանր, մաղձոտ, ցասումնալից ժպիտը գալարվում էր շուրթերի վրա։ Նա գլուխը դրեց իր բարակ ու քրքրված բարձին ու մտածում էր, երկար մտածում։ Ուժգին բաբախում էր սիրտը, և ուժգնորեն այեկոծվում էին նրա մտքերը։ Վերջապես, նրան հեղձուցիչ ու նեղ թվաց այդ դեղին խցիկը, որը պահարանի կամ անդուկի էր նման։ Հայացքն ու միտքը լայնարձակություն էին տենչում։ Նա վերցրեց գլխարկը ու դուրս եկավ՝ այս անգամ արդեն չվախենալով սանդուղքի վրա որևէ մեկին հանդիպելուց. նա այդ մոռացավ։ Վ... պողոտայով նա քայլեց դեպի Վասիլևսկի կղզին, կարծես գործի էր շտապում, բայց ըստ իր սովորության, գնում էր ճանապարհը չնկատելով, քթի տակ շշնջալով. նույնիսկ լսելի ձայնով խոսում էր ինքն իր հետ, որով խիստ զարմացնում էր անցորդներին։ Շատերը նրան հարբած տեղ էին դնում։

IV

Մոր նամակը տանջեց նրան։ Բայց ամենագլխավոր, հիմնական խնդրի վերաբերյալ նրա մեջ ոչ մի կասկած չեղավ նույնիսկ այն ժամանակ, երբ նա կարդում էր նամակը։ Նրա գլխի մեջ որոշված էր գործի ամենագլխավոր էությունը, ու որոշված էր վերջնականապես. «Քանի ես կենդանի եմ, այդ ամուսնությունը չի լինի, և թող գրողի ծոցը գնա պարոն Լուժինը։

«Որովհետև այդ բանը ակներև է», փնթփնթում էր նա քթի տակ՝ ժպտալով և նախապես բարկությամբ ճաշակելով իր որոշման հաջողությունը։ «Ոչ, մայրիկ, ոչ Դունյա, դուք չեք կարող ինձ խաբել... Եվ դեռ ներողություն էլ են խնդրում, որ ինձնից խորհուրդ չեն հարցրել և առանց ինձ վճռել են գործը։ Ա՛յդ էր պակաս։ Կալ՝ում են, թե հիմա այլևս չի կարելի նրանից կտրել կապը. տեսնենք, կարելի՞ է, թե չի կարելի։ Ա՛յ քեզ հիմնական պատճառաբանություն. ասում

են՝ «Այնպիսի գործունյա մարդ է Պյոտր Պետրովիչը, այնպիսի գործունյա մարդ, որ չի կարող այլ կերպ ամուսնանալ, քան փոստային կառքում, համարյա թե երկաթուղով գնալիս»։ Ոչ, Դունեչկա, ամեն ինչ տեսնում եմ ու գիտեմ, թե ինչի մասին ես ինձ հետ շատ խոսելու. նաև գիտեմ, թե ամբողջ գիշեր ինչի մասին էիր մտածում՝ քայլելով սենյակում, ու ինչի մասին էիր մտածում Կազանի աստվածամոր առջև, որ գրված է մայրիկի ննջարանում։ Գողգոթա ելնելը ծանր է։ Հրմ... Ուրեմն արդեն վերջնականապես որոշված է. ա՛յ Ավդոտյա Ռոմանովնա, բարեհաճում եք ամուսնանալ գործունյա և խելամիտ մարդու հետ, որը ունի իր կապիտալը (ասվեն իր կապիտալն էլ ունի, դա ավելի սուրբ, պատկառելի է), երկու անգ է ծառայում և համամիտ է մեր նորագույն սերունդների համոզմունքներին (ինչպես գրում է մայրիկը) ու «կարծես թե բարի է» ինչպես ասել է ինքը Դունեչկան։ Այդ կարծես թե-ն ամենից հիանալի է. և հենց այդ Դունեչկան հենց այդ կարծես թե-ով մարդու է գնում... Հիանալի՞ է, հիանալի՞ է»։

«... Սակայն հետաքրքիր է, թե մայրիկը ինչի՞ համար է ինձ գրել «նորագույն սերունդների» մասին. արդյո՞ք անձնավորությանը բնութագրելու համար, թե՞ պ. Լուժինի օգտին ինձ բարեհաճ դարձնելու հետագա նպատակով։ Օ, խորամանկնե՞ր։ Հետաքրքիր կլիներ պարզաբանել նաև մի հանգամանք. նրանք երկուսն էլ միմյանց հետ որչա՞փ անկեղծ են եղել այն օրը և այն գիշեր ու հետագա ամբողջ ժամանակվա ընթացքում։ Արդյո՞ք նրանց մեջ բոլոր խոսքերը շիտակ են ասվել, թե՞ երկուսն էլ հասկացել են, որ թե մեկի և թե մյուսի սրտում ու մտքերում միևնույն բանն է, ուրեմն կարիք չկա ամեն ինչ ասել և իզուր տեղը բերաններից խոսք թոցնել։ Հավանորեն դա մասամբ այդպես էլ եղել է. նամակից երևում է, որ այդ մարդը մի փիշ խստաբարո է թվացել մայրիկին, ու միամիտ մայրիկը իր դիտողություններով դիմել է աղջկան։ Սա էլ, իհարկե, բարկացել է ու «սրտնեղելով պատասխանել»։ Էլ ինչպես չէ, ո՞վ չի բարկանա, երբ առանց միամիտ հարցերի էլ բանը հասկանալի է ու երբ որոշված է, որ էլ խոսելու հարկ չկա։ Եվ ի՞նչ է մայրիկը ինձ գրում. «Սիրիր Դունյային, Ռոդյա, իսկ նա քեզ

քրենից ավելի շատ է սիրում». արդյո՞ք խղճի խայթը չէ, որ մայրիկին գաղտուկ տանջում է այն պատճառով, որ նա համաձայնվել է դստերը զոհաբերել որդուն։ «Դու մեր ապավենն ես, դու մեր ամեն ինչն ես»։ «Օ, մայրիկ...»։ Ցասումը ավելի ու ավելի էր ուժեղանում երիտասարդի մեջ, ու եթե այժմ պարոն Լուժինը հանդիպեր, երիտասարդը թերևս սպաներ նրան։

«Հը՛մ, այդ ճշմարիտ է,— շարունակեց նա՝ հետևելով իր դիմում պտտվող մտքերի մրրկին,— այդ ճշմարիտ է, որ «մարդուն պետք է մոտենալ աստիճանաբար ու զգուշությամբ, նրան ճանաչելու համար», սակայն պարոն Լուժինը ճանաչելի է։ Գլխավորն այն է, որ «գործունյա մարդ է և կարծես թե բարի է». հո կատակ չէ՞, իր վրա բեռ է վերցրել, մեծ սնդուկը իր հաշվին տեղ է հասցնում։ Էլ ի՞նչպես բարի չէ։ Իսկ նրանք երկուսը, հարսնացուն ու մայրը, մուժիկ են վարձում, փոխարեն ծածկված սայլ նստում (ես հո այդպես էի գնում)։ Ոչինչ, չէ որ միայն իննսուն վերստ է, «այնուհետև երրորդ կարգի վագոնով հաջողությամբ տեղ կհասնենք», հազար վերստ է։ Ու խելամիտ բան է՝ ոտքերդ վերմակիդ համեմատ երկարացրու, բայց դուք, պ. Լուժին, ի՞նչ եք մտածում, չէ՞ որ նա ձեր հարսնացուն է... Դուք հո չէիք կարող չգիտենալ, որ մայրը ճանապարհի համար իր թաշակի հաշվին առաջուց փոխարինաբար փող է վերցնում։ Իհարկե, դուք այստեղ նկատի ունեք ընդհանուր առևտրական շրջանառությունը, երկուստեք շահավետ ձեռնարկումը հավասար փայերով, ուրեմն ծախսերն էլ կիսով պետք է լինեն. աղուհացը միասին, իսկ թութունը առանձին, ըստ առածի։ Բայց այստեղ էլ գործունյա մարդը նրանց մի փոքր խաբել է. բեռը ավելի էժան է, քան նրանց ուղևորությունը, Ինչպես ձի էլ գնա։ Նրանք երկուսն էլ այդ չե՞ն տեսնում, ինչ է, թե՞ դիտմամբ չեն նկատում։ Ու զո՛հ են, զո՛հ են։ Իսկ այդ միայն ծաղիկներն են, իսկական պտուղները հետո կլինեն։ Այստեղ ի՞նչն է կարևոր. այստեղ կարևոր է ոչ թե ժլատությունը, ոչ թե կծծությունը, այլ այդ բոլորի **եռանգը**։ Չէ՞ որ դա ամուսնությունից հետո գալիք երանգն է, մաքդարեությունն է... Հապա մայրիկը ինչո՞ւ է ուրախանում։ Նա ինչո՞վ պիտի գա Պետերբուրգ, երեք ռուբլով կամ երկու

«Խղճի մանեթանոցով», ինչպես այն... պառավն է ասում... հրմ, նա ինչո՞վ պիտի ապրի Պետերբուրգում, ինչի՞ վրա է հույս դրել։ Չէ՞ որ նա ինչ-որ պատճառներով կարողացել է գլխի ընկնել, որ ամուսնությունից հետո, նույնիսկ սկզբնական ժամանակամիջոցում չպետք է միասին ապրեն։ Հաճելի մարդը երևի այստեղ բերանից խոսք է թոցրել, իրեն հանաչել է տվել, թեև մայրիկը դրանից բոլորովին ձեռք է քաշում։ «Ինքս կհրաժարվեմ», գրում է նա։ Ուրեմն ի՞նչ, ո՞ւմ վրա է հույս դնում. մի՞թե հարյուր քսան ռուբլի թոշակի վրա, որից պետք է դուրս դալ Աֆանասի Իվանովիչին տալիք պարտքը։ Նա այնտեղ ձմեռային գլխաշորեր է գործում, թևնոցներ ասեղնագործում, պառավական աչքերը փչացնում։ Բայց լ՞ որ գլխաշորերը տարեկան ընդամենը միայն քսան ռուբլի են ավելացնում հարյուր քսան ռուբլուն, գա ինչ հայտնի է։ Նշանակում է այնուամենայնիվ պարոն Լուժինի ապնիվ դպացմունքների վրա են հույս դնում։ Իբր թե ոիներբ կառաչարկի, կխնդրի»։ Բարո՞վ վայելես։ Հրմ, միշտ էլ այդպես է լինում շիլլերյան այդ սքանչելի հոգիների բանը. մինչև վերջին մոմենտը մարդուն զարդարում են սիրամարդի փետուրներով, մինչև վերջին մոմենտը հույս են դնում լավի վրա, իսկ վատը աչքաթող են անում, ու թեև նախազգում են մեդալի հակառակ կողմը, բայց ոչ մի կերպ իրենք իրենց կանխավ չեն ասում իսկական խոսքը. հենց միայն մտածելը տհաճություն է նրանց համար. ճշմարտությունից իսպառ ձեռք են քաշում այնքան ժամանակ, մինչև որ գունազարդված մարդը իրենց հիմար դրության մեջ է գցում։ Հետաքրքիր է, թե արդյոք շքանշաններ ունի՞ պարոն Լուժինը. գրազ եմ գալիս, որ կրծքին Աննայի շքանշան է կախում, այդ անում է կապալառուների և վաճառականների մոտ տրվող ճաշերի ժամանակ։ Թերևս իր հարսանիքին էլ կախ տա։ Սակայն, թող գնա գրողի ծոցը։

«... Էհ, թող մայրիկը այդպես վարվի, ասուված նրա հետ, նա այդպես է, հապա Դունյա՞։ Դունեչկա, սիրելիս, ես հո ճանաչում եմ ձեզ։ Դուք հո քսան տարեկան էիք այն ժամանակ, երբ մենք վերջին անգամ տեսնվեցինք. ես արդեն հասկացել եմ ձեր բնավորությունը։ Մայրիկը ահա գրում է, որ «Դունեչկան շատ բան կարող է տանել»։ Ես այդ

գիտեի։ Ես արդեն երկու և կես տարի առաջ այդ գիտեի, ու այն ժամանակներից երկու և կես տարի այդ մասին էի մտածում, հենց այն մասին, որ «Դունեչկան շատ բան կարող է տանել»։ Եթե կարող է տանել պարոն Սվիդրիգայլովին, բոլոր հետևանքներով հանդերձ, ուրեմն իսկապես որ շատ բան կարող է տանել։ Իսկ հիմա մայրիկի հետ միասին երևակայել եք, թե կարելի է տանել նաև պարոն Լուժինին, որը թեորիա է շարադրում, թե ավելի լավ է կին առնել աղքատ ընտանիքից և այդպիսով նրան բարերարություն անել, այն էլ շարադրում է համարյա առաջին տեսակցության ժամանակ։ Լավ, ենթադրենք թե նա «բերանից խոսք է թռցրել», թեպետև խելամիտ մարդ է (այնպես որ, գուցե ամենևին էլ խոսք չի թռցրել, այլ հատկապես ցանկացել է շուտ բացատրվել), իսկ հապա Դունյա՞ն, Դունյա՞ն. չէ՞ որ նրա համար պարզ է, թե ինչ մարդ է դա, չէ՞ որ ապրելու է նրա հետ։ Դունյան միայն սև հացով ու ջրով կսնվի, բայց իր հոգին չի ծախի, իր բարոյական ազատությունը կոմֆորտով չի փոխարինի. ամբողջ Շլեզվիգ-Հոլշտեյնով՞ էլ չի փոխարինի, էլ ո՞ւր մնաց պարոն Լուժինը։ Ոչ, որքան ես գիտեմ, Դունյան այդպես չի եղել, և... դե, իհարկե, հիմա էլ չի փոխվել... Ի՞նչ ասել կուզի, ծանր են Սվիդրիգայլովները։ Ծանր է երկու հարյուր ռուբլու համար ամբողջ կյանքում նահանջներով մեկ թրևել դաստիարակչուհու պարտականությամբ, բայց և այնպես ես գիտեմ, որ իմ քույրը ավելի շուտ կգերադասի լինել այնպիսի վիճակում, ինչպես նեգրը պլանտատորի մոտ՞ կամ ինչպես լատիշը մերձբալթյան գերմանացու մոտ, քան թե կստորացնի իր հոգին ու բարոյական զգացմունքը, կապվելով այնպիսի մարդու հետ, որին չի հարգում և որի հետ անելիք չունի— չի ստորացնի երբեք, թեկուզև անձնապես տուժի դրանից։ Եվ եթե պարոն Լուժինը նույնիսկ ամբողջովին զուտ ոսկի կամ միակտուր բրիլիանտ լինի, այդ դեպքում էլ քույրս չի համաձայնի դառնալ պարոն Լուժինի օրինական հարճը։ Հապա ինչո՞ւ է այժմ համաձայնում։ Ինչո՞ւմն է բանը, ինչո՞վ է դա բացատրվում։ Բանը պարզ է. իրեն համար, իր բարեհարմարության համար, նույնիսկ մահից ազատվելու համար չի ծախվի, իսկ ուրիշի համար կծախվի։ Սիրելի, պաշտելի

մարդու համար կծախվի. ահա թե որն է գործի բուն էությունը, նրբոր համար, մոր համար իրեն կծախի, ամեն ինչ կծախի։ Օ, այստեղ մենք հարկավոր դեպքում մեր բարոյական զգացմունքն էլ կխեղդենք. ազատությունը, հանգստությունը, նույնիսկ խիղճը, ամեն, ամեն ինչ հին իրերի վաճառքի շուկա կտանենք։ Թող կորչի կյանքը, միայն թե մեր այդ սիրեցյալ էակները երջանիկ լինեն։ Դեռ ավելին, մեր սեփական կազուիստիկան կմոգոնենք, ճիզվիտներից կսովորենք ու անշուշտ ժամանակավորապես մենք մեզ կհանգստացնենք, կհամոզենք մեզ, որ այդպես էլ հարկավոր է, իրոք հարկավոր է բարի նպատակի համար։ Մենք այդպես ենք որ կանք, ու ամեն ինչ պարզ է ցերեկվա լույսի պես։ Պարզ է, որ այստեղ ոչ ոչ ոք, եթե ոչ Ռոդիոն Ռոմանովիչ Ռասկոլնիկովը սովորական անձ է և առաջին պլանի վրա է։ Էլ ինչպես չէ, պարոն Լուժինը կարող է նրան երջանիկ դարձնել, պահել համալսարանում, կոմպանիոն դարձնել գրասենյակում, ապահովել նրա ամբողջ բախտը. թերևս Ռասկոլնիկովը հետագայում հարուստ, պատվավոր, հարգված մարդ դառնա, գուցե և փառապանծ մարդու մահով մեռնի։ Հապա մա՞յրը։ Բայց այստեղ հո առկա է Ռոդյան, անգին Ռոդյան, առաջնեկը։ Էլ ինչպե՞ս այդպիսի առաջնեկի համար չզոհաբերել թեկուզ այդպիսի աղջկան։ Օ, սիրելի՛ ու անիրավացի սրտեր։ Եվ ի՞նչ. այստեղ մենք թերևս Սոնեչկայի վիճակից էլ չհրաժարվենք։ Սո՛նեչկա, Սո՛նեչկա Մարմելադովա, հավերժական Սոնեչկա, քանի դեռ կա աշխարհը։ Զոհաբերությունը, զոհաբերությունը արդյո՞ք լիովին չափել եք դուք, երկուսդ։ Արդյո՞ք այդպես է։ Ուժից վեր չէ՞։ Օգտակա՞ր է։ Նելամի՞տ է։ Արդյոք դուք գիտե՞ք. Դունեչկա, որ Սոնեչկայի վիճակը ոչնչով վատ չէ պարոն Լուժինի ապագա կնոջ վիճակից։ «Այստեղ սեր չի կարող լինել»,— գրում է մայրիկը։ Իսկ եթե սիրուց բացի հարգանք էլ չկա, այլ ընդհակառակը, արդեն կա զզվանք, արհամարհանք, նողկանք, այդ դեպքում ի՞նչ կլինի։ Այդ դեպքում պարզ է գալիս, որ ուրեմն դարձյալ հարկ կլինի մաքրություն պահպանել։ Ո՞նց է, այդպես չէ՞։ Հասկանո՞ւմ եք դուք, հասկանո՞ւմ եք արդյոք, թե ինչ է նշանակում սուրբ մաքրությունը։ Հասկանո՞ւմ եք դուք, որ Լուժինի մաքրությունը

նույնն է, ինչ որ Սոնեչկայի մաքրությունը, դուցե և նույնիսկ ավելի վատ է, ավելի գարշելի, ստոր, որովհետև դուք, Դունեչկա, հաշվի եք առնում ճոխ կոմֆորտը, իսկ այնտեղ խնդիրը հենց սովամահության է վերաբերում։ «Թանկ, թանկ արժե սույն մաքրությունը, Դունեչկա»։ Էհ, թե որ հետո ձեր ուժը չպատի, կզղջա՞ք։ Որքա՜ն վիշտ, տխրություն, անեծքներ, բոլորից թաքցրած արցունքներ կլինեն, որովհետև դուք հո Մարֆա Պետրովնա չե՞ք։ Իսկ մայրդ այն ժամանակ ի՞նչ վիճակում կլինի։ Չէ՞ որ նա հիմա էլ անհանգիստ է, տանջվում է. իսկ այն ժամանակ ի՞նչ կլինի, երբ նա ամեն ինչ պարզ տեսնի։ Հապա իմ վիճա՞կը... Հիրավի, դուք այդ ի՞նչ եք մտածել իմ մասին։ Ես չեմ ուզում ձեր զոհաբերությունը, Դունեչկա, չեմ ուզում, մայրիկ։ Այդ չի լինի, քանի ես կենդանի եմ։ Չի լինի, չի՛ լինի, չեմ ընդունում»։

Նա հանկարծ ուշքի եկավ ու կանգ առավ։

— Չի՞ լինի։ Իսկ դու ի՞նչ կանես, որպեսզի այդ չլինի։ Կարգելե՞ս։ Իսկ ի՞նչ իրավունք ունես։ Քո հերթին ի՞նչ կարող ես նրանց խոստանալ, որ այդպիսի իրավունք ունենաս։ Ամբողջ բախտդ, ամբողջ ապագադ նրանց կնվիրես, երբ ավարտես դասընթացը և պաշտո՞ն գտնես։ Մենք այդ լսել ենք, բայց արդյո՞ք այդպես կլինի։ Իսկ հիմա՞։ Չէ՞ որ այստեղ հարկավոր է հենց հիմա որևէ բան անել, դու այդ հասկանո՞ւմ ես։ Իսկ դու հիմա ի՞նչ ես անում։ Հենց նրանց ես պլոկում։ Չէ՞ որ նրանք փողը ճարում են հարյուր ռուբլիանոց թոշակի և պարոնայք Սվիդրիգայլովների գրավականի հաշվին։ Սվիդրիգայլովներից, Աֆանասի Իվանովիչ Վախրուշինից ինչո՞վ ես նրանց պաշտպանելու, ապագա միլիոնատեր, նրանց բախտը անօրինող Զևս։ Տասը տարուց հետո՞։ Բայց ախր տասը տարում մայրդ կկուրանա գլխաշորեր գործելուց, թերևս նաև արցունքներից. կհյուծվի պասից, իսկ քո՞ւյրդ։ Հապա մտածիր, թե քրոջդ ինչ կարող է պատահել տասը տարուց հետո կամ այս տասը տարում։ Կռահեցի՞ր»։

Այսպես նա իրեն տանջում, գրգռում էր այդ հարցերով, նույնիսկ ինչ-որ հաճույքով։ Սակայն այդ բոլոր հարցերը ոչ թե հանկարծակի, նոր էին, այլ հին, վաղուցվա, ցավոտ։ Դրանք արդեն վաղուց սկսել էին տանջել նրան ու հոշոտել

էին իր սիրտը։ Վաղուց ի վեր նրա մեջ սկզբնավորվել էր հիմիկվա այդ ամբողջ թախիծը, աճել, կուտակվել էր ու վերջին ժամանակներում հասունացել ու կենտրոնացել՝ ընդունելով զարհուրելի, վայրի ու ֆանտաստիկ հարցի ձև, որը խոշտանգել էր նրա սիրտն ու միտքը, ու լուծում էր պահանջում։ Իսկ այժմ մոր նամակը, հանկարծ կայծակի պես խփեց նրան։ Պարզ է, որ հիմա հարկավոր էր ոչ թե թախծել, ոչ թե պասսիվորեն տանջվել և միայն դատողություններ անել հարցերի անլուծելիության մասին, այլ անպայման որևէ բան անել, այն էլ հենց այժմ, որքան կարելի է յուտ։ Ինչ կերպ էլ լինի, պետք է որոշել գեթ որևէ բան անել, կամ...

«Կամ բոլորովին հրաժարվել կյանքից,— հանկարծ մոլեգնորեն ճչաց նա,— առմիշտ հնազանդվել բախտին, ինչպես որ այն կա, ու ամեն ինչ խեղդել իմ մեջ՝ հրաժարվելով գործելու, ապրելու և սիրելու ամեն մի իրավունքից»։

«Հասկանո՞ւմ եք դուք արդյոք, հասկանո՞ւմ եք, հարգելի պարոն, թե ինչ է նշանակում, երբ այլևս գնալու տեղ չի լինում»,— հանկարծ հիշեց նա Մարմելադովի երեկվա հարցը. «որովհետև հարկավոր է, որ ամեն մարդ կարողանա գեթ մի որևէ տեղ գնալ»...

Հանկարծ նա ցնցվեց. մի միտք, որ նույնպես երեկվանն էր, անցավ նրա գլխով։ Բայց նա ցնցվեց ոչ այն պատճառով, որ անցավ այդ միտքը։ Նա հո գիտեր, նա նախազգում էր, որ դա անպայման «կանցնի», և արդեն տպասում էր դրան. ասենք, այդ միտքը ամենևին էլ երեկվանը չէր։ Բայց տարբերությունն այն էր, որ մի ամիս առաջ և գեռ երեկ այն միայն երազանք էր, իսկ հիմա... հիմա հանկարծ հայտնվեց ոչ թե իբրև երազանք, այլ մի ինչ-որ նոր, ահարկու և իրեն բոլորովին անծանոթ ձևով, և նա հանկարծ ինքը այդ գիտակցեց... Նրա արյունը խփեց գլխին, ու աչքերը մթնեցին։

Նա հապճեպ նայեց շուրջը, նա ինչ-որ բան էր որոնում։ Ուզում էր նստել, ու նստարան էր փնտրում. այդ պահին նա անցնում էր Կ... բուլվարով։ Առջևից, հարյուր քայլ հեռավորությունից, նստարան էր երևում։ Նա որքան կարելի է արագ գնաց. բայց ճանապարհին նրան պատահեց մի փոք-

ցրիկ արկած, որը մի քանի բոպիով գրավեց նրա ամբողջ ուշադրությունը։

Նայելով նստարանին, նա իր առջևում քսան քայլ հեռավորությամբ դնացող մի կին նկատեց, նա սկզբում ոչ մի ուշադրություն չդարձրեց այդ կնոջ վրա, ինչպես և մինչ այդ իր առջևում երևացող բոլոր առարկաների վրա։ Արդեն շատ անգամ էր պատահել, որ նա, օրինակ, դնացել էր տուն և բոլորովին չէր հիշել իր անցած ճանապարհը, ու արդեն սովորել էր այդպես քայլել։ Բայց առջևից գնացող կնոջ մեջ տարօրինակ և առաջին հայացքից աչքի ընկնող մի այնպիսի բան կար, որ երիտասարդը հետզհետե իր ուշադրությունը դամեց նրա վրա՝ սկզբում դժկամորեն և ասես սրտնեզելով, իսկ հետո ավելի ու ավելի ամուր։ Նա հանկարծ ուզեց հասկանալ, թե այդ կնոջ մեջ հատկապես ի՞նչն է տարօրինակ. նախ՝ այդ կինը, որ երևի օրիորդ էր շատ ջահել, չնայած շրջին, առանց հովանոցի էր, առանց ձեռնոցների, հերարձակ, ու քայլելիս մի տեսակ ծիծաղելիորեն թափահարում էր ձեռքերը։ Նա հագած էր թեթև գործվածքից («լաթերից») կարված մետաքսե զգեստ, որը նույնպես մի տեսակ շատ տարօրինակ էր նստել նրա վրա, կիսով չափ կոճկված չէր, ու ետևից, մեջքի վրա, յուրկան կապելու տեղում պատռված էր. մի ամբողջ ծվեն կախ էր ընկել ու երերվում էր։ Մերկ պարանոցը ծածկված էր փոքրիկ գլխաշորով, որը ծռվել ու կողքի էր ընկել։ Իբրև այդ ամենի լրացում, աղջիկը քայլում էր անհաստատ, սայթաքելով ու նույնիսկ ճոճվելով չորս կողմը։ Այս հանդիպումը, վերջապես, գրավեց Ռասկոլնիկովի ամբողջ ուշադրությունը։ Նա աղջկան մոտեցավ հենց նստարանի կողքին, իսկ աղջիկը, հասնելով նստարանին, այնպես էլ ընկավ դրա ծայրին, գլուխը դրեց թիկնակին ու փակեց աչքերը, ըստ երևույթին չափազանց հոգնած էր։ Ուշադրությամբ նայելով նրան, Ռասկոլնիկովը իսկույն գլխի ընկավ, որ նա բոլորովին հարբած էր։ Տարօրինակ և օտարոտի էր այդ երևույթը։ Ռասկոլնիկովը նույնիսկ մտածեց, թե հո չի՞ սխալվում։ Նրա առջևումն էր, բոլորովին ջահել, մոտ տասնվեց, գուցե և նույնիսկ միայն տասնհինգ տարեկան, փոքրիկ, շեկլիկ ու գեղեցիկ մի աղջիկ, որի դեմքը թունդ շիկնած էր ու կարծես մի փոքր

ուռած։ Նա կարծես իսպառ անտարբեր էր դեպի իր շրջապատը. մի ոտքը գցել էր մյուսին և ավելի շատ պարզել, քան հարկավոր էր, ու ըստ բոլոր նշանների, համարյա բոլորովին չէր գիտակցում, որ ինքը գտնվում է փողոցում։

Ռասկոլնիկովը չէր նստում ու չէր ուզում հեռանալ, այլ տարակուսանքով կանգնել էր նրա առաջ։ Այդ բուլվարը միշտ էլ դատարկ է լինում, իսկ հիմա, ժամը երկուսին, այդպիսի շոգին այնտեղ համարյա ոչ ոք չկար։ Եվ սակայն մի կողմում, տասնհինգ քայլ հեռավորությամբ, բուլվարի ծայրում կանգ առավ մի պարոն, որը ըստ երևույթին շատ էր ուզում նույնպես մոտենալ աղջկան՝ ինչ-որ նպատակնենչով։ Նա էլ հանդարտն ապչկան անսել էր հեռվից ու հասել նրա ետևից, բայց Ռասկոլնիկովը խանգարեց նրան։ Պարոնը ցասկոտ հայացքներ էր նետում Ռասկոլնիկովի վրա, սակայն ոչինչ ասելով, որ վերջինս գրանք չնկատի, ու անհամբերությամբ սպասում էր իր հերթին, մինչև որ հեռանար նրան վրդովմունք պատճառող ցնցոտիավորը։ Բանը հասկանալի էր։ Այդ պարոնը մոտ երեսուն տարեկան էր, ամրակազմ, շաղ, կարմրաթուշ, վարդագույն շրթունքներով ու փոքրիկ բեղերով, և խիստ պճնամոլությամբ էր հագնված։ Ռասկոլնիկովը սարսափելի զայրացավ. նա հանկարծ ուզեց մի կերպ վիրավորել այդ ճարպակալած ֆրանտին։ Նա մի բոպեով թողեց աղջկան ու մոտեցավ պարոնին։

— Էյ, Սվիդրիգայլով, այստեղ ձեր ուզածն ի՞նչ է,— գոչեց նա, սեղմեց բռունցքները ու քմծիծաղ տվեց բարկությունից փրփրած իր շրթունքներով։

— Այդ ի՞նչ է նշանակում,— խստորեն հարցրեց պարոնը՝ զոհոզաբար զարմացած և կիտելով հոնքերը։

— Հեռացեք, այ թե ինչ։

— Ինչպե՞ս ես համարձակվում, սրիկա...

Եվ նա թափ առավ ձեռքին եղած փոկամտրակով։ Ռասկոլնիկովը բռունցքներով նետվեց նրա վրա, նույնիսկ հաշվի չառնելով, որ այդ ամրակազմ պարոնը կարող էր նրա պես երկուսին էլ գետնին գլորել։ Բայց այդ բոպեին ինչ-որ մեկը ետևից բռնեց նրան. մի քաղաքապահ կանգնեց երկուսի միջև։

— Բավական է, պարոններ, մի՛ բարեհաճեք կռվել հա-

սարակական վայրերում։ Դուք ի՞նչ եք ուզում, ո՞վ եք,— խիստ տոնով դիմեց նա Ռասկոլնիկովին՝ դիտելով նրա ցնցոտիները։

Ռասկոլնիկովը ուշադրությամբ նայեց նրան։ Քաղաքապահը ղինվորի քաջակորով դեմք ուներ, բեղերը և այտամորուքը ճերմակած էին, նայվածքը՝ խելացի։

— Հենց դուք եք ինձ հարկավոր,— դոչեց Ռասկոլնիկովը՝ բռնելով նրա ձեռքերից։ — Ես նախկին ուսանող եմ, Ռասկոլնիկով... Սա դուք էլ կարող եք իմանալ,— դիմեց նա պարոնին և ասա դարձյալ քաղաքապահին,— գնանք, ես ձեզ մի բան ցույց կտամ...

Ու բռնելով քաղաքապահի թևը, նրան տարավ դեպի նրա տարանը։

— Ահա, տեսեք, բոլորովին հարբած է, քիչ առաջ գալիս էր բուլվարով. ով գիտե թե ով է, բայց չի երևում, որ ընկած կանանցից լինի։ Ավելի ճիշտ, որևէ տեղ խմեցրել են ու խարել... առաջին անգամ... հասկանո՞ւմ եք, հետո էլ փողոց են գցել։ Նայեցեք, թե ինչպես է պատառոտվել զգեստը, նայեցեք թե ինչպես է այն հագել, սակայն ոչ թե ինքն է հագել, այլ նրան հագցրել են, այն էլ տղամարդու անվարժ ձեռքերն են հագցրել։ Այդպես է երևում։ Իսկ հիմա նայեցեք այս կողմը. այս ֆրանտը, որի հետ ես այժմ կռվել էի ուզում, ինձ անծանոթ է, առաջին անգամն եմ նրան տեսնում, նա աչք է դրել այս հարբած, ուշքը կորցրած աղջկա վրա և հիմա շատ է ուզում մոտենալ ու իր ճանկը գցել սրբան, տանել որևէ տեղ, քանի որ աղջիկը այդպիսի վիճակում է... Բանը անշուշտ այդպես է, հավատացեք, որ ես չեմ սխալվում։ Ես ինքս տեսա, թե նա ինչպես էր նայում ու հետամտում աղջկան, միայն թե ես խանգարեցի նրան, ու այժմ նա սպասում է, որ ես հեռանամ։ Հրեն, նա քիչ հեռացավ, կանգնեց ու իբր թե պապիրոս է փաթաթում.. ի՞նչ անենք, որ աղջիկը նրա ձեռքը չընկնի ու նրան տուն ուղարկենք, դե մտածեցեք։

Քաղաքապահը վայրկենապես ամեն ինչ հասկացավ ու կռահեց։ Հաստ պարոնի դիտավորությունը, իհարկե, հասկանալի էր, մնում էր մտածել աղջկա մասին։ Պաշտոնյան

կռացավ դեպի աղջիկը, մոտիկից զննելու համար, ու նրա դիմագծերը անկեղծ կարեկցություն արտահայտեցին։

— Ախ, որքան ցավալի է,— գլուխն օրորելով ասաց նա,— դեռ բոլորովին երեխա է։ Խաբել են, այդ ճիշտ է։ Լսեցեք, օրիորդ, ո՞րտեղ եք բարեհաճում ապրել,— դիմեց նա աղջկան։ Վերջինս բացեց հոգնած ու պղտորված աչքերը, բութ նայեց հարցնողին՝ ու ձեռքի շարժմամբ հրաժարվեց պատասխանելուց։

— Լսեցեք,— ասաց Ռասկոլնիկովը քաղաքապահին,— տես (նա իատնշտորեց դրպանը ու հանեց քսան կոպեկայոց էյ դտնվեց), տես կառք վերցրեք ու սրան տարեք իր հասցեով։ Հարկավոր է միայն, որ մենք իմանանք հասցեն։

Օրիորդ, այ օրիորդ,— ասաց քաղաքապահը՝ ընդունելով փողը,— ես հիմա կառք կվերցնեմ ու ինքս կտանեմ ձեզ։ Ո՞ւր տանեմ, հը՞։ Որտե՞ղ եք բարեհաճում բնակվել։

— Հեռացիր... ձեռք չեն քաշում էլի...— փնթփնթաց աղջիկը ու դարձյալ ձեռքի շարժումով հրաժարվեց պատասխանից։

— Ախ, ախ, լավ չէ, ախր ամոթ է, օրիորդ, ինչպիսի՞ ամոթ։ — Քաղաքապահը դարձյալ օրորեց գլուխը՝ աղջկան ամաչեցնելով, արտահայտելով իր ափսոսանքն ու զայրույթը։ — Այ քեզ բան,— դիմեց նա Ռասկոլնիկովին ու դարձյալ հարևանցիորեն ոտքից գլուխ նայեց նրան։ Նա էլ տարօրինակ էր թվում քաղաքապահին. այդպիսի ցնցոտիներով է, բայց փող է տալիս։

— Դուք սրան ո՞րտեղ գտաք,— հարցրեց նա Ռասկոլնիկովին։

— Ասում եմ ձեզ՝ հենց այստեղ, բուլվարում. քայլում էր իմ առջևից, օրորվում։ Հենց որ հասավ այստեղ, ընկավ նստարանին։

— Ախ, ինչպիսի՞ խայտառակություն է հիմա սկսվել աշխարհում, պարոն։ Դեռ այդքան փոքր է, բայց արդեն հարբած է։ Խաբել են, այդպես է որ կա։ Տես, է՛, շորն էլ պատռված է... Ախ, ինչպի՞սի անառակություն է հիմա սկսվել... Գուցե թե աղքատ ազնվականներից լինի... Հիմա

շատ են այդպիսիները։ Տեսքով ինչքա՜ն քնքուշ է, ոնց որ թե օրիորդ լինի,— ու քաղաքապահը դարձյալ կռացավ դեպի աղջիկը։

Գուցե նա էլ ուներ այդպիսի դստրիկներ, «ոնց որ թե քնքուշ օրիորդներ»՝ բարեկիրթների շարժուձևերով ու մոդայի ետևից ընկնելու ամեն տեսակ սովորություններով։

— Գլխավորն այն է, որ աղջիկը չընկնի այդ սրիկայի ձեռքը,— ասաց Իասկոլնիկովը,— ախր ինչո՞ւ սրանից ձեռք չի քաշում։ Պարզ երևում է, թե ինչ է ուզում։ Տես, է՛, սրիկան չի էլ հեռանում։

Իասկոլնիկովը բարձր էր խոսում և ուղղակի ձեռքով ցույց էր տալիս պարոնին։ Սա լսեց և ուզում էր դարձյալ բարկանալ, բայց միտքը փոխեց ու սահմանափակվեց լոկ արհամարհական հայացքով։ Այնուհետև դանդաղորեն էլի տասը քայլ հեռացավ ու դարձյալ կանգ առավ։

— Կարիլի է թույլ չտալ, որ ընկնի նրա ձեռքը,— մտադրաղ պատասխանեց ենթասպան (քաղաքապահը)։ — Միայն թե աղջիկը ասեր, թե իրեն ուր պետք է տանել, թե չէ... Օրիորդ, ա՛յ օրիորդ,— քաղաքապահը էլի կռացավ։

Աղջիկը հանկարծ բոլորովին բացեց աչքերը, ուշադրությամբ նայեց նրանց, կարծես թե ինչ-որ բան հասկացավ, նստարանից վեր կացավ ու քայլեց դեպի այն կողմը, որտեղից եկել էր։ — Թյու, անամոթներ, ձեռք չեն քաշում,— ասաց նա՝ մի անգամ էլ թափ տալով ձեռքը։ Նա քայլեց արագ, առաջվա պես խիստ ճոճվելով։ Ֆրանտը գնաց նրա ետևից, բայց ուրիշ ծառուղիով, աչքը չկտրելով նրանից։

— Մի անհանգստանաք, թույլ չեմ տա։ — Կտրուկ ասաց երկարաբեղ քաղաքապահը ու քայլեց նրա ետևից։

— Է-է-հե՛, ինչպիսի անառակություն է հիմա սկսվել,— բարձրաձայն կրկնեց նա ու հոգոց հանեց։

Այդ րոպեին կարծես ինչ-որ մի բան խայթեց Իասկոլնիկովին. մի ակնթարթում նրա հոգին ասես տակն ու վրա եղավ։

— Լսեք, է՛յ,— բղավեց նա բեղավորի ետևից։

Վերջինս ետ նայեց։

— Թողեք, է՛, ձեր ի՞նչ գործն է։ Թող նա զվարճանա (նա մատնացույց արեց Ֆրանտին)։ Ձե՛զ ինչ։

Քաղաքապահը նայում էր դժգոհությամբ, աչքերը չռած։ Ռասկոլնիկովը ծիծաղեց։

— Է-է-հ՛,— ասաց պաշտոնյան, ձեռքը թափ տվեց ու գնաց ֆրանտի ու աղջկա ետևից՝ Ռասկոլնիկովին կամ խելագարի տեղ դնելով, կամ մտածելով դրանից էլ ավելի վատ բան։

«Տարավ իմ քսան կոպեկը,— ցասկոտ փնթփնթաց Ռասկոլնիկովը՝ մնալով մենակ։— Դե թող այն պարոնից էլ վերցնի ու աղջկան թողնի նրա հետ, դրանով էլ գործը կվերջանա... էլ ինչո՞ւ ես փորձեցի օգնել աղջկան։ Ես ի՞նչ օգնող եմ։ Արդյո՞ք օգնելու իրավունք ունեմ։ Թող նրանք կենդանի կուլ տան միմյանց, ի՞նձ ինչ։ Եվ ինչպե՞ս համարձակվեցի տալ այդ քսան կոպեկը։ Մի՞թե դրանք իմն էին։

Չնայած այդ տարօրինակ խոսքերին, նրա հոգեվիճակը խիստ ծանրացավ։ Նա նստեց նույն նստարանին։ Նրա մտքերը ցրված էին... Եվ առհասարակ այդ րոպեին նրա համար ծանր էր մտածել որևէ բանի մասին։ Նա կուզենար բոլորովին ընկնել մոռացության մեջ, ամեն ինչ մոռանալ, հետո արթնանալ ու ամեն ինչ նորից սկսել...

— Խեղճ աղջիկ,— ասաց նա՝ նայելով նստարանի ծայրին, ուր նստած էր եղել աղջիկը...— Ուշքի կգա, լաց կլինի, հետո էլ մայրը կիմանա... Սկզբում կդնքսի, հետո էլ ցավագին ու խայտառակ կերպով կթակի, թերևս կվռնդի... Իսկ եթե չվռնդի էլ, այնուամենայնիվ Դարյա Ֆրանցովնաները հոտը կառնեն, ու աղջիկս կսկսի դես-դեն ընկնել... Հետո իսկույն կգնա հիվանդանոց (ու միշտ էլ այդ են անում նրանք, որոնք ապրում են շատ պատվազգաց մայրերի մոտ և նրանցից ծածուկ անվայել բանով են զբաղվում), հետո էլ... հետո էլ դարձյալ հիվանդանոց... գինի... օղեմներ... ու էլի հիվանդանոց... երկու-երեք տարուց հետո՝ խեղանդամ, և դա ընդամենը տասնիններ կամ տասնութ տարեկան հասակում... Մի՞թե ես այդպիսիներին չեմ տեսել։ Իսկ ինչո՞ւ էին նրանք այդ վիճակին հասնում. դե հասնում էին, էլի... Թյու։ էհ, թող այդպես լինի։ Ասում են՝ այդպես էլ

պետք է։ Ասում են՝ ամեն տարի այդպիսի տոկոս պետք է գնա... ինչ-որ տեղ... գրողի ծոցը, երևի նրա համար, որպեսզի մյուսները զգաստանան ու նրանց խանդարող չլինի։ Տոկո՛ս։ Հիրավի, լավ խոսքեր էին դրանք. այնպե՛ս հանգստացուցիչ են, գիտական։ Ասված է՝ տոկոս, ուրեմն չպետք է անհանգստանալ։ Եթե այլ խոսք ասվեր, ապա թերևս անհանգստություն առաջանար։ Իսկ ի՞նչ կլինի, եթե Դունեչկան որևէ կերպ այդ տոկոսի մեջ ընկնի... Մեկ կամ մյուս տոկոսի մեջ...

«Իսկ ես ո՞ւր եմ գնում,— հանկարծ մտածեց նա։ — Տարօրինակ է։ Ախր ես ինչ-որ բանի համար էի գնում։ Հենց որ նամակը կարդացի, ճանապարհ ընկա... Գնում էի Վասիլևսկի կղզին, Ռազումիխինի մոտ, ահա թե ուր, հիմա... հիշում եմ։ Սակայն ինչի՞ համար։ Ի՞նչ կերպ գլխումս ծագեց հենց այժմ Ռազումիխինի մոտ գնալու միտքը։ Սա ուշադրավ է»։

Նա դարմանում էր իր վրա։ Ռազումիխինը նրա առաջվա համալսարանական ընկերներից մեկն էր։ Ուշագրավ է, որ Ռասկոլնիկովը գտնվելով համալսարանում, գրեթե ընկերներ չուներ, խորշում էր բոլորից, ոչ ոքի մոտ չէր գնում և ուրիշներին դժվարությամբ էր իր մոտ ընդունում։ Ասենք, շուտով բոլորն էլ նրանից երես դարձրին։ Նա ոչ մի բանի չէր մասնակցում՝ ոչ ժողովներին, ոչ խոսակցություններին, ոչ էլ զվարճություններին։ Պարապում էր ուժեղ թափով, իրեն չխնայելով, ու դրա համար հարգում էին նրան, բայց ոչ ոք չէր սիրում։ Նա շատ աղքատ էր ու մի տեսակ ամբարտավանորեն հպարտ և անզրուցասեր. կարծես իր մեջ ինչ-որ բան էր թաքցնում։ Նրա ընկերներից ոմանց թվում էր, որ նա իրենց բոլորի վրա նայում է բարձրից, ինչպես երեխաների վրա, կարծես թե բոլորից առաջ է անցել թե զարգացմամբ, թե գիտելիքներով և համոզմունքներով, ու նրանց համոզմունքները և ձգտումները ինչ-որ ստորին բան է համարում։

Իսկ Ռազումիխինի հետ նա չգիտես ինչու մտերմացավ, այսինքն՝ ոչ թե մտերմացավ, այլ նրա հետ ավելի զրուցասեր ու արտաքաց էր։ Ասենք, չէր էլ կարելի Ռազումիխինի

հետ այլ հարաբերությունների մեջ լինել։ Նա արտասովոր ուրախ ու զրուցասեր երիտասարդ էր, պարզամտության չափ բարի։ Սակայն այդ պարզամտության տակ թե մտքի խորություն և թե արժանապատվություն էր թաքնված։ Նրա լավագույն ընկերները այդ հատկանում էին, բոլորը սիրում էին նրան։ Նա բավական խելացի էր, թեև իսկապես երբեմն պարզամիտ։ Նրա արտաքինը ուշագրավ էր. նա բարձրահասակ էր, նիհար, միշտ վատ սափրված, սևավարս։ Երբեմն նա անկարգություն էր անում և ուժեղի համբավ ուներ։ Մի ոստիկանի նա գիշերով, մարդկանց խմբի մեջ, մի հարվածով գետին գլորեց։ Նա կարող էր անվերջ խմել, բայց և կարող էր բոլորովին չիմանալ։ Երբեմն նույնիսկ անթույլատրելի չարաճճիություններ էր անում, բայց և կարող էր ամենևին էլ չարաճճիություն չանել։ Ռազումիխինը աչքի էր ընկնում և նրանով, որ ոչ մի անհաջողություն նրան երբեք չէր չափազանցնում և ոչ մի վատ հանգամանք կարծես թե չէր կարող նրան ճնշել։ Նա կարող էր բնակվել թեկուզ կտուրի վրա, դժոխային քաղց ու արտասովոր ցուրտ տանել։ Նա շատ աղքատ էր և ուղղակի միայն ինքն էր իրեն պահում, ինչ-որ աշխատանքներով փող ճարում։ Նա գիտեր բազմաթիվ աղբյուրներ, որտեղից կարող էր օգուտ քաղել, իհարկե, վաստակելու միջոցով։ Մի անգամ նա ամբողջ ձմեռը չէր տաքացնում իր սենյակը և պնդում էր, թե այդ նույնիսկ ավելի հաճելի է, որովհետև ցուրտ սենյակում կարելի է ավելի լավ քնել։ Այդ ժամանակ նա էլ ստիպված եղավ դուրս գալ համալսարանից, բայց առժամապես, ու ամբողջ ուժով շտապում էր բարելավել իր վիճակը, որպեսզի կարողանար շարունակել ուսումը։ Արդեն չորս ամիս էր, որ Ռասկոլնիկովը նրա մոտ չէր եղել, իսկ Ռազումիխինը նույնիսկ չգիտեր նրա հասցեն։ Մի անգամ, երկու ամիս առաջ, նրանք հանդիպեցին փողոցում, բայց Ռասկոլնիկովը երեսը շուռ տվեց և նույնիսկ անցավ փողոցի մյուս կողմը, որպեսզի Ռազումիխինը իրեն չնկատեր։ Իսկ Ռազումիխինը թեպետև նկատեց, բայց անցավ-գնաց՝ չցանկանալով անհանգստացնել բարեկամին։

V

«Իսկապես, դեռ վերջերս ես ուզում էի Ռազումիխինին խնդրել, որ ինձ աշխատանք տա, ինձ համար դասեր գտնի կամ որևէ մի բան...— եզրակացրեց Ռասկոլնիկովը,— բայց նա այժմ ինչո՞վ կարող է ինձ օգնել։ Ենթադրենք, թե դասեր կգտնի, ենթադրենք, թե նույնիսկ իր վերջին կոպեկներից ինձ բաժին կհանի, այնպես որ հնարավոր կլինի նույնիսկ կոշիկներ գնել և կոստյումս կարգի բերել՝ դասերի գնալու համար... Հրմ... Լավ, իսկ հետո՞։ Կոպեկներով ես ի՞նչ կարող եմ անել։ Մի՞թե հիմա ինձ այդ է հարկավոր։ Հիրավի, ծիծաղելի է, որ ես Ռազումիխինի մոտ եմ գնում...»։

Այն հարցը, թե նա այժմ ինչու է գնում Ռազումիխինի մոտ, նրան ավելի շատ էր անհանգստացնում, քան նույնիսկ հենց իրեն էր թվում, նա տագնապալից վիճակում իր համար չարագուշակ ինչ-որ իմաստ էր փնտրում կարծես թե ամենասովորական այդ արարքում։

— Հրմ, մի՞թե ես ուզում էի ամբողջ գործը կարգավորել միայն Ռազումիխինի շնորհիվ ու ամեն ինչից ելք էի գտնելու Ռազումիխինի օգնությամբ,— զարմանքով հարցնում էր նա իրեն։

Նա մտածում էր ու շփում ճակատը, ու տարօրինակ բան— խիստ երկար խորհրդածությունից հետո մի տեսակ անսպասելիորեն, հանկարծակի և գրեթե ինքնաբերաբար նրա գլխում չափազանց օտարոտի մի միտք ծագեց։

«Հա... Ռազումիխինի մոտ, իհարկե, կգնամ,— հանկարծ բոլորովին հանգիստ ու կարծես թե վերջնական որոշման իմաստով ասաց նա,— կգնամ, բայց ոչ հիմա... Ես նրա մոտ կգնամ... այդ բանից հետո, մյուս օրը, երբ արդեն դա վերջացած կլինի ու երբ ամեն ինչ նոր կարգով կգնա...»։

Ու հանկարծ նա ուշքի եկավ։

«Այդ բանից հետո՞,— ճչաց նա՝ վեր թռչելով նստարանից,— բայց մի՞թե դա կլինի, մի՞թե իսկապես կլինի»։

Նա թողեց նստարանը ու գնաց, համարյա վազեց. նա ուզում էր շուտ գալ դեպի տուն, սակայն տուն գնալը հանկարծ նրան խիստ զզվելի թվաց, ահա արդեն երկու ամսից

ավելի էր, որ նա այդ բանի մասին մտածում էր հենց այնտեղ, իր անկյունում, հենց այդ զարհուրելի պահարանում, և նա գնաց անորոշ ուղղությամբ։

Նրա ջղային դողը ինչ-որ տենդային դողի վերածվեց. նա նույնիսկ սարսուռ զգաց. օրը շոգ էր, իսկ նա մրսում էր։ Ասես ջանք թափելով, համարյա անգիտակցորեն, ինչ-որ ներքին անհրաժեշտությամբ սկսեց դիտել հանդիպող բոլոր առարկաները, կարծես թե եռանդով զվարճություն էր փնտրում, բայց դա նրան լավ չէր հաջողվում, և նա ամեն րոպե մտածմունքի մեջ էր ընկնում։ Իսկ երբ դարձյալ ցընցվելով բարձրացնում էր գլուխը և նայում շուրջը, իսկույն մոռանում էր, թե այդ պահին ինչի մասին էր մտածում, նույնիսկ մոռանում էր, թե ինչ տեղերից էր անցնում։ Այս կերպ նա անցավ ամբողջ Վասիլևսկի կղզին, հասավ Մալայա Նևա, անցավ կամուրջը ու շուռ եկավ դեպի Կղզիները։ Դալարիրն ու թարմությունը սկզբում դուր եկան նրա աչքերին, որոնք բնակեցված էին քաղաքի փոշուն, կրին ու ահագին, նեղող ու ճնշող տներին։ Այստեղ չկային ոչ տոթ, ոչ գարշահոտություն, ոչ էլ օղեռներ։ Բայց շուտով այդ նոր, հանելի զգացումներն էլ հիվանդագին ու ջղայնացուցիչ զգացումների վերածվեցին։ Նա երբեմն կանգ էր առնում դալարիրով զեղազարդված որևէ ամառանոցի առաջ, նայում էր յանկապատից ներս, հեռվում, պատշգամբներում տեսնում էր զարդված կանանց ու այգում վազվզող երեխաներին։ Նրան առանձնապես գրավում էին ծաղիկները. նա դրանց ավելի երկար էր նայում։ Նրան հանդիպում էին նաև շքեղ կառքեր, ձի նստած տղամարդիկ և կանայք. Ռաձկոլնիկովը վատաբարությամբ նայում էր նրանց ետևից ու բոլորին մոռանում ավելի շուտ, քան նրանք կչքանային հեռվում։ Մի անգամ նա կանգ առավ ու հաշվեց իր փողերը. կար մոտ երեսուն կոպեկ. «Քառասուն բազաքաղաքացուն, երեքը նաստասյային, նամակի համար, որևէն նախորդ օրը Մարմելադովներին քառասունյոթ թե հիսուն կոպեկ էի տվել»,— չգիտես ինչու մտքում հաշվեց նա, բայց շուտով նույնիսկ մոռացավ, թե ինչի համար էր փողը գրպանից հանել։ Նա այդ հիշեց՝ անցնելով ուտելիք վաճառող, ճաշարանի նրմանվող մի ձեռնարկության կողքից, ու զգաց, որ ուտել է

ուզում։ Մանելով ճաշարան, նա մի ըմպանակ օղի խմեց և ինչ-որ խորիզով կարկանդակ կերավ։ Ուտելը վերջացրեց գարձյալ ճանապարհին։ Նա շատ վաղուց օղի չէր խմել, և գա վայրկենապես աղդեց, թեև նա ընդամենը մի ըմպանակ էր խմել։ Նրա ոտքերը հանկարծ ծանրացան, և նա սկսեց քնելու ուժեղ ցանկություն զգալ։ Նա դնաց դեպի տուն. բայց հասնելով Պետրովյան կղզին, կանգ առավ բոլորովին ուժասպառ վիճակում, շեղվեց ճանապարհից, մտավ թփերի մեջ, ընկավ խոտի վրա և հենց նույն րոպեին քնեց։

Հիվանդագին վիճակում երազները հաճախ աչքի են ընկնում արտասովոր ցայտունությամբ, պայծառությամբ, ու խիստ նմանվում են իրականության։ Սրբեմն հրեշավոր պատկեր է հյուսվում, բայց իրադրությունը և ամբողջ պատկերացման ողջ պրոցեսը լինում են այնքան հավանական և այնպիսի նրբին, անսպասելի, պատկերի ողջ լիակատարությանը գեղարվեստորեն համապատասխանող մանրամասնություններով, որ նույն երազատեսը արթուն ժամանակ դրանք չի էլ կարող հորինել, թեկուզ լինի այնպիսի արվեստագետ, ինչպես Պուշկինը կամ Տուրգենևը։ Այդպիսի երազները, հիվանդագին երազները, միշտ էլ երկար են հիշվում և մեծ աղդեցություն են թողնում մարդու քայքայված ու արդեն զրկված օրգանիզմի վրա։

Ռասկոլնիկովը սարսափելի երազ տեսավ։ Նրան պատկերացավ իր մանկությունը հայրենի փոքրիկ քաղաքում։ Նա յոթ տարեկան է և մի տոն օր, իրիկնադեմին հոր հետ զբոսնում է քաղաքի շրջակայքում։ Օրը մռայլ է, տոթակեղ, տեղանքը ճիշտ այնպես է, ինչպես որ մնացել է նրա հիշողության մեջ. նույնիսկ նրա հիշողության մեջ այն շատ ավելի աղոտ է, քան այժմ պատկերանում էր երազում։ Փոքրիկ քաղաքը բոլորովին պարզ է երևում, շուրջը ոչ մի ծառ չկա. հեռու-հեռվում, հենց երկնքի ծայրում սևին է տալիս փոքրիկ անտառը։ Քաղաքի վերջին բանջարանոցից մի քանի քայլ հեռավորությամբ կա մի օղեստուն, մեծ օղեստուն, որը նրա վրա միշտ էլ բոլորովին անհաճելի տպավորություն էր թողնում և նույնիսկ վախ պատճառում, երբ նա հոր հետ զբոսնելիս անցնում էր դրա կողքից։ Այնտեղ միշտ մարդկանց բազմություն էր լինում, նրանք բղավում էին,

բրբջում, հայհոյում, այլանդակ ու խոպաձայն երդում և հաճախ տուրուդմբոց սարքում։ Օղեստան շուրջը միշտ հարբած ու սարսափելի կերպարանքներ էին թվում... Հանդիպելով նրանց, ինքը պինդ փարվում էր հորը և ամբողջ մարմնով դողում։ Օղեստան կողքից ձգվում էր ճանապարհը, միջգյուղյա ճանապարհը, որը միշտ փոշոտ էր, և այդ փոշին միշտ սև էր լինում։ Հեռվում ոլորապտույտ ձգվում է դա, ու երկար հարյուր քայլ հեռավորությամբ անցնում քաղաքի գերեզմանոցի աջ կողմից։ Գերեզմանոցի մեջտեղում կա կանաչ գմբեթով քարաշեն եկեղեցի։ Տարեկան երկու անգամ նա հոր ու մոր հետ գնում էր այնտեղ, պատարագին ներկա գտնվելու, երբ կատարվում էր տատի հոգեհանգիստը։ Տատը արդեն վաղուց մեռել էր, և ինքը նրան երբեք չէր տեսել։ Նրանք միշտ իրենց հետ վերցնում էին սպիտակ սկուտեղի մեջ լցրած, անձեռոցիկով ծածկված կուտյա։ Դա պատրաստվում էր բրնձից, շաքարից ու չամչից, որը խաչաձև լցվում էր բրնձի վրա։ Նա սիրում էր այդ եկեղեցին և դրա հինավուրց սրբապատկերները, որոնք մեծ մասամբ առանց միապաղաղ դրվագների էին, սիրում էր գողդոշուն գլխով ու ծեր բահանային։ Տատի գերեզմանի կողքին, որի վրա սալաքար էր դրված, գտնվում էր նաև իր եղբոր փոքրիկ գերեզմանը։ Եղբայրը մեռել էր վեց ամսական հասակում, ինքը նրան նույնպես բոլորովին չէր ճանաչում և չէր կարող հիշել. բայց նրան ասել էին, որ փոքրիկ եղբայր է ունեցել, և նա ամեն անգամ, երբ այցելում էր գերեզմանոց, բարեպաշտությամբ և պատկառանքով խաչակնքում էր փոքրիկ գերեզմանի վրա, կանգնում էր ու համբուրում այն։ Եվ ահա նա երազում տեսնում է, որ ինքը հոր հետ գնում է դեպի գերեզմանոցը տանող ճանապարհով և անցնում օղեստան կողքից. բռնել է հոր ձեռքից և վախով նայում է օղեստանը։ Առանձնահատուկ մի հանգամանք գրավում է նրա ուշադրությունը։ Այս անգամ այնտեղ կարծես թե զբոսանք է, հավաքվել են զուգված բազբեհնուհիներ, ուրիշ կանայք, դրանց ամուսինները և ամեն տեսակ խուժան։ Բոլորը հարբած են, բոլորը երգեր են երգում, իսկ օղեստան մուտքի առջև կանգնած է մի սայլ, տարօրինակ սայլ։ Դա մեկն է այն մեծ սայլերից, որոնց լծում են բեռնատար մեծ ձիեր և որոնցով ապրանքներ ու գինու տա-

կանանք են փոխադրում։ Նա միշտ սիրում էր նայել այդ ահագին, երկարաքաշ, հաստատուք բեռնատար նժույգներին, որոնք գնում են չափածո քայլվածքով, հանդիստ ու տանում մի որևէ ամբողջ լեռ, սմենեին էլ չեն տքնում, կարծես թե սայլաբեռով իրենց ավելի լավ են զգում, քան առանց սայլաբեռի։ Բայց այժմ, ատրօրինակ բան, այդպիսի մեծ սայլին լծված էր պլուպպիանան մի փոքրիկ, լղար, շեկ յաբու, մեկը այն յաբուներից, որոնք երբեմն մեծ դժվարությամբ են քաշում փայտանկնի կամ խոտի որևէ բարձր սայլաբեռ, մանավանդ երբ սայլը խրվում է ցեխի կամ աղոտների մեջ, ու մուժիկները մարակներով միշտ ցավագին, խիստ ցավագին խփում են նրանց, երբեմն նույնիսկ հենց մռութներին ու աչքերին, իսկ ինքը այնպե՞ս ցավելով, այնպե՞ս ցավելով է այդ դիտում, որ քիչ է մնում լաց լինի, իսկ մայրիկը միշտ էլ նրան հեռացնում է պատուհանից։ Նա այդ հաճախ էր տեսել։ Եվ ահա հանկարծ մեծ աղմուկ է բարձրանում. օղեռնից հչոցներով, երգերով, բալալայկաներով դուրս են գալիս Թունդ հարբած, հալիանգամ մուժիկներ կարմիր ու կապույտ վերնաշապիկներով, կապանները ուսներին գցած։ «Նստեք սայլին, բոլորդ նստեք, բոլորին տեղ կհասցնեմ, նստեք»,— գոռում է մեկը, որ դեռ ջահել է, հաստ պարանոցով և մսոտ, գաղարի պես կարմիր դեմքով։ Բայց անմիջապես ծիծաղ ու բացականչություններ են լսվում։

— Այդ տեսակ յաբուն ո՞նց կտանի։

— Այ Միկոլկա, գլխումդ խելք կա՞, թե չէ. այդ տեսակ պատլիկ ձիուկը ահագին սայլին ես լծել։

— Բայց չէ՞ որ այդ շեկոն անպայման կլինի մի քսան տարեկան, տղերք։

— Նստեք, բոլորիդ տեղ կհասցնեմ,— դարձյալ բղավում է Միկոլկան,— առաջինն է ցատկում սայլի վրա, վերցնում է երասանները ու ամբողջ հասակով կանգնում սայլի առջևի մասում։ — Քիչ առաջ Մատվեյը տարավ կարմիր ձին,— բղավում է նա այնտեղից,— իսկ այս յաբուն ուղղակի հոգիս հանել է, տղերք։ Քիչ է մնում սպանեմ սրան, դուր տեղը կեր է դիտվում։ Ասում եմ նստեցեք, յորդա կըտամ, յորդա, կտանի,— և նա վերցնում է մտրակը, հաճույքով պատրաստվում է ձաղկել շեկոյին։

— Դե նստեք, ինչ կա որ,— քրքջում են ամբոխի մեջ։ — Լսո՞ւմ եք, յորղա կերթա։

— Երևի տասը տարի կլինի, որ դա յորղա չի գնացել։

— Կերթա, էլի։

— Տղերք, չխնայեք, բոլորդ վերցրեք մարակները, պատրաստվեք խփելու։

— Այո, ձաղկեք յաբուին։

Բոլորը քրքջալով ու սրախոսելով բարձրանում են Միկոլկայի սայլի վրա։ Նստեց վեց մարդ, ու էլի կարելի է նստեցնել։ Բոլոր հետ վերցրին հատատ ու կաբմբաղեմ մի լին։ Սա կարմիր շոր է հագել, գլխին ուլանքներով գլխաշոր։ Ոտը, մերկոտա սանդամաններով է, կողին է շաքում ու բեռնում է սայլը։ Ամբոխի մեջ նույնպես ծիծաղում են, և ինչպես չծիծաղեն։ Այս անսակ քուռա, փոքրիկ կամրիկը մեջ պիտի վազի ու տանի այդքան մանրուքներ։ Սայլ նստած երկու տղա խկոյն մարակներ են վերցնում, որ ոչնչեն Միկոլկային։ Լսվում է «դեհ» բացականչություններ, յարուն ամբողջ ուժով մեկ ձիգ է տալիս, սայլը ոչ միայն չի կարողանում յորղա տալ, այլև քայլերն էլ հազիվ է փոխում, մանրիկ քայլեր է անում, տնքում է ու ոչոչում երեք մարակների հարվածներից, որոնք կարկուտի պես թափվում են նրա վրա։ Սայլի վրա և ամբոխի մեջ ծիծաղը կրկնապատկվում է, իսկ Միկոլկան բարկանում է և ուրուց հարվածներով կատաղաբար ձաղկում դամբիկին, ասես իրար կարծում է, թե ձիուկը յորղա կգնա։

Փոդեք ես էլ նստեմ, աղերք,— ամբոխի միջից բղավում է ոգևորված մի ուրա։

Նստեցեք, բոլորդ նստեցեք, բոլորիդ էլ կտանեմ, կձաղկեմ սրան, — գոռում է Միկոլկան ու շրմփացնում, հա շրմփացնում, և կատաղությունից արդեն չգիտե, թե էլ ինչով խփի ձիուկին։

— Հայրիկ, հայրիկ,— ասում է Ռոդյոնը հորը,— հայրիկ, տես ինչ են անում. հայրիկ, ծեծում են խեղճ ձիուկին։

— Գնանք, գնանք,— ասում է հայրը,— հարբած են, զվարճություն են անում, հիմարնե՛ր։ Գնանք, մի նայիր,— և ուզում է տանել որդուն, բայց սա պոկվում է նրա ձեռքերից

և, խելքը կորցրած, վազում է դեպի ձիուկը։ Խեղճ ձիուկը արդեն վատ վիճակում է։ Նա շնչասպառ է լինում, կանգ է առնում, դարձյալ ձիգ է տալիս, քիշ է մնում ընկնի։

— Ձայնկեր սատկացնելու չափ,— բոռում է Միկոլկան, — էլ ուրիշ բան չի մնում։ Կթակեմ, թեկուզ շունչը փչի։

— Բա դու խիղճ չունե՞ս, ինչ է, սատանի ծնունդ,— ամբոխի միջից գոռում է մի ծերունի։

— Ո՞վ է տեսել, որ այդ տեսակ փոքրիկ ձիուկը այդքան բեռ տանի,— ավելացնում է մեկ ուրիշը։

— Շնչասպառ կանես, հա-հա՜,— բղավում է երրորդը։

— Ձե՛զ ինչ, է՛, իմ ձիուկն է, ինչ ուզենամ, կանեմ։ Էլի նստեցեք, բոլորդ նստեցեք, ուզում եմ, որ անպայման յորդա գնա...

Հանկարծ համաղարիի պես ճայթում է քրքիջը, որի մեջ կորչում են բոլոր ձայները։ Զամբիկը չդիմացավ հաճախակի հարվածներին և ուժասպառ վիճակում սկսեց քացի տալ։ Նույնիսկ ծերունին էլ չհամբերեց ու քմծիծաղեց։ Եվ իրավ, այդ տեսակ բոստա ձիուկ է և դեռ քացի էլ է տալիս։

Ամբոխի միջից երկու տղա մեկական մտրակ են վերցնում ու վազում են ձիուկի կողքերից խփելու։ Նրանք վազում են տարբեր կողմերից։

— Շրմփացրեք դրա մռութին, աչքերին,— գոռում է Միկոլկան։

— Երգենք, տղերք,— բղավում է մեկը ոտյլի վրայից, ու այնտեղ գտնվողները բոլորն էլ սկսում են երգել։ Հնչում է ուրախ երգը, զմբզմբում է դափը, կրկներգի հետ սուլոց է լսվում։ Կինը կազին է շրթում ու ծիծաղում։

... Ռոդյան վազում է ձիուկի կողքից, առաջ է անցնում, տեսնում է, թե ինչպես են խփում ձիուկի աչքերին, հենց աչքերին։ Նա լալիս է։ Միրտը ճմլվում է, արցունքներ են հոսում։ Խարազանողներից մեկը դիպչում է նրա դնմքին. նա այդ չի զգում, նա հուսալքվում է, ճչում։ Նեռվում է դեպի սպիտակամորուք, սպիտակահեր ծերունին, որը օրորում է գլուխը և դատապարտում այդ ամենը։ Մի կին բռնում է Ռոդյայի ձեռքից և ուզում է տանել նրան, բայց նա պոկվում է և դարձյալ վազում դեպի ձիուկը։ Սա արդեն վերջին ճիգերն է թափում, բայց մի անգամ նա սկսում է քացի տալ։

— Փու, սատանան տանի քեզ,— կատաղած ճչում է Միկոլկան։ Նա գցում է մտրակը, կռանում և սայլի հատակից հանում է մի երկար ու հաստ քեղի, երկու ձեռքով վերցնում է դրա ծայրից և ուժեղ թափ է առնում շեկոյի վրա։

— Կշնչեմ,— բղավում են շուրջը։

— Կսպանի։

— Իմ յաբուն է,— բոռում է Միկոլկան և քեղիով ուժգնաթափ խփում ձիուկին։ Շրխկում է ծանր հարվածը։

— Զաղկեք դրան, ձաղկեք, ինչ եք կանգնել,— լսվում են ձայներ ամբոխի միջից։

Իսկ Միկոլկան նորից թափ է առնում, ու նորից հուժկու հարվածը իջնում է դժբախտ յաբուի մեջքին։ Սա պպզում է, ամբողջ հետույքը իջեցնում գետնին, հետո էլ վեր է ցատկում և վերջին ամբողջ ուժով սայլը այս ու այն կողմ է քաշում, որ տանի, սակայն բոլոր կողմերից նրան խփում են վեց մտրակով, իսկ քեղին նորից բարձրանում է ու իջնում երրորդ, տասա և չորրորդ անգամ, չափածո զարկերով։ Միկոլկան կատաղում է, որ չի կարողանում մի հարվածով սպանել ձիուկին։

— Դիմացկուն է, հա՜-ա,— բղավում են շուրջը։

— Հիմա անպայման կընկնի, տղերք, ու կգա դրա վերջը,— ամբոխի միջից ճղճղում է մի ուրիշը։

— Կացնով խփեք, էլի, մի անգամից սպանեցեք,— գոռում է երրորդը։

— Օֆ, անիծված էլ, ետ քաշվեք,— մոլեգին բոռում է Միկոլկան, գցում քեղին, նորից կռանում է սայլի վրա ու վերցնում երկաթե մի լինգ։ — Զգուշացեք,— բղավում է նա, ու ինչքան որ ուժ ունի, թափ առած խփում է խեղճ ձիուին։ Շրմփում է հարվածը. զամբիկը ճռճվում է, պպզում, ուզում է քաշել սայլը, բայց լինգը ամբողջ թափով զարկվում է նրա մեջքին, և նա ընկնում է գետնին, ասես մի անգամից կտրում են նրա չորս ոտքերը։

— Սատկացրեք,— բոռում է Միկոլկան, ու ասես խելքը կորցրած, ցատկում է սայլից։ Մի քանի տղաներ, նույնպես կարմրադեմ ու հարբած, վերցնում են ինչ-որ պատահում է՝ մտրակներ, մահակներ, քեղին, ու վազում են դեպի շնչասպառ ոամբիկը։ Միկոլկան կանգնում է դրա կողքին ու սկը-

սում է արդեն ավելորդ տեղը լինգով խփել մեջքին։ Ցաքուն երկարացնում է մռութը, ծանր շունչ է առնում ու սատկում։

— Վերջ,— բղավում են ամբոխի միջից։

— Բա ինչո՞ւ յորդա չէր գնում։

— Իմ յաբուն է,— գոռում է Միկոլկան լինգը ձեռքին, աչքերը արյունով լցված։ Նա կանգնել է և կարծես ափսոսում է, որ էլ ոչ սքի չի կարող խփել։

— Իսկապես որ դու խիղճ չունես,— ամբոխի միջից լսվում են արդեն շատ ձայներ։

Իսկ խեղճ տղան արդեն կորցրել է խելքը։ Նա ամբոխի միջից ճիչ-աղաղակով աճապարում է դեպի շեկոն, գրկում և համբուրում է նրա անկենդան, արնաշաղախ մռութը, համբուրում է նրա աչքերը, շրթունքները։ Հետո հանկարծ վեր է թռչում և բռունցքներով մոլեգնաբար նետվում Միկոլկայի վրա։ Այդ վայրկյանին հայրը, որ արդեն երկար հետամրտում էր նրան, վերջապես, բռնում է որդուն ու դուրս բերում ամբոխի միջից։

— Գնանք, գնանք,— ասում է նա,— գնանք տուն։

— Հայրիկ, ինչո՞ւ նրանք... սպանեցին... խեղճ ձիուկին,— հեկեկում է տղան, շունչը բռնվում է, ու խոսքերը ճչոցների պես դուրս են թռչում իր ծանրացած կրծքից։

— Հարբած են, գժություն են անում, մեր գործը չէ, գրնանք,— ասում է հայրը։ Տղան փարվում է հորը, իսկ կուրծքը նրան նեղում է ու նեղում։ Նա ուզում է շունչ առնել, ճչալ, ու արթնանում է։

Նա արթնացավ ամբողջովին քրտնակալած, մազերը քրտնքով թրջված, շունչը կտրվելով, ու սարսափահար մի քիչ բարձրացավ տեղից։

— Փառք աստծո, սա միայն երազ էր,— ասաց նա, նստեց ծառի տակ ու խոր շունչ առավ։ — Բայց ի՞նչ է սա, հո չե՞մ սկսում ջերմել. ինչպիսի՞ այլանդակ երազ։

Նրա ամբողջ մարմինը ասես ջարդված լիներ. մութ ու մռայլ էր հոգին։ Նա արմունկները դրեց ծնկներին ու գլուխը հենեց ձեռքերին։

«Աստված իմ,— բացականչեց նա,— մի՞թե իսկապես, մի՞թե իսկապես ես կայրեն կվերցնեմ, կխփեմ պառավի գլխին, կջնջեմ նրա գանգը... ոտք կդնեմ նրա կպչուն, տաք

արյան մեջ, կշարդեմ կոդպիքը, կդողանամ ու կդողամ, կթաքնվեմ ամբողջովին արյունոտված, կացինը ձեռքիս... Տե՛ր աստված, մի՞թե այդպես կլինի»։

Այդ ասելով, նա դողում էր տերևի նման։

— Ախր ի՞նչ եմ մտածում,— շարունակեց նա դարձյալ բացականչելով և կարծես խոր զարմացած,— ախր ես գիտեի, որ այդ բանին անկարող եմ դիմանալ, էլ ինչո՞ւ էի մինչև հիմա ինձ տանջում։ Չէ՞ որ դեռ երեկ, երեկ, երբ գնացի այդ... վարձը անելու, դեռ երեկ պարզ հասկացա, որ չեմ հանդուրժի... էլ ինչո՞ւ եմ հիմա տանջվում, էլ ինչո՞ւ էի մինչև այժմ կասկածում։ Չէ՞ որ հենց երեկ, իջնելով սանդուղքից, ինքս ասացի, որ դա արիկայություն է, նողկալի է, սարսափելի է, սոսկալի է... Չէ՞ որ հենց միայն այդ մտքի համար ինձ զզվեցնում էր ու սարսափեցնում...

Ա՛խ, ես չեմ կարող այդ անել, չե՛մ կարող անել։ Ինչուց և ոչ մի կասկած չլինի այդ բոլոր հաշիվներում, թեկուզ այն ամենը, ինչ որ որոշել էի այս ամսում, ցերեկվա լույսի պես պարզ լինի, թվաբանորեն ճիշտ լինի։ Տե՛ր աստված, չէ՞ որ միևնույն է, ես սիրտ չեմ անի, չեմ դիմանա, չեմ կարող... Հապա էլ ինչո՞ւ, ինչո՞ւ էի մինչև հիմա մտաանջվում...

Նա ոտքի՛ ելավ, զարմացած նայեց շուրջը, ասես չհասկանալով, թե ինչու էր եկել այստեղ, ու գնաց դեպի Տ... կամուրջը։ Նա գունատ էր, մարմնի բոլորը անդամները աստիճ հոգնած էին, բայց նրա շնչառությունը հանկարծ կարծես թեթևացավ։ Նա զգաց, որ արդեն թոթափել է այդ սարսափելի բեռը, որ այնքան երկար ճնշում էր իրեն, ու նրա հոգին հանկարծ թեթևացավ ու խաղաղվեց։ «Տեր,— ազերսում էր նա,— ինձ ցույց տուր իմ ճանապարհը, իսկ ես հրաժարվում եմ իմ այս անիծված... ցնորքից»։

Անցնելով կամուրջը, նա լուռ և հանգիստ գնում էր Նևան, փառ, կարմիր արևի գունագեղ մայրամուտը։ Չնայած իր թուլությանը, նա նույնիսկ հոգնածություն էլ չէր զգում։ Կարծես հանկարծ պատռվել էր սրտի պալարը, որը թարախակալում էր մի ամբողջ ամսվա ընթացքում։ Ազատությո՞ւն, ազատությո՞ւն։ Այժմ նա ազատ է այդ հրապույրներից, կախարդանքից, թովչանքից, գայթակղությունից։

Հետագայում, երբ նա բոպե առ բոպե, կետ առ կետ, մի առ մի վերհիշում էր այդ ժամանակը և այն ամենը, ինչ որ իրեն պատահել էր այդ օրերին, նրան միշտ սնահավատության չափ ապշեցնում էր մի հանգամանք, որը թեև էապես այնքան էլ արտասովոր չէր, բայց հետո, ինչպես միշտ թվում էր նրան, իր բախտի ինչ-որ կանխորոշումն էր։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ և ինքն իրեն բացատրել, թե ինչու էր տուն վերադառնում Սեննայա հրապարակի միջով, թեև ինքը հոգնած էր և ուժասպառ, ու իր համար միշտ ավելի ձեռնտու էր տուն վերադառնալ ամենակարճ և ուղիղ ճանապարհով, իսկ այդ հրապարակով վերադառնալը բոլորովին ավելորդ էր նրա համար։ Պտույտը երկար չէր, բայց ակներև էր ու բոլորովին էլ պետք չէր։ Իհարկե, տասնյակ անգամ պատահում էր, որ նա տուն էր վերադառնում առանց հիշելու, թե որ փողոցներով է գնում։ Բայց ինչո՞ւ,— միշտ հարցնում էր նա,— ինչո՞ւ Սեննայա հրապարակում (որով անցնելու նույնիսկ հարկ չկար) կայացած այդպիսի կարևոր, իր համար այդպիսի վճռական և միևնույն ժամանակ բոլորովին պատահական հանդիպումը զուգադիպեց իր կյանքի հենց այդ ժամին, հենց այդ բոպեին, հատկապես իր այդպիսի տրամադրության և հատկապես այն հանգամանքներին, որոնց առկայությամբ դա, այդ հանդիպումը կարող էր ամենավճռական ու ամենավերջնական ազդեցություն թողնել իր ամբողջ ճակատագրի վրա։ Կարծես թե այդ կինը դիտմամբ էր նրան սպասում։

Ժամը մոտ ինն էր, երբ Ռասկոլնիկովը անցնում էր Սեննայա հրապարակով։ Սեղանների, տեփուրների վրա, մեծ ու փոքր խանութներում առևտուր անողները փակում էին իրենց ձեռնարկությունները կամ իջեցնում ու հավաքում էին իրենց ապրանքները ու տուն գնում, ինչպես և իրենց գնորդները։ Ստորին հարկերում եղած ճաշարանների մոտ, Սեննայա հրապարակի տների կեղտոտ ու գարշահոտ բակերում, առավելապես օդեռների մոտ բազմաթիվ և ամեն տեսակ արհեստավորներ ու ցնցոտիավորներ էին խմբվում։ Ռասկոլնիկովը, աննկատակ դուրս գալով փողոց, հաճույքով էր անցնում առավելապես այդ վայրերից, ինչպես և մոտակա

բոլոր նրբանցքներից։ Այստեղ նրա ցնցոտիները չէին գրավում ոչ ոքի գոռոզավարի ուշադրությունը, ու կաբեքի էր քայլել ուզածդ տեսքով, առանց որևէ մեկին անհարմար դրության մեջ դնելու։ Հենց Կ... նրբանցքի անկյունում մի քաղքենի և իր կինը երկու սեղանի վրայից վաճառում էին իրենց ապրանքը՝ թելեր, քուղեր, չթև գլխաշորեր և այլն։ Նրանք էլ պատրաստվում էին տուն գնալու, բայց հապաղում էին՝ խոսելով մոտեցած մի ծանոթ կնոջ հետ։ Այդ ծանոթը Լիզավետա Իվանովնան էր, կամ ինչպես բոլորը նրան անվանում էին՝ Լիզավետան, հենց այն պառավ Ալյոնա Իվանովնայի, կոլեգիական ռեգիստրատորի կնոջ և վաշխառուի կրտսեր քույրը, որի մոտ նախորդ օրը նշել էր Ռասկոլնիկովը. եկել էր ժամացույցը գրավ դնելու և իր փորձը կատարել... Նա արդեն վաղուց ամեն ինչ գիտեր այդ Լիզավետայի մասին, և նույնիսկ վերջինս էլ մի քիչ ճանաչում էր նրան։ Այդ մի բարձրահասակ, անճոռնի, երկչոտ ու հեզարարո աղջիկ էր, համարյա ապուշ, երեսունհինգ տարեկան, իր քրոջ մոտ ապրում էր բոլորովին տարիական վիճակում, գիշեր-ցերեկ աշխատում էր նրա համար, վախենում էր նրանից, ու պառավը նույնիսկ ծեծում էր նրան։ Լիզավետան չապոցը ձեռքին մտազբաղ կանգնել էր քաղքենու և որա կնոջ առաջ և ուշադրությամբ լսում էր նրանց։ Ամուսինները մի առանձին եռանդով նրան ինչ-որ բան էին բացատրում։ Երբ Ռասկոլնիկովը հանկարծ տեսավ Լիզավետային, համակվեց ինչ-որ տարօրինակ զգացումով, որը խորադույն զարմանքի էր նման, թեև այդ հանդիպման մեջ զարմանալի ոչինչ չկար։

— Լիզավետա Իվանովնա, դուք այդ ինքներդ անձամբ որոշեցեք,— բարձրաձայն ասաց քաղքենին։ — Եկեք վաղը, ժամը յոթին։ Նրանք էլ կգան։

— Վա՞ղը,— ծոր տալով ու մտազբաղ ասաց Լիզավետան, որը կարծես տատանվում էր։

— Հըմ, Ալյոնա Իվանովնան թունդ վախեցրել է ձեզ,— բլբլացրեց առևտրականի ժիր կինը։ — Նայում եմ ձեզ ու մտածում, որ դուք կարծես բոլորովին փոքրիկ երեխա լինեք։ Նա ձեր ոչ թե հարազատ, այլ խորթ քույրն է, բայց ա՛յ թե ինչպես է ձեզ ենթարկել իր կամքին։

— Դուք այս անգամ ոչինչ չասեք Ալյոնա Իվանովնային, ահա իմ խորհուրդը,— վրա բերեց ամուսինը,— եկեք մեզ մոտ առանց նրանից թույլտվություն խնդրելու։ Օգտակար գործ է։ Հետո քույրիկդ ինքն էլ այդ կհասկանա։

— Գա՞մ, այո՞։

— Ժամը յոթին, վաղը. նրանց կողմից էլ կգան. ինքներդ անձամբ որոշեցեք։

— Ինքնահոն էլ կդցենք,— ավելացրեց կինը։

— Լավ, կգամ,— գնա էլի մտաղբաղ ասաց Լիզավետան ու դանդաղ հեռացավ։

Ռասկոլնիկովը անցավ այնտեղից ու էլ ոչինչ չլսեց։ Նա քայլում էր կամացուկ, աննկատելի, աշխատելով ոչ մի բառ չասել։ Նրա սկզբնական զարմանքը հետզհետե սարսափի վերածվեց, կարծես մեջքովը սարսուռ անցավ։ Նա իմացավ, նա հանկարծակի և բոլորովին անսպասելի իմացավ, որ մյուս օրը, երեկոյան ժամը ուղիղ յոթին Լիզավետան, պառավի քույրը և նրա հետ միակ ապրողը, տանը չի լինի, հետևապես, պառավը երեկոյան ուղիղ ժամը յոթին տանը մենակ կմնա։

Մինչև իր բնակարանը միայն մի քանի քայլ էր մնում։ Նա մտավ իր խուցը ինչպես մահվան դատապարտված։ Ոչ մի դատողություն չէր անում և ամենևին էլ չէր կարող անել. բայց իր ամբողջ էությամբ հանկարծ զգաց, որ այլևս զուրկ է բանականության ազատությունից, կամքից, ու ամեն ինչ որոշված է հանկարծակի, վերջնականապես։

Իհարկե, եթե նույնիսկ ամբողջ տարիներ նա ստիպված լիներ իր մտադրությունը կատարելու հարմար առիթի սպասել, ապա այդ դեպքում էլ չէր կարելի հաստատապես հույս դնել այդ դիտավորության հաջող կատարման ավելի ակներև ու հարմար առիթի վրա, քան այն, որ ներկայանում էր հաջորդ օրը։ Համենայն դեպս նախորդ օրը դժվար կլիներ միանգամայն ճշտորեն ու հաստատապես, նվազագույն ռիսկով, առանց որևէ վտանգավոր հարցուփորձի ու որոնումների իմանալ, որ հաջորդ օրը, այսինչ ժամին այսինչ պառավը, որի դեմ մահափորձ է պատրաստվում, տանը բոլորովին մենակ կլինի։

VI

Հետագայում Ռասկոլնիկովը առիթ ունեցավ մի կերպ իմանալու, թե քաղքենին և նրա կինը ինչու էին Լիզավետային հրավիրում իրենց մոտ։ Գործը բոլորովին սովորական էր և ոչ մի առանձին բան չէր պարունակում։ Նկվոր ու աղքատացած մի ընտանիք վաճառում էր կանացի իրեր, պղնձներ և այլն։ Քանի որ շուկայում վաճառելը ձեռնտու չէր, վաճառող կին էին փնտրում, իսկ Լիզավետան դրանով էր զբաղվում. կոմիսիոն վարձատրություն էր վերցնում, արդարի գործեր էր անում և մեծ պրակտիկա ուներ, որովհետև շատ ազնիվ էր և միշտ վերջին գինն էր ասում. ինչ գին որ պահանջեր, այն էլ պիտի ընդունվեր։ Առհասարակ քիչ էր խոսում, ու ինչպես արդեն ասված է, հնազարմ էր ու երկչոտ...

Ռասկոլնիկովը վերջին ժամանակներում սնահավատ էր դարձել։ Սնահավատության հետքերը դեռ երկար մնում էին նրա մեջ ու գրեթե անջնջելի էին։ Եվ այդ ամբողջ գործում նա հետո միշտ էլ տեսնում էր որոշակի տարօրինակություն, խորհրդավորություն, կարծես ինչ-որ առանձնահատուկ ազդեցությունների և զուգադիպությունների առկայություն։ Երբեմն ծանոթ մի ուսանող, Պոկորևը, մեկնելով Խարկով, խոսակցության ժամանակ նրան հաղորդել էր պառավ Ալյոնա Իվանովնայի հասցեն, որպէս իր գրավ դնելու համար, եթե գա հարկավոր լիներ։ Ռասկոլնիկովը երկար ժամանակ չէր գնում պառավի մոտ, որովհետև դասեր էր տալիս և մի կերպ ծայրը ծայրին հասցնում։ Մեկ ու կես ամիս առաջ նա հիշեց այդ հասցեն. ուներ գրավ դնելու համար պիտանի երկու իր՝ հոր արծաթե հին ժամացույցը և ինչ-որ երեք կարմիր քարերով մատանի, որ հրաժեշտի ժամանակ նվիրել էր քույրը իրեն հիշատակ։ Նա որոշեց տանել մատանին. գտավ պառավին, ու հենց առաջին հայացքից, դեռ առանձին ոչինչ չգիտենալով նրա մասին, նրա նկատմամբ անհաղթահարելի զզվանք զգաց, նրանից երկու «թղթե մանեթանոց» վերցրեց և ճանապարհին մտավ մի վատ պանդոկ։ Նա թեյ խնդրեց, նստեց ու խոր մտածմունքի մեջ ընկավ։ Մի տարօրինակ միտք էր կտցահարում նրա ուղեղը,

ինչպես ճուտիկը կոցահարում է ձուն, դուրս գալու համար, ու շատ, շատ էր զբաղեցնում նրան։

Համարյա նրա կողքին, մյուս սեղանի շուրջը նստել էին մի ուսանող և մի շահել սպա։ Նա այդ ուսանողին բոլորովին չէր ճանաչում և չէր հիշում։ Նրանք բիլյարդ էին խաղացել ու սկսել էին թեյ խմել։ Հանկարծ նա լսեց, որ ուսանողը սպայի հետ խոսում է վաշխառու կնոջ, Ալյոնա Իվանովնայի, կոլեգիական քարտուղարի կնոջ մասին, ու սպային հաղորդում է նրա հասցեն։ Հենց միայն դա Ռասկոլնիկովին արտառոց բան թվաց. նա նոր էր եկել այնտեղից, և ահա այդ պառավի մասին են խոսում։ Իհարկե, դա պատահականություն է, բայց ահա նա այժմ չի կարողանում վանել խիստ արտասովոր մի տպավորություն, իսկ այստեղ կարծես թե ինչ-որ մեկը հաճոյանում է նրան. ուսանողը հանկարծ սկսում է ընկերոջը այլևայլ մանրամասնություններ հաղորդել այդ Ալյոնա Իվանովնայի մասին։

— Լավն է նա,— ասում է ուսանողը,— նրա մոտ միշտ կարելի է փող ճարել։ Հարուստ է ինչպես չհուդ, կարող է միանգամից հինգ հազար տալ, իսկ ռուբլիանոց գրավականից էլ չի խորշում։ Մերոնցից շատերն են նրա մոտ եղել։ Միայն թե չափազանց ղզվելի է...

Ուսանողը սկսեց պատմել, թե այդ պառավը այնքան չար ու քմահաճ է, որ բավական է միայն մի օրով ուշ վերադարձնել գրավականի դիմաց վերցրած փողը, ու իրը կկորչի։ Ջորս անգամ պակաս է տալիս, քան արժի իրը, իսկ ամսական հինգ և նույնիսկ յոթ տոկոս է վերցնում և այլն։ Ուսանողը շաղակրատեց և, բացի այդ ամենից, հաղորդեց, որ պառավը ունի Լիզավետա անունով քույր, որին նա, այդ կարճլիկ ու գարշելի պառավը, ամեն րոպե ծեծում է ու պահում բոլորովին ստրկացրած վիճակում, ինչպես փոքրիկ երեխայի, մինչդեռ Լիզավետան բավականաչափ բարձր հասակ ունի...

— Հենց ֆենոմեն է որ կա,— գոչեց ուսանողը և քրքջաց։

Նրանք սկսեցին խոսել Լիզավետայի մասին։ Ուսանողը նրա մասին ինչ-որ առանձին հաճույքով էր պատմում և շարունակ ծիծաղում էր, իսկ սպան մեծ հետաքրքրությամբ

էր լսում և ուսանողին խնդրում էր այդ Լիզավետային ուղարկել իր մոտ, սպիտակեղենը նորոգելու համար։ Ռասկոլնիկովը ոչ մի բառ չասաց և մի անգամից ամեն ինչ իմացավ. Լիզավետան պառավի կրտսեր, խորթ (ուրիշ մորից) քույրն էր և արդեն երեսունհինգ տարեկան։ Նա դիշերցերեկ աշխատում էր քրոջ համար, տանը խոհարարուհու և լվացարարուհու գործ էր անում, ու բացի դրանից, շորեր էր կարում վաճառելու համար, նույնիսկ վարձվում էր հատակներ լվալու համար, ու վաստակած ամբողջ դրամը տալիս էր քրոջը։ Առանց պառավի թույլտվության չէր համարձակվում որևէ պատվեր կամ աշխատանք վերցնել։ Պառավը արդեն կապմել էր իր կտակը, դա հայտնի էր Լիզավետային, որին բոլոր կտակի մի գրոշ էլ չէր հասնում, նրան մնալու էր միայն շարժական գույքը, աթոռներ և այլն, իսկ փողերը հանձնվելու էին մի վանքի, որ գտնվում էր Ն... նահանգում։ Պառավը այդ արել էր իր հոգու փրկության համար։ Լիզավետան քաղքենի էր և ոչ թե աստիճանավորի դուստր, նա աղջիկ էր, չափազանց անբարեկազմ, խիստ բարձրահասակ էր, երկար, մեծ, ասես դուրս ընկած ոտքերով, քոշերը միշտ ծռմռված, ու իրեն մաքուր էր պահում։ Դիմատետր բանը, որ զարմացնում ու ծիծաղեցնում էր ուսանողին, դա այն էր, որ Լիզավետան միշտ հղի էր լինում...

— Բայց դու հո ասում ես, որ նա այլանդակ է,— վրա բերեց սոլան։

— Այո, թուխ է, ասես շորերը փոխած զինվոր լինի, բայց, գիտե՞ս, ամենևին էլ այլանդակ չէ։ Դեմքը և աչքերը խիստ բարի են։ Միանգամայն բարի։ Ահա քեզ ապացույց, շատերին դուր է գալիս։ Այնպե՞ս հանգիստ է, հեզաբարո, հլու, համաձայնող, ամեն ինչի համաձայնող։ Իսկ նրա ժպիտը նույնիսկ շատ հաճելի է։

— Ուրեմն նա քեզ էլ է դուր գալիս,— ծիծաղեց սոլան։

— Իր տարօրինակությամբ։ Հա՛, այ թե ես քեզ ինչ կասեմ։ Ես կսպանեի և կթալանեի այդ անիծված պառավին, ու հավատացնում եմ քեզ, որ այդ կանեի առանց խղճի խայթ զգալու,— տաքացած ավելացրեց ուսանողը։

Սոլան դարձյալ սկսեց քրքջալ, իսկ Ռասկոլնիկովը ցընցվեց։ Որքա՞ն տարօրինակ էր այդ։

— Կաց, ես ուզում եմ քեզ մի լուրջ հարց տալ,— տաքացավ ուսանողը։ — Ես հիմա, իհարկե, կատակեցի, բայց լսիր. մի կողմից՝ հիմար, անհեթեթ, ընչին, չար, հիվանդ մի պառավ, որը ոչ ոքի հարկավոր չէ, ընդհակառակը, բոլորի համար վնասակար է, ինքն էլ չգիտե, թե ինչի համար է ապրում, ու վաղն ևեթ կմեռնի։ Հասկանո՞ւմ ես, հասկանո՞ւմ ես։

— Լավ, հասկանում եմ,— պատասխանեց սպան՝ ուշադրությամբ նայելով տաքացած ընկերոջը։

— Շարունակիր լսել։ Մյուս կողմից՝ երիտասարդ, թարմ ուժեր, որոնք գրեթե չեն օժանդակությունից ու կորչում են ֆզուր, ու դրանք հաղարներ են, ու ամենուրեք այդպես է։ Պառավի փոխարեն կարելի է կազմակերպել ու ապահովել հարյուրավոր, հաղարավոր լավ գործեր ու ձեռնարկումներ, իսկ այդ փոխարեն վանքին են տրվելու։ Կարելի է հարյուրներին, հազարներին օժանդակություն ցույց տալ, տասնյակ ընտանիքներ փրկել մուրացկանությունից, քայքայումից, կործանումից, անասակությունից, վիներական հիվանդանոցներից, և այդ ամենը— նրա փոխարեն։ Սպանիր նրան ու վերցրու նրա փողերը, ու դու դրանց միջոցով կարող ես օգտակար լինել ամբողջ մարդկությանը և ընդհանուր գործին. ի՞նչ ես կարծում, մի՞թե այդ փոքրիկ ոճիրը չի արդարանա հազարավոր բարի գործերով։ Մի կյանքի փոխարեն հազար կյանք, փտումից ու քայքայումից փրկված։ Մեկ մահ և փոխարենը հարյուր կյանք, չէ՞ որ այստեղ հաշիվը պարզ է։ Եվ ի՞նչ արժեք ունի այդ հյուծախտավոր, հիմար ու չար պառավի կյանքը. ոչ ավելի, քան ոջլի, բլոնի կյանքը, ասենք այդ էլ չարժի, որովհետև այդ պառավը վնասակար է։ Նա ուրիշի կյանքն է հոշոտում. նա չար է. նա օրերս կատաղությունից կծել էր Լիզավետայի մատը, քիչ էր մնացել կտրեր։

— Իհարկե, նա արժանի չէ ապրելու, բայց այստեղ պետք է նկատի առնել բնությունը։

— Էհ, բարեկամս, չէ՞ որ բնությունը շտկում են և նրան ուղղություն են տալիս, իսկ առանց դրան մարդիկ կխրվեին նախապաշարմունքների մեջ։ Առանց դրան ոչ մի մեծ մարդ չէր լինի։ Ասում են՝ «պարտք, խիղճ». ես չեմ

ուզում որևէ բան ասել պարտքի ու խղճի դեմ, բայց նայած թե մենք դրանք ինչպես ենք հասկանում։ Կաց, ես քեզ էլի մի հարց կտամ, լսիր։

— Ոչ, դո՛ւ կաց. ե՛ս քեզ հարց կտամ։ Լսիր։

— Հապա՛։

— Դու հիմա խոսում, ճառում ես, բայց ասա ինձ, ինքդ հրապանե՞ս պառավին, թե՞ ոչ։

— Իհարկե, ոչ։ Ես արդարության կողմն եմ... Այստեղ չանեն այդ չէ...

— Իսկ իմ կարծիքով, եթե դու ինքդ սիրտ չես անում, որևէն այստեղ ոչ մի արդարություն չկա։ Էհ, մի անգամ էլ խոգտեր։

Ռասկոլնիկովը յափտանոր հոգնած էր։ Իհարկե, այդ ամենը ամենասովորական և ամենից հաճախ եղած երիտասարդական խոսակցություններ ու մտքեր էին, որ նա շատ անգամ էր լսել, միայն ուրիշ ձևերով և ուրիշ թեմաների շուրջ։ Բայց ինչո՞ւ նա այդպիսի խոսակցություն և այդպիսի մտքեր լսելու առիթ ունեցավ հատկապես այժմ, երբ հենց իր գլխում նիշտ այդպիսի մտքեր էին պտտվում։ Եվ ինչո՞ւ հատկապես այժմ, երբ ինքը սկսել էր մտածել պառավի մասին, այդպիսի խոսակցություն է լսում... Այդ զուգադիպությունը այնուհետև միշտ նրան տարօրինակ էր թվում։ Այդ չնչին պանդոկային խոսակցությունը նրա վրա արտակարգ ազդեցություն ունեցավ գործի հետագա զարգացման ընթացքում. կարծես թե այստեղ իսկապես մի ինչոր կանխորոշում, ցուցում կար.

. . . . . .

Վերադառնալով Սենայա հրապարակից, նա ընկավ բազմոցին ու մի ամբողջ ժամ նստեց առանց շարժվելու։ Մինչ այս, մինչ այն, օրը մթեց. նա մոմ չուներ, ասենք մարդն էլ չէր անցնում լույս վառելու։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում հետագայում հիշել, թե արդյոք այդ ժամանակ մտածո՞ւմ էր որևէ բանի մասին։ Վերջապես, նա զգաց առաջվա տենդը, սարսուռը, ու հաճույքով գլխի ընկավ, որ բազմոցի վրա կարելի է և պառկել։ Շուտով պինդ, կապած քունը հաղթեց, ասես ճղմեց նրան։

Նա քնած էր շատ երկար ու առանց երազների։ Նաս-

տասյան եկավ մթան գրքա ժամք ասաին և հրմշտելով հա-
գիվ արթնացրեց նրան։ Նա թեք ու հաց էր թերել։ Թեքը քաց
գույնի էր, ու նորից Նաստասյայի թեյամանով։

— Այ թե քնում ես։ հա՞-ա, այդքան է՞ք քնել կլինեք,— ցասկոտ բղավեց Նաստասյան։

Ռասկոլնիկովը դժվարությամբ քիչ բարձրացավ տեղից։ Գլուխը ցավում էր. նա ոտքի ելավ, քայլեց իր խցիկում ու դարձյալ ընկավ բազմոցին։

— Էլի քնում է, դու հիվա՞նդ ես, ինչ է,— բղավեց Նաստասյան։

Ռասկոլնիկովը ոչինչ չպատասխանեց։

— Թեյ կուզե՞ս։

— Հետո,— հիպ անելով ասաց Ռասկոլնիկովը, դարձյալ փակեց աչքերը ու շուռ եկավ դեպի պատը։ Նաստասյան մի քիչ էլ կանգնեց։

— Իսկապես, դուդ և հիվանդ է,— ասաց նա, շուռ եկավ ու գնաց։

Ժամը երկուսին նա դարձյալ եկավ, սուպ բերեց։ Ռասկոլնիկովը էլի պառկած էր։ Թեյին ձեռք էլ չէր տվել։ Նաստասյան նույնիսկ նեղացավ ու սկսեց բարկությամբ հրմշտել նրան։

— Էլի ի՞նչ ես մրափել, է՛,— բղավեց նա՝ զզվանքով նայելով երիտասարդին։ Վերջինս վեր կացավ ու նստեց, բայց ոչինչ չասաց նրան ու աչքերը հառեց հատակին։

— Հիվա՞նդ ես, թե՞ ինչ,— հարցրեց Նաստասյան, ու էլի պատասխան չստացավ։

— Դու գոնե փողոց գնայիր,— մի փոքր լռելուց հետո ասաց նա,— գոնե երեսիդ քամի փչեր։ Ուտելո՞ւ ես, թե չէ։

— Հետո, գնա,— թույլ պատասխանեց Ռասկոլնիկովը ու ձեռքը թափ տվեց։

Նաստասյան մի քիչ էլ կանգնեց, կաբեկցանքով նայեց նրան ու գնաց։

Ռասկոլնիկովը մի քանի րոպե հետո բարձրացրեց գլուխը և երկար նայեց թեյամանին ու սուպին։ Հետո հաց վերցրեց, գդալ վերցրեց ու սկսեց ուտել։

Ասես մեքենայաբար, առանց ախորժակի նա կերավ մի քիչ, երեք-չորս գդալ։ Գլուխն ավելի քիչ էր ցավում։ Ուտե-

լուց հետո նորից մեկնվեց բամոցի վրա, բայց էլ չկարողացավ քնել, այլ պառկած էր անշարժ, փորի վրա, երեսը բարձին դրած։ Նա շարունակ անրջում էր, ու տարօրինակ էին այդ անուրջները. ամենից հաճախ երևակայում էր, թե ինքը գտնվում է Աֆրիկայի ինչ-որ վայրում, Եգիպտոսում, ինչ-որ օազիսում։ Քարավանը հանգստանում է. հանդիստ պառկած են ուղտերը. շուրջը բոլորաձև աճել են արմավենիները. բոլորը ճաշում են։ Իսկ ինքը հա՞ ջուր է խմում առվակից, որ հոսում ու կարկաչում է հենց իր կողքին։ Ու այնպե՞ս զով է, այնպե՞ս հրաշալի՛, հրաշալի՛ ու սառն է կապույտ ջուրը, հոսում է գույնզգույն քարերի ու հստակ, ոսկեցոլուն ավազի վրայով... Հանկարծ նա պարզ լսեց ժամացույցի զարկերը։ Նա ցնցվեց, սթափվեց, բարձրացրեց գլուխը, պատուհանից դուրս նայեց, իմացավ ժամանակը, ու բոլորովին ուշքի գալով, հանկարծ վեր թռավ, կարծես մեկը նրան պոկեց բազմոցից։ Նա ոտնաթաթերի վրա մատակցավ դռանը, կամացուկ բացեց այն ու սկսեց ականջ դնել, թե արդյոք ներքևից, սանդուղքից ձայներ չե՞ն լսվում։ Նրա սիրտը սարսափելի տրոփում էր։ Բայց սանդուղքի վրա լռություն էր, ասես բոլորը քնած էին... Նրան օտարոտի և կարմանալի թվաց, որ կարող էր երեկվանից այդպես խոր քնել ու դեռ ոչինչ չէր արել, ոչինչ չէր պատրաստել... Այնինչ գուցե և ժամը վեցն էր... Ու քնի և բթացման փոխարեն հանկարծ նա համակվեց արտասովոր տենդային ու ինչ-որ շփոթմունքով լեցուն անհանգստությամբ։ Սակայն պատրաստվելու շատ բան չկար։ Նա լարում էր բոլոր ճիգերը, որպեսզի ամեն ինչ կշռադատեր ու ոչինչ չմոռանար. իսկ սիրտը հա՞ տրոփում էր, այնպես խփում, որ շնչառությունը ծանրացավ։ Նախ՝ հարկավոր էր օղակ սարքել ու կապնել վերաբկուին. այդ մի բոպեի գործ էր։ Նա ձեռքը սարավ բարձի տակ և այնտեղ դրած սպիտակեղենի միջից մի հին, բոլորովին քրքրված, անլվա շապիկ հանեց։ Դրա քրջերից պոկեց մի քուղ՝ մի վերշոկ լայնությամբ և ութ վերշոկ երկարությամբ։ Այդ քուղը կրկնակի ծալեց, իր վրայից հանեց լայն, պինդ, ինչ-որ բամբակե հաստ գործվածքից կարած ոմտառային վերաբկուն (իր միակ վերնազգեստը) ու սկսեց քուղի երկու ծայրերը կարել ներսի ձախ թևատակին։ Կարե-

լիս նրա ձեռքերը դողում էին, բայց նա այդ հաղթահարեց, ու երբ վերարկուն նորից հագավ, արտաքուստ ոչինչ չէր երևվում։ Ասեղն ու թելը նա վաղուց էր պատրաստել, դրանք հանթաթված էին թղթով ու գտնվում էին սեղանի արկղում։ Ինչ վերաբերում է բուդին, դա հենց իր խիստ ճարտիկ հնարանքն էր. կացինը կախելու էր այդ օղակից։ Հա չէ՞ր կարելի կացինը փողոցով տանել ձեռքին բռնած։ Իսկ եթե թաքցրներ վերարկուի տակ, այնուամենայնիվ պետք է պահեր ձեռքով, իսկ դա նկատելի կլիներ։ Իսկ հիմա, երբ կացինը օղակն էր, բավական է կացնի տարբր անցկացնել գրա մեջ, ու կացինը ամբողջ հանդարտորեն հանդիստ կախված կլինի թեքված ձեռքից, ներսի կողմից։ Իսկ եթե ձեռքը պետք վերարկուի կողագրպանը, կարող էր բռնել նաև կացնի կոթի ծայրից, որպեսզի այն չճոճվեր. ու որովհետև վերարկուն շատ լայն էր, իսկական պարկ, ուստի արտաքուստ չէր կարող երևալ, որ նա գրպանի միջից ձեռքով ինչ-որ բան է պահում։ Նա այդ օղակը նույնպես արդեն երկու շաբաթ առաջ էր հնարել։

Վերջացնելով այդ, նա մատները խոթեց իր «թուրքական» բաճկոնի ու հատակի միջև եղած խոռոչը, բազմոցի ձախ անկյան մոտ շոշափեց հատակը ու հանեց արդեն վաղուց պատրաստած և այնտեղ թաքցրած գրավակալը։ Այդ գրավակալը սակայն, ամենևին էլ գրավակալ չէր, այլ սոսկ կոկիկ ռանդած, փայտե մի փոքրիկ տախտակ, որը իր մեծությամբ ու հաստությամբ հավասար էր սովորական արծաթե ծխախոտատուփին։ Այդ տախտակը նա սպասելիորեն դրել էր ղբոսանքի ժամանակ, մի բակում։ Այստեղ կար մի շենք, որտեղ ինչ-որ արհեստանոց էր տեղավորված։ Այնուհետև, բացի տախտակից, նա օգտագործեց կոկիկ ու բարակ մի երկաթե թիթեղիկ, որ հավանորեն պոկված էր ինչ-որ առարկայից. դա նույնպես գտել էր փողոցում, նույն օրը։ Երկաթե թիթեղիկը տախտակից փոքր էր։ Դրանք իրար վրա դրեց ու պինդ, խաչաձև կապեց թելով. հետո դրանք կանոնավոր ու ինամքով փաթաթեց մաքուր, սպիտակ թղթով ու նույնպես խաչաձև կապեց բարակ քուղով, այնպես կապեց, որ արծակները դժվար լիներ։ Այդպիսով, պառավը առայժմ իր ուշադրությունը կենտրոնացներ կապը քանդելու վրա, իսկ ինքը, Ռասկոլնիկովը, հարմար բոպե կգտներ հարվածի հա-

մար։ Իսկ երկաթե թիթեղիկը կավելացներ գրավականի քաշը, ու պառավը գոնե առաջին բոպեին գլխի չէր ընկնի, որ բերված «իրը» փայտից է։ Այդ ամենը առժամ պահվում էր բազմոցի տակ։ Ռասկոլնիկովը հենց նոր էր հանել գրավականը, երբ հանկարծ բակից լսվեց ինչ-որ մեկի բղավոցը.

— Վաղուց ժամը յոթն է։

— Վաղո՞ւց։ Աստվա՜ծ իմ։

Նա նետվեց դեպի դուռը, ականջ դրեց, վերցրեց լայնեզր գլխարկը և զգուշությամբ, անլսելի, կաստվի պես իջավ սանդուղքի սովորական տասներեք աստիճաններից։ Կատարվելու էր ամենակարևոր գործը՝ խոհանոցից գողանալ կացինը։ Նա արդեն վաղուց էր որոշել, որ պետք է կացնով գործ տեսնել։ Նրա մոտ կար նոսր ոլորտիկոն ծալովի գանակ, բայց նա հույս չէր դնում գանակի և մանավանդ իր ուժերի վրա, այս պատճառով էլ վերջնականապես որոշեց կացնով գործել։ Ի դեպ, նշենք մի առանձնահատկություն այն բոլոր վերջնական վճիռների առթիվ, որ արդեն նա ընդունել էր այդ ուղղությամբ։ Դրանք մի տարօրինակ հատկություն ունեին, որքան վերջնական էին դառնում, այնքան այլանդակ, անհեթեթ բնույթ էին ստանում նրա աչքում։ Չնայած նրա ներքին տանջալից պայքարին, այդ ամբողջ ժամանակ նա երբեք, ոչ մի ակնթարթ չէր կարող հավատացած լինել, թե իր դիտավորությունները իրագործելի են։

Ու եթե նույնիսկ երբեք այնպես պատահեր, որ նա ամեն ինչ մինչև վերջին կետը վերլուծած և վերջնականապես որոշած լիներ ու էլ ոչ մի կասկած չմնար, ապա կարծես թե հենց այսուհետև նա կհրաժարվեր ամեն ինչից, որպես անհեթեթությունից, հրեշավորությունից ու անկարելիությունից։ Բայց դեռ բազմաթիվ չլուծված կետեր ու կասկածներ էին մնում։ Ինչ վերաբերում է այն խնդրին, թե որտեղից պետք է կացին գտներ, ապա այդ մանր բանը նրան բնավ չէր անհանգստացնում, որովհետև զրանից ավելի հեշտ բան չկար։ Բանն այն է, որ Նաստասյան Հանախ տանը չէր լինում, մանավանդ երեկոները գնում էր կամ հարևանների մոտ կամ խանութ, իսկ դուռը միշտ բոլորովին բաց էր թողնում։ Տանտիրուհին ատում էր դրա համար էր նրա հետ դժտվում։ Այդպես ուրեմն, եթե կգա ժամանակը, կարելի է ծածուկ մտնել խոհանոց ու

վերցնել կացինը, հետո էլ, մի ժամ անց (երբ արդեն ամեն ինչ կվերջանա) ներս մտնել ու կացինը դնել իր տեղը։ Բայց նաև կասկածներ էին առաջանում. ենթադրենք թե ինքը կգա մի ժամ անց, որպեսզի կացինը դնի իր տեղը, բայց չէ՞ որ Նաստասյան կարող է վերադարձած լինել։ Իհարկե, պետք է անցնել խոհանոցի կողքից ու ոգասել, մինչև որ նա դարձյալ դուրս ելնի։ Կարող է և այդ ժամանակ կացնի կարիք վգալ, կսկսի փնտրել, ճղճղալ. ահա և կասկած կամ առնվազն կասկածի ստվեր։

Բայց դրանք դեռ մանր բաներ էին, որոնց մասին նա չէր էլ սկսում մտածել ու ժամանակ էլ չուներ մտածելու։ Նա մտածում էր դիտավորի մասին, իսկ մանր բաները հետաձգում էր այնքան ժամանակ, մինչև որ ինքը համոզվեր ամեն ինչում։ Բայց վերջինը իսպառ անիրագործելի էր թվում։ Դեռևս այդպես էր թվում նրան։ Սրինակ, նա ոչ մի կերպ չէր կարողանում երևակայել, որ երբևէ կվերջացնի մտածելը, վեր կկենա և ուղղակի կգնա այնտեղ... Նույնիսկ վերջին օրերի իր վարքը (այսինքն այցելությունը՝ վերջնականապես տեղը գտնելու դիտավորությամբ) նա կատարել էր հենց այնպես, ամենևին էլ ոչ լրջորեն։ «Գնամ նայեմ, էլի, ի՞նչ հարկ կա երազելու»,— մտածել էր նա ու էլ չէր համբերել, վազել էր ինքն իր վրա չարացած։ Այնինչ հարցի դրական լուծման իմաստով ամբողջ անալիզը նա կարծես թե վերջացրել էր. կեղծ դրույթներով ապացույցներ բերելու իր ճարպկությունը սրվել էր ածելու նման, և նա իր մեջ գիտակցական առարկություններ չէր գտնում։ Բայց վերջին դեպքում նա ուղղակի չէր հավատում իրեն, ու պարզապես, ստրկաբար, խարխափելով, կողմնակի առարկություններ էր փնտրում, կարծես թե որևէ մեկը ստիպում, քաշում էր նրան դեպի այդ բանը։ Իսկ վերջին օրը, որ այնպե՞ս անսպառելի էր վրա հասել և միանգամից ամեն ինչ վճռել, զրեթե բոլորովին մեխանիկորեն էր ուզդել նրա վրա. կարծես թե ինչ-որ մեկը վերցրել է նրա ձեռքը ու նրան քաշել իր ետևից, ու ինքը նրան հետևում էր առանց դիմադրելու, կուրորեն, անբնական ուժով, առանց առարկությունների։ Ասես հագուստի փեշը ընկել էր մեքենայի անիվի մեջ, ու իրեն սկսել էր մեքենայի մեջ քաշել։

Սկզբում, վաղուց ի վեր, նրան զբաղեցնում էր մի հարց.

ինչո՞ւ այնպես հեշտ են հայտնաբերվում ու մերկացվում համարյա բոլոր ոճիրները, ու այնպես պարզորոշ են նշվում համարյա բոլոր ոճրագործների հետքերը։ Նա հետզհետե բազմապիսի ու հետաքրքիր եզրակացություններ հանգեց. նրա կարծիքով ամենագլխավոր պատճառը ոչ այնքան ոճիրը թաքցնելու նյութական անկարելիությունն է, որքան ինքը ոճրագործը. ամեն մի ոճրագործ հենց ինքը ոճրագործության պահին ենթարկվում է կամքի՛ ու բանականության ինչ-որ անկման, դրանք փոխարինվում են մանկական արտառոց թեթևամտությամբ, և դա հատկապես այն պահին, երբ առավելապես անհրաժեշտ են բանականությունը և զգուշությունը։ Նրա համոզմամբ դուրս էր գալիս, որ բանականության այդ մթագնումը և կամքի անկումը հիվանդության պես են հանկարծ մարդուն, ստիպողաբար գերդասնում են և ոճիրը կատարելուց իր առաջ իրենց բարձրագույն պահին են հասնում. հենց ոճրագործության բուպեին և դրանից հետո էլի որոշ ժամանակ շարունակվում են նույն ձևով, նայած ոճրագործի անհատականությանը. այնուհետև անցնում են այնպես, ինչպես անցնում է ամեն մի հիվանդություն։ Արդյո՞ք հիվանդությունն է առաջացնում բուն իսկ ոճիրը, թե՞ ինքը՝ ոճիրը, ըստ իր առանձնահատուկ բնության, միշտ էլ հարակցվում է հիվանդության պես ինչ-որ մի բանով։ Սասկոլնիկովը դեռ իր մեջ ուժ չէր զգում այս հարցը լուծելու։

Հանդելով այդօրինակ հետևություններին, նա որոշեց, որ իր գործում անձնապես իր մեջ չեն կարող նմանօրինակ հեղաշրջումներ լինել, որ իր մտածածը կատարելու ամբողջ ժամանակվա ընթացքում բանականությունը և կամքը իրենից չ նրաժան կմնան հենց այն պատճառով, որ իր մտածած գործը ոճիր չէ»... Մի կողմ ենք թողնում այն ամբողջ պրոցեսը, որի միջոցով նա հանգեց այդ վերջին որոշման. առանց այդ էլ մենք շատ ենք առաջ անցել... Միայն կավելացնենք, որ գործի փաստական, զուտ նյութական դժվարությունները նրա համար առհասարակ առավելապես երկրորդական դեր էին խաղում։ «Բավական է միայն դրանց հանդեպ լարել ամբողջ եռանդը և ամբողջ բանականությունդ, և դրանք ժամանակին ոչնչին էլ կհաղթահարվեն, երբ հարկ կլինի մինչև ամենա-

չնչին նրբություններ ծանոթանալ գործի բոլոր մանրամասնե-
րին...»։ Բայց գործը չէր սկսվում։ Նա շարունակում էր ամե-
նից քիչ հավատալ իր վերջնական վճիռներին, ու երբ վրա
հասավ գործելու ժամը, ամեն ինչ կատարվեց բնավ ոչ այն-
պես, ինչպես մտածում էր ինքը, այլ մի տեսակ հանկարծա-
կի. նույնիսկ համոզիչ անսպասելի։

Մի ամենաչնչին հանգամանք նրան փակուղու առաջ
կանգնեցրեց դեռ ավելի շուտ, քան նա կիշներ սանդուղքից։
Հասնելով տանտիրուհու խոհանոցը, որի դուռը, ինչպես
միշտ, բոլորովին բաց էր, նա աչքի տակով ղդուշությամբ նեբ։
նայեց, որպեսզի նախապես տեսներ, թե Նաստասյայի բա-
ցակայությամբ արդյոք այնտեղ չէ՞ ինքը՝ տանտիրուհին,
իսկ եթե այնտեղ չէ, արդյոք լա՞վ է փակված նրա սենյակի
դուռը, և նա հո չի՞ կարող այնտեղից դուրս նայել, երբ ինքը
մտնի խոհանոց, կացինը վերցնելու։ Բայց որքա՞ն մեծ եղավ
իր զարմանքը, երբ հանկարծ տեսավ, որ Նաստասյան այս
անգամ ոչ միայն տանն է, խոհանոցում, այլև դեռ գործով
էլ է զբաղված. գամբյուղից սոխակեղեն է հանում ու կախ
է տալիս պարաններից։ Տեսնելով նրան, Նաստասյան գա-
ղարեցրեց կախ տալը, շուռ եկավ նրա կողմը ու անընդհատ
նայում էր նրան, քանի դեռ նա անցնում էր խոհանոցի կողքից։ Ռասկոլնիկովը շուտ տվեց հայացքը և անցավ իրը թե
ոչինչ չնկատելով։ Բայց գործը ձախողվել էր, կացին չկար։
Նա սարսափելի վհատվեց։

«Ախր ես ո՞րտեղից վերցրի,— մտածում էր նա՝ իջնելով
դեպի դարպասը,— ո՞րտեղից վերցրի, թե Նաստասյան այդ
բոլորին անպայման տանը չի լինի։ Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ ես
այդպես հաստատ հավատացած էի»։ Նա ընկճված էր, նույ-
նիսկ մի տեսակ ստորացած։ Նա ուզում էր չարախնդությամբ
ծիծաղել իր վրա... Նրա մեջ եռում էր բութ, գազանային
ցասումը։

Նա մտազբաղ կանգ առավ դարպասի մոտ։ Նրա համար
զզվելի էր դնալ փողոց, ձևացնելով, որ իրը թե զբոսնում է.
տուն վերադառնալը է՛լ ավելի զզվելի էր։ «Ինչպիսի՞ առիթ
կորցրի ընդմիշտ»,— քրթմնջում էր նա՝ անընպատակ կանգ-
նած դարպասի մոտ, հենց դռնապանի մթին խցիկի դիմաց,
որի դուռը նույնպես բաց էր։ Հանկարծ նա ցնցվեց։ Դռնա-

պանի խցիկից, որ նրանից երկու քայլ էր հեռու, աջ կողմից, նստարանի տակից ինչ-որ բան փայլեց... Նա նայեց շուրջը. ոչ ոք չկար։ Քայլելով ոտնաթաթերի վրա, նա մոտեցավ դռնապանի խցիկին, երկու աստիճան ունեցող սանդուղքով իջավ ներքև ու թույլ ձայնով կանչեց դռնապանին։ «Հենց այդպես է որ կա, նա տանը չէ, սակայն երևի մոտիկ տեղում է, բակում, որովհետև դուռը բոլորովին բաց է»։ Թասկոլնիկովը շեշտակի նետվեց դեպի կացինը (դա կացին էր), հանեց նստարանի տակից, ուր դա ընկած էր վառելափայտի երկու կտորների արանքում. հենց այնտեղ, դեռ դուրս չհկած, կացինը կախ ավեց թիատակի օղակից, ձեռքերը դրեց գրպանները ու դուրս եկավ դռնապանի խցիկից. ոչ ոք չնկատեց։ «Ի՞նչ քիչ ստոտանալի հարգկությունս — ստորին աստիճանով մտածեց նա։ Այս հանգամանքը շտապանց իրատեսություն նրանում։

Նա բայլում էր դանդաղ ու լրջախոհ, առանց շտապելու, որպեսզի ոչինչ կասկածի առիթ չտար։ Նա քիչ էր նայում անցորդներին, նույնիսկ աշխատում էր բոլորովին չնայել նրանց դեմքերին և որքան կարելի է աննկատելի լինել։ Այստեղ նա հիշեց իր լայնեզր գլխարկը։ «Աստված իմ, երկու օր ուրաց վրդ կար, ու ես չկարողացա հովարով գլխարկ ճարելու։ Նրա հոգուց անհոգ թափվեց։

Մի խանութից պատահմամբ, մի աչքով նայելով, նա տեսավ, որ այնտեղ պահի ժամացույցը ցույց է տալիս յոթին տասը րոպե։ Հարկավոր էր թե շտապել և թե միևնույն ժամանակ պատյան կատարել, տանը մոտենալ յուրյանակի ճանապարհով, մյուս կողմից...

Առաջ, երբ նա այդ ամենը պատկերացնում էր իր երևակայության մեջ, երբեմն մտածում էր, թե շատ է վախենալու։ Բայց նա այժմ այնքան էլ չէր վախենում, նույնիսկ բոլորովին չէր վախենում։ Այդ րոպեին նրան նույնիսկ ինչ-որ դաժանակի մտքեր էին զբաղեցնում, սակայն դրանք կարճատև էին լինում։ Անցնելով Յուսուպովյան այգու կողքից, նա մինչև իսկ շատ զբաղվեց բարձր խփող շատրվանների կառուցման և այն մտքով, որ դրանք որչափ լավ կթարմացնեին օդը բոլոր հրապարակներում։ Նա հետզհետե հանգեց այն համոզմանն, որ եթե ամառային այգին տարածվեր ամ-

բողջ Մարսյան հրապարակի վրա և նույնիսկ միացվեր պալատական Միխայլովյան այգուն, ապա հիանալի և օգտավետ բան կլիներ քաղաքի համար։ Այստեղ նրան հանկարծ հետաքրքրեց այն հարցը, թե ինչու հատկապես բոլոր մեծ քաղաքներում մարդը ոչ թե սոսկ անհրաժեշտությունից դրդված, այլ մի ինչ-որ առանձին բնույթով հակված է ապրելու և ապաստանելու քաղաքի հենց այնպիսի մասերում, ուր չկան ոչ այգիներ, ոչ շառրվաններ, ուր կեղտ է, գարշահոտություն և ամեն տեսակ նողկանք։ Այստեղ նա հիշեց իր զբոսանքները Սեննայա հրապարակում և մի բոպե սթափվեց։ «Այ քեզ անհեթեթություն», մտածեց նա։ «Ոչ, ավելի լավ է բոլորովին ոչ մի բանի մասին չմտածել»։

«Հավանորեն նրանք, ում մահապատժի են ենթարկում, մրտքերով կառչում են բոլոր առարկաներից, որոնք հանդիպում են ճանապարհին», անցավ նրա մտքով, միայն թե անցավ կայծակի արագությամբ. նա ինքը իսկույն մարեց այդ միտքը... բայց ահա արդեն տեղ է հասնում, ահա և տունը. ահա և դարպասը։ Հանկարծ ինչ-որ տեղից ժամացույցի մեկ զարկ լսվեց։ «Այս ի՞նչ է, մի՞թե ութի կեսն է, չի կարող պատահել, երևի այդ ժամացույցը առաջ է»։

Նրա բախտից դարպասով անցնելիս գործը դարձյալ հաջող գնաց։ Դեռ ավելին, նույնիսկ կարծես դիտմամբ, հենց այդ բոպեին իր առջևից անցավ ու դարպասից ներս մտավ խոտի մի ահագին սայլաբեռ, որը բոլորովին ծածկեց նրան, երբ ինքը անցնում էր դարպասից, ու դեռ սայլաբեռը չէր մտել բակը, երբ նա վայրկենապես նետվեց աջ կողմը։ Այնտեղ, սայլաբեռի մյուս կողմում բղավում ու վիճում էին ինչ-որ մարդիկ, բայց նրան ոչ ոք չնկատեց ու ոչ ոք չհանդիպեց։ Այդ ահագին, քառակուսաձև բակի կողմի շատ պատուհաններ տվյալ բոպեին բաց էին, բայց նա չբարձրացրեց գլուխը. ուժ չուներ։ Պառավի բնակարանը տանող սանդուղքը մոտիկ էր, հենց դարպասի աջ կողմում։ Նա արդեն սանդուղքի վրա էր...

Նա շունչ առավ ու ձեռքը դրեց տրոփող սրտին, մի անգամ էլ շոշափեց ու շտկեց կացինը և սկսեց զգուշությամբ, կամացուկ բարձրանալ սանդուղքով, ամեն բոպե ականջ դնելով։ Այդ պահին սանդուղքի վրա նույնպես ոչ ոք չհանդի-

պեց. բոլոր դռները փակված էին. ոչ ոք չկար։ Ճիշտ է, երկրորդ հարկում մի դատարկ բնակարանի դուռը բոլորովին բաց էր, և այնտեղ ներկարարներ էին աշխատում, բայց նրանք բնակարանից դուրս չնայեցին։ Ռասկոլնիկովը մի փորր կանգնեց, մտածեց ու շարունակեց բարձրանալ։ «Հարկն, ավելի լավ կլիներ, եթե նրանք այստեղ բոլորովին չլիներին, բայց... նրանց վերևում էլի երկու հարկ կա»։

Ահա և չորրորդ հարկը, ահա և դուռը և դիմացի բնակարանը. դա դատարկ է։ Երրորդ հարկի այն բնակարանը, որ պատկանում է պառավի բնակարանի տակ, ըստ երևույթին նույնպես դատարկ է. դռանը մեխերով կպցրած այցետոմսը հանված է, ուրեմն բնակիչները մեկնել են... Ռասկոլնիկովը չնայատպատ էր լինում։ Մի ակնթարթ նա մտածեց՝ «հը, չհասնե՞մ»։ Բայց նա իրեն պատասխան չտվեց ու սկսեց անկանգրեկ պառավի բնակարանին. մեռելային լռություն։ Հետո մի անգամ էլ ունկնդրեց սանդուղքի կողմը, լսեց երկար, ուշադրությամբ... Այնուհետև վերջին անգամ նայեց շուրջը, հավաքեց ինքն իրեն, շտկվեց և մի անգամ ևս շոշափեց օղակից կախված կացինը։ «Ես հո շատ գունատ չե՞մ... մտածում էր նա, հո առանձնապես հուզված չե՞մ. պառավը կասկածամիտ է... էլի չսպասե՞մ... մինչև որ սիրտս հանդարտվի...»

Բայց սիրտը չէր հանդարտվում։ Ընդհակառակը, ասես դիտմամբ ավելի ու ավելի ուժեղ էր տրոփում... Նա չհամբերեց, ձեռքը դանդաղ տարավ զանգին ու զանգահարեց։ Կես րոպեից հետո նորից զանգահարեց, այս անգամ ավելի ուժեղ։

Պատասխան չկար։ Ապարդյուն զանգահարելու հարկ չկար, և գա իրեն չէր էլ սպասում։ Իհարկե, պառավը տանն էր, բայց նա կասկածամիտ է, մենակ է։ Ռասկոլնիկովը մատամբ գիտեր նրա սովորություններն... Նա մի անգամ էլ ականջը պինդ հպեց դռան։ Արդյո՞ք նրա զգացումներն էին այդպես նրբացած (մի բան, որ ընդհանրապես դժվար է ենթադրել), թե՞ շշուկներն էին լավ լսվում, բայց հանկարծ նրա ականջին հասավ ձեռքով զգուշությամբ փակի բռնակը շոշափելու ձայն և ասես հենց դռանը դիպչող շրջազգեստի շրշյուն։ Մեկը անենկատելի կանգնած էր հենց փակի առջև,

ու ճիշտ այնպես, ինչպես և Ռասկոլնիկովը, ծածուկ ունկընդրում էր ներսից ու կարծես թե նույնպես ականջը հպել էր դռանը...

Ռասկոլնիկովը դիտմամբ շարժվեց ու բարձրաձայն ինչ-որ բան փնթփնթաց, որպեսզի ցույց չտար, թե թաքնվում է. հետո զանգահարեց երրորդ անգամ, բայց կամացուկ, վայելուչ և առանց որևէ անհամբերության։ Հետագայում վերհիշելով այդ, զգում էր, որ տվյալ րոպեն պարզ, պայծառ, առմիշտ տպավորված է իր մեջ. նա չէր կարողանում հասկանալ, թե որտեղից էր այդքան խորամանկություն վերցրել, մանավանդ որ լինում էին վայրկյաններ, երբ մթագնում էր միտքը, իսկ իր մարմինը նա համարյա չէր զգում... Մի վայրկյանից հետո նա լսեց, որ հանում են դռան փակը։

VII

Դուռը, ինչպես և նախորդ անգամ, բացվեց նեղ ճեղքի չափ, ու երկու սուր, կասկածոտ աչքեր դարձյալ մթությունից նայեցին Ռասկոլնիկովին։ Այստեղ նա իրեն կորցրեց ու կարևոր սխալ արեց։

Երկյուղ կրելով, որ պառավը կվախենա երկուստեք մենակ լինելուց և հույս չունենալով, որ իր տեսքը կհանգստացնի նրան, նա դուռը քաշեց իր կողմը, որպեսզի պառավը չփորձեր դարձյալ այն փակել ներսից։ Տեսնելով այդ, պառավը ետ չքաշեց դուռը, բայց և ձեռքից բաց չթողեց փակի բռնակը, այնպես որ, քիչ մնաց Ռասկոլնիկովը դռան հետ մեկտեղ նրան քաշեր դեպի սանդուղքը։ Տեսնելով, որ պառավը կանգնել է դռան մեջտեղում և չի թողնում, որ ինքը ներս մտնի, Ռասկոլնիկովը փորձեց հրել նրան։ Պառավը վախեցած ետ ոստնեց, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց կարծես թե չկարողացավ ու ակնապիշ նայում էր Ռասկոլնիկովին։

— Բարև ձեզ, Ալյոնա Իվանովնա,— ասաց նա որքան կարելի է հանգիստ, բայց ձայնը չհնազանդվեց նրան, խրզվեց ու դողաց,— ես... մի բան եմ բերել ձեզ... բայց ավելի լավ է գնանք այնտեղ, լույս տեղը...— ու թողնելով պառա-

վին, նա առանց հրավերի ուղղակի անցավ սենյակ։ Պառավը աճապարեց նրա ետևից. լեզուն բացվեց։

— Տեր աստված, ախր ի՞նչ եք ուզում... Ո՞վ եք... Ի՞նչ է հարկավոր։

— Ներեցեք, Ալյոնա Իվանովնա... Ձեր ծանոթն եմ... Ռասկոլնիկովը... ահա, գրավական եմ բերել, որ առաջ խոստացել էի...— և նա գրավականը մեկնեց պառավին։

Պառավը հարևանցիորեն նայեց գրավականին, բայց և անմիջապես աչքերը հառեց անկոչ հյուրի ուղղակի աչքերին։ Նա ուշադրությամբ, բարկացկոտ ու կասկածանքով էր նայում։ Անցավ մոտ մի րոպե. Ռասկոլնիկովին թվաց, թե նրա աչքերը նույնիսկ ծաղրանքի պես ինչ-որ մի բան են արտահայտում, կարծես թե նա արդեն կռահել էր ամեն ինչ։ Ռասկոլնիկովը զգում էր, որ շփոթվում է, որ համարյա սարսափում է, այնքան սարսափում, որ եթե պառավը կես րոպեի չափ էլ նայեր այդպես, առանց մի բառ ասելու, ապա ինքը երևի կփախչեր այդտեղից։

— Ի՞նչ եք այդպես նայում, իբր թե չճանաչեցի՞ք,— ասաց նա հանկարծ, նույնպես բարկացկոտ։ — Եթե չեք ուզում վերցնել, ես կգնամ ուրիշների մոտ, ժամանակ չունեմ։

Նա չէր էլ մտածում այդ ասել, այլ հենց այնպես, դա ասվեց հանկարծակի, ինքնաբերաբար։

Պառավը ուշքի եկավ, իսկ հյուրի վճռական տոնը ըստ երևույթին սիրտ տվեց նրան։

— Ախր ինչո՞ւ այդպես հանկարծ վրա տվիր, որդի... ի՞նչ լան է,— հարցրեց պառավը՝ նայելով գրավականին։

— Արծաթն ծիսախոտատուփ է. անցյալ անգամ ես հա ասել էի։

Պառավը մեկնեց ձեռքը։

— Ինչո՞ւ եք այդպես գունատ, ձեռքերդ էլ դողում են։ Լողացե՞լ ես, թե՞ ինչ, որդի։

— Դողացնում եմ,— բառը շեշտելով պատասխանեց Ռասկոլնիկովը։ — Ակամայից գունատ կլինես... երբ ուտելիք չկա,— ավելացրեց նա՝ հազիվ արտասանելով բառերը։ Նա դարձյալ ուժասպառություն զգաց։ Բայց պատասխանը ճշմարտացի թվաց. պառավը վերցրեց գրավականը։

— Ի՞նչ է սա,— հարցրեց նա՝ մի անգամ էլ ուշադիր նայելով Ռասկոլնիկովին և ձեռքի վրա փորձելով գրավականի ծանրությունը։

— Լավ բան է... Ծխախոտատուփ է... արծաթից է... նայեցեք։

— Բայց կարծես թե արծաթից չլինի... Ոնց էլ փաթաթե՞լ ես։

Աշխատելով արձակել բուդը և դառնալով դեպի պատուհանը, լույսը (բոլոր պատուհանները փակ էին, թեև ծանր էր սենյակի օդը), պառավը մի քանի վայրկյան բոլորովին թողեց նկվորին և շուռ եկավ մյուս կողմը։ Ռասկոլնիկովը արձակեց վերարկուի կոճակները և օղակից դուրս քաշեց կացինը, բայց դեռ բոլորովին չհանեց, այլ աջ ձեռքով պահեց վերարկուի տակ։ Նրա ձեռքերը սարսափելի թույլ էին. նա զգում էր, թե ինչպես ղրանք յուրաքանչյուր ակնթարթ ավելի ու ավելի էին ընդարմանում և փայտանում։ Նա վախենում էր, որ կացինը ձեռքից բաց կթողնի ու վայր կգցի... Հանկարծ նրա գլուխը կարծես պտտվեց։

— Այս ի՞նչ է փաթաթել, է՛,— ցասկոտ բղավեց պառավը ու շուռ եկավ նրա կողմը։

Էլ ոչ մի ակնթարթ չէր կարելի կորցնել։ Ռասկոլնիկովը բոլորովին հանեց կացինը, թափ առավ երկու ձեռքով, համարյա կորցնելով ինքնազգացումը, ու գրեթե առանց ճիգ անելու, գրեթե մեքենայաբար կացնի բութ կողմով խփեց պառավի գլխին։ Այստեղ նրա մեջ կարծես ուժ չկար։ Բայց հենց որ մի անգամ խփեց կացնով, իսկույն մեջը ուժ առաջացավ։

Պառավը, ինչպես և միշտ, առանց գլխաշորի էր։ Նրա խարտյաշ, ալեխառն, նոսր մազերը, որ ըստ սովորականի առատորեն յուղված էին, գեղեցիկ ծամով հյուսված ու հավաքված էին մի կտոր եղջյուրե սանրի տակ, որ ցցված էր ծոծրակին։ Հարվածը արվեց հենց կատարին, դրան նպաստեց պառավի կարճ հասակը։ Նա ճչաց, բայց շատ թույլ, ու հանկարծ բոլորովին պպզեց հատակին, թեև դեռ կարողացավ երկու ձեռքերը բարձրացնել դեպի գլուխը։ Մի ձեռքում դեռ շարունակում էր պահել «գրավականը»։ Ռասկոլնիկովը երկրորդ, երրորդ անգամ խփեց ամբողջ ուժով մեկ, ու էլի

կացնի բութ կողմով, ու էլն կատարին։ Պառավի արյունը թափվեց ինչպես ջուրը շուռ տված բաժակից, ու մարմինը ընկավ մեջքի վրա։ Ռասկոլնիկովը ետ քաշվեց, մինչև որ այն կընկներ, ու իսկույն կռացավ պառավի դեմքի վրա։ Պառավը արդեն մեռած էր։ Աչքերը չռվել էին, կարծես ուզում էին դուրս ցատկել, իսկ ճակատը և ամբողջ դեմքը դեղնատվել ու ծռմռվել էին ջղաձգությունից։

Ռասկոլնիկովը կացինը դրեց հատակին, մեռածի կողքին, ու աշխատելով չկեղտոտվել հոսող արյունով, անմիջապես ձեռքը խոթեց պառավի գրպանը, հենց այն աջ գրպանը, որտեղից պառավը անցյալ անգամ հանել էր բանալիները։ Նրա խելքը միանգամայն տեղն էր, միտքը չէր մթագնում, և գլուխը չէր պտտվում, բայց ձեռքերը դեռ դողում էին։ Հետո նա հիշեց, որ նույնիսկ շատ ուշադիր էր, պպզած, աշխատում էր չարյունոտվել... Նա իսկույն հանեց բանալիները. դրանք բոլորը, ինչպես և նախորդ անգամ, մի կապոցով էին, պողպատե օղի վրա։ Բանալիները ձեռքին նա իսկույն վազեց ննջարան։ Դա շատ փոքր մի սենյակ էր՝ արքեպատկերների ահագին տապանակով։ Մյուս պատի տակ դնված էր խիստ մաքուր անկողինը՝ մետաքսե կտորներից կարված բամբակե վերմակով։ Երրորդ պատի տակ դրված էր կոմոդը։ Տարօրինակ բան. նա հենց նոր էր փորձում բանալիներով բաց անել կոմոդի արկղերը, հենց նոր էր լսել բանալիների շիկշիկոցը, երբ կարծես թե ջղերի ցնցում զգաց։ Նա դարձյալ հանկարծ ուզեց թողնել ամեն ինչ ու հեռանալ։ Բայց այդ եղավ միայն մի ակնթարթ. հեռանալը ուշ էր։ Նա նույնիսկ ծիծաղեց իր վրա, երբ հանկարծ գլխում մի այլ տագնապալից միտք ծագեց։ Անստյասելիորեն նրան թվաց, թե պառավը թերևս դեռ կենդանի է և դեռ կարող է ուշքի գալ։ Թողնելով բանալիներն ու կոմոդը, նա աճապարանքով ետ դարձավ, մոտեցավ դիակին, վերցրեց կացինը ու մի անգամ էլ թափ առավ պառավի վրա, բայց չխփեց։ Կասկած չկար, պառավը մեռած էր։ Կռանալով և դարձյալ մոտիկից զննելով նրան, Ռասկոլնիկովը պարզ տեսավ, որ նրա գանգը ջարդված է և նույնիսկ քիչ մի կողմ է ծռված։ Նա փորձեց շոշափել մատով, բայց ձեռքը ետ տարավ. առանց այդ էլ մահը ակներև էր։ Արյունը հոսել և մի

ամբողջ լճակ էր դարձել։ Հանկարծ նա պառավի վզի վրա նկատեց մի քուղ, քաշեց, բայց քուղը պինդ էր ու չէր կտրվում. բացի այդ, թրջվել էր արյունով։ Նա փորձեց քուղը քաշել ու հանել պառավի ծոցից, բայց ինչ-որ մի բան խանգարում, խրվել էր այնտեղ։ Նա անհամբերությամբ փորձեց գաբձյալ թափ առնել կացնով, որպեսզի վերևից խփեր և քուղին և մարմնին, բայց չհամարձակվեց, ու արյունոտելով ձեռքերն ու կացինը, երկու բոպե շարշարվելուց հետո զգվարությամբ կտրեց քուղը՝ կացինը չդիպցնելով դիակին, ու հանեց իանգարող իրը. նա շխալվեց, դա քսակ էր։ Քուղից կախ էր տրված նոճու փայտից ու պղնձից շինած երկու խաչ ու բացի դրանցից, էմալե մի փոքրիկ սրբապատկեր. դրա հետ մեկտեղ կախ էր տրված գամշե մի փոքրիկ, կեղտոտված քսակ՝ պողպատե եղրակով և օղակով։ Քսակը ինքը լցված էր. Ռասկոլնիկովը առանց նայելու այն դրեց գրպանը, խաչերը գցեց պառավի կրծքին, ու այս անգամ վերցնելով նաև կացինը, կրկին նետվեց ննջարան։

Նա սարսափելի շտապում էր, վերցրեց բանալիները ու նորից սկսեց դրանք գործի դնել։ Բայց գործը հաջող չէր գընում. բանալիները չէին մտնում փակերի մեջ։ Բանն այն չէր, որ նրա ձեռքերը խիստ դողում էին, այլ այն էր, որ նա հա՜ սխալվում էր. օրինակ, տեսնում էր, որ բանալին չի համապատասխանում փակին, բայց էլի փորձում էր մտցնել այդ փակի մեջ։ Հանկարծ նա հիշեց ու գլխի ընկավ, որ ատամնաձև լեզվակով մեծ բանալին, որը փոքր բանալիների հետ կախ է տրված օղակից, ամենևին էլ կոմոդինը չէ (ինչպես և նախորդ անգամ անցել էր իր մտքով), այլ ինչ-որ սնդուկի է, և գուցե ամեն ինչ հենց այդ սնդուկում է պահված։ Նա թողեց կոմոդը և իսկույն ձեռքը տարավ մահճակալի տակ, գիտենալով, որ պառավները սովորաբար սնդուկները մահճակալների տակ են դնում։ Ճիշտ այդպես էր. այնտեղ գտնվում էր արշինից ավելի երկարությամբ, կորնթարդ կափարիչով մի մեծ սնդուկ, որը կարմիր սեկով էր պատած, իսկ սեկի վրայից պողպատե փոքրիկ մեխեր էին խփված։ Ատամնաձև բանալին հենց այդ սնդուկինն էր ու բացեց այն։ Վերևից, սպիտակ սավանի տակ դրված էր նապաստակի մորթուց կարված մի մուշտակ, որը ծածկված

էր կարմիր դարնիտուրով. մուշտակի տակ կար մետաքսե շրջազգեստ, հետո մի շալ, ու այնուհետև կարծես թե ինչ-որ լաթեր էին դրված։ Ամենից առաջ նա սկսեց կարմիր դարնիտուրով սրբել իր արյունոտված ձեռքերը։ «Կարմիր է, իսկ կարմրի վրա արյունը ավելի աննկատելի կլինի», անցավ նրա մտքով, ու հանկարծ նա ուշքի եկավ. «Տեր աստված, խենթացա՞ւմ եմ ես, ինչ է», վախեցած մտածեց նա։

Բայց հենց որ նա շարժեց այդ լաթերը, մուշտակի տակից դուրս եկավ մի ոսկե ժամացույց։ Նա սկսեց տակնուվրա անել ամբողջ սնդուկը։ Հիրավի, լաթերի միջև խառնիխուռն դրված էին ոսկի իրեր, հավանորեն նա չվերցրած գրավականներ՝ ապարանչաններ, շղթաներ, գինդեր, քորոցներ և այլն։ Դրանց մի մասը պատյաններով էր, մի մասն էլ կանանոցներ, խնամքով, երկտակ փաթաթված էր լրագրի թղթով ու կապված էր քուղով։ Բնավ չհապազելով, բաց չանելով կապոցները ու պատյանները, նա սկսեց այդ իրերը լցնել տնպրավարտիքի ու վերարկուի գրպանները. բայց նա շատ բան վերցնելու ժամանակ չունեցավ...

Հանկարծ նա ստնաձայն լսեց այն սենյակից, ուր գտնվում էր պառավի դիակը։ Նա կանգ առավ ու սսկվեց մեռելի նման։ Բայց ամեն ինչ հանդարտ էր, ուրեմն այդ միայն թվացել էր նրան։ Հանկարծ պարզ լսվեց թեթև ճիչ կամ կարծես թե ինչ-որ մեկը կամացուկ ու կցկտուր հառաչեց ու լռեց։ Հետո դարձյալ մեկ կամ երկու բոպե մեռելային լռություն։ Ռասկոլնիկովը պպզել էր սնդուկի մոտ և սպասում էր, հոգին շունչ առնում. սակայն հանկարծ վեր թռավ, վերցրեց կացինը ու ննջարանից դուրս վազեց։

Սենյակի մեջտեղում կանգնած էր Լիզավետան, ձեռքին մի մեծ կապոց, ու բարացած նայում էր սպանված քրոջը, դեմքը քաթանի պես սպիտակած էր, ու նա կարծես ուժ չուներ ճչալու։ Տեսնելով ննջարանից դուրս վազած մարդուն, նա սկսեց դողալ տերևի նման, ու նրա ամբողջ դեմքը ջղաձգվեց. նա քիչ բարձրացրեց ձեռքը, բացեց բերանը, բայց և այնպես չճչաց ու սկսեց հեռանալ նրանից դանդաղ, ընկրկելով քաշվել դեպի անկյուն, սնահուն, դիմահար նայելով նրան, բայց դարձյալ չճչալով, ասես օդը նրան չէր բավականանում ճչալու համար։ Ռասկոլնիկովը կացնով հարձակվեց

նրա վրա. Լիզավետայի շրթունքները ծռմռվեցին այնպես դավագին, ինչպես շատ փոքրիկ երեխաների շրթունքները, երբ նրանք սկսում են վախենալ որևէ բանից, սեեռուն նայում են իրենց վախեցնող առարկային և ուզում են լաց լինել։ Եվ այդ դժբախտ Լիզավետան այնքան միամիտ էր, ընկրճված և առմիշտ երկյոտած, որ նույնիսկ ձեռքն էլ չբարձրացրեց դեմքը պաշտպանելու համար, թեև դա առավելապես անհրաժեշտ ու բնական շարժումը կլիներ այդ րոպեին, որովհետև կացինը բարձրացվել էր հենց իր դեմքի վրա։ Նա միայն մի քիչ բարձրացրեց իր ապատ, ձախ ձեռքը, բայց չհասցրեց դեմքին, և դա դանդաղ մեկնեց առաջ, դեպի Ռասկոլնիկովը, ասես ցանկանալով հետ մղել նրան։ Հարվածը տրվեց ուղղակի գանգին, կացնի սուր կողմով, ու միանգամից ճեղքեց ճակատի ամբողջ վերին մասը, համարյա մինչև կատարը։ Լիզավետան այնպես էլ փռվեց հատակին։ Ռասկոլնիկովը գրեթե բոլորովին կորցրեց իրեն, վերցրեց նրա կապոցը, հետո էլ դեռ գցեց ու վազեց նախասենյակ։

Սարսափը ավելի ու ավելի էր համակում նրան, մանավանդ այդ երկրորդ, բոլորովին անսպասելի սպանությունից հետո։ Նա ուզում էր շուտ փախչել այստեղից։ Եվ եթե այդ րոպեին նա ի վիճակի լիներ ճիշտ տեսնել ամեն ինչ ու դատողություններ անել, եթե միայն կարողանար ըմբռնել իր դրության ամբողջ ծանրությունը, դրա ամբողջ անհուսալիությունը, այլանդակությունը և անհեթեթությունը, միաժամանակ հասկանալ, թե դեռ որքան դժվարություններ է հաղթահարելու, գուցե և չարագործություններ կատարելու, որպեսզի այստեղից դուրս գրծնի և տուն հասնի, ապա շատ հավանական է, որ նա կթողներ ամեն ինչ և անմիջապես կգրնար իր ոճրագործությունը հայտնելու, և այդ կաներ նույնիսկ ոչ թե ահից դրդված, այլ հենց միայն սարսափելով և զզվելով այն ամենից, ինչ որ կատարել էր։ Ցուրաքանչյուր րոպե նրա մեջ ուժեղանում և աճում էր այդ զզվանքը։ Այժմ նա ոչ մի դեպքում չէր մոտենա սնդուկին և նույնիսկ չէր մտնի այդ սենյակները։

Բայց մի ինչ-որ ցրվածություն, կարծես նույնիսկ մտախոհություն էր հետզհետե տիրում նրան. րոպեապես նա կարծես թե մոռացման մեջ էր ընկնում կամ ավելի լավ է

ասել՝ մոռանում էր գլխավորը ու կառչում մանրուքներից։ Սակայն մտնելով խոհանոց ու տեսնելով նստարանին դրված, կիսով չափ ջրով լցված մի դույլ, նա գլխի ընկավ, որ պետք է լվանալ ձեռքերը և կացինը։ Նրա ձեռքերը արյունոտ ու կպչուն էին։ Կացնի սայրը նա ուղղակի ընկղմեց ջրի մեջ, վերցրեց պատուհանի գոգում, ճեղքված ափսեում գտնվող մի կտոր օճառը ու սկսեց հենց դույլի մեջ լվանալ ձեռքերը։ Վերջացնելով այդ, նա հանեց կացինը, լվաց երկաթե մասը, ու երկար, երեք բոպեի չափ լվաց կոթի արյունոտ տեղերը՝ դրա համար օգտագործելով նույնիսկ օճառը։ Այնուհետև ձեռքերն ու կացինը սրբեց խոհանոցի միջով ածգկոտրված պարանի վրա շորացող սպիտակեղենով, հետո էլ պատուհանի մոտ երկար, ուշադրությամբ զննեց կացինը։ Հետքեր չկին մնացել. միայն մեկ կայծի կոթը դեռ թաց էր։ Նա կայծերը դգուշությամբ կախ տվեց օդակից, վերարկուի տակից։ Այնուհետև զննեց վերարկուն, անդրավարտիքը, կոշիկները, որքան այդ հնարավոր էր ազատ լուսավորված խոհանոցում։ Առաջին հայացքից արտաքուստ կարծես թե ոչինչ չէր երևում. միայն կոշիկների վրա արյան բծեր կային։ Նա շորի մի կտոր թրջեց ու դրանով սրբեց կոշիկները։ Սակայն նա գիտեր, որ լավ չի զննում, որ գուցե կա աչքի ընկնող մի բան, և ինքը այդ չի նկատում։ Նա մտախոհ կանգնեց սենյակի մեջտեղում։ Տանջալից, խավար մի միտք ծագեց նրա գլխում. այն միտքը, թե ինքը խելագարվում է, թե այդ բոպեին ոչ կարող է դատողություն անել, ոչ էլ իրեն պաշտպանել, թե գուցե ամենևին էլ չպետք է անել այն, ինչ որ հիմա անում է... «Ասված իմ, հարկավոր է փախչել, փախչել», փնթփնթաց նա ու նետվեց նախասենյակ, բայց այստեղ նրան այնպիսի սարսափ էր սպասում, որը նա, իհարկե, գեռ ոչ մի անգամ չէր զգացել։

Նա կանգնել էր, նայում էր ու չէր հավատում իր աչքերին. դուռը, արտաքին դուռը, նախասենյակից դեպի սանդուղքը բացվող հենց այն դուռը, որտեղից ինքը ժամ առաջ զանգահարել էր ու ներս մտել, փակված չէր, նույնիսկ ձեռքի ամբողջ լայնության չափ բաց էր մնացել. ոչ կողպեք, ոչ սողնակ, և դա ամբո՞ղջ ժամանակվա, այդ ամբո՞ղջ ժամանակվա ընթացքում։ Իր ներս մտնելուց հետո պառավը գուցե

զգուշության համար չէր փակել այն։ Բայց, տեր աստված, չէ՞ որ ինքը հետո տեսավ Լիզավետային։ Եվ ինչպե՞ս, ինչպե՞ս ինքը կարող էր գլխի չընկնել, որ Լիզավետան հո ներս էր մտել որևէ տեղից։ Հո պատի միջով չ՞էր մտել։

Նա առաջ նետվեց ու սողնակով փակեց դուռը։

— Ոչ, դարձյալ բանն այդ չէ, հարկավոր է գնալ, գնալ...

Նա հանեց սողնակը, բացեց դուռը և սկսեց ականջ դնել սանդուղքի կողմը։

Նա երկար ունկնդրում էր։ Հեռվում, ներքևում, հավանորեն դարպասի մոտ, բարձր ու ճղճղան ձայնով բղավում էին ինչ-որ երկու մարդ, վիճում էին ու հայհոյանք թափում։ «Ի՞նչ է այդ...»։ Նա համբերությամբ սպասում էր։ Վերջապես, միանգամից ձայները լռեցին, ասես խզվեցին... վիճողները հեռացան։ Նա արդեն ուզում էր դուրս գալ, սակայն հանկարծ մի հարկ ներքև շոնդալով բացվեց գեպի սանդուղք բացվող դուռը, և ինչ-որ մեկը սկսեց իջնել ներքև՝ երգելով ինչ-որ եղանակ։ «Մենք էլ աղմկո՞ւմ են գրանք բոլորը», անցավ նրա մտքով։ Նա դարձյալ ծածկեց դուռը և սպասեց։ Վերջապես, ամեն ինչ լռեց, ոչ ոք չկար։ Նա արդեն իջնելու էր սանդուղքից, երբ հանկարծ էլի ինչ-որ քայլեր լսվեցին։

Այդ քայլերը լսվեցին շատ հեռվից, դեռ սանդուղքի առաջին աստիճաններից, բայց Ռասկոլնիկովը շատ լավ ու պարզ հիշեց դրանց հենց առաջին ձայները ու չգիտես ինչու մտածեց, որ մեկը անպայման գալիս է այստեղ, չորրորդ հարկ, պառավի մոտ։ Ինչո՞ւ։ Ձայները առանձնահատո՞ւկ, նշանակալի՞ց էին, թե՞ ինչ։ Քայլերը ծանր էին, համաչափ, անշտապ։ Ահա նա արդեն անցավ առաջին հարկը, ահա էլի բարձրացավ. ձայները ավելի ու ավելի պարզ էին դառնում։ Լսվեց եկողի ծանր շնչարգելությունը։ Ահա նա արդեն բարձրանում է երրորդ հարկը... Այստեղ է գալիս։ Ու հանկարծ Ռասկոլնիկովին թվաց, թե ինքը փայտացել է, թե այդ կարծես երազ է, երբ տեսնում ես, թե ահա հասնում են քո հետևից, ուզում են սպանել, իսկ ինքդ կարծես կպել ես գետնին ու ձեռքերդ էլ չես կարողանում շարժել։

Ու վերջապես, երբ հյուրը արդեն սկսեց բարձրանալ չորրորդ հարկը, միայն այստեղ Ռասկոլնիկովը հանկարծ ցընց-

վից ամբողջ մարմնով և կարողացավ նախասենյակից արագ ու ճարպկորեն նետվել բնակարանը ու ծածկել դուռը։ Հետո վերցրեց սողնակը և կամացուկ, անլսելի փակեց դուռը։ Բնազդը օգնում էր։ Վերջացնելով այդ ամենը, նա շունչը պահած թաքնվեց դռան ետևում։ Անկոչ հյուրը արդեն նույնպես դռան մոտ էր։ Նրանք այժմ կանգնել էին իրար դիմաց, ինչպես ժամ առաջ ինքն ու պառավը, երբ դուռը բաժանում էր իրենց, իսկ ինքը ականջ էր դնում։

Հյուրը մի քանի անգամ ծանր շունչ առավ։ «Երևի հասու ու մեծամարմին է», մտածեց Ռասկոլնիկովը՝ ձեռքում սեղմելով կացինը։ Հիրավի, ասես այդ բոլորը երազ էր։ Հյուրը մեծքի տարավ դանակին ու պինդ գանգահարեց։

Հենց որ հնչեց դանակի թիթեղյա ձայնը, հանկարծ Ռասկոլնիկովին թվաց, թե սենյակում սպանվածները շարժվեցին։ Նա մի քանի վայրկյան նույնիսկ լրջորեն ականջ դրեց։ Անծանոթը մի անգամ էլ զանգահարեց, էլի սպասեց, ու հանկարծ անհամբերությամբ, ամբողջ ուժով մեկ սկսեց քաշքշել դռան բռնակը։ Ռասկոլնիկովը սարսափահար նայում էր օդակում ցատկոտող սողնակի կեռին ու բութ եզկյուղով սպասում էր, որ ահա սողնակը դուրս կթռչի։ Հիրավի, դա հնարավոր էր թվում, որովհետև եկվորը խիստ ուժեղ էր քաշքշում դուռը։ Ռասկոլնիկովը մտածեց սողնակը պահել ձեռքով, բայց այն մարդը կարող էր գլխի ընկնել։ Նրա պլուխը կարծես էլի սկսում էր պտտվել։ «Հիմա կընկնեմ», անցավ նրա մտքով, բայց անծանոթը սկսեց խոսել, ու նա իսկույն ուշքի եկավ։

— Այս ի՞նչ է, նրանք մրափո՞ւմ են, թե՞ մեկը խեղդել է նրանց, անիծվածնե՞ր,— ասես տակառի միջից գոռաց եկվորը։ — Էյ, Ալյոնա Իվանովնա, պառավ վհուկ, Լիզավետա Իվանովնա, չքնաղ դեղեցկուհի, բաց արեք, է՛։ Փու, անիծվածնե՛ր, քնե՛լ են, ինչ է։

Ու նորից, զայրանալով, նա մի տասն անգամ ամբողջ ուժով մեկ քաշքշեց զանգակը։ Դե, իհարկե, նա այդ տանը մոտիկ ծանոթ և ազդեցիկ մարդ էր։

Հենց այդ բոպեին հանկարծ մոտիկից, սանդուղքից մանրը, հապճեպ քայլեր լսվեցին։ Մոտենում էր էլի ինչ-որ մեկը։ Ռասկոլնիկովը սկզբից այդ չէր լսել։

— Մի՞թե ոչ ոք չկա,— հնչեց և ուրախ բղավեց մոտեցողը՝ ուղղակի դիմելով առաջին այցելուին, որը դեռ էլի շարունակում էր քաշքշել զանգը։ — Բարև ձեզ, Կոխ։

«Ձայնից երևում է, որ շատ ջահել է», հանկարծ մտածեց Ռասկոլնիկովը։

— Սատանան գիտե, քիչ մնաց փակը ջարդեի,— պատասխանեց Կոխը։ — Իսկ դուք ո՞ւրտեղից եք ինձ ճանաչում։

— Այ քեզ բան, երկու օր առաջ «Դամբրինուսում» բիլիարդ խաղալիս ես երեք անգամ տուրա ձեզնից։

— Հը՛մ։

— Ուրեմն չկա՞ն գրանք։ Տարօրինակ է։ Այ քեզ հիմար բան։ Պառավը ո՞ւր կարող է գնալ։ Ես գործ ունեմ։

— Ես էլ գործ ունեմ, սիրելիս։

— Հապա ի՞նչ անենք։ Ուրեմն պետք է ետ մանենք։ Է-է-հե՛, իսկ ես մտածում էի փող ճարել,— գոչեց երիտասարդը։

— Իհարկե, պետք է ետ դառնալ, բայց ինչո՞ւ էր հրավիրել։ Ջաղան ինքն էր ժամ նշանակել։ Ախր տեղս էլ հեռու է։ Չեմ հասկանում, թե ուր կարող էր գնալ։ Կլոր տարին տանն է նստում, թթվում, ոտքերը ցավում են, իսկ հիմա թրևելու է գնացել։

— Դռնապանին չհարցնե՞նք։

— Ի՞նչ։

— Թե ուր է գնացել ու երբ է գալու։

— Հը՛մ... գրողը տանի... ի՛նչ հարցնենք... ախր նա ոչ մի տեղ չի գնում...— ու Կոխը մի անգամ էլ քաշքշեց դուռը։ — Թքած, ինչ արած, պետք է դնալ։

— Սպասեք,— հանկարծ բղավեց երիտասարդը,— նայեցեք, տեսնո՞ւմ եք, թե ինչպես դուռը ետ ու առաջ է շարժվում, երբ քաշքշում եք։

— Հետո ի՞նչ։

— Նշանակում է դա ոչ թե բանալիով է փակված, այլ ներսից սողնակ է գցած։ Լսո՞ւմ եք, թե սողնակը ինչպես է չիկչիկում։

— Հետո ի՞նչ։

— Ախր ինչպե՞ս չեք հասկանում։ Ուրեմն նրանցից որևէ մեկը տանն է։ Թթե երկուսն էլ գնային, դրսից բանալիով

կփակեին և ոչ թե ներսից կոցեին սողնակը։ Լսո՞ւմ եք, թե սողնակը ինչպես է չիկչիկում։ Իսկ ներսից դա գցելու համար պետք է տանը լինել, հասկանո՞ւմ եք։ Հետևաբար տանը նստած են ու բաց չեն անում։

— Վա՜հ, իրոք որ այդպես է,— գոչեց զարմացած Կոխը։ — Հապա ի՞նչ բանի են այնտեղ։ — Եվ նա սկսեց զայրացած քաշքշել դուռը։

— Սպասեցեք, մի քաշքշեք,— դարձյալ գոչեց երիտասարդը։ — Այստեղ ինչ-որ ուրիշ բան կա... դուք հո զանգահարում էիք, քաշքշում դուռը, ու չեն բաց անում. ուրեմն կամ երկուսն էլ ուշաթափված են, կամ...

— Ի՞նչ։

— Այ թե ինչ, գնանք կանչենք դռնապանին. թող նա ինքը սրանց սրբնապնի։

... Գնանք,— երկուսն էլ շարժվեցին դեպի ներքև։

—Սպասեցեք, դուք մնացեք այստեղ, իսկ ես կգնամ դռնապանին բերելու։

— Ինչո՞ւ մնամ։

— Ո՞վ գիտե, ինչ կլինի։

— Թերևս...

— Ախր ես պատրաստվում եմ դատական քննիչ դառնալու։ Ակներև է, ակ-նե-ևի՜ է, որ այստեղ մի բան կա,— տաքացած գոչեց երիտասարդը ու վազեվազ իջավ սանդուղքից։

Կոխը մնաց, նորից կամացուկ զանգահարեց, ու զանգը հնչեց մեկ անգամ։ Հետո էլ, ասես խորհրդածելով ու զննելով, սկսեց շարժել դռան բռնակը, քաշելով ու բաց թողնելով այն, որպեսզի վերստին համոզվեր, որ դուռը միայն սողնակով է փակված։ Հետո մշմշալով կռացավ ու սկսեց նայել բանալու անցքից. բայց դրա մեջ ներսից բանալի էր դրված, հետևաբար ոչինչ չէր կարելի տեսնել։

Ռասկոլնիկովը կանգնել էր ու պինդ բռնել կացինը։ Նա կարծես զառանցանքի մեջ էր։ Նա պատրաստվում էր նույնիսկ կռվել եկվորների հետ, երբ դրանք ներս մտնեին։ Երբ նրանք քաշքշում էին դուռը ու պայմանավորվում դռնապանին կանչելու մասին, նրա գլխում մի քանի անգամ հանկարծ միտք էր ծագում մթանգամից ամեն ինչ վերջացնել ու նրանց պատասխանել դռան ետևից։ Նրբեմն ուզում էր

հայհոյել, ձեռ առնել նրանց, քանի դեռ դուռը չէին բացել։ «Շուտ վերջանար, էլի՛»,— անցավ նրա մտքով։

— Է-է՛, սատանա...

Անցնում էր ժամանակը, մեկ, երկու րոպե, ու ոչ ոք չէր գալիս։ Կոխը անհանգիստ շարժումներ էր անում։

— Է—է՛,— գրողը տանի...— գոչեց նա հանկարծ ու էլ չհամբերելով, հրաժարվելով դռան մոտ հսկելուց, նույնպես իջավ ներքև, շտապելով ու թփթփացնելով ոտքերը։ Նրա քայլերը լռեցին։

— Տեր աստված, ի՞նչ անեմ։

Ռասկոլնիկովը հանեց սողնակը, մի քիչ բացեց դուռը, ոչինչ չէր լսվում, ու հանկարծ, արդեն բոլորովին առանց մտածելու, դուրս ելավ, որքան կարող էր պինդ ծածկեց դուռը ու սկսեց իջնել սանդուղքից։

Նա արդեն երեք սանդուղք էր իջել, երբ հանկարծ ներքևից ուժեղ աղմուկ լսվեց. ո՞ւր կորչել. թաքնվելու ոչ մի տեղ չկար։ Նա նա վազեց դարձյալ դեպի բնակարանը։

— Էյ, սատանի ծնունդ, գրողի տարած, բռնիր։

Մեկը բղավելով դուրս պրծավ ներքևի ինչ-որ բնակարանից ու սանդուղքով ոչ թե վազեց, այլ ասես ընկավ ներքև՝ ամբողջ կոկորդով մեկ բղավելով՝

— Մի՛տկա, Մի՛տկա, Միտկա Մի՛տկա, Մի՛տկա, սատանան քեզ տանի։

Բղավոցը վերջացավ ճղճղոցով... վերջին ձայները արդեն դրսից էին գալիս. ամեն ինչ լռեց։ Բայց հենց այդ նույն ակնթարթին մի քանի մարդիկ, որոնք բարձրաձայն և արագ էին խոսում, սկսեցին աղմկալի բարձրանալ սանդուղքով։ Նրանք երեք թե չորս հոգի էին։ Ռասկոլնիկովը լսեց երիտասարդի ձայնը։ «Հըմ, նրանք են»։

Բոլորովին հուսալքվելով, նա քայլեց եկողներին ընդառաջ. ինչ լինելու է, թող լինի։ Եթե կանգնեցնեն, ամեն ինչ կորած է, եթե ոչ, նույնպես ամեն ինչ կորած է. կհիշեն։ Եկողները և Ռասկոլնիկովը արդեն մոտենում էին միմյանց, նրանց միջև ընդամենը մի սանդուղք էր մնում, ու հանկարծ՝ փրկություն՝. նրանից մի քանի աստիճան հեռավորությամբ, աջ կողմում դատարկ և դուռը բոլորովին բաց բնակարանն էր, երկրորդ հարկի հենց այն բնակարանը, որ նկարում էին

ներկարարները, իսկ հիմա բարեբախտաբար գնացել էին։ Երևի հենց դրանք էլ քիչ առաջ դուրս էին վազել բղավոցով։ Հատակները հենց նոր էին ներկված, մի սենյակի մեջտեղում դրված էր մի տակառիկ ու մի խնցի՝ ներկով ու վրձինով։ Ռասկոլնիկովը մի ակնթարթում ներս նետվեց բաց դռնից ու թաքնվեց պատի հետևում, հենց այդ ժամանակ նկողները արդեն կանգնած էին սանդուղքի հարթակում։ Այնուհետև շուռ եկան դեպի վեր ու, բարձր խոսելով, բարձրացան չորրորդ հարկը։ Ռասկոլնիկովը հենց դրան էր սպասում, նա ոտնաթաթերի վրա դուրս եկավ ու վազեց ներքև։

Սանդուղքի վրա ոչ ոք չկար, դարպասի մոտ՝ նույնպես։ Նա արագ անցավ դարպասից, շուռ եկավ ձախ կողմը ու քայլեց փողոցով։

Նա շատ լավ գիտեր, նա միանգամայն լավ գիտեր, որ այդ բոպեին նրանք պառավի բնակարանումն են, որ խիստ զարմացել են, տեսնելով, որ դուռը բաց է, մինչդեռ քիչ առաջ փակված էր, որ նրանք արդեն նայում են դիակներին և որ կանցնի ոչ ավելի քան մի բոպե, երբ նրանք գլխի կընկնեն ու բոլորովին պարզ կհասկանան, որ հենց քիչ առաջ այնտեղ է եղել մարդասպանը և կարողացել է թաքնվել որևէ տեղ, ծլկել իրենց կողքից, փախչել, թերևս նաև գլխի կընկնեն, որ նա դատարկ բնակարանում էր, երբ իրենք վերև էին անցնում։ Այնինչ նա ոչ մի կերպ չէր համարձակվում շատ արագացնել քայլերը, թեև մինչև մյուս փողոց շուռ գալը մոտ հարյուր քայլ էր մնում։ «Արդյոք չմտնե՞լ որևէ դարպասից ու սպասել որևէ անծանոթ սանդուղքի վրա. ոչ, փորձանք կլինի. իսկ կացինը չգցե՞մ մի տեղ, կառք չվերցնե՞մ։ Փորձա՛նք է, փորձա՛նք»։

Վերջապես, ահա և մյուս փողոցը. նա շուռ եկավ դեպի այնտեղ՝ բոլորովին կիսամեռ վիճակում. այստեղ նա արդեն կիսով չափ փրկված էր և հասկանում էր այդ. ավելի քիչ հասկածներ կլինեն, մանավանդ որ այնտեղ մարդկանց հոծ բազմություն էր երթևեկում, և ինքը նրանց մեջ աննկատելի կլիներ ինչպես ավազահատիկ։ Բայց այդ բոլոր տանջանքները այնքան սպառեցին նրա ուժերը, որ նա հազիվ էր քայլում։ Քրտինքը դուրս էր տալիս կաթիլներով, ամբողջ պա-

բանոցը թրջված էր։ «Հարբած է, հա՜-ա», բղավեց ինչ-որ մեկը, երբ նա հասավ ջրանցք։

Նա ինքնամոռաց վիճակում էր. քանի գնում, վիճակը վատանում էր։ Սակայն նա հիշում էր, որ երբ հասավ ջրանցք, հանկարծ վախեցավ. այնտեղ քիչ մարդ կար, և ինքը նկատելի կլիներ. ուզում էր ետ դառնալ դեպի նրբանցք։ Չնայելով, որ քիչ էր մնում ընկնի, այնուամենայնիվ շրջապտույտ կատարեց ու տուն հասավ բոլորովին ուրիշ կողմից։

Գրեթե խելքամաղ վիճակում նա անցավ իր տան դարպասից. նա արդեն ոտք էր դնում սանդուղքին, երբ միտն ընկավ կացինը։ Այնինչ պետք էր կատարել խիստ կարևոր մի խնդիր՝ կացինը դնել իր տեղը, և որքան կարելի է անհապաղ։ Իհարկե, նա արդեն անզոր էր ըմբռնելու, որ գուցե ավելի լավ կլիներ ամենևին էլ կացինը չդնել իր առաջվա տեղը, այլ թեկուզ հետո գցել մի որևէ ուրիշ բակ։

Բայց ամեն ինչ հաջող գնաց։ Դռնապանի սենյակի դուռը ծածկված էր, բայց փակված չէր, հետևարար ամենից ավելի հավանականն այն էր, որ դռնապանը տանն է։ Բայց Ռասկոլնիկովը այնքան էր կորցրել որևէ բան ըմբռնելու ունակությունը, որ ուղղակի մոտեցավ դռնապանի սենյակին ու բացեց դուռը։ Եթե դռնապանը նրան հարցներ՝ «ինչ ես ուզում», նա գուցե կացինը ուղղակի տար դռնապանին։ Բայց վերջինս դարձյալ չկար, և Ռասկոլնիկովը կացինը դրեց առաջվա տեղը, նստարանի տակ. նույնիսկ ծածկեց փայտի կտորով, ինչպես որ առաջ այն ծածկված էր եղել։ Հետո նա մինչև իր սենյակը հասնելը ոչ ոքի, ոչ մի մարդու չհանդիպեց. տանտիրուհու դուռը փակված էր։ Մտնելով իր սենյակը, նա առանց իր վրայից որևէ բան հանելու ընկավ բազմոցին։ Նա չքնեց, այլ միայն թմբեց։ Եթե այդ ժամանակ որևէ մեկը մտներ նրա սենյակը, նա իսկույն վեր կթռչեր ու կճչար։ Ինչ-որ մտքերի ծվեններ ու բեկորներ էին վխտում նրա գլխի մեջ. բայց նա չէր կարողանում կառչել դրանցից ոչ մեկին, չէր կարողանում կենտրոնանալ որևէ մեկի վրա, չնայելով, որ դրա համար նույնիսկ ջանք էր թափում...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Այդպես նա շատ երկար պառկեց։ Երբեմն կարծես թե ուշիանում էր, և այդ բոպեներին նկատում էր, որ արդեն վաղուց կիրեր է, բայց վեր կենալու մասին չէր էլ մտածում։ Անջատես, տեսավ, որ արդեն բացվել է ցերեկվա լույսը։ Նա բազմոցի վրա պառկած էր մեջքին, դեռ փայտացած էր քիչ առաջվա անզգայությունից։ Փողոցից նրան էին հասնում սարսափելի, սուր, հուսահատական ճիչեր, ասենք նա ամեն գիշեր էլ ժամը երեքին իր լուսամուտի տակից այդպիսի ճիչեր էր լսում։ Հենց դրանք էլ հիմա արթնացրին նրան։ «Հրմ, ահա և հարբածները դուրս են գալիս օդեռնեներից»,— մտածեց նա,— «ժամը երեքն է»,— ու հանկարծ վեր թռավ, ասես մեկը նրան պոկեց բազմոցից։ — «Ինչպե՞ս, արդեն ժամը երեքն է»։ Նա նստեց բազմոցին և այստեղ հիշեց ամեն ինչ. հանկարծ, մեկ ակնթարթում հիշեց ամեն ինչ։

Առաջին ակնթարթում նա կարծում էր, թե կխելագարվի։ Նա սարսափելի ցուրտ զգաց, բայց ցուրտը նաև տենդից էր, որ արդեն վաղուց սկսվել էր նրա քնած ժամանակ։ Իսկ հիմա հանկարծ սկսեց այնպես դողալ, որ քիչ էր մնում ատամները դուրս թռչեին, ու նա ցնցվում էր ամբողջ մարմնով։ Նա բացեց դուռը և ականջ դրեց. տանը բոլորը քնած էին։ Նա ապշած նայում էր ինքն իրեն և այն ամենին, ինչ որ կար սենյակում, ու չէր հասկանում, թե ինչպես կարող էր երեկ, ներս մտնելով, չփակել դուռը ու նետվել բազմոցի վրա՝ չհանելով ոչ միայն վերնազգեստը, այլև գլխարկը, որ քո-

կել էր գլխից ու գտնվում էր հատակի վրա, բարձի մոտ։ «Թե մենք նեբս մտներ, ի՞նչ կմտածեր. կկարծեր, թե ես հարբա՞ծ եմ, բայց...»։ Նա նետվեց դեպի պատուհանը։ Բավականաչափ լույս էր, ու նա հապճեպ, ոտքից-գլուխ զննեց իրեն, իր ամբողջ հագուստը, որ տեսներ, թե արդյոք չկա՞ն արյան հետքեր։ Բայց այդպես զննել չէր կարելի. նա գողալով սկսեց հանել ամբողջ հագուստը ու դարձյալ զննել։ Նա շուռումուռ տրեց ամեն ինչ՝ մինչև վերջին թելը, մինչև վերջին լաթը, ու չվստահելով իրեն, երեք անգամ կրկնեց զննությունը։ Բայց կարծես թե չկար ոչինչ, չկար ոչ մի հետք, բացի անդրավարտիքի ծայրերին եղած հետքից։ Դրանք պատռտվել ու կախվել էին ծոպերի նման, և այդ ծոպերի վրա մակարդված արյան խիտ հետքեր էին երևում։ Նա վերցրեց ծալովի մեծ դանակը ու կտրեց ծոպերը։ Կարծես թե էլ ուրիշ հետք չկար։ Հանկարծ նա հիշեց, որ քսակը և այն իրերը, որոնք հանել էր պառավի սնդուկից, մինչև հիմա գտնվում են իր գրպաններում։ Նա մինչև այժմ չէր էլ մտածել դրանք հանել և թաքցնել։ Նույնիսկ հագուստը զննելիս էլ չհիշեց այդ իրերը։ Այդ ինչի՞ էր նման։ Նա անմիջապես սկսեց դրանք հանել ու շպրտել սեղանի վրա։ Բոլորը հանեց, նույնիսկ շուռ տվեց գրպանները, որպեսզի հավաստիանար, թե էլ ոչինչ չի մնացել, և այդ ամբողջ կույտը տարավ սենյակի մի անկյունը։ Այնտեղ, հենց անկյունում, ներքևում մի տեղ պատից պոկվել, պատռտվել էր պաստառը. նա անմիջապես սկսեց իրերը խոթել այդ խոռոչը, թղթի տակ. դրանք բոլորը տեղավորվեցին։ «Իրերն էլ, քսակն էլ աչքի չեն ընկնի»,— ուրախ մտածեց նա, վեր կացավ ու բութ նայեց անկյունին, էլ ավելի դուրս ընկած պաստառին։ Հանկարծ նա ամբողջ մարմնով ցնցվեց սարսափից։ «Աստված իմ, ախր ի՞նչ արեցի,— հուսալքված շշնջում էր նա,— մի՞թե դրանք թաքցրած են, մի՞թե այդպես են թաքցնում»։

Ճշմարիտ է, նա հաշվի չէր առել իրերը. նա կարծում էր, թե միայն փող կլինի, այս պատճառով էլ կանխապես տեղ չէր պատրաստել իրերի համար։ «Բայց հիմա, հիմա ինչո՞ւ եմ ուրախանում»— մտածում էր նա։ — «Մի՞թե կարելի է այդպես թաքցնել։ Իսկապես որ բանականությունը դավաճանում է ինձ»։ Նա ուժասպառ նստեց բազմոցին, ու խ-

կույն էլի սկսվեց անտանելի դողը։ Նա մեքենայաբար քարշ տվեց իր կողքին, աթոռին ընկած նախկին ուսանողական ձմեռային վերարկուն, որ տաք էր, բայց համարյա արդեն բոլորովին պատառոտված, ծածկվեց դրանով, և քունն ու կատանցանքը դարձյալ մի անգամից ընդդրկեցին նրան։ Նա ննջեցավ։

Բայց ընդամենը հինգ բոպե՞ անց նա կրկին վեր թռավ ու անմիջապես, անհամբերությամբ նետվեց դեպի իր վերնաշգեստը։ «Ես ինչպե՞ս կարող էի դարձյալ քնել, երբ ոչինչ չի արված. հենց այդպես է որ կա, մինչև այժմ թեատակից չեմ հանել օղակը։ Մոռացել եմ, մոռացել այդ կարևոր բանը, այդ հանցանշանը»։ Նա պոկեց օղակը ու սկսեց արագաբար կարտաել, խոթել բարձի տակ դրված սպիտակեղենի մեջ։ «Պատառոտված կտավի կտորները ոչ մի դեպքում կասկած չեն առաջացնի. կարծեմ այդպես է, կարծեմ այդպես է», կրկնեց նա սենյակի մեջտեղում կանգնած, ու ցավ պատճառելու չափ լարված ուշադրությամբ նորից սկսեց զննել շուրջը, հատակը, ամեն ինչ, որ տեսնի, թե արդյոք որևէ բան չի՞ մոռացել։ Նա հավատացած էր, որ ամեն ինչ, նույնիսկ հիշողությունը, նույնիսկ սոսկ ըմբռնողությունը դավաճանում են իրեն, և դա սկսում էր անտանելի տանջել նրան։ «Ի՞նչ է սա, մի՞թե արդեն սկսվում է իմ կործանումը, մի՞թե արդեն վրա է հասնում մահապատիժը։ Հըմ, այդպես է որ կա»։ Հիրավի, ծոպերի կտորտանքները, որ նա կտրել էր անդրավարտիքից, այնպես էլ ընկած էին հատակին, սենյակի մեջտեղում, որ հենց առաջին ներս մտնողը տեսներ։ «Ախր ի՞նչ է կատարվում ինձ հետ», դարձյալ գլխակորույս դոչեց նա։

Այստեղ նրա գլխում մի տարօրինակ միտք ծագեց. գուցե և իր ամբողջ հագուստը արյունոտված է, գուցե արյան շատ բծեր կան, բայց ինքը դրանք չի տեսնում, չի նկատում, որովհետև իր ըմբռնողությունը թուլացել է, ցլատվել... միտքը մթագնել է... Հանկարծ նա հիշեց, որ քսակի վրա էլ արյուն կար։ «Վա՜հ, այդպես ուրեմն, գրպանս նույնպես արյունոտված կլինի, որովհետև ես այն ժամանակ թաց քսակը գրպանս էի դրել»։ Նա վայրկենապես շուռ տվեց գրպանը. հենց այդպես էր որ կար. գրպանի աստառի վրա արյան

Հետքեր, բծեր էին մնացել։ Ուրեմն բանականություն դեռ բոլորովին չի չքացել, ուրեմն կա ըմբռնողություն և հիշողություն, եթե ինքս սթափվեցի ու գլխի ընկա, ցնծագին մտածեց նա, ամբողջ կրծքով մեկ իսոր և ուրախ շունչ առավ. սա ուղղակի տենդային թուլություն է, բոպեական զառանցանք»,— և նա անդրավարտիքի ձախ գրպանից պոկեց ամբողջ աստառը։ Այդ բոպեին արևի ճառագայթը ընկավ նրա ձախ կոշիկին. գուլպայի վրա, որ երևում էր կոշիկի պատռված տեղից, կարծես թե ինչ-որ նշաններ նկատվեցին։ Նա հանեց կոշիկը. «իրոք որ նշաններ կան, գուլպայիս ամբողջ ծայրը արյունոտված է», երևի այն ժամանակ նա անզգուշաբար ոտքը դրել էր արյան լճի մեջ... «Հիմա ի՞նչ անեմ սրանք, որտե՞ղ դցեմ այս գուլպան, ծոպերը, գրպանը»։

Նա այդ ամենը վերցրեց ու կանգնեց սենյակի մեջտեղում։ «Գցեմ վառարա՞նը. բայց ամենից առաջ վառարանը կնայեն։ Վառե՞մ, բայց ինչո՞վ վառեմ, նույնիսկ լուցկի էլ չկա։ Ոչ, ավելի լավ է տանից դուրս դալ և այս ամենը մի տեղ շպրտել։ Այո, ավելի լավ է, դեն շպրտել», կրկնեց նա՝ դարձյալ նստելով բազմոցին, «և հենց այժմ, այս բոպեիս, անհապաղ...»։ Բայց դրա փոխարեն նրա գլուխը նորից թեքվեց բարձին. վերստին բռնեց նրա անտանելի դողը. նա կըրկին իր վրա քաշեց վերարկուն։ Ու երկար, մի քանի ժամ նա հաճախակի մոմտում էր, որ «լավ կլիներ այժմ, առանց այդ հետաձգելու, գնալ որևէ տեղ և դրանք դեն շպրտել, որպեսզի աչքից հեռու լինեն, դե շուտ, շուտ պետք է գնալ»։ Նա մի քանի անգամ պոկվեց բազմոցից, փորձեց ոտքի ելնել, բայց արդեն չկարողացավ։ Նրան վերջնականապես արթնացրեց դռան ուժեղ թխկոցը։

— Դե, բաց արա, է՛, կենդանի՞ ես, թե՞ չէ։ Հա՞ մրափում է ու մրափում,— բղավում էր Նաստասյան, բռունցքով ծեծում դուռը,— ամբողջ օրերով շնթռկում է շնավարի, հենց շուն է որ կա։ Բաց արա, էլի, ժամը տասնմեկն է։

— Գուցե թե տանը չի,— ասաց ինչ-որ տղամարդ։

«Վա՛հ, այդ գռնապանի ձայնն է... Նա ի՞նչ է ուզում»։

Ռասկոլնիկովը վեր թռավ ու նստեց բազմոցին։ Սիրտը այնպես խփում էր, որ նույնիսկ ցավ էր պատճառում։

— Հապա ո՞վ է դուռը ներսից կեռով փակել,— առար-

կեց Նաստասյան։ — Ի՜հ, սկսել է փակվել։ Գողանալո՞ւ են դրան, ինչ է։ Բա՜ց արա, անխե՜լք, արթնացի՜ր։

«Ի՞նչ են ուզում դրանք։ Դոնապանը ինչո՞ւ է եկել։ Ամեն ինչ հայտնի է։ Դիմադրե՞մ, թե՞ բաց անեմ։ Ավելի լավ է բաց անեմ։ Կորա՜՛ ես...»

Նա քիչ բարձրացավ տեղից, թեքվեց առաջ և հանեց կեռը։

Նրա ամբողջ սենյակը այնպիսի չափի էր, որ կարելի էր առանց անկողնից վեր կենալու բանալ դռան կեռը։

Հենց այդպես է որ կա. կանգնած են դոնապանն ու Նաստասյան։

Նաստասյան ինչ-որ տարօրինակ հայացք նետեց նրա վրա։ Ռասկոլնիկովը կատաղի ու հանդուգն տեսքով նայեց դոնապանին։ Սա լուռ մեկնեց նրան մի դորշ, երկտակ ծալված թուղթ, որը կնքված էր շշի զմուռսով։

— Ստանուցագիր է, գրասենյակից է,— ասաց նա՝ տալով թուղթը։

— Ո՞ր գրասենյակից...

— Ուրեմն կանչում են ոստիկանատուն, գրասենյակ։ Հայտնի բան է, թե ինչ գրասենյակ է։

— Ոստիկանատո՞ւն... Ինչի՞ համար...

— Ես ի՞նչ գիտենամ։ Որ պահանջում են, գնա։ — Դրոնապանը ուշադրությամբ նայեց նրան, նայեց շուրջը ու շուռ եկավ, որ գնա։

— Բոլորովին հիվանդացե՞լ ես, ինչ է,— հարցրեց Նաստասյան՝ աչք չկտրելով Ռասկոլնիկովից։ Դոնապանը նույնպես մի բոպե ետ նայեց։— Երեկվանից տաքություն ունես,— ավելացրեց Նաստասյան։

Ռասկոլնիկովը չէր պատասխանում և թուղթը առանց բաց անելու պահել էր ձեռքին։

— Մի՜՛ վեր կենա,— ասաց Նաստասյան՝ խղճալով ու տեսնելով, որ նա բազմոցից իջեցնում է ոտքերը։ — Որ հիվանդ ես, մի գնա. ոստիկանությունը չի փախչի։ Այդ ի՞նչ է ձեռքիդ։

Ռասկոլնիկովը նայեց ներքև. նրա աջ ձեռքում գտնվում էին ծոպերի կտրած կտորները, գուլպան ու պոկած դրպանի ծվենները։ Այնպես էլ քնել էր՝ դրանք ձեռքում պահած։

Հետո մտածելով այդ մասին, նա հիշում էր, որ տաքության մեջ կիսով չափ արթնանալով, այդ ամենը պինդ սեղմում էր ձեռքում ու այդպես էլ նորից քնում։

— Ի՜հ, տես թե ինչ փալաս-փուլուս է հավաքել ու քնում է դրանցով, ասես գանձ լինեն...— Ու Նաստասյան սկսեց ցնցվել իր հիվանդագին ջղայնոտ ծիծաղից։ Ռասկոլնիկովը այդ ամենը վայրկենապես խորթեց վերարկուի տակ ու աչքերը հառեց Նաստասյային։ Թեև նա այդ բոպեին գրեթե անկարող էր միանգամայն խելացիորեն դատելու, բայց զգում էր, որ երբ գան իրեն տանելու, իր հետ այդպես չեն վարվի։ «Հը՛մ... ոստիկանատո՞ն»։

— Գոնե թեյ խմեիր, թե ուզում ես, բիրեմ. մնացել է...

— Ոչ... ես կգնամ. ես հիմա կգնամ,— քրթմնջաց Ռասկոլնիկովը ու ոտքի ելավ։

— Գուցե սանդուղքից է՛լ չկարողանաս իջնել։

— Կգնամ...

— Ինչպես կուզես։

Նաստասյան գնաց դռնապանի ետևից։ Ռասկոլնիկովը իսկույն մոտեցավ լուսամուտին, գուլպան ու ծոպերը զննելու։ «Բծեր կան, բայց այնքան էլ նկատելի չեն. լրիվ աղտոտվել է, ցնցվել ու խունացել։ Ով նախապես չգիտե, ոչինչ չի նկատի։ Ուրեմն Նաստասյան հեռվից ոչինչ չէր կարող նկատել, փառք աստծո»։ Ռասկոլնիկովը դողալով բացեց ծանուցագիրը ու սկսեց կարդալ. երկար, երկար կարդաց և վերջապես հասկացավ։ Այդ մի սովորական ծանուցագիր էր թաղային ոստիկանատնից, պահանջվում էր այդ օրը ժամը տասի կեսին ներկայանալ թաղային վերակացուի գրասենյակը։

«Ե՞րբ է այսպիսի բան եղել։ Ոստիկանության հետ ես ոչ մի գործ չունեմ։ Ինչո՞ւ հենց այսօր են կանչում»,— տանջալից տարակուսանքով մտածում էր նա։ — «Տեր աստված, թող այս ամենը շուտ վերջանա»։ Նա ուզեց ծունկ չոքել ու աղոթել, բայց նույնիսկ ինքն էլ ծիծաղեց, ոչ թե աղոթքի, այլ իր վրա։ Սկսեց արագ հագնվել։ «Միևնույն է, կորչելու եմ։ Հագնեմ գուլպան,— հանկարծ մտածեց նա,— է՛լ ավելի կճմոթվի, կփոշոտվի, ու հետքերը կչքանան»։ Բայց հագավ

թե չէ, իսկույն հանեց ղղվանքով ու սարսափով։ Հանեց, բայց հիշելով, որ ուրիշ դուլպա չկա, վերցրեց ու դարձյալ հագավ ու դարձյալ ծիծաղեց։ «Այս ամենը պայմանական է, այս ամենը հարաբերական է, այս ամենը հենց միայն ձևեր են», մտածեց նա հարևանցիորեն, լոկ միայն թուլցիկ կերպով, իսկ ինքը դողում էր ամբողջ մարմնով։ «Ախր ես հագա դուլպան, բանը հո վերջացրի նրանով, որ հագա»։ Ծիծաղը, սակայն իսկույն փոխարինվեց հուսալքումով։ «Ես անզոր եմ...», մտածեց նա։ Ոտքերը դողում էին։ «Վախից է», փնթփնթաց նա քթի տակ։ Տաքությունից գլուխը պըտրտվում էր ու ցավում։ «Դա խորամանկություն է. նրանք ուզում են խորամանկությամբ ինձ ծուղակի մեջ գցել և հանկարծ խոստովանություններ կորզել», շարունակում էր քթի տակ փնթփնթալ՝ դուրս գալով սենյակից։ «Վատ է, որ ես համարյա դատանցանքի մեջ եմ... ես կարող եմ որևէ հիմարություն դուրս տալ...»։

Սանդուղքից իջնելիս նա հիշեց, որ բոլոր իրերը այնպես էլ թողնում է պատատի խոռոչում. «Թերևս այնտեղ առանց իրեն խուզարկություն լինի», հիշեց ու կանգ առավ։ Բայց հանկարծ այնպիսի հուսալքում և, եթե կարելի է այսպես ասել, կործանման այնպիսի ցինիզմ համակեց նրան, որ նա չուզեց հա դառնալ և շարունակեց ճանապարհը։

«Միայն թե շուտ վերջանա...»։

Փողոցում դարձյալ անտանելի շոգ էր. այդ բոլոր օրերին անձրևի մի կաթիլ անգամ չէր ընկնում։ Նորից փոշի, աղյուս և կիր, դարձյալ գարշահոտություն խանութներից ու դիններից, դարձյալ ամեն բոպե հանդիպում են հարբածներ, շուխան փերեզակներ և իրենց նստելատեղերում կիսով չափ փռված կառապաններ։ Արևի պայծառ շողքը ընկավ նրա աչքերին այնպես, որ նայելիս աչքերը ցավում էին, ու գլուխն էլ բոլորովին պատվեց. սովորական զգացում տենդով տառապողի, որը պայծառ, արևաշող օրը հանկարծ դուրս է գալիս փողոց։

Հասնելով մինչև Երևլվա փողոցի անկյունը, նա տանջալից անհանգստությամբ նայեց դրան, այն տանը... ու իսկույն շուռ տվեց հայացքը։

«Եթե հարցնեն, ես գուցե և ասեմ»,— մտածեց նա՝ մոտենալով գրասենյակին։

Մինչև գրասենյակ քառորդ վերստ էր մնում։ Գրասենյակը հենց նոր էր տեղափոխվել նոր բնակարան, նոր տուն, չորրորդ հարկը։ Ռասկոլնիկովը մի ժամանակ, բայց շատ վաղուց անցողակի եղել էր առաջվա շենքում։ Մտնելով դարպասից, նա աջ կողմում սանդուղք տեսավ, որով իջնում էր մի մուժիկ, ձեռքին գրքույկ. «Ուրեմն դռնապան է, ուրեմն հենց այստեղ է գրասենյակը», ու նա սկսեց ենթադրաբար բարձրանալ սանդուղքով։ Նա չէր ուզում որևէ մեկին որևէ բան հարցնել։

«Ներս կմտնեմ, ծունկ կչոքեմ և ամեն ինչ կպատմեմ...», մտածեց նա՝ բարձրանալով չորրորդ հարկ։

Սանդուղքը նեղ էր, դիք և ամբողջովին կեղտոտ։ Չորս հարկերում բոլոր բնակարանների բոլոր խոհանոցների դռները այդ սանդուղքի կողմում էին և համարյա ամբողջ օրը բաց էին լինում։ Հենց դրանից էլ օդը սարսափելի ծանր էր։ Սանդուղքով բարձրանում և իջնում էին կոնատակերին գրքույկներ դրած դռնապաններ, թղթատարներ ու երկու սեռի զանազան մարդիկ՝ հաճախորդներ։ Գրասենյակի դուռը նույնպես բոլորովին բաց էր։ Ռասկոլնիկովը ներս մտավ ու կանգ առավ նախասենյակում։ Այստեղ կանգնած սպասում էին ինչ-որ մուժիկներ։ Այստեղ նույնպես օդը չափազանց ծանր էր ու բացի դրանից, սիրտ խառնելու չափ զգացվում էր նեխած օլիֆով պատրաստած, թարմ, դեռ լավ որակ չըստացած ներկի հոտը. սենյակները դրանով էին ներկված։ Մի փոքր սպասելով, Ռասկոլնիկովը որոշեց անցնել առաջ, հետևյալ սենյակը։ Սենյակները փոքր էին, ցածրիկ առաստաղներով։ Սարսափելի անհամբերությունը նրան առաջ ու առաջ էր մղում։ Ոչ ոք նրան չէր նկատում։ Երկրորդ սենյակում նստել ու գրում էին ինչ-որ գրագիրներ, որոնք նրանից միայն մի քիչ ավելի լավ էին հագնված, տեսքով ինչ-որ տարօրինակ մարդիկ էին։ Ռասկոլնիկովը դիմեց նրանցից մեկին.

— Ի՞նչ ես ուզում։

Նա ցույց տվեց գրասենյակից ստացած ծանուցագիրը։

— Դուք ուսանո՞ղ եք,— հարցրեց գրագիրը՝ նայելով ծանուցագրին։

— Այո, նախկին ուսանող։

Գրագիրը դիտեց նրան, բայց առանց որևէ հետաքրքրության։ Դա խիստ գղգղված մաղերով, նայվածքի անորոշ արտահայտությամբ մի մարդ էր։

«Սրանից ոչինչ չես իմանա, որովհետև սա անտարբեր կլինի», մտածեց Ռասկոլնիկովը։

— Գնացեք այնտեղ, գործավարի մոտ,— ասաց գրագիրը՝ մատով ցույց տալով ամենավերջին սենյակը։

Ռասկոլնիկովը մտավ այդ սենյակը (որ արդեն չորրորդն էր), որը փոքր էր ու լեփ-լեցուն էր մարդկանցով։ Սրանք մի քիչ ավելի մաքուր էին հագնված, քան մյուս սենյակներում պտտվողները։ Այցելուների մեջ երկու կին կար։ Մեկը սգաշորով էր, ուղղաստ հագնված, նստել էր սեղանի մոտ, գործավարի դիմաց, ու նրա թելադրությամբ ինչ-որ բան էր գրում։ Մյուս կինը, որ շատ չազ էր ու աչքի ընկնող, բոսորակարմիր ու բծավոր դեմքով էր, խիստ փարթամ հագնված, կրծքին թեյի ափսեիկի մեծությամբ բրոշկա կպցրած, կանգնել էր քիչ հեռու և ինչ-որ բանի էր սպասում։ Ռասկոլնիկովը իր ծանուցագիրը տվեց գործավարին։ Սա անցողակի նայեց դրան, ասաց՝ սպասեցեք, ու շարունակեց զբաղվել սգաշոր հագած կնոջով։

Ռասկոլնիկովը ազատ շունչ առավ։ «Հավանորեն այն չէ»։ Հետզհետե նա սկսեց զվարթանալ, նա իրեն հորդորում էր ուշքի գալ և արիանալ։

«Մի որևէ հիմարություն, մի որևէ չնչին անզգուշություն, ու ես կարող եմ ամբողջովին մատնել ինձ։ Հը՛մ... ափսոս որ այստեղ օդ չկա», ավելացրեց նա։ «Տոթ է... գլուխս ավելի շատ է պտտվում... միտքս էլ...»։

Նա իր մեջ սարսափելի խառնակություն էր զգում։ Վախենում էր, որ անկարող կլինի ինքն իրեն տիրապետել։ Նա աշխատում էր կառչել որևէ բանից, մտածել բոլորովին կոզմնակի բաների մասին, բայց այդ ամենևին չէր հաջողվում։ Սակայն գործավարը խիստ հետաքրքրում էր նրան, նա ուզում էր գործավարի դեմքից որևէ բան կռահել, հասկանալ նրան։ Դա շատ չահել, մոտ քսաներկու տարեկան մի մարդ էր թուխ ու աշխույժ դեմքով, որով իր տարիքից ավելի մեծ էր թվում։ Հագնված էր մոդայով ու պճնամոլի նը-

ման, ծոծրակին՝ մազաբաժան։ Լավ սանրվածք էր արել և անուշահոտ օծանելիք քսել։ Եղունգները մաքրած էր խոզանակով։ Սպիտակ մատների վրա կային բազմաթիվ մատանիներ, բաճկոնակի վրա՝ ոսկե շղթաներ։ Այստեղ գտնվող մի օտարերկրացու նա նույնիսկ ֆրանսերեն մի երկու խոսք ասաց, այն էլ միանգամայն բավարար։

— Լուիզա Իվանովնա, լավ կլիներ նստեիք,— անցողակի ասաց նա փարթամ հագնված, բոսորակարմիր դեմքով կնոջը, որը դեռ էլի կանգնած էր ու կարծես չէր համարձակվում՝ առանց հրավերի նստել, թեև կողքին աթոռ էր դրված։

— Ich danke[1],— ասաց նա ու կամացուկ, մետաքսե զգեստի խշշոցով նստեց աթոռին։ Սպիտակ ժանյակներով զարդարված բաց-կապույտ նրա շրջազգեստը, որ ասես օդապարիկ լիներ, տարածվեց աթոռի շուրջը՝ բռնելով սենյակի համարյա կեսը։ Զգացվեց օծանելիքի բույրը։ Բայց տիկինը ակներևաբար երկչոտում էր, որ գրավում է սենյակի կեսը և որ իրենից օծանելիքի հոտ է փչում, թեև ժպտում էր միաժամանակ թե վախկոտությամբ ու թե լկտիարար, բայց ակներև անհանգստությամբ։

Սգաշորով կինը, վերջապես, ավարտեց իր գործը ու վեր կացավ։ Հանկարծ մի փոքր աղմկալի, միանգամայն կտրիճաբար և յուրաքանչյուր քայլափոխում մի տեսակ առանձնահատուկ ձևով թոթվելով ուսերը, ներս մտավ մի ապա, հովարավոր և գլխարկանիշով գլխարկը գցեց սեղանին ու նստեց բազկաթոռին։ Տեսնելով նրան, փարթամ տիկինը ուղղակի վեր թռավ տեղից ու ապա մի ինչ-որ առանձին ցընծությամբ սկսեց ծնկածալ ողջույն տալ. բայց ապան ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա վրա, իսկ տիկինը այլևս չհամարձակվեց նստել նրա ներկայությամբ։ Ապան պորուչիկ էր, թաղային վերակացուի օգնականը, դեպի երկու կողմը հորիզոնադիր ցցված, շիկավուն բեղերով ու չափազանց մանր դիմագծերով, որոնք, սակայն, բացի որոշ լկտիությունից, առանձին ոչինչ չէին արտահայտում։ Նա խեթ-խեթ և մասամբ գայրույթով նայեց Ռասկոլնիկովին, որը չնայած խիստ վատ իր կոստյումին և իր նկատմամբ ստորացուցիչ

---

[1] Շնորհակալ եմ (գերմ.)։

վերաբերմունքին, արժանավայել կեցվածք էր պահպանում. Նա անզգուշաբար չափազանց երկար ու շիտակ նայեց պորուչիկին, այնպես որ սա նույնիսկ վիրավորվեց։

— Դու ի՞նչ կուզեիր,— բղավեց նա՝ հավանորեն զարմանալով, որ այդպիսի ցնցոտիավորը չի էլ մտածում շփոթվել նրա կայծակնացայտ հայացքից։

— Կանչել են... Մանուցագրով...— մի կերպ պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Նա իրենից, ուսանողից, փող բռնագանձելու գործով է եկել,— շտապեց հայտնել գործավարը՝ հայացքը կտրելով թղթից։ — Ահա, կարդացեք,— և նա Ռասկոլնիկովին մեկնեց մի տետրակ՝ ցույց տալով կարդալու տեղը։

«Փո՞ղ, ի՞նչ փող»,— մտածեց Ռասկոլնիկովը,— «Բայց ... ուրեմն հավանորեն այն չէ»։ Եվ նա ցնցվեց ուրախությունից։ Նա հանկարծակի մեծագույն, անասելի թեթևություն զգաց։ Ուսից թափվեց ծանր բեռը։

— Իսկ դուք ո՞ր ժամին պետք է ներկայանայիք, հարգելի պարոն,— բղավեց պորուչիկը՝ հայտնի չէ ինչից ավելի ու ավելի վիրավորվելով,— ձեզ գրում են իններին, իսկ հիմա արդեն տասներկուերորդ ժամն է։

— Մանուցագիրը ինձ բերին ընդամենը քառորդ ժամ առաջ,— բարձրաձայն և ուսի վրայով պատասխանեց Ռասկոլնիկովը, որ նույնպես բարկացել էր հանկարծակի և իր համար անսպասելի կերպով և դրա մեջ նույնիսկ որոշ հաճույք էր գտնում։ — Ու ես եկա, թեև հիվանդ եմ, տենդով բռնված։

— Մի՛ բարեհաճեք գոռալ։

— Ես չեմ գոռում, այլ շատ հանգիստ եմ խոսում, այդ դուք եք գոռում ինձ վրա. իսկ ես ուսանող եմ և թույլ չեմ տա ինձ վրա գոռալ։

Օգնականը այնքան կատաղեց, որ առաջին րոպեին նույնիսկ ոչինչ չկարողացավ ասել, և միայն ինչ-որ շիթեր թռան նրա շրթունքներից։ Նա տեղից վեր թռավ։

— Հաճե-ցեք լռե-ե՛լ։ Դուք ատյանում եք։ Մի՛ կոպտե-եք, պարոն։

— Ավելի դուք էլ եք ատյանում,— գոչեց Ռասկոլնիկովը, — բացի այն, որ գոռում եք, պապիրոս եք ծխում, հետևա-

պես մեզ բոլորիս արհամարհում եք։— Այս ասելով, Ռասկոլնիկովը անասելի հաճույք զգաց։

Գործավարը ժպտալով նայում էր նրանց։ Տաքարյուն պորուչիկը ըստ երևույթին շփոթված էր։

— Այդ ձեր գործը չէ,— ըզավեց նա մի տեսակ անբնականորեն բարձր,— բարեհաճեցեք պատասխան տալ, որ պահանջում են ձեզնից։ Ցույց տվեք դրան, Ալեքսանդր Գրիգորևիչ։ Ձեր դեմ զանգատներ կան։ Փող չեք վճարում։ Բազեիս տեսեք։

Բայց Ռասկոլնիկովը արդեն չէր լսում և ագահությամբ հափշտեց թուղթը՝ արագորեն փնտրելով խնդրի լուծումը։ Կարդաց մեկ, երկու անգամ ու չհասկացավ։

— Սա ի՞նչ է,— հարցրեց նա գործավարին։

— Դրանով ձեզնից փող են պահանջում ըստ պարտագրի, բռնագանձման կարգով։ Դուք պետք է կամ վճարեք, ավելացրած բոլոր ծախքերը, տույժերը և այլն, կամ գրավոր պատասխան տաք, թե երբ կարող եք վճարել, ու դրա հետ մեկտեղ պարտավորվեք մինչև վճարելը չհեռանալ մայրաքաղաքից, չվաճառել և չթաքցնել ձեր գույքը։ Իսկ փոխատուն կարող է վաճառել ձեր գույքը ու ձեզ հետ վարվել օրենքների համաձայն։

— Բայց ես... ոչ ոքի պարտք չեմ։

— Այդ արդեն մեր գործը չէ։ Իսկ մեզ մոտ ահա ստացվել է բռնագանձման համար ներկայացրած, ժամկետն անցկացրած և օրենքով բողոքարկված հարյուր տասնհինգ ռուբլու պարտագիր, որը դուք ինքներ ամիս առաջ տվել եք կոլեգիական ասեսորի այրի Զարնիցինային և որը այրի Զարնիցինայից վճարմամբ անցել է արքունի խորհրդական Ձերարովին, ու մենք էլ սրանով ձեզ հրավիրում ենք պատասխան տալ։

— Բայց չէ՞ որ նա իմ տանտիրուհին է։

— Հետո ի՞նչ, որ տանտիրուհին է։

Գործավարը նրան նայում էր ցավակցության ու միևնույն ժամանակ որոշ հրճվանքի, զիջողական ժպիտով, որպես մի նորելուկի, որին հենց նոր են սկսում փորձել. «Հը՛, ինչպես ես հիմա քեզ զգում»,— մտքում ասում էր նա։ Բայց Ռասկոլնիկովը հիմա ի՞նչ, ի՞նչ գործ ուներ պարտագրի, տույժի հետ։ Արդյո՞ք արժեր, որ նա այժմ որևէ չափով ան-

հանգստանար դրանից կամ դրա վրա անգամ որևէ ուշադրություն գարձներ։ Նա կանգնել էր, կարդում էր, լսում, պատասխանում էր, նույնիսկ ինքն էլ հարցեր էր տալիս, բայց այդ ամենը մեքենայարար էր անում։ Ինքնապահպանման հրճվա՛նք, փրկությո՛ւն ահավոր վտանգից. ահա թե ինչն էր այդ բոպեին համակում նրա ամբողջ էությունը առանց կանխատեսման, առանց անալիզի, առանց գալիք գուշակությունների ու կռահումների, առանց կասկածների և առանց հարցերի։ Դա լիակատար, անմիջական, զուտ անասնական բերկրանքի պահ էր։ Բայց հենց այդ բոպեին գրասենյակում շանթ ու կայծակի պես մի բան պատահեց։ Պորուչիկը, որ գեռ ամբողջ հոգով ցնցված էր իր նկատմամբ եղած անհարգալից վերաբերմունքից, թունդ բորբոքվելով ու ակնթարթորեն ցանկանալով պաշտպանել իր տուժած ինքնասիրությունը, զայրացած հարձակվեց դժբախտ «փարթամ տիկնոջ» վրա, որը նրան նայում էր միանգամայն հիմար ժպիտով հենց այն բոպեից սկսած, երբ նա ներս մտավ։

— Հը, անիծվածի մեկը,— հանկարծ բղավեց նա ամբողջ կոկորդով (սգաշորով կինը արդեն գնացել էր),— անցած գիշերը քեզ մոտ ի՞նչ է կատարվել, հը՞։ Էլի խայտառակություն, տուրուգմբոց ես սարքում ամբողջ փողոցով մեկ։ Էլի ծեծկռտոց ու հարբեցողություն։ Ուզում ես բա՞նտ ընկնել, հա՞։ Չէ՞ որ ես արդեն քեզ ասել եմ, տասն անգամ քեզ նախազգուշացրել եմ, որ տասնմեկերորդ անգամ չեմ ների։ Իսկ գու էլի, էլի չես խրատվում, ա՛յ ջադու, ա՛յ նզովված։

Ռասկոլնիկովի ձեռքից նույնիսկ ընկավ թուղթը, և նա ապշած նայեց փարթամ կնոջը, որին այդպես անպատկառորեն շշպռում էին. սակայն շուտով գլխի ընկավ, թե ինչումն էր բանը, և իսկույն այդ ամբողջ պատմությունը սկսեց նույնիսկ շատ դուր գալ նրան։ Նա լսում էր հաճույքով, այնպես, որ ուզում էր նույնիսկ քրքջալ, քրքջալ, քրքջալ... Նրա բոլոր ջղերը կարծես ցատկոտում էին։

— Իլյա Պետրովիչ,— հոգացողությամբ ասաց գործավարը, բայց առայժմ կանգ առավ, որովհետև ցասկոտած պորուչիկին անկարելի էր զսպել այլ կերպ, քան ձեռքից բռնելով, մի բան, որ նա գիտեր սեփական փորձից։

Ինչ վերաբերում է փարթամ կնոջը, ապա սկզբում նա ուղղակի ցնցվում էր շանթ ու կայծակից. բայց տարօրինակ բան. որքան շատանում և թնդանում էին հայհոյանքները, այնքան նա սիրալիր տեսք էր ընդունում, այնքան հմայիչ էր դառնում նրա ժպիտը, որ ուղղված էր ահարկու պորուչիկին։ Նա մանր-մանր քայլում էր տեղում և շարունակ ծընկածալ ողջույն էր տալիս, անհամբերությամբ սպասելով, որ վերջապես իրեն էլ թույլ տան խոսել, ու նրա սպասածը կատարվեց։

— Ինձ մոտ ոչ մի աղմուկ ու տուրուզմբոց չի եղել, պ. կապիտան,— հանկարծ բլբլացրեց նա, ասես սիսեռ էին թափում. նա խոսում էր գերմաներեն թունդ ակցենտով, թեպետև ռուսերեն աշխույժ կոտրատելով, —ու ոչ մի, ոչ մի շկանդալ չի եղել, իսկ նա եկավ հարբած, ու այդ բոլորը ես կպատմեմ, պ. կապիտեն, իսկ ես մեղավոր չեմ... Իմ պահած տունը կարգին է, պ. կապիտեն, ու վարվեցողությունը կարգին է, պ. կապիտեն, ու ես, միշտ, միշտ ինքս ոչ մի շկանդալ չեմ ուզեցել։ Իսկ նա եկավ բոլորովին հարբած, հետո էլ դարձյալ հրեք շիշ պահանջեց, հետո էլ բարձրացրեց ոտքը ու սկսեց ոտքով դաշնամուր նվագել, իսկ դա ամենևին լավ չէ կարգին տան մեջ, ու նա ջարդեց դաշնամուրը, ու ես ասի, որ դա ամենևին, ամենևին էլ մարդավարի վարմունք չէ։ Իսկ նա մի շիշ վերցրեց ու սկսեց բոլորի հետևից հրել շշով։ Ես շուտով կանչեցի դռնապանին, ու Կարլը եկավ, նա խփեց ու վնասեց Կարլի աչքը, Հենրիետայի աչքին էլ խփեց ու վնասեց, ինձ էլ հինգ անգամ ապտակ կերցրեց։ Եվ դա այնպե՞ս անվայել բան է կարգին տան մեջ, պ. կապիտեն, ու ես լաց էի լինում։ Իսկ նա բաց արեց ջրանցքի կողմի լուսամուտը ու կանգնեց լուսամուտին ու վժվժաց խոզի ճուտի նման, այդ էլ հո խայտառակություն է։ Ինչպե՞ս կարելի է լուսամուտից փողոցով մեկ վժվժալ ճուտի պես։ Ֆո՛ւյ-ֆո՛ւյ-ֆո՛ւյ։ Կարլը քաշեց նրա ֆրակի փեշից, որ նա ցած իջնի, ու ճիշտն ասեմ, պ. կապիտեն, պատռեց փեշը։ Ու հարբածը հետո գոռում-գոչում էր, որ իրեն տասնհինգ մանեթ ուղարկ վճարեն։ Ու ես ինքս, պ. կապիտեն, նրան հինգ մանեթ վճարեցի։ Նա անապնիվ հյուր է, պ. կապիտեն, ու ամեն տեսակ շկանդալ է անում։ — Ես,— ասում է,— ձեզ վրա մի մեծ սատիրա կգր-

ռեմ, ես կարող եմ բոլոր թերթերում ձեր դեմ ամեն տեսակ բան գրել։

— Ուրեմն գրողների՞ց է։

— Այո, պ. կապիտան, և ինչպիսի՜ անազնիվ հյուր է, պ. կապիտան, երբ մտնում է կարգին տունը...

— Դե, դե, բավական է։ Ես արդեն քեզ ասել եմ, ասել, ես հո ասել եմ քեզ...

— Իլյա Պետրովիչ,— նորից լուրջ տոնով ասաց գործավարը։ Պորուչիկը արագ նայեց նրան. գործավարը թեթևակի գլխով արեց։

—... Ուրեմն ահա քեզ իմ վերջին ասելիքը, հարգելի Լավիզա Իվանովնա, և սա արդեն վերջին անգամը կլինի,— շարունակեց պորուչիկը,— եթե թեկուզ միայն մեկ անգամ էլ քո կարգին տանը սկանդալ լինի, ապա ես քեզ արդեն անց կնստեցնեմ, ինչպես ասվում է բարձր ոճով։ Լսո՞ւմ ես։ Այդպես ուրեմն, գրականագետը, հեղինակը «կարգին տանը» փեշի համար հինգ ռուբլի է վերցրել։ Ա՜յ, թե ինչ մարդիկ են դրանք, հեղինակները, —ու պորուչիկը արհամարհական հայացք նետեց Ռասկոլնիկովի վրա։ — Երկու օր առաջ մի պանդոկում նույնպես նման մի պատմություն եղավ. այդպիսի մեկը ճաշեց ու չի ուզում վճարել. «Ես,— ասում է,— ձեր մասին սատիրա կգրեմ»։ Անցյալ շաբաթ շոգենավում մի ուրիշը ամենակեղտոտ խոսքեր ասաց մի պետական խորհրդականի պատվարժան ընտանիքին, նրա կնոջն ու աղջկան։ Օրերս մի հրուշակագործանից հրելով դուրս վռնդեցին այդպիսի մեկին։ Ահա թե ինչպիսին են այդ հեղինակները, գրականագետները, ուսանողները, մունետիկները... Թյո՜ւ։ Իսկ գու գնա, Լավիզա Իվանովնա, ես ինքս կանցնեմ քեզ մոտ... այն ժամանակ կգո՜ւյշ. լսեցի՞ր։

Լուիզա Իվանովնան շտապեց սիրալիրությամբ ծնկածալ ողջույն տալ դեպի բոլոր կողմերը ու այդ կերպ ետ-ետ գնաց մինչև դուռը. բայց դռան շեմքին հետույքով հրեց բարեկազմ մի սպայի, որը շիտակություն արտահայտող և զվարթ գեմքով էր ու փարթամ, խիտ, բաց-շիկավուն այտամորուքով։ Դա ինքը Նիկոդիմ Ֆոմիչն էր, թաղային վերակացուն։ Լուիզա Իվանովնան շտապեց ծնկածալ ողջույն տալ՝ կռանալով

համարյա մինչև հատակը, ու արագ, մանր քայլերով, շտապելով, գրասենյակից դուրս թռավ։

— Էլի՛ դղրդյուն, էլի՛ շանթ ու կայծակ, մրրի՛կ, փոթորի՛կ,— սիրալիր ու բարեկամաբար դիմեց Նիկոդիմ Ֆոմիչը Իլյա Պետրովիչին,— էլի՛ վրդովեցին սիգտոդ, էլի զայրացար. դեռ սանդուղքից էի լսում։

— Դե ի՞նչ արած,— շիտակ անփութությամբ (և նույնիսկ կարծես մի քիչ բարկացկոտ) ասաց Իլյա Պետրովիչը, ինչ-որ թղթերով անցավ դեպի մի այլ սեղան՝ յուրաքանչյուր քայլափոխում գեղեցիկ թոթվելով ուսերը. ձախ ոտքը մեկնելիս առաջ էր տալիս ձախ ուսը, աջ ոտքը մեկնելիս՝ աջ ուսը։— Ահա, հաճեցեք տեսնել. պարոն հեղինակը թե ուսանողը, այսինքն՝ նախկին ուսանողը, փող չի վճարում, մուրհակներ է տվել, բնակարանը չի ազատում, նրա դեմ անընդհատ գանգատներ են ստացվում, սակայն բարեհաճում է դժգոհություն հայտնել, որ ես իր ներկայությամբ պապիրոս ծխեցի։ Ինքը ստորություն է անում, ուրիշին կպչում. ահա, հաճեցեք նայել դրան. ահա նա իր հիանալի տեսքով։

— Աղքատությունը պակասություն չէ, բարեկամս, դե ինչ արած, հայտնի բան է, դյուրաբորբոք ես, վառոդ ես, չես կարողացել վիրավորանքը տանել։ Դուք նրան ինչ-որ պատճառով նեղացել եք նրանից ու ինքներդ էլ ձեզ չեք զսպել,— շարունակեց Նիկոդիմ Ֆոմիչը՝ սիրալիր դիմելով Ռասկոլնիկովին,— բայց դուք իզուր եք այդպես արել. ես ձեզ կասեմ, որ նա մի-ան-գա-մա՛յն ազնիվ մարդ է, բայց վառոդ է, վառոդ, տաքանում է, պայթում, այրվում ու մեղմանում, ամեն ինչ անցնում է։ Վերջը հենց միայն ոսկի սիրտն է մնում։ Նրան գնդում էլ «պորուչիկ-վառոդ» էին անվանում։

— Եվ ինչպիսի՛ գունդ էր,— բացականչեց Իլյա Պետրովիչը, խիստ գոհ լինելով, որ այդպես հաճելի շոյեցին իրեն, բայց դեռ շարունակելով նեղացած լինել։

Ռասկոլնիկովը հանկարծ ցանկացավ նրանց բոլորին խիստ հաճելի որևէ բան ասել։

— Ներեցեք, կապիտան,— սկսեց նա բոլորովին առանց քաշվելու, հանկարծ դիմելով Նիկոդիմ Ֆոմիչին,— մտեք նաև իմ դրության մեջ... Ես պատրաստ եմ նույնիսկ ներողություն խնդրելու նրանից, եթե իմ կողմից որևէ անփույթ վերաբեր-

մունք է եղել։ Ես աղքատ ու հիվանդ ուսանող եմ՝ չքավորությունից ընկճված (նա այդպես էլ ասաց՝ «ընկճված»)։ Ես նախկին ուսանող եմ և հիմա չեմ կարողանում ուսումս շարունակել, որովհետև ինձ պահելու հնարավորություն չունեմ. բայց ես փող կստանամ... Ունեցած ունեմ մայր ու քույր ունեմ... Ինձ փող կուղարկեն ու ես... կվճարեմ։ Իմ տանտիրուհին բարի կին է, բայց որովհետև ես դասեր չունեմ և արդեն չորս ամիս նրան փող չեմ վճարում, այնքան է չարացել, որ ինձ նույնիսկ ճաշ չի ուղարկում... Ես բոլորովին չեմ հասկանում, թե այդ ինչ մուրհակ է։ Հիմա նա ինձնից այդ պարտատոմսով փող է պահանջում, ես որտեղի՞ց վճարեմ, ինքներդ դատեցեք...

— Բայց սիր դա մեր գործը չէ,— դարձյալ ասաց գործավարը։

— Ներեցեք, ներեցեք, ես ձեզ հետ միանգամայն համաձայն եմ, բայց թույլ տվեք բացատրեմ,— նորից վրա բերեց Ռասկոլնիկովը՝ դիմելով ոչ թե գործավարին, այլ դարձյալ Նիկոդիմ Ֆոմիչին, բայց ամեն կերպ աշխատելով դիմել նաև Իլյա Պետրովիչին, թեև սա համառորեն ձևացնում էր, որ թղթերով է զբաղված և արհամարհաբար ուշադրություն չի դարձնում նրա վրա,— թույլ տվեք ես էլ իմ կողմից բացատրեմ, որ ես նրա մոտ ապրում եմ արդեն մոտ երեք տարի, հենց գավառից ժամանելուց սկսած, ու առաջ... առաջ... հա, ինչո՞ւ չխոստովանեմ, հենց սկզբից ես խոստում տվի, որ կամուսնանամ նրա աղջկա հետ, խոստումս բանավոր էր, ոչ մի բանի չպարտավորեցնող... այդ աղջիկը... սակայն... ինձ նույնիսկ դուր էր գալիս... թեև ես սիրահարված չէի... մի խոսքով, դե ջահելություն էր, էլի, այսինքն՝ ուզում եմ ասել, որ տանտիրուհիս այն ժամանակ ինձ շատ փող էր տրամադրում, ու ես մասամբ շռայլ կյանք էի վարում... Ես շատ թեթևամիտ էի...

— Ձեզնից ամենևին էլ այդպիսի գաղտնիքներ չեն պահանջում, հարգելի պարոն, ու ժամանակ էլ չկա դրանք լսելու,— կոպտաբար և հրճվանքով վրա բերեց Իլյա Պետրովիչը, բայց Ռասկոլնիկովը տաքանալով ընդհատեց նրան, թեև հանկարծակի զգաց, որ խոսելը չափազանց ծանր էր իր համար։

— Բայց թույլ տվեք ինձ, թույլ տվեք պատմել... թե բա-

նը ինչպես է եղել... թեև դա ավելորդ է, համաձայն եմ ձեզ հետ։ Մի տարի առաջ այդ աղջիկը մեռավ տիֆից, ես էլի մընում էի այդ տանը։ Երբ տանտիրուհին տեղափոխվեց այժմյան բնակարանը, բարեկամաբար ասաց ինձ... որ միանգամայն վստահ է իմ նկատմամբ... բայց արդյոք ես չե՞մ ուզենա իրեն տալ հարյուր քսան ռուբլու այդ պարտագիրը. այդ էր նրան տալիք իմ ամբողջ պարտքը. թույլ տվեք. նա ասաց, թե հենց որ ես այդ թուղթը տամ իրեն, նա էլի ինձ փոխարինարար փող կտա, ինչքան որ ուզենամ, թե ինքը իր հերթին երբեք, երբիք չի օգտվի այդ թղթից, մինչև որ ես ինքս վճարեմ. նա հենց այդպես էլ ասաց... Եվ ահա այժմ, երբ ես դասեր չունեմ ու սոված եմ մնացել, նա գանգատ է տալիս այդ փողը ինձնից բռնագանձելու համար... Հիմա ես ի՞նչ ասեմ։

— Այդ բոլոր սենտիմենտալ մանրամասնությունները մեզ չեն վերաբերում, հարգելի պարոն,— լկտիաբար ընդհատեց Իլյա Պետրովիչը,— դուք պետք է պատասխան և պարտավորագիր տաք, իսկ եթե դուք բարեհաճել եք սիրահարված լինել և այդ տեսակ տրագիկ պահեր ապրել, դա բոլորովին մեր գործը չէր։

— Դե լավ էլի... այդ դաժանություն է...— փնթփնթաց Նիկոդիմ Ֆոմիչը, նստեց սեղանի մոտ ու սկսեց նույնպես թղթեր ստորագրել։ Նա իրեն մի տեսակ անհարմար զգաց։

— Դե, գրեցեք,— ասաց գործավարը Ռասկոլնիկովին։

— Ի՞նչ գրեմ,— մի առանձին կոպտությամբ հարցրեց Ռասկոլնիկովը։

— Ես ձեզ կթելադրեմ։

Ռասկոլնիկովին թվաց, թե իր խոստովանությունից հետո գործավարը սկսել է իր նկատմամբ անփույթ և արհամարհական վերաբերմունք ցույց տալ. բայց, տարօրինակ բան, հանկարծ նա զգաց, որ իր համար բոլորովին միևնույն է, թե ով ինչ կարծիքի է իր մասին, և այդ փոփոխությունը կատարվեց գրեթե մեկ ակնթարթում, մեկ բոպեում։ Եթե նա ուզենար մի քիչ մտածել, ապա, իհարկե, կզարմանար, թե ինչպես կարող էր մի բոպե առաջ այդպես խոսել նրանց հետ և նույնիսկ հրամցնել իր զգացմունքները։ Եվ որտեղից է՞լ հայտնվեցին այդ զգացմունքները։ Իսկ հի-

մա ընդհակառակը, եթե հանկարծ սենյակը լցվեր ոչ թե թաղապետներով, այլ իր ամենաառաջին բարեկամներով, ապա այդ դեպքում էլ ինքը կարծես թե անկարող կլիներ նրանց որևէ մարդկային խոսք ասել, այնքա՞ն հանկարծակի դատարկվել էր իր սիրտը։ Տանջալից, անհուն մենության ու խորթացման մռայլ զգացումը հանկարծ անդրադարձավ նրա հոգու և գիտակցության վրա։ Իլյա Պետրովիչի հանդեպ իր սրտի զեղումների նվաստությունը չէր, իր նկատմամբ պորուչիկի ծաղրանքի նվաստությունը չէր, որ հանկարծ այդպես տակնուվրա արեց իր սիրտը։ Օ, այժմ նա իսկապես անտարբեր էր դեպի հենց իր ստորությունը, դեպի այդ բոլոր պատվազգացությունները, պորուչիկները, գերմանուհիները, բանապանծումները, գրասենյակները և այլն, և այլն։ Եթե իրեն այդ բոպեին այրման դատապարտեին, ապա այդ դեպքում էլ նա ոչ մի շարժում չէր անի, նույնիսկ հազիվ թե ուշադրությամբ լսեր դատավճիռը։ Նրա մեջ իրեն բոլորովին անծանոթ մի ինչ-որ նոր, հանկարծակի ու երբեք չեղած բան էր կատարվում։ Նա չէ թե հասկանում, այլ զգացողության ամբողջ ուժով զգում էր, որ ոչ միայն քիչ առաջվա սրտազեղություններով, այլ նույնիսկ ինչով էլ որ լիներ, ինքը արդեն չէր կարողանա դիմել թադամասի ոստիկանատանը գտնվող այդ մարդկանց ու եթե այնտեղ լինեին հարազատ եղբայրներ ու քույրեր, այլ ոչ լեհ ոստիկանատան պորուչիկներ, ապա այդ դեպքում էլ ինքը չէր դիմի նրանց ու նույնիսկ կյանքի ոչ մի դեպքում էլ այդ բանը չէր անի. մինչև այդ բոպեն նա դեռ երբեք այդպիսի տարօրինակ ու սարսափելի զգացում չէր ապրել։ Եվ որ ամենից տանջալին էր, դա ավելի շուտ զգացում էր, քան գիտակցություն, քան հասկացողություն. անմիջական զգացում էր, մինչև այժմ կյանքում ապրած բոլոր զգացումներից ամենատանջալին։

Գործավարը սկսեց նրան թելադրել այդպիսի դեպքերում սովորական պատասխանի ձևը, այսինքն՝ թե չեմ կարող վճարել, իրոստանում եմ վճարել այսինչ ժամկետում (երբևէ), քաղաքից չեմ մեկնի, գույքս ոչ կծախեմ, ոչ էլ նվիրեմ որևէ մեկին և այլն։

— Դուք չեք կարողանում գրել, գրիչը ընկնում է ձեր ձեռքից։ Դուք հիվա՞նդ եք,— ասաց գործավարը՝ հետաքրքրությամբ նայելով Ռասկոլնիկովին։

— Այո... գլուխս պտտվում է... շարունակեցեք թելադրել։

— Վերջացավ, ստորագրեցեք։

Գործավարը վերցրեց թուղթը և զբաղվեց ուրիշ այցելուներով։

Ռասկոլնիկովը վերադարձրեց գրիչը, բայց փոխանակ վեր կենալու և գնալու, արմունկները հենեց սեղանին և գլուխն առավ ձեռքերի մեջ։ Ասես մեխ խփեցին նրա կատարին։ Հանկարծ իր գլխում մի տարօրինակ միտք ծագեց. հենց այժմ վեր կենալ, մոտենալ Նիկոդիմ Ֆոմիչին ու ներքան պատմել ամեն ինչ, որ կատարվել էր նախորդ օրը, ամեն ինչ, մինչև վերջին մանրամասնությունը, այնուհետև նրա հետ գնալ իր բնակարանը և ցույց տալ անկյունում, խոռոչում գտնվող իրերը։ Այդ տենչը այնքան ուժեղ էր, որ նա արդեն տեղից վեր կացավ այն կատարելու։ «Չմտածե՞մ գոնե մի րոպե»,— անցավ նրա մտքով։ — «Ոչ, ավելի լավ է առանց մտածելու ուսերիցս թոթափեմ այս ծանրությունը»։ Սակայն հանկարծ նա կանգ առավ քարացածի նման. Նիկոդիմ Ֆոմիչը տաքացած խոսում էր Իլյա Պետրովիչի հետ ու նա լսեց հետևյալ խոսքերը.

— Այդ անկարելի է, երկուսին էլ կազատեն։ Նախ՝ ամեն ինչ հակասական է. ինքներդ դատեցեք, եթե դա իրենք էին արել, ինչո՞ւ պետք է կանչեին դռնապանին, իրենց մատնելու համա՞ր, ինչ է, թե՞ խորամանկություն բանեցնելու համար։ Ոչ, դա անմիտ խորամանկություն կլիներ։ Եվ վերջապես, երկու դռնապանները և մի կին ուսանող Պեստրյակովին տեսել են հենց դարպասի մոտ, հենց այն րոպեին, երբ նա ներս էր մտնում. նա եկել էր երեք ընկերների հետ, դարպասի մոտ բաժանվել էր նրանցից և դեռ նրանց ներկայությամբ դռնապանին հարցրել սպառավի բնակարանը։ Ինչո՞ւ պետք է այդ հարցներ, եթե այդպիսի դիտավորությամբ էր գնում։ Իսկ Կոխը նախքան սպառավի մոտ գնալը կես ժամ նստել էր ներքևում, արծաթաջրող վարպետի մոտ,

և ճիշտ ութից քառորդ պակաս այնտեղից վերև էր գնացել։ Դե հիմա գլխի ընկեք...

— Բայց ներեցեք, այդ ինչպե՞ս էր, որ նրանք այդպիսի հակասության մեջ են ընկել. իրենք են հավատացնում, որ դուռը ծեծել են, և դա փակ է եղել, իսկ երեք րոպեից հետո, երբ եկել են դռնապանի հետ, դուռը բաց է եղել։

— Հենց այդ բանը. մարդապպանը անպայման ներսում է եղել և սողնակով փակել է դուռը. անշուշտ նրան այնտեղ կլռեցնեին, եթե Կոխը հիմարություն չաներ և ինքն էլ չգնար դռնապանին կանչելու։ Իսկ նա հենց այդ պահին էլ կարոտպել է իջնել սանդուղքով ու մի կերպ ծլկել նրանց կողքից։ Կոխը երկու հարյուր է խոշոկնքում. «Եթե ես այնտեղ մնալի, սատան է նա, մարդասպանը դուրս կթռչեր ու կապտով կոպտեր ինձ։ Նա ուզում է սատանի մոգությամբ կատարել, հա-հա-հա...

— Իսկ սպասողին ոչ ոք չի՞ տեսել։

— Ախր ո՞նց տեսնես, հո տուն չէ, նոյի տապան է,— ասաց գործավարը, որ լսում էր այդ խոսակցությունը։

— Գործը պարզ է, գործը պարզ է,— կտրուկ ասաց Նիկոդիմ Ֆոմիչը։

— Ոչ, գործը այնքան էլ պարզ չէ,— վրա բերեց Իլյա Պետրովիչը։

Ռասկոլնիկովը վերցրեց գլխարկը և քայլեց դեպի դուռը։ Բայց նա դռանը չհասավ...

Երբ նա ուշքի եկավ, տեսավ, որ նստել է աթոռին, որ իրեն աջ կողմից բռնել է ինչ-որ մի մարդ, որ ձախ կողմից կանգնած է մի ուրիշ մարդ՝ գեղին ջրով լցված գեղին բաժակը ձեռքին, որ Նիկոդիմ Ֆոմիչը կանգնել է իր առաջ և սևեռուն նայում է իրեն. նա աթոռից վեր կացավ։

— Այդ ի՞նչ է, դուք հիվա՞նգ եք,— բավական խիստ հարցրեց Նիկոդիմ Ֆոմիչը։

— Նա ստորագրելիս հազիվ էր շարժում գրիչը,— ասաց գործավարը՝ նստելով իր տեղը ու նայելով թղթերը։

— Վաղո՞ւց է, որ դուք հիվանդ եք,— իր տեղից բղավեց Իլյա Պետրովիչը՝ նույնպես տնտղելով թղթերը։ Նա, իհարկե, նույնպես զննում էր հիվանդին, երբ սա ուշաթափված էր, բայց իսկույն ետ քաշվեց, երբ հիվանդը ուշքի եկավ։

— Երեկվանից...— փնթփնթալով պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Իսկ երեկ տանից դուրս եկե՞լ եք։

— Այո։

— Հիվանդ վիճակո՞ւմ։

— Հիվանդ վիճակում։

— Ո՞ր ժամին։

— Երեկոյան ժամը ութին։

— Իսկ ո՞ւր եք գնացել, թույլ տվեք հարցնել։

— Փողոց։

— Կարճ և պարզ։

Ռասկոլնիկովը պատասխանում էր խիստ տոնով, կցկտուր, բոլորովին գունատված ինչպես կտավ, սև ու բորբոքված աչքերը չկտրելով Իլյա Պետրովիչի հայացքից։

— Նա հազիվ է ոտքերի վրա կանգնում, իսկ դու...— միջամտեց Նիկոդիմ Ֆոմիչը։

— Ոչինչ,— հանգիստ պատասխանեց Իլյա Պետրովիչը։ Նիկոդիմ Ֆոմիչը ուզում էր ինչ-որ բան ավելացնել, բայց լռեց՝ նայելով գործավարին, որը նույնպես աչքերը հառել էր Իլյա Պետրովիչի վրա։ Հանկարծ բոլորը լռեցին։ Տարօրինակ էր։

— Դեհ, լավ,— եզրափակեց Իլյա Պետրովիչը,— մենք ձեզ չենք պահում։

Ռասկոլնիկովը դուրս եկավ։ Նա դեռ կարողանում էր լսել, թե ինչպես իր դուրս գալուց հետո հանկարծ աշխույժ խոսակցություն սկսվեց, որի մեջ ամենից պարզ լսվում էր Նիկոդիմ Ֆոմիչի տարակուսանք արտահայտող ձայնը... Ռասկոլնիկովը փողոցում բոլորովին ուշքի եկավ։

«Խուզարկություն, խուզարկություն, այժմ խուզարկություն»,— քթի տակ կրկնում էր նա՝ շտապելով տեղ հասնել, — «ավազակներ, կասկածում են»։ Առաջվա վախը դարձյալ ոտից գլուխ համակեց նրան։

II

«Հապա ի՞նչ կլինի, եթե արդեն խուզարկություն է եղել. ի՞նչ կլինի, եթե նրանց տեսնեմ հենց իմ սենյակում»։

Բայց ահա և նրա սենյակը։ Ոչինչ և ոչ ոք չկա. ոչ ոք այնտեղ չի մտել։ Նույնիսկ Նաստասյան էլ ոչ մի բանի ձեռք չի տվել։ Բայց, տե՛ր աստված, ինչպե՞ս կարող էր ինքը այդ բոլոր իրերը թողնել այդ խառնաշում։

Նա նեղվեց անկյունը, ձեռքը տարավ պաստառի տակ, սկսեց հանել իրերը և լցնել գրպանները։ Դրանք ընդամենը ութ հատ էին. երկու փոքրիկ տուփ՝ զինդերով կամ ինչ-որ նման բանով, նա լավ չնայեց. հետո չորս հատ փոքրիկ, սեկն պատրոնները։ Մի չղթա փաթաթված էր ուղղակի թղթի թղթով։ Էլի ինչ որ մի բան թղթի թղթով, կարծես թե շրջանակ էր...

Նա բոլորը դրեց տարբեր գրպանները, վերարկուի գրպանները, թեղեր և անդրավարտիքի աջ, չդատարկված գրպանը, աշխատելով, որ իրերը աննկատելի լինեն։ Իրերի հետ վերցրեց նաև բանակը։ Այնուհետև սենյակից դուրս ելավ՝ այս անգամ նույնիսկ բոլորովին բաց թողնելով դուռը։

Նա գնում էր արագ ու հաստատ քայլերով, ու թեև զգում էր, որ բոլորովին ուժասպառ է եղել, բայց և այնպես գիտակցություններ տեղն էր։ Նա վախենում էր հետապնդումից, վախենում էր, որ կես ժամ հետո, քառորդ ժամ հետո թերևս կհրամանվի իրեն հետամուտ։ Հետևաբար, ինչ կերպ էլ լիներ, հարկավոր էր ժամանակին կորցնել հետքերը։ Հարկավոր էր դա պլուս բերել, բանի դեռ դեռ մի փոքր ուժ և գեթ արեվ պատասխան էր մնացել... Իսկ ո՞ւր գնալ։

Այդ արդեն վաղուց էր որոշված. «Բոլորը գցել ջրանցքը, ու ոչ մի հետք էլ չմնա, պրծավ-գնաց»։ Նա այդպես է որոշել դեռ գիշերը, պատանեկության մեջ, այն վայրկյաններին, երբ մի բանի անգամ փորձում էր վեր կենալ ու գնալ. նա այդ մտածում էր. «շուտ, շուտ, բոլորը դեն շպրտել»։ Սակայն բանից դուրս եկավ, որ դեն շպրտելը շատ դժվար է։

Արդեն մոտ կես ժամ, գուցե և դրանից էլ ավելի նա թափառում էր Եկատերինյան ջրանցքի առափնյա փողոցում և մի բանի անգամ նայում էր վայրէջքի սանդուղքներին, ուր

որ դրանց հանդիպում էր։ Բայց իր դիտավորությունը կատարելու մասին մտածել անգամ չէր կարելի, կամ լաստեր էին կանգնած հենց սանդուղքների մոտ և դրանց վրա լվացարարուհիները սպիտակեղեն էին լվանում, կամ նավակներ էին ափին կապված, ու ամենուրեք պարզապես վխտում էին մարդիկ, և այն էլ սսած, առափնյա փողոցներից, ամեն կողմից մարդիկ կարող էին տեսնել, նկատել. կասկածելի կթվար, որ մի մարդ դիտմամբ իջել է սանդուղքից, կանգ է առել և ինչ-որ բան է դցում ջուրը։ Իսկ ի՞նչ դուրս կգա, եթե պատյաններով իրերը ջրասույզ չլինեն ու լողան ջրի վրա։ Դե, իհարկե, այդպես էլ կլինի։ Ամեն մեկն էլ կտեսնի։ Առանց այդ էլ արդեն բոլորը հանդիպելիս նայում են, հայացքով զննում իրեն, կարծես թե հենց միայն իր հետ գործ ունեն։ «Ինչո՞ւ է այդպես, կամ գուցե ի՞նձ է այդպես թվում», մտածում էր նա։

Վերջապես, նրա գլխում միտք ծագեց, թե արդյոք ավելի լավ չի՞ լինի գնալ Նևայի ափը, որևէ տեղ։ Այնտեղ մարդիկ ավելի քիչ են, ավելի աննկատելի ու համենայն դեպս ավելի հարմար է և որ գլխավորն է, ինքը այս վայրերից հեռու կլինի։ Եվ նա հանկարծ զարմացավ. այդ ինչպես է, որ ինքը ամբողջ կես ժամ թափառում է տխուր ու անհանդիստ, այն էլ վտանգավոր տեղերում, ու գլխի չի ընկնում, որ պետք է այդպես վարվել։ Եվ ինքը անխոհեմաբար ամբողջ կես ժամ կորցրեց հենց միայն այն պատճառով, որ քնի մեջ, զառանցանքի մեջ այդպես էր որոշել։ Նա զառնում էր չափից դուրս ցրված և մոռացկոտ ու գիտեր այդ բանը։ Անպայման հարկավոր էր շտապել։

Նա Վ... պողոտայով գնաց դեպի Նևա։ Բայց ճանապարհին հանկարծ նաև այսպիսի միտք հղացավ. «Ինչո՞ւ գնալ Նևա, ինչո՞ւ իրերը գցել ջուրը. ավելի լավ չէ՞ գնալ շատ հեռու, որևէ տեղ, թեկուզ կղզիները, ու այնտեղ, որևէ ամայի վայրում, անտառում, թփի տակ հորել այս բոլորը ու թերևս հիշել այդ թուփը»։ Ու թեև նա զգում էր, որ այդ բոպեին ի վիճակի չէ ամեն ինչ պարզ ու խելամտորեն կշռադատել, այնուամենայնիվ այդ միտքը նրան անսխալ թվաց։

Բայց կղզիները գնալն էլ նրան չէր վիճակված, այլ ուրիշ բան պատահեց. Վ... պողոտայից դուրս գալով հրապարակ,

նա ձախ կողմում հանկարծ տեսավ բոլորովին խուլ պատերով շրջապատված մի բակի մուտքը։ Աջ կողմից, հենց դարպասի մուտքից դեպի բակի խորքն էր ձգվում հարևան քառահարկ տան խուլ, չսպիտակացրած պատը։ Ձախ կողմից, խուլ պատին զուգահեռ և նույնպես հենց դարպասի մուտքից քսան քայլ երկարությամբ դեպի բակի խորքն էր ձգվում մի փայտե ցանկապատ և ապա ծռվում դարձյալ ձախ կողմը։ Այդ մի խուլ ցանկապատված տեղ էր, ուր ինչ-որ առարկաներ էին թափթփված։ Այնուհետև բակի խորքից, ցանկապատի ետևից երևում էր ցածլիկ, մրակալած, քարաշեն սարայի անկյունը. երևի դա ինչ-որ արհեստանոցի մի մասն էր։

Այստեղ հավանաբար գտնվում էր կառնթաղործական կամ փայտանագործական ինչ-որ արհեստանոց կամ նմանն մի բան. համարյա հենց դարպասից սկսած ուղին էր տալիս ուստա ածխափոշին։ «Ահա թե որտեղ կարելի է գցել ու հեռանալ»,— հանկարծ մտածեց նա։ Բակում ոչ ոքի չնկատելով, նա դարպասից ներս մտավ ու հենց դրա մոտ տեսավ ցանկապատին կպցրած միզատար մի փողրակ (որ հաճախ սարքվում է այն տներում, ուր կան շատ գործարանային բանվորներ, արտելականներ, կառապաններ և այլն), իսկ փողրակի վերևում, հենց ցանկապատի վրա կավիճով, կոպիտ տառասխալներով գրված էր այսպիսի դեպքերում սովորական սրախոսությունը՝ «Ասֆեխ կանքնել արքելված է»։ Հետևարար բանը լավ էր հենց նրանով, որ այստեղ մտնելն ու կանգ առնելը ամենևին կասկածելի չէր թվա։ «Բոլոր իրերն էլ գցեմ որևէ տեղ ու հեռանամ», մտածեց Ռասկոլնիկովը։

Մի անգամ էլ նայելով շուրջը, նա արդեն ձեռքը տարավ գրպանը, ու հանկարծ արտաքին պատի մոտ, դարպասի ու փողրակի միջև, ուր ամբողջ տարածությունը արշինաչափ լայնություն ուներ, նկատեց մի մեծ, չտաշած, գուցե մոտավորապես մեկ ու կես փութ ծանրությամբ քար, որը կպած էր հենց փողոցի քարե պատին։ Այդ պատի դրսի կողմում փողոցն էր, մայթը, լսվում էր, թե ինչպես էին գնում ու գալիս անցորդները, որոնք այստեղ միշտ էլ շատ են լինում. բայց դարպասի ետևում նրան ոչ ոք չէր կարող տեսնել, եթե

միայն որևէ մեկը փողոցից ներս չմտներ, մի բան, որ միանգամայն հնարավոր էր, դրա համար էլ հարկավոր էր շտապել։

Նա կռացավ քարի վրա, երկու ձեռքով պինդ բռնեց վերևի մասից, հավաքեց իր բոլոր ուժերը և շուռ տվեց քարը։ Դրա տակ մի փոքրիկ փոս առաջացավ. նա անմիջապես սկսեց բոլոր իրերը հանել կրպանից ու դցել փոսը։ Քսակը դրեց իրերի վրա, ու էլի փոսի մեջ ազատ տեղ մնաց։ Այնուհետև նա կրկին բռնեց քարը, միանգամից շուռ տվեց դեպի առաջվա կողմը, ու քարը ընկավ իր նախկին տեղը, միայն թե առաջվանից մի քիչ ավելի բարձր էր թվում։ Ռասկոլնիկովը հավաքեց հողը և ոտքով տափատափեց քարի եզրերին։ Ոչինչ չէր նկատվում։

Այնուհետև նա դարպասից դուրս եկավ ու քայլեց դեպի հրապարակը։ Մի ակնթարթ նրան դարձյալ համակեց ուժեղ, հավիվ տանելի բերկրանքը, ինչպես ժամ առաջ այդ եղել էր ոստիկանության դրասենյակում։ «Հետքերը կորցված են։ Եվ ո՞ւմ, ո՞ւմ մտքով կարող է անցնել իրերը փնտրել այդ քարի տակ։ Գուցե դա տան կառուցման օրերից ընկած է այնտեղ, ու դեռ այդքան ժամանակ էլ կմնա։ Թեկուզև գտնեն, ո՞ւմ մտքով կանցնի, թե այդ ես եմ արել։ Ամեն ինչ վերջացած է, հանցանշաններ չկան։ Եվ նա ծիծաղեց։ Այո, նա հետո հիշում էր, որ համակվեց նյարդային կամացուկ, անլսելի, երկար ծիծաղով ու հա՜ ծիծաղում էր, երբ անցնում էր հրապարակով։ Բայց երբ ոտք դրեց Կ... բուլվարը, ուր երկու օր առաջ հանդիպել էր այն աղջկան, նրա ծիծաղը հանկարծ անցավ։ Նրա գլխում ուրիշ մտքեր ծագեցին։ Հանկարծ նրան թվաց, որ հիմա իր համար չափազանց զզվելի է անցնել այդ նստարանի կողքից, որի վրա ինքը նստել ու մտածում էր այն ժամանակ, աղջկա հեռանալուց հետո, ու սարսափելի ծանր կլինի դարձյալ հանդիպել այն երկարաբեղ քաղաքապահին, որին ինքը այն օրը քսան կոպեկ տվեց։ «Սատանան տանի նրան»։

Նա գնում էր՝ մտացրիվ ու չարացած նայելով շուրջը։ Այժմ նրա բոլոր մտքերը պտտվում էին ինչ-որ մի գլխավոր կետի շուրջը, և նա ինքը զգում էր, որ դա իրոք այդպիսի գլխավոր կետ է որ կա և որ այժմ, հատկապես այժմ ինքը

դեմ առ դեմ մոտեցել է այդ գլխավոր կետին, և դա երկու ամսից հետո նույնիսկ առաջին անգամն է կատարվում։

«Էհ, սատանան տանի այս ամենը», հանկարծ մտածեց նա անսպառ ցասման մոլուցքում։ «Դե որ սկսվեց, սկսվեց, էլի, գրողի ծոցը այդ էլ, նոր կյանքն էլ։ Տեր աստված, ի՞նչ հիմար բան է դա... Իսկ այսօր ես որքա՞ն եմ ստել ու ստորություն արել։ Որքա՞ն զարշելիորեն եմ քիչ առաջ քծնել ու խաղ արել վատթարագույն Իլյա Պետրովիչի հետ։ Էհ, սակայն այդ էլ անհեթեթություն է։ Թքել եմ նրանց բոլորի վրա, իմ քծնելու և խաղ անելու վրա։ Բանը այդ չէ, ամենևին այդ չէ...»։

Հանկարծ նա կանգ առավ. մի նոր, բոլորովին անսպասելի ու չափազանց պարզ հարց միանգամից շփոթեցրեց ու զառանցանքի մղեցրեց նրան։

«Եթե իսկապես այս ամբողջ գործը արված էր գիտակցորեն և ոչ թե հիմարաբար, եթե դու իրոք որոշակի և հաստատ նպատակ ունեիր, ապա ինչո՞ւ մինչև այժմ նույնիսկ չբացեցիր քսակը և չգիտես, թե ինչ էր ընկել ձեռքդ, ինչի համար էիր տարել բոլոր տանջանքները և գիտակցաբար այդպիսի ստոր, նողկալի, զարշելի բան արել։ Դու հո այժմ ուզում էիր դա, այդ քսակը ջուրը գցել բոլոր իրերով հանդերձ, որոնք նույնպես դեռ չէիր տեսել... Այդ ինչպե՞ս հասկանալ»։

Այո, գա այդպես է. այդ ամենը այդպես է։ Նա, սակայն, առաջ էլ այդ գիտեր, ու ամենևին էլ դա նոր հարց չէ իր համար. ու երբ գիշերով որոշել էր իրերը ջուրը գցել, որոշել էր առանց որևէ տատանման և առարկության, այլ այնպես, որ կարծես թե դա այդպես էլ պետք է լիներ, կարծես թե այլ կերպ չէր էլ կարող լինել... Այո, նա այդ բոլորը գիտեր և բոլորը հիշում էր. ու համարյա թե այդ որոշվել էր երեկ, հենց այն բոպեին, երբ ինքը բացել էր սնդուկը և դրա միջից պատյանով իրեր էր հանում... այդպես է, էլի...

«Սա նրանից է, որ ես խիստ հիվանդ եմ», ի վերջո մրոայլորեն եզրակացրեց նա, «ես ինքս չարչարեցի ու տանջեցի ինձ, ու ինքս չգիտեմ, թե ինչ եմ անում... Երեկ էլ, երկու օր առաջ էլ և այս ամբողջ ժամանակ տանջում էի ինձ... Դառողջանամ և... էլ ինձ չեմ տանջի... Իսկ եթե բոլորովին էլ

չառողջանա՞մ։ Տեր աստված, որքա՜ն ձանձրացրել է ինձ այս ամենը... Նա գնում էր առանց կանգ առնելու։ Նա սաստիկ ուզում էր որևէ կերպ զվարճանալ, բայց չգիտեր ինչ անել և ինչ ձեռնարկել։ Համարյա յուրաքանչյուր րոպե նրան հետզհետե մի նոր, անհաղթահարելի զգացում էր համակում. դա մի ինչ-որ անվերջանալի, գլխիվ ֆիզիկական, համառ, ցասկոտ, ատելությամբ լեցուն զզվանք էր դեպի այն ամենը, ինչ որ հանդիպում ու շրջապատում էր նրան։ Նրա համար դարշելի էին բոլոր հանդիպողները, դարշելի էին նրանց դեմքերը, քայլվածքը, շարժումները։ Թվում էր, որ նա կթքեր որևէ մեկի վրա, կկծեր, եթե մեկն ու մեկը խոսեր իր հետ...

Երբ նա հասավ Մալայա Նևայի առափնյա փողոցը, Վասիլևսկի կղզին, հանկարծ կանգ առավ կամուրջի մոտ։ «Նա ապրում է ահա այստեղ, այս տանը»,— մտածեց նա։ — «Ի՞նչ է սա, էլի՞ ինքս եմ գնում Ռազումիխինի մոտ։ Դարձյալ կլինի նույն պատմությունը, ինչ որ եղավ այն ժամանակ... Սակայն շատ հետաքրքիր է՝ ի՞նքս եկա, թե՞ գնում էի հենց այնպես, ու այստեղ հասա։ Միևնույն է, երկու օր առաջ... ես ասել էի... որ այն բանից հետո, մյուս օրը նրա մոտ կգնամ, դե ի՞նչ կա որ, կգնամ։ Մի՞թե հիմա չեմ կարող անցնել նրա մոտ...»

Նա բարձրացավ հինգերորդ հարկը, Ռազումիխինի մոտ։

Ռազումիխինը տանն էր, իր խցիկում, այդ րոպեին պարապում էր, գրում ու ինքը բացեց դուռը։ Զորս ամիս էր, որ նրանք չէին տեսնվել։ Ռազումիխինը նստած էր բոլորովին քրքրված խալաթով, բոբիկ ոտքերին մուճակներ, մազերը գզգզված, չսափրված ու անլվա։ Նրա դեմքը զարմանք արտահայտեց։

— Հը, ի՞նչ կասես,— հարցրեց նա՝ ոտքից-գլուխ նայելով ներս մտած ընկերոջը. հետո մի փոքր լռեց ու թույլ շվացրեց։

— Մի՞թե այդքան վատ է քո դրությունը։ Հը՛մ, աղբերս, դու պենտմոլությամբ գերազանցել ես մեզ նմաններին,— ավելացրեց նա՝ նայելով Ռասկոլնիկովի ցնցոտիներին,— դե նստիր, էլի, երևի հոգնած կլինես,— ու երբ Ռասկոլնիկովը քնկավ թուրքական բազմոցին, որը իր բազմոցից էլ ավելի

վատ էր, Ռազումիխինը հանկարծ նկատեց, որ իր հյուրը հիվանդ է։

— Դու շատ հիվանդ ես, գիտե՞ս թե չէ։ — Նա սկսեց շոշափել Ռասկոլնիկովի զարկերակը. Ռասկոլնիկովը ետ քաշեց իր ձեռքը։

— Հարկավոր չէ,— ասաց նա,— ես եկել եմ... ահա թե ինչ. ես դասեր բոլորովին չունեմ.,. ես ուզում էի... ասենք ինձ ամենևին էլ դասեր հարկավոր չեն...

— Բայց գիտե՞ս ինչ, գու զառանցում ես,— ասաց Ռազումիխինը՝ ուշադրությամբ նայելով ընկերոջը։

— Ոչ, չեմ զառանցում...— Ռասկոլնիկովը բազմոցից վեր կացավ։ Գալով Ռազումիխինի մոտ, նա չէր մտածել, որ պետք է դեմ առ դեմ հանդիպի նրան։ Իսկ հիմա, արդեն փորձից խրատված, մի ակնթարթում նա ցլեր ընկավ, որ այդ բոլորին ինքը առավելապես քիչ է տրամադրված թեկուզ ամբողջ աշխարհում դեմ առ դեմ հանդիպելու որևէ մեկի հետ։ Նրա մեջ թունդ առավ ամբողջ մաղձը։ Հենց որ նա մոտավ Ռազումիխինի մոտ, քիչ մնաց խեղդվեր ինքն իր դեմ շարանալուց։

— Մնաս բարով,— հանկարծ ասաց նա ու քայլեց դեպի դուռը։

— Ո՞ւր ես գնում, կաց, դմբո։

— Հարկավոր չէ...— կրկնեց Ռասկոլնիկովը՝ դարձյալ նա քաշելով ձեռքը։

— Հապա էլ ո՞ր սատանայի համար էիր գալիս։ Ժժվե՞լ ես, ինչ է։ Չէ՞ որ դա... համաբյա վիրավորական է։ Ես չեմ թողնի, որ այդպես գնաս։

Դե լսիր. նկա քեզ մոտ, որովհետև քեզանից բացի չեմ հանդիպում ուրիշ որևէ մեկին, որը օգներ... սկսելու... որովհետև դու բոլորից ավելի բարի ես, այսինքն՝ ավելի խելոք, ու կարող ես ճիշտ դատել... Իսկ հիմա ես տեսնում եմ, որ ինձ ոչինչ հարկավոր չէ, լսո՞ւմ ես, բոլորովին ոչինչ... հարկավոր չէ որևէ մեկի աջակցությունը և կարեկցությունը... Ես ինքս... մենակ... էհ, բավական է, թողեք ինձ հանգիստ։

— Դե մի բոպե կաց, էլի, դանդալոշ։ Բոլորովին խելագարվել ես։ Իհարկե, դա քո գործն է։ Գիտե՞ս ինչ, ես էլ դա-

սեր չունեմ, դրանք ինձ պետք չեն. հին իրերի վաճառքի շուկայում գործում է գրավաճառ Խերուվիմովը, այդ էլ դասերի պես մի բան է։ Ես հիմա նրան հինգ դասերի հետ էլ չեմ փոխի, որոնք կարելի է տալ վաճառականների տներում։ Նա որոշ տեսակի հրատարակություններ է գլուխ բերում, բնագիտական գրքեր է լույս ընծայում, ու դրանք շատ լավ են տարածվում։ Հենց միայն վերնագրերը ինչ ասես արժեն։ Դու միշտ պնդում էիր, թե ես հիմար եմ. հոգիս վկա, աղրեր, ինձնից ավելի հիմարներ կան։ Այժմ հետամուտ է լինում գրական ուղղություններին, ինքը ոչինչ չի հասկանում, գե՛ ես էլ, իհարկե, խրախուսում եմ։ Ինձ մոտ ահա գերմաներեն տեքստով երկու մամուլից ավելի նյութ կա, որ իմ կարծիքով ամենատիմար խարեություն է. մի խոսքով քննարկվում է այն հարցը, թե կինը մա՞րդ է, թե մարդ չէ։ Դե, իհարկե, լրջորեն ապացուցվում է, որ մարդ է։ Խերուվիմովը գա կանոնց հարցի կապակցությամբ է պատրաստում. ես թարգմանում եմ. այս երկու և կես մամուլը նա կձգի, վեց մամուլ կդարձնի, կես էջանոց հոխ վերնագիր կհորինենք ու գրքույկը հիսուն կոպեկով վաճառքի կհանենք։ Պատրաստվի՛ թարգմանության համար մի մամուլի դիմաց ես կստանամ վեց ռուբլի, ուրեմն ամբողջ թարգմանության համար տասնհինգ ռուբլի, իսկ վեց ռուբլի ես սկզբից եմ վերցրել։ Սա կվերջացնենք, կսկսենք թարգմանություն անել կետ ձկների մասին, այնուհետև ինչ-որ ձանձրալի բամբասանքներ։ Ենք նշել Confessions-ի* երկրորդ մասից, թարգմանելու ենք։ Ինչ-որ մեկը Խերուվիմովին ասել է, որ իբր թե Ռուսսոն յուրատեսակ Ռադիշչև է։ Ես, իհարկե, չեմ հակաճառում, գրողի ծոցը։ Ուզո՞ւմ ես թարգմանել «Արդյո՞ք կինը մարդ է» նյութի երկրորդ մամուլը։ Եթե ուզում ես, հիմա վերցրու տեքստը, գրիչ, թուղթ. այդ բոլորը ձրի է. վերցրու երեք ռուբլի. քանի որ ես առաջին ու երկրորդ մամուլների ամբողջ թարգմանության համար փողը սկզբից եմ վերցրել, ուրեմն երեք ռուբլին քեզ կհասնի։ Երբ սա վերջացնես, էլի երեք ռուբլի կստանաս։ Եվ ահա թե էլ ինչ. խնդրեմ սա իմ կողմից որևէ ծառայություն չհամարես։ Ընդհակառակը, հենց որ դու ներս մտար, ես արդեն հաշվի առա, թե դու ինչով կարող ես ինձ օգտակար լինել։ Նախ՝ ես ուղղագրությունից թույլ եմ ու

երկրորդ՝ գերմաներենից կաղում եմ, այնպես որ ավելի շատ ինձնից եմ հորինում և միայն նրանով եմ սփոփվում, որ այդպես ավելի լավ է դուրս գալիս։ Ասենք, ով գիտե, գուցե ոչ թե լավ, այլ վատ է դուրս գալիս...Վերցնո՞ւմ ես, թե՞ չէ։

Ռասկոլնիկովը լուռ վերցրեց հոդվածի գերմաներեն թերթիկները, վերցրեց երեք ռուբլի և ոչ մի խոսք չասելով, դուրս ելավ։ Ռազումիխինը զարմանքով նայեց նրա ետևից։ Բայց հասնելով առաջին փողոցը (1-я линия), Ռասկոլնիկովը հանկարծ ետ դարձավ, նորից սանդուղքով բարձրացավ ու մտավ Ռազումիխինի սենյակը, ու թե գերմաներեն թերթիկները և թե երեք ռուբլին դնելով սեղանի վրա, դարձյալ առանց մի բառ ասելու դուրս ելավ։

Խելքդ թոցրե՞լ ես, ինչ է,— գոռաց բոլորովին շարաբան Ռազումիխինը — Ինչո՞ւ ես կոմեդիա խաղում։ Նույնիսկ ինձ էլ շփոթեցրիր... Որ այդպես է, էլ ինչո՞ւ էիր գալիս, սատանա։

— Թարգմանություններ... հարկավոր չեն...— փնթփնթաց Ռասկոլնիկովը՝ արդեն իջնելով սանդուղքից։

— Հապա ի՞նչ զահրումար է քեզ հարկավոր,— վերևից ղղավեց Ռազումիխինը։ Ռասկոլնիկովը լուռ շարունակում էր իջնել։

— Լսիր, էյ, որտե՞ղ ես ապրում։

Պատասխան չեղավ։

— Դե գնա գրողի ծոցը...

Բայց Ռասկոլնիկովը արդեն դուրս էր գալիս փողոց։ Նիկոլաևսկի կամրջի վրա մի անգամ էլ նա լիովին ուշքի եկավ իր համար խիստ անախորժ մի դեպքի հետևանքով։ Մի կառքի կառապանը մտրակով պինդ խփեց նրա մեջքին այն պատճառով, որ նա քիչ մնաց ընկներ կառքի տակ, չնայելով, որ կառապանը երեք թե չորս անգամ գոռալով զգուշացնում էր նրան։ Մտրակի հարվածը այնքան շարացրեց նրան, որ նա ցատկելով դեպի բաղրիքը (հայտնի չէ ինչու նա գնում էր կամրջի մեջտեղով, ուր մարդիկ ոչ թե ոտքով, այլ կառքով են գնում), կատաղած կրճտացրեց ու չխկացրեց ատամները։ Հասկանալի է, որ շուրջը ծիծաղ լսվեց։

— Զարկը տեղին էր։

— Թոկից փախածի մեկն է, էլի։

— Հայտնի բան է, հարբած է ձևանում և դիտմամբ կառքի տակ է խցկվում. իսկ դու արի ու նրա համար պատասխան տուր։

— Դրանով են փող պոկում, պատվելի, դրանով են փող պոկում...

Բայց այն բոպեին, երբ նա կանգնած էր բազրիքի մոտ և դեռ ապշած ու զայրացած նայում էր հեռացող կառքի ետևից և շփում մեջքը, հանկարծ զգաց, որ մեկը փող է դնում իր ձեռքի մեջ։ Ռասկոլնիկովը նայեց. դա վաճառականի տարեց կին էր ոլորտիրով և այծենու կոշիկներով, կողքին կանգնած էր կանացի զլխարկով և կանաչ հովանոցով մի աղջիկ, հավանորեն նրա դուստրը։ «Վերցրու պատվելի, ի սեր Քրիստոսի»։ Ռասկոլնիկովը վերցրեց, ու նրանք գնացին։ Փողը քսան կոպեկանոց էր։ Ռասկոլնիկովի հագուստից և տեսքից նրանք կարող էին մտածել, որ նա մուրացկան է, իրոք փողոցում դրոշներ հավաքող, իսկ մի ամբողջ քսան կոպեկանոց ստանալու համար նա անշուշտ պարտական էր մտրակի հարվածին, որը շարժել էր նրանց դուռը։

Նա քսան կոպեկանոցը ձեռքին անցավ տասը քայլ ու շուռ եկավ դեպի Նևա, պալատի կողմը։ Երկինքը բոլորովին անամպ էր, Նևայի ջուրը կապույտ, որ հազվագեպ է լինում։ Տաճարի գմբեթը, որը ոչ մի կետից ավելի լավ չի ուրվագծվում, քան այստեղից, կամրջից, մատուցից քսան քայլ հեռավորությունից նայելիս, ուղղակի շողում էր, ու մաքուր օդի միջով կարելի էր պարզ տեսնել նույնիսկ նրա յուրաքանչյուր զարդարանքը։ Մտրակի պատճառած ցավն անցնում էր, ու Ռասկոլնիկովը մոռացավ հարվածը. այժմ նրան բացառապես մի տագնապալից և ոչ այնքան պարզ միտք էր զբաղեցնում։ Նա կանգնել էր, ու երկար, ակնապիշ նայում էր դեպի հեռունները. այդ վայրը լավ ծանոթ էր նրան։ Համալսարան գնալիս, մանավանդ տուն վերադառնալիս թերևս հարյուրերորդ անգամ կանգ էր առնում հենց այստեղ, ակնապիշ գիտում էր իրոք հիասքանչ այդ համապատկերը ու ամեն անգամ գրեթե զարմանում էր մի անորոշ ու անլուծելի տպավորության վրա։ Անմեկին սառնություն էր միշտ նրա վրա փչում այդ հոյակապ համապատկերից ըստ իր զգացման, լռին և խուլ ոգով էր լեցուն այդ շքեղ պատկերը... Ամեն անգամ

նա զարմանում էր իր ստացած մռայլ ու հանելուկային տպավորության վրա, ու ինքն իրեն չվստահելով, դրա լուծումը հետաձգում էր մինչև գալիք օրերը։ Այժմ նա հանկարծ, միանգամից վերհիշեց նախկինում իրեն զբաղեցրած հարցերն ու տարակուսանքները ու նրան թվաց, որ հիմա այդ հիշողությունը անսպասելի չէր։ Նրան օտարոտի և տարօրինակ թվաց հենց միայն այն, որ ինքը առաջվա պես կանգ է առել նույն տեղում, կարծես թե իրոք երևակայել էր, թե կարող է միևնույն բանի մասին այժմ մտածել այնպես, ինչպես առաջ, ու հետաքրքրվել առաջվա նույնպիսի թեմաներով ու պատկերներով, որոնցով հետաքրքրվում էր... օրեր առաջ։ Այդ նրան նույնիսկ ծիծաղելի թվաց և ցավ պատճառելու չափ ծանրաբեռնեց նրա կրծքին։ Ինչ-որ խորքերում, ներքևում, ոտքերի տակ այժմ հողի նկատելի նշմարվեցին և՛ այդ ամբողջ անցյալը, և՛ առաջվա մտքերը, և՛ առաջվա խնդիրները, և՛ առաջվա թեմաները և՛ առաջվա տպավորությունները և՛ այդ ամբողջ համապատկերը, և՛ նա ինքը, և՛ ամեն, ամեն ինչ... Կարծես թե նա դեպի վեր էր թռչում և ամեն ինչ չքանում էր իր աչքից... Ակամայից շարժելով ձեռքը, նա հանկարծ զգաց, որ բռունցքով սեղմել է քսան կոպեկանոցը։ Նա բացեց բռունցքը, աչքերը հառեց դրամին, թափ առավ ու դա նետեց ջուրը. հետո շուռ եկավ ու գնաց տուն։ Նրան թվաց, թե այդ բոպեին կարծես մկրատով ինքն իրեն կտրեց ամենքից և ամեն ինչից։

Նա իր խցիկը վերադարձավ արդեն իրիկնադեմին, ուրեմն մոտ վեց ժամ տանը չէր եղել։ Թե ինչ տեղերով և ինչպես վերադարձավ, այդ բոլորովին չէր հիշում։ Հանվելով և ամբողջովին գոգալով, ինչպես վագրից ուժասպառ եղած ձի, նա պառկեց բազմոցի վրա, ծածկվեց վերարկուով և իսկույն անկայացավ։

Բոլորովին մթնել էր, երբ նա սթափվեց զարհուրելի մի հոգից։ Տե՛ր աստված, այդ ի՞նչ ճիչ է։ Այդպիսի անբնական ձայներ, այդպիսի ոռնոց, աղբ, կրճտոց, ծեծ ու հայհոյանքներ նա դեռ երբեք չէր լսել ու չէր տեսել։ Այդպիսի գազանություն, այդպիսի կատաղություն նա չէր էլ կարող երևակայել։ Նա սարսափահար վեր կացավ ու նստեց իր անկողնու վրա՝ յուրաքանչյուր ակնթարթ նվաղելով ու տանջվելով։ Տու-

բուդմբոցը, ճիչերն ու հայհոյանքները ավելի ու ավելի էին ուժեղանում։ Եվ ահա մեծագույն զարմանքով նա հանկարծ լսեց իր տանտիրուհու ձայնը։ Վերջինս բղավում, ճղճղում ու ճչում էր արագ-արագ, բաց թողնելով առանձին բառեր, այնպես որ անկարելի էր հասկանալ, թե ինչ էր ասում։ Դե, իհարկե, ասելիքներ էր, որ իրեն չծեծեն, որովհետև նրան անողոքաբար ծեծում էին սանդուղքի վրա։ Մեծողի ձայնը զայրույթից ու կատաղությունից այնքան զարհուրելի էր դարձել, որ արդեն միայն խոխռում էր, բայց և այնպես ծեծողն էլ ինչ-որ բան էր ասում ու նույնպես արագ-արագ, անհասկանալի, շտապելով ու խեղդվելով։ Հանկարծ Ռասկոլնիկովը դողաց տերևի նման. նա ճանաչեց այդ ձայնը. դա Իլյա Պետրովիչի ձայնն էր։ Իլյա Պետրովիչը այստեղ է ու ծեծո՞ւմ է տանտիրուհուն։ Նա տանտիրուհուն խփում է ոտքերով, նրա գլուխը զարկում է սանդուղքի աստիճաններին— դա պարզ է, դա զգացվում է ձայներից, ճիչերից, հարվածներից։ Ի՞նչ է դա, աշխարհը հա՞ չի՞ շուռ եկել։ Լսվում էր, թե ինչպես բոլոր հարկերից մարդիկ հավաքվում էին սանդուղքի վրա, լսվում էին ձայներ, բացականչություններ, դսփյուն, դռների թակոց ու շրխկոց, վազվզոց։ «Բայց ինչի՞ համար, ինչի՞ համար են ծեծում, ու մի՞թե այդ կարելի է»,— կրկնում էր Ռասկոլնիկովը՝ լրջորեն մտածելով, թե ինքը բոլորովին խելագարվել է։ Բայց ոչ, ինքը շատ պարզ է լսում... հետևաբար, եթե բանը այդպես է, հիմա իր մոտ էլ կգան, «որովհետև... այդ ամենը նույն պատճառով է... երեկվա դեպքի պատճառով... Տեր աստված»։ Նա ուզեց դուռը փակել կեռով, բայց ձեռքը չբարձրացավ... և դա ապարդյուն կլիներ։ Վախը սառույցի պես պատեց նրա հոգին, խոշտանգեց նրան, քարացրեց նրան... Բայց ահա, վերջապես, այդ ամբողջ ազմուկը, որ ամբողջ տասը րոպե էր տևել, սկսեց հետզհետե հանդարտվել։ Տանտիրուհին անքում էր ու հառաչում։ Իլյա Պետրովիչը դեռ էլի սպառնալիք ու հայհոյանք էր թափում... Բայց ահա, վերջապես, նա էլ կարծես լռեց. էլ չի լսվում նրա ձայնը. «Միթե գնաց. տեր աստված»։ Այո, ահա դեռևս տնքալով ու լալով, հեռանում է նաև տանտիրուհին... ահա և շրխկալով փակվեց նրա դուռը... Ահա և ամբոխը ցրվում է սանդուղքից ու գնում բնակարանները. մարդիկ «ախ» են քաշում, վիճում, կանչում իրար, մերձ

բղավում են ու մերթ փսփսում։ Երևի դրանք շատ են եղել, համարյա ամբողջ տունն էր հավաքվել։ «Բայց, աստված իմ, մի՞թե հնարավոր է այդ ամենը։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ էր նա այստեղ եկել»։

Ռասկոլնիկովը ուժասպառ ընկավ բազմոցին, բայց արդեն չէր կարողանում աչքերը փակել. նա մոտ կես ժամ պառկեց ծանր տանջվելով, անսահման ասրսափի այնպիսի անտանելի զգացումով, որը դեռ երբեք չէր ապրել։ Հանկարծ նրա սենյակը լուսավորվեց պայծառ լույսով. ներս մտավ Նաստասյան, ձեռքին վառվող մոմ և մի ափսե սուպ։ Ուշադրությամբ նայելով նրան ու տեսնելով, որ նա քնած չէ, Նաստասյան մոտը դրեց սեղանին ու սկսեց տեղավորել իր բերած հացը, ափսեն, գդալը։

- Երևի երեկվանից լոն չես կերել։ Ամբողջ օրը թրև ես եկել, ինքդ էլ ցնցվում ես զողից։

— Նաստասյա... ինչի՞ համար էին ծեծում տանտիրուհուն։

Նաստասյան զարմանքով նայեց նրան։

— Ո՞վ էր ծեծում տանտիրուհուն։

— Հիմա... կես ժամ առաջ, Իլյա Պետրովիչը, վերակացուի օգնականը, սանդուղքի վրա... Ինչի՞ համար նա այդպես թակեց տանտիրուհուն և... ինչո՞ւ էր եկել։

Նաստասյան լուռ և հոնքերը կիտած, հայացքով երկար դիտում էր նրան։ Այդ զննությունը Ռասկոլնիկովի համար խիստ տհաճ էր, նույնիսկ սարսափելի։

- Նաստասյա, ինչո՞ւ ես լռում,— վերջապես թույլ ձայնով, երկչոտելով հարցրեց Ռասկոլնիկովը։

— Դա արյունն է,— ի վերջո կամացուկ և կարծես ինքն իր հետ խոսելով, պատասխանեց Նաստասյանը։

— Արյունը... ի՞նչ արյուն... —սարսափելով ու դեմքի գույնը քաշվելով, փնթփնթաց Ռասկոլնիկովը։ Նաստասյան շարունակեց լուռ նայել նրան։

— Տանտիրուհուն ոչ ոք չի ծեծել,— ասաց նա խիստ ու կտրուկ ձայնով։ Ռասկոլնիկովը համարյա շնչասպառ նայում էր նրան։

— Ես ինքս լսեցի... ես չէի քնել... նստած էի,— էլ ավելի

Երկչոտ ասաց Ռասկոլնիկովը։ — Ես երկար լռում էի... Եկել էր վերակացուի օգնականը... Բոլորը հավաքվել էին սանդուղքի վրա, եկել էին բոլոր բնակարաններից...

— Ոչ ոք չի եկել։ Դա արյունն է քո մեջ աղմկում։ Երբ որ նա ելք չի գտնում, սկսում է լերդանալ, ու այստեղ ինչ ասես որ չի երևում աչքիդ... Ուտելո՞ւ ես, թե ինչ։

Ռասկոլնիկովը չպատասխանեց։ Նաստասյան դեռ էլի կանգնած էր նրա առջև, ակնապիշ նայում էր նրան ու չէր հեռանում։

— Նաստասյա... ջուր բեր։

Նաստասյան իջավ ներքև ու երկու բոպե հետո սպիտակ, կավե թասով ջուր բերեց. Ռասկոլնիկովը արդեն չէր հիշում, թե հետո ինչ եղավ։ Հիշում էր միայն, թե ինչպես մի կում սառը ջուր խմեց ու թասից ջուր թափեց կրծքին։ Այնուհետև վրա հասավ անզգայացումը։

III

Ռասկոլնիկովը, սակայն, հիվանդության ամբողջ ընթացքում ոչ թե բոլորովին կորցրել էր հիշողությունը, այլ զգնվում էր տենդային, զառանցական ու կիսագիտակից վիճակում։ Շատ բան նա հետո հիշեց։ Մերթ նրան թվում էր, թե իր մոտ շատ մարդիկ են հավաքվում և ուզում են իրեն վերցնել ու տանել ինչ-որ տեղ, շատ են իր մասին վիճում ու կռվում։ Մերթ հանկարծ սենյակում ինքը մենակ է մնում, բոլորը գնացել են, վախենում են իրենից, ու միայն երբեմն մի քիչ բաց են անում դուռը, իրեն նայելու, սպառնում են իրեն, իրար մեջ պայմանավորվում ինչ-որ բանի մասին, ծիծաղում են և իրեն ձեռ առնում։ Նա հաճախ հիշում էր, որ Նաստասյան լինում է իր մոտ. նկատում էր նաև մի մարդու, որը իբր թե իրեն լավ ծանոթ էր, բայց թե ով էր, ինքը ոչ մի կերպ չէր կարողանում գլխի ընկնել և դրա համար վշտանում էր, նույնիսկ լաց լինում։ Մի այլ անգամ նրան թվում էր, թե ինքը արդեն մի ամիս պառկած է, երբեմն էլ թվում էր, թե շարունակ միևնույն օրն է ընթանում։ Իսկ այն դեպքը, այն դեպքը նա բոլորովին մոռացել էր. մյուս կողմից ամեն բոպե հի-

շում էր, որ մոռացել է մի բան, որը չի կարելի մոռանալ. տա-
ռապում էր, տանջվում այդ հիշելուց, կատաղում կամ զար-
հուրելի, անտանելի վախ էր զգում։ Այդ ժամանակ տեղից վեր
էր թռչում, ուզում էր փախչել, բայց միշտ որևէ մեկը ուժով
կանգնեցնում էր նրան, և նա դարձյալ նվաղում էր ու կորց-
նում հիշողությունը։ Վերջապես, նա բոլորովին սթափվեց։

Այդ կատարվեց առավոտյան ժամը տասին։ Առավոտյան
այդ ժամին, պարզ օրերին միշտ էլ արևի մի երկար ցոլք էր
ընկնում սենյակի աջ պատին ու լուսավորում դռան կողքի
անկյունը։ Ռասկոլնիկովի անկողնու մոտ կանգնել էին Նաս-
տասյան ու էլի մի մարդ, որը լարված հետաքրքրությամբ նա-
յում էր նրան ու բոլորովին անծանոթ էր։ Դա կապա հագած,
կարճլիկ մորուքով մի մարդ էր, իր արտաքինով արտելակա-
նի էր նմանվում։ Կիսաբաց դռնից նայում էր տանտիրուհին։
Ռասկոլնիկովը մի քիչ բարձրացավ տեղից։

— Այդ ո՞վ է, Նաստասյա,— հարցրեց նա՝ ցույց տալով
երիտասարդին։

— Ըհը՞, զարթնեց,— ասաց Նաստասյան։

— Զարթնեց,— կրկնեց արտելականը։ Գլխի ընկնելով,
որ նա ուշքի է եկել, դռնից նայող տանտիրուհին իսկույն
ծածկեց այն ու թաքնվեց։ Նա միշտ էլ ամաչկոտ էր և դժվա-
րությամբ էր տանում ավելորդ խոսակցություններն ու բա-
ցատրությունները. նա մոտ քառասուն տարեկան էր, հատ
ու չաղ, սևահոնք և սևաչ, չաղությունից ու ծուլությունից բա-
րի. նույնիսկ շատ սիրունատես էր, ավելի ամոթխած, քան
պետք էր։

— Դուք... ո՞վ եք,— վերստին հարց տվեց Ռասկոլնիկո-
վը՝ դիմելով արտելականին։ Բայց այդ րոպեին բոլորովին
բացվեց դուռը և, բարձրահասակ լինելու պատճառով մի քիչ
կռանալով, ներս մտավ Ռազումիխինը։

— Այ քեզ նավի խցիկ,— մտնելիս գոչեց նա,— առանց
կռանալու ներս չես մտնի. բնակարանի՞ս մտիկ։ Հը՞, դու ուշ-
քի՞ ես եկել, ազբերացու. հենց հիմա Պաշենկայից լսեցի։

— Հենց հիմա ուշքի եկավ,— ասաց Նաստասյան։

— Այո, ուշքի եկավ,— դարձյալ վրա բերեց արտելակա-
նը ու ժպտաց։

— Իսկ դուք հրամանքներդ ո՞վ եք,— հանկարծ դիմելով նրան, հարցրեց Ռազումիխինը։— Ես, ահա, հաճեցեք տեսնել, Վրազումիխինն եմ, ոչ թե Ռազումիխինը, ինչպես բոլորը հորջորջում են ինձ, այլ Վրազումիխինը[1], ուսանող եմ, ազնվականի որդի, իսկ սա իմ ընկերն է։ Հա՛, իսկ դո՞ւք ով եք։

— Ես մեր գրասենյակում արտելական եմ, եկել եմ վաճառական Շելոպաևի կողմից, գործով։

— Հաճեցեք նստել այս աթոռին։ — Ինքը Ռազումիխինը նստեց մյուս աթոռին, սեղանի մյուս կողմում։ — Հա՛, աղբերացու, լավ ես արել, որ ուշքի ես եկել,— ասաց նա՝ դիմելով Ռասկոլնիկովին։ — Չորրորդ օրն է, որ համարյա ոչ ուտում ես, ոչ խմում։ Հիրավի, թեյը գդալով էինք տալիս։ Ես Զոսիմովին երկու անգամ բերի քեզ մոտ։ Հիշո՞ւմ ես Զոսիմովին։ Ուշադրությամբ քննեց քեզ և իսկույն ասաց, որ դա դատարկ բան է, երևի այնպես, էլի, արյունը գլխին է խփել։ Ինչ-որ ջղային երևույթ է, փայաբաժինը վատ է հղել, գարեջուր և ծովաբողկ քիչ ևք տվել, դրանից էլ հիվանդություն է առաջացել, բայց, ոչինչ, կանցնի, կառողջանա։ Կեցցե՛ Զոսիմովը, լա՛վ սկսեց բուժել։ Հա՛, դե ես ձեզ չեմ պահում,— դիմեց նա արտելականին,— կհաճե՞ք բացատրել, թե ձեզ ինչ է հարկավոր։ Տես, Ռոդյա, սրանց գրասենյակից արդեն երկրորդ անգամն են գալիս. միայն թե առաջին անգամ ոչ թե սա, այլ մի ուրիշը եկավ, ու մենք բացատրվեցինք նրա հետ։ Այն ո՞վ էր, որ ձեզնից առաջ այստեղ եկավ։

— Պետք է կարծել, որ այդ եղել է ճիշտ երեկ չէ մյուս օրը։ Ալեքսեյ Սեմյոնովիչն է եղել. նույնպես մեր գրասենյակից է։

— Նա հո ձեզնից ավելի բանիմաց կլինի, ի՞նչ եք կարծում։

— Այո, նա ավելի լրջամիտ է։

— Գովելի է. է՛հ, շարունակեցեք։

— Աֆանասի Իվանովիչ Վախրուշինի միջոցով, որի մասին դուք կարծեմ բարեհաճել եք լսել մի քանի անգամ, ձեր մայրիկի խնդրանքով ու մեր գրասենյակի միջոցով ձեզ փող

---

[1] Ռազումիխինը աղավաղելով իր ազգանունը, կատակում է, ակնարկում вразумить բառը, որ նշանակում է խրատել, խելքի բերել (Ծ. Թ.)։

է փոխադրվել,—ասաց արտելականը՝ ուղղակի դիմելով Ռասկոլնիկովին։ — Այն դեպքում, եթե ձեր գիտակցությունը տեղն է, ձեզ պետք է հանձնվի երեսունհինգ ռուբլի, քանի որ Աֆանասի Իվանովիչը ձեր մայրիկի խնդրանքով և առաջվա կարգով այդ մասին ծանուցել է Սեմյոն Սեմյոնովիչին։ Բարեհաճո՞ւմ եք ճանաչել։

— Այո... հիշում եմ... Վախրուշինը...— մտազբաղ ասաց Ռասկոլնիկովը։

— Լսո՞ւմ եք, ճանաչում է վաճառական Վախրուշինին, էլ ինչպե՞ս գիտակցությունը տեղը չէ։ Հա, ի միջի այլոց ես հիմա նկատում եմ, որ դուք էլ բանիմաց մարդ եք։ Խելացի խոսքերը հաճելի է լսել։

Հենց նա, Աֆանասի Իվանովիչը ձեր մայրիկի խնդրանքով օրերս իր ապրելավայրից գիմել էր Սեմյոն Սեմյոնովիչին, որ ձեզ տրվի երեսունհինգ ռուբլի, մինչև որ ավելի լավ պայմաններ լինեն։ Ձեր մայրիկը նրա միջոցով և նույն կարգով դրանից առաջ էլի մի անգամ ձեզ փող էր ուղարկել։

— Ահա և «լավ պայմաններ», գործը լավ գնաց։ «Ձեր մայրիկը», այդ էլ վատ չի ասված։ Հիմա դուք ի՞նչ եք կարծում, արդյոք գիտակցությունը լիովին իր տե՞ղն է, թե չէ, հը՞։

— Դե ինչ ասեմ։ Միայն հարկավոր է, որ նա ստորագրի։

— Կճկի, էլի՛։ Այդ ի՞նչ է ձեր ձեռքին, մատյա՞ն է, ի՞նչ է։

— Մատյան է, ահա։

— Տվեք այստեղ։ Դեհ, Ռոդյա, վեր կաց։ Ես քեզ կօգնեմ։ Վերցրու գրիչը, ճկիր Ռասկոլնիկով աղգանունը, քանի որ հիմա փոքր մեկ շատ, շատ է հարկավոր։

— Հարկավոր չէ,— ասաց Ռասկոլնիկովը՝ ետ մղելով գրիչը։

— Ինչպե՞ս թե հարկավոր չէ։

— Ձեմ ստորագրի։

— Այ քեզ բան, ախր ի՞նչպես կարելի է չստորագրել։

— Փողը... պետք չէ...

— Փողը պետք չէ՞։ Էհ, բարեկամ, այդ արդեն սուտ է, հոգիս վկա։ Խնդրեմ չանհանգստանաք, նա հենց այնպես... գրպանն է տալիս։ Ասենք առողջ ժամանակ էլ երբեմն այդպես

է անում... Դուք խելոք մարդ եք, ու մենք հարմար գործ կբռնենք, այսինքն՝ ուղղակի սրա ձեռքից կբռնենք, և սա կստորագրի։ Դեհ, սկսենք...

— Սակայն ես մի ուրիշ անգամ էլ կգամ։

— Ոչ, ոչ, ինչո՞ւ դուք անհանգստանաք։ Դուք խելոք մարդ եք... Դեհ, Ռոդյա, մի ուշացնի հյուրին... Տեսնո՞ւմ ես, սպասում է,— ու Ռազումիխինը լրջորեն պատրաստվեց Ռասկոլնիկովի ձեռքից բռնելու և ստորագրել տալու։

— Թող, ես ինքս...— ասաց Ռասկոլնիկովը, վերցրեց գրիչը և ստորագրեց մատյանում։ Արտելչանը հանձնեց փողը և գնաց։

— Կեցցես, իսկ հիմա, աղբերս, ուզո՞ւմ ես ուտել։

— Ուզում եմ,— պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Ձեզ մոտ սուպ կա։

— Երեկվանն է,— պատասխանեց Նաստասյան, որը այդ ամբողջ ժամանակ կանգնած էր նրանց մոտ։

— Կարտոֆիլով ու բրնձի ձավարո՞վ է։

— Կարտոֆիլով ու բրնձի ձավարով։

— Գիտեմ, է՛։ Բեր սուպը, թեյ էլ տուր։

— Կբերեմ։

Ռասկոլնիկովը այդ ամենին նայում էր խորին զարմանքով և բութ, անիմաստ վախով։ Նա որոշեց լռել և սպասել, թե հետո ինչ կլինի։ «Կարծես թե ես չեմ զառանցում»,— մտածում էր նա։ — «Կարծես թե դա իրոք այդպես է...»։

Երկու րոպե հետո Նաստասյան բերեց սուպը և հայտնեց, թե հիմա թեյ էլ կլինի։ Սուպի հետ բերեց երկու գդալ, երկու ափսե և ամբողջ համեմունքը՝ աղ, պղպեղ, մանանեխ՝ տավարի մսի համար. վաղուց էր, որ դրանք այդպիսի կարգով չէին մատուցվում։ Սփոռոցը մաքուր էր։

— Նաստասյա, վատ չէր լինի, եթե Պրասկովյա Պավլովնան մի երկու շիշ գարեջուր ցնծար։ Կխմենք, էլի։

— Բաժինդ շատ չի՞ լինի,— փնթփնթաց Նաստասյան ու դնաց պատվերը կատարելու։

Ռասկոլնիկովը շարունակում էր ամեն ինչ օտարոտի ու լարված հայացքով դիտել։ Այդ պահին Ռազումիխինը վեր կացավ ու նստեց բազմոցին, նրա կողքին, արջի անճոռ-

նիությամբ, ձախ ձեռքով բարձրացրեց նրա գլուխը, թեև Ռասկոլնիկովը ինքն էլ կարող էր այն բարձրացնել, իսկ աջ ձեռքով մի դդալ սուպ մոտեցրեց նրա բերանին՝ մի քանի անգամ նախապես փչելով այն, որպեսզի Ռասկոլնիկովը չվառեր բերանը։ Բայց սուպը այնքան էլ տաք չէր։ Ռասկոլնիկովը ագահությամբ կուլ տվեց մի դդալ սուպը, հետո երկրորդը, երրորդը։ Բայց մի քանի դդալ սուպ կերցնելով, Ռազումիխինը հանկարծ կանգ առավ և հայտարարեց, թե հետագա կերակրման մասին պետք է խորհրդակցել Զոսիմովի հետ։

Ներս մտավ Նաստասյան՝ բերելով երկու շիշ գարեջուր։

— Բեյ Ա՛լ ես ուզում։

— Ուզում եմ։

— Նստա՛ տուր, թեյ էլ բեր, Նաստասյա, որովհետև թեյի մասին կարծես թե կարելի է և չխորհրդակցել։ Ահա և գարեջուրը։ — Ռազումիխինը վեր կացավ ու նստեց իր աթոռին, ոուպն ու տավարի միսը քաշեց իր կողմը ու սկսեց ուտել այնպիսի ախորժակով, որ կարծես թե երեք օր ոչինչ չէր կերել։

— Ես, ախպեր-տղա, ամեն օր այսպես ճաշում եմ ձեզ մոտ,— փնթփնթաց նա, որքան այդ թույլ էր տալիս տավարի մսով լիք լցված բերանը,— և այս ամենը Պաշենկան, քո տանտիրուհին է տնօրինում, սրտանց պատիվ է անում ինձ։ Ես, իհարկե, որևէ բան չեմ պահանջում, ոչ էլ բողոքում։ Ահա և Նաստասյան թեյ բերեց։ Ա՛յ թե ճարպիկն է, հա՛-ա։ Նաստենկա, գարեջուր կուզե՞ս։

— Ի՞նչ, ա՛յդ էր պակաս։

— Իսկ թե՞յ։

— Թեյ կարելի է։

— Լցրու։ Կաց, ես ինքս կլցնեմ քեզ համար. սեղան նրստիր։

Ռազումիխինը իսկույն գործի անցավ, թեյ լցրեց, հետո մի ուրիշ բաժակ էլ լցրեց, թողեց իր նախաճաշը, վեր կացավ ու դարձյալ նստեց բազմոցին։ Նա էլի ձախ ձեռքով գրկեց հիվանդի գլուխը, բարձրացրեց այն ու սկսեց թեյի գդալով թեյ խմեցնել նրան՝ նորից անընդհատ և մի առանձին եռանդով փչելով թեյը, կարծես թե փչելու հենց այդ

ելրոցեսն էր ապաքինման ամենագլխավոր ու փրկարար միջոցը։ Ռասկոլնիկովը լուռ էր և չէր դիմադրում, թեև իր մեջ բավականաչափ ուժ էր զգում առանց որևէ կողմնակի օգնության քիչ բարձրանալու և նստելու բազմոցին, ու ոչ միայն կարող էր ձեռքերը այնքան շարժել, որ բռներ գդալը կամ բաժակը, այլև կարող էր գուցե և քայլել։ Բայց մի ինչ-որ տարօրինակ, համարյա գազանային խորամանկությամբ նա հանկարծ միտք հղացավ առժամապես թաքցնել իր ուժերը, սպասել, անճարակ ձևանալ, եթե հարկավոր լինի, նույնիսկ ցույց տալ, թե այնքան էլ հասկացող չէ, ու միաժամանակ լսել ու իմանալ, թե այստեղ ինչ է կատարվում։ Ասենք նա չէր կարողանում հաղթահարել իր զզվանքը. տասը գդալ թեյ կուլ տալով, նա հանկարծ գլուխը հանեց Ռազումիխինի թևի տակից, քմահաճորեն ետ մղեց գդալը ու նորից ընկավ բարձին։ Նրա գլխի տակ հիմա իսկական, փետուրե և մաքուր երեսներով բարձեր էին դրված. նա այդ էլ նկատեց և ուշադրության առավ։

— Հարկավոր է, որ Պաշենկան հենց այսօր մեզ մորու մուրաբա ուղարկի, Ռոդյայի համար խմելիք կլինի,— ասաց Ռազումիխինը, նստեց իր տեղը ու էլի սկսեց սուպ ուտել և դարեջուր խմել։

— Նա որտեղի՞ց մորի վերցնի,— հարցրեց Նաստասյան, որը բացած հինգ մատների վրա պահել էր ափսեիկը և դրանից «կծովի» թեյ էր խմում։

— Նա մորին խանութից կվերցնի, քո՛ւյրիկ։ Գիտե՞ս, Ռոդյա, այստեղ առանց քեզ մի ամբողջ պատմություն եղավ։ Երբ դու այնպես սրիկայաբար փախար ինձնից ու չասացիր բնակարանիդ հասցեն, ես հանկարծ այնպես զայրացա, որ որոշեցի քեզ գտնել և պատժել։ Հենց նույն օրը գործի անցա։ Շրջում էի ու շրջում, հարցնում էի ու հարցնում։ Հիմիկվա քո այս բնակարանը մոռացել էի. ասենք դա երբեք էլ չէի հիշել, որովհետև չգիտեի։ Հա՛, միայն թե հիշում էի, որ առաջվա բնակարանդ Հինգ Անկյան մոտ էր, Խառլամովի տանը։ Փնտրեցի, փնտրեցի այդ Խառլամովի տունը, հետո էլ պարզվեց, որ դա ոչ թե Խառլամովի, այլ Բուխի տունն է։ Դե, մարդ երբեմն շփոթում է անունները։ Ու ես բարկացա։ Բարկացա ու մյուս օրը համենայնդեպս գնացի հասցե-

ների սեղան ու երևակայիր, այնտեղ երկու բոպեում գտան քո հասցեն։ Դու այնտեղ գրանցված ես։

— Գրանցվա՞ծ եմ։

— Իհարկե, իսկ գեներալ Կոբելևի հասցեն, երբ ես այնտեղ էի, ոչ մի կերպ չէի կարողանում գտնել։ Էհ, գլուխներդ ինչ ցավեցնեմ։ Հենց որ արշավեցի այստեղ, իսկույն ծանոթացա քո բոլոր, բոլոր գործերին, աղբերս, բոլորը գիտեմ. ա՛յ, Նաստասյան էլ՝ տեսավ. Նիկոդիմ Ֆոմիչի հետ ծանոթացա, Իլյա Պետրովիչին էլ ինձ ցույց տվին, ծանոթացա նաև գոնապանի հետ, պարոն Զամետովի, Ալեքսանդրը Գրիգորիևիչի, այստեղի ոստիկանական գրասենյակի գործավարի և, վերջապես, Պաշենկայի հետ, որ արդեն մեծապույն հարգություն էր. Նաստասյան գիտե այս բոլորը...

Քաղցրացրիր թեյս,— խորամանկ քմծիծաղով փընթփրնթաց Նաստասյան։

— Դե, գցովի խմեք, է՛լի, Նաստասյա Նիկիֆորովնա։

— Ի-ի՛հ, դմբոյի մեկը,— հանկարծ բղավեց Նաստասյան և քա՛հ-քա՛հ ծիծաղեց։ — Չէ՞ որ ես Պետրովա եմ և ոչ թե Նիկիֆորովնա,— ավելացրեց նա, երբ դադարեցրեց ծիծաղը։

— Նկատի կառնենք։ Հա, ախպերս, գլուխդ շատ չտանեմ. ես ուզում էի սկզբում այստեղ ամենուրեք էլեկտրական հոսանք բաց թողնել, այստեղի բոլոր նախապաշարմունքները արմատախիլ անելու համար. բայց Պաշենկան հաղթեց։ Ես ոչ մի կերպ չէի սպասում, որ նա այդքան... գրավիչ կլինի... հը՞, դու ի՞նչ ես կարծում։

Ռազումիխինը լուռ էր, թեև ոչ մի բոպե Ռազումիխինի չէր կորում իր անհանգստացած հայացքը, ու հիմա էլ համառորեն շարունակում էր նայել նրան։

— Ու նույնիսկ շատ գրավիչ է,— շարունակեց Ռազումիխինը՝ լշփոթվելով ընկերոջ լռությունից, կարծես թե պատասխան էր ստացել և դրան հավանություն էր տալիս,— ամեն կողմից էլ շատ լավն է։

— Ի-ի՛հ, փուչ կենդանի,— դարձյալ գոչեց Նաստասյան, որին այդ խոսակցությունը ըստ երևույթին անասելի երանություն էր պատճառում։

— Վատ է, սիրելիս, որ դու հենց սկզբից չկարողացար գործին ձեռնամուխ լինել։ Տանտիրուհու հետ այդպես չպետք էր վարվել։ Չէ՞, որ նա, այսպես ասած, բոլորովին յուրատեսակ բնավորություն ունի։ Հա՛, բնավորության մասին հետո կխոսենք... Միայն թե, զորօրինակ, ի՞նչպես կարելի էր բանը այնտեղ հասցնել, որ նա համարձակվեր քեզ ճաշ չուղարկել։ Կամ, զորօրինակ, վերցնենք այդ մուրհակը։ Դու գիտե՞ լիր, ինչ է, որ մուրհակ կիր ստորագրում։ Կամ, զորօրինակ, այդ ամուսնությունը, որ ենթադրվում էր այն ժամանակ, երբ տանտիրուհու դուստրը, Նատալյա Եղորովնան դեռ կենդանի էր... Ես ամեն ինչ գիտեմ։ Սակայն ես տեսնում եմ, որ դա նրբաբնույթ հարց է, և որ ես ավանակ եմ. դու ինձ ներիր։ Բայց, ի դեպ, խոսենք հիմարության մասին. դու ի՞նչ ես կարծում, Պրասկովյա Պավլովնան հո այնքան էլ հիմար չէ, ինչպես այդ կարելի է ենթադրել առաջին հայացքից, հը՞։

— Այո... —քրթմնջաց Ռասկոլնիկովը՝ նայելով մի կողմ, բայց հասկանալով, որ ավելի շահավետ է մասնակցել խոսակցությանը։

— Ճիշտ է, չէ՞,— գոչեց Ռազումիխինը՝ ըստ երևույթին ուրախանալով, որ իրեն պատասխանեցին,— բայց խելացի էլ չէ, հը՞։ Բոլորովին, բոլորովին յուրատեսակ բնավորություն ունի։ Ես, սիրելիս, հավատացնում եմ քեզ, որ մասամբ տարակուսում եմ... Նա կլինի քառասուն տարեկան։ Ինքն ասում է, որ երեսունվեց է և այդ ասելու լիակատար իրավունք ունի։ Սակայն երդվում եմ, որ նրա մասին դատում եմ ավելի շուտ վերացականորեն, ըստ մետաֆիզիկայի. այստեղ, աղբորս ասեմ, այնպիսի բարդություն է առաջացել, որ գլուխ չես հանի. ոչինչ չեմ հասկանում։ Էհ, այդ ամենը դատարկ բան է, միայն թե նա տեսնելով, որ դու արդեն ուսանող չես, զրկվել ես դասերից ու կոստյումից, որ օրիորդի մահից հետո նա չի կարող քեզ հետ ազգակցական կապ պահպանել, հանկարծ վախեցել է. ու որովհետև դու հեռու ես քաշվել և առաջվա հարաբերությունները չես պահպանել, նրա խելքին փչել է քեզ վտարել բնակարանից։ Նա վաղուց էր այդպես մտադրվել, բայց ափսոսում էր մուրհակը։ Դու էլ հո հավատացնում էիր, թե մայրիկդ կվճարի...

— Դա ստորություն էր իմ կողմից... Մայրս ինքը քիչ է մնում ողորմություն խնդրի... ես ստում էի, որ ինձ թողնեին բնակարանում և... կերակրեին,— պարզ ու բարձրաձայն ասաց Ռասկոլնիկովը։

— Այո, դու խելացի ես վարվել։ Միայն թե բանն այն է, որ եթե այստեղ պարոն Զեբարովը, արքունի խորհրդականը՝ այդ գործարար մարդը ներկա չդար, Պաշենկան առանց նրան ոչինչ չէր անի, չէ՞ որ խիստ ամաչկոտ է. իսկ գործարար մարդը ամաչկոտ չէ և, իհարկե, նախ և առաջ հարցրեց, թե արդյոք հույս կա՞ մուրհակը իրացնելու. պատասխան՝ կա. որովհետև այնպիսի մայրիկ կա, որը թեկուզ բաղցած էլ մնա, իր հարյուր քսանհինգ ռուբլի կենսաթոշակից բաժին կհանի Ռոդենկային, ու այնպիսի քույրիկ կա, որ եղբոր համար սարկության կգնա։ Զեբարովը հենց դրա վրա է հույս դրել... Հը, ի՞նչ շարժումներ ես անում։ Ես, ազիզս, իմացել եմ քո բոլոր գաղտնիքները. դու հո Պաշենկայի հետ անկեղծ էիր լինում, երբ ազգակցական կապեր էին նախատեսվում. ես քեզ սիրելուց եմ ասում այս ամենը... բանը հենց այդպես է, որ կա. ազնիվ ու զգայուն մարդը սրտաբացություն է ցուցաբերում, իսկ գործարար մարդը լսում է և ուտում[1], հետո էլ կուլ կտա։ Եվ ահա տանտիրուհիդ իրը թե ստանալով մուրհակում հիշատակված գումարը, մուրհակը տալիս է Զեբարովին, իսկ սա առանց քաշվելու պահանջում էր այդ մուրհակը։ Երբ ես այդ ամենը իմացա, ուզեցի հենց այնպես, խղճի հանգստացման համար այդ Զեբարովի հախիցը գալ, բայց այդ ժամանակ իմ և Պաշենկայի միջև համերաշխություն առաջացավ, ու ես պատվիրեցի բոլորովին վերջ տալ այդ ամենին, երաշխավորելով, որ դու կվճարես։ Ես քեզ համար երաշխավորեցի, լսո՞ւմ ես։ Կանչեցինք Զեբարովին, տարա մանեթ գցեցինք նրա ոտքը, ու թուղթը ետ վերցրինք. և ահա պատիվ ունեմ դա ներկայացնելու քեզ. հիմա հավատում են ձեր խոսքին. ահա, վերցրեք. ես մի քիչ էլ պատռել եմ ծայրից։

---

[1] Լսում է և ուտում. բառեր Ի. Ա. Կռիլովի «Կատուն և խոհարարը» առակից (Տ. Բ.)։

Ռազումիխինը պարտագիրը դրեց սեղանին. Ռասկոլնիկովը նայեց դրան, ու ոչ մի բառ չասելով, շուռ եկավ պատի կողմը։ Ռազումիխինը նույնիսկ շփոթվեց։

— Տեսնում եմ, բարեկամ, որ դու էլի քեզ հիմարության ես տվել,— մի րոպեից հետո ասաց Ռազումիխինը։ — Կարծում էի, թե քեզ կուրախացնեմ ու կզվարճացնեմ շատախոսությամբս, բայց ըստ երևույթին միայն չարացրի քեզ։

— Զառանցանքի մեջ ես չէի՞ ճանաչում քեզ,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ նույնպես մի րոպե լռելով ու պատը չդարձնելով ընկերոջ կողմը։

— Այո, չէիր ճանաչում և նույնիսկ կատաղում էիր, մանավանդ երբ մի անգամ ես բերի Զամետովին։

— Զամետովի՞ն... գործավարի՞ն... Ինչի՞ համար։ — Ռասկոլնիկովը արագ շուռ եկավ ու աչքերը հառեց Ռազումիխինի վրա։

— Ի՞նչ պատահեց քեզ... Ինչո՞ւ անհանդստացար։ Ուզեց ծանոթանալ քեզ հետ. ինքը ուզեց, որովհետև մենք քո մասին շատ խոսեցինք... Այլապես ես էլ ումի՞ց կարող էի քո մասին այդքան բան իմանալ։ Լավ, հիանալի մարդ է... իհարկե, որոշ տեսակետից։ Հիմա ես և նա բարեկամներ ենք. համարյա ամեն օր տեսնվում ենք։ Ես հո քաղաքի այս մասն եմ տեղափոխվել։ Դու այդ դեռ չգիտե՞ս։ Հենց նոր եմ տեղափոխվել։ Ես ու նա մի երկու անգամ եղանք Լավիզայի մոտ։ Հիշո՞ւմ ես Լավիզային, Լավիզա Իվանովնային։

— Ես զառանցանքի մեջ որևէ բա՞ն էի ասում։

— Այո։ Ինքդ քեզ կորցրել էիր։

— Ինչի՞ մասին էի զառանցում։

— Այ քեզ բան, ինչի՞ մասին էի զառանցում։ Հայտնի է, թե ինչի մասին են զառանցում... Էհ, աղբերացու, ժամանակ չկորցնենք, հիմա պետք է գործի անցնել։

Ռազումիխինը աթոռից վեր կացավ ու վերցրեց գլխարկը։

— Ինչի՞ մասին էի զառանցում։

— Դե էլ ի՞նչ ես կպել։ Հո չե՞ս վախենում որևէ գաղտնիքից։ Մի անհանդստանա. ուշաթափվելուդ մասին ոչինչ չի ասվել։ Շատ էիր խոսում ինչ-որ շնիկի, գինդերի, ինչ-որ շղթայիկների, Կրեստովսկի կղզու, ինչ-որ զոնտագների, նի-

կոզիմ Յոմիչի, Իլյա Պետրովիչի՝ վերակացուի օգնականի, մասին։ Բացի դրանից, բարեհաճեցիք նույնիսկ շա՛տ, շա՛տ հետաքրքրվել ձեր գուլպայով։ Հա՝ պահանջում էիք՝ տվեք գուլպաները, և վերջ։ Զամետովն ինքը բոլոր անկյուններում փնտրեց քո գուլպաները և օծանելիք քսած, մատանիներ դրած իր սեփական ձեռքերով այդ անպետք բաները ձեզ մատուցեց։ Միայն դրանից հետո հանգստացաք, ու մի ամբողջ օր դրանք պահեցիք ձեր ձեռքերում, անկարելի էր պոկել։ Երևի հիմա էլ ընկած են վերմակիդ տակ։ Հետո էլ շալվարիդ ծոպերն էիր խնդրում, այն էլ խիստ խղճալի։ Մենք հարցուփորձ էինք անում, թե այդ ի՞նչ ծոպեր են, բայց չկարողացանք որևէ բան հասկանալ... Էհ, պետք է դործի անցներ։ Ահա բեղ երեսունհինգ ռուբլի. դրանից վերցնում եմ տասը ռուբլի, իսկ երկու ժամից հաշիվ կնկարկացնեմ։ Միաժամանակ իմաց կտամ Զոսիմովին, թեև ասանց այդ էլ նա պետք է վաղուց այստեղ լիներ, որովհետև ժամը տասներկուսն է։ Իսկ դուք, Նաստենկա, իմ բացակայությամբ շուտշուտ մտեք այստեղ, խմելու կամ ուրիշ բան բերեք, ինչ-որ ուզենա... Պաշենկային ես հիմա կասեմ ինչ որ հարկավոր է։ Ցտեսություն։

— Պաշենկա՛ է անվանում, դրա ոեխին մտիկ,— նրա հետևից ասաց Նաստասյան. հետո բացեց դուռը և սկսեց ոկանջ դնել, բայց չհամբերեց ու վազեց ներքև։ Նրա համար շատ հետաքրքիր էր իմանալ, թե Ռազումիխինը ինչի մասին է խոսում տանտիրուհու հետ. ասհասարակ երևում էր, որ Ռազումիխինը բոլորովին հրապուրել էր նրան։

Հենց որ Նաստասյայի ետևից դուռը ծածկվեց, հիվանդը իր վրայից դեն գցեց վերմակը ու գժվածի պես վեր թռավ անկողնուց։ Աչքերը, ցրածգական անհամբերությամբ նա սպասում էր, որ նրանք շուտ հեռանան, որպեսզի ինքը նրանց բացակայությամբ գործի անցնի։ Բայց ի՞նչ գործի. նա կարծես թե հիմա հակառակի պես մոռացավ այդ բանը։ «Տեր իմ, ասա ինձ միայն այսքանը, արդյոք նրանք գիտե՞ն ամեն ինչ, թե՞ չգիտեն։ Գուցե արդեն գիտեն, ու քանի դեռ պառկած եմ, հակառակն են ձևացնում, ձեռ են առնում, հետո էլ հանկարծ ներս կմտնեն ու կասեն, որ ամեն ինչ վաղուց հայտնի է, և որ իրենք հենց այնպես, լռում էին... Հիմա ի՞նչ ա-

նեմ։ Թարսի պես մոռացա, հանկարծ մոռացա, իսկ քիչ առաջ հիշում էի...»։

Նա կանգնել էր սենյակի մեջտեղում և տանջալից տարակուսանքով նայում էր շուրջը. մոտեցավ դռանը, բացեց, ականջ դրեց. բայց դա այն չէ, ինչ-որ ինքը կուզենար անել։ Հանկարծ կարծես ինչ-որ բան հիշելով, նեռվից դեպի այն անկյունը, որ պատատակ խոռոչ էր բացված, սկսեց հայացքով զննել այն, ձեռքը տարավ խոռոչի մեջ, շոշափեց, բայց դա էլ այն չէր, ինչ-որ պետք էր անել։ Նա մոտեցավ վառարանին, բացեց ու սկսեց շոշափել մոխիրը. անգրուվարտիքի ծոպերի կտորները և պատառոտած գրպանի ծվենները այնպես էլ ընկած էին, ինչպես որ ինքը դրել էր այն ժամանակ, հետևաբար ոչ ոք չէր նայել։ Այստեղ նա հիշեց գուլպան, որի մասին քիչ առաջ պատմում էր Ռազումիխինը։ Ճիշտ է, ահա դա բազմոցի վրա է, վերմակի տակ, բայց այն ժամանակներից այնքան է ճմռթվել ու կեղտոտվել, որ իհարկե, Զամետովը ոչինչ չէր կարող նկատել։

«Վա՜հ, Զամետովը... գրասենյակը... Ինչո՞ւ են ինձ գրասենյակ կանչում, ո՞ւր է ծանուցագիրը։ Վա՜հ... ես շշկլվեցի. այն ժամանակ էին կանչում։ Ես այն ժամանակ էլ զբաղվում էի գուլպան, իսկ հիմա... հիմա ես հիվանդ եմ։ Ինչո՞ւ էր եկել Զամետովը, ինչո՞ւ էր նրան բերել Ռազումիխինը»...— ուժասպառ փնթփնթում էր նա՝ դարձյալ նստելով բազմոցին։ — «Ի՞նչ է սա, կրկին զառանցա՞նք է, թե՞ իսկություն։ Կարծեմ իսկություն է... Հա՜, հիշեցի. փախչել, շուտ փախչել, անպայման, անպայման, փախչել, այո... բայց ո՞ւր, ո՞րտեղ են շորերս, կոշիկներս չկան, տարել են թաքցրել, հասկանում եմ։ Ահա վերարկուս, չեն նկատել։ Ահա և փողը սեղանի վրա, փառք աստծո. ահա և մուրհակը... Ես կվերցնեմ փողը և կգնամ, ուրիշ բնակարան կվարձեմ, ինձ չեն գտնի... Այո, հապա հասցեների սեղա՞նը։ Կգտնեն։ Ռազումիխինը կգտնի։ Ավելի լավ է բոլորովին փախչել... հեռու... Ամերիկա, ու թքել դրանց վրա, մուրհակն էլ կվերցնեմ այնտեղ պետք կգա։ Էլ ի՞նչ վերցնեմ։ Նրանք կարծում են, թե ես հիվանդ եմ։ Նրանք չգիտեն, որ ես կարող եմ քայլել, հա՜-հա՜-հա՜... Ես նրանց աչքերից իմացա, որ նրանք ամեն ինչ գիտեն։ Միայն թե իջնեմ սանդուղքից։ Գուցե այն-

տեղ պահակներ, ոստիկաններ՞ են կանգնած։ Այս ի՞նչ է, Թե՞յ։ Ահա և գարեջուր է մնացել, կես շիշ է, սառն է...»

Նա վերցրեց շիշը, որի մեջ դեռ մի ամբողջ բաժակ գարեջուր էր մնում, ու հաճույքով, մի անգամից խմեց՝ ասես մարելով կրծքի հուրը։ Բայց մի բոպե էլ չէր անցել, երբ գարեջուրը խփեց գլխին, իսկ մեջքով թեթև ու նույնիսկ դուրեկան սարսուռ անցավ։ Նա պառկեց ու վերմակը քաշեց իր վրա։ Նրա մտքերը, որ առանց այն էլ հիվանդագին ու անկապ էին, սկսեցին ավելի ու ավելի իրար խառնվել, ու շուտով դուրեկան ու թեթև քունը համակեց նրան։ Նա հաճույքսամբ գլուխը ընկղմեց բարձի մեջ, ավելի պինդ փաթաթվեց փափուկ, բամբակն վերմակով, որ հիմա փոխարինում էր ատաղձե պատառոտված վերարկուին, մեղմակի շունչ առավ ու խորին, պինդ, բուժիչ քուն մտավ։

Լսելով, որ մեկը իր մոտ է մտնում, նա արթնացավ, բացեց աչքերը ու տեսավ Ռազումիխինին, որը բոլորովին բացել էր դուռը և տարակուսանքով կանգնել շեմքին— չգիտեր ներս անցնի՞, թե՞ ոչ։ Ռասկոլնիկովը արագ վեր կացավ, նստեց բազմոցին ու նայեց նրան՝ կարծես ճգնելով ինչ-որ բան հիշել։

— Հը, քնած չե՞ս, ահա և ես եկա։ Նաստասյա, կապոցը բեր,— դեպի դուրս բղավեց Ռազումիխինը։ — Հիմա հաշիվ կստանաս...

— Ժամը քանի՞սն է,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ անհանգիստ նայելով շուրջը։

— Լավ ես քնել, հա՞-ա. արդեն երեկո է, կլինի ժամի վեցը։ Ավելի բան վեց ժամ քնել ես։

Տե՛ր աստված, ինչո՞ւ այսպես եղավ...

— Դե ինչ կա որ, ասողը կլիներս։ Ո՞ւր ես շտապում, տեսակցությա՞ն, թե՞ ինչ։ Հիմա ամբողջ ժամանակը մեր տրամադրությանն տակ է։ Երեք ժամ է, որ ես քեզ էի սպասում. երեք անգամ եկա, քնած էիր։ Երկու անգամ գնացի Զոսիմովի մոտ, տանը չէր։ Ոչինչ, կգա... Իմ գործերով էլ էի զբաղված։ Ես այսօր տեղափոխվեցի, հորեղբորս հետ բոլորովին տեղափոխվեցի։ Ես հիմա հորեղբայր ունեմ... Դեհ, գործի անցնենք... Նաստենկա, բեր կապոցը։ Հիմա մենք... Հա՛, ի՞նչպես ես քեզ զգում։

— Ես պոռոզ եմ, հիվանդ չեմ... Ռազումիխին, գու վաղո՞ւց ես այստեղ։

— Ասացի՝ երեք ժամ սպասում եմ։

— Ոչ, իսկ առա՞ջ։

— Ի՞նչ առաջ։

— Երբվանի՞ց ես այստեղ գալիս։

— Չէ որ այդ մասին ես քեզ պատմել եմ, թե՞ չես հիշում։

Ռասկոլնիկովը մտիրի մեջ ընկավ։ Ժամ առաջ տեղի ունեցածը նրան պատկերանում էր ինչպես երազում։ Նա չէր կարողանում այդ հիշել և հարցականորեն նայում էր Ռազումիխինին։

— Հը՛մ, մոռացել ես,— ասաց Ռազումիխինը,— գեռ այն ժամանակ ինձ թվում էր, որ խելքդ տեղը չի եկել... Քնելուց հետո հիմա լավացել ես... Հիրավի, տեսքդ բոլորովին լավ է։ Կեցցեսս Հա՛, գործի անցնենք։ Հիմա կհիշես։ Հիմա նայիր, սիրելի բարեկամ։

Նա սկսեց բանդել կապոցը, որով ըստ երևույթին շատ էր հետաքրքրվում։

— Հավատո՞ւմ ես, հոգիս, ես առանձնապես մտահոգված էի սրանով։ Որովհետև հարկավոր է քեզ մարդ դարձնել։ Սկսենք վերևից։ Տեսնո՞ւմ ես այս գդակը,— ասաց Ռազումիխինը՝ կապոցից հանելով բավական լավ, բայց միևնույն ժամանակ շատ սովորական և էժան, հովարավոր մի գլխարկ,— թույլ տուր փորձել չափը։

— Լավ, հետո,— քրթմնջալով հրաժարվեց Ռասկոլնիկովը։

— Ոչ, աղրեաս, Ռոդյա, մի հակառակի, հետո ուշ կլինի. թե չէ ես ամբողջ գիշերը չեմ քնի, որովհետև առանց չափսի, ենթադրաբար եմ գնել։ Իսկն է որ կա,— ցնծագին բացականչեց Ռազումիխինը՝ ընկերոջ գլխին փորձելով գլխարկը,— իսկական չափն է։ Գլխարկը, սիրելիս, հագուստի կարևոր մասն է, յուրատեսակ հանձնարարական։ Տոլստյակովը, իմ ընկերը, ամեն անգամ ստիպված է լինում հանել իր գդակը, մտնելով այնպիսի տեղ, ուր բոլորն էլ լայնեզր կամ հովարավոր գլխարկներով են լինում։ Բոլորը կարծում են, թե նա այդ անում է ստրկական զգացումներից

զրգված, իսկ նա այդպես է անում, որովհետև ամաչում է Բուլնաբուլնի նմանվող իր գլխարկից. դե, ամաչկոտ մարդ է, էլի։ Հա՛, Նաստենկա, ահա ձեզ երկու գդակ. սույն պալմերստոնը[1] (նա անկյունից հանեց Ռասկոլնիկովի ճմռթված, կլոր, լայնեզր գլխարկը, որը հայտնի չէ ինչու պալմերստոն անվանեց) և սույն ոսկի գդակը,— համեմատեցեք։ Հապա, Ռոդյա, գնահատիր, ի՞նչ ես կարծում, որքա՞ն եմ վճարել։ Նաստենկա, դու ասա,— դիմեց նա վերջինիս, տեսնելով, որ Ռասկոլնիկովը լռում է։

— Որևէ բան կոպեկ ես տվել,— պատասխանեց Նաստասյան։

— Բան կոպեկ կ. Հիմարի մեկը,— վիրավորված բղավեց Ռազումիխինը. — Հիմա բան կոպեկով ընդ էլ չեն գնի. ուրիշ կոպեկ եմ տվել, այն էլ գործածված լինելու պատճառով։ Այստեղ պայման կա. սա կմաշես, նկող տարի մի ուրիշը ձրի կտան, հոգիս վկա։ Լավ, հիմա վերցնենք Ամերիկյան Միացյալ Նահանգները, ինչպես սա անվանում էին մեզ մոտ, գիմնազիայում[2]։ Նախազգուշացնում եմ, որ ես հպարտանում եմ այս շալվարով,— և նա Ռասկոլնիկովի առջև փռեց բրդե, բարակ գործվածքից կարված մոխրագույն մի տնդրավարտիք,— ոչ պատռված տեղ ունի, ոչ էլ թեկուզ մի հատ բիծ, և բավական տանելի է, թեպետև հագնված. այստեղ է նաև բաճկոնակը, նույն գույնին է, ինչպես պահանջում է մոդան։ Իսկ որ հագնված է, դա ավելի լավ է, ճմարիտ խոսք, ավելի նուրբ է և փափուկ... Գիտե՞ս, Ռոդյա, աշխարհում հաջողությունների հասնելու համար իմ խորհրդով հարկավոր է միշտ հետևել սեզոնին. եթե հունվարի տասներեքին չտանես, բանկումդ մի քանի ռուբլի ավելի լավ կմնա։ Նույնը պետք է ասել նաև սույն գնումների նը-կատմամբ։ Հիմա ամառային սեզոն է, ես էլ ամառային գնումներ եմ կատարել, իսկ աշնանամուտին սեզոնը առանց ոտն էլ ավելի տաք կտրուկներն կպահանջի, ուրեմն հարկ կլի-

[1] Պալմերստոն— մի տեսակ երկար վերարկու (XIX դարի առաջին կեսի անգլիական պետական գործիչ լորդ Պալմերստոնի անունով) (Ծ. Բ.)։

[2] Այսինքն՝ գիմնազիայի աշակերտները штаны (շալվար) բառի փոխարեն կատակաբար գործ էին ածում штаты (նահանգներ) բառը և շալվարը անվանում էին Американские Соединенные штаты (Ամերիկյան Միացյալ Նահանգներ) (Ծ. Բ.)։

նի սրանք դեն գցել... մանավանդ որ այս ամենը այն ժամանակ պիտանի չի լինի. եթե ոչ հագնողի շռայլության, ապա խիստ քրքրվածության պատճառով։ Դեհ, գնահատիր. քո կարծիքով որքա՞ն արժե. երկու ռուբլի քսանհինգ կոպեկ։ Հիշիր, դարձյալ նույն պայմանով է. սա կմաշվի, եկող տարի մի ուրիշը ձրի կվերցնեիս։ Ֆեդյաևի խանութում այլ կերպ չեն վաճառում. մի անգամ վճարել ես, և դա ամբողջ կյանքումդ բավական է, որովհետև մի ուրիշ անգամ ինքդ էլ չիս գնա։ Հիմա վերցնենք կոշիկները. ո՞նց են, ճիշտ է, հագնված են, բայց երկու ամիս կդիմանան, որովհետև արտասահմանում են կարված, արտասահմանյան ապրանքից են. անգլիական դեսպանության քարտուղարը անցյալ շաբաթ ծախել էր հին շորերի շուկայում. ընդամենը վեց օր էր հագել, բայց փողը նրան շատ էր հարկավոր։ Գինը մեկ ռուբլի հիսուն կոպեկ է։ Հաչո՞ղ է։

— Գուցե ոտքերին հարմար չեն,— ասաց Նաստասյան։

— Հարմար չե՞ն։ Հապա սա ի՞նչ է,— Բաղումիխինը դրպանից հանեց Ռասկոլնիկովի հին, կոշտացած, ծակծկված կոշիկը, որ ամբողջովին պատած էր չորացած ցեխով, — ես սա հետս էի տարել, սրանով էլ որոշեցին իսկական չափը։ Այս ամբողջ գործը զգուշությամբ էր կատարվում։ Սպիտակեղենի մասին ես ու տանտիրուհին համաձայնության եկանք։ Ահա երեք շապիկ, կտավից են, բայց մոդայական երեսով... Այսպես ուրեմն, ութսուն կոպեկ գլխարկը, երկու ռուբլի քսանհինգ կոպեկ մյուս շորերը, ընդամենը երեք ռուբլի հինգ կոպեկ. մեկ ռուբլի հիսուն կոպեկ կոշիկները, որովհետև շատ լավն են. ընդամենը չորս ռուբլի հիսունհինգ կոպեկ, հինգ ռուբլի էլ ամբողջ սպիտակեղենը. բոլոր շապիկները մեկտեղ գնահատեցինք. ընդամենը ճիշտ ինը ռուբլի հիսունհինգ կոպեկ։ Մանրը, քառասունհինգ կոպեկը պղնձե հինգ կոպեկանոցներով է, ահա, հաճեցեք ընդունել։ Այսպիսով, Ռոդյա, դու ամբողջովին ապահովված ես հագուստով, որովհետև իմ կարծիքով քո վերարկուն ոչ միայն դեռ կարող է ծառայել, այլև նույնիսկ առանձնապես վայելուչ տեսք ունի, ահա թե ինչ է նշանակում Շարմերի մոտ պատվիրել. գուլպաների ու մնացած բաների մասին ինքդ կհոգաս. մեզ մոտ մնում է քսանհինգ ռուբլի. իսկ Պա-

շենկայի ու բնակարանավարձի մասին մի անհանգստանա. ես խոսել եմ. անսահման վարկ է բաց անում։ Իսկ հիմա թույլ տուր փոխել սպիտակեղենդ, թե չէ, գիտե՞ս, հիվանդությունը այժմ հենց շապիկիցդ է որ կա...

— Թող, չեմ ուզում,— հրաժարվեց Ռասկոլնիկովը, որ զզվանքով էր լսում Ռազումիխինի լարված ու աշխույժ պատմությունը հագուստ գնելու մասին...

— Այդ անկարելի է, եղբայր. հապա ինչո՞ւ էի ես կոշիկներ մաշում,— պնդում էր Ռազումիխինը։ — Նաստասյա, մի ամաչիր, օգնեցեք, այ, այդպես— ու չնայելով Ռասկոլնիկովի դիմադրության, Ռազումիխինը այնուամենայնիվ փոխեց նրա սպիտակեղենը։ Ռասկոլնիկովը բնկավ բարձին ու երկար բան ոչ մի բան չասաց։

«Ինչքա՞ն են ինձ զզվացնում,— մտածում էր նա։ — Այդ բոլորը ի՞նչ փոշով է գնված,— հարցրեց նա վերջապես, նայելով պատին։

— Ինչ փոշո՞վ, այ քեզ բա՞ն, քո սեփական փոշով։ Մայրիկդ է ուղարկել, Վախրուշինի կողմից է, այսօր արտելականը բերեց. այդ է՞լ ես մոռացել։

— Հիմա հիշում եմ...— երկար ու մռայլ մտածմունքից հետո ասաց Ռասկոլնիկովը։ Ռազումիխինը հոնքերը կիտելով, անհանգիստ նայում էր նրան։

Դուռը բացվեց, ներս մտավ բարձրահասակ ու պնդակազմ մի մարդ, որը իր տեսքով կարծես թե արդեն մի քիչ ծանոթ էր Ռասկոլնիկովին։

— Զոսիմով, վերջապե՞ս,— ուրախ գոչեց Ռազումիխինը։

IV

Զոսիմովը բարձրահասակ և չաղ մարդ էր, ուռած, դժգույն ու դալուկ, կոկիկ սափրված դեմքով, բաց-շիկավուն, կոշտ մազերով, ակնոցով. ճարպակալելուց ուռած մատին մի մեծ ոսկի մատանի էր դրել։ Նա կլիներ մոտ քսանյոթ տարեկան։ Հագել էր լայն, շքեղ, թեթև վերարկու, ամառային սպիտակ անդրավարտիք, և առհասարակ ամբողջ հագուստը լայն էր, պճնագեղ ու նոր կարած. վերնաշապիկը բոլորո-

ելին մաքուր էր, ժամացույցի շղթան՝ մեծ և հաստ։ Նրա շարժումը դանդաղ էր, կարծես ալարկոտ ու միևնույն ժամանակ վարժ ու անփույթ. ամեն րոպե նկատվում էր հավակնոտությունը, որը, սակայն, նա թաքցնում էր խնամքով։ Նրան ճանաչողները բոլորն էլ գտնում էին, որ նա ծանր մարդ է, բայց ասում էին, որ գիտե իր գործը։

— Ես երկու անգամ նկա քեզ մոտ... Տեսնո՞ւմ ես, ուշքի է եկել,— ասաց Ռազումիխինը։

— Տեսնում եմ, տեսնում եմ. հը, այժմ մենք ինչպե՞ս ենք մեզ զգում,— դիմեց Զոսիմովը Ռասկոլնիկովին՝ ուշադրությամբ նայելով նրան ու նստելով նրա կողքին, բազմոցին, ոտների կողմը, ուր և մեկնվեց, որքան այդ հնարավոր էր։

— Շարունակ մոայլ տրամադրության մեջ է,— ասաց Ռազումիխինը,— հիմա փոխեցինք սպիտակեղենը, քիչ մընաց լաց լիներ։

— Հասկանալի է. կարելի էր սպիտակեղենը հետո փոխել, եթե ինքը չէր ցանկանում... Սրակազարկը հիանալի է։ Գլուխդ էլի մի քիչ ցավում է, հա՞։

— Ես առողջ եմ, ես բոլորովին առողջ եմ,— կտրուկ և ջղայնոտ ասաց Ռասկոլնիկովը՝ հանկարծակի մի քիչ բարձրանալով տեղից ու փայլեցնելով աչքերը։ Սակայն անմիջապես կրկին ընկավ բարձին ու դարձավ պատի կողմը։ Զոսիմովը ակնապիշ հետամտում էր նրան։

— Շատ լավ է... ամեն ինչ կարգին է,— ալարկոտ ասաց նա։ — Որևէ բան կկերե՞լ է։

Նրան պատասխանեցին և հարցրին, թե ինչ կարելի է տալ։

— Ամեն ինչ կարելի է տալ... Սուպ, թեյ... իհարկե, սունկ և վարունգ չտալ, տավարի միս— նույնպես, և... էլ ի՞նչ ասել կուզի... — Զոսիմովը և Ռազումիխինը իրար նայեցին։ — Դեղ-մեղ բոլորովին չտալ. վաղը ես կնայեմ... կարելի էր և այսօր... ը-ըմ, այո...

— Վաղը երեկոյան ես սրան զբոսանքի եմ տանում,— հայտարարեց Ռազումիխինը,— կգնանք Ցուսուպովի այգին, հետո էլ «Պալե-դը-Կրիստալ»։

— Վաղը ես նրան չէի անհանգստացնի, սակայն... մի քիչ... լավ, հետո կտեսնենք։

— Ափսոս, ես հենց այսօր նոր բնակարան տեղափոխվելու առթիվ քեֆ եմ կազմակերպում, այստեղից երկու քայլ է. սա է՛լ լիներ, էլի՛։ Թեկուզ պառկեր բազմոցին, միայն թե մեր մեջ լիներ։ Դու հո կգա՞ս,— դիմեց Ռազումիխինը Զոսիմովին,— տես, չմոռանաս, խոստացել ես։

— Թերևս, միայն թե քիչ՛ուշ։ Ի՞նչ ես պատրաստել։

— Կլինի թեյ, օղի, տառեխ։ Կմատուցեն կարկանդակ. մերոնք են հավաքվելու։

— Այսինքն՝ ովքե՞ր։

— Բոլորն էլ այստեղացի են, նոր մարդիկ, բացի միայն Հորեկրորիցս, դի նա էլ նոր մարդ է, միայն երեկ է ժամանել Պետերբուրգ, ինչ-որ գործեր ունի. հինգ տարին մի անգամ ներ տանում։

— Ո՞վ է։

— Ամբողջ կյանքում գավառական փոստապետ է եղել... լինոախոշակ է տառանում, վաթսունհինգ տարեկան է, էհ, չարժե խոսել... Սակայն ես սիրում եմ նրան։ Կգա Պորֆիրի Պետրովիչը. հետաքննական գործերի այստեղի պրիստավ է... իրավաբան։ Դու հո ճանաչում ես...

— Նա է՞լ քո ինչ-որ ազգականն է։

— Շատ հեռավոր. իսկ դու ինչո՞ւ ես նոթերդ կիտում. մի անգամ գժտվել եք, դրա համար չե՞ս գա։

— Թքել եմ նրա վրա...

— Ավելի լավ։ Հա՛, կլինեն ուսանողներ, մի ուսուցիչ, մի աստիճանավոր, մի երաժիշտ, մի սպա, Զամետովը...

— Ասա, խնդրեմ, մի ինչ-որ Զամետովի հետ ի՞նչ առընչություն կարող եք ունենալ դու կամ նա,— Զոսիմովը գլխով ցույց տվեց Ռասկոլնիկովին։

— Ախ, այդ փնթփնթաննե՛րը։ Իբր թե սկզբունքներ են... և դու հենց միայն սկզբունքներին ես կառչում, ասես զսպանակների վրա ես նստած. իր կամքով շուռ գալ չի համարձակվում. իսկ իմ կարծիքով նա լավ մարդ է,— ահա և սկզբունքը, ու ես այլ բան չեմ էլ ուզում գիտենալ։ Զամետովը հրաշալի մարդ է։

— Եվ շահվում է անմաքուր ճանապարհով։

— Թող շահվի, ֆքած դրա վրա։ Ի՞նչ անենք, որ այդ կերպ է շահվում,— հանկարծ բղավեց Ռաղումիխինը՝ մի տեսակ անբնականորեն ջղայնացած,— մի՞թե ես գովաբանել եմ այն, որ նա անմաքուր ճանապարհով է շահվում։ Ես ասել եմ, որ նա յուրատեսակ լավ մարդ է։ Իսկ եթե ուզիղն ասենք, բոլոր տեսակետներից դատենք, մի՞թե շատ են լավ մարդիկ։ Ես հավատացնում եմ, որ ինձ կատաղ բոլորովին չնչին գին, ընդամենը մի հատ եփած սոխ, այն էլ եթե քիչ էլ հետս տան...

— Այդ քիչ է. ես քեզ համար երկուսն էլ կտամ...

— Իսկ ես քեզ համար միայն մեկը կտամ։ Էլի՛ սրախոսիր։ Զամեատովը դեռ երեխա է, ես դեռ նրա մաղերից կքաշքշեմ, նրան պետք է գրավել և ոչ թե վանել։ Վանելով չես ուզի մարդուն, առավել ևս երեխային։ Երեխայի նկատմամբ կրկնակի զգուշություն է հարկավոր։ Էհ, դուք, առաջադեմ բթամիտներ, ոչնչից ոչինչ չեք հասկանում։ Մարդուն չեք հարգում, ձեզ եք վիրավորում... Եթե ուզում ես իմանալ, իմ և նրա համար թերևս ընդհանուր մի գործ է բացվել։

— Ցանկալի է իմանալ։

— Էլի ներկագործի, այսինքն՝ ներկաբարի գործն է... Մենք նրան կազատենք։ Ասենք, հիմա ոչ մի վտանգ էլ չկա։ Գործը հիմա բոլորովին, բոլորովին պարզ է։ Մենք միայն ընթացք կտանք։

— Այդ ի՞նչ ներկարար է։

— Ինչպե՞ս, մի՞թե ես չեմ պատմել։ Ո՞չ։ Հա, կարծեմ ես քեզ միայն սկիզբն եմ պատմել... գործը վերաբերում է պառավի, գրավչականով փող տվողի, աստիճանավորի այրի կնոջ սպանության... այս գործին խառն է նաև ներկարարը...

— Այդ սպանության մասին ես քեզնից առաջ եմ լսել ու նույնիսկ հետաքրքրվում եմ այդ գործով... մասամբ... մի առիթով... լրագրերում էլ եմ կարդացել. և ահա...

— Լիզավետային էլ են սպանել,— հանկարծ բերանից թոցրեց Նաստասյան՝ դիմելով Ռասկոլնիկովին։ Նա ամբողջ ժամանակ մնացել էր սենյակում, կուչ էր եկել դռան մոտ ու լսում էր։

— Լիզավետային,— հազիվ լսելի ձայնով քրթմնջաց Ռասկոլնիկովը։

— Հա, Լիզավետային, առուտուր անող կնոջը, թե՞ չես ճանաչում։ Նա գալիս էր այստեղ, ներքևի հարկը։ Վարկատել էր քո շապիկը։

Ռասկոլնիկովը շուռ եկավ դեպի պատը, որի կեղտոտ, դեղին պաստառը նախշած էր ճերմակ ծաղիկներով։ Նա ընտրեց մի անճոռնի, ինչ-որ կինամոնագույն գծիկներ ունեցող սպիտակ ծաղիկ ու սկսեց նայել, թե դա քանի թերթիկ ունի, թերթիկների վրա ինչպիսի խազեր և որքան գծիկներ կան։ Նա զգում էր, որ իր ձեռքերն ու ոտքերը թուլացել, ոսկես փայտացել են, բայց և չէր փորձում շարժվել և համառորեն նայում էր ծաղիկին։

Իսկ ի՞նչ ասելություն ունի ներկարարը այդ գործի մասին։ Ինչ որ մի ուսանողի անբուժելիությամբ ընդհատեց Սոնյայի նամակատուփի շաղակրատանքը։ Նամակատուփն էլ հանեց ու բանեց։

— Նրան էլ են սպանող համարում,— տաքացած պատասխանեց Ռազումիխինը։

— Հանցանշանների՞ կան, ի՞նչ է։

— Որտեղի՞ց։ Ասենք հանցանշանի հիման վրա են մեղադրում, բայց այդ հանցանշանը հանցանշան չէ, ահա թե ինչ է պահանջվում ապացուցել։ Սա նույնն է, ինչ-որ եղել է այդ... ը-ը... Կոխի ու Պեստրյակովի նկատմամբ, որոնց կասկածի տակ էին առել ու սկզբում ձերբակալել։ Թյո՛ւ, ինչպիսի՞ հիմարությամբ է դա արվում, նույնիսկ կողմնակի մարդն էլ է զզվում։ Պեստրյակովը գուցե այսօր անցնի ինձ մոտ... Ի դեպ, Ռոդյա, դու այդ բանը արդեն գիտես, դա պատահել է մինչև քո հիվանդությունը, հենց այն օրվա նախօրյակին, երբ գրասենյակում այդ մասին պատմել էին, և դու ուշաթափվել էիր...

Զոսիմովը հետաքրքրությամբ նայեց Ռասկոլնիկովին. սա չէր շարժվում։

— Գիտե՞ս ինչ, Ռազումիխին, նայում եմ քեզ ու մտածում, թե դու որքան շատ ես գլխացավանք սիրում,— ասաց Զոսիմովը։

— Թող այդպես լինի, բայց և այնպես մենք ներկարարին կազատենք,— բղավեց Ռազումիխինը՝ բռունցքը խփելով սեղանին։ — Գիտե՞ս, թե այստեղ ինչն է ամենից ցա-

վալին։ Բանը այն չէ, որ նրանք ստում են. ստելը միշտ էլ կարելի է ներել. ստելը վտանգավոր չէ, որովհետև դեպի ճշմարտությունն է տանում։ Ոչ, ցավալին այն է, որ ստում են ու հավատում իրենց ստին։ Ես հարգում եմ Պորֆիրիին, բայց... ախր ի՞նչն է հենց սկզբից նրանց խելքից հանել, դուռը փակ էր եղել, իսկ երբ նկան գոնապանի մոտ, բաց էր. ուրեմն Կոխն ու Պետարյակովն են սպանել. ահա նրանց տրամաբանությունը

— Էլ մի տաքանա. նրանց հենց այնպես էին բռնել. հո չէ՞ր կարելի... Ի միջի այլոց, ես հանդիպում էի այդ Կոխին. բանից դուրս եկավ, որ նա պառավից ժամկետանց իրեր էր գնում, հա՞։

— Այո, ինչ-որ մի սրիկա է։ Նա մուրհակներ էլ է գնում։ Գործ անող է։ Էհ, թող գնա գրողի ծոցը։ Հաստատո՞ւմ ես դու, թե ես ինչի դեմ եմ գայրանում. նրանց գռեհիկ, փտած, քարացած ընտանիության դեմ եմ գայրանում... Այստեղ կարելի է մի գործում մի ամբողջ նոր ուղի հայտնագործել։ Հենց միայն հոգեբանական տվյալներով կարելի է ցույց տալ, թե ինչպես պետք է գտնել իսկական հետքը։ Ասում են՝ «Մենք փաստեր ունենք»։ Բայց չէ՞ որ փաստերը բավական չեն. գործի կեսը առնվազն այն է, թե ինչպես ես կարողանում վարվել փաստերի հետ։

— Իսկ դու փաստերի հետ կարողանո՞ւմ ես վարվել։

— Ախր հո չի՞ կարելի լռել, երբ զգում ես, պարզ զգում ես, որ կարող էիր օգնել գործին, եթե... էհ... Դու մանրամասն գիտե՞ս այդ գործը։

— Սպասում եմ տվյալներ ներկարարի մասին։

— Հա՛, դե լսիր այս պատմությունը. սպանությունից հետո հինգ երրորդ օրվա առավոտն էր, նրանք դեռ գլուխ էին ցավեցնում Կոխի ու Պետրյակովի հետ, թեև սրանցից ամեն մեկը ապացուցել էր իր յուրաքանչյուր քայլը. ակներևությունը աչք է ծակում։ Հենց այդ ժամանակ հանկարծ բոլորովին անսպասելի մի փաստ է հայտնվում։ Մի ոմն գյուղացի Դուշկին, հենց այն տան դիմաց գտնվող օղեստան տերը, գնում է ոստիկանության գրասենյակ, բերում ոսկե գինդերով մի ղարդեղենի տուփ ու ահա թե ինչ է պատմում. «Երկու օր առաջ, երեկոյան, մոտավորապես ժամը ութից

քիչ անց (ուշադրության առ օրը և ժամը) ինձ մոտ եկավ ներկարար բանվոր Միկոլայը, որը մինչ այդ ցերեկով էր գալիս ինձ մոտ։ Նա բերեց ըստ-ն ականջոզներով ու թանկագին քարերով այն տուփը ու երկու ռուբլի խնդրեց, ասելով, որ սրանք թողնում է ինձ մոտ իբրև գրավական։ Ես հարցրի՝ ո՞րտեղից ես վերցրել. ասաց, որ մայթի վրա է գտել։ Այդ մասին ես նրան էլ ոչինչ չհարցրի (սա Դուշկինն է ասում), այլ նրան տվի մի թղթե մանեթանոց (այսինքն մի ռուբլի), որովհետև մտածում էի, որ եթե ինձ մոտ չթողնի, ուրիշի մոտ կտանի, մեկ է, խմելու կտա, ավելի լավ է սա ինձ մոտ մնա, գրանից հո վնաս չե՞մ քաշի. իսկ թե որ տերը դուրս գա կամ լուրեր տարածվեն, ես կներկայացնեմ»։ Դե, իհարկե, Դուշկինը գլխից դուրս է տալիս, չնավարի ասում է, ես ասենում եմ այդ Դուշկինին, Նա ինքը գրավական վերցնող է. թաքցնում է գողացածը ու երեսուն ռուբլի արժողությամբ իրը Միկոլայից ամենևին էլ «ներկայացնելու» համար չի վերցրել։ Ուղղակի վախենալուց է գրասենյակ գնացել։ Հա՛, գրողի ծոցը, լսիր, Դուշկինը շարունակում է. «Այդ այուղացուն, Միկոլայ Դեմենտևին, փոքրուց եմ ճանաչում, մեր նահանգից է, Զարայսկի գավառից, մենք ինքներս հո Ռյազանի նահանգից ենք։ Իսկ Միկոլայը թեև հարբեցող չէ, բայց խմում է, ու մեզ հայտնի էր, որ նա հենց այդ տանն է աշխատում, ներկում Միտրիի հետ, իսկ նա ու Միտրին մի տեղից են։ Ու ստանալով մանեթանոցը, նա իսկույն մանրեց, մի անգամից երկու թաս արաղ խմեց, վերցրեց մանրը ու գնաց, իսկ Միտրիին ես այդ պահին նրա հետ չտեսա։ Մյուս օրը մենք լսեցինք, որ Ալյոնա Իվանովնային ու նրա քույր Լիզավետա Իվանովնային սպանել են կացնով, մենք նրանց ճանաչում էինք, ու ես այստեղ կասկած տարա ականջոզների մասին, քանի որ մեզ հայտնի էր, որ հանգուցյալ պառավը գրավականով փող էր տալիս։ Ես գնացի նրանց ապրած տունը, կամացուկ բարձրացա ու նախ և առաջ հարցրի՝ այստե՞ղ է Միկոլայը։ Միտրեյը ասավ, թե Միկոլայը քեֆ է արել, տուն է եկել լուսաբացին, հարբած, տանը մնացել է մոտ տասը րոպե ու էլի գնացել է, իսկ Միտրեյը հետո նրան չի տեսել ու աշխատանքը մենակ է վերջացնում։ Իսկ նրանք աշխատում էին սպանվածների բնակարանից

ներքև, երկրորդ հարկում։ Լսելով այդ բոլորը, մենք այդ ժամանակ ոչ ոքի ոչինչ չհայտնեցինք (սա Դուշկինն է ասում), իսկ սպանության մասին ինչ որ կարող էինք իմացանք ու էլի նույն կասկածանքով տուն վերադարձանք։ Իսկ այսօր առավոտյան, ժամը ութին (այսինքն՝ սպանության երրորդ օրը, հասկանո՞ւմ ես) մեկ էլ տեսնեմ ինձ մոտ է գալիս Միկոլայը, խմած, բայց այնքան էլ հարբած չէ, կարող է խոսք հասկանալ։ Նստեց նստարանին, լռում է։ Այդ պահին, բացի նրանից, օդեստանը կար ընդամենը մեկ կողմնակի մարդ, մի ծանոթ մարդ էլ քնել էր նստարանի վրա, այնտեղ էին և մեր երկու տղաները։ — Տեսե՞լ ես Միտրեին,— հարցնում եմ ես։ — Ոչ,— ասում է,— չեմ տեսել։ — Ու այստեղ չե՞ս եղել։ — Երկու օր չեմ եղել,— ասում է նա։ — Իսկ այս գիշեր որտե՞ղ ես եղել։ — Պեսկիում— ասում է,— կոլոմնացիների մոտ։ — Իսկ այն օրը որտեղի՞ց էիր վերցրել ականջօղերը,— ասում եմ ես։ — Մայթի վրա եմ գտել,— ու նա այդ այնպես է ասում, որ կարծես թե դա վատ բան է, ու չի նայում։ — Լսե՞լ ես, թե այն երեկո, այն ժամին ինչ է պատահել ձեր ներկած բնակարանի վերևում,— հարցնում եմ ես։ — Ոչ,— ասում է, — չեմ լսել,— իսկ ինձ լսում է աչքերը չռած ու հանկարծ սկրթնում, կավճի գույն առնում։ Ես սա պատմում եմ, նայում նրան, իսկ նա վերցնում է գլխարկը, վեր է կենում։ Ուզեցի բռնել նրան. «Կաց, Միկոլայ,— ասում եմ,— արաղ կխըմե՞ս»։ Ու աչքով եմ անում տղային, որ դուռը պահի, ու դուրս եմ գալիս վաճառասեղանի հետևից. Միկոլայը փախչում է ինձնից, վազում փողոց, հետո էլ մյուս փողոցը. ու էլ չտեսա նրան։ Այստեղ իմ կասկածները արդարացան, քանի որ մեղավորը հենց նա է որ կա...»

— Անշուշտ...— ասաց Զոսիմովը։

— Կաց, լսիր վերջը։ Հասկանալի է, որ սկսեցին արագ փնտրել Միկոլային. Դուշկինին բռնեցին ու նրա մոտ խուզարկություն կատարեցին, Միտրեին նույնպես. կոլոմնացիներին էլ մի լավ թափ տվին. միայն երրորդ օրը հանկարծ բերում են հենց Միկոլային. նրան բռնել էին № ուղեկալի մոտ, իշևանում։ Նա մտել էր այնտեղ, հանել վզի արծաթե խաչը ու դրա փոխարեն մի բաժակ օղի խնդրել։ Տվեցին։ Քիչ հետո մի կին գնում է դռան ու պատի անցքից տեսնում է, որ նա սարա-

յում գոտին կապել է դերանին, կախաղան սալքել. բարձրանում է գերանի կտորի վրա և ուզում է օղակը վիզը գցել. կինը լեղապատառ ճչաց, հավաքվեցին մարդիկ։ «Այ թե դու ինչ տեսակ մարդ ես»։ — «Ինձ տարեք,— ասում է,— այսինչ ոստիկանատունը, կխոստովանեմ մեղքս»։ Նրան պատշաճ օգնյորներով[1] ներկայացրին այստեղի ոստիկանատունը։ Էհ, ով ես, ինչ ես, քանի տարեկան ես և այլն, և այլն։ «Քսաներկու»,— ասում է նա։ Հարց. «Երբ դու և Միտրեյը աշխատում էիք, այսինչ ժամին սանդուղքով բարձրացող որևէ մեկին չտեսա՞ք»։ Պատասխան. «Հայտնի բան է, գուցե և ինչ-որ մարդիկ էին անցնում, բայց մենք չնկատեցինք»։ «Իսկ որևէ ձայն կամ ազմուկ կամ ուրիշ բան չլսեցի՞ք»։ — «Առանձին ոչինչ չլսեցինք»։— «Իսկ այն օրը քեզ, Միկոլայ, հայտնի՞ էր, որ այսինչ այրի կնոջը և նրա քրոջը այսինչ օրը և ժամին սպանել են ու կողոպտել»։ — «Ամենևին ոչինչ հայտնի չէր։ Սրրորդ օրը օղետանը Աֆանասի Պավլովիչից լսեցի»։—«Իսկ դինգերը ո՞րտեղից վերցրիր»։ — «Մայթի վրա գտա»,— «Ինչո՞ւ մյուս օրը Միտրիի հետ աշխատանքի չդնացիր»։— «Որովհետև քեֆ էի անում»։ — «Ո՞րտեղ էիր քեֆ անում»։ — «Այսինչ ու այնինչ տեղը»։ — «Ինչո՞ւ փախար Դուշկինից»։ — «Ինչո՞ւ, որովհետև շատ վախեցա»։ — «Ինչի՞ց վախեցար»։ — «Դատից ու պատժվելուց»։ — «Ի՞նչպես կարող էիր վախենալ, եթե դու քեզ ոչ մի բանի համար մեղավոր չես զգում»... Էհ, հավատո՞ւմ ես, թե՞ չես հավատում, Զոսիմով, այսպիսի հարց էր տրվել, ու տառացիորեն այսպիսի արտահայտություններով, ես հաստատ գիտեմ, ինձ ճիշտ են հաղորդել։ Ի՞նչ կասես, հը՞։

— Օ, ոչ, այնուամենայնիվ հանցանշաններ կան։

— Ես հիմա հանցանշանների մասին չեմ խոսում, ես խոսում եմ նրանց տված հարցի և այն մասին, թե նրանք ինչպես են հասկանում իրենց դերը։ Էհ, գլուխը քարը... Հը՛մ, նրան հուպ տվին, հուպ տվին, նեղեցին ու նեղեցին, և նա ահա թե ինչ խոստովանեց. «Ոչ թե մայթի վրա, այլ բնակարանում եմ գտել, որի հատակին ես ու Միտրեյը ներկ էինք բռում»։ — «Այդ ի՞նչպես եղավ»։ — «Հենց այնպես, ես ու Միտրին ամբողջ օրը, մինչև ժամի ութը ներկում էինք ու

[1] Մեծարանքով (ֆրանս. bonnear)։

պատրաստվում էինք գնալ, իսկ Միտրեյը վերցրեց վրձինը ու երեսիս ներկ քսեց, ներկոտեց երեսս ու փախավ, իսկ ես ընկա նրա հետևից։ Վազում եմ նրա հետևից ու լեղապատառ բղավում։ Երբ որ սանդուղքից իջնում և մոտենում էի դարպասին, թափով զարկվեցի դռնապանին և պարոններին, իսկ թե նրա հետ քանի պարոն կար, միտս չէ, իսկ դռնապանը դրա համար ինձ հայհոյեց, մյուս դռնապանը նույնպես հայհոյեց, դռնապանի կնիկը դուրս եկավ, նա էլ մեզ հայհոյեց, մի պարոն էլ կնոջ հետ մտնում էր դարպասից, նա էլ մեզ հայհոյեց, երբվհետև ես ու Միտկան խանդարում էինք նրանց անցնելուն. ես քաշել էի Միտկայի մազերից, նրան գետին էի ընկել ու ծնքսում էի, Միտկան էլ իմ տակից քաշում էր մազերիցս ու ինձ ծնքսում, ու մենք այդ անում էինք ոչ թե չարությամբ, այլ սիրով, խաղ էինք անում։ Հետո էլ Միտկան դուրս պրծավ ու փախավ փողոց, ու ես էլի ընկա նրա հետևից, բայց չհասա ու մենակ վերադարձա բնակարանը, որովհետև հարկավոր էր հավաքել իրերը։ Սկսեցի հավաքել ու սպասում եմ Միտրեին, դուցե թե գար։ Դեպի հաշտը տանող դռան մոտ, պատի ետևում, անկյունի կողմում ոտքս դիպավ տուփին։ Մոտիկ եմ անում, ընկած է տուփը, թղթով փաթաթված։ Ես թուղթը հանեցի, փոքրիկ կեռիկներ եմ տեսնում, կեռիկներն էլ հանեցի, և ահա ականջօղեր տուփի մեջ...»

— Դռան ետևո՞ւմ, դռան ետևո՞ւմ էր ընկած, դռան ետևո՞ւմ,— հանկարծ բղավեց Ռասկոլնիկովը՝ պղտոր, վախեցած աչքերը հառելով Ռազումիխինին, ու հենվելով ձեռքին, դանդաղորեն քիչ բարձրացավ բազմոցից։

— Այո... ի՞նչ կա որ, ի՞նչ պատահեց քեզ, ինչո՞ւ այդպես եղար։ — Ռազումիխինը նույնպես քիչ բարձրացավ տեղից։

— Ոչինչ...— հազիվ լսելի պատասխանեց Ռասկոլնիկովը՝ դարձյալ ընկնելով բարձին և դարձյալ շուռ գալով դեպի պատը։ Բոլորն էլ մի քիչ լռեցին։

— Երևի ննջել էր, քնաթաթախ էր,— վերջապես ասաց Ռազումիխինը՝ հարցականորեն նայելով Զոսիմովին. սա գլխով թեթև բացասական նշան արեց։

— Դե շարունակիր, հետո ի՞նչ եղավ,— ասաց Զոսիմովը։

— Ի՞նչ պիտի լիներ որ։ Հենց որ նա տեսավ գինդերը,

մոռացավ բնակարանն էլ, Միտկային էլ, իսկույն վերցրեց գլխարկը և վազեց Դուշկինի մոտ, ու ինչպես հայտնի է, նրանից մի ռուբլի ստացավ, խաբեց նրան, ասելով, թե մայթի վրա է գտել, և իսկույն սկսեց խմել։ Իսկ սպանության մասին պնդում է առաջվանը՝ «Ամենևին ոչինչ չգիտեմ, միայն երրորդ օրն եմ լսել»։—«Իսկ ինչո՞ւ մինչև այժմ չէիր ներկայանում»։ «Վախենում էի»։—«Ինչո՞ւ էիր ուզում կախվել»։—«Մտածմունքից»։ — «Ի՞նչ մտածմունքից»։ — «Որ կդատեն ու կպատժեն»։ — Ահա և ամբողջ պատմությունը։ Հիմա ի՞նչ ես կարծում, նրանք այստեղից ի՞նչ եզրակացրին։

— Էլ ի՞նչ կարելի է կարծել, հետքը գտնված է, թեև ոչ այնքան հարթ, բայց գտնված է։ Դա փաստ է։ Հո չի՞ կարելի ազատ թողնել քո ներկարարին։

Ախր նրանք հիմա ներկարարին ուղղակի սպանող են համարում։ Նրանք դրանում չեն էլ կասկածում...

— Ձիշտ չես ասում, է՛, տաքանում ես։ Հապա գինդե՞ը։ Գառավի սնդուկում եղած գինդերը այն օրը և այն ժամին գտնվում էին Նիկոլայի մոտ. համաձայնիր, որ դրանք որևէ կերպ պետք է որ ընկնեին նրա ձեռքը։ Այդպիսի հետաքննության դեպքում դա քիչ բան չէ։

— Ինչպե՞ս են ընկել, ի՞նչպես են ընկել,— բղավեց Ռազումիխինը,— և մի՞թե դու, բժիշկ, դու, որ ամենից առաջ պարտավոր ես ուսումնասիրել մարդուն և առիթ ունես ամենից ավելի շուտ ուսումնասիրել մարդկային բնավորությունը,— մի՞թե այդ բոլոր տվյալներից դու չես տեսնում, թե ինչ բնավորություն ունի այդ Նիկոլայը։ Մի՞թե մի անգամից չես տեսնում, որ հարցաքննությունների ժամանակ նրա տված բոլոր ցուցմունքները սրբազան ճշմարտություն են։ Գինդերը ճիշտ այնպես են ընկել նրա ձեռքը, ինչպես որ նա ասել է։ Ոտքը դրել է տուփին և դա վերցրել։

— Սրբազան ճշմարտությո՞ւն։ Այնուամենայնիվ ինքը հո խոստովանե՞լ է, որ առաջին անգամ սուտ է ասել։

— Լսիր ինձ։ Ուշադրությամբ լսիր. գոնապանը, Կոխը, Պետրյակովը, մյուս դռնապանը, առաջին դռնապանի կինը, այդ ժամին դռնապանի սենյակում նստած մեշչանուհին և արյունի խորհրդական Կրյուկովը, որ հենց այդ բոպեին իջել էր կառքից և մի կնոջ հետ դարպասից ներս էր մտնում՝ այդ բո-

լորը, ութ թե տասը վկաները, միաձայն ասում են, որ Նիկոլայը գետնել էր Դմիտրիին, ընկել նրա վրա և դնքսում էր նրան, իսկ Դմիտրին բռնել էր նրա մազերից ու նույնպես գընդսում էր։ Նրանք ընկել են ճանապարհի վրա ու խափանում են անցումը. նրանց նախատում են ամեն կողմից, իսկ նրանք «ինչպես փոքր երեխաներ» (տառացիորեն վկաների արտահայտությունը) ընկել են իրար վրա, ճվճվում են, կռվում ու քրքջում, երկուսն էլ քրքջում են ասես իրար հետ մրցելով, դեմքերին ամենածիծաղելի արտահայտություն տալով, ու երեխաների պես իրար ետևից վազում են փողոց։ Լսեցի՞ր։ Հիմա խստորեն նկատի առ. վերևում դիակները դեռ տաք են, լսո՞ւմ ես, տաք են, այդպիսի վիճակում են դրանց գտել։ Եթե Նիկոլայն ու Դմիտրին են սպանել, կամ միայն Նիկոլայն է սպանել, ու կոտրելով թալանել են անդուկները կամ որևէ կերպ մասնակցել կողոպուտին, ապա թույլ տուր քեզ միայն մի բան հարցնեմ. արդյո՞ք այդպիսի հոգեկան տրամադրությունը, այսինքն՝ ճվճվոցները, քրքիջը, դարպասի մոտ եղած երեխայական տուրուդմբոցը սազական է կացիններին, արյանը, եղեռնագործի խորամանկությանը, զգուշությանը, կողոպուտին։ Սպանությունից հետո ընդամենը մի հինգ կամ տաս րոպե է անցել,— բանից այդպես է դուրս գալիս,— դիակները դեռ տաք են, ու հանկարծ թողնելով և՛ դիակները, և՛ բաց բնակարանը, ու գիտենալով, որ այդ րոպեին մարդիկ են անցել այդտեղ, ու դեն գցելով թալանած գույքը, փոքր երեխաների պես ընկել են ճանապարհին, քրքջում են, ընդհանուր ուշադրություն գրավում, և այս ամենին տասը միաձայն վկաներ կան։

— Իհարկե, տարօրինակ է. հասկանալի է, որ դա հնարավոր բան չէ, բայց...

— Ոչ, եղբայր, էլ ի՞նչ բայց։ Եթե նույն օրը և ժամին Նիկոլայի ձեռքն ընկած գինդերը իրոք նրա դեմ ուղղված կարեվոր փաստ են հանդիսանում, որը, սակայն, ուղղակի բացատրվում է նրա ցուցմունքներով, հետևաբար դեռ վիճելի է, ապա պետք է նաև նկատի առնել արդարացուցիչ փաստերը, մանավանդ որ դրանք անհերքելի փաստեր են։ Իսկ դու ի՞նչ ես կարծում, ըստ մեր իրավաբանության բնույթի այդպիսի փաստը, որ հիմնված է միայն հոգեբանական անկարելիու-

թյան, միայն հոգեկան տրամադրության վրա, արդյո՞ք նրանք կընդունեն կամ ընդունակ են ընդունելու իրրև այնպիսի փաստ, որը անհերքելի է և բացատրում է բոլոր մեղադրական ու իրեղեն փաստերը, ինչպիսին էլ որ դրանք լինեն։ Ոչ, չեն ընդունի, ոչ մի կերպ չեն ընդունի, որովհետև,—ասում են նրանք,—տուփը գտնված է, և այդ մարդը ուզում էր խեղդվել, «Այդ չէր լինի, եթե նա իրեն մեղավոր չզգար»։ Ահա հիմնական հարցը, ահա թե ինչու եմ ես տաքանում։ Հասկացիր։

— Ես հո տեսնում եմ, որ դու տաքանում ես։ Կաց, մոռացա հարցնել՝ ինչո՞վ է ապացուցված, որ գինդերով տուփը իսկապես պատակի սնդուկից է։

— Դա ապացուցված է,— հոնքերը կիտելով ու կարծես գոհում պատասխանեց Իռաղումիխինը։ — Կոխը ճանաչել էր իրը և մատնացույց արել այն պրակ դնողին, իսկ սա հաստատել էր, որ դա իրենն է։

— Հը՛մ։ Հիմա էլի մի հարց. արդյոք որևէ մեկը Նիկոլային չի՞ տեսել այն ժամանակ, երբ Կոխը և Պետրյակովը բարձրացել էին սանդուղքով, և արդյոք չի՞ կարելի դա ապացուցել որևէ բանով։

— Հենց բանն էլ այդ է, որ ոչ ոք չի տեսել,— սրտնեղելով պատասխանեց Իռաղումիխինը,— հենց այդ էլ վատ է, նույնիսկ Կոխն ու Պետրյակովն էլ վերև անցնելիս չեն նկատել Նիկոլային ու Միտկային, թեև նրանց վկայությունը հիմա այնքան էլ մեծ նշանակություն չէր ունենա։ Ասում են՝ «Տեսանք, որ բնակարանը բաց էր, որ այնտեղ երևի մարդիկ էին աշխատում, բայց անցնելիս ուշադրություն չդարձրինք և ոտույգ չենք հիշում, թե այդ բոպեին այնտեղ աշխատողներ կայի՞ն, թե՞ չէ»։

— Հը՛մ։ Ուրեմն կա ընդամենը միայն մի արդարացում, որ դնքսում էին իրար ու քրքջում։ Ասենք թե դա ուժեղ ապացույց է, բայց... Թույլ տուր այժմ հարցնել՝ դու ինքդ ի՞նչպես կբացատրես ամբողջ փաստը։ Ինչո՞վ կբացատրես գինդերի գտնելը, եթե իրոք նա դրանք այնպես է գտել, ինչպես ինքն է ասում։

— Ինչով կբացատրե՞մ։ Այստեղ ի՞նչ կա բացատրելու. բանը պարզ է։ Գոնե պարզ է և ապացուցված է այն ճանապարհը, որով պետք է տանել գործը, և հենց տուփն է այդ

ապացուցել։ Իսկական մարդասպանը վայր էր գցել այդ գինդերը։ Երբ Կոխը և Պետրյակովը ծեծելիս էին դուռը, մարդասպանը վերնում էր, ներսից փակել էր դուռը։ Կոխը հիմարություն արեց, ներքև գնաց. այստեղ մարդասպանը դուրս թռավ ու նույնպես ներքև վազեց, որովհետև նրա համար ուրիշ ելք չկար։ Սանդուղքից իջնելիս նա Կոխից, Պետրյակովից ու դռնապանից թաքնվեց դատարկ բնակարանում, և հենց այն բոպեին, երբ Դմիտրին ու Նիկոլայը այնտեղից դուրս էին վազել, թաքնվեց դռան ետևում, երբ դռնապանը, Կոխն ու Պետրյակովը վերև էին անցնում, սպասեց, մինչև որ քայլերը լռեցին, ու հանդիստ իջավ ներքև ճիշտ այն բոպեին, երբ Դմիտրին ու Նիկոլայը վազեցին փողոց, ու բոլորն էլ ցրվել էին, դարպասի մոտ ոչ ոք չէր մնացել։ Գուցե և տեսել էին մարդասպանին, բայց ուշադրություն չէին դարձրել. ո՞վ ասես, որ չէր անցնում։ Մարդասպանը դռան ետևում եղած պահին գրպանից ջնել էր տուփը և այդ չէր նկատել, որովհետև գլուխը խառն էր։ Իսկ տուփը պարզ ապացուցում էր, որ նա հենց այնտեղ էր կանգնած եղել։ Ահա թե ինչումն է բանը։

— Զարմանալի է։ Չէ՛, եղբայր, դա զարմանալի է։ Ամենից զարմանալին այդ է։

— Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ։

— Որովհետև ամեն ինչ խիստ հաջող է գնացել... և կատարվել... ասես թատրոնում լիներ։

— Է-է-հմ՛,— բացականչեց Ռազումիխինը, բայց այդ բոպեին դուռը բացվեց ու ներս մտավ մի նոր անձնավորություն, որը ներկա դտնվողներից ոչ մեկի հետ ծանոթ չէր։

V

Այդ մի պարոն էր արդեն երիտասարդության տարիներն ապրած, խստաբարո, հոյակազմ, զգուշություն և դժգոհություն արտահայտող դեմքով։ Նա կանգ առավ դռան մոտ, անգոհ-թթաքցրած զարմանքով նայեց շուրջը ու կարծես հայացքով հարցնում էր՝ «Այս ո՞ւր ընկա ես»։ Անվստահորեն և նույնիսկ որոշ շինծու վախով, համարյա վիրավորվածությամբ դիտում էր նա Ռասկոլնիկովի նեղ ու ցածրիկ «նավասենյակը»։ Հետո նույն զարմանքով նա աչքերը դարձրեց և հառեց

Ռասկոլնիկովի վրա, որը հագնված չէր, զզզված մազերով, անլվա, պառկել էր իր փոքրիկ ու կեղտոտ բազմոցի վրա, ու նույնպես անշարժ նայում էր նրան։ Այնուհետև եկվորը նույն դանդաղկոտությամբ սկսեց հայացքով զննել Ռազումիխինի դիսախուվ, չսափրված ու չսանրված կերպարանքը, Ռազումիխինն էլ իր հերթին հանդգնաբար-հարցականորեն նայում էր ուղիղ նրա աչքերին, առաջ պեղից շարժվելու։ Լարված լռությունը տևեց մի րոպե, ու վերջապես, ինչպես և պետք էր սպասել, տեղի ունեցավ դեկորացիայի մի փոքրիկ փոփոխություն։ Երեի որոշ, աչք ծակող տվյալներից զլխի ընկնելով, որ այստեղ, այս «նավասենյակում» չափազանց խիստ կեցվածքով ոչնչից ոչինչ չես կարող անել, ներս մտած պարոնը մի փոքր մեղմացավ ու դիմելով Զոսիմովին և շնչելով իր խոսքերի յուրատեսակ վանկը, բազարավարությամբ, թեպետև ոչ առանց խստության հարցրեց.

— Դո՞ւք եք Ռոդիոն Ռոմանիչ Ռասկոլնիկովը, պարոն ուսանողը կամ նախկին ուսանողը։

Զոսիմովը դանդաղ շարժվեց, և դուցե պատասխաներ, եթե նրան իսկույն չկանխեր Ռազումիխինը, որին բնավ չէին դիմել.

— Հրե՛ն նա պառկած է բազմոցի վրա։ Իսկ դուք ի՞նչ էիք ուզում։

Այդ սանձարձակ «իսկ դուք ինչ էիք ուզում»-ը ուղղակի խփեց խստաբարո պարոնի քթին. քիչ մնաց նա շուռ գար դեպի Ռազումիխինը, բայց այնուամենայնիվ կարողացավ այստեղ իրեն զսպել ու անմիջապես վերստին դիմեց Զոսիմովին.

— Ահա Ռասկոլնիկովը,— ծամծմեց Զոսիմովը՝ գլխով ցույց տալով հիվանդին, հետո էլ հորանջեց՝ չափից դուրս շատ բաց անելով բերանը և երկար պահելով այդ վիճակում։ Այնուհետև ձեռքը դանդաղ տարավ բաճկոնակի գրպանը, հանեց ահագին, կորնթարդ, ոսկե փակ ժամացույցը, բացեց, նայեց և նույնպես դանդաղ ու ծուլորեն դրեց տեղը։

Ինքը՝ Ռասկոլնիկովը, շարունակ լուռ պառկած էր մեջքի վրա ու համառորեն, թեպետև առանց որևէ մտքի, նայում էր եկվորին։ Նրա դեմքը, որ հիմա շուռ էր եկել պատատուի հետաքրքիր ծալկից, չափազանց գունատ էր և արտասովոր սառապանք էր արտահայտում, կարծես նա հենց քիչ առաջ տանջալից վիրահատության էր ենթարկվել կամ նրան հենց նոր

էին ազատել խոշտանգումից։ Բայց եկվոր պարոնը հետզհետե ավելի ու ավելի դրավեց նրա ուշադրությունը, նրա մեջ տարակուսանք, հետո անվստահություն և նույնիսկ կարծես թե վախ առաջացրեց։ Իսկ երբ Զոսիմովը ցույց տվեց նրան ու ասաց՝ «Ահա Ռասկոլնիկովը», նա հանկարծ արագ բարձրացավ տեղից, ասես վեր ցատկեց, նստեց անկողնու վրա ու համարյա ցասկոտ, բայց կցկտուր և թույլ ձայնով ասաց.

— Այո, ես եմ Ռասկոլնիկովը, դուք ի՞նչ եք ուզում։

Հյուրը ուշադրությամբ նայեց նրան և աղդու տոնով պատասխանեց.

— Պյոտր Պետրովիչ Լուժին։ Ես լիահույս եմ, որ իմ անունը ձեզ այնքան էլ անհայտ չէ։

Բայց Ռասկոլնիկովը, որ մի ինչ-որ ուրիշ բան էր սպասում, բութ և մտադրաղ նայեց նրան և ոչինչ չպատասխանեց, կարծես թե Պյոտր Պետրովիչի անունը ուղղակի առաջին անդամն էր լսում։

— Ինչպե՞ս, մի՞թե դուք մինչև այժմ ոչ մի լուր չեք ստացել,— մի փոքր տհաճությամբ հարցրեց Պյոտր Պետրովիչը։

Ի պատասխան Ռասկոլնիկովը դանդաղ ընկավ բարձին, ձեռքերը դրեց գլխի տակ ու սկսեց նայել առաստաղին։ Լուժինի դեմքին թախիծ երևաց։ Զոսիմովը և Ռազումիխինը սկսեցին էլ ավելի մեծ հետաքրքրությամբ նայել նրան, և նա ի վերջո նկատելիորեն շփոթվեց։

— Ես ենթադրում և հուսով էի,— ծամծմեց նա,— որ ավելի քան տասն օր, նույնիսկ համարյա երկու շաբաթ առաջ ուղարկված նամակը...

— Լսեք, ինչո՞ւ եք դուռն մոտ կանգնել,— նրան ընդհատեց Ռազումիխինը,— եթե որևէ ասելիք ունեք, նստեցեք, թե չէ այդտեղ ձեր և Նաստասյայի տեղը անհարմար է, նեղ է։ Նաստասյա, անցիր մի կողմ, ճամփա տուր։ Անցեք այստեղ, ահա ձեզ աթոռ։ Դե, մի կերպ անցեք։

Նա իր աթոռը սեղանից ետ քաշեց, մի քիչ տեղ բացեց սեղանի և իր ծնկների արանքում և մի փոքր լարված վիճակում սպասում էր, որ հյուրը «անցնի» այդ խոռոչը։ Այնպիսի բոպե էր ընտրված, որ ոչ մի կերպ չէր կարելի հրաժարվել, ու եկվորը հապճեպորեն, սայթաքելով, անցավ նեղ տարածությու-

նից։ Հասնելով աթոռին, նա նստեց ու կասկածանքով նայեց Ռազումիխինին։

— Դուք այնուամենայնիվ մի շփոթվեք,— բերանից թռցրեց Ռազումիխինը,— հինգերորդ օրն է, որ Ռոդյան հիվանդ է ու երեք օր զառանցում էր, իսկ հիմա ուշքի է եկել և նույնիսկ կերել ախորժակով։ Ահա սա նրա բժիշկն է, քիչ առաջ զննեց նրան, իսկ ես Ռոդյայի ընկերն եմ, նույնպես նախկին ուսանող, ու հիմա նրանով եմ զբաղված. ուրիշ բան չկարծեք ու մի քաշվեք, այլ շարունակեցեք ասել ինչ որ ուզում եք։

— Շնորհակալ եմ ձեզնից։ Սակայն իմ ներկայությամբ և խոսակցությամբ ես արդյոք չե՞մ անհանգստացնի հիվանդին, — պիտեց Պյոտր Պետրովիչը Զոսիմովին։

— Ո՛չ, նույնիսկ կարող եք զվարճացնել,— ծամծմեց Զոսիմովը ու էլի հորանջեց։

— Օ, նա արդեն վաղուց, առավոտից լավ վիճակում է,— շարունակեց Ռազումիխինը, որի հանդգնությունը այնպիսի անկեղծ սրտաբացության բնույթ էր կրում, որ Պյոտր Պետրովիչը մի փոքր մտածեց ու սկսեց քաջալերվել թերևս մասամբ այն պատճառով, որ այդ քրջոտն ու լկտին իրեն ուսանող էր անվանել։

— Ձեր մայրիկը...— սկսեց Լուժինը։

— Հըմ,— բարձրաձայն ասաց Ռազումիխինը։

Լուժինը հարցականորեն նայեց նրան։

— Ոչինչ, ես հենց այնպես. շարունակեցեք...

Լուժինը թոթվեց ուսերը։

—... Ձեր մայրիկը, երբ ես դեռ նրանց մոտ էի, սկսեց ձեզ նամակ գրել։ Ժամանելով այստեղ, ես դիտմամբ բաց թողի մի քանի օր և չէի գալիս ձեզ մոտ, որպեսզի լիովին հավատացած լինեի, որ դուք իմացել եք ամեն ինչ. բայց հիմա, որքան էլ զարմանալի է...

— Գիտեմ, գիտեմ,— առավելապես չհանդուրժող վրդովմունքի արտահայտությամբ հանկարծ վրա բերեց Ռասկոլնիկովը։ — Այդ դո՞ւք եք փեսացուն։ Դե գիտեմ, էլի... բավական է...

Պյոտր Պետրովիչը թունդ վիրավորվեց, բայց լռեց։ Նա խիստ շտապում էր գլխի ընկնել, թե այդ ամենը ինչ է նշանակում։ Լռությունը մոտ մի րոպե տևեց։

Այնինչ Ռասկոլնիկովը, որ պատասխանելիս մի փոքր շուռ էր եկել նրա կողմը, հանկարծ նորից սկսեց նրան զննել հայացքով ու մի ինչ-որ առանձին հետաքրքրությամբ, կարծես թե քիչ առաջ չէր կարողացել ամբողջովին զննել նրան, կամ կարծես թե Պյոտր Պետրովիչի մեջ ինչ-որ մի նոր բան կար, որ զարմացրել էր նրան. Ռասկոլնիկովը դրա համար նույնիսկ հատուկ մի քիչ բարձրացավ բարձից։ Հիրավի, Պյոտր Պետրովիչի ընդհանուր տեսքում կարծես ապշեցուցիչ էր ինչ-որ մի առանձնահատկություն, այն է՝ ինչ-որ մի բան, որը արդարացնում էր այժմ նրան անպատկառորեն տրված «փեսացու» անունը։ Նախ՝ երևում էր, և նույնիսկ խիստ նկատելի էր, որ Պյոտր Պետրովիչը նոանդով շտապել էր օգտագործել մայրաքաղաքում գտնվելու մի քանի օրերը, որպեսզի մինչև հարսնացուի ժամանումը կարողանար զուգվել-դարդարվել, սակայն դա միանգամայն անմեղ բան էր և թույլատրելի։ Դեպի լավագույնը իր հաճելի փոփոխության նույնիսկ սեփական, գուցե և նույնիսկ չափազանց ինքնագոհ սեփական գիտակցությունը այդպիսի դեպքում կարող էր ներվել, քանի որ Պյոտր Պետրովիչը փեսացու դառնալու ճանապարհին էր գտնվում։ Նրա ամբողջ հագուստը հենց նոր էր դերձակից վերցված, ու ամեն ինչ լավ էր, բացի միայն այն, որ ամեն ինչ չափազանց նոր էր և չափազանց պարզ էր ցույց տալիս որոշակի նպատակը։ Նույնիսկ պճնամոլական, բոլորովին նոր, կլոր ու լայնեզր գլխարկը վկայում էր այդ նպատակը. Պյոտր Պետրովիչը ինչ-որ մի առանձին պատկառանքով էր դրա հետ վարվում և մեծ զգուշությամբ էր պահում իր ձեռքերում։ Նույնիսկ գեղեցիկ, յասամանագույն, իսկական ժուվենևյան ձեռնոցներն էլ էին նույնը վկայում, թեկուզ հենց միայն նրանով, որ դրանք չէին հագնում, այլ միայն պահում էին ձեռքերին, շքեղության համար։ Իսկ Պյոտր Պետրովիչի հագուստի մեջ գերակշռում էին երիտասարդական, բաց գույները։ Նա հագել էր բաց-դարչնագույն երանգի ամառային գեղեցիկ պիջակ, բաց գույնի թեթև անդրավարտիք, նույնպիսի բաճկոնակ, հենց նոր գնված նուրբ սպիտակեղեն, կապել վարդագույն զոլերով բոլորովին թեթև փողկապ, և որ ամենից լավ էր, այդ ամենը նույնիսկ սազում էր Պյոտր Պետրովիչին։ Նրա դեմքը, որ միանգամայն թարմ էր և նույնիսկ գեղեցիկ, առանց այն էլ

ավելի երիտասարդական էր թվում, քան այդ թույլ կտար իր քառասունհինգ տարեկան հասակը։ Թուխ այտամորուքը երկու կողմից հաճելի ստվերում էր այն, ասես երկու կոտլետ լիներ, ու խիստ դեղնցիկ խտանում էր մաքուր սափրած, պըլպըլան կլակի մոտ։ Նույնիսկ մազերը, որոնք, սակայն, միայն մի քիչ ալեխառն էին, սափրիչի ձեռքով սանրած ու գանդրացրած, դրանով որևէ ծիծաղելի կամ որևէ հիմար տեսք չէին տալիս նրան, որպիսին սովորաբար միշտ լինում է մազերի գանդրացման դեպքում, որովհետև դեմքը անխուսափելիորեն նմանվում է պատկի գնացող գերմանացու դեմքին։ Իսկ եթե բավական գեղեցիկ ու պատկառելի այդ դեմքին իրոք որևէ անհանելի ու վանող բան կար, ապա դա արդեն ուրիշ պատճառներից էր առաջանում։ Առանց թաշվելու դիտելով պ. Լուժինին, Ռասկոլնիկովը ինչոր ժամաց, նորից ընկավ բարձին ու չարտասանեց նույն ոչ ոչ մի բառ։

Բայց պարոն Լուժինը սրտաբացվեց, ու թվում է, որ որոշեց առժամապես չնկատել այդ բոլոր տարօրինակությունները։

— Շատ և շատ եմ ցավում, որ ձեզ գտնում եմ այդպիսի վիճակում,— ասաց նա՝ դժվարությամբ ընդհատելով լռությունը։ — Եթե գիտենայի, որ դուք անառողջ եք, ավելի շուտ կգայի։ Բայց, գիտե՞ք, շատ հոգսեր կան... Այն էլ ասած, իմ փաստաբանական զբաղմունքի դժով խիստ կարևոր գործ ունեմ սենատում։ Էլ չեմ հիշատակում այն հոգսերը, որոնց մասին դուք էլ կկռահեք։ Ժամ առ ժամ սպասում եմ ձերոնց, այսինքն՝ ձեր մայրիկին ու քույրիկին...

Ռասկոլնիկովը շարժվեց և ուզում էր ինչ-որ բան ասել. նրա դեմքը մի քիչ հուզմունք արտահայտեց։ Պյոտր Պետրովիչը մի փոքր լռեց, սպասեց, բայց որովհետև ոչ մի պատասխան չեղավ, ուստի և շարունակեց.

—... Ժամ առ ժամ սպասում եմ։ Առայժմ բնակարան եմ ճարել նրանց համար...

— Ո՞րտեղ,— թույլ հարցրեց Ռասկոլնիկովը։

— Այստեղից շատ մոտիկ է, Բակալեևի տանը...

— Դա Վոզնեսենսկում է,— ընդհատեց Ռազումիխինը,— տան երկու հարկը հյուրանոց է. վաճառական Ցուշինն է պահում. ես այնտեղ եղել եմ։

— Այո, հյուրանոց է...

— Սարսափելի վատ, այն էլ կասկածելի տեղ է, կեղտ, գարշահոտություն, այնպիսի բաներ են պատահել որ, գրողը տանի, ով ասես, որ չի ապրում այնտեղ... Ես ինքս էլ եմ այնտեղ մտել մի խայտառակ առիթով։ Ասենք, էժան է։

— Ես, իհարկե, չէի կարող այդքան տեղեկություններ հավաքել, որովհետև ինքս այստեղ նոր մարդ եմ,— փափկանկատությամբ առարկեց Պյոտր Պետրովիչը,— բայց, ասենք, շատ և շատ մաքուր երկու սենյակ է, ու քանի որ խիստ կարճ ժամանակով է վարձված... Ես գտել եմ արդեն իսկական, այսինքն՝ մեր ապագա բնակարանը,— դիմեց նա Ռասկոլնիկովին,— ու հիմա այն կարգի են բերում։ Առայժմ ես էլ եմ նեղվում համարներում, այստեղից մոտիկ է, տիկ. Լիպպևեխզելի մոտ, իմ մի երիտասարդ բարեկամի, Անդրեյ Սեմյոնիչ Լեբեզյատնիկովի բնակարանում. նա է ինձ ցույց տվել Բակալեևի տունը...

— Լեբեզյատնիկո՞վ,— դանդաղ հարցրեց Ռասկոլնիկովը՝ ասես ինչ-որ բան հիշելով։

— Այո, Անդրեյ Սեմյոնիչ Լեբեզյատնիկով, մինիստրության ծառայող է։ Բարեհաճո՞ւմ եք ճանաչել։

— Հա... ոչ...— պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Ներեցեք, ձեր հարցից ինձ թվաց, թե ճանաչում եք։ Ես մի ժամանակ նրա խնամակալն էի... շատ համակրելի երիտասարդ է... ու հետևում է նոր մտքերին... Ես էլ ուրախությամբ եմ հանդիպում երիտասարդների հետ. նրանցից իմանում ես, թե ինչ նորություն կա։ — Պյոտր Պետրովիչը հուսադրված նայեց բոլորին։

— Այդ ի՞նչ տեսակետից։

— Ամենալուրջ, այսպես ասած՝ հենց գործի բուն իսկ էության տեսակետից,— վրա բերեց Պյոտր Պետրովիչը՝ ասես ուրախանալով, որ իրեն հարց տվին։ — Ես, գիտե՞ք, արդեն տասը տարի չէի եկել Պետերբուրգ։ Այդ բոլոր մեր նորությունները, բարենորոգումները, գաղափարները հասան նաև մեզ, գավառները. բայց ամեն ինչ ավելի պարզ տեսնելու համար պետք է Պետերբուրգում լինել։ Ը-ում, ես կարծում եմ, որ շատ բան նկատելու և իմանալու համար պետք է հետամուտ լինել

մեր երիտասարդ սերունդներին։ Ու խոստովանում եմ՝ ուրախացա...

— Ինչո՞վ։

— Ձեր հարցը բազմակողմանի է։ Կարող եմ սխալվել, բայց ինձ թվում է, որ գտնում եմ ավելի պայծառ հայացք, այսպես ասած՝ ավելի շատ քննադատություն, ավելի շատ գործիմացություն։

— Այդ ճիշտ է,— կմկմաց Զոսիմովը։

— Ստում ես դու, գործիմացություն չկա,— կպավ Ռազումիխինը։ — Գործիմացությունը դժվարությամբ է ձեռք բերվում, երկնքից ձրի չի իջնում։ Արդեն համարյա երկու հարյուր տարի է, որ մենք նա ենք վարժվել ամեն տեսակ գործերից... պապափարներն անշուշտ ասրանվում են,— գիմեց նա Պյոտր Պետրովիչին, - բարիքի ցանկություն էլ կա, թեպետև մանկական է. նույնիսկ ազնվություն էլ կգտնվի, թեպետև անիմաստ-անհամար սրիկաներ են հայտնվել, իսկ գործիմացություն այնուամենայնիվ չկա։ Գործիմացությունը մի կողմ է մնում։

— Ձեմ համաձայնի ձեզ հետ,— նկատելի հանդուգնությամբ առարկեց Պյոտր Պետրովիչը,— իհարկե, կան հրապուրումներ, անճշտություններ, բայց պետք է և ներողամիտ լինել. հրապուրումները ցույց են տալիս գործի կպչելու եռանդ և այն անկանոն արտաքին իրադրությունը, որի մեջ գտնվում է գործը։ Իսկ եթե քիչ բան է արված, ուրեմն քիչ ժամանակ է եղել։ Միջոցների մասին չեմ էլ խոսում։ Իմ անձնական հայացքով, եթե ուզում եք, նույնիսկ որոշ բան է արված. տարածված են նոր, օգտակար մտքեր, առաջվա ցնորական ու ռոմանտիկ երկերի փոխարեն տարածված են մի քանի նոր, օգտակար երկեր, գրականությունը ավելի հասուն երանգ է ընդունում. վնասակար շատ նախապաշարումներ ծաղրված ու արմատախիլ են արված... Մի խոսքով, մենք մեզ անդարձ կտրել ենք անցյալից, իսկ դա իմ կարծիքով արդեն գործ է...

— Լավ է սերտել, խելք է ցույց տալիս,— հանկարծ վրա բերեց Ռասկոլնիկովը։

— Ի-ի՞նչ,— չլսելով հարցրեց Պյոտր Պետրովիչը, բայց պատասխան չստացավ։

— Այդ ամենը արդարացի է,— շտապեց ավելացնել Զոսիմովը։

— Ճիշտ չե՞մ ասում,— շարունակեց Պյոտր Պետրովիչը՝ հաճելի նայելով Զոսիմովին։ Այնուհետև դիմեց Ռազումիխինին, բայց արդեն որոշ հրճվանքի ու գերազանցության տոնով և քիչ մնաց, որ ավելացներ «երիտասարդ» բառը,— ինքներդ համաձայնեք, որ կա բարդավաճում, կամ ինչպես հիմա ասում են՝ առաջադիմություն, թեկուզ և հանուն գիտության և տնտեսական ճշմարտության...

— Ընդհանուր խոսքեր են։

— Ոչ, ընդհանուր խոսքեր չեն։ Եթե ինձ, օրինակ, մինչև այժմ ասել են՝ «սիրիր», ու ես սիրել եմ, ապա դրանից ի՞նչ է դուրս եկել,— թերևս ավելորդ շտապողականությամբ շարունակեց Պյոտր Պետրովիչը,— դուրս է եկել այն, որ ես կիսում էի իմ կապան, կեսը տալիս էի մերձավորիս, ու մենք երկուսս էլ կիսով չափ մերկ էինք մնում։ Ռուսական առածն ասում է՝ «Միանգամից կրնկնես մի քանի նապաստակի հետևից ու ոչ մեկին էլ չես հասնի»։ Իսկ գիտությունը ասում է՝ ամենից առաջ սիրիր միայն քեզ, որովհետև աշխարհում ամեն ինչ անձնական շահի վրա է հիմնված։ Թե որ միայն ինքդ քեզ սիրես, գործդ էլ կդրես ինչպես հարկն է, կապադ էլ չի կիսվի։ Իսկ տնտեսական ճշմարտությունն ավելացնում է, որ հասարակության մեջ որքան շատ լինեն կարգավորված մասնավոր գործերը և, այսպես ասած, ամբողջական կտպանները, այնքան նրա համար շատ կլինեն հաստատուն հիմքերը և նրանում այնքան շատ կկարգավորվի ընդհանուր գործը։ Հետևաբար վաստակելով միայն և բացառապես ինձ համար, ես հենց դրանով վաստակում եմ ասես թե բոլորի համար և գործը այնպես եմ տանում, որ մերձավորը պատված կապայից մի փոքր ավելի շատ բան ստանա, այն էլ ոչ թե մասնավոր, եզակի առատաձեռնություններից, այլ համընդհանուր բարգավաճման հետևանքով։ Սա պարզ միտք է, բայց դժբախտաբար չափազանց երկար ժամանակ չի մտնում գլուխների մեջ, պրոդված է խանդավառությամբ ու երազկոտությամբ, մինչդեռ կարծես թե գլխի ընկնելու համար այնքան էլ մտքի սրություն չի պահանջվում...

— Ներեցեք, ես նույնպես սրամիտ չեմ,— կտրուկ ընդ-

հատեց Ռազումիխինը,— ուստի և վերջ տանք։ Ես հո որոշ նպատակով սկսեցի խոսել, թե չէ այդ ամբողջ շաղակրատանք-ինքնասփոփումը, այդ բոլոր անլռելի, անընդհատ ընդհանուր խոսքերը և միշտ ու միշտ միևնույն բանը երեք տարում այնքան են ինձ զզվեցրել, որ հոգիս վկա կարմրում եմ, երբ ոչ միայն ես, այլ ուրիշներն էլ են իմ ներկայությամբ այդ մասին խոսում։ Հասկանալի է, որ գուբ շտապեցիք ցույց տալ ձեր գիտելիքները, դա շատ ներելի է, ու ես չեմ պարսավում։ Ես հիմա միայն ուզում էի իմանալ, թե ո՞վ եք դուք, որովհետև, գիտե՞ք, վերջին ժամանակներս այնքան զբաղմունքի տեր այնքան մարդիկ են կատրել այդ ընդհանուր գործից և իրենց շահի համար այնքան են աղճատել իրենց շոշափած բոլոր խնդիրները, որ ուզում են ամբողջ գործը էլ, բավական է։

— Հարգելի պարոն,— էլի սկսեց պ. Լուժինը՝ սեթևեթելով թունդ արժանապատվությամբ,— հո չե՞ք ուզում այդպես առանց քաշվելու ասել, որ ես էլ...

— Օ, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում... Մի՞թե ես կարող էի... լավ, բավական է,— կտրուկ վրա բերեց Ռազումիխինը և իսկույն դարձավ գեպի Զոսիմովը՝ շարունակելու նախորդ խոսակցությունը։

Պյոտր Պետրովիչը այնքան խելոք եղավ, որ հավատաց բացատրությանը։ Սակայն նա որոշեց երկու բոպե հետո գնալ։

— Հուսով եմ,— դիմեց նա Ռասկոլնիկովին,— որ այժմ սկսված մեր ծանոթությունը ձեր առողջանալուց հետո և ձեզ հայտնի հանգամանքների նկատառումով է՛լ ավելի կամրապնդվի... Առանձնապես առողջություն եմ ցանկանում ձեզ...

Ռասկոլնիկովը նույնիսկ գլուխն էլ չդարձրեց նրա կողմը։ Պյոտր Պետրովիչը վեր կացավ աթոռից։

— Սպանողը անպայման գրավադիրներից մեկն է,— կրկնեց ասաց Զոսիմովը։

— Անպայման,— համաձայնեց Ռազումիխինը։ — Պորֆիրին իր մտքերը չի հայտնում, բայց և այնպես հարցաքննում է գրավ դնողներին...

— Գրավադիրների՞ն է հարցաքննում,— բարձրաձայն հարցրեց Ռասկոլնիկովը։

— Այո, ի՞նչ կա որ։

— Ոչինչ։

— Նա դրանց ո՞րտեղից է գտնում,— հարցրեց Զոսիմովը։

— Ոմանց Կոխն է մատնացույց արել, ոմանց անունները գրված են եղել իրերը փաթաթած թղթերի վրա, ոմանք էլ լսելուն պես իրենք են ներկայացել...

— Հը՛մ, մարդասպանը երևի ճարպիկ ու փորձված է եղել։ Ինչպիսի՜ համարձակություն, ինչպիսի՜ վճռականություն։

— Հենց բանն էլ այն է, որ այդպես չէ,— ընդհատեց Թաղումիիինը։ — Հենց այդ է, որ մոլորեցնում է ձեզ բոլորիդ։ Իսկ ես ասում եմ՝ ոչ ճարպիկ է եղել, ոչ էլ փորձված, ու հավանորեն այդ նրա առաջին հանցավոր քայլն է եղել։ Ենթադրիր, թե սպանողը ճարպիկ սրիկա է և հաշվով է կատարել այդ ամենը, ու անհավանական բան դուրս կգա։ Այդ ենթադրիր, որ նա անփորձ է եղել, ու դուրս կգա, որ միայն պատահականությունն է նրան փրկել փորձանքից, իսկ պատահականությունը ի՞նչ ասես, որ չի անում։ Ախր նա թերևս խոշընդոտներն էլ չէր նախատեսել։ Իսկ ի՞նչպես է գործում. վերցնում է տասը, քսան ռուբլի արժողությամբ իրեր, լցնում դրպանները, խատնշտորում է կնկա սնդուկը, լաթերը, իսկ կոմոդում, վերին արկղում, ղարդատուփում, բացի արժեքավոր տոմսերից, հազար հինգ հարյուր ռուբլի փող է գտնվել։ Կողոպտել է՛լ չի կարողացել, այլ միայն կարողացել է սպանել։ Առաջին հանցավոր քայլն է, ասում եմ քեզ, առաջին քայլը. ու կորցրել է գլուխը. և ոչ թե հաշվարկման, այլ պատահականության շնորհիվ է դուրս պրծել։

— Ըստ երևույթին դուք խոսում եք աստիճանավորի պատով կնոջ սպանության մասին, որ կատարվել է վերջերս,— դիմելով Զոսիմովին, միջամտեց Պյոտր Պետրովիչը, որ կանգնել էր գլխարկը ձեռքին ու հագել ձեռնոցները, բայց գնալուց առաջ ուզում էր էլի մի քանի խելամիտ խոսք ասել։ Երևում էր, որ նա ուզում էր իր համար շահեկան տպավորություն թողնել, ու սնափառությունը հաղթահարեց բանականությանը։

— Այո։ Դուք լսե՞լ եք։

— Իհարկե, հարևան տանն է եղել։

— Մանրամասն գիտե՞ր։

— Չեմ կարող ասել. բայց այնուհանդերձ ինձ հետաքրքրում է մի ուրիշ հանգամանք, այսպես ասած՝ մի ամբողջ

հարց։ Էլ չեմ խոսում այն մասին, որ վերջին հինգ տարում ստորին դասակարգի մեջ շատացել են հանցագործությունները. չեմ խոսում ամենուրեք անընդհատ տեղի ունեցող կողոպուտների ու հրդեհների մասին. ինձ համար ամենից տարօրինակն այն է, որ հանցագործությունները նույն կերպ և այսպես ասած՝ զուգահեռաբար, շատանում են նաև բարձր դասակարգերում։ Մի տեղ, մեծ ճանապարհի վրա նախկին ուսանողը փոստն է կողոպտել. մի տեղ իրենց հասարակական դիրքով առաջավոր մարդիկ կեղծ թղթադրամներ են շինում. այնտեղ, Մոսկվայում, վերջին փոխառության ու վիճակախաղի տոմսերը կեղծողների մի ամբողջ խումբ է բռնվում, ու գլխավոր մասնակիցներից մեկը ընդհանուր պատմության դասախոս է. մի տեղ, որտեղահմանում գրամական և հանելուկային պատմությամբ ապրանում են մեր բարեգործարին... Ու էլի հիմա այդ վաշխառու պատվը ստանված է դրամագիրներից մեկի ձեռքով, ապա ուրեմն սա էլ ավելի բարձր դասակարգի մարդ է եղել, որովհետև մուժիկները ոչկե իրեր գրամ չեն գնում. ինչո՞վ բացատրել մեր հասարակության քաղաքակրթված մասի այդ սանձարձակությունը։

— Տնտեսական փոփոխություններ շատ են եղել...— արձագանքեց Զոսիմովը։

— Ինչով բացատրե՞լ— մեջ մտավ Ռազումիխինը։— Կարելի էր բացատրել հենց շափից դուրս արմատացած անզգուշամացությամբ։

— Այսինքն ի՞նչպես։

— Ա՛յ թե Մոսկվայում ձեր դասախոսը ինչ էր պատասխանել այն հարցին, թե ինչու էր ինքը կեղծում տոմսերը. «Բոլորը հարստանում են այլևայլ միջոցներով, ես էլ ուզեցի շուտ հարստանալ»։ Նրա խոսքերը ճշտությամբ չեմ հիշում, բայց միտքն այն է, որ ուզում էր հարստանալ ձրիաբար, շուտով, առանց տքնության։ Սովորել են ամեն ինչ պատրաստ ընդունել, ուրիշի հաշվին ապրել, ծամվածը ուտել։ Հնից վեհ ժամը, ու ամեն տեսակ մտքի ու բարքի տեր մարդիկ հայտնվեցին...

— Հապա բարոյականությո՞ւնը և, այսպես ասած, կանոնները...

— Ախր ինչո՞ւ եք դեռ ու դեն ընկնում,— անսպասելի մի-

ջամտեց Ռասկոլնիկովը։ — Դա հենց ձեր թեորիային է համապատասխանում։

— Ի՞նչպես թե իմ թեորիային։

— Ինչ որ դուք քիչ առաջ քարոզում էիք, դրանից հետևություն արեք, ու դուրս կգա, որ կարելի է կոտորել մարդկանց...

— Ինչպե՞ս թե,— դուշեց Լուժինը։

— Ո՛չ, այդպես չէ,— ասաց Զոսիմովը։

Ռասկոլնիկովը պատկած էր դալկագեմ, նրա վերին շրթունքը ցնցվում էր, և նա դժվարությամբ էր շնչում։

— Ամեն բանի համար չափ կա,— գոռոզաբար շարունակեց Լուժինը,— անտեսական իդեան դեռ սպանության հրավեր չէ, ու եթե միայն ենթադրենք...

— Իսկ ճի՞շտ է արդյոք, որ դուք,— հանկարծ Ռասկոլնիկովը նրան նորից ընդհատեց բարկությունից դողացող ձայնով, որի մեջ վիրավորանքի ինչ-որ բերկրանք էր զգացվում, — ճի՞շտ է, որ դուք հենց այն ժամին, երբ ձեր հարսնացուից համաձայնություն ստացաք, ասացիք նրան, որ նրա աղքատ լինելը... առավելապես ուրախալի է ձեզ համար... որովհետև ավելի ձեռնտու է աղքատ կին առնել, հետո նրա վրա իշխելու համար... ու երեսովը տալու, որ դուք նրան բարերարություն եք արել...

— Հարգելի պարոն,—ցասկոտ ու ջղայնացած բղավեց բոլորովին կարմրատակած և շփոթված Լուժինը,— հարգելի պարոն... ուղավորում եք ասածս։ Ներեցեք ինձ, բայց ես պետք է ձեզ հայտնեմ, որ ձեզ հասած, ավելի լավ է ասել՝ ձեզ հասցրած լուրերի մեջ առողջ հիմքի նշույլ անգամ չկա, ու ես... գլխի եմ ընկնում, թե ով... մի խոսքով... այն կարճամիտը... մի խոսքով, ձեր մայրիկը... առանց այդ էլ ինձ թվում էր, որ նա մի փոքր խանդավառ ու ռոմանտիկ մտքերով է տարվում, թեև, ասենք, զուրկ չէ շատ և շատ գերազանց հատկություններից... Բայց ես այնուամենայնիվ հազարավոր վերստերով հեռու էի այն ենթադրությունից, թե նա կարող էր երևակայությամբ աղճատված այդպիսի ձևով հասկանալ ու ներկայացնել գործը... Ու վերջապես... վերջապես...

— Գիտե՞ք ինչ,— գոռաց Ռասկոլնիկովը, քիչ բարձրա-

ցավ բարձից և սուր, առկայծող հայացքով սևեռուն նայեց Լուժինին,— գիտե՞ք ինչ։

— Ի՞նչ։ — Լուժինը կանգ առավ և սպասեց վիրավորված ու ցասկոտ տեսքով։ Մի քանի վայրկյան լռություն տիրեց։

— Ահա թե ինչ. եթե դուք մի անգամ էլ... համարձակվեք թեկուզ մի խոսք ասել... մորս մասին... ապա ես ձեզ սանդուղքից ներքև կգլորեմ։

— Ի՞նչ պատահեց քեզ,— գոչեց Ռազումիխինը։

— Հը՛մ, ահա թե ի-ինչ։ — Լուժինը դունատվեց ու կծեց շրթունքը։ — Լսեցեք ինձ, պարոն,— սկսեց նա բառերը շեշտելով. նա ամեն կերպ ստում էր իրեն, բայց և շնչասպառ էր լինում. Ներս մտնելուն պես ես իսկույն զգացի ձեր հակակրանքը, բայց պիտանի մնալի այստեղ, որպեսզի ավելի շատ բան իմանալի։ Ես շատ բան կորպ էի ներել ձեզ, հիվանդին ու ապպականին, բայց հիմա... երբեք...

— Ես հիվանդ չեմ,— բղավեց Ռասկոլնիկովը։

— Ավելի վատ։

— Դե, գնացեք գրողի ծոցը։

Բայց Լուժինն արդեն ինքն էր հեռանում առանց խոսքը վերջացնելու, նորից անցնելով սեղանի ու աթոռի արանքից։ Ռազումիխինն այս անգամ վեր կացավ նրան ճանապարհ տալու համար։ Լուժինը դուրս ելավ առանց որևէ մեկին նայելու և նույնիսկ գլխով անելու Զոսիմովին, որը նրան վազուց նշան էր անում, որ նա հիվանդին հանգիստ թողնի։ Դռնից անցնելիս Լուժինը կռացավ, զգուշության համար գլխարկը բարձրացրեց մինչև ուսը։ Նույնիսկ կռանալու ձևն էլ կարծես ցույց էր տալիս, որ նա հեռանում է սարսափելի վիրավորված։

— Մի՞թե կարելի է, մի՞թե կարելի է այդպես վարվել,— գլուխն օրորելով ասաց շփոթված Ռազումիխինը։

— Թողեք ինձ, թողեք ինձ բոլորդ էլ,— մոլեգնաբար բղավեց Ռասկոլնիկովը։ — Հեռացեք վերջապես, բավական է տանջեք ինձ։ Ես ձեզնից չեմ վախենում։ Ես հիմա ոչ ոքից ոչ ոքից չեմ վախենում։ Հեռացեք ինձնից, ես ուզում եմ մենա՛կ լինել, մենա՛կ, մենա՛կ։

— Գնանք,— ասաց Զոսիմովը Ռազումիխինին։

— Ի՞նչ ես ասում, մի՞թե կարելի է սրան այսպես թողնել։

— Գնանք,— վճռաբար կրկնեց Զոսիմովը և դուրս ելավ։ Ռազումիխինը մի փոքր մտածեց և աճապարեց նրան հասնելու։

— Եթե մնայինք, ավելի վատ բան կարող էր լինել,— արդեն սանդուղքի վրա ասաց Զոսիմովը։ — Չի կարելի ջղայնացնել...

— Ի՞նչ պատահեց նրան։

— Եթե մի սրեէ նպաստավոր շարժառիթ լիներ, նա իրեն ավելի լավ կզգար։ Քիչ առաջ վատ չէր նրա վիճակը... Գիտե՞ս, նրա մտքում մի ինչ-որ բան կա, ինչ-որ ծածուկ, հընշող բան... անշուշտ այդպես է. ես դրանից շատ եմ վախենում։

— Գուցե այդ պարոնը, Պյոտր Պետրովիչն է պատճառը։ Խոսակցությունից երևում է, որ նա ամուսնանում է Ռոդյայի քրոջ հետ, որ Ռոդյան հիվանդությունից առաջ այդ մասին նամակ էր ստացել...

— Այո. սատանան հիմա բերեց նրան. նա դուցե և փչացրեց ամբողջ գործը։ Իսկ դու նկատեցի՞ր, որ նա անտարբեր է ամեն ինչի նկատմամբ, լռության է տալիս ամեն ինչ, բացի մի բանից, որը վրդովում էր նրան, դա սպանությունն է...

— Այո, այո,— վրա բերեց Ռազումիխինը,— շատ լավ նկատեցի. հետաքրքրվում է, վախենում։ Հենց հիվանդանալու օրը նրան վախեցրել էին ոստիկանության դրասենյակում, վերակացուի մոտ. ուշաթափվել էր։

— Դու այդ մանրամասն ինձ պատմիր երեկոյան, իսկ ես հետո քեզ որոշ բան կասեմ։ Նա շատ է հետաքրքրում ինձ։ Ես ժամից հետո կայցելեմ նրան... Ասենք, բորբոքում չի լինի...

— Շնորհակալություն քեզ։ Իսկ ես այդ ժամանակ կընպասեմ Պաշենկայի մոտ և կհետամտեմ Նաստասյայի միջոցով...

Մնալով մենակ, Ռասկոլնիկովը անհամբեր ու տխուր նայեց Նաստասյային. բայց վերջինս դեռ հապաղում էր, չէր հեռանում։

— Հիմա թեյ կխմե՞ս,— հարցրեց նա։

— Հետո, ես ուզում եմ քնել, թող ինձ...

Նա ջղաձգաբար շուռ եկավ դեպի պատը։ Նաստասյան գնաց։

VI

Բայց հենց որ նա դուրս եկավ, Ռասկոլնիկովը վեր կացավ, կեռով փակեց դուռը, արձակեց ժամ առաջ Ռազումիխինի բերած և նրա ձեռքով նորից կապած հագուստի կապոցը և սկսեց հագնվել։ Տարօրինա՛կ բան. կարծես թե նա հանկարծ բոլորովին հանգստացավ. չկար վերջին ամբողջ ժամանակվա ընթացքում եղած ծանր զառանցանքը, խուճապային վախը։ Այդ մի ինչ-որ տարօրինակ, հանկարծակի հանգստացման առաջին րոպեն էր։ Նրա շարժումները ճշգրիտ և պարզ էին, դրանք հաստատուն մտադրություն էին արտահայտում։ «Հենց այսօր, հենց այսօր...»,— քթի տակ փնթփնթում էր նա։ Մակայն նա հասկանում էր, որ դեռ մնալ է, ինչ հոգեկան ամենատանջող լարվածությունը, որ անդորրության ու կայուն մտադրության էր հասնում, նրան ուժ և ինքնավստահություն էր տալիս. ասենք, նա հուսով էր, որ փողոցում չի ընկնի։ Հագնելով բոլոր նոր շորերը, նայեց սեղանին դրված դրամին, մի փոքր մտածեց ու դրեց դրպանը։ Դրամը քսանհինգ ռուբլի էր։ Վերցրեց նաև պղնձե հինգ կոպեկանոցները, հագուստ գնելու համար Ռազումիխինի ծախսած տասը ռուբլու մանրը։ Հետո կամացուկ հանեց դռան կեռը, դուրս եկավ սենյակից, իջավ սանդուղքով ու խոհանոցի բոլորովին բաց դռնից ներս նայեց. Նաստասյան կանգնել էր մեջքը նրա կողմը, ու կռանալով, փչում էր տանտիրուհու ինքնաեռի կրակը։ Նա ոչինչ չլսեց։ Եվ ո՞վ կարող էր ենթադրել, որ ինքը տանից կգնա։ Մի րոպե հետո նա արդեն փողոցում էր։

Ժամը ութն էր, արևը մայր էր մտնում։ Օդը դարձյալ ծանր էր, բայց նա ագահությամբ շնչում էր այդ գարշահոտ, փոշոտ, քաղաքի վարակված օդը։ Գլուխը սկսեց մի փոքր պտտվել։ Հանկարծ մի ինչ-որ օտարոտի եռանդ փայլեց նրա բորբոքված աչքերում և նիհարած, դեղնադալուկ դեմքին։ Նա չգիտեր և չէր էլ մտածում, թե ուր պիտի գնա. միայն գիտեր, «որ այդ ամենը պետք է վերջացնել հենց այսօր, միանգամից, անմիջապես, որ ինքը այլ կերպ չի վերադառնա տուն, որովհետև չի ուզում այդպես ապրել»։ Ի՞նչպես վերջացնել, ինչո՞վ վերջացնել, այդ մասին նա պատ-

կերացում անգամ չուներ և չէր էլ ուզում մտածել։ Նա վա-
նում էր միտքը. միտքը տանջում էր նրան։ Նա միայն զգում
էր և գիտեր, որ հարկավոր է այսպես թե այնպես փոխել
ամեն ինչ, «թեկուզ ինչ կերպ էլ լինի», կրկնում էր նա մո-
լեգին, հաստատուն ինքնավստահությամբ ու վճռականու-
թյամբ

Հին սովորությամբ, իր առաջվա զբոսանքների սովորա-
կան ճանապարհով նա գնաց ուղիղ դեպի Սեննայա հրա-
պարակը։ Դեռ այնտեղ չհասած, փողոցում, կաթի խանութի
առջև տեսավ մի երիտասարդ, սեամազ երգեհոնահարի, ոչ
փոքրիկ երգեհոնով խիստ հուզիչ մի ռոմանս էր նվագում։
Նա նվագակցում էր իր առջև, մայթի վրա կանգնած մի աղ-
ջըկա, որը մոտ տասնհինգ տարեկան էր, հագնված էր ինչ-
պես աղնվական աղջիկ, լայն շրջազգեստով էր, թիկնոցով,
ձեռնոցներով ու ծղոտե գլխարկով, որը վառ-կարմիր փե-
տուրով էր զարդարված. այդ ամենը հին էր ու մաշված։
Աղջիկը երգում էր փողոցային, ճոճուն, բայց բավական
հաճելի և ուժեղ ձայնով, սպասելով, որ խանութից մի երկու
կոպեկ տան։ Ռասկոլնիկովը կանգ առավ երկու-երեք ուն-
կրնդիրների կողքին, լսեց, հանեց մի հինգկոպեկանոց ու
դրեց աղջկա ձեռքի մեջ։ Վերջինս հանկարծ երգը ընդհատեց
առավել հուզիչ ու բարձր նոտայի վրա, ասես կտրեց այն,
կտրուկ ասաց երգեհոնահարին՝ «հերիք է», ու երկուսն էլ
հեռացան դեպի հետևյալ խանութը։

— Դուք սիրո՞ւմ եք փողոցային երգեցողությունը,—
հանկարծ դիմեց Ռասկոլնիկովը արդեն տարեց մի անցոր-
դի, որ կանգնել էր իր կողքին և թափառաշրջիկի տեսք
ուներ։ Սա նայեց նրան ու զարմացավ։ — Ես սիրում եմ,—
շարունակեց Ռասկոլնիկովը, այն էլ այնպիսի տեսքով, որ
կարծես թե ամենևին էլ փողոցային երգեցողության մասին
չէր խոսում,— ես սիրում եմ, երբ երգեհոնի նվագակցու-
թյամբ երգում են աշնանային ցուրտ, խավար ու խոնավ,
անուրջման խոնավ երեկոյին, երբ բոլոր անցորդների դեմ-
քերը դալկականաչ ու հիվանդոտ են լինում. կամ, որ ավելի
լավ է, երբ թաց ձյուն է իջնում ուղղակի գլխավերևիցդ,
առանց քամու, գիտե՞ք այդ, իսկ ձյան միջից գաղով լապ-
տերներն են փայլում...

— Չդիտեմ... Ներեցեք...— փնթփնթաց պարոնը՝ վախենալով թե հարցից և թե Ռասկոլնիկովի տարօրինակ տեսքից, ու անցավ փողոցի մյուս կողմը։

Ռասկոլնիկովը առաջ գնաց ու հասավ Սեննայա հրապարակի այն անկյունը, ուր առևտուր էին արել այն քաղքենին ու կինը, որոնք այն ժամանակ խոսում էին Լիզավետայի հետ. բայց հիմա նրանք չկային։ Գտնելով այդ տեղը, նա կանգ առավ, նայեց շուրջը և դիմեց կարմիր վերնաշապկով մի երիտասարդի, որը կանգնել էր ալյուրի խանութի դռան առջև։

— Այստեղ մի մարդ կնոջ հետ, իր կնոջ հետ առևտուր է անում, հա՞։

— Ով ասես, որ ասեսուր չի անում,— պատասխանեց երիտասարդը՝ հայացքով զննելով Ռասկոլնիկովին։

— Ի՞նչ է նրա անունը։

— Ինչ որ տվել են մկրտելու ժամանակ։

— Դու հո Զարայսկիյ չե՞ս, ո՞ր նահանգից ես։

Տղան նորից նայեց Ռասկոլնիկովին։

— Մեր ապրած տեղը ոչ թե նահանգ է, ձերդ պայծառափայլություն, այլ գավառ է, իսկ շրջագայողը եղբայրս է եղել, իսկ ես նստել եմ տանը ու չդիտեմ... էհ, մեծահոգաբար ներեցեք, ձերդ պայծառափայլություն։

— Վերևում ճաշարա՞ն է։

— Պանդոկ է, բիլյարդ էլ կա, լավ, լավ փերիներ էլ կգտնվեն։

Ռասկոլնիկովը անցավ հրապարակով։ Այնտեղ, անկյունում մարդկանց հոծ բազմություն էր հավաքվել, բոլորը մուժիկներ էին։ Նա մտավ բազմության մեջ՝ նայելով նրանց դեմքերին։ Չգիտես ինչու նա ուզում էր խոսել բոլորի հետ։ Բայց մուժիկները ուշադրություն չէին դարձնում նրա վրա, տեղտեղ խմբվում, բարձրաձայն խոսում էին։ Ռասկոլնիկովը մի քիչ կանգնեց, մտածեց ու մայթով գնաց աջ կողմը, դեպի Վ... պողոտան։ Անցնելով հրապարակը, նա մտավ մի նրբանցք...

Նա առաջ էլ հաճախ անցնում էր այդ կարճ նրբանցքով, որը ծնկաձև թեքվում էր ու հրապարակից ձգվում դեպի Սադովայա փողոցը։ Վերջին ժամանակներում, երբ ձանձրանում էր,

նույնիսկ պահանջ էր զգում թրևելու այդ բոլոր վայրերում, «որպեսզի է՛լ ավելի ձանձրանար»։ Իսկ հիմա այնտեղ գնաց առանց որևէ բանի մասին մտածելու։ Այստեղ կա մի մեծ տուն, որը ամբողջովին զբաղեցրած է օղեկրպակներով և ուտել-խմելու այլ ձեռնարկություններով. դրանցից ամեն՝ բոպե դուրս էին գալիս կանայք, որոնք հագնված էին այնպես, ինչպես հագնվում են «մոտիկ տեղ գնալիս», գլխաբաց ու միայն շրջազգեստներով։ Նրանք խմբվում էին երկու-երեք տեղ, մայթի վրա, գլխավորապես սատրին հարկերի մուտքի առջև, որտեղից երկու աստիճանով կարելի էր իջնել խիստ զվարճացուցիչ այլևայլ ձեռնարկություններ։ Մի զվարճատեզից ամբողջ փողոցով մեկ թփթփոց ու աղմուկ էր լսվում, հնչում էր կիթառը, երգում էին, ու այնտեղ շատ ուրախ էր։ Մուտքի առջև կանանց մի մեծ խումբ էր հավաքվել. ոմանք նստել էին աստիճաններին, ոմանք՝ մայթին, ոմանք էլ կանգնած զրուցում էին։ Մոտիկում, փողոցում, բարձրաձայն հայհոյանք թափելով, սլապիրոսը բերանին թրևում էր մի հարբած զինվոր ու կարծես ուզում էր մտնել մի որևէ տեղ, բայց ըստ երևույթին մոռացել էր, թե ուր պետք է մտնի։ Երկու քրջոտ մարդ հայհոյում էին իրար, ու փողոցի մեջտեղում մի թունդ հարբած մարդ էր փռվել։ Ռասկոլնիկովը կանգ առավ կանանց մեծ խմբի մոտ։ Նրանք խոսում էին խուլոտ ձայներով. բոլորն էլ չթե շրջազգեստներով էին, այծենու ոտնամաններով ու գլխաբաց։ Ոմանք քառասուն տարեկանից ավելի էին, կային և տասնյոթ տարեկաններ, համարյա բոլորի աչքատակերը կապտած էին։

Չգիտես ինչու Ռասկոլնիկովին հետաքրքրում էր այնտեղից, ներքևից լսվող երգեցողությունը, այդ ամբողջ թփթփոցն ու աղմուկը... Այնտեղ, քրքիջի ու ճղճղոցի, աշխույժ երգի բարալիկ ֆալցետի ներքո, կիթառի նվագով կատաղի պարում էր ինչ-որ մեկը, երգ ու նվագի տակտով կրունկները խփում հատակին։ Ռասկոլնիկովը մուտքի առջև կռացած, ուշադրությամբ, մռայլադեմ ու մտաղբաղ լսում էր և մայթից հետաքրքրությամբ նայում դեպի նախասենյակը։

Դուն իմ սրտի ճարն ու դեղը,
Ինձ մի խիի իզուր տեղը։

Գեղգեղում էր երգչի բարալիկ ձայնը։ Ռասկոլնիկովը շատ էր ուզում լսել, թե ինչ են երգում, ասես հենց այդ էր ամբողջ գործը։

«Ներս չմտնե՞մ»,— մտածեց նա։ — «Հոհոում են, հարբած են։ Դե, ինչ կա որ, չխմե՞մ ու հարբեմ»։

— Ներս չե՞ք մտնի, սիրելի պարոն,— բավական հնչեղ ու դեռ այնքան էլ չխռպված ձայնով հարցրեց կանանցից մեկը։ Նա շահել էր և նույնիսկ զզվելի չէր,— միակը ամբողջ խմբից։

— Ի՞նչ սիրունիկն եք,— պատասխանեց Ռասկոլնիկովը՝ տեղից քիչ բարձրանալով ու նայելով նրան։

Կինը ժպտաց. հաճոյախոսությունը նրան խիստ դուր եկավ։

— Դուք էլ շատ սիրունիկն եք,— ասաց նա։

— Ինչքա՜ն լղար եք,— հասուն ձայնով ասաց մի ուրիշ կին,— հիվանդանոցի՞ց եք դուրս եկել, ինչ է։

— Ոնց որ գեներալի աղջիկներ լինեն, իսկ քթներ կճատ են,— հանկարծ նրան ընդհատեց մոտ եկած մի մուժիկ, որը խմած էր, չկոճկած կապայով ու խորամանկ-ծիծաղկոտ դեմքով։ — Ա՜յ քեզ ուրախություն։

— Դե որ եկել ես, ներս մտիր։

— Կմտնեմ, անուշիկս։

Եվ նա թավալագլոր իջավ ներքև։

Ռասկոլնիկովը շարժվեց առաջ։

— Լսեք, պարոն,— նրա ետևից բղավեց աղջիկը։

— Ի՞նչ է։

Աղջիկը շփոթվեց։

— Ես, հաճելի պարոն, միշտ էլ ուրախությամբ ժամանակ կանցկացնեմ ձեզ հետ, բայց հիմա մի տեսակ քաշվում եմ ձեզնից։ Դուրեկա՜ն կավալեր, ինձ վեց կոպեկ նվիրեցեք խմելու համար։

Ռասկոլնիկովը հանեց ինչ որ ձեռքն ընկավ՝ երեք հատ հինգկոպեկանոց։

— Ա՜խ, որքա՜ն բարի պարոն եք։

— Անունդ ի՞նչ է։

— Հարցրեք Դունկիդային։

— Չեղավ, այդ ի՜նչ բան է,— հանկարծ միջ մտավ կանանցից մեկը՝ գլուխն տարելով Դունկիդայի կողմը։— Ես

չգիտեմ էլ, թե ոնց կարելի է այդպես փող խնդրել։ Ես դրա տեղը լինեի, կամաչեի, գետինը կմտնեի։

Ռասկոլնիկովը հետաքրքրությամբ նայեց խոսողին։ Այդ մի պեպենոտ, մոտ երեսուն տարեկան կին էր՝ ամբողջովին կապտաբծերով պատած դեմքով, վերին ուռած շրթունքով։ Նա հանգիստ և լրջորեն էր խոսում ու դատում։

«Արդյոք ո՞րտեղ,— մտածեց Ռասկոլնիկովը՝ շարունակելով գնալ,— արդյոք ո՞րտեղ եմ կարդացել, թե ինչպես մահվան դատապարտված մի մարդ մահից մի ժամ առաջ ասում կամ մտածում է, որ եթե իրեն վիճակվեր ապրել մի որևէ բարձունքի, ժայռի վրա, այնպիսի նեղ տեղում, ուր կարելի լիներ միայն ոտքերը տեղավորել, իսկ շուրջը լիներ անդունդ, օվկիանոս, հավերժական խավար, հավերժական առանձնություն և հավերժական փոթորիկ, ու այդպես ինքը մի արշին տարածության վրա կանգնած մնար ամբողջ կյանքում, հազար տարի, հավիտենապես, ապա ավելի լավ էր այդպես ապրել, քան այժմ մեռնել։ Միայն թե ապրել, ապրել ու ապրել։ Ինչ կերպ էլ որ լինի, ապրել... Ինչպիսի՜ ճշմարտություն, տե՜ր աստված, ինչպիսի՜ ճշմարտություն։ Ստոր է մարդը... Եվ ստոր է նա, ով նրան դրա համար ստոր է անվանում»,— մի բոպե անց ավելացրեց Ռասկոլնիկովը։

Նա անցավ մյուս փողոցը։ «Պահ, «Բյուրեղապակյա պալատը»։ Վերջերս Ռազումիխինը խոսում էր «Բյուրեղապակյա պալատի» մասին։ Հա՜, ը-ը, ես ի՞նչ էի ուզում անել. կարդալ... Զոսիմովն ասում էր, որ լրագրերում է կարդացել...»

— Լրագրեր կա՞ն,— հարցրեց նա՝ մտնելով բավական ընդարձակ և նույնիսկ մաքուր այդ պանդոկային ձեռնարկությունը՝ բաղկացած մի քանի սենյակներից, որոնք, սակայն, համարյա դատարկ էին։ Երկու-երեք հաճախորդ թեյ էին խըմում, հեռու մի սենյակում էլ նստած էին չորս մարդ, շամպայն էին խմում։ Ռասկոլնիկովին թվաց, թե նրանց մեջ գտնըվում է Զամետովը։ Սակայն հեռվից անկարելի էր պարզ տեսնել։

«Էհ, թեկուզև նա լինի»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Օղի կհրամայե՞ք,— հարցրեց սպասավորը։

— Քեզ մատուցիր։ Բեր ինձ թերթեր, հնները, վերջին հինգ օրվա, իսկ ես քեզ օղեղրամ կտամ։

— Լսում եմ։ Ահա այսօրվա թերթերը։ Օդի է՞լ եք հրամայում։

Հին լրագրերն ու թեյը մատուցվեցին։ Ռասկոլնիկովը նստեց ու սկսեց նայել լրագրերը. «Իզլեր—* Իզլեր— Ացտեկներ— Ացտեկներ— Իզլեր Բարտուլա— Մասսիմո— Ացտեկներ*— Իզլեր... թյու, գրողը տանի. ահա և նշումներ— կինը գլորվեց սանդուղքից— մի քաղաքների մահացավ օդուց— հրդեհ Պեսկիում— հրդեհ Պետերբուրգյան կողմում— էլի հրդեհ Պետերբուրգյան կողմում*— էլի հրդեհ Պետերբուրգյան կողմում — Իզլեր— Իզլեր— Իզլեր— Իզլեր— Մասսիմո... Հը՛մ, ահա...»

Վերջապես, նա դատավ այն, ինչ որ փնտրում էր, ու սկսեց կարդալ, տողերը ցատկոտում էին նրա աչքերում, սակայն նա մինչև վերջ կարդաց ամբողջ «լուրը» ու սկսեց հետևյալ հոմարներում ագահությամբ փնտրել հետագա հավելումները։ Թերթերը շուռումուռ անելիս նրա ձեռքերը դողում էին ջղաձգական անհամբերությունից։ Հանկարծ ինչ-որ մեկը նստեց նրա կողքին, նրա սեղանի մոտ։ Ռասկոլնիկովը նայեց. Զամետովն էր, հենց այն Զամետովը, նույն տեսքով, մատանիներով, ոսկե շղթաներով, սև, գանգուր և օծված մազերի բաժուկով, պճնամոլական բաճկոնակով, մի քիչ մաշված սերթուկով և լվացած շապկով։ Նա ուրախ էր, գոնե շատ ուրախ և բարեսիրտ էր ժպտում։ Նրա թուխ դեմքը մի փոքր կարմրել էր շամպայն խմելուց։

— Ինչպե՞ս, դուք այստե՞ղ,— հարցրեց նա տարակուսանքով և այնպիսի տոնով, որ կարծես թե իր ամբողջ կյանքում ծանոթ էր Ռասկոլնիկովի հետ,— իսկ դեռ երեկ Ռազումիխինը ինձ ասել էր, որ դուք ուշագնաց վիճակում եք։ Ա՛յ քեզ տարօրինակ բան։ Ես հո եղել եմ ձեզ մոտ...

Ռասկոլնիկովը գիտեր, որ նա կմոտենա։ Լրագրերը մի կողմ դրեց և գարձավ դեպի Զամետովը։ Նրա շրթունքները քմծիծաղ էին տալիս, և այդ քմծիծաղը ինչ-որ մի նոր, ջղայնոտ անհամբերություն էր արտահայտում։

— Ես գիտեմ, որ դուք եկել էիք,— պատասխանեց նա,— լսել էի։ Գուլպան էիք փնտրում... Գիտե՞ք, Ռազումիխինը հիացած է ձեզնով, ասում է, որ դուք նրա հետ Լավիզա Իվանովնայի մոտ էիք գնացել, որի մասին դուք այն օրը հոգում

էիք, աչքով անում պորուչիկ Պորոխին (վառոդ), իսկ նա չէր հասկանում, հիշո՞ւմ եք. ախր, ի՞նչ կար չհասկանալու, բանը պարզ էր... չէ՞։

— Օ, ինչպիսի կռվարար է նա։

— Պորո՞խը։

— Ոչ, ձեր ընկերը, Ռազումիխինը...

— Լա՛վ եք ապրում, հա՛-ա, պարոն Զամետով. առանց մաքսի մուտք ունեք բոլոր ամենահաճելի տեղերը։ Այն ո՞վ էր հիմա ձեզ շամպայնով ողողում։

— Դե մենք... խմում էինք էլի՛... Ի՛նչ ողողել։

— Հը՛մ, հոնորարը գալիս է, ամեն բանից օգտվում եք,— Ռասկոլնիկովը ծիծաղեց։ — Ոչինչ, լավ տղա, ոչինչ,— ավելացրեց նա՝ տփտփացնելով Զամետովի ուսին,— ես հո սա ասում եմ ոչ թե չարասրտությամբ, «այլ սիրով, խաղ անելով», ինչպես ասել էր ձեր այն աշխատողը, Միտկային դընքսողը, երբ հարցաքննվել էր պառավի սպանության գործով։

— Իսկ դուք այդ ո՞րտեղից գիտեք։

— Ես գուցե ավելի շատ բան գիտեմ, քան դուք։

— Դուք ինչ-որ խիստ տարօրինակ եք երևում... Անշուշտ դեռ շատ հիվանդ եք։ Իզուր եք դուրս եկել։

— Ես ձեզ տարօրինա՞կ եմ թվում։

— Այո։ Այդ ի՞նչ է, թերթե՞ր եք կարդում։

— Թերթեր։

— Շատ են գրում հրդեհների մասին։

— Ոչ, ես հրդեհների մասին չեմ կարդում։ — Այստեղ Ռասկոլնիկովը խորհրդավոր նայեց Զամետովին. հեգնոտ ժպիտը դարձյալ ծռմռեց նրա շրթունքները։ — Ոչ, ես հրդեհների մասին չեմ կարդում,— շարունակեց նա՝ աչքով անելով Զամետովին։ — Հապա, խոստովանեցեք, հաճելի երիտասարդ, որ դուք շատ եք ուզում գիտենալ, թե ես ինչի մասին էի կարդում։

— Ամենևին էլ չեմ ուզում. ես հենց այնպես հարցրի։ Մի՞թե չի կարելի հարցնել։ Ի՞նչ եք այդպես շարունակ...

— Լսեք, դուք կրթված, գրական մարդ եք, չէ՞։

— Ես գիմնազիայի վեցերորդ դասարանից եմ դուրս եկել,— մի տեսակ արժանապատվությամբ պատասխանեց Զամետովը։

— Վեցերորդի՞ց։ Ախ դո՜ւ, ծիտիկս։ Հը՛մ, մազաբաժանով ես, մատանիներով. հարուստ մարդ ես, էլի։ Փո՜ւ, ինչ հաճելի տղա ես։ — Այստեղ Ռասկոլնիկովը ջղային ծիծաղ թափեց հենց Զամետովի դեմքին։ Վերջինս ետ քաշվեց ու ոչ թե վիրավորվեց, այլ խիստ զարմացավ։

— Փո՜ւ, որքան տարօրինակ եք,— շատ լուրջ կրկնեց Զամետովը։ — Ինձ թվում է, որ դուք էլի զառանցում եք։

— Զառանցո՞ւմ եմ. սպում ես, ծիտիկս... Ուրեմն ես տարօրինա՞կ եմ։ Իսկ ձեզ համար հետաքրքի՞ր եմ, հը՞, հետաքրքրքի՞ր եմ։

— Հետաքրքիր ես։

— Ուրեմն ասե՞մ, թե ինչի մասին էի կարդում, ինչ էի փնտրում։ Ա՛յ թե քանի թերթ եմ պահանջել։ Կասկածելի է, չէ՞։

— Դե, ասայ!ք։

— Ականջներդ սրիր։

— Ինչի՞ համար։

— Հետո կասեմ, թե ինչի համար, իսկ հիմա, սիրելիդ իմ, հայտարարում եմ ձեզ... ոչ, ավելի լավ է ասել՝ «խոստովանում եմ»... ոչ, այդ էլ չեղավ. «ցուցմունք եմ տալիս, իսկ դուք դրի եք առնում», ա՛յ թե ինչ։ Ուրեմն ցուցմունք եմ տալիս, որ կարդում, հետաքրքրվում... Փնտրում-գտնում էի...— Ռասկոլնիկովը կկոցեց աչքերը և մի փոքր սպասեց։ — Հենց նրա համար մտա այստեղ, որպեսզի լուրեր կարդայի աստիճանավորի պառավ կնոջ սպանության մասին,— ի վերջո ասաց նա համարյա շշնջալով, դեմքը բոլորովին մոտեցնելով Զամետովի դեմքին։ Զամետովը ուղղակի սևեռուն նայում էր նրան առանց շարժվելու և առանց դեմքը հեռացնելու նրա դեմքից։ Հետո Զամետովին ամենից տարօրինակ թվաց այն, որ լռությունը տևեց ուղիղ մի րոպե, և ուղիղ մի րոպե նրանք այդպես իրար էին նայում։

— Հետո ի՞նչ, որ կարդում էիք,— հանկարծ գոչեց նա տարակուսանքով և անհամբերությամբ։ — Այդ իմ ի՞նչ գործն է, ի՞նչ կա դրա մեջ։

— Դա հենց այն պառավն է,— շարունակեց Ռասկոլնիկովը նույն շշնջյունով և Զամետովի բացականչությունից չշարժվելով,— հենց այն պառավն է, որի մասին պատմում

էին գրասենյակում, հիշո՞ւմ եք, իսկ ես ուշաթափվեցի։ Հիմա դրանից ի՞նչ եք հասկանում։

— Ախր ինչո՞ւմն է բանը, ի՞նչ պետք է «հասկանալ»,— համարյա անհանգստանալով ասաց Զամետովը։

Ռասկոլնիկովի անշարժ և լուռ դեմքը մի ակնթարթում կերպարանափոխվեց, և նա հանկարծ սկսեց ջղայնորեն քրքջալ ինչպես քիչ առաջ, կարծես թե բոլորովին անզոր էր իրեն զսպելու։ Ու մի ակնթարթում զգայման արտասովոր պարզությամբ նա վերհիշեց այն վայրկյանները, երբ ինքը կացինը ձեռքին կանգնել էր դռան ետևում, սողնակը ցատկռում էր, Կոխը և Պետրյակովը դրսից հայհոյում ու թակում էին դուռը, իսկ ինքը հանկարծ ուզեց դռռալ նրանց վրա, հայհոյանք թափել, լեղու ցույց տալ, ձեռ առնել նրանց, ծիծաղել. քրքջալ, քրքջալ, քրքջալ։

— Դուք կամ խելագար եք, կամ...— ասաց Զամետովը ու լռեց, ասես հանկարծ ապշեց իր գլխում անակնկալ ծագած մտքից։

— Կա՞մ։ Կամ ի՞նչ։ Դե ի՞նչ։ Դե ասացեք։

— Ոչինչ,— բարկացկոտ պատասխանեց Զամետովը,— այդ ամենը դատարկ բան է։

Երկուսն էլ լռեցին։ Հանկարծակի, արտասովոր քրքիջից հետո Ռասկոլնիկովը խստությունից և մտածմունքի մեջ ընկավ։ Նա արմունկները դրեց սեղանին և գլուխը հենեց ձեռքերին։ Կարծես նա բոլորովին մոռացավ Զամետովին։ Լռությունը բավական երկար տևեց։

— Ինչո՞ւ թեյը չեք խմում, կսառի,— ասաց Զամետովը։

— Հը, ի՞նչ, թե՞յը... հա՛,— Ռասկոլնիկովը մի կում թեյ խմեց, մի կտոր հաց տարավ բերանը ու հանկարծ, նայելով Զամետովին, կարծես ամեն ինչ վերհիշեց ու սթափվեց. նրա դեմքը նույն բոպեին նախորդ հեգնական արտահայտությունը ստացավ։ Նա շարունակեց խմել թեյը։

— Հիմա շատացել են այդ խարդախությունները,— ասաց Զամետովը։— Դեռ վերջերս ես «Մոսկովսկիյե վեդոմոստիում» կարդացի, որ Մոսկվայում դրամանենգների մի ամբողջ խումբ են բռնել։ Մի ամբողջ ընկերություն է եղել։ Կեղծում էին թղթադրամները։

— Օ, այդ վաղուց է եղել, ես դեռ մի ամիս առաջ եմ կարդացել,— հանդիստ պատասխանեց Ռասկոլնիկովը։ — Ուրեմն ձեր կարծիքով նրանք խարդախնե՞ր են,— քմծիծաղով ավելացրեց նա։

— Էլ ի՞նչպես խարդախներ չեն։

— Նրա՞նք։ Նրանք երեխաներ են, բլանբեկներ[1] և ոչ թե խարդախներ։ Այդ տեսակ նպատակի համար հիսունի չափ մարդիկ էին միացել։ Մի՞թե Ձայդ հնարավոր է։ Այստեղ երեք հոգին էլ շատ են, այն էլ եթե մեկը մյուսին ավելի շատ վրստահի, քան ինքն իրեն։ Թե չէ բավական է, որ մեկը հարբած վիճակում բերանից խոսք թռցնի, ու ամեն ինչ կորած է։ Բլանբեկներ են։ Անհուսալի մարդիկ են վարձում, բանկերում թղթադրամները մանրելու համար. սխալ ի՞նչպես կարելի է հավատալ առաջին հանդիպած մարդուն։ Ենթադրենք, թե բլանբեկների միջոցով էլ գործը հաջողվեց, ենթադրենք, թե յուրաքանչյուրը մեկ միլիոն փող խփեց, իսկ հետո ի՞նչ կլինի նրա ամբողջ կյանքում։ Ամբողջ կյանքում մեկը մյուսից է կախված։ Ավելի լավ է խեղդվել։ Նրանք կեղծ փողը փոխելմանրել էլ չէին կարողանում։ Սկսում է դրանցից մեկը, բանկում մանրում է փողը, ստանում է հինգ հազար, ու ձեռքերը դողում են։ Չորս հազարը հաշվում է, իսկ հինգերորդը ընդունում է առանց հաշվելու, հավատալով, որպեսզի հենց միայն փողը գրպանը դնի ու շուտ փախչի։ Ու դրանով կասկած է առաջացնում։ Ամեն ինչ կործանվում է մեկ հիմարի պատճառով։ Մի՞թե այդ հնարավոր է։

— Ձեռքերի դո՞ղը, այո, դա հնարավոր է,— վրա բերեց Զամեսովը։ Այո, ես միանգամայն հավատացած եմ, որ դա հնարավոր է։ Հեշտ չէ դիմանալ։

— Մի՞թե։

— Իսկ դուք կդիմանա՞ք, հա՞։ Ոչ, ես չէի դիմանա։ Հարյուր ռուբլի վարձատրության համար այդպիսի քա՞յլ անել։ Կեղծ թղթադրամով գնալ,— ո՞ւր,— բանկիրական դրասենյա՞կը, ուր փորձված են դրանում։ Ոչ, ես կշփոթվեի։ Իսկ դուք չե՞ք շփոթվի։

---

[1] Համբակներ, անփորձներ (ֆրանս. blanc-bec)։

Ռաստոլնիկովը հանկարծ խիստ ուզեց դարձյալ «լեզու ցույց տալ»։ Բոպե առ բոպե նրա մեջքով սարսուռ էր անցնում։

— Ես այդպես չէի ասի,— սկսեց նա հեռվից։ — Ահա թե ես ինչպես կմտածեի. կհաշվեի առաջին հազարը, այնպես, բոլոր ծայրերից, զննելով յուրաքանչյուր թղթադրամը, ու կսկսեի հաշվել հետևյալ հազարը. կհաշվեի կեսը, կհանեի մի որևէ հիսուն ռուբլիանոց. կնայեի լույսի տակ, շուռ կտայի ու էլի կնայեի լույսի տակ, արդյոք կեղծ չէ։ «Ես վախենում եմ, — կասեի,— օրերս իմ մի ազգականուհին այս կերպ քսանհինգ ռուբլի կորցրեց»,— ու այստեղ մի այդպիսի դեպք կպատմեի։ Ու հենց որ սկսեի երրորդ հազարը հաշվել, կասեի՝ ներողություն, կարծես երկրորդ հազարի յոթ հարյուրը սխալ եմ հաշվել, կասկածում եմ. կթողնեի երրորդ հազարը ու էլի կհաշվեի երկրորդը, ու ամբողջ հինգ հազարը, այդպես կհաշվեի։ Ու երբ վերջացնեի, հինգերորդ ու երկրորդ հազարից կհանեի մեկական թղթադրամ, էլի կնայեի լույսի տակ, ու էլի կասկածելով կասեի՝ «խնդրում եմ փոխեք»,— ու գրասենյակի ծառայողին համբերությունից կհանեի, այնպես որ նա չէր էլ դիտենա, թե ինչպես ապատվի ինձնից։ Վերջապես, ամեն ինչ կվերջացնեի, կգնայի, դուռը կբանայի, բայց ոչ, ներեցեք, նորից եւ կդառնայի որևէ բանի մասին հարցնելու, որևէ բացատրություն ստանալու. ահա թե ես ինչ կանեի։

— Փո՛ւ, ինչ սարսափելի բաներ եք ասում,—ծիծաղելով ասաց Զամետովը։ — Դրանք բոլորը լոկ խոսքեր են, իսկ իրականում անշուշտ կսայթաքեիք։ Ես ձեզ պետք է ասեմ, որ իմ կարծիքով ոչ միայն ես և դուք, այլ փորձված, հանդուգն մարդն էլ չի կարող իր նկատմամբ երաշխավորված լինել։ Էլ ինչո՞ւ հեռու գնանք, ահա մի օրինակ. մեր թաղամասում սպանեցին պառավին։ Կարծես թե սպանողը հանդուգն մարդ է, օրը ցերեկով իրեն այդպիսի վտանգի է ենթարկել, միայն հրաշքով է փրկվել, բայց արի ու տես, որ ձեռքերը դողացել են. չկարողացավ կողոպտել. չդիմացավ. դա գործից է երևում...

Ռասկոլնիկովը կարծես վիրավորվեց։

— Գործի՞ց է երևում։ Դե հիմա բռնեցեք նրան,— գոչեց նա՝ չարախնդությամբ գրգռելով Զամետովին։

— Ինչ կա որ, կբռնեն։

— Ո՞վքեր, դո՞ւք, դո՞ւք կբռնեք։ Հալումաշ կլինեք։ Ձեզ համար ա՛յ թե ինչն է գլխավորը. այդ մարդը արդյոք փող ծախսո՞ւմ է, թե՞ ոչ։ Փող չի ունեցել ու հանկարծ սկսում է փող ծախսել, էլ ինչպե՞ս նա չէ հանցավորը։ Այստեղ երեխան էլ կիմարի ձեզ, եթե ուզենա։

— Հենց բանն էլ այդ է, որ նրանք բոլորը այդպես են անում,— պատասխանեց Զամետովը,— սպանում են խորամանկորեն, իրենց կյանքը վտանգի են ենթարկում, հետո էլ խիստ բռնվում են դինեմոնում։ Հենց փողը ծախսելու վրա են բռնվում։ Բոլորը հո ձեզ նման խորամանկներ չեն։ Դուք, ինարկե, գինեմուն չլիք գնա։

Ռասկոլնիկովը կիսաբաց հոնքերը և խորազնին նայեց Զամետովին։

— Դուք բան երևույթին շատ եք հետաքրքրվում դրանով և ուզում եք իմանալ, թե ես ի՞նչպես կվարվեի նաև այս դեպքում,— հարցրեց դժգոհությամբ։

— Կուզենայի,— կտրուկ և լուրջ պատասխանեց Զամետովը։ Նա սկսել էր չափազանց լուրջ խոսել ու նայել Ռասկոլնիկովին։

— Շա՞տ կուզենայիք։

— Շատ։

— Լավ։ Ահա թե ես ինչպես կվարվեի,— ասաց Ռասկոլնիկովը, դարձյալ դեմքը հանկարծ մոտեցրեց Զամետովի դեմքին, դարձյալ ակնապիշ նայեց նրան ու շշնջալով շարունակեց,— ահա թե ես ինչ կանեի. կվերցնեի փողը և իրերը, ու հեռանալով այնտեղից, ոչ մի տեղ չմտնելով, կգնայի որևէ խուլ վայր, ուր միայն ցանկապատեր են և համարյա ոչ ոք չկա, մի որևէ բանջարանոց կամ նման մի վայր։ Դեռ առաջուց ես այնտեղ կնշեի որևէ անկյունում, ցանկապատի մոտ ընկած, ասեմ թե մեկ կամ մեկուկես փութ ծանրությամբ մի որևէ քար, որը դուցե տան կառուցման օրերից է այնտեղ պառկում. կբարձրացնեի այդ քարը, որի տակ փոս կլիներ, ու բոլոր իրերն ու փողը կդնեի այդ փոսի մեջ, քարը կդնեի իր տեղը, այնպես ինչպես առաջ ընկած էր այն, ոտքով հաստ կտայի ու կհեռանայի։ Ու մի տարի, երկու տարի չէի վերցնի։ Երեք տարի էլ չէի վերցնի։ Դե թող փնտրեին։ էլ ո՞նց կգըտնեին։

— Դուք խելագար եք,— չգիտես ինչու ասաց Զամետովը նույնպես համարյա շշնջալով, ու չգիտես ինչու հանկարծ Ռասկոլնիկովից ետ քաշվեց։ Ռասկոլնիկովի աչքերը փայլեցին. նա սարսափելի գունատվեց. նրա վերին շրթունքը դողաց ու սկսեց ցնցվել։ Նա որքան կարելի էր թեքվեց դեպի Զամետովը ու սկսեց առանց որևէ բան ասելու շարժել շրթունքները. այդպես շարունակվեց մոտ կես րոպե, նա գիտեր, թե ինչ էր անում, բայց չէր կարողանում դադարել։ Սարսափելի խոսքը, ինչպես այն ժամանակ դռան ոստիկը, այնպես էլ ցատկոտում էր իր շուրթերի վրա. ահա, ահա կթռցնի այն, քիչ է մընում, քիչ է մնում նա ասի այդ խոսքը։

— Իսկ ի՞նչ կլինի, եթե ե՛ս եմ սպանել պառավին ու Լիզավետային,— ասաց նա հանկարծ և ուշքի եկավ։

Զամետովը օտարոտի նայեց նրան ու գունատվեց սփոցի նման։ Նրա դեմքը ծամածռվեց ժպիտից։

— Մի՞թե այդ հնարավոր է,— հազիվ լսելի ասաց նա։

Ռասկոլնիկովը ցասկոտ նայեց նրան։

— Խոստովանեցիք, որ հավատացիք, այո՞, այնպես չէ՞։

— Բնավ ոչ։ Հիմա ավելի, բան երբևէ, չեմ հավատում,— հապճեպ պատասխանեց Զամետովը։

— Վերջապես, բռնվեցիր։ Սիտիկը բռնվեց։ Ուրեմն առաջ հավատում էիք, եթե հիմա «ավելի, բան երբևէ, չեք հավատում»։

— Դե բոլորովին ոչ, էլի,— բացականչեց ըստ երևույթին շփոթված Զամետովը։ — Դուք ինձ հենց նրա համար վախեցրիք, որպեսզի նման եղրակացությա՞ն հանգեիք։

— Ուրեմն չե՞ք հավատում, իսկ իմ բացակայությամբ, ինչի՞ մասին սկսեցիք խոսել, երբ այն ժամանակ ես դուրս եկա գրասենյակից։ Ուշաթափությունից հետո պորուչիկ Պորխը ինչո՞ւ էր ինձ հարցաքննում։ Է՞յ, դու,— կանչեց նա սպասավորին՝ վեր կենալով ու վերցնելով գլխարկը,— որքա՞ն պիտի վճարեմ։

— Ընդամենը երեսուն կոպեկ,— մոտեցավ ու պատասխանեց սպասավորը։

— Ահա քեզ և քսան կոպեկ արաղի փող։ Տես ինչքան փող կա,— թղթադրամներ բռնած իր դողդոջ ձեռքը նա մեկնեց

Զամետովին,— է՛լ տասնոցներ, է՛լ հնդանոցներ, քսանհինգ ռուբլի։ Ո՞րտեղից է սա։ Ո՞րտեղից է նոր հագուստս։ Հո գիտե՞ք, որ մի կոպեկ էլ չկար։ Երևի տանտիրուհուս արդեն հարցաքննել եք... էհ, բավական է, Assez cause[1], ցտեսություն... ցանկամ ձեզ հաճելի ժամանց...

Նա դուրս ելավ ամբողջովին դողալով ինչ-որ օտարոտի, հիստերիկ զգացումից, որի մեջ ի միջի այլոց մասամբ անհանդուրժելի վայելք կար։ Նա մռայլ էր, սարսափելի հոգնած։ Նրա դեմքը ծռմռված էր, կարծես ինչ-որ նոպայից հետո։ Նրա հոգնածությունը արագորեն սաստկանում էր։ Առաջին ցնցումի, առաջին ջղայնացուցիչ զգացումից հետո նրա ուժերը պրպտում, հորդում էին հանկարծ, ու նույն արագությամբ թուլանում էին այն չափով, որով թուլանում էր դպացումը։

Իսկ Զամետովը մնալով մենակ, նստել էր նույն տեղում ու մտածում էր։ Ռասկոլնիկովը պատահարար տակնուվրա էր արել սպանության վերաբերյալ նրա բոլոր մտքերը ու վերջնականապես ապացուցել նրա կարծիքը։

«Իլյա Պետրովիչը ապուշ է»,— վերջնականապես որոշեց Զամետովը։

Հենց որ Ռասկոլնիկովը բացեց դրսի դուռը, հանկարծ մուտքի սանդուղքի վրա հանդիպեց ներս մտնող Ռազումիխինին։ Երկուսն էլ նույնիսկ մի քայլ հեռավորությամբ միմյանց չտեսան, այնպես որ քիչ մնաց բախվեին նրանց գլուխները։ Մի քանի վայրկյան նրանք հայացքով չափում էին միմյանց։ Ռազումիխինը բոլորովին ապշեց, ու հանկարծ բարկությունը, թունդ բարկությունը ահեղորեն շողաց նրա աչքերում։

— Ահա թե որտեղ ես դու,— բղավեց նա ամբողջ կոկորդով մեկ։ — Անկողնուց ես փախել։ Իսկ ես այնտեղ քեզ նույնիսկ բազմոցի տակ էի փնտրում, ձեղնահարկ էլ բարձրացանք։ Քիչ մնաց քո պատճառով խփեի Նաստասյային... Իսկ դու այ թե որտեղ ես։ Ողջա, այդ ի՞նչ է նշանակում։ Ասա ամբողջ ճշմարտությունը, խոստովանիր, լսո՞ւմ ես։

— Այն է նշանակում, որ դուք բոլորդ մեռցնելու չափ

---

[1] Բավական է շաղակրատել (Ֆրանս.)։

ձանձրացրել եք ինձ, ու ես ուզում եմ մենակ լինել,— հանգիստ պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Մենա՞կ լինել, երբ դեռ չես կարող քայլել, երբ դեռ դեմքդ դունատ է կտավի նման, ու շնչասպառ ես լինում։ Հիմար... Ի՞նչ էիր անում «Բյուրեղապակյա պալատում», անմիջապես խոստովանիր։

— Թող,— ասաց Ռասկոլնիկովը և ուզեց անցնել նրա կողքից։ Այդ արդեն խստաբար պայրացրեց Ռազումիխինին. սա ալինդ բռնեց Ռասկոլնիկովի ուսից։

— Թողնե՞մ։ Դու համարձակվում ես «թո՞ղ» ասել։ Գիտե՞ս թե հիմա ես քեզ ինչ կանեմ։ Կկապեմ, թևի տակ կառնեմ, կտանեմ տուն ու փակի տակ կպահեմ։

— Լսիր, Ռազումիխին,— կամացուկ և ըստ երևույթին բոլորովին հանգիստ ասաց Ռասկոլնիկովը,— Մի՞թե դու չես տեսնում, որ ես չեմ ուզում քո բարերարությունները։ Ախր ի՞նչ սովորություն է դա, բարերարություն անել այն մարդկանց, որոնք... թքում են դրա վրա, վերջապես, նրանց, որոնց համար դա անտանելի է։ Ինչի՞ համար դու ինձ փնտրեցիր ու գտար հիվանդությանս սկզբում։ Գուցե ես շատ կուզենայի մեռնել։ Մի՞թե ես այսօր բավականաչափ ցույց չտվի քեզ, որ դու ինձ տանջում ես, որ դու ինձ... ձանձրացրել ես։ Հիրավի, այդ ի՞նչ հակում է՝ տանջել մարդկանց։ Հավատացնում եմ քեզ, որ այդ ամենը շատ է խանգարում իմ առողջացմանը, որովհետև անընդհատ ջղայնացնում է ինձ։ Ի սեր աստծո, հեռացիր ինձնից։ Ու վերջապես, դու ի՞նչ իրավունք ունես ինձ զորով պահելու։ Եվ մի՞թե դու չես տեսնում, որ ես հիմա խոսում եմ միանգամայն զգաստ վիճակում։ Վերջապես, էլ ի՞նչ աղաչանք-պաղատանք թափեմ, ի՞նչպես սովորեցնեմ քեզ, որ դու չընկնես իմ ետևից և ինձ բարերարություն չանես։ Թող ես ապերախտ լինեմ, թող ես ստոր լինեմ, միայն թե հեռացեք դուք բոլորդ, ի սեր աստծո, հեռացե՛ք, հեռացե՛ք, հեռացե՛ք։

Նա սկսել էր հանգիստ խոսել, նախապես ուրախանալով, որ կարող է թափել իր մեջ կուտակված ամբողջ թույնը, բայց խոսքը վերջացրեց կատաղելով ու շնչասպառ լինելով, ինչպես որ վարվել էր Լուժինի հետ։

Ռազումիխինը մի քիչ սպասեց, մտածեց ու բաց թողեց նրա թևը։

— Դե ուրեմն գնա գրողի ծոցը,— ասաց նա կամացուկ և համարյա մտազբաղ։ — Կաց,— հանկարծակի դուռաց նա, երբ Ռասկոլնիկովը շարժվել էր տեղից,— լսիր ինձ։ Հայտարարում եմ քեզ, որ դուք բոլորդ առանց բացառության պոռոտախոսներ ու սնապարծներ եք։ Ձեր մեջ տանջանք է առաջանում, և դուք այն կրում եք ինչպես հավը՝ հավկիթը... Նույնիսկ այստեղ էլ ուրիշ հեղինակներից եք խոսք գողանում։ Ձեր մեջ ինքնուրույն կյանքի նշույլ անգամ չկա։ Դուք կետահարպային քսուքից եք կերտված, իսկ արյան փոխարեն ձեր մեջ շիճուկ է հոսում։ Ես ձեզնից ոչ մեկին չեմ հավատում։ Բոլոր հանգամանքներում ձեր առաջին գործն այն է, որ մի կերպ չնմանվեք մարդուն։ Սպասիր,— կրկնապատկված կատաղությամբ բղավեց Ռազումիխինը, նկատելով, որ Ռասկոլնիկովը դարձյալ փորձում է հեռանալ, լսիր մինչև վերջ։ Գիտե՞ս, նոր բնակարան տեղափոխվելու առթիվ այսօր ինձ մոտ մարդիկ խնջույքի են հավաքվում, գուցե և արդեն եկել են, ես այնտեղ թողի հորեղբորս, որ ընդունի մարդկանց, ու վազեցի այստեղ։ Դե ուրեմն եթե դու հիմար չլինեիր, դռեհիկ հիմար, հիմարի գլուխ, օտար լեզվից թարգմանություն չլինեիր... Տեսնո՞ւմ ես, Ռոդյա, ես խոստովանում եմ, դու խելոք տղա ես, բայց և հիմար ես. դե ուրեմն, եթե դու հիմար չլինեիր, ավելի լավ կլիներ այսօր երեկոյան գայիր ինձ մոտ, կնստեինք, էլի, փոխանակ իզուր տեղը դրսում կոշիկ մաշելու։ Դե որ տանից դուրս ես եկել, էլ ի՞նչ պիտի անես։ Տանտերերը փափուկ բազկաթոռ ունեն, ես կվերցնեի քեզ համար... Կլինի թեյ, ընկերական խումբ... Կարող եմ քեզ պառկեցնել թախտին, միայն թե մեր մեջ լինես, թեկուզև պառկած... Զոսիմովն էլ է գալու։ Գուցե կմտնե՞ս ինձ մոտ։

— Ոչ։

— Ստու-ո՞ւմ ես,— անհամբեր բղավեց Ռազումիխինը,— դու ի՞նչ գիտես որ, դու չես կարող քեզ համար պատասխանատու լինել։ Ու այդ կողմից ոչինչ էլ չես հասկանում... Ես հազար անգամ ճիշտ այսպես կռվել եմ մարդկանց հետ, ու էլի ետ եմ մանել... Ամոթ ես զգում ու էլի երեսդ դարձնում դեպի մարդը։ Դե ուրեմն հիշիր՝ Պոչինկովի տունը, երրորդ հարկ...

— Սխր դուք, պարոն Ռազումիխին, բարերարություն անելու հաճույքով տարված, թերևս որևէ մեկին ստիպեք խփել ձեզ։

— Ո՞ւմ։ Ի՞նձ։ Այդպիսի բան նույնիսկ միայն երևակայողի քիթը կչարդեմ։ Պոչինկովի տունը, № 47, աստիճանավոր Բարուշկինի բնակարանը...

— Չեմ գա, Ռազումիխին։ — Ռասկոլնիկովը շուռ եկավ ու հեռացավ։

— Երազ եմ դալիս, որ կգաս,— նրա հետևից գոչեց Ռազումիխինը։ — Այլապես դու... այլապես քեզ չեմ էլ ուզում ճանաչել։ Սպասիր, է՛յ, Զամետովը այնտե՞ղ է։

— Այնտեղ է։

— Տեսա՞ր։

— Տեսա։

— Խոսեցի՞ր։

— Խոսեցի։

— Ինչի՞ մասին։ Դե լավ, չրվիր, չես ուզում, մի ասա։ Պոչինկովի տուն, 47, Բարուշկինի բնակարանը, հիշիր։

Ռասկոլնիկովը հասավ Սոդովայա և շուռ եկավ մի այլ փողոց։ Ռազումիխինը մտադրաղ նայում էր նրա ետևից։ Վերջապես, ձեռք քաշեց նրանից, մտավ պանդոկ, բայց կանգ առավ սանդուղքի մեջտեղում։

«Գրողը տանի»,— համարյա լսելի ձայնով ասաց նա,— «խելոք է խոսում, բայց կարծես թե... Ախր ես էլ հիմար եմ. մի՞թե խելագարվածները խելոք չեն խոսում։ Իսկ Զոսիմովը, ինչպես ինձ թվաց, հենց դրանից է վախենում»։ — Ռազումիխինը մտաբ խփեց ճակատին։—«Լավ, իսկ եթե... հիմա ի՞նչպես կարելի է նրան մենակ թողնել. հանկարծ ու ջուրն ընկնի, խեղդվի... Ա՛խ, ես սխալվեցի, չի կարելի մենակ թողնել»։

Եվ նա ետ դարձավ, վազեց Ռասկոլնիկովի ետևից, բայց վերջինս արդեն չքացել էր։ Ռազումիխինը թքեց ու արագ քայլերով վերադարձավ «Բյուրեղապակյա պալատը», որպեսզի շուտ հարցուփորձ աներ Զամետովին։

Ռասկոլնիկովը հասավ № կամուրջը, կանգնեց դրա մեջտեղում, բազրիքի մոտ, արմունկները հենեց բազրիքին ու սկսեց դիտել հեռուն։ Բաժանվելով Ռազումիխինից, նա այնքան թուլացավ, որ հազիվ հասավ այստեղ։ Նա ուզեց որևէ

տեղ, դրսում նստել կամ պառկել։ Ջրի վրա կռացած, նա մեղքենայաբար դիտում էր վերջալույսի վերջին վարդագույն ցոլքը, թանձրացող մթնաշաղում շարեշար տների ուրվագծերը, ձախափնյա մի տան ձեղնահարկի հեռավոր, փոքրիկ պատուհանը, որ հրաբոսոր առկայծում էր մի ակնթարթ իր վրա ընկած արևի վերջին ճառագայթից, ջրանցքի մթին տվող ջուրը, ու կարծես թե ուշադրությամբ էր նայում այդ ջրին։ Վերջապես, նրա աչքերում սկսեցին պտույտ գալ ինչ-որ կարմիր կլորակներ, տները երերացին, անցորդները, առափնյա փողոցները, կառքերը, այդ ամենը սկսեց պտտվել ու պար գալ նրա շուրջը։ Հանկարծ նա ցնցվեց, մի օտարոտի և այլանդակ տեսիլք թերևս նրան փրկեց նոր ուշաթափությունից։ Նա զգաց, որ աջ կողմից ինչ-որ մեկը կանգ առավ իր կողքին. նա նայեց ու տեսավ մի կնոջ, որը բարձրահասակ էր, գլխաշորով, գեղին, երկարավուն, հյուծված դեմքով և կարմրավուն, փոս ընկած աչքերով։ Կինը ուղղակի նայում էր նրան, բայց ակներև էր, որ ոչինչ չէր տեսնում և նրան չէր ճանաչում։ Հանկարծ կինը աջ ձեռքով կոթնեց բազրիքին, բարձրացրեց աջ ոտքը և անցկացրեց բազրիքի վրայից, հետո էլ բարձրացրեց ձախ ոտքը ու նետվեց ջրանցքը։ Կեղտոտ ջուրը ճեղքվեց, մի ակնթարթում կլանեց ղոհին, բայց մի բոպե հետո ջրահեղձը ելավ ջրի երեսը ու դանդաղ սահեց հոսանքի ուղղությամբ, գլուխն ու ոտքերը ջրի մեջ, մեջքը վերևից, յուրկան պոկ եկած ու բարձի պես ուռճացած։

— Խեղդվեց, խեղդվեց,— բղավում էին տասնյակ ձայներ. վազեվազ մարդիկ էին գալիս, առափնյա երկու փողոցները լցվում էին դիտողներով, կամրջի վրա, Ռասկոլնիկովի շուրջը մարդիկ հավաքվեցին՝ վրա տալով ու ետևից նրան սեղմելով բազրիքին։

— Վայ, վայ, ախր դա մեր Աֆրոսինյուշկան է,— ինչ որ մոտիկ տեղից լսվեց կանայի լացակումած մի ձիչ։ — Ա՛յ մարդիկ, փրկեցեք, վա՛յ, քոռանամ ես, հանեցեք ջրից։

— Մակո՛ւյկ վերցրեք, մակո՛ւյկ,— բղավում էին բազմության մեջ։

Բայց արդեն մակույկ հարկավոր չէր. մի քաղաքապահ վայրէջքի սանդուղքով վազեվազ իջավ ջրի ափը, հանեց վերարկուն և կոշիկները ու նետվեց ջուրը. գործը շատ չէր. հո-

անքը ջրահեղձին տանում էր վայրէջքի սանդուղքից երկու ցայլ հեռավորությամբ, քաղաքապահը աջ ձեռքով բռնեց նրա հագուստից, ձախով իր ընկերոջ մեկնած ձողից, ու ջրահեղձը խկույն հանվեց ջրից։ Նրան պառկեցրին սանդուղքի գրանիտե սալերին։ Նա շուտով ուշքի եկավ, քիչ բարձրացավ, նըստեց ու սկսեց փոշտալ և փնչալ, անհնթեթորեն քամել թրջված հագուստը։ Նա ոչինչ չէր ասում։

— Մեռնելու չափ խմում էր, ա՛յ մարդիկ, մեռնելու չա՜փ։ — արդեն Աֆրոսինյուշկայի մոտ ճղճղում էր նույն կանացի նայնը,— մի անգամ էլ փորձել էր կախվել, պարանը վզից հանեցին։ Ես գնացել էի խանութ, աղջկաս թողել սրա մոտ, որ մտիկ անի, և ահա պատահեց փորձանքը։ Քաղաքից է, տեղացի, իրար կողքի ենք ապրում, հրե՛ն, ծայրից երկրորդ տունը, այնտեղ ենք ապրում...

Մարդիկ ցրվում էին, ոստիկանները դեռ զբաղված էին ջրահեղձով. մեկը ինչ-որ բան ասաց ոստիկանատան մասին... Ռասկոլնիկովը ամեն ինչին նայում էր անտարբերության ու սառնասրտության տարօրինակ ղդացումով։ Նա զզվեց։ «Ոչ, նողկալի է... ջուրը... չարժե, քթի տակ փնթփնթում էր նա։ Ոչինչ չի լինի, ավելացրեց նա, բան դուրս չի գա։ Հը՛մ, ոստիկանատունը... Իսկ ինչո՞ւ Զամետովը ոստիկանատանը չէ. ոստիկանատունը ժամը տասին բաց է...», նա շուռ եկավ բաղրիքից ու նայեց շուրջը։

«Դե ինչ կա որ, թող այդպես լինի», վճռականապես ասաց նա, հեռացավ կամրջից ու գնաց դեպի այն կողմը, ուր դտնըվում էր ոստիկանատան դրասենյակը։ Նրա սիրտը դատարկ էր և խուլ։ Նա չէր ուզում մտածել։ Նույնիսկ թախիծն էլ էր անցել, ոչ մի հետք չէր մնացել ժամ առաջ եղած էներդիայից, երբ նա տանից դուրս եկավ, «որպեսզի ամեն ինչ վերջացներ»։ Այդ էներդիայի փոխարեն նրա մեջ լիակատար անտարբերություն էր առաջացել։

«Ի՜նչ արած, այդ էլ ելք է, մտածում էր նա ու կամացուկ, ալարկոտ քայլում ջրանցքի ափով։ Այնուամենայնիվ վերջ կտամ, որովհետև այդպես եմ ուզում... Սակայն արդյո՞ք այդ է ելքը։ Էհ, միևնույն է, քեզ բաժին կընկնի մի արշին տարածություն, հա՜-հա՜։ Սակայն ինչպիսի՜ վերջ. մի՞թե արդեն վերջն է։ Ասե՞մ նրանց, թե՞ չասեմ։ Է-է... դրողը տանի։ Հոգ-

նած եմ, շուտ պառկեմ կամ նստեմ որևէ տեղ։ Ամենից ամոթալին այն է, որ շատ հիմար բան է սա։ Էհ, թքած դրա վրա։ Ինչպիսի՜ հիմարություններ են գլխումս ծագում...»

Հարկավոր էր գրասենյակ գնալ ուղիղ ճանապարհով ու երկրորդ խաչաձևող փողոցով դեպի ձախ դառնալ. այնտեղից բոլորովին մոտիկ էր գրասենյակը։ Բայց հասնելով առաջին խաչաձևող փողոցը, նա կանգ առավ, մտածեց, դարձավ դեպի նրբանցք ու գնաց շուրջանակի ճանապարհով, անցնելով երկու փողոց. դուցե առանց որևէ նպատակի, գուցեև գեթ մի րոպե էլ քարշ տալու և ժամանակ շահելու համար։ Նա քայլում էր և նայում գետնին։ Հանկարծ կարծես մեկը ինչ-որ բան շշնջաց նրա ականջին։ Նա բարձրացրեց գլուխը և տեսավ, որ կանգնած է այն տան մոտ, հենց դարպասի մոտ։ Այն երեկոյից հետո նա այստեղ չէր եղել և այդ տան կողքից չէր անցել։

Նա զգաց անհաղթահարելի և անբացատրելի մի ցանկություն՝ մտնել այդ տունը։ Անցավ դարպասից, մտավ աջ կողմի դռնից ու սկսեց ծանոթ սանդուղքով բարձրանալ չորրորդ հարկ։ Նեղ և դիք սանդուղքի վրա շատ մութն էր։ Նա կանգ էր առնում յուրաքանչյուր հարթակում և հետաքրքրությամբ նայում շուրջը։ Առաջին հարկի հարթակում տեսավ, որ բոլորովին հանված էր պատուհանի շրջանակը. «Այն ժամանակ այդպես չէր», մտածեց նա։ Ահա և երկրորդ հարկի այն բնակարանը, որտեղ աշխատել էին Նիկոլայը և Միտկան. «Փակված է. դուռը նոր է ներկված, ուրեմն վարձով է տրվում»։ Ահա և երրորդ հարկը... չորրորդը... «Հենց սա է»։ Տարակուսանքը համակեց նրան. այդ բնակարանի դուռը բոլորովին բաց էր, այնտեղ մարդիկ կային, ձայներ էին լսվում. նա այդ ոչ մի կերպ չէր սպասում։ Մի փոքր տատանվելով, նա բարձրացավ սանդուղքի վերջին աստիճաններով ու մտավ բնակարանը։

Այստեղ նույնպես վերանորոգում էր կատարվում. աշխատողներ կային. դա կարծես զարմացրեց նրան։ Չգիտես ինչու նրան թվացել էր, որ ամեն ինչ կդտնի ճիշտ այնպես, ինչպես որ թողել էր այն ժամանակ, գուցե նույնիսկ դիակներն էլ նույն տեղերում, հատակի վրա լինեին։ Իսկ հիմա՝ մերկ պատեր, ոչ մի կահույք. մի տեսակ տարօրինակ էր։ Նա անցավ դեպի պատուհանը ու նստեց գոգին։

Ընդամենը կար երկու աշխատող, երկուսն էլ շահել աղա-

ներ, մեկը հասակով ավելի մեծ, մյուսը նրանից շատ փոքր։ Առաջվա դեղին, քրքրված ու մաշված պաստառների փոխարեն նրանք նոր, սպիտակ ու բաց-կապույտ ծաղիկներով նախշած պաստառներ էին փակցնում։ Չգիտես ինչու այդ բոլորովին դուր չեկավ Ռասկոլնիկովին. նա թշնամանքով էր նայում այդ նոր պաստառներին, կարծես ուիսոսում էր, որ ամեն ինչ այդպես փոխել էին։

Աշխատողները բուռ երևույթին առն դնալուց ուշացել էին և հիմա արագ-արագ կոլոլում էին պաստառները ու պատրաստվում էին առն դնալ։ Ռասկոլնիկովի հայտնվելը համարյա չգրավեց նրանց ուշադրությունը։ Նրանք խոսում էին ինչ-որ բանի մասին։ Ռասկոլնիկովը ձեռքերը խաչաձև ծալեց կրծքի վրա ու սկսեց ականջ դնել։

— Նա, այն աղջիկը, առավոտը վաղ, շատ վաղ, զուգված-դարդարված, գալիս է ինձ մոտ,— ասում էր ավագը կրտսերին։ — «Էլ ի՞նչ ես իմ առջև կոտրատվում, էլ ի՞նչ ես ջարդ ու կտոր լինում»,— ասում եմ նրան։— «Ուզում եմ սրանից հետո միշտ էլ բոլորովին կախված լինել քո կամքից, Տիտ Վասիլիչ»,— ասում է նա։ Հը՛մ, այ թե ինչ։ Ու այնպե՞ս է զուգված-դարդարված. ժուռնալ է, հենց ժուռնալ է որ կա։

— Ժուռնալը ի՞նչ է, տպիր,— հարցրեց ջահելը։ Ակներևաբար նա շատ բան էր սովորում «աղբրից»։

— Ժուռնալը, աղբրոս ասեմ, դա դրքի պես բան է, մեջը լավ, լավ պատկերներ են լինում, այստեղի գերձակները ամեն շաբաթ օր փոստով ստանում են արտասահմանից, դրա մեջ նկարված է լինում, թե ով ինչ տեսակ շոր է հագնում, այսինքն՝ թե տղամարդկանց և թե կանանց սեռը։ Ուրեմն նկարներ են, էլի՛։ Տղամարդկանց սեռը ավելի շատ վրայի շորերով է նկարվում, իսկ կանանց բաժանմունքում, աղբրոս ասեմ, այնպիսի բաներ են լինում, որ եթե այդ բոլորն էլ ինձ տաս, էլի քիչ կլինի։

— Էհ, ի՞նչ ասես, որ էս Պիտերում չկա,— գոչեց կրտսերը,— հորից ու մորից բացի ամեն բան կա։

— Դրանից բացի, աղբրոս ասեմ, ամեն բան էլ կա,— խրատականորեն եզրափակեց ավագը։

Ռասկոլնիկովը վեր կացավ ու գնաց մյուս սենյակը, ուր առաջ գտնվում էին սնդուկը, անկողինը և կոմոդը. սենյակը

առանց կահույքի նրան խիստ փոքր թվաց։ Պատուհանները նույնն էին. մի անկյունում, պատուհանի վրա պարզ նշմարվում էր այն տեղը, ուր առաջ գտնվում էր սրբապատկերների տապանակը։ Ռասկոլնիկովը նայեց ու վերադարձավ դեպի պատուհանը։ Ավագ աշխատողը աչքի տակով նայում էր նրանց։

— Դուք ի՞նչ կուզեք,— հարցրեց նա հանկարծ, դիմելով Ռասկոլնիկովին։

Պատասխանելու փոխարեն Ռասկոլնիկովը վեր կացավ, անցավ նախասենյակ, քաշեց զանգակի լարը։ Նույն զանգակն էր, նույն թիթեղային հնչյունը։ Նա զանգահարեց երկրորդ, երրորդ անգամ. նա ականջ էր դնում ու վերհիշում անցածը։ Նա ավելի ու ավելի պարզ և որոշակիորեն էր վերհիշում առաջվա իր տանջալից, սարսափելի զգացումը, նա ցնցվում էր զանգակի յուրաքանչյուր հնչյունից և դա հնարհնար ավելի դուրեկան էր դառնում նրա համար։

— Ախր ի՞նչ ես ուզում, է՛, ո՞վ ես,— բղավեց աշխատողը՝ դուրս գալով նախասենյակ։ Ռասկոլնիկովը դարձյալ ներս մտավ դռնից։

— Ուզում եմ բնակարան վարձել, նայում եմ,— ասաց նա։

— Տունը գիշերով չեն վարձում, և հետո, դուք պետք է դռնապանին բերեք ձեզ հետ։

— Հատակը լվացել են, ներկելո՞ւ են, արյուն չկա՞,— ասաց Ռասկոլնիկովը։

— Ի՞նչ արյուն։

— Հո սպանել էին պառավին ու նրա քրոջը։ Այստեղ արյան մի ամբողջ լճակ կար։

— Ախր ի՞նչ մարդ ես, է՛,— անհանգստացած գոչեց աշխատողը։

— Ե՞ս։

— Այո։

— Ուզում ես իմանա՞լ, հա՞... գնանք ոստիկանատուն, այնտեղ կասեմ։

Աշխատողը տարակուսանքով նայեց նրան։

— Գնալու ժամանակն է, ուշացանք։ Գնանք, Ալյոշկա։ Դուռը պետք է փակել,— ասաց ավագ աշխատողը։

— Հա՛, գնանք,— անտարբեր պատասխանեց Ռասկոլնի-

կովը, առաջ անցավ, դանդաղ իջավ սանդուղքից։ — Էյ, դրոշնապան,— բղավեց նա՝ մոտենալով դարպասին։

Տան արտաքին մուտքում կանգնել էին և անցորդներին էին նայում մի քանի մարդիկ՝ երկու դռնապանները, մի կին, խալաթ հագած մի քաղքենի ու էլի մի-երկու մարդ։ Ռասկոլնիկովը ուղղակի մոտեցավ նրանց։

— Ի՞նչ կուզեիք,— հարցրեց դռնապաններից մեկը։

— Ոստիկանատուն գնացե՞լ ես։

— Քիչ առաջ եղել եմ։ Դուք ի՞նչ կուզեք։

— Այնտեղ նստա՞ծ են։

— Նստած են։

— Օգնականն է՞լ է այնտեղ։

— Էնտեղ էր։ Ի՞նչ կա որ։

Ռասկոլնիկովը չպատասխանեց ու մտազբաղ կանգնեց նրա կողքին։

— Եկել էր բնակարանը նայելու,— մոտեցավ ու ասաց ավագ աշխատողը։

— Ո՞ր բնակարանը։

— Որտեղ որ աշխատում ենք։ «Ինչո՞ւ,— ասում է,— լվացել են արյունը։ Այստեղ,— ասում է,— սպանություն է եղել, իսկ ես եկել եմ վարձելու։ Սկսեց քաշքշել զանգակը, քիչ մընաց կտրեր։ Գնանք ոստիկանատուն,— ասում է,— այնտեղ ամեն բան կասեմ։ Կպչում էր, էլի՛։

Դռնապանը տարակուսանքով ու մռայլված նայում էր Ռասկոլնիկովին։

— Դուք ո՞վ եք,— բարկացկոտ հարցրեց նա։

— Ես Ռոդիոն Ռոմանիչ Ռասկոլնիկովն եմ, նախկին ուսանող, ապրում եմ Շիլի տանը, այստեղից քիչ հեռու փողոցում, № 14 բնակարանում։ Հարցրու դռնապանին... ինձ ճանաչում է։ — Ռասկոլնիկովը այս ամենն ասում էր մի տեսակ ծուլորեն ու մտազբաղ, առանց շուռ գալու, ակնապիշ նայելով դեպի մթնած փողոցը։

— Ինչո՞ւ էիք եկել այդ բնակարանը։

— Նայելու։

— Ի՞նչը նայելու։

— Կուզեիր մարդկանց ոստիկանատո՞ւն տանել,— հանկարծ միջամտեց քաղքենին ու լռեց։

Ռասկոլնիկովը ուսի վրայով աչքերը շլեց նրա վրա, ուշադրությամբ նայեց և նույնպես ծուլորեն ու կամացուկ ասաց։

— Գնանք։

— Ջասացի՞, որ ուզում է այնտեղ տանել,— վրա բերեց աշխուժացած քաղքենին։ — Ինչո՞ւ է խոսել այն դեպքի մասին, մտքում ի՞նչ կա, հը՞։

— Կարծես թե հարբած չէ, պա՞տ ով գիտի ով է,— փընթ-փընթաց աշխատողը։

— Ախր ձեզ ի՞նչ է պետք, է՞, ինչ ես կպել,— դարձյալ բղավեց դռնապանը, որ սկսում էր լրջորեն բարկանալ։

— Հը՛, վախեցա՞ր ոստիկանատուն գնալուց,— հեգնանքով նրան ասաց Ռասկոլնիկովը։

— Ի՞նչ վախենալ, ինչո՞ւ ես կպել։

— Թոկից փախածի մեկն է,— ասաց կինը։

— Էլ ի՞նչ եք դրա հետ խոսում,— գոչեց մյուս դռնապանը, հաղթահասակ մի մուժիկ՝ չկոճկած կապայով, գոտու տակ բանալիներ դրած։ — Կորի գնա... Ճիշտ որ թոկից փախածի մեկն է... Կորի գնա՛։

Ու բռնելով Ռասկոլնիկովի ուսից, նրան շրջեցրեց փողոց։ Վերջինս քիչ մնաց գլխկոնձի տար, բայց չընկավ, շտկվեց, լուռ նայեց բոլոր դիտողներին ու հեռացավ։

— Ա՛յ քեզ տարօրինակ մարդ,— ասաց աշխատողը։

— Հիմա մարդիկ տարօրինակ են դարձել,— վրա բերեց կինը։

— Կարելի էր ոստիկանատուն տանել,— ավելացրեց քաղքենին։

— Կարիք չկար նրա հետ գլուխ դնել,— ասաց հաղթանդամ դռնապանը։ — Հենց թոկից փախած է որ կա։ Ինքն է այդ ուզում, հայտնի բան է, թե որ կպար, էլ պոկ չես գա... Գիտենք, էլի։

«Գնա՞մ ոստիկանատուն, թե՞ չգնամ»,— մտածում էր Ռասկոլնիկովը փողոցների խաչմերուկում կանգ առած ու նայելով շուրջը, կարծես սպասելով ինչ-որ մեկի վերջին խոսքին։ Բայց ոչ մի տեղից ոչ մի աբձագանք. ամեն ինչ խուլ էր և լուռ ինչպես այն քարերը, որոնց վրայով քայլում էր ինքը. ամեն ինչ մեռած էր նրա համար, միայն նրա համար... Հանկարծ հեռվում, իրենից մոտ երկու հարյուր քայլ հեռավորությամբ, փո-

դոցի ծայրում, թանձրացած խավարում նա նշմարեց ինչ-որ ամբոխ, լսեց խոսակցություն, բղավոցներ... Ամբոխի մեջ մի կառք էր կանգնած... Փողոցի մեջտեղից լույս երևաց։ «Այդ ի՞նչ է»։ Ռասկոլնիկովը դարձավ ոչ և թայլնց դեպի ամբոխը։ Նա ասես կառչում էր ամեն ինչից, ու մտածելով այդ մասին, սառն քմծիծաղ տվեց, որովհետև հավանորեն որոշել էր ոստիկանատուն գնալ և հստակ դիտեր, որ այժմ ամեն ինչ կվերջանա։

VII

Փողոցի մեջտեղում կանգնած էր պճնագեղ, ազնվականական մի կառք, որին երկու տաքարյուն, մոխրագույն ձի էր լծված. ուղևորներ չկային, ու ինքը կառապանը իջել էր իր նստելատեղից և կանգնել կառքի մոտ։ Երկու մարդ բռնել էին ձիերի սանձերից։ Շուրջը բազմաթիվ մարդիկ էին խռնվում, բոլորի առջև ոստիկաններ էին կանգնած։ Նրանցից մեկի ձեռքին կար վառած լապտեր, նա կռանալով լուսավորում էր սալարկի վրա, հենց անիվների կողքին ընկած ինչ-որ մի բան։ Բոլորը խոսում էին, բղավում, ախ ու վախ անում. կառապանը ապշած էր թվում ու երբեմն կրկնում էր.

— Ինչպիսի՞ փորձանք, տեր աստված, ինչպիսի՞ փորձանք։

Ռասկոլնիկովը անցավ ամբոխի միջից, որքան այդ հնարավոր էր, ու, վերջապես, տեսավ այդ ամբողջ իրարանցման պատճառը հանդիսացող ու հետաքրքրության առարկան։ Գետնին ընկած էր հենց նոր՝ ձիերի տակ ճզմված, անշարժ մի մարդ, ըստ երևույթին խիստ վատ հագնված, սակայն «ազնվականական» հագուստով, ամբողջովին արյունոտված։ Դեմքից, գլխից արյուն էր հոսում. դեմքը ամբողջովին ջարդոտված էր, քերթված, ջնջված։ Երևում էր, որ ճզմումը խիստ լուրջ բնույթ էր կրում։

— Վայ ինձ,— հեծկլտում էր կառապանը,— ախր ի՞նչ անեի. թե որ արագ քշեի կամ սրա վրեն չբղալեի, ուրիշ բան է, բայց հո կամացուկ, առանց վռազելու էի գնում։ Բոլորն էլ տեսան. թե որ մարդիկ սուտ են ասում, ես էլ սուտ եմ ասում։ Հարբածի աչքը քոռ է լինում, հայտնի բան է... Մեկ էլ տես-

նեմ, անցնում է փողոցը, օրորվում է, քիչ է մնում ընկնի։ Բղավեցի մի անգամ, հետո երկրորդ, երրորդ անգամ, քաշեցի ձիերիս սանձը. իսկ սա ուղղակի ընկավ դրանց ոտքերի տակ։ Չգիտեմ դիտմամբ արեց, թե շատ էր հարբած... Ձիերս մատ-ղաշ են, վախեցող, չափ տվին, սա ճչաց, նրանք ավելի խրտ-նեցին... և ահա փորձանքը։

— Հենց այդպես է որ կա,— ամբոխի միջից վկայեց ինչ-որ մեկը։

— Նա բղավեց, այդ ճիշտ է, երեք անգամ բղավեց,— ասաց մի ուրիշ մարդ։

— Ուղիղ երեք անգամ, բոլորն էլ լսեցին,— գոչեց երրորդը։

Կառապանը, սակայն, այնքան էլ տխուր և վախեցած չէր։ Երևում էր, որ կառքը պատկանում է հարուստ և նշանավոր մարդու, որը ինչ-որ տեղ դրան է սպասում։ Նկատի ունենալով այս վերջին հանգամանքը, ոստիկանները, իհարկե, քիչ չէին անհանգստանում, որպեսզի մի կերպ կարգավորեին գործը։ Հարկավոր էր ցնցխվածին տանել քաղաքամաս և հիվանդանոց։ Ոչ ոք չգիտեր նրա անունը։

Այնինչ Ռասկոլնիկովը առաջ անցավ ու էլ ավելի մոտիկից նայեց։ Հանկարծ լապտերիկը պարզ լուսավորեց դժբախտի դեմքը. Ռասկոլնիկովը ճանաչեց նրան։

— Ես սրան ճանաչում եմ, ճանաչում եմ,— գոչեց նա բոլորովին առաջ անցնելով,— սա պաշտոնաթող աստիճանավոր է, տիտուլյար խորհրդական Մարմելադովը։ Ապրում է այստեղ, մոտիկ, Կոզելի տանը... Բժիշկ կանչեցեք, շուտ, ես կվճարեմ։ — Նա դրպանից փող հանեց և ցույց տվեց ոստիկաններից մեկին։ Նա խիստ հուզված էր։

Ոստիկանները գոհ էին, որ իմացան, թե ով է վնասվածը։ Ռասկոլնիկովը ասաց նաև իր անունը, տվեց իր հասցեն և ամեն կերպ նրանց համոզում էր, որ անզգայացած Մարմելադովին շուտ տանեն նրա բնակարանը, կարծես խնդիրը վերաբերում էր իր հարազատ հորը։

— Այստեղ մոտիկ է, երեք տուն պետք է անցնել,— համոզում էր նա,— Կոզելի, հարուստ գերմանացու տունն է... երևում է, որ սա հարբած տուն էր գնում։ Ես սրան ճանաչում եմ... հարբեցող է... Այնտեղ իր ընտանիքն է, կինը, երեխա-

ները, մի աղջիկ ունի։ Ավելի լավ է տանել ոչ թե հիվանդանոց, այլ իր բնակարանը, հենց այդ տանը բժիշկ էլ կա։ Ես կվճարեմ, կվճարեմ... չէ՞ որ յուրայինները կխնամեն, հենց այժմ կօգնեն, թե չէ մինչև հիվանդանոց հասցնես, կմեռնի...

Ռասկոլնիկովը նույնիսկ կարողացավ աննկատելիորեն փող դնել մի ոստիկանի ձեռքի մեջ. առաջարկը, սակայն, օրինավոր էր և ընդունելի, համենայն դեպս այդ կերպ կարելի էր արագացնել օգնությունը։ Տուժածին վերցրին ու տարան. օգնականներ գտնվեցին։ Մինչև Կոզելի տունը մի երեսուն քայլ կլիներ, Ռասկոլնիկովը գնում էր ետևից, զգուշությամբ բռնել էր վնասվածի գլուխը և ցույց տալիս ճանապարհը։

— Անցեք այստեղ, այստեղ։ Սանդուղքով բարձրացնելիս գլուխը պետք է վերևից լինի. շուռ տվեք... այ, այդպես։ Ես կվճարեմ, ես շնորհակալ կլինեմ,— քրթմնջում էր նա։

Կատերինա Իվանովնան ինչպես միշտ, հենց որ ազատ րոպե էր ունենում, սկսում էր ետ ու առաջ քայլել իր փոքրիկ սենյակում, պատուհանից մինչև վառարանը, ձեռքերը կըրծքին պինդ, խաչաձև դրած, ինքն իր հետ խոսելով ու հազալով։ Վերջին ժամանակներում նա սկսել էր ավելի հաճախ և երկար խոսել իր ավագ աղջկա, տասնամյա Պոլենկայի հետ, որը թեև դեռ շատ բան չէր հասկանում, բայց շատ լավ էր գլխի ընկել, որ ինքը հարկավոր է մորը, դրա համար էլ միշտ նրան հետամտում էր իր մեծ, խելացի աչքերով և ամեն կերպ աշխատում էր ամեն ինչ հասկացող երևալ։ Այս անգամ Պոլենկան հանում էր ամբողջ օրը հիվանդ փոքրիկ եղբոր շորերը, որ նրան քնացներ։ Սպասելով որ փոխեն իր շապիկը, որը հենց դիշերը պետք է լվացվեր, տղան աթոռին նստել էր լուռ, դեմքի լուրջ արտահայտությամբ, ուղիղ և անշարժ, իրար պինդ սեղմած, դեպի առաջ մեկնած տոտիկներով, կրունկները միացրած, իսկ թաթերը իրարից բաժան։ Նա լսում էր, թե մայրիկը ինչ էր ասում քույրիկին, շրթունքները իրար էր սեղմել, աչիկները չռել և չէր շարժվում, ճիշտ այնպես, ինչպես որ պետք է նստեն բոլոր խելոք տղաները, երբ նրանց շորերը հանում են ու նրանց քուն դնում։ Նրանից էլ փոքր մի աղջիկ, բոլորովին ցնցոտիապատ, կանգնել էր շիրմայի մոտ և իր հերթին էր սպասում։ Սենյակի դուռը բացված էր, որպեսզի

գեթ որևէ չափով պաշտպանվեին մյուս սենյակներից եկող ծխախոտի ծխի քուլաներից, որոնք ամեն րոպե երկար ու տանջալից հաղացնում էին խեղճ, թոքախտավոր կնոջը։ Կատերինա Իվանովնան այդ շաբաթվա ընթացքում կարծես թե է՛լ ավելի էր նիհարել, և առաջվանից ավելի վառ գույն էին առել այտերի կարմիր բծերը։

— Դու չես հավատա, դու երևակայել անգամ չես կարող, Պոլենկա, թե մենք որքան ուրախ ու փարթամ էինք ապրում հայրիկիս տանը, և թե ինչպես հարբեցողը կործանեց ինձ և կկործանի ձեզ բոլորիդ,— ասում էր նա՝ քայլելով սենյակում։ — Հայրիկս քաղաքացիական գնդապետ էր և արդեն համարյա նահանգապետ. քիչ էր մնացել, որ նա նահանգապետ դառնար, այնպես որ, բոլորը դալիս էին նրա մոտ և ասում էին. «Մենք ձեզ, Իվան Միխայլիչ, արդեն այնպես էլ մեր նահանգապետն ենք համարում»։ Երբ ես... քիա՛-քխա՛... երբ ես... քխա՛-քխա՛-քխա՛... օ, անիծված կյանք,— ճչաց նա խորխելով ու կրծքից բռնած,— երբ ես... ախ, երբ վերջին պարահանդեսում... ազնվականների պարագլխի տանը... ինձ տեսավ իշխանուհի Բեզզեմելնայան (որը հետո ինձ օրհնեց, երբ ես ամուսնանում էի քո հայրիկի հետ, Պոլյա.), ապա իսկույն հարցրեց. «Արդյոք սա այն հաճելի աղջիկը չէ՞, որ շալով պարում էր, շրջանավարտներից էր... (Պատվածքը պետք է կարել. վերցնեիր ասեղը ու հիմա կարեիր, ինչպես որ ես քեզ սովորեցրել եմ, թե չէ վաղը... քխա՛... վաղը... քխա՛-քխա՛-քխա՛... ավելի շատ կպատռվի, — ուժ անելով գոչեց Կատերինա Իվանովնան)... Այն ժամանակ Պետերբուրգից հենց նոր էր եկել կամեր-յունկեր իշխան Շչեդրոյլսկոյը... ինձ հետ մազուրկա պարեց ու ասաց, որ մյուս օրը կգա առաջարկություն անելու. բայց ես քաղաքավարի արտահայտություններով շնորհակալություն հայտնեցի և ասացի, որ իմ սիրտը վաղուց ուրիշին է պատկանում։ Այդ ուրիշը քո հայրն էր, Պոլյա. հայրիկս սարսափելի բարկանում էր... Հա՛, ջուրը պատրաստ է. բեր շապիկը. իսկ գուլպանե՞րը...— Լիդա,— դիմեց նա փոքրիկ աղջկան, — դու այս գիշեր մի կերպ առանց շապիկի քնիր... գուլպաներդ դիր սրանց կողքին... մեկտեղ կլվանամ... Ինչո՞ւ այդ քրջոտը, հարբեցողը չի գալիս, շապիկը մաշել, բոլորովին

պատատուել է, փալաս դարձրել... Բոլորը մեկտեղ կլվանայի, որ իրար հետևից երկու գիշեր չտանջվեի։ Տեր աստված ... քխա՛-քխա՛-քխա՛-քխա՛... օֆ, դարձյալ... Այդ ի՞նչ է,— ճչաց Կատերինա Իվանովնան՝ նայելով նախասենյակում խոնվող ամբոխին և այն մարդկանց, որոնք ինչ-որ բեռով մտնում էին իր սենյակը։ — Այդ ի՞նչ է, այդ ի՞նչ են բերում, տեր աստված։

— Ո՞ւրտեղ պառկեցնենք,— շուրջը նայելով հարցրեց ոստիկանը, երբ ներս բերին արյունոտված և անզգայացած Մարմելադովին։

— Բազմոցի վրա, պառկեցրեք ուղղակի բազմոցի վրա, գլուխը այս կողմը,— ցույց էր տալիս Ռասկոլնիկովը։

— Փողոցում կառքի տակ էր ընկել, հարբած էր,— նախասենյակից ասաց մեկը։

Կատերինա Իվանովնան կանգնել էր բոլորովին գունատված և գժվարությամբ էր շնչում։ Երեխաները սարսափեցին։ Փոքրիկ Լիդոչկան ճչաց, նետվեց դեպի Պոլենկան, գրկեց նրան ու սկսեց ցնցվել լացից։

Պառկեցնելով Մարմելադովին, Ռասկոլնիկովը մոտեցավ Կատերինա Իվանովնային.

— Ի սեր աստծո, հանգստացեք, մի վախենաք,— հանգիստ ասաց նա,— փողոցն անցնելիս կառքի տակ է ընկել, մի անհանգստանաք, ուշքի կգա, ես եմ ասել, որ այստեղ բերեն... Ես ձեզ մոտ եղել եմ, հիշո՞ւմ եք... Նա ուշքի կգա, ես կվճարեմ։

— Ա՞յդ էիր ուղում,— հուսաբեկ ճչաց Կատերինա Իվանովնան ու նետվեց դեպի ամուսինը։

Ռասկոլնիկովը շուտով նկատեց, որ նա այն կանանցից չէ, որոնք նման դեպքերում իսկույն ուշաթափվում են։ Դրժբախտի գլխի տակ անմիջապես բարձ դրվեց, որի մասին դեռ ոչ ոք չէր մտածել. Կատերինա Իվանովնան սկսեց հանել նրա հագուստը, զննել նրան, այս ու այն կողմ ընկնել առանց իրեն կորցնելու։ Ինքնամոռացության մեջ նա կծում էր իր դողդոջ շրթունքները, խեղդում ճիչերը, որոնք պատրաստ էին դուրս թռչել իր կրծքից։

Ռասկոլնիկովը ներկաներից մեկին համոզեց գնալ բժշկին

կանչելու։ Ինչպես պարզվեց, բժիշկը մոտակա տանն էր ապրում։

— Ես մարդ ուղարկեցի բժշկին կանչելու,— ասաց նա Կատերինա Իվանովնային,— մի անհանգստանաք, ես կվճարեմ։ Ջուր կա՞... բերեք անձեռոցիկ, երեսսրբիչ, որևէ բան, շո՛ւտ. դեռ հայտնի էլ չէ, թե նա ինչպես է վիրավորված... Նա վիրավորված է և ոչ թե սպանված, հավատացած եղեք... Տեսնենք ինչ կասի բժիշկը։

Կատերինա Իվանովնան վազեց պատուհանի կողմը. այնտեղ, անկյունում, խարխուլ աթոռի վրա ջրով լեցուն լագան էր դրված. ջուրը պատրաստված էր գիշերը երեխաների և ամուսնու սպիտակեղենը լվալու համար։ Կատերինա Իվանովնան լվացքը անում էր գիշերով, իր սեփական ձեռքերով, առնվազն շաբաթը երկու անգամ, երբեմն էլ ավելի հաճախ, որովհետև բանը այնտեղ էր հասել, որ փոխնորդ սպիտակեղեն համարյա արդեն բոլորովին չկար, ընտանիքի յուրաքանչյուր անդամը միայն մի ձեռք սպիտակեղեն ուներ, իսկ Կատերինա Իվանովնան չէր կարող հանդուրժել անմաքրություն, չէր կարող տանը կեղտոտություն տեսնել, այլ ավելի լավ էր համարում ուժից վեր աշխատանք կատարել, տանջվել գիշերները, բոլորի քնած ժամանակ, որպեսզի կարողանար մինչև առավոտ թաց սպիտակեղենը չորացնել սենյակով մեկ կապած պարանի վրա և հագցնել բոլորին։ Նա վերցրեց լագանը, որպեսզի տար Ռասկոլնիկովին, բայց քիչ մնաց իր բեռով վայր ընկներ։ Իսկ Ռասկոլնիկովը արդեն երեսսրբիչ գտավ, թրջեց ջրով ու սկսեց սրբել Մարմելադովի արյունաշաղախ դեմքը։ Կատերինա Իվանովնան կանգնել էր ցավագին շունչ առնելով ու ձեռքերով կուրծքը բռնած։ Նրան էլ օգնություն էր հարկավոր։ Ռասկոլնիկովը սկսեց հասկանալ, որ ինքը թերևս վատ էր վարվել, որ մարդկանց համոզել էր տուժածին այստեղ բերել։ Քաղաքապահը նույնպես տարակուսանքի մեջ էր։

— Պոլյա,— գոչեց Կատերինա Իվանովնան,— թոիր Սոնյայի մոտ, շուտ։ Եթե տանը չլինի, մյուսներին ասա, որ հայրիկը կառքի տակ է ընկել և թող նա վերադառնալուն պես իսկույն գա այստեղ... Դե շուտ, Պոլյա։ Առ գլխաշորը, գցիր վրադ։

— Ինչքան սունչ կա վազիր,— աթոռի վրայից հանկարծ բղավեց տղան, և այդ ասելով, դարձյալ շարունակեց լուռ, անշարժ նստած մնալ՝ աչքերը չռելով, կրունկները միացրած և թաթերը իրարից բաժան։

Մինչ այս, մինչ այն, սենյակը այնքան լցվեց մարդկանցով, որ խնձոր գցելիր, հատակին չէր ընկնի։ Ոստիկանները գնացին, բացի մեկից, որը առայժմ մնում էր և աշխատում էր դուրս քշել սանդուղքից իջած և դարձյալ սանդուղքով բարձրացող մարդկանց։ Այնինչ ներքին սենյակներից վրա տվին տիկին Լիպպենխզելի համարյա բոլոր կենվորները, որոնք սկզբում միայն դռան մոտ էին խմբվում, բայց հետո բոլորը ներխուժեցին սենյակ։ Կատերինա Իվանովնան զայրացավ.

— Հանգիստ մեռնել էլ չեն թողնում,— բղավեց նա ամբողջ ամբոխի վրա,— ձեզ համար ներկայացո՞ւմ է սա, ինչ է։ Պապիրոսներն էլ բերանների՞ն. քխա՜-քխա՜-քխա՜։ Էլ ո՞վ կա, որ գլխարկով ներս մտնի... Հրե՜ն մեկն էլ գլխարկով է... Հեռացնք, գոնե դիակի հանդեպ հարգանք ունեցեք։

Հազը խեղդում էր նրան, բայց սաստումը օգնեց։ Ակներև էր, որ կենվորները նույնիսկ վախենում էին Կատերինա Իվանովնայից. Նրանք մեկը մյուսի ետևից դեպի գուռը դարձան գոհության այն տարօրինակ ներքին զգացումով, որ միշտ նկատվում է նույնիսկ ամենամոտիկ մարդկանց մեջ, երբ հանկարծակի դժբախտություն է պատահում նրանց մերձավորին։ Այդ զգացումից զերծ չէ ոչ մի մարդ, առանց բացառության, չնայած ցավակցության և կարեկցության նույնիսկ ամենաանկեղծ զգացումին։

Դռան ետևից լսվեցին ձայներ հիվանդանոցի և այն մասին, որ այստեղ չպետք է իզուր տեղը անհանգստություն պատճառել։

— Չպետք է մեռնի,— բղավեց Կատերինա Իվանովնան ու նետվեց դուռը բանալու, որպեսզի նրանց վրա բարկության մի ամբողջ տարափ թափեր, բայց դռան շեմքին հանդիպեց հենց տիկին Լիպպենխզելին, որը նոր էր լսել դժբախտության մասին և եկել էր կարգապահությանը հրամայելու։ Նա չափազանց կովարար ու անկարգ մի գերմանուհի էր։

— Ախ, աստված իմ,— ասաց նա ձեռքերն իրար զարկելով և ուսերին կոտրատելով,— ձեր ամուսինը հարբած է եղել, ձիու ոտքերի տակ ընկել։ Հիվանդանոց տարեք, ես տանտիրուհին եմ։

— Ամալյա Լյուդվիգովնա, խնդրում եմ ձեզ հիշեք, ինչ որ ասում եք,— մեծամտաբար պատասխանեց Կատերինա Իվանովնան (տանտիրուհու հետ նա միշտ մեծամտության տոնով էր խոսում, որպեսզի՝ վերջինս «գիտենար իր տեղը» և նույնիսկ հիմա էլ չէր կարողանում հրաժարվել այդ բավականությունից),— Ամալյա Լյուդվիգովնա...

— Քանի՞ անգամ եմ ես ձեզ ասել, որ դուք չհամարձակվեք ինձ Ամալյա Լյուդվիգովնա ասել. ես Ամալյա-Իվան եմ։

— Դուք ոչ թե Ամալյա-Իվան, այլ Ամալյա Լյուդվիգովնա եք, ու քանի որ ես ձեր ստոր շողոքորթներից չեմ, ինչպիսին պարոն Լեբեզյատնիկովն է, որը հիմա ծիծաղում է դռան ետևում (դռան ետևից իրոք որ լսվեց ծիծաղ և «էլի իրար կպան» բացականչությունը), ուստի ես միշտ էլ ձեզ անվանելու եմ Ամալյա Լյուդվիգովնա, թեև բոլորովին չեմ կարողանում հասկանալ, թե ինչու այդ անունը ձեզ դուր չի գալիս։ Դուք ինքներդ եք տեսնում, թե ինչ է պատահել Սեմյոն Զախարովիչին. նա մեռնում է։ Խնդրում եմ ձեզ իսկույն փակել այդ դուռը և այստեղ ոչ ոքի ներս չթողնել։ Թողեք, որ մարդը հանգիստ մեռնի։ Այլապես, հավատացնում եմ ձեզ, որ հենց վաղը ձեր վարմունքը հայտնի կլինի գեներալ-նահանգապետին։ Իշխանը ճանաչում էր ինձ, երբ ես դեռ փոքրիկ աղջիկ էի, ու շատ լավ է հիշում Սեմյոն Զախարովիչին, որին շատ անգամ բարերարություն է արել։ Բոլորին հայտնի է, որ Սեմյոն Զախարովիչը շատ բարեկամներ և հովանավորներ ուներ, որոնց նա ինքը թողեց ազնիվ հպարտությունից դրդված, զգալով իր չարաբաստիկ թերությունը, բայց հիմա (նա մատնացույց արեց Ռասկոլնիկովին) մեզ օգնում է մի մեծահոգի երիտասարդ, որը միջոցներ և կապեր ունի և որին Սեմյոն Զախարովիչը դեռ մանկությունից էր ճանաչում, և հավատացած եղեք, Ամալյա Լյուդվիգովնա...

Այս ամենը ասվեց արտաքո կարգի շուտասելուկով, հետզհետե ավելի արագ, բայց հազը մի անգամից ընդհատեց

Կատերինա Իվանովնայի պերճախոսությունը։ Այդ բոպիին մանողը ուշքի եկավ ու տնքաց, Կատերինա Իվանովնան հարձեալ մոտեցավ նրան։ Վիրավորը բացեց աչքերը, ու դեռ ոչ ոքի չճանաչելով և ոչինչ չհասկանալով, սկսեց նայել իր մոտ կանգնած Ռասկոլնիկովին։ Նա ծանր, խոր և դանդաղ էր շնչում, շրթունքների ծայրերին արյուն երևաց, ճակատին քրտինք դուրս ավեց։ Չճանաչելով Ռասկոլնիկովին, նա սկսեց անհանգիստ նայել շուրջը։ Կատերինա Իվանովնան տխուր, բայց խստաբարո հայացքը չէր կտրում նրանից ու աչքերից արցունքներ էին հոսում։

— Ամոթած իմ, ամբողջ կուրծքը ճզմված է, որքա՜ն, որքա՜ն արյուն,— հուսաբեկ ասաց նա։ — Հարկավոր է հանել ամբողջ վերնահագուստը։ Մի քիչ շուռ եկ, Սեմյոն Զախարովիչ, եթե կարող ես,— ասաց նա վիրավորին։

Մարմելադովը ճանաչեց նրան։

— Քահանա կանչեք,— մրմնջաց նա խուլ ձայնով։

Կատերինա Իվանովնան մոտեցավ պատուհանին, ճակատը հենեց շրջանակին և սրտամորմոք գոչեց.

— Ա՜խ, անիծվա՜ծ կյանք։

— Քահանա, —բոպեական լռությունից հետո դարձյալ ասաց մեռնողը։

— Գնացել են կանչելու,— նրա վրա բղավեց Կատերինա Իվանովնան. վիրավորը լսեց բղավոցը ու լռեց։ Երկչոտ, թախծալի հայացքով նա փնտրում էր կնոջը. վերջինս դարձյալ մոտեցավ ու կանգնեց նրա կողքին։ Վիրավորը մի փոքր հանգստացավ, բայց այդ երկար չտևեց։ Շուտով նա նկատեց փոքրիկ Լիդոչկային (իր սիրելիին), որը ասես նոպայով բռնված, դողում էր անկյունում և իր զարմացած, մանկականորեն-սևեռուն աչքերով նայում էր նրան։

— Ը... ը...,— վիրավորը անհանգստությամբ, հայացքով ցույց էր տալիս նրան։ Ուզում էր ինչ-որ բան ասել։

— Ի՞նչ ես ուզում,— գոչեց Կատերինա Իվանովնան։

— Բոբիկ է, բոբիկ է,— քրթմնջում էր Մարմելադովը ու կիսախելագար աչքերով ցույց էր տալիս աղջկա բոբիկ ոտքերը։

— Լռի-ի՛ր,— ջղայնացած բղավեց Կատերինա Իվանովնան,— ինքդ գիտես, թե ինչու է բոբիկ։

— Փառք աստծո, բժիշկը եկավ,— բացականչեց ուրախացած Ռասկոլնիկովը։

Ներս մտավ բժիշկը, վայելչատես մի ծերունի, գերմանացի, ու անվստահ նայեց շուրջը. մոտեցավ վիրավորին, ստուգեց երակազարկը, ուշադրությամբ շոշափեց գլուխը, Կատերինա Իվանովնայի օգնությամբ արձակեց ամբողջովին արյունոտված շապկի ճոճակները և բացեց վիրավորի կուրծքը։ Ամբողջ կուրծքը ջնջված էր, ճմլված ու քերծված. աջ կողմի մի քանի կողոսկրները կոտրված էին։ Ձախ կողմում, հենց սրտի վրա կար մի չարագուշակ, մեծ, դեղնավուն-սև բիծ,— ձիու սմբակի դաժան հարվածի հետքը։ Բժիշկը կիսաց հոնքերը։ Ռասիկանը նրան պատմեց, որ ճմբվածը բնկել էր անիվի մեջ, որը նրան պտտելով, երեսուն քայլի չափ բարշ էր տվել փողոցով։

— Զարմանալի է, որ նա ուշքի է եկել,— կամացուկ շշնջաց բժիշկը Ռասկոլնիկովի ականջին։

— Ի՞նչ կասեք դուք,— հարցրեց Ռասկոլնիկովը։

— Հիմա կմեռնի։

— Մի՞թե ոչ մի հույս։

— Բոլորովին. վերջին բոսլեներն է ապրում... Այն էլ ասած, գլուխը խիստ վտանգավոր է վիրավորվել... Հը՛մ։ Թերևս կարելի է արյուն առնել... բայց... դա անօգուտ կլինի։ Հինգ կամ տասը բոպեից անպայման կմեռնի։

— Դե ուրեմն ավելի լավ է արյուն առնք։

— Թերևս... Սակայն ես ձեզ նախազգուշացնում եմ, որ դա բոլորովին անօգուտ կլինի։

Այդ ժամանակ էլի քայլեր լսվեցին, նախասենյակում ամբոխը ճանապարհ բացեց, ու շեմքում հայտնվեց քահանան՝ հաղորդության պարագաներով, ալեհեր մի ծերուկ։ Դեռ փողոցից նրան ուղեկցում էր մի ոստիկան։ Բժիշկը իսկույն իր տեղը զիջեց քահանային և նրա հետ նշանակալից հայացք փոխանակեց։ Ռասկոլնիկովը բժշկին խնդրեց գոնե մի քիչ սպասել։ Բժիշկը թոթվեց ուսերը ու սպասեց։

Բոլորը ետ քաշվեցին։ Խոստովանությունը շատ կարճ տևեց։ Մեռնողը հազիվ թե որևէ բան պարզ հասկանար. կարող էր միայն կցկտուր, անորոշ ձայներ հանել։ Կատերինա Իվանովնան վերցրեց Լիդոչկային, աթոռից էլ տղային, ու

անցնելով վառարանի կողմը, անկյունը, ծունկ չոքեց, երեխաներին էլ իր առջև ծունկ չոքեցրեց։ Աղջիկը հա՛ դողում էր. տղան մերկ ծնկներին կոթնած, համաչափ բարձրացնում էր թաթիկը, խաչակնքում լրիվ չափով ու կռանում, ճակատը դիպցնում հատակին, որ ըստ երևույթին նրան մի առանձին հաճույք էր պատճառում։ Կատերինա Իվանովնան կծում էր շրթունքները և զսպում արցունքները. նա էլ էր աղոթում, երբեմն շտկում երեխայի շապիկը, ու աղոթելով, առանց տեղից վեր կենալու կարողացավ կոմոդից վերցնել գլխաշորը ու գցել աղջկա բոլորովին մերկացած ուսերին։ Այդ պահին կենվորները նորից սկսեցին բանալ դեպի ներքին սենյակները տանող դուռը։ Նախասենյակում ավելի ու ավելի էին խռնվում դիտողները, բոլոր կենվորները, սրոնք, սակայն, սենյակի շեմքից ներս չէին անցնում։ Ամբողջ տեսարանը միայն մոմի մնացորդով էր լուսավորվում։

Այդ րոպեին նախասենյակից, ամբոխի միջից արագ անցավ Պոլինիան, որ գնացել էր քրոջը կանչելու։ Հապճեպ վազքից հաղիվ շունչ առնելով, նա ներս մտավ, հանեց գլխաշորը, աչքերով փնտրեց ու գտավ մորը, մոտեցավ նրան ու ասաց. «Գալիս է, փողոցում հանդիպեցի»։ Մայրը նրան ծունկ չոքեցրեց իր կողքին։ Ամբոխի միջից լուռ ու երկչոտ անցավ Սոնյան, ու տարօրինակ էր նրա հանկարծակի հայտնվելը այդ սենյակում, աղքատության, ցնցոտիների, մահվան ու հուսալքման վայրում։ Նա էլ ցնցոտիներով էր. նրա հագուստը գրոշանոց էր, բայց նախշված էր փողոցային ձևով, իր առանձնահատուկ աշխարհում ընդունված ճաշակով ու կանոններով, բացահայտ ու արատավոր նպատակով։ Սոնյան կանգ առավ նախասենյակում, հենց շեմքի մոտ, բայց շեմքից ներս չանցավ ու նայում էր շփոթված, ասես ոչինչ չգիտակցելով, մոռանալով որ ինքը չորրորդ ձեռքերից վերագնված, մետաքսե, այստեղ անվայելուչ, երկար ու ծիծաղելի պոչով, գույնզգույն շորով է, ամբողջ դուռը ծածկած անծայրածիր կրինոլինով, բաց գույնի կոշիկներով, գիշերը ավելորդ օմբրելկով[1], որ նա վերցրել էր իր հետ,

[1] Հովանոցով (ֆրանս. ombrelle):

ծղոտե կլոր, ծիծաղելի գլխարկով, որին վառ կարմիր, փայլփլուն փետուր էր կպցրած։ Տղայականորեն թեք դրած այդ գլխարկի տակից նայում էր նիհար, գունատ ու վախեցած դեմքը՝ բաց բերանով ու սարսափից անշարժացած աչքերով։ Սոնյան կարճահասակ էր, մոտ տասնութ տարեկան, նիհար, բայց բավական սիրունիկ ու շիկահեր էր, գեղեցիկ ու կապույտ աչքերով։ Նա ակնապիշ նայում էր անկողնին, քահանային. նա նույնպես շնչասպառ էր լինում արագ քայլելուց։ Վերջապես, ամբոխի մեջ սկսված փսփսոցը ու մի քանի բառեր հավանորեն հասան նրա ականջին։ Նա կիտեց հոնքերը, շեմքից մի քայլ ներս անցավ ու կանգնեց սենյակում, բայց դարձյալ հենց դռան մոտ։

Խոստովանությունը և հաղորդությունը վերջացան։ Կատերինա Իվանովնան նորից մոտեցավ ամուսնու անկողնին։ Քահանան ետ քաշվեց և նախքան գնալը փորձեց բարի երթի և սփոփանքի երկու խոսք ասել Կատերինա Իվանովնային։

— Հապա ի՞նչ անեմ սրանց,— կտրուկ և ջղայնոտ ընդհատեց նրան Կատերինա Իվանովնան՝ ցույց տալով փոքրիկներին։

— Աստված ողորմած է. հույս դրեք ամենաբարձրյալի օգնության վրա,— ասաց քահանան։

— Ա-ա՛խ, ողորմած է, բայց ոչ մեզ համար։

— Մեղք մի՛ գործեք, մի՛ գործեք, տիկին,— գլուխն օրորելով ասաց քահանան։

— Իսկ սա մեղք չի՞ գործել,— գոչեց Կատերինա Իվանովնան՝ ցույց տալով մեռնողին։

— Գուցե նրանք, ովքեր այս դժբախտության ակամա պատճառ են եղել, կհամաձայնեն ձեզ վարձատրել գոնե եկամուտների կորստի չափով...

— Դուք ինձ չեք հասկանում,— ձեռքը թափ տալով ու ջղայնացած գոչեց Կատերինա Իվանովնան,— ինչի՞ համար պիտի վարձատրեն։ Չէ՞ որ նա հարբած վիճակում կառքի տակ է ընկել։ Ի՞նչ եկամուտներ։ Նրանից ոչ թե եկամուտ, այլ միայն տանջանք կար։ Նա, հարբեցողը, ամեն ինչ խմելու էր տալիս։ Մեզնից գողանում, գինետուն էր տանում, սրանց և իմ կյանքը գինետանը մաշեց։ Փա՛ռք աստծու, որ մեռնում է։ Վնասը քիչ կլինի։

— Հոգեվարքի ժամին հարկավոր է ներել, իսկ այդ խոսքերով մեղք ենք գործում, տիկին, այդպիսի զգացումները մեծ մեղք են։

Կատերինա Իվանովնան վիրավորով զբաղված, նրան շուր էր տալիս, սրբում էր գլխի քրտինքն ու արյունը, շրջում բարձերը և խոսում քահանայի հետ, զբաղվելիս երբեմն շուռ էր գալիս նրա կողմը։ Իսկ այժմ նա գրեթե կատաղելով, հանկարծ հարձակվեց քահանայի վրա։

— Էհ,տեր-հայր, դրանք հենց միայն խոսքեր են։ Ներե՛լ։ Թե որ կառքի տակ չընկներ, այսօր կգար հարբած, միակ շապիկը մաշված ու ինքն էլ քրջոտ, կփովեր շնթռկելու, իսկ ես մինչև լուսաբաց ձեռքերս պիտի չհանեի ջրից, նրա ու երեխաների թերմաշ շորերը լվանալի, հետո էլ կախ տալի պատուհանի ետևը ու չորացնեի, լույսը բացվելուն պես նստեի կարկատելու, ահա թե ինչպիսի գիշեր էի անցկացնում... Ուրեմն էլ ինչո՞ւ խոսել ներման մասին. քիչ չեմ ներել։

Ուժգին, սարսափելի հաղը ընդհատեց Կատերինա Իվանովնայի խոսքերը։ Նա խորխեց թաշկինակի մեջ և դա ցույց տվեց քահանային՝ մյուս ձեռքը դնելով ցավող կրծքին։ Թաշկինակը ամբողջովին արյունոտվել էր...

Քահանան գլուխը կախեց և ոչինչ չասաց։

Մարմելադովը վերջին հոգեվարքի մեջ էր։ Նա աչքերը չէր կտրում նորից իր վրա կռացած Կատերինա Իվանովնայի դեմքից։ Շարունակ ուզում էր նրան ինչ-որ բան ասել. նա այդ փորձեց, դժվարությամբ շարժեց լեզուն և անորոշ բառեր կմկմաց։ Կատերինա Իվանովնան հասկացավ, որ նա ուզում է իրենից ներում խնդրել, ու իսկույն հրամայողաբար բղավեց նրա վրա։

— Լռիր, հարկավոր չէ... գիտեմ, թե ինչ ես ուզում ասել ...— Ու վիրավորը սսկվեց. հենց այդ րոպեին նրա թափառող հայացքը ընկավ դռան վրա, և նա տեսավ Սոնյային...

Մինչև այժմ նրան չէր նկատել. Սոնյան կանգնած էր անկյունում, ստվերի մեջ։

— Ո՞վ է դա, ո՞վ է դա,— հանկարծ խռպոտ, խեղդվող

ձայնով ասաց Մարմելադովը, խիստ անհանգստացած, աչքերով սարսափահար ցույց տալով դուռը, որի մոտ կանգնած էր Սոնյան, ու ճիգ անելով բարձրանալ տեղից։

— Պառկի՛ր, պառկի՛-ի՛ր,— գոչեց Կատերինա Իվանովնան։

Բայց Մարմելադովը գերբնական ճիգ թափելով, կարողացավ բարձրանալ և հենվել ձեռքին։ Մի քանի վայրկյան նա օտարոտի և անշարժ հայացքով նայում էր աղջկան, կարծես չճանաչելով նրան։ Մարմելադովը նրան դեռ ոչ մի անգամ չէր տեսել այդպիսի հագուստով։ Հանկարծ նա ճանաչեց աղջկան, ստորացրած, կործանված, զուգված և ամաչող իր աղջկան, որ հեզությամբ սպասում էր իր հերթին, որպեսզի հրաժեշտ տար մեռնող հորը։ Մարմելադովի դեմքին զարհուրելի տանջանք պատկերացավ։

— Սոնյա, աղջիկս, ներիր,— գոչեց նա և ուզեց ձեռքը մեկնել դեպի Սոնյան, բայց կորցնելով հենարանը, պոկ եկավ ու բազմոցից ընկավ հատակին, երեսի վրա. մարդիկ նետվեցին նրան բարձրացնելու, պառկեցրին, բայց նա արդեն մեռնում էր։ Սոնյան թույլ ճչաց, մոտ վազեց, գրկեց նրան և այդպես էլ քարացավ նրան գրկած։ Հայրը մեռավ նրա գրկում։

— Հասավ իր ուզածին,— գոչեց Կատերինա Իվանովնան՝ տեսնելով ամուսնու դիակը։ — Հիմա ես ի՞նչ անեմ, ինչո՞վ թաղեմ նրան։ Իսկ սրանց, սրանց վաղը ինչո՞վ, ինչո՞վ կերակրեմ։

Ռասկոլնիկովը մոտեցավ Կատերինա Իվանովնային։

— Կատերինա Իվանովնա,— ասաց նա,— անցյալ շաբաթ ձեր հանդուցյալ ամուսինը ինձ պատմեց իր ամբողջ կյանքը և բոլոր հանգամանքները... Հավատացած եղեք, որ նա խորին հարգանքով էր խոսում ձեր մասին։ Այդ երեկոյից, երբ ես իմացա, թե նա ինչպես էր նվիրված ձեզ բոլորիդ և ինչպես էր հարգում ու սիրում մանավանդ ձեզ, Կատերինա Իվանովնա, չնայած իր ողբալի, արատավոր սովորության, այդ երեկոյից մենք բարեկամներ դարձանք... Հիմա ինձ թույլ տվեք... օժանդակել... որպես պարտքի հատուցում իմ հանդուցյալ բարեկամին։ Ահա, վերցրեք, կարծեմ քսան ռուբլի է, ու եթե սա ձեզ օգնություն կլինի, ապա... ես... մի խոսքով, ես կգամ, ես անպայման կգամ... ես գուցե հենց վաղը գամ... բարով մնաք։

Եվ նա արագ դուրս եկավ սենյակից, ամբոխի միջով հապճեպ անցավ գետի սանդուղքը, բայց այդ պահին հանկարծ հանդիպեց Նիկոդիմ Ֆոմիչին, որը իմացել էր զժբախտության լուրը ու եկել էր անձամբ կարգադրություններ անելու։ Ոստիկանության գրասենյակում պատահած դեպքից հետո նրանք չէին տեսնվել, բայց Նիկոդիմ Ֆոմիչը վայրկենապես ճանաչեց Ռասկոլնիկովին։

— Օ, այդ դո՞ւք եք,— հարցրեց նա։

— Մեռավ,— պատասխանեց Ռասկոլնիկովը։ — Բժիշկ էլ եկավ, քահանա էլ, ամեն ինչ կարգին է։ Մի՛ անհանգստացրեք խեղճ կնոջը, նա առանց այն էլ թոքախտավոր է։ Քաջալերեցեք նրան, ինչով որ կարող եք... Դուք հո բարի մարդ եք, ես գիտեմ...— հեգնոտ ավելացրեց նա՝ ուղիղ նայելով Նիկոդիմ Ֆոմիչի աչքերին։

— Այդ ինչպես դուք, այնուամենայնիվ, արյունոտվեցիք, — ասաց Նիկոդիմ Ֆոմիչը՝ լամպերի լույսի տակ նկատելով արյան մի քանի թարմ բծեր Ռասկոլնիկովի բաճկոնակի վրա։

— Այո, արյունոտվել եմ... ամբողջովին արյունոտվել,— ինչ-որ մի առանձին տեսքով ասաց Ռասկոլնիկովը, հետո ժպտաց, գլխով արեց ու սանդուղքով ներքև գնաց։

Նա իջնում էր կամացուկ, առանց շտապելու, ամբողջ մարմնի դողով և առանց այդ գիտակցելու, վերահաս լիաբյուն ու հզոր կյանքի մի նոր, անսահման զգացումով համակված։ Այդ զգացումը կարող էր նմանվել մահվան պատժի դատապարտված մարդու զգացումին, այն մարդուն, որին հանկարծ անսպասելի ներումն են հայտարարում։ Սանդուղքի կեսին նրա ետևից հասավ տուն վերադարձող քահանան։ Ռասկոլնիկովը առանց որևէ բան ասելու ճանապարհ տվեց նրան, ու երկուսն էլ լռությամբ գլուխ տվին միմյանց։ Սանդուղքի վերջին աստիճաններից իջնելիս Ռասկոլնիկովը հանկարծ իր ետևից հապճեպ քայլեր լսեց։ Մեկը հասնում էր նրա ետևից։ Դա Պոլենկան էր, որը վազում էր նրա ետևից ու կանչում՝ «Լսեցեք, լսեցեք»։

Ռասկոլնիկովը ետ նայեց։ Պոլենկան վազեվազ իջավ վերջին սանդուղքից ու կանգ առավ ուղիղ նրա առջև, մի աստիճան նրանից վերև։ Բակից աղոտ լույս էր թափանցում։ Ռասկոլնիկովը նայեց աղջկա լղարիկ, բայց հաճելի դեմքին։ Ապ-

ջիկը ժպտում էր և ուրախ, մանկական հայացքով նայում նրանն։ Նա եկել էր հանձնարարությամբ, որը ըստ երևույթին հենց իրեն շատ էր դուր գալիս։

— Լսեք, ի՞նչպես է ձեր անունը... և հետո՝ դուք ո՞րտեղ եք ապրում,— հարցրեց նա հապճեպորեն, խեղդվող ձայնով։

Ռասկոլնիկովը ձեռքերը դրեց նրա ուսերին և ինչ-որ ցնծությամբ նայեց նրան։ Ինքն էլ չգիտեր, թե ինչու էր այդպես հաճույքով նայում։

— Ո՞վ ուղարկեց ձեզ։

— Ինձ ուղարկեց Սոնյա քույրիկս,— պատասխանեց աղջիկը և է՛լ ավելի ուրախ ժպտաց։

— Ես այդպես էլ գիտեի, որ ձեզ Սոնյա քույրիկն է ուղարկել։

— Ինձ մայրիկս էլ է ուղարկել։ Երբ Սոնյա քույրիկը ուղարկելու էր, մայրիկս մոտեցավ ու ասաց. «Շուտ վազիր, Պոլենկա»։

— Դուք սիրո՞ւմ եք Սոնյա քույրիկին։

— Ես նրան բոլորից ավելի եմ սիրում,— ինչ-որ մի առանձին հատատակամությամբ ասաց Պոլենկան ու հանկարծ ավելի լրջորեն ժպտաց։

— Իսկ ինձ սիրելո՞ւ եք։

Պատասխանի փոխարեն աղջիկը նրան մոտեցրեց իր փոքրիկ դեմքը և փափուկ շուրթերը, որոնք պարզամտորեն մեկնվեցին նրան համբուրելու։ Հանկարծ լուսկու պես բաբալիկ ձեռքերը պինդ գրկեցին Ռասկոլնիկովին, փոքրիկ գլուխը թեքվեց վերջինիս ուսին, ու աղջիկը կամացուկ լացեց՝ դեմքն ավելի պինդ սեղմելով նրան։

— Հայրիկիս եմ ափսոսում,— մի ոսկե հետո ասաց նա՝ բարձրացնելով լացակումած դեմքը ու սրբելով արցունքները,— հիմա շատ-շատ այդ տեսակ դժբախտություններ են պատահում,— ավելացրեց նա անսպասելի, այն առանձնահատուկ լուրջ տեսքով, որ սովորաբար ընդունում են երեխաները, երբ հանկարծ ուզում են «մեծերի» պես խոսել։

— Հայրիկդ սիրո՞ւմ էր ձեզ։

— Նա Լիդուշկային ավելի շատ էր սիրում, քան մեզ բոլորիս,— շարունակեց աղջիկը խիստ լրջորեն և առանց ժրպտալու, արդեն բոլորովին այնպես, ինչպես խոսում են մեծե-

ը,— սիրում էր, որովհետև Լիդոչկան փոքրիկ է, որովհետև հիվանդ է, ու նրան միշտ նվեր էր բերում, իսկ մեզ նա կարդալ էր սովորեցնում, ինձ էլ քերականություն և կրոն էր սովորեցնում,— լրջագեմ ավելացրեց Պոլենկան,— իսկ մայրիկը ոչինչ չէր ասում, միայն թե մենք գիտեինք, որ նա այդ սիրում է, հայրիկն էլ գիտեր, իսկ մայրիկը ուզում էր ինձ ֆրանսերեն սովորեցնել, որովհետև ժամանակն է, որ ես կրթություն ստանամ։

— Իսկ դուք աղոթել գիտե՞ք։

— Օ, ինչպես չէ, վաղուց գիտեմ. քանի որ արդեն մեծացել եմ, աղոթում եմ մտքումս, իսկ Կոլյան ու Լիդոչկան մայրիկի հետ բարձրաձայն են աղոթում, նախ՝ «Աստվածածինն» են ասում, հետո էլի մի աղոթք՝ «աստված, ներիր և օրհնիր Սոնյա քույրիկին», հետո էլ՝ «աստված, ներիր և օրհնիր մեր մյուս հայրիկին», որովհետև մեր մեծ հայրիկը արդեն մեռել է, իսկ սա մեր մյուս հայրիկն է, ու մենք նրա համար էլ ենք աղոթում։

— Պոլեչկա, իմ անունը Ռոդյոն է. երբեք ինձ համար էլ աղոթեք, ասեք՝ «ներիր խեղճ Ռոդյոնին էլ», ուրիշ ոչինչ։

— Իմ ամբողջ ապագա կյանքում կաղոթեմ ձեզ համար,— ցերմությամբ ասաց աղջիկը ու հանկարծ էլի ծիծաղեց, նեղվեց դեռի Ռասկոլնիկովը ու դարձյալ պինդ գրկեց նրան։

Ռասկոլնիկովը կրկին նրան ասաց իր անունը, տվեց իր հասցեն ու խոստացավ հենց մյուս օրը տեսակցման գալ։ Աղջիկը հեռացավ նրանով միանգամայն հիացած։ Ժամը տասնմեկն էր, երբ Ռասկոլնիկովը դուրս եկավ փողոց։ Հինգ րոպե հետո նա կանգնած էր կամրջի վրա, հենց այնտեղ, որտեղ այն կինը ընկել էր ջրանցքը։

«Բավական է,— վճռականորեն ու ցնծագին ասաց նա,— կորչեն միրաժները, կորչեն չինծու վախերը, կորչեն մտապատկերները... Կեցցե կյանքը... Մի՞թե ես հիմա չէի ապրում։ Իմ կյանքը դեռ չի մեռել զառամ պառավի հետ մեկտեղ։ Երկնային արքայություն նրան, ու բավական է, մոքիր, ժամանակն է, որ ինձ հանգիստ թողնես։ Հիմա բանականության ու լույսի և... կամքի, ուժի թագավորությունն է... ու տեսնենք հիմա, չափվենք հիմա», մեծամտորեն ավելացրեց նա՝ կարծես դիմելով ինչ-որ մութ ուժի և դրան կանչելով

մարտի։ «Ես հո համաձայնում էի ապրել մի արշին տարածության վրա»։

«... Ես խիստ թույլ եմ հիմա, բայց... կարծես հիվանդությունս իսպառ անցել է։ Երբ այսօր դուրս եկա, գիտեի, որ կյանքիս։ Հա՛, Պոչինկովի տունը, բոլորովին մոտիկ է։ Անպայման կգնամ Ռազումիխինի մոտ, թեկուզև հեռու լինի... Թող գրազը տանի... Թող նա ծիծաղի ինձ վրա, թող, ոչինչ... ուժ է հարկավոր, ուժ. առանց ուժի ոչինչ չես կարող անել. իսկ ուժը պետք է ուժով ձեռք բերել, ահա սա է, որ ոմանք չգիտեն», հպարտությամբ ու ինքնավստահ ավելացրեց նա, ու ոտքերը հաղիվ քարշ տալով, հեռացավ կամրջից։ Յուրաքանչյուր բոպն նրա մեջ սասկանում էին հպարտությունը և ինքնավստահությունը. այդպես հետևյալ բոպերին նա այլ մարդ էր դառնում, քան նախընթաց բոպերին։ Սակայն ի՞նչ մի առանձին բան պատահեց, որ այդպես հեղաշրջեց նրան. նա ինքն էլ չգիտեր. նրան, ինչպես ծղոտին ձեռք գցողին, հանկարծ թվաց, որ ինքն էլ կարող է ապրել, որ դեռ կյանք կա, որ իր կյանքը չի մեռել «զառամ պառավի հետ մեկտեղ»։ Գուցե նա իսիստ շտապեց այդպիսի եզրակացության հանգել, բայց նա այդ մասին չէր էլ մտածում։

«Հըմ, խնդրեցի աղոթել խեղճ Ռոդյոնի համար, անցավ հանկարծ նրա մտքով, դե այդ արվեց... հենց այնպես, էլի», ավելացրեց նա ու ինքն իսկույն ծիծաղեց իր երեխայական վարմունքի վրա։ Նա գտնվում էր գերազանց հոգեվիճակում։

Նա հիշողությամբ գտավ Ռազումիխինի բնակարանը։ Պոչինկովի տանը արդեն ճանաչում էին նոր կենվորին, ու դրանապանը նրան իսկույն ցույց տվեց ճանապարհը։ Արդեն սանդուղքի կեսից կարելի էր լսել մեծ հավաքույթի աղմուկը և աշխույժ խոսակցությունը։ Բնակարանի դուռը բոլորովին բաց էր. բազմոցներ ու վեճեր էին լսվում։ Ռազումիխինի սենյակը բավական մեծ էր, այնտեղ տասնհինգ մարդ էր հավաքվել։ Ռասկոլնիկովը կանգ առավ նախասենյակում։ Այստեղ, միջնորմի եռևում տանտիրոջ երկու սպասուհիները դրաղված էին երկու մեծ ինքնաեռներով, շշերով, ափսեներով ու սկուտեղներով, որոնց մեջ տանտիրոջ խոհանոցից բերված կարկանդակ և այլ ուտելիք էր դարսված։ Ռասկոլնիկովը պատվիրեց կանչել Ռազումիխինին։ Վերջինս ուրախացած դուրս եկավ

ենյակիցը։ Առաջին հայացքից էլ նկատելի էր, որ նա չափազանց շատ է խմել ու թեև նա երբեք չէր կարողանում հարբելու չափ խմել, այնուամենայնիվ այս անգամ գինովության ինչ-որ նշաններ էին երևում։

— Լսիր,— հապճեպ առաց Ռասկոլնիկովը,— եկել եմ միայն ասելու, որ դու գրագը տարար և որ իսկապես ոչ ոք չգիտե, թե իրեն ինչ կարող է պատահել։ Ներս մտնել ես չեմ կարող. այնքան թույլ եմ, որ հիմա վայր կընկնեմ։ Դե ուրեմն բարև ու ցտեսություն։ Վաղը եկ ինձ մոտ...

— Գիտե՞ս ինչ, ես քեզ կուղեկցեմ տուն։ Երբ դու ինքդ ես ասում, որ թույլ ես, ուրեմն...

— Հապա հյուրե՞րը։ Ո՞վ է այն զանգրահերը, նա, որ հիմա այստեղ նայեց։

— Այն մե՞կը։ Չգիտեմ։ Երևի հոբելյարս ծանոթն է, գուցե և ուրիշն է... Հոբելյարս կմնա նրանց հետ. նա հիանալի մարդ է. ափսոս, որ դու հիմա չես կարող նրա հետ ծանոթանալ։ Սակայն նրանց բոլորի հերն էլ անիծած։ Նրանք հիմա ինձ հետ գլուխ չունեն, ես էլ կուզեի թարմանալ, և դուք աղբերս, լավ ժամանակին եկար. էլի երկու բոպե, ու ես այնտեղ տուրուդմբոց կսարքեի, հոդիս վկա։ Հենց մի գլուխ անհեթեթություններ են դուրս տալիս։ Դու չես կարող պատկերացնել, թե մարդը որչափ կարող է սաեր մոգոնել։ Ասենք, ի՞նչպես կարելի է չպատկերացնել։ Մի՞թե մենք ինքներս չենք ստում։ Եվ թող ստեն. սակայն հետո էլ չեն ստի... Մի բոպե նստիր, ես բերեմ Զոսիմովին։

Զոսիմովը նույնիսկ մի ինչ-որ ագահությամբ նետվեց դեպի Ռասկոլնիկովը. նրա մեջ մի առանձին հետաքրքրություն էր նկատվում. նրա դեմքը իսկույն պայծառացավ։

— Անհապաղ քնել,— որոշեց նա՝ հնարավորին չափ զընելով հիվանդին,— իսկ քնելուց առաջ մի բան ընդունել։ Կընդունե՞ք։ Ես դեռ վաղուց եմ պատրաստել... այս դեղափոշին։

— Թեկուզ երկուսը,— պատասխանեց Ռասկոլնիկովը։

Նա տեղնուտեղը կուլ տվեց դեղափոշին։

— Դա շատ լավ է, որ դու ինքդ նրան կտանես,— ասաց Զոսիմովը Ռազումիխինին։ — Թե վաղը ինչ կլինի, կտեսնենք, իսկ այսօր բանը նույնիսկ շատ լավ է. զգալի փոփոխություն է կատարվել։ Քանի ապրես, այնքան շատ բան կսովորես...

— Գիտե՞ս Զոսիմովը ինչ ասաց ականջիս, երբ մենք դուրս էինք գալիս,— բերանից անտեղի թռցրեց Ռազումիխինը, հենց որ երկուսով դուրս եկան փողոց։ — Ես քեզ ամեն ինչ շիտակ կասեմ, քանի որ նրանք հիմարներ են։ Զոսիմովը ինձ պատվիրեց ճանապարհին շատախոսել քեզ հետ ու քեզ էլ շատ խոսեցնել, ու հետո այդ մասին իրեն պատմել, որովհետև նա կարծում է... որ դուք... խելագար ես կամ խելագարվելու ես։ Պատկերացրու այդ բանը։ Նախ՝ դու նրանից եռակի չափով խելացի ես, երկրորդ՝ եթե դու ցնդված չես, թքիր նրա գլխում ծագած անհեթեթության վրա, ու երրորդ այդ մսագունդը և իր մասնագիտությամբ խիրուրգը հիմա ցնորվել է հոգեկան հիվանդություններով զբաղվելուց, իսկ քո նկատմամբ նրան վերջնականապես այդպիսի մտայնության է հասցրել այսօրվա քո խոսակցությունը Զամետովի հետ։

— Զամետովը ամեն ինչ պատմե՞լ է քեզ։

— Ամեն ինչ, և շատ լավ է արել։ Ես հիմա հասկացել եմ ամբողջ խոր գաղտնիքը, Զամետովն էլ է հասկացել... Ը-ը-ը, մի խոսքով, Ռոդյա... բանն այն է, որ... Ես հիմա մի քիչ հարբած եմ... Բայց այդ ոչինչ... բանն այն է, որ այդ միտքը... հասկանո՞ւմ ես, իրոք հղացել են նրանք... հասկանո՞ւմ ես։ Այսինքն՝ նրանցից ոչ ոք չի համարձակվել այդ միտքը արտահայտել, որովհետև դա ամենաանհեթեթ վայրահաչություն է, մանավանդ երբ այն ներկարարին բռնեցին, այդ ամենը հօդս ցնդեց և առմիշտ մարեց։ Բայց ինչո՞ւ նրանք, հիմարները այդպես էին մտածում։ Ես այն պահին մի քիչ ոնքսեցի Զամետովին, խոսքը մեր մեջ մնա, աղբերս, խնդրում եմ գաղտնի պահես ինչ որ գիտես. ես նկատեցի, որ նա փափկանկատ է. դա Լավիզայի մոտ եղավ, բայց այսօր, այսօր ամեն ինչ պարզվեց։ Գլխավորը այդ Իլյա Պետրովիչի վերաբերմունքն է։ Նա այն ժամանակ օգտագործեց քո ուշաթափությունը գրասենյակում, բայց հետո ամաչեց դրանից. ես հո գիտեմ...

Ռասկոլնիկովը ագահությամբ լսում էր։ Ռազումիխինը հարբած վիճակում բերանից գաղտնիքներ էր թռցնում։

— Ես այն ժամանակ ուշաթափվեցի, որովհետև գրասենյակում օդը ծանր էր և յուղաներկի հոտ էր գալիս,— ասաց Ռասկոլնիկովը։

— Դեռ բացատրում է՞լ է։ Բանը միայն ներկը չէ, բորբոքումը դեռ մի ամիս առաջ էր սկսվել. այդ է ասում Զոսիմովը։ Հա՛, դու չես կարող պատկերացնել, թե հիմա ինչպես է ընկճված այն տղան։ «Ես այդ մարդու ճկույթն էլ չարժեմ»,— ասում է նա։ Այսինքն թե քո ճկույթը։ Սրբեմն նա բարի զգացմունքներ է ունենում։ Բայց դասը, «Բյուրեղապակյա պալատում» այսօր նրա ստացած դասը գերազանց կատարելություն է։ Դու հո սկզբում վախեցրել էիր նրան, ջղաձգության հասցրել, դու նրան համարյա ստիպել էիր դարձյալ համոզվել, որ այդ ամենը այլանդակ անհեթեթություն է, հետո էլ նրան լեզու էիր ցույց տվել, այսինքն թե, առ քեզ, ա՞յդ էր ուզածը դ»։ Հիանալի է, այժմ նա ճզմված է, ոչնչացված, Վարպետ ես դու, հոգիս վկա, այդպես էլ պետք է վարվել նրանց հետ։ Ափսոս որ ես այնտեղ չէի։ Հիմա նա շատ էր սպասում քեզ։ Պորֆիրին նույնպես ցանկանում է ծանոթանալ քեզ հետ...

— Հը՛մ... արդեն նա է՞լ է այդ ուզում... իսկ ինչո՞ւ են ինձ խելագար համարել։

— Այսինքն՝ ոչ թե խելագար։ Հա՛, ես գլխիցս շատ բան գուրս տվի... գիտե՞ս, նա զարմացել էր, որ քեզ միայն այն գեպքն է հետաքրքրում... Հիմա պարզ է, թե ինչու է հետաքրքրում. պիտենալով բոլոր հանգամանքները... այն ժամանակ այդ բանը քեզ որքա՞ն ջղայնացրեց հիվանդության հետ մեկտեղ... Ես, սիրելիս, մի քիչ հարբած եմ, էհ, սատանան նրան գիտե, նա ինչ-որ մտքեր ունի... Ես քեզ ասում եմ՝ ցնդվել է հոգեկան հիվանդություններով զբաղվելուց։ Իսկ դու թքիր դրա վրա...

Մի բոպեի չափ երկուսն էլ լուռ էին։

— Լսիր, Ռազումիխին,— ասաց Ռասկոլնիկովը,— ես ուզում եմ քեզ ա՛յ թե ինչ հայտնել. քիչ առաջ մի մեռելի տանն էի, մեռել է մի աստիճանավոր... ես այնտեղ տվեցի իմ բոլոր փողերը... ու բացի այդ, ինձ համբուրեց մի էակ, որը նույնպես... եթե ես որևէ մեկին սպանած լինեի... մի խոսքով, ես այնտեղ մի ուրիշ էակ էլ տեսա... գլխարկը ալ կարմիր փետուրով... Սակայն ես անտեղի գուրս եմ տալիս, ես շատ թույլ եմ, վերցրու թես... ահա և տուն հասանք...

— Ի՞նչ պատահեց քեզ, ի՞նչ,— հարցնում էր անհանգստացած Ռազումիխինը։

— Գլուխս մի քիչ պտտվում է, միայն թե բանը այդ չէ, բանն այն է, որ ես այնպե՞ս տխուր եմ, այնպե՞ս տխուր... Հիրավի, ասես կին լինեմ... Նայիր, այն ի՞նչ է, նայի՛ր, նայի՛ր։

— Ի՞նչ է որ։

— Մի՞թե չես տեսնում. իմ սենյակում լույս կա, տես, ճե՛ղքից է երևում...

Նրանք արդեն կանգնած էին վերջին սանդուղքի առջև, տանտիրուհու դռան կողքին, և իսկապես, ներքևից նկատվում էր, որ Ռասկոլնիկովի խցիկում լույս կար։

— Տարօրինակ է։ Գուցե այնտեղ Նաստասյան է,— ասաց Ռազումիխինը։

— Այս ժամին նա երբեք ինձ մոտ չի լինում, նա վազուց քնած է, տանը... Ինձ համար միևնույն է։ Ցտեսություն։

— Ի՞նչ ես ասում, ես կգամ քեզ հետ, միասին ներս կմտնենք։

— Գիտեմ, որ միասին կմտնենք, բայց ես ուզում եմ այստեղ սեղմել ձեռքդ և քեզ հրաժեշտ տալ։ Դեհ, տուր ձեռքդ, ցտեսություն։

— Ի՞նչ պատահեց քեզ, Ռոդյա։

— Լավ, գնանք. դու վկա կլինես...

Նրանք սկսեցին բարձրանալ սանդուղքով, ու Ռազումիխինը մտածեց, որ Զոսիմովը գուցե իրավացի է։ «Ախ, ես իմ շատախոսությամբ փչացրի սրա տրամադրությունը»,— քթի տակ փնթփնթաց նա։ Մոտենալով դռանը, հանկարծ նրանք սենյակից ձայներ լսեցին։

— Ախր սա ի՞նչ բան է,— գոչեց Ռազումիխինը։

Ռասկոլնիկովն առաջինը ձեռքը տարավ դռանը ու բոլորովին բացեց այն, բացեց և շեմքի վրա քարացած կանգ առավ։

Մայրը և քույրը նստել էին բազմոցի վրա և արդեն մեկ և կես ժամ սպասում էին։ Ինչո՞ւ նա ամենից քիչ էր սպասում նրանց և ամենից քիչ էր մտածում նրանց մասին, չէ՞ որ նույնիսկ այդ օրն էլ կրկին լուր էր ստացել, որ նրանք մեկնել են, գալիս են, հիմա կժամանեն։ Այդ ամբողջ մեկ և կես ժամվա ընթացքում նրանք իրար առաջ կարելով հարցուփորձ էին տալիս Նաստասյային, որը հիմա էլ կանգնած էր նրանց առջև

ու արդեն պատմել էր ամբողջ գաղտնիքը։ Նրանք վախից խելքամաղ եղան, երբ լսեցին, որ Ռոդյան «այսօր փախել է», հիվանդ է, ու ինչպես երևաց պատմածից, անպայման զառանցանքի մեջ է։ «Տեր աստված, ի՞նչ է պատահել նրան»։ Մայրն ու քույրը լալիս էին, երկուսն էլ դառնապես տանջվեցին սպասման այդ մեկ և կես ժամվա ընթացքում։

Տեսնելով Ռասկոլնիկովին, նրանք ցնծագին, ուրախ ճիչ արձակեցին։ Երկուսն էլ նետվեցին դեպի Ռասկոլնիկովը։ Բայց նա կանգնել էր մեռածի նման. անտանելի, հանկարծակի գիտակցությունը կայծակի պես խփել էր նրան։ Ձեռքերը չէին բարձրանում, չէին կարող բարձրանալ նրանց գրկելու համար։ Մայրն ու քույրը նրան սեղմում էին իրենց գրկում, համբուրում էին նրան, ծիծաղում, լաց լինում... Նա մի քայլ արեց, օրորվեց և ուշաթափված փռվեց հատակին։

Տագնապ, սարսափի ճիչեր, հառաչանքներ... Շեմքին կանգնած Ռազումիխինը ներս նետվեց, իր հուժկու ձեռքերով վերցրեց հիվանդին ու մի ակնթարթում պառկեցրեց բազմոցի վրա։

— Ոչինչ, ոչինչ,— դիմեց նա մորն ու քրոջը,— սա ուշաթափություն է, դատարկ բան է։ Քիչ առաջ բժիշկը ասաց, որ նրա դրությունը շատ լավ է, որ նա բոլորովին առողջ է։ Ջուր բերեք։ Հըմ, ահա և նա ուշքի է գալիս, ահա և բացեց աչքերը...

Ու վերցնելով Դունեչկայի թևը, այնպես, որ քիչ մնաց դուրս գցեր, Ռազումիխինը նրան կռացրեց նայելու, թե ինչպես հիվանդը «բաց է անում աչքերը»։ Թե՛ մայրը և թե՛ քույրը խանդաղատանքով ու գոհությամբ էին նայում Ռազումիխինին, ինչպես նախախնամության. նրանք արդեն նաստասյայից լսել էին, թե հիվանդության ամբողջ ընթացքում իրենց Ռոդյայի համար ինչ էր եղել այդ «աշխույժ երիտասարդը», ինչպես նույն երեկոյան Դունյայի հետ ունեցած մտերմական խոսակցության ժամանակ Ռազումիխինին անվանել էր ինքը, Պուլխերիա Ալեքսանդրովնա Ռասկոլնիկովան։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Ռասկոլնիկովը ելավ ու նստեց բազմոցին։

Նա թույլ ձեռքով նշան արեց Ռազումիխինին, որ վերջինս դադարեցնի մորը և քրոջը ուղղված անկապ ու ջերմագին ոփոփանքների ողջ հեղեղը, վերցրեց նրանց երկուսի ձեռքերը ու երկու բոպեի չափ լուռ նայում էր մերթ մեկին ու մերթ մյուսին։ Մայրը վախեցավ նրա նայվածքից։ Այդ նայվածքը տանջանքի չափ ուժեղ զգացմունք էր արտահայտում, բայց միևնույն ժամանակ դրա մեջ ինչ-որ անշարժ, նույնիսկ կարծես թե խելահեղ բան կար։ Պուլխերիա Ալեքսանդրովնան լացեց։ Ավդոտյա Ռոմանովնան գունատ էր. նրա ձեռքը դողում էր եղբոր ձեռքի մեջ։

— Գնացեք տուն... նրա հետ,— կցկտուր ձայնով ասաց Ռասկոլնիկովը՝ ցույց տալով Ռազումիխինին,— մինչև վաղը. ամեն ինչ վաղը... Վաղո՞ւց եք ժամանել։

— Երեկոյան, Ռոդյա,— պատասխանեց Պուլխերիա Ալեքսանդրովնան,— գնացքը շատ ուշացավ։ Բայց, Ռոդյա, ես հիմա ոչ մի դեպքում չեմ հեռանա քեզնից։ Ես կգիշերեմ այստեղ, քեզ մոտ...

— Մի՛ տանջեք ինձ,— ասաց Ռասկոլնիկովը՝ զզայնացած թափ տալով ձեռքը։

— Ես կմնամ իր մոտ,— գոչեց Ռազումիխինը,— ոչ մի բոպե չեմ թողնի նրան, մերոնք բոլորն էլ թող դնան գրողի ծոցը, թող ինչ ուզում են անեն։ Այնտեղ, իմ ոենյակում հորեղբայրս պրեզիդենտ է։

— Ես ինչո՞վ, ինչո՞վ շնորհակալ լինեմ ձեզնից,— ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան՝ նորից սեղմելով Ռազումիխինի ձեռքը, բայց Ռասկոլնիկովը դարձյալ ընդհատեց նրան։

— Ես չեմ կարող սա տանել, չեմ կարող,— ջղայնացած կրկնում էր նա,— մի տանջեք, բավական է, գնացեք... Չեմ կարող...

— Գնանք, մայրիկ, գոնե մի բոպե սենյակից դուրս ելնենք,— շշնջաց վախեցած Դունյան,— երևում է, որ մենք նեղում ենք նրան։

— Մի՞թե երեք տարվա անջատումից հետո ես չեմ կարող մի լավ նայել նրան,— լալով ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Սպասեցեք,— դիմեց Ռասկոլնիկովը նրանց,— դուք հա՛ ընդհատում եք, իսկ իմ մտքերը իրար են խառնվում... Լուժինին տեսե՞լ եք։

— Ոչ, Ռոդյա, բայց նա արդեն գիտե, որ մենք ժամանել ենք։ Մենք լսեցինք, Ռոդյա, որ Պյոտր Պետրովիչը այնքան բարի է եղել, որ այսօր այցելել է քեզ,— մի փոքր երկչոտ պատասխանեց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Այո... այնքան բարի՛ է եղել... Դունյա, ես Լուժինին ասացի, որ իրեն կգլորեմ սանդուղքից, և ուղարկեցի դրոշի ծացը...

— Ռոդյա, ինչե՞ր ես ասում, այդ ինչպե՞ս կարելի է,— փորձեց առարկել վախեցած Պուլխերիա Ալեքսանդրովնան, բայց լռեց ու նայեց Դունյային։

Ավդոտյա Ռոմանովնան ակնապիշ նայում էր եղբորը և սպասում, թե էլ ինչ է լինելու։ Երկուսն էլ վեճի մասին իմացել էին Նաստասյայից, որքան որ սա կարող էր այն հասկանալ ու հաղորդել, ու նեղվում էին տարակուսանքից ու սպասումից։

— Դունյա,— ճիգ անելով ասաց Ռասկոլնիկովը,— ես այդ ամուսնությունը չեմ ցանկանում, դրա համար էլ դու պետք է հենց վաղը առաջին իսկ խոսքից մերժես Լուժինին, որպեսզի նրա հոտը կտրվի։

— Աստվա՛ծ իմ,— ճչաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Եղբա՛յրս, մտածիր, թե ինչ ես ասում,— տաքացած փորձեց առարկել Ավդոտյա Ռոմանովնան, բայց իսկույն

զսպվեց։ — Գուցե դու հիմա տկար ես,— հեզությամբ ասաց նա։

— Զառանցո՞ւմ եմ։ Ոչ... Դու ինձ համար ես ամուսնանում Լուժինի հետ։ Իսկ ես զոհաբերություն չեմ ընդունում։ Ուստի և մինչև վաղը մերժման նամակ գրիր... Առավոտյան տուր ինձ կարդալու, և վերջ։

— Ես չեմ կարող այդ անել,— գոչեց վիրավորված աղջիկը։ — Ի՞նչ իրավունք ունեմ։

— Դունեչկա, դու է՛լ տաքարյուն ես, վերջ տուր, վաղը... Մի՞թե դու չես տեսնում...— ասաց սարսափահար մայրը՝ նեղվելով դեպի Դունյան։ — Ախ, ավելի լավ է գնանք։

— Զառանցում է,— գոչեց գինովցած Ռազումիխինը,— թե չէ ո՛նց կհամարձակվեր։ Վաղը այդ ամբողջ հիմարությունը գլխից դուրս կթռչի... Իսկ այսօր նա իրոք վռնդեց Պյոտր Պետրովիչին։ Հենց այդպես էլ եղավ։ Իսկ Պյոտր Պետրովիչը բարկացավ... Ճառաբանեց այստեղ, իր դիտելիքները ցույց տվեց, հետո էլ պոչը քաշեց ու գնաց...

— Ուրեմն դա ճի՞շտ է,— գոչեց Պուլչերիա Ալեքսանդրովնան։

— Ցտեսություն մինչև վաղը, եղբայրս,— կարեկցաբար ասաց Դունյան,— գնանք, մայրիկ... Ցտեսություն, Ռոդյա։

— Լսո՞ւմ ես, քույր,— նրանց ետևից ասաց Ռասկոլնիկովը՝ հավաքելով վերջին ճիգերը,— ես չեմ զառանցում. այդ ամուսնությունը ստորություն է։ Թող ես ստոր լինեմ, բայց դու չպետք է համաձայնես... կամ ես, կամ նա... Իսկ ես թեկուզև ստոր եմ, բայց այդպիսի քրոջը քույր չեմ համարիր։ Կամ ես, կամ Լուժինը։ Գնացեք...

— Գժվե՞լ ես, ինչ է, բռնակալ,— գոռաց Ռազումիխինը, բայց Ռասկոլնիկովը արդեն չէր պատասխանում, դուցե և ուժ չուներ պատասխանելու։ Բոլորովին ուժասպառ նա պառկեց բազմոցին ու դեմքը դարձրեց դեպի պատը։ Ավդոտյա Ռոմանովնան հետաքրքրությամբ նայեց Ռազումիխինին. նրա սև աչքերը շողացին. Ռազումիխինը նույնիսկ ցնցվեց այդ հայացքից։ Պուլչերիա Ալեքսանդրովնան կանգնել էր ապշած։

— Ես ոչ մի կերպ չեմ կարող գնալ,— գրեթե հուսահատ

ՀՀՆՀաց նա Ռազումիխինի ականջին,— ես կմնամ այստեղ, որևէ մի տեղ... ուղեկցեք Դունյային։

— Դրանով ամբողջ գործը կփչացնեք,— սրտնեղելով փըսփըսաց Ռազումիխինը,— դուրս դնանք գոնե միջանցք, Նաստասյա, լույս վառիր։ Երդվում եմ ձեզ, որ ժամ առաջ քիչ մնաց խփեր մեզ, ինձ և բժշկին,— շարունակեց նա արդեն սանդուղքի վրա։ — Հասկանո՞ւմ եք, հենց բժշկին։ Ու բժիշկը զիջեց, որպեսզի նրան չշղայնացներ, ու գնաց, իսկ ես ներքևում մնացի հսկելու, Ռոդյան հագնվեց ու ծլկեց։ Եթե շղայնացնեք, հիմա էլ, գիշերով կծլկի ու իրեն մի որևէ վնաս կհասցնի...

— Ա՛խ, ինչե՛ր եք ասում։

— Ավդոտյա Ռոմանովնան չի կարող հյուրանոցում մնալ մենակ, առանց ձեզ։ Մտածեցեք, թե որտեղ եք գտնվում։ Այդ անիրավը, Պյոտր Պետրովիչը, մի՞թե չէր կարող ձեզ համար ավելի լավ բնակարան գտնել... Սակայն գիտե՞ք, ես մի քիչ հարբած եմ, այս պատճառով էլ... վատ խոսք ասացի. ուշադրություն մի դարձնեք...

— Ես կմնամ այստեղի տանտիրուհու մոտ,— պնդում էր Պուլխերիա Ալեքսանդրովնան,— ես նրան կաղաչեմ, որ ինձ ու Դունյային մի անկյուն տա այս գիշերն անցկացնելու համար։ Ես չեմ կարող Ռոդյային այդպես թողնել, չե՛մ կարող։

Նրանք կանգնել էին սանդուղքի հարթակում, հենց տանտիրուհու դռան առաջ։ Նաստասյան սանդուղքի վերջին աստիճանից լուսավորում էր հարթակը։ Ռազումիխինը արտասովոր հուզված էր։ Դեռ կես ժամ առաջ, Ռասկոլնիկովին տուն ուղեկցելով, նա թեպետև տեղի-անտեղի շատախոսում էր, ինքն էլ այդ գիտակցելով, բայց միանգամայն զվարթ էր և համարյա թարմացած, չնայելով, որ այդ երեկո սարսափելի քանակությամբ օղի էր կոնծել։ Իսկ հիմա նա նույնիսկ մի ինչ-որ հրճվալից վիճակում էր գտնվում, ու միևնույն ժամանակ կարծես թե իր խմած ամբողջ օղին միանգամից և կրկնակի ուժով խփել էր գլխին։ Նա կանգնել էր այդ երկու կնոջ հետ, բռնել նրանց ձեռքերը, համոզում էր նրանց և զարմանալի անկեղծությամբ փաստարկներ բերում, ու հավանորեն դրանք մեծապես համոզիչ դարձնելու համար, իր յուրաքանչյուր խոսքի վրա պինդ, շատ պինդ, ցավեց-

նելու չափ սեղմում էր նրանց ձեռքերը ու կարծես աչքերով լափում էր Ավդոտյա Ռոմանովնային, բնավ չքաշվելով դրանից։ Նրանք ցավից երբեմն իրենց ձեռքերը ետ էին քաշում Ռազումիխինի ահագին, ոսկրոտ ձեռքից, բայց նա ոչ միայն չէր նկատում, թե ինչումն է բանը, այլև ավելի պինդ էր նրանց քաշում իր կողմը։ Եթե նրանք իրենց ծառայություն մատուցելու համար այժմ Ռազումիխինին հրամայեին գլխիվայր ներքև նետվել սանդուղքից, ապա նա, անկասկած, առանց առարկելու կկատարեր այդ բանը։ Պուլչերիա Ալեքսանդրովնան, որ տագնապալից անհանգստությամբ էր մտածում իր Ռոդյայի մասին, թեև զգում էր, որ այդ երիտասարդը խիստ տարօրինակ է և չափից դուրս ցավեցնելով է սեղմում իր ձեռքը, բայց որովհետև նա իր համար նախախնամություն էր, ուստի և ինքը, Պուլչերիա Ալեքսանդրովնան, չէր ուզում նկատել այդ բոլոր տարօրինակ մանրամասնությունները։ Չնայած նույնպիսի անհանգստության, Ավդոտյա Ռոմանովնան թեպետև երկչոտ բնավորություն չուներ, բայց զարմանքով և գրեթե նույնիսկ վախով էր տեսնում իր եղբոր ընկերոջ օտարոտի, ճառագայթող հայացքները, և միայն անսահման վստահությունը, որ առաջացել էր այդ տարօրինակ մարդու մասին Նաստասյայի պատմածներից, նրան ստիպում էր չփախչել Ռազումիխինից և հետը չտանել մորը։ Ավդոտյա Ռոմանովնան նաև հասկանում էր, որ հիմա ինքը թերևս անկարող է փախչել Ռազումիխինից։ Սակայն մի տասը րոպե հետո նա բավական հանգստացավ. Ռազումիխինը ինչպես էլ որ տրամադրված լիներ, բոպեապես ամբողջովին արտահայտվելու հատկություն ուներ, այնպես, որ բոլորն էլ շատ շուտով իմանում էին, թե ում հետ գործ ունեն։

— Չի կարելի գնալ տանտիրուհու մոտ, դա սարսափելի անհեթեթություն է,— գոչեց նա՝ համոզելով Պուլչերիա Ալեքսանդրովնային։ — Դուք թեպետև մայր եք, բայց եթե մնաք, Ռոդյային կատաղության կհասցնեք, և այդ դեպքում սատանան գիտե, թե ինչ կլինի։ Լսեք, ահա թե ես ինչ կանեմ. հիմա Նաստասյան կնստի նրա մոտ, իսկ ես ձեզ երկուսիդ տունն կտանեմ, որովհետև դուք ս-

ռանց ուղեկցողի չպետք է գնաք փողոցներով. մեղ մոտ, Պետերբուրգում, այդ կողմից... Հա՛, լավ, թքած դրա վրա... Հետո էլ ես իսկույն կվազեմ այստեղ, ու ազնիվ խոսք, քառորդ ժամից լուր կբերեմ, թե ի՞նչպես է նա, քնա՞ծ է, թե չէ, և այլն։ Հետո, լսեցեք, հետո կթռչեմ իմ բնակարանը, այնտեղ ես հյուրեր ունեմ, բոլորն էր հարբած են, հա՛, կվերցնեմ Զոսիմովին, նրան բուժող բժշկին, որ հիմա գտնվում է իմ բնակարանում, հարբած չէ. նա երբեք հարբած չի լինում, նրան կտանեմ Ռոդյայի մոտ, հետո էլ անմիջապես ձեզ մոտ կգամ, ուրեմն մեկ ժամում դուք Ռոդյայի մասին երկու լուր կստանաք, ու բժշկից էլ, հասկանո՞ւմ եք, հենց բժշկից էլ լուր կստանաք. դա արդեն այն չէ, ինչ որ ինձնից ստանալիք լուրը։ Թե որ բանը վատ լինի, երդվում եմ, ես ինքս ձեզ այստեղ կբերեմ, իսկ եթե լավ լինի, կպառկեք քնելու։ Իսկ ես ամբողջ գիշերը կանցկացնեմ այստեղ, հաշտում, նա չի էլ լսի։ Զոսիմովին էլ կպատվիրեմ գիշերել տանտիրուհու մոտ, որ նա ձեռքի տակ լինի։ Հիմա Ռոդյայի համար ի՞նչն է լավ, դո՞ւք, թե՞ բժիշկը։ Բժիշկը հո ավելի օգտակար է, օգտակար է։ Դեհ, ուրեմն պետք է տուն գնալ, իսկ տանտիրուհու մոտ չի կարելի գնալ. ինձ կարելի է. իսկ ձեզ չի կարելի. չի թողնի, որովհետև... որովհետև հիմար է։ Նա ինձ կխանդի Ավդոտյա Ռոմանովնային, եթե ուզում եք իմանալ, նույնիսկ ձեզ... Ավդոտյա Ռոմանովնային անպայման կխանդի... Նա բոլորովին, բոլորովին տարօրինակ բնավորություն ունի։ Ասենք, ես էլ եմ հիմար... էհ, թքած դրա վրա։ Գընանք։ Հավատո՞ւմ եք ինձ, հավատո՞ւմ եք, թե՞ չէ։

— Գնանք, մայրիկ,— ասաց Ավդոտյա Ռոմանովնան։ — Նա անշուշտ կանի այն, ինչ որ խոստանում է։ Նա արդեն վերակենդանացրել է եղբորս, իսկ եթե ճիշտ է, որ բժիշկը կհամաձայնի այստեղ գիշերել, ուրեմն դրանից լավ ի՞նչ կարող է լինել։

— Այ, դուք... դուք... դուք ինձ հասկանում եք, որովհետև դուք հրեշտակ եք,— հիացած գոչեց Ռազումիխինը։

— Գնանք, Նաստասյա, թռիր վերև ու նստիր Ռոդյայի մոտ, լույսը վառած պահիր. ես քառորդ ժամից կգամ...

Պուլլխերիա Ալեքսանդրովնան թեև վերջնականապես չհամոզվեց, բայց և էլ չէր ընդդիմանում։ Ռազումիխինը նրանց երկուսին էլ թեանցուկ արեց ու սանդուղքով ներքև տարավ։ Սակայն նա է՛լ էր անհանգստացնում Պուլլխերիա Ալեքսանդրովնային։ «Թեև սա ճարպիկ ու բարի է, բայց արդյո՞ք կկարողանա կատարել իր խոստումը։ Տարօրինակ տեսք ունի...»

— Հը՛մ, հասկանում եմ՝ դուք մտածում եք, որ ես այսպիսի վատ տեսքով եմ,— նրա մտքերը ընդհատեց Ռազումիխինը։ Նա չափազանց լայն-լայն էր քայլում մայթով, այնպես որ մայրն ու աղջիկը հազիվ էին կարողանում նրա հետ համաքայլ գնալ, և նա այդ չէր նկատում։

— Անհնթնթությո՛ւն, այսինքն... ես, տիմարս, հարբած եմ, սակայն բանը այդ չէ. գինուց չէ, որ ես հարբած եմ։ Ձեզ տեսա թե չէ, գլուխս պտտվեց... Սակայն թքած ինձ վրա։ Ուշադրություն մի դարձնեք. ես ստում եմ, ես ձեզ արժանի չեմ... Ես ձեզ ամենևին արժանի չեմ... Ձեզ ճանապարհելուց հետո հենց այստեղ ջրանցքից երկու տակառ ջուր կլցնեմ գլխիս, պրծավ-գնաց... Օ, եթե գուք գիտենայիք, թե ես ձեզ երկուսիդ էլ ինչպես եմ սիրում... Մի՛ ծիծաղեք և մի՛ բարկանաք... բոլորի վրա բարկացեք, իսկ ինձ վրա մի՛ բարկանաք։ Ես Ռոդյայի բարեկամն եմ, հետևաբար նաև ձեր բարեկամն եմ։ Ես այդպես եմ ուզում... Ես այդ նախազգում էի... անցյալ տարվանից, այդպիսի մի վայրկյան եղավ... Ասենք ամենևին էլ չէի նախազգում, քանի որ դուք կարծես թե երկնքից ընկաք։ Ես գուցե ամբողջ գիշեր չքնեմ... Այդ Զոսիմովը վերջերս վախենում էր, որ Ռոդյան կխելագարվի... Ահա թե ինչու չի կարելի նրան ջղայնացնել...

— Ինչե՛ր եք ասում,— ճչաց մայրը։

— Մի՞թե բժիշկը ինքն էր այդ ասում,— վախեցած հարցրեց Ավդոտյա Ռոմանովնան։

— Ասում էր, բայց բանը այդպես չէ, բոլորովին այդպես չէ։ Նա դեղ էլ տվեց, դեղափոշի, ես տեսա, իսկ դուք հենց այդ ժամանակ էլ եկաք... Ավելի լավ կլիներ, որ դուք վաղը ժամանեիք։ Լավ է, որ մենք գնացինք։ Իսկ մի ժամ հետո

Զոսիմովը ինքը ձեզ կղեկուցի ամեն ինչի մասին։ Նա հարբած չէ։ Ես էլ հարբած չեմ լինի... Իսկ ինչո՞ւ եմ այսպես խմած. որովհետև անիծվածները ինձ ստիպեցին վեճի բռնվել։ Ես երդվել էի վեճի չբռնվել... Հա՛ անհեթեթություններ են ասում։ Քիչ մնաց տուրուդմբոց սարքեի։ Ես այնտեղ թոզել եմ հորեզբորս իբրև նախագահ... Կհավատա՞ք արդյոք, լիակատար դիմադրություն են պահանջում և դրա մեջ հաճույք են գտնում. ասում են՝ մարդը չպետք է ուրույն դեմք ունենա, ինքն իրեն չպետք է նմանվի։ Նրանք դա ամենաբարձր առաջադիմություն են համարում։ Գոնե իրենց խելքով ստեին, թե չէ...

— Լսեք,— երկչոտ ընդհատեց Պուլչերիա Ալեքսանդրովնան, բայց դա միայն է՛լ ավելի տաքացրեց Ռազումիխինին։

— Դուք ի՞նչ եք կարծում,— գոչեց Ռազումիխինը՝ է՛լ ավելի բարձրացնելով ձայնը,— դուք կարծում եք, թե ես հակառա՞կ եմ նրանց ստելուն։ Դատարկ բան։ Ես ուրում եմ, երբ ստում են։ Ստախոսությունը միակ մարդկային արատությունն է բոլոր օրգանիզմների հանդեպ։ Թե որ ստեցիր, ճշմարտության կհասնես։ Ես մարդ եմ հենց նրա համար, որ ստում եմ։ Առանց նախապես տասնչորս անգամ, գուցե և հարյուր տասնչորս անգամ ստելու ոչ մի ճշմարտության չենք հասել, իսկ դա յուրատեսակ պատվավոր բան է։ Հա՛, իսկ մենք չենք էլ կարողանում մեր խելքով ստել։ Դու ստիր, բայց քո խելքով ստիր, և այս դեպքում ես քեզ կհամբուրեմ։ Չէ՞ որ համարյա ավելի լավ է յուրովի ստել, քան ուրիշի խելքով ճշմարտությունն ասել. առաջին դեպքում դու մարդ ես, իսկ երկրորդ դեպքում հենց միայն թռչուն։ Ճշմարտությունը չի փախչի, իսկ կյանքը կարող է տուժել. այդպիսի օրինակներ եղել են։ Ի՞նչ ենք մենք հիմա։ Մենք բոլորս, առանց բացառության, գիտության, զարգացման, մտածողության, գյուտերի, իդեալների, ցանկությունների, լիբերալիզմի, բանականության, փորձի և ամեն, ամեն, ամեն, ամեն ինչի նկատմամբ դեռ գիմնազիայի առաջին նախապատրաստական դասարանում ենք նստած։ Ուրիշի խելք բանեցնելը դուր է եկել, ու մենք դա սովորություն ենք դարձրել։ Այդպես չէ՞, ճիշտ

չե՞մ ասում,— բղավում էր Ռազումիխինը՝ ցնցելով ու սեղմելով մոր և աղջկա ձեռքերը,— այդպես չէ՞։

— Օ, ասուված իմ, ես չգիտեմ,— ասաց խեղճ Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Այդպես է, այդպես... թեև ես այնքան էլ համաձայն չեմ ձեզ հետ,— լրջորեն վրա բերեց Ավդոտյա Ռոմանովնան և ճչաց, որովհետև Ռազումիխինը այս անգամ է՛լ ավելի պինդ սեղմեց և խիստ ցավեցրեց նրա ձեռքը։

— Այդպե՞ս է, դուք ասում եք այդպե՞ս է։ Դե ուրեմն որանից հետո դուք... դուք...— հիացած գոչեց Ռազումիխինը,— դուք բարության, մաքրության, բանականության և... կատարելության աղբյուր եք։ Տվեք ձեր ձեռքը, տվեք... դուք էլ տվեք ձեր ձեռքը, ես ուզում եմ հիմա այստեղ ծնկաչոք համբուրել ձեր ձեռքերը։

Եվ նա ծունկ չոքեց մայթի վրա, որով այս անգամ բարեբախտաբար ոչ ոք չէր անցնում։

— Վերջ տվեք, խնդրում եմ ձեզ, ի՞նչ եք անում,— բղավեց ծայրահեղորեն անհանգստացած Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Վեր կացեք, վեր կացեք,— ծիծաղում և նույնպես անհանգստանում էր Դունյան։

— Ոչ մի դեպքում, մինչև որ կտաք ձեր ձեռքերը։ Ա՛յ, այդպես, պրծավ գնաց, վեր կացա, գնանք։ Ես խղճուկ դմբո եմ, ես արժանի չեմ ձեզ ու հարբած եմ... Ես արժանի չեմ ձեզ սիրելու, բայց ձեր առաջ ծունկ չոքելը յուրաքանչյուր մեկի պարտականությունն է, եթե նա իսկապես անասուն չէ։ Ես էլ հո ծունկ չոքեցի... Ահա և ձեր հյուրանոցը, ու Ռոդյոնը իրավացի է հենց միայն նրանով, որ վերջերս վռնդեց ձեր Պյոտր Պետրովիչին։ Ախր նա ի՞նչպես համարձակվեց ձեզ տեղավորել այսպիսի հյուրանոցում։ Դա խայտառակություն է։ Գիտե՞ք արդյոք, թե ովքեր են այստեղ գալիս։ Չէ՞ որ դուք հարսնացու եք։ Դուք հարսնացո՞ւ եք, հա՞։ Դե ուրեմն ես ձեզ կասեմ, որ այդ դեպքում ձեր փեսացուն ստոր մարդ է։

— Լսեք, պարոն Ռազումիխին, դուք ձեզ...— ասաց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Այո, այո, դուք իրավացի եք, ես ինձ կորցրել եմ,

ամոթ ինձ,— սթափվեց Ռազումիխինը,— բայց... բայց... դուք չպետք է ինձ վրա բարկանաք, որ ես այսպես եմ խոսում։ Որովհետև ես այդ ասում եմ անկեղծորեն և ոչ թե նրա համար, որ... հըմ... դա ստորություն կլիներ. մի խոսքով, ոչ նրա համար, որ ես ձեզ... Հըմ... դե, թող այդպես էլ լինի, հարկավոր չէ, չեմ ասի, թե ինչի համար, չեմ համարձակվում... Ժամ առաջ, երբ Լուժինը ներս մտավ, մենք բոլորս հասկացանք, որ այդ մարդը մեր հասարակությունից չէ։ Եվ դա ոչ թե այն պատճառով, որ սափրիչի մոտ գանգրացրել էր մազերը, որ նա փորձում էր խելք ցույց տալ, այլ այն պատճառով, որ նա լրտես է և սպեկուլյանտ, որ նա ջհուդ է և խեղկատակ, և դա աչքի է ընկնում։ Դուք կարծում եք, թե նա խելացի՞ է։ Ոչ, նա հիմար է, հիմար։ Մի՞թե նա սազում է ձեզ։ Օ, աստված իմ։ Գիտե՞ք ինչ, տիրուհիներ,— Ռազումիխինը հանկարծ կանգ առավ, երբ նրանք արդեն բարձրանում էին հյուրանոցի սանդուղքով,— այնտեղ, իմ բնակարանում թեև բոլորը հարբած են, բայց բոլորն էլ ազնիվ են, ու թեև մենք ստում ենք, թեև ես էլ եմ ստում, բայց վերջը կհասնենք հշմարտության, որովհետև ազնիվ ճանապարհով ենք գնում, իսկ Պյոտր Պետրովիչը... ազնիվ ճանապարհով չի գնում։ Ես թեև նրանց թունդ հայհոյեցի, բայց բոլորին էլ հարգում եմ. նույնիսկ Ջամեոովին էլ թեև չեմ հարգում, բայց սիրում եմ, որովհետև լակոտ է։ Նույնիսկ այն անասունին, Զոսիմովին էլ եմ սիրում, որովհետև ազնիվ է և գործին հմուտ... Սակայն բավական է, ամեն ինչ ասված է ու ներված։ Ներվա՞ծ է, այդպե՞ս է, դեհ գնանք։ Այս միջանցքը ծանոթ է ինձ, այստեղ եղել եմ. երրորդ համարում մի անգամ սկանդալ եղավ... Հա՛, դուք ո՞րտեղ եք տեղավորվել, ո՞ր համարում։ Ութերո՞րդ։ Լավ։ Գիշերը փակեցեք դուռը, ոչ ոքի ներս մի թողնեք։ Քառորդ ժամից լուր կբերեմ, կես ժամից էլ Զոսիմովի հետ կգամ, այ, կտեսնեք։ Ցե, գնացի։

— Աստված իմ, Դունեչկա, ի՞նչ է լինելու,— ասաց Պուլչերիա Ալեքսանդրովնան՝ սրտահույզ ու երկչոտ դիմելով աղջկան։

— Հանդստացեք, մայրիկ,— պատասխանեց Դունյան

հանելով գլխարկն ու թիկնոցը,— աստված ինքն է այդ պարոնին ուղարկել մեզ, թեև նա եկել է ինչ-որ խրախճանքից։ Հավատացնում եմ ձեզ, որ կարելի է նրա վրա հույս դնել։ Եվ այն ամենը, ինչ որ նա արդեն արել է եղբորս համար...

— Ախ, Դունեչկա, աստված գիտե, կգա, թե ոչ։ Եվ ինչպե՞ս ես սիրտ արեցի թողնել Ռոդյային... բոլորովին, բոլորովին չէի կարծում, թե նրան կգտնեմ այդպիսի վիճակում։ Որքա՞ն դաժան էր նա, ասես մեր հարազատը չլիներ...

Մոր աչքերում արցունքներ երևացին։

— Ոչ, այդպես չէ, մայրիկ։ Դուք լավ չնայեցիք, դուք հա՛ լալիս էիք։ Նա խիստ վշտացած է ծանր հիվանդությունից, ահա և այս բոլորի պատճառը։

— Ախ, այդ հիվանդությունը։ Ի՞նչ է լինելու, ի՞նչ է լինելու։ Ինչպե՞ս էր նա քեզ հետ խոսում, Դունյա,— ասաց մայրը, երկչոտ նայեց աղջկա աչքերին, որպեսզի կարդաց նրա մտքերը, ու արդեն կիսով չափ սփոփվեց, որ Դունյան պաշտպանում է Ռոդյային, հետևաբար ներել է եղբորը։ — Ես հավատացած եմ, որ նա վաղը խելքի կգա,— ավելացրեց մայրը՝ աղջկանից մինչև վերջ խոսք քաշելու համար։

— Իսկ ես այնպես եմ հավատացած, որ նա վաղը նույնպես կխոսի... այդ մասին,— կտրուկ ասաց Ավդոտյա Ռոմանովնան, և իհարկե դա խորամանկություն էր, որովհետև այստեղ կար մի մոմենտ, որի մասին Պուլլխերիա Ալեքսանդրովնան հիմա խիստ վախենում էր խոսել։ Դունյան մոտեցավ ու համբուրեց մորը։ Սա էլ պինդ, լուռ գրկեց նրան։ Այնուհետև նստեց՝ անհանգստությամբ սպասելով Ռազումիխինի վերադարձին ու սկսեց երկչոտ հետամտել աղջկան, որը ձեռքերը կրծքին խաչած, նույնպես սպասողական վիճակում, իր մտքերով տարված, սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։ Ավդոտյա Ռոմանովնան սովորություն ուներ այդպես մտազբաղ քայլել անկյունից անկյուն, ու մայրը միշտ էլ մի տեսակ վախենում էր այդ պահին խանգարել նրա մտորումները։

Ռազումիխինը, իհարկե, ծիծաղելի էր հարբած վիճակում Ավդոտյա Ռոմանովնայի նկատմամբ հանկարծակի բռնկված

իր կրքով, սակայն նայելով Ավդոտյա Ռոմանովնային, մանավանդ հիմա, երբ նա ձեռքերը կրծքին խաչած, տխուր ու մտազբաղ քայլում էր սենյակում, շատերը գուցե ներեին Ռազումիխինին, էլ չխոսենք վերջինիս տարօրինակ վիճակի մասին։ Ավդոտյա Ռոմանովնան բավականաչափ սիրուն էր, բարձրահասակ, զարմանալի գեղակազմ, ուժեղ, ինքնավստահ, որ արտահայտվում էր նրա յուրաքանչյուր շարժմամբ և որը, սակայն, բնավ չէր նսեմացնում նրա շարժումների մեղմությունն ու նրբագեղությունը։ Դեմքով նա նման էր եղբորը, բայց կարելի էր նրան նույնիսկ գեղեցկուհի անվանել։ Նրա մազերը մուգ-շեկլիկ էին, մի քիչ ավելի բաց գույնի, քան եղբոր մազերը. աչքերը գրեթե ոև էին, ճառագայթող, հպարտ և միևնույն ժամանակ երբեմն, որոշ պահերի, արտասովոր բարի։ Նա գունատ էր, բայց ոչ հիվանդագին գունատ. նրա դեմքը փայլում էր թարմությամբ և առողջությամբ։ Բերանը մի քիչ փոքր էր, իսկ թարմ ու ալ կարմիր ստորին շրթունքը կդակի հետ մեկտեղ մի քիչ դուրս էր ցցված, այդ գեղեցիկ դեմքի միակ անկանոնությունը, որը, սակայն, առանձնահատուկ բնորոշություն և, ի միջի այլոց, կարծես գոռոզություն էր արտահայտում։ Նրա դեմքի արտահայտությունը միշտ ավելի լուրջ էր և խոհուն, քան ուրախ, դրա փոխարեն ինչպե՞ս էր սազում ժպիտը այդ դեմքին, ինչպե՞ս էր նրան սազում ուրախ, երիտասարդական, անկեղծ ծիծաղը։ Հասկանալի է, որ տաքարյուն, սրտաբաց, պարզամիտ, աղնիվ, դյուցազնաբար ուժեղ և հարբած Ռազումիխինը, որ երբեք այդպիսի բան չէր տեսել, առաջին իսկ հայացքից կորցրեց գլուխը։ Ավելացնենք նաև, որ նա պատահաբար առիթ ունեցավ առաջին անգամ Դունյային տեսնելու այն հիանալի պահին, երբ Դունյան համակված էր եղբորը տեսնելու բերկրանքով և վերջինիս նկատմամբ տածած սիրով։ Ռազումիխինը հետո տեսավ, թե ինչպես Դունյայի ստորին շրթունքը ցնցվեց զայրույթից, իբրև պատասխան եղբոր հանդուգն ու ապերախտորեն դաժան հրամաններին, տեսավ, ու անկարող եղավ չհրապուրվել։

Ռազումիխինը, սակայն, ճշմարտությունն ասաց, երբ ժամ առաջ սանդուղքի վրա հարբած վիճակում բերանից

Բոցրեց, թե Ռասկոլնիկովի տարօրինակ տանտիրուհին, Պրասկովյա Պավլովնան իրեն, Ռազումիխինին կխանդի ոչ միայն Ավդոտյա Ռոմանովնային, այլև անշուշտ հենց Պուլխերիա Ալեքսանդրովնային։ Չնայելով, որ Պուլխերիա Ալեքսանդրովնան արդեն քառասուներեք տարեկան էր, նրա դեմքը դեռ պահպանել էր իր առաջվա գեղեցկության մնացորդները, ու բացի դրանից, նա իր տարիքից շատ ավելի փոքր էր թվում, որ համարյա միշտ հատուկ է այն կանանց, որոնք մինչև պառավելը պահպանում են ոգու պայծառությունը, տպավորությունների թարմությունը և սրտի ազնիվ, անաղարտ ջերմությունը։ Փակագծերի մեջ ասենք, որ այդ ամենը պահպանելը նույնիսկ պառավ հասակում էլ գեղեցկությունը չկորցնելու միակ միջոցն է։ Նրա մազերը արդեն սկսել էին սպիտակել և նոսրանալ, աչքերի շուրջը վաղուց փոքրիկ, ճառագայթաձև կնճիռներ էին երևացել, այտերը փոս էին ընկել ու թառամել հոգսից և վշտից, և այնուամենայնիվ այդ դեմքը գեղեցիկ էր։ Դա Դունեչկայի դիմանկարն էր, եթե վերջինս նկարվեր քսան տարուց հետո, և բացի դրանից, Պուլխերիա Ալեքսանդրովնայի ստորին շրթունքը այնպես դուրս ընկած չէր, ինչպես Դունեչկայինը։ Պուլխերիա Ալեքսանդրովնան զգայուն էր, բայց ոչ քաղցր-մեղցրության չափ, երկչոտ էր ու զիջող, բայց մինչև որոշ աստիճան. նա կարող էր շատ բան զիջել, շատ բաների համաձայնել, եթե նույնիսկ դա հակասեր իր համոզմունքին, սակայն միշտ էլ նրա մեջ ազնվության, սկզբունքների և ծայրահեղ համոզմունքների այնպիսի գիծ էր լինում, որից այն կողմ նա ոչ մի դեպքում չէր կարող անցնել։

Ռազումիխինի գնալուց ուղիղ քսան րոպե անց լսվեց դռան երկու կամացուկ, բայց հապճեպ թակոց. նա վերադարձավ։

— Ներս չեմ գա, ժամանակ չունեմ,— հապճեպ ասաց նա՝ երբ գուռը բացեցին,— շատ խոր, հրաշալի, հանգիստ քնած է, ասաված տա, որ տասը ժամ քնի։ Նաստասյան նրա մոտ է, պատվիրեցի չհեռանալ մինչև իմ գալը։ Հիմա կբերեմ Զոսիմովին, նա ձեզ կզննի, իսկ հետո դուք էլ պառկեք քնելու. տեսնում եմ, որ չափից դուրս հոգնած եք։

Ու Ռազումիխինը վազեվազ գնաց միջանցքով։

— Ինչպիսի՞ ճարպիկ և... նվիրված երիտասարդ է,— բացականչեց չափազանց ուրախացած Պուլլիերիա Ալեքսանդրովնան։

— Կարծես թե շատ լավ անձնավորություն է,— մի փոքր շիկնելով պատասխանեց Ավդոտյա Ռոմանովնան ու դարձյալ սկսեց սենյակով մեկ ետ ու առաջ քայլել։

Համարյա մի ժամ հետո միջանցքից քայլեր լսվեցին ու դուռը ուրիշ կերպ ծեծվեց։ Մայրն ու աղջիկը սպասում էին՝ այս անգամ միանգամայն հավատալով Ռազումիխինի խոստմանը. և իսկապես, նա բերեց Զոսիմովին։ Զոսիմովը անմիջապես համաձայնել էր թողնել խնջույքը և այցելել Ռասկոլնիկովին, բայց կանանց մոտ եկել էր դժկամորեն և մեծ կասկածամտությամբ, չվստահելով հարբած Ռազումիխինին։ Սակայն նրա ինքնասիրությունը իսկույն հանգստացավ և նույնիսկ շոյվեց. նա հասկացավ, որ իսկապես իրեն սպասում էին որպես գուշակի։ Նա նստեց ուղիղ տասը բոպե և կարողացավ միանգամայն սփոփել ու հանգստացնել Պուլլիերիա Ալեքսանդրովնային։ Նա խոսում էր արտասովոր կարեկցությամբ, բայց կուսով և մի տեսակ լրջորեն, ճիշտ այնպես, ինչպես քսանչորս տարեկան այդ բժիշկը կխոսեր կարևոր կոնսուլտացիայի ժամանակ, ու ոչ մի բանով չշեղվեց տվյալ խնդրից և մոր ու աղջկա հետ ավելի մոտիկ ու մասնավոր հարաբերություններ սկսելու ամենաչնչին ցանկություն անգամ չցուցաբերեց։ Դեռ ներս մտնելիս նկատելով Ավդոտյա Ռոմանովնայի կուրացուցիչ գեղեցկությունը, Զոսիմովը աշխատեց այցելության ամբողջ ժամանակվա ընթացքում բոլորովին չնայել նրան, ու միայն Պուլլիերիա Ալեքսանդրովնայի հետ էր խոսում։ Այս ամենը նրան արտակարգ ներքին բավարարություն էր պատճառում։ Հիվանդի մասին նա ասաց, որ նրա դրությունը այդ պահին միանգամայն բավարար է։ Ըստ իր դիտողություններիի, բացի նրա կյանքում վերջին ամիսներին եղած նյութական վատ պայմաններից, հիվանդությունը ունի նաև բարոյական որոշ պատճառներ, «այսպես ասած՝ բազմաթիվ, բարդ, բարոյական և նյութական ազդեցությունների, հուզումների, վախի,

հոգսերի, որոշ գաղափարների և այլ երևույթների հետևանք է...»։ Անցողակի նկատելով, որ Ավդոտյա Ռոմանովնան սկսել է առանձնապես ուշադիր լսել, Զոսիմովը մի քիչ ավելի երկար խոսեց այդ թեմայի շուրջ։ Իսկ Պուլլխերիա Ալեքսանդրովնայի այն հուզումնալի ու երկչոտ հարցին, թե այդ ի՞նչ կասկածներ կան «իբր թե խելագարվելու մասին», Զոսիմովը հանգիստ ու անկեղծ քմծիծաղով պատասխանեց, որ իր խոսքերը խիստ չափազանցված են, որ, իհարկե, հիվանդի մեջ նկատելի է ինչ-որ մի գաղտնի միտք, մենամոլության ինչ-որ նշան, որ ինքը Զոսիմովը հիմա առանձնապես հետամտում է բուժագիտության չափազանց հետաքրքիր այդ բաժնին, բայց չէ՞ որ պետք է հիշել, որ համարյա մինչև այսօր հիվանդը գառանցանքի մեջ է եղել, և... և, իհարկե, հարազատների ժամանումը նրան կամրապնդի, կսփոփի ու փրկարար ազդեցություն կունենա, «եթե միայն կարելի լինի խուսափել նոր, առանձնահատուկ հուզումներից», լուրջ տոնով ավելացրեց Զոսիմովը։ Այնուհետև վեր կացավ, քաղաքավարությամբ ու սիրալիր գլուխ տվեց՝ լսելով Ավդոտյա Ռոմանովնայի օրհնանքները, շնորհակալության ջերմ խոսքերը, աղերսանքները, ու սեղմելով անսպասելիորեն նույնիսկ իրեն մեկնված նրա ձեռքը, դուրս ելավ՝ չափազանց գոհ իր այցելությունից և, առավել ևս՝ ինքն իրենից։

— Վաղը կխոսենք. հենց հիմա անպայման պառկեցեք քնելու,— ասաց Ռազումիխինը՝ գնալով Զոսիմովի հետ։— Վաղը որքան կարելի է շուտ ես կգամ ձեզ մոտ և լուր կբերեմ։

— Սակայն ինչպիսի՜ չքնաղագեղ աղջիկ է այդ Ավդոտյա Ռոմանովնան,— համարյա շրթունքները լիզելով, ասաց Զոսիմովը, երբ երկուսով դուրս ելան փողոց։

— Չքնաղագե՞ղ է, դու ասացիր չքնաղագե՞ղ է,— գոռաց Ռազումիխինը ու հանկարծ հարձակվեց Զոսիմովի վրա, բռնեց նրա կոկորդից։ — Եթե դու երբևէ համարձակվես... Հասկանո՞ւմ ես, հասկանո՞ւմ ես,— բղավում էր նա՝ օձիքից բռնած ցնցելով նրան ու սեղմելով պատին,— լսեցի՞ր։

— Թող է, հարբած սատանա,— պաշտպանվում էր Զո-

սիմովը, ու հետո, երբ ազատվեց Ռազումիխինի ձեռքերից, ակնապիշ նայեց վերջինիս և հանկարծ փառ-փառ ծիծաղեց։ Ռազումիխինը ձեռքերը կախած կանգնել էր նրա առաջ, մրոտայլ ու լուրջ մտքերով տարված։

— Իհարկե, ես ավանակ եմ,— ասաց նա ամպի պես մռայլ դեմքով,— բայց չէ՞ որ... դու նույնպես ավանակ ես։

— Օ, ոչ, սիրելիս, բնավ այդպես չէ։ Ես հիմարություններ չեմ երազում։

Նրանք լուռ քայլեցին ու երբ մոտեցան Ռասկոլնիկովի բնակարանին, խիստ մտահոգված Ռազումիխինը ընդհատեց լությունը։

— Լսիր,— ասաց նա Զոսիմովին,— դու լավ տղա ես, բայց դու, բացի քո բոլոր վատ հատկություններից, նաև անառակի մեկն ես, այն էլ կեղտոտ անառակներից մեկը, ես այդ գիտեմ։ Դու չղայնոտ, թույլ և անպետք ես, դու ճարպակալել ես և ոչ մի բանից չես կարող հրաժարվել, իսկ դա ես կեղտ եմ անվանում, որովհետև ուղղակի կեղտություն է հասցնում։ Դու այնքան ես քեզ լրջացրել, որ, ճիշտն ասած, ես բոլորովին չեմ հասկանում, թե ինչպես ես կարողանում այդ բոլորով հանդերձ լավ ու նույնիսկ անձնուրաց բժիշկ լինել։ Փետրաներքնակի վրա՞ է քնում (բժիշկ է, հա՞-հա), իսկ գիշերները վեր է կենում հիվանդին օգնության հասնելու։ Մի երեք տարի հետո դու այլևս վեր չես կենա հիվանդին այցելելու համար... Այ թե ինչ, սատանա, բանը այդ չէ. դու այսօր կգիշերես տանտիրուհու բնակարանում (նրան զոռով համոզեցի), իսկ ես խոհանոցում. ահա ձեզ հեշտությամբ ծանոթանալու առիթ։ Միայն թե ուրիշ բան մտքովդ չանցնի։ Այստեղ գրա նշույլն անգամ չկա...

— Մտքովս ամենևին էլ այդ չի անցնում։

— Նա, սիրելիս, ամոթխած է, լռակյաց, քաշվող, մոլի ողջախոհ, ու այդ բոլորով հանդերձ հա ախ ու վախ է անում, հալվում մոմի պես, ուղղակի հալվում։ Աղաչիր ինձ նրանից, ի սեր աշխարհիս բոլոր սատանաների։ Շատ սիրունիկն է... Կհատուցեմ, գլխովս կհատուցեմ։

Զոսիմովը էլ ավելի փառ-փառ ծիծաղեց։

— Դուրս ես տալիս, էլի՛։ Նա ինչի՞ս է պետք։

— Հավատացնում եմ, դիխացավանքը քիչ կլինի, որևէ բան դուրս տուր, ինչ որ ուզենաս, միայն թե նստիր կողքին ու խոսիր։ Դու հո բժիշկ ես, սկսիր բուժել որևէ բանից։ Երդվում եմ, որ չես ղղջա։ Նրա տանը գաշնամուր կա. դու հո գիտես, ես մի քիչ ծնդծնգացնում եմ. մի երգ գիտեմ, խակիան ռուսական երգ, «Աղի արցունք եմ թափում»... Նա լավ երգեր է սիրում. հա՛, բանը երգից էլ սկսվեց. դու հո գաշնամուր նվագելու մեջ վիրտուոզ ես, վարպետ ես, Ռուբինշտեյն ես... Հավատացնում եմ, որ չես ղղջա։

— Դու նրան որևէ խոստո՞ւմ ես տվել, ինչ է։ Ստորագրությո՞ւն ես տվել։ Գուցե խոստացել ես ամուսնանալ, հա՞...

— Ոչ, ոչ, այդպիսի բան չկա։ Նա ամենևին էլ այդ տեսակ կին չէ. Ջերարովը փորձեց կապվել...

— Դե ուրեմն թող նրան։

— Ախր չի կարելի թողնել։

— Ինչո՞ւ չի կարելի։

— Այո, չի կարելի, ցրծավ-գնաց, խրվել եմ բարեկամս։

— Էլ ինչո՞ւ էիր նրան հրապուրում։

— Ես ամենևին էլ չէի հրապուրում, գուցե նույնիսկ ինքըս եմ հրապուրված իմ հիմարության պատճառով, իսկ նրա համար բոլորովին միևնույն է՝ ես լինեմ թե դու, միայն թե որևէ մեկը նստի կողքին և զբաղեցնի նրան։ Դիտե՞ս ինչ, աղբերացու... ը-ը... ո՞նց ասեմ. հա՛, դու մաթեմատիկա լավ գիտես ու հիմա էլ զբաղվում ես, դա հայտնի է ինձ... սկսիր նրա հետ ինտեգրալ հաշիվ անցնել, հոգիս վկա չեմ կատակում, լուրջ եմ ասում, նրա համար բոլորովին միևնույն է. նա կնայի քեզ և ախ ու վախ կանի. և այդպես մի ամբողջ տարի։ Ի միջի այլոց ես շատ երկար, երկու օր անընդհատ նրա հետ խոսում էի պարոնների պրուսական ապարանքների մասին (որովհետև էլ ուրիշ ի՞նչ բաների մասին կարելի է նրա հետ խոսել), հենց միայն հոգոց էր հանում և վիճում։ Սիրո մասին չխոսես, ջղաձգության չափ ամաչկոտ է, բայց և այնպես ցույց տուր, թե չես կարող նրանից հեռանալ և ուրիշ ոչինչ։ Նրա մոտ հարմարավետ է. ոնց

որ քո տանը լինես. կարդա, նստիր, պառկիր, գրիր... Նույնիսկ կարելի է համբուրել զգուշությամբ...

— Ախր նա իմ ինչի՞ն է պետք։

— Է՛հ, ոչ մի կերպ չեմ կարողանում դա քեզ բացատրել։ Գիտե՞ս, դուք երկուսդ միանգամայն հարմար եք միմյանց։ Ես առաջ էլ այս կապակցությամբ քո մասին էի մտածում... Չէ՞ որ վերջը դու այդ ես անելու։ Վաղ թե ուշ, մի՞թե դա միևնույն չէ քեզ համար։ Այստեղ, բարեկամս, խնդիրը վերաբերում է փափլիկ փետրաներբնակին և ոչ միայն դրանում։ Այստեղ հրապուրիչ բան կա. այստեղ վերջին կայանն է, խարիսխը, խաղաղ հանգրվանը, երկրի պորտը, աշխարհիս եռաձկնային հիմքը, բիշինների, յուղալի կարկանդակների, իրիկնային ինքնաեռի, մեղմ թառանչների և տաք կոֆտաների, փափլիկ պառկելատեղերի էսենցիան, և ահա դու կարծես մեռար, բայց միևնույն ժամանակ նաև կենդանի ես՝ միանգամից երկու օգուտ։ Էհ, աղբերս, բավական դուրս տվի, քնելու ժամանակն է։ Լսիր, դիշերը ես երբեմն արթնանում եմ. կգնամ հիվանդին նայելու։ Ոչինչ, դատարկ բան է, ամեն ինչ լավ է։ Դու էլ առանձնապես մի անհանգստանա, եթե ուզենաս, մի անգամ էլ դու գնա նայելու։ Հենց որ մի բան նկատես, օրինակ՝ պառանցանք կամ տաքություն, կամ որևէ ուրիշ բան, ինձ արթնացրու։ Սակայն այդ չի լինի...

— II —

Մյուս օրը ժամը ութին Ռազումիխինը արթնացավ մտահոգված և լրջախոհ վիճակում։ Այդ առավոտ հանկարծ նրա մեջ բազմաթիվ նոր և չնախատեսված տարակուսանքներ առաջացան։ Առաջ նա չէր էլ երևակայում, որ երբևէ այդպիսի վիճակում կարթնանա։ Մինչև վերջին մանրամասնությունները նա հիշում էր ամենը, ինչ որ եղել էր նախորդ օրը, ու հասկանում էր, որ իր հետ ինչ-որ արտասովոր բան է կատարվել, որ ինքը ստացել է մինչև այժմ իրեն խորթ անհայտ մի տպավորություն, որը նման չէ առաջվա բոլոր տպավորություններին։ Միևնույն ժամանակ նա պարզ գիտակցում էր, որ իր գլխում բռնկված երազանքը բոլորովին

անիրագործելի է, այն աստիճան անիրագործելի, որ ինքը նույնիսկ ամաչեց դրանից և շուտով անցավ մյուս, ավելի կենսական հոգսերին ու տարակուսանքներին, որոնք նրան ժառանգություն էին մնացել «երիցս անիծված նախորդ սրվանից»։

Ամենասարսափելին, որ վերհիշում էր նա, դա այն էր, որ ինքը երեկ «ստոր և գարշելի էր» ոչ միայն նրանով, որ հարբած էր, այլ նրանով, որ ցգտվելով աղջկա դրությունից, հիմար ու հապճեպ խանդից դրդված, նրա ներկայությամբ հայհոյում էր նրա փեսացուին, չգիտենալով ոչ միայն նրանց փոխադարձ հարաբերությունները, այլև կարգին չճանաչելով այդ մարդուն։ Եվ ինքը ի՞նչ իրավունք ուներ այդպես հապճեպ և առանց մտածելու դատողություններ անել նրա մասին և ո՞վ էր իրեն խնդրել, որ դատավոր լինի։ Մի՞թե այդպիսի աղջիկը, ինչպիսին Ավդոտյա Ռոմանովնան է, կարող է փողի համար հանձնվել անարժան մարդուն։ Ուրեմն այդ մարդն էլ արժանիքներ ունի։ Հյուրանո՞ց։ Ախր նա ի՞նչ իմանար, որ այդ տեսակ հյուրանոց է։ Չէ՞ որ նա բնակարան է պատրաստում... Թյո՛ւ, ինչպիսի՜ ստորություն է այս ամենը։ Եվ ի՞նչ արդարացում է դա, որ ինքը հարբած էր։ Հիմար պատրվակ, որ իրեն է՛լ ավելի է ստորացնում։ Գինու մեջ ճշմարտություն կա, և ահա այդ ճշմարտությունը ամբողջովին արտահայտվեց, «այսինքն՝ արտահայտեց իր նախանձոտ, կոպիտ սրտի ամբողջ կեղտը»։ Եվ մի՞թե իրեն, Ռազումիխինին, գեթ որևէ չափով թույլատրելի է այդպիսի նրազանք։ Ո՞վ է ինքը այդպիսի աղջկա համեմատությամբ, ինքը, երեկվա հարբած խելառը և պարծենկոտը։ «Մի՞թե հնարավոր է այդպիսի ցինիկ և ծիծաղելի համեմատությունը»։ Ռազումիխինը թունդ կարմրեց այդ մտքից ու հանկարծ հակառակի պես հենց այդ ակնթարթում պարզ վերհիշեց, թե ինչպես երեկ սանդուղքի վրա նրանց ասել էր, որ տանտիրուհին իրեն կխանդի Ավդոտյա Ռոմանովնային... այդ արդեն անտանելի էր։ Նա բռունցքով ուժգնությամբ խրփեց խոհանոցի վառարանին, վնասեց ձեռքը և դուրս դցեց աղյուսներից մեկը։

«Իհարկե, մի բոպե անց ինքնաստորացման ինչ-որ զգացումով փնթփնթում էր նա քթի տակ, իհարկե, ոչ հիմա, ոչ

էլ երբեք հնարավոր չէ քավել ու արդարացնել այդ բոլոր գարշելիությունները... հնարավոր կարիք էլ չկա մտածել այդ մասին, ուստի և պետք է ներկայանամ լուռ և... կատարեմ պարտականություններս... նույնպես լուռ և... ներողություն չխնդրեմ, ոչինչ չասեմ և... և իհարկե, հիմա ամեն ինչ կորած էր։

Այնուամենայնիվ հագնվելիս նա սովորականից ավելի մանրակրկիտորեն գնեց իր կոստյումը։ Ուրիշ կոստյում չուներ, իսկ եթե ունենար էլ, դուցե և չհագներ. «դիտմամբ չէի հագնի»։ Բայց, համենայն դեպս, չի կարելի ցինիկ լինել, կեղտոտ ու փնթի մնալ. նա իրավունք չունի վիրավորելու ուրիշների զգացմունքները, մանավանդ որ նրանք, այդ ուրիշները իր կարիքն են զգում և իրենք են նրան իրենց մոտ կանչում։ Նա խոզանակով մանրակրկիտորեն մաքրեց հագուստը։ Սպիտակեղենը միշտ էլ հանդուրժելի էր լինում. այդ կողմից նա առանձնապես մաքրասեր էր։

Այդ առավոտ նա խնամքով լվացվեց։ Նաստասյայից օճառ վերցնելով, լվաց մազերը, պարանոցը և մանավանդ ձեռքերը։ Իսկ երբ հարց ծագեց՝ արդյո՞ք պետք է սափրվել, թե՞ ոչ (Պրասկովյա Պավլովնայի մոտ կային հիանալի ածելիներ, որոնք մնացել էին հանգուցյալ պարոն Զարնիցինի մահից հետո), ապա այդ հարցը իսկույն լուծվեց բացասական իմաստով. «Թող մորուքս այսպես էլ մնա, թե չէ կմբոտածեն, որ սափրվել եմ... դուր գալու համար։ Ոչ մի դեպքում չեմ սափրվի»։

«Եվ... որ գլխավորն է, ես այնպե՞ս կոպիտ եմ, կեղտոտ, վարվեցողությունս պանդոկային է և... և ասենք թե ես գիտեմ, որ ինքս էլ հո մի քիչ կարգին մարդ եմ... բայց այստեղ ի՞նչ կա հպարտանալու, որ կարգին մարդ եմ։ Ամեն մեկը պետք է կարգին մարդ լինի, ու դեռ դրանից էլ ավելի, և... և այնուամենայնիվ (ես այդ հիշում եմ) ես էլ այնպիսի բաներ եմ արել, որոնք թեպետև անպատվաբեր չեն, բայց և այնպես... Հապա ինչպիսի՞ մտածմունքներով եմ տարվել. Հը՛մ... և այս ամենը արի ու համեմատիր Ավդոտյա Թոմանովնայի հետ։ Էհ, գրողը տանի, թող այդպես լինի։ Հենց դիտմամբ կլինեմ այսպես կեղտոտ, պանդոկային, ու թքած ամեն բանի վրա, է՛լ ավելի այսպես կլինեմ...»

Ռազումիխինը այսպիսի մենախոսություններով էր տարված, երբ ներս մտավ Զոսիմովը, որը գիշերել էր Պրասկովյա Պավլովնայի բնակարանում, դահլիճում։

Նա տուն էր գնալու և մինչ այդ շտապեց նայել հիվանդին։ Ռազումիխինը նրան ասաց, որ հիվանդը արշամկան պես քնած է։ Զոսիմովը կարգադրեց չարթնացնել, մինչև որ հիվանդը ինքը արթնանա։ Խոստացավ գալ տասնմեկին։

— Եթե միայն նա տանը լինի,— ավելացրեց Զոսիմովը։ — Փո՛ւ, գրողը տանի, իմ հիվանդը ինձ չի ենթարկվում, դե արի ու բուժիր։ Գիտես, ասա՞ է գնալու նրանց մոտ, թե՞ նրանք են այստեղ գալու։

— Ես կարծում եմ, որ նրանք, ինչպես, կխոսեն իրենց ընտանեկան գործերի մասին,— պատասխանեց Ռազումիխինը՝ հասկանալով հարցի նպատակը։ Ես կգնամ։ Հասկանալի է, որ դու, որպես բժիշկ, ավելի շատ իրավունքներ ունես, քան թե ես։

— Ես հո խոստովանահայր չե՞մ. կգամ ու կգնամ, առանց այդ էլ շատ գործեր կան։

— Ինձ մի բան է անհանգստացնում,— նոթերը կիսելով ընդհատեց Ռազումիխինը,— երեկ ես նրա հետ տուն գալու ժամանակ ճանապարհին զանազան հիմարություններ դուրս տվի... այլ և այլ բաներ... Ի միջի այլոց ասացի, որ դու վախենում ես, թե իբր նա... հակված է խելագարության...

— Դու կանանց մոտ էլ երեկ այդպիսի բան դուրս տվիր։

— Գիտեմ, որ դա հիմարություն էր. ուզում ես խփիր։ Բայց ասա, արդյո՞ք այդ մասին դու մի որևէ հաստատուն միտք ես ունեցել։

— Ասում եմ՝ դա անհեթեթություն է, ի՞նչ հաստատուն միտք։ Դու ինքդ էիր նրան նկարագրում իբրև մենամոլի, երբ ինձ նրա մոտ էիր բերում... Հը՛մ, մենք ինքներս երեկ կրակի վրա յուղ լցրինք, այսինքն՝ դու այդպես վարվեցիր նկարագրի մասին քո պատմածներով... Է՜վ խոսակցություն է, երբ գուցե նա ինքը գրանից է խելքը թացրել։ Օ, եթե ես ստույգ գիտենայի, թե այն ժամանակ ինչ էր կատարվել աստիկանությունն գրառենյակում և ինչպես մի ոմն սրիկա այդ

կասկածանքով վիրավորել էր նրան... Հը՛մ... Երեկ այդպիսի խոստակցություն թույլ չէի տա։ Ախր, այդ մենամոլները լաթիլը օվկիանոս են դարձնում, չեղած բաներ են մոգոնում ... Որքան ես հիշում եմ, երեկ Զամետովի պատմածից ինձ համար պարզվեց գործի կետը։ Եվ ի՞նչ։ Ես մի դեպք գիտեմ, Բե ինչպես քառասունամյա մի հիպոխոնդրիկ, անկարող լինելով տանել ութ տարեկան մի տղայի ամենօրյա ծաղրանքները սեղանի շուրջը, մորթեց նրան։ Իսկ այստեղ, ամբողջովին ցնցոտիապատի մեկը, թաղամասի լկտի հսկիչը, սկսված հիվանդությունը և այդպիսի կասկածա՞նք։ Ջղագրգիռ հիպոխոնդրիկի մա՞սին։ Կատաղի, բացառիկ սնափառությամբ հանդե՞ր։ Գուցե և հենց այստեղ է հիվանդության ամբողջ մեկնակետը։ Էհ, գրողը տանի... Ի միջի այլոց այդ Զամետովը իրոք հաճելի տղա է, միայն թե... հը՛մ... երեկ իզուր պատմեց այդ ամենը։ Սարսափելի շատախոս է։

— Ո՞ւմ է պատմել որ։ Ինձ ու քեզ։

— Նաև Պորֆիրիին։

— Հետո ի՞նչ, որ նրան էլ է պատմել։

— Հա՛, դու որևէ ազդեցություն ունե՞ս նրանց՝ մոր և բրոջ վրա։ Այսօր պետք է դրույց վարվել հիվանդի հետ։

— Նրանք իրար հետ համաձայնության կգան,— դժկամ պատասխանեց Ռազումիխինը։

— Ինչո՞ւ է Ռոդյան այդպես հարձակվում Լուժինի վրա։ Լուժինը հո փողով մարդ է, աղջկա համար էլ կարծես թե ղզվելի չէ... ու չէ՞ որ նրանք ոչինչ չունեն։

— Էլ ի՞նչ ես խոսք դուրս քաշում,— ջղայնացած գոչեց Ռազումիխինը,— ես ի՞նչ իմանամ, ունեն, թե չունեն։ Ինքդ հարցրու, գուցե և իմանաս...

— Փո՛ւ, դու երբեմն ինչքա՞ն հիմար ես լինում։ Երեկվա հարբածությունդ դեռ չի անցել... Ցտեսություն. քո Պրասկովյա Պավլովնային իմ կողմից շնորհակալություն հայտնիր գիշերելու համար։ Փակվեց իր սենյակում, դուռն ետևից էլ չպատասխանեց իմ բարևին, ժամը յոթին էր վեր կացել, նրա համար խոհանոցից, միջանցքով ինքնաեռ տարան... Ես չարժանացա նրա երեսը տեսնելուն...

Ժամը ութին ինքն Ռազումիխինը մտավ Բակալեևի հյուրանոցը։ Մայր ու աղջիկ վաղուց հիստերիկ անհամբերու-

թյամբ սպասում էին նրան։ Նրանք վեր էին կացել ժամը յոթից կամ նույնիսկ ավելի վաղ։ Ռազումիխինը ներս մտավ գիշերվա պես մթնած դեմքով, անհարմար գլուխ տվեց, որի համար իսկույն բարկացավ, ինքն իր վրա։ Առես գլուխը տեղը չէր։ Պուլլխերիա Ալեքսանդրովնան անմիջապես նետվեց նրա կողմը, վերցրեց նրա ձեռքերը և քիչ մընաց դրանք համբուրեր։ Ռազումիխինը երկչոտ նայեց Ավդոտյա Ռոմանովնային. բայց վերջինիս գոռոզ դեմքին էլ այդ րոպեին երախտագիտության ու բարեկամության այնպիսի արտահայտություն կար, այնպիսի լիակատար և Ռազումիխինի համար անսպասելի հարգանք էր նկատվում (հեգնական հայացքների և ակամա, վատ թաքցրած արհամարհանքի փոխարեն), որ նա իրեն ավելի լավ կզգար, եթե իրեն նախատինքով ընդունեին, թե չէ նա իրեն խիստ անհարմար զգաց։ Բարեբախտաբար խոստկության համար պատրաստի թեմա կար, և նա իսկույն սեթ կառչեց այդ թեմայից։

Լսելով, որ «դեռ չի արթնացել, բայց ամեն ինչ հիանալի է», Պուլլխերիա Ալեքսանդրովնան հայտարարեց, որ դա շատ լավ է, որ «իրեն խիստ, շատ խիստ հարկավոր է նախապես խոսել նրա մասին»։ Հետևեց թեյի հարցը և այն միասին խմելու հրավերը, նրանք դեռ թեյ չէին խմել՝ սպասելով Ռազումիխինին։ Ավդոտյա Ռոմանովնան զանգահարեց, հայտնվեց կեղտոտ, ցնցոտիավոր սպասավորը, ու նրան հրամայվեց թեյ բերել, որը, վերջապես, մատուցվեց, բայց այնպիսի կեղտոտ պարագաներով և այնպես անվայելուչ, որ կանայք ամաչեցին։ Ռազումիխինը փորձեց տաքացած վատաբանել հյուրանոցը, բայց, հիշելով Լուժինին, լռեց, շփոթվեց ու խիստ ուրախացավ, երբ Պուլլխերիա Ալեքսանդրովնան, վերջապես, սկսեց անընդհատ իրար ետևից հարցեր տալ։

Պատասխանելով հարցերին, Ռազումիխինը խոսեց երեք քառորդ ժամ։ Նրան շարունակ ընդհատում և նորանոր հարցեր էին տալիս։ Նա կարողացավ հաղորդել Ռոդյոն Ռոմանովիչի կյանքի վերջին տարվա իր գիտեցած բոլոր գլխավոր ու կարևոր փաստերը՝ վերջում հանգամանորեն պատմելով նրա հիվանդության մասին։ Սակայն նա շատ բան բաց թո-

ղեց, ինչ որ անտեղի էր համարում. ի միջի այլոց ոչինչ չասաց ոստիկանության գրասենյակում տեղի ունեցած դեպքի և դրա բոլոր հետևանքների մասին։ Նրա պատմածը ագահությամբ էին լսում. բայց երբ նա մտածում էր, որ արդեն վերջացրել է ու բավարարել իր ունկնդիրներին, բանից դուրս եկավ, որ նրանց համար ինքը կարծես դեռ չի էլ սկսել իր պատմությունը։

— Ասացեք, ասացեք ինձ, ի՞նչ է ձեր կարծիքը... ա՜խ, ներեցեք, ես մինչև հիմա դեռ չգիտեմ ձեր անունը,— հապճեպորեն վրա էր տալիս Պուլչերիա Ալեքսանդրովնան։

— Դմիտրի Պրոկոֆիչ։

— Հա՜, Դմիտրի Պրոկոֆիչ, ես շատ, շատ կուզենայի իմանալ... թե առհասարակ... նա այժմ ինչպես է նայում իրերին, այսինքն, հասկացեք ինձ, ինչպես ասեմ ձեզ, այսինքն՝ ավելի լավ է ասել, թե նա ինչ է սիրում և ինչ չի սիրում։ Արդյո՞ք նա միշտ այդպես ջղայնոտ է։ Ի՞նչ ցանկություններ ունի և, այսպես ասած, ինչպիսի՞ երազանքներով է տարվում, ասեք, եթե կարելի է։ Հիմա հատկապես ի՞նչն է առանձնահատուկ ազդեցություն թողնում նրա վրա։ Մի խոսքով, ես կցանկանայի...

— Ա՜խ, մայրիկ, ինչպե՞ս կարելի է միանգամից պատասխանել այդ բոլոր հարցերին,— միջամտեց Դունյան։

— Ա՜խ, աստված իմ, ես բոլորովին չէի սպասում, որ նրան կհանդիպեմ այդպիսի վիճակում, Դմիտրի Պրոկոֆիչ։

— Այդ միանգամայն բնական է,— պատասխանեց Դմիտրի Պրոկոֆիչը։— Ես մայր չունեմ, հորեղբայրս ամեն տարի գալիս է այստեղ և համարյա ամեն անգամ ինձ չի ճանաչում նույնիսկ իմ արտաքինից, իսկ նա խելոք մարդ է. ձեր անջատման երեք տարում շատ ջուր է հոսել։ Էհ, ի՞նչ ասեմ ձեզ. մեկ և կես տարի է, որ ես ճանաչում եմ Ռոդյոնին. մռայլ է, նոթոտ, զոռոզ ու հպարտ. վերջին ժամանակներս կասկածամիտ է ու մելամաղձոտ (գուցե առաջ էլ այդպես է եղել)։ Մեծահոգի է և բարի։ Չի սիրում իր զգացմունքները արտահայտել և ավելի շուտ դաժանություն կանի, քան բաց կանի սիրտը։ Սակայն երբեմն ամենևին էլ մելամաղձոտ չի լինում, այլ անմարգկայնության չափ սառնություն և անզգայություն է ցուցաբերում, իրավ, կարծես

նրա մեջ երկու հակադիր բնավորություններ են հերթափոխվում։ Երբեմն խիստ սակավախոս է. շարունակ ժամանակ չունի, շարունակ իբր թե խանգարում են նրան, իսկ ինքը պտտվում է, ոչինչ չի անում։ Ծաղրասեր չէ, և դա ոչ այն պատճառով, որ պակասում է սրամտությունը, այլ այն պատճառով, որ կարծես ժամանակ չունի այդպիսի գատարկ բաների համար։ Ինչ որ ասում են, մինչև վերջը չի լսում։ Երբեմն չի հետաքրքրվում այն ամենով, ինչով բոլորը հետաքրքրվում են տվյալ րոպեին։ Իրեն շատ բարձր է գնահատում ու կարծես թե դրա համար որոշ իրավունք ունի։ Էհ, էլ ի՞նչ ասեմ... Ինձ թվում է, որ ձեր գալուստը նրա վրա փրկարար ազդեցություն կունենա։

— Ա՜խ, տա՜ ասուած,— գոչեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան, որին տանջում էր Ռազումիխինի կարծիքը նրա Ռոդյայի մասին։

Ռազումիխինը, վերջապես, ավելի զվարթ նայեց Ավդոտյա Ռոմանովնային։ Խոսակցության ժամանակ նա աղջկան նայում էր հաճախ, բայց անցողակի, միայն մի ակնթարթ, ու իսկույն շուռ էր տալիս հայացքը։ Ավդոտյա Ռոմանովնան մերթ նստում էր սեղանի մոտ և ուշադրությամբ ունկնդրում, մերթ նորից վեր էր կենում և սկսում էր ըստ իր սովորության քայլել անկյունից անկյուն, ձեռքերը խաչաձև կրծքին ծալած, շրթունքները սեղմած, երբեմն հարց էր տալիս առանց քայլերը ընդհատելու, մտաբաղ։ Նա էլ սովորություն ուներ մինչև վերջը լսել, ինչ որ ասում էին։ Նա հագել էր բարակ գործվածքից կարած ինչ-որ մուգ շրջազգեստ, պարանոցին սպիտակ, թափանցիկ շարֆ էր կապել։ Ռազումիխինը ըստ շատ նշանների նկատեց, որ մայրն ու աղջիկը չափազանց աղքատ են ապրում։ Եթե Ավդոտյա Ռոմանովնան հագնված լիներ թագուհու պես, Ռազումիխինը երևի նրանից բնավ չվախենար. իսկ հիմա թերևս այն պատճառով, որ աղջիկը աղքատիկ հագուստով էր, և նա, Ռազումիխինը, նկատել էր աղքատության այդ բոլոր նշանները, նրա սիրտը երկյուղ զգաց, և նա սկսեց վախենալ իր յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր շարժման համար, մի բան, որը, իհարկե, ճնշող էր առանց այն էլ ինքն իրեն չվստահող մարդու համար։

— Դուք շատ հետաքրքիր բաներ ասացիք եղբորս բնավորության մասին և... անաչառ կերպով ասացիք։ Այդ լավ է. ես կարծում էի, որ դուք պատկառանքով եք վերաբերվում նրան,— ժպտալով ասաց Ավդոտյա Ռոմանովնան։ — Թվում է, որ ճիշտ է նաև այն, որ նրա կողքին պետք է կին լինի,— մտազրաղ ավելացրեց նա։

— Ես այդ չասացի, սակայն դուք զուցե և դրանում էլ իրավացի եք, միայն թե...

— Ի՞նչ։

— Չէ՞ որ նա ոչ ոքի չի սիրում, գուցե և երբեք չսիրի,— կտրուկ ասաց Ռազումիխինը։

— Այսինքն՝ ընդունակ չէ՞ սիրելու։

— Գիտե՞ք, Ավդոտյա Ռոմանովնա, դուք խիստ նման եք ձեր եղբորը, նույնիսկ ամեն ինչով,— հանկարծ իր համար էլ անսպասելի կերպով բերնից թռցրեց Ռազումիխինը, բայց հիշելով այն, ինչ որ քիչ առաջ ասել էր նրա եղբոր մասին, թանդ-կարմրեց և խիստ շփոթվեց։ Նայելով նրան, Ավդոտյա Ռոմանովնան չէր կարող չծիծաղել։

— Ոդյայի վերաբերյալ դուք երկուսդ էլ կարող եք սխալվել,— վրա բերեց մի փոքր վիրավորված Պուլխերիա Ալեքսանդրովնան։ — Ես նրա այժմյան վիճակի մասին չեմ խոսում, Դունեչկա։ Ինչ որ գրում է Պյոտր Պետրովիչը իր նամակում... և ինչ որ ես ու դու ենթադրում էինք, գուցե և ճիշտ չէ, բայց դուք չեք կարող երևակայել, Դմիտրի Պրոկոֆիչ, թե որքան նա ֆանտաստիկ է և, ի՞նչպես ասեմ, քըմահաճ է։ Ես երբեք չէի կարողանում վստահել նրա բնավորությանը, նույնիսկ երբ նա դեռ տասնհինգ տարեկան էր։ Ես հավատացած եմ, որ հիմա էլ նա հանկարծ իրեն մի որևէ այնպիսի բան կանի, որը երբեք և ոչ մի մարդու մտքում էլ չի անցնի... Հեռու չգնանք. արդյոք հայտնի՞ է ձեզ, թե ինչպես նա մեկ ու կես տարի առաջ ինձ ապշեցրեց, հուզեց և համարյա բոլորովին ուժասպառ արեց, երբ խելքին փչել էր ամուսնանալ այն...-ը-ը... ո՞նց է անունը... այն Զարնիցինայի, իր տանտիրուհու աղջկա հետ։

— Դուք որևէ մանրամասն բան գիտե՞ք այդ պատմության մասին,— հարցրեց Ավդոտյա Ռոմանովնան։

— Դուք կարծում եք այն ժամանակ նրան կկասեցնե՞ն իմ արցունքները, իմ խնդրանքները, իմ հիվանդությունը, գուցե և վշտից իմ մեռնելը, մեր աղքատությունը,— տաքացած շարունակեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։ — Հանգիստ կերպով կհաղթահարեր բոլոր խոչընդոտները։ Եվ մի՞թե նա, մի՞թե նա մեզ չի սիրում։

— Նա ինձ երբեք և ոչինչ չի ասել այդ պատմության մասին,— զգույշ պատասխանեց Ռազումիխինը,— բայց եռ որոշ բան լսել եմ հենց տիկին Զարնիցինայից, որը նույնպես յուրատեսակ սակավախոս է, ու ինչ որ լսել եմ, թերևս մի քիչ նույնիսկ տարօրինակ է...

— Իսկ ի՞նչ, ի՞նչ եք լսել,— միանգամից հարցրին մայրն ու աղջիկը։

— Սակայն այնքան էլ մի առանձին բան չկա։ Ես միայն իմացել եմ, որ այդ ամուսնությունը այնքան էլ տիկին Զարնիցինայի սրտովը չէր, թեև արդեն կարգավորված էր և չկայացավ միայն հարսնացուի մահվան պատճառով... բացի դրանից, ասում են, որ հարսնացուն նույնիսկ սիրուն էլ չէր, ասում են, որ նույնիսկ տգեղ էր... հիվանդոտ և... տարօրինակ... Սակայն կարծես թե որոշ արժանիքներ ուներ։ Անպայման պետք է ինչ-որ արժանիքներ լինեին. այլապես ոչինչ չի կարելի հասկանալ... Չկար նաև ոչ մի օժիտ, ասենք Ռոդյան հույս էլ չէր դնի օժիտի վրա... Առհասարակ դժվար է դատել այդպիսի գործի մասին։

— Ես հավատացած եմ, որ աղջիկը արժանավոր է եղել,— կարճ ասաց Ավդոտյա Ռոմանովնան։

— Աստվա՛ծ ներե ինձ, այն ժամանակ նրա մահը ինձ ուրախացրեց, թեև չգիտեմ, թե նրանցից որն էր մյուսին կործանելու, տղա՞ն աղջկան, թե՞ աղջիկը տղային,— եզրափակեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։ Այնուհետև կրկին սկսեց զգուշությամբ, ընդմիջումներով հարցեր տալ Ռոդյայի և Լուժինի միջև նախորդ օրը եղած վեճի մասին, անընդհատ նայելով Դունյային, որ ակներևաբար հաճելի չէր վիրջինիա։ Այդ միջադեպը ըստ երևույթին առավելապես վախեցնելու և հուզելու չափ անհանգստացնում էր նրան։ Ռազումիխինը նորից մանրամասն պատմեց ամեն ինչ, բայց այս անգամ ավելացրեց նաև իր եզրակացությունը. նա ուղ-

զակի մեղադրեց Ռասկոլնիկովին, դիտավորյալ կերպով Պյոտր Պետրովիչին վիրավորելու համար՝ այս անգամ դա շատ քիչ արդարացնելով Ռասկոլնիկովի հիվանդությամբ։

— Նա դեռ մինչև հիվանդությունն էր այդպես մտադրվել, — ավելացրեց Ռազումիխինը։

— Ես էլ եմ այդպես կարծում,— տիրադեմ ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։ Բայց նա խիստ զարմացավ, որ Ռազումիխինը Պյոտր Պետրովիչի մասին այս անգամ այդպես ղգույշ և նույնիսկ կարծես թե հարգանքով արտահայտվեց։ Ավդոտյա Ռոմանովնան նույնպես զարմացավ։

— Ահա թե դուք ինչ կարծիքի եք Պյոտր Պետրովիչի մասին,— չկարողացավ չասել Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Ձեր դստեր ապագա ամուսնու մասին ես չեմ կարող ուրիշ կարծիք ունենալ,— կտրուկ և ջերմորեն պատասխանեց Ռազումիխինը,— և սա ասում եմ ոչ թե զուտհիկ քաղաքավարությունից դրդված, այլ որովհետև... որովհետև... նկատի ունեմ թեկուզ միայն այն, որ Ավդոտյա Ռոմանովնան ինքը իր կամքով է ընտրել այդ մարդուն։ Իսկ եթե ես երեկ վատաբանում էի Լուժինին, այդ նրանից էր, որ ես երեկ այլանդակ հարբած էի, և... խելքս գլխիս չէր, այո, խելքս թռել էր, գլուխս իր տեղը չէր, բոլորովին գժվել էի... ու այսօր ամաչում եմ դրանից...— Ռազումիխինը կարմրեց ու լռեց։ Ավդոտյա Ռոմանովնան շիկնեց, բայց չընդհատեց լռությունը։ Նա ոչ մի բառ չէր ասել այն րոպեից, երբ խոսք եղավ Լուժինի մասին։

Այնինչ Պուլխերիա Ալեքսանդրովնան ըստ երևույթին սիրտ չէր անում խոսել առանց նրա աջակցության։ Վերջապես, կմկմալով ու անընդհատ նայելով աղջկան, նա հայտարարեց, որ իրեն մի ինչ-որ հանգամանք է խիստ մտահոգում։

— Գիտե՞ք ինչ, Դմիտրի Պրոկոֆիչ,— ասաց նա,— ես ձեզ հետ միանգամայն անկեղծ կլինեմ։ Ի՞նչ կասես, Դունեչկա։

— Իհարկե, այդպես էլ հարկավոր է, մայրիկ,— հավանություն տվեց Ավդոտյա Ռոմանովնան։

— Ահա թե ինչ է բանը,— հապճեպ շարունակեց մայրը, կարծես նրա ուրից մի ծանր բեռ վերցրին՝ թույլ տալով հա-

զորդել իր վիշտը։ — Այսօր, շատ վաղ, մենք Պյոտր Պետրովիչից նամակ ստացանք, իբրև պատասխան մեր ժամանելու վերաբերյալ երեկվա մեր ծանուցման։ Գիտե՞ք, նա խոստացել էր մեզ դիմավորել հենց կայարանում։ Մեզ դիմավորելու համար նրա փոխարեն կայարան էր ուղարկվել մի ինչ-որ սպասավոր, որը մեզ պետք է բերեր այս հյուրանոցը, իսկ Պյոտր Պետրովիչը հրամայել էր հաղորդել, որ ինքը այստեղ, մեզ մոտ կգա այսօր առավոտյան։ Դրա փոխարեն այսօր առավոտյան նրանից ստացվեց ահա այս նամակը... Ավելի լավ է՝ սա դուք ինքներդ կարդացեք. այստեղ կա մի հարց, որը ինձ շատ է անհանգստացնում... դուք հիմա կիմանաք, թե այդ ինչ հարց է, և... կասեք մեզ ձեր անկեղծ կարծիքը, Դմիտրի Պրոկոֆիչ։ Դուք բոլորից ավելի լավ գիտեք Ռոդյայի բնավորությունը և բոլորից ավելի լավ կարող եք խորհուրդ տալ։ Նախապգուշացնում եմ ձեզ, որ Դունեչկան արդեն մի անգամից որոշել է ամեն ինչ, բայց ես, ես դեռ չգիտեմ ինչպես վարվել և... ձեզ էի սպասում։

Ռազումիխինը բացեց նախորդ օրը գրված նամակը և կարդաց հետևյալը.

«Հարգելի տիկին Պուլխերիա Ալեքսանդրովնա, պատիվ ունեմ ձեզ հայտնելու, որ անսպասելիորեն առաջացած խոչընդոտների պատճառով չկարողացա ձեզ դիմավորել կայարանում, այդ նպատակով այնտեղ ուղարկելով բավականաչափ ճարպիկ մի մարդու։ Ձեզ հետ տեսնվելու պատվից ինձ զրկում եմ նաև վաղը առավոտյան, սենատում անհետաձգելի գործեր ունենալու պատճառով և չուզենալով խանգարել ձեր ազգակցական տեսակցությանը ձեր որդու հետ և Ավդոտյա Ռոմանովնայի տեսակցությանը իր եղբոր հետ։ Պատիվ կունենամ ձեզ այցելել և ձեզ ողջունել ձեր բնակարանում ոչ այլ կերպ, քան վաղը երեկոյան ուղիղ ժամը ութին, ըստ որում համարձակվում եմ ավելացնել իմ կարուկ ի սրան ավելացնում եմ՝ թախանձագին խնդրանքը, որ մեր ընդհանուր տեսակցության ժամանակ Ռոդյոն Ռոմանովիչը ներկա չլինի, որովհետև երեկ, երբ ես այցելեցի նրանց Հիվանդին, նա անօրինակ և անքաղաքավարի կերպով վիրավորեց ինձ և բացի դրանից, ես պետք է անձամբ ձեզ հետ անհրաժեշտ

և հանգամանալից խոսակցություն ունենամ ձեզ հայտնի խնդրի շուրջ, որի վերաբերյալ ցանկանում եմ իմանալ ձեր սեփական մեկնաբանությունը։ Ընդսմին, պատիվ ունեմ նախապես հայտնելու, որ եթե խնդրանքիս հակառակ հանդիպեմ Ռոդյոն Ռոմանովիչին, ապա ստիպված պիտի լինեմ անհապաղ հեռանալ, և այդ դեպքում ինքներդ մեղադրեք ձեզ։ Գրում եմ այն ենթադրությամբ, որ Ռոդյոն Ռոմանովիչը, որը իմ այցելության ժամանակ խիստ հիվանդ էր թվում, երկու ժամ հետո հանկարծ առողջացավ, հետևաբար դուրս գալով տանից, կարող է և ձեզ մոտ գալ։ Դրանում համոզվել եմ անձամբ, կառքի տակ ընկած և դրանից մեռած մի հարբեցողի բնակարանում, որի աղջկան, վատ վարքի տեր աղջկան, թաղման պատրվակով, նա երեկ տվեց մոտ քսանհինգ ռուբլի, մի բան, որ խիստ զարմացրեց ինձ, քանի որ գիտեի, թե դուք ինչպիսի դժվարություններով էիք հավաքել այդ գումարը։ Ընդսմին հավաստում եմ առանձին հարգանքս մեծարգո Ավդոտյա Ռոմանովնային, ինդրում եմ ընդունել իմ հարգալից նվիրվածության զգացմունքները։

Ձեր խոնարհ ծառա՝

Պ. Լուժին»։

— Հիմա ես ի՞նչ անեմ, Դմիտրի Պրոկոֆիչ,— համարյա լալով ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։ — Ի՞նչպես առաջարկեմ Ռոդյային, որ չգա։ Երեկ նա համառորեն պահանջում էր ձեռք քաշել Պյոտր Պետրովիչից, իսկ հիմա պատվիրում են չընդունել նրան։ Նա հո դիտմամբ կգա, երբ իմանա այս բոլորը, և այդ դեպքում ի՞նչ կլինի...

— Վարվեցեք այնպես, ինչպես որոշել է Ավդոտյա Ռոմանովնան,— անմիջապես և հանգիստ պատասխանեց Ռազումիխինը։

— Ա՛խ, աստված իմ, նա ասում է... աստված գիտե, թե նա ինչ է ասում և ինձ չի բացատրում նպատակը։ Նա ասում է, որ ավելի լավ կլինի, այսինքն՝ ոչ թե ավելի լավ կլինի, այլ մի ինչ-որ բանի համար իբր թե անպայման հարկավոր է, որ Ռոդյան էլ դիտմամբ դա այսօր ժամը ութին, և նրանք անպայման հանդիպեն... Իսկ ես չէի էլ ուզում նամակը ցույց տալ նրան, ուզում էի ձեր միջոցով, խորամանկու-

թյամբ մի կերպ այնպես անել, որ նա չգա... որովհետև նա այնպե՞ս ջղայնոտ է... Ես ոչինչ էլ չեմ հասկանում, թե այդ ինչ հարբեցող է մեռել և այդ ինչ աղջիկ է, և Ռոդյան ինչպես կարող էր այդ աղջկան տալ բոլոր վերջին փողերը... որոնք...

— Որոնք այնքա՞ն թանկ էին նստել ձեր վրա, մայրիկ, — ավելացրեց Ավդոտյա Ռոմանովնան։

— Երեկ նա ինքն իրեն Գորցրել էր,— մտաղբաղ ասաց Ռազումիխինը։ — Գիտե՞ք, թե նա երեկ ինչեր արեց պանդոկում, թեպետև խելացի էր վարվում... Հը՛մ, մի ինչ-որ մեռելի և ինչ-որ աղջկա մասին նա իրոք խոսում էր երեկ, երբ մենք տուն էինք գնում, բայց ես ոչինչ չհասկացա... Ասենք ես ինքս էլ երեկ...

— Մայրիկ, ամենի լավ է մենք գնանք նրա մոտ, հավատացնում եմ ձեզ, այնտեղ իսկույն կտեսնենք, թե ինչ պետք է անել։ Արդեն ժամանակն է, տեր աստված, ժամը տասնմեկն է,— գոչեց Ավդոտյա Ռոմանովնան՝ նայելով իր հիանալի, ոսկե, էմալով ժամացույցին, որ վենետիկյան բարակիկ շղթայով կախված էր վզից և բնավ չէր համապատասխանում իր հագուստին։ «Փեսացուի նվերն է»— մտածեց Ռազումիխինը։

— Ախ, ժամանակն է... ժամանակն է, Դունեչկա,— անհանգստացավ Պուլչերիա Ալեքսանդրովնան,— նա կկարծի թե մենք երեկվանից բարկացած ենք իր վրա և դրա համար էլ այսքան երկար ժամանակ չենք գնում։ Ա՛խ, աստվա՛ծ իմ։

Այս ասելով, նա հապճեպորեն հագնում էր թիկնոցը և դնում գլխարկը։ Դունեչկան նույնպես հագնվեց։ Նրա ձեռնոցները ոչ միայն հնամաշ, այլև նույնիսկ պատառոտված էին։ Ռազումիխինը այդ նկատեց, այնինչ հագուստի այդ ակնբախ աղքատությունը նույնիսկ մի ինչ-որ առանձին արժանիքի տեսք էր տալիս մորն ու աղջկան, մի բան, որ հատուկ է այն մարդկանց, ովքեր կարողանում են աղքատ, բայց վայելուչ հագնվել։ Ռազումիխինը խորին հարգանքով էր նայում Դունեչկային և հպարտանում էր, որ ուղեկցելու է նրան։ «Այն թագուհին, որը բանտում իր գուլպաներն էր կարկատում, իհարկե, այդ բոպեին իսկական թագուհու և

կունիսկ է՛լ ավելի պատշաճավոր տեսք ուներ, քան ամենաճոխ հանդեսների և արարողությունների ժամանակ», մտածում էր Ռազումիխինը։

— Աստված իմ,— գոչեց Պուլչերիա Ալեքսանդրովնան, — մի՞թե մտքովս կանցներ, որ պիտի վախենամ որդուս, իմ սիրելի, սիրելի Ռոդյայի հետ տեսնվելուց, ինչպես որ վախենում եմ հիմա... Ես վախենում եմ, Դմիտրի Պրոկոֆիչ,— ավելացրեց նա՝ երկչոտ նայելով Ռազումիխինին։

— Մի վախենաք, մայրիկ,— ասաց Դունյան՝ համբուրելով մորը,— ավելի լավ է հավատացեք նրան։ Ես հավատում եմ։

— Ախ, աստված իմ, ես էլ եմ հավատում, իսկ գիշերը բոլորովին չքնեցի,— գոչեց խեղճ կինը։

Նրանք դուրս եկան հյուրանոցից։

— Գիտե՞ս, Դունեչկա, հենց որ առավոտյան դեմ ես մի քիչ քնեցի, հանկարծ երազումս տեսա հանգուցյալ Մարֆա Պետրովնային... ամբողջովին ճերմակ հագուստով... մոտեցավ ինձ, վերցրեց ձեռքս, օրորեց գլուխը, նայեց այնպես, այնպես խիստ, ասես պարսավում էր ինձ... Մի՞թե ոա վատ նշան չէ։ Ախ, աստված իմ, դուք, Դմիտրի Պրոկոֆիչ, դեռ չգիտեք, Մարֆա Պետրովնան մեռել է։

— Ոչ, չգիտեմ, ի՞նչ Մարֆա Պետրովնա։

— Հանկարծամահ է եղել, և երեկայեցեք...

— Հետո, մայրիկ,— միջամտեց Դունյան,— չէ՞ որ նա չգիտե, թե ով է Մարֆա Պետրովնան։

— Ախ, չգիտեք, իսկ ես կարծում էի, թե արդեն ամեն ինչ հայտնի է ձեզ։ Դուք ինձ ներեցեք, Դմիտրի Պրոկոֆիչ, այս օրերին ուղղակի խելքս գլխիս չէ։ Իրավ, ես ձեզ մի տեսակ նախախնամություն եմ համարում մեզ համար, դրա համար էլ այսպես համոզված էի, թե արդեն ամեն ինչ հայտնի է ձեզ։ Ես ձեզ իմ հարազատ որդին եմ համարում... Մի բարկանաք, որ այսպես եմ խոսում։ Ա՛խ, աստվա՛ծ իմ, այդ ի՞նչ է պատահել ձեր աջ ձեռքին, վնասե՞լ եք։

— Այո, վնասել եմ,— փնթփնթաց երշանկացած Ռազումիխինը։

— Ես երբեմն չափից դուրս հուզված եմ խոսում, այնպես որ Դունյան ուղղում է ինձ... բայց, աստված իմ, Ռոդ-

յան ինչպիսի՞ խցիկում է ապրում։ Տեսնես արքնացե՞լ է, թե՞ ոչ։ Եվ այդ կինը, նրա տանտիրուհին, դա սենյա՞կ է համարում։ Լսեք, դուք առում եք, որ Ռոդյան չի սիրում սիրտը բաց անել, այնպես որ դուցե ես նրան ձանձրացնե՞մ իմ... արցունքներով... Արդյոք դուք, Դմիտրի Պրոկոֆիչ, ինձ չե՞ք սովորեցնի, թե ինչպես վարվեմ նրա հետ։ Գիտե՞ք, ես ինձ բոլորովին կորցրած եմ քայլում։

— Դուք նրան շատ հաճելի մի անեք որևէ բանի մասին, եթե տեսնեք, որ նա կնճռոտում է դեմքը. մանավանդ իր առողջության մասին շատ մի հարցնեք. չի սիրում։

— Ա՜խ, Դմիտրի Պրոկոֆիչ, որքա՜ն ծանր է մայր լինելը։ Բայց ահա և այդ սանդուղքը... որքա՜ն սարսափելի սանդուղք է։

— Մայրիկ, դուք նույնիսկ գունատ եք, հանգստացեք, աղավնյակս,— ասաց Դունյան՝ փարվելով մորը,— նա պետք է դեռ բախտավոր լինի, որ տեսնում է ձեզ, իսկ դուք այդպես տանջվում եք,— ավելացրեց Դունյան, նրա աչքերը շոշափելով։

— Սպասեցեք, ես առաջուց իմանամ, թե արդյոք արթնացե՞լ է նա։

Մայր ու աղջիկ դանդաղաքայլ գնացին սանդուղքով առաջ անցած Ռազումիխինի հետևից, ու երբ հասան չորրորդ հարկ, տանտիրուհու դռանը, նկատեցին, որ տանտիրուհու դուռը բացված է մի փոքրիկ ճեղքի չափ ու երկու աշխույժ, սև աչքեր մթությունից նայում են նրանց երկուսին։ Իսկ երբ տանտիրուհու և մոր ու աղջկա հայացքները իրար հանդիպեցին, դուռը հանկարծ փակվեց, այն էլ այնպիսի շրխկոցով, որ քիչ մնաց Պուլխերիա Ալեքսանդրովնան ճչար վախից։

III

— Առողջ է, առողջ է,— ուրախ բացականչությամբ դիմավորեց Զոսիմովը ներս մտնողներին։ Արդեն մոտ տասը րոպե էր, որ նա եկել էր ու նստել բազմոցին, երեկվա տեղը։ Ռասկոլնիկովը նստել էր նրա դիմաց, անկյունում, բոլորո-

վին հագնված և նույնիսկ խնամքով լվացված ու սանրված, մի բան, որ արդեն վաղուց չէր արել։ Սենյակը միանգամից լցվեց, բայց Նաստասյան այնուամենայնիվ կարողացավ ներս անցնել այցելուների ետևից ու լսել խոսակցությունը։

Իսկապես, Ռասկոլնիկովը համարյա առողջ էր, մանավանդ նախորդ օրվա համեմատությամբ, միայն թե խիստ գունատ էր, մտացրիվ ու նոթոտ։ Արտաքուստ նա կարծես նման լիներ վիրավոր մարդու կամ այնպիսի մեկին, որը մի որևէ ուժեղ ֆիզիկական ցավ է զգում. նա կիտել էր հոնքերը, սեղմել շրթունքները, հայացքը բորբոքված էր։ Նա խոսում էր քիչ և դժկամորեն, ասես ուժ գործադրելով կամ կատարելով ինչ-որ պարտականություն, ու նրա շարժումները երբեմն ինչ-որ անհանգստություն էին արտահայտում։

Եթե նրա ձեռքը կապված լիներ վիրակապով կամ որևէ մատը՝ դիպակե կտորով, նա բոլորովին նման կլիներ այն մարդուն, որի մատը, օրինակ, թարախակալել է և շատ է ցավում կամ վիրավորված է ձեռքը, կամ որևէ այդպիսի մի բան։

Սակայն այդ դալուկ և մռայլ դեմքն էլ ասես լուսավորվեց մի ակնթարթ, երբ ներս մտան մայրն ու քույրը. այնուամենայնիվ առաջվա թախծոտ ցրվածության փոխարեն դա կարծես միայն ավելի խոր տանջանք ավելացրեց այդ դեմքի արտահայտությանը։ Լույսը շուտով մարեց, իսկ տանջանքը մնաց, ու Զոսիմովը, որ բուժման գործը հենց նոր սկսած բժշկի երիտասարդական ամբողջ եռանդով հետամտում և ուսումնասիրում էր իր հիվանդին, հարազատների գալուց հետո ուրախության փոխարեն նրա մեջ նկատեց մի տեսակ ծանր, թաքցրած վճռականություն՝ մի երկու ժամ հանդուրժել խոշտանգումը, որից անկարելի էր խուսափել։ Զոսիմովը հետո տեսնում էր, թե ինչպես սկսված խոսակցության համարյա յուրաքանչյուր բառը ասես շոշափում և բորբոքում էր իր հիվանդի որևէ վերքը. բայց միևնույն ժամանակ նա մասամբ զարմանում էր, թե երեկվա մենամոլը ինչպես էր կարողանում այսօր տիրապետել ինքն իրեն և թաքցնել իր զգացմունքները, մինչդեռ նախորդ օրը ամենաչնչին խոսքից անգամ կատաղության էր հասնում։

— Այո, հիմա ես ինքս եմ տեսնում, որ համարյա առողջ եմ,— ասաց Ռասկոլնիկովը՝ սիրալիր համբուրելով մորն ու քրոջը, որով բուռն ուրախություն պատճառեց Պուլչերիա Ալեքսանդրովնային,— և արդեն երեկվա պես չեմ ասում սա,— ավելացրեց նա՝ դիմելով Ռազումիխինին ու բարեկամաբար սեղմելով նրա ձեռքը։

— Այսօր ես նույնիսկ զարմացա նրա վրա,— ասաց Զոսիմովը, այցելուների դալուց շատ ուրախացած, որովհետև տասը րոպեում արդեն կորցրել էր իր հիվանդի հետ ունեցած խոսակցության թելը։— Եթե գործը այսպես գնա, մի երեք-չորս օր հետո նա բոլորովին այնպես կլինի, ինչպես առաջ, այսինքն՝ ինչպես եղել է մեկ կամ երկու... կամ թերևս երեք ամիս առաջ։ Այդ հո վաղուց էր սկսվել և նախապատրաստվել... այնպես չէ՞։ Հիմա խոստովանեցեք, որ դուք ինքներդ եք մեղավոր եղել,— զգույշ ժպիտով ավելացրեց նա՝ ասես դեռ էլի վախենալով որևէ կերպ ջղայնացնել Ռասկոլնիկովին։

— Գուցե և այդպես է,— սառը պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Ես սա ասում եմ այն մտքով, որ ձեր կատարյալ առողջացումը հիմա գլխավորապես միայն ձեզնից է կախված, — շարունակեց Զոսիմովը։— Այժմ, երբ արդեն կարելի է խոսել ձեզ հետ, ես կուզենայի ձեզ ներշնչել, որ անհրաժեշտ է վերացնել սկզբնական, այսպես ասած՝ արմատական պատճառները, որոնցից առաջացել է ձեր հիվանդոտ վիճակը, և այդ դեպքում բոլորովին կբուժվեք, թե չէ բանը նույնիսկ ավելի վատ կլինի։ Այդ սկզբնական պատճառները ես չգիտեմ, բայց դրանք պետք է որ ձեզ հայտնի լինեն։ Դուք խելացի մարդ եք և, իհարկե, ինքներդ ձեզ հետամուտ եք եղել։ Ինձ թվում է, որ ձեր հիվանդությունը մասամբ սկիզբ է առել համալսարանից ձեր դուրս գալու ժամանակ։ Դուք չպետք է մնաք առանց զբաղմունքների։ Ինձ թվում է, որ աշխատանքը և հաստատապես որոշած նպատակը կարող էին ձեզ շատ օգնել։

— Այո, այո, դուք միանգամայն իրավացի եք... շուտով ես համալսարան կմտնեմ և այն ժամանակ... ամեն ինչ հաջող կգնա...

Զոսիմովը, որ սկսել էր խելացի խորհուրդներ տալ մասամբ կանանց վրա տպավորություն թողնելու համար, իհարկե, մի փոքր շփոթվեց, երբ վերջացնելով խոսքը և նայելով իր հիվանդին, նրա դեմքին թունդ հեգնանք նկատեց։ Սակայն դա լոկ մի ակնթարթ տևեց։ Պուլխերիա Ալեքսանդրովնան իսկույն նրան շնորհակալություն հայտնեց, առանձնապես անցած գիշերը հյուրանոցում իրենց այցելելու համար։

— Ինչպե՞ս, նա գիշերն է՞լ է եղել ձեզ մոտ,— կարծես անհանգստանալով հարցրեց Ռասկոլնիկովը։— Ուրեմն հանապարհից հետո դուք չե՞ք քնել։

— Ախ, Ռոդյա, այդ միայն մինչև ժամը երկուսն էր։ Ես ու Դունյան տանն էլ երկուսից շուտ չէինք պառկում քնելու։

— Ես նույնպես չգիտեմ ինչով շնորհակալ լինեմ նրանից,— շարունակեց Ռասկոլնիկովը՝ հանկարծ մոայլվելով ու կիտելով հոնքերը։— Մի կողմ թողնելով փողի հարցը, ես չգիտեմ, թե ինչով եմ արժանացել ձեր առանձնահատուկ ուշադրության,— դիմեց նա Զոսիմովին,— դուք ներեցեք, որ ես այդ հիշատակեցի։ Ուղղակի չեմ հասկանում... և... և դա նույնիսկ ծանր է ինձ համար, որովհետև անհասկանալի է. ես սա անկեղծորեն եմ ասում։

— Դուք մի հուզվեք,— բռնագրոսիկ ծիծաղեց Զոսիմովը,— ենթադրեցեք, որ դուք իմ առաջին հիվանդն եք, իսկ ինձ պես բժիշկները, որոնք հենց նոր են պրակտիկա սկսում, սիրում են իրենց առաջին հիվանդներին, ինչպես իրենց երեխաներին, ոմանք էլ համարյա սիրահարվում են նրանց։ Իսկ ես չէ՞ որ շատ հիվանդներ չունեմ։

— Ես չեմ էլ խոսում սրա մասին,— ավելացրեց Ռասկոլնիկովը՝ ցույց տալով Ռազումիխինին,— սա էլ, բացի վիրավորանքներից ու գլխացավանքներից, ուրիշ ոչինչ չի տեսել ինձանից։

— Է՛, ստում է։ Դու այսօր կարեկցության զգացումո՞վ ես համակված, ինչ է,— գոչեց Ռազումիխինը։

Եթե նա ավելի խորաթափանց լիներ, կտեսներ, որ այստեղ կարեկցության զգացում բոլորովին չկար, այլ կար նույնիսկ դրան հակառակ ինչ-որ մի բան։ Ավդոտյա Ռոմանով-

նան այդ նկատեց։ Նա ուշադիր և անհանգիստ հետամտում էր եղբորը։

— Իսկ ձեր մասին, մայրիկս, ես չեմ էլ համարձակվում խոսել,— շարունակեց Ռասկոլնիկովը, ասես դա առավոտից սերտած դաս լիներ,— եռ միայն այսօր կարողացա շատ թե քիչ գլխի ընկնել, թե ինչպես էիք երեկ դուք այստեղ հալումաշ լինում՝ սպասելով իմ վերադարձին։— Այս ասելով, նա հանկարծ ժպտաց և ձեռքը լուռ մեկնեց քրոջը։ Այս անգամ նրա ժպիտը իսպառ անկեղծ զգացմունք արտահայտեց։ Դունյան անմիջապես վերցրեց և ջերմորեն սեղմեց իրեն մեկնված ձեռքը, ուրախացավ և շնորհակալ եղավ։ Նախորդ օրվա գժտությունից հետո առաջին անգամն էր, որ Ռոդյան դիմում էր քրոջը։ Եղբոր և քրոջ վերջնականապես և առանց երկար խոսելու հաշտվելը ցնծության ու երջանկության լույս վառեց մոր դեմքին։

— Ա՛յ, հենց դրա համար էլ ես սիրում եմ Ռոդյային,— շշնջաց ամեն ինչ շափազանցնող Ռազումիխինը՝ արագ շուռ գալով աթոռի վրա։— Նա զուրկ չէ այդպիսի հակումներից...

«Որքա՜ն լավ է նա վարվում,— մտածում էր մայրը,— ինչպիսի՜ ազնիվ պոռթկումներ ունի և ինչպե՜ս իր և քրոջ միջև երեկ եղած թյուրիմացությանը խոհեմաբար և հեշտությամբ վերջ տվեց հենց միայն նրանով, որ հիմա ձեռք մեկնեց ու լավ նայեց նրան... Եվ ինչպիսի՜ գեղեցիկ աչքեր ունի, և որքա՜ն գեղեցիկ է ամբողջ դեմքը։ Նա իր արտաքինով նույնիսկ Դունեչկայից էլ լավն է... բայց, ասված իմ, այդ ի՞նչ կոստյում է, որքա՜ն նա վատ է հագնված։ Աֆանասի Իվանովիչի խանութի ցրիչ Վասյան նրանից ավելի լավ է հագնված... Օ, որքա՜ն կուզենայի մոտենալ, գրկել նրան և... լաց լինել, բայց վախենում եմ, վախենում եմ... Ինչպիսի՜ն է նա, տեր ասված... ահա և փաղաքշանքով է խոսում, բայց վախենում եմ, ախր ինչի՞ց եմ վախենում...»

— Ախ, Ռոդյա, գու չես հավատա, թե երեկ ես ու Դունյան որքան... դժբախտ էինք,— հանկարծ ասաց նա՝ շտապելով պատասխանել որդու դիտողությանը։— Հիմա, երբ արդեն ամեն ինչ անցել է ու վերջացել, և մենք բոլորս էլ եր-

գանիկ ենք, կարելի է ամեն ինչ պատմել։ Երևակայիր, համարյա թե վագոնից իջնելուն պես վազում ենք այստեղ, որ քեզ գրկենք, իսկ այն կինը, հա՛, նա այստեղ է, բարև, Նաստասյա... Նա հանկարծ ասում է մեզ, որ դու հիվանդ ես հարբեցողի տենդով և քիչ առաջ դառանցանքի մեջ, ծածուկ փախել ես բժշկից, տանից, գնացել ես, և քեզ մահ են գալիս։ Դու չես հավատա, թե մեզ հետ ինչ էր կատարվում։ Ես հիշեցի, թե ինչպիսի ողբերգական մահով մեռավ պորուչիկ Պոտանչիկովը, մեր ծանոթը, հորդ ընկերը։ Դու նրան չես հիշում, Ռոդյա։ Նա էլ հիվանդ էր հարբեցողի տենդով, նույնպես տանից դուրս փախավ և բակում ընկավ ջրհորի մեջ, միայն մյուս օրը կարողացան այնտեղից հանել։ Իսկ մենք, իհարկե, բանը է՛լ ավելի չափազանցրինք։ Ուզում էինք վազել, գտնել Պյոտր Պետրովիչին, որ գոնե նրա օգնությամբ... որովհետև մենք մենակ էինք, բոլորովին մենակ,— ծոր տվեց մայրը ցավագին ձայնով և հանկարծ բոլորովին շշկլվեց, հիշելով, որ Պյոտր Պետրովիչի մասին խոսելը դեռ բավական վտանգավոր է, չնայելով, որ «բոլորը էլի միանգամայն երջանիկ են»։

— Այո, այո... այդ բոլորը իհարկե... ցավալի է...— պատասխանեց Ռասկոլնիկովը փնթփնթալով և այնպիսի ցրված ու անուշադիր տեսքով, որ Դունեչկան զարմացած նայեց նրան։

— Ը... ըմ... էլ ի՞նչ էի ուզում ասել,— շարունակեց Ռասկոլնիկովը՝ լարելով հիշողությունը,— հա՛, խնդրում եմ քեզ, մայրիկ, և քեզ էլ, Դունեչկա, չկարծեք, թե ես այսօր չէի ուզում առաջինը գալ ձեզ մոտ և սպասում էի, որ դուք առաջինը անցնեք ինձ մոտ։

— Ի՞նչ ես ասում, Ռոդյա,— գոչեց նույնպես զարմացած Պուլխերիա Ալեքսանդրովնան։

«Նա մեզ ըստ պարտականությա՞ն է պատասխանում, ի՞նչ է,— մտածեց Դունեչկան,— թե հաշտվում է, թե ներողություն է խնդրում, կարծես ծես է կատարում կամ դասն է սերտելիս։

— Ես հենց նոր արթնացա և ուզում էի գալ, բայց կոստյումս պատրաստ չլինելու պատճառով ուշացա. մոռացել էի

երեկ նրան... Նաստասյային ասել... որ մաքրեր արյունը։ Միայն այժմ կարողացա հագնվել։

— Արյո՞ւնը, ի՞նչ արյուն,— անհանգստացավ Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Ոչինչ, մի անհանգստանաք։ Այդ արյունը նրանից էր, որ երեկ, երբ ես մի քիչ զառանցելով թրևում էի, շփվեցի կառքի տակ ընկած մի մարդու..., մի աստիճանավորի հետ...

— Զառանցո՞ւմ էիր, բայց չէ՞ որ դու ամեն ինչ հիշում ես,— ընդհատեց Ռազումիխինը։

— Այդ ճշմարիտ է,— նրան մի ինչ-որ առանձին հոգատարությամբ պատասխանեց Ռասկոլնիկովը,— հիշում եմ ամեն ինչ, նույնիսկ ամենաչնչին մանրամասնությունները, բայց ախր ինչո՞ւ էի այդ անում, գնում այնտեղ, այլևայլ բաներ ասում— չեմ էլ կարող դա լավ բացատրել։

— Շատ հայտնի երևույթ է,— մեջ մտավ Զոսիմովը,— գործը երբեմն կատարվում է վարպետորեն, հմտությամբ, իսկ արարքների կառավարումը, արարքների սկիզբը խանգարված է և զանազան հիվանդագին տպավորություններից է կախված։ Երազի է նմանվում։

«Գուցե և դա լավ է, որ նա ինձ համարյա խելագարի տեղ է դնում»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Բայց չէ՞ որ առողջներն էլ են լինում այդպիսի վիճակում,— ասաց Դունեչկան՝ անհանգիստ նայելով Զոսիմովին։

— Բավական ճիշտ դիտողություն է,— պատասխանեց Զոսիմովը,— այդ իմաստով մենք բոլորս իսկապես շատ հաճախ համարյա խելագարված ենք լինում, միայն այն փոքրիկ տարբերությամբ, որ «հիվանդները» մեզնից մի քիչ ավելի են խելագարված լինում, դրա համար էլ այստեղ անհրաժեշտ է իմանալ այդ տարբերությունը։ Իսկ հարմոնիկ մարդ գրեթե բոլորովին չկա, սա ճշմարիտ է, տասնյակներից, գուցե և հարյուր-հազարավորներից եզակի թվով են այդպիսիները լինում, այն էլ բավականին թույլ նմուշներ...

Լսելով «խելագարված» բառը, որ անզգուշությամբ բերանից թոցրեց իր սիրած թեմայի մասին շաղակրատող Զոսիմովը, բոլորը կնճռոտվեցին։ Ռասկոլնիկովը ասես ուշադրություն չդարձնելով, նստել էր մտազբաղ, տարօրինակ

ժպիտը դալուկ շուրթերին։ Նա շարունակում էր ինչ-որ բան կշռադատել։

— Հա՛, ի՞նչ եղավ կառքի տակ ընկածը, ես քեզ ընդհատեցի,— հապճեպ գոչեց Ռազումիխինը։

— Ինչ եղա՞վ,— կարծես քնից զարթնեց Ռասկոլնիկովը,— ը... ը... ես արյունոտվեցի, երբ օգնում էի նրան տուն տանելու... հա՛, մայրիկ, երեկ ես մի աններելի բան արեցի. ուղղակի խելքս գլխիս չէր։ Ամբողջ փողը, որ դուք ուղարկել էիք ինձ, ես երեկ տվի... նրա կնոջը... թաղման համար։ Հիմա մնացել են՝ այրին, թոքախտավոր, ողորմելի մի կին... երեք փոքրիկ, սովալլուկ որբեր... տունը դատարկ է... մի աղջիկ էլ կա... Դուցե դուք ինքներդ էլ փող տայիք, եթե նրանց տեսնեիք... Սակայն ես խոստովանում եմ, որ այդ անելու ոչ մի իրավունք չունեի, մանավանդ որ գիտեի, թե դուք ինչպես էիք ճարել այդ փողը։ Օգնելու համար պետք է նախ՝ այդպիսի իրավունք ունենալ, թե չէ՝ "Crevez chiens, si vous n'êtes pas contents"[1] Ռասկոլնիկովը քրքջաց։— Այդպես չէ՞, Դունյա։

— Ոչ, այդպես չէ,— կտրուկ պատասխանեց Դունյան։

— Պահ, ուրեմն դո՞ւ էլ... ինչ-որ դիտավորություններ ունես... — փնթփնթաց Ռասկոլնիկովը, և համարյա ատելությամբ ու հեգնաբար ժպտալով, նայեց քրոջը։— Ես պետք է այդ կշռադատեի... էհ, գովելի է. քեզ համար գա ավելի լավ է... կհասնես այնպիսի սահմանի, որը չես անցնի, գրժբախտ կլինես, իսկ եթե անցար, դուցե է՛լ ավելի դժբախտ կլինես... Սակայն այս բոլորը դատարկ բան է,— ջղայնոտ ավելացրեց նա՝ սրտնեղելով իր ակամա շաղակրատանքից։ — Ես ուզում էի միայն ասել, որ ձեզնից ներողություն եմ խնդրում, մայրիկ,— խիստ ու կտրական տոնով եզրափակեց Ռասկոլնիկովը։

— Դե լավ, էլի՛, Ռոդյա, ես հավատացած եմ, որ այն ամենը, ինչ որ դու անում ես, հիանալի է,— ասաց ուրախացած մայրը։

— Հավատացած մի՛ լինեք,— պատասխանեց Ռոդյան՝

---

[1] Խեղդվեցեք, շներ, եթե ձեզ վատ եք զգում (ֆրանս.)։

ժպիտից ծամռելով բերանը։ Տիրեց լռություն։ Ինչ-որ լարվածություն կար այդ ամբողջ խոսակցության, լռության, հաշտվելու և ներման մեջ, ու բոլորը այդ զգում էին։

«Ծերանք իրոք ոչախենում են ինձնից»,— մտածում էր Ռասկոլնիկովը՝ աչքի տակով նայելով մորն ու քրոջը։ Եվ իսկապես, Պուլխերիա Ալեքսանդրովնան որքան շատ էր լռում, այնքան շատ էր երկչոտում։

«Ես հո նրանց սիրում էի, երբ հեռու էին», անցավ Ռասկոլնիկովի մտքով։

— Գիտե՞ս, Ռոդյա, Մարֆա Պետրովնան մեռավ,— հանկարծ հայտարարեց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Այդ ո՞ր Մարֆա Պետրովնան է։

— Ա՛խ, աստված իմ, Մարֆա Պետրովնան, Սվիդրիգայլովնան։ Ախր ես քեզ նրա մասին շատ բան էի գրել։

— Հա՛-ա-ա, այո, հիշում եմ... Ուրեմն մեռա՞վ։ Ա՛խ, իսկապե՞ս,— հանկարծ սթափվեց Ռասկոլնիկովը՝ ասես քնից արթնանալով։— Մի՞թե մեռավ։ Ինչի՞ց։

— Երևակայիր, հանկարծամահ եղավ,— վրա բերեց Պուլխերիա Ալեքսանդրովնան՝ քաջալերվելով որդու հետաքրքրությունից,— և հենց այն ժամանակ, նույնիսկ հենց այն օրը, երբ ես քեզ նամակ ուղարկեցի։ Երևակայիր, նրա մահվան պատճառը կարծեմ այդ զարհուրելի մարդն էր։ Ասում են, որ սարսափելի ծեծել էր նրան։

— Մի՞թե նրանք այդպես էին ապրում,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ դիմելով քրոջը։

— Ո՛չ, նույնիսկ ընդհակառակը։ Նրա նկատմամբ ամուսինը շատ համբերատար էր, նույնիսկ քաղաքավարի։ Ամբողջ յոթ տարում, շատ գեպքերում նույնիսկ չափազանց ներողամիտ էր լինում կնոջ բնավորության հանդեպ... Սակայն հանկարծ կորցրեց համբերությունը։

— Ուրեմն նա ամենևին էլ այդքան սարսափելի չէ, եթե համբերել է յոթ տարի։ Դու երևի նրան արդարացնո՞ւմ ես, Դունեչկա։

— Ոչ, ոչ, նա զարհուրելի մարդ է։ Ավելի զարհուրելի բան ես չեմ էլ կարող պատկերացնել,— համարյա ցնցվելով

պատասխանեց Դունյան, կիտեց հոնքերը և մտածմունքի մեջ ընկավ։

— Նրանց մոտ դա պատահեց առավոտյան,— շտապելով, խոսքը շարունակեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։ — Հետո Մարֆա Պետրովնան իսկույն հրամայեց ձիերը լծել, որպեսզի ճաշից հետո անմիջապես մեկներ քաղաք, որովհետև նա միշտ այդպիսի դեպքերում քաղաք էր գնում. ասում են, որ մեծ ախորժակով էր ճաշում...

— Մեծ ուտելուց հետո՞։

— ... Ասենք նա միշտ էլ այդպիսի սովորություն ուներ, ու հենց որ ճաշեց, իսկույն գնաց լողարան, որպեսզի ճանապարհից չուշանար։ Գիտե՞ս, նա ինչ-որ բուժվում էր լողանալով. նրանց մոտ սառն աղբյուր կա, և նա ամեն օր կանոնավոր կերպով լողանում էր այդ աղբյուրում. այս անգամ հենց որ ջուրը մտավ, հանկարծ կաթվածահար եղավ։

— Դե, իհարկե,— ասաց Զոսիմովը։

— Ամուսինը խի՞ստ էր ծեծել։

— Այդ հո միևնույն է,— ասաց Դունյան։

— Հրմ։ Սակայն, մայրիկ, ի՞նչ կարիք կա պատմել այդպիսի անհեթեթության մասին,— հանկարծ ջղայնությամբ ու անդգուշաբար ասաց Ռասկոլնիկովը։

— Ախ, սիրելիս, ես չգիտեի ինչի մասին խոսեի,— պատասխանեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Այդ ի՞նչ է, դուք բոլորդ վախենո՞ւմ եք ինձնից,— սառը ժպտաց Ռասկոլնիկովը։

— Դա իրոք ճշմարիտ է,— վրա բերեց Դունյան՝ ուղիղ և խստորեն նայելով եղբորը։— Մայրիկը սանդուղքով բարձրանալիս նույնիսկ խաչակնքում էր վախից։

Ռասկոլնիկովի դեմքը ծռմռվեց ասես ջղաձգությունից։

— Ախ, ի՞նչ ես ասում, Դունյա։ Զբարկանա՛ս, Ռոդյա... Ինչո՞ւ ես այդ ասում, Դունյա,— շփոթվելով ասաց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։— Այդ ճիշտ է, որ երբ մենք գալիս էինք Պետերբուրգ, ամբողջ ճանապարհին, վագոնում ես երազում էի, թե մենք ինչպես կտեսնվենք, ինչպես ամեն ինչ կհաղորդենք միմյանց... Ու այնպես երջանիկ էի, որ ճանապարհն էլ չէի տեսնում։ Եվ ի՞նչ, ես հիմա էլ երջանիկ եմ

...Լզուր ես այդ ասում, Դունյա։ Ես երջանիկ եմ հենց միայն նրանով, որ քեզ տեսնում եմ, Ռոդյա...

— Լավ, մայրիկս...— շփոթվելով փնթփնթաց Ռասկոլնիկովը՝ նայելով մորը և սեղմելով նրա ձեռքը,— մենք դեռ ժամանակ կունենանք բավականաչափ զրուցելու։

Այդ ասելով, նա հանկարծ շփոթվեց և գունատվեց. դարձյալ վերջին ժամերին ապրած զարհուրելի մի զգացում նրա հոգին համակեց մեռյալ սառնությամբ. դարձյալ նրա համար հանկարծ բոլորովին պարզ ու հասկանալի դարձավ, որ հիմա ինքը սարսափելի սուտ է ասել, որ իրեն ոչ միայն երբևէ չի վիճակվի բավականաչափ զրուցելու ճար ունենալ, այլև երբեք, ոչ ոքի հետ ոչ մի բանի մասին չկնաք է խոսի։ Այդ տանջալից մտքի ապարդյունությունը այնքան ուժեղ էր, որ նա մի ակնթարթ համարյա բոլորովին ուշքը կորցրեց, վեր կացավ ու ոչ ոքի չնայելով, փորձեց դուրս գալ սենյակից։

— Ի՞նչ ես անում,— գոչեց Ռազումիխինը՝ բռնելով նրա թևից։

Ռասկոլնիկովը դարձյալ նստեց ու սկսեց լուռ դիտել շրջապատը. բոլորը տարակուսանքով նայում էին նրան։

— Հը՛, ինչո՞ւ բոլորդ այդպես տխուր եք,— հանկարծ բոլորովին անսպասելի գոչեց նա,— մի որևէ բան ասեք, հո սուսուփուս չե՞նք նստելու։ Դեհ, խոսեք, էլի, սկսեք զրուցել... Հավաքվել ենք ու լռում ենք... Դեհ, մի որևէ բան ասացեք։

— Փառք աստծո, իսկ ես կարծում էի, թե երեկվա պես նրան ինչ-որ բան է պատահում,— խաչակնքելով ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Ի՞նչ եղավ քեզ, Ռոդյա,— անվստահ հարցրեց Ավդոտյա Ռոմանովնան։

— Ոչինչ, այնպես, էլի, մի բան հիշեցի,— պատասխանեց Ռասկոլնիկովը և հանկարծ ծիծաղեց։

— Էհ, թե որ մի բան է, դա լավ է, թե չէ ես մտածեցի, որ...— փնթփնթաց Զոսիմովը՝ վեր կենալով բազմոցից։— Ես պետք է գնամ. գուցե էլի գամ... եթե տանը լինի...

Նա գլուխ տվեց ու գնաց։

— Ի՜նչ հիանալի մարդ է,— ասաց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Այո, հիանալի, հրաշալի, կրթված, խելացի մարդ է... — հանկարծ խոսեց Ռասկոլնիկովը ինչ-որ անակնկալ շուտասելուկով ու մինչև այժմ չտեսնված ինչ-որ աշխուժությամբ,— չեմ հիշում, թե առաջ, մինչև հիվանդանալս նրան սրաեղ էի հանդիպել... Կարծեմ մի տեղ հանդիպել եմ... Սա էլ լավ մարդ է,— գլխով ցույց տվեց նա Ռազումիխինին,— քեզ դուր գալի՞ս է, Դունյա,— հարցրեց նա քրոջը և հայտնի չէ ինչու հանկարծ ծիծաղեց։

— Շա՜տ,— պատասխանեց Դունյան։

— Փո՜ւ, ի՜նչ կոպիտն ես,— ասաց խիստ շփոթված ու կարմրած Ռազումիխինը և աթոռից վեր կացավ։ Պուլլխերիա Ալեքսանդրովնան մի քիչ ժպտաց, իսկ Ռասկոլնիկովը բարձրաձայն քրքջաց։

— Ո՞ւր ես գնում։

— Ես էլ... գործ ունեմ։

— Ոչ մի գործ էլ չունես, կաց։ Զոսիմովը գնաց, դու էլ հետևում ես նրան։ Մի գնա... ժամը քանի՞սն է, տասներկուսը կլինի՞։ Ի՜նչ սիրունիկ ժամացույց ունես, Դունյա։ Էլ ինչու դուք նորից լռեցիք։ Հենց միայն ես եմ խոսում...

— Սա Մարֆա Պետրովնայի նվերն է,— պատասխանեց Դունյան։

— Եվ շատ թանկ է,— ավելացրեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Որքան էլ մեծ է, համարյա կանացի չէ։

— Ես այսպիսի ժամացույց եմ սիրում,— ասաց Դունյան։

«Ուրեմն փեսացուի նվերը չէ»,— մտածեց Ռազումիխինը և չգիտես ինչու ուրախացավ։

— Իսկ ես կարծում էի, թե դա փեսացուի նվերն է,— ասաց Ռասկոլնիկովը։

— Ոչ, նա դեռ ոչինչ չի նվիրել Դունեչկային։

— Հա, հիշո՞ւմ եք, մայրիկ, ես սիրահարված էի և ուզում էի ամուսնանալ,— հանկարծակի ասաց Ռասկոլնիկո-

վը՝ նայելով մորը, որ ապշեց որդու անսպասելի հայտարարությունից և խոսելաձևից։

— Ախ, հա, սիրելիս։— Պուլխերիա Ալեքսանդրովնան հայացքներ փոխանակեց Դունեչկայի և Ռազումիխինի հետ։

— Հը՛մ, այո, դե ի՞նչ պատմեմ ձեզ, նույնիսկ լավ չեմ հիշում։ Նա հիվանդ աղջիկ էր,— շարունակեց Ռասկոլնիկովը՝ կարծես հանկարծ, վերստին մտածմունքի մեջ ընկած ու կիսաձայով հոնքերը,— բոլորովին ծերկար էր. սիրում էր աղքատներին ողորմություն տալ, երազում էր վանք մտնել, ու մի անգամ, այդ ասելով ինձ, բուռ-բուռ արցունք թափեց. այո, այո... հիշում եմ... պարզ հիշում եմ։ Տգեղ էր... Ուղղակի չգիտեմ, թե ինչի համար գրավվեցի նրանով, գուցե այն պատճառով, որ միշտ հիվանդ էր... եթե նաև կաղ կամ թե կուզիկ լիներ, ես թերևս էլ ավելի սիրեի նրան... (Ռասկոլնիկովը մտախոհ ժպտաց)։ Այնպես էլի, դա մի ինչ-որ գարնանային զառանցանք էր...

— Ոչ, այդ միայն գարնանային զառանցանք չէր,— ոգեվորությամբ ասաց Դունեչկան։

Ռասկոլնիկովը ուշադիր ու լարված նայեց քրոջը. լավ լսեց և նույնիսկ չհասկացավ նրա խոսքերը։ Հետաս խորապես մտազբաղ վեր կացավ, մոտեցավ մորը, համբուրեց նրան, վերադարձավ իր տեղը ու նստեց։

— Դու նրան հիմա էլ ես սիրում,— ասաց սրտահույզ Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Նրա՞ն, հիմա՞։ Ախ, հա՛... դուք նրա մասին եք խոսում։ Ոչ, այդ ամենը այժմ կարծես հանդերձյալ աշխարհումն է... և այնքան էլ վաղուց է եղել։ Ու շուրջդ ամեն ինչ կարծես ոչ թե այստեղ, այլ մի ուրիշ տեղ է կատարվում։

Ռասկոլնիկովը ուշադրությամբ նայեց նրանց։

— Ահա և ձեզ էլ... Կարծես հազար վերստ հեռավորությունից եմ նայում... էհ, սատանան գիտե, թե մենք ինչու ենք այդ մասին խոսում։ Ինչի՞ համար է հարց ու փորձը,— սրտնեղելով ավելացրեց նա և լռեց, կծոտեց եղունգը ու նորից մտածմունքի մեջ ընկավ։

— Որքա՜ն վատ բնավորան ունես, Ռոդյա, կարծես գա-

գաղ լինի,— հանկարծ ասաց Պուլլխերիա Ալեքսանդրովնան՝ ընդհատելով ծանր լռությունը,— ես հավատացած եմ, որ դու մասամբ բնակարանիդ պատճառով ես այդպես մելամաղձոտ դարձել։

— Բնակարա՞նս...— մտացրիվ պատասխանեց Ռասկոլնիկովը։— Այո, բնակարանս դրան շատ բաներով է նպաստել... Ես այդ մասին էլ եմ մտածել... Սակայն երանի թե դուք գիտենայիք, մայրիկ, թե հիմա ինչպիսի տարօրինակ միտք արտահայտեցիք,— ավելացրեց նա հանկարծ և անհարմար քմծիծաղ տվեց։

Էլի մի քանի րոպե, և այդ մարդիկ, երեք տարվա անջատումից հետո հանդիպած այդ հարազատները, խոսակցության այդ ազգակցական տոնը, գեթ որևէ բանի մասին խոսելու լիակատար անկարելիությամբ հանդերձ՝ ի վերջո նրա համար իսպառ անտանելի կդառնային։ Սակայն կար անհետաձգելի մի խնդիր, որը այսպես թե այնպես հարկավոր էր լուծել այդ օրը,— նա այդպես էլ որոշել էր դեռ ժամեր առաջ, երբ արթնացել էր։ Հիմա այդ գործը, որպես ելք, ուրախացրեց նրան։

— Այ թե ինչ, Դունյա,— լրջորեն ու սառնությամբ ասաց նա,— ես, իհարկե, երեկվա վարմունքիս համար քեզնից ներողություն եմ խնդրում, բայց պարտք եմ համարում դարձյալ քեզ հիշեցնել, որ իմ գլխավոր մտադրությունից չեմ շեղվում։ Կամ ես կամ Լուժինը։ Թող ես ստոր լինեմ, բայց դու պետք է նրանից ձեռք քաշես։ Ես, կամ նա։ Իսկ եթե դու ամուսնանաս Լուժինի հետ, ես քեզ այլևս իմ քույրը չեմ համարի։

— Ռոդյա, Ռոդյա, ախր այդ բոլորը նույնն է, ինչ որ երեկ եղավ,— վշտալի բացականչեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան,— ինչո՞ւ դու քեզ շարունակ ստոր ես անվանում, ես այդ չեմ կարող տանել։ Երեկ էլ այդպես եղավ...

— Եղբայրս,— կտրուկ և նույնպես սառն պատասխանեց Դունյան,— այդ բոլորի մեջ քո կողմից սխալ կա։ Բանն այն է, որ դու կարծեմ ենթադրում ես, թե ես ինչ-որ մեկին և ինչ-որ մեկի համար զոհաբերում եմ ինձ։ Դա ամենևին այդպես չէ։ Ես ամուսնանում եմ հենց ինձ համար, որովհետև

ծանր է հենց իմ վիճակը. ապա և, իհարկե, ուրախ կլինեմ, եթե հաջողվի օգտակար լինել հարազատներիս, բայց տվյալ դեպքում դա իմ գլխավոր ցանկությունը չէ...

«Ստում է,— մտածում էր Ռասկոլնիկովը՝ բարկությունից կծոտելով եղունգները,— հպարտ է, չի ուզում խոստովանել, որ ուզում է բարերարություն անել... Գոռոզություն՞ն։ Օ, ստոր բնավորություն ունեցողներ։ Նրանք սիրում են ճիշտ այնպես, ինչպես և՞ատում են... Օ, ինչպես եմ ես... ատում նրանց բոլորին։

— Մի խոսքով, ես ամուսնանում եմ Պյոտր Պետրովիչի հետ,— շարունակեց Դունեչկան,— որովհետև փոքրագույն չարիքն եմ ընտրում։ Ես մտադիր եմ ակնվությամբ կատարել այն ամենը, ինչ որ նա սպասում է ինձնից, հետևաբար նրան չեմ խաբում... Ինչո՞ւ դու հիմա այդպես ժպտացիր։

Դունյան շիկնեց և նրա աչքերում բարկություն նշմարվեց։

— Ամեն ինչ կկատարե՞ս,— թունավոր քմծիծաղով հարցրեց եղբայրը։

— Մինչև որոշ սահման։ Պյոտր Պետրովիչի թե շարժուձևը և թե հարսնախոսության ձևը անմիջապես ինձ ցույց տվին, թե նրան ինչ է հարկավոր։ Իհարկե, նա իրեն գուցե և շատ բարձր է գնահատում, բայց ես հուսով եմ, որ ինձ էլ է գնահատում... Ի՞նչ ես էլի ծիծաղում։

— Իսկ դու ինչո՞ւ ես էլի կարմրում։ Դու ստում ես, քույր, դու դիտմամբ ստում ես, հենց միայն կանացի կամակորությունից դրդված ես ստում, որպեսզի իմ առջև քո ասածին մնաս։ Դու չես կարող հարգել Լուժինին. ես տեսել եմ նրան ու խոսել նրա հետ։ Ուրեմն դու ծախվում ես փողով, ուրեմն, համենայն դեպս, ստոր ես վարվում, ու ես ուրախ եմ, որ դու գոնե կարողանում ես կարմրել։

— Ճիշտ չէ, չեմ ստում,— գոչեց Դունեչկան՝ բոլորովին կորցնելով ինքնատիրապետումը,— ես նրա հետ չեմ ամուսնանա, եթե համոզված չլինեմ, որ նա գնահատում է ինձ, ու ես թանկ եմ նրա համար. ես նրա հետ չեմ ամուսնանա, եթե հաստատ համոզված չլինեմ, որ ինքս կարող եմ հարգել նրան։ Բարեբախտաբար ես կարող եմ դրանում համոզվել

հաստատապես և հենց այսօր։ Իսկ այսպիսի ամուսնությունը ստորություն չէ, դու սխալվում ես։ Իսկ եթե դու իրավացի էլ լիներիր, եթե ես իրոք ստորություն անեի, մի՞թե քո կողմից դա անգթություն չէ ինձ հետ այդպես խոսելը։ Ինչո՞ւ ես դու ինձանից հերոսություն պահանջում, որը դուցե և քո մեջ էլ չկա։ Դա բռնակալություն է, դա բռնություն է։ Եթե ես որևէ մեկին կործանեմ, այդ մեկը հենց ես ինքս կլինեմ... Ես դեռ ոչ ոքի չեմ մորթել... Ի՞նչ ես այդպես ինձ նայում։ Ինչո՞ւ այդպես գունատվեցիր, Ռոդյա, ի՞նչ պատահեց քեզ, Ռոդյա, սիրելիս...

— Տեր աստված, ուշաթափության հասցրեց,— բղավեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Ոչ, ոչ... Դատարկ բան է... ոչինչ... գլուխս մի քիչ պըտըտվեց։ Ամենևին ուշաթափություն չէ... Թողեք այդ ուշաթափությունները... Հը՛մ։ Այո... Ես ի՞նչ էի ուզում ասել. հա՛, դու ի՞նչ կերպ պիտի հենց այսօր համոզվես, որ կարող ես հարգել նրան և որ նա... կգնահատի թե ինչ, ինչպես դու ասացիր։ Դու կարծեմ ասացիր, որ դա այսօր կլինի, թե՞ ես սխալ լսեցի։

— Մայրիկ, Պյոտր Պետրովիչի նամակը ցույց տվեք եղբորս,— ասաց Դունեչկան։

Պուլլխերիա Ալեքսանդրովնան նամակը դողդոջ ձեռքերով տվեց որդուն։ Վերջինս մեծ հետաքրքրությամբ վերցրեց նամակը։ Բայց նախքան բաց անելը նա հանկարծ ինչ-որ զարմանքով նայեց Դունեչկային։

— Տարօրինակ է,— ասաց նա դանդաղ, ասես հանկարծ ապշելով նոր մտքից,— ախր ես ինչո՞ւ եմ գլուխ ցավեցնում։ Ինչի՞ համար է այս ամբողջ ճչոցը։ Ամուսնացիր ում հետ կուզես։

Նա կարծես ինքն իր հետ էր խոսում, բայց իր ասածը լսվեց, և նա շփոթվածի պես մի պահ նայում էր քրոջը։

Վերջապես, նա բացեց նամակը՝ դեռ էլի պահպանելով ինչ-որ տարօրինակ զարմանք արտահայտող իր տեսքը. հետո սկսեց դանդաղ և ուշադիր կարդալ և երկու անգամ կարդաց։ Պուլլխերիա Ալեքսանդրովնան խիստ անհանգիստ էր. քրոջորն էլ ինչ-որ մի առանձին բան էին սպասում։

— Սա ինձ զարմացնում է,— մի քիչ մտածելուց հետո ասաց Ռասկոլնիկովը՝ նամակը հանձնելով մորը և շրջելով ներկաներից որևէ մեկին,— նա հո գործեր է անում, փաստաբան է, խոսելն էլ նույնիսկ մի տեսակ... յուրօրինակ է և անգրագետ է գրում։

Բոլորը շարժվեցին. բոլորովին այդ չէին սպասում։

— Նրանք բոլորն էլ այդպես են գրում,— շեշտեց Ռազումիխինը։

— Դու կարդացե՞լ ես։

— Այո։

— Մենք նրան ցույց ենք տվել, Ռոդյա, մենք... առավոտը խորհրդակցել ենք,— շփոթվելով ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Սա դատավորի ոճ է,— նրան ընդհատեց Ռազումիխինը,— դատավորների թղթերը մինչև այժմ այդպես են գրվում։

— Դատավորի՞։ Այո, հենց դատավորի, գործնական գրություն է... Ինքն էլ անգրագետ չի գրված, սակայն այնքան էլ գրական չէ. գործնական է։

— Պյոտր Պետրովիչը չի էլ թաքցնում, որ կոպեկներով է ուսում առել, և նույնիսկ պարծենում է, որ ինքն է իր համար ճանապարհ հարթել,— ասաց Ավդոտյա Ռոմանովնան՝ մի քիչ նեղացած լինելով եղբոր նոր խոսելաձևից։

— Էհ, եթե պարծենում է, ուրեմն պարծենալու բան կա, ես չեմ հակաճառում։ Դու, քույրս, կարծեմ վիրավորվեցիր, որ ես ամբողջ նամակից այսպիսի անպատշաճ եզրակացության հանգեցի, ու կարծում ես, թե ես դիտմամբ խոսեցի այդ դատարկ բաների մասին, որպեսզի սրտնեղելուց քեզ տհաճություն պատճառեի։ Ընդհակառակը, ոճի առթիվ գըլխումս մի դիտողություն ծագեց, որը ամենևին էլ ավելորդ չէ ներկա դեպքում։ Նամակում ասված է՝ «ինքներդ ձեզ մեղադրեք», մի արտահայտություն, որ խիստ նշանակալից է և պարզ, ու բացի դրանից, կա սպառնալիք, որ եթե ես գամ, նա իսկույն կհեռանա։ Հեռանալու այդ սպառնալիքը ցույց է տալիս, որ նա կարող է սպառնալ երկուսիդ էլ թողնել, եթե չհնազանդվեք նրան, ու թողնել այժմ, երբ ձեզ արդեն Պե-

տերբուրգ է կանչել։ Էհ, դու ի՞նչ ես կարծում, արդյո՞ք կարելի է Լուժինի այդ արտահայտությունից վիրավորվել ճիշտ այնպես, ինչպես այն դեպքում, եթե այդպիսի բան գրեր սա (նա ցույց տվեց Ռազումիխինին), կամ Զոսիմովը, կամ մեկնից որևէ մեկը։

— Ո՜ւ՛չ,— աշխուժանալով պատասխանեց Դունեչկան, — ես լավ եմ հասկացել, որ դա խիստ պարզամտորեն է գրված, թերևս այն պատճառով, որ նա գրելու վարպետ չէ... Դու այդ լավ ես կշռադատել, եղբայրս։ Ես նույնիսկ չէի սպասում...

— Սա դատավորի գրելաձև է, այլ կերպ չէր կարելի գրել, ու դուրս է եկել ավելի կոպիտ, քան գուցե նա կուզենար։ Ի միջի այլոց, ես պետք է քեզ մի քիչ հիասթափեցնեմ. այս նամակում կա ես մի արտահայտություն, բավական ստոր զրպարտություն իմ հասցեին։ Երեկ ես փողը տվել եմ թոքախտավոր ու վշտահար այրի կնոջը, ոչ թե «թաղման պատրվակով», այլ ուղղակի թաղման համար, և ոչ թե աղջկան,— «վատ վայրի տեր աղջկան»,— ինչպես գրում է նա, այլ հենց այրի կնոջը (այդ աղջկան երեկ ես կյանքումս առաջին անգամ տեսա)։ Այդ բոլորի մեջ ես տեսնում եմ ակնբախ մի ցանկություն, ինձ վարկաբեկել ու կռվեցնել ձեզ հետ։ Դա արտահայտված է դարձյալ ըստ դատավորի մտայնության, այսինքն՝ նպատակի խիստ ակներև դրսևորմամբ և շատ պարզամիտ հապճեպությամբ։ Նա խելացի մարդ է, բայց խելացի վարվելու համար միայն խելքը քիչ է։ Այս բոլորը պատկերում է այդ մարդուն և... չեմ կարծում, թե նա լավ գնահատի քեզ։ Այս ամենը քեզ ասում եմ որպես խրատ, որովհետև անկեղծորեն քեզ բարիք եմ ցանկանում...

Դունեչկան չպատասխանեց. նա վճիռ էր ընդունել օր առաջ և միայն երեկոյին էր սպասում.

— Դե, ուրեմն դու ի՞նչ ես որոշում, Ռոդյա,— հարցրեց Պուլխերիա Ալեքսանդրովնան, որը առաջվանից ավելի էր անհանգստացել Ռասկոլնիկովի խոսելու հանկարծակի, նոր, զուրծնական տոնից։

— Այսինքն՝ ի՞նչ պետք է «որոշեմ»։

— Պյոտր Պետրովիչը գրում է, որ դու երեկոյան մեզ մոտ

չլինես, որ ինքը կհեռանա... եթե դու գաս։ Ուրեմն ի՞նչ, կգա՞ս։

— Դա, իհարկե, ոչ թե ես եմ որոշելու, այլ նախ և առաջ դուք, եթե Պյոտր Պետրովիչի այդ պահանջը չի վիրավորում ձեզ, երկրորդ, որոշելու է Դունյան, եթե նա էլ չի վիրավորվում, ես կվարվեմ այնպես, ինչպես դուք ցանկանաք,— սառը տոնով ավելացրեց Ռասկոլնիկովը։

— Դունեչկան արդեն որոշել է մեր անելիքը, ու ես միանգամայն համաձայն եմ նրա հետ,— շտապեց հայտնել Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Ես որոշել եմ խնդրել քեզ, Ռոդյա, թախանձագին խնդրել, որ անպայման ներկա լինես այդ տեսակցությանը,— ասաց Դունյան,— կգա՞ս։

— Կգամ։

— Ես ձեզ էլ եմ խնդրում ժամը ութին լինել մեզ մոտ,— դիմեց Դունյան Ռազումիխինին,— մայրիկ, ես նրան էլ եմ հրավիրում։

— Շատ լավ ես անում, Դունեչկա։ Էհ, ինչպես որ դուք որոշեցիք, այնպես էլ թող լինի,— ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։— Ինձ համար դա լավ է. չեմ սիրում կեղծել ու ստել, ավելի լավ է ասենք ամբողջ ճշմարտությունը... Հիմա կուզես բարկացիր, կուզես մի բարկացիր, Պյոտր Պետրովիչ։

IV

Այդ րոպեին դուռը կամաց բացվեց ու ներս մտավ մի աղջիկ՝ երկչոտ նայելով շուրջը։ Բոլորը զարմանքով ու հետաքրքրությամբ նայեցին նրան։ Ռասկոլնիկովը առաջին հայացքից չճանաչեց նրան։ Դա Սոֆյա Սեմյոնովնա Մարմելադովան էր։ Ռասկոլնիկովը նախորդ օրը նրան տեսել էր առաջին անգամ, բայց այնպիսի ժամանակ, այնպիսի պայմաններում և այնպիսի հագուստով, որ նրա հիշողության մեջ ուրիշ անձնավորության կերպարն էր տպավորվել։ Այժմ դա համեստ և նույնիսկ աղքատ հագնված մի աղջիկ էր, դեռ շատ ջահել, համարյա փոքրիկ աղջկա նման, համեստ և վայելուչ շարժուձևով, պայծառ, բայց կարծես մի փոքր վախեցած դեմքով։

Նա հագել էր շատ հասարակ տնային շրջազգեստ, առաջվա ձևի հին գլխարկ դրել. միայն թե ինչպես նախորդ օրը, ձեռքին հովանոց կար։ Երբ տեսավ, որ սենյակը լեցուն է մարդկանցով, չէ թե շփոթվեց, այլ բոլորովին կորցրեց իրեն, երիշոտեց ինչպես փոքրիկ երեխա, և նույնիսկ փորձեց ետ դառնալ։

— Ախ... այդ դո՞ւք եք...— չափազանց զարմանալով ասաց Ռասկոլնիկովը ու հանկարծ ինքն էլ շփոթվեց։

Նա իսկույն մտածեց, որ մայրը և քույրը Լուժինի նամակից որոշ բան գիտեն «վատ վարքի տեր» ինչ-որ աղջկա մասին։ Քիչ առաջ նա բողոքում էր Լուժինի զրպարտության դեմ և ասում, որ այդ աղջկան առաջին անգամ էր տեսել, ու հանկարծ վերջինս ինքն է հայտնվում։ Հիշեց նաև, որ բոլորովին չէր բողոքել «վատ վարքի տեր» արտահայտության դեմ։ Այս ամենը անորոշ կերպով ու վայրկենապես անցավ նրա մտքով։ Բայց ուշադիր նայելով, նա հանկարծ տեսավ, որ այդ նվաստացած էակը արդեն այնքան է նվաստացվել, որ հանկարծ խղճաց նրան։ Իսկ երբ աղջիկը վախից փորձեց դուրս փախչել, նրա՝ Ռասկոլնիկովի մեջ կարծես մի ինչ-որ բան տակնուվրա եղավ։

— Ես ձեզ բոլորովին չէի սպասում,— հապճեպ ասաց նա՝ հայացքով կանգնեցնելով աղջկան։— Խնդրեմ նստեք։ Դուք երևի Կատերինա Իվանովնայի կողմից եք եկել։ Ներեցեք, այդտեղ չէ, ա՛յ, այստեղ նստեցեք...

Երբ Սոնյան ներս մտավ, Ռազումիխինը, որ նստած էր Ռասկոլնիկովի երեք աթոռներից մեկին, հենց դռան կողքին, վեր կացավ, որ ճանապարհ տար նրան։ Ռասկոլնիկովը սկզբում աղջկան ցույց տվեց բազմոցի ծայրը, ուր քիչ առաջ նստել էր Զոսիմովը, բայց հիշելով, որ այդ բազմոցը շատ մոտիկ մարդու տեղ է և ինքը քնում է դրա վրա, շտապեց աղջկան ցույց տալ Ռազումիխինի աթոռը։

— Իսկ դու նստիր այստեղ,— ասաց նա Ռազումիխինին և նրան նստեցրեց բազմոցի ծայրին, Զոսիմովի տեղը։

Սոնյան նստեց համարյա դողալով վախից ու երկչոտ նայեց կանանց։ Երևում էր, որ նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչպես կարող էր նստել նրանց կողքին։ Ըմբռնելով այդ, նա

այնքան վախեցավ, որ հանկարծ նորից վեր կացավ և բոլորովին շփոթված դիմեց Ռասկոլնիկովին.

— Ես... ես... եկա մի բոպեով, ներեցեք, որ ձեզ անհանդստացրի,— կմկմալով ասաց նա։— Ես եկել եմ Կատերինա Իվանովնայի կողմից, ուրիշ մեկը չկար, որ նա ուղարկեր... Կատերինա Իվանովնան հրամայեց շատ խնդրել ձեզ, որ վաղը առավոտյան... պատարագից հետո լինեք հուղարկավորման վայրում... Միտրոֆանևյան գերեզմանոցում, հետո էլ մեզ մոտ... նրա մոտ... անուշ անելու... նրան պատիվ անելու... Նա պատվիրեց խնդրել ձեզ։

Սոնյան կմկմաց ու լռեց։

— Կաշխատեմ անպայման... անպայման գալ,— պատասխանեց Ռասկոլնիկովը. նա էլ վեր կացավ՝ նույնպես կմկմալով ու չվերջացնելով խոսքը...— բարի եղեք, նստեցեք,— հանկարծ ասաց նա,— ես պետք է խոսեմ ձեզ հետ։ Խնդրում եմ, դուք գուցե շտապում եք, շնորհ արեք, ինձ երկու բոպե նվիրեք...

Եվ նա աթոռը հրամցրեց աղջկան։ Սոնյան դարձյալ նստեց ու էլի երկչոտ, շփոթված, հապճեպ նայեց կանանց և հանկարծ կախեց գլուխը։

Ռասկոլնիկովի գունատ դեմքը շիկնեց. նա կարծես ցնցվեց ամբողջ մարմնով. աչքերը ճառագայթեցին։

— Մայրիկ,— ասաց նա կտրուկ և անհողդողդ,— նա Սոֆյա Սեմյոնովնա Մարմելադովնան է, հենց այն դժբախտ պարոն Մարմելադովի դուստրը, որ երեկ իմ աչքերի առաջ կառքի տակ ընկավ և որի մասին ես արդեն ասել եմ ձեզ...

Պուլխերիա Ալեքսանդրովնան նայեց Սոնյային և մի քիչ կկոցեց աչքերը։ Չնայելով Ռոդյայի համառ ու ստստող հայացքի հանդեպ իր շփոթմունքին, նա ոչ մի կերպ չկարողացավ հրաժարվել այդ հաճույքից։ Դոմնեչկան լրջախոհ, ակնապիշ նայում էր խեղճ աղջկա հենց երեսին ու տարակուսանքով զննում նրան։ Լսելով Ռասկոլնիկովի խոսքերը, Սոնյան բարձրացրեց գլուխը, բայց առաջվանից է՛լ ավելի շփոթվեց։

— Ես ուզում էի ձեզ հարցնել, թե այսօր ձեզ մոտ ինչ եղավ,— դիմեց նրան Ռասկոլնիկովը,— հո ձեզ չանհանգստացրին, օրինակ, ոստիկանության կողմից։

— Ոչ, ամեն ինչ անցավ... Չէ՞ որ բոլորովին պարզ է, թե

ինչից է եղել մահը. չանհանգստացրին. միայն թե տնվորներն են բարկանում։

— Ինչո՞ւ։

— Որ դիակը երկար է մնում տանը... հիմա հո շոգ է, տոթ... այնպես որ, այսօր, երեկոյան ժամերգության պահին կտանեն գերեզմանոց, մինչև վաղը կմնա մատուռում։ Կատերինա Իվանովնան սկզբում այդ չէր ուզում, իսկ հիմա ինքն էլ է տեսնում, որ չի կարելի տանը թողնել...

— Ուրեմն այսօ՞ր։

— Նա ձեզ խնդրում է պատիվ անել մեզ, վաղը գալ եկեղեցի, հուղարկավորման, հետո էլ գալ իր մոտ, հոգեհացի։

— Նա հոգեհա՞ց է պատրաստում։

— Այո, ուտելիք. նա պատվիրեց խորին շնորհակալություն հայտնել ձեզ, որ դուք երեկ օգնեցիք մեզ... առանց ձեզ թաղման ոչ մի միջոց չէր լինի։— Աղջկա թե շրթունքները և թե կզակը հանկարծ ընդվեցին, բայց նա որտապնդվեց ու պահեց իրեն՝ դարձյալ խոնարհելով գլուխը ու նայելով հատակին։

Խոսակցության ժամանակ Ռասկոլնիկովը աչքերով զննում էր նրան։ Աղջկա փոքրիկ դեմքը նիհար էր, բոլորովին նիհար ու գունատ, բավական անկանոն և մի տեսակ սուր գծերով, սուր, փոքրիկ քթով և սուր կզակով։ Չէր կարելի նրան սիրունատես անվանել, բայց դրա փոխարեն երկնագույն աչքերը այնքա՞ն պայծառ էին, ու երբ դրանք աշխուժանում էին, դեմքը այնքան բարություն և պարզամտություն էր արտահայտում, որ նա ակամայից ուշադրություն էր գրավում։ Բացի դրանից, նրա դեմքին և նրա ամբողջ կերպարանքում կար առանձնահատուկ, ընորոշ մի գիծ. չնայած իր տասնութամյա հասակին, նա թվում էր համարյա դեռ փոքրիկ աղջիկ, իր տարիքից շատ ավելի փոքր, գրեթե բոլորովին երեխա, և դա երբեմն նույնիսկ ծիծաղելի կերպով էր արտահայտվում նրա որոշ շարժումներում։

— Բայց մի՞թե Կատերինա Իվանովնան կարող էր բավարարվել այդքան քիչ միջոցներով, նույնիսկ ուտելիք էլ պատրաստել,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ համառորեն շարունակելով խոսակցությունը։

— Լինելու է հասարակ դագաղ... ու ամեն ինչ էլ հասա-

րակ, այնպես որ թանկ չի նստի... Ես ու Կատերինա Իվանովնան հաշիվ արեցինք, այնպես որ հոգևհացի համար էլ փող կմնա... Կատերինա Իվանովնան շատ է ուզում, որ այդպես լինի։ Այլ կերպ չի կարելի... դա սփոփանք է նրա համար... Նա այդպես է, դուք հո գիտեք...

— Հասկանում եմ, հասկանում եմ... դե իհարկե... Հը՛, ի՞նչ եք դիտում սենյակս. մայրիկս ասում է, որ սա դագաղի է նման։

— Երեկ դուք ձեզ մոտ եղած ամբողջ փողը տվիք մեզ,— ինչ-որ ուժեղ և արագ շշնջոցով հանկարծ պատասխանեց Սոնեչկան ու դարձյալ բոլորովին խոնարհեց գլուխը։ Նրա շերթունքները և կզակը դարձյալ ցնցվեցին։ Ռասկոլնիկովի աղքատիկ ապրելավայրը արդեն վաղուց էր ապշեցրել նրան, և հիմա այդ խոսքերը հանկարծակի, ինքնարերաբար թռան նրա բերանից։ Տիրեց լռություն։ Դունեչկայի աչքերը մի տեսակ պայծառացան, իսկ Պուլխերիա Ալեքսանդրովնան նույնիսկ սիրալիրությամբ նայեց Սոնյային։

— Ռոդյա,— վեր կենալով ասաց նա,— մենք, իհարկե, միասին կճաշենք։ Դունեչկա, գնանք... Իսկ դու, Ռոդյա, գնայիր մի քիչ զբոսնելու, հետո էլ հանգստանայիր ու շուտ գայիր մեզ մոտ... Թե չէ մենք քեզ հոգնեցրինք, ես վախենում եմ...

— Այո, այո, կգամ,— արագ վեր կենալով պատասխանեց Ռասկոլնիկովը...— Ի միջի այլոց ես գործ ունեմ...

— Մի՞թե դուք միասին չեք ճաշելու,— դուշեց Ռազումիխինը՝ զարմացած նայելով Ռասկոլնիկովին,— դու ի՞նչ ես մտածում։

— Այո, այո, կգամ իհարկե, իհարկե... Իսկ դու կաց մի րոպե։ Սա այժմ հո ձեզ հարկավոր չէ՞, մայրիկ, կամ դուցե ես սրան խլո՞ւմ եմ ձեզնից։

— Օ, ոչ, ոչ։ Իսկ դուք, Դմիտրի Պրոկոֆիչ, բարի եղեք, եկեք ճաշելու։

— Խնդրում եմ եկեք,— ասաց Դունյան։

Ռազումիխինը գլուխ տվեց և թունդ կարմրեց։ Մի ակնթարթ բոլորն էլ հանկարծ ինչ-որ տարօրինակ անհարմարություն զգացին։

— Մնաս բարով, Ռոդյա, այսինքն ցտեսություն. չեմ սի-

ում «մնաս բարով» ասել։ Մնաս բարով, Նաստասյա... ախ, էլի «մնաս բարով» ասացի...

Պուլխերիա Ալեքսանդրովնան ուզում էր Սոնյային էլ գբլուխ տալ, բայց ինչ-որ չհաջողվեց, ու շտապելով, սենյակից դուրս ելավ։

Իսկ Ավդոտյա Ռոմանովնան կարծես հերթի էր սպասում, ու հետևելով մորը և անցնելով Սոնյայի կողքից, ուշադրությամբ, քաղաքավարի ու լիովին գլուխ տվեց նրան։ Սոնեչկան շփոթվեց, գլուխ տվեց մի տեսակ ամաչարանքով և վախեցած, ու նրա դեմքին նույնիսկ ինչ-որ հիվանդագին զգացում անդրադարձավ, կարծես թե Ավդոտյա Ռոմանովնայի քաղաքավարությունը և ուշադրությունը ծանր ու տանջող էին իր համար։

— Դո՛ւնյա, բարով գնաս,— արդեն սրահում գոչեց Ռասկոլնիկովը,— դե, տո՛ւր ձեռքդ։

— Ախր ես ձեռք տվի, մոռացա՞ր,— պատասխանեց Դունյան՝ սիրալիր ու անհարմար շուռ գալով նրա կողմը։

— Ինչ կա որ, էլի ձեռք տուր։

Եվ նա ամուր սեղմեց բրոշ մատները։ Դունեչկան ժպտաց, շիկնեց, հապճեպ նա քաշեց ձեռքը ու գնաց մոր ետևից. հայտնի չէ, ինչու, նա էլ իրեն երջանիկ զգաց։

— Ահա և լավ է ամեն ինչ,— ասաց Ռասկոլնիկովը Սոնյային՝ վերադառնալով իր խուցը և ուշադիր նայելով նրան,— ողորմի մեռելների հոգուն, իսկ կենդանի մարդիկ դեռ պետք է ապրեն, այնպես չէ՞, հո այդպե՞ս է։

Սոնյան նույնիսկ զարմանքով էր նայում հանկարծակի պայծառացած նրա դեմքին. Ռասկոլնիկովը մի քանի ակընթարթ աչքերով լուռ և ուշադիր զննում էր նրան։ Նա այդ րոպեին հանկարծ վերհիշեց այն ամենը, ինչ որ Սոնյայի մասին պատմել էր վերջինիս մեռած հայրը։

— Ներ ասուված,— փողոց դուրս գալուց հետո իսկույն սկսեց խոսել Պուլխերիա Ալեքսանդրովնան,— Դունեչկա, հիմա ես ինքս էլ կարծես ուրախ եմ, որ գնացինք այնտեղից. սիրտս թեթևացավ։ Մի՞թե երեկ վագոնում մտքովս կանցներ, որ նույնիսկ դրա համար էլ պիտի ուրախանամ։

— Դարձյալ ասում եմ ձեզ, մայրիկ, որ նա դեռ շատ հիվանդ է։ Մի՞թե դուք չեք տեսնում. դուցե մեր կարգադրությունը քաշելուց է տկարացել։ Հարկավոր է ներողամիտ լինել, կարելի է շատ, շատ բան ներել...

— Իսկ դու ներողամիտ չէիր,— տաքացած ու խանդոտ վրա բերեց Պուլխերիա Ալեքսանդրովնան։— Գիտե՞ս, Դունյա, ես նայում էի երկուսիդ էլ, զուտ իսկ և իսկ նման ես նրան, և ոչ այնքան դեմքով, որքան հոգով. երկուսդ էլ մեծամաղձոտ եք, երկուսդ էլ նոթոտ ու տաքարյուն, երկուսդ էլ գոռող ու մեծահոգի... Չի կարող պատահել, որ նա եսամոլ լինի, այնպես չէ՞, Դունեչկա... Հենց որ մտածում եմ, թե այսօր երեկոյան մեզ մոտ ինչ է լինելու, ուրտս նվաղում է։

— Մի՛ անհանգստանաք, մայրիկ, կլինի այն, ինչ որ պետք է լինի։

— Դունեչկա, հապա մտածիր, թե մենք հիմա ինչ դրության մեջ ենք, ի՞նչ կլինի, եթե Պյոտր Պետրովիչը մեզնից ձեռք քաշի,— հանկարծ անդգուշաբար ասաց խեղճ Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Դրանից հետո նա ինչի՞ է պետք,— կտրուկ և արհամարհանքով պատասխանեց Դունյան։

— Մենք լավ արեցինք, որ եկանք,— վրա բերեց Պուլխերիա Ալեքսանդրովնան՝ ընդհատելով աղջկան,— Ռոդյան շտապում էր գործով ինչ-որ տեղ գնալ. թող ման գա, գոնե մաքուր օդ շնչի... Նրա սենյակում սարսափելի տոթ է... Իսկ այստեղ ո՞րտեղից մաքուր օդ գտնես, այստեղ փողոցներում էլ այնպես է, ինչպես օդանցք չունեցող սենյակներում։ Տեր աստված, այս ի՞նչ քաղաք է... Կաց, ճամփա տուր, թե չէ կճղմեն, այդ ի՞նչ են տանում. հա՛, դաշնամուր է. տես, է՛, ոնց են հրմշտում իրար... Ես շատ եմ վախենում նաև այն աղջկանից...

— Ո՞ր աղջկանից, մայրիկ։

— Սոֆյա Սեմյոնովնայից, որ Ռոդյայի մոտ եկավ։

— Ինչո՞ւ ես վախենում։

— Նախազգացումս այդպես է, Դունյա։ Էհ, հավատո՞ւմ ես, հենց որ նա ներս մտավ, ես այդ նույն րոպեին մտածեցի, որ դլխավոր բանը այստեղ է որ կա...

— Ոչ մի դլխավոր բան,— սրտնեղելով գոչեց Դունյան։

— Թողեք ձեր այդ նախազգացումները, մայրիկ։ Ռոդյան միայն երեկվանից է ծանոթ նրա հետ, ու երբ աղջիկը ներս մտավ, Ռոդյան չճանաչեց նրան։

— Այ, կտեսնես... նա շփոթեցնում է ինձ, կտեսնես, թե ինչ կլինի. ես խիստ վախենում, նայում է ինձ, նայում է, և ինչ տնսակ աչքե՞ր ունի, ես հագիվ էի աթոռին նստած մնում, հիշո՞ւմ ես, երբ Ռոդյան հայտնեց, թե ով է նա։ Ես զարմանում եմ. Պյոտր Պետրովիչը այդպիսի բաներ է գրում այդ աղջկա մասին, իսկ Ռոդյան նրան ծանոթացնում է մեզ հետ, այն էլ քեզ հե՞տ։ Ուրեմն այդ աղջիկը թանկ է նրա համար։

— Շատ էլ գրում է, մեր մասին էլ խոսում և գրում էին, մոռացե՞լ եք, ինչ է. ես հավատացած եմ, որ նա... հիանալի աղջիկ է, և այդ բոլորը անհեթեթություն է։

— Աստված տա այդպես լինի։

— Իսկ Պյոտր Պետրովիչը անպետք զրպարտիչ է,— հանկարծ կտրուկ գոչեց Դունեչկան։

Պուլխերիա Ալեքսանդրովնան ուղղակի կուչ եկավ։ Խոստակցությունը ընդհատվեց։

— Ահա թե ինչ, ահա թե ես ինչ գործ ունեմ քեզ հետ...— ասաց Ռասկոլնիկովը՝ Ռազումիխինին տանելով դեպի պատուհանը։

— Ուրեմն ես կասեմ Կատերինա Իվանովնային, որ դուք կգաք...— ասաց Սոնյան և գլուխ տվեց, որպեսզի գնար։

— Հիմա, Սոֆյա Սեմյոնովնա, մենք գաղտնիքներ չունենք, դուք չեք խանգարում... Ես կուզենայի ձեզ էլի մի երկու խոսք ասել... Ահա թե ինչ,— առանց խոսքը վերջացնելու նորից նա դիմեց Ռազումիխինին,— դու հո ճանաչում ես այն... ինչպես է անունը... հա՛, Պորֆիրի Պետրովիչին։

— Ինչպե՛ս չէ, ազգական է։ Ի՞նչ կա որ,— ինչ-որ լարված հետաքրքրությամբ ավելացրեց Ռազումիխինը։

— Կարծեմ նա քննում է... այն սպանության գործը... այնպես չէ՞... երեկ դուք խոսում էիք այդ մասին։

— Այո... ի՞նչ կա որ։— Ռազումիխինը հանկարծ շռեց աչքերը։

— Նա հարցաքննում էր գրավ դնողներին, իսկ այնտեղ ես էլ գրավ դրած իրեր ունեմ, այնպես, էլի, հասարակ բաներ

են,— քրոջս մատանին, որ նա նվիրել էր ինձ իբրև հիշատակ, երբ ես մեկնում էի Պետերբուրգ, ու հորս արծաթե ժամացույցը։ Դրանք արժեն ընդամենը հինգ-վեց ռուբլի, բայց ինձ համար թանկ են, հիշատակ են։ Հիմա ես ի՞նչ անեմ։ Չեմ ուզում, որ այդ իրերը կորչեն, մանավանդ ժամացույցը։ Քիչ առաջ վախենում էի, որ մայրս ինձ կհարցնի ժամը, երբ խոսեցինք Դունեչկայի ժամացույցի մասին։ Միակ իրն է, որ հորից մնացել է ինձ։ Մայրս Ալսարսափի, եթե դա կորչի։ Դե՛, կանայք են, էլի՛։ Ի՞նչ կարելի է անել, սովորեցրու։ Գիտեմ, որ պետք է դիմել քաղաքամաս։ Ավելի լավ չէ՞ դիմել հենց Պորֆիրիին, հը՞։ Դու ի՞նչ ես կարծում։ Գործը ավելի շուտ գլուխ կգա։ Ա՛յ, կտեսնես, դեռ մինչև ճաշ մայրիկս կհարցնի ժամացույցի մասին։

— Պետք է դիմել ոչ թե քաղաքամաս, այլ անպայման Պորֆիրիին,— ինչ-որ մի անսովոր հուզմունքով կոչեց Ռազումիխինը։— Էհ, որքա՞ն ուրախ եմ։ Դե գնանք հենց հիմա, բոլորովին մոտիկ է, հավանորեն կգտնենք նրան։

— Ա՛յո... գնանք...

— Նա մեծ, մեծ, մեծ ուրախությամբ կծանոթանա քեզ հետ։ Հաճախ ես նրան շատ բաներ եմ ասել քո մասին... Երեկ էլ եմ ասել։ Գնանք... Ուրեմն դու ճանաչո՞ւմ էիր պառավին։ Հը՛մ... Հիանալի է այդ բոլորը... Հա՛... Սոֆյա Իվանովնան...

— Սոֆյա Սեմյոնովնա,— ուղղեց Ռասկոլնիկովը։ — Սո՛ֆյա Սեմյոնովնա, սա իմ ընկերն է, Ռազումիխինը, լավ մարդ է...

— Եթե դուք հիմա պետք է գնաք...— խոսքը չվերջացրեց Սոնյան, բոլորովին էլ չնայեց Ռազումիխինին և դրանից ավելի ևս շփոթվեց։

— Դե գնանք,— ասաց Ռասկոլնիկովը,— ես հենց այսօր կանցնեմ ձեզ մոտ, Սոֆյա Սեմյոնովնա, ասացեք, ո՞րտեղ եք ապրում։

Ռասկոլնիկովը չէ՛ թե իրեն կորցնում էր, այլ հենց այնպես, կարծես թե շտապում էր և խուսափում աղջկա հայացքներից։ Սոնյան շիկնելով տվեց իր հասցեն։ Բոլորը միասին դուրս եկան։

— Բա դուռը չե՞ս փակում,— հարցրեց Ռազումիխինը՝ իջնելով նրանց ետևից։

— Եբբեք... Ի միջի այլոց, ահա արդեն երկու տարի է, որ ուզում եմ կողպեք դնել ու չի հաջողվում,— անփույթ ավելացրեց Ռասկոլնիկովը— Բախտավոր են այն մարդիկ, որոնք փակելու ոչինչ չունեն,— ծիծաղելով դիմեց նա Սոնյային։

Նրանք կանգ առան դարպասի մոտ։

— Դուք ա՞ջ կողմն եք գնալու, Սոֆյա Սեմյոնովնա։ Հա՛, դուք ի՞նչպես գտաք ինձ,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ կարծես ցանկանալով ինչ-որ բոլորովին այլ բան ասել աղջկան։ Նա շարունակ ուզում էր նայել Սոնյայի մեզմ, պայծառ աչքերին և դա այնքան էլ չէր հաջողվում...

— Չէ՞ որ դուք երեկ ձեր հասցեն ասել էիք Պոլեչկային։

— Պոլյայի՞ն։ Ախ, հա՛... Պոլեչկային։ Այն... փոքրիկ աղջիկան... Նա ձեր քո՞ւյրն է։ Ուրեմն ես հասցես նրա՞ն եմ տվել։

— Մի՞թե մոռացել եք։

— Ոչ... հիշում եմ...

— Ես ձեր մասին առաջ հանգուցյալից էլ եմ լսել... Միայն թե այն ժամանակ չգիտեի ձեր ազգանունը, նա ինքն էլ չգիտեր... երեկ իմացա ձեր ազգանունը, իսկ այսօր եկա, հարցրի՝ ո՞րտեղ է ապրում պարոն Ռասկոլնիկովը... Չգիտեի, որ դուք էլ տնվորի բնակարանում եք ապրում... Ցտեսություն... Ես Կատերինա Իվանովնային կասեմ, որ դուք կգաք...

Սոնյան շատ ուրախ էր, որ վերջապես հեռացավ. գնաց գլխիկոր, շտապելով, որպեսզի մի կերպ շուտ չքանա նրանց աչքից, որպեսզի մի կերպ անցնի այդ քսան քայլը՝ մինչև աջ կողմը դարձող փողոցը և վերջապես մենակ մնա, ու այնուհետև քայլելով, շտապելով, ոչ ոքի չնայելով, ոչինչ չնկատելով, մտածի, հիշի ու կշռադատի յուրաքանչյուր ասված խոսքը, յուրաքանչյուր հանգամանքը։ Մի ամբողջ անհայտ ու անորոշ աշխարհ բացվեց նրա հոգու մեջ։ Նա հանկարծ հիշեց, որ Ռասկոլնիկովը ինքն էր ուզում նրա մոտ անցնել այդ օրը, գուցե և առավոտյան, գուցե և այդ ժամին։

— Միայն թե ոչ այսօր, խնդրում եմ, ոչ այսօր,— քրթմնջում էր նա սրտի նվազումով, կարծես որևէ մեկին խնդրելով, ինչպես վախեցած երեխա։— Տե՛ր աստված, ինձ մո՛տ... այն սենյակը... նա ամեն ինչ կտեսնի... Օ, տեր աստված։

Եվ նա, իհարկե, այդ բոպեին չէր կարող նկատել իրեն

անծանոթ մի պարոնի, որը համառորեն հետևում և կրնկակոխ ուղեկցում էր իրեն։ Պարոնը նրան ուղեկցում էր հենց դասարանից դուրս գալու պահից։ Այն բոպեին, երբ երեքն էլ՝ Ռազումիխինը, Ռասկոլնիկովը և Սոնյան, կանգ առան մայթի վրա, մի երկու խոսք ասելու, այդ պարոնը անցնելով նրանց կողքից, հանկարծ կարծես ցնցվեց՝ անապասելիորեն, պատահաբար լսելով Սոնյայի հետևյալ խոսքերը՝ «հարցրի՝ ո՞րտեղ է ապրում պարոն Ռասկոլնիկովը»։ Պարոնը արագ, բայց ուշադիր դիտեց երեքին էլ, մանավանդ Ռասկոլնիկովին, որին դիմում էր Սոնյան. հետո նայեց տանը և դա նկատի առավ։ Այդ բոլորը նա արեց մի ակնթարթում, քայլելիս, ու աշխատելով աննկատելի լինել, անցավ առաջ, դանդաղեցրեց քայլերը, կարծես ինչ-որ բան էր սպասում։ Նա հետամտում էր Սոնյային. նա տեսավ, որ նրանք միմյանց հրաժեշտ էին տալիս, և Սոնյան հիմա գնալու է ինչ-որ տեղ, երևի իր բնակարանը։

«Որտե՞ղ կլինի նրա բնակարանը։ Ինչ-որ մի տեղ տեսել եմ այդ դեմքը,— մտածում էր պարոնը՝ վերհիշելով Սոնյայի դեմքը...— հարկավոր է իմանալ»։

Հասնելով փողոցի անկյունը, նա անցավ դրա մյուս կողմը, շուռ եկավ ու տեսավ, որ Սոնյան արդեն գալիս է իր հետևից, նույն ճանապարհով, ու ոչինչ չի նկատում։ Հասնելով փողոցի անկյունը, նա էլ դարձավ դեպի մյուս փողոցը։ Պարոնը մյուս մայթից հետամտում էր նրան, աչքը չէր կտրում նրանից. գնալով մի հիսուն քայլ, նա անցավ այն կողմը, որով գնում էր Սոնյան, հասավ նրան ու քայլեց նրա հետևից, հինգ քայլ հեռավորությամբ։

Նա մոտ հիսուն տարեկան մարդ էր, միջահասակից բարձր, չաղ, լայն ու բարակ ուսերով, որ նրան մի փոքր կորացած տեսք էր տալիս։ Հագնված էր շքեղ ու վայելուչ և հոյակապ բարինի տեսք ուներ։ Ձեռքին կար դեղեցիկ ձեռնափայտ, որով յուրաքանչյուր քայլն անելիս թխկացնում էր մայթին, ձեռքերին էլ բոլորովին նոր ձեռնոցներ կային։ Նրա լայն, սլավոնական դեմքը բավական հաճելի էր, ու դեմքի գույնը թարմ էր, պետերբուրգյան գույն չէր։ Նրա մազերը, որ դեռ շատ խիտ էին, բոլորովին բաց-խարտյաշ էին և մի քիչ ալեխառն, իսկ լայն, խիտ մորուքը, որ բահի ձև ուներ, ավելի բաց գույնի

էր, քան գլխի մազերը։ Աչքերը կապույտ-երկնագույն էին, սառն, ուշադիր և խոհուն նայվածքով. շրթունքները ալ կարմիր էին։ Ընդհանրապես նա հիանալի պահպանված մարդ էր և իր տարիքից շատ ավելի փոքր էր թվում։

Երբ Սոնյան հասավ ջրանցքը, նրանք արդեն մայթի վրա իրար կողքի էին։ Դիտելով նրան, պարոնը կարողացավ նկատել, որ նա մատպրաղ է ու մտացրիվ։ Հասնելով իր տունը, Սոնյան շուռ եկավ դեպի դարպասը, պարոնը ասես մի քիչ կարմանալով, հետևեց նրան։ Սոնյան մտավ բակ, դարձավ աջ, անկյունը, ուր գտնվում էր նրա բնակարանը տանող սանդուղքը։ «Վահ»,— փնթփնթաց անծանոթ բարին և սկսեց նրա հետևից բարձրանալ սանդուղքով։ Սոնյան միայն այստեղ նկատեց նրան։ Նա բարձրացավ երրորդ հարկ, անցավ միջանցք և զանգահարեց 9-րդ համարը, որի դռան վրա կավճով գրված էր՝ դերձակ Կապերնաումով։ «Վահ», դարձյալ ասաց անծանոթը՝ զարմանալով տարօրինակ զուգադիպությունից, ու զանգահարեց կողքի 8-րդ համարը։ Երկու դռների միջև տարածությունը մոտ վից քայլ էր։

— Դուք Կապերնաումովի մո՞տ եք ապրում,— նայելով Սոնյային ու ծիծաղելով, հարցրեց պարոնը։— Սրեկ նա վերակարում էր իմ բաճկոնակը։ Ես էլ այստեղ եմ ապրում, ձեր կողքին, մադամ Ռեսոլիխի, Հերտրուդա Կառլովնայի մոտ։ Ա՛յ քեզ անսպասելի բան։

Սոնյան ուշադրությամբ նայեց նրան։

— Հարևաններ ենք,— շարունակեց պարոնը մի ինչ-որ ակնբախ ուրախությամբ։— Երրորդ օրն է միայն, որ ես գտնվում եմ քաղաքում։ Էհ, առայժմ ցտեսություն։

Սոնյան չպատասխանեց. դուռը բացին ու ներս մտավ։ Նա ամաչում էր ինչ-որ մի բանից և կարծես երկչոտում...

Ռազումիխինը Պորֆիրիի մոտ գնալու ճանապարհին գտնվում էր առանձնապես հուզված վիճակում։

— Սա հիանալի է, աղբերացու,— մի քանի անգամ կրկնում էր նա,— ու ես ուրախ եմ, ուրախ։

«Ախր ինչո՞վ ես ուրախ»,— մտածում էր Ռասկոլնիկովը։

— Ես հո չգիտեի, որ գու էլ էիր իրեր դրավ դնում պառա-

վի մոտ։ Եվ... և... վաղո՞ւց է այդ եղել, այսինքն՝ դու ե՞րբ ես եղել նրա մոտ։

«Այ քեզ պարզամիտ հիմար»։

— Ե՞րբ...— Ռասկոլնիկովը մի քիչ կանգ առավ՝ լարելով հիշողությունը,— կարծեմ նրա մահից երեք օր առաջ եմ եղել։ Ի միջի այլոց, ես այժմ հո չեմ գնում իրերս ետ վերցնելու,— ավելացրեց նա իրերի վերաբերյալ ինչ-որ հապճեպ և առանձնահատուկ հոգատարությամբ, —չէ՞ որ ինձ մոտ ընդամենը մեկ ռուբլի արծաթադրամ կա... երեկվա այն անիծված զառանցանքի պատճառով...

Նա առանձնապես շեշտեց «զառանցանք» բառը։

— Այո, այո, այո,— հայտնի չէ ինչի համար սրտոտ-արագ «այո» ասաց Ռազումիխինը,— հապա ինչո՞ւ դու այն ժամանակ... մասամբ հուզվում էիր... գիտե՞ս, դու զառանցանքի մեջ էլ ինչ-որ մատանիներ ու շղթաներ էիր հիշատակում... Այո, այո... Դա պարզ է, հիմա ամեն ինչ պարզ է։

«Հը՛մ, ահա թե նրանց մեջ ինչպես է տարածվել այդ միտքը։ Այս մարդը ինձ համար խաչվելու կգնա, բայց շատ ուրախ է, որ ամեն ինչ պարզվել է, քանի որ ես զառանցանքի մեջ մատանիների մասին էի խոսում։ Ա՛յ թե սրանք բոլորը ինչ մտքի են հանգել...»։

— Մենք նրան տանը կգտնե՞նք,— հարցրեց Ռասկոլնիկովը։

— Կգտնենք, կգտնենք,— հապճեպ վրա բերեց Ռազումիխինը։— Նա հիանալի երիտասարդ է, այ, կտեսնես։ Մի քիչ անհոգնի է, այսինքն՝ նա նրբակիրթ մարդ է, ես ուրիշ առումով եմ անհոգնի անվանում։ Խելացի է, խելացի, նույնիսկ շատ խելք է, միայն թե մտքերի կերտվածքը յուրահատուկ է... Կասկածամիտ է, հոռետես, ցինիկ... Սիրում է խաբել, այսինքն՝ ոչ թե խաբել, այլ հիմարացնել... փողով շահվելու հին մեթոդն է կիրառում... Իսկ գործը գիտե, գիտե... Անցյալ տարի նա ապանության մի գործ պարզեց, որի համարյա բոլոր հետքերը կորած էին։ Շատ, շատ, շատ է ցանկանում քեզ հետ ծանոթանալ։

— Ինչո՞ւ է այդքան շատ ցանկանում։

— Այսինքն... գիտե՞ս, վերջին ժամանակներում, երբ դու հիվանդացար, ես հաճախ առիթ էի ունենում նրա հետ երկար

խոսել քո մասին... Նա լսում էր... ու երբ իմացավ, որ դու նյութական պատճառով չես կարողանում ավարտել իրավաբանական դասընթացը, ասաց՝ շատ ցավալի է։ Ես էլ պատշաճ եղբայացություն արեցի... այսինքն ոչ թե միայն այդ մասին, այլ այս ամբողջ պատմության վերաբերյալ. երեկ Զամետովն էր գլխից դուրս տալիս... Հա՛, Ռոդյա, երեկ, երբ ես ու դու տուն էինք գնում, ես հարբած վիճակում ինչ-որ բաներ էի ասում... Վախենում եմ, որ դու չափազանցնես այդ ամենը։

— Այսինքն ի՞նչ, որ ինձ խելագա՞ր են համարում։ Էհ, դուցե և դա ճշմարիտ է։

Ռասկոլնիկովը քահ-քահ ծիծաղեց։

— Այո, այո... թյո՛ւ, այսինքն ոչ... Ինչ որ ես ասում էի (նաև սպիշ բաների մասին), բոլորը անհեթեթություն էր, հարբածությունից էր։

— Էլ ի՞նչ ես մեղա գալիս։ Օ, ոքքան ձանձրացրել է ինձ այդ ամենը,— սասսակ շղայնացած գոչեց Ռասկոլնիկովը։ Սակայն նա մասամբ կեղծում էր։

— Գիտեմ, գիտեմ, հասկանում եմ։ Հավատացած եղիր, որ հասկանում եմ։ Այդ մասին նույնիսկ խոսելն էլ ամոթ է։

— Եթե ամոթ է, ուրեմն մի խոսիր։

Երկուսն էլ լռեցին։ Ռազումիխինը ավելի քան ցնծության մեջ էր, ու Ռասկոլնիկովը նողկանքով էր այդ ողում։ Նրան անհանգստացնում էր նաև այն, ինչ որ Ռազումիխինը հիմա ասել էր Պորֆիրիի մասին։

«Նա էլ պետք է աղքատ Ղազարոս ձևանա,— գունատվելով ու սրտատրոփ մտածում էր Ռասկոլնիկովը,— անոպայման պետք է ձևանա։ Այլ կերպ չի կարող լինել։ Ուրիշ բան չի լինի։ Ոչ, անշուշտ կեղծելու է... էհ, տեսնենք հիմա... ինչ կլինի... Լա՞վ է, թե՞ լավ չէ, որ ես գնում եմ նրա մոտ։ Սիրտս խփում է, այ թե ինչն է վատ...»։

— Այս գորշ տանն է,— ասաց Ռազումիխինը։

«Ամենից կարևորն այն է, թե արդյոք Պորֆիրին գիտե՞, թե՞ չգիտե, որ ես երեկ եղել եմ այն վհուկ պառավի բնակարանում... ու հարցրել արյան մասին։ Հարկավոր է վայրկենապես, առաջին իսկ պահից այդ իմանալ. հենց որ ներս մտ-

նեմ, դեմքից կիմանամ. այլա-պես... թեկուզ կկորչեմ, բայց կիմանամ։

— Գիտե՞ս ինչ,— հանկարծ խորամանկ ժպիտով դիմեց նա Ռազումիխինին,— ես այսօր նկատեցի, որ դու առավոտից արտասովոր չափով հուզված ես։ Ճշմարի՞տ է։

— Ի՞նչ հուզմունք։ Ամենևին էլ հուզված չեմ,— նեղացավ Ռազումիխինը։

— Ոչ, բարեկամ, այդ նկատելի է։ Աթոռին այնպես էիր նստած, ինչպես երբեք չես նստում, տեղավորվել էիր աթոռի ծայրին, ու շարունակ ջղաձգաբար ցնցվում էիր։ Առանց որևէ առիթի վեր էին թռչում։ Մերթ բարկացած էիր լինում, մերթ էլ երեսդ շաքարի պես քաղցր արտահայտություն էր ստանում։ Նույնիսկ կարմրում էիր. առանձնապես թունդ կարմրեցիր, երբ քեզ ճաշի հրավիրեցին։

— Ոչ, ոչ, դու ստում ես... Ախր ինչե՞ր ես ասում։

— Էլ ի՞նչ ես աշակերտի նման պատեպատ ընկնում։ Փո՛ւ, գրողը տանի, էլի կարմրեց։

— Բայց ի՞նչ խոզն ես։

— Ինչո՞ւ ես շփոթվում, Ռոմեո։ Ապասիր, այսօր ես մի տեղ կպատմեմ այս բոլորը, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Այ թե ինչպես կծիծաղեցնեմ մայրիկին... նաև մյուսներին...

— Լսիր, լսիր, լսիր, չէ՞ որ դա լուրջ բան է... Ի՞նչեր ես մոգոնում, գրողը տանի,— Ռազումիխինը բոլորովին շշմեց, սարսռեց սարսափից։ — Ի՞նչ ես պատմելու նրանց։ Ես, աղբերացու... թյո՛ւ, խոզի մեկը։

— Ուղղակի գարնանային վարդի պես ես կարմրում, օ՜, եթե գիտենայիր, թե դա որքա՞ն է քեզ սազում. հենց Ռոմեո ես որ կաս։ Ոնց է՞լ լվացվել ես այսօր, մաքրել եղունգներդ, հը՞։ Ե՞րբ է այդպես եղել։ Հոգիս վկա պոմադ էլ ես քսել, խոստովանիր։

— Խոզ։

Ռասկոլնիկովը այնքան ծիծաղեց, որ թվում էր, թե այլևս անկարող է իրեն զսպել, այդպես էլ նրանք ծիծաղով մտան Պորֆիրի Պետրովիչի բնակարանը։ Ռոսկոլնիկովին հենց այդ էր հարկավոր. սենյակներից կարելի էր լսել, որ նրանք ծիծաղով են ներս մտել ու դեռ քրքջում են նախասենյակում։

— Այստեղ ոչ մի խոսք, այլապես ես քո... գլուխը կշարդեմ,— կատաղությամբ շշնջաց Ռազումիխինը՝ ցնցելով Ռասկոլնիկովի ուսը։

V

Ռասկոլնիկովը արդեն մտնում էր սենյակները։ Նա այնպիսի տեսքով էր, որ կարծես ամբողջ ուժով մեկ աշխատում էր մի կերպ զսպել ծիծաղը։ Նրա ետևից, ցասկոտ դեմքը բոլորովին բարձր պահած, ամաչելով, ալ վարդի պես շառագունած, երկար ու անճոռնի հասակով մեկ ներս մտավ Ռազումիխինը։ Նրա դեմքը և ամբողջ կերպարանքը այդ բոպեին իսկապես որ ծիծաղելի էին և արդարացնում էին Ռասկոլնիկովի ծիծաղը։ Ռասկոլնիկովը, դեռ չծանոթացած, գլուխ տրվեց սենյակի մեջտեղում կանգնած և հարցականորեն նրանց նայող տանտիրոջը, ձեռքը մեկնեց ու սեղմեց նրա ձեռքը՝ դեռևս նկատելի, լարված ճիգ թափելով, որպեսզի զսպեր իր քրքիջը և գոնե երկու-երեք բառով հայտներ իր ով լինելը։ Բայց հենց որ նա լուրջ տեսք ընդունեց և ինչ-որ բան փընթփընթաց, կարծես ակամայից դարձյալ նայեց Ռազումիխինին ու այլևս չկարողացավ զսպվել. ճնշած ծիծաղը ժայթքեց նույնքան անկասելիորեն, որքան ուժեղ թափով զսպվում էր մինչև հիմա։ Արտասովոր զայրացկոտությունը, որով Ռազումիխինը ընդունում էր այդ «մտերմական» ծիծաղը, ամենաանկեղծ զվարճության և որ դիտավորն է, բնականության երանգ էր տալիս այդ ամբողջ տեսարանին։ Ռազումիխինը հակառակի պես այդ ամենը է՛լ ավելի զվարճալի դարձրեց։

— Թյու, սատանա,— մռնչաց նա ձեռքը թափ տալով ու խփելով փոքրիկ, կլոր սեղանին, որի վրա թեյի դատարկ բաժակ էր դրված։ Այդ ամենը շրխկոցով ընկավ հատակին։

— Ինչո՞ւ աթոռները ջարդել, պարոններ, չէ՞ որ դա վնաս է հասցնում պետությանը,— ուրախ բացականչեց Պորֆիրի Պետրովիչը։

Տեսարանը հետևյալ պատկերն էր ներկայացնում. Ռասկոլնիկովը իր ձեռքը տանտիրոջ ձեռքից դեռ ետ չտարած, շարունակում էր ծիծաղել, բայց դիտենալով չափը, սպասում էր այդ ամենը շուտով և բնականորեն վերջացնելու պահին։

Ռազումիխինը, որ վերջնականապես շփոթվել էր սեղանի ընկնելուց և բաժակը ջարդվելուց, մոայլ նայեց դրա կտորներին, հեքեց և կտրուկ շուռ եկավ պատուհանի կողմը, որտեղ և կանգնեց մեջքը դեպի ներկաները, խիստ մոայլված, նայելով պատուհանից դուրս և ոչինչ չտեսնելով։ Պորֆիրի Պետրովիչը ծիծաղում էր ու ցանկանում էր ծիծաղել, բայց ակներև էր, որ նրան բացատրություններ էին հարկավոր։ Մի անկյունում, աթոռի վրա նստել էր Զամետովը։ Երբ հյուրերը ներս մտան, նա վեր կացավ ու կանգնեց սպասողական վիճակում, բայց տարակուսանքով և նույնիսկ կարծես կասկածոտ էր դիտում ամբողջ տեսարանը, իսկ Ռասկոլնիկովին նույնիսկ ինչ-որ շփոթմունքով էր նայում։ Զամետովի անակնկալ ներկայությունը անսխալորեն զարմանք պատճառեց Ռասկոլնիկովին։

«Այդ դեռ պետք է կշռադատել»,— մտածեց նա։

— Ներեցեք խնդրեմ,— խիստ շփոթվելով ասաց նա,— Ռասկոլնիկով։

— Ինչ եք ասում, շատ հաճելի է, դուք էլ այնպես հաճելի ներս մտաք... Ի՞նչ է, նա բարևել է՞լ չի ուզում,— Պորֆիրի Պետրովիչը գլխով ցույց տվեց Ռազումիխինին։

— Աստված վկա չգիտեմ, թե նա ինչո՞ւ է այդպես բարկացել ինձ վրա։ Ճանապարհին ես միայն ասացի, որ նա Ռոմեոյին է նման... և ապացուցեցի, ու կարծեմ էլ ուրիշ ոչինչ չեղավ։

— Խո՛զ,— առանց շուռ գալու ասաց Ռազումիխինը։

— Նշանակում է շատ լուրջ պատճառներ է ունեցել, որ այդպես բարկացել է հենց միայն մի խոսքի համար,— ծիծաղեց Պորֆիրին։

— Գիտենք, էլի, դու քննիչ ես... էհ, դրողը տանի ձեզ բոլորիդ էլ,— ասաց Ռազումիխինը ու հանկարծ ինքն էլ ծիծաղեց, ժպտադեմ մոտեցավ Պորֆիրի Պետրովիչին, կարծես ոչինչ չէր պատահել։

— Վե՛րջ, բոլորը հիմարներ են. անցնենք գործի. սա, ընկերս, Ռոդյոն Ռոմանովիչ Ռասկոլնիկովը, նախ՝ շատ է լսել քո մասին և ցանկացել է ծանոթանալ, երկրորդ, քեզ հետ մի փոքրիկ գործ ունի։ Վա՛հ, Զամետո՛վը։ Ո՞նց է, որ դու

այստեղ եմ։ Մի՞թե դուք ծանոթ եք, վաղո՞ւց եք հանդիպում։

«Ա՛յդ էր պակաս»,— մտածեց Ռասկոլնիկովը։

Զամետովը կարծես շփոթվեց, բայց ոչ այնքան նկատելի։

— Երեկ հենց քեզ մոտ ծանոթացանք,— անփույթ ասաց նա։

— Ուրեմն աստված փրկել էր գլխացավանքից. անցյալ շաբաթ շատ էր խնդրում ինձ, որ մի կերպ ծանոթացնեի քեզ հետ, Պորֆիրի, իսկ դուք առանց ինձ էլ գտել եք իրար... Ո՞ւրտեղ է ծխախոտդ։

Պորֆիրի Պետրովիչը տնային հագուստով էր, խալաթով, բավական մաքուր սպիտակեղենով ու ծռմռված տուֆլիներով։ Նա մոտ երեսունհինգ տարեկան էր, միջահասակից ցածը, չաղ և նույնիսկ մի քիչ հաստափոր, մաքուր սափրված, առանց բեղերի և այտամորուքի, մեծ ու կլոր գլխի մազերը բոլորովին խուզած, ծոծրակի կողմում գլուխը մի տեսակ կորնթարդ-կլորավուն ձև ուներ։ Նրա թմփլիկ, կլոր և մի քիչ կարճաքիթ դեմքը հիվանդագին, մուգ-դեղնավուն գույն ուներ, բայց բավական զվարթ էր և նույնիսկ հեգնանք էր արտահայտում։ Այն նույնիսկ բարի կթվար, եթե դրան չխանդարեր ինչ-որ տամուկ, ջրջրոտ փայլ ունեցող աչքերի արտահայտությունը, որոնք սքողված էին գրեթե սպիտակ, ասես մեկին նշան անող արտևանունքներով։ Այդ աչքերի նայվածքը ինչ-որ տարօրինակությամբ չէր ներդաշնակվում նույնիսկ մի տեսակ կանացիություն ունեցող ամբողջ կերպարանքի հետ և դրան շատ ավելի լուրջ տեսք էր տալիս, քան կարելի էր սպասել առաջին հայացքից։

Պորֆիրի Պետրովիչը հենց որ լսեց, որ հյուրը իր հետ «գործ» ունի, իսկույն նրան խնդրեց նստել բազմոցին, ինքը նստեց նրա մոտ և աչքերը հառեց նրան, անմիջապես սպասելով գործը շարադրելուն, այն լարված և խիստ ուշադրությամբ, որը հենց սկզբից նույնիսկ ճնշում է ու շփոթեցնում ձեզ, մանավանդ եթե ծանոթ չեք գործը լսողի հետ և մանավանդ եթե ձեր պատմածը հենց ձեր կարծիքով բնավ համեմատական չէ ձեզ ցույց տրվող, արտասովոր կերպով նշանակալից ուշադրության հետ։ Բայց Ռասկոլնիկովը կարճ և

կապակցված խոսքերով պարզ ու որոշակի բացատրեց իր գործը և ինքն իրենից այնքան գոհ մնաց, որ նույնիսկ կարողացավ բավական լավ ընդունել Պորֆիրիին։ Պորֆիրի Պետրովիչը նույնպես ամբողջ ժամանակվա ընթացքում ոչ մի անգամ աչք չկտրեց նրանից։ Ռազումիխինը նստելով նրանց դիմաց, նույն սեղանի մոտ, հետաքրքրությամբ և անհամբերությամբ հետևում էր գործի շաքադրանքին, ամեն րոպե նայում մերթ մեկին ու մերթ մյուսին, որ արդեն մի քիչ անցնում էր չափից։

«Հիմար»,— մտքում նրան նախատեց Ռասկոլնիկովը։

— Դուք պետք է դիմում տաք ոստիկանությանը,— միանգամայն լուրջ տեսքով պատասխանեց Պորֆիրին,— պետք է հայտնեք, որ տեղեկանալով այսինչ դեպքի, այսինքն՝ այդ սպանության մասին, դուք ձեր հերթին խնդրում եք ծանուցել գործը քննող քննիչին, որ այսինչ իրերը ձեզ են պատկանում, և դուք ցանկանում եք դրանք ետ գնել... կամ թե չէ... ասենք, ձեզ կգրեն։

— Հենց բանն էլ այն է, որ ես այժմ փողի նեղություն եմ քաշում...— ասաց Ռասկոլնիկովը՝ աշխատելով որքան կարելի է շփոթված երևալ,— և նույնիսկ այդ չնչին գումարն էլ չեմ կարող վճարել... Ես, դիտե՞ք, հիմա կցանկանայի միայն հայտնել, որ դրանք իմ իրերն են, ու երբ փող լինի, կվերցնեմ...

— Այդ միևնույն է,— պատասխանեց Պորֆիրի Պետրովիչը՝ սառնությամբ լսելով ֆինանսների վերաբերյալ բացատրությունը,— սակայն, եթե ուզենաք, կարող եք գրել ուզղակի ինձ, նույն իմաստով, այսինքն՝ թե տեղեկանալով այսինչ բանի մասին և հայտարարելով, որ այսինչ իրերը իմն են, խնդրում եմ...

— Կարելի՞ է հասարակ թղթի վրա գրել,— շտապեց ընդհատել Ռասկոլնիկովը, որին դարձյալ հետաքրքրում էր գործի ֆինանսական մասը։

— Օ, ամենահասարակ թղթի վրա,— ու հանկարծ Պորֆիրի Պետրովիչը ակներև հեգնանքով նայեց Ռասկոլնիկովին, կկոցեց աչքերը ու կարծես նրան աչքով արեց։ Սակայն դուցե դա այդպես թվաց Ռասկոլնիկովին, որովհետև միայն

մի ակնթարթ տևեց։ Գոնե ինչ-որ այդպիսի մի բան կար։ Ռասկոլնիկովը կիրդվեր, որ Պորֆիրին նրան աչքով արեց, սատանան գիտե թե ինչի համար։

«Գիտե»,— կայծակնաթափ անցավ նրա մտքով։

— Ներեցեք, որ անհանգստացրի այսպիսի դատարկ բաներով,— մի քիչ շփոթված շարունակեց նա,— իմ իրերը ընդամենը հինգ ռուբլի արժեն, բայց ինձ համար առանձնապես թանկ են իրրև հիշատակ այն մարդկանցից, որոնցից մնացել են, ու խոստովանում եմ, հենց որ իմացա այդ զնդքի մասին, խիստ վախեցա...

— Հենց բանն էլ այդ է, որ դու երեկ ցնցվեցիր, երբ ես Զոսիմովին ասացի, որ Պորֆիրին հարցաքննում է գրավ դնողներին,— ակներև դիտավորությամբ միջամտեց Ռազումիխինը։

Այդ արդեն անտանելի էր։ Ռասկոլնիկովը դա չհանդուրժեց և կատաղություն ու դայրույթ արտահայտող իր սև աչքերը հառեց նրա վրա։

— Դու, բարեկամ, երևի ինձ ձեռ ես առնում, հա՞,— դիմեց նա Ռազումիխինին՝ հարպկությամբ ջղայնացած ձևանալով— Ես համաձայն եմ, որ դուցե չափից դուրս մտահոգվում եմ քո աչքում ընչին այդ իրերով. բայց հո չի՞ կարելի դրա համար ինձ նստոել ու ապահ համարել։ իմ աչքում այդ երկու ընչին իրերը կարող են ամենևին էլ անպետք չլինել։ Ես քեզ արդեն ասել եմ, որ այդ արծաթե ժամացույցը, որը գրոշի արժեք ունի, միակ իրն է, որ մնացել է իմ հորից։ Սիծաղիր ինձ վրա, բայց ինձ մոտ մայրս է եկել,— Ռասկոլնիկովը հանկարծ դարձավ դեպի Պորֆիրին,— ու եթե նա իմանա,— նա էլի դիմեց Ռազումիխինին՝ առանձնապես աշխատելով, որ ձայնը դողա,— եթե իմանա, որ ժամացույցը կորել է, երդվում եմ, որ շատ կվշտանա։ Դե՛, կանայք են, էլի։

— Բնավ ոչ, ես ամենևին էլ այդ չէի ուզում ասել, ընդհակառակը,— գոչեց նեղացած Ռազումիխինը։

«Լա՞վ էր արդյոք։ Բնակա՞ն էր։ Հո չչափազանցրի՞,— չ'ախվիսելով մտածում էր Ռասկոլնիկովը։— Ինչո՞ւ ասացի՝ «կանայք են, էլի»։

— Ձեր մա՞յրն է եկել,— ինչ-որ բանի համար հարցրեց Պորֆիրի Պետրովիչը։

— Այո։

— Ե՞րբ։

— Երեկ երեկոյան։

Պորֆիրին մի փոքր լռեց, ասես ինչ-որ մտքով էր զբաղված։

— Ձեր իրերը ոչ մի դեպքում չէին կարող կորչել,— հանդիստ, սառը տոնով շարունակեց նա։— Ես այստեղ վաղուց էի ձեզ սպասում։

Եվ նա նույնպիսի հանգստությամբ ու քաղաքավարությամբ մոխրամանը հրամցրեց Ռազումիխինին, որը պապիրոսի մոխիրը անիծելով թափում էր գորգի վրա։ Ռասկոլնիկովը ցնցվեց, բայց Պորֆիրին կարծես թե չէր էլ նայում նրան, դեռ էլի մտահոգված էր Ռազումիխինի պապիրոսով։

— Ի-ի՞նչ, սպասո՞ւմ էիր, մի՞թե դու գիտեիր, որ սա էլ էր այնտեղ իրերը գրավ դնում,— դոչեց Ռազումիխինը։

Պորֆիրի Պետրովիչը ուղղակի դիմեց Ռասկոլնիկովին։

— Ձեր երկու իրերը, մատանին և ժամացույցը այն պառավի տանը մի թղթով էին փաթաթված, իսկ թղթի վրա մատիտով պարզ գրված էր ձեր անունը, ինչպես և ամսաթիվը, երբ նա դրանք ստացել էր ձեզնից...

— Որքան դուք ընդունակ եք, դիտող,— անհարմար քրմծիծաղ տվեց Ռասկոլնիկովը՝ առանձնապես աշխատելով ուղիղ նայել Պորֆիրիի աչքերին. բայց չկարողացավ դիմանալ ու հանկարծ ավելացրեց.

— Ես այդ ասացի, որովհետև գրավ դնողները հավանորեն շատ են եղել... այնպես որ ձեզ համար դժվար կլիներ նրանց բոլորին հիշել... իսկ դուք, ընդհակառակը, այդպես պարզ հիշում եք նրանց բոլորին, և... և...

«Հիմարություն է, անտեղի է, ինչո՞ւ ես այդ ավելացրիր»։

— Հիմա արդեն համարյա բոլոր գրավադիրները հայտնի են, այնպես որ միայն դուք չէիք բարեհաճել ինձ մոտ գալ,— հազիվ նկատելի հեգնանքով պատասխանեց Պորֆիրին։

— Ես այնքան էլ առողջ չէի։

— Այդ մասին էլ էի լսել։ Նույնիսկ լսել էի, որ դուք ինչ-որ պատճառով խիստ հուզված եք եղել։ Դուք հիմա էլ կարծես դունատ եք։

— Ամենևին էլ գունատ չեմ... ընդհակառակը, բոլորովին առողջ եմ,— կոպիտ ու բարկացկոտ ասաց Ռասկոլնիկովը՝ հանկարծ փոխելով տոնը։ Նրա բարկությունը սաստկանում էր, և նա չէր կարողանում այն զսպել։ «Բարկացած վիճակում բերանիցս խոսք կթոցնեմ, անցավ նրա մտքով։ Ինչո՞ւ են սրանք ինձ տանջում...»։

— Այնքան էլ առողջ չես,— վրա բերեց Ռազումիխինը։ — Այ թե ինչ անհեթեթ բան ասացիր։ Մինչև երեկ զառանցում էիր համարյա ուշագնաց վիճակում... Հավատո՞ւմ ես, Պորֆիրի, հազիվ էր ոտքի վրա կանգնում, բայց հենց որ ես ու Զոսիմովը գնացինք, հաղնվեց, ծածուկ դուրս եկավ տանից ու թրևեց համարյա մինչև կեսգիշեր, և պետք է քեզ ասեմ, որ բոլորովին զառանցանքի մեջ էր, կարո՞ղ ես այդ երևակայել։ Ուշագրավ երևույթ։

— Մի՞թե բոլորովին զառանցանքի մեջ էր։ Ա՛յ քեզ բան, — մի սեսակ կանացի շարժումով գլուխն օրորեց Պորֆիրին։

— Դասարկ բան է, մի հավատաք. ասենք դուք հո ասանց այն էլ չեք հավատում,— է՛լ ավելի չարացած վրա բերեց Ռասկոլնիկովը։ Բայց Պորֆիրի Պետրովիչը կարծես թե չլսեց այդ տարօրինակ խոսքերը։

— Դու ի՞նչպես կարող էիր դուրս գալ, եթե չէիր զառանցում,— հանկարծ տաքացավ Ռազումիխինը։— Ինչո՞ւ դուրս եկար, ինչի՞ համար... Եվ ինչո՞ւ ծածուկ։ Մի՞թե խելքդ տեղն էր։ Հիմա, երբ ամբողջ վտանգը անցել է, ես այդ պարզ եմ ասում քեզ։

— Երեկ նրանք շատ ձանձրացրին ինձ,— հանկարծ դիմեց Ռասկոլնիկովը Պորֆիրիին, լիտի ու գրգռիչ քմծիծաղ տալով,— ու ես երանցից փախա, գնացի բնակարան վարձելու, որ էլ ինձ չգտնեն, հետս էլ շատ փող վերցրի։ Ա՛յ, պարոն Զամետովը տեսավ փողը։ Ի՞նչ կասեք, պարոն Զամետով։ Երեկ խելքս ա՞ղն էր, թե՞ զառանցում էի, հապա՛, լուծեք վեճը։

Թվում էր, որ նա այդ բոպեին տեղնուտեղը կխեղդեր Զա-

մետովին։ Վերջինս շարունակ նայում էր նրան ու լռում, և դա դուր չէր գալիս Ռասկոլնիկովին։

— Իմ կարծիքով դուք միանգամայն խելամտորեն և նույնիսկ խորամանկաբար էիք խոսում, միայն թե չափազանց ջղայնոտ էիք,— սառը պատասխանեց Զամետովը։

— Իսկ այսօր Նիկոդիմ Ֆոմիչը ինձ ասաց, որ երեկ, արդեն ուշ ժամին, ձեզ հանդիպել էր կառքի տակ ընկած մի աստիճանավորի բնակարանում...— միջամտեց Պորֆիրի Պետրովիչը։

— Այ, վերցնենք թեկուզ այդ աստիճանավորի բնակարանում դտնվելը,— Ինչպես բերեց Ռազումիխինը,— մի՞թե այնտեղ խելքդ գլխիդ էր։ Վերջին փողերդ տվիր այրիացած կնոջը, թաղման համար։ Ուզեցիր օգնել, թող տայիր տասնըհինգ, քսան ռուբլի, գոնե քեզ թողնիր մի երեք ռուբլի, իսկ դու ունեցածդ ամբողջ քսանհինգ ռուբլին տվիր նրան։

— Գուցե ես մի տեղ դանձ էի գտել, դու այդ չգիտես։ Դրա համար էլ երեկ այդպես առատաձեռն էի... Այ, պարոն Զամետովը գիտե, որ ես դանձ էի գտել... Դուք խնդրեմ ներեցեք, որ մենք ահա կես ժամ ձեզ անհանգստացնում ենք այսպիսի դատարկ բաներով,— դողդոջ շրթունքներով դիմեց Ռասկոլնիկովը Պորֆիրիին։— Հո ձանձրացրինք, այնպես չէ՞։

— Ի՞նչ եք ասում, ընդհակառակը, ընդ-հա-կա-ռակը։ Օ, եթե դիտենայիք, թե որքան եք ինձ հետաքրքրում։ Ուշադրավ է թե նայել և թե լսել... ու ես, խոստովանում եմ, շատ ուրախ եմ, որ դուք, վերջապես, բարեհաճեցիք շնորհ անել...

— Գոնե թեյ տուր, է՛, կոկորդս չորացավ,— գոչեց Ռազումիխինը։

— Հիանալի՞ միտք։ Գուցե բոլորդ էլ խմեք։ Իսկ դու չե՞ս ուզում թեյից առաջ... ավելի էական բան։

— Կորի-գնա։

Պորֆիրի Պետրովիչը դուրս եկավ թեյ պատվիրելու։

Ռասկոլնիկովի գլխում մրրկի նման պտտվում էին մտքերը։

«Գլխավորն այն է, որ նույնիսկ չեն էլ թաքցնում իրենց մտածածը, չեն էլ ուզում քաշվել։ Եթե դու ինձ բոլորովին

չես ճանաչում, այդ ի՞նչպես է, որ Նիկոդիմ Ֆոմիչի հետ իմ մասին էիր խոսում, հը՞։ Ուրեմն չեն էլ ուզում թաքցնել, որ հետամտում են ինձ շների ոհմակի պես։ Հը՛մ, այդպես բացեիբաց թքում են սֆաթիդ, դողում էր նա կատաղությունից։ Դեհ, ուղղակի խփեցեք և ոչ թե խաղ արեք ինչպես կատուն մկան հետ։ Չէ՞ որ դա անքաղաքավարություն է, Պորֆիրի Պետրովիչ, չէ՞ որ ես գուցե այդ թույլ չեմ տա... Վեր կկենամ ու բոլորիդ երեսին կշպրտեմ ամբողջ ճշմարտությունը, ու կտեսնեք, թե որքան եմ ձեզ արհամարհում...— Ռասկոլնիկովը դժվարությամբ շունչ առավ։ Գուցե այդ միայն թվո՞ւմ է ինձ, գուցե դա պատրա՞նք է՝ու ես բոլորովին սխալվո՞ւմ եմ, անփորձությանս պատճառով չարանո՞ւմ, չե՞մ դիմանում ստոր դերիս։ Գուցե նրանք չունե՞ն որևէ դիտավորություն։ Նրանց բոլոր խոսքերը սովորական են, բայց դրանց մեջ ինչ-որ բան կա... Այդ ամենը միշտ էլ կարելի է ասել, բայց այստեղ ինչ-որ բան կա։ Ինչո՞ւ Պորֆիրին ուղղակի ասաց՝ «այն պառավի տանը»։ Ինչո՞ւ Զամետովը ավելացրեց, թե ես խորամանկաբար էի խոսում։ Ինչո՞ւ նրանք այդպիսի տոնով են խոսում։ Այո... այդպիսի տոնով... Ռազումիխինը նստած էր այստեղ, ինչո՞ւ նա կասկածանք չի արտահայտում։ Այդ անմեղ ապուշը երբեք և ոչ մի կասկածանք չի արտահայտում։ Դարձյալ տենդ... Քիչ առաջ Պորֆիրին ինձ աչքո՞վ արեց, թե ոչ։ Դատարկ բան է, ինչի՞ համար պիտի աչքով աներ։ Ուզում են գրգռե՞լ ջղերս, ինչ է, թե՞ ինձ ձեռ առնել։ Կամ այս բոլորը պատրանք է, կամ գիտեն... Նույնիսկ Զամետովն էլ հանդուգն է... Արդյո՞ք հանդուգն է Զամետովը։ Գիշերվա ընթացքում Զամետովը կշռադատել է ամեն ինչ։ Ես հո նախազգում էի, որ կշռադատելու էր։ Նա այստեղ մոտիկ մարդ է, բայց իբր թե առաջին անգամն է։ Պորֆիրին նրան հյուր էլ չի համարում, նստում է մեջքը նրա կողմը դարձրած։ Խոսքները մեկ են արել, անպայման իմ նկատմամբ խոսքները մեկ են արել։ Մինչև մեր գալը անպայման խոսել են իմ մասին... Արդյոք որևէ բան գիտե՞ն այն բնակարանը իմ գնալու մասին։ Էհ, թող սա շուտ վերջանա... Երբ ես ասացի, թե երեկ գնացել էի բնակարան վարձելու, Պորֆիրին ուշադրություն չդարձրեց,

ոչինչ չասաց... Ես լավ արեցի, որ մեջտեղ բերի բնակարանը... Հետո պետք կգա... Իբր թե զառանցում էի... Քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Պորֆիրին գիտե այն ամենը, ինչ որ եղել է երեկ Լուկոյան։ Մորս ժամանելու մասին բան չգիտեր... Վհուկ պառավը մատիտով ամսաթիվն էլ էր դրել... Սխալվում եք, չեմ հանձնվի։ Չէ՞ որ փաստեր չկան, կա միայն պատրանք։ Հապա՛, փաստեր բերեք։ Բնակարանն էլ փաստ չէ, այլ զառանցանք է. ես գիտեմ, թե ինչ կասեմ նրանց... Արդյոք բան գիտե՞ն բնակարանի մասին։ Մինչև չիմանամ, չեմ դնա։ Ինչո՞ւ եկա։ Հիմա ես վրդովվում եմ, թերևս դա փաստ է։ Թյո՛ւ, որքան ջղայնոտ եմ։ Գուցե և դա լավ է, որ հիվանդի գերում եմ... Պորֆիրին տնտղում է ինձ։ Շշկլեցնելու է։ Ինչո՞ւ եկա։

Այս ամենը կայծակի արագությամբ անցավ Ռասկոլնիկովի մտքով։

Պորֆիրի Պետրովիչը իսկույն վերադարձավ։ Նա հանկարծ ուրախ տեսք ընդունեց։

— Երեկվանից դյուխս տրաքվում է... ամբողջ մարմինս մի տեսակ թուլացել է,— ծիծաղելով, բոլորովին ուրիշ տոնով դիմեց նա Ռազումիխինին։

— Ի՞նչ է, հետաքրքի՞ր էր։ Երեկ ես հեռացա, երբ ամենահետաքրքիր կետն էր քննարկվում։ Ո՞վ հաղթեց։

— Դե իհարկե, ոչ ոք։ Հավիտենական հարցեր էին շոշափում, ճախրում էին օդում։

— Պատկերացնո՞ւմ ես, Ռոդյա, թե երեկ հավաքվածները ինչի մասին էին խոսում. արդյոք ոճիր կա՞ թե չկա. ի՞նչ ասես որ դուրս չէին տալիս։

— Զարմանալու ի՞նչ կա, սովորական սոցիալական հարց է,— մտացրիվ պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Հարցը այդպես չէր ձևակերպված,— վրա բերեց Պորֆիրին։

— Այո, ճշմարիտ է,— իսկույն համաձայնեց Ռազումիխինը՝ ըստ իր սովորության աճապարելով ու տաքանալով։ — Տեսնո՞ւմ ես, Ռոդիոն. լսիր և ասա քո կարծիքը։ Ես այդ ուզում եմ։ Ես երեկ նրանց հետ կաշվից էի դուրս գալիս ու քեզ էի սպասում. ես նրանց ասում էի, որ դու կգաս... Վեճը

սկսվեց սոցիալիստների հայացքից. հայտնի է այդ հայացքը, ոճիրը բողոք է սոցիալական կառուցվածքի անհարմարության դեմ, պրծավ-գնաց, էլ ուրիշ ոչինչ, էլ ուրիշ ոչ մի պատճառ, ոչինչ...

— Այ, ստեց,— դոչեց Պորֆիրի Պետրովիչը՝ նայելով Ռազումիխինին, նա բավական աշխուժանում էր և ամեն րոպե ծիծաղում, որով էլ ավելի էր բորբոքում նրան։

— Ուրիշ ոչ մի պատճառ, չեմ ստում...— տաքացած ընդհատեց նրան Ռազումիխինը։— Ես քեզ ցույց կտամ նրանց գրքերը. նրանք գտնում են, որ «միջավայրն է պատճառը», և ուրիշ ոչինչ։ Սիրված ֆրազ է։ Այստեղից ուղղակի հետևում է, որ եթե հասարակությունը նորմալ կառուցվի, ապա միանգամից կչքանան բոլոր ոճիրները, քանի որ բողոքելու կարիք չի լինի, և բոլորը մի ակնթարթում արդարներ կդառնան։ Բնականությունը հաշվի չի առնվում, բնականությունը արտաքսվում է, բնականությանը տեղ չի տրվում։ Նրանց ասելով, ոչ թե մարդկությունը մինչև վերջ զարգանալով պատմական, կենդանի ճանապարհով, ի վերջո ինքնին կդառնա նորմալ հասարակություն, այլ ընդհակառակը, սոցիալական սիստեմը, ծագելով որևէ մաթեմատիկական մտքից, անմիջապես կկազմակերպի ամբողջ մարդկությանը ու մի ակնթարթում նրան արդար ու անմեղ կդարձնի, և դա կկատարվի ամեն մի կենդանի պրոցեսից առաջ, առանց որևէ պատմական ու կենդանի ճանապարհ անցնելու։ Հենց դրանից է, որ նրանք այդպես բնազդորեն չեն սիրում պատմությունը. «դրա մեջ միայն այլանդակություններ և հիմարություններ կան» ու ամեն ինչ միայն հիմարությունով է բացատրվում։ Դրանից է, որ այնպես էլ չեն սիրում կյանքի կենդանի պրոցեսը. կենդանի հոգի հարկավոր չէ. կենդանի հոգին կյանք կպահանջի, կենդանի հոգին չի հնազանդվի մեխանիկային, կենդանի հոգին կասկածելի է, կենդանի հոգին հետադիմական է։ Իսկ այստեղ թեպետև մեռելոտիի հոտ է փչում, կարելի է կաուչուկից կերտել, բայց կենդանի չէ, կամազուրկ է, ստրկական է, չի ըմբոստանա։ Եվ ի վերջո դուրս է գալիս, որ ամեն ինչ հանդեցրել են հենց միայն ֆալանստերի (կոմունայի՝ ֆալանդյ բնակաշենքի) աղյուսները շարելուն և միջանցքների ու

սենյակների դասավորությանը։ Ֆալանստերը հո պատրաստ է, բայց դրա համար ձեր նատուրան դեռ պատրաստ չէ, կյանք է ուզում, կենսական պրոցեսը դեռ չի ավարտել, գերեզմանոց տանելը վաղ է։ Միայն տրամաբանությամբ չի կարելի նատուրայի վրայից ցատկել։ Տրամաբանությունը նախագուշակում է երեք դեպք, իսկ դրանք միլիոն են։ Ջատե՞լ ամբողջ միլիոնը և ամեն ինչ հենց միայն կամֆորտի հարցին հանգեցնել։ Ահա քեզ խնդրի ամենահեշտ լուծումը։ Միանգամայն պարզ է և մտածել էլ պետք չէ։ Գլխավորն այն է, որ հարկավոր չէ մտածել։ Ամբողջ կենսական դաղտնիքը երկու տպագրական թերթում է տեղավորվում։

— Ա՛յ թե ինչպես է լեզու թափում, թմբկահարում, հարկավոր է բռնել ձեռքերը,— ծիծաղում էր Պորֆիրին,— այդպես էր ճառում նաև երեկ երեկոյան, իր սենյակում, և դեռ նախապես փունջ էլ խմեցրեց, կարո՞ղ եք պատկերացնել։ Ոչ, բարեկամ, դու ստում ես. «միջավայրը» ոճիրի հարցում շատ բան է նշանակում. ես սա հաստատապես եմ քեզ ասում։

— Ինքս էլ գիտեմ այդ նշանակությունը, բայց դու այ թե ինչ ասա. քառասուն տարեկանը պատվազուրկ է անում տասնամյա աղջկան, ուրեմն միջավա՞յրն է նրան մղում դեպի այդ բանը, ինչ է։

— Ի՞նչ կա որ, իսկապես ասած, թերևս միջավայրն է մղում,— զարմանալի ծանրակշռությամբ պատասխանեց Պորֆիրին,— աղջկա դեմ կատարած ոճիրը նույնիսկ իրավամբ կարելի է «միջավայրով» բացատրել։

Ռազումիխինը քիչ մնաց կատաղեր։

— Հա, էլի։ Այդ միևնույն է, եթե ես քեզ ասեմ՝ արտանունքներդ սպիտակ են հենց միայն այն պատճառով, որ Իվան Մեծի զանգակատունը երեսունհինգ սաժեն բարձրություն ունի։ Ուզո՞ւմ ես հիմա ես քեզ ջրի երես հանեմ, մերկացնեմ, այն էլ պարզ, ճշգրիտ, պրոգրեսիվ կերպով, նույնիսկ լիբերալ երանգավորումով։ Դա հանձն եմ առնում։ Ուզո՞ւմ ես, գրաֆ եմ գալիս։

— Համաձայն եմ։ Հապա՛, լսենք, թե ինչպես է մերկացնում։

— Ախր շարունակ կեղծում է, գրողը տանի,— բղավեց

Ռազումիխինը, վեր թռավ ու թափահարեց ձեռքը։— Մի՞թե արժե քեզ հետ խոսել։ Ախր նա այդ ամենը դիտմամբ է անում, դու նրան դեռ չես ճանաչում, Ռոդիոն։ Երեկ էլ նրանց կողմը անցավ հենց միայն բոլորին հիմարացնելու համար։ Եվ ինչե՞ր էր ասում երեկ, տե՛ր աստված։ Նրանք էլ ուրախանում էին դրա համար... Երկու շաբաթը մի անգամ փոխում է միտքը։ Անցյալ տարի չգիտես ինչու մեզ հավատացրեց, թե միանձն է դառնալու։ Երկու ամիս այդպես էր ասում։ Վերջերս խելքին փչեց մեզ հավատացնել, թե ամուսնանում է, թե արդեն ամեն ինչ պատրաստ է պսակի համար։ Նույնիսկ նոր հագուստ կարել տվեց։ Մենք սկսեցինք շնորհավորել։ Բայց նույնիսկ հարսնացու էլ չկար. դա միայն պատրանք էր։

— Ստում ես։ Ես դրանից առաջ էի հագուստ պատվիրել։ Հենց նոր հագուստի առթիվ էլ մտքովս անցավ ձեզ բոլորիդ մի քիչ խաբել։

— Իսկապե՞ս դուք այդպես ձևացող եք,— անփույթ հարցրեց Ռասկոլնիկովը։

— Իսկ դուք այդպես չէի՞ք կարծում։ Սպասեցեք, ես ձեզ էլ կխաբեմ, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Ոչ, գիտե՞ք, ես ձեզ կասեմ ամբողջ ճշմարտությունը։ Այդ բոլոր հարցերի, ոճիրների, միջավայրի, աղջիկների կապակցությամբ հիմա ես վերհիշեցի ձեր մի հոդվածը, որը, սակայն, միշտ էլ հետաքրքրում էր ինձ. հոդվածի վերնագիրն էր «Ոճիրի մասին...», թե ինչ, մոռացել եմ, չեմ հիշում։ Երկու ամիս առաջ բախտ ունեցա կարդալու Պերիոդիչեսկայա ռեչ»-ում։

— Իմ հոդվա՞ծը։ «Պերիոդիչեսկայա ռեչ»-ում,— զարմանքով հարցրեց Ռասկոլնիկովը,— կես տարի առաջ, երբ համալսարանից դուրս եկա, իսկապես մի հոդված գրեցի մի գրքի առթիվ, բայց այն ժամանակ տարա ոչ թե «Պերիոդիչեսկայա ռեչ»-ին, այլ «Եժեենեդելնայա ռեչ» թերթին։

— Բայց տպվել էր «Պերիոդիչեսկայա»-ում։

«Եժեենեդելնայա ռեչ»-ը դադարեցրեց իր գոյությունը, այս պատճառով էլ չտպվեցին...

— Այդ ճիշտ է. բայց դադարեցնելով իր գոյությունը, «Եժեենեդելնայա ռեչ»-ը միացավ «Պերիոդիչեսկայա ռեչ»-ին,

այս պատճառով էլ ձեր հոդվածը երկու ամիս առաջ տպվել է «Պերիոդիչեսկայա ռեչ»-ում։ Դուք այդ չգիտեի՞ք։

Ռասկոլնիկովը իրոք ոչինչ չգիտեր։

— Գիտե՞ք ինչ, դուք կարող եք հոդվածի համար նրանցից փող պահանջել։ Այ թե ինչ տեսակ բնավորություն ունեք. այնքան մեկուսացած եք ապրում, որ չգիտեք անմիջականորեն ձեզ վերաբերող բաները։ Այդ հո փաստ է։

— Կեցցես, Ռոդյա։ Ես էլ չգիտեի,— դոչեց Ռազումիխինը։— Հենց այսօր վաղ կտամ ընթերցարան ու կխնդրեմ այդ համարը։ Երկու ամիս առա՞ջ։ Ո՞ր օրը։ Միևնույն է, կգտնեմ։ Ա՜յ քեզ լավ բա՜ն։ Գոնե ասեի՛ր, էլի՛։

— Դուք ո՞րտեղից իմացաք, որ հոդվածը իմն է, չէ՞ որ մի տառով էր ստորագրված։

— Պատահմամբ իմացա, այն էլ օրերս։ Խմբագիրը առաց. ծանոթ է... Խիստ հետաքրքրվեցի։

— Հիշում եմ, հոդվածում ես քննարկում էիր ոճրագործի հոգեբանական վիճակը ոճիր կատարելու ամբողջ ընթացքում։

— Այո, ու պնդում եք, որ ոճրագործության կատարման ակտը միշտ ուղեկցվում է հիվանդությամբ։ Շատ, շատ օրիգինալ է, բայց... իսկապես ասած, ինձ հետաքրքրեց ձեր հոդվածի ոչ թե այդ մասը, այլ հոդվածի վերջում արտահայտված միտքը, որը դուք, ցավոք, շոշափում եք հարևանցիորեն, ոչ պարզ... Մի խոսքով, եթե կհիշեք, որոշ ակնարկ է արվում, որ իբր թե աշխարհում գոյություն ունեն այնպիսի որոշ անձնավորություններ, որոնք կարող են ամեն տեսակ անկարգություններ և ոճրագործություններ կատարել... այսինքն՝ ոչ թե կարող են, այլ դրա համար լիակատար իրավունք ունեն, և իբր թե նրանց համար օրենք էլ գոյություն չունի։

Ռասկոլնիկովը քմծիծաղ տվեց իր գաղափարի կոպիտ ու դիտավորյալ աղավաղման վրա։

— Ինչպե՞ս։ Այդ ի՞նչ է։ Ոճրագործության իրավո՞ւնքե Բայց եթե ոչ այն պատճառով, որ «միջավայրն է ստիպում»,—նույնիսկ ինչ-որ վախով ասաց Ռազումիխինը։

— Ոչ, ոչ, ամենևին էլ ո՛չ այդ պատճառով,— պատասխ-

խանոց Պորֆիրին։— Ամբողջ բանն այն է, որ նրա հոդվածում բոլոր մարդիկ ինչ-որ «սովորականների» և «արտասովորների» են բաժանվում։ Սովորականները պետք է ապրեն հնազանդության վիճակում և իրավունք չունեն զանցառել օրենքը, որովհետև նրանք սովորական մարդիկ են։ Իսկ արտասովորները իրավունք ունեն ամեն տեսակ ոճիրներ կատարել և ամեն կերպ զանցառել օրենքը, որովհետև նրանք արտասովոր մարդիկ են։ Կարծեմ դուք այսպիսի միտք եք արտահայտում, այնպես չէ՞, եթե միայն չեմ սխալվում։

— Այդ ի՞նչպես կարող է լինել, անկարելի է,— տարակուսանքով քրթմնջում էր Ռազումիխինը։

Ռասկոլնիկովը դարձյալ քմծիծաղ տվեց։ Նա իսկույն հասկացավ, թե ինչումն է բանը, և իրեն դեպի ուր են մղում. նա հիշում էր իր հոդվածը։ Որոշեց ըստ արժանվույն պատասխան տալ։

— Իմ հոդվածում գրեթե այդպիսի բան չկա,— անփույթ ու համեստորեն սկսեց նա։— Սակայն խոստովանում եմ, որ դուք համարյա ճիշտ շարադրեցիք այն, եթե ուզում եք, նույնիսկ բոլորովին ճիշտ... (Նրա համար կարծես հաճելի էր համաձայնել, որ դա բոլորովին ճիշտ էր)։ Տարբերությունը միայն այն է, որ ես բոլորովին չեմ պնդում, թե արտասովոր մարդիկ անպայման պետք է միշտ և ամեն տեսակ անկարգություններ անեն և պարտավոր են այդ անել, ինչպես դուք եք ասում։ Ինձ նույնիսկ թվում է, որ մամուլում այդպիսի հոդված չէին էլ զետեղի։ Ես պարզապես ակնարկել եմ, որ «արտասովոր» մարդը իրավունք ունի... այսինքն՝ ոչ թե պաշտոնական, այլ անձնապես իրավունք ունի իր խղճին թույլ տալ անտեսելու որոշ արգելքներ, միայն այն դեպքում, եթե իր գաղափարի կատարումը (որ գուցե երբեմն փրկարար է ամբողջ մարդկության համար), այդ է պահանջում։ Դուք բարեհաճում եք ասել, թե իմ հոդվածը պարզ չէ։ Ես պատրաստ եմ այն պարզաբանել, որքան այդ հնարավոր է։ Ես գուցե չեմ սխալվի, ենթադրելով, որ դուք էլ կարծեմ հենց այդ եք ուզում. հաճեցեք լսել։ Իմ կարծիքով եթե Կեպլերի և Նյուտոնի հայտնագործությունները որևէ կոմբինացիաների հետևանքով ոչ մի կերպ չկարողանային մարդկանց

հայտնի դառնալ այլ կերպ, քան այդ հայտնագործությունները խանդարող կամ խոչընդոտող մեկ, տասը, հարյուր և ավելի շատ մարդկանց կյանքի ղոհաբերությամբ, ապա Նյուտոնը իրավունք կունենար և նույնիսկ պարտավոր կլիներ... մեջտեղից վերացնել այդ տասը կամ հարյուր մարդուն, որպեսզի իր հայտնագործությունները հայտնի դարձներ ամբողջ մարդկության։ Սակայն սրանից բնավ չի հետևում, թե Նյուտոնը իրավունք կունենար ում ասես սպանել կամ ամեն օր շուկայում գողություն անել։ Այնուհետև, ինչպես հիշում եմ, ես իմ հոդվածում արծարծում էի այն միտքը, որ բոլորը... օրինակ, թեկուզ օրենսդիրները և մարդկության բախտը տնօրինողները, սկսած ամենահին դեմքերից և վերջացրած Լիկուրգներով, Սոլոններով, Մահմեդներով, Նապոլեոններով և այլն՝ բոլորը, առանց բացառության, ոճրագործներ էին թեկուզ հենց նրանով, որ տալով նոր օրենք, այդ կերպ խախտում էին հնադարյան, հասարակության կողմից սրբությամբ պահպանվող և հայրերից մնացած օրենքը, և իհարկե չէին խորշում արյուն թափելուց, եթե միայն արյունը (երբեմն բոլորովին անմեղ և հին օրենքի համար խիզախությամբ թափվող) կարող էր նրանց օգնել։ Նույնիսկ ուշադրավ է, որ այդ բարերարները և մարդկության բախտը տնօրինողները առանձնապես սարսափելի արյուն թափողներ էին։ Մի խոսքով, ես հետևեցնում եմ, որ բոլորն էլ, ոչ միայն մեծերը, այլև որոշ չափով աչքի ընկնող մարդիկ, այսինքն՝ որևէ նոր բան ասելու մի քիչ ընդունակները ըստ իրենց բնության պետք է որ անպայման ոճրագործներ լինեն, իհարկե, շատ կամ քիչ չափով։ Այլապես նրանց համար դժվար է աչքի ընկնել, իսկ նրանք դարձյալ ըստ իրենց բնության, իհարկե, չեն կարող համաձայնել անհայտ մնալ, ու իմ կարծիքով նույնիսկ պարտավոր էլ են չհամաձայնել։ Մի խոսքով, դուք տեսնում եք, որ մինչև այժմ այստեղ առանձնապես ոչ մի նոր բան չկա։ Սա հազար անգամ տպվել է ու կարդացվել։ Ինչ վերաբերում է իմ կողմից մարդկանց սովորականների և արտասովորների բաժանելուն, ապա ես համաձայն եմ, որ դա մի փոքր կամայական է, բայց ես հո չեմ էլ պնդում ճշգրիտ թվերի վրա։ Ես միայն իմ գլխա-

վոր մտքին եմ հավատում։ Դա այն է, որ ըստ բնության օրենքի, մարդիկ անհասարակ երկու կարգի են բաժանվում. ստորին (սովորական) մարդիկ, այսինքն, այսպես ասած, այն նյութը, որը ծառայում է միայն իր նմանների ծնունդ առնելու համար, ու իսկն ասած, մարդիկ, այսինքն՝ իրենց միաջավայրում նոր խոսք ասելու ձիրք կամ տաղանդ ունեցողներ։ Հասկանալի է, որ այստեղ ստորաբաժանումները անվերջ են, բայց երկու կարգերի տարբերիչ գծերը բավական ցայտուն են։ Առաջին կարգը, այսինքն նյութը, ընդհանրապես ասած, իր բնությամբ պահպանողական է, այս կարգի մարդիկ բարեպատշաճ են, ապրում են հլու-հնազանդ և սիրում են հնազանդ լինել։ Իմ կարծիքով նրանք պարտավոր էլ են հնազանդ լինել, որովհետև այդ է նրանց դերը և այստեղ նրանց համար բնավ որևէ ստորացուցիչ բան չկա։ Երկրորդ կարգի մարդիկ բոլորն էլ զանցառում են օրենքը, նրանք խորտակում են հինը կամ գրան հակամետ են, նայած իրենց ընդունակություններին։ Հասկանալի է, որ այս մարդկանց հանցագործությունները հարաբերական են և բազմատեսակ. մեծ մասամբ նրանք խիստ բազմապիսի հայտարարություններով պահանջում են ներկայի խորտակում հանուն լավագույնի։ Բայց եթե նրանց հարկավոր է իրենց գաղափարի իրագործման համար թույլ տալ սպանություն, արյունահեղություն, ապա իմ կարծիքով նրանք կարող են ներքուստ, ըստ իրենց խղճի, իրենց թույլ տալ արյունահեղություն, սակայն նայած գաղափարին և դրա չափին. սա նկատի ունեցեք։ Ես իմ հոդվածում միայն այս իմաստով եմ խոսում ոճրագործության նկատմամբ նրանց իրավունքի մասին։ (Դուք հիշեցեք, որ մեր վեճը իրավաբանական հարցից սկսվեց)։ Սակայն շատ անհանգստանալու հարկ չկա. մասսան համարյա երբեք չի ճանաչում նրանց այդ իրավունքը, նրանց մահապատժի է ենթարկում, կախում (շատ թե քիչ չափով) և դրանով միանգամայն արդարացիորեն կատարում է իր պահպանողական դերը, սակայն հետևյալ սերունդների օրով այդ նույն մասսան մահապատժի ենթարկվածներին մեծարում է ու երկրպագում (շատ թե քիչ չափով)։ Առաջին կարգը միշտ ներկայի տերն է, երկրորդ կարգը՝ ապագայի

տերը։ Առաջինները պահպանում են աշխարհը և քանակով բազմապատկում այն. երկրորդները առաջ են մղում աշխարհը և տանում դեպի նպատակը։ Երկուսն էլ գոյություն ունենալու բոլորովին միատեսակ իրավունք ունեն։ Մի խոսքով, բոլորն էլ հավասարազոր իրավունք ունեն, և vive la guerre éternelle[1], իհարկե մինչև Նոր Երուսաղեմ։

— Ուրեմն դուք այնուամենայնիվ հավատո՞ւմ եք Նոր Երուսաղեմին։

— Հավատում եմ,— կտրուկ պատասխանեց Ռասկոլնիկովը. այս ասելիս և իր երկար ճառի ընթացքում նայում էր հատակին, գորգի վրա իր ընտրած կետին։

— Աստծուն է՞լ եք հավատում։ Ներեցեք, որ այսպես հետաքրքրվում եմ։

— Հավատում եմ,— կրկնեց Ռասկոլնիկովը՝ բարձրացնելով գլուխը և նայելով Պորֆիրիին։

— Աղքատ Ղազարոսի հարությանն է՞լ եք հավատում։

— Հա, հավատում եմ։ Ձեր ինչի՞ն է պետք այդ ամենը։

— Տառացիորե՞ն եք հավատում։

— Տառացիորեն։

— Ահա թե ի՞նչ... այնպես, էլի հետաքրքրվեցի։ Ներեցեք։ Բայց թույլ տվեք, անդրադառնում եմ քիչ առաջ ձեր ասածներին, նրանց հո միշտ չե՞ն մահապատժի ենթարկում. ոմանք ընդհակառակը...

— Հաղթանակո՞ւմ են կենդանության ժամանակ։ Օ, իհարկե, ոմանք կենդանության ժամանակ էլ են դրան հասնում, և այդ դեպքում...

— Իրե՞նք են սկսում մահապատիժ տալ։

— Եթե այդ հարկավոր է, ու գիտե՞ք, մեծ մասամբ այդպես է լինում։ Առհասարակ ձեր դիտողությունը սրամիտ է։

— Շնորհակալ եմ։ Բայց այ թե ինչ ասացեք. այդ արտասովորներին ինչո՞վ կարելի է տարբերել սովորականներից։ Ենվելի՞ս են այդպիսի նշաններ ունենում, թե ինչ։ Ես

---

[1] Կեցցե մշտնջենական պատերազմը (ֆրանս.)։

սա ասում եմ այն իմաստով, որ այստեղ ավելի շատ ճըշ-մարտություն, այսպես ասած, ավելի շատ արտաքին որոշակիություն է հարկավոր. ներեցեք գործնական և բարեմիտ մարդու իմ բնական անհանգստությունը, բայց արդյոք չի՞ կարելի այստեղ, օրինակ, առանձին հաղուստ սահմանել, կրել որևէ բան, դրոշմներ, թե ինչ... որովհետև, դիտե՞ք, եթե խառնաշփոթություն առաջանա և մի կարգից որևէ մեկը երևակայի, թե ինքը մյուս կարգին է պատկանում, ու սկսի «վերացնել բոլոր արգելքները», ինչպես դուք միանգամայն հաջող արտահայտվեցիք, ապա ի՞նչ հետևանք կստացվի...

— Օ, դա շատ հաճախ է լինում։ Ձեր այդ դիտողությունը նույնիսկ ավելի սրամիտ է, քան նախորդ դիտողությունը։

— Շնորհակալ եմ...

— Չարժե. բայց նկատի առեք, որ սխալը հնարավոր է միայն առաջին կարգի, այսինքն՝ «սովորական» մարդկանց կողմից (ինչպես ես գուցե շատ անհաջող անվանեցի նրանց)։ Չնայած հնազանդվելու նրանց բնածին հակումին, բնության ինչ-որ խաղի հետևանքով, որը հատուկ է նույնիսկ կովին, նրանցից շատ շատերը նույնիսկ սիրում են իրենց երևակայել առաջավոր մարդիկ, «հինը խորտակողներ», ու «նոր խոսք» ասելու փորձ անել, այն էլ միանգամայն անկեղծորեն։ Իրականում նրանք միևնույն ժամանակ նորերին շատ հաճախ չեն նկատում և նույնիսկ արհամարհում են որպես հետամնաց և ստորացուցիչ կերպով մտածող մարդկանց։ Բայց, իմ կարծիքով, այստեղ մեծ վտանգ չի կարող լինել, և դուք, իրավ, չպետք է անհանգստանաք, որովհետև նրանք երբեք հեռու չեն գնում։ Իսկ եթե հեռու գնան, իհարկե, կարելի է երբեմն նրանց ձաղկել, որպեսզի նրանց հիշեցնել իրենց տեղը, ուրիշ ոչինչ. այստեղ նույնիսկ կատարածու էլ հարկավոր չէ. նրանք իրենք կձաղկեն իրենց, որովհետև խիստ բարեբարո մարդիկ են. ոմանք միմյանց այդպիսի ծառայություն են մատուցում, ոմանք էլ սեփական ձեռքերով իրենք են իրենց ձաղկում... ընդամենը զանազան բացահայտ ապաշխարանքների են դիմում. գեղեցիկ ու խրատական բան է դուրս գալիս. մի խոսքով, դուք չպետք է անհանգստանաք... Այդպիսի օրենք կա։

— Էհ, գոնե այդ կողմից դուք ինձ մի քիչ հանգըս-

տացրիք. բայց ահա դարձյալ մի հարց. ասացեք խնդրեմ, արդյոք շա՞տ են այդպիսի մարդիկ, այդ «արտասովորները», որոնք ուրիշներին մորթելու իրավունք ունեն։ Ես, իհարկե, պատրաստ եմ խոնարհվելու, բայց համաձայնեցեք, ահավոր բան է, եթե դրանք խիստ շատ են, այնպես չէ՞։

— Օ, դրանից էլ մի անհանգստանաք,— նույն տոնով շարունակեց Ռասկոլնիկովը։— Ընդհանրապես նոր մարդիկ մարդիկ, գրեթե որևէ նոր բան ասելու թեկուզ մի քիչ ընդունակները չափազանց քիչ, նույնիսկ տարօրինակության չափ քիչ են ծնվում։ Պարզ է միայն մի բան. մարդկանց և այդ բոլոր կարգերի ու ստորաբաժանումների ծնունդը պետք է որ հաստատ ու ճշգրիտ որոշված լինի բնության որևէ օրենքով։ Հասկանալի է, որ այդ օրենքը հիմա անհայտ է, բայց ես հավատում եմ որ դա գոյություն ունի և հետագայում կարող է հայտնի դառնալ։ Մարդկանց հսկայական մասսան, նյութը, հենց միայն նրա համար գոյություն ունի աշխարհում, որպեսզի վերջապես, ինչ-որ ճիգով, մինչև այժմ խորհրդավոր ինչ-որ պրոցեսով, սերունդների ու ցեղերի որևէ խաչասերման միջոցով, լարելով ուժերը, աշխարհ բերի գեթ հազարից մեկին, գեթ որևէ չափով ինքնուրույն մարդուն։ Էլ ավելի լայն ինքնուրույնությամբ է ծնվում գուցե տասը հազարից մեկը (ես սա ասում եմ իբրև օրինակ, պարզության համար)։ Էլ ավելի լայն ինքնուրույնությամբ՝ հարյուր հազարից մեկը։ Հանճարեղ մարդիկ միլիոններից մեկն են լինում, իսկ մեծ հանճարները, մարդկությանը կատարելագործողները թերևս ծնվում են աշխարհից բազմահազար միլիոններով մարդկանց անցնելուց հետո։ Մի խոսքով, ես չեմ նայել այն թորանոթը, որի մեջ կատարվում է այդ ամենը։ Բայց որոշակի օրենք անպայման կա և պետք է լինի. այստեղ պատահականություն չի կարող լինել։

— Դե՛, երկուսդ էլ կատակո՞ւմ եք, ինչ է,— ի վերջո գոչեց Ռազումիխինը։— Ի՞նչ եք իրար գլուխ տանում։ Նստել են ու ձեռ են առնում միմյանց։ Դու այդ բոլորը լո՞ւրջ ես ասում, Ռոդյա։

Ռասկոլնիկովը բարձրացրեց իր դալուկ և տմարդյա տըխուր դեմքը և նրան ոչինչ չպատասխանեց։ Ռազումիխինին

տարօրինակ թվաց, որ այդ մեղմ ու տրտում դեմքի հանդեպ առկա է Պորֆիրիի չթաքցրած, սեռուն, գրգռող և անբաղդավարի խայթողությունը։

— Էհ, սիրելիս, եթե իրոք դա լուրջ է, ապա... Դու, իհարկե, իրավացի ես, ասելով, որ դա նորություն չէ և նման է այն ամենին, ինչ որ մենք հազար անգամ կարդացել ենք և լսել. բայց ինչ որ իրոք օրիգինալ է այդ ամենի մեջ և իրոք միայն քեզ է պատկանում, ի սարսափ իմ, այն է, որ խղճով արյուն թափել ես թույլ տալիս, այն էլ նույնիսկ այդպիսի ֆանատիկոսությամբ... ներիր ինձ։ Ուրեմն այդ է քո հոդվածի գլխավոր միտքը։ Խղճով արյուն թափելու այդ թույլտվությունը... իմ կարծիքով ավելի սարսափելի է, քան արյուն թափելու պաշտոնական, օրինական թույլտվությունը...

— Միանգամայն ճիշտ է, ավելի սարսափելի,— ասաց Պորֆիրին։

— Ոչ, Ռոդյա, դու մոլորվել ես։ Այստեղ սխալ կա։ Ես կարդամ... Դու մոլորվել ես։ Դու չես կարող այդպես մտածել... Կկարդամ։

— Հոդվածում չկա այդ ամենը, կան միայն ակնարկներ,— ասաց Ռասկոլնիկովը։

— Այդպես, այդպես,— վրա բերեց անհանգիստ նստած Պորֆիրին,— հիմա ինձ համար գրեթե պարզ է, թե դուք ինչպես եք բարեհաճում նայել հանցագործությանը, բայց... ներեցեք իմ պնդերեսությունը (շատ եմ անհանգստացնում ձեզ, անհարմար եմ զգում ինձ), գիտե՞ք, քիչ առաջ դուք ինձ հանգստացրիք երկու կարգերի իրար խառնվելու դեպքերի նկատմամբ, բայց... ինձ ուրախալի զանազան գործնական հարցերն են անհանգստացնում։ Ասենք թե մի որևէ մարդ, որևէ երիտասարդ կերևակայի, թե ինքը Լիկուրգ է կամ Մահմեդ... իհարկե, ապագա, ու կսկսի վերացնել դրան խանգարող բոլոր արգելքները... Կասի՝ հարկավոր է երկար ճանապարհորդություն կատարել, իսկ դրա համար փող է հարկավոր... ու կսկսի փող ճարել ճանապարհորդության համար... գիտե՞ք։

Անկյունում նստած Զամետովը հանկարծ փոթկացրեց։ Ռասկոլնիկովը նույնիսկ չնայեց նրան։

— Ես պետք է համաձայնեմ, որ այդպիսի դեպքեր իրոք լինում են,— հանգիստ պատասխանեց նա։— Այդ կերպ ծուղակ են ընկնում հիմարներն ու սնափառները, մանավանդ երիտասարդությունը։

— Այդպես է, այո։ Հապա ո՞նց կլինի բանը։

— Նույնպես էլ կլինի,— քմծիծաղեց Ռասկոլնիկովը,— դրա համար ես չեմ մեղավորը։ Այդպես է ու միշտ էլ այդպես կլինի։ Այ, սա (նա գլխով ցույց տվեց Ռազումիխինին) հիմա ասում էր, որ ես սպանություն եմ թույլ տալիս։ Դե ի՞նչ կա որ։ Հասարակությունը հո միանգամայն ապահովված է աքսորներով, բանտերով, դատական քննիչներով, տաժանակիր աշխատանքներով, էլ ինչո՞ւ անհանգստանալ։ Դե փնտրեցեք գողին...

— Լավ, իսկ եթե գտնե՞նք։

— Թող պատժվի։

— Դուք տրամաբանորեն եք խոսում։ Լա՜վ, իսկ նրա խղճի նկատմամբ ի՞նչ կասեք։

— Դուք ի՞նչ գործ ունեք նրա խղճի հետ։

— Այնպես, էլի, մարդասիրության նկատառումով։

— Ով խիղճ ունի, կտուժի, երբ կգիտակցի սխալը։ Հենց այդ էլ կլինի նրա պատիժը, բացի տաժանակիր աշխատանքներից։

— Իսկ իրոք հանճարեղ մարդիկ, նրանք, որոնց իրավունք է տված սպանելու, նրանք բոլորովի՞ն չպիտի տուժեն, նույնիսկ արյուն թափելու համար է՞լ չպիտի պատժվեն,— հոնքերը կիտած հարցրեց Ռազումիխինը։

— Ինչո՞ւ ասել չպիտի պատժվեն։ Այստեղ ոչ թույլտվություն կա, ոչ էլ արգելք։ Թող տանջվի, եթե խղճում է զոհին ... Տանջանքն ու ցավը միշտ էլ պարտադիր են լայն գիտակցության և խոր սրտի համար։ Ինձ թվում է, որ իրոք մեծ մարդիկ աշխարհում պետք է մեծ տխրություն զգան,— ավելացրեց Ռասկոլնիկովը մտածմունքի մեջ ընկած, նույնիսկ խոսակցությանը անհարիր տոնով։

Նա բարձրացրեց գլուխը, մտածկոտ նայեց բոլորին, ժպտաց ու վերցրեց գլխարկը։ Նա շատ ավելի հանգիստ էր, քան մինչև այստեղ մտնելը, ու զգում էր այդ բանը։ Բոլորը վեր կացան։

— Էհ, ուղում եք նախատեք ինձ, ուղում եք բարկացեք, բայց ես չեմ կարող համբերել,— ասաց Պորֆիրի Պետրովիչը,— Թույլ տվեք էլի մի հարց (ես ձեզ շատ եմ անհանգստացնում)։ Ուզում էի մի փոքրիկ իդեա շոշափել՝ հենց միայն դա չմոռանալու համար...

— Լավ, ասացեք ձեր իդեան։— Ռասկոլնիկովը լուրջ ու դալկադեմ կանգնել էր Պորֆիրիի առաջ, սպասողական վիճակում։

— Հա՛... ուղղակի չգիտեմ, թե ինչպես ավելի հաջող արտահայտվեմ... այդ իդեան խիստ ուշագրավ է... հոգեբանական է... Երբ դուք գրում էիք ձեր հոդվածը, չէր կարող պատահել, որ ինքներդ ձեզ գոնե աննշան չափով չհամարեիք նույնպես «արտասովոր» և «նոր խոսք» ասող մարդ, այսինքն՝ ձեր հոդվածի իմաստով, քա՛հ-քա՛հ-քա՛հ... Այդպե՞ս է։

— Շատ հավանական է,— արհամարհանքով պատասխանեց Ռասկոլնիկովը։ Ռազումիխինը շարժում արեց։

— Եթե այդպես է, մի՞թե դուք ինքներդ կորոշեիք ինչ-որ կենսական ձախորդությունների և նեղությունների պատճառով կամ ամբողջ մարդկությանը որևէ կերպ օժանդակելու համար դանցառել արգելքը... օրինակ, սպանել և կողոպտել...

Ու Պորֆիրին Ռասկոլնիկովին հանկարծ էլի նշան արեց ձախ աչքով և ծիծաղեց, ճիշտ այնպես, ինչպես քիչ առաջ։

— Եթե ես զանցառեի արգելքը, իհարկե, ձեզ չէի ասի,— գրգռիչ, գոռող քամահրանքով պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Ոչ, սրանով ես հետաքրքրվում եմ հենց այնպես, իսկն ասած՝ ձեր հոդվածը ըմբռնելու համար, միայն գրական տեսակետից...

«Օֆ, որքան դա պարզորոշ է ու լիտի», նողկանքով մտածեց Ռասկոլնիկովը։

— Թույլ տվեք հայտնել ձեզ, որ ես ինձ չեմ համարում Մահմեդ կամ Նապոլեոն... ոչ էլ նման անձանցից որևէ մեկը, հետևաբար, չլինելով այդպիսի մարդ, չեմ կարող ձեզ

բավարար բացատրություն տալ, թե ինչպես կվարվեի,— սառը պատասխանեց նա։

— Դե լավ, էլի, հիմա մեզնում, Ռուսաստանում, ով ասես, որ իրեն Նապոլեոն չի համարում,— սարսափելի անպարկեշտությամբ հանկարծ ասաց Պորֆիրին։ Նույնիսկ նրա ձայնի ելևէջներում էլ այս անգամ ինչ-որ պարզ բան կար։

— Արդյո՞ք մի որևէ ապագա Նապոլեոն չէր, որ անցյալ շաբաթ կացնով ջնջեց մեր Ալյոնա Իվանովնային,— հանկարծ բերանից թռցրեց անկյունում նստած Զամետովը։

Ռասկոլնիկովը լուռ էր և ակնապիշ, սևեռուն նայում էր Պորֆիրիին։ Ռազումիխինը մոայլվել էր, կիտել հոնքերը։ Նրան արդեն առաջ էլ կարծես ինչ-որ կասկած էր տանջում։ Նա բարկացկոտ նայեց շուրջը։ Անցավ մոայլ լռության մի րոպե։ Ռասկոլնիկովը շուտ եկավ, որ գնար։

— Դուք արդեն գնո՞ւմ եք,— փաղաքուշ ասաց Պորֆիրին՝ չափազանց սիրալիր մեկնելով ձեռքը։—Շատ, շատ ուրախ եմ, որ ծանոթացանք։ Իսկ ձեր խնդրանքի կատարման մասին չկասկածեք։ Գրեցեք այնպես, ինչպես որ ես ձեզ ասացի։ Ամենից լավ է մոտ օրերս... թեկուզ հենց վաղը ինքներդ անցեք այնտեղ... ինձ մոտ։ Ես այնտեղ կլինեմ երևի ժամը տասնմեկին։ Ամեն ինչ կհաշողացնենք... Կխոսենք... Դուք, որպես այնտեղ վերջին անգամ եղածներից մեկը, գուցե կարողանայիք մեզ որևէ բան ասել,— բարեսիրտ տեսքով ավելացրեց Պորֆիրին։

— Դուք ուզում եք ինձ պաշտոնապես, բոլոր կանոնների համաձայն հարցաքննությա՞ն ենթարկել,— խիստ տոնով հարցրեց Ռասկոլնիկովը։

— Ինչո՞ւ, առայժմ դա բնավ չի պահանջվում։ Դուք ինձ սխալ հասկացաք։ Ես, գիտե՞ք, առիթը բաց չեմ թողնում և... արդեն խոսել եմ բոլոր գրավադիրների հետ... ոմանցից ցուցմունքներ եմ վերցրել... Դուք վերջիններից եք... Հա՛, միտս եկավ,— գոչեց Պորֆիրին՝ հանկարծ ինչ-որ առիթով ուրախացած,— հիշեցի...— շուտ եկավ նա դեպի Ռազումիխինը,— դու այն ժամանակ շատ էիր խոսում Նիկոլայի մասին...— Պորֆիրին դարձավ դեպի Ռասկոլնիկովը,— ես ինքս էլ գիտեմ, ինքս էլ գիտեմ, որ այդ տղան անմեղ է, բայց ի՞նչ

արած. հարկ եղավ Միտկային էլ անհանգստացնել... այ թե ինչումն է բանը, գործի ամբողջ էությունը. այն ժամանակ սանդուղքով բարձրանալիս... ներեցեք, դուք ժամը ութի՞ն էիք այնտեղ գնացել։

— Ութին,— պատասխանեց Ռասկոլնիկովը՝ նույն վայրկյանին անհաճելիորեն կգալով, որ կարող էր այդ չասել։

— Այդպես, ժամը ութին սանդուղքով բարձրանալիս գոնե դուք երկրորդ հարկում, բաց բնակարանում չտեսա՞ք երկու աշխատողներին կամ գոնե նրանցից մեկին։ Հիշո՞ւմ եք։ Նրանք ներկում էին հատակը. չնկատեցի՞ք. սա շատ, շատ կարևոր է նրանց համար։

— Ներկարարների՞ն։ Ոչ, չեմ տեսել...— դանդաղ և կարծես հուշերը քրքրելով պատասխանեց Ռասկոլնիկովը՝ նույն ակնթարթում լարվելով իր ամբողջ էությամբ և ճիգ թափելով որքան կարելի է շուտ կռահել, թե իր դեմ ինչ ծուղակ է պատրաստվում և չլինի՞ թե ինքը որևէ բան աշքաթող անի։ — Ոչ, չեմ տեսել, այդպիսի բաց բնակարան էլ չեմ նկատել... Իսկ չորրորդ հարկում (նա արդեն հասկացել էր ծուղակը և ցնծության մեջ էր), հիշում եմ, մի աստիճանավոր տեղափոխվում էր իր բնակարանից, որը գտնվում էր Ալյոնա Իվանովնայի բնակարանի դիմաց... հիշում եմ... Ես այդ պարզ հիշում եմ... զինվորները ինչ-որ բազմոց էին տանում և ինձ սեղմեցին պատին... Իսկ ներկարարներ կային, թե ոչ, այդ չեմ հիշում... Կարծեմ բաց բնակարան էլ ոչ մի հարկում չկար։ Այո, չկար...

— Դու ինչ ես անում, է՛,— հանկարծ գոռաց Ռազումիխինը՝ կարծես ուշքի գալով ու գլխի ընկնելով,— ներկարարները աշխատել են հենց սպանության օրը, իսկ սա երեք օր առաջ է այնտեղ եղել. ինչե՞ր ես հարցնում։

— Թյո՛ւ, շփոթվեցի,— Պորֆիրին մատը խփեց ճակատին։— Գրողը տանի, այդ գործից ես խելքս եմ թռցնում,— կարծես նույնիսկ ներողություն խնդրելով, դիմեց նա Ռասկոլնիկովին,— մեզ համար խիստ կարևոր է իմանալ, թե որևէ մեկը նրանց չի՞ տեսել դատարկ բնակարանում, ժամը ութին, իսկ հիմա ես կարծում էի, թե դուք էլ կկարողանայիք մի բան ասել... բոլորովին շփոթվեցի։

— Ուրեմն պետք է ավելի ուշադիր լինել,— մռայլ պատասխանեց Ռազումիխինը։

Վերջին խոսքերը ասվեցին նախասենյակում։ Պորֆիրի Պետրովիչը նրանց շատ սիրալիր ուղեկցեց մինչև դուռը։ Երկուսն էլ մռայլադեմ ու նոթոտ դուրս եկան փողոց և մի քանի քայլ ոչ մի բառ չասացին։ Ռասկոլնիկովը խոր շունչ առավ...

VI

—... Չեմ հավատում, չեմ կարող հավատալ,— կրկնում էր շփոթված Ռազումիխինը՝ ամեն կերպ աշխատելով հերքել Ռասկոլնիկովի փաստարկները։ Նրանք արդեն մոտենում էին Բակալեևի հյուրանոցին, որտեղ Պուլխերիա Ալեքսանդրովնան և Դունյան վաղուց էին նրանց սպասում։ Ռազումիխինը ճանապարհին տաքացած խոսելիս ամեն րոպե կանգ էր առնում՝ շփոթված և հուզված հենց միայն նրանով, որ նրանք առաջին անգամ պարզ խոսեցին այդ բանի մասին։

— Մի հավատա,— սառն ու անփույթ քմծիծաղով պատասխանեց Ռասկոլնիկովը,— դու ըստ քո սովորության, ոչինչ չէիր նկատում, իսկ ես կշռադատում էի յուրաքանչյուր բառը։

— Դու կասկածամիտ ես, դրա համար էլ կշռադատում էիր... Հըմ... իսկապես, ես համաձայն եմ, Պորֆիրիի խոսելաձևը բավական տարօրինակ էր, իրեն առանձնապես տարօրինակ էր պահում այդ սրիկա Զամետովը... Դու իրավացի ես, նրա մտքում ինչ-որ բան կար, բայց ինչո՞ւ էր այդպես, ինչո՞ւ։

— Գիշերվա ընթացքում փոխել էր միտքը։

— Ընդհակառակը, ընդհակառակը։ Եթե նրանք այդպիսի անհեթեթ միտք ունենային, ամեն կերպ կաշխատեին թաքցնել այն, թաքցնել իրենց դիտավորությունները, որպեսզի հետո բռնեն... Իսկ հիմա դա լկտիություն և անզգուշություն է։

— Եթե նրանք ունենային փաստեր, այսինքն՝ իսկական

փաստեր կամ գեթ որևէ չափով հիմնավորված կասկածներ, ապա իրոք կաշխատեին թաքցնել խաղը, հույս ունենալով, որ է՛լ ավելի կշահեն (ասենք, վաղուց խուզարկություն կկատարեին)։ Բայց նրանք փաստ չունեն, ոչ մի փաստ, բոլորը պատրանք է, բոլորը կասկածի վրա է հիմնված, սոսկ թռուցիկ իդեա է, դրա համար էլ նրանք աշխատում են լկտիությամբ շահել։ Գուցե Պորֆիրին ինքն էլ չարացավ, որ փաստեր չկան, սրանեղելուց տրաքվեց։ Գուցե և որևէ դիտավորություն ունի... Նա կարծես թե խելացի մարդ է... Գուցե ուզում էր ինձ վախեցնել, որ գիտե... Այստեղ, սիրելիս, յուրահատուկ հոգեբանություն կա... Ասենք, գարշելի է այդ ամենը բացատրելը։ Թո՛ղ։

— Եվ վիրավորական է, վիրավորական է, ես քեզ հասկանում եմ... Բայց... քանի որ մենք հիմա արդեն պարզ խոսեցինք (իսկ դա հիանալի է, որ վերջապես, պարզ խոսեցինք, ես ուրախ եմ), ուստի ես հիմա ուղղակի խոստովանում եմ քեզ, որ դա, այդ միտքը նրանց մոտ ես նկատել եմ վաղուց, այս ամբողջ ժամանակվա ընթացքում, իհարկե, այն եղել է միայն աննշան չափով, անկայուն ձևով, բայց ինչո՞ւ է եղել, թեկուզ և անկայուն ձևով։ Ի՞նչպես են նրանք համարձակվում։ Ո՞րտեղ, ո՞րտեղ են թաքնված դրա արմատները։ Օ, եթե դու գիտենայիր, թե ես ինչպե՞ս էի կատաղում։ Եվ ի՞նչպես չկատաղես. չքավոր մի ուսանող, որը հյուծված է աղքատությունից ու սևամաղձությունից. տառապելու է դաժան, զառանցագին հիվանդությամբ, որը գուցե արդեն սկսվել է (նկատի առ). կասկածամիտ է, ինքնասեր, գիտե իր արժանիքը և վեց ամիս ոչ ոքի չի տեսել իր խցիկում. ցնցոտիով և առանց ներքանների կոշիկներով կանգնած է ինչ-որ թաղապետերի առաջ և նրանց կողմից անարգանքի է ենթարկվում. անսպասելի պարտք-ժամկետանց մուրհակ արքունի խորհրդական Ջեբարովի մոտ, նեխած ներկ (ոստիկանատան նոր ներկած պատերի. Ծթ), երեսուն աստիճան շոգ ըստ Ռեոմյուրի, ծանր օդ, բազմաթիվ մարդիկ, խոսակցություն պառավի սպանության մասին, որի մոտ ինքը եղել է նախորդ օրը, և այդ ամենով հանդերձ՝ սովալյուկ վիճակ. էլ ի՞նչպես այսպես չուշաթափվես։ Մի՞թե սա դատարկելու հիմք է տալիս։ Գրողը տանի, ես հասկանում

եմ, որ սա վրդովեցուցիչ է, բայց եթե ես քո տեղը լինեի Ռոդյա, կծիծաղեի բոլորի աչքի առաջ, կամ որ ավելի լավ է, կթքեի բոլորի երեսին, այն էլ առատորեն, ու մի երկու տասնյակ ապտակ կհասցնեի ում հարկն է, ինչպես և միշտ դրանք պետք է տալ, ու դրանով էլ գործը կվերջացնեի։ Թքիը, քաշալերվիր, ամոթ է։

«Այնուամենայնիվ նա այդ լավ շարադրեց»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Թքի՞ր. իսկ վաղը դարձյալ հարցաքննություն կլինի,— դառնությամբ ասաց նա,— մի՞թե ես պետք է նրանց բացատրություն տամ։ Ինձ այն էլ է վրդովում, որ երեկ պանդոկում ավելորդ բաներ ասացի Զամետովին։

— Գրողը տանի, ինքս կգնամ Պորֆիրիի մոտ։ Նրան մի լավ հուպ կտամ ազգակցական եղանակով. թող ամեն ինչ ասի մինչև մանրամասնությունները։ Զամետովին՝ նույնպես...

«Վերջապես, գլխի ընկավ», մտածեց Ռասկոլնիկովը։

— Դաց,— գոչեց Ռազումիխինը՝ հանկարծ բռնելով նրա ուսից,— կաց, դու սխալվել ես, ես մտածեցի, որ սխալվել ես. դու ասում ես, որ ներկարարների վերաբերյալ հարցը նենգարար է տրված. այստեղ նենգությունից ի՞նչ պիտի դուրս գա։ Հասկացիր, եթե այդ բանը դու աներիր, մի՞թե կարող էիր բերանիցդ թռցնել, թե տեսել ես բնակարանը ներկելը... ու ներկարարներին։ Ընդհակառակը, կասեիր, թե ոչինչ չես տեսել, եթե նույնիսկ տեսել էիր։ Ո՞վ է իր դեմ ցուցմունք տալիս։

— Եթե ես այդ բանը արած լինեի, անպայման կասեի, որ տեսել եմ ներկարարներին և բնակարանը,— դժկամորեն և նկատելի զզվանքով շարունակեց պատասխանել Ռասկոլնիկովը։

— Ախր ինչո՞ւ ինքդ քո դեմ խոսես։

— Որովհետև միայն մուժիկները կամ բոլորովին անփորձ մարդիկ են հարցաքննությունների ժամանակ ամեն ինչ ուղղակի թաքցնում։ Իսկ եթե մարդը մի քիչ զարգացած է ու փորձառու, աշխատում է ըստ հնարավորության խոստովանել բոլոր առերեսությունները և անհերքելի փաստերը. միայն

թե դրանք յուրովի է պատճառաբանում, իր առանձնահատուկ և անսպասելի գիծն է անցկացնում, որով փաստերին բոլորովին ուրիշ նշանակություն է տալիս և ուրիշ կերպ է դրանք լուսաբանում։ Պորֆիրին հուսով էր, թե ես անպայման այդպես կպատասխանեմ և անպայման կասեմ այն, ինչ որ տեսել եմ և այդ կերպ կպարզվի ճշմարտությունը, ու իմ բացատրությանը որևէ բան կավելացնեմ...

— Ախր նա քեզ իսկույն կասեր, որ սպանությունից երկու օր առաջ ներկարարները այնտեղ չէին կարող լինել և ուրեմն դու այնտեղ եղել ես հենց սպանության օրը, ժամը ութին։ Հեշտությամբ կշշկլեցներ քեզ։

— Նա կարծում էր, թե ես չեմ կարողանա գլխի ընկնել և կշտապեմ ճիշտ պատասխաններ տալ ու կմոռանամ, որ ներկարարները չէին կարող երկու օր առաջ այնտեղ լինել։

— Ի՞նչպես կարելի էր այդ մոռանալ։

— Շատ հեշտ։ Խորամանկ մարդիկ էլ հենց այդպիսի դատարկ բաներից են շփոթվում։ Որքան խորամանկ է մարդը, այնքան քիչ է կասկածում, որ իրեն հեշտությամբ կշփոթեցնեն։ Ամենախորամանկ մարդուն էլ հենց աննշան փաստերով պետք է շփոթեցնել։ Պորֆիրին ամենևին էլ այնպես հիմար չէ, ինչպես դու ես կարծում...

— Որ այդպես է, նա սրիկա է։

Ռասկոլնիկովը չէր կարող չծիծաղել։ Բայց նույն րոպեին նրան տարօրինակ թվացին իր աշխուժացումն ու տրամադիր լինելը, որով նա տվեց վերջին բացատրությունը, մինչդեռ ամբողջ նախընթաց խոսակցությանը նա մասնակցում էր մռայլ գարշանքով, դժկամորեն, հենց միայն լուռ չմնալու համար։

«Որոշ հարցեր հաճույքով եմ շոշափում», մտածեց նա։

Բայց համարյա նույն րոպեին նա ինչ-որ անհանգստություն զգաց, կարծես անակնկալ ու տաղնապալից մի միտք շփոթեցրեց նրան։ Անհանգստությունը սաստկանում էր։ Ընդանք արդեն հասան մինչև Բակալեևի հյուրանոցի մուտքը։

— Գնա մենակ, ես հիմա կգամ,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը։

— Ո՞ւր ես գնում, մենք հո տեղ հասանք։

— Գործ ունեմ, գործ... Կգամ կես ժամից... Ասա նը-յանց։

— Քո կամքն է, բայց ես կգամ քեզ հետ։

— Այդ ի՞նչ է, դո՞ւ էլ ես ուզում ինձ տանջել,— բղավեց Ռասկոլնիկովը այնպիսի դառն ջղայնությամբ, աչքերի այն-պիսի տխրագին արտահայտությամբ, որ Ռազումիխինի թեվերը թուլացան։ Մի քանի վայրկյան նա կանգնած էր մուտքի սանդուղքին և մռայլ նայում էր, թե Ռասկոլնիկովը ինչ-պես էր արագ քայլում իր ապրած փողոցի ուղղությամբ։ Վերջապես, սեղմելով ատամները և բռունցքները, երդվելով, որ հենց այդ օրը Պորֆիրիից կքամի բոլոր դաղտնիքները, ինչպես քամում են կիտրոնի հյութը, բարձրացավ վերև՝ հան-գըստացնելու իրենց երկար բացակայությունից արդեն ան-հանգստացած Պուլխերիա Ալեքսանդրովնային։

Երբ Ռասկոլնիկովը հասավ իր ապրած տանը, նրա բուն-քերը քրտնել էին, և նա ծանր էր շնչում։ Նա հապճեպ բարձ-րացավ սանդուղքով, մտավ իր չփակած բնակարանը և իս-կույն կեռով փակեց դուռը։ Այնուհետև վախով ու խելահե-ղությամբ նետվեց դեպի անկյունը, դեպի պաստառի այն ճեղքվածքը, որտեղ առաջ գտնվում էին կողոպտած իրերը, ձեռքը խոթեց ճեղքվածքի մեջ ու մի քանի բոպե մանրակըր-կիտորեն խառնշտորեց այն՝ շոշափելով բոլոր ծակուծուկե-րը ու պաստառի բոլոր ծալքերը։ Ոչինչ չդտնելով, վեր կա-ցավ ու խոր շունչ առավ։ Քիչ առաջ, երբ մոտեցել էին Բա-կալեևի հյուրանոցին, նա հանկարծ երևակայել էր, որ մի որևէ իր, որևէ շղթա, ճարմանդ կամ նույնիսկ թուղթը, որով փաթաթված էին դրանք և որի վրա պառավի ձեռքով նշում-ներ էին արված, կարող էր մնացած լինել որևէ խոռոչում, հետո հանկարծ գտնվել և անսպասելի ու բացահայտ հան-ցանշան դառնալ։

Նա կանգնել էր ասես մտաղբաղ, ու տարօրինակ, թույլ, համարյա անիմաստ ժպիտը դողում էր նրա շուրթերին։ Վեր-ջապես, նա վերցրեց գլխարկը և կամացուկ դուրս ելավ սենե-յակից։ Նրա մտքերը խռնվում էին։ Մտախոհ իջավ մինչև դարպասը։

— Ահա և նա ինքը,— լսվեց մի բարձր ձայն։ Ռասկոլ-նիկովը բարձրացրեց գլուխը։

Դոնապանը կանգնած էր իր խցիկի դռան առջև ու նրան մատնացույց էր անում մի ինչ-որ ցածրահասակ մարդու, որը տեսքով քաղքենու էր նմանվում, հագած էր խալաթի պես մի բան, բաճկոնակ, ու հեռվից կնոջ էր նմանվում։ Կեղտոտ, հովարավոր գլխարկով ծածկված գլուխը կախված էր, և նա ասես ամբողջովին կորացած լիներ։ Նիհար, կնճռոտ դեմքը ցույց էր տալիս, որ նա հիսունից անց է. փոքրիկ, ուռած աչքերի նայվածքը մռայլ էր, խստաբարո, ու անբավականություն էր արտահայտում։

— Ինչո՞ւմն է բանը,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ մոտենալով դոնապանին։

Քաղքենին խեթ-խեթ նայեց ու երկար, սևեռուն, ուշադիր զննեց նրան. հետո դանդաղ շուռ եկավ ու ոչ մի բառ չասելով, տան դարպասից դուրս ելավ փողոց։

— Ախր ինչո՞ւմն է բանը,— բղավեց Ռասկոլնիկովը։

— Նա ձեր անունը տվեց և հարցրեց, թե այստե՞ղ եք ապրում, ո՞ւմ մոտ։ Հիմա դուք իջաք, ես ձեզ ցույց տվի նը-բան, իսկ նա գնաց։ Այ քեզ բա՞ն։

Դոնապանը նույնպես մի քիչ տարակուսանքի մեջ էր, ու էլի մի փոքր մտածելով, շուռ եկավ ու մտավ իր խցիկը։

Ռասկոլնիկովը աճապարեց քաղքենու ետևից և իսկույն տեսավ, որ նա դարձյալ դանդաղ, համաչափ քայլերով գընում է փողոցի մյուս կողմով, աչքերը գետնին հառած, ու կարծես ինչ-որ բան է կշռադատում։ Ռասկոլնիկովը շուտով հասավ նրան, բայց մի քանի րոպե նրա ետևից էր գնում. վերջապես, կողքից մոտեցավ ու նայեց նրա դեմքին։ Քաղքենին իսկույն նկատեց նրան, արագ զննեց, ապա էլի սկսեց նայել գետնին, ու այսպես նրանք գնում էին կողք-կողքի, առանց մի բառ ասելու։

— Դուք ինձ հարցրե՞լ էիք... դոնապանից,— վերջապես ասաց Ռասկոլնիկովը, բայց ինչ-որ շատ ցածր ձայնով։

Քաղքենին ոչ մի պատասխան չտվեց և նույնիսկ չնայեց նրան։ Էլի մի փոքր լուռ էին։

— Ի՞նչ է... գալիս եք, հարցնում... ու լռում եք... ախր ինչո՞ւմն է բանը։— Ռասկոլնիկովի ձայնը խզվում էր ու բառերը կարծես չէին ուզում պարզ արտասանվել։

Քաղքենին այս անգամ բարձրացրեց գլուխը և չարագուշակ, մռայլ հայացքով նայեց Ռասկոլնիկովին։

— Մարդասպա՜ն,— ասաց նա հանկարծ ցածր, բայց պարզ ու կտրուկ ձայնով...

Ռասկոլնիկովը քայլում էր նրա կողքից։ Նրա ոտքերը հանկարծ սաստափելի թուլացան, մեջքը սարսռեց, մի ակընթարթ սիրտը կարծես նվաղեց. հետո հանկարծ սկսեց խփել, ասես պոկվեց ու ընկավ կեռից։ Այսպես նրանք անցան հարյուր քայլ, իրար կողքի և դարձյալ բոլորովին լուռ։

Քաղքենին չէր նայում նրան։

— Սա ի՞նչ բան է... ի՞նչ... ո՞վ է մարդասպանը,— հազիվ լսելի փնթփնթաց Ռասկոլնիկովը։

— Դո՛ւ ես մարդասպանը,— էլ ավելի կտրուկ և ազդու տոնով ու ատելությամբ լեցուն ինչ-որ հրճվանքի ժպիտով ասաց քաղքենին ու դարձյալ ուղիղ նայեց Ռասկոլնիկովի դալուկ դեմքին և խամրած աչքերին։ Այդ պահին երկուսն էլ մոտեցան փողոցների խաչմերուկին։ Քաղքենին դարձավ գեպի ձախ կողմի փողոցը ու գնաց առանց ետ նայելու։ Ռասկոլնիկովը կանգ առավ ու երկար նայեց նրա ետևից։ Նա տեսավ, թե ինչպես քաղքենին մի հիսուն քայլ անցնելով, շուռ եկավ ու նայեց իրեն, իսկ ինքը դեռ անշարժ կանգնած էր նույն տեղում։ Ռասկոլնիկովին թվաց, թե նա այս անգամ էլ իրեն նայեց սառն, ատելությամբ լեցուն և հրճվալից ժպիտով, թեև հնարավոր չէր դա պարզ տեսնել։

Ռասկոլնիկովը կամացուկ, թուլացած քայլերով, դողդոջ ծնկներով և կարծես սարսափելի մրսած ետ դարձավ ու գընաց իր խցիկը։ Նա հանեց գլխարկը, դրեց սեղանին ու տասը րոպե անշարժ կանգնեց դրա կողքին։ Այնուհետև ուժասպառ ընկավ բաղմոցին ու հիվանդագին ինքնազգացմամբ, թույլ տնքալով մեկնվեց դրա վրա։ Աչքերը փակված էին։ Այդպես նա պառկեց մոտ կես ժամ։

Նա ոչ մի բանի մասին չէր մտածում։ Այնպես, կային ինչ-որ մտքեր կամ մտքերի բեկորներ, խառնիխուռն ու տենկապ պատկերացումներ, այնպիսի մարդկանց դեմքեր, որոնց նա տեսել էր դեռ մանկության օրերում կամ որևէ տեղ հանդիպել միայն մեկ անգամ և որոնց նա երբեք չէր հիշելու... եկեղեցու զանգակատունը. մի պանդոկի բիլիարդը և

ինչ-որ սպա դրա կողքին. սիգարների հոտ ծխախոտի ինչ-որ խանութում, ներքնահարկում օդեստուն. սև, բոլորովին խավարապատ սանդուղք՝ կեղտաջրերով ամբողջովին ողողված ու ձվի կեղևներով պատած. զանգերի կիրակնօրյա զոդանջ ինչ-որ տեղից... Սարկաները հերթափոխվում ու պրտրտվում էին մրրկի նման։ Մի քանիսը նրան նույնիսկ դուր էին գալիս, և նա կաչում էր դրանցից, բայց դրանք աղոտանում էին և առհասարակ ներքուստ ինչ-որ մի բան էր ճնշում նրան, բայց թույլ չափով։ Երբեմն նա իրեն նույնիսկ լավ էր զգում... թեթև դողը չէր անցնում և դա նույնպես համարյա հաճելի էր թվում։

Նա լսեց Ռազումիխինի հապճեպ քայլերը և նրա ձայնը, փակեց աչքերը և քնած ձևացավ։ Ռազումիխինը բացեց դուռը և մի պահ կանգնեց շեմքին, ասես մտքերով տարված։ Հետո կամացուկ ներս մտավ և զգուշությամբ մոտեցավ բազմոցին։ Լսվեց Նաստասյայի փսփսոցը.

— Մի զարթեցնի. թող քունն առնի. հետո ուտելիք կըտանք։

— Ոչիշտ է,— պատասխանեց Ռազումիխինը։

Երկուսն էլ զգուշությամբ դուրս եկան ու ծածկեցին դուռը։ Անցավ էլի մոտ կես ժամ։ Ռասկոլնիկովը բացեց աչքերը ու պառկեց մեջքի վրա, ձեռքերը դնելով գլխի տակ...

«Ո՞վ է նա։ Ո՞վ է գետնի տակից դուրս եկած այդ մարդը։ Ո՞րտեղ է եղել նա և ի՞նչ է տեսել։ Նա ամեն ինչ տեսել է, դա անկասկած է։ Այն ժամին նա ո՞րտեղ էր կանգնած և ո՞րտեղից էր նայում։ Ինչո՞ւ է նա միայն այժմ մեջտեղ գալիս։ Եվ ի՞նչպես նա կարող էր տեսնել, մի՞թե այդ հնարավոր է... Հը՛մ...— սարսռելով ու ցնցվելով մտածում էր Ռասկոլնիկովը,— հապա տո՛ւփը, որ Նիկոլայը գտել էր դռան մոտ. մի՞թե այդ էլ հնարավոր է։ Մի որևէ չնչին բան, և ահա քեզ եգիպտական բուրգի չափ հանցանշան։ Ճանճը թռել է ու տեսել։ Մի՞թե այդ հնարավոր է։

Եվ նա հանկարծ նողկանքով զգաց, թե ինչպես թուլացել է, ֆիզիկապես թուլացել։

«Ես այդ պետք է գիտենայի,— դառն քմծիծաղով մտածում էր նա,— ճանաչելով ինքս ինձ, նախազգալով իմ վի-

ճակը, ես ինչպե՞ս համարձակվեցի վերցնել կացինը և արյուն թափել։ Ես պարտավոր էի նախապես այդ գիտենալ... է-է-հե՛, ախր ես հո նախապես գիտեի...», հուսահատ շշրնջաց նա։

Երբեմն նա մի որևէ մտքով տարված, անշարժ կանգ էր առնում.

«Ոչ, այն մարդիկ այլ կերտվածքի են. իսկական տիրակալը, ում ամեն ինչ թույլատրվում է, չախչախում է Տուլոնը։ Փարիզում կոտորած է սարքում, Եգիպտոսում մոռանում է բանակը, կես միլիոն մարդ է վատնում մոսկովյան արշավանքում և Վիլնոյում բառախաղով է էժան պրծնում*. և նրան մահից հետո կուռք են դարձնում. հետևաբար ամեն ինչ էլ թույլատրելի է։ Ոչ, այդպիսի մարդկանց մարմինը ոչ թե մարմին է, այլ բրոնզ է»։

Անակնկալ մի միտք հանկարծ համարյա ծիծաղեցրեց նրան։

«Նապոլեոն, բուրգեր, Վատեռլոո, ու կոլեգիական ռեգիստրատորի վտիտ, նողկալի այրին, պառավը, վաշխառուն, կարմիր սնդուկը մահճակալի տակ. դե սա ի՞նչպես կմարսի թեկուզ Պորֆիրի Պետրովիչը... ո՞րտեղից մարսի... էսթետիկան կխանգարի. որպես թե արդյո՞ք Նապոլեոնը ձեռքը կխոթի պառավի մահճակալի տակ։ Օ, անպետքի մեկը...»

Լինում էին րոպեներ, երբ նա կարծես զառանցում էր. նա տենդային-հրճվագին տրամադրության մեջ էր ընկնում։

«Հը՛մ, պառավը, դա անհեթեթություն է,— տաքացած, կցկտուր մտածում էր նա,— պառավի գործը թերևս սխալ է, այդ մի կողմ թողնենք։ Պառավին սպանելը միայն հիվանդություն էր... Ես ուզում էի շուտ օգտվել նրա մահվանից... ես ոչ թե մարդուն, այլ սկզբունքը սպանեցի։ Սկզբունքը ես սպանեցի, բայց դրանից չօգտվեցի. մնացի չշահված... Հենց միայն սպանել կարողացա, և այն էլ արդյո՞ք կարողացա... Սկզբո՞ւնք։ Տխմար Ռազումիխինը ժամ առաջ ինչո՞ւ էր հայհոյում սոցիալիստներին։ Ջանասեր, բանիմաց մարդիկ են. «հանուր երջանկությամբ» են զբաղվում... Ոչ, կյանքը ինձ մի անգամ է տրվում ու այլևս երբեք չի լինի. ես չեմ ուզում սպասել «համընդհանուր երջանկության»։ Ես ինքս էլ եմ

ուզում ապրել, թե չէ ավելի լավ է և չապրել։ Ի՞նչ արած, ես միայն չուզեցի անխնամ թողնել սովալլուկ մորս, կարիքի մեջ խեղդվել՝ սպասելով «համընդհանուր հրջանկությանն։ Որպես թե «ես իմ աղյուսն եմ բերում համընդհանուր հրջանկության համար և դրանով սրտի հանգստություն եմ զգում»։ Քա՛հ-քա՛հ։ Հապա ինչո՞ւ դուք ինձ աչքաթող արեցիք։ Չէ՞ որ ես ընդամենը մի անգամ եմ ապրում, չէ՞ որ ես էլ եմ ուզում ապրել... էհ, ես էսթետիկական ոջիլ եմ և ուրիշ ոչինչ,— ավելացրեց նա հանկարծ, խելագարի նման ծիծաղելով։— Այո, ես իսկապես ոջիլ եմ,— շարունակեց նա՝ շարախնդությամբ կառչելով այդ մտքից, քրքրելով այն, ու դրանով խաղ էր անում, զվարճանում,— ու դա հենց միայն այն պատճառով, որ նախ՝ հիմա ես գատողություններ եմ անում, թե ես ոջիլ եմ. երկրորդ, այն պատճառով, որ մի ամբողջ ամիս ամենաբարբեր նախախնամությանն էի անհանդգստացնում, կոչ էի անում վկա լինել, որ ես իրը ոչ թե իմ միս ու արյան և հաճույքի համար եմ այդ բանը ձեռնարկում, այլ նկատի ունեմ շատ լավ ու հաճելի մի նպատակ, քա՛ք-քա՛հ. երրորդ, այն պատճառով, որ հաշվի չէի առել այդ բանը կատարելու հնարավոր հետևանքները, դրանք չէի կշռադատել. բոլոր ոջիլներից ընտրեցի առավելապես անօգտակարը, ու սպանելով նրան, որոշեցի նրանից վերցնել ճիշտ այնքան, որքան ինձ հարկավոր է առաջին քայլն անելու համար, ոչ ավելի և ոչ պակաս (իսկ մնացածը ուրեմն այնպես էլ կգնար վանք, կտակի համաձայն, քա՛հ-քա՛հ)... Ես վերջնականապես ոջիլ եմ հենց այն պատճառով, որ ինքս գուցե է՛լ ավելի վատթար ու նողկալի եմ, քան սպանված ոջիլը, ու առաջուց նախազգում էի, որ միայն սպանելուց հետո ինքս ինձ կասեմ այս բանը։ Մի՞թե որևէ իրադարձություն կարող է համեմատվել այս զարհուրելի բանի հետ։ Օ, գոհհկություն, օ, ստորություն... օ, ինչպես եմ ես հասկանում «մարգարեին», որը ձեռքին, նժույգ նստած. Ալլահը պատվիրում է, ու հնազանդվիր, «երկչոտ» արարած։ Իրավացի է, իրավացի է «մարգարեն», երբ որևէ տեղ, փոքրոջի լայնքով լավ մարտկոց է գնում և խփում արդարին ու մեղավորին, նույնիսկ չարժանացնելով բացատրությանը

Հնազանդվիր, երկչոտ արարած, ու ոչինչ մի ցանկանա, որովհետև այդ քո դործը չէ... Օ, ոչ մի դեպքում, ոչ մի դեպքում չեմ ների պառավին»։

Նրա մազերը թրջվել էին քրտնքից, գողդոջ շրթունքները բորբոքված էին, անշարժ հայացքը մեխվել էր առաստաղին։

«Մայրս, քույրս, որքան ես սիրում էի նրանց։ Ինչո՞ւ եմ հիմա նրանց ատում։ Այո, ես նրանց ատում եմ, ֆիզիկապես ատում, չեմ կարող նրանց տանել, երբ իմ կողքին են... Ժամ առաջ ես մոտեցա ու համբուրեցի մորս, հիշում եմ... Գդվել նրան ու մտածել, որ եթե նա իմանա, ապա... Գուցե այդ դեպքում ասե՞մ նրան։ Ինձնից այդ կարելի է սպասել... Հըմ, նա պետք է որ այնպես լինի, ինչպես ես եմ,— ավելացրեց Ռասկոլնիկովը մտքին զոռ տալով, կարծես մաքառելով իրեն համակող դառանցանքի դեմ։— Օ, ինչպես եմ ես հիմա ատում պառավուկին, թվում է, թե երկրորդ անգամ կսպանեի, եթե կենդանանար։ Խե՛ղճ Լիզավետա, ինչո՞ւ էր այն պահին նա այնտեղ... Տարօրինակ է, ինչո՞ւ ես նրա մասին համարյա չեմ մտածում, կարծես թե չեմ սպանել... Լիզավե՛տա, Սո՛նյա, խեղճ, խոնարհ արարածներ հեզ աչքերով... Սիրելիներ... Ինչո՞ւ նրանք չեն լալիս, ինչո՞ւ չեն հառաչում... Նրանք ամեն ինչ զոհում են... նայում հեզ ու մեղմիվ... Սո՛նյա, Սո՛նյա, մեղմաբարո Սոնյա...»

Նա անզգայացավ. նրան տարօրինակ թվաց, որ ինքը չի հիշում, թե ինչպես կարող էր հայտնվել փողոցում։ Արդեն ուշ երեկո էր։ Մթնշաղը թանձրանում էր, լիալուսինը հետզհետե ավելի պայծառ էր շողում. օդը առանձնապես հեղձուցիչ էր։ Փողոցներով մարդկանց բազմություններ էին դնում. արհեստավորները և զբաղված մարդիկ տուն էին գնում, ուրիշները զբոսնում էին. զգացվում էր կրի, փոշու, նեխած ջրափոսերի հոտը։ Ռասկոլնիկովը քայլում էր տխուր ու մրատահոգված. նա շատ լավ էր հիշում, որ տանից դուրս էր եկել ինչ-որ դիտավորությամբ, որ հարկավոր էր շտապել, ինչ-որ բան անել, բայց թե ինչ, մոռացել էր։ Հանկարծ նա կանգ առավ ու տեսավ, որ փողոցի մյուս կողմում, մայթի վրա մի մարդ է կանգնած և նրան ձեռքով է անում։ Ռասկոլնիկովը փողոցի միջով մոտեցավ նրան, բայց այդ մարդը

հանկարծ շուռ եկավ ու գնաց, ուշադրություն չդարձնելով նրա վրա, դլուխը կախած, առանց ետ նայելու և ցույց տալու, որ կանչել էր նրան։ «Լավ, մի՞թե նա կանչել էր», մտածեց Ռասկոլնիկովը ու այնուամենայնիվ գնաց նրա ետևից։ Մինչև նրան հասնելը տասը քայլ էր մնում, երբ Ռասկոլնիկովը հանկարծ ճանաչեց նրան և վախեցավ. դա ժամ առաջ հանդիպած քաղքենին էր նույն խալաթով և նույնպես կորացած։ Ռասկոլնիկովը քայլում էր հեռվից. նրա սիրտը խփում էր. նրանք անցան մյուս փողոցը. քաղքենին ետ չէր նայում։ «Արդյոք գիտե՞ նա, որ ես գնում եմ իր ետևից», մտածում էր Ռասկոլնիկովը։ Քաղքենին ներս մտավ մի մեծ տան դարպասից։ Ռասկոլնիկովը արագ մոտեցավ դարպասին ու նայեց, թե արդյոք նա ետ չի՞ դառնա և իրեն չի՞ կանչի։ Եվ խկտպես, անցնելով դարպասից և արդեն մտնելով բակը, հանկարծ քաղքենին շուռ եկավ ու կարծես էլի նրան ձեռքով արեց։ Ռասկոլնիկովը անմիջապես անցավ դարպասից, բայց քաղքենին արդեն բակում չէր։ Ուրեմն նա բարձրանում էր առաջին սանդուղքով։ Ռասկոլնիկովը հետևեց նրան։ Հիրավի, վերևից դեռ լսվում էին ինչ-որ մեկի չափածո, անշտապ քայլերը։ Տարօրինակ էր, սանդուղքը կարծես թե ծանոթ էր։ Ահա առաջին հարկի մի պատուհանը. ապակիներից թափանցում էր լուսնի տխուր ու խորհրդավոր լույսը. ահա և երկրորդ հարկը։ Վա՜հ, սա հենց այն բնակարանն է, որտեղ աշխատում էին ներկարարները... Այդ ի՞նչպես է որ ինքը անմիջապես չճանաչեց։ Առջևից գնացող մարդու քայլերը լռեցին. ուրեմն նա կանգ էր առել կամ թաքնվել որևէ տեղ։ Ահա և երրորդ հարկը. էլի՞ բարձրանալ. ինչպիսի՞ լռություն է այնտեղ, նույնիսկ սարսափելի է... Բայց Ռասկոլնիկովը գնաց։ Նա վախենում և անհանգստանում էր հենց իր քայլերի ձայնից։ Աստվա՜ծ իմ, ի՞նչ մութ է։ Քաղքենին երևի թաքնվել է որևէ անկյունում։ Հը՜մ, բնակարանի դուռը բոլորովին բաց է. Ռասկոլնիկովը մի փոքր մտածեց ու ներս մտավ։ Նախասենյակը խավար էր ու դատարկ, ոչ ոք չկար, կարծես ամեն ինչ դուրս էին տարել. նա կամացուկ, ոտքերի մատների վրա անցավ հյուրասենյակ. ամբողջ սենյակը

ողողված էր լուսնի պայծառ լույսով. այստեղ առաջվա պես էր ամեն ինչ՝ աթոռները, հայելին, դեղին բազմոցը և շրջանակների մեջ դրված պատկերները։ Ահագին, կլոր, պղնձադույն-կարմրավուն լուսինը ուղղակի նայում էր պատուհաններից։ «Այս լուսությունը լուսնից է,— մտածեց Ռասկոլնիկովը,— այն ինչ-որ հանելուկային տեսք ունի»։ Ռասկոլնիկովը կանգնել էր սպասողական վիճակում, երկար սպասում էր, ու որքան անդորր էր լուսինը, այնքան ուժեղ էր խփում նրա սիրտը, նույնիսկ ցավում էր։ Ու շարունակ լռություն։ Հանկարծ լսվեց կարճ, վայրկենական չիկոց, կարծես մարմկոտրեցին, ու դարձյալ ամեն ինչ լռեց։ Արթնացած մի ճանճ թռավ ու զարկվեց պատուհանի ապակուն և տխուր բզզաց։ Հենց այդ րոպեին, սենյակի մի անկյունում, փոքրիկ պահարանի և լուսամուտի արանքում Ռասկոլնիկովը կարծես թե պատից կախած մի կանացի վերարկու նկատեց։ «Որտեղի՞ց է այդ վերարկուն, չէ՞ որ առաջ դա չկար...», մտածեց նա։ Կամացուկ մոտեցավ ու գլխի ընկավ, որ վերարկուի տակ կարծես թե ինչ-որ մարդ է թաքնված։ Նա զգուշությամբ մի կողմ քաշեց վերարկուն և տեսավ, որ այնտեղ աթոռ է դրված, իսկ աթոռի վրա, անկյունում նստած է պառավը, ամբողջովին կծկված և գլուխը կախած, այնպես որ Ռասկոլնիկովը ոչ մի կերպ չէր կարողանում պարզ տեսնել դեմքը, բայց դա իրոք պառավն էր։ Ռասկոլնիկովը մի փոքր կանգնեց նրա գլխավերևում. «վախենում է», մտածեց նա, իր վերարկուին կարած օղակից կամացուկ հանեց կացինը և մեկ, երկու անգամ խփեց պառավի կատարին։ Բայց, տարօրինակ բան, պառավը նույնիսկ չշարժվեց հարվածներից, ասես փայտից լիներ։ Ռասկոլնիկովը վախեցավ, թեքվեց ու սկսեց գնալ նրան. բայց պառավը էլ ավելի կախեց գլուխը։ Ռասկոլնիկովը բոլորովին կռացավ մինչև հատակը ու ներքևից նայեց պառավի դեմքին, նայեց ու սարսափեց. պառավը նստել էր ու ծիծաղում էր, ծիծաղում կամացուկ, անլսելի, ամեն կերպ աշխատելով, որ Ռասկոլնիկովը չլսի իր ձայնը։ Հանկարծ Ռասկոլնիկովին թվաց, թե ննջարանի դուռը մի քիչ բացվեց և կարծես թե այնտեղ նույնպես ծիծաղեցին ու

փսփսում են։ Նա կատաղության հասավ, սկսեց ամբողջ ուժով մեկ խփել պառավի գլխին, բայց կացնի յուրաքանչյուր հարվածից հետո ենջարանից ավելի ու ավելի պարզ էին լսվում ծիծաղն ու փսփսոցը, իսկ պառավը այնպես էլ ցնցվում էր քրքիջից։ Ռասկոլնիկովը փորձեց փախչել, բայց ամբողջ նախասենյակը արդեն լիքն էր մարդկանցով, բնակարանի դուռը բոլորովին բաց էր, սանդուղքի աստիճաններին, հարթակում բազմաթիվ մարդիկ էին կանգնած, գլուխնե՛ր հա գլուխնե՛ր, բոլորը նայում են, բայց դարանակալած սպասում են, լռում... Ռասկոլնիկովի սիրտը ճմլվեց, ոտքերը չեն շարժվում, կպել են հատակին... Նա ուզում էր ճչալ, ու արթնացավ։

Նա ծանր շունչ առավ, բայց տարօրինակ բան, կաթծես թե երազը դեռ շարունակվում էր. սենյակի դուռը բոլորովին բացված էր, շեմքին կանգնել էր բոլորովին անծանոթ մի մարդ և ակնապիշ նայում էր նրան։

Ռասկոլնիկովը հազիվ էր բացել աչքերը, երբ վայրկենապես նորից փակեց։ Նա պառկած էր մեջքի վրա ու չէր շարժվում։ «Երազս շարունակվո՞ւմ է, ինչ է», մտածեց նա, և դարձյալ մի քիչ, աննկատելիորեն բարձրացրեց արտևանունքները, որպեսզի նայեր. անծանոթը կանգնած էր նույն տեղում և շարունակում էր հայացքով զննել նրան։ Հանկարծ նա զգուշությամբ շեմքից ներս անցավ, խնամքով ծածկեց դուռը, մոտեցավ սեղանին, սպասեց մի րոպե, շարունակ նայելով Ռասկոլնիկովին, ու կամացուկ, զգուշությամբ նրատեց աթոռին, բազմոցի մոտ, լայնեզր գլխարկը դրեց կողքին, հատակին, իսկ երկու ձեռքով հենվեց ձեռնափայտին՝ կզակը դնելով բռունցքներին։ Երևում էր, որ նա պատրաստվեց երկար սպասել։ Որքան կարելի էր նշմարել թարթող արտևանունքներից, այդ մարդը արդեն տարիքավոր էր, ամրակազմ, խիտ և բաց գույնի, համարյա սպիտակ մորուքով...

Անցավ մոտ տասը րոպե։ Դեռ լույս էր, բայց արդեն իջնում էր երեկոն։ Սենյակում կատարյալ լռություն էր։ Նույնիսկ սանդուղքից էլ ոչ մի ձայն չէր լսվում։ Միայն ինչ-որ մի մեծ ճանճ զարկվում էր պատուհանի ապակուն, բզզում

ու թպրտում։ Վերջապես, դա անտանելի դարձավ. Ռասկոլ-նիկովը հանկարծ վեր կացավ ու նստեց բազմոցին։

— Հը՛, ասացե՛ք, ի՞նչ եք ուզում։

— Ես հո այդպես էլ գիտեի, որ գուք քնած չեք, այլ միայն քնած եք ձևանում,— տարօրինակ պատասխանեց անծանոթը՝ հանգիստ ծիծաղելով։— Արկադի Իվանովիչ Սվիդրիգայլով, թույլ տվեք ծանոթանալ։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

I

«Մի՞թե սա երազի շարունակությունն է», մի անգամ էլ մտածեց Ռասկոլնիկովը։ Նա զգուշությամբ և անվստահությամբ նայում էր անսպասելի հյուրին։

— Սվիդրիգա՞յլով։ Ա՜յ քեզ բան, չի կարող պատահել, — վերջապես ասաց նա բարձրաձայն, տարակուսելով։

Հյուրը կարծես թե բոլորովին էլ չզարմացավ այդ բացականչության վրա։

— Երկու պատճառով եմ եկել ձեզ մոտ. նախ՝ ցանկանում էի անձամբ ծանոթանալ, որովհետև արդեն վաղուց ձեր մասին շատ բան էի լսել ձեզ համար հետաքրքիր ու շահավետ կողմից. երկրորդ, հուսով եմ, որ դուք թերևս չեք մերժի ինձ օգնել մի գործում, որը անմիջականորեն վերաբերում է ձեր քրոջ, Ավդոտյա Ռոմանովնայի շահին։ Նախապաշարմունքի հետևանքով այժմ նա առանց միջնորդության ինձ դուցե իրենց բակն էլ չթողնի, իսկ ձեր օգնությամբ ես, ընդհակառակը, հույս ունեմ...

— Զուր հույսեր,— ընդհատեց Ռասկոլնիկովը։

— Թույլ տվեք հարցնել, նրանք միայն երե՞կ են ժամանել։

Ռասկոլնիկովը չպատասխանեց։

— Այո, երեկ, ես գիտեմ։ Ես էլ ընդամենը երկու օր առաջ եմ ժամանել։ Ահա թե այդ առնչությամբ ես ձեզ ինչ կասեմ, Ռոդիոն Ռոմանովիչ. արդարանալը ավելորդ եմ համարում, բայց թույլ տվեք ես էլ իմ խոսքն ասեմ. իսկապես,

այստեղ, այս ամենի մեջ ի՞նչ մի առանձին հանցագործություն կա իմ կողմից, եթե դատենք առանց նախապաշարմունքների, խելամտորեն։

Ռասկոլնիկովը շարունակում էր հայացքով լուռ զննել նրան։

— Մի՞թե այն, որ ես իմ տանը հալածում էի անպաշտպան աղջկան, և «նրան վիրավորում իմ կեղտոտ առաջարկություններով» (ինքս եմ առաջուց այդ ասում), բայց ախր նկատի առեք, որ ես էլ մարդ եմ և et nihil humanum[1] ինձ խորթ չէ... մի խոսքով, ես էլ ընդունակ եմ հրապուրվելու և սիրելու (որ իհարկե մեր կամքից անկախ է կատարվում), և գա առավելապես բնական կարգով է բացատրվում։ Արդյո՞ք ես հրեշ եմ, թե՞ ինքս եմ զոհը, ահա ամբողջ հարցը։ Իսկ ինչո՞ւ զոհ եմ ես։ Չէ՞ որ իմ սիրեցյալին առաջարկելով ինձ հետ փախչել Ամերիկա կամ Շվեյցարիա, ես թերևս ամենահարդալից զգացմունքներ էի տածում նրան և դեռ մտածում էի երկուստեք երջանկության հասնել։ Չէ՞ որ բանականությունը բուռն սիրույն է ծառայում. գիտցեք, որ ես դուցե ավելի շատ ինձ եմ վնասել...

— Բանը ամենևին էլ այդ չէ,— զզվանքով ընդհատեց Ռասկոլնիկովը,— իրավացի եք դուք, թե ոչ, ուղղակի նողկալի եք, դրա համար էլ չեն ուզում ձեզ ճանաչել և վռնդում են ձեզ, դե դնացե՛ք...

Սվիդրիգայլովը հանկարծ քա՛հ-քա՛հ ծիծաղեց։

— Այնուամենայնիվ ձեզ... անկարելի է շփոթեցնել,— ասաց նա միանգամայն անկեղծորեն քրքջալով,— ես ուզեցի խորամանկել, բայց ո՛չ, դուք հենց իսկական կետին խրտիեցիք։

— Դուք այս րոպեին է՛լ եք շարունակում խորամանկել։

— Դե ի՞նչ կա որ, ի՞նչ կա որ,— կրկնեց Սվիդրիգայլովը՝ շարունակելով ծիծաղել,— չէ՞ որ սա, ինչպես ասում են, bonne guerre[2] է և միանգամայն թույլատրելի խորամանկություն է... Բայց և այնպես, դուք ինձ ընդհատեցիք. այս-

---

[1] Մարդկային. և ոչ մի բան (լատիներեն)։

[2] Արդար պատերազմ (ֆրանս.)։

պես թե այնպես, նորից եմ պնդում. ոչ մի անախորժություն չէր լինի, եթե չլիներ այդում պատահած դեպքը։ Մարֆա Պետրովնան...

— Ասում են, որ Մարֆա Պետրովնային էլ դուք մեռցրիք,— կոպիտ ընդհատեց Ռասկոլնիկովը։

— Դուք այդ է՞լ եք լսել։ Ասենք, ինչպե՞ս չլսեիք... Ձեր այդ հարցի վերաբերյալ ուղղակի չգիտեմ ինչ ասեմ, թեև այդ կողմից խիղճս վերին աստիճանի հանգիստ է։ Այսինքն՝ չմրոտածեք, թե ես վախենում եմ որևէ բանից. այդ բոլորը կատարվել էր պատշաճ կարգով և լիակատար ճշտությամբ. բժշկական քննությունը հայտնաբերել էր կաթվածահարություն, որը առաջացել էր կուշտ ճաշից և համարյա մեկ շիշ գինի խմելուց հետո սառը ջրում լողանալուց, ու չէր էլ կարող ուրիշ որևէ բան հայտաբերել... Ա՛յ թե ես որոշ ժամանակ ինչ էի մտածում, մանավանդ ճանապարհին, վագոնում նստած. արդյո՞ք ես այդ ամբողջ... դժբախտությանը չէի նպաստել որևէ կերպ, նրան բարոյապես ջղայնացնելով կամ որևէ նման բանով։ Բայց եզրակացրի, որ այդ էլ ամենևին չէր կարող լինել։

Ռասկոլնիկովը ծիծաղեց։

— Ինչո՞ւ այդպես անհանդստանալ։

— Ինչո՞ւ եք ծիծաղում։ Հասկացեք, ես ընդամենը երկու անգամ եմ ճիպոտով խփել, նույնիսկ հետքեր էլ չէին մնացել... խնդրեմ ինձ ցինիկ չհամարեք. ես հո շատ լավ գիտեմ, թե դա ինչպիսի դարշ վարմունք է իմ կողմից և այլն. բայց ես նաև հաստատ գիտեմ, որ Մարֆա Պետրովնան ուրախանում էր այսպես ասած՝ իմ այդ սիրաբանությամբ։ Ձեր քույրիկին վերաբերող պատմությունը բոլորովին վերջացել էր։ Մարֆա Պետրովնան ստիպված էր երեք օր տանը նստել. էլ խոսելու բան չէր մնացել, որի համար նա մանգար քաղաքում և բացի այդ, բոլորին ձանձրացրել էր այն նամակով (նամակը ուրիշների մոտ կարդալու մասին լսե՞լ եք)։ Ու հանկարծ ճիպոտի այդ երկու հարվածը... Առաջին հերթին հրամայեց պատրաստել կառքը... Ես արդեն չեմ էլ խոսում այն մասին, որ երբեմն կանանց համար շատ և շատ հաճելի է լինել վիրավորված, չնայած առերեսությ զայրույ-

թին։ Նրանք բոլորն էլ այդպես են անում. առհասարակ մարդը նույնիսկ շատ և շատ է սիրում վիրավորված լինել, դուք այդ նկատե՞լ եք։ Այդպես են մաքնավանդ կանայք։ Նույնիսկ կարելի է ասել, որ հենց դրանով են բավարարվում։

Լինում էին րոպեներ, երբ Ռասկոլնիկովը մտածում էր վեր կենալ ու գնալ և դրանով վերջացնել տեսակցությունը։ Բայց որոշ հետաքրքրությունից և ինչ-որ նկատառումից դրդված, նա շարունակում էր խոսակցությունը։

— Դուք սիրո՞ւմ եք կռվել,— մտացրիվ հարցրեց նա։

— Ոչ, այնքան էլ չեմ սիրում,— հանգիստ պատասխանեց Սվիդրիգայլովը։— Ես ու Մարֆա Պետրովնան համաբյա չէինք կռվում։ Մենք շատ համերաշխ էինք ապրում, և նա ինձնից միշտ էլ գոհ էր մնում։ Մեր ամբողջ յոթ տարվա կյանքում ես ընդամենը միայն երկու անգամ եմ գործադրել ճիպոտը (եթե չհաշվենք նաև երրորդ դեպքը, որը, սակայն, խիստ երկիմաստ էր)։ Առաջին անգամ, մեր ամուսնանալուց երկու ամիս անց, գյուղ ժամանելուց անմիջապես հետո, և ահա այդ վերջին դեպքը։ Իսկ դուք կարծում էիք, թե ես հրե՞շ եմ, հետագիմակա՞ն եմ, ճորտության կողմնակի՞ց, քա՛հ-քա՛հ-քա՛հ... Հա՛, Ռոդիոն Ռոմանովիչ, հիշո՞ւմ եք, թե ինչպես մի քանի տարի առաջ, դեռ փրկարար հրապարակայնության ժամանակներում մեզ մոտ ամբողջ ժողովրդի առաջ և ամբողջ մամուլում խայտառակեցին մի ազնվականի, որի ազգանունը միտս չէ և որը վագոնում մի գերմանուհու էր դնքսել*, հիշո՞ւմ եք։ Հենց այն ժամանակ էլ, կարծեմ հենց նույն տարում տեղի ունեցավ նաև Վեկի այլանդակ վարմունքը (էհ, եգիպտական գիշերներ. հրապարակային ընթերցում, հիշո՞ւմ եք, սև աչքեր. Օ՜, ո՞ւր ես, մեր ջահելության ոսկի ժամանակ)։ Հա՛, ա՛յ իմ կարծիքը. խորապես չեմ համակրում այն պարոնին, որը դնքսել էր գերմանուհուն, որովհետև իբրև որ... այստեղ ի՞նչ կա համակրելու։ Բայց այնուհանդերձ չեմ կարող չհայտարարել հետևյալը. երբեմն այնպիսի սադրիչ «գերմանուհիներ» են պատահում, որ ոչ մի առաջադեմ մարդ չի կարող հանդուրժել նրանց վարմունքը, ինձ այդպես է թվում։ Այն ժամանակ ոչ ոք այդպիսի

տեսակետով չի նայել իրերին, մինչդեռ սա իսկական մարդասիրական տեսակետ է, այո, այդպես է։

Այս ասելով, Սվիդրիգայլովը հանկարծ նորից ծիծաղեց։ Ռասկոլնիկովի համար պարզ էր, որ նա հաստատապես ինչ-որ վճիռ ընդունած և խելքը գլխին մարդ է։

— Դուք երևի մի քանի օր ոչ ոքի հետ չե՞ք խոսել,— հարցրեց նա։

— Համարյա այդպես է։ Ի՞նչ կա որ, երևի զարմանում եք, որ ես այսպիսի մեղմաբարո մարդ եմ։

— Ոչ, ես զարմանում եմ, որ դուք չափից դուրս մեղմաբարո եք։

— Որովհետև չէ՞ի վիրավորվում ձեր հարցերի կոպտությունից։ Այդպե՞ս է, թե ինչ։ Հ... Ինչո՞ւ վիրավորվել. ինչպես որ հարցնում էիք, այնպես էլ պատասխանում էի,— պարզամտության զարմանալի արտահայտությամբ ավելացրեց Սվիդրիգայլովը։— Ես առանձնապես ոչնչով չեմ հետաքրքրվում, աստված վկա,— մտասույզ շարունակեց նա։ — Մանավանդ հիմա ոչնչով չեմ զբաղվում... Դուք երևի կկարծեք, թե ես շողոքորթում եմ, մանավանդ որ գործը վերաբերում է ձեր քրոջը, ինքս հայտարարեցի։ Բայց ես անկեղծորեն կասեմ ձեզ, որ շատ եմ ձանձրանում, մանավանդ այս երեք օրում, այնպես որ, հանդիպելով ձեզ, նույնիսկ ուրախացա... Մի բարկանաք, Ռոդիոն Ռոմանովիչ, չգիտեմ ինչու դուք ինձ շատ տարօրինակ եք թվում։ Ձեր մեջ ինչ-որ մի բան կա և հենց հիմա, այսինքն՝ ոչ թե այս րոպեին, այլ առհասարակ հիմա... Լավ, լավ, չեմ ասի, մի նոթոտվեք։ Ես այնպիսի արջ չեմ, ինչպես դուք եք կարծում։

Ռասկոլնիկովը մռայլ նայեց նրան։

— Դուք գուցե և ամենևին էլ արջ չեք,— ասաց նա։— Ինձ նույնիսկ թվում է, որ դուք շատ լավ հասարակությունից եք կամ գոնե կարողանում եք հարկավոր դեպքում նաև կարգին մարդ լինել։

— Ես առանձնապես չեմ հետաքրքրվում որևէ մեկի կարծիքով,— սառը տոնով և կարծես նույնիսկ մի փոքր գոռոզաբար պատասխանեց Սվիդրիգայլովը,— ուստի և ինչո՞ւ գոհհկամիտ չլինել, երբ այդ հագուստը այնքան սազական է

մեր կլիմայում և... և մանավանդ եթե դեպի այդ բնական հակում ունես,— նորից ծիծաղելով ավելացրեց Սվիդրիգայլովը։

— Ես լսել եմ, որ դուք այստեղ շատ ծանոթներ ունեք։ Դուք, ինչպես ասում են, «առանց կապերի չեք»։ Այդ դեպքում ես ձեր ինչի՞ն եմ պետք, եթե ոչ ինչ-որ նպատակների համար։

— Դուք ճիշտ ասացիք, որ ես ծանոթներ ունեմ,— վրա բերեց Սվիդրիգայլովը՝ չպատասխանելով գլխավոր խնդրին, — ես արդեն հանդիպումներ եմ ունեցել, երրորդ օրն է, որ թրևում եմ. թե ինքս եմ նրանց ճանաչում, և թե նրանք են ինձ ճանաչում։ Դե իհարկե, վայելուչ եմ հագնված և ազքատ մարդ չեմ համարվում. դյուպոցիական ոգիով մեկ չշոշափեց. կան անատոներ և ողողվող մարգագետիններ. եկամուտը չի կորչում. բայց... ես այնտեղ չեմ գնա. առաջ էլ այնտեղ ձանձրանում էի. երրորդ օրն է, որ շրջում եմ ու ոչ ոքի բան չեմ ասում... Սա հո քաղաք է, այսինքն՝ ինչպես մեզ մոտ անվանվում է, ասացեք խնդրեմ. դրասենյակային աշխատողների և ամեն տեսակ սեմինարիստների քաղաք է։ Առաջ, մի ութ տարի առաջ, երբ ես այստեղ պարապ-սարապ թրևում էի, շատ բան չէի նկատում... Այժմ հենց միայն անատոմիայի վրա եմ հույս դնում, ասված վկա։

— Ի՞նչ անատոմիա։

— Հա, այդ ակումբների, Դյուսսոտների*, ձեր այդ պուանտների* մասին. նրանք թերևս դեպի լավն են գնում, էհ, թող դա առանց մեզ լինի,— շարունակեց Սվիդրիգայլովը՝ դարձյալ աչքաթող անելով հարցը։— էհ, ո՞վ կուզենա շուլեր լինել։

— Իսկ դուք շուլեր է՞լ եք եղել։

— Առանց դրան ո՞նց կլինի։ Ութ տարի առաջ էր, մենք մի ամբողջ, կարգին խումբ էինք. ժամանակ էինք անցկացնում. և գիտե՞ք, բոլորն էլ լավ վարք ու բարքի մարդիկ էին, կային բանաստեղծներ, կապիտալիստներ։ Առհասարակ մեզ մոտ, ռուս հասարակության մեջ, ամենալավ վարքագիծ ունեն նրանք, ովքեր կասկածելի համբավ ունեն, դուք այդ նկատե՞լ եք։ Գյուղում ես վատ վիճակի հասա։ Քիչ մնաց որ

ինձ բանտ նստեցնեին նեժինի մի հույնի պարտք ունենալուս համար։ Հենց այդ ժամանակ էլ վրա հասավ Մարֆա Պետրովնան, սակարկեց և ինձ փրկագնեց երեսուն հազար մանեթով։ (Ընդամենը ես պարտք էի 70000)։ Ես ու նա կապվեցինք օրինական ամուսնությամբ, և նա ինձ տարավ գյուղ, իր մոտ, ասես նրա համար գանձ լինեի։ Նա ինձնից հինգ տարով մեծ էր։ Շատ էր սիրում։ Յոթ տարի գյուղից դուրս չէի գալիս։ Եվ գիտե՞ք, իր ամբողջ կյանքում ուրիշի անունով այդ երեսուն հազարի փաստաթուղթ էր պահում իմ դեմ։ Այնպես որ եթե ես որևէ կերպ ըմբոստանայի, նա ինձ թակարդ կդցեր։ Եվ նա այդ կաներ. չէ՞ որ կանայք երբեմն այդպես են վարվում։

— Իսկ եթե փաստաթուղթը չլիներ, կփախչեի՞ք։

— Չգիտեմ ինչ ասեմ ձեզ։ Այդ փաստաթուղթը ինձ համարյա չէր անհանգստացնում։ Ես չէի ուզում որևէ տեղ մեկնել։ Տեսնելով, որ ես ձանձրանում եմ, Մարֆա Պետրովնան ինքը երկու անգամ ինձ հրավիրեց մեկնել արտասահման։ Եվ ի՞նչ։ Առաջ ես գնացել էի արտասահման և այնտեղ միշտ ինձ վատ էի զգում։ Զորօրինակ, ահա բացվում է արշալույսը, ահա քեզ Նեապոլի ծովածոցը, ծովը, նայում ես ու մի տեսակ տխրում։ Ամենից գարշելին այն է, որ իսկապես, տխրում ես ինչ-որ պատճառով։ Ոչ, հայրենիքում ավելի լավ է. այստեղ գոնե ամեն բանի համար ուրիշներին ես մեղադրում, ու ինքդ քեզ արդարացնում։ Ես հիմա գուցե դեպի Հյուսիսային բևեռը արշավի գնալի, քանի որ j'ai le vin mauvais[1], ու խմելը ինձ համար զզվելի է, իսկ գինուց բացի ուրիշ ոչինչ չի մնում։ Փորձել եմ։ Հա՛, ասում են Բերդը կիրակի օրը Յուսուպովի այգում թռչելու է ահագին օդապարիկով*, որոշ վճարով մասնակից է հրավիրում, ճի՞շտ է։

— Դե թռչեիք, էլի՛։

— Ե՞ս։ Ոչ... երբե՛ք...— ասես մտածմունքի մեջ ընկնելով, փնթփնթաց Սվիդրիգայլովը։

«Ախր ի՞նչ կա սրա մտքում»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Ոչ, փաստաթուղթը ինձ չէր անհանգստացնում,—

---

[1] Հարբած վիճակում ես վատ եմ լինում (ֆրանս.)։

մտախոհ շարունակեց Սվիդրիգայլովը,— ես ինքս չէի ուզում մեկնել գյուղից։ Մի տարի առաջ Մարֆա Պետրովնան իմ անվանակոչության օրը այդ փաստաթուղթը վերադարձրեց ինձ և դեռ մի զգալի գումար էլ նվիրեց։ Նա կապիտալ ուներ։ «Տեսնո՞ւմ եք, թե ես ինչպես եմ ձեզ վստահում, Արկադի Իվանովիչ»։ իրավ, այդպես էլ արտահայտվեց։ Դուք չե՞ք հավատում, որ այդպես արտահայտվեց։ Դիտե՞ք, ես գյուղում կարգին տնտեսատեր դարձա. շրջակայքում ճանաչում են ինձ։ Գրքեր էի պատվիրում ու ստանում։ Մարֆա Պետրովնան սկզբում դրան հավանություն տվեց, իսկ հետո վախենում էր, որ ես երկար կարդալուց կվնասվեմ։

— Դուք կարծես թե շատ եք կարոտում Մարֆա Պետրովնային, այնպես չէ՞։

— Ե՞ս։ Դուցե։ Ի՞նչ ասեմ, դուցե։ Հա՛, դուք հավատո՞ւմ եք տեսիլքներին։

— Ի՞նչ տեսիլքներ։

— Սովորական տեսիլքներին, է՛լի։

— Ի՞նչ է, հայտնվո՞ւմ են։

— Թերևս ոչ, ասում եմ pour vous plaire...[1]։ Այսինքն՝ մի քիչ հավատում եմ։

— Ի՞նչ է հայտնվո՞ւմ են։

Սվիդրիգայլովը ինչ-որ տարօրինակ հայացքով նայեց Ռասկոլնիկովին։

— Մարֆա Պետրովնան բարեհաճում է այցելել,— ասաց նա և նրա բերանը ծռմռվեց ինչ-որ տարօրինակ ժպիտից։

— Ի՞նչպես թե բարեհաճում է այցելել։

— Արդեն երեք անգամ եկել է։ Առաջին անգամ ես նրան տեսա հենց թաղման օրը, գերեզմանոցից վերադառնալուց մի ժամ հետո։ Երկրորդ անգամ տեսա երկու-երեք օր առաջ, ճանապարհին, լուսաբացին, Մալայա Վիշերա կայարանում. իսկ երրորդ անգամ տեսա իմ զբաղեցրած բնակարանում, սենյակում. ես մենակ էի։

— Արթուն ժամանա՞կ։

— Այո։ Երեք անգամն էլ արթուն ժամանակ տեսա։ Դա-

---

[1] Ձեզ գոհացնելու համար (ֆրանս.)։

ինս է, մի բոպե խոսում ու գնում գոնից. միշտ գոնից։ Դա կարծես նույնիսկ լավում է։

— Չգիտեմ ինչու, ես այդպես էլ կարծում էի, որ ձեզ անպայման որևէ նման բան է պատահում,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը ու նույն բոպեին զարմացավ, որ այդ ասաց։ Նա սաստիկ հուզված էր։

— Ահա թե ի-ի՞նչ։ Դուք այդպե՞ս էիք կարծում, հա՞,— զարմանքով հարցրեց Սվիդրիգայլովը։— Ես արդյոք չե՞մ ասել, որ մեր մեջ մի ինչ-որ ընդհանուր բան կա, հը՞։

— Դուք այդ երբեք չեք ասել,— կտրուկ և տաքացած պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Չե՞մ ասել։

— Ոչ։

— Ինձ թվաց, թե ասել եմ։ Երբ ես ներս մտա ու տեսա, որ դուք պառկած եք փակ աչքերով ու քնած եք ձևանում, իսկույն ինքս ինձ ասացի՝ «սա հենց նա է, որ կա»։

— Այսինքն ո՞վ. ինչի՞ մասին եք խոսում,— գոչեց Ռասկոլնիկովը։

— Ինչի մասի՞ն։ Ճիշտն ասած չգիտեմ...— պարզամտությամբ ու մի տեսակ շփոթվելով փնթփնթաց Սվիդրիգայլովը։

Մի բոպե լռեցին։ Երկուսն էլ խորազնին իրար էին նայում։

— Այդ բոլորը դատարկ բան է,— սրտնեղելով գոչեց Ռասկոլնիկովը։— Հա՛, երբ գալիս է Մարֆա Պետրովնան, ձեզ ի՞նչ է ասում։

— Նա՞։ Երևակայեցեք, այնպիսի չնչին ու դատարկ բաներ է ասում, որ ուղղակի կզարմանաք. հենց այդ էլ բարկացնում է ինձ։ Առաջին անգամ (գիտե՞ք, ես հոգնած էի. է՛լ թաղման արարողություն, է՛լ հոգեհանգիստ, հետո արտակարգ մաղթանք, հացկերույթ. վերջապես, կաբինետում մնացի մենակ, սիգար ծխեցի, մտածմունքի մեջ ընկա) ներս մտավ դռնից, ասաց՝ «Դուք, Արկադի Իվանովիչ, այսօր հոգսերով եք զբաղված և մոռացել եք սեղանատան ժամացույցը լարել»։ Իսկ այդ ժամացույցը ամբողջ յոթ տարվա ընթացքում ամեն շաբաթ իրոք ես էի լարում, իսկ երբ մոռանում էի, նա միշտ հիշեցնում էր ինձ։ Մյուս օրը ես արդեն այս-

տեղ էի ճանապարհվում։ Լուսաբացին գնացի կայարան. գիշերը լավ չէի քնել, հոգնած էի, աչքերս քնկոտ էին. սուրճ վերցրի, մեկ էլ տեսնեմ Մարֆա Պետրովնան հանկարծ նստում է կողքիս, ձեռքին մի կապուկ խաղ։ Ասում է. «Ճանապարհի առիթով չգուշակե՞մ ձեր բախտը, Արկադի Իվանովիչ»։ Նա հիանալի գուշակող էր։ Ես թույլ չտվի գուշակել, և դա աններելի էր իմ կողմից։ Վախեցա փախա, ու գնացքի զանգն էլ տվին։ Սքսոր, ճաշարանից վերցրած ամենաանպետք ճաշը ուտելուց հետո, ծանր ստամոքսով նստել ու ծխում էի. հանկարծ էլի ներս է մտնում Մարֆա Պետրովնան, ամբողջովին զուգված, մետաքսե նոր, կանաչ շրջազգեստով, խիստ երկար պոչով. «Բարև ձեզ, Արկադի Իվանովիչ, ձեր հաշակով ինչպիսի՞ն է իմ շրջազգեստը. Անիսկան այսպես չի կարի»։ (Անիսկան մեզ մոտ, գյուղում դերձակուհի էր, նախկին ճորտերից, դեյձակությունը Մոսկվայում էր սովորել, լավ աղջիկ է)։ Հա՛, կանդնել է, պտտվում է իմ առջև։ Ես զննեցի շրջազգեստը, հետո ուշադրությամբ նայեցի նրա դեմքին. «Մարֆա Պետրովնա,— ասում եմ,— ձեր ինչի՞ն է պետք այդպիսի դատարկ բաների համար ինձ մոտ գալ, անհանգստանալ»։ «Ախ, ասու�ված իմ, ա՛յ պատվելի, ուրեմն քեզ անհանգստացնել է՞լ չի կարելի»։ Նրան ձեռ առնելու համար ասում եմ՝ «Ես, Մարֆա Պետրովնա, ուզում եմ ամուսնանալ»։ «Ձեզնից այդ կարելի է սպասել, Արկադի Իվանովիչ. ձեզ այնքան էլ պատիվ չի բերում, որ դուք ձեր կնոջը հենց նոր թաղած, իսկույն ամուսնանալ եք ուզում։ Գոնե լավ ընտրություն անեիր։ Թե չէ ես գիտեմ, ոչ նա բախտավոր կլինի, ոչ էլ դուք, ու միայն կծիծաղեցնեք մարդկանց»։ Հետո էլ դուրս եկավ, պոչն էլ կարծես խշշում էր։ Ինչպիսի՞ անհեթեթություն, հը՞։

— Սակայն դուք գուցե ստո՞ւմ եք,— ասաց Ռասկոլնիկովը։

— Ես հազվադեպ եմ ստում,— մտախոհ պատասխանեց Սվիդրիգայլովը՝ կարծես բոլորովին չնկատելով հարցի կոպտությունը։

— Իսկ առաջ, մինչ այդ դուք ուրվականներ երբեք չէ՞ք տեսնում։

— Ը... ը... հա՛, տեսել եմ կյանքումս միայն մեկ անգամ, վեց տարի առաջ։ Ինձ մոտ Ֆիլկա անունով մի սպասավոր կար. նրան հենց նոր էին թաղել, երբ ես այդ մոռանալով, կանչեցի՝ Ֆիլկա, ծխամորճ բեր. նա ներս մտավ և ուղղակի մոտեցավ բրգաձև դարակին, որտեղ գտնվում էին ծխամորճերը։ Ես նստել եմ, մտածում եմ՝ «Նա ինձնից վրեժ է առնում, որովհետև հենց իր մահից առաջ մենք թունդ կռվել էինք»։ «Ի՞նչպես ես համարձակվում պատված արմունկով մանել ինձ մոտ, կորի-գնա, սրիկա», ասում եմ ես։ Շուտ եկավ, գնաց ու էլ չեկավ։ Ես Մարֆա Պետրովնային ոչինչ չասացի։ Ուզեցի հոգեհանգիստ կատարել, բայց ամաչեցի։

— Գնացեք բժշկի մոտ։

— Դե ես առանց ձեզ էլ հասկանում եմ, որ անառողջ եմ, թեև, ճիշտն ասած, չգիտեմ ինչով. ըստ իս ես հավանորեն մի հինգ անգամ ավելի առողջ եմ, քան դուք։ Ես ձեզ չհարցրի՝ հավատո՞ւմ եք թե ոչ, որ սեսիլքներ են հայտնվում. ես ձեզ հարցրի՝ հավատո՞ւմ եք դուք, որ սեսիլքներ կան։

— Ոչ, ոչ մի դեպքում չեմ հավատա,— նույնիսկ որոշ ցասումով գոչեց Ռասկոլնիկովը։

— Ախր սովորաբար ի՞նչ են ասում,— կարծես ինքն իր մեջ վնթփնթաց Սվիդրիգայլովը՝ նայելով մի կողմ և մի քիչ թեքելով գլուխը։— Նրանք ասում են՝ «Դու հիվանդ ես, ուրեմն ինչ որ քեզ պատկերանում է, գոյություն չունի և միայն զառանցանք է»։ Իսկ չէ՞ որ այստեղ խիստ արամաբանություն չկա, ես համաձայն եմ, որ ուրվականները միայն հիվանդներին են երևում. բայց դա հո ապացուցում է, որ ուրվականները կարող են երևալ ոչ այլ կերպ, քան հիվանդներին, և ոչ թե ինքնին նրանք չկան։

— Իհարկե, չկան,— ջղայնացած պնդեց Ռասկոլնիկովը։

— Չկա՞ն, դուք այդպե՞ս եք կարծում,— վրա բերեց Սվիդրիգայլովը՝ երկար նայելով նրան։— Լավ, իսկ ի՞նչ կասեք, եթե այսպես դատենք (հապա՛, օգնեցեք). «Սեսիլքները, այսպես ասած, բեկորներն ու հատվածներն են ուրիշ աշխարհների, դրանց սկիզբն են։ Առողջ մարդը, ֆիզիկապես, դրանք չի տեսնի, որովհետև առողջ մարդը առավելապես երկրային մարդ է, ուրեմն և պետք է ապրի միայն այստեղի

կյանքով, լիակատար և կանոնավոր ապրելու համար։ Ու հենց որ հիվանդացավ, հենց որ օրգանիզմում խախտվեց նորմալ երկրային կարգը, անմիջապես սկսում է արտահայտվել այլ աշխարհի հնարավորությունը, ու որքան ուժեղ է հիվանդությունը, այնքան շատ են շփումները այլ աշխարհի հետ, այնպես որ երբ մարդը բոլորովին մեռնի, անմիջականորեն կանցնի մյուս աշխարհը։ Ես վաղուց էի այդ մասին դատողություններ անում։ Եթե հավատում եք հանդերձյալ կյանքին, ապա կարելի է հավատալ նաև այս դատողությանը։

— Ես չեմ հավատում հանդերձյալ կյանքին,— ասաց Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը մտագրաղ էր։

— Գուցե այնտեղ կան միայն սարդեր կամ որևէ այդպիսի մի բան,— հանկարծ ասաց նա։

«Սա խելագարված է»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Հավերժությունը շարունակ մեզ պատկերվում է որպես անընմբռնելի մի իդեա, որպես վիթխարի, վիթխարի մի բան։ Ինչո՞ւ անպայման վիթխարի։ Երևակայեցեք, որ հանկարծ դրա փոխարեն այնտեղ կլինի գյուղական բաղնիքի նման մի փոքրիկ, մրակալած սենյակ, որի բոլոր անկյուններում՝ սարդեր, և ահա համակ հավերժությունը։ Գիտե՞ք, երբեմն ինձ այդպես է թվում։

— Մի՞թե ձեզ դրանից ավելի սփոփիչ և ավելի արդարացի ոչ մի բան չի պատկերանում,— հիվանդագին զգացումով դոչեց Ռասկոլնիկովը։

— Ավելի արդարացի՞։ Դե ի՛նչ իմանաս, գուցե արդարացին հենց այդ է որ կա, ու գիտե՞ք, ես անպայման, դիտմամբ այդպես կանեի,— անորոշ ժպիտով պատասխանեց Սվիդրիգայլովը։

Լսելով այդ արտառոց պատասխանը, Ռասկոլնիկովը հանկարծակի ինչ-որ սարսուռ զգաց։ Սվիդրիգայլովը բարձրացրեց գլուխը, ակնապիշ նայեց նրան ու հանկարծ քա՜հ-քա՜հ ծիծաղեց։

— Ոչ, դուք ահա թե ինչ հասկացեք,— գոչեց նա,— կես ժամ առաջ մենք իրար չէինք էլ տեսել, թշնամիներ ենք հա-

մարվում, մեր մեջ չլուծված խնդիր կա. մենք այդ մի կողմ թողնենք և այսպես պատեպատ ընկանք։ Հապա ես ճիշտ չէի՞ ասում, որ մենք մի սանրի կտավ ենք։

— Դե բարի եղեք,— ջղայնոտ վրա բերեց Ռասկոլնիկովը,— թույլ տվեք ձեզ խնդրել շուտ բացատրվել և ինձ հաղորդել, թե ինչու ինձ արժանացրիք ձեր այցելության պատվին... և... և... գիտե՞ք, ես շտապում եմ, ժամանակ չունեմ, ուզում եմ գնալ...

— Խնդրեմ, խնդրեմ։ Ձեր քույրիկը, Ավդոտյա Ռոմանովնան պարոն Լուժինի, Պյոտր Պետրովիչի հե՞տ է ամուսնանում։

— Չի՞ կարելի արդյոք մի կողմ թողնել քրոջս վերաբերող ամեն մի հարց և չհիշատակել նրա անունը։ Ես նույնիսկ չեմ հասկանում, թե դուք ինչպես եք համարձակվում իմ ներկայությամբ ասել նրա անունը, եթե միայն դուք իսկապես Սվիդրիգայլովն եք։

— Ախր ես հենց նրա մասին խոսելու համար եմ եկել, էլ ի՞նչպես չտամ նրա անունը։

— Լավ, ասացեք, բայց շուտ։

— Ես հավատացած եմ, որ դուք այդ պարոն Լուժինի, կնոջս կողմից իմ աղջկանի մասին արդեն կազմել եք ձեր կարծիքը, եթե թեկուզ կես ժամ տեսել եք նրան կամ նրա մասին որևէ ստույգ ու ճշգրիտ բան եք լսել։ Նա չի սազում Ավդոտյա Ռոմանովնային։ Ըստ իս, Ավդոտյա Ռոմանովնան այդ գործում խիստ մեծահոգաբար և շատ բան հաշվի չառնելով իրեն զոհաբերում է... իր ընտանիքի համար։ Այն ամենի հետևանքով, ինչ որ ես լսել եմ ձեր մասին, ինձ թվաց, որ դուք ձեր կողմից շատ գոհ կլինեիք, եթե այդ ամուսնությունը խանգարվեր առանց երկու կողմերի շահերի խախտման։ Իսկ հիմա, անձամբ ճանաչելով ձեզ, ես նույնիսկ վստահ եմ դրանում։

— Ձեր կողմից այդ ամենը սոսկ պարզամտություն է. ներեցեք ինձ, ես ուզում էի ասել՝ լկտիություն է,— պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Այսինքն՝ դրանով ուզում եք ասել, թե ես իմ մասին եմ հոգում։ Ներեցեք, Ռոդիոն Ռոմանովիչ, եթե ես հոգայի իմ շահի համար, ապա այդպես շիտակ չէի արտահայտվի, ես

հո բոլորովին հիմար չե՞մ։ Այս առումով ես կբացահայտեմ մի հոգեբանական տարօրինակություն։ Քիչ առաջ ես, արդարացնելով իմ սերը դեպի Ավդոտյա Ռոմանովնան, ասացի, որ ինքս եմ զոհ դարձել։ Դե ուրեմն գիտցեք, որ ես հիմա ոչ մի սեր չեմ զգում, ոչ մի սեր, այնպես որ, դա նույնիսկ ինձ համար էլ տարօրինակ է, որովհետև ես առաջ իսկապես մի ինչ-որ բան էի զգում...

— Պարապությունից և անառակությունից,— ընդհատեց Ռասկոլնիկովը։

— Իսկապես, ես անառակ ու պարապ մարդ եմ։ Սակայն ձեր քույրիկը այնքան առավելություններ ունի, որ ես չէի կարող չենթարկվել որոշ տպավորության։ Բայց այդ բոլորը դատարկ բան է, ինչպես հիմա ինքս էլ եմ տեսնում։

— Վաղո՞ւց եք այդ տեսել։

— Առաջ էլ սկսել էի նկատել, բայց վերջնականապես համոզվեցի երկու-երեք օր առաջ, համարյա հենց այն րոպեին, երբ ժամանեցի Պետերբուրգ։ Սակայն դեռ Մոսկվայում երևակայում էի, թե գնում եմ Ավդոտյա Ռոմանովնայի ձեռքը խնդրելու և մրցակցելու պարոն Լուժինի հետ։

— Ներեցեք, որ ես ձեզ ընդհատում եմ, բարի եղեք կրճատել այդ ամենը և ուղղակի անցնել ձեր այցելության նպատակին։ Ես շտապում եմ, պետք է տեղ գնամ...

— Մեծագույն հաճույքով։ Ժամանելով այստեղ և հիմա որոշելով մի քիչ... ճամփորդություն կատարել, ես ցանկացա նախնական անհրաժեշտ կարգադրություններ անել։ Երեխաները մնացել են իրենց մորաքրոջ մոտ. նրանք հարուստ են, առանձնապես ես նրանց հարկավոր չեմ։ Եվ ի՞նչ հայր եմ որ։ Ինձ համար վերցրել եմ միայն այն, ինչ որ մի տարի առաջ ինձ նվիրել էր Մարֆա Պետրովնան։ Դա բավական է ինձ։ Ներեցեք, հիմա անցնում եմ բուն գործին։ Ճամփորդությունից առաջ, որը դուցե և կատարվի, ես ուզում եմ գործը վերջացնել պարոն Լուժինի հետ։ Բանը այն չէ, որ ես չէի կարողանում նրան հանդուրժել, այլ այն է, որ նրա պատճառով ես գժտվեցի Մարֆա Պետրովնայի հետ, երբ իմացա, որ նա էր սարքել այդ հարսանիքը։ Ես ցանկանում եմ Ավդոտյա Ռոմանովնայի հետ հիմա տեսնվել։ Ձեր միջոցով ու թերևս ձեր ներկայությամբ, նախ՝ բացատրել նրան, որ պարոն Լու-

ժինից նա ոչ միայն որևէ օգուտ չի ունենա, այլև պարզապես վնաս կքաշի։ Այնուհետև նրանից ներողություն խնդրելով վերջերս եղած այդ բոլոր անախորժությունների համար, ես նրանից թույլտվություն կխնդրեի իրեն առաջարկել տասը հազար ռուբլի և այդ կերպ հեշտացնել Լուժինից ձեռ քաշելը, ես հավատացած եմ, որ նա ինքն էլ այդ կուզենա, միայն թե հնարավոր լինի։

— Բայց դուք իսկապես որ, իսկապես որ խելագար եք,— բղավեց նույնիսկ ոչ այնքան բարկացած, որքան զարմացած Ռասկոլնիկովը։— Ի՞նչպես եք համարձակվում այդպես խոսել։

— Ես այդպես էլ գիտեի, որ դուք կբղավեք. բայց, նախ՝ ես թեև հարուստ չեմ, այնուամենայնիվ այդ տասը հազարը ինձ մոտ ազատ է, այսինքն՝ ինձ բոլորովին, բոլորովին հարկավոր չէ։ Եթե Ավդոտյա Ռոմանովնան չընդունի, ես այդ փողը ավելի հիմար բանի վրա կգործադրեմ։ Այս մեկ։ Երկրորդ, իմ խիղճը բոլորովին հանգիստ է. ես առանց որևէ հաշվենկատության եմ առաջարկում։ Հավատում եք, թե ոչ, հետագայում այդ կիմանաք թե դուք և թե Ավդոտյա Ռոմանովնան։ Ամբողջ բանն այն է, որ ես որոշ հոգսեր ու անախորժություններ եմ պատճառել ձեր շատ հարգելի քրոջը. հետևաբար, զգալով անկեղծ ղղջում, սրտանց ցանկանում եմ ոչ թե մեղքս քավել, ոչ թե հատուցել անախորժությունների համար, այլ պարզապես նրա համար մի որևէ շահեկան բան անել, քանի որ ես հո արտոնություն չե՞մ վերցրել միայն չարիք գործելու համար։ Եթե իմ առաջարկի թեկուզ մեկ միլիոնևրորդականը հաշվենկատություն լիներ, ես այսպես ուղղակի կերպով առաջարկ չէի անի. չէի առաջարկի ընդամենը միայն տասը հազար, քանի որ ընդամենը հինգ շաբաթ առաջ նրան ավելի մեծ գումար էի առաջարկել։ Բացի դրանից, ես գուցե շատ շուտով ամուսնանամ մի աղջկա հետ, հետևաբար Ավդոտյա Ռոմանովնայի դեմ որևէ հանցափորձ կատարելու բոլոր կասկածները հենց դրանով էլ կվերանան։ Վերջում կասեմ, որ ամուսնանալով պարոն Լուժինի հետ, Ավդոտյա Ռոմանովնան նույնպիսի փող է վերցնում, միայն թե ուրիշ կողմից... Դե մի բարկանաք, Ռոդիոն Ռոմանովիչ, հանգիստ և սառնասիրտ եղեք։

Այս ասելով, Սվիդրիգայլովն ինքը միանգամայն հանգիստ էր ու սառնասիրտ։

— Խնդրում եմ վերջացնեք,— ասաց Ռասկոլնիկովը։ — Համենայն դեպս դա անհնարելի հանդգնություն է։

— Ամենևին։ Դրանից հետո այս աշխարհում մարդը մարդուն կարող է միայն չարիք պատճառել և ընդհակառակը, ընդունված դատարկ ֆեակտությունների հետևանքով իրավունք չունի որևէ բարիք գործել։ Դա անհեթեթություն է։ Իսկ եթե ես, զորօրինակ, մեռնեի և այդ գումարը կտանեի ձեր քրոջը, մի՞թե նա այս դեպքում էլ կհրաժարվեր դրանից։

— Միանգամայն հնարավոր է։

— Օ, ոչ։ Ասենք, թեկուզև չընդուներ, թող այդպես էլ լինի։ Միայն թե տասը հազարը լավ բան է, պետք է օգտվել առիթից։ Համենայն դեպս խնդրում եմ իմ ասածը հայտնել Ավդոտյա Ռոմանովնային։

— Ոչ, չեմ հայտնի։

— Այդ դեպքում, Ռոդիոն Ռոմանովիչ, ես ստիպված կլինեմ անձամբ տեսակցություն ունենալ և ուրեմն անհանգստություն պատճառել։

— Իսկ եթե ես հայտնեմ, դուք չե՞ք փորձի անձամբ տեսակցություն ունենալ։

— Չգիտեմ ինչ ասեմ ձեզ։ Ես շատ կցանկանայի մի ուղղամ տեսնվել նրա հետ։

— Հույս չունենաք։

— Ցավալի է։ Ասենք, դուք ինձ չեք ճանաչում։ Գուցե ես ու դուք կբարեկամանանք։

— Դուք կարծում եք, թե կբարեկամանա՞նք։

— Ինչո՞ւ չէ,— ժպտալով ասաց Սվիդրիգայլովը, վեր կացավ ու վերցրեց գլխարկը,— ես հո այնքան էլ չէի ցանկանում ձեզ անհանգստացնել, ու գալով այստեղ, նույնիսկ այնքան էլ հուսադրված չէի, թեև դեռ այսօր առավոտյան ձեր դեմքը զարմացրեց ինձ...

— Առավոտյան ո՞րտեղ եք տեսել ինձ,— անհանգստությամբ հարցրեց Ռասկոլնիկովը։

— Պատահմամբ... Ինձ թվում է, որ մեր մեջ մի ինչ-որ նմանություն կա... Մի անհանգստանաք, ես ձանձրացնող չեմ. թե շուլերների հետ եմ յոլա գնացել, թե իշխան Սվիր-

բեյին, իմ հեռավոր ազգականին և ազնվազարմ անձնավորությանն էլ չեմ ճանձրացրել, թե Ռաֆայելի Մադոննայի մասին եմ գրել տիկին Պրիլուկովայի ալբոմում, թե Մարֆա Պետրովնայի հետ եմ յոթ տարի անընդհատ ապրել կալվածքում, թե Սեննայա հրապարակում, Վյազեմսկու տանն եմ հնում գիշերել*, և դուցե Բերգի հետ թռչեմ օդապարիկով։

— Լավ, թույլ տվեք հարցնել, շո՞ւտ եք մեկնելու ճանապարհորդության։

— Ի՞նչ ճանապարհորդություն։

— Դուք հո ինքներդ ասացիք...

— Հա՛... Իսկապես, ես այդ մասին ասացի ձեզ... Էհ, դա բարդ հարց է... Հապա մի գիտենայի՞ք, թե ինչի մասին եք հարցնում,— հանկարծ բարձրաձայն ավելացրեց Սվիդրիգայլովը և կարճ ծիծաղեց։— Ես դուցե ճանապարհորդելու փոխարեն ամուսնանամ. ինձ համար հարսնախոսություն են անում։

— Այստե՞ղ։

— Այո։

— Այդ ե՞րբ հաջողացրիք։

— Բայց շատ եմ ցանկանում մի անգամ տեսնվել Ավդոտյա Ռոմանովնայի հետ։ Լրջորեն եմ խնդրում։ Դե, ցտեսություն... ա՛խ, հա՛, ա՛յ թե մոռացա, Ռոդիոն Ռոմանովիչ, հաղորդեցեք ձեր քրոջը, որ Մարֆա Պետրովնան նրան երեք հազար ռուբլի է կտակել։ Դա բոլորովին ճիշտ է։ Մարֆա Պետրովնան կարգադրություն էր արել մահից մի շաբաթ առաջ, իմ ներկայությամբ։ Երկու-երեք շաբաթ հետո Ավդոտյա Ռոմանովնան կարող է ստանալ փողը։

— Դուք ճի՞շտ եք ասում։

— Ճիշտ։ Հաղորդեցեք։ Դեհ, ցտեսություն։ Ես այստեղից մոտիկ եմ ապրում։

Դուրս գալով, Սվիդրիգայլովը դռան շեմին հանդիպեց Ռազումիխինին։

II

Արդեն համարյա ժամը ութն էր. երկուսն էլ շտապում էին դեպի Բակալեևի հյուրանոցը, որպեսզի Լուժինից ավելի շուտ հասնեին։

— Այդ ո՞վ էր,— հարցրեց Ռազումիխինը, երբ նրանք դուրս եկան փողոց։

— Սվիդրիգայլովն էր, հենց այն կալվածատերը, որի տանը վիրավորել էին քրոջս, երբ այնտեղ ծառայում էր իբրև դաստիարակչուհի։ Սվիդրիգայլովի սիրային հետապնդումների պատճառով հեռացել էր այնտեղից. նրան փնտրել էր Սվիդրիգայլովի կինը՝ Մարֆա Պետրովնան։ Այդ Մարֆա Պետրովնան հետո Դունյայից նեղություն էր խնդրել, իսկ վերջերս հանկարծ մեռավ։ Քիչ առաջ նրա մասին էինք խոսում։ Չգիտեմ ինչու ես շատ եմ վախենում այդ մարդուց։ Նա ժամանել է կնոջ թաղումից անմիջապես հետո։ Նա շատ տարօրինակ է և ինչ-որ վճիռ է ընդունել... Նա կարծես մի բան գիտե... Հարկավոր է նրանից պաշտպանել Դունյային... Ես ուզում էի սա ասել քեզ, լսո՞ւմ ես։

— Պաշտպանե՞լ։ Նա ի՞նչ կարող է անել Ավդոտյա Ռոմանովնայի դեմ։ Շնորհակալություն քեզ, Ռոդյա, որ ինձ այդ ասացիր... Այո, այո, կպաշտպանենք... Ո՞րտեղ է ապրում։

— Չգիտեմ։

— Ինչո՞ւ չհարցրիր։ Ափսո՜ս։ Սակայն ես կիմանամ։

— Դու նրան տեսա՞ր,— կարճ լռությունից հետո հարցրեց Ռասկոլնիկովը։

— Այո, նկատեցի. լավ նկատեցի։

— Դու նրան նայեցի՞ր, պա՞րզ տեսար,— վերստին հարցրեց Ռասկոլնիկովը։

— Այո, պարզ հիշում եմ. հազար մարդու մեջ էլ կճանաչեմ, ես դեմքերը լավ եմ հիշում։

Դարձյալ մի քիչ լռեցին։

— Հըմ... այդ լավ է...— փնթփնթաց Ռասկոլնիկովը։ — Թվ. չէ, գիտե՞ս, ես մտածեցի... մտածեցի, որ դա դուցե և ֆանտազիա է։

— Ինչի՞ մասին ես խոսում. ես այնքան էլ լավ չեմ հասկանում քեզ։

— Դուք բոլորդ ասում եք, թե ես խելագարված եմ,— ժպիտից բերանը ծռմռելով, ասաց Ռասկոլնիկովը,— հիմա ինձ էլ թվաց, որ գուցե իսկապես ես խելագար եմ և միայն ուրվական եմ տեսել։

— Այդ ինչե՞ր ես ասում։

— Դե ով գիտե, գուցե ես իրոք խելագար եմ և ամեն ինչ, որ եղել է այս բոլոր օրերին, գուցե միայն երևակայության մեջ է կատարվել...

— Է՛— է՛, Ռոդյա, էլի փչացրել են տրամադրությունդ... Լավ, ի՞նչ էր ասում նա, ինչի՞ համար էր եկել։

Ռասկոլնիկովը չպատասխանեց։ Ռազումիխինը մի բոպե մտածմունքի մեջ ընկավ։

— Դե լսիր իմ հաշվետվությունը,— սկսեց նա։— Ես եկա քեզ մոտ, դու քնած էիր։ Հետո ճաշեցինք, հետո էլ գընացի Պորֆիրիի մոտ, Զամետովը շարունակ նրա մոտ է։ Ես ուզում էի խոսակցություն սկսել, ու ոչինչ դուրս չեկավ։ Զկարողացա ինչպես հարկն է խոսք բաց անել։ Նրանք կարծես բան չեն հասկանում և չեն կարող հասկանալ, բայց ամենևին էլ չեն շփոթվում։ Ես Պորֆիրիին տարա լուսամուտի մոտ ու սկսեցի խոսել, բայց դարձյալ բան դուրս չեկավ. նա էլ, ես էլ մի կողմ էինք նայում։ Վերջապես, ես բռունցքս մոտեցրի նրա քթին և ասացի, որ կջնջեմ իր, իմ ազգականի գլուխը։ Նա միայն նայեց ինձ։ Ես թքեցի ու հեռացա, և ուրիշ ոչինչ։ Շատ հիմար բան ստացվեց։ Զամետովի հետ բոլորովին չխոսեցի։ Գիտե՞ս, ես մտածեցի, թե փչացրել եմ գործը, իսկ երբ իջնում էի սանդուղքից, գլխումս այ թե ինչ միտք ծագեց. ախր ես ու դու ինչո՞ւ ենք գլուխ ցավեցնում։ Այլ բան է, եթե քո դեմ վտանգ կամ որևէ դավ լիներ, բայց այստեղ ի՞նչ վտանգ կա։ Դու նրանց հետ ոչ մի գործ էլ չունես, դե ուրեմն թքած նրանց վրա. մենք հետո կծիծաղենք նրանց վրա, իսկ եթե ես քո տեղը լինեի, կմոլորեցնեի նրանց։ Չէ՞ որ հետո ամաչելու են։ Թքիր-գնա. հետո էլ կարելի է հասցնել նրանց մոութներին, իսկ առայժմ ծիծաղենք։

— Իհարկե, այդպես է,— պատասխանեց Ռասկոլնիկովը։

«Իսկ վաղը գու ի՞նչ կասես», մտածեց նա։ Տարօրինակ բան, մինչև այժմ ոչ մի անգամ իր մտքով չէր անցել, թե ի՞նչ կմտածի Ռազումիխինը, եթե իմանա։ Մտածելով այդ, Ռասկոլնիկովը ակնապիշ նայեց ընկերոջը։ Նրան այնքան էլ չէր հետաքրքրել վերջինիս հաշվետվությունը Պորֆիրիին այցելելու մասին. այդ ժամանակվա ընթացքում շատ և շատ բան էր պակասել ու ավելացել...

Միջանցքում նրանք հանդիպեցին Լուժինին. սա եկել էր ուղիղ ճամբը ոտքին և փնտրում էր մոր և աղջկա զբաղեցրած համարը, այնպես որ երեքն էլ նրա մտան միասին, առանց իրար նայելու և բարևելու։ Երիտասարդները առաջ անցան, իսկ Պյոտր Պետրովիչը քաղաքավարության համար մի փոքր հապաղեց նախասենյակում, հանելով վերարկուն։ Պուլխերիա Ալեքսանդրովնան խկույն զուրս եկավ շեմում նրան դիմավորելու։ Դունյան ողջունեց եղբորը։

Պյոտր Պետրովիչը ներս մտավ և բավական սիրալիր, թեպետև կրկնապատկված պատկառելիությամբ գլուխ տվեց կանանց։ Սակայն նա այնպես էր նայում, որ կարծես թե մի քիչ շփոթվել էր և իրեն անհարմար էր զգում։ Պուլխերիա Ալեքսանդրովնան, որ կարծես նույնպես շփոթված լիներ, իսկույն շտապեց բոլորին նստեցնել կլոր սեղանի շուրջ, որի վրա թշշում էր ինքնաեռը։ Դունյան և Լուժինը տեղավորվեցին փրաբ դիմաց, սեղանի հակադիր կողմերում։ Ռազումիխինը և Ռասկոլնիկովը նստեցին Պուլխերիա Ալեքսանդրովնայի դիմաց՝ Ռազումիխինը՝ Լուժինին մոտիկ, իսկ Ռասկոլնիկովը՝ քրոջ կողքին։

Տիրեց վայրկենական լռություն։ Պյոտր Պետրովիչը դանդաղ հանեց բատիստե թաշկինակը, որից անուշահոտ օծանելիքի հոտ էր բուրում, ու խնչեց այնպիսի մարդու տեսքով, որն իր արժանապատվությունը վիրավորված է համարում և բացի այդ, հաստատապես որոշել է բացատրություններ պահանջել։ Դեռ նախասենյակում նրա մտքով անցել էր չհանել վերարկուն ու ետ գնալ, այդ կերպ խստորեն ու թունդ պատժել մորն ու աղջկան, մի անգամից նրանց ամեն ինչ զգալ տալ։ Բայց նա սիրտ չարեց այդ անել։ Այդ մարդը անորոշ դրություն չէր սիրում, հարկավոր էր պարզել ամեն ինչ. եթե պարզապես խախտված է հրամանը, ուրեմն մի որևէ բան

կա, ուրեմն ավելի լավ է դա առաջուց իմանալ. իսկ պատժելու համար միշտ էլ ժամանակ կլինի և դա իրենից է կախված։

— Հուսով եմ, որ ձեր ճանապարհորդությունը բարեհաջող է անցել,— սառն քաղաքավարությամբ դիմեց նա Պուլլխերիա Ալեքսանդրովնային։

— Փառք աստծու, Պյոտր Պետրովիչ։

— Խիստ հաճելի է։ Ավդոտյա Ռոմանովնան չհոգնե՞ց։

— Ես ջահել և ուժեղ եմ, չեմ հոգնի, իսկ մայրիկը շատ ծանր վիճակում էր,— պատասխանեց Դունեչկան։

— Ի՞նչ արած. մեր երկրի ճանապարհները շատ երկար են։ Մեծ է այսպես կոչված «մայր Ռուսաստանը»... Երեկ ես ոչ մի կերպ չկարողացա գիմավորել, թեև շատ էի ցանկանում։ Սակայն հուսով եմ, որ ամեն ինչ կատարվեց առանց մի առանձին գլխացավանքի, այնպես չէ՞։

— Ախ, ոչ, Պյոտր Պետրովիչ, մենք խիստ վհատված էինք,— մի առանձին ինտոնացիայով շտապեց հայտարարել Պուլլիերիա Ալեքսանդրովնան,— ու եթե աստված ինքը երեկ մեզ չուղարկեր Դմիտրի Պրոկոֆիչին, մենք ուղղակի կկորչեինք։ Ահա նա, Դմիտրի Պրոկոֆիչ Ռազումիխինը,— ավելացրեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան՝ ցույց տալով Ռազումիխինին։

— Երեկ ես... բախտ ունեցա ծանոթանալու,— փնթփընթաց Լուժինը՝ խոժոռված ու խեթ նայելով Ռազումիխինին, հետո էլ կիտեց հոնքերը և լռեց։ Առհասարակ Պյոտր Պետրովիչը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք հասարակության մեջ չափազանց սիրալիր են և առանձնապես սիրալիրություն են հավակնում, բայց հենց որ մի բան իրենց ուզածով չի լինում, իսկույն կորցնում են իրենց այդ հատկությունը և ոչ թե սրտաբաց ու հասարակությանը աշխուժացնող կավալերի, այլ ավելի շուտ ալյուրով լեցուն պարկի են նմանվում։ Բոլորն էլ դարձյալ լուռ էին. Ռասկոլնիկովը համառորեն ձայն չէր հանում, Ավդոտյա Ռոմանովնան առայժմ չէր ուզում ընդհատել լռությունը, Ռազումիխինը ասելիք չուներ, այնպես որ Պուլլխերիա Ալեքսանդրովնան դարձյալ սկսեց անհանգստանալ։

— Մարֆա Պետրովնան մեռել է, դուք լսե՞լ եք,— ասաց

նա՝ դիմելով անհարմար դրությունից դուրս գալու իր հիմնական միջոցին։

— Ինչպե՞ս չէ, լսել եմ։ Լուրը անմիջապես ինձ հասավ, ու ես նույնիսկ եկա ձեզ հաղորդելու, որ Արկադի Իվանովիչ Սվիդրիգայլովը կնոջ թաղումից անմիջապես հետո հապճեպ մեկնել է Պետերբուրգ։ Սրանք են իմ ստացած միանգամայն ճիշտ լուրերը։

— Պետերբո՞ւրգ, այստե՞ղ,— անհանգիստ հարցրեց Դունեչկան և մոր հետ հայացքներ փոխանակեց։

— Ճիշտ այդպես, և, իհարկե, ոչ առանց նպատակների, եթե նկատի առնենք մեկնելու հապճեպությունը և առհասարակ նախորդ հանգամանքները։

— Տեր աստված, մի՞թե նա այստեղ էլ հանգիստ չի թողնելու Դունեչկային,— բացականչեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Ինձ թվում է, որ դուք էլ, Ավդոտյա Ռոմանովնան էլ չպետք է առանձնապես անհանգստանաք, իհարկե, եթե ինքներդ չցանկանաք նրա հետ որևէ հարաբերություն պահպանել։ Ինչ վերաբերում է ինձ, ես հետամտում եմ և հիմա հետաքրքրվում եմ, թե նա որտեղ է իջևանել...

— Ախ, Պյոտր Պետրովիչ, դուք չեք հավատա, թե հիմա ինձ որչափ վախեցրիք,— ասաց Պուլլխերիա Ալեքսանդրովնան,— ես նրան ընդամենը երկու անգամ տեսա, և նա ինձ զարհուրելի, զարհուրելի թվաց։ Ես հավատացած եմ, որ նա է եղել հանգուցյալ Մարֆա Պետրովնայի մահվան պատճառը։

— Չի կարելի այդ եզրակացնել։ Ես ճշգրիտ տեղեկություններ ունեմ։ Չեմ վիճում, գուցե նա, այսպես ասած, վիրավորանքի բարոյական ազդեցությամբ նպաստել է իրերի արագ ընթացքին. իսկ ինչ վերաբերում է այդ անձնավորության վարքին և առհասարակ բարոյական բնութագրման, ապա ես ձեզ հետ համաձայն եմ։ Չգիտեմ հարո՞ւստ է նա այժմ, և նրան ի՞նչ է թողել Մարֆա Պետրովնան. այդ ինձ հայտնի կլինի ամենակարճ ժամանակամիջոցում. բայց, իհարկե, այստեղ, Պետերբուրգում, ունենալով թեկուզ սահմանափակ դրամական միջոցներ, նա ձեռք չի քաշի իր հին սովորություններից։ Այդ կարգի մարդկանցից նա առավելա-

պես անառակն է ու ապաստավորը։ Ես բավականաչափ հիմք ունեմ ենթադրելու, որ Մարֆա Պետրովնան դժբախտություն ունենալով ութ տարի առաջ սիրահարվել նրան ու վճարել նրա պարտքը, նրան ծառայություն մատուցեց նաև մի այլ առնչությամբ. միայն նրա ջանքերով ու ղոհարերություններով հենց սկզբից քողարկվեց քրեական մի գործ, գազանային և, այսպես ասած, ֆանտաստիկ ոճրագործություն, որի համար նա կարող էր Սիբիր աքսորվել։ Ահա թե ինչպիսի մարդ է նա, լթե կուզեք իմանալ։

— Ախ, տեր աստված,— բացականչեց Պուլչերիա Ալեքսանդրովնան։ Ռասկոլնիկովը ուշադրությամբ լսում էր։

— Դուք ճի՞շտ եք ասում, որ այդ մասին ճշգրիտ տեղեկություններ ունեք,— խստորեն և ազդու հարցրեց Դունյան։

— Ես ասում եմ միայն այն, ինչ որ գաղտնապես լսել եմ հանգուցյալ Մարֆա Պետրովնայից։ Պետք է ասել, որ իրավաբանական տեսակետից դա շատ մութ գործ է։ Այստեղ ապրում էր, հիմա էլ կարծեմ ապրում է ոմն Ռեսլիխ, օտարուհի, մանր վաշխառու, որը ուրիշ գործերով էլ է զբաղվում։ Հենց այդ Ռեսլիխի հետ էլ պարոն Սվիդրիգայլովը վաղուց ինչ-որ միանգամայն մոտիկ ու խորհրդավոր հարաբերություններ մեջ էր։ Ռեսլիխի մոտ ապրում էր նրա հեռավոր ազգականուհին, կարծեմ համր և խուլ, տասնհինգ թե նույնիսկ տասնչորս տարեկան մի աղջիկ, որին այդ Ռեսլիխը անչափ ատում էր ու կշտամբում մի կտոր հացի համար, նույնիսկ տմարդորեն ծեծում էր։ Մի անգամ նրան գտան ձեղնահարկում կախված։ Ասում էին, որ նա այդ կերպ ինքնասպանություն էր գործել։ Սովորական արարողություններից հետո բանը դրանով էլ վերջացավ, բայց հետագայում մատնություն եղավ, որ երեխային... դաժանորեն պատվաստել էր Սվիդրիգայլովը։ Ճշմարիտ է, այդ բոլորը անորոշ էր, մատնողը մի ուրիշ օտարուհի՝ գերմանուհի էր, վստահություն չվայելող և տխրահռչակ մի կին. վերջապես, Մարֆա Պետրովնայի ջանքերի ու փողերի շնորհիվ այդ մատնությունն էլ կոծկվեց, միայն լուրեր մնացին։ Բայց, այնուամենայնիվ, այդ լուրերը շատ նշանակալից էին։ Դուք, Ավդոտյա Ռոմանովնա, իհարկե, նրանց մոտ լսած կլինեք Ֆիլիպ անունով մի մարդու մասին, որը վեց տարի առաջ, դեռ

ճորտատիրական իրավունքի ժամանակներում մեռել էր խոշոր տանգումներից։

— Ընդհակառակը, ես լսել էի, որ այդ Ֆիլիպը ինքն էր կախվել։

— Ճիշտ այդպես, բայց նրան ստիպել կամ ավելի լավ է ասենք՝ ինքնասպանության էր մղել պարոն Սվիդրիգայլովի կողմից եղած հալածանքների ու պատիժների անընդհատ սիստեմը։

— Ես այդ չգիտեմ,— սառը պատասխանեց Դունյան,— ես լսել էի միայն մի ինչ-որ շատ տարօրինակ պատմություն, թե այդ Ֆիլիպը ինչ-որ հիպոխոնդրիկ էր, մի տեսակ տնաբույս փիլիսոփա, մարդիկ ասում էին, թե նա «կարդալուց խելքը թոցրել է», ու կախվել էր ավելի շուտ ծագրանքների, քան Սվիդրիգայլովից ծեծ ուտելու պատճառով։ Սվիդրիգայլովը իմ ներկայությամբ լավ էր վարվում սպասավորների հետ, և սպասավորները նույնիսկ սիրում էին նրան, թեև իրոք մեղադրում էին Ֆիլիպի մահվան համար։

— Ավդոտյա Ռոմանովնա, ես տեսնում եմ, որ դուք հանկարծ տրամադրվել եք նրան արդարացնելու,— ասաց Լուժինը՝ երկիմաստ ժպիտից ծռմռելով բերանը։— Իրոք, նա խորամանկ ու հրապուրիչ մարդ է կանանց նկատմամբ, դրա ողբալի օրինակը Մարֆա Պետրովնան է, որը այդպես տարօրինակ կերպով մեռավ։ Ես միայն ուզում էի իմ խորհրդով օգնել ձեզ և ձեր մայրիկին, նկատի ունենալով, որ Սվիդրիգայլովը անկասկած նոր փորձեր կանի ձեզ մոտենալու համար։ Ինչ վերաբերում է ինձ, ես հաստատ հավատացած եմ, որ այդ մարդը պարտքերը չվճարելու համար անկասկած նորից կալանատուն կընկնի։ Մարֆա Պետրովնան բնավ երբեք մտադիր չի եղել նրան որևէ գումար թողնել՝ նկատի ունենալով երեխաներին, ու եթե մի բան էլ թողել է, ապա դա ամենաանհրաժեշտ ծախսերի համար է, սահմանափակ, չնչին, ու նրա սովորությունները ունեցող մարդուն մի տարի էլ չի բավականանա։

— Պյոտր Պետրովիչ, խնդրում եմ ձեզ, այլևս չխոսենք պարոն Սվիդրիգայլովի մասին, դա ձանձրացնում է ինձ,— ասաց Դունյան։

— Սվիդրիգայլովը այսօր ինձ մոտ եկավ,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը, որ մինչ այդ լռում էր։

Բոլոր կողմերից բացականչություններ լսվեցին, բոլորը դարձան դեպի Ռասկոլնիկովը։ Նույնիսկ Պյոտր Պետրովիչն է՛լ հուզվեց։

— Մեկ ու կես ժամ առաջ, երբ ես քնած էի, նա ներս մտավ, արթնացրեց ինձ և ասաց իր անունը,— շարունակեց Ռասկոլնիկովը։— Նա բավական ուրախ էր ու սանձարձակ և միանգամայն հուսով է, որ ես կմտերմանամ իր հետ։ Ի միջի այլոց նա շատ է ուզում քեզ հետ տեսնվել, Դունյա, ու ինձ խնդրում էր միջնորդ լինել այդ տեսակցությունը գլուխ բերելու համար։ Նա քեզ մի առաջարկ է անելու. ինձ ասաց, թե այդ ինչ առաջարկ է։ Բացի դրանից, նա ինձ հաստատապես հաղորդեց, որ Մարֆա Պետրովնան մահվանից մի շաբաթ առաջ քեզ, Դունյա, կտակել էր երեք հազար ռուբլի, և դու կարող ես հիմա շատ շուտով ստանալ այդ փողը։

— Փառք աստծու,— դոչեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան և խաչակնքեց։— Աղոթիր նրա համար, Դունյա, աղոթիր։

— Այդ իրոք ճշմարիտ է,— բերանից թռցրեց Լուժինը։

— Հետո՞, հետո ի՞նչ եղավ,— հարցրեց Դունեչկան։

— Հետո նա ասաց, թե ինքը հարուստ չէ և ամբողջ կալվածքը բաժին է ընկնում իր երեխաներին, որոնք հիմա մորաքրոջ մոտ են։ Հետո էլ ասաց, որ իշնանել է իմ սենյակին մոտիկ ինչ-որ տեղում, իսկ թե որտեղ, չգիտեմ, չհարցրի...

— Բայց նա ի՞նչ, ի՞նչ է ուզում առաջարկել Դունյային, ասա՞ց քեզ,— հարցրեց խիստ վախեցած Պուլլխերիա Ալեքսանդրովնան։

— Այո, ասաց։

— Ինչ։

— Հետո կասեմ։— Ռասկոլնիկովը լռեց ու սկսեց խմել իր թեյը։

Պյոտր Պետրովիչը նայեց ժամացույցին։

— Ես գործ ունեմ, պետք է գնամ և այդպիսով չեմ խանգարի ձեզ,— մի փոքր վիրավորված տեսքով ասաց նա և աթոռից վեր կացավ։

— Մնացեք, Պյոտր Պետրովիչ,— ասաց Դունյան,— դուք

հո մտադրվել էիք երեկոն այստեղ անցկացնել։ Բացի այդ, դուք գրել էիք, որ ցանկանում եք ինչ-որ խոսակցություն ունենալ մայրիկի հետ։

— Ճիշտ այդպես է, Ավդոտյա Ռոմանովնա,— կտրուկ ասաց Պյոտր Պետրովիչը՝ դարձյալ նստելով աթոռին, բայց գլխարկը դեռ ձեռքին պահած,— ես իրոք ցանկանում էի բացատրվել թե ձեզ և թե ձեր հարգարժան մայրիկի հետ, այն էլ շատ կարևոր խնդիրների մասին։ Բայց, ինչպես որ ձեր եղբայրը չի կարող իմ ներկայությամբ հաղորդել պարոն Սվիդրիգայլովի ինչ-որ առաջարկները, այնպես էլ ես չեմ ցանկանում և չեմ կարող... ուրիշների ներկայությամբ... բացատրվել շատ և շատ կարևոր մի քանի խնդիրների մասին։ Այն էլ ասած, իմ հիմնական և թախանձագին խնդրանքը չի կատարվել...

Լուժինը դառն ժպտաց ու փքվելով լռեց։

— Մեր տեսակցությանը եղբորս ներկա չլինելու վերաբերյալ ձեր խնդրանքը չի կատարվել միայն իմ պահանջով, — ասաց Դունյան։— Դուք գրել էիք, թե եղբայրս վիրավորել է ձեզ. ես կարծում եմ, որ հարկավոր է դա անմիջապես պարզել, և դուք պետք է հաշտվեք։ Եվ եթե Ռոդյան իրոք վիրավորել է ձեզ, ապա նա պետք է ձեզնից ներողություն խնդրի և կխնդրի։

Պյոտր Պետրովիչը իսկույն սկսեց հոխորտալ։

— Ավդոտյա Ռոմանովնա, կան այնպիսի վիրավորանքներ, որոնք չի կարելի մոռանալ, ինչքան էլ որ բարի կամք ցուցաբերես։ Ամեն ինչ ունի իր սահմանը, որից անցնելը վտանգավոր է, որովհետև եթե անցնես, էլ չես կարող ետ դառնալ։

— Ես այդ մասին ձեզ բան չասացի, Պյոտր Պետրովիչ,— մի փոքր անհամբեր վրա բերեց Դունյան։— Լավ հասկացեք, որ մեր ամբողջ ապագան հիմա կախված է նրանից, թե արդյո՞ք որքան կարելի է շուտ կպարզաբանվի ու կկարգավորվի այդ ամենը, թե ոչ։ Ես ուղղակի և պարզ ասում եմ, որ այլ կերպ չեմ կարող վերաբերվել, ու եթե ես գեթ որևէ չափով թանկ եմ ձեզ համար, ապա այդ ամբողջ պատմությունը պետք է հենց այսօր վերջանա, թեկուզև այդ դժվար

լինի։ Կրկին ասում եմ ձեզ, եթե եղբայրս մեղավոր է, ներողություն կխնդրի։

— Զարմանում եմ, որ դուք հարցը այդպես եք դնում, Ավգուստա Ռոմանովնա,— հեռվհետ ավելի էր ջղայնանում Լուժինը,— թանկ գնահատելով և, այսպես ասած, պաշտելով ձեզ, ես միևնույն ժամանակ միանգամայն կարող եմ չսիրել ձեր ընտանիքից որևէ մեկին։ Հավակնություն ունենալով, որ մենք միասին երջանիկ կլինենք, միևնույն ժամանակ ես չեմ կարող անիրագործելի պարտավորություններ վերցնել...

— Ախ, թողեք այդ ամբողջ խոովկանությունը, Պյոտր Պետրովիչ,— հուզված ընդհատեց Դունյան,— եղեք այնպես խելոք ու աղնիվ մարդ, ինչպես որ ես ձեզ միշտ համարել եմ և ուզում եմ համարել։ Ես ձեզ մեծ խոստում եմ տվել, ես ձեր հարսնացուն եմ. դե ուրեմն վստահեցեք ինձ այս գործում և հավատացեք, որ ես կկարողանամ անաչառ լինել։ Այն հանգամանքը, որ ես դատավորի դեր եմ վերցնում, նույնպիսի անաչառություն է եղբորս համար, ինչպես և ձեզ համար։ Երբ ձեր նամակը ստանալուց հետո ես այսօր նրան հրավիրեցի ներկա լինել մեր տեսակցությանը, ես փմ գիտավորություններից ոչինչ չհաղորդեցի նրան։ Հավատացեք, որ եթե դուք չհաշտվեք, ապա ես պետք է ընտրեմ ձեզնից մեկին. կամ ձեզ կամ նրան։ Հարցը այդպես է դրված թե ձեր և թե նրա կողմից։ Ես չեմ ուզում սխալվել և չպետք է սխալվեմ ընտրություն կատարելիս։ Ձեզ համար ես պետք է բաժանվեմ եղբորից. եղբորս համար ես պետք է բաժանվեմ ձեզնից։ Ես ուզում եմ և կարող եմ հիմա հաստատ խմանալ՝ արդյո՞ք նա եղբայր է ինձ համար, մյուս կողմից խմանալ՝ արդյո՞ք ես թանկ եմ ձեզ համար, արդյո՞ք դուք ինչպես հարկն է գնահատում եք ինձ. իմ ամուսինն եք, թե ոչ։

— Ավգուստա Ռոմանովնա,— նեղանալով տաց Լուժինը,— ձեր խոսքերը չափազանց նշանակալից են ինձ համար. կասեմ ավելին՝ նույնիսկ վիրավորական են, եթե նկատի ունենանք այն դիրքը, որ ես պատիվ ունեմ գրավելու ձեր նկատմամբ։ Բացի այն, որ դուք վիրավորական և տարօրինակ զուգադրություն եք թույլ տալիս, որ դուք ինձ և... մեծամիտ երիտասարդին հավասար եք համարում, դուք նաև ձեր խոսքերով հնարավոր եք համարում խախտել ինձ տրր-

ված խոստումը։ Դուք ասում եք՝ «կամ դուք, կամ նա», ոչինչ հենց դրանով ցույց եք տալիս, թե ես որքան քիչ նշանակություն ունեմ ձեզ համար... Ես չեմ կարող այդ թույլ տալ՝ նկատի ունենալով մեր միջև գոյություն ունեցող հարաբերությունները և... պարտավորությունները։

— Ինչպե՞ս,— տաքացավ Դունյան,— ես ձեր շահը հանդիսանում եմ այն ամենի հետ, ինչ որ մինչև այժմ կյանքում թանկ է եղել ինձ համար, ինչ որ մինչև այժմ կազմել է իմ ամբողջ կյանքը, և հանկարծ դուք վիրավորվում եք, որ ես ձեզ ինչ արժե՞ք եմ տալիս։

Ռասկոլնիկովը լուռ և կծու ժպտաց, Ռազումիխինը ցընցվեց, բայց Պյոտր Պետրովիչը չընդունեց առարկությունը, ընդհակառակը, նա հետզհետե ավելի ծծախնդիր ու դյուրագրգիռ էր դառնում, ասես դրանից հաճույք էր ստանում։

— Սերը դեպի կյանքի ապագա ընկերը, դեպի ամուսինը, պետք է գերազանցի եղբոր նկատմամբ եղած սիրուց,— խրատական տոնով ասաց նա,— համենայն դեպս ես չեմ կարող այստեղ հավասար լինել... թեև ես առաջուց հայտնեցի, որ ձեր եղբոր ներկայությամբ չեմ կարող և չեմ էլ ցանկանում բացատրել այն ամենը, ինչի համար որ եկել եմ, այնուամենայնիվ մտադիր եմ հենց հիմա դիմել ձեր շատ և շատ հարգելի մայրիկին, միանգամայն հիմնական և ինձ համար վիրավորական մի մոմենտի վերաբերյալ անհրաժեշտ բացատրության համար։ Ձեր որդին,— դիմեց նա Պուլխերիա Ալեքսանդրովնային,— երեկ պարոն Ռասսուդկինի ներկայությամբ (կամ... կարծեմ այդպե՞ս է, ներեցեք, ես մոռացել եմ ձեր ազգանունը,— նա սիրալիրությամբ գլուխ տվեց Ռազումիխինին) վիրավորեց ինձ՝ աղավաղելով իմ այն միտքը, որ այն ժամանակ ես ձեզ հաղորդել էի մասնավոր խոսակցության պահին, սուրճ խմելիս։ Ես ասել էի, որ իմ կարծիքով կենսական դառնություններ տեսած աղքատ աղջիկ հեռ ամուսնանալը բախտավոր լինելու տեսակետից ավելի շահավետ է, քան լիության մեջ ապրած աղջկա հետ ամուսնանալը, որովհետև բարոյականության համար ավելի օգտակար է։ Ձեր որդին անհեթեթության չափ չափազանցրել է այդ խոսքերի նշանակությունը՝ ինձ մեղադրելով չարամիտ դիտավորությունների համար և, ըստ էության, հիմնվելով հենց

ձեր նամակի վրա։ Ես ինձ երջանիկ կհամարեմ, եթե ձեզ համար, Պուլխերիա Ալեքսանդրովնա, հնարավոր լինի փոխել տալ իմ համոզմունքը հակառակ ուղղությամբ և դրանով զգալիորեն հանգստացնել ինձ։ Դե ուրեմն հայտնեցեք ինձ, թե հատկապես ի՞նչ տերմիններով եք իմ խոսքերը հաղորդել Ռոդիոն Ռոմանովիչին գրած ձեր նամակում։

— Ես չեմ հիշում,— շշկլվեց Պուլխերիա Ալեքսանդրովնան,— ես հաղորդել եմ այնպես, ինչպես որ ինքս եմ հասկացել։ Չգիտեմ թե Ռոդյան ինչպես է հաղորդել ձեզ... Գուցե և նա մի որևէ բան չափազանցրել է։

— Առանց ձեր ներշնչման նա չէր կարող չափազանցնել։

— Պյոտր Պետրովիչ,— իր արժանապատվության զգացումով ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան,— այստեղ մեր գտնվելը ապացուցում է, որ ես ու Դունյան այնքան էլ վատ կողմից չենք ընդունել ձեր խոսքերը։

— Լավ ասացիր, մայրիկ,— հավանություն տվեց Դունյան։

— Ուրեմն ես այստեղ էլ իմ մեղավոր,— նեղացավ Լուժինը։

— Հա՛, Պյոտր Պետրովիչ, դուք շարունակ Ռոդիոնին եք մեղադրում, իսկ ինքներդ նրա մասին սխալ բան էիք գրել ձեր նամակում,— սիրտ առնելով, ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Ես չեմ հիշում, թե ինչ սխալ բան եմ գրել։

— Դուք գրել էիք, թե երեկ ես փողը տվել էի ոչ թե կառքի տակ ընկած մարդու այրիացած կնոջը, ինչպես այդ իրոք եղել է, այլ նրա աղջկան (որին մինչև երեկ ես երբեք չէի տեսել),— խիստ տոնով ասաց Ռասկոլնիկովը՝ դեմքը չդարձնելով դեպի Լուժին։— Դուք այդ գրել էիք, որպեսզի ինձ կռվեցնեիք իմ հարազատների հետ, ու դրա համար ավելացրել էիք նողկալի արտահայտություններ ձեզ անծանոթ այդ աղջկա վարքի մասին։ Այդ բոլորը բամբասանք է և ստորություն։

— Ներեցեք, պարոն,— պատասխանեց Լուժինը բարկությունից դողալով,— ես իմ նամակում անդրադարձել էի ձեր հատկություններին ու վարմունքին, որպեսզի այդ կերպ կատարեի ձեր քրոջ և մայրիկի խնդրանքը, այն է՝ գրել, թե ինչ

վիճակում գտա ձեզ և դուք ինչ տպավորություն թողիք ինձ վրա։ Ինչ վերաբերում է իմ նամակում հայտնված մյուս մտքերին, ապա գտեք թեկուզ մեկ անարդարացի տող, այսինքն թե դուք չեք տվել փողը ու թեկուզ դժբախտ այն ընտանիքում անարժան անձնավորություններ չեն եղել։

— Իսկ իմ կարծիքով դուք ձեր բոլոր արժանավորություններով շարժեք ձեր քարկոծած այն անբախտ աղջկա ճկույթն։

— Ուրեմն դուք նաև սիրտ կանեիք նրան ձեր մոր և քրոջ մոտ է՞լ բերել։

— Ես այդ արդեն արել եմ, եթե դուք ուզում եք իմանալ։ Ես այսօր նրան նստեցրել էի մայրիկիս և Դունյայի կողքին։

— Ո՜դյա,— բացականչեց Պուլլիերիա Ալեքսանդրովնան։

Դունեչկան կարմրեց. Ռազումիխինը կիտեց հոնքերը։ Լուժինը կծու և զոհողաբար ժպտաց։

— Ավդոտյա Ռոմանովնա,— ասաց նա,— ինքներդ եք բարեհաճում տեսնել, որ հնարավոր չէ համաձայնության գալ։ Հիմա հուսով եմ, որ այս գործը առմիշտ վերջացած է ու պարզաբանված։ Ես գնում եմ, որպեսզի չխանգարեմ ազգակցական տեսակցության հետագա հաճելիությանը և գաղտնիքները հաղորդելուն (նա աթոռից վեր կացավ ու վերցրեց գլխարկը)։ Բայց, գնալով, համարձակվում եմ հայտնել, որ հույս ունեմ այսուհետև ազատված լինել նման հանդիպումներից և, այսպես ասած, կոմպրոմիսներից։ Նույնը պետք է առանձնապես խնդրեմ ձեզնից, անչափ հարգելի Պուլլիերիա Ալեքսանդրովնա, մանավանդ որ նամակս էլ հասցեագրված էր ձեզ և ոչ թե մեկ ուրիշին։

Պուլլիերիա Ալեքսանդրովնան մի քիչ վիրավորվեց։

— Դուք արդեն մեզ բոլորովին ձեր իշխանության տակ եք վերցնում, Պյոտր Պետրովիչ։ Դունյան ձեզ պատմեց, թե ինչ պատճառով չի կատարվել ձեր ցանկությունը. նա լավ դիտավորություններ ուներ։ Դուք ինձ այնպես եք գրում, որ կարծես թե հրամայում եք։ Մի՞թե մենք պետք է ձեր յուրաքանչյուր ցանկությունը հրաման համարենք։ Իսկ ես, ընդհակառակը, ձեզ կասեմ, որ դուք հիմա մեր նկատմամբ

պետք է առանձնապես նրբազգաց ու ներողամիտ լինեք, որովհետև մենք ամեն ինչ թողել ենք և վստահելով ձեզ, ժամանել ենք այստեղ, ուրեմն առանց այն էլ համարյա ձեր իշխանության տակ ենք գտնվում։

— Դա այնքան էլ ճիշտ չէ, Պուլխերիա Ալեքսանդրովնա, մանավանդ ներկա մոմենտում, երբ իմացել եք Մարֆա Պետրովնայի կտակած երեք հազարի մասին, որ կարծեմ իսկապես հարմար ժամանակին է, դատելով նոր տոնից, որով խոսում եք ինձ հետ,— խայթողաբար ասաց Լուժինը։

— Դատելով այդ դիտողությունից, իրոք կարելի է ենթադրել, որ դուք հույս էիք դրել մեր անօգնականության վրա,— ջղայնությամբ ասաց Դունյան։

— Բայց հիմա հո չեմ կարող այդպիսի հույս ունենալ, առանձնապես չեմ ցանկանում խանգարել Արկադի Իվանովիչ Սվիդրիգայլովի գաղտնի առաջարկները հաղորդելուն, որոնք նա հայտնել է ձեր եղբորը և որոնք, ինչպես ես տեսնում եմ, ձեզ համար հիմնական, գուցե և խիստ հաճելի նշանակություն ունեն։

— Ախ, ասուած իմ,— բացականչեց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

Ռազումիխինը չէր կարողանում աթոռի վրա հանգիստ նստած մնալ։

— Եվ դու հիմա չե՞ս ամաչում, քույրս,— հարցրեց Ռասկոլնիկովը։

— Ամաչում եմ, Ռոդյա,— ասաց Դունյան։— Պյոտր Պետրովիչ, հեռացեք այստեղից,— դիմեց նա Լուժինին՝ գունատվելով բարկությունից։

Թվում է, որ Պյոտր Պետրովիչը այդպիսի վախճան բոլորովին չէր սպասում։ Նա մեծ հույս էր դրել իր վրա, իր ազդեցության վրա, իր զոհերի անճարակության վրա։ Հիմա էլ չհավատաց, որ բանը այդպես կվերջանա։ Նա սիրթնեց, շրթունքները ցնցվեցին։

— Ավդոտյա Ռոմանովնա, եթե ես ձեր այդ խոսքերից հետո դուրս ելնեմ այս դռնից, ապա նկատի ունեցեք, որ էլ երբեք չեմ վերադառնա։ Լավ մտածեցեք, իմ խոսքը հաստատ է։

— Այդ ի՞նչ լկտիություն է,— բղավեց Դունյան տեղից վեր կենալով,— ես չեմ էլ ուզում, որ դուք վերադառնաք։

— Ինչպե՞ս. ահա թե ի՞նչ,— գոռաց Լուժինը, որը մինչև վերջին ակնթարթը քոլորովին չէր հավատում այդպիսի վերջավորության, դրա համար էլ հիմա խպառ շփոթվել էր։ — Ահա թե ի՞նչ։ Բայց գիտե՞ք, Ավդոտյա Ռոմանովնա, որ ես կարող էի և բողոքել։

— Ի՞նչ իրավունք ունեք նրա հետ այդպես խոսելու,— տաքացած միջամտեց Պուլչերիա Ալեքսանդրովնան,— ինչի՞ համար կարող եք բողոքել, ի՞նչ իրավունքներ ունեք։ Մի՞թե ես Դունյային կոտամ ձեզ, այդ տեսակ մարդուն։ Հեռացեք, բոլորովին թողեք մեզ։ Մենք ինքներս ենք մեղավոր, որ սխալ գործ բռնեցինք, առաջին հերթին ես եմ մեղավոր...

— Սակայն, Պուլչերիա Ալեքսանդրովնա, դուք իմ ձեռքերը կապեցիք ձեր տված խոսքով, որից հիմա հրաժարվում եք,— տաքանում, կատաղում էր Լուժինը։— Եվ վերջապես... վերջապես, ես այդ պատճառով, այսպես ասած, ծախսերի տակ ընկա...

Այս վերջին հայտարարությունը այնքան բնորոշ էր Պյոտր Պետրովիչի համար, որ Ռասկոլնիկովը, բարկությունից ու իրեն զսպելու ջանքերից գունատված, էլ չհամբերեց և հանկարծ քա՛հ-քա՛հ ծիծաղեց։ Պուլչերիա Ալեքսանդրովնան զայրացավ։

— Ծախսե՞ր։ Ի՞նչ ծախսեր։ Հո սնդուկի մասին չե՞ք խոսում։ Բայց չէ՞ որ ուղեկցորդը դա ձրի էր բերել։ Տե՛ր աստված, մե՞նք կապեցինք ձեր ձեռքերը։ Ախր խելքի եկեք, Պյոտր Պետրովիչ, այդ դուք եք, որ կապեցիք մեր ձեռքերը, և ոչ թե մենք այդ կերպ վարվեցինք։

— Բավական է, մայրիկ, խնդրում եմ, բավական է,— ասաց Ավդոտյա Ռոմանովնան։— Պյոտր Պետրովիչ, բարի եղեք, հեռացեք։

— Կհեռանամ, բայց թույլ տվեք վերջին խոսքս ասեմ,— սլատասխանեց Լուժինը՝ ինքն իրեն համարյա բոլորովին կորցրած,— ձեր մայրիկը կարծես թե բոլորովին մոռացել է, որ ես որոշել էի ձեզ առնել այն ժամանակ, երբ քաղաքում և ամբողջ շրջակայքում ասեկոսներ էին տարածվել

ձեր անվան շուրջը։ Ձեզ համար անտեսելով հասարակական կարծիքը և վերականգնելով ձեր վարքը, ես, իհարկե, կարող էի միանգամայն և միանգամայն հատուցում հուսալ և նույնիսկ շնորհակալություն պահանջել ձեզնից... Եվ միայն այժմ բացվեցին իմ աչքերը. ինքս եմ տեսնում, որ գուցե միանգամայն և միանգամայն հապճեպորեն եմ վարվել՝ անտեսելով հասարակության ձայնը...

— Սա երկու գլխանի՞ է, ի՞նչ է,— բղավեց Ռազումիխինը՝ վեր թռչելով աթոռից և արդեն պատրաստվելով դատաստան տեսնելու։

— Դուք ստոր և չար մարդ եք,— ասաց Դունյան։

— Ոչ մի խոսք, ոչ մի շարժում,— գոչեց Ռասկոլնիկովը՝ պոպելով Ռազումիխինին. այնուհետև համարյա դեմ առ դեմ մոտեցավ Լուժինին.

— Բարեհաճեցեք դուրս քաշվել,— կամացուկ և կտրուկ ասաց նա,— ու այլևս ոչ մի խոսք, թե չէ...

Պյոտր Պետրովիչը կատաղությունից սփրթնած ու ծամբռված դեմքով մի քանի վայրկյան նայեց նրան, ապա շուռ եկավ, դուրս ելավ, և, իհարկե, հազիվ թե որևէ մեկը իր սրտում այնքան կատաղի ատելություն զգար մի ուրիշի հանդեպ, որքան զգում էր այդ մարդը Ռասկոլնիկովի նկատմամբ։ Լուժինը միայն և միայն նրան էր մեղադրում այդ ամենի համար։ Ուշագրավ է, որ արդեն իջնելով սանդուղքից, նա դեռ-էլի երևակայում էր, որ գործը թերևս դեռ բոլորովին տանուլ չի տրված, ու ինչ վերաբերում է միայն մորն ու աղջկան, ապա «միանգամայն և միանգամայն» հնարավոր է նույնիսկ հաշտվել նրանց հետ։

III

Գլխավորն այն էր, որ նա մինչև վերջին րոպեն այդպիսի վախճան ոչ մի կերպ չէր սպասում։ Նա հոխորտում էր մինչև վերջին սահմանը, նույնիսկ մտքովն էլ չանցկացնելով, որ երկու անպաշտպան կանայք կարող են դուրս գալ իր իշխանության տակից։ Այդ համոզմունքին շատ էին օգնում անափառությունը և այն աստիճանի ինքնավստահությունը, որն ավելի լավ է ինքնասիրահարվածություն անվանել։ Պյոտր

Պետրովիչը, որ դուրս էր եկել ողորմելի վիճակից ու մարդ դարձել, հիվանդագին սովորություն ուներ զմայլվել իրենով, բարձր էր գնահատում իր խելքը և ընդունակությունները ու երբեմն, մենության րոպեներին նայելով հայելուն, նույնիսկ զմայլվում էր իր դեմքով։ Բայց աշխարհում ամենից շատ նա թանկ էր գնահատում աշխատանքով ու ամեն տեսակ միջոցներով ձեռք բերած իր փողերը։ դրանք իրեն հավասարեցնում էին այն ամենի հետ, ինչ որ իրենից բարձր էր եղել։

Այժմ դառնությամբ հիշեցնելով Դունյային, որ չնայած վերջինիս վատ համբավին, ինքը որոշել էր առնել նրան, Պյոտր Պետրովիչը միանգամայն անկեղծորեն էր խոսում և նույնիսկ խորին գայրույթ էր զգում նրա այդ «սև ապիրատության» դեմ։ Այնինչ ուրելով Դունյային, նա բոլորովին համոզված էր այդ բոլոր բամբասանքների անհիմնության մեջ, բամբասանքներ, որոնք հրապարակավ հերքել էր ինքը Մարֆա Պետրովնան և որոնք մոռացել էր ամբողջ քաղաքը՝ ջերմորեն արդարացնելով Դունյային։ Պյոտր Պետրովիչը հիմա ինքն էլ չէր ժխտի, որ այն ժամանակ էլ գիտեր այդ բոլորը։ Եվ այնուամենայնիվ նա բարձր էր գնահատում իր վճռականությունը՝ Դունյային բարձրացնել մինչև իր մակարդակը, և դա սխրագործություն էր համարում։ Հիմա այդ բանը ասելով Դունյային, նա արտահայտում էր իր փայփայած գաղտնի միտքը, որով ինքը հաճախ զմայլվում էր և չէր կարողանում հասկանալ, թե ուրիշները ինչպես կարող էին չհիանալ իր սխրագործությամբ։ Օր առաջ այցելելով Ռասկոլնիկովին, նա նեղս է մտել բարեբարի զգացումով, պատրաստ լինելով պտուղներ քաղել և խիստ հաճելի կոմպլիմենտներ լսել։ Եվ իհարկե, այժմ, իջնելով սանդուղքից, նա իրեն վերին աստիճանի վիրավորված և չճանաչված էր համարում։

Դունյան շատ և շատ էր հարկավոր նրան. Դունյայից հրաժարվելը անհնարակայելի էր նրա համար։ Արդեն վաղուց, արդեն մի քանի տարի նա խանդաղատանքով երազում էր ամուսնանալու մասին, շարունակ փող էր կուտակում և սպասում։ Նա խանդավառությամբ, իբրև խոշորագույն գաղտնիք, մտածում էր այնպիսի աղջկա մասին, որը լիներ բարեկիրթ և աղքատ (անպայման աղքատ), շատ ջահել, շատ սիրունիկ,

ազնիվ ու կրթված, շատ երկչոտ, չափազանց շատ դժբախտություններ տեսած և իր առջև միանգամայն խոնարհվող, այնպիսին, որը իր ամբողջ կյանքում նրան համարեր իր փրկությունը, խորապես հարգեր նրան, ենթարկվեր նրան, հիանար նրանով և միայն նրանով։ Անդորրության մեջ հանդիստանալով գործերից, նա քանի՞-քանի տեսարաններ, քանի՞-քանի գայթակղիչ ու հաճելի էպիզոդներ էր պատկերացնում իր երևակայության մեջ։ Եվ ահա այդքան տարիների երազանքը համարյա արդեն իրականանում էր. Ավդոտյա Ռոմանովնայի գեղեցկությունը և կրթությունը ապշեցրել էին նրան. այդ աղջկա անօգնական վիճակը ծայրահեղության չափ գրավիչ էր նրա համար։ Այստեղ նույնիսկ ավելի շատ բան կար, քան երազել էր նա. աղջիկը սիգապանծ էր, ուժեղ կամքի տեր, շնորհալի, դաստիարակությամբ և զարգացմամբ նրանից բարձր (նա այդ զգում էր), և այդպիսի մի էակ իր ամբողջ կյանքում ստրկաբար շնորհակալ կլինի նրա սիրագործության համար ու երկյուղածությամբ կխոնարհվի նրա առաջ. իսկ նա, Պյոտր Պետրովիչը, անսահմանորեն ու անվերապահորեն իշխելու է նրա վրա... Եվ միանգամայն պատեհ առիթին էր, որ Պյոտր Պետրովիչը այդ ժամանակներում, երկար կշռադատումներից ու ակնկալություններից հետո, վերջապես որոշել էր փոխել իր կարիերան ու թևակոխել գործունեության ավելի լայն շրջան ու դրա հետ մեկտեղ հետզհետե մտնել ավելի բարձր հասարակության մեջ, որի մասին նա արդեն վաղուց էր կրքոտությամբ երազում... Մի խոսքով, նա որոշել էր փորձել Պետերբուրգը։ Նա գիտեր, որ կանանց միջոցով կարելի է «միանգամայն և միանգամայն» շատ բան շահել։ Սիրունատես, շնորհալի և կրթված կնոջ հմայքը կարող էր սքանչելիորեն դեղազարդել նրա ճանապարհը, մարդկանց դեպի իրեն գրավել, լուսապսակ ստեղծել... և ահա ամեն ինչ խորտակվեց։ Հիմա այդ հանկարծակի, աչքանդակ պառակտումը կայծակի պես պայթեց նրա գլխին։ Այդ մի ինչ-որ այլանդակ կատակ էր, անհեթեթություն։ Նա միայն մի քիչ էր զոռոզացել. նա նույնիսկ չկարողացավ լիովին արտահայտվել. նա ուղղակի ֆատակեց, տարվեց դրանով, իսկ բանը այդպես լուրջ վերջացավ։ Վերջապես, նա հո նույնիսկ լուրովի սիրում էր Դուն-

յային, իր երազանքներում իշխում էր նրա վրա, ու հանկարծ... Ոչ, վաղը, հենց վաղը պետք է վերականգնել այդ ամենը, բուժել, ուղղել, և որ գլխավորն է, ոչնչացնել այդ համբակ, ամբարտավան տղային, որը այդ ամենի պատճառն էր։ Պյոտր Պետրովիչը մի տեսակ ակամայից, հիվանդագին զգացումով էր մտաբերում Ռազումիխինին... սակայն, այդ կողմից նա շուտով հանգստացավ։ «Այդ էր պակաս, որ նրանից էլ վտանգ սպասեիր։ Բայց եթե կար մեկը, որից նա լրջորեն վախենում էր, դա Սվիդրիգայլովն էր... Մի խոսքով, շատ գլխացավանք էր լինելու...

. . . . . .

— Ոչ, բոլորիցդ շատ ես եմ մեղավոր,— ասում էր Դունեչկան՝ գրկելով ու համբուրելով մորը,— ես հրապուրվեցի նրա փողերով, բայց, եղբայրս, երդվում եմ, ես չէի էլ երևակայում, թե նա այդպիսի անարժան մարդ է։ Եթե ես առաջ նրան լավ ճանաչեի, ոչ մի դեպքում չէի հրապուրվի։ Եղբայրս, մի մեղադրի ինձ։

— Աստված ազատեց, աստված ազատեց,— փնթփնթում էր Պուլչերիա Ալեքսանդրովնան, բայց մի տեսակ անգիտակցորեն, կարծես դեռ այնքան էլ չհասկանալով այն ամենը, ինչ որ պատահել էր։

Բոլորն էլ ուրախացել էին, հինգ րոպե հետո նույնիսկ ծիծաղում էին։ Միայն երբեմն Դունեչկան, հիշելով պատահածը, դունատվում էր ու կիտում հոնքերը։ Պուլչերիա Ալեքսանդրովնան երևակայել անգամ չէր կարող, որ ինքն էլ է ուրախանալու. Լուժինի հետ գժտվելը դեռ առավոտյան նրան սարսափելի էր թվում։ Ռազումիխինը ցնծության մեջ էր։ Նա դեռ չէր համարձակվում դա լիովին արտահայտել, բայց ամբողջ մարմնով դողում էր ասես տենդից, կարծես նրա սրտից հինգ փթանոց մի քար էր ընկել։ Այժմ նա իրավունք ունի նրանց նվիրել իր ամբողջ կյանքը, ծառայել նրանց... Եվ ի՞նչ ասես, որ այժմ չի լինելու։ Սակայն նա դեռ երկչոտությամբ վանում էր հետագա մտքերը և վախենում էր իր երևակայությունից։ Միայն Ռասկոլնիկովը նույն տեղում նստած, համարյա մռայլ էր և նույնիսկ մտացրիվ։ Նա, որ բոլորից ավելի շատ էր պահանջում Լուժինի հեռացումը, կարծես, հիմա բոլորից ավելի քիչ էր հետաքրքրվում պա-

տահածով։ Դունյան ակամա մտածեց, որ նա դեռ էլի բարկանում է իր վրա, իսկ Պուլլիսերիա Ալեքսանդրովնան վախենալով էր նայում որդուն։

— Քեզ ի՞նչ ասաց Սվիդրիգայլովը,— հարցրեց Դունյան՝ մոտենալով Ռասկոլնիկովին։

— Ախ, հա՛-ա,— գոչեց Պուլլիսերիա Ալեքսանդրովնան։

Ռասկոլնիկովը բարձրացրեց գլուխը։

— Նա ուզում է անպայման քեզ նվիրել տասը հազար ռուբլի և ցանկություն է հայտնում մի անգամ քեզ տեսնել իմ ներկայությամբ։

— Տեսնե՞լ, ոչ մի դեպքում,— բացականչեց Պուլլիսերիա Ալեքսանդրովնան,— և ինչպե՞ս է նա համարձակվում Դունեչկային փող առաջարկել։

Այնուհետև Ռասկոլնիկովը հաղորդեց (բավական սառն տոնով) իր խոսակցությունը Սվիդրիգայլովի հետ՝ բաց թողնելով Մարֆա Պետրովնայի ուրվականը, որպեսզի խուսափեր ավելորդ նյութից, ու դգալով զզվանք ամեն մի խոսակցության նկատմամբ, բացի այն, ինչ որ առավելապես անհրաժեշտ էր։

— Դու նրան ի՞նչ պատասխանեցիր,— հարցրեց Դունյան։

— Սկզբում ասացի, որ քեզ ոչինչ չեմ հաղորդի։ Նա հայտարարեց, թե ինքը ամեն կերպ կձգտի տեսնվել քեզ հետ։ Նա հավատացնում էր, որ քո նկատմամբ իր սերը քմահաճույք է եղել, և ինքը հիմա դեպի քեզ ոչ մի զգացմունք չի տածում... Նա չի ուզում, որ դու ամուսնանաս Լուժինի հետ... Ընդհանրապես նա կցկտուր էր խոսում։

— Դու ի՞նչպես ես նրան հասկանում, Ռոդյա, նա քեզ ի՞նչպես թվաց։

— Խոստովանում եմ, որ լավ չեմ հասկանում։ Առաջարկում է տասը հազար ու ինքն էլ ասում է, որ հարուստ չէ։ Հայտարարում է, թե ուզում է մեկնել ինչ-որ տեղ, ու տասը րոպե հետո մոռանում է, որ խոսել է այդ մասին։ Հանկարծ նաև ասում է, թե ուզում է ամուսնանալ և արդեն իրեն համար հարսնացու են ուզում... Իհարկե, նա նպատակներ ունի, ամենայն հավանականությամբ վատ նպատակներ։ Բայց տարօրինակ կլինի ենթադրել, որ նա այդպես հիմարաբար

ձեռնամուխ լինի գործին, եթե քո նկատմամբ վատ նպատակներ ունենա... Ես, իհարկե, քո փոխարեն առաջիկա հրաժարվեցի այդ փողից։ Առհասարակ նա ինձ խիստ տարօրինակ թվաց և կարծես թե... նույնիսկ... խելագարության նշաններ էին նկատվում։ Բայց ես կարող էի սխալվել. գուցե այստեղ յուրատեսակ խաբեբայություն կար։ Թվում է, որ Մարֆա Պետրովնայի մահը ազդել է նրա վրա։

— Աստված ողորմի Մարֆա Պետրովնայի հոգուն,— բացականչեց Պուլլխերիա Ալեքսանդրովնան,— միշտ, միշտ նրա համար աղոթելու եմ աստծուն։ Դունյա, առանց այդ երեք հազարի հիմա ի՞նչ կլիներ մեր վիճակը։ Տեր աստված, կարծես դա երկնքից ընկավ։ Ախ, Ռոդյա, առավոտյան մեզ մոտ ընդամենը երեք ռուբլի էր մնացել, ես ու Դունեչկան հույս էինք դրել ժամացույցը որևէ տեղ շուտով գրավ դնելու վրա, որպեսզի փող չուզեինք այդ մարդուց, մինչև որ ինքը գլխի ընկներ և տար։

Սվիդրիգայլովի առաջարկը չափազանց զարմացրել էր Դունյային։ Նա դեռ կանգնած էր մտազբաղ։

— Սվիդրիգայլովը ինչ-որ սարսափելի մտադրություն ունի,— ասաց նա համարյա շշնջալով, գրեթե ցնցվելով։

Ռասկոլնիկովը նկատեց այդ թունդ վախը։

— Թվում է, որ ես դեռ էլի պետք է տեսնեմ նրան,— ասաց նա Դունյային։

— Կհետամտենք, ես կգտնեմ նրա տեղը,— կտրուկ բացականչեց Ռազումիխինը։— Աչքիցս չեմ փախցնի։ Ինձ Ռոդյան է թույլ տվել։ Նա ինձ այսօր ասաց՝ «պաշտպանիր քրոջը»։ Իսկ դուք այդ թույլ կտա՞ք, Ավդոտյա Ռոմանովնա։

Դունյան ժպտաց ու ձեռքը մեկնեց Ռազումիխինին, բայց դեմքը դեռ մտահոգություն էր արտահայտում։ Պուլլխերիա Ալեքսանդրովնան երկչոտ նայում էր աղջկան. սակայն երեք հազարը ըստ երևույթին հանգստացրել էր նրան։

Քառորդ ժամից բոլորն էլ աշխույժ զրուցում էին։ Ռասկոլնիկովը թեև չէր խոսում, բայց որոշ ժամանակ ուշադրությամբ լսում էր։ Ռազումիխինը ճառաբանում էր։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք մեկնեք,— ցնծությամբ պերճախոսում էր նա,— ի՞նչ պիտի անեք փոքրիկ քաղաքում։ Գլխավորն այն է, որ դուք այստեղ բոլորդ միասին եք և միմյանց

հարկավոր եք, շատ եք հարկավոր, հասկացեք ինձ։ Թեկուզև կարճ ժամանակով... Ինձ վերցրեք իբրև բարեկամ և ընկերակից, ու հավատացնում եմ, որ հիանալի գործ կձեռնարկենք։ Լսեցեք, ես ձեզ մանրամասն կբացատրեմ ամեն ինչ, ամբողջ նախագիծը։ Առավոտյան, երբ դեռ ոչինչ չէր պատահել, դա ծագեց գլխումս... Ահա թե ինչումն է բանը. ես հորեղբայր ունեմ (ձեզ կծանոթացնեմ, մեղմաբարո և հարգարժան մարդ է), նա հազար ռուբլու կապիտալ ունի, իսկ ինքը կենսաթոշակով է ապրում և դրա կարիքը չունի։ Երկրորդ տարին է, որ նա ինձ համոզում է վերցնել այդ հազարը, իսկ ես նրան վեց տոկոս վճարեմ։ Ես տեսնում եմ, որ նա ուզղակի ուզում է օգնել ինձ. անցյալ տարի այդ ինձ հարկավոր չէր, իսկ այս տարի ես սպասում էի նրան ու որոշել էի վերցնել։ Հետո էլ դուք կտաք ձեր երեք հազարից մեկ հազարը, և ահա սկզբում դա բավական կլինի, ու մենք կմիանանք։ Ի՞նչ ենք անելու։

Ռազումիխինը սկսեց մեկնաբանել իր նախագիծը ու երկար բացատրել, որ համարյա մեր բոլոր գրավաճառները և հրատարակիչները քիչ բան են հասկանում իրենց ապրանքից, դրա համար էլ սովորաբար վատ հրատարակիչներ են, այնինչ կարգին հրատարակությունները առհասարակ ծածկում են ծախքերը ու նույնիսկ երբեմն զգալի տոկոս են տալիս։ Ռազումիխինը հենց հրատարակչական գործունեության մասին էր երազում, արդեն երկու տարի էր, որ աշխատում էր այդ ուղղությամբ ու բավականաչափ գիտեր եվրոպական երեք լեզու, թեև վեց օր առաջ Ռասկոլնիկովին ասել էր, թե գերմաներենից «կաղում է», ուզում էր համոզել Ռասկոլնիկովին, որ սա վերցնի թարգմանական աշխատանքի կեսը ու երեք ռուբլի գրավական. այն ժամանակ նա ստում էր, և Ռասկոլնիկովը գիտեր, որ նա ստում է։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ մենք աչքաթող անենք մեր ունեցած հընարավորությունը, երբ ունենք ամենագլխավոր միջոցներից մեկը, այսինքն՝ փող,— ոգևորվում էր Ռազումիխինը— Իհարկե, շատ աշխատանք է հարկավոր, բայց դուք, Ավդոտյա Ռոմանովնա, ես, Ռոդիոնը, բոլորս էլ կաշխատենք... Որոշ հրատարակություններ այժմ հիանալի տոկոս են տալիս։ Գործի գլխավոր հիմքը այն է, որ կգիտենանք, թե հատկապես ինչ պետք է թարգմանել։ Թե՞ կթարգմանենք, թե՞ կհրատա-

բակենք ու միևնույն ժամանակ կսովորենք։ Հիմա ես կարող եմ օգտակար լինել, որովհետև փորձ ունեմ։ Ահա արդեն երկու տարի է, որ ես հրատարակիչների մոտ եմ լինում և գիտեմ նրանց բոլոր գաղտնիքները, հավատացեք, նրանք հասարակ գործ չեն անում։ Ինչո՞ւ, ինչո՞ւ անտեսել համեղ պատառը։ Ես գիտեմ ու գաղտնի եմ պահում։ Երկու-երեք այնպիսի երկեր, որոնք թարգմանելու և հրատարակելու համար կարելի է վաստակել հարյուր ռուբլի, իսկ դրանցից մեկի համար ես հինգ հարյուր էլ չեմ վերցնի։ Եվ ի՞նչ եք կարծում, եթե ես այս բանը հաղորդեմ մեկ ուրիշին, կարող է և կասկած հայտնել։ Ինչ վերաբերում է տպարանին, թղթին, վաճառքին, այդ ինձ հանձնարարեք։ Բոլոր գործերը գիտեմ։ Քչից կսկսենք, շատ բանի կհասնենք, գոնե ապրելու միջոց կլինի, համենայն դեպս կվերադարձնենք մեր դրած փողը։

Դունյայի աչքերը փայլեցին։

— Ինչ որ դուք ասում եք, ինձ շատ է դուր գալիս, Դմիտրի Պրոկոֆիչ,— ասաց նա։

— Ես, իհարկե, դրանից ոչինչ չեմ հասկանում,— ասաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։— Գուցե և դա լավ գործ է, բայց դե ինչ իմանաս, աստված գիտե։ Նոր բան է, անհայտ է։ Իհարկե, անհրաժեշտ է, որ մենք մնանք այստեղ, թեկուզև կարճ ժամանակով...

Նա նայեց Ռոդյային։

— Դու ի՞նչ ես կարծում, եղբայրս,— հարցրեց Դունյան։

— Ես կարծում եմ, որ սա շատ լավ բան է մտածել,— պատասխանեց Ռոդյան։— Հասկանալի է, որ չպետք է նախօրոք երազել ձեռնարկությունն ունենալու մասին, բայց իրոք կարելի է անկասկածելի հաջողությամբ մի հինգ-վեց գիրք հրատարակել։ Ես ինքս էլ գիտեմ մի երկ, որը անպայման կվաճառվի։ Իսկ ինչ վերաբերում է այն խնդրին, որ Ռազումիխինը կարող է գլուխ բերել գործը, այդ մասին կասկած չի կարող լինել. նա գիտե այդ գործը... Սակայն մենք դեռ ժամանակ կունենանք համաձայնության գալու...

— Ուռա՛,— բացականչեց Ռազումիխինը,— հիմա լսեք, այստեղ, հենց այս տանը կա մի բնակարան, որը պատկանում է նույն տանտիրոջը։ Բնակարանը առանձին է, այս համարների հետ կապված չէ, կահավորված է, երեք սենյակից

է, գինը մատչելի է։ Առայժմ վերցրեք այդ բնակարանը։ Վաղը ես գրավ կդնեմ ժամացույցը ու կբերեմ փողը, հետո էլ ամեն ինչ կկարգավորվի։ Գլխավորն այն է, որ երեքդ էլ կարող եք միասին ապրել, Ռոդյան ձեզ հետ կլինի... Հ՛ը, ո՞ւր ես գնում, Ռոդյա։

— Ո՞նց թե, Ռոդյա, դու արդեն գնո՞ւմ ես,— նույնիսկ վախեցած հարցրեց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

— Այն էլ այսպիսի բոպե՞ին,— գոչեց Ռազումիխինը։

Դունյան անվստահություն արտահայտող զարմանքով էր նայում եղբորը։ Ռասկոլնիկովը վերցրել էր գլխարկը. նա պատրաստվում էր գնալ։

— Դուք կարծես թե թաղում եք ինձ կամ առմիշտ հրաժեշտ եք տալիս,— ինչ-որ տարօրինակությամբ ասաց նա։

Նա կարծես թե ժպտաց, բայց դա կարծես ժպիտ չէր։

— Դե ո՛վ գիտե, գուցե և վերջին անգամ ենք տեսնվում,— անղգուշարար ավելացրեց նա։

Նա այդ միայն մտածել էր, սակայն բառերը ինքնաբերաբար դուրս թռան իր բերանից։

— Ի՞նչ պատահեց քեզ,— գոչեց մայրը։

— Ո՞ւր ես գնում, Ռոդյա,— տարօրինակ տոնով հարցրեց Դունյան։

— Այնպես, էլի, շատ է հարկավոր գնալ,— անորոշ պատասխանեց Ռասկոլնիկովը՝ կարծես չգիտենալով, թե ինչ էր ուզում ասել։ Բայց նրա գունատ դեմքը ինչ-որ խիստ վճռականություն էր արտահայտում։

— Ես ուզում էի ասել... գալով այստեղ... ես ուզում էի ասել ձեզ, մայրիկ... քեզ էլ ասել, Դունյա, որ ավելի լավ կլիներ առժամանակ մենք բաժանվեինք։ Ես ինձ լավ չեմ զգում, ես անհանգիստ եմ... Ես հետո կգամ, ինքս կգամ, երբ... կարելի լինի։ Ես ձեզ հիշում եմ և սիրում... Թողեք ինձ, թողեք ինձ մենակ. դեռ առաջ էլ ես այսպես էի որոշել... Ես այդ հաստատ էի որոշել... Ինչ էլ որ ինձ պատահի, մեռնեմ, թե ոչ, ուզում եմ մենակ լինել։ Բոլորովին մոռացեք ինձ։ Դա ավելի լավ է... Իմ մասին մի՛ տեղեկացեք։ Երբ հարկավոր լինի, ես ինքս կգամ, կամ... կկանչեմ ձեզ։ Գուցե ամեն ինչ հարություն առնի... Իսկ հիմա, եթե սիրում

եք ինձ, հրաժարվեցեք ինձնից... Այլապես ես ձեզ կատեմ, ես այդ զգում եմ... Մնաք բարով։

— Տեր աստված,— ճչաց Պուլխերիա Ալեքսանդրովնան։

Թե մայրը և թե քույրը սարսափելի վախեցած էին. Ռազումիխինը նույնպես։

— Ռոդյա, Ռոդյա, հաշտվիր մեզ հետ, լինենք առաջվա պես,— բացականչեց խեղճ մայրը։

Ռասկոլնիկովը դանդաղ շուռ եկավ և դանդաղ քայլեց դեպի դուռը։ Դունյան հասավ նրա ետևից։

— Եղբայրս, այդ ի՞նչպես ես վարվում մորդ հետ,— շշնջաց նա, ու նրա աչքերում առկայծում էր դայրույթը։

Ռասկոլնիկովը ծանր նայեց նրան։

— Ոչինչ, ես կգամ, ես կգամ,— կամացուկ փնթփնթաց նա, ասես այնքան էլ չգիտակցելով, թե ինչ է ուզում ասել, ու սենյակից դուրս ելավ։

— Անզգա՜, չարասի՜րտ եսամոլ,— ճչաց Դունյան։

— Նա խե-լա-գար է և ոչ թե անզգա։ Նա խելացնոր է, մի՞թե դուք այդ չեք տեսնում։ Որ այդպես է, դուք եք անզգա...— ջերմորեն շշնջաց Ռազումիխինը Դունյայի ականջին՝ պինդ սեղմելով նրա ձեռքը։

— Ես հիմա կգամ,— գոչեց նա՝ դիմելով սարսափահար Պուլխերիա Ալեքսանդրովնային, ու սենյակից դուրս թռավ։

Ռասկոլնիկովը նրան սպասում էր միջանցքի ծայրում։

— Ես այդպես էլ գիտեի, որ դու կվազես իմ ետևից,— ասաց նա։— Վերադարձիր նրանց մոտ ու եղիր նրանց հետ... Վաղն էլ... միշտ էլ եղիր նրանց մոտ։ Ես... գուցե գամ... եթե կարելի լինի։ Մնաս բարով։

Եվ նա առանց ձեռք տալու գնաց։

— Ախր ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, ի՞նչ է պատահել քեզ։ Մի՞թե կարելի է այդպես վարվել...— քրթմնջում էր բոլորովին շփոթված Ռազումիխինը։

Ռասկոլնիկովը մի անգամ էլ կանգ առավ։

— Մի անգամ և առմիշտ ասում եմ քեզ՝ երբեք և ոչ մի բանի մասին ինձ մի հարցնի։ Ես քեզ պատասխանելու ոչինչ չունեմ... Ինձ մոտ մի գա։ Գուցե և ես գամ այստեղ... Թող ինձ, իսկ նրանց մի թող։ Հասկանո՞ւմ ես ինձ։

Միջանցքում մութն էր. նրանք կանգնած էին՝ լամպի մոտ։ Մի բոպե լուռ նայում էին միմյանց։ Ռազումիխինը իր ամբողջ հետագա կյանքում հիշում էր այդ բոպեն։ Ռասկոլնիկովի առկայծող ու սևեռուն հայացքը կարծես յուրաքանչյուր ակնթարթ է՛լ ավելի էր փայլում, թափանցում նրա հոգու և գիտակցության մեջ։ Հանկարծ Ռազումիխինը ցնցվեց։ Կարծես մի ինչ-որ տարօրինակ բան հայտնվեց նրանց միջև... երևան եկավ մի ինչ-որ միտք, կարծես ակնարկ, ինչ-որ զարհուրելի, այլանդակ բան, որ հանկարծ երկուսն էլ հասկացան... Ռազումիխինը գունատվեց մեռելի նման։

— Հիմա հասկանո՞ւմ ես,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը, և նրա դեմքը հիվանդագին ծռմռվեց...— Վերադարձիր, գնա նրանց մոտ,— հանկարծ ավելացրեց նա ու արագ շուռ գալով, դուրս ելավ տանից...

Հիմա չեմ նկարագրի, թե այդ երեկո ինչ կատարվեց Պուլլխերիա Ալեքսանդրովնայի հետ, ինչպես Ռազումիխինը վերադարձավ նրանց մոտ, ինչպես էր հանգստացնում նրանց, ինչպես էր պնդում, թե հարկավոր է Ռոդյային հանկիստ թողնել հիվանդության ժամանակ, երդվում, թե Ռոդյան անպայման կգա, ամեն օր կգա, թե նա շատ, շատ է վրդովված, հարկավոր չէ նրան զգայնացնել. ասում էր, որ ինքը՝ Ռազումիխինը, կհետևի նրան, լավ, լավագույն բժիշկ, մի ամբողջ կոնսիլիում կհրավիրի նրա համար... Մի խոսքով, այդ երեկոյից Ռազումիխինը Պուլլխերիա Ալեքսանդրովնայի որդին և Դունյայի եղբայրը դարձավ։

IV

Ռասկոլնիկովը գնաց ջրանցքի ափին գտնվող մի տուն, որտեղ ապրում էր Սոնյան։ Տունը երեք հարկանի էր, հին, և կանաչ գույն ուներ։ Ռասկոլնիկովը գտավ դռնապանին և նրանից անորոշ ցուցումներ ստացավ, թե որտեղ է ապրում դերձակ Կապերնաումովը։ Բակի մի անկյունում գտնելով նեղլիկ ու խավար սանդուղքի մուտքը, նա, վերջապես, բարձրացավ երկրորդ հարկ ու մտավ բակի կողմի մի սրահ։ Մինչդեռ նա շրջում էր խավարում և տարակուսանքով փնտրում Կապերնաումովի բնակարանի մուտքը, հանկարծ

Նրանից մի երեք քայլ հեռավորությամբ ինչ-որ դուռ բաց-վեց. Նա մեքենայաբար կառչեց այդ դռանը։

— Ո՞վ է,— անհանգիստ հարցրեց կանացի մի ձայն։

— Ես եմ... ձեզ մոտ եմ եկել,— պատասխանեց Ռասկոլնիկովը ու մտավ փոքրիկ նախասենյակը։ Այստեղ, խարխլված աթոռի վրա, պղնձե ծռմռված ծռմռակալով մոմ էր դրված։

— Այդ դո՞ւք եք, օ, տեր Ճաստված,— թույլ գոչեց Սոնյան և տեղնուտեղը քարացավ։

— Ինձ մո՞տ, ո՞ւր, այստե՞ղ։

Ու Ռասկոլնիկովը աշխատելով չնայել նրան, շուտով անցավ սենյակ։

Մի րոպե հետո մոմը ձեռքին ներս մտավ նաև Սոնյան, մոմը դրեց սեղանին ու կանգնեց նրա առջև, բոլորովին շփոթված, անասելի հուզված և ըստ երևույթին նրա անսպասելի այցելությունից վախեցած։ Հանկարծ նրա գունատ դեմքը շիկնեց, աչքերում նույնիսկ արցունքներ երևացին... Այդ ամենը նրա համար և՛ ծանր էր, և՛ ամոթալի, և՛ քաղցը... Ռասկոլնիկովը արագ շուռ եկավ, նստեց սեղանի մոտ դրված աթոռին։ Նա հարևանցիորեն դիտեց սենյակը։

Այդ մի մեծ, բայց չափազանց ցածրիկ սենյակ էր, միակ սենյակը, որ Կամպերնաումովները վարձով էին տալիս։ Ձախ կողմում գտնվում էր նրանց բնակարանը տանող, փակված դուռը։ Աջ կողմում կար նաև մի ուրիշ, միշտ էլ պինդ փակված դուռ։ Դրա հետևում ուրիշ, հարևան բնակարանն էր, ուրիշ համարով։ Սոնյայի սենյակը կարծես մարագ լիներ, խիստ անկանոն քառանկյունի էր հիշեցնում, և դա սենյակին ինչ-որ այլանդակ տեսք էր տալիս։ Ջրանցքի կողմի պատը, որ երեք լուսամուտ ուներ, կառուցված էր շեղակի ուղղությամբ, և այս պատճառով սենյակի մի անկյունը, որ շատ սուր էր, գտնվում էր դրա խորքում, այնպես որ թույլ լուսավորության դեպքում նույնիսկ պարզ չէր երևում. մյուս անկյունը այլանդակության չափ բութ էր։ Այդ մեծ սենյակում համարյա թե բոլորովին կահույք չկար։ Անկյունում, աջ կողմում գտնվում էր մահճակալը. կողքին, դռան մոտ՝ աթոռ։ Նույն պատի տակ, ուր մահճակալն էր, ուրիշի բնակարանը տանող դռան մոտ դրված էր տախտա-

կե մի հասարակ սեղան, կապույտ սփռոցով ծածկված. սեղանի մոտ՝ երկու գործած աթոռ։ Այնուհետև, հակադիր պատի տակ, սուր անկյանը մոտիկ դրված էր հասարակ փայտից շինած մի փոքրիկ կոմոդ, որը ասես կորել էր դատարկության մեջ։ Ահա այն ամենը, որ կար սենյակում։ Դեղնավուն, մաշված ու ճղճղված պաստառները սևացել էին բոլոր անկյուններում. երևի ձմռանը այստեղ խոնավություն և ածխահոտ էր լինում։ Աղքատությունը ակներև էր. նույնիսկ մահճակալն էլ վարագուրված չէր։

Սոնյան լուռ նայում էր իր հյուրին, որը ուշադրությամբ և առանց քաշվելու դիտում էր նրա սենյակը։ Սոնյան, վերջապես, սկսեց նույնիսկ դողալ վախից, կարծես կանգնած էր դատավորի և իր բախտը տնօրինողի առաջ։

— Ես ուշ եկա... ժամը տասնմեկը կլինի՞,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ դեռ էլի չնայելով նրան։

— Կլինի,— քրթմնջաց Սոնյան։ — Ախ՛, հա՛, կլինի,— հանկարծ հապճեպորեն ավելացրեց նա, կարծես թե դրանումն էր ամբողջ ելքը,— քիչ առաջ խփեց տանտերերի ժամացույցը... Ես ինքս լսեցի... Կլինի։

— Ես ձեզ մոտ եկել եմ վերջին անգամ,— նոթոտ շարունակեց Ռասկոլնիկովը, թեև հիմա էլ առաջին անգամ էր եկել,— ես գուցե ձեզ էլ չտեսնեմ...

— Դուք... մեկնո՞ւմ եք։

— Չգիտեմ... վաղը կպարզվի...

— Ուրեմն դուք վաղը չե՞ք լինի Կատերինա Իվանովնայի մոտ,— Սոնյայի ձայնը դողաց։

— Չգիտեմ։ Ամեն ինչ վաղը առավոտյան... բանը այդ չէ. ես եկել եմ մի խոսք ասելու...

Նա մտախոհ նայեց Սոնյային ու հանկարծ նկատեց, որ ինքը նստած է, իսկ Սոնյան կանգնել է իր առջև։

— Ինչո՞ւ եք կանգնել, նստեցեք,— հանկարծ ասաց նա փոխված, մեղմ ու փաղաքուշ ձայնով։

Սոնյան նստեց։ Ռասկոլնիկովը մի բոպեի չափ սիրալիր և համարյա կարեկցաբար նայեց նրան։

— Որքա՞ն նիհար եք դուք. այգքան էլ վտիտ ձե՞ռք. բոլորովին թափանցիկ է։ Մատներդ կարծես մեռելի մատներ լիններ։

Ռասկոլնիկովը վերցրեց Սոնյայի ձեռքը։ Սոնյան թույլ ժպտաց։

— Ես միշտ էլ այսպես եմ եղել,— ասաց նա։

— Ձեր տանն է՞լ այդպես էիք։

— Այո։

— Դե իհարկե,— կտրուկ ասաց Ռասկոլնիկովը, ու հանկարծ դեմքի արտահայտությունը և ձայնի հնչյունը դարձյալ փոխվեցին։ Նա մի անգամ էլ նայեց շուրջը։

— Այս սենյակը դուք Կապերնաումովի՞ց եք վարձել։

— Այո։

— Նրանք այնտե՞ղ են, դուռն ետևո՞ւմ։

— Այո... Նրանք էլ այսպիսի մի սենյակում են ապրում։

— Բոլորը մի սենյակո՞ւմ։

— Մի սենյակում։

— Եթե ես ձեր սենյակում ապրեի, դիշերները կվախենայի,— մռայլ ասաց Ռասկոլնիկովը։

— Տանտերերը շատ լավն են, շատ սիրալիր,— պատասխանեց կարծես դեռ ուշքի չեկած և տարակուսանքը չփարատած Սոնյան,— այս ամբողջ կահույքը և ամեն ինչ... տանտիրոջն է։ Նրանք շատ բարի են, երեխաները հաճախ ինձ մոտ են գալիս...

— Այդ թլվատնե՞րը։

— Այո... Տանտերը կակազում է ու կաղ է։ Կինն էլ... ոչ թե կակազում է, այլ կարծես խոսքերը պարզ չի արտասանում։ Նա շատ բարի է։ Տանտերը կալվածատիրոջ նախկին սպասավոր է։ Յոթ երեխա ունեն... միայն մեծն է կակազում, իսկ մյուսները ուղղակի հիվանդ են, չեն կակազում ... Իսկ դուք նրանց մասին ո՞րտեղից եք տեղեկացել,— մի փոքր զարմացած ավելացրեց Սոնյան։

— Ամեն ինչ ձեր հայրն էր ինձ պատմել։ Ձեր մասին էլ էր մանրամասն պատմել... Նա պատմել էր, թե ինչպես դուք ժամը վեցին գնացել էիք տանից ու իններին վերադարձել, թե ինչպես Կատերինա Իվանովնան ծունկ էր չոքել ձեր անկողնու մոտ։

Սոնյան շփոթվեց։

— Ես նրան կարծես այսօր տեսա,— անվճռականորեն շշնջաց նա։

— Ո՞ւմ։

— Հորս։ Կլիներ ժամը տասը, քայլում էի փողոցով ու մեկ էլ տեսնեմ նա կարծես գնում է իմ առջևից։ Իրոք, կարծես թե նա էր։ Ես ուզում էի անցնել Կատերինա Իվանովնայի մոտ...

— Դուք մա՞ն էիք դալիս։

— Այո,— կտրուկ շշնջաց Սոնյան՝ դարձյալ շփոթվելով ու կիտելով հոնքերը։

— Կատերինա Իվանովնան ձեզ հո չէ՞ր ծեծում հորդ մոտ։

— Օ, ոչ, ոչ, ի՞նչ եք ասում,— Սոնյան նույնիսկ ինչ-որ վախով նայեց Ռասկոլնիկովին։

— Դուք սիրո՞ւմ եք նրան։

— Նրա՞ն, ինչպե՛ս չէ, է՛,— տխուր ձայնով ծոր տվեց Սոնյան՝ հանկարծ տանջալից ծալելով ձեռքերը։— Ախ, եթե դուք... ճանաչեի՞ք նրան։ Նա հո բոլորովին երեխա է... Վշտից ուղղակի թոցրել է խելքը... Իսկ առաջ որքա՞ն խելացի էր նա, որքա՞ն մեծահոգի... որքա՞ն բարի։ Ա՜խ... դուք ոչինչ, ոչինչ չգիտեք։

Սոնյան այդ ասաց կարծես հուսալքված, հուզվելով ու տանջվելով, մորմոքալով։ Նրա դունատ այտերը կարծես շիկնեցին, աչքերում սառապանք արտահայտվեց։ Երևում էր, որ նրան սարսափելի շատ էին հուզել, որ նա շատ էր ուզում ինչ-որ միտք արտահայտել, ասել, պաշտպանել մոբը։ Եթե կարելի է այսպես արտահայտվել հանկարծ մի ինչ-որ անհագ կարեկցություն պատկերացավ նրա բոլոր դիմագծերում։

— Հո չէ՞ր ծեծում։ Ախր ինչե՞ր եք ասում։ Տեր աստված, ախր ի՞նչ ծեծ։ Թեկուզ և ծեծեր, հետո՞ ինչ։ Դե ի՞նչ կա որ։ Դուք ոչինչ, ոչինչ չգիտեք... Նա այնպես դժբա՛խտ է, ա՛խ, որքա՞ն գժբախտ է։ Ու հիվանդ է... Նա արդարություն է փնտրում... Նա մաքուր է։ Նա հավատում է, որ ամենուրեք արդարություն պետք է լինի, և այդ է պահանջում... Թեկուզ և տանջեք նրան, անարդարություն չի թույլ տա։ Նա չի հասկանում, թե մարդկանց մեջ ինչպես կարող է արդարություն չլինել, ու հուզվում է... Երեխա է, երեխա ... Նա արդարամիտ է, արդարամիտ։

— Դուք ի՞նչ եք անելու։

Սոնյան հարցական նայեց Հյուրին։

— Նրանք հո ձեր խնամքին են մնացել։ Ասենք առաջ էլ բոլոր հոգսերը ձեզ վրա էին, հանգուցյալն էլ ձեզ մոտ էր գալիս խմիչքի փող խնդրելու։ Իսկ հիմա ի՞նչ է լինելու։

— Չգիտեմ,— տխուր ասաց Սոնյան։

— Նրանք այնտե՞ղ կմնան։

— Չգիտեմ։ Նրանք պետք է որ մնան այն բնակարանում. սակայն տանտիրուհին այսօր ասել է, որ համաձայն չէ, իսկ Կատերինա Իվանովնան ասում է, որ ինքն էլ ոչ մի բոպե չի մնա։

— Ինչո՞ւ է նա այդպես խիստ։ Ձեզ վրա՞ է հույս դնում։

— Ախ, ոչ, այդպես մի խոսեք... մենք միասին ենք ապրում,— հանկարծ նորից հուզվեց և նույնիսկ ջղայնացավ Սոնյան, ճիշտ այնպես, ինչպես կբարկանար դեղձանիկը կամ ուրիշ որևէ փոքր թռչուն։— Ախր ի՞նչ անի նա, ի՞նչ անի,— տաքանալով և հուզվելով հարցնում էր Սոնյան։— Այսօր նա որքա՞ն, որքա՞ն լացեց։ Նա կորցնում է խելքը, դուք այդ չե՞ք նկատել։ Ցնորվում է. մերթ երեխայի պես անհանգստանում է, թե արդյո՞ք վաղը ամեն ինչ կարգին կլինի, ուտելեղեն կլինի... մերթ հուսալքվում է, արյուն է թքում, լաց է լինում, հանկարծ սկսում է գլուխը խփել պատին, ասես բոլորովին խելքը կորցրած։ Հետո էլի սփոփվում է, հույս է դնում ձեր վրա, ասում է, որ դուք հիմա իր օդնականն եք, որ ինքը որևէ տեղից փոխարինաբար մի քիչ փող կվերցնի, ինձ հետ կգնա իրենց քաղաքը, ազնվական աղջիկների համար պանսիոն կհիմնի, ինձ կվերցնի իբրև վերակացուհի, ու մեզ համար բոլորովին նոր, հիանալի կյանք կսկսվի, ու համբուրում է ինձ, գրկում, մխիթարում, ու այնպե՞ս է հավատում, այնպե՞ս է հավատում ֆանտազիաներին։ Եվ մի՞թե կարելի է նրան հակաճառել։ Այսօր ամբողջ օրը լվացք է անում, մաքրում, նորոգում հագուստը, իր թույլ ձեռքերով տաշտը տարավ սենյակ, շնչասպառ եղավ, այնպես էլ ընկավ անկողնուն։ Առավոտն էլ ես ու նա դնացինք խանութները, Պոլեչկայի ու Լենայի համար քոշեր դնելու,

որովհետև նրանց ոտնամանները բոլորովին քրքրվել են, բայց մեր փողը չբավականացավ, շատ էր պակաս, իսկ նա հիանալի կոշիկներ էր ընտրում, որովհետև ճաշակ ունի, դուք չգիտեք... փողը պակասելու պատճառով լաց եղավ հենց խանութում, վաճառականների ներկայությամբ... Ախ՛, որքա՜ն ցավալի էր այդ տեսնել։

— Հասկանալի է, որ դուք... այդպես եք ապրում,— դառն քմծիծաղով ասաց Իասկոլնիկովը։

— Իսկ դուք մի՞թե չեք խղճում, չե՞ք խղճում,— դարձյալ հուզվեց Սոնյան,— չէ որ դուք, դեռ ոչինչ չտեսած, ձեր վերջին փողը տվիք, ես այդ գիտեմ։ Իսկ եթե դուք տեսած լինեի՞ք. օ, տեր աստված, քանի՞-քանի անգամ եմ ես նրան լացացրել, այն էլ դեռ անցյալ շաբաթ, այն էլ հորս մահից ընդամենը մի շաբաթ առաջ։ Ես դաժանորեն եմ վարվել։ Եվ քանի՞-քանի անգամ եմ այդ արել։ Ախ՛, ինչպիսի՞ ցավով էի այսօր ամբողջ օրը հիշում այդ ամենը։

Սոնյան նույնիսկ հնծկլտում էր հուշերի պատճառած ցավից։

— Այդ դո՞ւք եք դաժանորեն վարվել։

— Այո, ես, ես,— լալով շարունակեց Սոնյան։— Մի անգամ գալիս եմ տուն, ու հանգուցյալ հայրս ասում է՝ «Ահա այս գիրքը կարդա ինձ համար, Սոնյա, գլուխս մի քիչ ցավում է, կարդա...»,— ինչ-որ գիրք կար նրա ձեռքին, Անդրեյ Սեմյոնիչից, Լեբեզյատնիկովից էր վերցրել, նա այստեղ է ապրում, միշտ ծիծաղաշարժ գրքեր էր ճարում։ Ես ասում եմ՝ «պետք է գնամ», այնպես էլ չուզեցի կարդալ, նրանց մոտ գնացել էի գլխավորապես Կատերինա Իվանովնային օձիքներ ցույց տալու համար. Լիզավետան, այն առևտրական կինը, էժան գնով օձիքներ ու թևնոցներ էր բերել ինձ համար, լավն էին, նոր, նախշավոր։ Շատ դուր եկան Կատերինա Իվանովնային, նա հագավ, նայեց հայելուն. նրան շատ, շատ դուր եկան. «Նվիրիր ինձ, Սոնյա, խնդրում եմ»։ Այդպես էլ ասաց՝ խնդրում եմ, շատ էր ուզում։ Դե ո՞նց հագներ. այնպես, էլի, առաջվա երջանիկ ժամանակն էր հիշում. նայում է հայելուն, հաճույքով նայում, իսկ հագին կարգին շոր էլ չկա, քանի՞-քանի տարի է, որ չունի շորջազգեստներ, ոչ մի իր չունի. ու երբեք ոչ ոքից ոչինչ չի

խնդրի. հպարտ է, ավելի շուտ կտա իր վերջին ունեցածը, բայց այս անգամ խնդրեց. շատ էին դուր եկել նրան։ Ես ափսոսեցի, չտվի. «Ձեր ինչի՞ն է պետք, Կատերինա Իվանովնա»,— ասում եմ նրան։ Այդպես էլ ասում եմ՝ ձեր ինչի՞ն է պետք։ Հարկավոր չէր այդ ասել նրան։ Նա այնպես տխուր նայեց ինձ, այնպես վա՜տ եղավ, որ ես մերժել էի, ուղղակի ցավալի էր այդ տեսնել... Ես տեսա, որ նա տխրեց ոչ թե օձիքները չստանալու, այլ իմ մերժման պատճառով։ Ախ, թվում է, որ հիմա բոլորովին այլ կերպ կվարվեի, բոլորովին ձեռք կքաշեի առաջվա այդ բոլոր խոսքերից... Էհ, ինչ ասեմ... չէ՞ որ ձեզ համար միևնույն է։

— Այդ առևտրական Լիդվիտային դուք ճանաչո՞ւմ էիք։

— Այո... Դուք է՞լ էիք ճանաչում,— մի փոքր պարմացած հարցրեց Սոնյան։

— Կատերինա Իվանովնան ծանր հիվանդ է թոքախտով. նա շուտով կմեռնի,— ասաց Ռասկոլնիկովը մի փոքր լռելուց հետո, չպատասխանելով հարցին։

— Օ, ոչ, ոչ, ոչ։— Սոնյան անգիտակցական շարժումով բռնեց նրա երկու ձեռքից, ասես աղերսելով, որ այդ չլինի։

— Չէ՞ որ ավելի լավ է մեռնի։

— Ոչ, լավ չէ, լավ չէ, ամենևին էլ լավ չէ,— վախեցած ու անգիտակցարար կրկնում էր Սոնյան։

— Հապա երեխանե՞րը։ Դուք նրանց ո՞ւր եք տանելու, եթե ոչ ձեզ մոտ։

— Էհ, չգիտեմ... — համարյա հուսաբեկ գոչեց Սոնյան ու գլուխն առավ ձեռքերի մեջ։ Երևում էր, որ այդ միտքը շատ և շատ անգամ էր զբաղեցրել Սոնյային, որ Ռասկոլնիկովը դրանով մի ավելորդ անգամ էր վախեցնում նրան։

— Հա՜, իսկ եթե դուք այժմ, Կատերինա Իվանովնայի կենդանության ժամանակ, հիվանդանաք, և ձեզ հիվանդանոց տանեն, այդ դեպքում ի՞նչ կլինի,— անողոքմտաբար շարունակում էր Ռասկոլնիկովն իր հարցերը։

— Ախ, ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում։ Այդ չի կարող լինել։— Սոնյայի դեմքը ծռմռվեց սարսափելի վախից։

— Ի՞նչպես թե չի կարող լինել,— դաժան քմծիծաղով

շարունակեց Ռասկոլնիկովը,— դուք հո ապահովագրված չե՞ք։ Այն ժամանակ ի՞նչ կլինի երեխաների վիճակը. բոլորը խմբով կգնան փողոց, մայրը կհաղա ու ողորմություն կխնդրի, գլուխը որևէ տեղ կխփի պատին, ինչպես արել է այսօր, իսկ երեխաները լաց կլինեն... Մեկ էլ տեսար ընկավ, կտանեն ոստիկանատուն, հիվանդանոց, կմեռնի, իսկ երեխաները...

— Օ, ոչ... աստված այդ չի թույլ տա,— վերջապես, դուրս թռավ Սոնյայի ճնշված կրծքից։ Նա լսում էր, աղերսանքով նայում Ռասկոլնիկովին, համր խնդրանքով ձեռքերը ծալած, կարծես թե ամեն ինչ կախված էր հենց նրանից։

Ռասկոլնիկովը վեր կացավ ու սկսեց քայլել սենյակով մեկ։ Անցավ մոտ մի րոպե։ Սոնյան կանգնել էր ձեռքերն ու գլուխը կախած, սարսափելի վշտացած։

— Իսկ հնարավոր չէ՞ փող ետ գցել, պահել սև օրվա համար,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ հանկարծ կանգ առնելով նրա առջև։

— Ոչ,— շշնջաց Սոնյան։

— Դե իհարկե, ոչ։ Բայց փորձե՞լ եք,— համարյա ծաղրանքով ավելացրեց Ռասկոլնիկովը։

— Փորձել եմ։

— Ու բան չի դուրս եկել։ Դե իհարկե։ Այլ կերպ չէր լինի։

Եվ նա դարձյալ քայլեց սենյակով մեկ։ Էլի մոտ մի րոպե անցավ։

— Ամեն օր փող չե՞ք ստանում։

Սոնյան առաջվանից էլ ավելի շփոթվեց, նրա դեմքը դարձյալ շիկնեց։

— Ոչ,— տանջալից ջանքով շշնջաց նա։

— Երևի Պոլեչկային էլ նույնպիսի վիճակ է սպասում,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը։

— Ոչ, ոչ, այդ անկարելի է,— հուսաբեկ, բարձրաձայն ճչաց Սոնյան, կարծես հանկարծ դանակով վիրավորեցին նրան։— Աստված այդպիսի սարսափ չի թույլ տա։

— Ուրիշների նկատմամբ հո թույլ է տալիս։

— Ոչ, ոչ։ Նրան աստված կպաշտպանի, աստված...— կրկնում էր Սոնյան ինքն իրեն կորցրած։

— Ֆուքն և սատված ամենևին էլ չկա,— նույնիսկ ինչ-որ շարախնդությամբ պատասխանեց Ռասկոլնիկովը, ծիծաղեց ու նայեց նրան։

Սոնյայի գեմքը հանկարծ սարսափելի փոխվեց, գեմքով մեկ ջղացնցումներ սահեցին։ Նա անասելի կշտամբանքով նայեց Ռասկոլնիկովին, ուզեց ինչ-որ բան ասել, բայց լեզուն չէր շարժվում։ Նա հանկարծ ձեռքերով ծածկեց գեմքը և դարձ, դառը հեկեկաց։

— Դուք սատում եք, թե Կատերինա Իվանովնան խելքը թռցնում է. դուք ինքներդ եք խելքդ թռցնում,— կարճ լռությունից հետո ասաց Ռասկոլնիկովը։

Անցավ հինգ րոպե։ Նա էլի նստ ու առաջ էր քայլում, լուռ էր ու չէր նայում Սոնյային։ Վերջապես, մոտեցավ նրան. իր աչքերը փայլում էին։ Ձեռքերը դրեց Սոնյայի ուսերին և ուղիղ նայեց նրա լացակումած գեմքին։ Իր հայացքը անսիրալիր էր, բոլորք, սուր, շրթունքները սաստիկ ցնցվում էին ... Հանկարծ նա ամբողջ մարմնով արագ կռացավ, ու կրթնելով հատակին, համբուրեց Սոնյայի ոտքը։ Սոնյան սարսափահար նստ ցատկեց նրանից, ինչպես խելագարից։ Եվ իսկապես, Ռասկոլնիկովը բոլորովին խելագարվածի պես էր նայում։

— Այդ ի՞նչ եք անում, ի՞նչ եք անում. չոքել իմ առջև՞,— սփրթնելով քրթմնջաց Սոնյան, և նրա սիրտը հանկարծ ցավագին, ցավագին կծկվեց։

Ռասկոլնիկովը իսկույն վեր կացավ։

— Ես երկրպագեցի ոչ թե քեզ, այլ մարդկային ամբողջ տառապանքին,— մի տեսակ օտարոտի ասաց նա ու մոտեցավ լուսամուտին։— Լսիր,— մի րոպե հետո նստ դառնալով ավելացրեց նա,— ժամ առաջ ես մի մարդու ասացի, որ նա միայն քո ճկույթն էլ չարժե... որ այսօր ես պատիվ տվեցի իմ քրոջը՝ քեզ նստեցնելով նրա կողքին։ Նա քո հասցեին վիրավորական խոսք էր թույլ տվել։

— Ախ, այդ ի՞նչ եք ասել նրան, այն էլ ձեր քրոջ ներկայությա՞մբ,— վախվխելով ճչաց Սոնյան,— նստել ինձ հետ՞, պատի՞վ անել. բայց չէ՞ որ ես... պատվազուրկ եմ... Ախ՞, այդ ինչե՞ր եք ասել։

— Քո մասին այդ ասելով, ես նկատի եմ ունեցել ոչ թե պատվազրկությունը և մեղսագործությունը, այլ քո մեծ տառապանքը։ Որ դու մեծ մեղք գործող ես, այդ դեռ ոչինչ, — համարյա ցնծությամբ ավելացրեց Ռասկոլնիկովը,— բայց դու առավելապես նրանով ես մեղսագործ, որ իզուր տեղը մեռցրել ու դավաճանել ես ինքդ քեզ։ Եվ մի՞թե դա սարսափելի չէ։ Մի՞թե սարսափելի չէ, որ դու ապրում ես այդ կեղտի մեջ, որը դու ատում ես, ու միևնույն ժամանակ ինքդ էլ գիտես (բավական է միայն բացել աչքերդ), որ դրանով դու ոչ ոքի չես օգնում և ոչ ոքի ոչ մի բանից չես փրկում։ Եվ վերջապես, ասա ինձ,— համարյա մոլեգնաբար գոչեց Ռասկոլնիկովը,— այդ խայտառակությունը և ստորությունը քո մեջ ինչպե՞ս են համատեղվում մյուս, հակադիր և սուրբ զգացումների հետ։ Չէ՞ որ ավելի արդարացի, հազար անգամ ավելի արդարացի ու խելացի կլիներ ուղղակի ջուրն ընկնել ու վերջ տալ այդ ամենին։

— Հապա նրանց բանն ի՞նչպես կլինի,— թույլ հարցրեց Սոնյան՝ տանջալից նայելով Ռասկոլնիկովին, բայց դրա հետ մնկտեղ կարծես թե բնավ չզարմանալով նրա առաջարկի վրա։ Ռասկոլնիկովը տարօրինակ նայեց նրան։

Նա ամեն ինչ կարդաց Սոնյայի հենց միայն մեկ հայացքում։ Ուրեմն Սոնյան իրոք ունեցել է այդ միտքը։ Գուցե նա շատ անգամ և լրջորեն, հուսաբեկ մտածել է, թե ինչպես միանգամից վերջ տա իր կյանքին, և այնքան լրջորեն, որ հիմա գրեթե չզարմացավ իր, Ռասկոլնիկովի առաջարկի վրա։ Նույնիսկ չնկատեց իր, Ռասկոլնիկովի, խոսքերի դաժանությունը (իհարկե, նա չնկատեց նաև Ռասկոլնիկովի կշտամբանքների և իր խայտառակության նկատմամբ նրա առանձնահատուկ հայացքի իմաստը, և դա տեսնում էր Ռասկոլնիկովը)։ Բայց Ռասկոլնիկովը լիովին հասկացավ, թե ինչպիսի հրեշավոր ցավ պատճառելու չափ և արդեն վաղուց Սոնյային հոշոտում էր նրա անպատիվ ու խայտառակ դրության վերաբերյալ միտքը։ Արդյոք ի՞նչը, ի՞նչը կարող էր մինչև հիմա կասեցնել Սոնյայի վճռականությունը՝ միանգամից իր կյանքին վերջ տալու, մտածում էր Ռասկոլնիկովը։ Եվ միայն այստեղ նա լիովին հասկացավ, թե Սոնյայի համար ինչ էին ներկայացնում այն խրդ-

ճալի; փոքրիկ, որբ երեխաները և այն ողորմելի, կիսախելագար, թոքախտավոր և գլուխը պատին խփող Կատերինա Իվանովնան։

Բայց և այնպես Ռասկոլնիկովի համար դարձյալ պարզ էր, որ Սոնյան իր ընավորությամբ և այնուամենայնիվ իր ստացած զարգացմամբ ոչ մի դեպքում չէր կարող մնալ այդպիսի վիճակում։ Ռասկոլնիկովին զբաղեցնում էր այն հարցը, թե ինչո՞ւ Սոնյան այդքան երկար կարողացել էր մնալ նման վիճակում և չէր խելագարվել, եթե սիրտ չէր արել ջուրն ընկնել։ Ռասկոլնիկովը, իհարկե, հասկանում էր, որ Սոնյայի դրությունը պատահական երևույթ է հասարակության մեջ, թեև դժբախտարար եղակի ու բացառիկ երևույթ չէ։ Բայց հենց այդ պատահականությունը, այդ որոշ կարգացումը և նրա ամբողջ նախընթաց կյանքը կարծես թե կարող էին նրան միանգամից ազատել այդ գարշելի ճանապարհին հենց առաջին քայլն անելիս։ Ի՞նչն էր նրան զորավիգ լինում։ Իհարկե, ոչ անառակությունը։ Այդ ամբողջ խայտառակությունը ակներևաբար միայն մեխանիկորեն էր շոշափում նրան. իսկական անառակությունը դեռ բոլորովին չէր թափանցել նրա սիրտը, Ռասկոլնիկովը այդ տեսնում էր հարթմնի վիճակում. Սոնյան կանգնած էր նրա առաջ...

«Նրա առջև կա երեք ճանապարհ,— մտածում էր Ռասկոլնիկովը,— նետվել ջրանցքը, ընկնել գժանոց կամ... կամ, վերջապես, անձնատուր լինել անառակության, որը շշմեցնում է միտքը և քարացնում սիրտը»։ Վերջին միտքը առավելապես գարշելի էր Ռասկոլնիկովի համար. բայց նա արդեն հոռետես էր, երիտասարդ էր, վերացականորեն դատող, ուրեմն և դաժան, ուստի և չէր կարող չհավատալ, որ վերջին ելքը, այսինքն՝ անառակությունը առավելապես հավանական էր։

«Բայց մի՞թե դա ճշմարիտ է,— մտածում էր նա,— մի՞թե այդ արարածը, որ դեռ պահպանել է հոգու մաքրությունը, ի վերջո գիտակցաբար կնետվի այդ նողկալի, գարշահոտ անդունդը։ Մի՞թե այդ արդեն սկսվել է և մի՞թե նա մինչև այժմ կարող էր դա հանդուրժել այն պատճառով, որ անբարոյականությունն արդեն նրան գարշելի չի թվում։ Ոչ,

ոչ, այդ չի կարող լինել,— բացականչում էր նա, ինչպես քիչ առաջ Սոնյան,— ոչ, ջրանցք նետվելուց մինչև այժմ նրան փրկել է մեղսագործության միտքը, փրկել են նաև ճրանմ, այն խեղճերը... Իսկ եթե նա մինչև այժմ դեռ չի խելագարվել... բայց ո՞վ ասաց, թե նա արդեն չի խելագարվել։ Մի՞թե նա առողջ դատողություն է անում, մի՞թե կարելի է այնպես խոսել, ինչպես նա։ Մի՞թե առողջամիտ մարդը կարող է այնպիսի դատողություններ անել, ինչպես նա։ Մի՞թե կարելի է այդպես նստել կործանման, ուղղակի գարշահոտ անդունդի եզրին, դեպի ուր արդեն քաշում են նրան, ու անուշադիր լինել, փակել ականջները, երբ իր մոտ խոսում են վտանգի մասին։ Նա հրաշքի՞ է սպասում, ինչ է։ Հավանորեն այդպես է։ Մի՞թե սրանք բոլորը խելագարության նշաններ չեն»։

Ռասկոլնիկովը համառորեն հանգեց այդ մտքին։ Այդ ելքը նրան նույնիսկ ավելի էր դուր գալիս, քան ուրիշ որևէ ելք։ Նա սկսեց ակնապիշ նայել Սոնյային։

— Դու շա՞տ ես աղոթում աստծուն, Սոնյա,— հարցրեց նա։

Սոնյան լռում էր, Ռասկոլնիկովը կանգնել էր նրա կողքին և պատասխանի էր սպասում։

— Առանց աստծու ես ի՞նչ կլինեի որ,— արագ, կտրուկ շշնջաց Սոնյան, հանկարծ հարևանցիորեն նայեց նրան առկայծող աչքերով և ամուր սեղմեց նրա ձեռքը։

«Հենց այդպես է որ կա»,— մտածեց Ռասկոլնիկովը։

— Իսկ աստված դրա համար քեզ ի՞նչ է տալիս,— հարցրեց նա՝ շարունակելով խոսք քաշել։

Սոնյան երկար լռեց, կարծես չէր կարողանում պատասխանել։ Նրա թույլ կուրծքը ամբողջովին երերվում էր հուզմունքից։

— Լռեցեք, հարցեր մի տվեք։ Չարժե ձեզ պատասխանել...— գոչեց նա հանկարծ՝ խստորեն ու բարկացկոտ նայելով Ռասկոլնիկովին։

«Այդպես է որ կա, այդպես է»,— մտքում համառորեն կրկնում էր Ռասկոլնիկովը։

— Ամեն ինչ տալիս է,— արագ շշնջաց Սոնյան՝ նորից վիճակելով հոնքերը։

«Ահա և ելքը, ահա և ելքի բացատրությունը»,— մտքում եզրակացրեց Ռասկոլնիկովը՝ ագահ հետաքրքրությամբ զննելով նրան։

Նա մի նոր, տարօրինակ, գրեթե հիվանդագին զգացումով էր զննում այդ գունատ, նիհար, անկանոն և անկյունավոր դեմքը, այդ հեզաբարո, կապույտ աչքերը, որոնք կարող էին այդպես ճառագայթել, պյդպիսի խստաբարո, բուռն զգացմունք արտահայտել։ Ջուլնպիսի զգացումով էր նա դիտում զայրույթից ու բարկությունից ցնցվող այդ փոքրիկ մարմինը, և այդ ամենը նրան ավելի ու ավելի տարօրինակ, համարյա անհնարին էր թվում։ «Պակասամիտ է, պակասամիտ»,— կրկնում էր նա մտքում։

Կոմոդի վրա ինչ-որ գիրք էր դրված։ Ցուրաքանչյուր անգամ նա ու առաջ անցնելիս՝ Ռասկոլնիկովը նկատում էր այն ու մեկ էլ վերցրեց և նայեց։ Դա նոր Կտակարանն էր, ռուսերեն թարգմանությամբ։ Գիրքը հին էր, մաշված, կաշվե կազմով։

— Սա ո՞րտեղից է,— գոչեց նա ամբողջ սենյակով մեկ։

Սոնյան կանգնած էր նույն տեղում, սեղանից երեք քայլ հեռու։

— Բերել են ինձ համար,— պատասխանեց նա կարծես դժկամորեն և առանց Ռասկոլնիկովին նայելու։

— Ո՞վ է բերել։

— Լիզավետան բերեց, ես էի խնդրել։

«Լիզավետա՞ն։ Տարօրինա՜կ է»,— մտածեց Ռասկոլնիկովը։ Ցուրաքանչյուր բոպե նրա համար ամեն ինչ ավելի ու ավելի տարօրինակ ու խորհրդավոր էր դառնում Սոնյայի մոտ։ Նա գիրքը տարավ դեպի մոմը ու սկսեց թերթել։

— Ո՞ր էջերում է գրված ազքատ Ղազարոսի մասին,— հանկարծ հարցրեց նա։

Սոնյան համառորեն նայում էր հատակին ու չէր պատասխանում։ Սեղանից նա մի քիչ կողքի էր կանգնած։

— Ղազարոսի հարության մասին ո՞րտեղ է գրված, զբոսիր, Սոնյա։

Սոնյան շեղակի նայեց նրան։

— Այդտեղ մի նայիք... չորրորդ Ավետարանումն է...— խստորեն շշնջաց նա՝ շմոտենալով Ռասկոլնիկովին։

— Գտիր և կարդա ինձ համար,— ասաց Ռասկոլնիկովը, նստեց, հենվեց սեղանին, գլուխը դրեց ձեռքին ու մռայլ հայացքը մի կողմ դարձրեց՝ պատրաստվելով լսելու։

«Մի երեք շարաթից հետո, դեպի յոթերորդ վերստը, շնորհ արեք։ Երևի ես ինքս էլ կլինեմ այնտեղ, եթե բանը ավելի վատ չլինի»,— քթի տակ փնթփնթում էր նա։

Անվստահությամբ լսելով Ռասկոլնիկովի տարօրինակ ցանկությունը, Սոնյան անվճռականորեն մոտեցավ սեղանին։ Այնուամենայնիվ վերցրեց գիրքը։

— Մի՞թե դուք չեք կարդացել,— հարցրեց նա ու սեղանի հակադիր կողմից աչքի տակով նայեց Ռասկոլնիկովին։ Նրա ձայնը հետզհետե ավելի խիստ էր հնչում։

— Վաղուց... երբ սովորում էի։ Կարդա։

— Իսկ եկեղեցում չե՞ք լսել։

— Ես... չէի գնում։ Իսկ դու հաճա՞խ ես գնում։

— Ո-ո՛չ,— շշնջաց Սոնյան։

Ռասկոլնիկովը քմծիծաղեց։

— Հասկանում եմ... Ուրեմն վաղը հորդ թաղելու է՞լ չես գնում։

— Կգնամ։ Ես անցյալ շաբաթ էլ էի գնացել... հոգեհանգիստ կատարեցի։

— Ո՞ւմ հիշատակին։

— Լիզավետայի։ Նրան սպանել էին կացնով։

Ռասկոլնիկովի ջղերն ավելի ու ավելի էին գրգռվում։ Գլուխը սկսում էր պտտվել։

— Դու և Լիզավետան մտերի՞մ էիք։

— Այո... նա լավն էր... ուշ-ուշ էր գալիս... չէր կարող հաճախ գալ։ Ես ու նա կարդում էինք և... խոսում։ Նա աստծուն է տեսնում։

Ռասկոլնիկովի համար տարօրինակ էին հնչում այդ գրքային բառերը, ու էլի նորություն— ինչ-որ խորհրդավոր հանդիպումներ Լիզավետայի հետ, ու երկուսն էլ կրոնախև։

«Այստեղ ինքս էլ կրոնախև կդառնամ, վարակիչ է,— մտածեց Ռասկոլնիկովը։— Կարդա,— հանկարծ կտրուկ ու ջղայնոտ գոչեց նա»։

Սոնյան դեռ էլի տատանվում էր։ Նրա սիրտը խփում էր։ Նա չէր համարձակվում կարդալ Ռասկոլնիկովի համար։

Վերջինս համարյա տանջվելով էր նայում «դժբախտ խելագարին»։

— Ձեր ինչի՞ն է պետք, դուք հո չեք հավատում...— կամացուկ և ասես շնչասպառ լինելով, շշնջաց Սոնյան։

— Կարդա, ես այդպես եմ ուզում,— պնդում էր Ռասկոլնիկովը,— Լիզավետայի համար հո կարդո՛ւմ էիր։

Սոնյան բացեց գիրքը ու դատվի կարդալու տեղը։ Նրա ձեռքերը դողում էին, ձայնը կերկերում էր։ Երկու անգամ փորձեց սկսել, բայց չէր կարողանում արտասանել առաջին վանկը։

«Բիթանացի ումն Ղազարոս հիվանդ էր»...— վերջապես, արտասանեց նա ցանք թափելով, սակայն հանկարծ երրորդ խոսքի վրա ձայնը դնդաց ու խզվեց, ինչպես չափից դուրս ձգված լար։ Շունչը կտրվեց, կուրծքը ծանրացավ։

Ռասկոլնիկովը մասամբ հասկանում էր, թե ինչու Սոնյան սիրտ չէր անում կարդալ, ու որքան շատ էր այդ հասկանում, այնքան ավելի կոպտաբար ու ջղայնորեն էր ստիպում կարդալ։ Նա շատ լավ էր հասկանում, թե հիմա Սոնյայի համար որքան ծանր էր ցույց տալ ու երևան հանել այն ամենը, ինչ որ իրենն էր։ Նա հասկացավ, որ այդ զգացումները գուցե իրոք կազմում էին Սոնյայի այժմյան և արդեն վաղուցվա զաղտնիքը, գուցե այդպես էր եղել դեռ պատանեկությունից, դեռ ընտանիքում, դժբախտ հոր և վշտից խելագարված խորթ մոր կողքին, սովալլուկ երեխաների, այլանդակ ճղճղոցների ու նախատինքների առկայությամբ։ Բայց միևնույն ժամանակ նա իմացավ, հաստատ իմացավ, որ Սոնյան, այժմ սկսելով ընթերցումը, թեպետև վշտանում էր ու սարսափելի վախենում ինչ-որ բանից, բայց դրա հետ մեկտեղ ինքն էլ էր ուզում կարդալ, չնայած իր վշտանալուն և վախին, կարդալ հենց նրա համար, որպեսզի նա լսեր, այն էլ անպայման նիմա, «ինչ էլ որ հետո լինի»... Ռասկոլնիկովը այդ կարդաց նրա աչքերում, հասկացավ նրա հրճվագին հուզմունքից... Սոնյան հաղթահարեց իր երկչոտությունը, խեղդեց կոկորդի ջղաձգությունը, որից ձայնը խզվել էր ընթերցման սկզբում, ու շարունակեց կարդալ Հովհաննու ավետարանի տասնմեկերորդ գլուխը։ Այդպես նա կարդաց մինչև 19-րդ տունը։

«Եվ հրեաներից շատերը եկան Մարթայի ու Մարիամի մոտ, մխիթարելու նրանց եղբոր մահվան առիթով։ Լսելով, որ գալիս է Հիսուսը, Մարթան գնաց նրան ընդառաջ. իսկ Մարիամը նստած էր տանը։ Այնժամ Մարթան ասաց Հիսուսին՝ Տեր իմ, եթե դու այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի։ Բայց հիմա էլ դիտեմ, որ ինչ էլ խնդրես աստծուց, ասված կտա քեզ»։

Սոնյան այստեղ կանգ առավ նորից՝ ամոթխածությամբ նախադդալով, որ իր ձայնը դարձյալ կդողա ու կկտրվի...

«Հիսուսը նրան ասում է՝ եղբայրդ հարություն կառնի։ Մարթան ասաց նրան՝ գիտեմ, որ հարություն կառնի կիրակի, վերջին օրը։ Հիսուսը նրան ասաց՝ Ես եմ հարությունը և կյանքը. ինձ հավատացողը եթե մեռնի էլ, կկենդանանա։ Եվ ամեն մի ապրող ու ինձ հավատացող չի մեռնի առհավետ։ Հավատո՞ւմ ես սույնին. Մարթան ասում է նրան.

(ու կարծես ցավագին շունչ առնելով, Սոնյան շարունակեց լարված և բառ առ բառ կարդալ).

«Այդպես, տեր իմ։ Ես հավատում եմ, որ դու Քրիստոսն Ես, աստծու որդին, աշխարհ եկածը»։

Սոնյան կանգ առավ, աչքերը արագ հառեց նրան, բայց խսկույն ուժ արեց ու շարունակեց կարդալ։ Ռասկոլնիկովը լսում էր անշարժ նստած, առանց նրա կողմը շուռ գալու, հենվելով սեղանին ու նայելով մի կողմ։ Կարդացին մինչև 32-րդ տունը։

«Իսկ Մարիամը գալով այնտեղ, ուր Հիսուսն էր, ու տեսնելով նրան, ընկավ նրա ոտքերը ու ասաց նրան՝ Տեր իմ, եթե դու այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի։ Հիսուսը տեսնելով լացող Մարիամին ու նրա հետ եկած լացող հրեաներին, ինքն էլ սգաց ոգով և հուզվեց։ Ու ասաց՝ ո՞րտեղ եք թաղել նրան։ Նրան ասում են՝ Տեր, գնա և տես։ Հիսուսը արտասվեց։ Այնժամ հրեաները ասացին՝ տես, որքան սիրում էր նրան։ Իսկ նրանցից ոմանք ասացին՝ սա, որ բացեց կույրի աչքերը, արդյոք չէ՞ր կարող այնպես անել, որ նա չմեռներ»։

Ռասկոլնիկովը շուռ եկավ դեպի Սոնյան և հուզմունքով նայեց նրան. այո, այդպես է որ կա. Սոնյան արդեն ամբողջովին դողում էր, սաստիկ, իսկական տենդով էր բռնը-

ված՝ Բասկոլնիկովը այդ տպաստում էր։ Սոնյան մոտենում էր մեծագույն ու շլված հրաշքի վերաբերյալ խոսքերին ու համակվում վեհ ցնծության զգացումով։ Նրա ձայնը զնդում էր ինչպես մեռաղ, ցնծություն ու բերկրանք արտահայտում և ուժգնանում։ Տոզերը իրար էին խառնվում, որովհետև նրա աչքերը մթնում էին, բայց նա անգիր գիտեր իր կարդացածը։ Կարդալով վերջին տան խոսքերը՝ «սա, որ բացեց կույրի աչքերը, արդյոք չէ՞ր կարող այնպես անել, որ նա չմեռներ»,— Սոնյան ցածրացրեց ձայնը, ջերմորեն ու խանդավառությամբ հաղորդեց չհավատացող, կույր հրեաների կասկածը, կշտամբանքը և լուտանքը, հրեաների, որոնք հիմա, մի բոպե յանցած, տես կայծակնահար եղած, կրնկնեն, կսկսեն հեկեկալ ու կհավատան... «Սա Լ, սա նույնպես կուրացած է և չհավատացող, սա էլ հիմա կլսի ու նույնպես կհավատա, այո, այո, իսկույն, հենց հիմա»,— երազում էր Սոնյան ու դողում բերկրալի սպասումից։

«Իսկ Հիսուսը դարձյալ ներքուստ սգալով, գալիս է դեպի գերեզմանը։ Այդ մի անձավ էր և դրա վրա քար էր դրված։ Հիսուսը ասում է՝ «Վերցրեք քարը»։ Մեռյալի քույր Մարթան ասում է՝ «Տեր իմ, արդեն հոտել է. քանզի չորս օր է, որ նա գերեզմանումն է»։

Սոնյան թունդ շեշտեց չորս բառը։

«Հիսուսը նրան ասում է՝ ես հո քեզ ասացի, որ եթե հավատաս, կտեսնես աստծու փառքը։ Եվ այսպես, քարը վերցրին անձավից, ուր գտնվում էր մեռյալը։ Հիսուսը աչքերը բարձրացրեց դեպի երկինք և ասաց՝ «Հայր, շնորհակալ եմ քեզնից, որ ինձ լսեցիր։ Ես գիտեի, որ դու միշտ կլսես ինձ. բայց սույնը ասացի այստեղ կանգնած ժողովրդի համար, որպեսզի հավատա, որ դու ես ինձ ուղարկել»։ Սույնը ասելով, բարձրաձայն կանչեց՝ «Ղազարե՛, դուրս եկ»։ Ու մեռյալը դուրս եկավ,—

(Սոնյան կարդաց բարձրաձայն ու ցնծագին, դողալով ու սարսռելով, կարծես ինքն իր աչքով տեսավ)

Ձեռքերը և ոտքերը թաղման խանձարուրով փաթաթված. երեսը թաշկինակով կապված։ Հիսուսը նրանց ասում է՝ «արձակեցեք կապերը, և թող գնա»։

«Այնժամ նրեաներից շատերը, որոնք եկել էին Մարիամի մոտ և տեսել, թե ինչ արեց Հիսուսը, հավատացին նրան»։

Սոնյան այնուհետև չկարդաց և չէր էլ կարող կարդալ, ծածկեց գիրքը և արագ վեր կացավ աթոռից։

— Բոլորը Ղազարոսի հարության մասին է,— կտրուկ ու խստորեն շշնջաց նա ու կանգնեց անշարժ, մի կողմ դարձած, չհամարձակվելով և կարծես ամաչելով նայել Ռասկոլնիկովին։ Նրա տենդային դողը դեռ շարունակվում էր։ Սուտիկ մոմակալի վրա արդեն վաղուց մարմրում էր մոմի մնացորդը՝ այդ աղքատիկ սենյակում աղոտ լուսավորելով մարդասպանին ու անառակ կնոջը, որոնք տարօրինակ կերպով տարվել էին հավերժական գրքի ընթերցմամբ։ Անցավ ավելի քան հինգ րոպե։

— Ես եկել եմ մի գործի մասին խոսելու,— բարձրաձայն և հոնքերը կիտելով, հանկարծ ասաց Ռասկոլնիկովը, վեր կացավ ու մոտեցավ Սոնյային։ Սա աչքերը լուռ հառեց նրան։ Ռասկոլնիկովի հայացքը խիստ մռայլ էր և ինչ-որ տարօրինակ վճռականություն էր արտահայտում։

— Ես այսօր թողի հարազատներիս, մորս և քրոջս,— ասաց նա։— Ես էլ չեմ դնա նրանց մոտ։ Նրանցից բոլորովին անջատվել եմ։

— Ինչո՞ւ,— հարցրեց ապշած Սոնյան։ Ռասկոլնիկովի մոր և քրոջ հետ եղած հանդիպումը արտասովոր, թեպետև անորոշ տպավորություն էր թողել նրա վրա։ Նա գրեթե սարսափով լսեց այդ պատակտման լուրը։

— Ես հիմա միայն քեզ ունեմ,— ավելացրեց Ռասկոլնիկովը։— Գնանք միասին... Ես եկել եմ քեզ մոտ։ Երկուսս էլ դժբախտներ ենք, ուրեմն միասին գնանք։

Ռասկոլնիկովի աչքերը փայլում էին։ «Կարծես կիսախելագար լինի», իր հերթին մտածեց Սոնյան։

— Ո՞ւր գնանք,— վախեցած հարցրեց նա և սկամայից մի քայլ ետ քաշվեց։

— Ես ի՞նչ իմանամ։ Գիտեմ միայն, հաստատ գիտեմ, որ գնալու ենք մի ճանապարհով, մեր նպատակը մեկ է։

Սոնյան նայում էր նրան ու ոչինչ չէր հասկանում։ Նա միայն այն էր հասկանում, որ իր խոսակիցը սարսափելի, անչափ դժբախտ է։

— Նրանցից ոչ ոք ոչինչ չի հասկանա, եթե դու նրանց բան ասես, իսկ ես հասկացել եմ,— շարունակեց Ռասկոլնիկովը.— Դու ինձ հարկավոր ես, դրա համար էլ ես քեզ մոտ եմ եկել։

— Չեմ հասկանում,— շշնջաց Սոնյան։

— Հետո կհասկանաս։ Մի՞թե դու նույնպիսի բան չես արել։ Դու էլ ես ամեն ինչ խախտել... կարողացել ես խախտել։ Դու քո դեմ ձեռք ես բարձրացրել, կործանել... Դա կյանքը (այդ միևնույն է)։ Դու կարող էիր ապրել անբասիր ու խելացիորեն, բայց ամեն ինչ կվերջացնես Սեննայա հրապարակում... բայց դու չես կարող դիմանալ, ու երբ մենակ մնաս, կխելագարվես, ինչպես նաև ես։ Դու հիմա էլ խելակորույս ես. հետևաբար մենք պետք է գնանք միասին, մեկ հանապարհով։ Գնա՞նք։

Ինչո՞ւ, ինչո՞ւ ես դուք այդ ասում,— վրա բերեց Սոնյան՝ նրա խոսքերից սարսռելով ու տագնապալից հուզված։

— Ինչո՞ւ։ Որովհետև այսպես չի կարելի մնալ, այ թե ինչու։ Հարկավոր է, վերջապես, լրջորեն և ուղիղ դատել և ոչ թե երեխայի պես լաց լինել և ճչալ, թե աստված թույլ չի տա։ Ի՞նչ կլինի, եթե իրոք քեզ վաղը հիվանդանոց տանեն։ Մայրդ խելակորույս է և թոքախտավոր, շուտով կմեռնի, հապա երեխանե՞րը։ Մի՞թե Պոլեչկան չի կործանվի։ Մի՞թե դու այստեղ, այս ու այն անկյունում չես տեսել երեխաներ, որոնց մայրերը ուղարկում են ողորմություն խնդրելու։ Ես իմանում էի, թե այդ մայրերը որտեղ և ինչպիսի պայմաններում են ապրում։ Այնտեղ երեխաները չեն կարող մնալ իբրև երեխաներ։ Այնտեղ յոթ տարեկանը անառակ է և գող։ Բայց չէ՞ որ երեխաները Քրիստոսի կերպարն են. «նոցա է արքայությունը երկնից»։ Նա պատվիրել է հարգել ու սիրել երեխաներին, նրանք մարդկության ապագան են։

— Հապա ի՞նչ անել, ի՞նչ անել,— հիստերիկ լացով, ձեռքերը շփելով կրկնում էր Սոնյան։

— Ինչ անե՞լ։ Առմիշտ ջախջախել ինչ որ պետք է ջախջախվի, պրծավ-գնաց. չխուսափել տանջանքից։ Ի՞նչ, չե՞ս հասկանում։ Հետո կհասկանաս... Ազատություն և իշխա-

նություն, գլխավորը՝ իշխանություն բոլոր երկյուղած արարածների և ամբողջ մրջնանոցի վրա... Ահա նպատակը։ Սա հիշիր։ Սա իմ խորհուրդն է քեզ։ Գուցե ես քեզ հետ վերջին անգամն եմ խոսում։ Եթե վաղը չգամ, ինքդ կլսես ամեն ինչ, ու այն ժամանակ հիշիր այս խոսքերը։ Դրանց նշանակությունը գուցե և հասկանաս երբևէ, հետո, տարիներ անց, կյանքիդ ընթացքում։ Իսկ եթե վաղը գամ, քեզ կասեմ, թե ով է սպանել Լիզավետային։ Մնաս բարով։

Սոնյան ամբողջ մարմնով ցնցվեց վախից։

— Մի՞թե դուք գիտեք, թե ով է սպանել,— սարսափահար հարցրեց նա ու ապշած նայեց Ռասկոլնիկովին։

— Գիտեմ և կասեմ... միայն, միայն քեզ։ Դրա համար ես քեզ եմ ընտրել։ Ես կգամ ոչ թե քեզնից ներողություն խնդրելու, այլ ուղղակի այդ ասելու։ Ես քեզ դրա համար ընտրել էի վաղուց, ես այդ մտածել էի դեռ այն ժամանակ, երբ հայրդ խոսում էր քո մասին, ու երբ Լիզավետան կենդանի էր։ Մնաս բարով։ Ձեռք մի տա։ Վաղը։

Ռասկոլնիկովը գնաց։ Սոնյան նրա հետևից նայում էր այնպես, ինչպես նայում են խելագարվածին. բայց նա ինքն էլ ասես թոցրել էր խելքը և այդ զգում էր։ Նրա գլուխը պտտվում էր։

«Տեր աստված, նա գիտե, թե ով է սպանել Լիզավետային։ Ի՞նչ էին նշանակում այդ խոսքերը։ Դա սարսափելի է»։ Բայց միևնույն ժամանակ ոչ մի կերպ, ոչ մի կերպ նրա մտքով չէր անցնում այդ բանը... «Օ, երևի նա սոսկալի դրժբախտ է... Նա թողել է մորն ու քրոջը։ Ինչո՞ւ։ Ի՞նչ է եղել։ Նա ի՞նչ մտադրություններ ունի։ Ի՞նչ էր ասում իրեն, Սոնյային։ Համբուրեց իր ոտքը և ասաց (այո, նա այդ պարզ ասաց)... որ առանց իրեն էլ չի կարող ապրել... օ, տեր աստված»։

Սոնյան ամբողջ գիշերն անցկացրեց տենդի ու զառանցանքի մեջ։ Երբեմն նա վեր էր թռչում, լալիս էր, հեծկլտում,* մերթ էլի տենդային քուն էր մտնում ու երազում տեսնում էր Պոլեչկային, Կատերինա Իվանովնային, Լիզավետային, ավետարանի ընթերցումը և նրան... նրան իր գունատ դեմքով, վառ աչքերով... Նա համբուրում է իր, Սոնյայի ոտքերը, լալիս է... օ, տեր աստված։

Աջ կողմի դռան ետևում, հենց այն դռան ետևում, որը Սոնյայի բնակարանը բաժանում էր Հերտրուդա Կառլովնա Ռեսսլիխի բնակարանից, կար միջանկյալ մի սենյակ, որը վաղուց դատարկ էր, պատկանում էր տիկին Ռեսսլիխի բնակարանին և նրա կողմից վարձով էր տրվում, որի մասին այիտակներ էին կպցրած դարպասին և թղթի կտորներ՝ ջրանցքի կողմը նայող պատուհանների ապակիներին։ Սոնյան վաղուց սովոր էր այդ սենյակը անբնակ համարելու։ Այնինչ այդ ամբողջ ժամանակ դատարկ սենյակի դռան ետևում կանգնած էր պարոն Սվիդրիգայլովը ու ծածուկ ականջ էր դնում։ Երբ Ռասկոլնիկովը դնաց, Սվիդրիգայլովը մի քիչ կանգնեց, մտածեց, ոտքերի մատների վրա անցավ իր սենյակը, որը կից էր դատարկ սենյակին, վերցրեց մի աթոռ և կամաչուկ ատրամ ու դրեց Սոնյայի սենյակը տանող դռան մոտ։ Խոսակցությունը նրան հետաքրքիր ու նշանակալից էր թվացել և շա՛տ; շա՛տ էր դուր եկել, այնքան էր դուր եկել, որ նա դատարկ սենյակի դռան մոտ աթոռ դրեց, որպեսզի հետագայում, օրինակ, թեկուզ վաղը, չմատնվեր նորից մի ամբողջ ժամ կանգնած լինելու անախորժության, այլ ավելի հարմարավետ տեղավորվեր, որպեսզի բոլոր տեսակետներից լիակատար հաճույք ստանար։

V

Երբ Ռասկոլնիկովը հետևյալ առավոտյան, ժամը ութին տասնմեկին մտավ № քաղաքամասի շենքը, հետաքննական գործերի սլրիստավի բաժանմունքը, ու խնդրեց իր մասին զեկուցել Պորֆիրի Պետրովիչին, ապա նա մինչև իսկ զարմացավ, որ իրեն շուտ չեն ընդունում. անցավ առնվազն տասը րոպե, մինչև որ նրան կանչեցին։ Նրա կարծիքով պետք է որ անմիջապես նետվեին իր վրա։ Այնինչ ինքը կանգնել էր ընդունարանում, կողքից անցուդարձ էին անում մարդիկ, որոնք ըստ երևույթին իր հետ ոչ մի գործ չունեին։ Հետևյալ սենյակում, որ գրասենյակի էր նման, նստել ու գրոտում էին մի քանի գրագիրներ, ու ակներև էր, որ նրանցից ոչ մեկն էլ հասկացողություն անգամ չուներ, թե ով է և ինչ է Ռասկոլնիկովը։ Ռասկոլնիկովը անհանգիստ ու կասկածոտ հա-

յացքով հետամտում էր շրջապատը, նայում, թե իր կողքին հո չկա՞ որևէ ոստիկան, իրեն հետամտող որևէ խորհրդավոր հայացք. բայց ոչ մի նման բան չկար։ Նա տեսնում էր միայն դրասենյակային, մանր հոգսեր արտահայտող դեմքեր, հետո ինչ-որ մարդկանց, ու բոլորն էլ անտարբեր էին իր նկատմամբ, այնպես որ նա կարող էր գնալ ուր որ ուզենար։ Նրա մեջ ավելի ու ավելի հաստատորեն էր ամրանում այն միտքը, որ եթե երեկվա այն հանելուկային մարդը, գետնի տակից ելած այն ուրվականը իրոք ամեն ինչ գիտենար և ամեն ինչ տեսած լիներ, ապա մի՞թե իրեն, Ռասկոլնիկովին, հիմա թույլ կտային այդպես կանգնել և հանգիստ սպասել։ Եվ մի՞թե իրեն կսպասեին մինչև ժամը տասնմեկը, մինչև որ ինքը բարեհաճեր գալ։ Դուրս էր գալիս, որ կամ այն մարդը դեռ ոչինչ չի հաղորդել, կամ... նա էլ ուղղակի ոչինչ չգիտե, և ինքն իր աչքերով ոչինչ չի տեսել (և ի՞նչպես կարող էր տեսնել), ուրեմն այդ բոլորը, երեկ իր, Ռասկոլնիկովի հետ պատահածը դարձյալ տեսիլք է եղել ու իր գրգռված և հիվանդոտ երևակայությունը չափազանցրել է այդ տեսիլքը։ Նույնիսկ դեռ երեկ, ամենաուժեղ տագնապների և հուսալքման ժամերին այդ ենթադրությունը սկսել էր նրան առավելապես հավանական թվալ։ Այժմ կշռադատելով այդ ամենը և պատրաստվելով նոր մարտի, նա հանկարծ զգաց, որ դողում է, ու նույնիսկ զայրացավ, մտածելով, որ դողում է ատելի Պորֆիրի Պետրովիչի հանդեպ ունեցած վախից։ Նրա համար ամենից զարհուրելին այն էր, որ ինքը դարձյալ պետք է հանդիպեր այդ մարդուն. Ռասկոլնիկովը անչափ, անսահման ատում էր նրան և նույնիսկ վախենում էր, որ չլինի՞ թե իր ատելությամբ որևէ կերպ իրեն մատնի։ Ու այնքան ուժեղ էր նրա զայրույթը, որ դողը իսկույն դադարեց։ Նա պատրաստվեց ներս մտնել սառն և հանդուգն տեսքով ու ինքն իրեն խոսք տվեց որքան կարելի է շատ լռել, գիտել ու լսել և գոնե այս անգամ ինչ կերպ էլ լինի հաղթահարել հիվանդագին կերպով գրգռված իր բնությունը։ Հենց այդ ժամանակ նրան կանչեցին Պորֆիրի Պետրովիչի մոտ։

Բանից դուրս եկավ, որ Պորֆիրի Պետրովիչը այդ բոպեին իր կաբինետում մենակ էր։ Նրա կաբինետը ոչ մեծ էր, ոչ էլ

փոքր. այնտեղ գրված էին՝ մի մեծ գրասեղան մոմլաթով պատած բազմոցի առաջ, արկղերով, թեք երեսով մի գրասեղան, անկյունում մի պահարան, մի քանի աթոռ. այդ ամենը պետական կահույք էր, դեղին, հղկած փայտից։ Մի անկյունում, հետին պատի մեջ, կամ ավելի լավ է ասել՝ միջնորմում, կար մի փակված դուռ. ուրեմն պետք է որ միջնորմի մյուս կողմում ուրիշ սենյակներ էլ լինեին։ Երբ Ռասկոլնիկովը ներս մտավ, Պորֆիրի Պետրովիչը իսկույն ծածկեց դուռը, որտեղից մտել էր նկվորը, ու նրանք կաբինետում երկուսով էին։ Պորֆիրի Պետրովիչը իր հյուրին դիմավորեց բավական երեսուներեքին առավելապես ուրախ և սիրալիր տեսքով, և միայն մի քանի բոպե հետո Ռասկոլնիկովը որոշ նշաններից նկատեց, որ նա կարծես չփոթված է, կարծես նրան մոլորեցրել են կամ պտել ինչ-որ խիստ տհաճելի ու ծածուկ բանով զբաղված վիճակում։

— Օ՜-օ՜, պատվելի, ահա և դուք... մեր կողմերում...— ասաց Պորֆիրին, երկու ձեռքն էլ մեկնեց Ռասկոլնիկովին։ — էհ, նստեցեք, պատվելիս. թե՞ դուք գուցե չեք սիրում, որ ձեզ tout court[1] պատվելի անվանեն... խնդրում եմ սա անպարկեշտություն չհամարեք... նստեցեք այստեղ, բազմոցին։

Ռասկոլնիկովը նստեց՝ շարունակ նայելով նրան։

«Մեր կողմերում», «ներողություն անպարկեշտության համար», ֆրանսերեն «tout court» բառը և այլն և այլն, դրանք բոլորը բնորոշ նշաններ էին։ «Սակայն նա երկու ձեռքն էլ մեկնեց ինձ, բայց ոչ մեկը չտվեց, իսկույն ետ քաշեց, կասկածանքով մտածեց Ռասկոլնիկովը։ Երկուսն էլ հետաքրքրում էին միմյանց, բայց հենց որ նրանց հայացքները իրար էին հանդիպում, երկուսն էլ կայծակի արագությամբ դրանք մի կողմ էին դարձնում։

— Ես բերի դիմումս... ժամացույցի մասին... ահա։ Ճի՞շտ է գրված, թե՞ հարկավոր է նորից գրել։

— Ի՞նչ, դիմո՞ւմ։ Այդպես, այդպես... մի անհանգստանաք, ճիշտ այդպես,— ասաց Պորֆիրի Պետրովիչը, կարծես ինչ-որ տեղ շտապելով, և այդ ասելուց հետո վերցրեց ու

[1] Կարճ (ֆրանս.)։

նայեց թուղթը։— Այո, ճիշտ այսպես։ Ուրիշ ոչինչ չի հարկավոր,— նույնպես հապճեպ ավելացրեց նա և թուղթը դրեց սեղանին։ Հետո, մի րոպե անց, արդեն ուրիշ բանի մասին խոսելիս՝ դարձյալ վերցրեց թուղթը և դրեց մյուս, թեք երեսով գրասեղանին։

— Դուք կարծեմ երեկ ասացիք, որ կցանկանայիք պատշաճ ձևով ինձ հարցեր տալ... այն սպանված կնոջ հետ... իմ ունեցած ծանոթության մասին,— սկսեց Ռասկոլնիկովը։— «Ինչո՞ւ ես ասացի՝ կարծեմ»,— կայծակնաթափ անցավ նրա մտքով։— «Լավ, ինչո՞ւ եմ այսպես անհանգստանում, որ ասել եմ այդ կարծեմ բառը»,— նույնպես կայծակնաթափ հղացավ նա այս երկրորդ միտքը։

Եվ նա հանկարծ զգաց, որ հենց միայն Պորֆիրիի հետ շփվելուց, հենց միայն երկու խոսքից ու երկու հայացքից իր կասկածամտությունը մի ակնթարթում աճեց և հրեշավոր չափերի հասավ... որ դա սարսափելի վտանգավոր է, ջղերը գրգռվում են, հուզմունքը սաստկանում։ «Փորձանք է, փորձանք... էլի բերանից խոսք կթռցնեմ»։

— Այո, այո, այո, մի անհանգստանաք, չպետք է շտապել, չպետք է շտապել,— փնթփնթում էր Պորֆիրի Պետրովիչը՝ սեղանի մոտ բոլորովին աննպատակ քայլելով ետ ու առաջ, նետվելով մերթ դեպի լուսամուտը, արկղերով սեղանը, մերթ նորից դեպի գրասեղանը, մերթ խուսափելով Ռասկոլնիկովի կասկածոտ հայացքից, մերթ էլ հանկարծ կանգ առնելով և դեմ առ դեմ նայելով նրան։ Չափազանց տարօրինակ էր թվում նրա կարճ, հաստլիկ և կլոր կերպարանքը, ասես այլևայլ կողմեր գլորվող, բոլոր պատերին ու անկյուններին դիպչող ու ետ թռչող գնդակ լիներ։

— Կանենք, ամեն ինչ կանենք... Դուք ծխո՞ւմ եք, ունե՞ք։ Ահա, խնդրեմ,— շարունակեց Պորֆիրին՝ հյուրին պապիրոս հրամցնելով...— Գիտե՞ք, ես ձեզ ընդունում եմ այստեղ, իսկ իմ բնակարանը հենց մեր կողքին է, միջնորմի ետևում ... պետական է, իսկ ես հիմա ժամանակավորապես մասնավոր բնակարանում եմ։ Այստեղ որոշ նորոգումներ պետք էր կատարել։ Այժմ համարյա պատրաստ է... գիտե՞ք, պետական բնակարանը հիանալի բան է, չէ՞, ի՞նչ եք կարծում։

— Այո, հիանալի բան է,— պատասխանեց Ռասկոլնիկովը՝ համարյա հեգնոտ նայելով նրան։

— Հիանալի բան է, հիանալի բան է...— կրկնում էր Պորֆիրի Պետրովիչը՝ հանկարծ կարծես թե մտորելով մի ինչ-որ բոլորովին այլ բանի մասին,— այո, հիանալի բան է,— ի վերջո համարյա բղավեց նա՝ հանկարծ աչքերը հառելով Ռասկոլնիկովին և կանգ առնելով նրանից երկու քայլ հեռավորությամբ։ Այդ հանախակի հիմար կրկնությունը, որ պետական բնակարանը հիանալի բան է, իր գռեհկությամբ խիստ հակասում էր այժմ իր հյուրին հառած լուրջ, խոհուն և հանելուկային հայացքին։

Բայց դա է՛լ ավելի զրգռեց Ռասկոլնիկովի բարկությունը, և սա արդեն ոչ մի կերպ չէր կարող հրամարվել ծաղրական և շատ անպտուղ մարտահրավերից.

— Դիտե՞ք ինչ,— հարցրեց նա հանկարծ՝ համարյա հանդգնորեն նայելով Պորֆիրիին և կարծես հաճույք զգալով իր հանդգնությունից,— ամեն տեսակ քննիչների համար կարծեմ գոյություն ունի այսպիսի իրավաբանական կանոն, այսպիսի իրավաբանական պրիյոմ. նրանք սկզբում սկսում են հեռվից, դատարկ բաներից կամ նույնիսկ լուրջ, միայն թե բոլորովին կողմնակի բաներից, որպեսզի այսպես ասած՝ խրախուսեն կամ ավելի լավ է ասել՝ զվարճացնեն հարցաքննվողին, ֆնեցնեն նրա զգուշությունը, իսկ հետո հանկարծ մի որևէ ճակատագրական ու վտանգավոր հարցով անսպասելիորեն շշմեցնեն նրան. այդպես չէ՞. կարծեմ մինչև այժմ էլ դա սրբությամբ հիշատակվում է բոլոր կանոններում և հրահանգներում։

— Այդպես, այդպես... ի՞նչ է, դուք կարծում եք, թե ես դրա համա՞ր էի հիշատակում պետական բնակարանը...— Այս ասելով, Պորֆիրի Պետրովիչը կկոցեց աչքերը, ապա աչքով արեց. ինչ-որ մի ուրախ և խորամանկ բան սահեց նրա դեմքով, ճակատի կնճիռները հարթվեցին, աչքերը ասես փոքրացան, գիմագծերը ձգվեցին, և նա հանկարծ բռնվեց Նյարդային, երկար ծիծաղով, որից օրորվում ու ցնցվում էր ամբողջ մարմինը։ Միաժամանակ նա ուղիղ նայում էր Ռասկոլնիկովի աչքերին։ Վերջինս նույնպես ծիծաղեց, թեև այդ ծիծաղը մի փոքր բռնազբոսիկ էր. տեսնելով այդ, Պորֆի-

բին այնպես փառ-փառ ծիծաղեց, որ դեմքը համարյա կարմրեց. Ռասկոլնիկովի զգվանքը անցավ զգուշության բոլոր սահմանները. նա դադարեցրեց ծիծաղը, մռայլվեց, ու երկար, ցասկոտ նայում էր Պորֆիրիին, աչքը չէր կտրում նրանից, քանի դեռ նա շարունակում էր իր երկար ծիծաղը և կարծես դիտմամբ դա չէր դադարեցնում։ Անզգուշությունը, սակայն, երկու կողմից էլ ակնհայտ էր. դուրս էր գալիս, որ Պորֆիրի Պետրովիչը կարծես թե իր հյուրի վրա է ծիծաղում, որը առելությամբ է ընդունում այդ ծիծաղը, և այս հանգամանքը շատ քիչ է շփոթեցնում նրան՝ Պորֆիրի Պետրովիչին։ Դա խիստ նշանակալից էր Ռասկոլնիկովի համար. նա հասկացավ, որ Պորֆիրի Պետրովիչը նախորդ անգամ էլ ամենևին չէր շփոթվել, այլ ընդհակառակը, թերևս Ռասկոլնիկովն ինքն էր թակարդի մեջ ընկել, որ պարզապես այստեղ ինչ-որ մի բան, ինչ-որ մի նպատակ կա, որ ինքը չգիտե. գուցե ամեն ինչ արդեն նախապատրաստված է և այժմ, հենց այս րոպեին կբացահայտվի ու կպայթի իր գլխին...

Ռասկոլնիկովը անմիջապես, ուղղակի անցավ գործի, վեր կացավ ու վերցրեց գլխարկը։

— Պորֆիրի Պետրովիչ,— ասաց նա վճռականորեն, բայց բավական թունդ ջղայնոտությամբ,— գուք երեկ ցանկություն հայտնեցիք, որ ես ձեզ մոտ գամ ինչ-որ հարցաքննությունների համար։ (Նա առանձնապես շեշտեց հարցաքննություններ բառը)։ Ես եկել եմ, ու եթե այդ հարկավոր է ձեզ, հարցեր տվեք, թե չէ ինձ թույլ տվեք գնալ։ Իմ ժամանակը սուղ է, ես գործ ունեմ... Ես պետք է գնամ կառքի տակ ընկած հենց այն աստիճանավորի թաղման, որի մասին դուք... նույնպես գիտեք...— ավելացրեց նա՝ իսկույն բարկանալով այդ ավելացման համար, իսկ հետո էլ ավելի ջղայնացավ,— այդ ամենը ինձ ձանձրացրել է, լսո՞ւմ եք, և արդեն վաղուց է ձանձրացրել... Ես մասամբ հենց դրանից եմ հիվանդ եղել... մի խոսքով,— համարյա բղավեց նա, զգալով, որ հիվանդության մասին ասածը էլ ավելի անտեղի էր,— մի խոսքով, բարեհաճեցեք կամ հարցեր տալ ինձ, կամ հենց այժմ բաց թողեք... Իսկ եթե հարցաքննելու եք, ասա այդ պետք է լինի ոչ այլ կերպ, քան ընդունված ձևով։ Այլ

կերպ թույլ չեմ տա. ուստի և առայժմ մնացեք բարով, որովհետև հիմա մենք երկուսով անելիք չունենք։

— Տեր աստված, այդ ինչե՞ր եք ասում, աիր ինչի՞ մասին պիտի ձեզ հարցաքննեմ,— կշկշաց Պորֆիրի Պետրովիչը՝ իսկույն փոխելով թե խոսելու տոնը, թե տեսքը, ու վայրկենապես դաղարեցնելով ծիծաղը,— խնդրում եմ չանհանգստանաք,— ավելացրեց նա՝ մերթ էլի նետվելով բոլոր կողմերը, մերթ հանկարծ փորձելով նստեցնել Ռասկոլնիկովին,— չպետք է շտապել, չպետք է շտապել, դրանք բոլորը միայն դատարկ բաներ են։ Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ, որ դուք, վիրջապես, մեզ մոտ եկաք... Ես ձեզ իրրև հյուր եմ ընդունում։ Իսկ այս անիծված ծիծաղի համար դուք, պատվիլիս Ռոդիոն Ռոմանովիչ, ներեցեք ինձ։— Ռոդիոն Ռոմանովիչ. կարծեմ այդպես է ձեր անունը—հայրանունը, այո՞... Չգալին մարդ եմ, դուք ինձ ծիծաղեցրիք ձեր դիտողության սրամտությամբ. պատահում է, որ ծիծաղից դողում եմ տերևի նման, այն էլ ամբողջ կես ժամ... Ծիծաղկոտ եմ, էլի՛։ Զաղուքյանս պատճառով նույնիսկ վախենում եմ կաթվածից։ Նստեցեք խնդրեմ, պատվելիս... թե չէ կմբոստանամ, որ բարկացել եք...

Ռասկոլնիկովը լռում էր, լսում ու հետամտում դեռ էլի ցասկոտ ու մռայլված։ Նա նստեց, բայց գլխարկը պահեց ձեռքին։

— Ես ձեզ մի բան կասեմ իմ մասին, պատվելիս, Ռոդիոն Ռոմանովիչ, այսպես ասած՝ ընութագրի բացատրման համար,— շարունակեց Պորֆիրի Պետրովիչը՝ քայլելով այս ու այն կողմ, կարծես էլի խուսափելով իր հյուրի աչքերին նայելուց։— Գիտե՞ք, ես ամուրի եմ, այնքան էլ նրրակիրթ չեմ ու անհայտ մարդ եմ, բացի դրանից, անցած, փետացած, միայնակ մարդ եմ։ Ը... ը՛մ... դուք նկատե՞լ եք, Ռոդիոն Ռոմանովիչ, որ մեզնում, այսինքն՝ Ռուսաստանում և մանավանդ պետերբուրգյան շրջաններում, եթե երկու խելացի մարդ, դեռ այնքան էլ լավ ծանոթ չլինելով, բայց, այսպես ասած, փոխադարձաբար իրար հարգելով, ինչպես հիմա ես և դուք, հանդիպում են իրար, ապա ամբողջ կես ժամ ոչ մի կերպ չեն կարողանում խոսակցության թեմա գտնել, փետանում են միմյանց հանդեպ, նստում են ու քաշվում իրարից։

խոսակցության համար թեմա են գտնում բոլորը, զորօրինակ, կանայք... զորօրինակ, քարեգիրքները, բարձր դիրքի մարդիկ, նրանք միշտ էլ խոսակցության թեմա են ունենում, c'est de rigueur[1], իսկ միջին կարգի մարդիկ, զորօրինակ մենք, բոլորն էլ քաշվող են ու զրուցասեր են... այսինքն թե մտածողներ են։ Ինչի՞ց է դա, պատվելիս, արդյո՞ք հասարակական շահեր չկան, թե՞ մենք շատ ազնիվ ենք և չենք ցանկանում իրար խաբել, չգիտեմ։ Հը՞։ Դուք ի՞նչ եք կարծում։ Գլխարկդ վար դրեք, է՛, կարծես հենց հիմա գնալու եք, իրավ, անհարմար է այդ տեսնելը... Ես, ընդհակառակը, անչափ ուրախ եմ...

Ռասկոլնիկովը ցած դրեց գլխարկը՝ շարունակելով լռել և լրջորեն, մռայլ ունկնդրել Պորֆիրիի դատարկ ու խառնաշփոթ շաղակրատանքին։ «Սա ի՞նչ է, մի՞թե իսկապես նա ուզում է իր հիմար շատախոսությամբ ցրել իմ ուշադրությունը»։

— Ես ձեզ սուրճ չեմ առաջարկում, տեղը չէ. բայց ինչո՞ւ մի հինգ րոպե չնստել բարեկամի հետ, ասուլիս անել, հը՞,— անլռելի շաղակրատում էր Պորֆիրին,— գիտե՞ք, այդ բոլոր պաշտոնական պարտականությունները մի կողմ... բայց դուք, պատվելիս, մի վիրավորվեք, որ ես հա՛ ետ ու առաջ եմ քայլում. ներեցեք, պատվելիս, շատ եմ վախենում, որ կվիրավորեմ ձեզ, իսկ քայլելը ինձ խիստ անհրաժեշտ է։ Հա՛ նստած եմ լինում, այնպես որ, ուրախությամբ եմ մի հինգ րոպե քայլում... հեմորոյ ունեմ... Հա՛ մտադրվում եմ մարմնամարզությամբ բուժվել. ասում են, որ պետական, իսկական պետական և նույնիսկ գաղտնի խորհրդականները հաճույքով ցատկում են պարանի վրայից. ա՛յ թե ինչպիսի բաներ, հը՛մ, գիտություն մեր դարում... Այդպես... Հա՛, այստեղի այդ պարտականությունների, հարցաքննությունների և այդ բոլոր ձևականությունների մասին... Ա՛յ, դուք, պատվելիս, հիմա ինքներդ բարևհաճեցիք հիշատակել հարցաքննությունները... գիտե՞ք, պատվելիս, Ռոդիոն Ռոմանովիչ. իսկապես, այդ հարցաքննությունները երբեմն հարցաքննողին ավելի շատ են խելքից հանում, քան հարցաքննվողին...

---

[1] Այդպես է ընդունված (ֆրանս.)։

Այդ մասին դուք, պատվելիս, բարեհաճեցիք այժմ միանգամայն արդարացիորեն և սրամտությամբ դիտողություն անել։ (Ռասկոլնիկովը ոչ մի այդպիսի դիտողություն չէր արել)։ Մարդ գլուխ է կորցնում, ուղղակի գլուխ է կորցնում, միշտ միևնույն բանը, միշտ միևնույն բանը, միալար, ոնց որ թրմբուկի զարկը։ Հրե՛ն, ռեֆորմ է գնում, մեզնում գոնե ինչ-ինչ անուններ կփոխվեն, քա՛հ-քա՛հ-քա՛հ. Ինչ վերաբերում է մեր իրավաբանական հնարանքներին, ինչպես որ դուք բարեհաճեցիք սրամտությամբ արտահայտվել, ապա ես լիովին, միանգամայն համաձայն եմ ձեզ հետ։ Ասացեք խնդրեմ, բոլոր մեղադրյալներից, նույնիսկ տրեխավոր մուժիկներից, ո՞ր մեկը չգիտե, որ նրան, դոբրոինակ, սկզբում կողմնակի հարցերով են քննչնում (բստ ձեր հոյակապ արտահայտության), հետո էլ հանկարծ շշմեցնում են, ասես կայծով խփում կատարին քա՛հ-քա՛հ-քա՛հ, ինչպես դուք հենց կետին խփեցիք, քա՛հ-քա՛հ. ուրեմն դուք իսկապես կարծում էիք, թե ես ուզում էի շշմեցնել ձեզ՝ մեջտեղ բերելով բնակարանը... քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Ծաղրասեր մարդ եք, էլի։ Լավ, այդ թողնենք։ Հա՛, ի միջի այլոց, մի խոսքից մի ուրիշ խոսք է դուրս գալիս, մի մտքից մի ուրիշ միտք։ գիտե՞ք, քիչ առաջ դուք բարեհաճեցիք խոսել պատշաճ ձևով հարցաքննություն կատարելու մասին... Դե, ձևս ո՞րն է, գիտե՞ք, շատ դեպքերում դա դատարկ բան է։ Երբեմն հենց միայն բարեկամաբար խոսելը ավելի շահավետ է։ Ձևը երբեք չի կոբչի, թույլ տվեք սրանով հանգստացնել ձեզ. և ի՞նչ է ձևը ըստ էության, հարցնում եմ ձեզ։ Չի կարելի ամեն քայլափոխում ձևով կաշկանդել քննիչին։ Քննիչի գործը, այսպես ասած, յուրատեսակ ազատ արվեստ է կամ նման մի բան... քա՛հ-քա՛հ-քա՛հ...

Պորֆիրի Պետրովիչը մի բոպե շունչ առավ։ Առանց հոգնելու նա մերթ անիմաստ, դատարկ ֆրազներ էր թափում, մերթ հանկարծ ինչ-որ հանելուկային բառեր էր դուրս տալիս և անմիջապես նորից անիմաստ բան էր ասում։ Նա արդեն համարյա վազում էր սենյակով մեկ՝ ավելի ու ավելի արագ բարձր տալով իր պարարտ ոտքերը, շարունակ նայելով հատակին, աջ ձեռքը մեջքին դրած, ձախը անընդհատ թափահարելով, տարբեր կողմեր շարժելով, և այդ շարժումները

զարմանալիորեն չէին հարմարվում նրա խոսքերին։ Ռասկոլնիկովը հանկարծ նկատեց, որ նա, վազվզելով սենյակում, մի երկու անգամ կարծես թե մի ակնթարթ կանգ էր առնում դռան մոտ և կարծես թե ականջ էր դնում... «Հո որևէ բան չի՞ սպասում»։

— Դուք իսկապես որ միանգամայն իրավացի եք,— դարձյալ վրա բերեց Պորֆիրին՝ արտասովոր պարզամտությամբ և ուրախ նայելով Ռասկոլնիկովին (վերջինս դրանից ցնցվեց ու վայրկենապես զգաստացավ),— իսկապես իրավացի եք, որ բարեհաճեցիք այդպիսի սրամտությամբ ծաղրել իրավաբանական հնարանքները քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Մեր այդ խորիմաստ-հոգեբանական հնարանքները, (իհարկե մի քանիսը) չափազանց ծիծաղելի, թերևս անգոտակար են այն դեպքում, եթե խիստ կաշկանդված են ձևականությամբ։ Ը-ը՛մ... Այո... ես էլի պիտի անդրադառնամ ձևին. ասենք թե ես ինձ հանձնարարված որևէ գործի հիման վրա ընդունում կամ ավելի լավ է ասել՝ կասկածում եմ, որ մի որևէ մեկը, մյուսը, երրորդը, այսպես ասած, ոճրագործ է... Դուք հո պատրաստվում եք իրավարան դառնալու, այնպես չէ՞։ Ռոդիոն Ռոմանովիչ։

— Այո, պատրաստվում էի...

— Դե ուրեմն ահա ձեզ, այսպես ասած, մի փոքրիկ օրինակ ապագայի համար, այսինքն՝ չկարծեք, թե ես համարձակվում եմ սովորեցնել ձեզ. դուք հո ուշագրավ հոդվածներ եք տպում հանցագործությունների մասին։ Ոչ, այնպես, էլի, համարձակվում եմ իբրև փաստ մի օրինակ բերել. հա՛, ասենք թե ես, զորօրինակ, մեկին, մյուսին, երրորդին ոճրագործ եմ համարում, լավ, հարց եմ տալիս, ինչո՞ւ պետք է ես նրան որոշ ժամանակից շուտ անհանգստացնեմ. թեկուզև նրա դեմ հանցանշանակ ունենամ։ Ես պարտավոր եմ, զորօրինակ, մեկին շուտ ձերբակալել, իսկ մի ուրիշը հո այլ բնավորություն ունի. ուրեմն ինչո՞ւ չթողնել, որ սա ման գա քաղաքում, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Հը՛մ, տեսնում եմ, որ դուք սա այնքան էլ չեք հասկանում, դե ուրեմն ես ձեզ ավելի պարզ կասեմ. թե որ ես, զորօրինակ, նրան շատ շուտ նրստեցնեմ, չէ՞ որ այդ կերպ նրան, այսպես ասած, բարոյական հենարան կտամ, քա՛հ-քա՛հ-քա՛հ, դուք ծիծաղո՞ւմ եք։

(Ռասկոլնիկովի մտքովն էլ չէր անցնում ծիծաղել, նա նստել էր շրթունքները սեղմած, իր բորբոք հայացքը չկտրելով Պորֆիրի Պետրովիչի աչքերից)։ Մինչդեռ բանը հո այսպես է, որոշ անձանց նկատմամբ առանձնահատուկ մոտեցում է հարկավոր, որովհետև մարդիկ տարբեր են ու բոլորի նկատմամբ միևնույն պրակտիկան է գործադրվում։ Դուք հիմա բարեհաճում եք ասել՝ հապա հանցանշանները. լա՛վ, ասենք թե հանցանշաններ կան, բայց չէ՞ որ հանցանշանները մեծ մասամբ կարող են կասկածելի լինել, հոգիդ սիրեմ, ու չէ որ ես քննիչ եմ, ուրեմն և թույլ մարդ եմ, խոստովանում եմ այդ բանը. կուզենայի հետաքննությունը, այսպես ասած, մաթեմատիկորեն պարզ պատկերացնել, կուզենայի այնպիսի հանցանշան գտնել, որ բոլորովին պարզեր դրությունը, որ ուղղակի և անվիճելի ապացույց լիներ։ Թե որ ես մեկին անժամանակ ձերբակալեմ, թեկուզև հավատացած լինելով, որ հենց նա է սճրագործը, չէ՞ որ ես թերևս ձեռքիցս բաց կթողնեմ նրա հետագա մերկացման միջոցները. ինչո՞ւ, ոյովհետև ես նրան, այսպես ասած, որոշակի դրության մեջ կդնեմ, այսպես ասած, հոգեբանական որոշ վիճակ կստեղծեմ նրա համար և կհանգստացնեմ նրան, և ահա նա ձեռքիցս կգնա, կմեկուսանա. ի վերջո կհասկանա, որ ինքը կալանավոր է։ Ասում են, թե Սևաստոպոլում, Ալմայից անմիջապես հետո, խելոք մարդիկ թունդ վախենում էին, որ հենց այն է, թշնամին բացարձակ ուժով գրոհ կտա և կգրավի Սևաստոպոլը*. իսկ երբ տեսան, որ թշնամին գերադասել է կանոնավոր պաշարումը և առաջին զուգահեռագիծն է անցկացնում*, ասում են խելոք մարդիկ խիստ ուրախացան և հանգստացան. ուրեմն մի երկու ամիս հո կձգձգվի գործը, դե, կանոնավոր պաշարմամբ հո շուտ չեն գրավի քաղաքը։ Էլի ծիծաղո՞ւմ եք, էլի չե՞ք հավատում։ Դե իհարկե, դուք էլ իրավացի եք։ Այո, իրավացի եք։ Դրանք բոլորը մասնակի դեպքեր են, համաձայն եմ ձեզ հետ. հիշատակածս դեպքը իրոք մասնակի է։ Բայց այնուհանդերձ ահա թե ինչին պետք է հետամտել, ամենահարգելի Ռոդիոն Ռոմանովիչ. չէ՞ որ բնավ գոյություն չունի այնպիսի ընդհանուր դեպք, որի վերաբերյալ կիրարկելի լինեն իրավաբանական բոլոր ձևերն ու կանոնները և որը հաշվի առնելով, դրանք գրվեն գրքերում,

որովհետև ամեն մի գործ, թեկուզ, զորօրինակ, ամեն մի ոճիր, իրականում տեղի ունենալով, իսկույն ևեթ բոլորովին մասնակի դեպք է դառնում, այն էլ երբեմն ինչպիսի՜ մասնակի դեպք. բնավ նման չի լինում մինչ այդ կատարված դեպքերին։ Երբեմն խիստ զավեշտական այդպիսի դեպքեր են պատահում։ Ասենք թե ես մի որևէ հանցագործ պարոնի բոլորովին ազատ թողնեմ. չձերբակալեմ ու չանհանգստացնեմ, բայց նա ամեն ժամ և ամեն րոպե գիտենա կամ գոնե կասկածի, որ ես գիտեմ ամեն ինչ, բոլոր գաղտնիքները, ու գիշեր-ցերեկ հետամտում եմ նրան, ծածուկ հսկում, ու եթե նա այդպիսով շարունակ վախ ու կասկածանք զգա, հոգիս վկա, էլ չի համբերի, ուղղակի ինքը կգա, ու թերևս մի այնպիսի բան կանի, որով ամեն ինչ կպարզվի այսպես ասած՝ մաթեմատիկական ճշտությամբ, և դա հաճելի կլինի։ Դա կարող է պատահել թեկուզ անճոռնի մուժիկի հետ, առավել ևս մեզ նմանի, արդիականորեն խելոք, այն էլ որոշ ուղղությամբ զարգացած մարդու հետ։ Դրա համար էլ, սիրելիս, խիստ կարևոր է հասկանալ, թե մարդը ինչ ուղղությամբ է զարգացած։ Հապա նրանց նյարդե՛րը, նյարդե՛րը, դուք դրանք մոռացել եք. չէ՞ որ դրանք հիվանդ, գրգռված, քայքայված են լինում... Իսկ որքա՞ն, որքա՞ն մաղձ է լինում նրանց բոլորի մեջ։ Չէ՞ որ դա, աղբորս ասեմ, հարկավոր դեպքում յուրատեսակ հանք է։ Եվ ինչո՞ւ պետք է ես անհանգստանամ, որ նա ազատ շրջում է քաղաքում։ Թող, թող առայժմ զբոսնի. չէ՞ որ ես առանց այն էլ գիտեմ, որ նա իմ գոհն է ու ձեռքիցս չի պրծնի։ Եվ ո՞ւր պիտի փախչի, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Արտասահմա՞ն, թե ինչ։ Արտասահման լեհացին կփախչի և ոչ թե նա, մանավանդ որ ես հետևում եմ և միջոցներ եմ ձեռնարկել։ Հայրենիքի խորքե՞րը կփախչի, թե ինչ։ Բայց չէ՞ որ այնտեղ մուժիկներ են ապրում, իսկական, տրեխավոր, ռուս մուժիկներ. արդիականորեն զարգացած մարդը ավելի շուտ կգերադասի բանտ ընկնել, քան ապրել այնպիսի օտարերկրացիների հետ, ինչպիսիք մեր մուժիկներն են, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Բայց այս բոլորը դատարկ բան է և գործի արտաքին կողմն է։ Ի՞նչ ասել է՝ կփախչի. դա երկրորդական հարց է. գլխավորը՝ նա ինձնից չի փախչի ոչ այն պատճառով, որ փախչելու տեղ չունի. նա հոգեբանորեն չի

փախչի, քա՜հ-քա՜հ-քա՜հ։ Օ, ինչպիսի՜ արտահայտություն է սա. նա բնության օրենքով չի փախչի ինձնից, թեկուզև նույնիսկ փախչելու տեղ ունենա։ Տեսնե՞լ եք մոմի առջև ճախրող թիթեռնիկին։ Նա, հանցագործը, շարունակ կֆռռա իմ շուրջը, ինչպես թիթեռնիկը մոմի շուրջը. ազատությունը անհաճո կդառնա, նա մտածմունքի մեջ կընկնի, կշփոթվի, կխճողվի, ինչպես թակարդի մեջ ընկածը, մահու չափ տագնապահար կլինի... Դեռ ավելին. ինքը երկու անգամ երկուսի պես մի որևէ մաթեմատիկական ճշմարտություն կասի ինձ, միայն թե ես նրան պատշաճ ընդմիջում տրամադրեմ... Ու շարունակ, շարունակ շրջաններ կդծի իմ շուրջը՝ ավելի ու ավելի փոքրացնելով շառավիղը, ու հո՜պ, ուղղակի կընկնի իմ բերանը, ու ես նրան կուլ կտամ, իսկ դա շատ հաճելի է, քա՜հ-քա՜հ-քա՜հ, դուք չե՞ք հավատում։

Ռասկոլնիկովը չէր պատասխանում, նա նստած էր դալիսդեմ և անշարժ, դարձյալ նույն լարվածությամբ նայում էր Պորֆիրիի դեմքին։

«Լա՜վ դաս է,— մտածում էր նա սարսռելով։ — Սա արդեն նույնիսկ մկան հետ կատվի խաղ էլ չէ, ինչպես այդ եղավ երեկ։ Ոչ էլ սա իր ուժն է ապարդյուն ցույց տալիս և... թելադրում ինձ. սա շատ ավելի խելոք է և այդ չի անի... Այստեղ ուրիշ նպատակ կա. ի՞նչ նպատակ է՛լ, դատարկ բան է դա, բարեկամ, իզուր ես ինձ վախեցնում և խորամանկում։ Դու չունես ապացույցներ և գոյություն չունի երեկվա մարդը։ Դու ուզում ես ուղղակի խելքահան անել ինձ, նախապես ջղայնացնել և այդ վիճակում կուլ տալ ինձ, սակայն բան չի դուրս գա, կգլորվես, կգլորվես։ Բայց ինչո՞ւ, ինչու այդ ասոիճան ինձ հուշել... Հիվանդ նյարդերիս վրա՞ է սա հույս դնում, թե ինչ... Ոչ, աղբերացու, ձեռ քաշի, կգլորվես, թեև դու ինչ-որ բան ես պատրաստել... Դե հիմա կտեսնենք, թե այդ ինչ ես պատրաստել»։

Եվ նա հավաքեց բոլոր ուժերը՝ պատրաստվելով սարսափելի ու անհայտ աղետին։ Երբեմն նա ուզում էր հարձակվել և տեղնուտեղը խեղդել Պորֆիրիին։ Դեռ այստեղ մտնելիս նա վախենում էր իր այդ կատաղությունից։ Նա զգում էր, որ չորացել են իր շրթունքները, սիրտը խփում է, բերանի փրփուրը մակարդվում։ Բայց և այնպես նա որոշեց լռել և առայժմ

ոչ մի խոսք չասել։ Նա հասկացավ, որ դա լավագույն տակտիկան է իր վիճակում, որովհետև ոչ միայն ինքը բերանից խոսք չի թոցնի, այլև ընդհակառակը, իր լռությամբ կշղայնացնի թշնամուն, որը թերևս ինքը բերանից խոսք թոցնի։ Գոնե դրա վրա նա հույս էր դնում։

— Ոչ, ես տեսնում եմ, որ դուք չեք հավատում, կարծում եք, թե ես անմեղ կատակներ եմ անում,— շարունակեց Պորֆիրին։ Նա ավելի ու ավելի էր աշխուժանում, անընդհատ քրքջում էր հաճույքից, դարձյալ սկսում էր ֆռռալ սենյակով մեկ։— Դե իհարկե, դուք իրավացի եք. իմ կերպարանքը աստծու կամքով այնպիսին է, որ ուրիշների մեջ զավեշտական մտքեր է առաջացնում. բուֆոնի[1] կերպարանք է. բայց ես ահա թե ինչ կասեմ ձեզ. դարձյալ կրկնում եմ, որ դուք, պատվելի Ռոդիոն Ռոմանովիչ, ներեցեք ինձ, ծերուկիս, դեռ երիտասարդ եք, այսպես ասած, առաջին երիտասարդությունն եք անցկացնում, դրա համար էլ մարդկային միտքը ամենից բարձր եք դնահատում, ինչպես և ամբողջ երիտասարդությունը։ Ձեզ գայթակղեցնում են մտքի աշխույժ սրությունը և բանականության վերացական փաստարկները։ Եվ դա, օրինակ, իսկ և իսկ հիշեցնում է առաջվա ավստրիական հոֆկրիգսրատը, այսինքն՝ որքան որ ես կարող եմ դատել ռազմական իրադարձությունների մասին. նրանք թղթի վրա Նապոլեոնին ջախջախեցին ու գերի վերցրին, իրենց կաբինետում ամեն ինչ սրամտությամբ հաշվարկեցին ու ամփոփեցին, բայց արի ու տես, որ գեներալ Մակը իր ամբողջ բանակով անձնատուր եղավ, քա՛հ-քա՛հ-քա՛հ*։ Տեսնում եմ, տեսնում եմ, պատվելի Ռոդիոն Ռոմանովիչ, դուք ծիծաղում եք ինձ վրա, որ ես զինվորական չլինելով, ռազմական պատմությունից եմ օրինակներ բերում։ Դե ինչ արած, այդպիսի հակում ունեմ, սիրում եմ ռազմական գործը, սիրում եմ կարդալ ռազմական նյութերը... ուզղակի անտեսել եմ իմ կարիերան։ Հիրավի, ես պետք է իբրև զինվորական ծառայեի։ Գուցե Նապոլեոն չդառնայի, բայց մայոր հո կլինեի, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Հա՛, սիրելիդ իմ, հիմա ես ձեզ մանրամասն կասեմ ամբողջ ճշմարտությունը այն մասնակի դեպքի մասին, պարոնիս ասեմ՝ իրականությունը և բնությունը կա-

[1] Ծաղրածու (ֆրանս. bouffon)։

ընոր բաներ են ու երբեմն ամենաճշգրիտ հաշվարկն էլ ապարդյուն են դարձնում։ Է՛, լսեցեք ծերունուս, լուրջ եմ ասում, Ռոդիոն Ռոմանովիչ (այս ասելով, հազիվ երեսունհինգ տարեկան դարձած Պորֆիրի Պետրովիչը իրոք որ կարծես հանկարծ բոլորովին ծերացավ. նույնիսկ ձայնն էլ փոխվեց, և նա մի տեսակ կուչ եկավ), հետո ես սրտաբաց մարդ եմ... սրտաբա՞ց մարդ եմ, թե՞ ոչ, ի՞նչ եք կարծում։ Թվում է, որ միանգամայն այդպես եմ. Ամեն բաները իզուր հաղորդում եմ ձեզ և դրա համար պարգև չեմ պահանջում, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Հա՛, ուրեմն շարունակում եմ. իմ կարծիքով սրամտությունը հիանալի բան է. դա, այսպես ասած, բնության դարդն է և կյանքի սփոփանքը, և ի՛նչ ֆոկուսներ ասես, որ չի կարողանում հորինել, այնպես որ, մի որևէ խեղճ ու կրակ քննիչ ո՞րտեղից կարողանա դրանք կուտակել, ինքն էլ իր ֆանտազիայով տարված, ինչպես և միշտ լինում է, որովհետև դի նա է՛լ հո մարդ է։ Հենց միայն բնությունն է փրկում խեղճ քննիչին, այ թե ինչն է ցավալի. իսկ այդ մասին չի էլ մտածի սրամտությամբ տարված երիտասարդությունը, «որը քայլում է բոլոր արգելքների վրայով» (ինչպես դուք երեկ բարեհաճեցիք միանգամայն սրամտորեն և խորամանկաբար արտահայտվել)։ Ասենք թե նա, այսինքն՝ մարդը, սրտում է, դա մասնակի դեպք է, incognito, ու ստում է շատ լավ, միանգամայն խորամանկորեն. թվում է, որ հաղթել է ու պետք է վայելի իր սրամտության պտուղները, իսկ նա թրրր՛մի, ուշագնաց ընկնում է, այն էլ ամենահետաքրքիր և ամենախայտառակ տեղում։ Գուցե և դա հիվանդությունից է, օդն էլ սենյակներում երբեմն ծանր է լինում, բայց և այնպես, բայց և այնպես նա, այդ մարդը, կասկածելու առիթ է տալիս։ Հիանալի ստել է նա, բայց չի կարողացել բնությանը ապավինել։ Ահա թե որտեղ է նենգամտությունը։ Մի այլ անգամ, իր սրամտության աշխուժությամբ տարված, սկսում է հիմարի տեղ դնել իրեն կասկածող մարդուն, սրփրրթնում է ասես դիտմամբ, ասես խաղ անելով, բայց միանգամայն բնականորեն է սփրթնում, միանգամայն մոտ է լինում ճշմարտությունը, և ահա նա դարձյալ կասկածելու առիթ է տալիս, թեև առաջին անգամից խաբում է, բայց դիշերվա ընթացքում մտատանջության մեջ է ընկնում, եթե

ինքը վրիպող պտուղ չէ։ Ու ամեն քայլափոխում էլ այդպես է։ Եվ ի՞նչ. ինքն է սկսում առաջ վազել, սկսում է քիթը խոթել այնտեղ, ուր չեն խնդրում, սկսում է անընդհատ խոսել այնպիսի բաների մասին, որոնք, ընդհակառակը, պետք է լռության տալ, սկսում է զանազան այլարանություններ մեջտեղ բերել, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Ինքն է գալիս ու հարցնում՝ ինչո՞ւ ինձ այսքան երկար ժամանակ չեն բռնում, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Եվ դա կարող է պատահել ամենասրամիտ մարդու, հոգեբանի ու գրականագետի հետ։ Բնությունը հայելի է, ամենաթափանցիկ հայելի, նայիր դրան և հիացիր, ա՛յ թե ինչ։ Հա՛, ինչո՞ւ այդպես դունատվեցիք, Ռոդիոն Ռոմանովիչ, օդը հո ծանր չէ՞ ձեզ համար, լուսամուտը չբանա՞մ։

— Օ, խնդրեմ չանհանգստանաք,— գոչեց Ռասկոլնիկովը ու հանկարծ սկսեց քրքջալ,— խնդրեմ չանհանգստանաք։

Պորֆիրին կանգ առավ նրա դիմաց, սպասեց ու հանկարծ ինքն էլ սկսեց քրքջալ։ Ռասկոլնիկովը վեր կացավ բազմոցից, անսպասելիորեն, միանգամից դադարեցրեց բոլորովին տարօրինակ իր ծիծաղը։

— Պորֆիրի Պետրովիչ,— ասաց նա բարձրաձայն ու կտրուկ, թեև հազիվ էր կանգնում դողացող ոտքերի վրա,— ես, վերջապես, պարզ տեսնում եմ, որ դուք ուզղակի կասկածում եք, թե ես եմ սպանել այն պառավին և նրա քրոջը, Լիզավետային։ Իմ կողմից հայտարարում եմ ձեզ, որ այդ ամենը վաղուց ձանձրացրել է ինձ։ Եթե գտնում եք, որ ինձ օրենքով հետապնդելու իրավունք ունեք, ապա հետապնդեցեք, եթե գտնում եք, որ ձերբակալելու իրավունք ունեք, ձերբակալեցեք։ Բայց ես թույլ չեմ տա ինձ ձեռ առնել ու տանջել...

Հանկարծ նրա շրթունքները սկսեցին դողալ, աչքերը փայլեցին կատաղությունից և ուժգին հնչեց ձայնը, որ մինչև այժմ զուսպ էր։

— Թույլ չե՛մ տա,— բղավեց նա հանկարծ, բռունցքը ամբողջ ուժով մեկ խփելով սեղանին,— լսո՞ւմ եք դուք, Պորֆիրի Պետրովիչ, թույլ չեմ տա։

— Ախ, տեր աստված, էլի ի՞նչ պատահեց,— գոչեց ըստ երևույթին բոլորովին վախեցած Պորֆիրի Պետրովիչը,— հարգելի Ռոդիոն Ռոմանովիչ, բարեկամս, պատվելիս, ինչ պատահեց ձեզ։

— Թույլ չե՛մ տա,— նորից բղավեց Ռասկոլնիկովը։

— Սիրելիս, կամաց, ախր կլսեն, կգան, ի՞նչ պիտի ասենք նրանց, մտածեցեք,— սարսափահար շշնջաց Պորֆիրի Պետրովիչը՝ դեմքը հակ մոտեցնելով Ռասկոլնիկովի դեմքին։

— Չե՛մ թույլ տա, չե՛մ թույլ տա,— մեքենայաբար կրկնում էր Ռասկոլնիկովը՝ բայց նույնպես հանկարծ բոլորովին շշնջալով։

Պորֆիրին սրտով շատ եկավ ու նեղվեց լուսամուտը բանալու։

— Թարմ օդ է հարկավոր։ Ջուր խմեք, բարեկամս, ախր դա նոպա է։— Եվ նա նեղվեց դեպի դուռը, հրամայելու, որ ջուր բերեն, բայց հենց այնտեղ, անկյունում ջրամանոթ ջուր էր դրված։

— Պատվելիս, խմեցեք,— շշնջաց նա՝ ջրամանը ձեռքին վազելով դեպի Ռասկոլնիկովը,— գուցե օգնի...— Պորֆիրի Պետրովիչի վախը և կարեկցությունը այնքան բնական էին, որ Ռասկոլնիկովը լռեց ու սկսեց սուր հետաքրքրությամբ նայել նրան։ Սակայն նա ջուր չխմեց։

— Ռոդիոն Ռոմանովիչ, սիրելիս, ախր այդպիսով դուք ձեզ կգժվեցնեք, հավատացնում եմ ձեզ, օ, օ՛ֆ։ Խմեցեք, դե գոնե մի քիչ խմեցեք, էլի։

Նա ուղղակի ստիպեց Ռասկոլնիկովին վերցնել ջրով լեցուն բաժակը։ Ռասկոլնիկովը մեքենայաբար բաժակը մոտեցրեց շրթունքներին, բայց ուշքի գալով, բաժակը զզվանքով դրեց սեղանին։

— Այո, դա նոպա էր։ Այդ կերպ դուք, բարեկամս, կվերադարձնեք ձեր առաջվա հիվանդությունը,— բարեկամական տոնով ասաց Պորֆիրի Պետրովիչը, որը դեռ էլի ինչոր շփոթված տեսք ուներ։— Տեր աստված, ախր դուք ձեզ լավ չեք պահպանում։ Երեկ Դմիտրի Պրոկոֆիչն էլ ինձ մոտ եկավ։ Համաձայն եմ, համաձայն եմ, որ իմ բնավորությունը խայթող է, վատթար, իսկ սրանք այ թե դրանից ինչ

են հետևեցրել... Տեր աստված, եկավ երեկ, ձեզնից հետո, մենք ճաշեցինք, հա՛ խոսում էր ու խոսում, ես հենց միայն լսում էի. հը՛մ, մտածում եմ... օ՛, տեր աստված, ձեր կողմի՞ց էր եկել, թե ինչ։ Դե նստեցեք, էլի՛, բարեկամս, ի սեր Քրիստոսի, նստեցեք։

— Ոչ, իմ կողմից չէր եկել. բայց ես գիտեի, թե նա ինչի համար էր եկել ձեզ մոտ,— խիստ տոնով պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Գիտեի՞ք։

— Գիտեի։ Հետո ի՞նչ։

— Այն, որ ես ձեր ուրիշ սխրագործություններն էլ գիտեմ, պատվելի Ռոդիոն Ռոմանովիչ. ամեն բանի տեղյակ եմ. ես գիտեմ, թե ինչպես դուք հենց գիշերամտին, երբ մթնել էր, գնացել էիք բնակարան վարձելու, զնգզնգացրել էիք զանգակը, արյան մասին էիք հարցրել, շփոթեցրել էիք ներկարարներին ու դռնապաններին։ Ես հո հասկանում եմ այն ժամանակվա ձեր հոգեկան տրամադրությունը... Միր դուք այդ կերպ կդժվեցնեք ձեզ, հոգիս վկա։ Դուք ձեզ կորցնում եք։ Ձեր մեջ շատ ուժեղ, ազնիվ զայրույթ է առաջացել նախ՝ բարտի հարվածներից, հետո էլ թաղապետների պատճառած վիրավորանքներից, և ահա դուք դես-դեն եք ընկնում, որպեսզի, այսպես ասած, բոլորին ստիպեք խոսք բացել և դրանով միանգամից ամեն ինչ վերջացնել, որովհետև ձեզ ձանձրացրել են այդ հիմարությունները և այդ բոլոր կասկածները։ Այդպես է, չէ՞, կռահեցի՞ ձեր տրամադրությունը։ Միայն թե դուք այդ կերպ ոչ միայն ձեզ, այլև Ռազումիխինին էլ ուժասպառ կանեք. չէ՞ որ նա շատ բարի մարդ է և կարող է այդ վիճակին հասնել, ինքներդ գիտեք։ Դուք հիվանդություն ունեք, իսկ նա՝ առաքինություն, հիվանդությունը նրան էլ է կպչում։ Երբ հանդստանաք, ես ձեզ մի բան կպատմեմ... Դե նստեցեք, էլի, ի սեր Քրիստոսի, խնդրում եմ, հանգստացեք, ձեր երեսին դույն չի մնացել. նստեցե՛ք։

Ռասկոլնիկովը նստեց. նրա դողն անցնում էր, և տաքությունը դուրս էր գալիս ամբողջ մարմնով մեկ։ Խորին զարմանքով, լարված լսում էր նա վախեցած և բարեկամաբար իրեն մասին հոգացող Պորֆիրի Պետրովիչին։ Բայց

նա չէր հավատում վերջինիս ոչ մի խոսքին, թեև հավատալու մի ինչ-որ տարօրինակ ցանկություն էր զգում։ Ռնակարանի վերաբերյալ Պորֆիրիի անակնկալ խոսքերը նրան բոլորովին ապշեցրել էին. «Հը՛մ, ուրեմն սա գիտե ռնակարանի մասին և հենց ինքն էլ այդ պատմում է ինձ», մտածեց Ռասկոլնիկովը։

— Այո, մեր դատական պրակտիկայում եղավ համարյա այսպիսի մի դեպք, հոգեբանական, հիվանդագին մի դեպք, — շուտասելուկով շարունակեց Պորֆիրին։— Մեկը իրեն հայտարարել էր մարդասպան, այն էլ ինչպե՞ս, մի ամբողջ հալյուցինացիա մոգոնեց, փաստեր նիրկայացրեց, պատմեց հանգամանքները, շփոթեցրեց, մոլորեցրեց բոլորին և ամեն մեկին, և ի՞նչ. նա մասամբ, առանց որևէ դիտավորության, սպանության պատճառ էր եղել, միայն թե մասամբ, ու հենց որ իմացավ, որ սպանության առիթ էր տրվել, վշտացավ, շշմեց, ցնդվեց, բոլորովին խելքը թռցրեց ու ինքն իրեն հավատացրեց, թե հենց ինքն է մարդասպանը։ Վերջապես, կառավարիչ սենատը քննեց գործը, ու դրժրախտը արդարացվեց, հանձնվեց խնամակալության։ Շնորհակալություն կառավարիչ սենատին։ Է-է-հե՛, ա՛յ-ա՛յ-այ, ախր դրանից ի՞նչ է հետևում, պատվելիս. այդ կերպ կարելի է տենդային վիճակի հասնել, երբ նման հակումները մարդուն ջղագրգիռ են դարձնում, ստիպում են գիշերով գնալ զանգակ զնգզնգացնել, արյան մասին հարցնել։ Գործնականում ես հո ուսումնասիրել եմ այդ ամբողջ հոգեբանությունը։ Այդ կերպ հո բանը կարող է այնտեղ հասնել, որ մարդը լուսամուտից կամ զանգակատնից ներքև կգլորվի, նման զգացումը գայթակղիչ կլինի։ Հը՛մ, զանգակը զընգ-զընգացնե՞լը... Հիվանդություն է դա, Ռոդիոն Ռոմանովիչ, հիվանդություն է։ Շատ եք անտեսել ձեր հիվանդությունը։ Գոնե խորհուրդ հարցնեիք փորձված բժշկից, թե չէ ձեր այն հաստափորը ի՞նչ է որ... Զառանցանքի մեջ եք դուք, այդ բոլորը զառանցանքի մեջ է կատարվում...

Մի ակնթարթ ամեն ինչ պտույտ եկավ Ռասկոլնիկովի շուրջը։

«Մի՞թե, մի՞թե սա հիմա էլ է ստում,— անցավ նրա մտքով։— Անկարելի է, անկարելի,— վանում էր նա այդ

միտքը՝ նախապես զգալով, թե դա իրեն ինչպիսի կատաղություն ու զայրույթի կարող է հասցնել, զգալով, որ ինքը կարող է խելագարվել կատաղությունից»։

— Այդ եղել է ոչ թե զառանցանքի մեջ, այլ հարթմնի վիճակում,— գոչեց նա՝ լարելով իր բանականության ամբողջ ուժը, որպեսզի խորամուխ լիներ Պորֆիրիի խաղին։ — Հարթմնի, հարթմնի վիճակում. լսո՞ւմ եք։

— Այո, հասկանում եմ և լսում։ Դուք երեկ էլ ասում էիք, թե զառանցանքի մեջ չի եղել, նույնիսկ առանձնապես շեշտում էիք, որ զառանցանքի մեջ չի եղել։ Այն ամենը, ինչ որ դուք կարող եք ասել, հասկանում եմ։ Է-է-հե՛... Ռոդիոն Ռոմանովիչ, սիրելիդ իմ, հապա լսեցեք թեկուզ հենց այս հանգամանքը։ Եթե դուք իրոք, իսկապես հանցավոր լինեիք կամ որևէ կերպ մասնակից լինեիք այս անիծված գործին, մի՞թե ինքներդ կպնդեիք, որ այդ բոլորը արել եք ոչ թե զառանցանքի մեջ, այլ ընդհակառակը, միանգամայն զգաստ վիճակում։ Այն էլ առանձնապես պնդում եք, մի առանձին համառությամբ պնդում, էլ ի՞նչպես կարող էր, էլ ի՞նչպես կարող էր այդ լինել, ներեցեք։ Չէ՞ որ, ըստ իս, բոլորովին ընդհակառակը։ Չէ՞ որ եթե դուք որևէ մեղք ունենայիք, պետք է պնդեիք, թե դա անպայման զառանցանքի մեջ է եղել։ Այդպե՞ս է, հո այդպե՞ս է։

Ինչ-որ նենգամտություն էր արտահայտում այդ հարցը։ Ռասկոլնիկովը ընկրկեց գեպի իրեն թեքված Պորֆիրիից, թիկնեց բազմոցի թիկնակին և լուռ, տարակուսանքով, սևեռուն նայեց նրան։

— Հիշենք պարոն Ռազումիխինին, այսինքն այն, թե արդյո՞ք նա երեկ իր կողմից էր եկել խոսելու, թե՞ ձեր դրդմամբ էր եկել։ Դուք պետք է ասեիք, որ իր կողմից էր եկել, ու թաքցնեիք, որ դա ձեր դրդմամբ էր եղել։ Բայց չէ՞ որ դուք այդ չեք թաքցնում։ Դուք հո պնդում եք, որ հենց ձեր դրդմամբ էր եկել։

Ռասկոլնիկովը երբեք այդ չէր պնդել։ Նրա մեջքով սարսուռ անցավ։

— Դուք հա՛ ստում եք,— ասաց նա թույլ ձայնով ու դանդաղ, հիվանդագին ժպիտից ծռմռվող շրթունքներով,— դուք էլի ուզում եք ինձ ցույց տալ, թե գիտեք իմ ամբողջ

խաղը, նախապես գիտեց իմ բոլոր պատասխանները,— ավելացրեց նա՝ ինքն էլ համարյա զգալով, որ արդեն ինչպես հարկն է չի կշռադատում իր ասածը,— ուզում եք վախեցնել ինձ... կամ ուղղակի ծիծաղում եք ինձ վրա...

Այս ասելով, նա շարունակեց դեմ առ դեմ նայել Պորֆիրիին, ու հանկարծ կրկին անսահման ցասումը առկայծեց նրա աչքերում։

— Դուք շարունակ ստոյգ եք,— գոչեց նա։— Դուք ինքներդ շատ լավ գիտեք, որ ոճրագործի համար ամենից լավ է հնարավորին չափ ճշմարտությունն ասել... հնարավորին չափ չթաքցնել այն, ինչ որ կարելի է չթաքցնել։ Ես ձեզ չեմ հավատում։

— Ա՛յ թե ինչպես եք դեռ-դեն ընկնում,— քրքջաց Պորֆիրին,— ձեզ հետ դժվար է պլուխ հանել. ինչ-որ մենամարտություն կա ձեր մեջ։ Ուրեմն չե՞ք հավատում ինձ։ Իսկ ես ձեզ կասեմ, որ արդեն հավատում եք, արդեն քառորդ արշինի չափ հավատացել եք, իսկ ես կաշխատեմ, որ հավատաք մի ամբողջ արշինի չափ, որովհետև իրոք սիրում եմ ձեզ և անկեղծորեն ձեզ բարիք եմ ցանկանում։

Ռասկոլնիկովի շրթունքները դողացին։

— Այո, ցանկանում եմ,— շարունակեց Պորֆիրին՝ թեթևակի, բարեկամաբար բռնելով Ռասկոլնիկովի թևը, արմունկից քիչ վերև,— վերջնականապես եմ ասում ձեզ՝ հետամուտ եղեք ձեր հիվանդությանը։ Մանավանդ որ ձեզ մոտ է եկել ձեր ընտանիքը. մտածեցեք նրա մասին։ Հարկավոր է նրանց հանգստացնել, զուրգուրել, իսկ դուք նրանց վախեցնում եք...

— Ձեր ի՞նչ գործն է, դուք այդ ո՞րտեղից գիտեք, ինչո՞ւ եք այդպես հետաքրքրվում։ Ուրեմն դուք հետամտում եք ինձ և ուզում եք այդ ինձ ցո՞ւյց տալ։

— Պատվելիս, չէ՞ որ հենց ձեզնից, հենց ձեզնից իմացա այդ ամենը։ Դուք չեք էլ նկատում, որ հուզված վիճակում ամեն ինչ կանխավ ասում եք և՛ ինձ, և՛ ուրիշներին։ Պարոն Ռազումիխինից, Դմիտրի Պրոկոֆիչից նույնպես երեկ հետաքրքիր շատ մանրամասնություններ իմացա։ Դուք ինձ ընդհատեցիք, իսկ ես ձեզ կասեմ, որ ձեր կասկածամտության հետևանքով, ձեր ամբողջ սրամտությամբ

հանդերձ դուք բարեհաճել եք նույնիսկ կորցնել առողջ դատողությունը իրերի դրության նկատմամբ։ Զորօրինակ, թեկուզ վերցնենք նույն թեման զանգակների մասին. այդ տեսակ թանկարժեք բանը, այդ տեսակ փաստը (հո մի ամբողջ փաստ է) ես հենց այնպես, ոտով-գլխով ձեզ հայտնեցի, հենց ես, քննիչս։ Եվ դուք դրա մեջ ոչինչ չե՞ք տեսնում։ Սթե ես ձեր նկատմամբ թեկուզ մի քիչ կասկածեի, մի՞թե այդպես կվարվեի։ Ընդհակառակը, ես պետք է սկզբից փարատեի ձեր կասկածանքները և ցույց չտայի, որ այդ փաստին արդեն տեղյակ եմ, ձեր ուշադրությունը շեղեի հակադիր կողմը, ու հանկարծ, ոնց որ կացնով խփես մարդու գլխին (ըստ ձեր արտահայտության), ձեզ շշմեցնեի. «Հը, պարոն,— ասեի,— ի՞նչ էիք բարեհաճում անել սպանվածի բնակարանում երեկոյան ժամը տասին, համարյա թե տասնմեկին, ինչո՞ւ էիք զանգահարում, ինչո՞ւ էիք հարցնում արյան մասին, ինչո՞ւ էիք դռնապաններին շփոթեցնում և պորուչիկի մոտ, թաղամաս կանչում»։ Ահա թե ես ինչպես պիտի վարվեի, եթե ձեր նկատմամբ թեկուզ մի կաթիլ կասկած ունենայի։ Հարկավոր կլիներ ինչպես հարկն է ձեզնից ցուցմունքներ վերցնել, խուզարկություն կատարել ու թերևս ձերբակալել ձեզ... Սթե ես այլ կերպ եմ վարվել, ուրեմն ձեր դեմ կասկածներ չունեմ։ Իսկ դուք, կրկնում եմ, կորցրել եք ձեր առողջ դատողությունը և ոչինչ չեք տեսնում։

Ռասկոլնիկովը ցնցվեց ամբողջ մարմնով, այնպես որ Պորֆիրի Պետրովիչը շատ պարզ նկատեց այդ բանը։

— Դուք էլի ստո՞ւմ եք,— գոչեց նա,— ես չգիտեմ ձեր նպատակները, բայց դուք հա՛ ստում եք... Առաջ դուք այդպես չէիք խոսում, ես չեմ սխալվում... Դուք ստո՞ւմ եք։

— Ե՞ս եմ ստում,— վրա բերեց Պորֆիրին, ըստ երևույթին տաքանալով, սակայն պահպանելով իր բոլորովին ուրախ ու ծաղրալի տեսքը, կարծես բնավ չանհանգստանալով, որ իր մասին այդպիսի կարծիք ունի պ. Ռասկոլնիկովը։— Ե՞ս եմ ստում... Հապա քիչ առաջ ես ի՞նչպես վարվեցի ձեզ հետ (հենց ես, քննիչս), չէ՞ որ ինքս ձեզ հուշեցի ու ավի պաշտպանության բոլոր միջոցները, ինքս

ձեզ հրամցրի այդ ամբողջ հոգեբանությունը. «Հիվանդություն է,— ասացի,— զառանցանք է, վիրավորանք թաղապետների կողմից, մելամաղձոտություն» և այլն, և այլն։ Չէ՞, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Սակայն, ի դեպ ասեմ, պաշտպանության այդ բոլոր հոգեբանական միջոցները, հնարքներն ու պատրվակները շատ անհիմն են ու կասկածելի. որպես թե «Հիվանդություն է, զառանցանք, տեսիլքներ, այդպես է թրվացել, չեմ հիշում». այդ բոլորը այդպես է, բայց ինչո՞ւ, պատվելիս, հիվանդ վիճակում և զառանցանքի մեջ միշտ այդպիսի տեսիլքներ են պատկերանում և ոչ թե ուրիշները։ Կարող էին և այլ տեսիլքներ լինել, այնպես չէ՞, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

Ռասկոլնիկովը հպարտությամբ և արհամարհանքով նայեց նրան։

— Մի խոսքով,— կարուկ և բարձրաձայն ասաց նա, վեր կենալով և մի քիչ ետ հրելով Պորֆիրիին,— մի խոսքով, ես ուզում եմ գիտենալ, թե արդյոք դուք ինձ վերջնականապես աղա՞տ եք համարում կասկածներից, թե ոչ։ Ասա՛ք, Պորֆիրի Պետրովիչ, ասացեք հաստատ ու վերջնականապես, շո՛ւտ, հենց հիմա՛։

— Ա՛յ քեզ գլխացավանք, ձեզ հետ գլխացավանքն անպակաս է,— գոչեց Պորֆիրին միանգամայն ուրախ, նենգավոր և բնավ չանհանգստացած տեսքով։— Ախր ձեր ինչի՞ն է պետք այդ գիտենալ, ձեր ինչի՞ն է պետք այդքան շատ բան գիտենալ, եթե դեռ բոլորովին էլ չեն սկսել ձեզ անհանգստացնել։ Դուք կարծես երեխա լինեք, ձեռքերդ դեպի կրակն եք պարզում։ Ինչո՞ւ եք այդպես անհանգստանում, ինչո՞ւ եք ձեզանով զբաղվելու առիթ տալիս մեզ, ի՞նչ պատճառներով, հը՞, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

— Կրկնում եմ, որ այլևս չեմ կարող այդ բոլորը տանել...— ցասկոտ գոչեց Ռասկոլնիկովը։

— Ի՞նչը, անորոշ դրությո՞ւնը,— ընդհատեց Պորֆիրին։

— Մի՛ խայթեք ինձ, ես չեմ ուզում այդ բոլորը տանել ... Ասում եմ ձեզ, որ չեմ ուզում... Չեմ կարող և չեմ ուզում... Լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք,— բղավեց Ռասկոլնիկովը՝ դարձյալ բռունցքը խփելով սեղանին։

— Կամաց, է՛, կամա՛ց, ախր կլսեն, լրջորեն եմ նախազգուշացնում. զսպեցեք ձեզ։ Ես չեմ կատակում, շշնջալով ասաց Պորֆիրին, բայց այս անգամ նրա դեմքին արդեն չկար քիչ առաջվա կանացիորեն բարեհոգի ու երկչոտ արտահայտությունը. ընդհակառակը, հիմա նա ուղղակի հրամայում էր՝ խստորեն կիտելով հոնքերը ու կարծես մի անգամից խախտելով բոլոր զաղտնիքներն ու երկիմաստությունները։ Բայց դա միայն մի ակնթարթ տևեց։ Շփոթված Ռասկոլնիկովը հանկարծ իսկական մոլեգնության հասավ. բայց, տարօրինակ բան. նա դարձյալ հնազանդվեց կամաց խոսելու հրամանին, թեև կատաղության ամենաուժեղ մոլուցքով էր բռնված։

— Ես թույլ չեմ տա ինձ տանջել,— շշնջաց նա ինչպես քիչ առաջ, ցավով ու ատելությամբ, վայրկենապես դիտակցելով, որ չի կարող չենթարկվել հրամանին, և է՛լ ավելի կատաղելով այդ մտքից,— ձերբակալեցեք ինձ, խուզարկեցեք ինձ, բայց հաճեցեք գործել ընդունված ձևով և ոչ թե խաղ անել ինձ հետ։ Չհամարձակվեք...

— Ձեզի մասին մի անհանգստանաք,— ընդհատեց Պորֆիրին առաջվա նենգավոր քմծիծաղով և կարծես հաճույքից նայելով Ռասկոլնիկովին,— ես ձեզ, պատվելիս, հրավիրել եմ տնական ձևով, միանդամայն բարեկամաբար։

— Չեմ ուզում ձեր բարեկամությունը և թքում եմ դրա վրա, լսո՞ւմ եք։ Ահա վերցնում եմ գլխարկս և գնում։ Հապա, այժմ ի՞նչ կասես, եթե մտադիր ես ձերբակալել։

Նա վերցրեց գլխարկը և քայլեց դեպի դուռը։

— Իսկ մի՞թե չեք ուզում սյուրպրիզը տեսնել,— քրքջաց Պորֆիրին՝ դարձյալ արմունկից վերև բռնելով նրա թևից և դռան մոտ կանգնեցնելով նրան։ Ըստ երևույթին նա ավելի և ավելի ուրախ ու աշխույժ տեսք էր ընդունում, իսկ դա Ռասկոլնիկովին վերջնականապես հանում էր համբերությունից։

— Սյուրպրի՞զ, ի՞նչ է դա, ի՞նչ սյուրպրիզ,— հարցրեց նա հանկարծ կանգ առնելով ու երկչոտ նայելով Պորֆիրիին։

— Սյուրպրիզ է, էլի, հենց այստեղ, դռան ետևն է, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ (Նա մատով ցույց տվեց միջնորմի փակված

դուռը, որի ետևում իր պետական բնակարանն էր)։— Ես նրան փակել եմ, որ չփախչի։

— Ի՞նչ բան է դա, ո՞ւր է, ի՞նչ է...— Ռասկոլնիկովը մոտեցավ դռանը և ուզեց բաց անել, բայց դուռը փակված էր։

— Փակված է, ա՛յ, բանալին։

Եվ իրոք, Պորֆիրին գրպանից հանեց ու ցույց տվեց բանալին։

— Ստում ես դու,— բղավեց Ռասկոլնիկովը՝ արդեն չզսպելով իրեն,— ստում ես, անիծված խեղկատակ,— ու նետվեց դեպի դուռը ընկրկած, բայց ամենևին չվախեցած Պորֆիրիի վրա։

— Ես ամեն ինչ, ամեն ինչ հասկանում եմ,— վրա տվեց նա Պորֆիրիին։— Դու ստում և ձևո ես տանում ինձ, որպեսզի ես ինձ մատնեմ...

— Դուք արդեն մատնեցիք ձեզ, հարգելի Ռոդիոն Ռոմանովիչ։ Դուք հո կատաղության հառաք։ Մի գոռաք, թե չէ մարդիկ կկանչեմ։

— Ստում ես, բան չի դուրս գա, կանչիր մարդկանց։ Դու դիտեիր, որ ես հիվանդ եմ, և ուզում էիր ինձ ջղայնացնել, կատաղության հասցնել, որ ես ինձ մատնեմ, ահա քո նպատակը։ Ոչ, դու փաստեր բեր։ Ես ամեն ինչ հասկացա։ Դու փաստեր չունես, դու միայն ապարդյուն, չնչին ենթադրություններ ես անում Զամետովի նման... Դու գիտեիր իմ բնավորությունը, ուզում էիր ինձ մոլեգնության հասցնել, հետո էլ հանկարծ շշմեցնել տերտերներով, դեպուտատներով... Դու սպասո՞ւմ ես նրանց, հա՞. ինչո՞ւ ես սպասում, ո՞ւր են, դե բեր։

— Այստեղ ի՞նչ դեպուտատներ կարող են լինել, պատվելիս։ Տե՛ս թե մարդը ինչեր է երևակայում։ Այստեղ չի է՛լ կարելի ձեր ասած ձևով վարվել, դուք գործը չգիտեք, սիրելիս... Ձևը չի փախչի, ինքներդ կտեսնեք...— փնթփնթում էր Պորֆիրին՝ ականջը դռան կողմը պահած։

Եվ իրոք, այդ ժամանակ դռան ետևից, մյուս սենյակից ինչ-որ աղմուկ լսվեց։

— Հը՛մ, գալիս են,— բղավեց Ռասկոլնիկովը,— դու կանչել էիր նրանց... Դու սպասում էիր նրանց, դու այդ

Հաշվի էիր առել... Դեհ, քեր այստեղ բոլորին, դեպուտատներին, վկաներին, էլ ի՞նչ ես ուզում... բեր, էլի, ես պատրաստ եմ, պատրաստ եմ...

Բայց այստեղ պատահեց տարօրինակ մի դեպք, իրերի սովորական ընթացքում այնքան անսպասելի մի բան, որ, իհարկե, ոչ Ռասկոլնիկովը, ոչ էլ Պորֆիրի Պետրովիչը չէին կարող այդպիսի վախճան սպասել։

VI

Հետո, այդ րոպեին վերհիշելիս, Ռասկոլնիկովին ամեն ինչ այսպես էր պատկերանում.

Դռան ետևից լսված աղմուկը հանկարծ արագությամբ սաստկացավ, և դուռը մի քիչ բացվեց։

— Այդ ի՞նչ է,— բարկությամբ գոչեց Պորֆիրի Պետրովիչը։— Չէ՞ որ ես նախազգուշացրել եմ...

Մի ակնթարթ պատասխան չեղավ, բայց երևում էր, որ դռան ետևում մի քանի մարդ կար և կարծես մեկին դեպի դուռն էին հրում։

— Այդ ի՞նչ է, է՞,— անհանդիստ կրկնեց Պորֆիրի Պետրովիչը։

— Կալանավոր Նիկոլային ենք բերել,— լսվեց մեկի ձայնը։

— Հարկավոր չէ՛, ե՛տ քաշվել, սպասե՛լ... Ինչո՞ւ է նա այստեղ խցկվել, այդ ինչ անկարգություն է,— գոռաց Պորֆիրին՝ նետվելով դեպի դուռը։

— Ախր նա...— դարձյալ լսվեց նույն ձայնը ու հանկարծ խզվեց։

Երկու վայրկյանից ոչ ավելի իսկական պայքար տեղի ունեցավ. հետո հանկարծ մեկը մի ուրիշին կարծես ուժով հրեց դեպի դուռը և ապա մի ինչ-որ խիստ դալկադեմ մարդ ուղղակի մտավ Պորֆիրի Պետրովիչի կաբինետը։

Այդ մարդու տեսքը առաջին հայացքից շատ տարօրինակ էր։ Նա նայում էր ուղիղ դեպի առաջ, բայց կարծես ոչ ոքի չէր տեսնում։ Նրա աչքերում փայլում էր վճռականությունը, բայց միևնույն ժամանակ դեմքը պատած էր մահու գունատությամբ, կարծես նրան բերել էին մահապատժի ենթար-

կելու։ Բոլորովին դժգույն նրա շրթունքները մի փոքր ցնցվում էին։

Նա դեռ շատ ջահել էր, հագնված էր ինչպես ռամիկ, միջահասակ էր, նիհար, մազերը կլորաձև խուզած, դիմագծերը բարակ, ասես չորացած։ Նրա ձեռքերով անսպասելիորեն ետ հրված մի մարդ անմիջապես ներս նետվեց ու բռնեց նրա ուսից. դա ուղեկցորդն էր. Նիկոլայը ետ քաշեց թևը ու կրկին պոկ եկավ նրանից։

Դռան մոտ մի քանի հետաքրքրվողներ էին հավաքվել։ Նրանցից ոմանք փորձում էին ներս մտնել։ Այդ ամենը կատարվեց համարյա մի ակնթարթում։

— Հեռացիր, դու փաղ է։ Ապտսիր, մինչև որ կանչեն... Ինչո՞ւ եք սրան շուտ բերել,— փնթփնթում էր սաստիկ բարկացած, ասես շվարած Պորֆիրի Պետրովիչը։ Բայց Նիկոլայը հանկարծ ծունկ չոքեց։

— Այդ ի՞նչ է,— զարմացած բղավեց Պորֆիրին։

— Ներեցեք, մեղքը իմն է, ե՛ս եմ մարդասպանը,— հանկարծ ասաց Նիկոլայը՝ ասես մի փոքր շնչասպառ լինելով, սակայն բավական բարձր ձայնով։

Տասը վայրկյանի չափ լռություն տիրեց, բոլորը կարծես փայտացան. նույնիսկ ուղեկցորդն էլ ետ քաշվեց ու էլ չմոտեցավ Նիկոլային, մեքենայաբար ընկրկեց դեպի դուռը և անշարժ կանգ առավ։

— Ի-ի՞նչ,— գոռաց Պորֆիրի Պետրովիչը՝ սթափվելով վայրկենական անզգայացումից։

— Ես եմ... մարդասպանը...— փոքր-ինչ լռելուց հետո կրկնեց Նիկոլայը։

— Ինչպե՞ս... դո՞ւ... Ո՞ւմ ես սպանել։

Պորֆիրի Պետրովիչը ըստ երևույթին կորցրել էր գլուխը։

Նիկոլայը դարձյալ մի քիչ լռեց։

— Ալյոնա Իվանովնային և նրա քույր Լիզավետային ես եմ սպանել... կացնով։ Ցնորված էի...— հանկարծ ավելացրեց Նիկոլայը ու էլի լռեց։ Նա դեռ ծունկ էր չոքած։

Պորֆիրի Պետրովիչը մի քանի ակնթարթ կանգնել էր մտապբաղ, սակայն հանկարծ վերստին սթափվեց ու ձեռքը թափ տվեց անկոչ վկաների վրա։ Նրանք վայրկենապես չքացան, և դուռը ծածկվեց։ Հետո Պորֆիրին հայացքը ուղ-

ղեց անկյունում կանգնած Ռասկոլնիկովին, որը ապշած նայում էր Նիկոլային, ու քայլեց նրա կողմը, սակայն հանկարծ կանգ առավ, նայեց նրան, հետո Նիկոլային, հետո էլի Ռասկոլնիկովին, հետո էլի Նիկոլային, ու հանկարծ ինչ-որ մտքով տարված, կրկին նետվեց վերջինիս վրա։

— Դու ի՞նչ ես քո ցնորվածությամբ առաջ վազում, հը՞, — համարյա կատաղած բղավեց նա։— Ես քեզ դեռ չեմ հարցրել՝ ցնորված էիր, թե ոչ... ասա, գո՞ւ ես սպանել։

— Ես եմ սպանել... ցուցմունք եմ տալիս...— ասաց Նիկոլայը։

— Հը՞մ։ Ինչո՞վ էիր սպանել։

— Կացնով։ Ճարել էի։

— Հը՞մ։ Շտապում է։ Մենա՞կ էիր սպանել։

Նիկոլայը չհասկացավ հարցը։

— Մենա՞կ էիր սպանել։

— Մենակ։ Իսկ Միտկան անմեղ է և դրան չի մասնակցել։

— Դե մի շտապիր ու Միտկային մեջտեղ մի բեր։ Հապա ինչպե՞ս, ինչպե՞ս էիր սանդուղքով ներքև փախել։ Դրռնապաններին ձեզ երկուսիդ էլ հո հանդիպե՞լ էին։

— Ես այդ ժամանակ... աչք խարելու համար էի վազում Միտկայի հետ,— կարծես հապճեպելով և նախապես պատրաստված լինելով, պատասխանեց Նիկոլայը։

— Հը՞մ, այդպես է որ կա,— ցասկոտ գոչեց Պորֆիրին, — ուրիշի խոսքերն է ասում,— քթի տակ մրթմրթաց նա, ու հանկարծ նորից տեսավ Ռասկոլնիկովին։

Ըստ երևույթին նա այնքան էր տարվել Նիկոլայով, որ մի ակնթարթ նույնիսկ մոռացել էր Ռասկոլնիկովին։ Այժմ նա հանկարծ ուշքի եկավ, նույնիսկ շփոթվեց...

— Ռոդիոն Ռոմանովիչ, պատվելիս, ներեցեք,— դիմեց նա Ռասկոլնիկովին,— բանը ուրիշ տեսակ եղավ. շնորհ արեք... դուք այստեղ անելիք չունեք... Ես ինքս էլ եմ ապշել... տեսնում եք, էլի, թե ինչպիսի սյուրպրիզներ են լինում... Շնորհ արեք...

Ու վերցնելով Ռասկոլնիկովի թևը, նրան ցույց տվեց դուռը։

— Երևի դուք այդ չէի՞ք սպասում,— ասաց Ռասկոլնիկովը՝ իհարկե, դեռ ոչ մի բան պարզ չհասկանալով, բայց արդեն բավական քաջալերված։

— Դուք էլ չէիք սպասում, պատվելիս։ Տես թե ոնց է ձեռքը դողում, քա՛հ-քա՛հ։

— Դուք էլ եք դողում, Պորֆիրի Պետրովիչ։

— Ես էլ եմ դողում. այսպիսի բան չէի սպասում...

Նրանք արդեն դռան շեմին էին։ Պորֆիրին անհամբերությամբ սպասում էր, որ Ռասկոլնիկովը գնա։

— Իսկ սյուրպրիզը այնպես էլ ցույց չե՞ք տալու,— հանկարծ հարցրեց Ռասկոլնիկովը։

— Խոսում է, իսկ դողալուց չխկչխկում են ատամները, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Մասխարա մարդ եք, էլի։ Դեհ, ցտեսություն...

— Ըստ իս՝ մնամ բարով։

— Ինչպես որ ասված կամենա, ինչպես որ ասված կամենա,— ծռմռվող ժպիտով ասաց Պորֆիրին։

Անցնելով գրասենյակից, Ռասկոլնիկովը նկատեց, որ շատերը ակնապիշ իրեն նայեցին։ Նախասենյակում, ամբոխի մեջ նա տեսավ այն տան երկու դռնապաններին, որոնց նա այն ժամանակ, դիշերով կանչում էր թաղապետի մոտ գնալ։ Նրանք կանգած էին և ինչ-որ սպասում էին։ Հենց որ Ռասկոլնիկովը դուրս եկավ, հանկարծ իր ետևից լսեց դարձյալ Պորֆիրիի ձայնը։ Շուռ գալով, տեսավ, որ Պորֆիրին հևիհև դեպի իրեն է գալիս։

— Մի խոսք էլ, Ռոդիոն Ռոմանովիչ. տեսնենք այս ամենից ինչ դուրս կգա, բայց և այնպես հարկավոր կլինի ընդունված ձևով մի քիչ հարցաքննել ձեզ... Ուրեմն մենք դեռ կտեսնվենք. այդպես։

Ու Պորֆիրին ժպտալով կանգ առավ Ռասկոլնիկովի առջև։

— Այդպես,— մի անգամ էլ կրկնեց նա։

Կարելի էր ենթադրել, որ նա ուզում էր էլի ինչ-որ մի բան ասել, բայց այդ չէր հաջողվում։

— Իսկ դուք, Պորֆիրի Պետրովիչ, ինձ նեղեցեք այսօրվա ավել-պակաս բաների համար... Ես ջղայնացած էի,—

ասաց արդեն բոլորովին քաջալերված, փքվելու անզուսպ ցանկությամբ համակված Ռասկոլնիկովը։

— Ոչինչ, ոչինչ,— համարյա ուրախ վրա բերեց Պորֆիրին...— Ես ինքս էլ խոստովանում եմ, խոստովանում եմ, որ խայթող բնավորություն ունեմ։ Ուրեմն մենք կտեսնվենք։ Թե որ ասված տա, շատ, շատ կտեսնվենք...

— Եվ վերջնականապես կճանաչե՞նք միմյանց,— ասաց Ռասկոլնիկովը։

— Վերջնականապես կճանաչենք միմյանց,— կրկնեց Պորֆիրի Պետրովիչը ու կկոցելով աչքերը, շատ լուրջ նայեց նրան։— Հիմա գնում եք անվանակոչությա՞ն։

— Թաղման։

— Հա՛, թաղման։ Պահպանեցեք ձեր առողջությունը, պահպանեցեք...

— Ես չգիտեմ էլ, թե իմ կողմից ինչ ցանկանամ ձեզ,— ասաց Ռասկոլնիկովը, որ արդեն սկսել էր իջնել սանդուղքից, բայց հանկարծ նորից դարձավ դեպի Պորֆիրին,— կցանկանայի մեծ հաջողություններ. հա՛, տեսնո՞ւմ եք, թե որչափ զավեշտական է ձեր պաշտոնը։

— Ինչո՞ւ է զավեշտական,— իսկույն ականջները սրբեց Պորֆիրի Պետրովիչը, որ նույնպես շուտ էր եկել վերադառնալու իր տեղը։

— Հապա ի՞նչպես, ահա այդ խեղճ Նիկոլային դուք երեի հոգեբանորեն, ձեր ուզած ձևով նեղել ու տանջել եք, մինչև որ նա խոստովանեց իր մեղքը. երեի դիշեր-ցերեկ ասում էիք նրան՝ «դու մարդասպան ես, դու մարդասպան ես...»։ Հիմա էլ, երբ նա խոստովանել է, դուք էլի կսկսեք դղել նրա ոսկորները, կասեք՝ «Ստում ես, մարդասպանը դու չես, դու չես կարող այդպիսին լինել, դու ուրիշի խոսքերն ես ասում»։ Այդ բոլորից հետո էլ ի՞նչպես զավեշտական չէ ձեր պաշտոնը։

— Քա՛հ-քա՛հ-քա՛հ, նկատեցի՞ք, հա՞, որ ես Նիկոլային ասացի, թե «ուրիշի խոսքերն է ասում»։

— Ի՞նչպես չնկատես։

— Քա՛հ-քա՛հ, սրամիտ եք, սրամիտ։ Ամեն ինչ էլ նկատում եք։ Իսկական աշխույժ միտք։ Հենց զավեշտական կողմն եք բռնացնում, քա՛հ-քա՛հ։ Ասում են, թե դրող-

ներից Գոգոլը վերին աստիճանի օժտված է եղել նման հատկությամբ։

— Այո, Գոգոլը։

— Այո՛, այո՛, Գոգոլը... Դեհ, մինչև ամենահաճելի տեսություն։

— Մինչև ամենահաճելի տեսություն...

Ռասկոլնիկովը ուղղակի տուն գնաց։ Նա այնքան էր մոլորվել ու շփոթվել, որ գալով տուն և ընկնելով բազմոցին, քառորդ ժամի չափ նստեց հենց միայն հանգիստ առնելու համար, աշխատելով գոնե մի փոքր կարգավորել իր մտքերը։ Նիկոլայի մասին նա չէր է՛լ փորձում դատողություններ անել. զգում էր, որ ապշած է, որ Նիկոլայի խոստովանության մեջ կա մի ինչ-որ անբացատրելի, զարմանալի բան, որը հիմա ինքը ոչ մի կերպ չի հասկանա։ Բայց Նիկոլայի խոստովանությունը իրական փաստ էր։ Այդ փաստի հետևանքները նրա համար իսկույն պարզ դարձան. կեղծիքը չէր կարող չբացահայտվել, ու այնուհետև դարձյալ իրեն են կպչելու։ Բայց գոնե մինչ այդ ինքը ազատ է և պետք է անպայման իր համար որևէ բան անի, որովհետև վտանգը անխուսափելի է։

Բայց ի՞նչ չափով։ Վիճակը սկսում էր պարզվել։ Մասավորապես, ընդհանուր առմամբ վերհիշելով իր ամբողջ խոսակցությունը Պորֆիրիի հետ, նա չէր կարող նորից չցնցվել սարսափից։ Իհարկե, նա դեռ չգիտեր Պորֆիրիի բոլոր նպատակները, չէր կարողանում ըմբռնել նրա բոլոր հաշիվները։ Բայց խաղի մի մասը բացահայտված էր, և, իհարկե, ոչ ոք չէր կարող նրանից ավելի լավ հասկանալ, թե իր համար որքան սարսափելի էր այդ «խաղաքայլը» Պորֆիրիի խաղում։ Քիչ էր մնացել, որ ինքը բոլորովին, արդեն փաստապես մատներ իրեն։ Գիտենալով իր՝ Ռասկոլնիկովի բնավորության հիվանդությունը ու առաջին հայացքից ճիշտ հասկանալով ու խորամուխ լինելով նրանում, Պորֆիրին ոչ միայն խիստ վճռականորեն, այլև գրեթե անվրեպ էր գործում։ Անվիճելի է, որ Ռասկոլնիկովը այդ տեսակցության ժամանակ շատ վարկաբեկեց իրեն, բայց և այնպես բանը չհասավ փաստերին. այդ ամենը դեռ անորոշ էր։ Սակայն արդյո՞ք ինքը այժմ այդ ամենը ճիշտ է

ըմբռնում, արդյոք չի՞ սխալվում։ Պորֆիրին այսօր ի՞նչ հետևանքի էր ուզում հասնել։ Արդյո՞ք նա այսօր իսկապես ինչ-որ բան էր նախապատրաստել։ Հատկապես ի՞նչ։ Արդյո՞ք նա իսկապես ինչ-որ բան էր սպասում, թե՞ ոչ։ Այսօր իրենք ի՞նչպես կբաժանվեին, եթե Նիկոլայի միջոցով վրա չհասներ անակնկալ կատաստրոֆան։

Պորֆիրին ցույց տվեց համարյա իր ամբողջ խաղը. իհարկե, ռիսկ արեց, բայց ցույց տվեց, ու եթե նա իրոք ուրիշ որևէ բան գիտենար, այդ էլ ցույց կտար (Ռասկոլնիկովին այդպես էր թվում)։ Ի՞նչ է այդ «սյուրպրիզը»։ Ծա՞ղր է, թե՞ ինչ։ Դա որևէ նշանակություն ունե՞ր, թե ոչ։ Արդյոք դրա տակ կարո՞ղ էր թաքնված լինել հիմնավորված մեղադրանքի, փաստի նմանվող որևէ բան։ Երեկվա մա՞րդը։ Նա ո՞ւր կորավ։ Այսօր որտե՞ղ էր նա։ Եթե Պորֆիրին որևէ հիմնավորված բան գիտենա, ապա, իհարկե, դա երեկվա մարդու հետ է կապված...

Ռասկոլնիկովը նստել էր բազմոցին, գլուխը կախած, արմունկները ծնկներին դրած և դեմքը ձեռքերով ծածկած։ Ամբողջ մարմնով մեկ դեռ շարունակվում էր նյարդային դողը։ Վերջապես, նա վեր կացավ, վերցրեց գլխարկը, մի փոքր մտածեց ու քայլեց դեպի դուռը։

Նա նախազգում էր, որ գոնե այդ օրը իրեն կարող է միանգամայն ապահով, վտանգից զերծ համարել։ Հանկարծ սրտում համարյա ուրախություն զգաց. ուզեց շուտ գնալ Կատերինա Իվանովնայի մոտ։ Թաղմանը, իհարկե, ուշացել էր, բայց հոգեհացին կհասնի և այնտեղ հիմա կտեսնի Սոնյային։

Նա կանգ առավ, մի փոքր մտածեց, ու շուրթերին հիվանդագին ժպիտ երևաց։

— Այսօր, այսօր,— կրկնեց նա մտքում,— այո, հենց այսօր. այդպես էլ պետք է լինի...

Հենց նոր էր ուզում բանալ դուռը, երբ դա ինքը բացվեց։ Նա ցնցվեց և ընկրկեց։ Դուռը բացվեց դանդաղ ու կամացուկ, ու հանկարծ երևաց երեկվա մարդու կերպարանքը, ասես գետնի տակից դուրս եկավ։

Մարդը կանգ առավ շեմքում, լուռ նայեց Ռասկոլնիկովին ու դեպի ներս. մի քայլ արեց։ Նա ճիշտ այնպիսին

էր, ինչպես երեկ, նույն կերպարանքն էր, նույն հագուստը, բայց դեմքն ու նայվածքը խիստ փոխված էին. նա այժմ նայում էր մի տեսակ վշտալի, ու մի քիչ կանգնելով, խոր շունչ առավ։ Նա բոլորովին կնոջ կնմանվեր, եթե գլուխը կողքի թեքեր ու ձեռքը դներ թեքված այտին։

— Ի՞նչ եք ուզում,— հարցրեց սարսափահար Ռասկոլնիկովը։

Մարդը մի քիչ լուռ մնաց և հանկարծ խոր, համարյա մինչև գետին գլուխ տվեց նրան։ Գոնե աջ ձեռքի մի մատը դիպավ հատակին։

— Ի՞նչ կա,— բղավեց Ռասկոլնիկովը։

— Մեղավոր եմ,— կամացուկ ասաց մարդը։

— Ինչի՞ համար։

— Չար մտքերիս համար։

Երկուսն էլ իրար նայեցին։

— Ցավալի բան եղավ։ Երբ դուք այն ժամանակ բարեհաճեցիք գալ, գուցե խմած, ու դռնապաններին կանչեցիք թաղամաս և արյան մասին հարցրիք՝ ես նեղացա, որ հետո դրանից ձեռ քաշեցին ու ձեզ հարբած համարեցին։ Այնպես նեղացա, որ քնից էլ զրկվեցի։ Հիշելով հասցեն, մենք երեկ այստեղ եկանք ու հարցրինք...

— Ովքե՞ր եկան,— ընդհատեց Ռասկոլնիկովը՝ վայրկենապես սկսելով վերհիշել այդ ամենը։

— Ես, այսինքն, ձեզ վիրավորեցի։

— Ուրեմն դուք այն տանի՞ց եք։

— Ես հենց այնտեղ, դարպասի մոտ կանգնած էի նրանց հետ. չե՞ք հիշում։ Մենք այնտեղ վաղուց մեր արհեստն ունենք։ Մուշտակագործներ ենք, տեղացիներ, աշխատանք ենք վերցնում տանը կատարելու... Շատ ցավալի բան եղավ...

Ու Ռասկոլնիկովը հանկարծ պարզ վերհիշեց երկու օր առաջ դարպասի մոտ եղած ամբողջ տեսարանը. նա գլխի ընկավ, որ այն ժամանակ բացի դռնապաններից, այնտեղ էլի մի քանի մարդիկ էին կանգնած, կային նաև կանայք։ Նա հիշեց, որ մեկը առաջարկում էր իրեն, Ռասկոլնիկովին, տանել ուղղակի թաղամաս։ Նա չէր կարողանում հիշել խոսողի դեմքը ու հիմա էլ չէր ճանաչի, բայց չէր մո-

ռացել, որ ինքը նրան ինչ-որ պատասխան էր տվել, շուտ եկել նրա կողմը...

Ուրեմն ահա թե ինչով վերջացավ երեկվա այդ ամբողջ սարսափը։ Ամենից զարհուրելին այն միտքն էր, որ իրոք, քիչ էր մնում ինքը կորչեր, կործանվեր այդպիսի չնչին հանգամանքի պատճառով։ Ուրեմն բացի բնակարան վարձելու և արյան վերաբերյալ խոսքերից, այդ մարդը ուրիշ ոչինչ չի կարող պատմել։ Ուրեմն Պորֆիրին էլ ոչ մի տրվյալ չունի, բացի այդ զառանցանքից, ոչ մի փաստ չունի, բացի այդ հոգեբանությունից, որը կասկածելի է, ոչ մի հիմնավորված բան։ Ուրեմն եթե այլևս ուրիշ փաստեր մեջտեղ չգան (իսկ դրանք չպետք է հայտնվեն, չպետք է հայտնվեն), ապա... ինքը էլ ինչի՞ց պիտի վախենա։ Ինչո՞վ կարող են վերջնականապես իրեն մերկացնել, թեկուզև ձերբակալեն։ Եվ ուրեմն Պորֆիրին միայն հիմա, միայն այսօր է իմացել բնակարանի մասին, իսկ մինչև այժմ չգիտեր։

— Այդ դո՞ւք եք այսօր Պորֆիրիին ասել... որ ես այնտեղ էի եկել,— գոչեց նա՝ այդ հանկարծակի մտքից ապշած։

— Ո՞ր Պորֆիրիին։

— Քննչական գործերի պրիստավին։

— Ես եմ ասել։ Դռնապանները այն ժամանակ չգնացին, ու ես գնացի։

— Այսո՞ր։

— Եղա ձեզանից մի բոպե առաջ։ Ու ամեն ինչ լսեցի, իմացա, թե նա ինչպես էր ձեզ չարչարում։

— Որտե՞ղ, ի՞նչ, ե՞րբ։

— Հենց այնտեղ, նրա մոտ, շարունակ նստած էի միջնորմի ետեում։

— Ինչպե՞ս,— ուրեմն դո՞ւք էիք սյուրպրիզը։ Այդ ի՞նչպես կարող էր պատահել, ա՛յ քեզ բան։

— Տեսնելով, որ դռնապանները չեն ուզում թաղապետի մոտ գնալ,— ասաց եկվորը,— որովհետև, ասում են, արդեն ուշ է, թաղապետը կարող է բարկանալ, որ անհարմար ժամանակ ենք գնացել, ես նեղացա, քնից էլ զրկվեցի, հետո էլ իմացա տեղը։ Ու երեկ իմանալով, այսօր գնացի։ Առաջին

անգամ գնացի, բայց նա չկար։ Մի ժամ հետո գնացի, չընդունեցին։ Երրորդ անգամ որ գնացի, ներս թողին։ Սկսեցի նրան զեկուցել բոլորը, ինչ որ եղել էր, ու նա սկսեց սենյակով մեկ ֆռռալ, բռունցքը խփել կրծքին. «Այդ ի՞նչպես եք վարվում ինձ հետ, ավազակներ,— ասում է նա,— թե ես իմանայի, որ բանը այդպես է, կպահանջեի, որ նրան բռնեն ու բերեն»։ Հետո դուրս վազեց, կանչեց ինչ-որ մեկին ու սկսեց անկյունում խոսել նրա հետ, հետո էլ դարձավ ինձ, սկսեց հարցուփորձ անել, նախատել։ Ու շատ կշտամբեց. ես նրան ամեն բան զեկուցեցի ու ասացի, որ երեկվա իմ խոսքերին դուք ոչինչ չէիք պատասխանել և ինձ չեք ճանաչել։ Նա էլի սկսեց ֆռռալ, բռունցքը խփել կրծքին, բարկանալ, ետ ու առաջ վազել, ու երբ զեկուցեցին ձեր մասին, ինձ ասաց՝ անցիր միջնորմի ետեը, նստիր առայժմ, մի շարժվիր, ինչ էլ որ լսես, ու ինքն էլ ինձ համար աթոռ բերեց, դուռը փակեց. ասում է՝ գուցե ես քեզ էլի հարցուփորձ անեմ։ Ու հենց որ բերին Նիկոլային, ձեզնից հետո նա ինձ դուրս արեց. ասաց՝ ես քեզ էլի կկանչեմ ու էլի կհարցաքննեմ...

— Նիկոլային քո ներկայությա՞մբ հարցաքննեց։

— Հենց որ ձեզ ճամփեց, իսկույն ինձ էլ ազատ թողեց ու սկսեց հարցաքննել Նիկոլային։

Եկվորը լռեց ու հանկարծ էլի գլուխ տվեց՝ մատը դիպցընելով հատակին։

— Ներեցեք զրպարտությանս և չարությանս համար։

— Թող աստված ների,— պատասխանեց Ռասկոլնիկովը, և հենց որ այդ ասաց, եկվորը էլի գլուխ տվեց նրան, բայց կռացավ արդեն ոչ թե մինչև հատակը, այլ մինչև զոտկատեղը, դանդաղ շուռ եկավ ու սենյակից դուրս ելավ։ «Ամեն ինչ կասկածելի է, հիմա ամեն ինչ կասկածելի է», կրկնեց Ռասկոլնիկովը և ավելի քան երբեք, զըվարթ դուրս ելավ սենյակից։

— Հիմա մենք դեռ կպայքարենք,— ցասկոտ քմծիծաղով ասաց նա՝ իջնելով սանդուղքից։ Ցասումը հենց իրեն էր վերաբերում. նա արհամարհանքով և ամաչելով էր վերհիշում իր «փոքրոգությունը»։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Դունեչկայի ու Պուլլխերիա Ալեքսանդրովնայի հետ Պյոտր Պետրովիչի ճակատագրական բացատրությանը հաջորդած առավոտը իր զգաստացուցիչ ազդեցությունն ունեցավ նաև Պյոտր Պետրովիչի վրա։ Նա մեծագույն անախորժությամբ ստիպված եղավ հետզհետե իբրև կատարված և անդառնալի փաստ ընդունել այն, ինչ որ դեռ նախորդ օրը նրան համարյա ֆանտաստիկ դեպք էր թվում, ու թեև կատարվել էր, բայց և այնպես կարծես թե անհնարին էր։ Խայթված ինքնասիրության սև օձը ամբողջ գիշեր կրծում էր նրա սիրտը։ Անկողնից վեր կենալով, Պյոտր Պետրովիչը իսկույն նայեց հայելուն։ Նա վախենում էր, թե չլինի՞ դիշերվա ընթացքում մազը տարածվել է մարմնով մեկ։ Սակայն այդ կողմից առայժմ ամեն ինչ բարեհաջող էր, ու դիտելով իր երբին, սպիտակ և վերջին ժամանակներում մի քիչ ճարպակալած դեմքը, Պյոտր Պետրովիչը մի ակնթարթ նույնիսկ սփոփվեց, լիովին համոզված լինելով, որ կարող է իր համար հարմնացու գտնել որևէ ուրիշ տեղ, թերևս ավելի լավը. բայց իսկույն ուշքի եկավ և ուժեղ թքեց մի կողմ, որով լռին, բայց սարկաստիկ ժպիտ առաջացրեց իր երիտասարդ բարեկամ ու բնակակից Անդրեյ Սեմյոնովիչ Լեբեզյատնիկովի դեմքին։ Պյոտրը Պետրովիչը նկատեց այդ ժպիտը և մտքում իսկույն կշտամբեց իր երիտասարդ բարեկամին։ Վերջին ժամանակներում նա շատ անգամ էր մտքում կշտամբել Լեբեզյատնիկովին։ Նրա բարկությունը կրկնապատկվեց, երբ նա

հանկարծ մտածեց, որ հարկավոր չէր նախորդ օրվա դեպքը հաղորդել Անդրեյ Սեմյոնովիչին։ Դա երեկվա երկրորդ սխալն էր, որ նա կատարել էր բորբոքված, ջղայնացած վիճակում, ավելորդ սրտաբացություն էր ցուցաբերել... Այնուհետև այդ ամբողջ առավոտը հակառակի պես մի անախորժությունը հաջորդում էր մյուսին։ Նույնիսկ սենատում նրան ինչ-որ անհաջողություն էր սպառում մի գործի վերաբերյալ, որի մասին հոգում էր ինքը։ Նրան առանձնապես ջղայնացրել էր շուտափույթ ամուսնության նկատառումով իր վարձած և իր հաշվով նորոգված բնակարանի տերը. այս բնակարանատերը, ինչ-որ հարստացած գերմանացի արհեստավոր, ոչ մի կերպ չէր համաձայնում խախտել հենց նոր կնքված պայմանագիրը և պահանջում էր պայմանագրում հիշատակված ամբողջ տուժանքը, չնայելով, որ Պյոտր Պետրովիչը համարյա բոլորովին նորոգված բնակարանը վերադարձնում էր նրան։ Ճիշտ նույնպես կահույքի խանութում ոչ մի կերպ չէին ուզում վերադարձնել թեկուզ մի ռուբլի, արդեն գնված, բայց բնակարան չտեղափոխած կահույքի դրավականից։ «Հո կահույքի համար չե՞մ ամուսնանալու», բարկությամբ մտածում էր Պյոտր Պետրովիչը, ու միևնույն ժամանակ նրա մեջ հեռավոր մի հույս էր առկայծում. «Մի՞թե իսկապես այս ամենը անդարձ կորավ ու վերջացավ, մի՞թե չի կարելի նորից հաշտվելու փորձ անել»։ Դոմնեչկայի վերաբերյալ միտքը մի անգամ էլ գայթակղիչ կերպով ճմլեց նրա սիրտը։ Նա տանջանքով անցկացրեց այդ րոպեն, և, իհարկե, եթե կարելի լիներ այժմ հենց միայն ցանկությամբ ոչնչացնել Ռասկոլնիկովին, ապա Պյոտր Պետրովիչը անհապաղ կհայտներ այդ ցանկությունը։

«Բացի դրանից, սխալ էր նաև այն, որ ես նրանց բոլորովին փող չէի տալիս», մտածում էր նա՝ տխուր վերադառնալով Լեբեզյատնիկովի խցիկը. «դրողը տանի, ինչու էի այդպես ժլատացել։ Այստեղ նույնիսկ ոչ մի հաշվենկատություն էլ չկար։ Ես մտածում էի նրանց խեղճ վիճակում պահել, համբերությունից հանել, որպեսզի ինձ վրա նայեին իբրև նախախնամության վրա, իսկ նրանք ա՛յ թե

ինչ արեցին... Թյո՜ւ... Ոչ, եթե այս ամբողջ ժամանակ նրանց տայի, զորօրինակ, մի հազար հինգ հարյուր ռուբլի, օժիտի համար, ու առնեի նվերներ, զանազան զարդատուփեր, մատանիներ, դործվածքներ և այլ բաներ Կնոպի կամ անգլիական խանութից, գործը ավելի լավ կգնար և... հաստատուն կլիներ։ Հիմա այդպես հեշտությամբ ինձ չէին մերժի։ Դրանք այնպիսի մարդիկ են, որ անպայման պարտականություն կհամարեին մերժման դեպքում վերադարձնել թե նվերները և թե փողը. վերադարձնելն էլ հեշտ չէր լինի, կափսոսեին, խղճի կգային, կասեին՝ ինչպե՞ս կարելի է հանկարծ վռնդել մի մարդու, որը մինչև հիմա այդպես առատաձեռն ու քաղաքավարի է եղել... Հը՜մ, վրիպել եմ։ Ու նորից ջղայնանալով, Պյոտր Պետրովիչը իրեն հիմար անվանեց, իհարկե, մտքում։

Հանդելով այդ եզրակացության, նա տուն էր վերադարձել երկու անգամ ավելի չարացած ու ջղայնացած, քան դուրս էր եկել։ Կատերինա Իվանովնայի սենյակում հոգեհացի համար կատարվող պատրաստությունը մասամբ նրան էլ էր հետաքրքրել։ Նա դեռ երեկ էլ էր լսել այդ հոգեհացի մասին. նույնիսկ հիշում էր, որ կարծես իրեն էլ էին հրավիրել. բայց, իր հոգսերով զբաղված, նա այդ ամենը անուշադրությունից էր դուրս թողել։ Շտապելով այդ մասին տեղեկանալ տիկին Լիպևեխզելից, որը Կատերինա Իվանովնայի բացակայությամբ (սա գերեզմանոցումն էր) սեղան սարքելով էր զբաղված, Պյոտր Պետրովիչը իմացավ, որ հոգեհացը հանդիսավոր է լինելու, որ հրավիրված են այդ տան համարյա բոլոր բնակիչները, նույնիսկ այնպիսիները, որոնց հետ հանգուցյալը ծանոթ չէր, որ հրավիրված է նույնիսկ Անդրեյ Սեմյոնովիչ Լեբեզյատնիկովը, չնայելով, որ նա գժտված էր եղել Կատերինա Իվանովնայի հետ, և վերջապես, հրավիրված է նաև ինքը՝ Պյոտր Պետրովիչը, և ոչ միայն հրավիրված է, այլև սպասվում է նույնիսկ մեծ անհամբերությամբ, որովհետև բոլոր հյուրերից նա գրեթե ամենակարևորն է։ Ինքը՝ Ամալյա Իվանովնան մեծ հարգանքով էր հրավիրված, չնայելով եղած բոլոր անախորժություններին, դրա համար էլ այժմ զբաղված էր սեղանի պատրաստությամբ, որը նրան հաճույք

էր պատճառում. նա զուգվել-զարդարվել էր, հագածը թեև սգաշոր էր, բայց բոլորովին նոր էր, մետաքսից կարված, և նա հպարտանում էր դրանով։ Այդ բոլոր փաստերն ու տեղեկությունները Պյոտր Պետրովիչին մտածելու որոշ առիթ տվին, և նա այդպես մտազբաղ անցավ իր սենյակը, այսինքն՝ Անդրեյ Սեմյոնովիչ Լեբեզյատնիկովի սենյակը։ Բանն այն է, որ նա նաև իմացել էր, որ Ռասկոլնիկովն էլ է հրավիրված։

Անդրեյ Սեմյոնովիչը չգիտես ինչու այդ ամբողջ առավոտը նստած էր տանը։ Այդ պարոնի և Պյոտր Պետրովիչի միջև ինչ-որ տարօրինակ, բայց և մասամբ բնական հարաբերություններ էին առաջացել։ Պյոտր Պետրովիչը նույնիսկ չափից դուրս արհամարհում և ատում էր նրան համարյա հենց այն օրվանից, երբ տեղավորվեց նրա մոտ, բայց միևնույն ժամանակ կարծես թե մի քիչ վախենում էր նրանից։ Պյոտր Պետրովիչը Պետերբուրգ ժամանելուն պես նրա մոտ իջևանել էր ոչ միայն ժլատորեն խնայողություն անելու միտումով, թեև դա համարյա գլխավոր պատճառն էր, այլև այստեղ ուրիշ պատճառ էլ կար։ Դեռ դավառում նա լսել էր, որ Անդրեյ Սեմյոնովիչը, իր նախկին նանը, ամենաառաջավոր տերիտասարդ պրոգրեսիստներից է և նույնիսկ զգալի դեր է խաղում որոշ հետաքրքրական և արտառոց խմբակներում։ Դա ապշեցրեց Պյոտր Պետրովիչին։ Ահա հենց այդ զորեղ, ամեն ինչ դիտեցող, բոլորին արհամարհող և բոլորին մերկացնող խմբակները Պյոտր Պետրովիչին ինչ-որ մի առանձին վախ էին պատճառում, որը, սակայն, բոլորովին անորոշ էր։ Իհարկե, նա ինքը, այն էլ դավառում, չէր կարող այդ տեսակ բաների մասին թեկուզև մոտավորապես ճիշտ գաղափար կազմել։ Նա, ինչպես և բոլորը, լսել էր, որ առանձնապես Պետերբուրգում գոյություն ունեն ինչ-որ պրոգրեսիստներ, նիհիլիստներ, անարդարությունները մերկացնողներ և այլն, և այլն, բայց, ինչպես և շատերը, անհեթեթության չափ աղճատում և չափազանցնում էր այդ անունների իմաստն ու նշանակությունը։ Արդեն մի քանի տարի էր, որ նա ամենից շատ վախենում էր մերկացումից, և այդ նրա մշտական, չափազանցրած անհանդստության ամենագլխավոր

հիմքն էր, մանավանդ երբ նա երազում էր իր գործունեությունը փոխադրել Պետերբուրգ։ Այս առումով նա, ինչպես ասվում է, **վախեցած էր**, ինչպես երբեմն **վախեցած են** լինում փոքրիկ երեխաները։ Մի քանի տարի առաջ գավառում, դեռ նոր սկսելով իր գործունեությունը, նա իմացավ, թե ինչպես չարաչար մերկացվեցին բավական նշանավոր նահանգական երկու գործիչներ, որոնցից մինչ այդ նա կաուչում էր և որոնք նրան հովանավորում էին։ Մերկացվածներից մեկի գործը ուղղակի խայտառակ վերջավորություն ունեցավ, իսկ մյուսի գործը քիչ մնաց նույնիսկ մեծ դլխացավանքի պատճառ դառնար։ Ահա թե ինչու Պյոտր Պետրովիչը Պետերբուրգ ժամանելուն պես որոշեց անմիջապես տեղեկանալ, թե ինչումն է բանը, ու եթե հարկավոր է, ապա համենայն դեպս առաջ վազել և հաճոյանալ «մեր երիտասարդ սերունդներին»։ Այս դեպքում նա հույս էր դնում Անդրեյ Սեմյոնովիչի վրա, ու այցելելով, օրինակ, Ռասկոլնիկովին, արդեն սովորել էր մի կերպ կլորացնել ուրիշից լսած մի քանի ֆրազներ...

Իհարկե, նա կարողացավ արագությամբ գլխի ընկնել, որ Անդրեյ Սեմյոնովիչը չափազանց գռեհիկ ու ցանցառամիտ մարդ է։ Բայց դա բնավ չփոխեց Պյոտր Պետրովիչի համոզմունքը և չքաջալերեց նրան։ Եթե նա նույնիսկ հավատացած լիներ, որ բոլոր պրոգրեսիոներն էլ նույնպիսի հիմարներ են, ապա այդ դեպքում էլ չէր անցնի նրա անհանգստությունը։ Իսկապես ասած, նա ամենևին էլ գլուխ չուներ այդ բոլոր ուսմունքների, մտքերի, սիստեմների հետ (որոնցով Անդրեյ Սեմյոնովիչը հարձակվում էր նրա վրա)։ Նա իր սեփական նպատակն ուներ։ Նրան հարկավոր էր շուտափույթ և անհապաղ տեղեկանալ, թե այստեղ ի՞նչ է պատահել և ինչպես է պատահել, այդ մարդիկ ուժ ունե՞ն, թե՞ ոչ, ինքը վախենալո՞ւ է որևէ բանից, թե՞ ոչ։ Եթե ինքը այսինչ գործը ձեռնարկի, իրեն կմերկացնե՞ն, թե՞ չեն մերկացնի։ Իսկ եթե կմերկացնեն, ապա ինչի՞ համար և առհասարակ հիմա ինչի՞ համար են մերկացնում։ Դեռ ավելին. արդյոք չի՞ կարելի որևէ կերպ հաճոյանալ նրանց և իսկույն խաբել, եթե նրանք իսկապես ուժեղ են։ Հարկավո՞ր է դա, թե՞ հարկավոր չէ։ Արդյո՞ք չի կարելի,

զորօրինակ, հենց նրանց միջոցով որևէ բան սարքել իր կարիերայի օգտին։ Մի խոսքով, հարկավոր էր հարյուրավոր հարցեր լուծել։

Այդ Անդրեյ Սեմյոնովիչը նիհար և դեղձախտավոր, կարճահասակ մի մարդ էր, ծառայել էր ինչ-որ մի տեղ, տարօրինակության չափ բաց-շիկահեր էր, կոտլետի ձևի այտամորուքով, որով շատ էր հպարտանում։ Բացի դրանից, նրա աչքերը համարյա միշտ ցավում էին։ Նա բավական փափկասիրտ էր, բայց խոսում էր միանգամայն ինքնավստահորեն և երբեմն էլ նույնիսկ խիստ գոռոզաբար, որ իր կերպարանքի համեմատությամբ համարյա միշտ ծիծաղելի էր դուրս գալիս։ Ամալյա Իվանովնայի աչքում նա բավական պատվավոր հյուրերից մեկն էր համարվում, այսինքն՝ հարբեցողություն չէր անում և բնակարանավարձը կանոնավոր էր վճարում։ Չնայած այդ բոլոր հատկություններին, Անդրեյ Սեմյոնովիչը իրոք մի քիչ թեթևամիտ էր։ Նա սիրով էր հարել պրոգրեսին և «մեր երիտասարդ սերունդներին»։ Նա մեկն էր դռեհիկների անթիվ ու այլադեմ լեգիոնից, տկար օրապակասներից և ոչ մի բան լրիվ չտվորած խևերից, որոնք անպայման, վայրկենապես հարում են ամենամոդայական, բերնեբերան անցնող գաղափարին, որպեսզի անմիջապես գռեհկացնեն այն, որպեսզի իսկույն ծաղրանկարի վերածեն այն ամենը, ինչին հենց իրենք երբեմն միանգամայն անկեղծորեն են ծառայում։

Չնայելով, որ Լեբեզյատնիկովը նույնիսկ շատ բարի էր, այնուամենայնիվ նույնպես սկսել էր մասամբ չհանդուրժել իր բնակակից և նախկին խնամակալ Պյոտր Պետրովիչին։ Երկուստեք այդ եղավ մի տեսակ պատահականորեն և փոխադարձաբար։ Որքան էլ ցանցառամիտ էր Անդրեյ Սեմյոնովիչը, այնուամենայնիվ սկսեց հետզհետե նկատել, որ Պյոտր Պետրովիչը նրան խաբում է և ծածուկ արհամարհում, և «բոլորովին ուրիշ տեսակի է այդ մարդը»։ Անդրեյ Սեմյոնովիչը փորձեց նրա առջև շարադրել Ֆուրյեի սիստեմը և Դարվինի թեորիան, բայց Պյոտր Պետրովիչը, մանավանդ վերջին ժամանակներում, սկսեց մի տեսակ ծաղրանքով լսել նրան, իսկ ամենավերջին օրերում

նույնիսկ նախատինք էր կարդում նրա հասցեին։ Բանն այն է, որ նա բնազդաբար սկսում էր հասկանալ, որ Լեբեզյատնիկովը ոչ միայն դռեհիկ է ու ցանցառամիտ, այլև գուցե ստախոս է, որ նա ամենևին էլ կարևոր կապեր չունի նույնիսկ իր խմբակում, ու հենց միայն ուրիշներից լսած խոսքերն է մեջտեղ բերում։ Ավելին, իր պրոպագանդային գործն էլ թերևս կարգին չգիտե, որովհետև ինչ-որ չափից դուրս շշկլվում է, ուրեմն էլ ո՞րտեղից կարող է միրկացնող լինել։ Ի դեպ, անցողակի հիշատակենք, որ Պյոտր Պետրովիչը այդ մեկ ու կես շաբաթում (մանավանգ սկզբում) Անդրեյ Սեմյոնովիչից նույնիսկ խիստ տարօրինակ գովասանքներ էր ընդունում, օրինակ, չէր առարկում և լռում էր, երբ Անդրեյ Սեմյոնովիչը ակնարկում էր, որ իբր թե նա պատրաստ է օժանդակելու հետագայում Մեշչանսկայա փողոցում արագորեն նոր «Կոմունա» կազմակերպելու գործին. կամ, օրինակ, չի խանգարի Դունեչկային, եթե սա ամուսնության հենց առաջին ամսում սիրեկան գտնի, կամ չի մկրտի իր ապագա երեխաներին և այլն, և այլն՝ հար և նման բաներ։ Պյոտր Պետրովիչը ըստ իր սովորության չէր առարկում իրեն վերագրվող նման հատկություններին դեմ և թույլ էր տալիս նույնիսկ այդ կերպ էլ իրեն գովաբանել, այնքա՞ն հաճելի էր նրան ամեն տեսակ գովասանքը։

Պյոտր Պետրովիչը, որ այդ առավոտ ինչ-որ պատճառներով մի քանի հինգ տոկոսանոց բանկնոտներ էր մանրել, նստած էր սեղանի առաջ և թղթադրամների ու գանձարանային տոմսերի կապոցներ էր հաշվում։ Անդրեյ Սեմյոնովիչը, որ համարյա երբեք փող չէր ունենում, քայլում էր սենյակում և այնպես էր ձևացնում, թե անտարբերությամբ և նույնիսկ արհամարհանքով է նայում այդ բոլոր կապոցներին։ Պյոտր Պետրովիչը ոչ մի կերպ չէր հավատա, թե Անդրեյ Սեմյոնովիչը իսկապես կարող է անտարբերությամբ նայել այդ փողերին. իսկ Անդրեյ Սեմյոնովիչը իր հերթին դառնությամբ մտածում էր, թե Պյոտր Պետրովիչը թերևս իրոք ընդունակ է այդ կերպ մտածելու իր մասին, ու թերևս ուրախ է, որ կարող է թղթադրամների դարսված կապոցներով ջղայնացնել ու ձեռ առնել իր երիտասարդ

բարեկամին՝ հիշեցնելով նրա ոչնչությունը և իբր թե նրանց երկուսի միջև գոյություն ունեցող ամբողջ տարբերությունը։

Նա տեսնում էր, որ այս անգամ Անդրեյ Սեմյոնովիչը չափազանց ջղայնացած է և անուշադիր, չնայելով, որ սկսել է նրա առջև շարադրել իր սիրած թեման նոր, առանձին «Կոմունա» հիմնելու մասին։ Կարճ առարկությունները և դիտողությունները, որ Պյոտր Պետրովիչը անում էր համբրիչի չխկչխկոցի ընդմիջումներին, բոլորովին բացահայտ ծաղրանք էին արտահայտում, այն էլ դիտավորյալ անքաղաքավարությամբ։ Բայց «մարդասեր» Անդրեյ Սեմյոնովիչը Պյոտր Պետրովիչի այդ տրամադրությունը վերագրում էր նախորդ օրը Դունեչկայի հետ գժտվելու տպավորությանը և մեծ ցանկություն ուներ շուտափույթ խոսք բացել այդ թեմայի շուրջ. նա այդ ասթիվ առաջադիմական և պրոպագանդայի բնույթի որոշ բաներ ուներ ասելու, որ կարող էր սփոփել իր հարգելի բարեկամին և «անկասկած» օգուտ բերել նրա հետագա գործունեությանը։

— Ի՞նչ հոգեհաց է կազմակերպվում այդ... այրիացած կնոջ մոտ,— հանկարծ հարցրեց Պյոտր Պետրովիչը՝ Անդրեյ Սեմյոնովիչին, ընդհատելով նրա ճառի ամենահետաքրքիր տեղում։

— Իբր թե չգիտեք. ես հո երեկ էի ձեզ հետ խոսում հենց այդ թեմայի շուրջ և արտահայտվում էի այդ բոլոր ծեսերի մասին։ Ես լսել եմ, որ նա ձեզ էլ է հրավիրել։ Դուք ինքներդ երեկ խոսում էիք նրա հետ...

— Ես ոչ մի կերպ չէի սպասում, որ այդ աղբատ, հիմար կինը քեյեֆի համար կծախսի ամբողջ փողը, որ ստացել էր այն մյուս հիմարից... Ռասկոլնիկովից։ Անցնելիս նույնիսկ զարմացա. մեծ պատրաստություն է տեսել, գինի ինչքան ուզես.. կանչված է մի քանի մարդ, սատանան գիտե, թե ինչ է դա,— շարունակեց Պյոտր Պետրովիչը՝ հարցուփորձ անելով իր բարեկամին։ Ինչ-որ նպատակով նա ձգտում էր իր բարեկամին խոսեցնել այդ ուղղությամբ։ — Ի՞նչ, դուք ասում եք, որ ի՞նձ էլ է հրավիրել,— հանկարծ ավելացրեց նա՝ բարձրացնելով գլուխը։— Այդ ե՞րբ է եղել։ Չեմ հիշում։ Սակայն ես չեմ գնա։ Ի՞նչ գործ ունեմ

այնտեղ։ Ի միջի այլոց երեկ ես այդ կնոջը ասացի, որ նա, որպես աստիճանավորի աղքատ այրի կին, թերևս կարող է նրա տաբեկան ռուբլի չափ փող ստանալ իրրև միանվագ նպաստ։ Հա դրա համար չէ՞, որ նա հրավիրում է ինձ, քա՛հ-քա՛հ։

— Ես էլ մտադիր չեմ գնալ,— ասաց Լեբեզյատնիկովը։

— Էլ ի՞նչպես գնալ, ձեր սեփական ձեռքերով եք դնքսել նրան։ Իհարկե, անհարմար է, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

— Ո՞վ է դնքսել, ո՞ւմ,— հանկարծ շփոթվեց և նույնիսկ կարմրեց Լեբեզյատնիկովը։

— Դե դուք, էլի, Կատերինա Իվանովնային, մի ամիս առաջ, թե ինչ։ Երեկ լսեցի... Ահա քեզ և համոզմունքներ... Կանանց հարցն էլ ձախողվեց։ Քա՛հ-քա՛հ-քա՛հ։

Ու Պյոտր Պետրովիչը կարծես սփոփվելով, դարձյալ սկսեց չխկացնել համրիչի հատերը։

— Այդ բոլորը դատարկ բան է և զրպարտություն է,— տաքացավ Լեբեզյատնիկովը, որը մշտապես վախենում էր այդ պատմությունը հիշեցնելուց,— բանը ամենևին էլ այդպես չի եղել։ Ուրիշ կերպ է եղել... Դուք սխալ եք լսել. դա բամբասանք է։ Այն ժամանակ ես միայն պաշտպանվում էի։ Նա առաջինը իր ճանկերով հարձակվեց ինձ վրա ...Նա պոկեց ամբողջ այտամորուքս։ Ամեն մարդու էլ թույլատրվում է պաշտպանել իր անձնավորությունը։ Այն էլ ասած, ես ոչ ոքի թույլ չեմ տա բռնանալ ինձ վրա... Սկզբունքով թույլ չեմ տա, որովհետև այդ արդեն համարյա բռնակալություն է։ Ի՞նչ անեի ես, անշարժ կանգնեի՞ նրա առաջ։ Ես նրան միայն ետ հրեցի։

— Քա՛հ-քա՛հ-քա՛հ,— Լուժինը շարունակում էր ծիծաղել չարախնդությամբ։

— Դուք այդ մեջտեղ եք բերում, որովհետև ինքներդ վրդովված եք ու չարացած... Իսկ դա հիմար բան է և ամենևին, ամենևին չի վերաբերում կանանց հարցին։ Դուք այդ սխալ եք հասկանում։ Ես նույնիսկ մտածում էի՝ եթե ընդունված է, որ կինը տղամարդուն հավասար է ամեն ինչով, նույնիսկ ուժով (այդ արդեն ապացուցում են), ապա

ուրեմն այստեղ էլ պետք է հավասարություն լինի։ Իհարկե, հետո ես մտածեցի, որ էապես այդպիսի հարց չպետք է լինի, որովհետև տուրուղմբոց էլ չպետք է լինի, ապագա հասարակության մեջ անհրաժեշտ են տուրուղմբոցի դեպքերը... Իհարկե, տարօրինակ կլիներ տուրուղմբոցի մեջ էլ հավասարություն փնտրել։ Ես այնքան էլ հիմար չեմ ... Թեև ի միջի այլոց տուրուղմբոցը կա... այսինքն՝ հետո չի լինի, իսկ հիմա դեռ կա... Թյո՛ւ, գրողը տանի, ձեզ հետ մարդ շշկլվում է։ Այդ անախորժության պատճառով չէ, որ ես քելեխի չեմ գնա։ Ես ուղղակի սկզբունքով չեմ գնա, որպեսզի չենթարկվեմ քելեխների գարշ նախապաշարմունքին, այ թե ինչ։ Ասենք, գուցե և կարելի է գնալ հենց այնպես, ծիծաղելու համար... Ափսոս որ տերտերներ չեն լինի։ Եթե լինեին, անպայման կգնայի։

— Այսինքն՝ նստել ուրիշի աղուհացին ու հենց տեղնուտեղը թքե՞լ դրա վրա, այսինքն՝ նաև ձեզ հրավիրողների վրա... Այդպե՞ս է, թե ինչ։

— Ամենևին էլ չթքել, այլ բողոքել։ Ես օգտակար նպատակ եմ հետապնդում։ Ես կարող եմ անուղղակի կերպով օժանդակել մարդկանց զարգացմանը և պրոպագանդային։ Ամեն մարդ պարտավոր է մարդկանց զարգացնել և պրոպագանդել, ու թերևս որքան դա խիստ լինի, այնքան լավ։ Ես կարող եմ դաղափար, հատիկ սերմանել... Այդ հատիկից կաճի փաստը։ Ինչո՞վ եմ ես նրանց վիրավորում։ Սկզբում կվիրավորվեն, իսկ հետո իրենք էլ կտեսնեն, որ ես իրենց օգուտ եմ բերել։ Մեզանում մեղադրում էին Տերեբևային (որը հիմա կոմունայում է), թե նա հեռացավ ընտանիքից և... տղամարդու հանձնվեց, ապա մորն ու հորը գրեց, որ չի ուզում նախապաշարմունքների ենթարկվել և քաղաքացիական ամուսնության է դիմում, և իբր թե դա չափազանց կոպիտ վերաբերմունք է դեպի ծնողները, կարելի էր խնայել նրանց, ավելի մեղմ գրել։ Իմ կարծիքով այդ բոլորը դատարկ բան է, ամենևին էլ հարկավոր չէր մեղմ գրել, ընդհակառակը, ընդհակառակը, հենց այդպես էլ պետք էր վարվել։ Հրե՛ն, Վարենցը յոթ տարի ապրեց ամուսնու հետ, թողեց նրան ու երկու երեխաներին և ամուսնուն իսկույն գրեց՝ «ես գիտակցեցի, որ չեմ կարող

Հեղ հետ երջանիկ լինել։ Երբեք չեմ ների ձեզ, որ դուք ինձ խաբում էիք, ինձնից թաքցնում էիք, որ գոյություն ունի հասարակության ուրիշ կառուցվածք՝ կոմունաների միջոցով։ Ես վերջերս այդ բոլորը իմացա մի մեծահոգի մարդուց, որին հանձնվեցի և նրա հետ մեկտեղ կոմունա եմ հիմնում։ Շիտակ եմ ասում, որովհետև ձեզ խաբելը անպատվաբեր եմ համարում։ Ապրեցեք ինչպես որ ձեզ հաճելի է։ Ինձ վերադարձնելու հույս մի ունենաք, դուք շատ եք ուշացել։ Ձեզ երջանկություն եմ ցանկանում»։ Ահա թե, ինչպես են գրվում այսպիսի նամակները։

— Դա հենց այն Տերենքևա՞ն է, որի մասին դուք ասում էիք, թե երրորդ անգամ է ամուսնացել քաղաքացիական կարգով։

— Ընդամենը միայն երկրորդ անգամ, եթե դատենք ինչպես հարկն է՝ թեկուզև չորրորդ, տասնհինգերորդ անգամ լիներ, այդ բոլորը դատարկ բան է։ Ավելի քան երբևէ, ես այժմ ցավում եմ, որ հայրս ու մայրս մեռել են։ Ես մի քանի անգամ նույնիսկ երազում էի, որ եթե նրանք դեռ կենդանի լինեին, ես նրանց կդաղեի իմ հակաճառություններով։ Հենց այդպես էլ կվարվեի... Ես հո ինքնուրույնացած մարդ էի։ Ես նրանց ցո՛ւյց կտայի, ես նրանց կդարմացնեի, ափսոս որ ոչ ոք չկա։

— Որպեսզի զարմացնե՞ք, քա՛հ-քա՛հ։ Էհ, թող դա այնպես լինի, ինչպես որ դուք եք ցանկանում,— ընդհատեց Պյոտր Պետրովիչը,— իսկ դուք ա՛յ թե ինչ ասեք. դուք հո ճանաչում եք հանգուցյալի այդ լղարիկ աղջկան։ Ճի՞շտ է այն, ինչ որ ասում են նրա մասին, հը՞։

— Ի՞նչ կա որ։ Ըստ իս, այսինքն՝ իմ անձնական համոզմամբ, դա կնոջ ամենանորմալ վիճակն է որ կա։ Ինչո՞ւ չի կարելի այդպես լինել։ Այսինքն distinguons[1]։ Այժմյան հասարակության մեջ, իհարկե, դա այնքան էլ նորմալ չէ, որովհետև ստիպողական է, իսկ ապագա հասարակության մեջ միանգամայն նորմալ կլինի, որովհետև ազատ կլինի։ Հիմա էլ նա դրա համար իրավունք ուներ. նա տառապում էր, իսկ դա նրա ֆոնդն էր, այսպես ասած՝

---

1 Տարբերենք (ֆրանս)։

կապիտալը, և նա լիակատար իրավունք ուներ տնօրինելու այդ կապիտալը։ Հասկանալի է, որ ապագա հասարակության մեջ ֆոնդերի կարիք չի լինի. բայց նրանց դերը այլ նշանակություն կունենա, պայմանավորված կլինի ներդաշնակորեն ու նպատակահարմար ձևով։ Ինչ վերաբերում է անձնապես Սոֆյա Սեմյոնովնային, ապա ներկայումս ես նրա արարմունքները համարում եմ եռանդուն և կտրական բողոք հասարակության կառուցվածքի դեմ և դրա համար խորապես հարգում եմ նրան։ Նույնիսկ ուրախանում եմ նրան նայելիս։

— Իսկ ինձ պատմել են, որ հենց դուք նրան դուրս էիք արել այստեղից, բնակարանից։

Լեբեդյատնիկովը նույնիսկ կատաղեց.

— Այդ էլ ուրիշ բամբասանք է,— բղավեց նա։— Ամենևին, ամենևին այդպիսի բան չի եղել։ Դա բոլորովին սուտ է։ Դա այն ժամանակ Կատերինա Իվանովնան էր մոգոնել, որովհետև ոչինչ չէր հասկացել։ Ես բնավ չեմ նեղել Սոֆյա Սեմյոնովնային։ Ես աշխատում էի առանց որևէ շահախնդրության զարգացնել նրան, իր մեջ բողոք հարուցել... Ինձ միայն բողոքն էր հարկավոր, իսկ Սոֆյա Սեմյոնովնան ինքնին չէր կարող մնալ այստեղի բնակարաններում։

— Կոմունա՞ էիք կանչում, ինչ է։

— Դուք շարունակ ծիծաղում եք և շատ անհաշող, թույլ տվեք սա ասել ձեզ։ Դուք ոչինչ չեք հասկանում։ Կոմունայում այդպիսի դերեր չկան։ Կոմունան հենց նրա համար է կազմակերպվում, որ այդպիսի դերեր չլինեն։ Կոմունայում այդ դերը կփոխի այժմյան իր ամբողջ էությունը, ու ինչ-որ այստեղ հիմար բան է, այնտեղ խելացի կլինի, ինչ-որ այստեղ, ներկա հանգամանքներում, անբնական է, այնտեղ բոլորովին բնական կլինի։ Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպիսի պայմաններում և ինչպիսի միջավայրում է գտնվում մարդը։ Ամեն ինչ միջավայրից է, իսկ մարդը ինքը ոչինչ է։ Սոֆյա Սեմյոնովնայի հետ ես հիմա էլ համերաշխ եմ, դա կարող է ձեզ համար ապացույց լինել. նա ինձ երբեք չի համարել իր թշնամին և իրեն վիրավորող։ Այո, հիմա ես նրան կոմունա եմ կանչում, միայն թե բոլորովին,

բոլորովին այլ հիմունքներով։ Ի՞նչ եք ծիծաղում։ Մենք ուզում ենք հիմնել մեր, առանձին կոմունան, միայն թե ավելի լայն հիմունքներով, քան առաջվա կոմունաները։ Մենք մեր համոզմունքներով ավելի հեռու ենք գնացել։ Մենք ավելի շատ բան ենք ժխտում։ Եթե Դոբրոլյուբովը գերեզմանից դուրս գար, ես կվիճեի նրա հետ։ Իսկ Բելինսկուն հո կգլորեի։ Իսկ առայժմ ես շարունակում եմ զարգացնել Սոֆյա Սեմյոնովնային։ Նա հիանալի, հիանալի բնավորություն ունի։

— Եվ դուք օգտվում եք հիանալի բնավորությունից, չէ՞։ Քա՛հ-քա՛հ։

— Ո՛չ, ո՛չ, օ՛, ո՛չ, ընդհակառակը։

— Հիմա է՞լ ընդհակառակը։ Քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Բա՛ն ասացեք, էլի։

— Հավատացեք, ախր ի՞նչ պատճառներով ես այդ պետք է թաքցնեի ձեզնից, ասացեք խնդրեմ։ Ընդհակառակը, նույնիսկ ինձ էլ տարօրինակ է թվում, որ նա իմ առջև խիստ քաշվում, ինչ-որ երկչոտությամբ ողջախոհ և ամոթխած է լինում։

— Եվ դուք, իհարկե, զարգացնում եք նրան... քա՛հ-քա՛հ-քա՛հ, ապացուցում եք, որ այդ բոլոր ամոթխածությունները դատարկ բաներ են, այնպես չէ՞...

— Բնավ ոչ, բնավ ոչ։ Օ՛, որքա՞ն դուք կոպիտ կերպով, նույնիսկ հիմարաբար եք հասկանում «զարգացում» բառը, ներեցեք ինձ։ Դուք ոչինչ չեք հասկանում։ Ասված իմ, որքա՞ն դուք... ետ եք մնում։ Մենք կնոջ ազատություն ենք փնտրում, իսկ դուք այ թե ինչեր եք մտածում... բոլորովին մի կողմ թողնելով ողջախոհության և կանացի ամոթխածության հարցը, որպես ինքնին անօգուտ և նույնիսկ նախապաշարմունքային բաներ, ես միանգամայն, միանգամայն հնարավոր եմ համարում նրա ողջախոհությունը իմ հանդեպ, որովհետև այդ է նրա ամբողջ կամքը, նրա ամբողջ իրավունքը։ Հասկանալի է, որ եթե նա ինքը ինձ ասեր՝ «ես ուզում եմ ունենալ քեզ», ապա ես իմ գործը հաջողված կհամարեի, որովհետև այդ աղջիկը ինձ շատ է դուր գալիս. նրա հետ, իհարկե, ոչ ոք ու երբեք այնպես քաղաքավարի ու բաբեկիրթ ձևով չի վարվել, ինչպես ես, այնպես հարգանքով չի վերաբերվել դեպի նրա արժանիքը, ինչպես ես... Ես սպառում եմ ու հույսով սփոփվում, ուրիշ ոչինչ։

— Ավելի լավ է դուք նրան մի որևէ բան նվիրեցեք։ Գրաշ եմ գալիս, որ դուք այդ մասին չեք էլ մտածել։

— Ոչ-ի՞նչ չեք հասկանում, էլի եմ ասում ձեզ։ Դե իհարկե, նրա վիճակն այդպես է, բայց այստեղ մի ուրիշ հարց կա, բոլորովին ուրիշ։ Դուք պարզապես արհամարհում եք նրան։ Տեսնելով փաստը, որը ձեր սխալ կարծիքով արժանի է արհամարհման, դուք արդեն հրաժարվում եք մարդկային արարածին մոտեցիրաբար նայելուց։ Դուք դեռ չգիտեք, թե նա ինչպիսի բնավորություն ունի։ Ես շատ եմ ցավում, որ նա վերջին ժամանակներս վերջ է տվել ընթերցանության ու այլևս ինձնից գրքեր չի վերցնում։ Իսկ առաջ վերցնում էր։ Ցավում եմ նույնպես, որ իր ամբողջ էներգիայով և բողոքելու վճռականությամբ հանդերձ, որը նա մի անգամ արդեն ապացուցել է, նրա մեջ կարծես դեռ քիչ է ինքնուրույնությունը, այսպես ասած՝ անկախությունը, քիչ է ժխտողականությունը, որոնցով կարողանար բոլորովին կտրվել որոշ նախապաշարմունքներից և... հիմարություններից։ Չնայած դրան, մի շարք հարցեր նա շատ լավ է հասկանում։ Օրինակ, նա հիանալի հասկացավ ձեռքը համբուրելու հարցը, այսինքն այն, որ եթե տղամարդը համբուրում է կնոջ ձեռքը, դրանով վիրավորում և իրեն հավասար չի համարում նրան*։ Այս հարցը քննարկվեց մեզ մոտ ու ես դա իսկույն հաղորդեցի նրան։ Ֆրանսիական բանվորների ասոցիացիայի մասին նա նույնպես ուշադրությամբ լսեց։ Հիմա ես նրան բացատրում եմ ապագա հասարակության մեջ ազատորեն սենյակները մտնելու հարցը։

— Իսկ դա ի՞նչ բան է։

— Վերջին ժամանակներս քննարկվեց այն հարցը, թե արդյոք կոմունայի անդամը իրավունք ունի՞ ամեն ժամանակ մտնել մյուս անդամի, տղամարդու կամ կնոջ սենյակը... ու որոշվեց, որ ունի...

— Լավ, իսկ եթե մեկը կամ մյուսը այդ բոպեին անհրաժեշտ պահանջներով է զբաղվա՞ծ, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

Անդրեյ Սեմյոնովիչը նույնիսկ բարկացավ։

— Դուք էլի այդ մասին եք խոսում... Դուք ուզում եք հենց միայն այդ անիծված «պահանջները» մեջտեղ բերել,— ատելությամբ գոչեց նա,— Թյո՛ւ, որքա՞ն եմ ես վրդովվում

և սրտնեղում, որ շարադրելով սիստեմը, ձեզ վաղաժամ եմ հիշեցրել այդ անիծված պահանջները։ Գրողը տանի։ Դա փորձաքար է ձեզ նման բոլոր մարդկանց համար, որոնք նախքան գործի էությունն իմանալը դա ծաղրի առարկա են դարձնում։ Եվ իբր թե իրավացի են։ Չգիտես ինչով են հըպարտանում։ Թյո՛ւ։ Ես մի քանի անգամ պնդում էի, որ նորեկներին այդ ամբողջ հարցը կարելի է բացատրել ոչ այլ կերպ, քան վերջում, երբ նրանք արդեն յուրացրել են մեր սիստեմը, երբ մարդը արդեն զարգացած է և նրան ուղղություն է տրված։ Ասացեք խնդրեմ, դուք ի՞նչ, ի՞նչ արհամարհելի բան եք գտնում թեկուզ հենց աղբահորերը մաքրելու մեջ։ Ես առաջինը պատրաստ եմ մաքրելու ամեն տեսակ աղբահորեր։ Այստեղ նույնիսկ ոչ մի ինքնագոհություն էլ չկա։ Այստեղ կա սոսկ աշխատանք, հասարակությանը օգտակար ազնիվ գործունեություն, որը արժե ուրիշ ամեն մի գործունեության և շատ ավելի բարձր է, օրինակ, մի որևէ Ռաֆայելի կամ Պուշկինի գործունեությունից, որովհետև օգտակար է։

— Եվ ավելի ազնիվ է, ավելի ազնիվ, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

— Ի՞նչ ասել է ավելի ազնիվ։ Ես այդպիսի արտահայտությունները չեմ հասկանում մարդկային գործունեությունը որոշելու իմաստով։ «Ավելի ազնիվ», «ավելի մեծահոգի», այդ ամենը դատարկ բան է, անհեթեթություն, հին, նախապաշարմունքային խոսքեր, որոնք ես բացասում եմ։ Ազնիվ է այն ամենը, ինչ որ օգտակար է մարդկությանը։ Ես հասկանում եմ միայն մի բառ՝ օգտակար է։ Ինչքան էլուզեք քրքջացեք, դա այդպես է։

Պյոտր Պետրովիչը շատ էր ծիծաղում։ Նա արդեն վերջացրեց հաշվելը և փողը դրեց գրպանը։ Սակայն դրա մի մասը չգիտես ինչու դեռ մնում էր սեղանի վրա։ Այդ «աղբահորերի հարցը», չնայած իր ողջ գեհենի, արդեն մի քանի անգամ Պյոտր Պետրովիչի և նրա երիտասարդ բարեկամի միջև պառակտման ու անհամերաշխության առիթ էր դարձել։ Ամբողջ անմտությունն այն էր, որ Անդրեյ Սեմյոնովիչը իրոք բարկանում էր։ Լուժինը զվարճանում էր դրանով, իսկ ավյալ րոպեին նա առանձնապես ուզում էր մի քիչ շարացնել Լեբեզյատնիկովին։

— Դուք երեկվա ձեր անհաջողության պատճառով եք այդպես ննջում և ինձ ձեռ առնում,— վերջապես ասաց Լեբեզյատնիկովը։ Չնայած իր ողջ «անկախության» և բոլոր «բոզոքներին», նա ընդհանրապես չէր համարձակվում հակաճառել Պյոտր Պետրովիչին և առհասարակ նրա հանդեպ ինչ-որ հարգանք էր տածում, որը դեռ անցած տարիներից իր համար սովորական էր դարձել։

— Ավելի լավ է դուք ա՛յ թե ինչ ասեք,— զոռոզաբար և սրտնեղելով նրան ընդհատեց Պյոտր Պետրովիչը,— արդյոք դուք կարո՞ղ եք... կամ ավելի լավ է ասել՝ արդյո՞ք դուք իսկապես այնքան մոտիկ եք այդ դեռահաս անձնավորությանը, որպեսզի նրան ինդրեք հենց հիմա մի բոպեով գալ այստեղ, այս սենյակը։ Կարծեմ բոլորն էլ վերադարձել են դերեզմանոցից... Ես լսում եմ նրանց ոտնաձայները... Ինձ հարկավոր է տեսնել նրան, այդ աղջկան։

— Դա ձեր ինչի՞ն է պետք,— զարմանքով հարցրեց Լեբեզյատնիկովը։

— Այնպես, էլի, հարկավոր է։ Այսօր-վաղը ես կմեկնեմ այստեղից, դրա համար էլ կցանկանայի նրան մի բան հաղորդել... Մեր խոսակցության ժամանակ դուք էլ կարող եք այստեղ լինել։ Դա նույնիսկ ավելի լավ է։ Թե չէ ասված գիտե, թե ինչ կմտածեք։

— Ես ոչինչ էլ չեմ մտածի... Ես հենց այնպես հարցրի, ու եթե դուք գործ ունեք, ապա չկա ավելի հեշտ բան, քան նրան կանչելը։ Հիմա կգնամ։ Հավատացած եղեք, որ ես ձեզ չեմ խանգարի։

Իսկապես, հինգ րոպե հետո Լեբեզյատնիկովը վերադարձավ Սոնեչկայի հետ։ Վերջինս ներս մտավ չափազանց զարմացած և ըստ իր սովորության, երկչոտելով։ Նա միշտ երկչոտում էր նման դեպքերում և խիստ վախենում էր նոր անձնավորություններից ու նոր ծանոթություններից, վախենում էր առաջ էլ, դեռ մանկությունից, իսկ հիմա է՛լ ավելի էր վախենում... Պյոտր Պետրովիչը նրան դիմավորեց «սիրալիր ու քաղաքավարի», սակայն ինչ-որ ուրախ մտերմավարությամբ, որը Պյոտր Պետրովիչի կարծիքով, վայել էր այնպիսի հարգեալ ու պատկառելի մարդուն, ինչպես ինքը, մի

այնպիսի դեռահաս ու որոշ իմաստով հեռամիտ էակի նկատմամբ, ինչպես Սոնյան։ Պյոտր Պետրովիչը շտապեց «քաջալերել» նրան ու նստեցրեց սեղանի մոտ, իր դիմաց։ Սոնյան նստեց, նայեց շուրջը, նայեց Լեբեզյատնիկովին, սեղանին դրված փողերին, հետո հանկարծ էլի Պյոտր Պետրովիչին ու այլևս աչքը չկտրեց նրանից, կարծես գամվեց նրան։ Լեբեզյատնիկովը քայլեց դեպի դուռը։ Պյոտր Պետրովիչը վեր կացավ, Սոնյային նշան արեց, որ մնա նստած, ու դռան մոտ կանգնեցրեց Լեբեզյատնիկովին։

— Այդ Ռասկոլնիկովը այնտե՞ղ է, եկե՞լ է,— շշնջալով հարցրեց նրան։

— Ռասկոլնիկո՞վը։ Այնտեղ է։ Ի՞նչ կա որ։ Այո, այնտեղ է... Հենց հիմա եկավ, ես տեսա... Ի՞նչ կա որ։

— Ես ձեզ առանձնապես խնդրում եմ մնալ այստեղ, մեզ հետ, ինձ մենակ չթողնել այդ... աղջկա հետ։ Դատարկ բան է, բայց ասված գիտե ինչեր կասեն։ Ես չեմ ուզում, որ Ռասկոլնիկովը այնտեղ բան ասի... Հասկանո՞ւմ եք, թե ես ինչի մասին եմ խոսում։

— Հասկանում եմ, հասկանում եմ,— հանկարծ գլխի ընկավ Լեբեզյատնիկովը։— Այո, դուք իրավացի եք... Իմ անձնական համոզմունքով դուք, իհարկե, ավելորդ երկյուղ եք զգում, բայց և այնպես... դուք իրավացի եք։ Խնդրեմ, ես կմնամ։ Ես կկանգնեմ լուսամուտի մոտ և ձեզ չեմ խանգարի... Ըստ իս, դուք դրա համար իրավունք ունեք...

Պյոտր Պետրովիչը ետ դարձավ, նստեց բազմոցին, Սոնյայի դիմաց, ուշադիր նայեց նրան և հանկարծ խիստ պատկառելի, նույնիսկ մի փոքր խիստ տեսք ընդունեց։ Որպես թե՝ «դու ինքդ ուրիշ բաներ չմտածես, ա՛յ աղջիկ»։ Սոնյան վերջնականապես շփոթվեց։

— Նախ և առաջ խնդրում եմ ձեզ, Սոֆյա Սեմյոնովնա, իմ կողմից ներողություն խնդրեք ձեր շատ հարգելի մայրիկից... Կարծեմ այդպես է, չէ՞ ձեզ մոր տեղ է գալիս Կատերինա Իվանովնան,— ասաց Պյոտր Պետրովիչը խիստ յուրջ տոնով, բայց և բավական սիրալիր։ Երևում էր, որ նա միանգամայն բարեկամական դիտավորություններ ունի։

— Ճիշտ այդպես է, այո. մոր տեղ է գալիս,— հապճեպ ու երկչոտ պատասխանեց Սոնյան։

— Հա՛, դե ուրեմն իմ կողմից ներողություն խնդրեցեք, որ ես ինձնից անկախ պատճառներով ստիպված եմ բացակայել, ներկա չլինել ձեր հացկերույթին... այսինքն հոգեհացին, չնայած ձեր մայրիկի սիրալիր հրավերին։

— Լավ. կասեմ, հենց հիմա,— ու Սոնյան հապճեպ վեր թռավ աթոռից։

— Այդ դեռ բոլորը չէ,— կանգնեցրեց նրան Պյոտր Պետրովիչը՝ ժպտալով նրա պարզամտության և պատշաճությունները չգիտենալու վրա,— դուք ինձ քիչ եք ճանաչում, ամենասիրելի Սոֆյա Սեմյոնովնա, եթե մտածեցիք, թե ես միայն ինձ վերաբերող, աննշան այդ պատճառով կանհանգստացնեի և ինձ մոտ կկանչեի մի այնպիսի անձնավորության, ինչպիսին դուք եք։ Ես ուրիշ նպատակ ունեմ։

Սոնյան հապճեպ նստեց։ Սեղանից չհավաքած գորշ ու ծիածանագույն թղթադրամները դարձյալ երևացին նրա աչքերին, բայց նա իսկույն դեմքը շուռ տվեց դրանցից ու դարձրեց դեպի Պյոտր Պետրովիչը։ Ուրիշի փողերին նայելը հանկարծ սարսափելի անվայել թվաց նրան, մանավանդ նրան։ Նա հայացքը հառեց Պյոտր Պետրովիչի ոսկե լոռնետին, որ վերջինիս ձախ ձեռքին էր, և ապա մեծ, մասսիվ, դեղին քարով ու չափազանց գեղեցիկ մատանուն, որ այդ ձեռքի միջամատին էր, ու հանկարծ էլի շուռ տվեց հայացքը, ու չգիտենալով ինչ անել, դարձյալ ուղիղ նայեց Պյոտր Պետրովիչի աչքերին։ Առաջվանից է՛լ ավելի լուրջ տեսք ընդունելով, Պյոտր Պետրովիչը շարունակեց իր խոսքը։

— Երեկ այնպես պատահեց, որ ես հարևանցիորեն միերկու խոսք փոխանակեցի դժբախտ Կատերինա Իվանովնայի հետ։ Այդ բավական էր իմանալու համար, որ նա, եթե կարելի է այսպես արտահայտվել, գտնվում է հակաբնական վիճակում...

— Այո... հակաբնական վիճակում,— իսկույն վրա բերեց Սոնյան։

— Կամ ավելի պարզ ու հասկանալի կլինի ասել՝ հիվանդ վիճակում։

— Այո, պարզ ու հասկ... այո, հիվանդ է։

— Այդպես։ Եվ ահա մարդասիրական զգացմունքից և·հ·ն, այսպես ասած, կաբեկցությունից դրդված, ես կցան-

կանայի իմ կողմից որևէ բանով օգտակար լինել՝ նախատեսելով նրա անխուսափելիորեն դժբախտ ճակատագիրը։ Կարծեմ այդ ամբողջ աղքատ ընտանիքը հիմա միայն ձեր խնամքին է մնացել։

— Թույլ տվեք հարցնել,— հանկարծ վեր կացավ Սոնյան,— երեկ դուք ի՞նչ եք բարեհաճել նրան ասել թոշակ ստանալու հնարավորության մասին։ Դեռ երեկ նա ինձ ասել է, որ դուք հանձն եք առել նրա համար թոշակ հաջողացնել։ Դա ճի՞շտ է։

— Ամենևին ոչ, որոշ իմաստով դա նույնիսկ անհեթեթություն է։ Ես միայն ակնարկել էի, որ ծառայության մեջ մեռած աստիճանավորի այրին կարող է ժամանակավոր օգնություն ստանալ, եթե միայն միջնորդություն լինի։ Բայց կարծեմ ձեր հանգուցյալ ծնողը ոչ միայն չի ծառայել սահմանված ժամկետում, այլև վերջին ժամանակներում բոլորովին չի ծառայել։ Մի խոսքով, թեպետև կարող էր հույս լինել, բայց այդ հույսը անհաստատ կլիներ, որովհետև սույն դեպքում էապես օգնության ոչ մի իրավունք գոյություն չունի, նույնիսկ ընդհակառակը... Իսկ նա արդեն սկսել է թոշակի մասին մտածել, քա՛հ-քա՛հ։ Աշխույժ տիկին է։

— Այո, թոշակի մասին... որովհետև նա դյուրահավատ է, ու բարի և բարությունից ամեն բանի հավատում է և... և... այդպիսի խելքի է... Այո, դե, ներեցեք,— ասաց Սոնյան և շարժյալ վեր կացավ, որ գնա։

— Ներեցեք, դուք դեռ բոլորը չեք լսել։

— Այո, չեմ լսել,— քրթմնջաց Սոնյան։

— Դե ուրեմն նստեցեք։

Սոնյան սարսափելի շփոթվեց ու նստեց նորից, երրորդ անգամ։

— Տեսնելով նրա այդ վիճակը, դժբախտ, փոքրահասակ երեխաներով ծանրաբեռնված լինելը, ինչպես ես արդեն ասել եմ, կցանկանալի որևէ բանով, ուժերիս ներածին չափ օգտակար լինել, այսինքն, ինչպես ասում են, ուժերիս ներածին չափ, ոչ ավելի։ Զորօրինակ, կարելի էր նրա օգտին բաժանորդագրություն, կամ, այսպես ասած, վիճակախաղ կազմակերպել... կամ որևէ նման մի բան, ինչպես և այդպիսի դեպքերում կազմակերպում են մերձավորները

կամ թեկուզ և կողմնակիները, ովքեր ցանկանում են օգնություն ցույց տալ։ Ես մտադիր էի հենց սա հաղորդել ձեզ։ Դա թերևս հնարավոր է։

— Այո, լավ... Դրա համար աստված ձեզ...— թոթովում էր Սոնյան՝ ակնապիշ նայելով Պյոտր Պետրովիչին։

— Հնարավոր է, բայց... մենք այդ հետո կանենք, այսինքն՝ կարելի էր այսօր էլ սկսել։ Երեկոյան կտեսնվենք, կպայմանավորվենք և, այսպես ասած, հիմք կդնենք։ Եկեք ինձ մոտ ժամը յոթին։ Հուսով եմ, որ Անդրեյ Սեմյոնովիչը նույնպես կմասնակցի... Բայց... այստեղ կա մի հանգամանք, որը պետք է նախապես և մանրակրկիտորեն հիշատակել։ Հենց դրա համար էլ ես ձեզ անհանգստացրի, Սոֆյա Սեմյոնովնա, ու այստեղ կանչեցի։ Իմ կարծիքն այն է, որ չի կարելի փողը տալ անձամբ Կատերինա Իվանովնային, դա վտանգավոր է. դրա ապացույցը հենց այսօրվա հոգեհացն է։ Վաղվան օրվա համար չունենալով, այսպես ասած, մի պատառ ուտելիք և... ոտնաման ու այլ բաներ, այսօր գտնվում է Յամայկայի հում ու կարծեմ նույնիսկ մարդերա և սուրճ։ Անցնելիս ես տեսա։ Հենց վաղը դարձյալ ձեր վզին կընկնի ամեն ինչ, մինչև վերջին պատառ հացը. դա արդեն անհնթնություն է։ Դրա համար էլ բաժանորդագրությունը, ըստ իմ անձնական կարծիքի, պետք է այնպես կատարվի, որ դժբախտ այրին, այսպես ասած, ոչինչ չիմանա փողերի մասին, այլ դիտենայիք, զոսբորինակ, միայն դուք։ Ճիշտ չե՞մ ասում։

— Ես չգիտեմ։ Նա այդ անում է միայն այսօր... Կյանքումը մի անգամ... Նա շատ էր ուզում հոգեհաց տալ, պատիվ անել, հարգել հանգուցյալի հիշատակը... Նա շատ խելացի է։ Սակայն ինչպես որ դուք կամենաք, ես շատ, շատ շնորհակալ կլինեմ ձեզնից... ու նրանք բոլորն էլ, որբերն էլ շնորհակալ կլինեն... աստված ձեզ հաջողություն կտա...

Սոնյան չվերջացրեց խոսքը և լացեց։

— Այդպես։ Ուրեմն դա նկատի ունեցեք, իսկ հիմա բարի եղեք ձեր ազգականուհու շահերի համար առայժմ ուժերիս ներածին չափ մի գումար ընդունել անձամբ ինձնից։ Շատ և շատ եմ ցանկանում, որ իմ անունը ընդսմին չհի-

շատակվի։ Ահա... այսպես ասած... Ինքս հոգսեր ունենալով, չեմ կարող ավելին տալ...

Ու Պյոտր Պետրովիչը խնամքով բացեց և Սոնյային մեկնեց տասը ռուբլիանոց մի թղթադրամ։ Սոնյան վերցրեց, շիկնեց, վեր թռավ, ինչ-որ փնթփնթաց ու շտապեց հրաժեշտ տալ։ Պյոտր Պետրովիչը քաղաքավարությամբ նրան ուղեկցեց մինչև դուռը։ Վերջապես, Սոնյան հուզված ու տանջված դուրս թռավ սենյակից և Կատերինա Իվանովնայի մոտ վերադարձավ չափից դուրս շփոթված։

Այդ տեսարանի ամբողջ ընթացքում Անդրեյ Սեմյոնովիչը մերթ կանգնած էր լինում պատուհանի մոտ, մերթ քայլում էր սենյակով մեկ՝ չցանկանալով ընդհատել խոսակցությունը. իսկ երբ Սոնյան գնաց, նա հանկարծ մոտեցավ Պյոտր Պետրովիչին ու ձեռքը ցնծությամբ մեկնեց նրան.

— Ես ամեն ինչ լսեցի և ամեն ինչ տեսա,— ասաց նա՝ առանձնապես շեշտելով վերջին բառը։— Դա ազնվություն է, այսինքն՝ ես ուզում էի ասել՝ մարդասիրություն է։ Դուք ցանկանում էիք խուսափել շնորհակալությունից, ես այդ տեսա։ Խոստովանում եմ ձեզ, սկզբունքով ես չեմ կարող համակրել մասնավոր բարեգործությունը, որովհետև դա ոչ միայն բոլորովին էլ արմատախիլ չի անում չարիքը, այլ նույնիսկ է՛լ ավելի է սնում այն։ Բայց և այնպես չեմ կարող չխոստովանել, որ հաճույքով էի նայում ձեր վարմունքին. այո, այո, այդ ինձ դուր է գալիս։

— Էհ, այդ բոլորը դատարկ բան է,— փնթփնթաց Պյոտր Պետրովիչը՝ մի փոքր հուզվելով և ուշադիր նայելով Լեբեզյատնիկովին։

— Ոչ, դատարկ բան չէ։ Այն մարդը, որ վիրավորված է ու վրդովված, ինչպես դուք երեկվա դեպքի պատճառով, ու միևնույն ժամանակ ընդունակ է մտածելու ուրիշների դրժբախտության մասին, այդ մարդը... արժանի է հարգանքի, թեև իր վարմունքով սոցիալական սխալ է կատարում... Ես այդ նույնիսկ չէի սպասում ձեզնից, Պյոտր Պետրովիչ, մանավանդ նկատի առնելով ձեր հասկացողությունները. օ՜, որքա՜ն են ձեզ խանգարում ձեր հասկացողությունները, որքա՜ն է ձեզ հուզում, օրինակ, երեկվա անհաջողությունը,—

բացականչում էր բարեսիրտ Անդրեյ Սեմյոնովիչը՝ դարձյալ զգալով խիստ համակրանք դեպի Պյոտր Պետրովիչը,— ամենաազնիվ, ամենասիրելի Պյոտր Պետրովիչ, ախր ձեր ինչի՞ն, ինչի՞ն է պետք, որ անպայման լինի այդ ամուսնությունը, այդ օրինական ամուսնությունը։ Ձեր ինչի՞ն է պետք ամուսնության այդ օրինականությունը։ Եթե կուզեք, խփեցեք ինձ, ես ուրախ եմ, ուրախ եմ, որ դա չհաջողվեց, որ դուք ազատ եք, որ դուք այնքան էլ կորած չեք մարդկության համար, ուրախ եմ... Տեսնո՞ւմ եք, ես այդ չեմ թաքցնում։

— Այդ ինձ հարկավոր է, որովհետև ես չեմ ուզում ձեր քաղաքացիական ամուսնությամբ կնոջ դավաճանության զոհ լինել և ուրիշների երեխաներին խնամել, ահա թե ինձ ինչի համար է հարկավոր օրինական ամուսնությունը,— ասաց Լուժինը՝ որևէ բան պատասխանելու համար։ Նա առանձնապես մտազբաղ էր։

— Երեխաների՞ն, դուք հիշեցիք երեխաների՞ն,— ցընցվեց Անդրեյ Սեմյոնովիչը ինչպես ռազմական շեփորը լսած մարտական նժույգ,— երեխաները, դա սոցիալական հարց է, առաջին կարևորության հարց է, ես համաձայն եմ. բայց երեխաների հարցը այլ կերպ կլուծվի։ Ոմանք նույնիսկ բոլորովին բացասում են երեխաներին, ինչպես և ամեն ակնարկ ընտանիքի վերաբերյալ։ Երեխաների մասին մենք հետո կխոսենք, իսկ հիմա զբաղվենք դավաճանության հարցով։ Խոստովանում եմ ձեզ, որ դա իմ թույլ տեղն է։ Այդ վատթար, հուսարական, պուշկինյան արտահայտությունը նույնիսկ աներևակայելի է ապագա բառապաշարում։ Եվ ի՞նչ է դավաճանությունը։ Օ՛, ինչպիսի՞ մոլորություն։ Ի՞նչ դավաճանություն, ի՞նչ բան, ա՛յ քեզ դատարկ բան։ Ընդհակառակը, քաղաքացիական ամուսնության դեպքում, դա չի էլ լինի։ Դավաճանությունը, դա միայն բնական հետևանք է ամեն մի օրինական ամուսնության, այսպես ասած՝ դրա ուղղումն է, բոցոք է, այնպես որ տվյալ իմաստով նույնիսկ ամենևին էլ ստորացուցիչ չէ։ Ու եթե ես երբևէ օրինական կարգով ամուսնանամ, մի բան, որ անհեթեթություն է, ապա ես նույնիսկ ուրախ կլինեմ ձեր հիշատակած, երիցս անիծված այդ դավաճանության համար։

այդ դեպքում ես կասեմ իմ կնոջը՝ «Ընկերս, մինչև այժմ ես միայն սիրում էի քեզ, իսկ հիմա քեզ հարգում եմ, որովհետև դու կարողացար բողոքել»։ Դուք ծիծաղո՞ւմ եք։ Այդ նրանից է, որ դուք անզոր եք նախապաշարմունքներից ձեռք քաշելու։ Գրո՛ղը տանի, ես հո հասկանում եմ, թե ինչպիսի անախորժություն է լինում, երբ օրինական ամուսնությամբ կապվածները խաբում են միմյանց. բայց չէ՞ որ դա անարգ փաստի անարգ հետևանք է, երբ ստորացրած են լինում թե մեկը և թե մյուսը։ Իսկ երբ դավաճանությունը բացահայտ է լինում, ինչպես քաղաքացիական ամուսնության դեպքում, այն ժամանակ, էապես գոյություն էլ չի ունենում, աներևակայելի է և նույնիսկ վերանում է այդ անունը։ Ընդհակառակը, ձեր կինը միայն կապացուցի, թե ինչպես հենց ինքը հարգում է ձեզ, գտնելով, որ դուք ընդունակ չեք խանգարելու նրա երջանկությունը* և այնքան եք զարգացած, որ նրանից վրեժ չեք առնի նոր ամուսնու համար։ Գրողը տանի, ես երբեմն երազում եմ, որ եթե ինձ մարդու տան, թյո՛ւ, եթե ես ամուսնանամ (լինի դա քաղաքացիական թե օրինական ամուսնություն, այդ միևնույն է), ես ինքս կարծես թե սիրեկան կրեբիի կնոջս մոտ, եթե նա երկար ժամանակ սիրեկան չգտներ. «Ընկերս,— կասեի ես իմ կնոջը,— ես քեզ սիրում եմ, բայց նաև ցանկանում եմ, որ դու ինձ հարգես», ա՛յ թե ինչ...

Պյոտր Պետրովիչը քրքջում էր, բայց առանց որևէ հափշտակության։ Նա նույնիսկ քիչ էր լսում։ Նա իրոք ինչ-որ ուրիշ բան էր մտածում և նույնիսկ Լեբեզյատնիկովն էլ ի վերջո այդ նկատեց։ Պյոտր Պետրովիչը նույնիսկ հուզված էր, շփում էր ձեռքերը, մտածմունքի մեջ ընկնում։ Անդրեյ Սեմյոնովիչը հետո վերհիշեց ու հասկացավ այդ ամենը...

II

Դժվար կլիներ ճշտությամբ նշել այն պատճառները, որոնց հետևանքով Կատերինա Իվանովնայի խանգարված դլխում ծագեց այդ անհեթեթ հոգեհացը կազմակերպելու միտքը։ Հիրավի, դրա վրա ծախսվեց համարյա տասը ռուբլի այն քսան ռուբլուց ավելի գումարից, որ ստացվել էր Ռասկոլնիկովից,

հատկապես Մարմելադովի թաղման համար։ Գուցե Կատերինա Իվանովնան հանգուցյալի հանդեպ իրեն պարտավոր էր համարում «ինչպես հարկն է» հարգել նրա հիշատակը, ոչ-պիսզի բոլոր տնվորները, մանավանդ Ամալյա Իվանովնան, գիտենան, որ հանգուցյալը «ոչ միայն ամենևին էլ նրանցից վատ չի եղել, այլ գուցե շատ ավելի լավ է եղել», որ նրանցից ոչ ոք իրավունք չունի նրա հանդեպ «իր քիթը բարձրացնել»։ Գուցե այստեղ առավելապես ազդեցություն ուներ աղջատի այն առանձնահատուկ հպարտությունը, որի հետևանքով մեր կենցաղում բոլորի և յուրաքանչյուրի համար պարտադիր հասարակական որոշ ծեսերի համար շատ չքավորներ վերջին ուժերն են լարում և ծախսում խնայված վերջին կոպեկները, որպեսզի միայն «ետ չմնան ուրիշներից» և որպեսզի այդ ուրիշները նրանց որևէ կերպ «չպարսավեն»։ Միանգամայն հավանական է նաև այն, որ Կատերինա Իվանովնան հատկապես այս դեպքում, հատկապես այն պահին, երբ ինքը կարծես թե մոռացված էր բոլորի կողմից, «ուզեց ցույց տալ այդ բոլոր «շնչին ու վատթար տնվորներին», որ ինքը ոչ միայն «գիտե ապրել և գիտե հյուրեր ընդունել», այլև նույնիսկ ամենևին էլ այդպիսի վիճակի համար չի դաստիարակվել, այլ դաստիարակված է գընդապետի «աղնվականական, կարելի է նույնիսկ ասել՝ արիստոկրատական տանը», ու ամենևին էլ ստեղծված չէ հատակ ավելու և գիշերները երեխաների շորեր լվանալու համար։ Հպարտության և սնափառության այդ մոլուցքները երբեմն համակում են բոլորովին աղքատ ու ընկճված մարդկանց ու երբեմն նրանց համար զրգռիչ, անզսպելի պահանջ են դառնում։ Իսկ Կատերինա Իվանովնան ամենևին էլ ընկճվածներից չէր. կարելի էր նրան ուղղակի սպանել այլևայլ հանգամանքներով, բայց անկարելի էր նրան ընկճել բարոյապես, այսինքն՝ վախեցնել և նրա կամքը ենթարկել ուրիշին։ Մյուս կողմից նրա մասին Սոնեչկան միանգամայն իրավացիորեն ասում էր, որ նրա խելքն ու միտքը խանգարվում է։ Ճշմարիտ է, դեռ չէր կարելի այդ ասել դրականապես և վերջնականորեն, բայց հիրավի, վերջին ժամանակներում, ամբողջ վերջին տարում նա այնքան էր տանջվել, որ մասամբ խելքը թոցրել էր։ Ինչպես բժիշկներն են ասում,

թոքախտի ուժեղ զարգացումը նույնպես նպաստում է մտավոր ունակությունների խանգարման։

Բազմաքանակ և բազմատեսակ գինիներ չկային, մադերա նույնպես, դա չափազանցրած էր, բայց գինի կար։ Թորված էր օզի, ռոմ և լիսաբոնյան գինի, բոլորը ամենավատ որակի, սակայն բավականաչափ քանակությամբ։ Բացի կուտյայից, կային երեք-չորս տեսակ խորտիկներ (ի միջի այլոց նաև բլիններ), բոլորը Ամալյա Իվանովնայի խոհանոցից. բացի դրանից, երկու ինքնաեռ էր դրված, ճաշից հետո թեյ ու փունջ խմելու համար։ Գնումները տնօրինել էր ինքը՝ Կատերինա Իվանովնան, նրան օգնել էր տնվորներից մեկը, մի ինչ-որ խղճուկ լեհ։ Աստված գիտե, թե սա ինչի համար էր ապրում տիկին Լիպպևեխզելի տանը։ Նա անմիջապես ներկայացավ Կատերինա Իվանովնային, նրա հանձնարարությունները կատարելու համար, ու ամբողջ նախորդ օրը և այդ ամբողջ առավոտյան դես-դեն էր վազում գլուխը կոբցրած ու լեզուն հանած, կարծես առանձնապես ջանալով, որ այս վերջին հանգամանքը նկատելի լինի։ Ամեն մի դատարկ բանի համար նա բոպե առ բոպե գալիս էր Կատերինա Իվանովնայի մոտ, նույնիսկ վազ էր տալիս նրան փնտրելու խանութաշարքում, նրան շարունակ անվանում էր «պանի խորունժինա» (տիկին կոնեստուհի) և ի վերջո սաստիկ ձանձրացրեց Կատերինա Իվանովնային, թեև սա սկզբում ասում էր, որ առանց այդ «ծառայակամ և մեծահոգի մարդու» ինքը բոլորովին կկորչեր։ Կատերինա Իվանովնայի բնավորությանը հատուկ էր հենց առաջին հանդիպած, պատահական մարդուն անմիջապես չավագուն, հիանալի հատկություններ վերագրել, այնպես գովաբանել նրան, որ մարդը նույնիսկ ամաչում էր, գովասանքի համար մեջտեղ բերել այլևայլ հանգամանքներ, որոնք ամենևին էլ գոյություն չունեին, միանգամայն անկեղծորեն ու պարզամտությամբ հավատալ դրանց գոյության, հետո էլ հանկարծ միանգամից հիասթափվել, շշպռել, նախատել և հրելով վռնդել այն մարդուն, որին ինքը ընդամենը մի քանի ժամ առաջ առաջնորդն երկրպագում էր։ Բնությունից նա ծիծաղկոտ, ուրախ և խազաղասեր բնավորություն ուներ։ Բայց իր գլխին շարունակ գժբախտություններ և ձախորդություններ

էին թափվել, նա մոլեգնաբար ցանկանում էր ու պահանջում, որ բոլորը խաղաղ և ուրախ ապրեն և չհամարձակվեն այլ կերպ ապրել։ Ահա թե ինչու իր կյանքում ամենաթեթև դիսոնանսը, ամենաչնչին անհաջողությունը նրան իսկույն կատաղության էր հասցնում, և նա մի ակնթարթում, ամենավառ հույսերից ու ֆանտազիաներից հետո, սկսում էր անիծել իր բախտը, պոկել ու դեն շպրտել այն ամենը, ինչ որ լինում էր իր ձեռքի տակ, ու գլուխը խփել պատին։ Չգիտես ինչու Ամալյա Իվանովնան էլ հանկարծ նրա աչքում արտասովոր նշանակություն ստացավ և նրա կողմից արտասովոր հարգանքի արժանացավ. գուցե դա այն պատճառով էր, որ ձեռնարկվել էր այդ հոգևոր ցը, և Ամալյա Իվանովնան սրտանց որոշել էր մասնակցել բոլոր գլխացավանքներին. նա հանձն էր առել սեղան գցել, սփռոց, անձեռոցիկներ, ամանեղեն և այլ իրեր բերել և իր խոհանոցում ուտելիք պատրաստել։ Նրան ամեն ինչ լիազորել էր Կատերինա Իվանովնան ու թողել էր իր փոխարեն տնօրինություն անելու, իսկ ինքը գնացել էր գերեզմանոց։ Հիրավի, ամեն ինչ շատ լավ էր պատրաստված. սեղանը ծածկված էր նույնիսկ բավական մաքուր սփռոցով, ամանները, պատառաքաղները, դանակները, ըմպանակները, բաժակները, թասերը՝ այդ ամենը, իհարկե, հավաքովի էր, զանազան ձևի ու չափի, բերվել էր այլևայլ տնվորներից, բայց որոշ ժամին ամեն ինչ իր տեղն էր, ու Ամալյա Իվանովնան զգալով, որ գործը հիանալի է կատարել, գերեզմանոցից վերադարձողներին դիմավորեց նույնիսկ մի փոքր հպարտ տեսքով, զուգված-զարդարված, սգո նոր ժապավեններով պճնած գլխադիրով ու սև շրջազգեստով։ Այդ հպարտությունը թեև ըստ արժանվույն էր, բայց չգիտես ինչու դուր չեկավ Կատերինա Իվանովնային. «Հիրավի, կարծես թե առանց Ամալյա Իվանովնայի չէինք կարողանա սեղան գցել», մտածում էր նա։ Նրան դուր չեկավ նաև նոր ժապավեններով պճնած գլխադիրը. «Այդ հիմար գերմանուհին հո չի՞ հրպարտանում նրանով, որ ինքը տանտիրուհին է և գութ է արել օգնելու աղքատ տնվորներին։ Գո՞ւթ է արել, ասացեք խնդրեմ, Կատերինա Իվանովնայի հայրիկի մոտ, որը դրնդապետ էր և քիչ էր մնում նահանգապետ դառնար, երբեմն

տեղան էր բացվում քառասուն մարդու համար, այնպես որ մի որևէ Ամալյա Իվանովնայի կամ ավելի լավ է ասել՝ Ամալյա Լյուդվիգովնայի այնտեղ խոհանոց էլ չէին թողնի...»։ Սակայն Կատերինա Իվանովնան որոշեց առայժմ չարտահայտել իր զգացմունքները, թեև մտածում էր, որ անպայման հարկավոր է հենց այդ օրը վոնդել Ամալյա Իվանովնային և նրան ցույց տալ իր իսկական տեղը, թե չէ նա աստված գիտե թե ինչեր կերևակայի, իսկ առայժմ Կատերինա Իվանովնան նրա նկատմամբ սառը վերաբերմունք էր ցույց տալիս։ Կատերինա Իվանովնային մասամբ ջղայնացնում էր նաև մի ուրիշ անախորժություն. թաղմանը կանչված տնվորներից համարյա ոչ մեկը դրան չէր մասնակցել, բացի լեհից, որը կարողացել էր նաև վազ տալ գերեզմանոց. իսկ հոգեհացին, այսինքն՝ ուտելու-խմելուն ներկայացան միայն աննշան և աղքատ տնվորները, նրանցից շատերը նույնիսկ անվայելուչ էին հագնված, ուղղակի խուժաններ էին։ Իսկ այն տնվորները, որոնք հասակով ավելի մեծ ու ավելի պատկառելի էին, բոլորն էլ ասես դիտմամբ, ասես պայմանավորված լինելով, բացակայում էին։ Օրինակ, Պյոտր Պետրովիչ Լուժինը, կարելի է ասել՝ բոլոր տնվորներից ամենապատկառելի մարդը, չեկավ հոգեհացին, այնինչ դեռ նախորդ օրվա երեկոյան Կատերինա Իվանովնան բոլորին, այսինքն Ամալյա Իվանովնային, Պոլեչկային, Սոնյային և լեհին ասում էր, որ նա առավելապես աղնիվ ու մեծահոգի մարդ է, ահագին կապեր ու կարողություն ունի, եղել է իր առաջին ամուսնու բարեկամը, ընդունվում էր իր հոր տանը, խոստացել է բոլոր միջոցները գործադրել իր համար խոշոր թոշակ հաջողացնելու նպատակով։ Այստեղ հիշատակենք, որ եթե Կատերինա Իվանովնան պարծենում էր որևէ մեկի կապերով ու կարողությամբ, այդ անում էր առանց որևէ հետաքրքրության, առանց որևէ անձնական հաշվենկատության, բոլորովին անշահախնդիր, այսպես ասած՝ զգացմունքների հորդությունից դրդված, հաճույք ստանալով հենց միայն գովաբանելուց ու գովաբանվողին մեծ արժանիքներ վերագրելուց։ Լուժինից բացի, հավանորեն նրանից օրինակ վերցնելով», չեկավ նաև «այդ վատթար սրիկա Լեբեզյատնիկովը», «Ախր նա ի՞նչ է իրեն երե-

վակայում։ Նրան հրավիրել են միայն գթասրտությունից դրդված, այն էլ Պյոտր Պետրովիչի հետ մի սենյակում ապրելու և նրա ծանոթը լինելու պատճառով, այնպես որ, անհարմար կլիներ չհրավիրել»։ Չեկավ նաև մի բարեկիրթ տիկին, իր «պառաված աղջկա» հետ։ Թեև սրանք ընդամենը երկու շաբաթ էին ապրել Ամալյա Իվանովնայի սենյակներում, բայց արդեն մի քանի անգամ գանգատվել էին, որ իրենց խանգարում է Մարմելադովների սենյակից լսվող աղմուկը, մանավանդ երբ հանգուցյալը հարբած վերադառնում էր տուն։ Կատերինա Իվանովնան այդ իմացավ հենց Ամալյա Իվանովնայից, երբ սա լեզվակռիվ անելով Կատերինա Իվանովնայի հետ և սպառնալով դուրս անել նրա ամբողջ ընտանիքը, ամբողջ կոկորդով մեկ բղավում էր, որ նրանք անհանգստացնում են «աղնիվ տնվորներին, որոնց կրունկն էլ չարժեն»։ Կատերինա Իվանովնան որոշել էր հիմա դիմամբ հրավիրել այդ տիկնոջը և նրա աղջկան, որոնց «կրունկն էլ իրը թե չարժեր ինքը», մանավանդ որ մինչև այժմ, պատահմամբ հանդիպելով նրան, այդ տիկինը գոռոզաբար երես էր դարձնում. թող ուրեմն նա իմանար, որ այստեղ «աղնվորներն են մտածում և զգացմունքներ տածում, հրավիրում անհիշաչարությամբ», և թող նրանք տեսնեն, որ Կատերինա Իվանովնան սովոր է եղել այլ վիճակում էլ ապրել։ Կատերինա Իվանովնան ենթադրում էր սեղանի շուրջ նրանց հետ անպայման խոսել այդ մասին, ինչպես նաև իր հանգուցյալ հայրիկի համարյա թե նահանգապետ լինելու մասին, ու դրա հետ մեկտեղ անուղղակիորեն ակնարկել, որ հանդիպումների ժամանակ չպետք էր երես դարձնել և որ դա չափազանց հիմար բան է եղել։ Չեկավ նաև մի հաստափոր փոխ-գնդապետ (ըստ էության պաշտոնաթող շտաբս-կապիտան), բայց պարզվեց, որ դեռ նախորդ օրվա առավոտից նա «հալից ընկած էր եղել»։ Մի խոսքով, եկել էին միայն՝ լեհը, հետո մի խղճուկ, սակավախոս գրասենյակային ծառայող՝ կեղտոտված ֆրակով, բշտիկավոր դեմքով, գարշելի հոտով. հետո մի խուլ ու համարյա բոլորովին կույր ծերուկ, որը մի ժամանակ ծառայել էր մի ինչ-որ փոստատան, և որին ինչ-որ մեկը անհիշելի ժամանակներից և հայտնի չէ ինչի համար պահում էր Ամալյա Իվա-

նովնայի տանը։ Եկավ նաև մի հաբրած պաշտոնաթող պոլուշիկ, էապես զորքի պարենավորման ատոիճանավոր, որը բոլորովին անվայելուչ ու բարձր քրքիջ էր ածակում և «երեվակայեցեք», առանց ծիլեսի էր։ Ինչ-որ մեկն էլ եկավ և ուղղակի սեղան նստեց նույնիսկ առանց Կատերինա Իվանովնային բարևելու և, վերջապես, մի անձնավորություն էլ հագուստ չունենալու պատճառով եկավ խալաթ հագած, բայց դա արդեն այնքան անպատշաճ էր, որ Ամալյա Իվանովնայի և լեհի ջանքերով հաջողվեց նրան դուրս անել։ Լեհը իր հետ բերել էր ինչ-որ ուրիշ երկու լեհերի, որոնք բընավ և երբեք չէին ապրել Ամալյա Իվանովնայի տանը և որոնց մինչև այժմ ոչ ոք չէր տեսել այդ տան սենյակներում։ Այս ամենը չափազանց անախորժ ջղայնություն պատճառեց Կատերինա Իվանովնային։ «Որ այդպես է, էլ ո՞ւմ համար էին կատարվում բոլոր պատրաստությունները»։ Տեղ չլինելու պատճառով երեխաներին նստեցրին ոչ թե սեղանի շուրջ, այլ ետին անկյունում, ուր նրանց համար ուտելիք դրեցին սնդուկի վրա, երկու փոքրիկներին նստեցրին նստարանին. Պոլեչկան որպես նրանցից մեծը, պետք է հսկեր, կերակրեր նրանց ու սրբեր այդ «ազնվատոհմ երեխաների» քթիկները։ Մի խոսքով, Կատերինա Իվանովնան ակամայից պետք է բոլորին դիմավորեր կրկնապատկված ծանրակշռությամբ և նույնիսկ արհամարհանքով։ Նա մի առանձին խստությամբ նայեց մի քանիսներին և գոռոզաբար հրավիրեց սեղան նստել։ Չգիտես ինչու, գտնելով, որ բոլոր շեկածների համար պետք է պատասխանատու լինի Ամալյա Իվանովնան, նա հանկարծ սկսեց վերջինիս հետ չափազանց անփույթ վարվել. Ամալյա Իվանովնան անմիջապես դա նկատեց և խիստ վիրավորվեց։ Այդպիսի սկիզբը լավ վախճան չէր խոստանում։ Վերջապես նստեցին։

Ռասկոլնիկովը ներս մտավ համարյա հենց այն րոպեին, երբ մյուսները վերադարձան գերեզմանոցից։ Կատերինա Իվանովնան չափազանց ուրախացավ նրա գալու համար, նախ՝ այն պատճառով, որ նա բոլոր հյուրերի մեջ միակ «կրթված մարդն էր» և «ինչպես հայանի է, պատրաստվում էր երկու տարուց հետո այստեղի համալսարանում պրոֆեսորի ամբիոն գրավել», երկրորդ, այն պատճառով, որ նա

անմիջապես և քաղաքավարությամբ ներողություն խնդրեց, որ հակառակ իր ցանկության, չկարողացավ մասնակցել թաղման։ Կատերինա Իվանովնան ուղղակի նետվեց դեպի Ռասկոլնիկովը, նստեցրեց սեղան, իր ձախ կողքին (աջ կողքին նստեց Ամալյա Իվանովնան)։ Չնայած անընդհատ իրարանցման և ուտելիքները կանոնավոր մատուցելու և բոլորին հասցնելու հոգսերին, չնայած տանջալից հազին, որը ամեն րոպե ընդհատում և խեղդում էր նրան և կարծես առանձնապես ուժեղացել էր վերջին երկու օրում, նա անընդհատ դիմում էր Ռասկոլնիկովին և գրեթե շշնջալով, հապճեպորեն թափում իր մեջ կուտակված բոլոր զգացմունքները և իր ամբողջ արդարացի ցասումը ձախողված հոգեհացի նկատմամբ. ցասումը հաճախ փոխարինվում էր ամենաուրախ, ամենաանղուսպ ծիծաղով՝ հավաքված հյուրերի, գլխավորապես հենց տանտիրուհու հասցեին։

— Ամեն ինչի համար այդ կկուն է մեղավոր։ Դուք հասկանում եք, թե ում մասին եմ խոսում. սրա մասին, սրա մասին,— ու Կատերինա Իվանովնան գլխով ցույց տվեց տանտիրուհուն։— Նայեցեք նրան. չռել է աչքերը, զգում է, որ մենք իր մասին ենք խոսում, բայց չի կարողանում հասկանալ, ու չռել է աչքերը։ Ի-ի-ի՜հ, բո՛ւ է, բո՛ւ, քա՛հ-քա՛հ-քա՛հ... Քխա՛-քխա-քխա։ Եվ ի՞նչ է ուզում ցույց տալ իր գլխադիրով. քխա՛-քխա՛-քխա՛։ Դուք նկատեցի՞ք, ուզում է բոլորին ցույց տալ, թե ինձ հովանավորում և պատիվ է անում իր ներկայությամբ։ Ես նրան, իբրև կարգին կնոջ, խնդրել էի հրավիրել ավելի լավ մարդկանց և հատկապես հանգուցյալի ծանոթներին, իսկ նա տեսեք թե ում է բերել. ինչ-որ ծաղրածուներ են, կեղտոտ-փնթիներ։ Նայեցեք անմաքուր դեմք ունեցող այն մեկին. ինչ-որ երկոտանի փրոլընքոտ է։ Իսկ այդ լեհե՞րը. քա՛հ-քա՛հ-քա՛հ. քխա՛-քխա՛-քխա՛։ Ոչ ոք, ոչ ոք ու երբեք նրանց այստեղ չի տեսել, ես էլ երբեք չեմ տեսել. դրանք ինչո՞ւ են եկել, հարցնում եմ ձեզ։ Նստել են առոք-փառոք, կողք-կողքի։— Պա՛ն, է՛յ,— հանկարծ նա բարձրաձայն դիմեց լեհերից մեկին,— բլինեներ վերցրե՞լ եք, էլի վերցրեք. դարեջուր խմեցեք, դարեջուր։ Օղի չե՞ք ուզում։— Նայեցեք, վեր թռավ, գլուխ է տալիս, նայեցեք, նայեցեք. խեղճերը երևի բոլորովին քաղ-

ված են։ Ոչինչ, թող ուտեն։ Գոնե չեն աղմկում, միայն թե ես վախենում եմ տանտիրուհու արծաթե գդալների համար...

— Ամալյա Իվանովնա,— համարյա լսելի ձայնով հանձարած դիմեց նա տանտիրուհուն,— եթե ձեր գդալները գողանան, ես դրանց համար պատասխանատու չեմ, նախապուշացնում եմ ձեզ.— քա՛հ-քա՛հ-քա՛հ,— քրքջաց Կատերինա Իվանովնան՝ նորից դիմելով Ռասկոլնիկովին, նորից նրան գլխով ցույց տվեց տանտիրուհուն, իր արտառոց չարմունքից ուրախացած։— Չհասկացավ, էլի չհասկացավ։ Նստել է բերանը բացած, նայեցեք, բու է, իսկական բու, նոր ժապավեններ կապած բվեճ է, քա՛հ-քա՛հ-քա՛հ։

Այստեղ ծիծաղը դարձյալ վերածվեց անտանելի հազի, երը տևեց հինգ րոպե։ Թաշկինակը մի քիչ արյունոտվեց, Ճակատին քրտինքի կաթիլներ և այտերին կարմիր բծեր դուրս տվին։ Նա Ռասկոլնիկովին լուռ ցույց տվեց արյունը, ու հազիվ շունչ առնելով, իսկույն սկսեց դարձյալ թունդ ոգևորությամբ փսփսալ նրա ականջին։

— Տեսե՛ք, է՛, կարելի է ասել, որ ես դրան միանգամայն նրբամիտ հանձնարարություն տվի՝ հրավիրել այն տիկնոջն ու նրա աղջկան, հասկանո՞ւմ եք, թե ում մասին եմ խոսում։ Այստեղ հարկավոր էր առավելապես քաղաքավարի վարվել, առավելագույն ճարտարությամբ գործել, իսկ սա այնպես արեց, որ այդ եկվոր հիմար կինը, այդ գոռոզ արարածը, այդ աննշան գավառացին, որը մայորի ինչ-որ այրի կին է ու եկել է թոշակի մասին հոգալու և ատյանների շեմքերը մաշելու, որը հիսունհինգ տարեկան հասակում սև է ներկում իր մազերը, սպիտակ ու կարմիր ներկեր է քսում երեսին (դա հայտնի է)... հենց այդպիսի արարածը ոչ միայն չբարեհաճեց գալ, այլև ոչ ոքի չուղարկեց ներողություն խնդրելու, թե ինքը չէր կարող գալ, ինչպես այդպիսի դեպքերում պահանջում է ամենասովորական քաղաքավարությունը։ Չեմ կարող հասկանալ, թե ինչո՞ւ Պյոտրը Պետրովիչն էլ չեկավ։ Իսկ ո՞ւր է Սոնյան, ո՞ւր գնաց։ Ահա վերջապես նա էլ եկավ։ Հը՛, Սոնյա, ո՞րտեղ էիր։ Տարօրինակ է, որ դու նույնիսկ հորդ թաղման օրը այդպես ոնճշտապահ ես։ Ռոդիոն Ռոմանովիչ, թողեք նա նստի ձեր կողքին։ Ահա քո տեղը, Սոնեչկա... Ինչ որ ուզում ես վերց-

դու։ Դոնդող վերցրու, լավն է։ Հիմա բլիններ կթերեն։ Երեխաներին տվե՞լ եք։ Պոլեչկա, այդտեղ կա՞ ամեն ինչ. քխա՜-քխա՜-քխա՜։ Լա՜վ։ Լյոնյա, խելոք կաց, իսկ դու, Կոլյա, ոտքերդ մի թափ տա. նստիր, ինչպես որ պետք է նստի ազնվատոհմ երեխան։ Հա՜, դու ի՞նչ ես ասում, Սոնեչկա։

Սոնյան շտապեց իսկույն նրան հաղորդել, որ Պյոտր Պետրովիչը ներողություն է խնդրում։ Նա աշխատում էր բարձր խոսել, որպեսզի բոլորը կարողանային լսել, գործ էր ածում ամենաընտիր ու քաղաքավարի խոսքեր, որ իրը թե ասել էր Պյոտր Պետրովիչը, գունազարդում էր նրա արտահայտություններբ։ Սոնյան ավելացրեց, որ Պյոտր Պետրովիչը պատվիրել էր անպայման հաղորդել, թե հենց որ հնարավոր լինի, ինքը անմիջապես կգա, որպեսզի խոսի գործերի մասին և պայմանավորվի, թե ինչ կարելի է անել և ձեռնարկել հետագայում և այլն, և այլն։

Սոնյան գիտեր, որ դա կհանդարտեցնի և կհանգստացնի Կատերինա Իվանովնային, դուր կգա նրան, և որ գլխավորն է, նրա հպարտությունը բավարարված կլինի։ Սոնյան նստեց Ռասկոլնիկովի կողքին, հապճեպ գլուխ տվեց և հարեվանցիորեն, հետաքրքրությամբ նայեց նրան։ Սակայն մնացած ամբողջ ժամանակվա ընթացքում մի տեսակ խուսափում էր նրան նայելուց և նրա հետ խոսելուց։ Նա կարծես նույնիսկ մտացրիվ էր, թեև շարունակ նայում էր Կատերինա Իվանովնայի դեմքին, որպեսզի զոհացներ նրան։ Նա էլ, Կատերինա Իվանովնան էլ սգաշորով չէին, որովհետև սև շոր չունեին. նա հագած էր ինչ-որ մուգ-դարչնագույն շոր, իսկ Կատերինա Իվանովնան՝ իր միակ, չթե, թուխ և գոլավոր շրջազգեստը։ Պյոտր Պետրովիչին վերաբերող լուրը զոհունակությամբ ընդունվեց։ Փքված լսելով Սոնյային, Կատերինա Իվանովնան նույնպիսի փքվածությամբ հարցրեց, թե ինչպես է Պյոտր Պետրովիչի առողջությունը։ Այնուհետև անմիջապես և համարյա լսելի ձայնով շշնջաց Ռասկոլնիկովի ականջին, որ իրոք տարօրինակ կլիներ, եթե Պյոտր Պետրովիչի պես հարգարժան ու պատկառելի մարդը լիներ այսպիսի «արտասովոր կոմպանիայում», չնայած նույնիսկ նրա ամբողջ նվիրվածությանը իր, Կատերինա Իվանով-

նայի ընտանիքին և նրա հին բարեկամությանը իր՝ Կատերինա Իվանովնայի հայրիկի հետ։

— Ահա թե ինչու ես առանձնապես շնորհակալ եմ ձեզնից, Ռոդիոն Ռոմանիչ, որ գուք նույնիսկ այսպիսի պայմաններում չխորշեցիք իմ աղուհացից,— համարյա լսելի ձայնով ավելացրեց նա,— սակայն ես հավատացած եմ, որ միայն դեպի իմ խեղճ հանգուցյալ ամուսինը տածած ձեր առանձնահատուկ բարեկամությունը ձեզ դրդեց կատարել ձեր խոսքը։

Այնուհետև նա հպարտ ու փքված նայեց իր հյուրերին ու հանկարծ մի առանձին հոգատարությամբ հարցրեց սեղանի մյուս կողմում նստած խուլ ծերունուն, թե «արգյոք էլի տապակած չի՞ ուղում և արդյոք լիսաբոնյան գինի տըվե՞լ են նրան»։ Ծերունին չպատասխանեց և երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թե իրեն ինչ են հարցընում, թեև հարևանները ծիծաղի համար սկսեցին բոթել նըրան։ Նա միայն շուրջն էր նայում բերանը բացած, որով էլ ավելի հրահրեց ընդհանուր զվարճությունը։

— Այ քեզ պմբոյի մեկը։ Նայեցեք, նայեցեք, ինչի՞ համար են դրան բերել։ Ինչ վերաբերում է Պյոտր Պետրովիչին, ապա նրա նկատմամբ ես միշտ վստահ եմ եղել,— շարունակեց Կատերինա Իվանովնան՝ դիմելով Ռասկոլնիկովին,— և, իհարկե, նա նման չէ...— կտրուկ, բարձրաձայն և չափազանց խիստ տեսքով դիմեց նա Ամալյա Իվանովնային, որը դրանից նույնիսկ երկչոտեց,— նման չէ ձեր այն պճնվող, թեթևսոլիկ տնվորուհիներին, որոնց իբրև խոհարարուհի էլ չէին ընդունի հայրիկիս տանը, իսկ հանգուցյալ ամուսինս այդպիսիներին ընդունելով, իհարկե, պատիվ կաներ նրանց, այն էլ շնորհիվ միայն իր անսպառելի բարության։

— Այո, սիրում էր խմել, շատ էր սիրում,— հանկարծ գոչեց պարենավորման պաշտոնաթող աստիճանավորը՝ քամելով օղու տասներկուերորդ ըմպանակը։

— Հանգուցյալ ամուսինս իրոք ուներ այդ սովորությունը, և դա բոլորին հայտնի է,— մեկ էլ հանկարծ նրան կըպավ Կատերինա Իվանովնան,— բայց նա բարի և աղնիվ մարդ էր, սիրում և հարգում էր իր ընտանիքը։ Վատ էր մի-

այն այն, որ նա իր բարության շնորհիվ չափից դուրս վրդովահում էր ամեն տեսակ անառակ մարդկանց և աստված գիտե թե ում հետ էր խմում, այնպիսիների հետ, որոնք նրա կոշկատակերին էլ շարժեին։ Երևակայեցեք, Ռոդիոն Ռոմանովիչ, մի անգամ նրա գրպանում մեղրաբլիթե աքլորիկ գըտանք. գալիս է գիտակցությունը կորցնելու չափ հարբած, բայց երեխաներին չի մոռացել։

— Աք-լո-բի՞կ։ Դուք հաճեցիք ասել՝ աք-լո-բի՞կ,— բղավեց պարենավորման պարոն աստիճանավորը։

Կատերինա Իվանովնան նրան պատասխանի չարժանացրեց։ Նա միտք արեց ինչ-որ բանի մասին և շունչ առավ։

— Երևի դուք, ինչպես և բոլորը, կարծում եք, թե ես նրա հետ չափից դուրս խիստ էի վարվում,— շարունակեց Կատերինա Իվանովնան՝ դիմելով Ռասկոլնիկովին։— Բայց այդ ճիշտ չէ։ Նա ինձ հարգում էր, նա ինձ շատ, շատ էր հարգում, բարեհոգի մարդ էր։ Երբեմն ես այնպե՞ս էի խըղճում նրան։ Մեկ էլ տեսար նստում է մի անկյունում, նայում է ինձ, մեղքս գալիս է, ուզում եմ փաղաքշել նրան, հետո էլ մտածում եմ՝ «որ փաղաքշես, էլի կհարբի». միայն խստությամբ կարելի էր շատ թե քիչ զսպել։

— Հրմ, այո, լինում էին մազերը քաշքշելու դեպքեր, հաճախ էին լինում,— դարձյալ գոչեց պարենավորման աստիճանավորը ու էլի մի գավաթ օղի կոնծեց։

— Օգտակար կլիներ ոչ միայն որոշ հիմարների մազերը քաշքշել, այլև նրանց ցախավելով դուրս շպրտել։ Ես հիմա հանգուցյալի մասին չեմ խոսում,— պարենավորման աստիճանավորին ցասկոտ պատասխանեց Կատերինա Իվանովնան։

Նրա այտերի կարմիր բծերը էլ ավելի էին կարմրատակում, կուրծքը ելնում ու իջնում էր։ Էլի մի բոպե, և նա արգեն հիստերիկայի մեջ կընկներ։ Շատերը քթների տակ ծիծաղում էին, ըստ երևույթին դա հաճելի էր շատերին։ Ոմանք բոթում էին զորքերի պարենավորման աստիճանավորին և ինչ-որ փսփսում նրա ականջին։ Ակներև էր, որ ուզում էին կռվեցնել նրանց։

— Թույլ տվեք հարցնել, դուք այդ ի՞նչ եք ակնարկում, — հարցրեց պարենավորման աստիճանավորը,— այսինքն՝

ո՞ւմ վերաբերյալ... դուք հիմա... բարեհաճեցեք արտահայտվել... Ասենք, հարկավոր չէ, դատարկ բան է։ Դե այրի կին է, էլի, որբևայրի է, ներում եմ... Փա՛ս։— Եվ նա դարձյալ օղի կոնծեց։

Ռասկոլնիկովը նստել էր և լուռ, զզվանքով էր լսում։ Նա ուտում էր միայն քաղաքավարությունից դրդված, որպեսզի չվիրավորեր Կատերինա Իվանովնային, որը բոպե առ բոպե պատառներ էր դնում նրա ափսեին։ Ռասկոլնիկովը ակնապիշ նայում էր Սոնյային։ Սոնյան հետզհետե ավելի էր անհանգստանում և մտահոգվում. նա էլ էր նախապգում, որ հոգեհացը խաղաղ չի վերջանա, ու վախով էր հետամտում Կատերինա Իվանովնայի սաստկացող ջղայնությանը։ Ի միջի այլոց նրան հայտնի էր, որ հենց ինքը, Սոնյան էր գլխավոր պատճառը, որով երկու եկվոր կանայք այնպես արհամարհանքով էին վերաբերվել Կատերինա Իվանովնայի հրավերին։ Նա Ամալյա Իվանովնայից լսել էր, որ մայրը նույնիսկ վիրավորվել էր հրավերից և հարցրել՝ «Ես ի՞նչպես կարող եմ իմ դստերը նստեցնել այդ տեսակ աղջկա կողմին»։ Սոնյան նախապգում էր, որ դա արդեն որևէ կերպ հայտնի է Կատերինա Իվանովնային, իսկ իրեն, Սոնյային, հասցրած վիրավորանքը է՛լ ավելի մեծ վիրավորանք էր անձնապես Կատերինա Իվանովնայի, նրա երեխաների, նրա հայրիկի հասցեին, մի խոսքով, մահացու վիրավորանք էր, ու Սոնյան գիտեր, որ հիմա Կատերինա Իվանովնան չի հանգստանա, «մինչև որ չնստի այդ թրևող թեթևսոլիկներին, թե ինչ են նրանք», և այլն, և այլն։ Հակառակի պես ինչ-որ մեկը սև հացից շինած, մեջտեղից, սլաքով ծակված երկու սիրտ դրեց ափսեի մեջ, սեղանի մյուս ծայրից ուղարկեց Սոնյային։ Կատերինա Իվանովնան վրդովվեց և անմիջապես բարձրաձայն ասաց, որ դրանք ուղարկողը, իհարկե, «հարբած ավանակ է»։ Ամալյա Իվանովնան էլ նախազգալով ինչ-որ վատ բան և դրա հետ մեկտեղ մինչև հոգու խորքը վիրավորվելով Կատերինա Իվանովնայի զոռոզությունից, հավաքվածների անախորժ տրամադրությունը ցրելու և միաժամանակ բոլորի աչքում իրեն բարձրացնելու համար, ռուսերեն կոտրատելով, սկսեց առանց որևէ առիթի պատմել, թե ինչ-որ իր ծանոթը, «գեղատան ծառայող Կուզը» գիշերը

գնում էր կառքով, «կառապանը ուզում էր նրան սպանել։ Կառքը նրան շատ, շատ խնդրեց, որ չսպանի, ու լացեց, ձեռքերը ծալեց, վախեցավ, ու վախից սրտաճաք եղավ»։ Կատերինա Իվանովնան թեև ժպտաց, բայց իսկույն դիտողություն արեց, թե Ամալյա Իվանովնան չպետք է ռուսերենով անեկդոտներ պատմի։ Վերջինս է՛լ ավելի վիրավորեց և առարկեց. որ իր «ֆատերը (հայրը) Բեռլինում շատ, շատ պատկառելի մարդ էր և հաճախ ձեռքերը գրպաններ էր խոթում»։ Սիծաղկոտ Կատերինա Իվանովնան չհամբերեց և քա՛հ-քա՛հ քրքջաց, այնպես որ Ամալյա Իվանովնան արդեն կորցրեց վերջին համբերությունը և հագիվ էր զսպում իր բարկությունը։

— Ա՛յ քեզ բվե՞ճ,— գրեթե գվարճացած դարձյալ փլսփլսաց Կատերինա Իվանովնան Ռասկոլնիկովի ականջին,— ուզում էր ասել՝ ձեռքերը գրպաններն էր դնում, բայց դուրս եկավ որ ձեռքերը ուրիշների գրպաններն էր խոթում, քխա՛-քխա՛։ Դուք նկատե՞լ եք, Ռոդիոն Ռոմանովիչ, որ Պետերբուրգում ապրող այդ բոլոր օտարերկրացիները, այսինքն՝ գլխավորապես գերմանացիները, որոնք ինչ-որ տեղերից գալիս են մեզ մոտ, մեզնից ավելի հիմար են։ Համաձայնեցեք, մի՞թե կարելի է պատմել այդպիսի բան, թե «դեղատան ծառայող Կառլը վախից սրտաճաք եղավ», թե նա (փսլնքոտը) փոխանակ կառապանի ձեռքերը կապելու, «ձեռքերը ծալեց ու լացեց, շատ խնդրեց չսպանել իրեն»։ Ա՛յ քեզ թեթևսոլիկի մեկը, կարծում է, թե դա շատ հուշիչ է, ու մտքովն էլ չի անցնում, թե որքան հիմար է ինքը։ Իմ կարծիքով պարենավորման այդ հարբած աստիճանավորը նրանից շատ ավելի խելացի է. գոնե նկատում ես, որ հարբեցողի մեկն է, խմելուց է թոցրել խելքը, իսկ մյուսները բոլորն էլ հո կարգին են, լուրջ են... Ի-ի՛հ, նստել է աչքերը չոած։ Բարկանում է, բարկանում, քա՛հ-քա՛հ-քա՛հ, քխա՛-քխա՛-քխա՛։

Ուրախ տրամադրված Կատերինա Իվանովնան սկսեց զանազան մանր-մունր բաներ պատմել ու հանկարծ խոսեց այն մասին, թե ինչպես ինքը թոշակի միջոցով իր հայրենի Տ... քաղաքում անպայման պանսիոն կբանա աղնվական աղջիկների համար։ Կատերինա Իվանովնան այդ մասին դեռ

չէր հաղորդել Ռասկոլնիկովին և իսկույն տարվեց ամենահրապուրիչ մանրամասնությունների շարադրմամբ։ Հայտնի չէ, թե ինչ կերպ հանկարծ նրա ձեռքն ընկավ հենց այն «գովասանաթերթը», որի մասին Ռասկոլնիկովին հաղորդել էր դեռ հանգուցյալ Մարմելադովը, գինետանը նրան բացատրելով, որ Կատերինա Իվանովնան, իր կինը, ինստիտուտն ավարտելիս՝ շալով պարել էր «նահանգապետի և այլ անձանց ներկայությամբ»։ Այդ գովասանաթերթը հիմա ակներևաբար պետք է վկայագիր լիներ պանսիոն հիմնելու նրկատմամբ Կատերինա Իվանովնայի իրավունքի մասին, և որ գլխավորն է, պատրաստ էր պահվում «երկու պճնվող թեթևսոլիկներին» ամաչեցնելու համար, եթե նրանք գային հոգեհացին, և պարզ ապացուցելու նրանց, որ Կատերինա Իվանովնան ազնվական տանից է, «նույնիսկ կարելի է ասել՝ արիստոկրատական տանից, գնդապետի աղջիկ է և անշուշտ ավելի լավն է, քան արկածներ որոնող ուրիշ կանայք, որոնք այնքան շատացել են վերջին ժամանակներում»։ Գովասանաթերթը իսկույն անցավ հարբած հյուրերի ձեռքերը, Կատերինա Իվանովնան այդ չէր արգելում, որովհետև գովասանաթերթում իրոք en toutes lettres[1] նշված էր, որ նա արքունի խորհրդականի և կավալերի դուստր է, հետևաբար իրոք որ հիմարյա գնդապետի դուստր է։ Ոգևորվելով, Կատերինա Իվանովնան անմիջապես շարադրեց Տ... քաղաքում ապագա սքանչելի ու հանդիստ կյանքի բոլոր մանրամասնությունները, հիշատակեց գիմնազիայի ուսուցիչներին, որոնց հրավիրելու է իր պանսիոնում դասեր ավանդելու համար, մի պատվարժան ծերունու, ֆրանսիացի Մանգոյին, որը ինստիտուտում ֆրանսերեն էր սովորեցնում հենց իրեն, Կատերինա Իվանովնային, և որը հիմա էլ դեռ ապրում է Տ... քաղաքում և անշուշտ ձեռնտու վճարով կաշխատի իր մոտ։ Վերջապես, բանը հասավ նաև Սոնյային, «որը Կատերինա Իվանովնայի հետ կմնկնի Տ... և այնտեղ ամեն կերպ կօգնի նրան»։ Բայց այստեղ հանկարծ մեկը փոթկաց ոեղանի մյուս ծայրում։ Կատերինա Իվանովնան թեև աշխատեց այնպես ցույց տալ, թե չի լսել սեղանի մյուս ծայրում եղած ծիծաղը, բայց անմիջապես, դիտմամբ բարձրացնելով ձայնը, սկսեց

[1] Լրիվ (ֆրանս.)։

ոգևորությամբ խոսել այն մասին, որ Սոֆյա Սեմյոնովնան անկասկածելի ընդունակություններ ունի նրան որպես օպերային ծառայելու համար, հիշատակեց նրա «հեզությունը, համբերատարությունը, անձնուրացությունը, ազնվությունը և կրթությունը», ընդ որում շոյեց նրա այտը և տեղից քիչ բարձրանալով, երկու անգամ պինդ համբուրեց նրան։ Սոնյան շիկնեց, իսկ Կատերինա Իվանովնան հանկարծ լացեց, մտածելով, որ «նա թույլ նյարդեր ունի և հիմար է, որ նրա տրամադրությունը խիստ փչացած է, որ ժամանակն է վերջացնել հացկերույթը, և որովհետև ուտելիքը արդեն վերջացել է, հարկավոր է թեյ մատուցել»։ Ամալյա Իվանովնան բոլորովին վիրավորված լինելով, որ ոչ մի մասնակցություն չի ունեցել ամբողջ խոսակցությանը և որ իրեն նույնիսկ բոլորովին չեն լսում, այդ իսկ բոպեին հանկարծ ռիսկ արեց դիմել վերջին փորձին և թաքուն տխրությամբ համարձակվեց Կատերինա Իվանովնային հաղորդել չափազանց կարևոր և խորիմաստ մի դիտողություն այն մասին, որ ապագա պանսիոնում պետք է հատուկ ուշադրություն դարձնել աղջիկների (դի վեշե) սպիտակեղենի մաքրության վրա և որ «անպայման պետք է լինի մի լավ գամա (դի դամե) որը լավ հսկի սպիտակեղենին» և երկրորդ՝ որ «չահել աղջիկները բոլորն էլ գիշերները ծածուկ կերպով ոչ մի ռոման (վեպ) չկարդան»։ Կատերինա Իվանովնան, որ իրոք վրդովված էր և խիստ հոգնած և որին արդեն բոլորովին ձանձրացրել էր հոգեհացը, իսկույն «կտրեց» Ամալյա Իվանովնայի խոսքը, ասելով, որ վերջինս «դատարկ բան է բարբաջում» և ոչինչ չի հասկանում և որ դի վեշենների (մաքուր սպիտակեղենի) մասին հոգալը ոչ թե ազնվականական պանսիոնի վերատեսչուհու, այլ հանդերձապահի գործն է. իսկ ինչ վերաբերում է ռոմաններ կարդալուն, ապա դա նույնիսկ ուղղակի անվայելուչ բան է և ինքը խնդրում է, որ Ամալյա Իվանովնան լռի։ Ամալյա Իվանովնան կարմրատակեց, ու շարանալով, ասաց, որ ինքը միայն «բարիք էր ցանկանում», «շատ ու շատ բարիք էր ցանկանում» և որ «բնակարանի համար վաղուց իրեն գելդ (փող) չի վճարվում»։ Կատերինա Իվանովնան անմիջապես «ստոտեց» նրան, ասելով, թե նա ստում է, «ոչ մի բարիք էլ չի ցանկանում», որովհետև դեռ երեկ, երբ

հանգուցյալը դեռ սեղանի վրա էր, նա, տանտիրուհին իրեն տանջում էր բնակարանի համար։ Ամալյա Իվանովնան, շարունակելով ոտներին կոտրատել, ասաց, որ ինքը հրավիրել էր այն կանանց, բայց նրանք չեկան, որովհետև նրանք աղնվաբարո կանայք են և չեն կարող գալ ոչ աղնվաբարո կանանց մոտ։ Կատերինա Իվանովնան իսկույն ևեթ «շեշտեց», թե որովհետև Ամալյա Իվանովնան փնթիի մեկն է, ուստի և չի կարող դատողություն անել, թե ինչ է իսկական աղնվությունը։ Ամալյա Իվանովնան այդ չհանդուրժեց և անմիջապես հայտարարեց, թե իր «ֆատերը Բեռլինում շատ, շատ պատկառելի մարդ էր ու ման էր գալիս ձեռքերը գրպանները դրած ու հաճախ բերանով փո՛ւֆ, փո՛ւֆ էր անում», ու իր ֆատերին իսկությամբ ներկայացնելու համար Ամալյա Իվանովնան աթոռից վեր թռավ, ձեռքերը դրեց գրպանները, ուղղեց այտերը ու սկսեց բերանով ինչ-որ անորոշ, փո՛ւֆ-փո՛ւֆի նմանվող ձայներ հանել։ Բոլոր տնվորները քա՛հ-քա՛հ քրքջում էին, ու նախաղգալով գոտեմարտը, հավանության բացականչություններով դիտմամբ խրախուսում էին Ամալյա Իվանովնային։ Բայց Կատերինա Իվանովնան արդեն չէր կարող այդ բանը տանել և անմիջապես, ի լուր ամենքի «կտրուկ» ասաց, որ Ամալյա Իվանովնան գուցե և երբեք հայր չի ունեցել, որ Ամալյա Իվանովնան ուղղակի պետերբուրգյան հարբեցող չուխոնուհի է և անշուշտ առաջներում մի որևէ տեղ խոհարարուհի է եղել, թերևս դրանից էլ վատ բան։ Ամալյա Իվանովնան կարմրատակնց խեցգետնի պես ու ճղճղալով ասաց, որ Կատերինա Իվանովնան ինքը գուցե «ամենևին էլ ֆատեր չի ունեցել, իսկ ինքը Բեռլինում ֆատեր ուներ, որը երկար սերթուկ էր հագնում և շարունակ փո՛ւֆ, փո՛ւֆ, փո՛ւֆ էր անում»։ Կատերինա Իվանովնան արհամարհանքով ասաց, որ իր ծագումը բոլորին հայտնի է, որ հենց այդ գովասանաթերթում տպագիր տառերով նշված է, որ իր հայրը գնդապետ էր, իսկ Ամալյա Իվանովնայի հայրը (եթե նա իրոք ինչ-որ հայր է ունեցել) հավանորեն Պետերբուրգի մի որևէ չուխոն էր, կաթ էր ծախում. ավելի ճիշտ է այն, որ ամենևին էլ հայր չի եղել, որովհետև դեռ մինչև այժմ էլ հայտնի չէ, թե ինչ է Ամալյա Իվանովնայի հայրանունը, Իվանովնա՞, թե՞ Լյուդ-

վիդովնա։ Ամալյա Իվանովնան բոլորովին կատաղելով և բռունցքը խփելով սեղանին, ճչաց-ճղճղաց, որ ինքը Ամալյա Իվանովնա է և ոչ թե Լյուդվիգովնա, որ իր հոր անունը Իոհան էր և նա բուրմայստեր էր, որ Կատերինա Իվանովնայի հայրը երբեք և ամենևին էլ բուրմայստեր չի եղել։ Կատերինա Իվանովնան աթոռից վեր կացավ և խիստ տոնով, առերևույթ հանգիստ ձայնով (թեև բոլորովին սփրթնած էր և հուզմունքից ելնում ու իջնում էր կուրծքը) ասաց, որ եթե նա թեկուզ միայն մի անգամ էլ համարձակվի «իր քոսոտ ֆատերիշկային համեմատել նրա հայրիկի հետ, ապա ինքը, Կատերինա Իվանովնան, կպոկի նրա գլխադիրը ու կոտրորի ոտքերով»։ Այդ լսելով, Ամալյա Իվանովնան սկսեց վազվզել սենյակում և ամբողջ ուժով մեկ գոռալ, որ ինքը տանտիրուհի է, և Կատերինա Իվանովնան «հենց այս րոպեին պետք է հեռանա բնակարանից», այնուհետև սկսեց սեղանից հավաքել արծաթե գդալները։ Աղմուկ ու շրմփոց բարձրացավ. երեխաները լացեցին։ Սոնյան նետվեց Կատերինա Իվանովնային զսպելու, բայց երբ Ամալյա Իվանովնան հանկարծ ինչ-որ բղավեց դեղին տոմսի մասին, Կատերինա Իվանովնան ետ հրեց Սոնյային ու նետվեց դեպի Ամալյա Իվանովնան, որպեսզի անհապաղ ի կատար ածեր իր սպառնալիքը գլխադիրի նկատմամբ։ Այդ րոպեին դուռը բացվեց, և սենյակի շեմքում հանկարծ հայտնվեց Պյոտր Պետրովիչ Լուժինը։ Նա կանգնած էր և խստաբարո, ուշադիր հայացքով նայում էր հավաքվածներին։ Կատերինա Իվանովնան արագ մոտեցավ նրան։

III

— Պյոտր Պետրովիչ, գոնե դուք պաշտպանեցեք,— գոչեց նա,— հասկացրեք այդ հիմար արարածին, որ չպետք է համարձակվի այդպես վարվել ազնվաբարո, դժբախտացած կնոջ հետ, որ դրա դեմ դատարան կա... Ես հենց գեներալ-նահանգապետին կդիմեմ... սա պատասխան կտա... Հիշելով իմ հոր աղուհացը, պաշտպանեցեք որբերիս...

— Ներեցեք, տիկին... Ներեցեք, ներեցեք, տիկին,— առարկում էր Պյոտր Պետրովիչը,— ինչպես և հայտնի է

ձեզ, ես բոլորովին էլ պատիվ չեմ ունեցել ճանաչելու ձեր հայրիկին... Ներեցեք, տիկին (մեկը բարձրաձայն քրքջաց), ու մտադիր չեմ մասնակցելու ձեր և Ամալյա Իվանովնայի անընդհատ երկպառակություններին... Ես իմ գործով եմ եկել... ու ցանկանում եմ անհապաղ բացատրվել ձեր խորթ աղջկա, Սոֆյա... Իվանովնայի հետ... Կարծեմ այդպե՞ս պետք է անվանել Նրան։ Թույլ տվեք անցնել...

Ու Պյոտր Պետրովիչը անցնելով Կատերինա Իվանովնայի կողքից, քայլեց դեպի դիմացի անկյունը, ուր գտնվում էր Սոնյան։

Կատերինա Իվանովնան տեղնուտեղը մնաց կանգնած, ասես կայծակնահար եղավ։ Նա չէր կարողանում հասկանալ, թե Պյոտր Պետրովիչը ինչպես կարող էր ուրանալ նրա հայրիկի աղուհացը։ Մի անգամ մոգոնելով այդ աղուհացը, նա արդեն ինքը սրբությամբ հավատում էր դրան։ Կատերինա Իվանովնային ապշեցրեց նաև Պյոտր Պետրովիչի պաշտոնական, սառը, նույնիսկ ինչ-որ արհամարհական սպառնալիքով լեցուն տոնը։ Ու բոլորն էլ նրա երևալուն պես հետզհետե սկսվեցին։ Բացի այն, որ «գործիմաց և լուրջ» այդ մարդը ամենևին սաղական չէր ամբողջ խմբին, երևում էր, որ նա եկել է մի ինչ-որ կարևոր բանի համար, որ հավանորեն մի ինչ-որ արտասովոր պատճառ էր նրան բերել այդպիսի մարդկանց մոտ և որ ուրեմն այժմ ինչ-որ բան է պատահելու, ո՛վ գիտե ինչ է լինելու։ Ռասկոլնիկովը, որ կանգնած էր Սոնյայի կողքին, մի կողմ անցավ, տեղ բանալով նրա համար։ Պյոտր Պետրովիչը կարծես նրան բոլորովին չնկատեց։ Մի րոպե հետո շեմքում երևաց նաև Լեբեզյատնիկովը. նա սենյակ չմտավ, այլ կանգ առավ ինչ-որ մի առանձին հետաքրքրություն, համարյա զարմանք արտահայտող դեմքով. ունկնդրում էր, բայց կարծես երկար ժամանակ չէր կարողանում ինչ-որ բան հասկանալ։

— Ներեցեք, որ ես գուցե խանգարում եմ, բայց բավական կարևոր գործ կա,— ասաց Պյոտր Պետրովիչը առայժմ անորոշ մտքով, առանձնապես շղիմելով ոքևէ մեկին,— ինձ համար նույնիսկ ուրախալի է բոլորի ներկայությունը։ Ամալյա Իվանովնա, ձեզ, որպես տանտիրուհու, խոնարհաբար խնդրում եմ ուշադրություն դարձնել Սոֆյա Իվանովնայի

հետ իմ հետագա խոսակցության վրա։ Սոֆյա Իվանովնա, — շարունակեց նա՝ ուղղակի դիմելով խիստ զարմացած և արդեն նախապես վախեցած Սոնյային,— իմ սեղանից, իմ բարեկամ Անդրեյ Սեմյոնովիչ Լեբեզյատնիկովի սենյակից, ձեր այցելությունից անմիջապես հետո չքացավ ինձ պատկանող հարյուր ռուբլիանոց պետական մի թղթադրամ։ Եթե դուք որևէ կերպ գիտեք և մեզ ցույց կտաք, թե հիմա այն որտեղ է գտնվում, ապա ազնիվ խոսքով հավատացնում եմ ձեզ ու բոլորին վկա եմ վերցնում, որ գործը հենց դրանով էլ կվերջանա։ Հակառակ դեպքում ստիպված կլինեմ շատ լուրջ միջոցների դիմել, այդ դեպքում... ինքներդ ձեզ կըշտամբեք։

Սենյակում խոր լռություն տիրեց։ Լռեցին նույնիսկ լացող երեխաները։ Սոնյան կանգնել էր մեռելի պես դունատ, նայում էր Լուժինին և չէր կարողանում որևէ բան պատասխանել։ Նա կարծես դեռ ոչինչ չէր հասկանում։ Անցավ մի քանի վայրկյան։

— Դեհ, ի՞նչ կասեք,— հարցրեց Լուժինը՝ ակնապիշ նայելով նրան։

— Ես չգիտեմ... Ես ոչինչ չգիտեմ...— վերջապես, թույլ ձայնով ասաց Սոնյան։

— Հա-ա՞, չգիտե՞ք,— նորից հարցրեց Լուժինը ու էլի մի քանի վայրկյան լռեց։ — Լավ մտածեցեք, օրիորդ,— ասաց նա խստորեն, բայց կարծես դեռ էլի հորդորանքով,— կշռադատեցեք, ես համաձայն եմ ձեզ գեռ ժամանակ տալ մտածելու համար։ Հաճեցեք նկատի առնել, որ եթե ես հավատացած չլինեի դրանում, ապա, իհարկե, շնորհիվ իմ փորձառության, ոիսկ չէի անի այսպես ուղղակի մեղադրել ձեզ, որովհետև ուղղակի և բացահայտ, բայց սուտ կամ նույնիսկ սխալմամբ թույլ տրված մեղադրանքի համար որոշ իմաստով ես ինքս եմ պատասխանատու։ Ես այդ գիտեմ։ Այսօր առավոտյան իմ կարիքների համար ես մանրեցի հինգ տոկոսանոց մի քանի բանկնոտ, ճիշտ երեք հազար ռուբլի գումարով։ Հաշիվը գրված է և գտնվում է իմ քսակում։ Անդրեյ Սեմյոնովիչը վկա է, որ ես գալով տուն, սկըսեցի հաշվել փողերը, ու հաշվելով երկու հազար երեք հարյուր ռուբլի, դրեցի քսակիս մեջ, իսկ քսակը սերթուկիս կո-

դագրպանումն է։ Սեղանի վրա մնում էր թղթադրամներով մոտ հինգ հարյուր ռուբլի, դրանց մեջ երեք հատ հարյուր ռուբլիանոց։ Այդ պահին դուք եկաք (իմ կանչելով), ու հետո շարունակ գտնվում էիք ինձ մոտ, չափազանց շփոթված էիք, այնպես որ խոսակցության ժամանակ նույնիսկ երեք անգամ վեր կացաք ու չդիտեմ ինչու շտապում էիք գնալ, թեև մեր խոսակցությունը դեռ չէր վերջացել։ Անդրեյ Սեմյոնովիչը կարող է վկայել այդ ամենը։ Հավանորեն դուք ինքներդ, օրիորդ, չեք մերժի վկայել և հայտարարել, որ ես Անդրեյ Սեմյոնովիչի միջոցով ձեզ կանչել էի միայն նրա համար, որպեսզի ձեզ հետ խոսեի ձեր ազգականուհու, Կատերինա Իվանովնայի ողբալի և անօգ վիճակի մասին (ես չկարողացա գալ նրա մոտ, հոգեհացին), ինչպես և այն մասին, թե որքան օգտակար կլիներ նրա համար բաժանորդագրություն, վիճակախաղ կամ նման մի բան կազմակերպել։ Դուք ինձ շնորհակալություն հայտնեցիք և նույնիսկ արտասվեցիք (ես ամեն ինչ պատմում եմ այնպես, ինչպես որ եղել է, որպեսզի նախ՝ այդ ամենը հիշեցնեմ ձեզ և երկրորդ՝ ձեզ ցույց տամ, որ իմ հիշողությունից ոչինչ չի վրիպել)։ Այնուհետև ես սեղանից վերցրի տասը ռուբլիանոց մի թղթադրամ և տվի ձեզ, որպես իմ կողմից սկզբնական օժանդակություն ձեր ազգականուհուն։ Անդրեյ Սեմյոնովիչը տեսավ այդ ամենը։ Այնուհետև ես ձեզ ճանապարհեցի մինչև դուռը, դուք դարձյալ ինչ-որ շփոթված էիք։ Ես ու Անդրեյ Սեմյոնովիչը խոսեցինք մոտ տասը րոպե, որից հետո Անդրեյ Սեմյոնովիչը գնաց, իսկ ես նորից մոտեցա սեղանին, որի վրա դրված էին փողերը, ես նպատակ ունեի հաշվել դրանք ու առանձին տեղավորել, ինչպես և առաջ ենթադրել էի։ Ես զարմանքով տեսա, որ թղթադրամներից մի հարյուր ռուբլիանոց էր պակասում։ Դե ուրեմն հաճեցեք դատել, ես ոչ մի կերպ չեմ կարող կասկածել Անդրեյ Սեմյոնովիչի նրկատմամբ, նույնիսկ ամոթ եմ համարում նման բան ենթադրել։ Ես նաև չէի կարող փողերը սխալ հաշվել, որովհետև ձեր գալուց մի րոպե առաջ վերջացնելով հաշվելը, ես գտա, որ հանրագումարը ճիշտ է։ Ինքներդ համաձայնեցեք, որ հիշելով ձեր շփոթմունքը, հեռանալու հապճեպությունը, ձեր ձեռքերը որոշ ժամանակ սեղանի վրա պահելը, վերջապես,

նկատի առնելով ձեր հասարակական վիճակը և դրա հետ կապված սովորությունները, ես, այսպես ասած, սարսափելով և նույնիսկ կամքիս հակառակ ստիպված եղա ձեր նկատմամբ կասկած տանել, իհարկե դաժան, բայց արդարացի կասկած։ Նաև ավելացնում եմ և կրկնում, որ թեև ես դրանում միանգամայն հավատացած եմ, բայց և այնպես հասկանում եմ, որ իմ այս մեղադրանքը կարող է ինձ համար որոշ չափով վտանգավոր լինել։ Բայց, ինչպես տեսնում եք, ես այս բանից ձեռք չքաշեցի. ես ընդդիմացա, և ահա թե ինչ պատճառով, Միայն և միայն ձեր սև ապերախտության պատճառով, օրիորդ։ Ինչպե՞ս։ Ես ձեզ հրավիրում եմ ձեր աղքատ ազգականուհուն օժանդակելու նպատակով, ես ձեզ տրամադրում եմ ուժերիս ներածին չափ օգնություն, տասը ռուբլի, իսկ դուք տեղնուտեղը, հենց նույն պահին այդպես եք վարվում ինձ հետ։ Ոչ, այդ արդեն լավ չէ։ Անհրաժեշտ է խրատել։ Լավ մտածեցեք. այդ դեռ քիչ է, որպես ձեր իսկական բարեկամ (հարկավ!!, այս պահին դուք չեք կարող ավելի լավ բարեկամ ունենալ), խնդրում եմ ձեզ՝ ուշքի եկեք։ Այլապես անողոք կլինեմ։ Դեհ, ուրեմն ի՞նչ։

— Ես ձեզնից ոչինչ չեմ վերցրել,— սարսափահար շըշընջաց Սոնյան,— դուք ինձ տվիք տասը ռուբլի, ահա, վերցրեք։ — Սոնյան գրպանից հանեց թաշկինակը, գտավ դրա կապված ծայրը, քանդեց կապը, հանեց տասը ռուբլիանոց թղթադրամը ու մեկնեց Լուժինին։

— Իսկ մնացած հարյուր ռուբլին վերցնելը դուք այնպես էլ չե՞ք խոստովանում,— կշտամբանքով ու կտրուկ ասաց Լուժինը՝ չընդունելով թղթադրամը։

Սոնյան նայեց շուրջը։ Բոլորը սարսափ և խստություն, ծաղրանք ու ատելություն արտահայտող դեմքերով նրան էին նայում։ Սոնյան դարձավ դեպի Ռասկոլնիկովը... Սա ձեռքերը ծալած կանգնել էր պատի մոտ և բորբ հայացքով զննում էր նրան։

— Ախ, տեր աստված,— հառաչեց Սոնյան։

— Ամալյա Իվանովնա, պետք է հայտնել ոստիկանությանը, ուստի և խոնարհաբար խնդրում եմ ձեզ, առայժմ մեկին ուղարկեցեք դոնապանին կանչելու,— կամացուկ և նույնիսկ սիրալիր ասաց Լուժինը։

— Գոտ դեր բարմհերցիդե[1], ես այդպես էլ գիտեի, որ նա է գողացել,— ձեռքերն իրար զարկեց Ամալյա Իվանովնան։

— Դուք այդպես էլ գիտե՞իք,— վրա բերեց Լուժինը,— ուրեմն առաջ էլ որոշ հիմք եք ունեցել այդպես եզրակացնելու։ Խնդրում եմ ձեզ, հարգելի Ամալյա Իվանովնա, միտներդ պահեցեք ձեր խոսքերը, սրոնք, սակայն, վկաների ներկայությամբ ասացիք։

Հանկարծ բոլոր կողմերից բարձր խոսակցություն սկսվեց։ Բոլորը շարժվեցին տեղերից։

— Ինչպե՞ս-ես,— հանկարծ ուշքի գալով գոչեց Կատերինա Իվանովնան և գլխապատառ նետվեց դեպի Լուժինը,— ինչպե՞ս, դուք նրան գողություն եք վերագրում, հա՞, նրա՞ն, Սոնյայի՞ն։ Ա՛խ, ստոր մարդ։— Եվ նա արագ մոտեցավ Սոնյային, հյուծված ձեռքերով պինդ գրկեց նրան։

— Սոնյա, ի՞նչպես համարձակվեցիր նրանից տասը ռուբլի վերցնել, ա՛յ հիմար։ Տուր, տեսնեմ, տուր իսկույն այդ տասը ռուբլին։

Ու Սոնյայից վերցնելով թղթադրամը, Կատերինա Իվանովնան ճմռթեց այն և ուժգին շպրտեց Լուժինի երեսին։ Գրնդիկը դիպավ Լուժինի աչքին և ընկավ հատակին։ Ամալյա Իվանովնան նետվեց փողը վերցնելու։ Պյոտր Պետրովիչը զայրացավ։

— Ջսպեցեք այդ խելագարին,— բղավեց նա։

Այդ րոպեին դռան մոտ, Լեբեզյատնիկովի կողքին երևացին էլի մի քանի մարդիկ, որոնց մեջ էին նաև երկու եկվոր կանայք։

— Ինչպե՞ս, խելագա՞ր, ե՞ս եմ խելագարը, հիմար,— ճչեցավ Կատերինա Իվանովնան։ — Խելագարը դու ինքդ ես, դատական խլուրդ, ստոր մարդ։ Սոնյա՞ն, Սոնյա՞ն պիտի վերցնի դրա փողը։ Սոնյա՞ն է գող, հա՞։ Նա դեռ քեզ ցույց կտա, հիմարի մեկը,— ու Կատերինա Իվանովնան հիստերիկաբար քրքջաց։ — Ա՛յ քեզ հիմարի գլուխ,— նետվեց նա բոլոր կողմերը՝ ամենքին մատնացույց անելով Լուժինին։ — Ինչպե՞ս, դու է՞լ, անամոթ,— դիմեց նա տան-

---

[1] Ողորմած աստված (գերմ. Gott der barmherzige):

տիրուհուն,— դու էլ ես պնդում, որ նա «գողացել» է, ստոր արարած, կրինոլին հագած պրուսական խրտվիլակ։ Ա՛յ քեզ բան, ախր նա սենյակից դուրս էլ չի եկել, ու հենց որ եկավ, ա՛յ ստոր մարդ, իսկույն նստեց իմ կողքին, բոլորն էլ տեսան։ Հենց Ռոդիոն Ռոմանովիչի մոտ էլ նստեց... Խուզարկեցեք նրան։ Քանի որ նա սենյակից ոչ մի տեղ չի գնացել, ուրեմն փողը պետք է իր մոտը լինի։ Դե փնտրիր, է՛, փնտրիր, փնտրիր։ Եթե չդտնես, բարեկամ, ապա պատասխան կտաս։ Թագավորի մոտ, թագավորի մոտ, հենց ողորմած թագավորի մոտ կգնամ, ոտքերը կընկնեմ, կգնամ հենց այժմ, հենց այսօր. ես որբ եմ, ինձ կթողնեն նրա մոտ։ Դու կարծում ես չե՞ն թողնի. ո՛չ, ստում ես, կհասնեմ, կհասնեմ նրա մոտ։ Դու Սոնյային խեղճությո՞ւնն էիր հաշվի առել, հա՞, դու դրա վրա՞ էիր հույս դրել։ Իսկ ես հո ճարպիկ եմ, բարեկամ։ Գլխիկոնձի կգաս։ Փնտրի՛ր, դե փընտրրիր, է՛, փնտրի՛ր։

Ու Կատերինա Իվանովնան մոլեգնաբար քաշքշում էր Լուժինին դեպի Սոնյան։

— Ես պատրաստ եմ, ու պատասխանատու եմ դրա համար... բայց զսպվեցեք, տիկին, զսպվեցեք։ Ես շատ լավ եմ տեսնում, որ դուք ճարպիկ եք։ Այդ... այդ ի՞նչպես կարելի է անել,— մրթմրթում էր Լուժինը,— այդ պետք է անել ոստիկանության ներկայությամբ... ասենք հիմա էլ բավական շատ վկաներ կան... Ես պատրաստ եմ... Բայց ախր դա դժվար է տղամարդու համար... սեռերի տարբերության պատճառով... Գուցե օգնության գար Ամալյա Իվանովնան... Սակայն դործը այդպես չի արվում... Հապա ի՞նչ անել։

— Ում որ կուզեք։ Ով ուզում է թող խուզարկի,— բղավում էր Կատերինա Իվանովնան,— Սոնյա, շուտ տուր գրպաններդ։ Այդպես, այդպես։ Նայիր, հրեշ, մի գրպանը դատարկ է, մեջը թաշկինակն էր, տեսնո՞ւմ ես։ Ահա մյուս գրպանը, ահա, տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես։

Ու Կատերինա Իվանովնան չէ թե շուռ տվեց, այլ ուղղակի երկու դրպանն էլ մեկը մյուսի ետևից դուրս քաշեց։ Բայց երկրորդ, աջ գրպանից հանկարծ դուրս թռավ թղթի մի կտոր և օդում ծուռ գիծ քաշելով, ընկավ Լուժինի ոտքերի տակ։ Բոլորը այդ տեսան. շատերը ճչացին։ Պյոտր Պետրո-

վիշը կռացավ, հատակից երկու մատով վերցրեց թուղթը, բարձրացրեց այնպես, որ բոլորը տեսնեն, ու բաց արեց։ Դա ութ տակ ծալված հարյուր ռուբլիանոց թղթադրամ էր։ Պյոտր Պետրովիչը պտտեց ձեռքը՝ բոլորին ցույց տալով թղթադրամը։

— Գող, կորիր-գնա իմ բնակարանից։ Ոստիկանություն, ոստիկանություն կանչեցեք,— ճղճղաց Ամալյա Իվանովնան,— դրանց պետք է Սիբիր քշել, կորեք այստեղից։

Բոլոր կողմերից բացականչություններ լսվեցին։ Ռասկոլնիկովը լսում էր աչքերը Սոնյային հառած, երբեմն էլ մի ակնթարթ նայելով Լուժինին։ Սոնյան կանգնել էր նույն տեղում, ասես ուշագնաց վիճակում։ Նա համարյա նույնիսկ գարմացած էլ չէր։ Հանկարծ նրա ամբողջ դեմքը կարմրատակեց. նա ճչաց ու ձեռքերով ծածկեց դեմքը։

— Ոչ, այդ ես չեմ արել, ես չեմ վերցրել, ես չգիտեմ,— սիրտ կտրատող լացուկոծով գոչեց նա ու նետվեց դեպի Կատերինա Իվանովնան։ Վերջինս գրկեց նրան և պինդ սեղմեց իրեն, կարծես ուզում էր նրան կրծքով պաշտպանել բոլորից։

— Սոնյա, Սոնյա, ես չեմ հավատում, տեսնո՞ւմ ես, չեմ հավատում,— գոչում էր (չնայած ակներև փաստին) Կատերինա Իվանովնան՝ նրան, ինչպես երեխայի, օրորելով իր գրկում, նրան համբուրում էր անընդհատ, վերցնում էր նրա ձեռքերը, դնում իր երեսին, համբուրում։ — Դու ի՞նչպես կարող էիր վերցնել, ի՞նչ հիմար մարդիկ են սրանք. օ, տեր աստված, հիմարներ եք դուք, հիմարնե՞ր,— ճչում էր Կատերինա Իվանովնան՝ դիմելով բոլորին,— ախր դուք դեռ չգիտեք, չգիտեք, թե ինչպիսի աղջիկ է սա, ինչպիսի սիրտ ունի։ Սա՞ գողանա, հա՞։ Ախր սա իր վերջին շորը կհանի, կծախի, ոտաբոբիկ ման կգա և ունեցածը ձեզ կտա, եթե ձեզ հարկավոր լինի, ա՛յ թե ինչպիսին է սա։ Դեզին առաս էր ստացել, որովհետև իմ երեխաները բոլորովին քաղցած էին, մեզ համար էր իրեն ծախել... Ա՛խ, հանգուցյալ, հանգուցյալ, ա՛խ, հանգուցյալ, տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես։ Ա՛յ քեզ հոգեհաց։ Տե՛ր աստված, դե պաշտպանեցեք սրան. ի՞նչ եք բոլորդ էլ կանգնել։ Ռոդիոն Ռոմանովիչ, դո՞ւք ինչու չեք պաշտպանում, դուք է՞լ եք հավատում,

ինչ է։ Դուք բոլորդ էլ, բոլորդ էլ, բոլորդ էլ չարժեք սրա ճկույթը։ Տեր աստված, վերջապես, պաշտպանեցեք, էլի՛։

Խեղճ, թոքախտավոր, որբևայրի Կատերինա Իվանովնայի լացը կարծես թե ուժեղ տպավորություն թողեց ներկաների վրա։ Ցավից ծռմռված, թառամած, թոքախտային այդ դեմքի վրա, այդ չորացած, արնակալած շուրթերին, այդ խռպոտ-ճղճղան ձայնի մեջ, երեխայի լացի նմանվող այդ աղիողորմ լացի մեջ, պաշտպանության այդ դյուրահավատ և միաժամանակ հուսահատական աղերսանքի մեջ այնքա՜ն խղճալիություն, այնքա՜ն տառապանք կար, որ կարծես թե բոլորն էլ խղճացին դժբախտ կնոջը։ Դոնե Պյոտր Պետրովիչը իսկույն ևեթ խղճաց։

— Տիկին, տիկին,— բացականչեց նա ապպու ձայնով,— այս փաստը ձեզ չի վերաբերում։ Ոչ որ չի համարձակվի ձեզ մեղադրել, թե դուք այդպիսի դիտավորություն եք ունեցել կամ նրա հետ համաձայնության եք եկել, մանավանդ որ հենց դուք շուտ տվիք գրպանը և հայտնաբերեցիք թղթադրամը, հետևաբար դուք ոչինչ չդիտեիք։ Միանգամայն և միանգամայն պատրաստ եմ ցավելու, որ այսպես ասած, աղքատությունը ստիպել էր Սոֆյա Սեմյոնովնային այդպիսի քայլ անել, բայց օրիորդ, ինչո՞ւ դուք չէիք ուզում խոստովանել։ Խայտառակությունի՞ց էիք վախենում։ Առաջին քա՞յլն էր։ Գուցե շփոթվա՞ծ էիք։ Հասկանալի է, շատ հասկանալի... Բայց ինչի՞ համար էր հարկավոր այդպես վարվել։ Պարոններ,— դիմեց Լուժինը բոլոր ներկաներին,— պարոններ, ցավելով և, այսպես ասած, կարեկցելով, ես պատրաստ եմ նույնիսկ հիմա էլ ներել՝ չնայելով ինձ հասցրած վիրավորանքներին։ Թող այս ամոթանքը ձեզ խրատ լինի ապագայի համար, օրիորդ,— դիմեց նա Սոնյային,— իսկ ես այս գործը անհետևանք եմ թողնում և կարճում եմ, թող այդպես էլ լինի։ Բավական է։

Պյոտր Պետրովիչը խեթ-խեթ նայեց Ռասկոլնիկովին։ Նրանց հայացքները իրար հանդիպեցին։ Ռասկոլնիկովի բորբ հայացքը պատրաստ էր մոխրացնելու նրան։ Այնինչ Կատերինա Իվանովնան կարծես էլ ոչինչ չէր լսում. նա խելահեղորեն գրկում և համբուրում էր Սոնյային։ Երեխաները ամեն կողմից նույնպես փարվեցին Սոնյային, իսկ Պոլեչ-

կան, որը այնքան էլ չէր հասկանում գործի էությունը, կարծես ամբողջովին սուզվել էր արցունքների մեջ, հեկեկում էր և լացից ուռած իր ոիրաւնիկ դեմքը սեղմում Սոնյայի ուսին։

— Ինչպի՜սի ստորություն է դա,— հանկարծ դռնից լսվեց բարձր մի ձայն։

Պյոտր Պետրովիչը արագ հետ նայեց։

— Ինչպիսի՜ ստորություն,— կրկնեց Լեբեզյատնիկովը՝ անթարթ նայելով նրա աչքերին։

Պյոտր Պետրովիչը կարծես նույնիսկ ցնցվեց։ Բոլորը այդ նկատեցին։ (Հետո դա հիշում էին)։ Լեբեզյատնիկովը ներս մտավ։

— Եվ դուք համարձակվեցիք ինձ վկա՞ բերել,— ասաց նա՝ մոտենալով Պյոտր Պետրովիչին։

— Այդ ի՞նչ է նշանակում, Անդրեյ Սեմյոնովիչ, դուք ինչի՞ մասին եք խոսում,— մրթմրթաց Լուժինը։

— Այն է նշանակում, որ դուք... զրպարտիչ եք, ահա թե ինչ են նշանակում իմ խոսքերը,— տաքացած վրա բերեց Լեբեզյատնիկովը՝ իր կարճատես աչքերը խստորեն հառելով նրա վրա։ Նա սարսափելի դայլրացած էր։ Ռասկոլնիկովը իր հայացքը ուղղակի գամեց նրան՝ ասես որսալով ու կշռադատելով յուրաքանչյուր բառը։ Դարձյալ լռություն տիրեց։ Պյոտր Պետրովիչը համարյա նույնիսկ կսրցրեց իրեն, մանավանդ առաջին ակնթարթում։

— Եթե դուք այդ ինձ եք ասում...— սկսեց նա կակազելով,— բայց ի՞նչ է պատահել ձեզ, խելքդ տե՞ղն է։

— Խելքս տեղն է, իսկ դուք... խարդախ եք։ Օ՛, ինչպիսի՜ ստորություն է դա։ Ես ամեն ինչ լսում էի, ես դիտմամբ սպասում էի, որ ամեն ինչ հասկանամ, որովհետև, ճիշտն ասած, դա այնքան էլ խելքի մոտիկ բան չէ... Բայց ինչի՞ համար դուք արեցիք այդ ամենը, չեմ հասկանում։

— Ես ի՞նչ արեցի որ։ Վերջ պիտի տա՞ք ձեր այդ անհեթեթ հանելուկներին, թե՞ գուցե խմած եք։

— Գուցե դուք եք խմում, ստոր մարդ, և ոչ թե ես։ Ես երբեք էլ օղի չեմ խմում, որովհետև դա դեմ է իմ համոզմունքներին։ Երևակայեցեք, նա ինքը իր սեփական ձեռքերով այդ հարյուրանոցը տվեց Սոֆյա Սեմյոնովնային, ես

այդ տեսա, ես վկա եմ, ես կե՛րդվեմ։ Նա, նա տվեց,— կրկնում էր Լեբեզյատնիկովը՝ դիմելով բոլորին և ամեն մեկին։

— Դուք դժվե՞լ եք, ինչ է, համբակ,— ճղճղաց Լուժինը, — նա ինքը այստեղ է, ձեր առաջ. նա ինքը այստեղ, հենց այժմ բոլորի ներկայությամբ հաստատեց, որ բացի տասը ռուբլուց, ինձնից ոչինչ չի ստացել։ Ուրեմն ես էլ ի՞նչպես կարող էի թղթադրամը նրան տալ։

— Ես տեսա, տեսա,— գոչում ու պնդում էր Լեբեզյատնիկովը,— ու թեև սա դեմ է իմ համոզմունքներին, բայց ես պատրաստ եմ հենց այժմ դատարանում ամեն կերպ երդվել, որովհետև ես տեսա, թե ինչպես դուք թղթադրամը ծածուկ գցեցիք նրա դրպանը։ Միայն թե ես, հիմարս, մտածեցի, թե դուք բարեգործությունից դրդված քշեցրիք։ Դռան մոտ, հրաժեշտ տալու պահին, երբ նա շուռ եկավ, և երբ դուք մի ձեռքով սեղմեցիք նրա ձեռքը, մյուս, ձախ ձեռքով թղթադրամը ծածուկ գցեցիք նրա գրպանը։ Ես տեսա, տեսա։

Լուժինը սփրթնեց։

— Ինչո՞ւ եք ստում,— հանդգնաբար բղավեց նա,— դուք լուսամուտի մոտ կանգնած, ի՞նչպես կարող էիք տեսնել թղթադրամը։ Այդ միայն երևացել է... ձեր կարճատես աչքերին։ Դուք զառանցում եք։

— Ոչ, չեմ զառանցում։ Թեև ես հեռու էի կանգնած, բայց ամեն, ամեն ինչ տեսա, ու թեև պատուհանի կողքից իսկապես դժվար էր նկատել թղթադրամը, բայց ես մի այլ առիթով հաստատ գիտեի, որ դա հենց հարյուրանոց թղթադրամ էր, որովհետև երբ դուք Սոֆյա Սեմյոնովնային տասը ռուբլի տվիք, ես տեսա, որ հենց այդ պահին սեղանից մի հարյուրանոց վերցրիք (ես այդ տեսա, որովհետև այդ բոպեին մոտիկ էի կանգնած, ու որովհետև ես այդ մասին էի մտածում, դրա համար էլ չմոռացա, որ թղթադրամը ձեր ձեռքումն է)։ Դուք այն ծալեցիք և շարունակ պահում էիք ձեր ձեռքում։ Հետո ես այդ մոռացա, բայց երբ դուք վեր կացաք, թղթադրամը աջ ձեռքից դրեցիք ձախ ձեռքի մեջ ու քիչ մնաց վայր գցեիք. այստեղ ես դարձյալ հիշեցի այն, որովհետև դարձյալ հղացա նույն միտքը, այն է՝ դուք ուզում

եք ինձնից ծածուկ բարերարություն անել նրան։ Կարող եք պատկերացնել, թե ինչպես ես սկսեցի հետամտել, ու տեսա, թե ինչպես ձեզ հաջողվեց թղթադրամը խոթել նրա գրպանը։ Ես տեսա, տեսա, ես կ՚երդվեմ։

Քիչ էր մնում Լեբեզյատնիկովը շնչասպառ լիներ։ Ամեն կողմից զանազան բացականչություններ լսվեցին, որոնք մեծ մասամբ զարմանք էին արտահայտում. բայց լսվում էին նաև ցասկոտ բացականչություններ։ Բոլորը սպառնալից շարժվեցին դեպի Պյոտր Պետրովիչը։ Կատերինա Իվանովնան հապճեպ մոտեցավ Լեբեզյատնիկովին։

— Անդրեյ Սեմյոնովիչ, ես ձեր նկատմամբ սխալվել էի։ Պաշտպանեցեք Սոնյային։ Միայն դուք եք նրա կողմը։ Նա որբ է, ձեզ աստված ուղարկեց։ Անդրեյ Սեմյոնովիչ, աղավնյակ, պատվելի։

Ու Կատերինա Իվանովնան համարյա չգիտակցելով, թե ինչ է անում, Լեբեզյատնիկովի առջև ծունկ չոքեց։

— Անհեթեթություն,— բղավեց կատաղության չափ զայրացած Լուժինը,— դուք հա՛ անհեթեթություն եք դուրս տալիս, պարոն։ «Մոռացա, հիշեցի, հիշեցի հա՛ մոռացա»,— ի՞նչ է դա, ուրեմն ես թղթադրամը դիտմա՞մբ եմ դրել նրա գրպանը։ Ինչի՞ համար, ի՞նչ նպատակով։ Ես ի՞նչ առնչություն ունեմ այդ...

— Ինչի համա՞ր. ա՛յ, հենց դա ես ինքս էլ չեմ հասկանում, բայց որ իսկական փաստն եմ պատմում, դա ճիշտ է։ Նողկալի, հանցավոր մարդ, ես բնավ չեմ սխալվում, ես շատ լավ եմ հիշում, որ հենց այն պահին, երբ ես շնորհակալություն էի հայտնում և սեղմում ձեր ձեռքը, այդ առիթով գլխումս հարց ծագեց՝ ինչի՞ համար դուք թղթադրամը ծածուկ դրեցիք նրա գրպանը։ Այսինքն՝ ինչո՞ւ ծածուկ։ Մի՞թե հենց միայն այն պատճառով, որ ուզում էիք դա թաքցնել ինձնից, գիտենալով, որ ես հակառակ համոզմունքներ ունեմ և ժխտում եմ մասնավոր բարեգործությունը, որը ոչինչ արմատապես չի բուժում։ Ու որոշեցի, որ դուք իսկապես ինձնից քաշվում էիք այդպիսի խոշոր գումար տալ, ու բացի դրանից,— մտածեցի ես,— գուցե ուզում էիք նրան սյուրպրիզ անել, զարմացնել նրան, երբ նա իր գրպանում ամբողջ հարյուր ռուբլի գտներ (որովհետև որոշ բարեգործներ այնքան էլ չեն սիրում

ուզենել իրենց բարեբարությունները, ես այդ գիտեմ)։ Հետո էլ մտածեցի, թե դուք ուզում եք նրան փորձել, այսինքն թե երբ նա գտնի փողը, արդյոք կգա՞ շնորհակալություն հայտնելու։ Հետո էլ կարծեցի, թե ուզում եք խուսափել շնորհակալությունից, ու ինչպես ասում են, աջ ձեռքը չպիտի իմանա, թե ինչ է անում ձախը... Մի խոսքով, այդպիսի բաներ... Ու էլ ինչ մտքեր ասես, որ չէին ծագում գլխումս, այնպես որ ես որոշեցի այդ բոլորը հետո ճշտադատել, բայց և այնպես անբաղաքավարություն համարեցի ձեզ հայտնել, թե գիտեմ գաղտնիքը։ Սակայն գլխումս էլի մի հարց ծագեց. չլինի՞ թե Սոֆյա Սեմյոնովնան կորցնի փողը, նախքան դա կգտնի իր գրպանում. ահա թե ինչու ես որոշեցի գալ այստեղ, կանչել նրան և հայտնել, որ իր գրպանը հարյուր ռուբլի են դրել։ Դրանից առաջ մտա տիկիններ Կոբիլյատնիկովանների մոտ, որպեսզի նրանց տայի Իրական մեթոդի ընդհանուր հետևությունը և մանավանդ խորհուրդ տայի կարդալ Պիդերիտի (ի միջի այլոց նաև Վագների) հոդվածը*. հետո եկա այստեղ, ուր ահա թե ինչ է կատարվում։ Եվ մի՞թե, մի՞թե ես կարող էի մտածել այդ ամենի մասին և այդպիսի դատողություններ անել, եթե իսկապես տեսած չլինեի, որ դուք հարյուր ռուբլի դրեցիք նրա գրպանը։

Երբ Անդրեյ Սեմյոնովիչը վերջացրեց իր երկար ու բարակ դատողությունները և իր խոսքի վերջում այդպիսի տրամաբանական հետևություն արեց, սարսափելի հոգնեց, դեմքից նույնիսկ քրտնքի կաթիլներ էին գլորվում։ Ավա՜ղ, նա չէր էլ կարողանում ռուսերեն կարգին բացատրել իր մտքերը (ուրիշ ոչ մի լեզու չգիտեր), այնպես որ նա ամբողջովին մի տեսակ հյուծվեց, իր փաստաբանական սխրանքից հետո կարծես նույնիսկ նիհարեց։ Այնուամենայնիվ նրա ճառը արտաքո կարգի տպավորություն թողեց։ Նա խոսում էր այնպիսի ոգևորությամբ, այնպիսի համոզվածությամբ, որ ըստ երևույթին բոլորն էլ հավատացին նրան։ Պյոտր Պետրովիչը զգաց, որ իր բանը վատ է։

— Իմ ի՞նչ գործն է, թե ձեր գլխում ինչ-որ հիմար հարցեր են ծագել,— գոչեց նա։ — Դա ապացույց չէ։ Դուք կարող էիք այդ ամենը զառանցել երազում, պրծավ-գնաց։ Իսկ ես ձեզ ասում եմ, որ դուք ստում եք, պարոն։ Ստում և զբբ-

պարտում եք իմ դեմ որևէ ոխ ունենալու պատճառով, այն է՝ շարացած լինելով, որ ես չէի համաձայնվում ձեր ազատամտական և հակակրոնական, սոցիալական առաջարկներին, այ թե ինչ։

Բայց այդ սեթևեթությունը օգուտ չբերեց Պյոտր Պետրովիչին։ Ընդհակառակը, բոլոր կողմերից փնթփնթոց լսվեց։

— Հը՛մ, ա՛յ թե որտեղից բռնեց,— գոչեց Լեբեզյատնիկովը։ — Ստո՛ւմ ես։ Կանչիր ոստիկանությանը, իսկ ես երդում կտամ։ Միայն թե չեմ կարողանում հասկանալ՝ ինչի՞ համար է նա այդպիսի ստոր արարք թույլ տվել։ Օ, ողորմելի, ստոր մարդ։

— Ես կարող եմ բացատրել, թե նա ինչի համար է այդպիսի արարք թույլ տվել, ու եթե հարկավոր է, ինքս էլ երդում կտամ,— վերջապես, կտրուկ ձայնով ասաց Ռասկոլնիկովը և առաջ եկավ։

Ըստ երևույթին նա հաստատակամ էր ու հանգիստ։ Հենց միայն մի հայացք նետելով նրա վրա, բոլորը հասկացան, որ նա իրոք գիտե գործի էությունը և դա իր վախճանին է հասել։

— Հիմա ամեն ինչ բոլորովին պարզվեց ինձ համար,— շարունակեց Ռասկոլնիկովը՝ դիմելով ուղղակի Լեբեզյատնիկովին։ — Այս պատմության հենց սկզբից ես ենթադրեցի, որ այստեղ մի ինչ-որ խարդախություն կա. ես այդ ենթադրեցի մի քանի առանձնահատուկ հանգամանքների հետևանքով, որոնք միայն ինձ են հայտնի և որոնք այժմ ես կբացատրեմ բոլորին. դրանց մեջ է գործի ամբողջ էությունը։ Իսկ դուք, Անդրեյ Սեմյոնովիչ, ինձ համար ամեն ինչ վերջնականապես պարզեցիք ձեր անհերքելի ցուցմունքով։ Բոլորին, բոլորին խնդրում եմ լսել. այս պարոնը (նա ցույց տվեց Լուժինին) վերջերս ուզում էր մի աղջկա, այն է՝ իմ քրոջը, Ավդոտյա Ռոմանովնա Ռասկոլնիկովային։ Բայց ժամանելով Պետերբուրգ, նա երեկ չէ մյուս օրը մեր առաջին տեսակցության ժամանակ գժտվեց ինձ հետ, ու ես նրան վռնդեցի իմ սենյակից, այդ կարող են վկայել երկու հոգի։ Այս մարդը խիստ չար է... Երեկ չէ մյուս օրը ես գեռ չգիտեի, որ նա ապրում է այստեղի համարներում, ձեզ մոտ,

Անդրեյ Սեմյոնովիչ, որ ուրեմն հենց մեր գժտվելու օրը, այսինքն՝ նույնպես երեկ չէ մյուս օրը, նա տեսել էր, թե ինչպես ես, իբրև հանգուցյալ պարոն Մարմելադովի բարեկամ, նրա կնոջը, Կատերինա Իվանովնային մի քիչ փող էի տվել թաղման համար։ Սա խստույն նամակ էր գրել մորս և հայտնել, թե ես ամբողջ փողը տվել եմ ոչ թե Կատերինա Իվանովնային, այլ Սոֆյա Սեմյոնովնային, և ամենաստոր արտահայտություններով հիշատակել էր... Սոֆյա Սեմյոնովնայի բնավորությունը, այսինքն՝ ակնարկել էր Սոֆյա Սեմյոնովնայի նկատմամբ իմ առնչության բնույթը։ Այս ամենը, ինչպես գուք հասկանում եք, նպատակ ուներ ինձ կռվեցնել մորս ու քրոջս հետ, նրանց համոզել, թե ես անազնիվ նպատակներով վատնում եմ նրանց վերջին փողերը, որոնցով նրանք օգնում են ինձ։ Երեկ երեկոյան մորս, քրոջս և նրա ներկայությամբ ես վերականգնեցի ճշմարտությունը, ապացուցելով, որ փողը տվել էի Կատերինա Իվանովնային, թաղման համար, և ոչ թե Սոֆյա Սեմյոնովնային, որ Սոֆյա Սեմյոնովնայի հետ երեկ չէ մյուս օրը ես նույնիսկ ծանոթ էլ չէի, նույնիսկ երեսն էլ չէի տեսել։ Այնուհետև ես ավելացրի, որ սա, Պյոտր Պետրովիչ Լուժինը, իր բոլոր արժանիքներով չարժե Սոֆյա Սեմյոնովնայի հենց միայն ճկույթին, Սոֆյա Սեմյոնովնայի, որի մասին նա այդպիսի վատ կարծիք է արտահայտում։ Նրա այն հարցին, թե արդյոք ես Սոֆյա Սեմյոնովնային կնստեցնե՞ի իմ քրոջ կողքին, ես պատասխանեցի, որ ես այդ արդեն արել եմ հենց նույն օրը։ Սաստիկ չարանալով, որ մայրս ու քույրս չեն ուզում իր ղրպարտություններին հիման վրա գժտվել ինձ հետ, նա սկսեց մեկը մյուսի ետևից աններելի հանդգնություններ ասել մորս և քրոջս։ Տեղի ունեցավ վերջնական պառակտում, ու նրան վռնդեցին։ Այս ամենը կատարվեց երեկ երեկոյան։ Հիմա հատուկ ուշադրություն եմ խնդրում. պատկերացրեք, որ եթե նրան հաջողվեր հիմա ապացուցել, որ Սոֆյա Սեմյոնովնան գող է, ապա մորս ու քրոջս ապացուցած կլիներ, որ իր կասկածանքները համարյա իրավացի էին, թե նա արդարացիորեն էր բարկացել, որ ես հավասար եմ համարել քրոջս և Սոֆյա Սեմյոնովնային, թե հարձակվելով ինձ վրա, նա դրանով պաշտպանում, ուրեմն և պահպանում էր իմ քրոջ

և իր հարսնացուի պատիվը։ Մի խոսքով, այդ կերպ նա նույնիսկ կկարողանար ինձ վերստին կռվեցնել հարազատներիս հետ և, իհարկե, հույս ուներ կրկին հաճոյանալ նրանց։ Էլ չեմ խոսում այն մասին, որ նա վրեժ էր առնում անձամբ ինձնից, որովհետև հիմք ունի ենթադրելու, որ Սոֆյա Սեմյոնովնայի պատիվն ու երջանկությունը թանկ են ինձ համար։ Ահա նրա ամբողջ դիտավորությունը։ Ահա թե ես ինչպես եմ հասկանում այս գործը։ Ահա ամբողջ պատճառը, ուրիշ պատճառ չի կարող լինել։

Ռասկոլնիկովը այսպես կամ համարյա այսպես վերջացրեց իր խոսքը, որ հաճախ ընդհատվում էր լարված ուշադրությամբ լսող ներկաների բացականչություններով։ Բայց, չնայելով բոլոր ընդհատումներին, նա խոսեց խիստ տոնով, հանգիստ, ճիշտ, պարզ, կտրուկ։ Նրա հատու ձայնը, նրա համոզված տոնը և խստաբարո դեմքը բոլորի վրա մեծ տպավորություն թողին։

— Այդպես է, այդպես է, դա այդպես է,— ցնծությամբ պնդում էր Լեբեզյատնիկովը։ — Պետք է որ այդպես լինի, որովհետև հենց որ Սոֆյա Սեմյոնովնան մտավ մեր սենյակը, նա, Լուժինը, ինձ կանչեց դեպի պատուհանը և այնտեղ կամացուկ հարցրեց՝ «Այստե՞ղ է Ռասկոլնիկովը, դուք նրան չտեսա՞ք Կատերինա Իվանովնայի հյուրերի մեջ»։ Հետևաբար նրան անպայման հարկավոր էր, որ դուք այստեղ լինեիք։ Դա հենց այդպես է, որ կա։

Լուժինը լռում էր և արհամարհանքով ժպտում։ Սակայն նա խիստ սփրթնած էր։ Թվում էր, որ նա միտք էր անում, թե ինչպես դուրս սլրծնի։ Գուցե նա հաճույքով կթողներ ամեն ինչ ու կհեռանար, բայց տվյալ րոպեին դա գրեթե անկարելի էր. այդ կնշանակեր ուղղակի խոստովանել իր դեմ ուղղված մեղադրանքների արդարացիությունը և այն, որ ինքը իսկապես զրպարտել էր Սոֆյա Սեմյոնովնային։ Բացի դրանից, ներկա գտնվողները, որոնք առանց այն էլ արդեն հարբած էին, չափազանց հուզվում էին։ Պարենավորման աստիճանավորը, որ այնքան էլ չէր հասկանում այդ ամենը, բոլորից ավելի բարձր էր բղավում և Լուժինի համար խիստ անհաճելի միջոցներ էր առաջարկում։ Բայց կային նաև չխմած տնվորներ. դրանք եկել էին բոլոր սենյակներից,

երեք լեհերը խիստ ցասկոտում էին և անդադար գոռում՝ «անպիտան պարոն», ու լեհերեն ինչ-որ սպառնալիքներ էին քրթմնջում։ Սոնյան լարված լսում էր, բայց կարծես նա էլ լավ չէր հասկանում այդ ամենը, կարծես ուշաթափությունից էր սթափվել։ Նա աչք չէր կտրում Ռասկոլնիկովից, զգալով, որ նրանից է կախված իր ամբողջ պաշտպանությունը։ Կատերինա Իվանովնան խոպոտ ու դժվարությամբ էր շնչում, ու թվում էր, որ գտնվում է սարսափելի ուժասպառ վիճակում։ Առավելապես հիմար դրության մեջ էր Ամալյա Իվանովնան, կանգնել էր բերանը բացած և ոչինչ չէր հասկանում։ Նա միայն տեսնում էր, որ Պյոտր Պետրովիչը բռնվել է։ Ռասկոլնիկովը նորից խոսելու թույլտվություն խնդրեց, բայց այդ նրան թույլ չտվին. բոլորը բղավում էին և հայհոյանքներով ու սպառնալիքներով խռնվում Լուժինի շուրջը։ Բայց Պյոտր Պետրովիչը չվախեցավ։ Տեսնելով, որ Սոնյային մեղադրելու գործը բոլորովին տանուլ է տրված, նա ուղղակի լկտիության դիմեց.

— Թույլ տվեք, պարոններ, թույլ տվեք, մի նեղեք, թողեք անցնեմ,— ասում էր նա՝ ճեղքելով ամբոխը,— ու խնդրում եմ թողնել սպառնալիքները. հավատացնում եմ ձեզ, որ այդ իզուր է, ոչինչ չեք անի, ես վախկոտներից չեմ, ընդհակառակը, հենց դուք, պարոններ, պատասխան կտաք, որ բռնությամբ քողարկեցիք քրեական գործը։ Դատարանում մարդիկ կույր չեն և... հարբած չեն լինում ու չեն հավատա երկու մոլի անաստվածներին, զրգռիչներին ու ազատամիտներին, որոնք անձնական վրեժից դրդված, ինձ մեղադրում են այնպիսի բաների համար, որոնք հենց իրենց պետք է վերագրել և այդ հենց իրենք են հիմարաբար խոստովանում։ Այո։ Դե թույլ տվեք անցնել։

— Անմիջապես ձեր հոտը պետք է կտրվի իմ սենյակից. բարեհաճեցեք հեռանալ և մեր մեջ ամեն ինչ վերջացած է։ Իզուր չէ՞ր, որ ես կաշվից դուրս էի գալիս, դրան բացատրում իմ համոզմունքները... ամբողջ երկու շաբաթվա ընթացքում...

— Ախր ես ինքս էլ, Անդրեյ Սեմյոնովիչ, ժամ առաջ ձեզ ասել եմ, որ մեկնում եմ, իսկ դուք ինձ դեռ պահում էիք. իսկ հիմա միայն կավելացնեմ, որ դուք հիմար եք։ Ցանկա-

նում եմ, որ դուք բուժեք ձեր խելքը և ձեր կարճատես աչքերը։ Թույլ տվեք անցնել, պարոններ։

Նա ամբոխի միջով առաջ անցավ. բայց պարենավորման ատիճանավորը չէր ուզում նրան բաց թողնել այդպես հեշտությամբ, միայն հայհոյանքներ կերցնելով. նա սեղանից մի բաժակ վերցրեց, թափ առավ ու շպրտեց դեպի Պյոտր Պետրովիչը. սակայն բաժակը գիպավ Ամալյա Իվանովնային։ Սա ճչաց, իսկ պարենավորման ատիճանավորը թափ առնելուց կորցնելով հավասարակշռությունը, ծանր փռվեց հատակին, սեղանի տակ։ Պյոտր Պետրովիչը անցավ իր տեղյակը ու կես ժամից նա արդեն տանը չէր։ Թնությունից երկչոտ Սոնյան առաջ էլ գիտեր, որ իրեն ավելի հեշտ է կործանել, քան ուրիշ որևէ մեկին, ու ամեն մեկը համարյա կարող էր անպատիժ վիրավորել նրան։ Բայց և այնպես մինչև այդ րոպեն նրան թվում էր, որ կարելի է փորձանքից խուսափել որևէ կերպ՝ զգուշությամբ, հեզությամբ, խոնարհվելով բոլորի և ամեն մեկի առաջ։ Նրա հիասթափությունը չափազանց ծանր էր։ Իհարկե, նա կարող էր համբերությամբ և զբեթե անտարբերությամբ տանել ամեն ինչ, նույնիսկ այդ բանը։ Բայց առաջին բոպեին խիստ ծանր էր նրա տրամադրությունը։ Երբ անցավ առաջին վախը և առաջին շշմածությունը, երբ նա պարզ հասկացավ ու կշռադատեց ամեն ինչ, շնչած իր հաղթանակին և արդարացման, անզորության ու վիրավորանքի զգացումը տանջելից ճմլեց նրա սիրտը։ Նա հիստերիկայի մեջ ընկավ։ Վերջապես, չդիմանալով իր այդ վիճակին, սենյակից դուրս նետվեց և վազեվազ գնաց տուն։ Այդ եղավ Լուժինի հեռանալուց համարյա անմիջապես հետո։ Երբ բաժակը զարկվեց Ամալյա Իվանովնային, ու նեբկանները բարձրաձայն քրքջացին, սա էլ չդիմացավ ուրիշների մեղքով իրեն հասած գլխացավանքին։ Կատաղածի պես, ճղճղոցով հարձակվեց Կատերինա Իվանովնայի վրա, գոռալով, որ այդ ամենի համար նա է մեղավոր։

— Ձգվիր իմ բնակարանից, հենց այժմ, մա՛րշ,— և այս ասելով, սկսեց Կատերինա Իվանովնայի իրերից վերցնել այն ամենը, ինչ-որ ձեռքն էր ընկնում, ու շպրտել հատակին։ Առանց այդ էլ աստիճանի ընկճված, համարյա ուշագնաց, շնչասպառ, դունաթափ Կատերինա Իվանովնան վեր

թռավ անկողնից (որի վրա էր ընկել ուժասպառ վիճակում) և հարձակվեց Ամալյա Իվանովնայի վրա։ Բայց կռիվը խիստ անհավասար էր. վերջինս նրան եռ շպրտեց ինչպես մի փետրիկ։

— Սա ի՞նչ բան է։ Բավական չէ, որ այդպես անխղճորեն դրպարտեցին, դեռ այդ փուչ արարածն էլ է հարձակվում ինձ վրա։ Ամուսնուս թաղման ջրը, իմ աղուհացից հետո եբեխաներիս հետ դուրս ենք շրում բնակարանից, փողոց են շպրտում։ Հապա ես ո՞ւր գնամ,— հեկեկալով ու շնչասպառ ճչում էր խեղճ կինը։— Տե՛ր աստված,— բղավեց նա հանկարծ, աչքերը կրակ կտրած,— մի՞թե արդարություն չկա։ Հապա դու ո՞ւմ պետք է պաշտպանես, եթե ոչ մեզ, որբերիս։ Դե հիմա կտեսնենք։ Աշխարհում կա դատաստան և արդարություն, կա, ես կգտնեմ։ Հենց հիմա, սպասիր դու, անխիղճ արարած։ Պոլեչկա, մնա երեխաների մոտ, ես շուտով կգամ։ Սպասեցեք ինձ թեկուզ փողոցում։ Կտեսնենք, աշխարհում կա՞ արդարություն, թե ոչ։

Ու գլխին գցելով հենց այն կանաչ, դրադեգամե գլխաշորը, որ Ռասկոլնիկովի հետ խոսելիս հիշատակել էր հանգուցյալ Մարմելադովը, Կատերինա Իվանովնան անցավ դեռ սենյակում խոնվող տնվորների անկարգ ու հարբած ամբոխի միջով ու արցունքներն աչքերին, հեծկլտալով, վազեց փողոց, հետապնդելով անորոշ մի նպատակ՝ ինչ-որ մի տեղ, հենց հիմա, անմիջապես և ինչ կերպ էլ լինի արդարություն գտնել։ Պոլեչկան վախվխելով, երեխաների հետ կուչ եկավ անկյունում, սնդուկի վրա, և երկու փոքրիկներին գրկած, գողդողում էր, սպասում մոր վերադարձին։ Ամալյա Իվանովնան սենյակով մեկ այս ու այն կողմ էր ընկնում, ճղճըղում, ճչում, ձեռքն ընկած բոլոր իրերը շպրտում հատակին, աղմուկ-աղաղակ բարձրացնում։ Տնվորները բղավում էին այս ու այն կողմից, ոմանք պատմում էին իրենց գիտեցածը տեղի ունեցած իրադարձության մասին, մյուսները վիճում էին ու հայհոյանք թափում. ոմանք էլ սկսեցին երգել...

«Հիմա էլ իմ գնալու ժամանակն է»,— մտածեց Ռասկոլնիկովը։— «Հապա՛, Սոֆյա Սեմյոնովնա, տեսնենք հիմա դուք ի՞նչ եք ասելու»։

Եվ նա գնաց Սոնյայի բնակարանը։

IV

Ռասկոլնիկովը Սոնյայի գործունյա և աշխույժ փաստաբանն էր ընդդեմ Լուժինի, չնայելով, որ այնքա՜ն սարսափելիորեն տանջվում էր հոգեպես։ Բայց առավոտյան այդչափ տանջվելով, նա կարծես ուրախ էր, որ առիթ կա իր տպավորությունները փոխելու, որոնք անտանելի էին դարձել, էլ չխոսենք այն մասին, թե ինչպիսի հաճույքով ու անկեղծությամբ էր նա ձգտում պաշտպանել Սոնյային։ Բացի դրանից, նրան սպասում ու երբեմն սարսափելի անհանգստացնում էր առաջիկա տեսակցությունը Սոնյայի հետ, նա պետք է հայտներ Սոնյային, թե ով էր սպանել Լիզավետային, նախազգում էր, որ խիստ տանջվելու է, ու կարծես դա վանում էր ձեռքերով։ Դրա համար էլ, երբ նա Կատերինա Իվանովնայի սենյակից հեռանալիս բացականչեց՝ «Հապա, Սոֆյա Սեմյոնովնա, տեսնենք հիմա դուք ինչ եք ասելու», ապա ակներևաբար դեռ գտնվում էր զվարթության, աշխուժության և քիչ առաջ Լուժինի դեմ տարած հաղթության բերկրանքի ինչ-որ առերևույթ հուզվածության վիճակում։ Բայց նրան տարօրինակ բան պատահեց։ Երբ նա հասավ Կապերնաումովի բնակարանը, հանկարծակի ուժասպառություն և վախ զգաց։ Նա մտաղբաղ կանգ առավ դռան առաջ և ինքն իրեն տարօրինակ հարց տվեց՝ «Արդյո՞ք պետք է ասել, թե ով է սպանել Լիզավետային»։ Հարցը տարօրինակ էր, որովհետև նա հանկարծ, միաժամանակ զգաց, որ ոչ միայն չի կարելի չասել, այլև անկարելի է նույնիսկ կարճ ժամանակով հետաձգել այդ բոպեն։ Նա դեռ չգիտեր, թե ինչու է անկարելի, նա այդ միայն զգաց, ու անհրաժեշտության հանդեպ իր անզորության տանջալից դիտակցությունը համարյա ճզմեց նրան։ Որպեսզի էլ դատողություններ չաներ և չտանջվեր, նա արագ բացեց դուռը և շեմքից նայեց Սոնյային։ Վերջինս նստել էր սեղանին կրթնած և դեմքը ձեռքերով ծածկած, սակայն տեսնելով Ռասկոլնիկովին, հապճեպ վեր կացավ ու գնաց նրան ընդառաջ, կարծես սպասում էր նրան։

— Առանց ձեզ ի՞նչ կլիներ իմ վիճակը,— իսկույն ասաց նա՝ սենյակի մեջտեղում կանգնելով Ռասկոլնիկովի առաջ։

Ակներև էր, որ հենց միայն այդ էր ուզում ասել նրան։ Այնուհետև գտնվում էր սպասողական վիճակում։

Ռասկոլնիկովը մոտեցավ սեղանին և նստեց այն աթոռին, որից Սոնյան հենց նոր էր վեր կացել։ Սոնյան կանգնեց նրա առջև, երկու քայլ հեռավորությամբ, ճիշտ այնպես, ինչպես նախորդ օրը։

— Ի՞նչ կասեք, Սոնյա,— հարցրեց Ռասկոլնիկովը ու հանկարծ զգաց, որ ձայնը դողում է,— ամբողջ գործը հո հանգում էր «հասարակական դիրքին ու դրա հետ կապված սովորություններին»։ Դուք այդ հասկացա՞ք։

Սոնյայի դեմքին տանջանք արտահայտվեց։

— Միայն թե ինձ հետ մի խոսեք այնպես, ինչպես երեկ, — ասաց նա,— էլի մի սկսեք։ Առանց այդ էլ քիչ չեն տանջանքները...

Սոնյան իսկույն ժպտաց, վախենալով, որ գուցե այդ կշտամբանքը դուր չգա Ռասկոլնիկովին։

— Ես հիմարություն արեցի, որ այնտեղից եկա։ Հիմա այնտեղ ի՞նչ է կատարվում։ Հիմա ուզում էի գնալ, բայց մտածում էի, որ... դուք կդաք։

Ռասկոլնիկովը նրան պատմեց, որ Ամալյա Իվանովնան նրանց դուրս է անում բնակարանից, ու Կատերինա Իվանովնան գնացել է ինչ-որ տեղեր, «արդարություն փնտրելու»։

— Ախ, աստված իմ,— բացականչեց Սոնյան,— գնանք այնտեղ, շո՛ւտ...

Եվ նա վերցրեց իր թիկնոցը։

— Միշտ միևնույն բա՞նը,— ջղայնացած գոչեց Ռասկոլնիկովը։ — Ձեր մտքերում հենց նրանք են որ կան։ Եղե՛ք ինձ հետ։

— Հապա... Կատերինա Իվանովնա՞ն։

— Կատերինա Իվանովնան, իհարկե, ձեզ չի մոռանա, ինքը կգա ձեզ մոտ, քանի որ տանից դուրս է գնացել,— գժգոհությամբ ավելացրեց Ռասկոլնիկովը։ — Եթե ձեզ այստեղ չգտնի, դուք դրա համար մեղավոր կլինեք...

Սոնյան տանջալից անվճռականությամբ նստեց աթոռին։ Ռասկոլնիկովը լռում էր, մտաբաղ նայում հատակին։

— Ըստ երևույթին Լուժինը չէր ուզում ձեզ շարշարել,— սկսեց նա առանց Սոնյային նայելու։ — Իսկ եթե նա այդ ուզենար կամ դա որևէ կերպ նրան հարկավոր լիներ, նա ձեզ բանտ կնստեցներ, եթե չլինեինք ես ու Լեբեզյատնիկովը, այնպես չէ՞։

— Այո,— թույլ ձայնով ասաց Սոնյան,— այո,— մտաքրքիվ ու անհանգիստ կրկնեց նա։

— Բայց ես իրոք կարող էի և ներկա չլինել, իսկ Լեբեզյատնիկովը բոլորովին պատահմամբ վրա հասավ։

Սոնյան լուռ էր։

— Իսկ եթե բանտ ընկնեիք, ի՞նչ կլիներ։ Հիշո՞ւմ եք, թե ես երեկ ինչ էի ասում։

Սոնյան գարձյալ չպատասխանեց։ Ռասկոլնիկովը մի փոքրը լռեց։

— Ես կարծում էի, թե դուք էլի կբղավեք՝ «ախ, մի խոսեք, վերջ տվեք»— ծիծաղեց նա, բայց այդ ծիծաղը բռնաբռոսիկ էր։ — Հը՛, դարձյա՞լ լռություն,— մի բոպե անց հարցրեց նա։ — Չէ՞ որ հարկավոր է խոսել որևէ բանի մասին։ Ինձ համար հետաքրքիր կլիներ իմանալ, թե դուք հիմա ինչպես կլուծեիք մի «հարց», ինչպես ասում է Լեբեզյատնիկովը։ (Ռասկոլնիկովը կարծես սկսում էր շփոթվել)։ Չէ, իսկապես, ես լուրջ բան եմ ասում։ Երևակայեցեք, Սոնյա, թե դուք նախապես գիտեիք Լուժինի բոլոր մտադրությունները, գիտեիք (այսինքն հաստատապես), որ դրանց պատճառով բոլորովին կկործանվեին Կատերինա Իվանովնան ու երեխաները. դուք նույնպես, իբրև հավելում (քանի որ դուք ձեզ ոչ մի բանի տեղ չեք դնում, ասում եմ՝ իբրև հավելում)։ Պոլեչկան նույնպես... որովհետև նա նույն ճանապարհով է գնալու։ Դե ուրեմն ասացեք, եթե այդ ամենը հիմա ձեր լուծմանը թողնեին, այսինքն թե ովքեր պիտի ապրեին, Լուժի՞նը պետք է ապրեր և նողկալիություններ աներ, թե՞ Կատերինա Իվանովնան պետք է մեռներ, ապա դուք ի՞նչ լուծում կտայիք, հարցնում եմ ձեզ, նրանցից ո՞վ պետք է մեռներ։

Սոնյան անհանգստությամբ նայեց Ռասկոլնիկովին. նրան թվաց, թե մի ինչ-որ առանձին իմաստ կա այդ անհաստատ և հեռվից մի ինչ-որ բանի մոտեցնող խոսքերում։

— Ես արդեն նախազգում էի, որ դուք որևէ այդպիսի հարց կտաք,— ասաց նա՝ զննողաբար նայելով Ռասկոլնիկովին։

— Լավ, թող այդպես լինի. բայց այնուամենայնիվ ինչպե՞ս կարելի է լուծել այդ հարցը։

— Ինչո՞ւ եք հարցնում այնպիսի բաների մասին, որոնք չեն կարող լինել,— զզվանքով ասաց Սոնյան։

— Ուրեմն ավելի լավ է, որ Լուժինը ապրի և նողկալիություններ անի։ Դուք այդ է՞լ չհամարձակվեցիք լուծել։

— Ես հո չե՞մ կարող ասածու կանխատեսումը իմանալ... Եվ ինչո՞ւ եք դուք հարցնում այն, ինչ-որ չի կարելի հարցնել։ Ինչի՞ համար են այդպիսի դատարկ հարցերը։ Ինչպե՞ս կարող է պատահել, որ դա իմ վճռից կախված լինի։ Եվ ո՞վ է ինձ գատավոր կարգել, թե ով պետք է ապրի և ով չապրի։

— Դե որ ասածու կանխատեսումն է մեջտեղ գալիս, էլ այստեղ ոչինչ չես կարող անել,— մռայլ քրթմնջաց Ռասկոլնիկովը։

— Ավելի լավ է ուղղակի ասեք, թե ինչ եք ուզում,— տանջալից գոչեց Սոնյան,— դուք էլի ինչ-որ բան եք ակնարկում... Մի՞թե ինձ տանջելու համար եք եկել։

Սոնյան չկարողացավ իրեն զսպել ու հանկարծ դառն լացեց։ Ռասկոլնիկովը մռայլ տխրությամբ նայում էր նրան։ Անցավ հինգ րոպե։

— Դու հո իրավացի ես, Սոնյա,— վերջապես, կամացուկ ասաց նա։ Հանկարծ նա փոխվեց. նրա շինծու-լկտի և անզոր-վրդովեցուցիչ տոնը չքացավ։ Նույնիսկ ձայնն էլ հանկարծ թուլացավ։ — Հենց ինքս երեկ քեզ ասացի, թե ներողություն խնդրելու համար չեմ գա, բայց ահա բանը հենց նրանով սկսեցի, որ ներողություն եմ խնդրում... Լուժինի ու կանխատեսման մասին ես հենց այնպես էի խոսում... Ես ներողություն էի խնդրում, Սոնյա...

Ռասկոլնիկովը փորձեց ժպտալ, բայց նրա դալուկ ժպիտը ինչ-որ անզոր ու անտավարտ բան արտահայտեց։ Նա թեքեց գլուխը և ձեռքերով ծածկեց դեմքը։

Ու հանկարծ նրա որտում Սոնյայի նկատմամբ ինչ-որ զառն ատելություն տարօրինակ, անտեսկալ զգացում առա-

ջացավ։ Ասես զարմանալով և ինքն էլ վախենալով այդ զգացումից, նա հանկարծ բարձրացրեց գլուխը և ակնապիշ նայեց Սոնյային. բայց տեսավ, որ վերջինս անհանգստությամբ և համարյա տանջալից հոգատարությամբ իրեն էր նայում. այստեղ սեր կար. իր ատելությունը չքացավ ինչպես ուրու։ Դա այլ բան էր. նա մի զգացմունքը մյուսի տեղ էր ընդունել։ Դա միայն նշանակում էր, որ եկել է այն րոպեն։

Դարձյալ ձեռքերով ծածկեց դեմքը և կախեց գլուխը։ Հանկարծ նա գունատվեց, աթոռից վեր կացավ, նայեց Սոնյային, ու ոչինչ չասելով, մեքենայաբար նստեց նրա անկողնին։

Նրա զգացմամբ այդ րոպեն զարհուրելի նման էր այն րոպեին, երբ ինքը օղակից հանելով կացինը, կանգնել էր պառավի ետևում և զգում էր, որ արդեն «էլ ոչ մի ակնթարթ չի կարելի կորցնել»։

— Ի՞նչ պատահեց ձեզ,— հարցրեց սարսափելի վախեցած Սոնյան։

Ռասկոլնիկովը ոչինչ չէր կարող ասել։ Նա ամենևին, ամենևին չէր ենթադրում այդ կերպ ճայտնել, ու ինքն էլ չէր հասկանում, թե հիմա իր հետ ինչ էր կատարվում։ Սոնյան կամացուկ մոտեցավ նրան, նստեց անկողնին, նրա կողքին՝ շարունակ նայելով նրան։ Սոնյայի սիրտը խփում էր ու նվաղում։ Դրությունը անտանելի դարձավ. Ռասկոլնիկովը իսկայաբար գունատված իր դեմքը դարձրեց դեպի Սոնյան. նրա շուրթերը անզոր ծռմռվում էին՝ ջանալով ինչ-որ բան ասել։ Սոնյայի սրտով սարսափ անցավ։

— Ի՞նչ պատահեց ձեզ,— հարցրեց նա՝ մի քիչ ետ քաշվելով Ռասկոլնիկովից։

— Ոչինչ, Սոնյա։ Մի՛ վախենա... Դատարկ բան է. ճիշտն ասած, դատարկ բան է,— փնթփնթաց Ռասկոլնիկովը իրեն կորցրած, զառանցող մարդու տեսքով։ — Ինչո՞ւ եկա քեզ տանջելու,— ավելացրեց նա հանկարծ, նայելով Սոնյային։ — Իսկապես, ինչո՞ւ։ Ես ինձ շարունակ տալիս եմ այս հարցը, Սոնյա...

Նա գուցե և այդ հարցը ինքն իրեն տալիս էր քառորդ ժամ առաջ, բայց հիմա այդ ասաց բոլորովին ուժասպառ,

հազիվ գիտակցական վիճակում, զգալով իր ամբողջ մարմնի անընդհատ դողը։

— Ա՜խ, որքա՜ն եք դուք տանջվում,— կարեկցաբար ասաց Սոնյան, աչքերը նրան հառած։

— Այդ բոլորը դատարկ բան է... Ա՜յ թե ինչ, Սոնյա (չգիտես ինչու նա երկու վայրկյանի չափ թույլ ու անզոր ժպտաց), հիշո՞ւմ ես, թե ես եղեկ ինչ էի ուզում ասել քեզ։

Սոնյան անհանգիստ սպասում էր։

— Գնալիս ես ասացի, որ գուցե առմիշտ հրաժեշտ եմ տալիս քեզ, բայց եթե այսօր գամ, քեզ կասեմ... թե ով է սպանել Լիզավետային։

Սոնյան հանկարծ սկսեց դողալ ամբողջ մարմնով։

— Ահա և եկել եմ ասելու։

— Ուրեմն երեկ դուք այդ լո՞ւրջ էիք ասում...— դժվարությամբ շշնջաց Սոնյան,— իսկ որտեղի՞ց գիտեք,— կարծես հանկարծ ուշքի գալով, արագ հարցրեց նա։

Սոնյան սկսեց դժվարությամբ շնչել։ Նրա դեմքը ավելի ու ավելի էր գունատվում։

— Գիտեմ։

Սոնյան մի րոպեի չափ լուռ էր։

— Գտե՞լ են նրան, թե ինչ,— երկչոտ հարցրեց նա։

— Ոչ, չեն գտել։

— Հապա ի՞նչպես դուք այդ գիտեք,— դարձյալ հազիվ լսելի և դարձյալ դրեթե բոպեական լռությունից հետո հարցրեց Սոնյան։

Ռասկոլնիկովը դեմքը դարձրեց նրան և ակնապի՛շ, ակնապի՛շ նայեց նրա աչքերին։

— Գլխի՛ ընկիր,— ասաց նա նախորդ ծռմռվող ու անզոր ժպիտով։

Սոնյայի ամբողջ մարմնով ասես սահեց չղաձգությունը։

— Ախր դուք... ինձ... ինչո՞ւ եք դուք ինձ այդպես... վտխեցնում,— ասաց նա երեխայի պես ժպտալով։

— Ուրեմն ես նրա հետ մոտիկ ընկեր եմ... եթե գիտեմ, — ասաց Ռասկոլնիկովը՝ շարունակելով նայել նրա դեմքին, ասես անկարող էր աչք կտրել նրանից,— նա այդ Լիզավետային... սպանել չէր ուզում... նրան... անակնկալ

սպանեց... Նա ուզում էր պառավին սպանել... երբ ներս մտավ, պառավը մենակ էր... Հետո եկավ Լիզավետան... Նա... Լիզավետային էլ սպանեց։

Անցավ ևս մի զարհուրելի րոպե։ Երկուսն էլ շարունակ իրար էին նայում։

— Ուրեմն չե՞ս կարող գլխի ընկնել,— հարցրեց նա հանկարծ, այնպիսի զգացումով, որ կարծես թե զանգակատնից ներքև էր նետվում։

— Ո-ո՛չ,— հազիվ լսելի շշնջաց Սոնյան։

— Հապա՛, լա՛վ նայիր։

Ու հենց որ նա այդ ասաց, դարձյալ առաջվա ծանոթ մի զգացում անակնկալ սառեցրեց նրա հոգին. նա նայում էր Սոնյային, ու հանկարծ վերջինիս դեմքի փոխարեն կարծես տեսավ Լիզավետայի դեմքը։ Նա պարզ հիշում էր Լիզավետայի դեմքի արտահայտությունը այն պահին, երբ ինքը կացինը ձեռքին մոտենում էր նրան, իսկ Լիզավետան նրանից ետ էր քաշվում գեպի պատը, ձեռքը դեպի առաջ պարզած, գեմքին բոլորովին մանկական վախ, իսկ և իսկ ինչպես փոքրիկ երեխաները, երբ սրանք հանկարծ սկսում են վախենալ որևէ բանից, անշարժ ու անհանգիստ նայում են իրենց վախեցնող առարկային, ետ են քաշվում, թաթիկները դեպի առաջ պարզած, պատրաստվում են լաց լինելու։ Այժմ համարյա նույնը պատահեց նաև Սոնյային. նույն անզորությամբ, նույն վախով մի քանի վայրկյան նայում էր նա Ռասկոլնիկովին, ու հանկարծ ձախ ձեռքը դեպի առաջ պարզելով, թեթևակի, հազիվհազ մատները հենեց նրա կրծքին ու դանդաղ վեր կացավ մահճակալից, հետզհետե ավելի ետ քաշվելով Ռասկոլնիկովից և շարունակ անթարթ նայելով նրան։ Սոնյայի սարսափը հանկարծ անցավ նաև Ռասկոլնիկովին. ճիշտ նույնպիսի վախ երևաց նաև նրա դեմքին, ճիշտ նույնպես նա էլ սկսեց նայել Սոնյային, նույնիսկ համարյա նույնպիսի մանկական ժպիտը դեմքին։

— Գլխի ընկա՞ր,— վերջապես, շշնջաց Ռասկոլնիկովը։

«Տե՛ր աստված»,— թռավ Սոնյայի կրծքից սարսափելի մի ճիչ։ Նա ուժասպառ ընկավ անկողնին, դեմքը բարձին։ Բայց մի ակնթարթից արագությամբ քիչ բարձրացավ, արագությամբ մոտեցավ Ռասկոլնիկովին, վերցրեց նրա ձեռքե-

բը, գրանք պինդ սեղմեց իր բարալիկ մատներով, սկսեց դարձյալ անշարժ, ասես անկոզնին կպած, նայել նրա դեմքին։ Այդ վերջին, հուսահատական հայացքով նա ուզում էր իր համար գեթ մի որևէ վերջին հույս նշմարել ու որսալ։ Բայց հույս չկար. ոչ մի կասկած չէր մնում. ամեն ինչ այդպես էր, որ կար։ Նույնիսկ հետո էլ, հետագայում, երբ նա վերհիշում էր այդ բոպեն, նրան տարօրինակ ու զարմանալի էր թվում, թե ինչո՞ւ հենց ինքը այդպես միանգամից տեսավ, որ արդեն ոչ մի կասկած չկա։ Չէ՞ որ նա, օրինակ, չէր կարող ասել, թե ինքը մի որևէ նման բան էր նախազգում։ Այնինչ հիմա, հենց որ Ռասկոլնիկովը այդ ասաց, նրան, Սոնյային թվաց, թե իսկապես ինքը կարծես թե նախազգում էր հենց այդ բանը։

— Բավական է, Սոնյա, բավական է, մի տանջիր ինձ, — տառապալից խնդրեց Ռասկոլնիկովը։

Նա բոլորովին, բոլորովին չէր մտածում այդ կերպ խոստովանել իր արարքը, բայց այդպես դուրս եկավ։

Կարծես ինքն իրեն մոռանալով, Սոնյան վեր թռավ, ու հեծկլտալով հասավ սենյակի մեջտեղը. բայց արագ ետ դարձավ ու դարձյալ նստեց Ռասկոլնիկովի կողքին, ուսը համարյա հպելով նրա ուսին։ Հանկարծ, ասես խոցվելով, նա ցնցվեց, ճչաց ու նրա առջև ծունկ չոքեց, ինքն էլ չգիտենալով, թե ինչի համար է այդ անում։

— Այդ ի՞նչ, ի՞նչ փորձանք եք բերել ձեր գլխին,— հուսաբեկ ասաց նա, ու վեր կենալով, ընկավ Ռասկոլնիկովի վզովը, գրկեց նրան և պինդ, պինդ սեղմեց ձեռքերով։

Ռասկոլնիկովը ետ քաշվեց և տխուր ժպիտով նայեց նրան։

— Տարօրինակ ես դու, Սոնյա, գրկում ես ու համբուրում, երբ ես քեզ ասել եմ այդ բանը։ Դու քեզ կորցրել ես։

— Հիմա արար-աշխարհում քեզնից ավելի դժբախտ մարդ չկա,— մոլեգնաբար բացականչեց Սոնյան՝ լսելով նրա դիտողությունը, ու կարծես հիստերիկայի մեջ ընկնելով, հանկարծ հոնկուր-հոնկուր լաց եղավ։

Ռասկոլնիկովին վաղուց անծանոթ մի զգացում հոգեց նրա հոգու մեջ և միանգամից թեթևացրեց այն։ Նա չէր դի-

մազրում այդ զգացումին. նրա աչքերից երկու արցունք դուրս եկան ու կախվեցին արտևանունքներից։

— Դու ինձ հո չե՞ս թողնի,— ասաց նա՝ համարյա հուսադրված նայելով Սոնյային։

— Ոչ, ոչ, երբե՛ք և ոչ մի տեղ,— գոչեց Սոնյան,— քեզ հետ կգամ, ուր ասես կգամ։ Օ՜, տեր աստված... օ՜ֆ, ես դժբախտ եմ... Ինչո՞ւ, ինչո՞ւ առաջ ես քեզ չէի ճանաչում։ Ինչո՞ւ դու առաջ չէիր գալիս։ Ա՜խ, տեր աստված։

— Ահա և եկել եմ։

— Հիմա՜։ Ի՜նչ անել հիմա... Լինենք միասին, միասին, — կրկնում էր Սոնյան կարծես կիսաուշագնաց վիճակում և նորից գրկելով նրան,— քեզ հետ միասին տաժանակիր աշխատանքի կգնամ։

Ռասկոլնիկովը հանկարծակի ցնցվեց ու նրա շուրթերին նշմարվեց առելության և համարյա զոռոզության նախորդ ժպիտը։

— Ես, Սոնյա, գուցե և դեռ չեմ ուզում տաժանակիր աշխատանքի գնալ,— ասաց նա։

Սոնյան շեշտակի նայեց նրան։

Դժբախտի նկատմամբ առաջին, կաթոգին ու տանջող կարեկցանքից հետո դարձյալ նրան ապշեցրեց սպանության սարսափելի միտքը։ Ռասկոլնիկովի խոսքերի փոխված տոնի մեջ հանկարծակի նա զգաց, որ առկա է մարդասպանը։ Նա ապշած նայում էր վերջինիս։ Նրան դեռ ոչինչ հայտնի չէր, թե ինչու, ինչպես և ինչի համար էր այդ եղել։ Այժմ նրա գիտակցության մեջ միանգամից բռնկվեցին այդ բոլոր հարցերը։ Ու դարձյալ նա չհավատաց. «Սա, սա մարդասպա՞ն, մի՞թե այդ հնարավոր է»։

— Այս ի՞նչ է, ո՞րտեղ եմ ես կանգնած,— ասաց նա խորին տարակուսանքով, կարծես դեռ ուշքի չեկած,— ախր ի՞նչպես դուք, դուք, այդպիսի մարդ լինելով... կարող էիք նման բան անել... Այս ի՞նչ բան է։

— Հա՜, էլի, կողոպտելու համար եմ արել։ Վերջ տուր, Սոնյա,— հոգնածորեն և նույնիսկ սրտնեղելով պատասխանեց Ռասկոլնիկովը։

Սոնյան կանգնել էր ասես շշմած, սակայն հանկարծ գոչեց.

— Դու քաղցա՛ծ էիր... Դու... ուզում էիր օգնե՞լ մորդ, հա՞։

— Ոչ, Սոնյա, ոչ,— քրթմնջաց Ռասկոլնիկովը՝ շուռ գալով ու կախելով գլուխը,— ես այնքան էլ քաղցած չէի... ես իսկապես ուզում էի օգնել մորս, բայց... դա ևս այնքան էլ ճիշտ չէ... Մի՛ տանջիր ինձ, Սոնյա։

Սոնյան ձեռքերն իրար զարկեց։

— Բայց մի՞թե, մի՞թե այդ ճշմարտություն է։ Ձեր ասածը, ախր դա ի՞նչ ճշմարտություն է։ Ո՞վ կարող է դրան հավատալ... Եվ ի՞նչպես է որ, ի՞նչպես է որ դուք ինքներդ ձեր վերջին ունեցածը տալիս եք ուրիշին, բայց սպանել եք կողոպտելու համար։ Օ-օ՛ֆ,— հանկարծ գոչեց Սոնյան— այն փողերը, որ տվիք Կատերինա Իվանովնային... այն փողերը... Տե՛ր աստված, մի՞թե այն փողերն էլ...

— Ոչ, Սոնյա,— հապճեպ ընդհատեց Ռասկոլնիկովը,— դա ուրիշ փող էր, հանգստացիր։ Այդ փողը մայրս էր ուղարկել մի վաճառականի միջոցով, ու ես ստացա հիվանդ վիճակում և հենց նույն օրը տվի Կատերինա Իվանովնային... Ռազումիխինը տեսավ... հենց նա էլ ստացել էր ինձ հանձնելու համար... Այդ փողերը իմն էին, իմ սեփականը, իսկական իմն էին։

Սոնյան տարակուսանքով էր լսում նրան և ամեն կերպ չանում էր որևէ բան հասկանալ։

— Իսկ այն փողերը... ասենք ես նույնիսկ չգիտեմ էլ, թե արդյոք այնտեղ փող կար,— կամացուկ և մի տեսակ մտազբաղ ավելացրեց Ռասկոլնիկովը,— ես այն ժամանակ պառավի վզից հանեցի զամշե մի քսակ... լիքը լցված, պինդ քսակ... ու չբացեցի, չնայեցի, երևի ժամանակ չունեցա... իսկ իրերը, ինչ-որ ճարմանդներ, շղթայիկներ,— այդ բոլոր իրերը և քսակը հենց մյուս օրվա առավոտյան թաքցրի վ... պողոտայի մի բակում, քարի տակ... Այդ ամենը հիմա էլ այնտեղ է գտնվում...

Սոնյան լսում էր բոլորովին լարված։

— Ինչո՞ւ այդպես... դուք հո ասացիք, որ կողոպտելու համար էիք սպանել, հապա ինչո՞ւ ոչինչ չեք վերցրել,— զարմանքով հարցրեց նա։

— Չգիտեմ... ես դեռ չեմ որոշել, թե արդյոք վերցնե՞մ,

թե չվերցնեմ այդ փողերը,— գարձյալ մտախոհ պատասխանեց Ռասկոլնիկովը, ու հանկարծ ուշքի գալով, արագորեն ու կարճ քմծիծաղ տվեց— Օ՛ֆ, ես հիմա ինչպիսի՞ հիմարություն դուրս ավի, հը՞։

«Հո խելագար չէ՞ս,— անցավ Սոնյայի մտքով։ Բայց նա իսկույն վանեց այդ միտքը. ոչ, այստեղ ուրիշ բան կա։ Նա ոչինչ, ոչինչ չէր հասկանում։

— Գիտե՞ս, Սոնյա,— հանկարծ ինչ-որ ոգեշնչմամբ ասաց Ռասկոլնիկովը,— գիտե՞ս ինչ կասեմ քեզ. եթե ես ոգանած լինեի քաղցածության պատճառով,— շարունակեց նա՝ շեշտելով յուրաքանչյուր բառը և խորհրդավոր, բայց շիտակությամբ նայելով Սոնյային,— ապա ես այժմ... երջանիկ կլինեի։ Դու այդ լավ իմացիր։

— Քո ինչի՞ն է պետք,— մի ակնթարթից գոչեց նա նույնիսկ ինչ-որ հուսալքմամբ,— քո ինչի՞ն է պետք, եթե ես այժմ խոստովանեի, որ վատ բան եմ արել։ Քո ինչի՞ն է պետք այդ հիմար մանրախնդրությունը իմ նկատմամբ։ Ա՜խ, Սոնյա, մի՞թե հիմա ես դրա համար եմ եկել քեզ մոտ։

Սոնյան էլի ուզում էր մի բան ասել, բայց լռեց։

— Երեկ ես նրա համար էի քեզ կանչում, որ ինձ համար միայն դու ես մնացել։

— Ո՞ւր էիր կանչում,— երկչոտ հարցրեց Սոնյան։

— Գողություն անելու և մարդ սպանելու համար չէի կանչում, մի անհանգստանա, այդպիսի բան չի լինի,— կծու քմծիծաղ տվեց Ռասկոլնիկովը,— մենք տարբեր մարգիկ ենք... Գիտե՞ս, Սոնյա, ես միայն հիմա, միայն այս րոպեիս հասկացա, թե երեկ քեզ ուր էի կանչում։ Իսկ երեկ ինքս էլ չէի հասկանում, թե ուր եմ կանչում։ Միայն մի բանի համար էի կանչում, միայն մի բանի համար էի եկել, այն է՝ որ դու չթողնես ինձ։ Չե՞ս թողնի, Սոնյա։

Սոնյան սեղմեց նրա ձեռքը։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ես քեզ այդ ասացի, ինչո՞ւ հայտնեցի,— մի րոպե հետո հուսաբեկ բացականչեց Ռասկոլնիկովը՝ անսահմանորեն տանջալից նայելով Սոնյային,— ահա դու ինձնից բացատրություններ ես սպասում, նստել ես ու սպասում ես, ես այդ տեսնում եմ. իսկ ես ի՞նչ ասեմ քեզ. դու

ոչինչ չես էլ հասկանա, այլ միայն կտանջվես... իմ պատճառով։ Ա՛յ, դու լալիս ես և էլի գրկում ես ինձ, ինչի՞ համար ես գրկում. նրա համա՞ր, որ ես չդիմացա տանջանքին ու եկա այն ուրիշի վրա գցելու որպես թե՝ «Դու էլ տանջվիր, իմ բեռը ավելի թեթև դլինեք»։ Եվ մի՞թե դու կարող ես ոիրել այսպիսի մարդուն։

— Բայց չէ՞ որ դու էլ ես տանջվում,— գոչեց Սոնյան։

Դարձյալ նույն զգացմունքը հորդեց Ռասկոլնիկովի հոգու մեջ և դարձյալ մի ակնթարթ ամոթից այն։

— Սոնյա, իմ սիրտը շար է, դու այդ գիտցիր. դրանով կարելի է շատ բան բացատրել։ Ես հենց նրա համար եմ եկել, որ շար եմ։ Կան այնպիսիները, որոնք չէին գա։ Իսկ ես վախկոտ եմ և... ստոր էլ, թող այդպես լինի... Այս ամենը այն չէ, ինչ որ պետք է լինի... Հիմա խոսել է հարկավոր, իսկ ես չեմ կարողանում սկսել...

Ռասկոլնիկովը լռեց և մտածմունքի մեջ ընկավ։

— Է՛-է՛-հե՛, մենք տարբեր մարդիկ ենք, չենք սազում իրար,— դարձյալ գոչեց նա։ — Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ ես եկա։ Այս բանը ես ինձ երբեք չեմ ների։

— Ոչ, ոչ, այդ լավ է, որ եկար,— բացականչում էր Սոնյան,— լավ է, որ ես այդ գիտենամ. շատ ավելի լավ է։

Ռասկոլնիկովը տխուր նայեց նրան։

— Դե ինչ անենք որ,— ասաց նա մի փոքր մտածելուց հետո,— հենց այդպես է որ կա։ Ահա թե ինչ. ես ուզում էի Նապոլեոն դառնալ, դրա համար էլ սպանեցի... Հիմա հասկանալի՞ է։

— Ո-ո՛չ,— մի ամոթաբար ու երկչոտ շշնջաց Սոնյան,— միայն թե... տոսիր, խոսիր։ Ես կհասկանամ, ես կմտածեմ և ամեն ինչ կհասկանամ,— ավելացրեց նա։

— Կհասկանա՞ս։ Լավ, կտեսնենք։

Ռասկոլնիկովը լռեց ու երկար մտածում էր։

— Բանը այ թե ինչումն է. մի անգամ ես ինձ այսպիսի հարց տվի. նիթե, օրինակ, իմ տեղը Նապոլեոնը լիներ և իր կարիերան սկսելու համար չլիներ ոչ Տուլոնը, ոչ Եգիպտոսը, ոչ էլ Մոնբլանով անցնելը, այլ այդ բոլոր դեղեցիկ ու հոյակապ բաները փոխարեն լիներ մի որևէ ծիծաղելի պատ-

վիկ, կոլեգիական ռեգիստրատորի այրի կին, որին պետք էր, սպանել, որպեսզի նրա սնդուկից հաներ փողերը (կարիերայի համար, հասկանո՞ւմ ես), ապա նա արդյոք կանե՞ր այդ բանը, եթե ուրիշ ելք չլիներ։ Արդյոք նրան չէ՞ր կասեցնի այն, որ դա ամենևին էլ հոյակապ բան չէ և... մեղսագործություն է։ Ես քեզ ասում եմ, որ ես շատ երկար գլուխ կոտրեցի այդ «հարցի» վրա, այնպես որ սարսափելի ամոթահար եղա, երբ, վերջապես, կռահեցի (հանկարծակի), որ ոչ միայն չէր կասեցնի, այլև նրա մտքովն էլ չէր անցնի, որ դա հոյակապ բան չէ... և նույնիսկ ամենևին էլ չէր հասկանա, թե այստեղ ինչ կասեցում կարող է լինել։ Ու եթե նրա համար ուրիշ ճանապարհ չլիներ, ապա առանց երկար մտածելու այնպես կխեղդեր պառավին, որ սա ծպտուն հանել էլ չէր կարողանա... Դե ես էլ... ձեռք քաշեցի մտահոգությունից... խեղդեցի... ինչպես որ կաներ այն հեղինակավոր անձնավորությունը... Եվ դա ճիշտ այդպես էլ եղավ։ Դու ծիծաղո՞ւմ ես։ Այո, Սոնյա, այստեղ ամենից ծիծաղելին գուցե այն է, որ դա հենց այդպես էլ եղավ...

Սոնյան ամենևին էլ չէր ծիծաղում։

— Ավելի լավ է դուք այդ ամենը ասեք պարզապես... առանց օրինակների,— էլ ավելի երկչոտ և հազիվ լսելի խնդրեց նա։

Ռասկոլնիկովը դեմքը դարձրեց նրան, տխուր նայեց ու վերցրեց նրա ձեռքերը։

— Դու դառձյալ իրավացի ես, Սոնյա։ Այդ ամենը հոգստարկ բան է, համարյա միայն շաղակրատանք. տեսնում ես էլի, դու գիտես, որ մայրս համարյա ոչինչ չունի։ Քույրս պատահմամբ է կրթություն ստացել և ստիպված է այստեղ ու այնտեղ դաստիարակչուհի լինել։ Նրանք հենց միայն ինձ վրա էին հույս դրել։ Ես ուսանում էի, բայց միջոցներ չունենալու պատճառով ստիպված եղա համալսարանից դուրս գալ։ Եթե մի կերպ դիմանայի, կարող էի հուսալ, որ մի տասը-տասներկու տարի հետո (եթե բարենպաստ հանգամանքներ լիներին) կդառնամ որևէ ուսուցիչ կամ աստիճանավոր, տարեկան հազար ռուբլի ռոճիկով... (նա կարծես սերտած բան էր ասում)։ Իսկ այն ժամանակ մայրս հյուծված կլիներ հոգսերից ու վշտից, և ինձ այնուամենայնիվ չէր

հաջողվի հանգստացնել նրան, իսկ քույրս... քույրս կարող էր է՛լ ավելի վատ վիճակում լինել... Եվ ի՞նչ հաճույք է ամբողջ կյանքումդ ամեն ինչ անտեսել և ամեն ինչից երես դարձնել, մորը մոռանալ և խոնարհությամբ տանել քրոջ աննախանձելի վիճակը։ Ինչի՞ համար։ Մի՞թե նրա համար, որ նրանց թաղելով, նոր հարաղատներ՝ կին ու երեխա ունենաս ու հետո սրանց էլ առանց մի դրոշի և առանց մի պատառ հացի թողնես։ Եվ ահա ես որոշեցի տիրանալ պառավի փողերին, առանց մորս չարչարելու դրանք օգտագործել իմ առաջին տարիների համար, համալսարանում ինձ ապահովելու համար, ավարտելուց հետո իմ առաջին քայլերի համար, և այդ ամենը անել լայն չափով, արմատապես, այնպես, որ բոլորովին նոր կարիերա ստեղծեի և նոր, անկախ ճանապարհով ընթանայի... Դե... էլ ուրիշ ոչինչ... Դե իհարկե, ես վատ բան արեցի, որ սպանեցի պառավին... Դե, բավական է։

Ինչ-որ անզորությամբ նա վերջացրեց իր խոսքը ու կախեց գլուխը։

— Օֆ, բանը այդ չէ, այդ չէ,— տխուր բացականչում էր Սոնյան,— Մի՞թե այդ հնարավոր է... ոչ, խնդիրը այդ չէ, այդ չէ...

— Ինքդ ես տեսնում, որ այդ չէ... բայց ես հո անկեղծորեն պատմեցի. ասացի ճշմարտությունը։

— Ախր դա ի՞նչ ճշմարտություն է, օֆ, տեր աստված։

— Չէ՞ որ ես ոջիլ եմ սպանել, Սոնյա, անօգտակար, դարշելի, վնասակար ոջիլ։

— Մարդը ոջի՞լ է։

— Ախր ես էլ դիտեմ, որ ոջիլ չէ,— պատասխանեց Ռասկոլնիկովը՝ տարօրինակ նայելով Սոնյային։ — Ասենք, որ դատարկ բան եմ դուրս տալիս, Սոնյա, վաղուց եմ այսպես անում...— ավելացրեց նա։ — Այստեղ բոլորովին ուրիշ է բանը. դու ճշմարիտ ես ասում։ Այստեղ բոլորովին, բոլորովին այլ պատճառներ կան... Ես վաղուց ոչ ոքի հետ չեմ խոսել, Սոնյա... Հիմա գլուխս սաստիկ ցավում է...

Ռասկոլնիկովի աչքերը տենդային փայլ էին արձակում։ Նա գրեթե սկսում էր դառանցել. շուրթերին դողում էր անհանգիստ ժպիտը։ Խռովահույզ հոգեվիճակը արդեն նրան

սարսափելի ուժասպառության էր հասցրել։ Սոնյան հասկացավ, թե նա ինչպես է տանջվում։ Նրա գլուխն էլ էր սկսում պտտվել։ Ու տարօրինակ էր խոսում Ռասկոլնիկովը. կարծես թե ինչ-որ բան էր հասկացվում, բայց... «բայց ախր ի՞նչ էր այդ, ի՞նչ էր, օֆ, տեր աստված»։ Ու Սոնյան վշտանում էր հուսարեկ վիճակում։

— Ոչ, Սոնյա, այստեղ ուրիշ բան կա,— դարձյալ սկսեց Ռասկոլնիկովը, կարծես մտքերի անակնկալ մի շրջադարձ ապշեցրեց ու գրգռեց նրան,— այստեղ ուրիշ բան կա։ Ավելի լավ է... ենթադրիր (այո, այդ իրոք ավելի լավ է), որ ես ինքնասեր եմ, նախանձոտ, չար, նողկալի, վրիժառու և... գուցե հակված եմ խելագարության։ (Թող այդպես լինի. խելագարության մասին առաջ խոսում էին, ես նկատել եմ)։ Քիչ առաջ ես քեզ ասացի, որ համալսարանում մնալու միջոցներ չունեի։ Բայց դիտե՞ս, գուցե և կարող էի մնալ։ Մայրս կուղարկեր ուսման վարձը, ինչ-որ հարկավոր էր, իսկ կոշիկների, հագուստի, հացի փողը անշուշտ ինքս կվաստակեի։ Դասեր էին լինում, հիսունական կոպեկ էին առաջարկում։ Հո աշխատում է Ռազումիխինը։ Բայց ես չարացա ու չուզեցի։ Այո, չարացա (դա լավ բառ է)։ Ես այն ժամանակ սարդի պես քաշվեցի իմ անկյունը։ Դու հո եղել ես իմ որջում, տեսել ես այն... Գիտե՞ս արդյոք, Սոնյա, որ ցածր առաստաղները և նեղլիկ սենյակները հոգի ու միտք են ճնշում։ Օ, որքան էի ես ատում այդ որջը։ Բայց և այնպես, չէի ուզում այնտեղից դուրս գալ։ Դիտմամբ չէի ուզում։ Օրերով դուրս չէի գալիս և չէի ուզում աշխատել, նույնիսկ ուտել էլ չէի ուզում, շարունակ պառկած էի լինում։ Եթե Նաստասյան ուտելիք էր բերում, ուտում էի, իսկ եթե չէր բերում, օրը այդպես էլ անցնում էր։ Չարացած լինելով, դիտմամբ ուտելիք չէի խնդրում։ Գիշերը լույս չկա, պառկում եմ մթության մեջ ու չեմ ուզում մոմ գնելու փող վաստակել։ Հարկավոր էր սովորել, իսկ ես գրքերս ծախել էի. սեղանիս վրա, թղթերի, տետրակների վրա հիմա էլ մատի հաստությամբ փոշի է նստած։ Ես ավելի լավ էի համարում և սիրում էի պառկել ու մտածել։ Շարունակ մտածում էի... Ու հաճախ տարօրինակ, զանազան երազներ էի տեսնում, կարիք չկա ասելու, թե ինչ երազներ էին։ Միայն թե երևա-

կայությանս մեջ այնպիսի բաներ էին պատկերանում, որ... Չէ՛, բանը այդ չէ, ես դարձյալ այնպես չեմ պատմում, ինչպես պետք է։ Գիտե՞ս, ես այն ժամանակ հաճախ ինքս ինձ հարց էի տալիս՝ ինչո՞ւ այսպես հիմար եմ. եթե ուրիշները հիմար են, ու եթե ես հաստատ գիտեմ, որ հիմար են, ապա ինչո՞ւ ինքս չեմ ուզում խելոք լինել։ Հետո ես իմացա, Սոնյա, որ եթե սպասեմ, մինչև որ բոլորը խելոքանան, ապա դա շատ երկար կտևի... Հետո ես նաև իմացա, որ այդ երբեք էլ չի լինի, որ մարդիկ չեն փոխվի և ոչ ոք նրանց չի վերափոխի, ու չարժե դրա համար գլուխ ցավեցնել։ Այո, դա այդպես է։ Այդ նրանց օրենքն է... օրենքն է, Սոնյա։ Դա այդպես է... Ու հիմա ես գիտեմ, Սոնյա, որ ով ամուր և ուժեղ է մտքով ու ոգով, նա էլ իշխում է նրանց վրա։ Ով շատ համարձակ է, նա էլ իրավացի է նրանց աչքում։ Ով կարող է շատ բաների վրա թքել, նա էլ օրենսդիր է նրանց մոտ, իսկ ով բոլորից ավելի համարձակություն է ցուցաբերում, նա բոլորից ավելի իրավացի է։ Այդպես է եղել մինչև այժմ ու միշտ էլ այդպես կլինի։ Միայն կույրը այդ չի տեսնի։

Այդ ասելով, Ռասկոլնիկովը թեպետև նայում էր Սոնյային, բայց արդեն էլ չէր մտահոգվում՝ արդյո՞ք նա կհասկանա, թե՞ ոչ։ Նա ամբողջովին բռնվել էր տենդով։ Նա ինչոր մռայլ հրճվանքով էր համակվել (Հիրավի, նա երկար ժամանակ ոչ՝ ոքի հետ չէր խոսել)։ Սոնյան հասկացավ, որ այդ մռայլ կատեխիզիսը նրա համար հավատ ու օրենք է դարձել։

— Ես այն ժամանակ գլխի ընկա, Սոնյա, որ իշխանություն է տրվում միայն նրան, ով համարձակվում է կռանալ ու վերցնել այն։ Այստեղ միայն, միայն մի բան կա. բավական է սոսկ համարձակվել։ Ես այն ժամանակ կյանքումս մի միտք հղացա, որը ինձնից առաջ դեռ ոչ ոք ու երբեք չէր հղացել։ Ոչ ոք։ Հանկարծ ինձ արևի պես պարզ պատկերացավ այն, թե ինչպե՞ս է, որ մինչև այժմ ոչ մեկը, անցնելով այս ամբողջ անհեթեթության կողքից, չի համարձակվել և չի համարձակվում ուղղակի բռնել այդ ամենի պոչից ու շպրտել սատանայի ծոցը։ Ես... ես ուզեցի հա-

մարձակվել, ու սպանեցի... Ես միայն համարձակվել ուզեցի, Սոնյա, ահա ամբողջ պատճառը։

— Օ, լռեցեք, լռեցեք,— գոչեց Սոնյան՝ ձեռքերն իրար զարկելով։ — Դուք հեռացել եք աստծուց, և աստված հարվածել է ձեզ, մատնել սատանային...

— Ի դեպ, Սոնյա, երբ ես պառկած էի լինում մթության մեջ և ինձ այլևայլ բաներ էին պատկերանում, սատանան շփոթեցնում էր ինձ, հը՞։

— Լռեցեք, մի ծիծաղեք, աստծուն անարգող, դուք ոչինչ, ոչինչ չեք հասկանում։ Օ՜, տեր աստված, սա ոչինչ, ոչինչ չի հասկանա։

— Լսիր, Սոնյա, ես ամենևին էլ չեմ ծիծաղում. ես հո ինքս էլ գիտեմ, որ սատանան էր ինձ մոլորեցրել։ Լռիր, Սոնյա, լռիր,— մռայլ ու կտրուկ կրկնեց Ռասկոլնիկովը։ — Ես ամեն ինչ գիտեմ։ Այդ ամենը ես կշռադատում, այդ ամենի մասին մտածում էի, երբ պառկած էի լինում մթության մեջ... Այդ ամենի մասին ինքս ինձ հետ վիճում էի, բաց չթողնելով անգամ վերջին, ամենաչնչին հանգամանքները, ես ամեն, ամեն ինչ գիտեմ։ Ու այն ժամանակ ինձ այնպես էր ձանձրացրել, այնպես էր ձանձրացրել այդ ամբողջ շաղակրատանքը։ Ես ուզում էի ամեն ինչ մոռանալ և ամեն ինչ նորից սկսել, Սոնյա, ու վերջ տալ շաղակրատանքին։ Եվ մի՞թե դու կարծում ես, թե ես այդ արել եմ հիմարաբար, առանց մտածելու։ Ես այդ արել եմ խելամտորեն, և հենց դա էլ կործանեց ինձ։ Եվ մի՞թե դու կարծում ես, թե ես չգիտեի, որ եթե սկսել էի ինքս ինձ հարցեր տալ և հարցաքննել՝ արդյո՞ք իրավունք ունեմ իշխանություն ունենալու, ապա ուրեմն չունեմ այդ իրավունքը։ Կամ եթե հարց եմ տալիս՝ արդյո՞ք ոչիլ է մարդը, ապա ուրեմն մարդը ոչիլ չէ **ինձ համար**, այլ ոչիլ է նրա համար, ում մտքով էլ այդ չի անցնում, ով առանց այդպիսի հարցեր տալու է ընթանում... Եթե ես օրերով դլուխ էի կոտրում, թե արդյո՞ք այդպիսի բան կաներ Նապոլեոնը, ապա պարզ զգում էի, որ Նապոլեոն չեմ... Ես դիմացա այդ ամբողջ շաղակրատանքի պատճառած ամբողջ, ամբողջ տանջանքին, Սոնյա, ու ցանկացա ուսերիցս բոլորովին թոթափել այն. Սոնյա, ես ուզեցի սպանել առանց կաղուիստիկայի, սպա-

նել ինձ համար, միայն ինձ համար։ Ես չէի ուզում ստել նույնիսկ ինքս ինձ, ես նրա համար չսպանեցի, որ օգնեի մորս, դա անհեթեթություն է. նրա համար չսպանեցի, որ միջոցներ և իշխանություն ստանալով, մարդկության բարեբար դառնայի։ Այդ դատարկ բան է։ Ես սոսկ սպանեցի. սպանեցի ինձ համար, միայն ինձ համար, իսկ թե այնուհետև արդյո՞ք կդառնայի որևէ մեկի բարեբարը, թե՞ ամբողջ կյանքումս սարդի պես բոլորին կորսայի իմ ոստայնով ու բոլորից կքամեի կենդանի հյութերը, դա պետք է որ ինձ համար միևնույն լիներ այն բոպեին... Ու դլխավորը փողերը չէին, որ հարկավոր էին ինձ, Սոնյա, երբ ես սպանեցի, ոչ այնքան փողեր էին հարկավոր, որքան մի ուրիշ բան... Ես հիմա գիտեմ այդ ամենը... Հասկացիր ինձ. գուցե գնալով նույն ճանապարհով, ես էլ երբեք սպանություն չէի կատարի։ Ինձ հարկավոր էր ուրիշ բան իմանալ, ուրիշ բան էր ինձ սպանության դրդում. այն ժամանակ ինձ հարկավոր էր իմանալ և շուտափույթ իմանալ, թե արդյո՞ք ես ոջիլ եմ, ինչպես բոլորը, թե՞ մարդ եմ, արդյո՞ք կարող եմ խախտում կատարել, թե՞ չեմ կարող։ Արդյո՞ք կարող եմ կռանալ ու վերցնել ինչ-որ հարկավոր է ինձ։ Արդյո՞ք իրավաղուրկ արարած եմ, թե՞ իրավունք ունեմ...

— Իրավո՞ւնք, սպանելու իրավո՞ւնք ունեք,— ձեռքերն իրար գարկեց Սոնյան։

— Է՛-է՛-հե՛, Սոնյա,— ջղայնորեն դոչեց Ռասկոլնիկովը, ուզում էր ինչ-որ առարկել, բայց արհամարհանքով լռեց։ — Մի ընդհատիր ինձ, Սոնյա։ Ես ուզում էի քեզ միայն մի բան ասել. սատանան ինձ դրդեց այդ անել, հետո էլ ինձ բացատրեց, որ ես այնտեղ գնալու իրավունք չունեի, որովհետև ես հիշա նույնպիսի ոջիլ եմ, ինչպես և բոլորը։ Նա ծիծաղեց ինձ վրա, ու ես էլ այժմ եկել եմ քեզ մոտ։ Ընդունիր հյուրին։ Եթե ես ոջիլ չլինեի, մի՞թե կգայի քեզ մոտ։ Լսիր. այն ժամանակ, երբ ես դնում էի պառավի մոտ, ես միայն փորձ անելու համար էի գնում... Այդպես էլ գիտցիր։

— Ու սպանեցի՞ք, սպանեցի՞ք։

— Եվ ի՞նչպես սպանեցի։ Մի՞թե այդպես են սպանում։ Մի՞թե այդպես են դնում սպանելու, ինչպես որ ես այն ժամանակ գնացի։ Ես քեզ երբևէ կպատմեմ, թե ինչպես գնա-

ցի... Մի՞թե ես պառավին սպանեցի։ Ես ինձ սպանեցի և ոչ թե պառավին։ Հենց այնպես էլ ինձ ջախջախեցի առհավետ... Իսկ այն պառավին սպասանան սպանեց և ոչ թե ես... բավական է, բավական է, Սոնյա, բավական է, թող ինձ,— գոչեց նա հանկարծ ջղաձգական թախծով,— թող ինձ։

Նա արմունկները հենեց ծնկներին ու ձեռքերով, ասես աբցանով, սեղմեց գլուխը։

— Ինչպիսի՞ տանջանք,— ծանր հառաչեց Սոնյան։

— Հիմա ի՞նչ անեմ, ասա,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ հանկարծ բարձրացնելով գլուխը ու հուսալքումից այլանդակորեն ծամածռված դեմքը դարձնելով ու նայելով նրան։

— Ինչ անե՞ս,— բացականչեց Սոնյան, հանկարծ վեր թռավ տեղից, ու մինչև այժմ արցունքներով լեցուն նրա աչքերը փայլեցին։— Վեր կաց։ (Նա բռնեց Ռասկոլնիկովի ուսից. վերջինս քիչ բարձրացավ՝ համարյա ապշած նայելով նրան)։ — Հիմա, հենց այս րոպեիս գնա, կանգնիր մի որևէ տեղ, սկզբում երկրպագիր հողը, որ պղծել ես դու, հետո էլ երկրպագիր ամբողջ աշխարհին, դեպի բոլոր կողմերը, ու բարձրաձայն ասա բոլորին՝ «ես մարդ եմ սպանել»։ Այդ դեպքում աստված քեզ դարձյալ կյանք կտա։ Կգնա՞ս, կգնա՞ս,— հարցնում էր Սոնյան ամբողջովին դողալով, ասես նոպայով բռնված, նրա ձեռքերից բռնած, ամուր սեղմելով դրանք, հրացայտ աչքերը նրան հառած։

Ռասկոլնիկովը զարմացավ և նույնիսկ ապշեց նրա հանկարծակի ոգևորությունից։

— Դու տաժանակիր աշխատա՞նքն ես ակնարկում, ինչ է, Սոնյա։ Գնամ մատնե՞մ ինձ,— մռայլ հարցրեց նա։

— Տառապանք ընդունել և դրանով քավել հանցանքդ, ահա թե ինչ է հարկավոր։

— Ոչ, ես նրանց մոտ չեմ գնա, Սոնյա։

— Հապա ի՞նչպես, ի՞նչպես պիտի ապրես։ Ինչո՞վ պիտի ապրես,— բացականչում էր Սոնյան։ — Մի՞թե հիմա այդ հնարավոր է։ Ի՞նչպես պիտի խոսես մարդ հետ (օ, հիմա ի՞նչ է լինելու նրանց դրությունը)։ Բայց դու հո թողել ես մարդ ու քրոջդ։ Թողել ես։ Էլի, թողել ես։ Օ, տեր աստված,— գոչեց նա,— չէ՞ որ նա ինքը գիտե այդ ամենը։

Առանց հարազատների ինչպե՞ս կարելի է ապրել։ Հիմա ի՞նչ կլինի քո վիճակը։

— Երեխա մի լինի, Սոնյա,— մեղմ ասաց Ռասկոլնիկովը։ — Ես ինչո՞վ եմ մեղավոր ինձ հետապնդողների հանդեպ։ Ինչո՞ւ գնամ և ի՞նչ ասեմ նրանց... Այդ բոլորը միայն պատրանք է... Նրանք միլիոնավոր մարդկանց հոգեհան են անում և դեռ այդ առաքինություն են համարում։ Նրանք ստոր ու սրիկա են, Սոնյա. Չեմ գնա։ Եվ ի՞նչ պիտի ասեմ. պիտի ասեմ, որ սպանեցի, իսկ փողերը վերցնել չհամարձակվեցի՞, հա՞, քարի տա՞կ թաքցրի,— կծու քմծիծաղելով ավելացրեց Ռասկոլնիկովը,— բայց չէ՞ որ նրանք կծիծաղեն ինձ վրա, կասեն՝ հիմար ես, որ չես վերցրել։ Վախկոտ ես ու հիմար։ Նրանք ոչինչ, ոչինչ չեն հասկանա, Սոնյա, և արժանի չեն հասկանալու։ Ինչո՞ւ գնամ։ Չեմ գնա, երեխա մի լինի, Սոնյա...

— Կտանջվես, կտանջվես,— կրկնում էր Սոնյան՝ հուսահատական աղերսանքով ձեռքերը մեկնելով նրան։

— Ես գուցե դեռ զրպարտել եմ ինքս ինձ,— մռայլվեցավ, կարծես մաազբաղ ասաց Ռասկոլնիկովը,— գուցե ես դեռ մարդ եմ և ոչ թե ոջիլ, ու շտապել եմ ինքս ինձ մեղադրել... Ես դեռ կպայքարեմ։

Նրա շուրթերին դառողության ժպիտ երևաց։

— Շատ կտանջվես, այն էլ ամբողջ կյանքումդ։

— Կընտելանամ...— մռայլ ու մաախոհ ասաց Ռասկոլնիկովը։ — Լսիր,— մի բոպե հետո ավելացրեց նա,— բավական է լաց լինել, ժամանակն է գործի մասին խոսել, ես եկել եմ քեզ ասելու, որ հիմա ինձ փնտրում են, որսում...

— Ախ,— վախեցած ճչաց Սոնյան։

— Էլ ինչ ես ճչում։ Ինքդ ես ցանկանում, որ ես տաժանակիր աշխատանքի դատապարավեմ, իսկ հիմա վախեցա՞ր։ Միայն թե դիտցիր, ես նրանց չեմ հանձնվի։ Ես դեռ կմաքառեմ նրանց դեմ, ու ոչինչ էլ չեն անի։ Չունեն իսկական հանցանշաններ։ Երեկ ես մեծ վտանգի մեջ էի ու մտածում էի, որ արդեն կորած եմ. այսօր գործը շտկվեց։ Նրանց բոլոր հանցանշանները երկսայրի են, այսինքն՝ ես կարող եմ նրանց մեղադրանքները շուռ տալ հենց իմ օգտին, հասկանո՞ւմ ես, և այդպես էլ կանեմ, որովհետև ես հիմա խրատ-

վել եմ... Բայց ինձ անշուշտ բանտ կնստեցնեն։ Թթե չլիներ մի դեպք. գուցե և այսօր նստեցնեին, երևի նույնիսկ դեռ այսօր էլ նստեցնեն... բայց ոչինչ, Սոնյա, կնստեմ, ու բաց կթողնեն... որովհետև չկա ոչ մի իսկական ապացույց և չի լինի, խոսք եմ տալիս։ Իսկ այն, ինչ որ ունեն, չի կարող մարդուն պատժելու հիմք լինել։ Էհ, բավական է... Ես միայն ուզում էի, որ դու գիտենաս... Ես կաշխատեմ մի կերպ այնպես անել, որ քույրս ու մայրս փոխեն իրենց կարծիքը իմ մասին և չվախենան... Ասենք, քույրս հիմա կարծեմ ապահովված է... ուրեմն և մայրս... էլ ուրիշ ոչինչ։ Սակայն դու զգույշ եղիր։ Երբ ես բանտարկված լինեմ, կգա՞ս ինձ տեսնելու։

— Օ, կգամ, կգամ։

Նրանք նստել էին կողք-կողքի, տխուր և ընկճված, ասես փոթորկից հետո երկուսն էլ ամայի ծովափ շպրտված։ Ռասկոլնիկովը նայում էր Սոնյային և զգում էր, թե ինքը որքա՜ն շատ է սիրված նրա կողմից, ու որքան էլ այդ տարօրինակ էր, հանկարծ նրան ծանր ու ցավագին թվաց այն, որ այդպես սիրում են իրեն։ Այո, դա տարօրինակ ու սարսափելի զգացում էր։ Գնալով Սոնյայի մոտ, նա զգում էր, որ վերջինս իր ամբողջ հույսն է, ամբողջ սփոփանքը. նա ուզում էր թոթափել իր տանջանքների գեթ մի մասը, ու հանկարծ հիմա, երբ Սոնյան ամբողջ սրտով նվիրվել էր իրեն, նա զգաց ու գիտակցեց, որ ինքը հիմա անհամեմատ ավելի դժբախտ է, քան եղել էր առաջ։

— Սոնյա,— ասաց նա,— ավելի լավ է մի՛ գա ինձ տեսնելու, երբ ես բանտում լինեմ։

Սոնյան չպատասխանեց, նա լալիս էր։ Անցավ մի քանի բոպե։

— Վզիդ խաչ կա՞,— ասես հանկարծ հիշելով, անակնկալ հարցրեց Սոնյան։

Ռասկոլնիկովը սկզբում չհասկացավ հարցը։

— Երևի չկա, չէ՞։ Առ, վերցրու այս կիպարիսե խաչը։ Ես մի ուրիշն ունեմ, պղնձից է, Լիզավետայինն է։ Ես ու Լիզավետան փոխանակություն էինք կատարել, նա ինձ տվել էր իր խաչը, իսկ ես նրան իմ մի փոքրիկ սրբապատկերը։ Ես հիմա Լիզավետայինը կկրեմ, իսկ սա՝ քեզ։ Վերցրու...

Իմն է, հո իմն է,— խնդրում էր Սոնյան։ Չէ՞ որ միասին կգնանք տանջվելու, միասին էլ խաչ կկրենք...

— Տուր,— ասաց Ռասկոլնիկովը։ Նա չէր ուզում վրշտացնել Սոնյային։ Բայց նա իսկույն ետ քաշեց խաչը վերցնելու համար մեկնած ձեռքը։

— Հիմա չէ՛, Սոնյա։ Ավելի լավ է հետո,— ավելացրեց նա, որպեսզի հանգստացներ Սոնյային։

— Այո, այո, այդպես ավելի լավ է,— սրտանց վրա բերեց Սոնյան,— երբ տանջվելու գնաս, այն ժամանակ էլ կվերցնես։ Կգաս ինձ մոտ, ես սա կախ կտամ վզիցդ, կաղոթենք ու կգնանք։

Այդ վայրկյանին մեկը երեք անգամ ծեծեց դուռը։

— Սոֆյա Սեմյոնովնա, կարելի՞ է մտնել,— լսվեց այդ մեկի խիստ ծանոթ, քաղաքավարի ձայնը։

Սոնյան վախեցած նետվեց դեպի դուռը։ Շեմքում երևաց պ. Լեբեզյատնիկովի շիկահեր կերպարանքը։

V

Լեբեզյատնիկովը անհանգիստ տեսք ուներ։

— Ես ձեզ մոտ եմ եկել, Սոֆյա Սեմյոնովնա։ Ներեցեք ... Ես այդպես էլ կարծում էի, որ դուք այստեղ կլինեք,— հանկարծ դիմեց նա Ռասկոլնիկովին,— այսինքն ես... նրման բան չէի կարծում... բայց գիտեի, էլի՛... Ը-ը... գիտե՞ք, Կատերինա Իվանովնան խելագարվեց,— թողնելով Ռասկոլնիկովին, հանկարծ ասաց նա Սոնյային։ Սոնյան ճչաց։

— Այսինքն՝ դա գոնե այդպես է թվում։ Ի միջի այլոց... Մենք չգիտենք այնտեղ ինչ անենք, ա՛յ թե ինչ։ Կատերինա Իվանովնան վերադարձավ, կարծեմ նրան ինչ-որ տեղից վոնդել էին, դուցե և խփել... Գոնե այդպես է թվում... Նա գնացել էր Սեմյոն Զախարիչի պետի մոտ, սա տանը չէր եղել, ճաշում էր մի ինչ-որ ուրիշ գեներալի մոտ... Երևակայեցեք, Կատերինա Իվանովնան գնում է այնտեղ, այդ մյուս գեներալի մոտ, ուր ճաշում էին... և, երևակայեցեք, այնպես էլ համառում է, դուրս է կանչում Սեմյոն Զախարիչի պետին, այն էլ կարծեմ հենց ճաշասեղանից։ Կարող եք պատ-

կերացնել, թե այնտեղ ինչ կատարվեց։ Իհարկե, Կատերինա Իվանովնային դուրս արեցին. նա պատմում է, որ հենց ինքը հայհոյեց պետին և ինչ-որ մի բան շպրտեց նրա վրա։ Այդ կարելի է նույնիսկ ենթադրել... Զարմանալի է, որ նրան չեն բռնել։ Հիմա նա այդ պատմում է բոլորին, նաև Ամալյա Իվանովնային, միայն թե դժվար է հասկանալ, ճղճղում է ու ծիծկվում... Ա՜խ, հա՛, նա ասում է, ճչում, թե որովհետև հիմա բոլորը ձեռք են քաշել իրենից, ուստի ինքը կվերցնի երեխաներին ու կգնա փողոց, երգեհոն կտանի. երեխաները կ՚երգեն ու կպարեն, ինքը նույնպես, ու փող կհավաքի, ամեն օր այդպես կանի գեներալի պատուհանի տակ... «Թող տեսնեն,— ասում է,— թե ինչպես աստիճանավոր հոր երեխաները իբրև մուրացկաններ թրևում են փողոցներում»։ Բոլոր երեխաներին ծեծում է, նրանք լալիս են։ Լյոնյային սովորեցնում է «խուտորոկ» երգը, տղային էլ սովորեցնում է պարել։ Պոլինա Միխայլովնային՝ նույնպես։ Պատառոտում է բոլոր շորերը. նրանց համար իբր թե դերասանական գդակներ է պատրաստում. ինքը ուզում է վերցնել լագանը ու դարկել դրան, երաժշտության փոխարեն... Ոչինչ չի ուզում լսել... Երևակայեցեք, ի՞նչ կլինի։ Դա ուղղակի խելքի մոտիկ բան չէ։

Լեբեզյատնիկովը էլի կշարունակեր պատմել, բայց Սոնյան, լսելով նրան, հազիվ շունչ առնելով, հանկարծ վերցրեց թիկնոցը, գլխարկը, հապճեպ հագնելով, դուրս վազեց։ Ռասկոլնիկովն ու Լեբեզյատնիկովը հետևեցին նրան։

— Անպայման խելագարվել է,— ասում էր նա Ռասկոլնիկովին՝ նրա հետ դուրս գալով փողոց,— ես չէի ուզում վախեցնել Սոֆյա Սեմյոնովնային, դրա համար էլ ասացի՝ «այդպես է թվում». բայց դա անկասկած է։ Ասում են, դա նրանից է, որ թոքախտավորի ուղեղի վրա ինչ-որ բշտիկներ են դուրս տալիս. ափսոս, որ ես բժշկություն չգիտեմ։ Ես փորձեցի նրան հորդորել, բայց նա ոչինչ չի ուզում լսել։

— Դուք նրան բշտիկների մասին բա՞ն ասացիք։

— Այսինքն՝ ոչ այնքան բշտիկների մասին։ Այն էլ ասած՝ նա դրանից ոչինչ չէր հասկանում։ Ես ահա թե ինչ եմ ասում. եթե մարդուն տրամաբանորեն համոզես, որ էապես նա ոչ մի բանի համար չպետք է սուգ անի, ապա նա սուգ

չի անի։ Դա պարզ է։ Իսկ դուք համոզված եք, թե սո՞ւգ կանի։

— Այդ դեպքում ապրելը շատ հեշտ կլիներ,— պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Ներեցեք, ներեցեք. իհարկե, Կատերինա Իվանովնայի համար բավական դժվար է այդ հասկանալ. բայց արդյոք հայտնի՞ է ձեզ, որ Փարիզում արդեն լուրջ փորձեր են կատարվել, թե արդյոք հնարավո՞ր է բուժել խելագարներին՝ գործելով միայն տրամաբանական համոզմամբ։ Այնտեղ մի պրոֆեսոր, վերջերս մեռած մի լուրջ գիտնական, երևակայել է, որ այդպես կարելի է բուժել։ Նրա հիմնական միտքն այն է, որ խելագարների օրգանիզմում առանձին խանգարումներ չկան, որ խելագարությունը, այսպես ասած, տրամաբանական սխալ է, դատողության սխալ, իրերի նկատմամբ սխալ հայացք։ Նա աստիճանաբար հերքում էր հիվանդին ու երևակայեցեք, ասում են, որ դրական հետևանքների էր հասնում։ Բայց որովհետև նա այնուհանդերձ դուշներ էր օգտագործում, ուստի այդ բուժման հետևանքները, իհարկե, կասկածի են ենթարկվում... Գոնե այդպես է թվում...

Ռասկոլնիկովը արդեն վաղուց չէր լսում։ Հասնելով իր տունը, նա գլխով արեց Լեբեզյատնիկովին ու դարձավ դեպի գարպասը։ Լեբեզյատնիկովը սթափվեց, նայեց շուրջը ու հեռացավ։

Ռասկոլնիկովը մտավ իր խցիկը և կանգ առավ մեջտեղում։ «Ինչո՞ւ ես վերադարձա այստեղ»։ Նա դիտեց դեղնավուն, քրքրված պաստառները, փոշին, իր բազմոցը... բակից ինչ-որ հատու, անընդհատ թխկոց էր լսվում. երևի մի տեղ մեխ էին խփում... Նա մոտեցավ պատուհանին, բարձրացավ ոտնաթաթերի վրա ու լարված ուշադրությամբ երկար դիտեց բակը։ Սակայն բակը դատարկ էր, թխկացնողները չէին երևում։ Ձախ կողմում կից շենքի մի շարք պատուհանները բաց էին. դրանց գոդերին վտիտ խորդենու ծաղկամաններ էին դրված։ Սենյակներում սպիտակեղեն էր կախված... Այդ ամենը ծանոթ էր նրան։ Նա ետ դարձավ ու նստեց բազմոցին։

Դեռ երբեք, երբեք նա իրեն այդպես սարսափելի մենակ չէր զգացել։

Այո, նա մի անգամ էլ զգաց, որ դուցե իսկապես ատի Սոնյային, ու հենց այժմ, երբ նրան է՛լ ավելի դժբախտ է դարձրել։ «Ինչո՞ւ ես գնացի նրա մոտ, նրան տխրեցնելո՞ւ։ Ինչո՞ւ ինձ այդպես անհրաժեշտ է մաշել նրա կյանքը, օ՜, սատրությո՛ւն»։

— Ես մենակ կմնամ,— հանկարծ ասաց նա վճռականապես,— և նա չպիտի դա բանտ, ինձ տեսնելու։

Հինգ րոպե հետո նա բարձրացրեց գլուխը և տարօրինակ ժպտաց։ Տարօրինակ մի միտք հղացավ. «Դուցե տաժանակրության մեջ իրոք ավելի լավ կլինի», հանկարծ մտածեց նա։

Նա չէր հիշում, թե որքան էր նստել իր խցիկում, գլխի մեջ խռնվող անորոշ մտքերով։ Հանկարծ դուռը բացվեց ու ներս մտավ Ավդոտյա Ռոմանովնան։ Նա սկզբում կանգ առավ շեմքին ու նայեց եղբորը, ինչպես ժամ առաջ վերջինս կանգ էր առել ու նայել Սոնյային։ Հետո Ավդոտյա Ռոմանովնան ներս մտավ ու նստեց եղբոր դիմաց, աթոռին, նախորդ օրվա իր տեղում։ Ռասկոլնիկովը լուռ և կարծես առանց որևէ բան մտածելու նայեց նրան։

— Մի բարկանա, եղբայրս, ես միայն մի րոպեով եկա, — ասաց Դունյան։ Նրա դեմքի արտահայտությունը խոհուն էր, բայց ոչ խիստ։ Հայացքը պայծառ էր ու մեղմ։ Ռասկոլնիկովը տեսնում էր, որ նա սիրելուց է եկել իր մոտ։

— Եղբայրս, ես հիմա ամեն, ամեն ինչ գիտեմ։ Դմիտրի Պրոկոֆիչը ինձ ամեն ինչ բացատրել է ու պատմել։ Քեզ հետապնդում ու տանջում են հիմար ու նողկալի կասկածանքից դրդված... Դմիտրի Պրոկոֆիչը ինձ ասել է, որ ոչ մի վտանգ չկա, որ դու իզուր ես դա այդպիսի սարսափով ընդունում։ Ես այլ կերպ եմ մտածում և լիովին ճանաչում եմ, որ դու չափազանց զայրացած ես և այդ զայրույթը կարող է առմիշտ հետքեր թողնել։ Ես վախենում եմ դրանից։ Ես քեզ չեմ պարսավում և չեմ համարձակվում պարսավել, որ դու թողիր մեզ, ու ներիր ինձ, որ օր առաջ կշտամբել էի քեզ։ Ես ինքս զգում եմ, որ եթե այդպիսի մեծ վիշտ ունենայի, նույնպես կհեռանայի բոլորից։ Ես այդ մասին

ոչինչ չեմ ասի մայրիկին, բայց շարունակ կիսոսեմ քո մասին և քո անունից կասեմ, որ դու շատ շուտով կգաս։ Նրա մասին մի մտատանջվիր. ես նրան կհանգստացնեմ. բայց դու էլ մի տանջիր նրան, գոնե մի անգամ եկ. հիշիր, որ նա մայր է։ Իսկ հիմա ես եկել եմ ասելու (Դունյան վեր կացավ), որ եթե ես քեզ երբևիցե հարկավոր լինեմ, կամ քեզ հարկավոր լինի... իմ ամբողջ կյանքը, թե ինչ... ապա կանչիր ինձ, ես կգամ։ Ցտեսություն։

Դունյան կարուկ շուռ եկավ ու քայլեց դեպի դուռը։

— Դո՛ւնյա,— նրան կանգնեցրեց Ռասկոլնիկովը, վեր կացավ ու մոտեցավ նրան,— այդ Ռազումիխինը, Դմիտրի Պրոկոֆիչը, շատ լավ մարդ է։

Դունյան մի քիչ շիկնեց։

— Մի՞թե,— հարցրեց նա՝ մի բոպե սպասելով։

— Նա գործունյա, աշխատասեր, ազնիվ և ուժեղ սիրելու ընդունակ մարդ է... Գնաս բարով։ Դունյա։

Դունյան թունդ կարմրեց, հետո հանկարծ անհանգիստ հարցրեց.

— Այդ ի՞նչ է, եղբայրս, մի՞թե մենք առմիշտ բաժանվում ենք, որ դու ինձ... այդպիսի բաներ ես ասում։

— Միևնույն է... գնաս բարով...

Ռասկոլնիկովը ետ դարձավ ու մոտեցավ պատուհանին։ Դունյան մի փոքր կանգնեց, անհանգիստ նայեց նրան ու գնաց տագնապալից վիճակում։

Ոչ, Ռասկոլնիկովը ոտքը չէր վերաբերվում նրան։ Եղավ մի ակնթարթ (ամենավերջինը), երբ նա շատ ուզեց պինդ գրկել քրոջը և նրան ներողություն տալ, նույնիսկ ասել ամեն ինչ, բայց սիրտ չարեց նույնիսկ ձեռք տալ նրան։

«Հետո թերևս ցնցվի, հիշելով, որ ես հիմա իրեն գրկեցի, կասի, թե ես գողացա իր համբույրը»։

«Իսկ սա արդյո՞ք կդիմանա, թե՞ չի դիմանա»,— մի քանի բոպե հետո մտքում ավելացրեց նա։ — «Ոչ, չի դիմանա. այդպիսիները չեն կարող դիմանալ։ Նրանք երբեք չեն դիմանում»։

Եվ նա մտածեց Սոնյայի մասին։

Պատուհանից հով փչեց։ Դրսում լույսը արգեն աղոտա-

նում էր։ Նա հանկարծ վերցրեց գլխարկը ու խցիկից դուրս գնաց։

Նա, իհարկե, չէր կարող և չէր էլ ուզում հոգալ իր հիվանդագին վիճակի մասին։ Բայց այդ ամբողջ անընդհատ տագնապը և այդ ամբողջ հոգեկան զարհուրանքը չէին կարող անհետևանք մնալ։ Ու եթե նա դեռ չէր տառապում իսկական ջերմախտով, ապա զուցե հենց այն պատճառով, որ այդ ներքին, անընդհատ տագնապը նրան դեռ պահում էր ոտքերի վրա և գիտակցության մեջ, բայց մի տեսակ արհեստականորեն, առժամապես։

Նա թափառում էր անպատակ։ Արևը մայր էր մտնում։ Վերջին ժամանակներում նա մի ինչ-որ առանձնահատուկ թախիծ էր զգում։ Դրա մեջ չկար առանձնապես մաշող, այրող մի բան. բայց կար ինչ-որ մշտական, հավերժական բան, նախազգացվում էին այդ պաղ, մեռցնող թախծի անե՛լք տարիներ, նախազգացվում էր ինչ-որ մի մշտնջենականություն «մի արշին տարածության» վրա։ Իրիկնաժամերին այդ զգացումը սովորաբար սկսում էր ավելի շատ տանջել նրան։

— Դե արի ու այսպիսի հիմար, զուտ ֆիզիկական, իրիկնաժամերին զգացվող տկարությամբ ձեռնպահ մնա հիմարություն անելուց։ Չէ՛ թե Սոնյայի, այլ Դունյայի մոտ էլ կգնաս,— սրտնեղելով մրթմրթում էր նա։

Նրան կանչեցին։ Նա նայեց շուրջը. Լեբեզյատնիկովը աճապարանքով մոտեցավ նրան։

— Երևակայեցեք, ես եղա ձեզ մոտ, փնտրում եմ ձեզ։ Երևակայեցեք, Կատերինա Իվանովնան կատարել է իր մտադրությունը ու տարել երեխաներին։ Ես ու Սոֆյա Սեմյոնովնան հազիվ գտանք նրանց։ Ինքը զարկում է թավային, երեխաներին ստիպում է երգել ու պարել։ Երեխաները լալիս են։ Կանգ է առնում փողոցների խաչմերուկներում և խանութների առաջ։ Հիմար ամբոխը ընկել է նրանց ետևից։ Գնանք։

— Հապա Սոնյա՞ն,— անհանգիստ հարցրեց Ռասկոլնիկովը՝ հապճեպ հետևելով Լեբեզյատնիկովին։

— Ուղղակի կորցրել է իրեն։ Այսինքն՝ ոչ թե Սոֆյա Սեմյոնովնան, այլ Կատերինա Իվանովնան է իրեն կորց-

ռել. ասենք, Սոֆյա Սեմյոնովնան էլ է գլուխը կորցրել։ Իսկ Կատերինա Իվանովնան բոլորովին կատաղել է։ Ասում եմ ձեզ, վերջնականապես թոցրել է խելքը։ Նրանց ոստիկանատուն կտանեն։ Կարող եք պատկերացնել, թե դա ինչ ազդեցություն կունենա։ Հիմա նրանք ջրանցքի ափին են, № կամրջի մոտ, Սոֆյա Սեմյոնովնայի բնակարանից հեռու չեն։ Հիմա կհասնենք։

Ջրանցքի ափին, կամրջի մոտակայքում, Սոնյայի ապրած տանից երկու տուն այն կողմ մի խումբ մարդիկ էին հավաքվել։ Շատ էին մանավանդ փոքրիկ տղաները ու աղջիկները։ Դեռ կամրջից լսվում էր Կատերինա Իվանովնայի խռպոտ, կերկերուն ձայնը։ Եվ իսկապես, այդ մի տարօրինակ տեսարան էր, որը կարող էր հետաքրքրել փողոցային հասարակությանը։ Կատերինա Իվանովնան իր հնամաշ շրջազգեստով էր, դրադեգամե շալով, ծղնոտե ճմռթված գլխարկով, որը մասամբ այլանդակորեն գնդվել ու մի կողմ էր ծռվել. իրոք որ նա իսկական կատաղության էր հասել։ Նա հոգնած էր ու շնչասպառ էր լինում։ Նրա հոգնատանջ, թոքախտային դեմքը է՛լ ավելի տանջալից էր, քան երբևէ (այն էլ ասած՝ փողոցում, արևի տակ թոքախտավորը միշտ ավելի հիվանդ ու այլանդակ է թվում, քան տանը). բայց նրա խռովահույզ վիճակը շարունակվում էր և նա յուրաքանչյուր րոպե էլ ավելի ջղագրգիռ էր դառնում։ Նա հարձակվում էր երեխաների վրա, բղավում էր, տեղնուտեղը, հենց մարդկանց ներկայությամբ համոզում, սովորեցնում էր նրանց. թե ինչպես պետք է պարել և ինչ երգել, սկսում էր նրանց բացատրել, թե այդ ինչի համար է հարկավոր, հուսալքվում էր նրանց անհասկացողությունից, ծեծում էր նրանց... Հետո էլ, այդ ամենը չվերջացնելով, գիմում էր հավաքվածներին. եթե նկատվում էր դիտելու համար կանգ առած, մի քիչ լավ հագնված մարդ, իսկույն սկսում էր նրան բացատրել, թե ահա ինչ դրության են հասել «ազնվական, նույնիսկ կարելի է ասել արիստոկրատական տան երեխաները»։ Եթե ամբոխի միջից ծիծաղ կամ մի որևէ վիրավորական խոսք էր լսում, անմիջապես հարձակվում էր այդ հանդուգն մարդկանց վրա ու սկսում էր հայհոյել նրանց։ Ոմանք իրոք ծիծաղում էին, ոմանք էլ օրորում գլուխները.

առհասարակ բոլորի համար հետաքրքիր էր նայել խելագարված կնոջը ու սարսափահար երեխաներին։ Լեբեզյատնիկովի հիշատակած թվան չկար. գոնե Ռասկոլնիկովը այդ չտեսավ. բայց թավա զարկելու փոխարեն Կատերինա Իվանովնան սկսում էր երգի ստակտով ծափ տալ իր վոռիտ ձեռքերով, երբ Պոլեչկային ստիպում էր երգել, իսկ Լյոնյային և Կոլյային՝ պարել. նույնիսկ ինքն էլ էր սկսում ձայնակցել, բայց ամեն անգամ ձայնը խզվում էր տանջալից հազից, նա կրկին հուսալքվում էր դրանից, անիծում իր հազը և նույնիսկ լալիս էր։ Նրան առավելապես զայրացնում էին Կոլյայի և Լյոնյայի լացն ու վախը։ Նա փորձել էր երեխաներին այնպես հագցնել, ինչպես հագնվում են փողոցային երգիչները ու երգչուհիները։ Տղայի գլխին գրել էր ինչ-որ կարմիր ու սպիտակ լաթերից կարած չալմա, որով նա պետք է թուրքի նմանվեր։ Լյոնյայի համար պատշաճ կոստյում չէր գտնվել։ Նրա գլխին դրված էր հանգուցյալ Սեմյոն Զախարիչի կարմիր, գարուսից գործված գդակը (կամ ավելի լավ է ասել՝ թասակը), իսկ գդակին կպցրած էր ջայլամի մի կտոր ոպիտակ փետուր, որը պատկանել էր դեռ Կատերինա Իվանովնայի տատին ու մինչև այժմ անդուկում պահպանվել իբրև տոհմական հաղվագյուտ առարկա։ Պոլեչկան իր սովորական շրջազգեստով էր։ Նա վախով ու շփոթված նայում էր մորը, նրանից չէր հեռանում, թաքցնում էր իր արցունքները, կռահում էր մոր խելագարությունը և անհանգիստ նայում շուրջը։ Փողոցն ու ամբոխը սարսափելի վախեցնում էին նրան։ Սոնյան կրնկակոխ գնում էր Կատերինա Իվանովնայի ետևից, լալիս էր և ամեն րոպե աղերսում նրան տուն վերադառնալ։ Կատերինա Իվանովնան անողոք էր։

— Բավական է, Սոնյա, բավական է,— արագ-արագ ասում էր նա՝ հազիվ շնչասպառ լինելով։ — Ինքդ էլ չգիտես, թե ինչ ես խնդրում, կարծես երեխա լիներ։ Ես արդեն քեզ ասացի, որ չեմ վերադառնա այն հարբեցող գերմանուհու մոտ։ Թող ամբողջ Պետերբուրգը, բոլորը տեսնեն, թե ինչպես ողորմություն են խնդրում այն ազնիվ հոր երեխաները, որը իր ամբողջ կյանքում ծառայում էր հավատարմությամբ և բարեխղճությամբ և կարելի է ասել, որ մեռավ ծառայության մեջ։ (Կատերինա Իվանովնան արդեն մոգո-

նել էր այդ ֆանտազիան և կուրորեն հավատում էր դրան)։ Թող, թող սա տեսնի այն անպիտան գեներալը։ Դու հիմար ես, Սոնյա, հիմա ի՞նչ պիտի ուտենք, ասա։ Մենք քիչ շատ ենք պլոկել, ես այդ այլևս չեմ ուզում։ Ախ, Ռոդիոն Ռոմանովիչ, այդ գո՞ւք եք,— գոչեց նա՝ տեսնելով Ռասկոլնիկովին ու մոտենալով նրան,— խնդրում եմ այս հիմարին բացատրեք, որ սրանից ավելի խելացի բան չի կարելի անել։ Մինչև իսկ երգեհոնով թրևողներն էլ են վաստակում, իսկ մեզ բոլորը նրանցից կտարբերեն, կիմանան, որ մենք մուրացկանության հասցրած որբերի աղքատ, ազնվական ընտանիք ենք, իսկ այն գեներալը կկորցնի պաշտոնը, կտեսնեք։ Մենք ամեն օր կգնանք ու կկրկնենք նրա պատուհանի տակ, իսկ երբ թագավորը անցնի, ես ծունկ կչոքեմ, սրանց բոլորին կկանգնեցնեմ իմ առջև, ցույց կտամ նրանց ու կասեմ՝ «Պաշտպանիր, հայր»։ Նա որբերի հայր է, նա գթառատ է, կպաշտպանի, այլ, կտեսնեք, իսկ այն գեներալին... Լյոնյա, tenez-vous droite[1]. Դու, Կոլյա, հիմա էլի պիտի պարես։ Ի՞նչ ես տգզում։ Էլի տգզում է։ Ախր ինչի՞ց ես վախենում, հիմար։ Տեր աստված, ինչպե՞ս վարվեմ սրանց հետ, Ռոդիոն Ռոմանիչ։ Օ՜, եթե դուք գիտենայիք, թե որքան անհասկացող են սրանք։ Ախր սրանց հետ ի՞նչ կարող ես անել...

Եվ նա գրեթե լալով (այդ չէր խանգարում նրա անընդհատ, անլռելի, արագ-արագ խոսելուն), Ռասկոլնիկովին ցույց էր տալիս լացող երեխաներին։ Ռասկոլնիկովը փորձեց համոզել, որ նա տուն վերադառնա, ու կարծելով, որ կազդի նրա ինքնասիրության վրա, ասաց, որ նրան վայել չէ թափառիկ երգեհոնահարների պես շրջել փողոցներում, որովհետև նա պատրաստվում է ազնվական աղջիկների պանսիոնի դիրեկտոր լինել։

— Պանսիոնի՞, քա՜հ-քա՜հ-քա՜հ։ Ո՞րտեղից հասնես դրան,— գոչեց Կատերինա Իվանովնան՝ ծիծաղից անմիջապես հետո սկսելով հազալ,— ոչ, Ռոդիոն Ռոմանիչ, անցել է երազանքը, բոլորը թողել են մեզ... Իսկ այն գեներալը... Գիտե՞ք, Ռոդիոն Ռոմանիչ, ես նրա վրա թանաքաման շը-

[1] Ուղիղ կանգնեցեք (ֆրանս.)։

պրրտեցի. սպասավորների սենյակում թուղթ ու թանաք էր գրված հյուրերի ստորագրության համար. ես էլ ստորագրեցի, հետո թանաքամանը շպրտեցի նրա վրա ու փախա։ Օ, ստոր մարդիկ։ Է՞հ, թքած նրանց վրա. հիմա սրանց ես ինքս կկերակրեմ, ոչ ոքից օգնություն չեմ խնդրի։ Բավական է տանջենք սրան (նա մատնանշեց Սոնյային)։ Պոլեչկա, ինչքա՞ն ենք հավաքել, ցույց տուր. ինչպե՞ս, ընդամենը միայն երկու կոպե՞կ։ Օ, զզվելի մարդիկ։ Ոչինչ չեն տալիս, միայն ետևներիցս են վազում լեզուները հանած։ Հը՛, ինչո՞ւ է ծիծաղում այն տխմարը (նա մատնացույց արեց ամբոխի մեջ գտնվող մի մարդու)։ Այդ ամենը նրանից է, որ Կոլյան այսպես անհասկացող է։ Ուզակի գլխացավանք է սա։ Ի՞նչ ես ուզում, Պոլեչկա, ինձ հետ ֆրանսերեն խոսիր parlez-moi francais[1]. Չէ՞ որ ես քեզ սովորեցրել եմ, դու հո գիտես մի քանի ֆրազ... Այլապես ո՞վ կիմանա, որ դուք ազնվական ընտանիքից եք, դաստիարակված երեխաներ եք և ամենևին էլ այնպես չեք, ինչպես բոլոր թափառաշրջիկ երգեհոնահարները։ Մենք հո մի որևէ «Պետրուշկա» (տիկնիկ) չե՞նք ներկայացնում փողոցներում, այլ ազնվականական ռոմանս ենք երգում... Ա՛խ, հա՛, ի՞նչ պիտի երգենք։ Դուք շարունակ ընդհատում ենք ինձ, իսկ մենք... Գիտե՞ք, Ռոդիոն Ռոմանիչ, մենք այստեղ կանգ ենք առել, որ երգ ընտրենք, այնպիսի մի բան, որ Կոլյան կարողանա պարել... որովհետև այս բոլորը մենք չենք նախապատրաստել, կարող ենք պատկերացնել հետևանքը. հարկավոր է առաջուց պայմանավորվել, փորձեր անել, իսկ հետո կգնանք Նևսկի, ուր բարձր հասարակության ավելի շատ մարդիկ են լինում և մեզ իսկույն կնկատեն։ Լյոնյան գիտե «Խուտորոկ» երգը... Բոլորն էլ հենց միայն այդ «Խուտորոկն» են երգում։ Մենք պետք է շատ ավելի ազնվական մի որևէ բան երգենք... Հը՛, Պոլյա, ի՞նչ հիշեցիր, գոնե դու մորդ օգնեիր։ Օֆ, հիշողությունս թույլ է, թույլ, թե չէ ես մի որևէ բան կհիշեի։ Իսկապես, հո չե՞նք երգելու «Հուսարը թրին հենվելով» երգը*։ Ախ, եկեք երգենք ֆրանսերեն «Cing sous»-ը[2]։ Ես հո ձեզ

---

[1] Ինձ հետ ֆրանսերեն խոսիր (ֆրանս.)։

[2] Հինգ գրոշ (ֆրանս.)։

սովորեցրել եմ, սովորեցրել։ Գլխավորն այն է, որ դա ֆրանսերեն է, ուրեմն իսկույն կտեսնեն, որ դուք ազնվական երեխաներ եք, և դա շատ ավելի հուզիչ կլինի... Կարելի է նույնիսկ երգել «Malborough s'en va-t-en guerre», որովհետև դա բոլորովին մանկական, բոլորովին մանկական երգ է ու երգվում է բոլոր արիստոկրատական տներում, երբ օրոր են ասում երեխաներին.

Malborough s'en va-t-en guerre
Ne sait quand reviendra...[1]

սկսեց նա երգել... բայց ոչ, ավելի լավ է «Cing sous»-ը։ Դե՛հ, Կոլյա, ձեռքերդ դիր կողքերիդ, շուտ, իսկ դու, Լրոնյա, նույնպես պտտվիր հակառակ կողմը, իսկ ես ու Պոլեչկան կերգենք ու ծափ կտանք։

Cing sous, cing sous,
Pour monter notre ménage...[2]

Քխա՛-քխա՛-քխա՛ (և նա նվաղեց հազից)։ Շտկիր շորդ, Պոլեչկա, ուսերիցդ ընկնում է,— ասաց նա հազալով, շունչ առնելով։ — Հիմա առանձնապես հարկավոր է, որ դուք ձեզ վայելուչ և նրբավարի պահեք, որպեսզի բոլորը տեսնեն, որ դուք ազնվական երեխաներ եք։ Ես ասել էի, որ հարկավոր է լիֆչիկը ավելի երկար, այն էլ երկտակ անել։ Դու, Սոնյա, այն ժամանակ խորհուրդ էիր տալիս՝ «կարճ, հա՛ կարճ կարել», ահա և բանից դուրս եկավ, որ երեխային իսպառ այլանդակեցինք... Հը՛, էլի՛ դուք բոլորդ լալիս եք։ Ախր ինչո՞ւ, հիմարներ։ Դե, Կոլյա, շուտ, շուտ, շուտ սկրսիր, ա՛խ, սա ինչ անտանելի երեխա է...

Cing sous, cing sous—

էլի՛ սոլդա՛թ։ Հը՛, ի՞նչ ես ուզում։

Հիրավի, ամբոխի միջով առաջ եկավ մի քաղաքապահ։ Բայց միևնույն ժամանակ մոտեցավ համազգեստով ու շինելով մի պարոն, մոտ հիսուն տարեկան, պատկառելի մի

[1] Մալբրուգը գնում է պատերազմ, չգիտե երբ կվերադառնա (ֆրանս.)։

[2] Հինգ գրոշ, հինգ գրոշ մեր անտեսության կառուցման համար... (ֆրանս.)։

աստիճանավոր, կրծքին շքանշան (վերջինը խիստ հաճելի էր Կատերինա Իվանովնային և ազդեց քաղաքապահի վրա)։ Նա առանց որևէ բան ասելու, մի երեք ռուբլիանոց, կանաչավուն թղթադրամ տվեց Կատերինա Իվանովնային։ Նրա դեմքը անկեղծ կարեկցություն էր արտահայտում, Կատերինա Իվանովնան ընդունեց թղթադրամը և քաղաքավարությամբ, նույնիսկ հանդիսավորությամբ գլուխ տվեց նրան։

— Շնորհակալ եմ ձեզնից, հարգելի պարոն,— գոռոզաբար ասաց նա,— այն պատճառները, որոնք մեզ դրդեցին... վերցրո՛ւ փողը, Պոլեչկա։ Տեսնո՞ւմ ես, հո կան ազնիվ ու մեծահոգի մարդիկ, որոնք իսկույն պատրաստ են օգնել դժբախտության մատնված, աղքատ ազնվականուհուն։ Հարգելի պարոն, դուք հո տեսնում եք ազնվական որբերին, կարելի է նույնիսկ ասել՝ հենց արիստոկրատական կապեր ունեցողներին։ Իսկ այն գեներալը նստել էր ու անտառակաքավներ էր ուտում... սկսեց ոտքերը հատակին խփել, որ ես իրեն անհանգստացրի... «Ձերդ գերազանցություն,— ասում եմ ես,— պաշտպանեցեք որբերին, դուք հո լավ եք ճանաչում հանգուցյալ Սեմյոն Զախարիչին,— ասում եմ նրան,— ու քանի որ նրա մահվան օրը ստորներից ամենաստոր մեկը զրպարտեց նրա աղջկան...», էլի՛ այդ սոլդաթը. պաշտպանեցեք,— դիմեց նա աստիճանավորին,— այդ սոլդաթը ի՞նչ գործ ունի ինձ հետ։ Մենք արդեն մի ուրիշ սոլդաթից, Մեշչանսկայա փողոցից փախանք այստեղ ... Հը՛, ուզածդ ի՞նչ է, հիմար։

— Այն է, որ արգելված է փողոցներում անկարգություն անել։

— Անկարգը դու ինքդ ես։ Միևնույն է, թե ես երգեհոնով եմ ման գալիս, քո ի՞նչ գործն է։

— Երգեհոնի համար պետք է թույլտվություն ունենալ, իսկ դուք ինքնագլուխ եք վարվում և այդպիսով շփոթեցնում ժողովրդին։ Ո՞րտեղ եք բարեհաճում ապրել։

— Ինչպե՛ս թե թույլտվություն,— գոչեց Կատերինա Իվանովնան։ — Ես այսօր ամուսնուս եմ թաղել, այստեղ ի՞նչ թույլտվություն կարող է լինել։

— Տիկին, տիկին, հանգստացեք,— միջամտեց աստի-

ճանապարը,— դնանք, ես ձեզ տուն կհասցնեմ... այստեղ, ամբոխի մեջ այդ վայել չէ... Դուք անառողջ եք...

— Հարգելի պարոն, հարգելի պարոն, դուք ոչինչ չգիտեք,— ճչաց Կատերինա Իվանովնան,— մենք պետք է Նևսկի պողոտա գնանք։ Սոնյա, Սոնյա։ Ո՞րտեղ է նա։ Նույնպես լալիս է։ Ախր ի՞նչ է պատահել ձեզ՝ բոլորիդ։ Կոլյա, Լյոնյա, ո՞ւր եք փախչում— հանկարծ վախվխելով ճչաց նա,— ա՜խ, հիմա՜ր երեխաներ։ Կո՜լյա, Լյո՜նյա, ո՞ւր եք վազում, է՞...

Այնպես պատահեց, որ Կոլյան ու Լյոնյան չափազանց վախենալով փողոցի ամբոխից և խելագարված մոր արարքներից, վերջապես, տեսնելով քաղաքապահին, որը ուզում էր նրանց բռնել և ինչ-որ տեղ տանել, հանկարծ, ասես սալմանավորված լինելով, բռնեցին իրար ձեռքից ու փախան։ Խեղճ Կատերինա Իվանովնան ճչալով ու լալով ընկավ նրանց ետևից։ Այլանդակ ու ողորմելի տեսք ուներ այդ վազող, լացող, շնչասպառ կինը։ Սոնյան ու Պոլեչկան վազեցին նրա ետևից։

— Ետ բեր նրանց, Սոնյա, ետ բեր։ Օ, հիմար ապերախտ երեխաներ... Պոլյա, բռնի՛ր նրանց... Չէ՞ որ ձեզ համար ես...

Ամբողջ թափով վազելիս նա սայթաքեց ու ընկավ։

— Վնասվեց, արյուն է գալիս։ Ա՜խ, տեր աստված,— ճչաց Սոնյան՝ թեքվելով նրա վրա։

Բոլորը վրա հասան, շրջապատեցին նրան։ Ռասկոլնիկովը և Լեբեզյատնիկովը առաջին մոտ վազողներից էին. վրա հասավ նաև աստիճանավորը, հետո էլ քաղաքապահը, որը փնթփնթաց՝ «այ քեզ բան», ու ձեռքը թափ տվեց, զգալով, որ գլխացավանք է լինելու։

— Հեռացե՛ք, հեռացե՛ք,— դիմում էր նա շուրջը խոնարվող մարդկանց։

— Մեռնում է,— դոչեց մեկը։

— Խելագարվել է,— ասաց մի ուրիշը։

— Տեր աստված, պահպանիր,— խաչակնքելով ասաց մի կին։ — Աղջկան ու տղային բռնեցի՞ն։ Հրե՛ն, բերում են, մեծ աղջիկն է բռնել... ա՛յ քեզ գժեր։

Երբ լավ զննեցին Կատերինա Իվանովնային, տեսան, որ

Նա ամենևին էլ քարի չի զարկվել ու վիրավորվել, ինչպես կարծում էր Սոնյան, այլ սալահատակին թափված արյունը նրա կրծքից, կոկորդից է հոսել։

— Ես այդ բանը դիտեմ, տեսել եմ,— ասաց աստիճանավորը Ռասկոլնիկովին ու Լեբեզյատնիկովին,— դա թոքախտ է. այդպես ժայթքում է արյունը և խեղդում հիվանդին։ Դեռ վերջերս ես տեսա, թե ինչպես իմ ազգականուհու կոկորդից հանկարծակի... մեկ ու կե՞ս բաժակ արյուն հոսեց... Սակայն ի՞նչ պիտի անել, հիմա կմեռնի։

— Նրան ինձ մոտ, ինձ մոտ բերեք,— աղերսում էր Սոնյան,— ես մոտիկ եմ ապրում... հրե՛ն այն տանը, այստեղից երկրորդ տանը... Շուտ, շուտ բերեք ինձ մոտ...— գիմում էր նա բոլորին։ — Բժիշկ կանչեցեք... Ա՛խ, տեր աստված։

Աստիճանավորի ջանքերով այդ գործը կարգավորվեց, նույնիսկ քաղաքապահն էլ էր օգնում Կատերինա Իվանովնային տանելուն։ Համարյա մեռած վիճակում նրան տարան Սոնյայի սենյակը ու պառկեցրին անկողնին։ Արյունահոսությունը դեռ շարունակվում էր, բայց նա կարծես թե սկսում էր ուշքի գալ։ Բացի Սոնյայից, իսկույն սենյակ մտան Ռասկոլնիկովն ու Լեբեզյատնիկովը, աստիճանավորն ու քաղաքապահը, որը մինչ այդ քշել-հեռացրել էր ամբոխին, թեև մի քանիսը նրանց ուղեկցեցին մինչև սենյակի դուռը։ Պոլիչկան ձեռքերից բռնած ներս բերեց Կոլյային ու Լյոնյային, որոնք դողում ու լալիս էին։ Ներս եկան նաև Կապերնաումովները, ինքը Կապերնաումովը, կաղ և մի աչքը կույր, տարօրինակ տեսքով մի մարդ՝ կոշտ ու բիզ-բիզ մազերով ու այտամորուքով, նրա կինը, ինչ-որ առմիշտ վախեցած տեսքով, ու նրանց մի քանի երեխաները՝ մշտական զարմանքից ընդարմացած դեմքերով ու բաց բերաններով։ Բոլորի մեջ հանկարծ հայտնվեց նաև Սվիդրիգայլովը։ Ռասկոլնիկովը զարմացած նայեց նրան, չհասկանալով, թե նա որտեղից բուսավ. ամբոխի մեջ նրան չէր տեսել։

Խոսեցին բժշկի ու քահանայի մասին։ Աստիճանավորը թեպետև շշնջաց Ռասկոլնիկովի ականջին, որ բժիշկը հիմա կարծես թե ավելորդ է, բայց կարգադրեց կանչել։ Գնաց ինքը՝ Կապերնաումովը։

Մինչ այս, մինչ այն, Կատերինա Իվանովնան շունչ էր առնում, արյունահոսությունը առժամ դադարեց։ Նա հիվանդագին, բայց սևեռուն և խորաթափանց հայացքով նայում էր դալկագեմ ու դողդոջ Սոնյային, որը նրա ճակատից թաշկինակով սրբում էր քրտնքի կաթիլները. վերջապես Կատերինա Իվանովնան խնդրեց քիչ բարձրացնել իրենց։ Նրան նստեցրին անկողնին՝ բռնելով երկու կողմից։

— Երեխաները ո՞ւր են— հարցրեց նա թույլ ձայնով։

— Դու նրանց բերի՞ր, Պոլյա։ Օ, հիմարներ... ինչո՞ւ փախաք... օ՛ֆ։

Նրա չորացած շրթունքները դեռ արյունոտ էին։ Նա այս ու այն կողմ նայեց։

— Այ թե դու ինչպես ես ապրում, Սոնյա։ Քեզ մոտ եմ ոչ մի անգամ չէի եղել... Հիմա եղա...

Նա տանջալից նայեց Սոնյային։

— Մենք քեզ հալումաշ արեցինք, Սոնյա... Պոլյա, Լյոնյա, Կոլյա, եկեք այստեղ... Ահա և որանք բոլորը, Սոնյա։ վերցրու սրանց... իմ ձեռքից... բավական է ես տանջվեմ... Ամեն ինչ վերջացավ։ Ը-ը՛մ... պառկեցրեք ինձ, թողեք գոնե հանգիստ մեռնեմ...

Նրա գլուխը դարձյալ իջեցրին բարձին։

— Ի՞նչ, քահանա՞... հաբկավոր չէ... Դուք ո՞րտեղից մի ավելորդ ռուբլի ունենաք... Ես մեղքեր չունեմ... Աստված առանց այդ էլ պետք է ների... Ինքը գիտե, թե ես ինչպես էի տանջվում... Իսկ եթե չների, հարկավոր էլ չէ...

Նա ավելի ու ավելի էր բռնվում ուժեղ զառանցանքով։ Երբեմն ցնցվում էր, նայում շուրջը, մի րոպե ճանաչում էր բոլորին, բայց իսկույն գիտակցությունը փոխարինվում էր զառանցանքով։ Նա խռպոտ ու դժվար էր շնչում. կոկորդում կարծես ինչ-որ բան էր խլթխլթում։

— Ես նրան ասում եմ՝ «ձերդ գերազանցություն...»,— թոթովում էր նա՝ յուրաքանչյուր բառից հետո շունչ առնելով,— այդ Ամալյա Լյուդվիգովնան... ա՛խ, Լյոնյա, Կոլյա, ձեռքերդ դրեք կողքերիդ, շուտ, շուտ, պարեցեք, գլիոսե, պա-դը-բասկ։ Դուիր տոտիկներովդ... ուրուսիկ երեխա եղիր։

Du hast Diamanten und Perlen.,....*[1]

Հետո ո՞նց է. այ, երգեինք...

Du hast die schönsten Augen.
Mädchen, was willst du mehr[2]

Հա՛, էլի՛, ո՛նց չէ, was willst du mehr, *գլխից բան է հանում ապուշը... Ա՛խ, հա՛, էլի մի ռոմանս.*

Միջօրեի տապին, Դաղստանի հովտում...

Ախ, որքան էի սիրում... Ես պաշտելու չափ սիրում էի այս ռոմանսը, Պոլեչկա... Գիտե՞ս, հայրդ... դեռ փեսացու էր, երբ այդ երգում էր... Է՛յ օրեր... Ա՛յ, մենք երգեցինք։ Հա՛, ի՞նչպես է, ի՞նչպես է... Ես մոռացել եմ. դե հիշեցրեք, ի՞նչպես է։ — Նա չափազանց հուզված էր և ճգնում էր բարձրանալ տեղից։ Վերջապես, սարսափելի, խռպոտ, կերկերող ձայնով, ճղճղալով ու յուրաքանչյուր բառի վրա շնչասպառ լինելով, ինչ-որ սաստկացած վախը դեմքին նա սկսեց.

Միջօրեի տապին... Դաղստանի... հովտում...

Գնդակը կրծքումս...

Ձերդ գերազանցություն,— հանկարծ ճչաց նա սրտաճմլիկ ձայնով ու արտասվելով,— պաշտպանեցեք որբերին։ Ճաշակելով հանգուցյալ Սեմյոն Զախարիչի աղուհացը... Կարելի է նույնիսկ ասել՝ արիստոկրատական աղուհացը... Պա՛հ,— ցնցվեց նա՝ հանկարծ սթափվելով և սարսափահար նայելով բոլորին, բայց իսկույն ճանաչեց Սոնյային։— Սոնյա, Սոնյա,— ասաց նա հեղ ու փաղաքուշ, կարծես զարմանալով, որ նրան տեսնում էր իր առջև,— Սոնյա, սիրելիս, դու է՞լ ես այստեղ։

Նրան դարձյալ մի քիչ բարձրացրին։

— Բավական է... Ժամը հասավ... մնաս բարով, դրժբախտ աղջիկ... յաբուլին հալից գցեցինք... ուժասպառ

---

[1] *Դու ունես ալմաստներ և մարգարիտ (գերմ.)*

[2] *Դու ունես չքնաղագեղ աչքեր,*
Աղջիկ, էլ ինչ ես ուզում (գերմ.)։

եղավ,— հուսաբեկ ու զայրագին գոչեց նա ու գլուխը գցեց բարձին։

Նա կրկին անզգայացավ, բայց այդ վերջին անզգայացումը երկար չտևեց։ Նրա դեղնագալուկ, գոսացած դեմքը նա ընկավ, բերանը բացվեց, ոտքերը ջղաձգաբար ձգվեցին։ Նա խոր, խոր շունչ առավ ու մեռավ։

Սոնյան ընկավ նրա դիակին, գրկեց նրան ու այդպես էլ անշարժացավ՝ գլուխը հպելով հանգուցյալի չորացած կրծքին։ Պոլեչկան ընկավ մոր ոտքերին, սկսեց համբուրել դրանք և հոնկուր-հոնկուր լաց լինել։ Կոլյան ու Լյոնյան դեռ չհասկանալով պատահածը, բայց ինչ-որ շատ սարսափելի բան նախազգալով, գրկվեցին, ու նայելով իրար, հանկարծ միասին, միանգամից բացեցին բերանները ու սկսեցին ճչալ և լաց լինել։ Երկուսն էլ դեռ նույն տարազով էին. մեկի գլխին՝ շալմա, մյուսի գլխին թասակ՝ ջայլամի փետուրով։

Եվ ի՞նչ կերպ էր եղել, որ այն «գովասանաթերթը» ընկել էր անկողնի վրա, Կատերինա Իվանովնայի կողքին։ «Գովասանաթերթը» հենց այդտեղ էր, բարձի մոտ։ Ռասկոլնիկովը տեսավ այն։

Նա անցավ դեպի պատուհանը։ Լեբեզյատնիկովը մոտեցավ նրան։

— Մեռավ,— ասաց Լեբեզյատնիկովը։

— Ռոդիոն Ռոմանիչ, ուզում եմ ձեզ երկու կարևոր խոսք ասել,— մոտենալով ասաց Սվիդրիգայլովը։ Լեբեզյատնիկովը նրան անմիջապես տեղ զիջեց և քաղաքավարությամբ մի կողջ քաշվեց։ Սվիդրիգայլովը զարմացած Ռասկոլնիկովին տարավ ավելի հեռու, մինչև անկյունը։

— Ամբողջ գլխացավանքը, այսինքն՝ թաղումը և այլ բաները ես վերցնում եմ ինձ վրա։ Գիտե՞ք, միայն թե փող լինի, իսկ ես հո ձեզ ասել եմ, որ ավելորդ փող ունեմ։ Այդ եբկու ճուտիկներին և այդ Պոլեչկային ես կտեղավորեմ որևէ որբախնամ լավ հիմնարկներում և մինչև նրանց չափահասությունը յուրաքանչյուրին կհատկացնեմ հազար հինգ հարյուր ռուբլի կապիտալ, որպեսզի Սոֆյա Սեմյոնովնան բոլորովին հանգիստ լինի։ Նրան էլ կազատեմ իր այժմյան վիճակից, որովհետև լավ աղջիկ է, այնպես չէ՞։ Դե ուրեմն այդպես էլ հաղորդեցեք Ավդոտյա Ռոմանովնային, որ նրա

տասը հազարը ես հենց այդ նպատակով էլ կօգտագործեմ։

— Իսկ ի՞նչ նպատակներով եք այդպիսի առատաձեռնությամբ բարեգործություն անում,— հարցրեց Ռասկոլնիկովը։

— Հը՛մ, կասկածոտ մարդ եք, էլի,— ծիծաղեց Սվիդրիգայլովը։— Ես հա ասացի, որ իմ այդ փողերը ավելորդ են։ Ես այդ մարդասիրաբար եմ անում, մի՞թե դա հնարավոր չեք համարում։ Չէ՞ որ նա «ոջիլ» չէր (Սվիդրիգայլովը մատնացույց արեց անկյունը, ուր գտնվում էր հանգուցյալը), նման չէր մի որևէ վաշխառու պառավի։ Համաձայնեցեք, որ այդպես է։ «Արդյո՞ք իսկապես Լուժինը պետք է ապրի ու նողկալիություններ անի, թե՞ Կատերինա Իվանովնան պետք է մեռնի»։ Ու եթե ես չօգնեմ, հո «Պոլեչկան էլ, ղորօրինակ, նույն ուղղությամբ, հենց Սոնյայի ճամփով կգընա»...

Սվիդրիգայլովը այդ ասաց ինչ-որ **ենթամտությամբ,** հրճվալից խարդախություն արտահայտող տեսքով, աչքերը Ռասկոլնիկովին հառած։ Ռասկոլնիկովը գունատվեց ու սարսռեց՝ լսելով Սոնյային հենց իր ասած խոսքերը։ Նա արագ ետ քաշվեց և ապշած նայեց Սվիդրիգայլովին։

— Դուք այդ... ո՞րտեղից եք լսել,— հազիվ շունչ առնելով, շշնջաց նա։

— Ես հո ապրում եմ այստեղ, այս պատի ետևում, մադամ Ռեսլիխի բնակարանում։ Այստեղ Կապերնաումովն է, իսկ այնտեղ՝ մադամ Ռեսլիխը, իմ հին ու հավատարիմ բարեկամուհին։ Հարևան եմ։

— Դո՞ւք։

— Ես,— ծիծաղից երերալով շարունակեց Սվիդրիգայլովը,— ու կարող եմ ձեզ աղնվաբար հավատացնել, հաճելի Ռոդիոն Ռոմանիչ, որ դուք չափազանց հետաքրքրել եք ինձ։ Ես հո ասել էի, որ մենք կհանդիպենք, նախագուշակել էի այդ, և ահա հանդիպեցինք։ Ու կտեսնեք, թե ես որքան լավ մարդ եմ։ Կտեսնեք, որ դեռ կարելի է ապրել ինձ հետ...

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

I

Ռասկոլնիկովի համար տարօրինակ ժամանակ եկավ. կարծես նրա առջև մշուշ իջավ և նրան մեկուսացրեց անելք ու ծանր մենության մեջ։ Հետո, արդեն երկար ժամանակ անց վերհիշելով այդ օրերը, նա գլխի էր ընկնում, որ իր գիտակցությունը երբեմն մի տեսակ մթագնում էր, ու որոշ ընդմիջումներով դա շարունակվեց ընդհուպ մինչև վերջնական կատաստրոֆը։ Նա ստույգ համոզված էր, որ այն ժամանակ սխալվում էր շատ բաներում, օրինակ, մի քանի գիպքերի ժամկետների ու ժամանակի նկատմամբ։ Գոնե հետագայում մտաբերելով այդ ու ճգնելով ըմբռնել մտաբերածը, նա շատ բան իմացավ իր մասին՝ արդեն դեկավարվելով կողմնակի մարդկանցից ստացած տեղեկություններով։ Օրինակ, նա մի իրադարձությունը շփոթում էր մի այլ իրադարձության հետ. այդ մյուս իրադարձությունը նա այնպիսի պատահարի հետևանք էր համարում, որը գոյություն ուներ միայն նրա երևակայության մեջ։ Երբեմն նրան համակում էր հիվանդագին-տանջալից մի անհանգստություն, որը նույնիսկ խուճապային վախի էր վերածվում։ Բայց նա նաև հիշում էր, որ լինում էին բոպեներ, ժամեր և գուցե նույնիսկ օրեր, երբ ինքը ամեն ինչի հանդեպ համակվում էր հոգեկան անտարբերությամբ, որը կարծես թե հակադրվում էր առաջվա վախին, մի անտարբերություն, որը նման էր մեռոդներից ոմանց հիվանդագին-անտարբեր վիճակին։ Իսկ առհասարակ այդ վերջին օրերին նա ինքն էլ կարծես ջանում էր խուսափել իր դրության պարզ ու լիակատար ըմ-

բռնումից։ Որոշ կենսական փաստեր, որոնք անհապաղ պարզաբանություն էին պահանջում, առանձնապես ճնշում էին նրան. բայց նա որքա՜ն ուրախ կլիներ ազատվել ու փախչել որոշ հոգսերից, որոնց մուսնալը, սակայն, լիակատար և անխուսափելի կործանում էր սպառնում նրա վիճակում։

Նրան առանձնապես անհանգստացնում էր Սվիդրիգայլովը. նույնիսկ կարելի էր ասել, որ նա ուշադրությունը կենտրոնացրել էր Սվիդրիգայլովի վրա։ Սոնյայի բնակարանում Կատերինա Իվանովնայի մահվան պահին իր համար չափազանց ահավոր և Սվիդրիգայլովի չափազանց պարզ ասած խոսքերից հետո կարծես խախտվեց նրա մտքերի սովորական ընթացքը։ Բայց չնայելով, որ այդ նոր փաստը խիստ անհանգստացնում էր նրան, նա կարծես թե չէր շտապում պարզաբանել գործը։ Երբեմն, հանկարծ, գտնվելով քաղաքի հեռավոր, առանձնացած մասում, մի որևէ խղճուկ պանդոկում միայնակ սեղան նստած, մտածմունքի մեջ ընկած և հազիվ հիշելով, թե ինքը ինչպես է ընկել այդտեղ, նա անակնկալ վերհիշում էր Սվիդրիգայլովին. նա հանկարծակի պարզ ու տագնապալից գիտակցում էր, որ հարկավոր է որքան կարելի է շուտ համաձայնության գալ այդ մարդու հետ և վերջնականապես լուծել այն, ինչ-որ հնարավոր է։ Մի անգամ, ուղեկալից անցնելով ինչ-որ մի տեղ, նա նույնիսկ երևակայեց, թե այստեղ սպասում է Սվիդրիգայլովին, և որ այստեղ իրենք տեսակցություն են նշանակել։ Մի ուրիշ անգամ լուսաբացից առաջ նա արթնացավ ինչ-որ մի տեղ, դետնի վրա, թփերի մեջ, ու համարյա չէր հասկանում, թե ինչպես էր այդտեղ եկել։ Ասենք, Կատերինա Իվանովնայի մահից հետո երկու-երեք օրվա ընթացքում նա արդեն մի երկու անգամ հանդիպել էր Սվիդրիգայլովին, ու համարյա միշտ էլ Սոնյայի բնակարանում, ուր մտնում էր մի տեսակ աննպատակ, բայց միշտ էլ համարյա մի բոպեով։ Նրանք սովորաբար կարճ խոսքեր էին փոխանակում և ոչ մի անգամ չխոսեցին գլխավոր խնդրի մասին, կարծես նրանց միջև պայմանավորվածություն կար, որ առժամապես լռեին այդ մասին։ Կատերինա Իվանովնայի դիակը դեռ գտնըվում էր դագաղում։ Սվիդրիգայլովը դես ու դեն էր ընկնում,

թաղման համար կարգադրություններ անում։ Սոնյան նույնպես խիստ զբաղված էր։ Վերջին հանդիպման ժամանակ Սվիդրիգայլովը Ռասկոլնիկովին ասաց, որ ինքը վերջացրել է Կատերինա Իվանովնայի երեխաների գործը և հաջող է վերջացրել, որ ինչ-որ դպրերի շնորհիվ գտնվել են այնպիսի մարդիկ, որոնց օգնությամբ կարելի էր երեք որբերին անմիջապես տեղավորել նրանց համար միանգամայն վայելուչ հիմնարկներում, որ նրանց համար հատկացված փողերը նույնպես շատ բաներով օգտակար եղան, որովհետև շատ ավելի հեշտ է տեղավորել կապիտալ ունեցող որբերին, քան աղքատների որբերին։ Նա Սոնյայի մասին էլ ինչ-որ բան ասաց, խոստացավ մոտ օրերում մի կերպ անցնել Ռասկոլնիկովի մոտ և ավելացրեց, որ «կցանկանար խորհրդակցել, որ խիստ հարկավոր է խոսել, որ անհրաժեշտ գործեր կան...»։ Այս խոսակցությունը տեղի էր ունենում հաշտում, սանդուղքի մոտ։ Սվիդրիգայլովը սևեռուն նայում էր Ռասկոլնիկովի աչքերին, ու հանկարծ մի փոքր լռելով, ցածրաձայն հարցրեց.

— Ինչո՞ւ եք այդպես դուք ձեզ կորցրել, Ռոդիոն Ռոմանիչ։ Հիրավի, լսում եք ու նայում, բայց կարծես թե բան չեք հասկանում։ Ա՛յ, եկեք խոսենք. ափսոս որ ես թե իմ և թե ուրիշի գործերով եմ զբաղված... էհ, Ռոդիոն Ռոմանիչ, բոլոր մարդկանց նախ և առաջ օդ է հարկավոր, օ՛դ, օ՛դ...

Նա հանկարծ մի կողմ քաշվեց, որ ճանապարհ տար սանդուղքով ներս մտնող քահանային ու տիրացուին։ Նրանք եկել էին հոգեհանգիստ կատարելու։ Սվիդրիգայլովի կարգադրությամբ օրական ճիշտ երկու անգամ հոգեհանգիստ էր կատարվում։ Սվիդրիգայլովը գնաց իր գործով։ Ռասկոլնիկովը մի փոքր կանգնեց, մտածեց ու քահանայի ետևից մտավ Սոնյայի բնակարանը։

Դեռ մոտ նա կանգ առավ։ Սկսվեց պատշաճ, հանդարտ, տխուր արարողությունը։ Մահվան վերաբերյալ նրա գիտակցության մեջ և մահվան ներկայությունը զգալու մեջ նրա համար միշտ էլ մի ինչ-որ ծանր և միստիկորեն զարհուրելի բան էր լինում հենց մանկությունից. բացի այդ, նա վաղուց հոգեհանգիստ չէր լսել։ Այստեղ մի ուրիշ բան էլ կար, որ շատ սարսափելի էր և անհանգստացուցիչ։ Ռասկոլնի-

կովը նայում էր երեխաներին. նրանք բոլորը ծունկ էին շոքել դագաղի մոտ։ Պոլենկան լալիս էր։ Նրանց ետևում կամացուկ և կարծես երկչոտաբար լալով, աղոթում էր Սոնյան։ «Այս օրերին նա ոչ մի անգամ չի նայել և ոչ մի խոսք չի ասել ինձ», հանկարծ մտածեց Ռասկոլնիկովը։ Արևը պայծառ լուսավորել էր սենյակը. քուլա-քուլա բարձրանում էր թուրվառի ծուխը. քահանան կարդում էր «Հոգոցն հանգուցելոցը»։ Ռասկոլնիկովը ներկա եղավ ամբողջ արարողությանը։ Օրհնելով ու հրաժեշտ տալով, քահանան ինչ-որ տարօրինակությամբ էր նայում շուրջը։ Արարողությունից հետո Ռասկոլնիկովը մոտեցավ Սոնյային։ Սա հանկարծ վերցրեց նրա ձեռքերը և գլուխը հպեց նրա ուսին։ Այդ կարճ ժեստը զարմանք ու տարակուսանք պատճառեց Ռասկոլնիկովին. նույնիսկ տարօրինակ էր. ի՞նչպես թե այդպես. ոչ մի գարշանք, ոչ մի նողկանք իր նկատմամբ, Սոնյայի ձեռքի ոչ մի ցնցում։ Այդ արդեն հենց իր, Ռասկոլնիկովի նվաստացման մի ինչ-որ անվերջանալիություն էր։ Նա գոնե այդպես դա հասկացավ։ Սոնյան ոչինչ չասաց։ Ռասկոլնիկովը սեղմեց նրա ձեռքը ու գնաց։ Նրա հոգեվիճակը սարսափելի ծանր էր։ Եթե հնարավոր լիներ այդ բոպեին գնալ որևէ տեղ և թեկուզ ամբողջ կյանքում բոլորովին մենակ մնալ, ապա նա իրեն երջանիկ կհամարեր։ Բայց բանն այն է, որ նա վերջին օրերում, թեպետև միշտ էլ համարյա մենակ էր, ոչ մի կերպ չէր կարողանում զգալ, որ ինքը մենակ է։ Պատահում էր, որ նա քաղաքից գնում, դուրս էր գալիս մեծ ճանապարհը, մի անգամ նույնիսկ հասավ մի ինչ-որ պուրակ. բայց որքան հեռու էր գնում քաղաքից, այնքան ավելի ուժեղ էր գիտակցում կարծես ինչ-որ մեկի մոտիկ և անհանգստացուցիչ ներկայությունը, որը չէ թե սարսափելի, այլ մի տեսակ խիստ սրտնեղիչ էր, այնպես որ նա շուտափույթ վերադառնում էր քաղաք, խառնվում ամբոխին, մտնում պանդոկներն ու օդեռները, գնում էր հնոտիաշուկա, Սեննայա հրապարակը։ Այստեղ նա իրեն կարծես թե ավելի լավ և նույնիսկ առանձնացած էր զգում։ Մի ճաշարանում իրիկնադեմին երգում էին. նա մի ամբողջ ժամ նստած էր, լսում էր և զգում, որ այդ ամենը իրեն նույնիսկ շատ հաճելի է։ Բայց վերջում հանկարծ նա դարձյալ անհանգիս-

տացավ. կարծես խղճի խայթը։ Հանկարծ սկսեց տանջել նրան. «Ահա, նստել եմ, երգեր եմ լսում, բայց մի՞թե այդ է ինձ հարկավոր», կարծես մտածեց նա։ Սակայն անմիջապես գլխի ընկավ, որ միայն այդ չէ, որ անհանգստացնում է իրեն. կար մի բան, որ անհապաղ լուծում էր պահանջում, բայց դա ոչ կարելի էր իմաստավորել, ոչ էլ խոսքերով արտահայտել։ Ամեն բան մի ինչ-որ հանելուկ էր դառնում։ «Ոչ, ավելի լավ է մաքառել, ավելի լավ է դարձյալ հանդիպել Պորֆիրիին... կամ Սվիդրիգայլովին... թող շուտ լինի դարձյալ մի որևէ մարտահրավեր, որևէ մեկի հարձակումը... Այո, այո», մտածում էր նա։ Ճաշարանից նա դուրս եկավ ու գնաց համարյա վազելով։ Չգիտես ինչու Դունյայի և մոր վերաբերյալ միտքը հանկարծ նրան մի տեսակ խուճապային վախի մատնեց։ Հենց այդ գիշեր, առավոտյան դեմ նա ամբողջովին ցնցվելով, դողալով արթնացավ Թփերում, Կրեստովսկի կղզում. նա գնաց տուն, ուր հասավ վաղ առավոտյան։ Մի քանի ժամ քնելուց հետո դողը անցավ, նա ուշ վեր կացավ. ցերեկվա ժամը երկուսն էր։

Նա հիշեց, որ այդ օրը նշանակված էր Կատերինա Իվանովնայի թաղումը և ուրախացավ, որ ինքը ներկա չի եղել։ Նաստասյան նրան ուտելիք բերեց. նա ուտում և խմում էր մեծ ախորժակով, համարյա ագահությամբ։ Գլուխը ավելի թարմ էր, ու ինքն էլ ավելի հանգիստ էր, քան այդ վերջին երեք օրում։ Նա մինչև իսկ մի փոքր զարմացավ իր առաջվա խուճապային վախի հորդումների վրա։ Դուռը բացվեց, ու ներս մտավ Ռազումիխինը։

— Ը-հը՛, ուտում է, ուրեմն հիվանդ չէ,— ասաց Ռազումիխինը, աթոռ վերցրեց ու նստեց սեղանի մոտ, Ռասկոլնիկովի դիմաց։ Նա անհանգստացած էր և չէր աշխատում դա թաքցնել։ Խոսում էր նկատելի սրտնեղությամբ, բայց անշտապ և առանց ձայնը որևէ չափով բարձրացնելու։ Կարելի էր կարծել, որ նա մի ինչ-որ առանձին և նույնիսկ բացառիկ մտադրություն ունի։ — Լսիր,— վճռական տոնով սկսեց նա,— ինձ համար միևնույն է, թեկուզ դուք բոլորդ գրողի ծոցը գնաք, բայց հիմա իմ նկատած հանգամանքներից պարզ տեսնում եմ, որ ոչինչ չեմ կարողանում հասկանալ։ Ենդրեմ չկարծես, թե ես հարցաքննելու եմ եկել։

Թքած դրա վրա։ Ես ինքս այդ չեմ ուզում։ Թեկուզ դու ինքդ հիմա ասես ամեն ինչ, ձեր բոլոր գաղտնիքները, ես գուցե և չլսեմ, կթքեմ ու կհեռանամ։ Ես եկել եմ միայն անձամբ և վերջնականապես իմանալու, թե նախ՝ ճի՞շտ է, որ դու խելագար ես։ Քո մասին, դիտե՞ս դոյություն ունի այն համոզմունքը (ինչ-որ մի տեղ, էլի՛), որ դու գուցե խելագար ես կամ խիստ հակված ես խելագարության։ Խոստովանում եմ քեզ, ես ինքս էլ խիստ հակամետ էի պաշտպանելու այդ կարծիքը, նախ՝ դատելով քո հիմար և մասամբ նողկալի (ոչնչով չբացատրվող) արարքներից, և երկրորդ, մորդ և քրոջդ նկատմամբ վերջերս քո թույլ տված վարմունքից։ Եթե ոչ խելագարը, ապա միայն հրեշն ու սրիկան կարող էր նրանց հետ այնպես վարվել, ինչպես դու վարվեցիր. հետևաբար դու խելագար ես...

— Դու նրանց վաղո՞ւց ես տեսել։

— Հենց այժմ։ Իսկ դու այն օրից հետո չե՞ս տեսել։ Ասա խնդրեմ, ո՞րտեղ ես թրևում։ Ես երեք անգամ քեզ մոտ եմ եկել։ Երեկվանից մայրդ լուրջ հիվանդ է։ Պատրաստվեց քեզ մոտ գալու. Ավդոտյա Ռոմանովնան համոզում էր հրաժարվել դրանից. ոչինչ չի ուզում լսել.

«Եթե Ռոդյան հիվանդ է,— ասում է նա,— եթե նրա խելքը խանգարվում է, ապա ո՞վ կօգնի նրան, եթե ոչ մայրը»։ Բոլորս էլ եկանք այստեղ, որովհետև հո նրան մենակ չէի՞նք ուղարկելու։ Մինչև քո դուռը հասնելը խնդրում էինք հանգիստ լինել։ Ներս մտանք, դու չկայիր. հենց այստեղ էլ նա նստեց։ Տատը բոպե սպասեց, մենք լուռ կանգնած էինք իր մոտ։ Վեր կացավ ու ասաց՝ «Եթե նա տանից դուրս է գալիս, ուրեմն առողջ է և մոռացել է մորը, նշանակում է մոր համար անվայել և ամոթալի է նրա շեմքին կանգնել և իբրև ողորմություն, գուրգուրանք խնդրել»։ Տուն վերադարձավ ու պառկեց, հիմա տաքություն ունի։ «Տեսնում եմ,— ասում է,— իր սիրածի համար ժամանակ ունի»։ Նա կարծում է, թե այդ սիրածը Սոֆյա Սեմյոնովնան է, քո հարսնացուն կամ սիրուհին, ես այդ չգիտեմ։ Ես իսկույն գնացի Սոֆյա Սեմյոնովնայի մոտ, որովհետև ուզում էի ամեն ինչ իմանալ. գնացի, տեսա, որ դագաղ է դրված, երեխաները լալիս են։ Սոֆյա Սեմյոնովնան նրանց համար սգաշորեր է պատ-

բաստում։ Դու չկայիր։ Նայեցի, ներողություն խնդրեցի և դուրս եկա, այդ ամենը հաղորդեցի Ավդոտյա Ռոմանովնային։ Ուրեմն այդ դատարկ բան է և այստեղ ոչ մի սիրած էլ չկա, հետևաբար ավելի ճիշտ է այն, որ խելացարություն կա։ Բայց ահա դու նստած ես և տավարի եփած միս ես խժռում, կարծես երեք օր ոչինչ չես կերել։ Ասենք, հո խելագարներն էլ են ուտում, բայց դու՞ գեթ մի խոսք էլ չասացիր ինձ, դու... խելագար չես, ես կարող եմ երդվել դրա համար։ Նախ և առաջ խելագար չես։ Այսպես ուրեմն, դուք բոլորդ էլ գնացեք գլխի ծոցը, որովհետև այստեղ մի ինչ-որ ծածուկ բան, ինչ-որ գաղտնիք կա. իսկ ես մտադիր չեմ գլուխ կոտրել ձեր գաղտնիքների վրա։ Եկա հենց այնպես, նախատինք կարդալու, սիրտս թեթևացնելու,— վեր կենալով ասաց Ռազումիխինը,— ես գիտեմ, թե հիմա ինչ եմ անելու։

— Ի՞նչ ես ուզում անել։

— Քո ի՞նչ գործն է, թե ինչ եմ ուզում անել։

— Տես, հա՜, խմելու ես։

— Դու ի՞նչպես... այդ ի՞նչպես իմացար։

— Ա՛յ քեզ բան։

Ռազումիխինը մի բոպե լռեց։

— Դու միշտ էլ շատ խելոք մարդ ես եղել ու երբեք, երբեք խելագար չես եղել,— հանկարծ կտրուկ ասաց նա։ — Այո, այդպես է, ես խմելու եմ, ցտեսություն։ — Եվ նա քայլեց դեպի դուռը։

— Կարծեմ երեկ չէ մյուս օրը ես քո մասին խոսեցի քրոջս հետ, Ռազումիխին։

— Իմ մասի՞ն։ Բայց... Երեկ չէ մյուս օրը դու նրան ո՞ր-տեղ կարող էիր տեսնել,— հանկարծ կանգ առավ Ռազումիխինը, նույնիսկ մի փոքր գունատվեց։ Կարելի էր կռահել, որ նրա սիրտը սկսեց խփել դանդաղ ու լարված։

— Նա այստեղ եկավ, նստեց խոսեց ինձ հետ։

— Ինչ՞։

— Այո, նա։

— Իսկ դու ի՞նչ ասացիր... ուզում եմ ասել՝ ի՞նչ ասացիր իմ մասին։

— Ես նրան ասացի, որ դու շատ լավ, աղնիվ ու աշ-

խաղասեր մարդ ես։ Ես չասացի, որ դու նրան սիրում ես, որովհետև նա այդ ինքն էլ գիտե։

— Ինքն է՞լ գիտե։

— Այո։ Ահա թե ինչ. ուր էլ որ ես գնամ, ինչ էլ որ ինձ պատահի, դու մնա նրանց մոտ իբրև նեցուկ։ Ես, այսպես ասած, նրանց քեզ եմ հանձնում, Ռազումիխին։ Ես այս ասում եմ, որովհետև լավ գիտեմ, որ դու նրան սիրում ես, ու համոզված եմ, որ դու մաքուր սիրտ ունես։ Գիտեմ նաև, որ նա էլ կարող է սիրել քեզ և դուցե նույնիսկ արդեն սիրում է։ Հիմա ինքդ որոշիր, թե ինչն է ավելի լավ, արդյո՞ք հարկավոր է, որ դու խմես, թե՞ հարկավոր չէ։

— Ռոդյա... գիտե՞ս ինչ... Ախ, գրողը տանի։ Իսկ դու ո՞ւր ես ուզում գնալ. եթե այդ բոլորը գաղտնիք է, թող այդպես լինի։ Բայց ես... ես կիմանամ գաղտնիքը... Հավատացած եմ, որ դա անպայման մի որևէ անհեթեթություն է, դատարկ բան, որ միայն դու ես այդ բոլորը հորինել։ Սակայն դու հրաշալի մարդ ես, հրաշալի մարդ։

— Դու ինձ ընդհատեցիր, իսկ ես ուզում էի ավելացնել, որ քիչ առաջ դու շատ լավ ասացիր, թե այդ ծածուկ բաներն ու գաղտնիքները չպետք է իմանալ։ Առայժմ թող այդ, մի անհանգստանա։ Ամեն ինչ իր ժամանակին կիմանաս, հենց այն պահին, երբ դա հարկավոր լինի։ Երեկ մի մարդ ինձ ասաց, թե մարդուն օդ է հարկավոր, օ՛դ, օ՛դ։ Ես ուզում եմ հիմա գնալ նրա մոտ և իմանալ, թե դրանով ինչ է ուզում ասել։

Ռազումիխինը կանգնել էր մտաբաղ և հուզված ու ինչոր բան էր կշռադատում։

«Նա քաղաքական դավադիր է, անշուշտ այդպես է, և նա շուտով մի վճռական քայլ է անելու, այո. այլ կերպ չի կարող լինել. և... Դունյան այդ գիտե...»,— հանկարծ մրմնջեց Ռազումիխինը։

— Ուրեմն Ավդոտյա Ռոմանովնան գալիս է քեզ մոտ,— բառերը շեշտելով ասաց նա,— իսկ դու ուզում ես տեսնվել մի մարդու հետ, որը ասում է, թե մարդուն օդ է հարկավոր, օդ... և... և ուրեմն այն նամակն էլ... կապված է դրա հետ,— ցածրաձայն եզրակացրեց Ռազումիխինը։

— Ի՞նչ նամակ։

— Այսօր նա մի նամակ ստացավ, որը նրան շա՛տ անհանգստացրեց։ Շա՛տ։ Նույնիսկ չափազանց։ Ես խոսեցի քո մասին. խնդրեց քեզ բան չասել։ Հետո... հետո ասաց, թե գուցե մենք շատ շուտով անջատվենք, հետո ինձ ինչ-որ ջերմ շնորհակալություն հայտնեց. հետո էլ անցավ իր սենյակը և փակեց դուռը։

— Նա նամա՞կ է ստացել,— Ռասկոլնիկովը հարցրեց Ռազումիխինին։

— Այո, նամակ. իսկ դու չգիտեի՞ր։ Հը՛մ։

Երկուսն էլ մի փոքր լռեցին։

— Ցտեսություն, Ռոդիոն։ Ես, բարեկամս... Մի համանակ... ասենք, լավ, ցտեսություն, գիտե՞ս, եղավ մի ժամանակ... Դե ցտեսություն, ես էլ եմ շտապում։ Ձեմ խմի։ Հիմա հարկավոր չէ... սխալվում ես։

Ռոդումիխինը շտապեց գնալ, բայց արդեն դուրս ելնելով ու ծածկելով դուռը, հանկարծ նորից այն բացեց ու մի կողմ նայելով ասաց.

— Ի դեպ, հիշո՞ւմ ես այն սպանությունը, Պորֆիրիին, պառավին։ Իմացիր, որ մարդասպանը գտնվել է, խոստովանել է և ներկայացրել բոլոր ապացույցները։ Երևակայիր, դա այն աշխատողներից, ներկարարներից մեկն է, հիշո՞ւմ ես, ես այնտեղ նրանց դեռ պաշտպանում էի։ Կհավատա՞ս, երբ դռնապանը ու երկու վկաները բարձրանում էին պառավի բնակարանը, նա իր ընկերոջ հետ սանդուղքի վրա քըրքըջոց ու ծեծկռտոց էր սարքել դիտավորյալ կերպով, հենց աչքի թող փչելու համար։ Ինչպիսի՞ խորամանկություն, ինչպիսի՞ արիություն էր ցուցաբերել այդ լակոտը։ Դժվար է հավատալ, բայց ինքը պարզաբանել է և ամեն ինչ խոստովանել։ Եվ ինչպե՞ս ես սխալվել էի։ Ըստ իս, դա ձևանալու, հնարամտության ձիրք է, իրավաբանական խաբեության ձիրք, ուրեմն և առանձնապես զարմանալու բան չկա։ Մի՞թե այդպիսի մարդիկ չեն կարող լինել։ Իսկ եթե նա չի դիմացել և խոստովանել է, ապա դրա համար ես նրան էլ ավելի շատ եմ հավատում։ Դա ճշմարտանման է... Բայց ես, ես որքա՞ն սխալվում էի, թունդ պաշտպանում նրան։

— Ասա խնդրեմ, գու այդ որտեղից ես իմացել և ինչո՞ւ

է դա քեզ այդպես հետաքրքրում,— նկատելի հուզմունքով հարցրեց Ռասկոլնիկովը։

— Ա՛յ քեզ բան։ Ինչո՞ւ է ինձ հետաքրքրում, բա՛ն հարցրիր, էլի... Իմացել եմ Պորֆիրիից և ուրիշներից։ Ասենք Զոսիմովից եմ ամեն ինչ իմացել։

— Պորֆիրիի՞ց։

— Պորֆիրիից։

— Նա ի՞նչ... ի՞նչ ասաց,— վախվխելով հարցրեց Ռասկոլնիկովը։

— Նա այդ շատ լավ բացատրեց ինձ։ Բացատրեց հոգեբանորեն, յուրովի։

— Նա՞ բացատրեց։ Հենց ի՞նքը բացատրեց քեզ։

— Ինքը, ինքը. ցտեսություն։ Հետո էլի որոշ բաներ կպատմեմ, իսկ հիմա գործ ունեմ։ Եղավ մի պահ, երբ ես մտածեցի... Դե լավ, հետո... Հիմա ես ինչո՞ւ պետք է խըմեմ։ Դու ինձ առանց գինու էլ խմեցրիր։ Ես հո հարբա՛ծ եմ, Ռոդյա։ Առանց գինու այժմ հարբած եմ, դե ցտեսություն, շատ շուտով էլի կգամ։

Ռազումիխինը գնաց։

«Նա, նա անշուշտ, անշուշտ քաղաքական դավադիր է»,— վերջնականապես եզրակացրեց Ռազումիխինը՝ դանդաղ իջնելով սանդուղքից։ «Քրոջն է՞լ է մասնակից դարձրել։ Ավդոտյա Ռոմանովնայի բնավորությամբ դա շատ, շատ հնարավոր է։ Նրանք տեսակցություններ են ունենում... Ավդոտյա Ռոմանովնան ակնարկում էր այդ բանը։ Նրա շատ խոսքերից, խոսակցություններից... և ակնարկներից երևում է, որ բանը հենց այդպես է։ Ուրիշ ի՞նչ կերպ կարելի է բացատրել այս ամբողջ խառնաշփոթությունը։ Հը՛մ։ Իսկ ես կարծում էի... Տե՛ր աստված, ինչե՛ր էի մտածում։ Այո, դա մտքի խավարում էր, ու ես մեղավոր եմ նրա առաջ։ Այդ նա էր, որ այն օրը միջանցքում, լամպի տակ ինձ մտախավարում պատճառեց։ Թյո՛ւ, ինչպիսի՞ վատթար, կոպիտ, ստոր միտք իմ կողմից։ Կեցցե Նիկոլայը, որ խոստովանեց... Այժմ հասկանալի են դառնում առաջվա բոլոր հանդամանքները՝ նրա այն հիվանդությունը, նրա տարօրինակ վարմունքը. նույնիսկ առաջ էլ, առաջ էլ դեռ համալսարանում նա միշտ մռայլ էր, նոթոտ... բայց հիմա ի՞նչ է նշանակում այդ նա-

մակը։ Անշուշտ այստեղ էլ մի որևէ բան կա։ Ո՞ւմից է այդ նամակը. ես ենթադրում եմ, որ... Հը՛մ։ Չէ՛, այդ բոլորը ես կիմանամ»։

Ռազումիխինը ամեն ինչ վերհիշեց ու կշռադատեց Դունյայի վերաբերյալ, ու նրա սիրտը նվաղեց։ Նա արագ, աճապարելով հեռացավ։

Հենց որ նա դուրս ելավ, Ռասկոլնիկովը վեր կացավ, մոտեցավ պատուհանին, անցավ անկյունից անկյուն, որքան այդ թույլ էր տալիս նրա խցիկի նեղվածքը, և... դարձյալ նստեց բազմոցին։ Նա կարծես բոլորովին թարմացել էր. դարձյալ մաքառում, ուրեմն ելք է գտնվել։

«Այո, ուրեմն ելք է գտնվել, թե չէ ամեն ինչ հեղձուցիչ էր դարձել, խցվել, տանջալից ցավ էր պատճառում, ինչ-որ շշմածություն էր տիրում»։ Պորֆիրիի մոտ Նիկոլայի հետ եղած դեպքից հետո նա, Ռասկոլնիկովը, շնչասպառ էր լինում անելք վիճակում, անձկության մեջ։ Այնուհետև, նույն օրը տեղի ունեցավ խոսակցություն Սոնյայի հետ. ինքն այդ խոսակցությունը տարավ ու վերջացրեց բոլորովին, բոլորովին ոչ այնպես, ինչպես առաջ կարող էր երևակայել... նշանակում է բոլորովին, վայրկենապես, միանգամից թուլացել էր։ Բայց չէ՞ որ այն պահին ինքը համաձայնել էր Սոնյայի հետ, սրտանց համաձայնել էր, որ ինքը մենակ, այդպիսի հոգեվիճակում անկարող է ապրել։ Իսկ Սվիդրիգայլո՞վը։ Սվիդրիգայլովը հանելուկ է... Սվիդրիգայլովը անհանգստացնում է նրան, այդ ճշմարիտ է, բայց ուրիշ կողմից։ Ինքը գուցե և մաքառելու է Սվիդրիգայլովի դեմ։ Սվիդրիգայլովը գուցե նույնպես մի ամբողջ ելք է. բայց այլ բան է Պորֆիրին։

Այդպես ուրեմն, Պորֆիրին ինքն է բացատրություններ տվել Ռազումիխինին, հոգեբանական բացատրություններ է տվել։ Սկսել է դարձյալ մեջտեղ բերել իր անիծված հոգեբանությունը։ Մի՞թե Պորֆիրին թեկուզ մի բոպե կհավատա, թե Նիկոլայը հանցավոր է, և դա այն ամենից հետո, ինչ որ այն ժամանակ եղավ իր և Պորֆիրիի միջև, Նիկոլայի դալուց առաջ երես առ երես տեղի ունեցած այն խոսակցությունից հետո, որի կապակցությամբ չի կարելի գտնել ճիշտ մեկնաբանություն, բացի միայն մեկ մեկնաբանությունից։ (Ռասկոլնիկովը այդ օրերին մի քանի անգամ վերհիշում և

աղոտ պատկերանում էր Պորֆիրիի հետ ունեցած այն ամբողջ խոսակցության ստանձին մասերը. ամբողջ խոսակցությունը վերհիշելը անտանելի էր նրա համար)։ Այն ժամանակ նրանք իրար այնպիսի խոսքեր էին ասել, այնպիսի շարժումներ ու ժեստեր էին արել, այնպիսի հայացքներ էին փոխանակել, որոշ բաներ այնպիսի ձայնով էին ասվել, բանը այնտեղ էր հասել, որ դրանից հետո Նիկոլայը (որին Պորֆիրին պարզ հասկացավ հենց առաջին խոսքից ու շարժումից) չէր կարող խախտել Պորֆիրիի համոզմունքների բուն իսկ հիմքը։

«Եվ ի՞նչ։ Նույնիսկ Ռազումիխինն էլ է սկսել կասկածանք տանել։ Այն ժամանակ միջանցքում, լամպի տակ եղած խոսակցությունը իզուր չի անցել։ Եվ ահա նա վազել է Պորֆիրիի մոտ... բայց սա ինչի՞ համար է նրան այդպես խաբել։ Ի՞նչ նպատակով է Ռազումիխինի աչքերը դարձրել Նիկոլայի վրա։ Ոչ, նա անպայման ինչ-որ բան է մտածել. այստեղ դիտավորություններ կան, բայց ի՞նչ դիտավորություններ։ Հշմարիտ է, այն առավոտից շատ, շատ-շատ ժամանակ է անցել, իսկ Պորֆիրիի մասին ոչ մի լուր չկար։ Եվ ի՞նչ, դա, իհարկե, ավելի վատ է...»։ Ռասկոլնիկովը վերցրեց գլխարկը, ու մտախոհ քայլեց դեպի դուռը։ Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում առաջին անգամ նա իրեն զգաց գոնե առողջ հոգեվիճակում։ «Հարկավոր է գործը վերջացնել Սվիդրիգայլովի հետ,— մտածում էր նա,— և որքան կարելի է շուտ, ինչ կերպ էլ որ լինի. կարծեմ նա էլ է սպասում, որ ես ինքս գնամ իր մոտ»։ Եվ այդ ակնթարթում նրա հոգնատանջ սիրտը այնպիսի ատելությամբ լցվեց, որ գուցե նա կարողանար սպանել նրանցից որևէ մեկին՝ Սվիդրիգայլովին կամ Պորֆիրիին։ Գոնե նա զգաց, որ եթե ոչ այժմ, ապա հետագայում ինքը կկարողանա այդ անել։ «Տեսնենք, տեսնենք», կրկնում էր նա մտքում։

Դուռը բացեց թե չէ, հանկարծակի հանդիպեց Պորֆիրիին։ Սա ներս մտավ։ Ռասկոլնիկովը մի բոպե քարացավ, բայց միայն մի բոպե։ Տարօրինակ բան. նա այնքան էլ չզարմացավ Պորֆիրիի գալու վրա և գրեթե չվախեցավ նրանից։ Նա միայն ցնցվեց, բայց արագ, վայրկենապես զգաստացավ։ «Գուցե սա վախճա՞նն է։ Բայց ի՞նչպես է։

որ նա մոտեցավ կամացուկ, կատվի պես, ու ես ոչինչ չըսեցի։ Մի՞թե ականջ էր դնում»։

— Չէ՛ք սպասում հյուրին, Ռոդիոն Ռոմանիչ,— ծիծաղելով ասաց Պորֆիրի Պետրովիչը։ — Վազուց էի ուզում գալ, անցնում եմ տան կողքից, մտածում եմ՝ ինչու չայցելեմ մի հինգ րոպեով։ Ուզում եք դնա՞լ։ Չեմ խանգարի։ Միայն թե մի պապիրոս ծխեմ, եթե թույլ կտաք...

— Դե նստեցեք, Պորֆիրի Պետրովիչ, նստեցեք,— ասաց Ռասկոլնիկովը այնպիսի առերևույթ, գոհ ու բարեկամական տեսքով, որ իրոք ինքն էլ կզարմանար իր վրա, եթե կարողանար իրեն նայել։ Վախի մնացորդները, տագանջները չքացան։ Երբեմն մարդ այդպես կես ժամ մահացու վախ է զգում ավաղակից, իսկ երբ դանակը գնում են նրա կոկորդին, ապա այստեղ նույնիսկ վախն էլ է անցնում։ Ռասկոլնիկովը նստեց Պորֆիրիի դիմաց և անթարթ նայում էր նրան։ Պորֆիրին կկոցեց աչքերը և վառեց պապիրոսը։

«Դե խոսիր, է՛, խոսիր,— կարծես թե այդ բառերը ուզակի ուզում էին դուրս թռչել Ռասկոլնիկովի սրտից։ — Հը՛, ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ դու չես խոսում»։

III

— Օ՛ֆ, այս պապիրոսնե՛ր,— վերջապես, խոսեց Պորֆիրի Պետրովիչը, վերջացրեց ծխելը ու շունչ առավ,— վնասակար են, բոլորովին վնասակար, բայց չեմ կարողանում թողնել։ Հազում եմ, կոկորդումս խզզոց կա, ու շնչարգելություն ունեմ։ Ես, դիտե՞ք, վախկոտ եմ, նորեքս գնացի Բ.-ի մոտ. յուրաքանչյուր հիվանդին minimum կես ժամ է նայում. նայելով ինձ, նա նույնիսկ ծիծաղեց. է՛լ մատներով թիթփացնել, է՛լ ականջ դնել. ձեզ,— ասում է,— ի միջի այլոց ծխախոտը վնաս է. թոքերդ լայնացած են։ Իսկ ես ծխելը ի՞նչպես թողնեմ, ինչո՞վ փոխարինեմ։ Չեմ խմում, ահա և ամբողջ փորձանքը, քա՛հ-քա՛հ-քա՛հ, փորձանք է, որ չեմ խմում։ Ամեն ինչ հարաբերական է, Ռոդիոն Ռոմանիչ, ամեն ինչ հարաբերական է։

«Սա իր առաջվա պաշտոնական ձևամոլությո՞ւնն է մեջտեղ բերում, թե ինչ», զզվանքով մտածեց Ռասկոլնիկովը։

Նա հանկարծակի վիրհիշեց իր և Պորֆիրիի վերջին հանդիպման ամբողջ տեսարանը, ու նրա սրտով մեկ հոլովեց այն ժամանակվա կգացումը։

— Երեկ չէ մյուս օրը երեկոյան ես եկա ձեզ մոտ. դուք այդ չգիտե՞ք,— շարունակեց Պորֆիրի Պետրովիչը՝ դիտելով սենյակը,— մոտ այստեղ, հենց այս սենյակը։ Ինչպես և այսօր, անցնում էի այս տան կողքից ու որոշել էի այցելել ձեզ։ Եկա, սենյակի դուռը բոլորովին բաց էր. դես-դեն նայեցի, սպասեցի, ձեր աղախնին ոչինչ չասացի ու գնացի։ Դուռը չե՞ք փակում։

Ռասկոլնիկովի դեմքը ավելի ու ավելի էր մռայլվում։ Պորֆիրին կարծես կռահեց նրա մտքերը։

— Բացատրվելու եմ եկել, սիրելի Ռոդիոն Ռոմանիչ, բացատրվելու։ Պետք է ձեր առաջ բացատրվեմ և պարտավոր եմ բացատրվել,— ժպտալով շարունակեց նա և նույնիսկ ձեռքերով թեթևակի թխկացրեց Ռասկոլնիկովի ծնկին, բայց համարյա նույն ակնթարթում նրա դեմքը հանկարծ լուրջ և մտահոգ արտահայտություն ստացավ. նույնիսկ կարծես թե ախուրությամբ պատեց, և դա զարմանք պատճառեց Ռասկոլնիկովին։ Սա դեռ երբեք չէր տեսել ու չէր ենթադրել այդպիսի արտահայտություն Պորֆիրիի դեմքին։ — Վերջին անգամ մեր մեջ տարօրինակ խոսակցություն եղավ, Ռոդիոն Ռոմանիչ։ Ասենք մեր առաջին տեսակցության ժամանակ էլ մեր մեջ նույնպես տարօրինակ խոսակցություն տեղի ունեցավ, բայց այն օրը... էհ, հիմա արդեն ամեն ինչ միևնույն բանին է հանգում։ Ահա թե ինչ. ես գուցե և շատ մեղավոր եմ ձեր առաջ. ես այդ զգում եմ։ Հիշո՞ւմ եք, թե մենք ինչպես բաժանվեցինք. ձեր ներվերը անհանգիստ էին և ծնկատակերը դողում էին, իմ ներվերն էլ անհանգիստ էին ու ծնկատակերս դողում էին։ Եվ գիտե՞ք, այն ժամանակ ինչ-որ եղավ մեր մեջ, մի տեսակ անպատշաճ էր, ջենտլմենական չէր։ Իսկ մենք այնուամենայնիվ հո ջենտլմեններ ենք. այսինքն, համենայն դեպս, ամենից առաջ ջենտլմեններ ենք. այդ պետք է հասկանալ. հիշո՞ւմ եք, թե բանը որտեղ էր հասնում... նույնիսկ բոլորովին անվայելուչ էր այդ ամենը։

«Այս ի՞նչ է, սա ինձ ինչի՞ տեղ է դնում», ապշած հարց-

նում էր Ռասկոլնիկովը ինքն իրեն՝ մի փոքր բարձրացնելով գլուխը և ակնապիշ նայելով Պորֆիրիին։

— Ես մտածել եմ, որ ավելի լավ է մենք հիմա անկեղծորեն վարվենք,— շարունակեց Պորֆիրի Պետրովիչը՝ մի փոքր ետ տանելով գլուխը ու խոնարհելով աչքերը։ Նա կարծես չէր ցանկանում իր հայացքով վերստին շփոթեցնել իր առաջվա զոհին և կարծես անտեսում էր իր առաջվա պրիոմներն ու խորամանկություններ։— Այո, այդպիսի կասկածանքներն ու այդպիսի խոսակցությունները չեն կարող երկար շարունակվել։ Այն ժամանակ մեզ դպրոցական Նիկոլայը, թե չէ ես չկիանեմ էլ, թե մեր միջ բանը ուր կհասներ։ Այդ անիծված բուզրենին այն ժամանակ նստել էր միջնորմի հետևում, կարո՞ղ եք այդ պատկերացնել։ Դուք, իհարկե, այդ արդեն դիտեք. ինձ էլ հայտնի է, որ նա հետո ձեզ մոտ է եկել. բայց ինչ-որ դուք այն ժամանակ ենթադրեցիք, չէր եղել. ես ոչ ոքի չէի կանչել և ոչ մի կարգադրություն չէի արել։ Դուք կհարցնեք, թե ինչո՞ւ կարգադրություն չէի արել։ Ինչպե՞ս ասեմ ձեզ. այդ ամենը կարծես ինձ էլ էր շփոթեցրել։ Դոնապաններին կանչելու մասին էլ ես հազիվ կարգադրություն արեցի։ (Երևի անցնելիս նկատեցիք դոնապաններին)։ Այն ժամանակ ես կայծակի արագությամբ մի միտք հղացա. գիտե՞ք, ես հաստատուն համոզմունքի էի հանգել, Ռոդիոն Ռոմանիչ։ Մտածեցի, որ թեկուզ մի բան ձեռքիցս բաց թողնեմ, մի ուրիշ բանի պոչից կբռնեմ. գոնե իմ տրամադրության տակ եղածը աչքաթող չեմ անի։ Բնությունից դուք շատ ջղայնոտ եք, Ռոդիոն Ռոմանիչ. նույնիսկ չափազանց ջղայնոտ եք ձեր բնավորության և սրտի մյուս բոլոր հիմնական հատկություններով հանդերձ, ես լիահույս եմ դրանում։ Դե իհարկե, նույնիսկ այն ժամանակ էլ ես կարող էի մտածել, թե միշտ չի պատահում, որ մարդ տեղից վեր կենա ու բերանից թոցնի ամբողջ գաղտնիքը։ Այդ թեև պատահում է, մանավանդ, երբ մարդուն հանում ես վերջին համբերությունից, բայց, համենայն դեպս, դա հազվադեպ է լինում։ Ես կարող էի այդպես էլ դատել։ Ոչ,— մտածում էի,— ինձ թեկուզ մի փոքրիկ փաստ է հարկավոր, թեկուզ ամենաչնչին մի փաստ, միայն մեկը, բայց այնպիսին, որից կարելի լիներ կառչել, որը իրական լիներ, ու չհիմնվեի մի-

այն հոգեբանության վրա։ Մտածում էի, որ եթե մարդը հանցավոր է, ապա, իհարկե, համենայն դեպս կարելի է նրանից մի որևէ էական բան իմանալ։ Կարելի է նույնիսկ բոլորովին անսպասելի հետևանքի հասնել։ Ես այն ժամանակ ձեր բնավորության վրա էի հույս դնում, Ռոդիոն Ռոմանիչ, ամենից շատ ձեր բնավորության վրա։ Ես մեծապես հուսով էի ձեր նկատմամբ։

— Բայց դուք... դուք ինչո՞ւ եք հիմա շարունակ այդպես խոսում,— վերջապես, քրթմնջաց Ռասկոլնիկովը՝ նույնիսկ առանց լավ իմաստավորելու հարցը։ «Ինչի՞ մասին է սա խոսում, տարակուսում էր նա, մի՞թե իսկապես ինձ անմեղ է համարում»։

— Ինչու եմ այսպես խոսո՞ւմ։ Ախր բացատրվելու եմ եկել, այսպես ասած, դա իմ սուրբ պարտքն եմ համարում։ Ուզում եմ հիմնովին շարադրել ամեն ինչ, այսպես ասած, այն ժամանակվա ամբողջ անորոշության ամբողջ պատմությունը։ Ես ձեզ շատ տանջանք եմ պատճառել, Ռոդիոն Ռոմանիչ։ Ես հրեշ չեմ։ Ես հո ինքս էլ եմ հասկանում, որ այդ ամենը դժվարությամբ կտանի ընկճված, բայց հպարտ, ամբակազմ ու անհամբեր, մանավանդ անհամբեր մարդը։ Համենայն դեպս, ես ձեզ համարում եմ առավելապես ազնիվ և նույնիսկ մեծահոգության սաղմերով օժտված մի մարդ, թեպետև համաձայն չեմ ձեր բոլոր համոզմունքներին. պարտք եմ համարում այդ մասին հայտարարել առաջուց, շիտակությամբ և լիակատար անկեղծությամբ, որովհետև նախ և առաջ չեմ ցանկանում խաբել։ Ճանաչելով ձեզ, ձեր հանդեպ համակրանք զգացի։ Գուցե դուք ծիծաղո՞ւմ եք իմ այս խոսքերի վրա։ Իրավունք ունեք։ Գիտեմ, որ դուք ինձ հենց առաջին հայացքից չսիրեցիք, որովհետև իրոք սիրելու բան չկա։ Բայց ինչ ուզում եք մտածեցեք, իսկ հիմա ես ցանկանում եմ բոլոր միջոցներով մեղմել իմ թողած տպավորությունը և ապացուցել, որ ես էլ սիրտ ու խիղճ ունեցող մարդ եմ։ Անկեղծորեն եմ ասում։

Պորֆիրի Պետրովիչը մի փոքր կանգ առավ արժանապատվություն արտահայտող տեսքով։ Ռասկոլնիկովը ինչոր մի նոր վախի հորդում զգաց։ Այն միտքը, թե Պորֆիրին նրան անմեղ է համարում, հանկարծ սկսեց վախեցնել նրան։

— Հազիվ թե հարկավոր է մի առ մի պատմել այն ամենը, թե ինչպես այն ժամանակ դա սկսվեց,— շարունակեց Պորֆիրի Պետրովիչը։ — Ես կարծում եմ, որ դա նույնիսկ ավելորդ է։ Ես էլ հազիվ թե կարողանամ պատմել։ Ոչովհետև ինչպե՞ս դա հանդամանորեն բացատրեմ։ Սկզբում լուրեր էին պտտվում։ Թե ինչ լուրեր էին դրանք, ումից էին ու երբ էին տարածվել... Թե իսկապես ինչ առիթով էր բանը ձեզ հասել, իմ կարծիքով այդ էլ ավելորդ է պատմել։ Անձամբ ինձ մոտ բանը սկսվեց պատահականությունից, բոլորովին անակնկալ պատահականությունից, որը իբրև կարող էր լինել և կարող էր չլինել։ Ի՞նչ էր դա։ Հը՛մ, կարծում եմ, որ նույնպես կարիք չկա ասել։ Այդ ամենը, թե լուրերը և թե պատահականությունները այն ժամանակ զուգադիպեցին իմ մի մտքին։ Անկեղծորեն եմ ասում, եթե խոստովանում եմ, ապա ամեն ինչ պետք է խոստովանեմ. ես առաջինը այն ժամանակ ձեզ կասկածի տակ առա։ Պառավի այն նշումները իրերի վրա և այլն, և այլն՝ այդ ամենը դատարկ բան է։ Նման բաներ հարյուրներով կարելի է հաշվել։ Ես նաև առիթ ունեցա մանրամասն իմանալու ուսուցչական թաղամասի գրասենյակում եղած գեղջի մասին, նույնպես պատահաբար, այն էլ ոչ թե հարևանցիորեն, այլ հատկապես արժանահավատ պատմողից, որն ինքն էլ այդ չիմանալով, ղարմանալիորեն պատմեց այդ տեսարանը։ Այդ ամենը հո միևնույն բանին է հանգում, միևնույն բանին, Ռոդիոն Ռոմանիչ, սիրելիս։ Էհ, այստեղ ի՞նչպես կարելի էր որոշ կողմ չդառնալ։ Հարյուր ճագարից երբեք ձի չի կազմվի, հարյուր կասկածանքից երբեք ապացույց չի կազմվի, ահա թե ինչ է ասում անգլիական առածը, իսկ չէ՞ որ դա միայն խելացի խոսք է, իսկ մոլություններից, մոլություններից փորձեցեք գլուխ հանել, չէ՞ որ քննիչն էլ մարդ է։ Ես հիշեցի նաև մի ժուռնալում տպված ձեր հոդվածը, հիշո՞ւմ եք, դեռ ձեր առաջին այցելության ժամանակ մանրամասն խոսեցինք դրա մասին։ Ես այն օրը ձեզ մի քիչ ձեռ առա, բայց այդ նրա համար էր, որ դուք շարունակեիք արտահայտել ձեր մտքերը։ Գրկեում եմ, դուք շատ անհամբեր և հիվանդ եք, Ռոդիոն Ռոմանիչ։ Որ դուք համարձակ եք, մեծամիտ, լուրջ և... զգայուն, շատ զգայուն, այդ ամե-

նը ես արդեն վաղուց գիտեի։ Այդ բոլոր զգացումները ինձ ծանոթ են, ու ես ձեր հոդվածը կարդացի որպես ծանոթ հոդված։ Դա մտահղացվել էր անքուն գիշերներին, մոլեգնության մեջ, սրտի զեղումով և բաբախումով, ճնշված խանդավառությամբ։ Իսկ երիտասարդության մեջ այդ ճնշված, հպարտ խանդավառությունը վտանգավոր է։ Ես այն ժամանակ դա մի փոքր ծաղրի առա, իսկ հիմա ձեզ կասեմ, որ առհասարակ, այսինքն՝ իբրև սիրող, խիստ համակրում եմ գրչի այդ առաջին, երիտասարդական, կաթոգին փորձը։ Մեգ-մշուշ, լարերի հնչյուն մշուշում։ Ձեր հոդվածը անհեթեթ է ու ֆանտաստիկ, բայց դրա մեջ նշմարվում է անկեղծություն, դրա մեջ կա ջահելության անեղծելի հպարտություն, հանդուգն համարձակություն։ Մռայլ է այդ հոդվածը, բայց այդ լավ է։ Ձեր հոդվածը ես այն ժամանակ կարդացի ու պահեցի, պահեցի ու մտածեցի՝ «այս մարդուն պետք է նկատի ունենալ»։ Դե հիմա ասացեք, այսպիսի նախընթաց հանգամանքից հետո ի՞նչպես կարելի է չխորհել հետագայի մասին։ Ա՛խ, տեր ասուած, մի՞թե ես որևէ բան եմ ասում։ Մի՞թե ես հիմա որևէ բան եմ պնդում։ Ես միայն այն ժամանակ նկատի առա։ Այստեղ ի՞նչ կա որ, մտածում էի։ Այստեղ ոչինչ, այսինքն՝ ուղղակի ոչինչ չկա, ու թերևս այդ դատարկ բան է։ Ու նույնիսկ ամենևին էլ վայել չէ, որ ես, քննիչս, տարվեմ դրանով. հրե՛ն, Նիկոլայն է իմ ձեռքի տակ, և արդեն փաստեր էլ կան, ինչ ուզում եք ասեք, փաստերը առկա են։ Նա էլ իր հոգեբանությունն է մեջտեղ բերում. նրանով պետք է զբաղվել, որովհետև դա ֆյանքի և մահվան հարց է։ Ինչի՞ համար եմ ես ձեզ հիմա այս բոլորը ասում. որպեսզի դուք գիտենաք և ձեր մտքում ու սրտում չմեղադրեք այն ժամանակվա իմ չար վարքի համար։ Բայց դա չար չէր, անկեղծորեն եմ ասում, քա՛հ-քա՛հ։ Դուք ի՞նչ եք կարծում, ես այն ժամանակ չե՞մ եղել ձեզ մոտ, խուզարկություն կատարելու համար։ Եղել եմ, եղել, քա՛հ-քա՛հ, եղել եմ, երբ դուք այստեղ հիվանդ պառկած էիք անկողնում։ Ոչ պաշտոնապես, ոչ իբրև քննիչ, բայց եղել եմ։ Ձեր բնակարանում ամեն ինչ զննվեց մանրամասնորեն, մինչև վերջին թելը, բայց umsonst[1]. մտածում էի՝

[1] Ապարդյուն (գերմ.)։

հիմա այդ մարդը կգա, ինքը կգա, այն էլ շատ շուտ. եթե հանցավոր է, անպայման կգա։ Մի ուրիշը չի գա, իսկ սա կգա։ Հիշո՞ւմ եք, թե ինչպես պարոն Ռազումիխինը սկսեց ձեզ մոտ բերանից խոսքեր թռցնել։ Այդ մենք էինք սարքել ձեզ հուզելու համար, մենք դիտմամբ այդպիսի լուր էինք տարածել, որ նա հայտներ ձեզ, իսկ պարոն Ռազումիխինը այնպիսի մարդ է, որ չի կարող վրդովմունք տանել։ Ամենից առաջ ձեր բարկությունը և ձեր բացահայտ համարձակությունը պարոն Զամետովի աչքովն ընկավ. ախր ի՞նչպես կարելի էր պանդոկում հանկարծ բերանից թռցնել՝ «ես եմ սպանել»։ Չափազանց համարձակ, չափազանց հանդուգն վարմունք է դա, ու ես մտածում էի՝ եթե նա հանդուգն է, ապա ուրեմն սարսափելի կոփարար է։ Այն ժամանակ հենց այդպես էլ մտածեցի։ Սպասում եմ։ Անհամբեր սպասում եմ ձեզ, իսկ Զամետովին դուք այն ժամանակ ուղղակի հուպ էիք տվել, և... ախր բանն էլ հենց այն է, որ այդ ամբողջ անիծված հոգեբանությունը կասկածելի է։ Հա՜, սպասում էի ձեզ, ու մեկ էլ կարծես ձեզ ասված տվեց, եկաք։ Սիրոս այնպես էլ թրթռաց։ Էհ, ձեր ինչի՞ն էր պետք այն ժամանակ գալ։ Հիշո՞ւմ եք, թե ներս մտնելիս ինչպես էիք ծիծաղում. ես այդ պահին ամեն ինչ կռահեցի, ասես հայելու մեջ տեսա, իսկ եթե ես ձեզ առանձնապես չսպասեի, ձեր ծիծաղի մեջ էլ ոչինչ չէի նկատի։ Ահա թե ինչ է նշանակում տրամադրված լինել։ Պարոն Ռազումիխինն էլ եկավ։ Հա՜, քա՜րը, քա՜րը, հիշո՞ւմ եք քարը, որի տակ իրերն են պահված։ Կարծես այն տեսնում եմ ինչ-որ մի տեղ, բանջարանոցում, դուք հո ասել էիք՝ բանջարանոցում, ասել էիք Զամետովին, հետո էլ ինձ մոտ, երկրորդ անգամ։ Իսկ երբ մենք սկսեցինք աչքի անցկացնել ձեր հոդվածը, տնտղել նրա շարադրվածքը, նկատեցինք, որ ձեր յուրաքանչյուր բառը կրկնապատիկ իմաստ ունի, ասես դրա տակ մի ուրիշ բառ էլ է թաքնված։ Եվ ահա, Ռոդիոն Ռոմանիչ, ես այդ կերպ հասա մինչև վերջին սյուները, ու երբ ճակատովս զարնվեցի դրանց, ուշքի եկա։ Ոչ, ասում եմ, այս ի՞նչ եմ անում։ Չէ՞ որ եթե ուզենաս, ասում եմ, կարող ես այս ամենը ուրիշ կողմից բացատրել, նույնիսկ ավելի բնական դուրս կգա։ Ինքս հո ինձ եմ խոստովանում, որ ավելի բնական

դուրս կգա։ Տանջանք էր, էլի։ «Ոչ, մտածում եմ, ավելի լավ է ես գեթ մի փոքրիկ փաստ ունենամ...»։ Ու երբ այն ժամանակ ես լսեցի այն զանգահարությունների մասին, նույնիսկ ուղղակի քարացա, նույնիսկ մարմնովս դող անցավ։ Էհ, մտածում եմ, ահա և փոքրիկ փաստը։ Հենց այդ է որ կա։ Ու էլ գլուխ չէի կոտրում, ուղղակի չէի ուզում։ Սեփական փողերիցս հաղար ռուբլի կտայի, որպեսզի իմ աչքերավ ձեզ նայեի այն բոպեներին, երբ դուք հարյուր քայլ գնում էիք քաղքենու կողքից, որը ձեզ դեմ առ դեմ «մարդասպան» էր անվանել, և ամբողջ հարյուր քայլ անցնելիս չհամարձակվեցիք նրան որևէ բան հարցնել... Հապա մեջքի սարսո՞ւռը, հապա այդ զանգահարությունն՝ը հիվանդ, կիսազառանցական վիճակում։ Այսպես ուրեմն, Ռոդիոն Ռոմանովիչ, այդ ամենից հետո էլ ինչո՞ւ եք զարմանում, որ ես այն ժամանակ ձեզ հետ այդպիսի կատակներ էի անում։ Եվ ինչո՞ւ դուք հենց այն բոպեին եկաք։ Կարծես թե ինչ-որ մեկը մղում էր ձեզ, ասուված վկա, իսկ եթե Նիկոլայը մեղ չբաժաներ, ապա... Իսկ Նիկոլային հիշո՞ւմ եք, լա՞վ եք միտներդ պահել։ Չէ՞ որ դա ամպրոպ էր, չէ՞ որ ամպրոպն էր ճայթել ամպից, շանթ ու կայծակ էր։ Իսկ ես ինչպե՞ս ընդունեցի նրան։ Մաղաչափ անգամ չհավատացի ամպրոպին, ինքներդ բարեհաճեցիք տեսնել։ Եվ ի՞նչ։ Հետո, երբ նա սկսեց միանգամայն ու միանգամայն սահուն պատասխանել իմ մի քանի հարցերին, ես խիստ զարմացա, հետո էլ նրան բոլորովին չհավատացի։ Ահա թե ինչ է նշանակում ադամանդի պես պինդ լինել։ Ոչ,— մտածում եմ,— մորդեն ֆրի, այստեղ ի՞նչ գործ ունի Նիկոլայը։

— Ռազումիխինը քիչ առաջ ինձ ասաց, որ դուք հիմա էլ եք մեղադրում Նիկոլային, և ինքներդ հավատացրել եք նրան, Ռազումիխինին...

Ռասկոլնիկովի շունչը բռնվեց ու նա չվերջացրեց խոսքը։ Նա անասելի հուզմունքով էր լսում, թե ինչպես այդ մարդը, որը մինչև ուղն ու ծուծը հասկացել էր իրեն՝ Ռասկոլնիկովին, ուրանում էր ինքն իրենն։

— Պարոն Ռազումիխի՞նը,— գոչեց Պորֆիրի Պետրովիչը, կարծես ուրախանալով շարունակ լռող Ռասկոլնիկովի խոսելուց,— քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Պարոն Ռազումիխինին այդ-

պես էլ հարկավոր էր վտարել. երկուսով լավ է, երրորդը թող քիթը չխոթի։ Պարոն Ռազումիխինը ուրիշ է, կողմնակի մարդ է, եկել էր ինձ մոտ, խիստ գունատված էր... Է՜հ, աստված նրա հետ, ինչո՞ւ նա խառնվի այս գործին։ Իսկ Նիկոլայի մասին կուզեի՞ք իմանալ, թե այդ ինչ սյուժե է, այսինքն՝ ինչպես որ ես հասկանում եմ նրան։ Նախ և առաջ նա դեռ անչափահաս երեխա է ու վախկոտ չէ, այնպես, էլի, որևէ արվեստագործի պես մի բան է։ Իրավ, դուք մի ծիծաղեք, որ ես նրան այսպես եմ բնութագրում։ Անմեղ է և ամեն բանի ընկալունակ։ Ջգայուն է, ցնորամիտ։ Նա երգում է, պարում, ասում են՝ այնպես է հեքիաթներ պատմում, որ ուրիշ տեղերից հավաքվում են լսելու։ Դպրոց է գնում, քրքջում է նվաղելու չափ, թեկուզ չնչին առիթով, հարբում է անզգայանալու չափ, ոչ թե փչացած լինելով, այլ այնպես, երբեմնակի, երբ խմեցնում են, դեռ մանկականորեն։ Այն ժամանակ էլ գողություն էր արել, բայց ինքն էլ այդ չգիտե։ «Եթե գետնին ընկածն եմ վերցրել, դա ի՞նչ գողություն է», ասում է նա։ Արդյոք հայտնի՞ է ձեզ, որ նա հերձվածողներից է, այն էլ ոչ թե հերձվածողներից, այլ ուղղակի աղանդավոր է, նրա ցեղում աղանդավորներ են եղել, և նա ինքը դեռ վերջերս ամբողջ երկու տարի եղել է գյուղում, ինչ-որ վանականի հոգևոր խնամակալության տակ։ Այս ամենը ես Նիկոլայից և նրա ընկերակիցներից եմ իմացել։ Եվ ի՞նչ։ Ուզում էր ուղղակի վանք փախչել։ Այդպիսի ձգտում ուներ, գիշերները աղոթում էր աստծուն, հին, «ճշմարիտ» գրքեր էր կարդում և դրանցով հափշտակվում։ Նրա վրա խիստ ազդեց Պետերբուրգը, մանավանդ կանացի սեռը, նաև գինին։ Ընկալունակ է, վանականին էլ, ամեն ինչ էլ մոռացել է։ Ինձ հայտնի է, որ մի նկարիչ սիրեց նրան, սկսեց հաճախել նրա մոտ, և ահա տեղի ունեցավ այս դեպքը։ Ու նա վհատվեց. ի՞նչ անել. կախվե՞լ, փախչե՞լ։ Ի՞նչպես վերաբերվել այն հասկացողությանը, որ ժողովրդի մեջ առաջացել է մեր իրավաբանության նկատմամբ։ Ոմանց հո սարսափեցնում է «կդատապարտեն» բառը։ Ո՞վ է մեղավոր։ Ինչ-որ բան կասեն նոր դատարանները։ Օ՜ֆ, աստված տա։ Հա՜, երևում է, որ Նիկոլայը բանտում հիշել է աղնվաբարո վանականին. Աստվածաշունչը նույնպես մեջտեղ է եկել։ Գի-

տե՞ք արդյոք, Ռոդիոն Ռոմանիչ, նրանցից ոմանց համար ինչ է նշանակում «տառապել», այն էլ ոչ թե որևէ մեկի համար, այլ հենց այնպես, «տառապել». այսինքն թե տառապանք ընդունել, առավել ևս իշխանություններից։ Իմ պաշտոնավարության ժամանակ մի հեղաբարո կալանավոր մի ամբողջ տարի նստած էր բանտում, գիշերները վառարանի վրա շարունակ աստվածաշունչ էր կարդում, ու հափշտակվեց գրանով, գիտե՞ք, բոլորովին հափշտակվեց, բանը այնտեղ հասավ, որ առանց որևէ առիթի վառարանից մի աղյուս պոկեց ու շպրտեց պետի վրա, թեև վերջինս նրան ոչնչով չէր վիրավորել։ Եվ ի՞նչպես շպրտեց. դիտմամբ նրանից մի արշին հեռու գցեց, որպեսզի վնաս չպատճառի։ Դե, հայտնի բան է, թե ինչպիսի վախճան է սպասում այն կալանավորին, որը զենքով հարձակվում է պետերի վրա. ուրեմն այդ կերպ «տառապանք ընդունեց»։ Եվ ահա ես այժմ ենթադրում եմ, որ Նիկոլայը ուզում է «տառապանք ընդունել», կամ դրա պես մի բան։ Ես այդ գիտեմ հաստատապես, նույնիսկ փաստերից։ Միայն թե ինքը չգիտե, որ ես այդ գիտեմ։ Մի՞թե հնարավոր չեք համարում, որ այդ աղանդավորներից նման ցնորամիտներ դուրս կգան։ Ինչքան կուզեք։ Վանականը էլի տկսել է ազդել նրա վրա, Նիկոլայը նրան առանձնապես վերհիշել է կախվելու փորձից հետո։ Ասենք, ինքը ամեն ինչ կպատմի ինձ, կգա։ Դուք կարծում եք, կհամառի՞։ Սպասենք, դեռ կբացվի։ Ժամ առ ժամ սպասում եմ, որ կգա իր ցուցմունքներից հրաժարվելու։ Ես այդ Նիկոլային սիրեցի և մանրակրկիտորեն հետազոտում եմ նրան։ Եվ ի՞նչ էիք կարծում, քա՜հ-քա՜հ, որոշ հարցերի միանգամայն սահուն էր պատասխանում ինձ, ակներևաբար հարկավոր տեղեկություններ էր ստացել, մի լավ պատրաստվել. իսկ ուրիշ հարցերից ուղղակի անտեղյակ է, ոչինչ չգիտե, չի իմանում, ու ինքն էլ չի ենթադրում, որ չգիտե։ Ոչ, պատվելի Ռոդիոն Ռոմանիչ, այստեղ Միկոլկան գործ չունի։ Այստեղ գործը ֆանտաստիկ է, մռայլ, արդիական, մեր ժամանակի դեպք է, երբ մթագնել է մարդկային սիրտը, երբ մեջ է բերվում միայն այն ֆրազը, թե արյունը «թարմացնում է», երբ քարոզվում է, թե ամբողջ կյանքը կոմֆորտով պետք է լինի։ Այստեղ գրքային երազանքներ են, այս-

տեղ թեորիապես ջղագրգիռ սիրտ կա. այստեղ առաջին քայլն անելու վճռականություն է երևում, բայց այդ վճռականությունը մի առանձին տեսակի է. և ահա մեկը վճռեց տվյալ քայլն անել, բայց կարծես սարից գլորվեց կամ զանգակատնից ընկավ, ու ասես ուրիշի ոտքերով գնաց ոճիր կատարելու։ Մոռացավ մուտքի դուռը փակել, ու սպանեց, սպանեց երկուսին, ըստ թեորիայի։ Սպանեց, բայց չկարողացավ փողերը վերցնել, իսկ ինչ-որ կարողացավ վերցնել, տարավ քարի տակ դրեց։ Բավական չէր, որ տանջվեց դըռան ետևում, երբ դուռը ծեծում էին ու զանգակն էր զնգում, ոչ, նա հետո կիսազառանցական վիճակում գնաց դատարկ բնակարանը, փորձեց էլի լսել այդ զանգակի ձայնը, դարձյալ մեջքի սարսուռ զգալ... Դե, ասենք թե այդ եղավ հիվանդ վիճակում, բայց արի ու տես, որ սպանել է, իսկ իրեն ազնիվ մարդ է համարում, արհամարհում է մարդկանց, դալուկ հրեշտակի պես շրջում. ոչ, այստեղ ի՞նչ Նիկոլայ, ի՞նչ բան, սիրելի Ռոդիոն Ռոմանիչ, այստեղ Նիկոլայը գործ չունի։

Այն ամենից հետո, ինչ որ առաջ ասվել էր և այնքան նման էր Ռասկոլնիկովին մեղադրելուց հրաժարվելուն, այս վերջին խոսքերը արդեն չափազանց անսպասելի էին։ Ռասկոլնիկովը ամբողջ մարմնով դողաց, կարծես խոցված լիներ։

— Ուրեմն... ո՞վ է... սպանել...— հարցրեց նա խեղդվող ձայնով, էլ չկարողանալով իրեն պահել։ Պորֆիրի Պետրովիչը նույնիսկ ընկավ աթոռի թիկնակին, որպես թե այդ հարցը անսպասելի էր և նրան զարմանք պատճառեց։

— Ինչպե՞ս թե ով է սպանել...— ասաց նա՝ կարծես չհավատալով իր ականջներին,— ախր դուք եք սպանել, Ռոդիոն Ռոմանիչ։ Հենց դուք եք սպանել,— ավելացրեց նա համարյա շշնջալով, լիակատար համոզվածություն արտահայտող ձայնով։

Ռասկոլնիկովը վեր թռավ բազմոցից, կանգնեց մի քանի վայրկյան, և առանց մի բառ ասելու կրկին նստեց։ Նրա ամբողջ դեմքով հանկարծ թեթև չղաձգություն անցավ։

— Ձեր շրթունքը էլի ցնցվում է ինչպես այն ժամանակ,— կարծես նույնիսկ կարեկցելով, քրթմնջաց Պորֆիրի Պետ-

բովիչը։ — Կարծեմ դուք ինձ սխալ հասկացաք, Ռոդիոն Ռոմանիչ,— մի փոքր լռելուց հետո ավելացրեց նա,— դրա համար էլ այդպես զարմացաք։ Ես եկել եմ, որպեսզի ամեն ինչ ասեմ, և գործը բացեիրաց տանեմ։

— Ես չեմ սպանել,— շշնջաց Ռասկոլնիկովը փոքրիկ, վախեցած երեխաների պես, որոնց բռնում են հանցանքի տեղում։

— Ոչ, դուք եք սպանել, Ռոդիոն Ռոմանիչ, դուք, և ոչ թե մեկ ուրիշը,— համոզված և խստորեն շշնջաց Պորֆիրին։

Երկուսն էլ լռեցին, ու լռությունը տևեց նույնիսկ չափից դուրս երկար, մոտ տասը րոպե։ Ռասկոլնիկովը կրթնել էր սեղանին ու մատներով լուռ տնազում էր մազերը։ Պորֆիրի Պետրովիչը նստել էր հանգիստ ու սպասում էր։ Հանկարծ Ռասկոլնիկովը արհամարհանքով նայեց Պորֆիրիին։

— Դուք էլի հինն եք մեջտեղ բերում, Պորֆիրի Պետրովիչ, էլի ձեր նույն պրիոմները. հիրավի, ինչպե՞ս դա ձեզ չի ձանձրացնում։

— Է-է՛, բավական է, հիմա ինչի՞ս են պետք պրիոմները։ Ուրիշ բան է, եթե այստեղ վկաներ լինեին. թե չէ մենք հո երկուսով ենք փսփսում։ Ինքներդ եք տեսնում, ես նրա համար չեմ եկել ձեզ մոտ, որ ձեզ հետապնդեմ ու որսամ ինչպես նապաստակ։ Խոստովանում եք, թե ոչ, այս րոպեին դա միևնույն է ինձ համար։ Առանց ձեզ էլ իմ համոզմունքը հաստատ է։

— Իսկ եթե այդպես է, ինչո՞ւ եք եկել,— ջղայնոտ հարցրեց Ռասկոլնիկովը։— Ես ձեզ առաջվա խոսքս եմ ասում. եթե դուք ինձ հանցավոր եք համարում, ինչո՞ւ չեք ինձ բանտ ուղարկում։

— Ա՛յ քեզ հարց։ Ես ձեզ կետ առ կետ կպատասխանեմ. նախ՝ ձեզ ուղղակի կալանավորելը ինձ ձեռնտու չէ։

— Ի՞նչպես թե ձեռնտու չէ։ Եթե դուք համոզված եք, ուրեմն պետք է որ...

— Է՛հ, հետո ի՞նչ, որ համոզված եմ։ Չէ՞ որ այդ ամենը առայժմ իմ երազանքն է։ Եվ ինչո՞ւ պետք է ես ձեզ ուղարկեմ այնտեղ հանգստանալու։ Ինքնե՞րդ եք ուզում, թե՞ ինչ։ Ասենք թե ես այն քաղաքենուն բերեմ ձեզ մերկացնելու, դուք

նրան կասեք՝ «հարբա՞ծ ես, ինչ է, ո՞վ է ինձ տեսել ձեզ հետ։ Ես քեզ հենց հարբածի տեղ էի դնում, և իսկապես դու հարբած էիր»։ Այդ դեպքում ես ի՞նչ ասեմ, մանավանդ որ ձեր ասածը ավելի ճշմարտանման կլինի, քան նրա ասածը, որովհետև նրա ցուցմունքը միայն հոգեբանության վրա է հիմնված, որ չի էլ սազում նրա մոութին, իսկ դուք հենց բուն իսկ կետին կխփեք, որովհետև այդ սրիկան օղի է խըմում և նույնիսկ դրանով հայտնի է շատերին։ Ես ինքս էլ հո մի քանի անգամ խոստովանել եմ ձեզ, որ հոգեբանությունը երկսայրի է, ու երկրորդ սայրը ավելի դիպուկ է և ավելի ճշմարտանման, ու դրանից բացի, ձեր դեմ ես առայժմ ոչինչ չունեմ։ Ու թեև ես այնուամենայնիվ ձեզ բանտ կուղարկեմ և նույնիսկ ինքս եմ եկել (դա բոլորովին ընդունված չէ) նախապես ձեզ ամեն ինչ հայտնելու։ Բայց և այնպես շիտակ եմ ասում ձեզ (այդ էլ ընդունված չէ), որ դա ինձ ձեռնտու չի լինի։ Երկրորդ, ես եկել եմ ձեզ մոտ, որովհետև...

— Որովհետև ի՞նչ (Ռասկոլնիկովը դեռ էլի շնչասպառ էր լինում)։

— Ինչպես և սկզբում ասացի, ինձ պարտավոր եմ համարում բացատրվել ձեզ հետ։ Չեմ ուզում, որ դուք ինձ հրեշ համարեք, մանավանդ որ անկեղծորեն համակրում եմ ձեզ, հավատաք, թե չհավատաք։ Երրորդ, դրա հետևանքով էլ ձեզ մոտ եմ եկել բացահայտ ու շիտակ առաջարկով՝ մեղա եկեք, խոստովանեցեք ձեր հանցանքը։ Դա ձեզ համար չափազանց շահավետ կլինի, ինձ համար էլ շահավետ կլինի, որովհետև կազատվեմ գլխացավանքից։ Դե ասացեք, սա անկեղծությո՞ւն է իմ կողմից, թե՞ ոչ։

Ռասկոլնիկովը մի բոպե մտածեց։

— Լսեք, Պորֆիրի Պետրովիչ, դուք հո ինքներդ եք ասում, որ միայն հոգեբանության վրա եք հիմնվում, այնինչ մեջտեղ բերիք մաթեմատիկան։ Դե ի՞նչ կասեք, եթե ինքներդ էլ եք հիմա սխալվում։

— Ոչ, Ռոդիոն Ռոմանիչ, չեմ սխալվում։ Մի փոքրիկ փաստ ունեմ։ Այդ փաստը ես այն ժամանակ էլ ունեի. ասված ուղարկեց։

— Ի՞նչ փաստ։

— Ցեմ ասի, Ռոդիոն Ռոմանիչ։ Համենայն դեպս ձեզ բանտ կուղարկեմ, հիմա այլևս իրավունք չունեմ հետաձգելու։ Դե ուրեմն ինքներդ դատեցեք. հիմա ինձ համար սա միևնույն է, ես միայն ձեզ համար եմ անում այս առաջարկը։ Ասուված վկա բանը ավելի լավ կլինի, Ռոդիոն Ռոմանիչ։

Ռասկոլնիկովը շարախինդ քմծիծաղեց։

— Ախր դա ոչ միայն ծիծաղելի է, դա նույնիսկ անամոթություն է։ Եթե նույնիսկ ես հանցավոր լինեմ (ես այդ ամենևին էլ չեմ ասում), ինչո՞ւ պետք է ձեզ մեղա գամ, երբ դուք ինքներդ եք ասում, թե ես բանտ կնստեմ հանգրստանալու։

— Ռոդիոն Ռոմանիչ, այնքան էլ մի հավատաք խոսքերին. գուցե և հանգստանալու համար չգնաք։ Չէ՞ որ դա միայն թեորիա է, այն էլ իմ թեորիան, իսկ ես ձեզ համար ի՞նչ հեղինակություն եմ, որ։ Ես ինքս էլ գուցե հիմա որոշ բան թաքցնում եմ ձեզնից։ Երկրորդ՝ ինչպե՞ս թե շահավետ չի լինի։ Գիտե՞ք արդյոք, թե մեղա դալու դեպքում որքան կմեղմացվի ձեր հանցանքը։ Դուք ի՞նչ ժամանակ մեղա կըգաք. լավ մտածեցեք. այն ժամանակ, երբ մի ուրիշը իր վրա է վերցրել ամբողջ ոճրագործությունը։ Ես ձեր առաջ հենց աստծով եմ երդվում, գործը այնպես կսարքեմ ու կտանեմ, որ ձեր խոստովանությունը իբր թե բոլորովին անսպասելի կլինի։ Այդ ամբողջ հոգեբանությունը մենք իսպառ կոչրնչացնենք, ձեր նկատմամբ եղած բոլոր կասկածանքները ես ի չիք կդարձնեմ, այնպես որ ձեր ոճրագործությունը մտքի մթագնման հետևանք կհամարվի, քանի որ, խղճով ասած, այդպիսի մթագնում իրոք եղել է։ Ես ազնիվ մարդ եմ, Ռոդիոն Ռոմանիչ, կկատարեմ իմ խոսքը։

Ռասկոլնիկովը տխուր լռեց ու կախեց գլուխը. նա երկար մտածեց և, վերջապես, դարձյալ քմծիծաղ տվեց, բայց նրա ժպիտը արդեն հեգաբարո էր և տրտում։

— Էհ, հարկավոր չէ,— ասաց նա՝ կարծես արդեն ոչինչ չթաքցնելով Պորֆիրիից։ — Չարժե։ Ինձ բոլորովին հարկավոր չէ ձեր մեղմացումը։

— Այ, ես հենց դրանից էի վախենում,— տաքանալով և կարծես ակամա բացականչեց Պորֆիրին,— ես հենց

դրանից էի վախենում, որ դուք կհրաժարվեք մեղմացումից։

Ռասկոլնիկովը տխուր ու սևեռուն նայեց նրան։

— Էյ, կյանքից մի խորշեք,— շարունակեց Պորֆիրին,— Ձեր առջև դեռ շատ բան կլինի։ Ի՞նչպես թե մեղմացում չի հարկավոր, ի՞նչպես թե։ Դուք անհամբեր մարդ եք։

— Իմ առջև ի՞նչ շատ բան կլինի։

— Կյանք։ Դուք ի՞նչ մարգարե եք որ, մի՞թե շատ բան գիտեք։ Որոնեցեք և կգտնեք։ Դուցե ասուած ձեզ դրա համար է պահում։ Այդ շղթան մշտական չէ...

— Մեղմացո՞ւմ կլինի...— ծիծաղեց Ռասկոլնիկովը։

— Ի՞նչ կա որ, բուրժուական ամոթանքի՞ց վախեցաք, թե՞ ինչ։ Դուցե և վախեցաք, բայց ինքներդ էլ այդ չգիտեք, որովհետև քանի դեռ Այնուամենայնիվ դուք չեք, որ պիտի վախենաք կամ ամաչեք մեղա դալուց։

— Է-է՛հ, թքած դրա վրա,— արհամարհանքով ու զզվանքով շշնջաց Ռասկոլնիկովը՝ կարծես խոսել է՛լ չցանկանալով։ Նա դարձյալ վեր կացավ, ասես ուզում էր դուրս գալ որևէ տեղ, բայց կրկին նստեց նկատելի հուսալքմամբ։

— Իհարկե, թքած։ Կորցրել եք ձեր հավատը և կարծում եք, թե ես կոպտաբար շողոքորթում եմ ձեզ։ Բայց մի՞թե դուք շատ եք ապրել, մի՞թե շատ բան եք հասկանում։ Թեորիա եք մոգոնել ու ամաչում եք, որ այն ձախողվել է, որ ամենևին էլ օրիգինալ բան չի ստացվել։ Ստացվել է ստոր արարք, այդ ճշմարիտ է, բայց և այնպես դուք անհուսալիորեն ստոր չեք։ Բոլորովին էլ շատ ստոր մարդ չեք։ Գոնե երկար ժամանակ ինքներդ ձեզ չեք մոլորեցրել, միանգամից եք անցել բանականության սահմաններից։ Ես ձեզ ո՞ւմ տեղ եմ ընդունում. ես ձեզ այնպիսի մարդու տեղ եմ ընդունում, որին թեկուզ կտրատես էլ, կդիմանա, ու ժպտալով կնայի տանջողներին, եթե միայն հավատ կամ աստծուն գտնի։ Դեռ գտնք, ու կապրեք։ Նախ՝ հարկավոր է, որ օդափոխվեք։ Ի՞նչ կա որ, տառապանքն էլ լավ բան է։ Տառապեցեք։ Նիկոլայը գուցե և իրավացի է, որ տառապանք է ուզում։ Գիտեմ, որ հավատ չեք զգում, բայց մի իմաստակեք, ուղղակի առանց առարկելու հանձնվեցեք կյանքին. մի անհանգստանաք, ուղղակի կփրկի ու ոտքի կհանի։ Ինչպե՞ս կփրկի. ես ինչ իմանամ։ Ես միայն հավատում եմ, որ դուք դեռ շատ

եք ապրելու։ Գիտեմ, որ դուք հիմա իմ խոսքերը սերտած խրատի տեղ եք ընդունում. այո, գուցե հետո կհիշեք, երբեմն հարկավոր կլինեն. հենց դրա համար եմ ասում։ Դեռ լավ է, որ դուք միայն մի պառավ եք սպանել։ Իսկ եթե ուրիշ թեորիա մտածեիք, ապա թերևս հարյուր միլիոն անգամ ավելի այլանդակ բան անեիք։ Թերևս պետք է շնորհակալ լինել աստծուց. դուք ի՛նչ գիտեք, գուցե աստված ձեզ պահում է մի բանի համար։ Իսկ դուք մեծ սիրտ ունեցեք և քիչ վախեցեք։ Մի՞թե վախեցել եք առաջիկա մեծ փորձությունից։ Ոչ, այստեղ արդեն ամոթ է վախենալը։ Քանի որ այդպիսի քայլ եք արել, ուրեմն գոտեպնդվեցեք։ Այս է արդարությունը։ Ահա և կատարեցեք, ինչ-որ պահանջում է արդարությունը։ Գիտեմ, որ հավատուրաց եք, բայց, աստված վկա, կյանքը կփրկի։ Հետո ինքներդ ամեն ինչ կսիրեք։ Հիմա ձեզ օդ է հարկավոր, օ՛դ, օ՛դ։

Ռասկոլնիկովը նույնիսկ ցնցվեց։

— Ախր ո՞վ եք դուք,— գոչեց նա,— դուք այդ ի՞նչ մարդարե եք։ Այդ ո՞ր վեհապանծ անդորրության բարձունքից եք գերիմաստուն մարգարեություններ ինձ ասում։

— Ով եմ ե՞ս։ Ես արդեն իմ կյանքն ապրած մարդ եմ, ուրիշ ոչինչ։ Մի մարդ, որ զգացմունքներ ունեցող ու կարեկցող է, անշուշտ որոշ բաներ էլ գիտեցող, բայց արդեն խապառ ապրել է իր կյանքը։ Իսկ դուք ուրիշ եք. ձեզ համար աստված կյանք է պատրաստել (ո՛վ գիտե, գուցե ձեզ համար էլ ամեն ինչ կանցնի ծխի պես, ոչինչ չի մնա)։ Ինչ արած, որ դուք կանցնեք այլ մարդկանց շարքը։ Այդպիսի սիրտ ունենալով, հո չե՞ք ցավելու, որ կոմֆորտից զուրկ կլինեք։ Ի՛նչ արած, որ գուցե երկար ժամանակ ձեզ ոչ ոք չի տեսնի։ Բանը ժամանակը չէ, այլ դուք ինքներդ եք։ Ա՛րև եղեք, ու բոլորն էլ ձեզ կտեսնեն։ Արևը պետք է ամենից առաջ արև լինի։ Դուք ի՛նչ եք դարձյալ ծպտում. որ ես Շիլլերի պե՞ս եմ խոսում։ Գրազ եմ գալիս, դուք ենթադրում եք, թե ես հիմա շողոքորթում եմ ձեզ։ Ի՛նչ կա որ, գուցե և իսկապես շողոքորթում եմ, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Դուք, Ռոդիոն Ռոմանիչ, իմ խոսքերին այնքան էլ մի՛ հավատաք, նույնիսկ եթե էլ լիովին մի՛ հավատաք, այսպես է իմ բնավորությունը, համաձայն եմ. միայն թե ահա ինչ կավելացնեմ.

թե որքան ես ստոր մարդ եմ և որքան ազնիվ եմ, կարծում եմ, որ ինքներդ կարող եք դատել։

— Դուք ինձ ե՞րբ եք ձերբակալելու։

— Կարող եմ մեկ ու կես կամ երկու օր ձեզ ազատ թողնել։ Մտածեցեք, բարեկամս, աղոթեցեք աստծուն։ Այդպես ավելի շահավետ է, աստված վկա, ավելի շահավետ է։

— Իսկ եթե ես փախչե՞մ,— ինչ-որ տարօրինակ քմծիծաղ տալով հարցրեց Ռասկոլնիկովը։

— Ո՛չ, չե՛ք փախչի։ Մուժիկը կփախչի, մոդայական աղանդավորը, ուրիշի մտքի լակեյը կփախչի, որովհետև բավական է միայն մատի ծայրով ցույց տաս ինչպես միշման Դիրկային՝, և նա իր ողջ կյանքում ինչի ասես կհավատաս։ Իսկ դուք հո այլևս չեք հավատում ձեր թեորիային, ինչո՞ւ պիտի փախչեք։ Փախչելով ի՞նչ պիտի անեք։ Փախածի վիճակը դարչելի է ու դժվար, իսկ ձեզ ամենից առաջ հարկավոր է կյանք ու որոշակի դրություն, համապատասխան օդ, իսկ փախչելով ի՞նչ օդ պիտի շնչեք։ Կփախչեք և ինքներդ կվերադառնաք։ Առանց մեզ դուք յոլա չեք գնա։ Իսկ եթե ես ձեզ բանտ նստեցնեմ, մեկ, երկու, երեք ամիս նստելուց հետո, հանկարծ հիշելով իմ խոսքը, ինքներդ կներկայանաք։ և դա թերևս ձեզ համար էլ անսպասելի կլինի։ Մի ժամ առաջ դուք չեք էլ գիտենա, որ կգաք խոստովանելու։ Ես նույնիսկ հավատացած եմ, որ դուք կորոշեք «տառապանք ընդունել»։ Հիմա իմ խոսքերին չեք հավատում, բայց ինքներդ դրա վրա կանգ կառնեք։ Որովհետև տառապանքը մեծ բան է, Ռոդիոն Ռոմանիչ. դուք մի նայեք, որ ես հաստատել եմ, այդ ոչինչ, բայց ես գիտեմ, որ տառապանքի մեջ գազափար կա, մի ծիծաղեք ասածիս վրա։ Նիկոլայը իրավացի է։ Ոչ, չեք փախչի, Ռոդիոն Ռոմանիչ։

Ռասկոլնիկովը վեր կացավ ու վերցրեց գլխարկը։ Պորֆիրի Պետրովիչը նույնպես վեր կացավ։

— Ուզում եք զբոսնելո՞ւ գնալ։ Երեկոյան լավ է եղանակը, միայն թե ամպրոպ չլինի։ Ասենք, ավելի լավ կլինի, եթե օդը թարմանա...

Նա էլ վերցրեց գլխարկը։

— Դուք, Պորֆիրի Պետրովիչ, ամենևին չկարծեք, թե այսօր ես ձեզ խոստովանեցի,— խստորեն ու կտրուկ ասաց

Ռասկոլնիկովը։ — Դուք տարօրինակ մարդ եք, ու ես ձեզ լսում էի միայն հետաքրքրությունից դրդված։ Ես ձեզ ոչինչ չեմ խոստովանել... Սա միտներդ պահեցեք։

— Հա՛, էլի՛, գիտեմ, կհիշեմ. հը՛մ, նույնիսկ դողում է։ Մի անհանգստանաք, սիրելիս. միայն թե չափից դուրս շատ չի կարելի զբոսնել։ Համենայն դեպս ես ձեզնից մի բան եմ խնդրում,— ձայնը ցածրացնելով ավելացրեց Պորֆիրին,— փափուկ հարց է, բայց կարևոր է. եթե համենայն դեպս (ասենք, ես դրան չեմ հավատում և ձեզ այդ բանին անընդունակ եմ համարում), այնպես պատահի, որ դուք այդ քառասուն-հիսուն ժամվա ընթացքում գործը վերջացնեք որևէ այլ կերպ, որևէ ֆանտաստիկ ձևով՝ ինքներդ ձեռք բարձրացնեք ձեզ վրա (սա անհեթեթ ենթադրություն է, բայց դուք սրա համար ներեցեք ինձ), ապա մի կարճ, բայց հանգամանալից գրություն թողեք։ Այնպես, էլի, մի-երկու տող, միայն երկու տող, ու քարն էլ հիշատակեցեք. դա ազնիվ վարմունք կլինի։ Դե՛հ, ցտեսություն... Ցանկանում եմ հաճելի մտքեր, օգտակար նախաձեռնություններ։

Պորֆիրին դուրս ելավ մի տեսակ կորացած և կարծես խուսափելով Ռասկոլնիկովին նայելուց։ Ռասկոլնիկովը մոտեցավ պատուհանին և ջղայնոտ անհամբերությամբ սպասեց այնքան, մինչև որ ըստ իր հաշվի Պորֆիրին դուրս կգար փողոց և կհեռանար։ Հետո ինքն էլ հապճեպ դուրս եկավ սենյակից։

III

Նա շտապում էր գնալ Սվիդրիգայլովի մոտ։ Թե ինչ կարող էր հուսալ այդ մարդուց, նա ինքն էլ չգիտեր։ Բայց այդ մարդը մի ինչ-որ ազդեցություն ուներ նրա վրա։ Մի անգամ այդ գիտակցելով, նա այլևս չէր կարողանում հանգստանալ, ու հիմա հասել էր այդ ամենը պարզելու ժամանակը։

Ճանապարհին նրան առանձնապես տանջում էր մի հարց. արդյոք Սվիդրիգայլովը եղե՞լ էր Պորֆիրիի մոտ։

Նա կարծում էր և լիովին հավատացած էր, որ չէր եղել։ Նա նորից ու նորից մտածեց, հիշեց Պորֆիրիի ամբողջ այցելությունը և հասկացավ, որ չէր եղել, իհարկե, չէր եղել։

Բայց նրա դեռ չի եղել, արդյոք կգնա՞, թե չի գնա Պորֆիրիի մոտ։

Հիմա նրան առայժմ թվում էր, թե չի գնա։ Ինչո՞ւ։ Նա այդ էլ չէր կարողանա բացատրել, բայց եթե կարողանար էլ բացատրել, հիմա դրա վրա առանձնապես գլուխ չէր կոտրի։ Այդ ամենը նրան տանջում էր, ու միևնույն ժամանակ նա գլուխ չուներ դրա հետ։ Տարօրինակ էր, գուցե ոչ ոք դրան չհավատար, բայց նա իրա՞ այժմյան անխուսափելի ճակատագրի մասին մի տեսակ թույլ, ցրվածորեն էր հոգում։ Նրան տանջում էր ինչ-որ մի ուրիշ բան, շատ ավելի կարևոր, արտակարգ, հենց իրեն և ոչ թե ուրիշին վերաբերող ինչ-որ մի ուրիշ, գլխավոր բան։ Այն էլ ասած, նա բարոյական անչափ հոգնածություն էր զգում, թեև նրա բանականությունը այդ առավոտյան ավելի լավ էր աշխատում, քան այդ բոլոր վերջին օրերում։

Եվ արդյոք արժե՞ր հիմա, այն ամենից հետո, ինչ որ եղել էր, չանք թափել հաղթահարելու այդ բոլոր նոր, չնչին դժվարությունները։ Օրինակ, արդյո՞ք արժեր խարդավանել, որ Սվիդրիգայլովը չգնար Պորֆիրիի մոտ, հետամուտ լինել, խմանալ, ժամանակ կորցնել մի ինչ-որ Սվիդրիգայլովի վրա։

Եվ այդ ամենը որքա՞ն ձանձրացրել էր նրան։

Մինչդեռ նա այնուամենայնիվ հապճեպ գնում էր Սվիդրիգայլովի մոտ. գուցե նրանից որևէ նոր բան, ցուցումներ, ե՞լք էր սպասում։ Խեղդվողը հո ծղոտից էլ է բռնում։ Արդյո՞ք ճակատագիրը չէ, բնազդը չէ, որ հանդիպեցնում է նրանց. գուցե և այդ միայն հոգնածություն, հուսալքում էր. գուցե նրան հարկավոր էր ոչ թե Սվիդրիգայլովը, այլ որևէ մեկ ուրիշը, իսկ Սվիդրիգայլովը մեջտեղ էր եկել հենց այնպես, պատահականորեն։ Սոնյա՞ն։ Բայց ինչո՞ւ հիմա ինքը գնար Սոնյայի մոտ։ Դարձյալ նրա արցունքնե՞րը տեսներ։ Սոնյան սարսափելի էր նրա համար։ Սոնյան իրենից ներկայացնում էր անողոք դատավճիռ, անփոփոխ վճիռ։ Նրանք չէին կարող միևնույն ճանապարհով գնալ։ Առանձնապես այդ րոպեին նա ի վիճակի չէր տեսնել Սոնյային։ Ոչ, արդյո՞ք ավելի լավ չէ նախընտրել Սվիդրիգայլովին, տեսնել, թե ինչ դուրս կգա։ Եվ Ռասկոլնիկովը չէր կարող չգիտակցել, որ

Սվիդրիգայլովը արդեն վաղուց կարծես թե իրեն հարկավոր է մի ինչ-որ բանի համար։

Սակայն նրանք իրար հետ ի՞նչ առնչություն կարող են ունենալ։ Նույնիսկ նրանց շարագործություններն էլ չեն կարող միանման լինել։ Բացի դրանից, այդ մարդը խիստ տհաճ էր, ակներևաբար չափազանց փչացած, անպայման խորամանկ ու խաբեբա, գուցե շատ չար։ Նրա մասին այդպիսի լուրեր են պտտվում։ Ճշմարիտ է, նա հոգում էր Կատերինա Իվանովնայի երեխաների մասին, բայց ո՞վ գիտե ինչի համար և ինչ է այդ նշանակում։ Այդ մարդը շարունակ ինչ-որ դիտավորություններ ու ծրագրեր ունի։

Այդ բոլոր օրերին Ռասկոլնիկովին էլի մի միտք էր զբաղեցնում և խիստ անհանգստացնում, թեև նա նույնիսկ աշխատում էր վանել այն, որովհետև դա ծանր էր իր համար։ Նա երբեմն մտածում էր՝ Սվիդրիգայլովը շարունակ պտտվում էր իր՝ Ռասկոլնիկովի, շուրջը, ու հիմա էլ է պտտվում. Սվիդրիգայլովը իմացել է նրա գաղտնիքը. Սվիդրիգայլովը դավեր ուներ Դունյայի դեմ։ Իսկ եթե հիմա էլ ունի՞։ Գրեթե հաստատապես կարելի է ասել՝ այո։ Իսկ եթե հիմա, գիտենալով իր, Ռասկոլնիկովի, գաղտնիքը և այդ կերպ ուժ ունենալով իր վրա, նա ուզենա այն օգտագործել իբրև զենք Դունյայի դե՞մ։

Այս միտքը երբեմն, նույնիսկ երազում էլ տանջում էր նրան։ Դեռ առաջին անգամ էլ դա այնպես վառ էր նրա գիտակցության մեջ, ինչպես հիմա, երբ նա գնում էր Սվիդրիգայլովի մոտ։ Հենց միայն այս միտքը նրան մոայլ կատաղություն էր հաղորդում։ Նախ՝ այդ դեպքում կփոխվի ամեն ինչ, նույնիսկ իր վիճակը. հարկավոր կլինի անմիջապես գաղտնիքը հայտնել Դունեչկային։ Թերևս հարկավոր կլինի մատնել ինքն իրեն, որպեսզի Դունեչկան որևէ անզգույշ քայլ չանի։ Նամա՞կը։ Այդ առավոտ Դունյան ինչ-որ նամակ է ստացել։ Պետերբուրգում նա ո՞ւմից կարող էր նամակ ստանալ (գուցե Լուժինի՞ց)։ Ճշմարիտ է, այնտեղ հսկում է Ռազումիխինը. բայց Ռազումիխինը ոչինչ չգիտեր։ Գուցե հարկավոր է Ռազումիխինին է՞լ հայտնել գաղտնիքը։ Ռասկոլնիկովը նողկանքով մտածեց այդ մասին։

Համենայն դեպս հարկավոր է Սվիդրիգայլովին տեսնել

որքան կարելի է շուտ, վերջնականապես որոշեց նա։ Փառք աստծու, այստեղ հարկավոր են ոչ այնքան գործի մանրամասնությունները, որքան դրա էությունը. բայց եթե, եթե Սվիդրիգայլովը որևէ վատ բան անի, եթե նա ինչ-որ դավեր է լարում Դունյայի դեմ, ապա...

Ռասկոլնիկովը այդ ամբողջ ժամանակվա ընթացքում, այդ ամբողջ ամսում այնքան էր հոգնել, որ հիմա արդեն անկարող էր նման հարցերը լուծել այլ կերպ, քան այսպիսի ձևով. «ես կսպանեմ նրան, Սվիդրիգայլովին։ Այսպես էր մտածում նա սառը հուսալքման վիճակում։ Միայն զգացումը մաշում էր նրա սիրտը. նա կանգ առավ փողոցի մեջտեղում ու նայեց իր շուրջը. ո՞ր ճանապարհով է գնում և ո՞ր տեղ է հասել։ Նա գտնվում էր Ֆ պողոտայում, երեսուն կամ քառասուն քայլ հեռու Սեննայա հրապարակից, որտեղից անցել էր։ Ձախ կողմի տան ամբողջ երկրորդ հարկը պանդոկ էր։ Բոլոր պատուհանները լայն բացված էին. դատելով ըստ պատուհաններից երևացող, շարժվող կերպարանքների, պանդոկը լեփ-լեցուն էր։ Դահլիճում երգում էին երգիչները, հնչում էր կլառնետը, ջութակը, ու թնդում թուրքական թմբուկը։ Կանացի ճղճղոցներ էին լսվում։ Տարակուսելով, թե ինչու էր հասել Ֆ պողոտան, Ռասկոլնիկովը ուզեց ետ դառնալ, երբ հանկարծ պանդոկի ծայրի բաց պատուհաններից մեկում տեսավ Սվիդրիգայլովին, որը նստել էր թեյի սեղանի առաջ, ծխամորճը բերանին։ Դա շափազանց, սարսափեցնելու չափ ապշեցրեց նրան։ Սվիդրիգայլովը լուռ հետամտում, նայում էր նրան։ Ռասկոլնիկովին իսկույն զարմացրեց նաև այն, որ Սվիդրիգայլովը կարծես ուզում էր վեր կենալ և կամացուկ շքանալ, քանի դեռ իրեն չէին նկատել։ Ռասկոլնիկովը անմիջապես ձևացրեց, թե ինքը չի նկատել նրան և մտազբաղ մի այլ կողմ է նայում, բայց շարունակեց աչքի տակով հետամտել նրան։ Ռասկոլնիկովի սիրտը անհանգիստ տրոփում էր։ Հենց այդպես է որ կա. Սվիդրիգայլովը ակներևաբար չի ուզում, որ իրեն տեսնեն։ Նա բերանից վերցրեց ծխամորճը և արդեն ուզում էր թաքնվել, բայց վեր կենալով և աթոռը ետ քաշելով, հավանաբարեն հանկարծ նկատեց, որ Ռասկոլնիկովը իրեն տեսնում է ու հետամտում։ Նրանց միջև տեղի ունեցավ մի բան, որ հի-

Սվիդրիգայլովը արդեն վաղուց կարծես թե իրեն հարկավոր է մի ինչ-որ բանի համար։

Սակայն նրանք իրար հետ ի՞նչ առնչություն կարող են ունենալ։ Նույնիսկ նրանց շարագործություններն էլ չեն կարող միանման լինել։ Բացի դրանից, այդ մարդը խիստ տհաճ էր, ակներևաբար չափազանց փչացած, անպայման խորամանկ ու խարեբա, գուցե շատ չար։ Նրա մասին այդպիսի լուրեր են պատվում։ Ճշմարիտ է, նա հոգում էր Կատերինա Իվանովնայի երեխաների մասին, բայց ո՞վ գիտե ինչի համար և ինչ է այդ նշանակում։ Այդ մարդը շարունակ ինչ-որ դիտավորություններ ու ծրագրեր ունի։

Այդ բոլոր օրերին Ռասկոլնիկովին էլի մի միտք էր զբաղեցնում և խիստ անհանգստացնում, թեև նա նույնիսկ աշխատում էր վանել այն, որովհետև դա ծանր էր իր համար։ Նա երբեմն մտածում էր՝ Սվիդրիգայլովը շարունակ պտտվում էր իր՝ Ռասկոլնիկովի, շուրջը, ու հիմա էլ է պտտվում. Սվիդրիգայլովը իմացել է նրա գաղտնիքը. Սվիդրիգայլովը դավեր ուներ Դունյայի դեմ։ Իսկ եթե հիմա էլ ունի՞։ Գրեթե հաստատապես կարելի է ասել՝ այո։ Իսկ եթե հիմա, գիտենալով իր, Ռասկոլնիկովի, գաղտնիքը և այդ կերպ ուժ ունենալով իր վրա, նա ուզենա այն օգտագործել իբրև զենք Դունյայի դե՞մ։

Այս միտքը երբեմն, նույնիսկ երազում էլ տանջում էր նրան։ Դեռ առաջին անգամ էլ դա այնպես վառ էր նրա գիտակցության մեջ, ինչպես հիմա, երբ նա գնում էր Սվիդրիգայլովի մոտ։ Հենց միայն այս միտքը նրան մոայլ կատաղության էր հասցնում։ Նախ՝ այդ դեպքում կփոխվի ամեն ինչ, նույնիսկ իր վիճակը. հարկավոր կլինի անմիջապես գաղտնիքը հայտնել Դունեչկային։ Թերևս հարկավոր կլինի մատնել ինքն իրեն, որպեսզի Դունեչկան որևէ անզգույշ քայլ չանի։ Նամա՞կը։ Այդ առավոտ Դունյան ինչ-որ նամակ է ստացել։ Պետերբուրգում նա ո՞ւմից կարող էր նամակ ստանալ (գուցե Լուժինի՞ց)։ Ճշմարիտ է, այնտեղ հսկում է Ռազումիխինը. բայց Ռազումիխինը ոչինչ չդիտեր։ Գուցե հարկավոր է Ռազումիխինին է՞լ հայտնել գաղտնիքը։ Ռասկոլնիկովը նողկանքով մտածեց այդ մասին։

Համենայն դեպս հարկավոր է Սվիդրիգայլովին տեսնել

որքան կարելի է շուտ, վերջնականապես որոշեց նա։ Փառք աստծու, այստեղ հարկավոր են ոչ այնքան գործի մանրամասնությունները, որքան դրա էությունը. բայց եթե, եթե Սվիդրիգայլովը որևէ վատ բան անի, եթե նա ինչ-որ դավեր է լարում Դունյայի դեմ, ապա...

Ռասկոլնիկովը այդ ամբողջ ժամանակվա ընթացքում, այդ ամբողջ ամսում այնքան էր հոգնել, որ հիմա արդեն անկարող էր նման հարցերը լուծել այլ կերպ, քան այսպիսի ձևով. «ես կսպանեմ նրան, Սվիդրիգայլովին»։ Այսպես էր մտածում նա սառը հուսալքման վիճակում։ Ծանր զգացումը մաշում էր նրա սիրտը. նա կանգ առավ փողոցի մեջտեղում ու նայեց իր շուրջը. ո՞ր ճանապարհով է գնում և ո՞ր տեղ է հասել։ Նա գտնվում էր Ֆ պողոտայում, երեսուն կամ քառասուն քայլ հեռու Սեննայա հրապարակից, որտեղից անցել էր։ Ձախ կողմի տան ամբողջ երկրորդ հարկը պանդոկ էր։ Բոլոր պատուհանները լայն բացված էին. դատելով բուռ պատուհաններից երևացող, շարժվող կերպարանքների, պանդոկը լեփ-լեցուն էր։ Դահլիճում երգում էին երգիչները, հնչում էր կլառնետը, ջութակը, ու թնդում թուրքական թմբուկը։ Կանացի ճղճղոցներ էին լսվում։ Տարակուսելով, թե ինչու էր հասել Ֆ պողոտան, Ռասկոլնիկովը ուզեց ետ դառնալ, երբ հանկարծ պանդոկի ծայրի բաց պատուհաններից մեկում տեսավ Սվիդրիգայլովին, որը նստել էր թեյի սեղանի առաջ, ծխամորճը բերանին։ Դա շափազանց, սարսափեցնելու չափ ապշեցրեց նրան։ Սվիդրիգայլովը լուռ հետամտում, նայում էր նրան։ Ռասկոլնիկովին իսկույն զարմացրեց նաև այն, որ Սվիդրիգայլովը կարծես ուզում էր վեր կենալ և կամացուկ չքանալ, քանի դեռ իրեն չէին նկատել։ Ռասկոլնիկովը անմիջապես ձևացրեց, թե ինքը չի նկատել նրան և մտազբաղ մի այլ կողմ է նայում, բայց շարունակեց աչքի տակով հետամտել նրան։ Ռասկոլնիկովի սիրտը անհանգիստ տրոփում էր։ Հենց այդպես է որ կա. Սվիդրիգայլովը ակներևաբար չի ուզում, որ իրեն տեսնեն։ Նա բերանից վերցրեց ծխամորճը և արդեն ուզում էր թաքնվել, բայց վեր կենալով և աթոռը ետ քաշելով, հավանորեն հանկարծ նկատեց, որ Ռասկոլնիկովը իրեն տեսնում է ու հետամտում։ Նրանց միջև տեղի ունեցավ մի բան, որ հի-

շեղնում էր նրանց առաջին տեսակցությունը Ռասկոլնիկովի խցիկում, ուր վերջինս քնած էր։ Նենգավոր ժպիտ երևաց Սվիդրիգայլովի դեմքին ու հետզհետե լայնացավ։ Թե մեկը և թե մյուսը գիտեին, որ տեսնում և հետամտում են միմյանց։ Վերջապես, Սվիդրիգայլովը բարձր քրքջաց։

— Դե ներս եկեք, էլի, եթե ուզում եք. ես այստեղ եմ,— գոչեց նա պատուհանից։

Ռասկոլնիկովը մտավ պանդոկ։

Նա Սվիդրիգայլովին դտավ մի պատուհան ունեցող, շատ փոքր, ետին սենյակում, որը կից էր մեծ դահլիճին, ուր քսան փոքրիկ սեղանների շուրջը նստած էին վաճառականներ, աստիճանավորներ և բազմաթիվ ամեն տեսակ մարդիկ, ու երգչախմբի հուժկու երգեցողության ներքո թեյ էին խմում։ Մի տեղից լսվում էր բիլիարդի գնդակների թխկոցը։ Սվիդրիգայլովի սեղանին դրված էր մի կիսատ շիշ շամպայն և կիսով չափ գինի լցրած մի բաժակ։ Սենյակում գտնվում էին նաև երգեհոնահար մի տղա, ձեռքի փոքրիկ երգեհոնով, ու ամրակազմ, կարմրաթուշ մի աղջիկ՝ զոլավոր, քըշտած շրջազգեստով և տիրոլյան ժապավենազարդ գլխարկով, մոտ տասնութ տարեկան մի երգչուհի, որը չնայած դահլիճում թնգող խմբերգին, երգեհոնահարի նվագակցությամբ, բավական խռպոտ կոնտրալտոյով ինչ-որ լակեյական երգ էր երգում։

— Լավ, բավական է,— ընդհատեց նրան Սվիդրիգայլովը, երբ ներս մտավ Ռասկոլնիկովը։

Աղջիկը իսկույն լռեց ու կանգ առավ հարդալից տեսքով, սպասողական վիճակում։ Նա իր հանգավորված, լակեյական երգը երգելիս նույնպես հարդալից և մի տեսակ լուրջ դեմք էր ընդունել։

— Էյ, Ֆիլիպ, բաժակ բեր,— բղավեց Սվիդրիգայլովը։

— Ես գինի չեմ խմի,— ասաց Ռասկոլնիկովը։

— Ինչպես կուզեք, բաժակը ձեզ համար չէ։ Խմիր, Կատյա։ Այսօր այլևս ոչինչ հարկավոր չէ, գնա։ — Սվիդրիգայլովը աղջկա համար մի ամբողջ բաժակ գինի լցրեց և դրրպանից մի դեղնավուն թղթադրամ հանեց։ Կատյան խմեց գինին, ինչպես խմում են կանայք, այսինքն՝ իրար նեսից

անընդհատ քսան կում, ապա վերցրեց թղթադրամը, համբուրեց Սվիդրիգայլովի ձեռքը, որ վերջինս միանգամայն լրջորեն թույլ տվեց համբուրել, ու դուրս ելավ սենյակից, նրան հետևեց տղան իր երգեհոնով։ Նրանք երկուսով փողոցից էին բերված։ Սվիդրիգայլովը մի շաբաթ էլ չէր ապրում Պետերբուրգում, բայց արդեն նրա շուրջը ամեն բան ինչ-որ նահապետական ձևով էր կատարվում։ Պանդոկի սպասավորը, Ֆիլիպը, նույնպես արդեն «ծանոթ» էր և ստորաքարշություն է անում։ Դահլիճը տանող դուռը փակվում էր. Սվիդրիգայլովը այդ սենյակում իրեն զգում էր ինչպես իր տունը և այնտեղ դուցե ամբողջ օրեր էր անցկացնում։ Պանդոկը կեղտոտ էր, քոսոտ և նույնիսկ միջին կարգի էլ չէր։

— Ես գնում էի ձեզ մոտ և ձեզ էի փնտրում,— ասաց Ռասկոլնիկովը,— բայց ինչո՞ւ հիմա Սեննայա հրապարակից անցա № պողոտան։ Ես երբեք այս կողմը չեմ դառնում և այստեղ չեմ մտնում։ Ես Սեննայա հրապարակից դեպի աջ եմ դառնում։ Ձեր ապրելավայրի ճանապարհն էլ այս կողմով չի անցնում։ Հենց որ շուռ եկա, ձեզ տեսա։ Տարօրինակ է։

— Ինչո՞ւ դուք ուղղակի չեք ասում՝ հրաշք է։

— Որովհետև սա դուցե միայն պատահականություն է։

— Այ թե ինչ տեսակ են այս բոլոր մարդիկ,— քրքջաց Սվիդրիգայլովը,— չեն խոստովանում, թեկուզև նույնիսկ ներքուստ հավատան հրաշքին։ Դուք հո ինքներդ եք ասում, որ «դուցե» միայն պատահականություն է։ Թե որքան են այստեղ բոլորն էլ վախենում իրենց սեփական կարծիքն ունենալուց, դուք այդ չեք կարող պատկերացնել, Ռոդիոն Ռոմանիչ։ Ես ձեր մասին չեմ խոսում։ Դուք սեփական կարծիք ունեք և չեք վախեցել այն ունենալուց։ Հենց դրանով էլ դուք գրավել եք իմ հետաքրքրությունը։

— Էլ ուրիշ ոչնչո՞վ։

— Այդ էլ հո բավական է։

Սվիդրիգայլովը ըստ երևույթին քեֆով էր, բայց միայն չնչին չափով. նա ընդամենը կես բաժակ գինի էր խմել։

— Ինձ թվում է, որ դուք ինձ մոտ ավելի շուտ էիք եկել, քան իմացել էիք, որ ես ընդունակ եմ ունենալու ձեր ասած սեփական կարծիքը,— ասաց Ռասկոլնիկովը։

շեցնում էր նրանց առաջին տեսակցությունը Ռասկոլնիկովի խցիկում, ուր վերջինս քնած էր։ Նենգավոր ժպիտ երևաց Սվիդրիգայլովի դեմքին ու հետզհետե լայնացավ։ Թե մեկը և թե մյուսը գիտեին, որ տեսնում և հետամտում են միմյանց։ Վերջապես, Սվիդրիգայլովը բարձր քրքջաց։

— Դե ներս եկեք, էլի, եթե ուզում եք. ես այստեղ եմ,— գոչեց նա պատուհանից։

Ռասկոլնիկովը մտավ պանդոկ։

Նա Սվիդրիգայլովին դտավ մի պատուհան ունեցող, շատ փոքր, ետին սենյակում, որը կից էր մեծ դահլիճին, ուր քսան փոքրիկ սեղանների շուրջը նստած էին վաճառականներ, աստիճանավորներ և բազմաթիվ ամեն տեսակ մարդիկ, ու երգչախմբի հուժկու երգեցողության ներքո թեյ էին խմում։ Մի տեղից լսվում էր բիլիարդի գնդակների թխկոցը։ Սվիդրիգայլովի սեղանին դրված էր մի կիսատ շիշ շամպայն և կիսով չափ գինի լցրած մի բաժակ։ Սենյակում գտնվում էին նաև երգեհոնահար մի տղա, ձեռքի փոքրիկ երգեհոնով, ու ամրակազմ, կարմրաթուշ մի աղջիկ՝ զոլավոր, քըշտած շրջազգեստով և տիրոլյան ժապավենազարդ գլխարկով, մոտ տասնութ տարեկան մի երգչուհի, որը չնայած դահլիճում թնդող խմբերգին, երգեհոնահարի նվագակցությամբ, բավական խռպոտ կոնտրալտոյով ինչ-որ լակեյական երգ էր երգում։

— Լավ, բավական է,— ընդհատեց նրան Սվիդրիգայլովը, երբ ներս մտավ Ռասկոլնիկովը։

Աղջիկը իսկույն լռեց ու կանգ առավ հարդալից տեսքով, սպասողական վիճակում։ Նա իր հանգավորված, լակեյական երգը երգելիս նույնպես հարդալից և մի տեսակ լուրջ դեմք էր ընդունել։

— Էյ, Ֆիլիպ, բաժակ բեր,— բղավեց Սվիդրիգայլովը։

— Ես գինի չեմ խմի,— ասաց Ռասկոլնիկովը։

— Ինչպես կուզեք, բաժակը ձեզ համար չէ։ Խմիր, Կատյա։ Այսօր այլևս ոչինչ հարկավոր չէ, գնա։ — Սվիդրիգայլովը աղջկա համար մի ամբողջ բաժակ գինի լցրեց և դրրպանից մի դեղնավուն թղթադրամ հանեց։ Կատյան խմեց գինին, ինչպես խմում են կանայք, այսինքն՝ իրար նեսից

անընդհատ քսան կում, ապա վերցրեց թղթադրամը, համբուրեց Սվիդրիգայլովի ձեռքը, որ վերջինս միանգամայն լրջորեն թույլ տվեց համբուրել, ու դուրս ելավ սենյակից, նրան հետևեց տղան իր երգեհոնով։ Նրանք երկուսով փողոցից էին բերված։ Սվիդրիգայլովը մի շաբաթ էլ չէր ապրում Պետերբուրգում, բայց արդեն նրա շուրջը ամեն բան ինչ-որ նահապետական ձևով էր կատարվում։ Պանդոկի սպասավորը, Ֆիլիպը, նույնպես արդեն «ծանոթ» էր և ատորաքարշություն է անում։ Դահլիճը տանող դուռը փակվում էր. Սվիդրիգայլովը այդ սենյակում իրեն զգում էր ինչպես իր տունը և այնտեղ դուցե ամբողջ օրեր էր անցկացնում։ Պանդոկը կեղտոտ էր, քոսոտ և նույնիսկ միջին կարգի էլ չէր։

— Ես գնում էի ձեզ մոտ և ձեզ էի փնտրում,— ասաց Ռասկոլնիկովը,— բայց ինչո՞ւ հիմա Սեննայա հրապարակից անցա № պողոտան։ Ես երբեք այս կողմը չեմ դառնում և այստեղ չեմ մտնում։ Ես Սեննայա հրապարակից դեպի աջ եմ դառնում։ Ձեր ապրելավայրի ճանապարհն էլ այս կողմով չի անցնում։ Հենց որ շուռ եկա, ձեզ տեսա։ Տարօրինակ է։

— Ինչո՞ւ դուք ուղղակի չեք ասում՝ հրաշք է։

— Որովհետև սա դուցե միայն պատահականություն է։

— Այ թե ինչ տեսակ են այս բոլոր մարդիկ,— քրքջաց Սվիդրիգայլովը,— չեն խոստովանում, թեկուզև նույնիսկ ներքուստ հավատան հրաշքին։ Դուք հո ինքներդ եք ասում, որ «դուցե» միայն պատահականություն է։ Թե որքան են այստեղ բոլորն էլ վախենում իրենց սեփական կարծիքն ունենալուց, դուք այդ չեք կարող պատկերացնել, Ռոդիոն Ռոմանիչ։ Ես ձեր մասին չեմ խոսում։ Դուք սեփական կարծիք ունեք և չեք վախեցել այն ունենալուց։ Հենց դրանով էլ դուք գրավել եք իմ հետաքրքրությունը։

— Էլ ուրիշ ոչնչո՞վ։

— Այդ էլ հո բավական է։

Սվիդրիգայլովը ըստ երևույթին քեֆով էր, բայց միայն չնչին չափով. նա ընդամենը կես բաժակ գինի էր խմել։

— Ինձ թվում է, որ դուք ինձ մոտ ավելի շուտ էիք եկել, քան իմացել էիք, որ ես ընդունակ եմ ունենալու ձեր ասած սեփական կարծիքը,— ասաց Ռասկոլնիկովը։

— Այն ժամանակ բանն ուրիշ էր։ Ամեն մեկն իր ուղածն է անում։ Իսկ հրաշքի վերաբերյալ ես ձեզ կասեմ, որ դուք կարծես թե այս վերջին երկու-երեք օրում քնած եք եղել։ Ես ինքս էի ձեզ ասել, որ կհանդիպենք այս պանդոկում, ու այստեղ ոչ մի հրաշք չկա, որ դուք եկաք. ինքս էի ցույց տվել ամբողջ ճանապարհը, պատմել էի, թե պանդոկը որտեղ է գտնվում և որ ժամերին կարելի է ինձ այստեղ գտնել։ Հիշո՞ւմ եք։

— Մոռացել եմ,— զարմանքով պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Հավատում եմ։ Երկու անգամ ես ձեզ ասել էի։ Ձեր հիշողության մեջ հասցեն մեխանիկորեն էր դրոշմվել։ Դուք այս կողմն էլ մեխանիկորեն եք եկել, թեև ճիշտ հասցեով, ինքներդ էլ այդ չգիտենալով։ Այն ժամանակ ձեզ ասելով հասցեն, ես հույս չունեի, թե դուք ինձ հասկացաք։ Դուք շատ եք ձեզ մատնում, Ռոդիոն Ռոմանիչ։ Մի բան ևս. ես համոզված եմ, որ Պետերբուրգում շատ մարդիկ շրջելիս իրենք իրենց հետ են խոսում։ Սա կիսախելագարների քաղաք է։ Եթե մեղնում գիտություններ լինեին, ապա բժիշկները, իրավաբանները և փիլիսոփաները կարող էին Պետերբուրգում արժեքավոր հետազոտություններ կատարել, յուրաքանչյուրն ըստ իր մասնագիտության։ Հազիվ թե որևէ այլ վայրում մարդու հոգու վրա այնքան մռայլ, խիստ ու տարօրինակ ազդեցություններ լինեն, որքան Պետերբուրգում։ Այստեղ քիչ դեր չեն խաղում հենց միայն կլիմայական ազդեցությունները։ Այնինչ սա ամբողջ Ռուսաստանի վարչական կենտրոնն է, ու սրա բնույթը պետք է անդրադառնա ամեն բանի վրա։ Բայց հիմա բանը այդ չէ, այլ այն է, որ ես մի քանի անգամ կողքանց եմ նայել ձեզ։ Դուք տանից դուրս եք գալիս գլուխդ ուղիղ պահած։ Անցնելով մի քսան քայլ, դուք այն կախում եք, ձեռքերդ դնում մեջքիդ։ Դուք նայում եք ու ձեր առջև, ձեր կողքերին ոչինչ չեք տեսնում։ Վերջապես, սկսում եք շարժել շրթունքներդ ու խոսել ինքներդ ձեզ հետ, երբեմն էլ իջեցնում եք ձեռքերդ և փքքուն խոսում, վերջապես, կանգ եք առնում ճանապարհի մեջտեղում, այն էլ երկար ժամանակով։ Դա շատ վատ է։ Դուցե ինձնից բացի ուրիշներն էլ են այդ նկատում, իսկ դա ան-

շահավետ է։ Ինձ համար հո այդ միևնույն է, ես չեմ կարող ձեզ բուժել, և դուք, իհարկե, հասկանում եք ինձ։

— Իսկ դուք դիտե՞ք, որ հետևում են ինձ,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ աչքերը հառելով նրան։

— Ոչ, ոչինչ չգիտեմ,— ասես զարմանքով պատասխանեց Սվիդրիգայլովը։

— Դե ուրեմն ինձ հանգիստ թողնենք,— նեղոտ փընթփընթաց Ռասկոլնիկովը։

— Լավ, ձեզ հանգիստ թողնենք։

— Ավելի լավ է ասեք, երբ դուք այստեղ գալիս եք խըմելու և ինձ երկու անգամ ասել եք, որ ես էլ այստեղ գամ ձեզ հետ տեսնվելու, հապա ինչո՞ւ հիմա, երբ ես նայում էի փողոցից, թաքնվում էիք և ուզում էիք այստեղից հեռանալ։ Ես դա շատ լավ նկատեցի։

— Քա՛հ-քա՛հ։ Իսկ այն ժամանակ, երբ ես կանգնած էի ձեր շեմքին, և դուք էլ փակած աչքերով պառկած էիք ձեր բազմոցի վրա, ինչո՞ւ էիք քնած ձևանում, թեև ամենևին էլ քնած չէիք։ Ես դա շատ լավ նկատեցի։

— Ես կարող էի... պատճառներ ունենալ... Դուք ինքներդ այդ դիտեք։

— Ես էլ կարող էի իմ պատճառները ունենալ, թեև դուք դրանք չեք էլ իմանա։

Ռասկոլնիկովը աջ արմունկը դրեց սեղանին, կզակը հենեց աջ ձեռքի մատներին և աչքերը հառեց Սվիդրիգայլովին։ Մի բոպեի չափ զննեց նրա դեմքը, որը առաջ էլ միշտ ապշեցնում էր նրան։ Այդ մի ինչ-որ տարօրինակ դեմք էր, ասես դիմակ լիներ. սպիտակ էր, կարմրաթուշ։ Սվիդրիգայլովի մորուքը բաց-շիկավուն էր, շեկ մազերը դեռ բավական խիտ էին։ Աչքերը խիստ լուրթ էին, դրանց նայվածքը շատ ծանր էր ու անշարժ։ Ինչ-որ չափազանց տհաճ բան կար այդ դեղեցիկ և նրա տարիքին անհամապատասխան ջահելություն արտահայտող դեմքին։ Սվիդրիգայլովի հագուստը պճնագեղ էր, ամառային, թեթև. առանձնապես փայլուն էր սպիտակեղենը։ Մատին կար թանկագին քարով մի մեծ մատանի։

— Մի՞թե ես պետք է ձեզնով էլ զբաղվեմ,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը՝ ջղաձգական անհամբերությամբ ուղ-

— Այն ժամանակ բանն ուրիշ էր։ Ամեն մեկն իր ուղածն է անում։ Իսկ հրաշքի վերաբերյալ ես ձեզ կասեմ, որ դուք կարծես թե այս վերջին երկու-երեք օրում քնած եք եղել։ Ես ինքս էի ձեզ ասել, որ կհանդիպենք այս պանդոկում, ու այստեղ ոչ մի հրաշք չկա, որ դուք եկաք. ինքս էի ցույց տվել ամբողջ ճանապարհը, պատմել էի, թե պանդոկը որտեղ է գտնվում և որ ժամերին կարելի է ինձ այստեղ գտնել։ Հիշո՞ւմ եք։

— Մոռացել եմ,— զարմանքով պատասխանեց Ռասկոլնիկովը։

— Հավատում եմ։ Երկու անգամ ես ձեզ ասել էի։ Ձեր հիշողության մեջ հասցեն մեխանիկորեն էր դրոշմվել։ Դուք այս կողմն էլ մեխանիկորեն եք եկել, թեև ճիշտ հասցեով, ինքներդ էլ այդ չգիտենալով։ Այն ժամանակ ձեզ ասելով հասցեն, ես հույս չունեի, թե դուք ինձ հասկացաք։ Դուք շատ եք ձեզ մատնում, Ռոդիոն Ռոմանիչ։ Մի բան ևս. ես համոզված եմ, որ Պետերբուրգում շատ մարդիկ շրջելիս իրենք իրենց հետ են խոսում։ Սա կիսախելագարների քաղաք է։ Եթե մեղնում գիտություններ լինեին, ապա բժիշկները, իրավաբանները և փիլիսոփաները կարող էին Պետերբուրգում արժեքավոր հետազոտություններ կատարել, յուրաքանչյուրն ըստ իր մասնագիտության։ Հազիվ թե որևէ այլ վայրում մարդու հոգու վրա այնքան մռայլ, խիստ ու տարօրինակ ազդեցություններ լինեն, որքան Պետերբուրգում։ Այստեղ քիչ դեր չեն խաղում հենց միայն կլիմայական ազդեցությունները։ Այնինչ սա ամբողջ Ռուսաստանի վարչական կենտրոնն է, ու սրա բնույթը պետք է անդրադառնա ամեն բանի վրա։ Բայց հիմա բանը այդ չէ, այլ այն է, որ ես մի քանի անգամ կողքանց եմ նայել ձեզ։ Դուք տանից դուրս եք գալիս գլուխդ ուղիղ պահած։ Անցնելով մի քսան քայլ, դուք այն կախում եք, ձեռքերդ դնում մեջքիդ։ Դուք նայում եք ու ձեր առջև, ձեր կողքերին ոչինչ չեք տեսնում։ Վերջապես, սկսում եք շարժել շրթունքներդ ու խոսել ինքներդ ձեզ հետ, երբեմն էլ իջեցնում եք ձեռքերդ և փքքուն խոսում, վերջապես, կանգ եք առնում ճանապարհի մեջտեղում, այն էլ երկար ժամանակով։ Դա շատ վատ է։ Դուցե ինձնից բացի ուրիշներն էլ են այդ նկատում, իսկ դա ան-

շահավետ է։ Ինձ համար հո այդ միևնույն է, ես չեմ կարող ձեզ բուժել, և դուք, իհարկե, հասկանում եք ինձ։

— Իսկ դուք դիտե՞ք, որ հետևում են ինձ,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ աչքերը հառելով նրան։

— Ոչ, ոչինչ չգիտեմ,— ասես զարմանքով պատասխանեց Սվիդրիգայլովը։

— Դե ուրեմն ինձ հանգիստ թողնենք,— նեղոտ փընթփընթաց Ռասկոլնիկովը։

— Լավ, ձեզ հանգիստ թողնենք։

— Ավելի լավ է ասեք, երբ դուք այստեղ գալիս եք խըմելու և ինձ երկու անգամ ասել եք, որ ես էլ այստեղ գամ ձեզ հետ տեսնվելու, հապա ինչո՞ւ հիմա, երբ ես նայում էի փողոցից, թաքնվում էիք և ուզում էիք այստեղից հեռանալ։ Ես դա շատ լավ նկատեցի։

— Քա՛հ-քա՛հ։ Իսկ այն ժամանակ, երբ ես կանգնած էի ձեր շեմքին, և դուք էլ փակած աչքերով պառկած էիք ձեր բազմոցի վրա, ինչո՞ւ էիք քնած ձևանում, թեև ամենևին էլ քնած չէիք։ Ես դա շատ լավ նկատեցի։

— Ես կարող էի... պատճառներ ունենալ... Դուք ինքներդ այդ դիտեք։

— Ես էլ կարող էի իմ պատճառները ունենալ, թեև դուք դրանք չեք էլ իմանա։

Ռասկոլնիկովը աջ արմունկը դրեց սեղանին, կզակը հենեց աջ ձեռքի մատներին և աչքերը հառեց Սվիդրիգայլովին։ Մի րոպեի չափ զննեց նրա դեմքը, որը առաջ էլ միշտ ապշեցնում էր նրան։ Այդ մի ինչ-որ տարօրինակ դեմք էր, ասես դիմակ լիներ. սպիտակ էր, կարմրաթուշ։ Սվիդրիգայլովի մորուքը բաց-շիկավուն էր, շեկ մազերը դեռ բավական խիտ էին։ Աչքերը խիստ լուրթ էին, դրանց նայվածքը շատ ծանր էր ու անշարժ։ Ինչ-որ չափազանց տհաճ բան կար այդ դեղեցիկ և նրա տարիքին անհամապատասխան ջահելություն արտահայտող դեմքին։ Սվիդրիգայլովի հագուստը պճնագեղ էր, ամառային, թեթև. առանձնապես փայլուն էր սպիտակեղենը։ Մատին կար թանկագին քարով մի մեծ մատանի։

— Մի՞թե ես պետք է ձեզնով էլ զբաղվեմ,— հանկարծ ասաց Ռասկոլնիկովը՝ ջղաձգական անհամբերությամբ ուղ-

դակի դիմելով սրտաբացության,— թեև դուք գուցե ամենավտանգավոր մարդն եք, եթե ուզենաք վնաս հասցնել, սակայն ես չեմ ուզում այլևս որևէ բան թաքցնել։ Ես հիմա ձեզ ցույց կտամ, որ կյանքը ինձ համար այնքան էլ թանկ չէ, ինչպես հավանորեն մտածում եք դուք։ Իմացեք, ես եկել եմ ձեզ ուղղակի ասելու, որ եթե դուք առաջվա պես ինչ-որ դիտավորություն ունեք իմ քրոջ նկատմամբ և եթե դրա համար մտածում եք որևէ բան օգտագործել այն ամենից, ինչ որ բացահայտվել է վերջին ժամանակներում, ապա ես ձեզ կսպանեմ, նախքան դուք ինձ բանտ կնստեցնեք։ Իմ խոսքը հաստատ է. դուք գիտեք, որ ես կկարողանամ կատարել այն։ Երկրորդ, այս ամբողջ ժամանակվա ընթացքում ինձ թվում էր, որ կարծես թե դուք ուզում եք ինձ ինչ-որ բան ասել, եթե այդպես է, ապա ուրեմն շուտ ասացեք, որովհետև ժամանակը թանկ է և գուցե շատ շուտով արդեն ուշ լինի։

— Ո՞ւր եք այդպես շտապում,— հարցրեց Սվիդրիգայլովը՝ հետաքրքրությամբ նայելով նրան։

— Ամեն մեկն իր ուզածն է անում,— մռայլ ու անհամբեր ասաց Ռասկոլնիկովը։

— Դուք ինքներդ հիմա սրտաբացության էիք կոչում, բայց հրաժարվում եք պատասխանել հենց առաջին հարցիս,— ժպտալով ասաց Սվիդրիգայլովը։ — Ձեզ շարունակ թվում է, թե ես ինչ-որ նպատակներ ունեմ, դրա համար էլ կասկածանքով եք ինձ նայում։ Ի՞նչ արած, դա միանգամայն հասկանալի է ձեր վիճակում։ Բայց որքան էլ ես ուզում եմ մտերմանալ ձեզ հետ, այնուամենայնիվ ջանք չեմ թափի ձեզ հակառակը համոզելու։ Աստված վկա, շարժե գլուխ ցավեցնել, ու ես չէի էլ մտադրվում ձեզ հետ խոսել մի որևէ լուրջ բանի մասին։

— Հապա ինչո՞ւ եմ ես ձեզ այդպես հարկավոր եղել։ Չէ՞ որ դուք պտտվում էիք իմ շուրջը։

— Որովհետև դիտողության համար դուք հետաքրքիր անձնավորություն եք։ Դուք ինձ դուր եկաք ձեր վիճակի ֆանտաստիկությամբ, ահա թե ինչով։ Բացի դրանից, դուք այն անձնավորության եղբայրն եք, որն ինձ շատ էր հետաքրքրում, և վերջապես, հենց այդ անձնավորությունից իր ժամանակին ես հաճախ շատ բաներ էի լսում ձեր մասին և

դրանից եզրակացրել էի, որ դուք նրա վրա մեծ ազդեցություն ունեք. մի՞թե սա քիչ է, քա՜հ-քա՜հ-քա՜հ։ Սակայն խոստովանում եմ, որ ձեր հարցը շատ բարդ է ինձ համար ու ես դժվարանում եմ դրան պատասխանել։ Ահա, օրինակ, դուք ինձ մոտ եք եկել ոչ միայն գործով, այլև մի որևէ նոր բան իմանալու։ Այդպե՞ս է, հո այդպե՞ս է,— նենգ ժպիտով վրա էր տալիս Սվիդրիգայլովը,— դե ուրեմն դրանից հետո պատկերացրեք, որ ես ինքս էլ դեռ ճանապարհին, վագոնում հույս էի դնում ձեր վրա, որ դուք էլ ինձ որևէ նոր բան կասեք, որ ինձ կհաջողվի ձեղնից մի որևէ օգուտ տեսնել։ Ահա թե մենք ինչով ենք հարուստ։

— Ի՞նչ օգուտ տեսնել։

— Ի՞նչ ասեմ ձեզ։ Մի՞թե ես այդ գիտեմ։ Տեսնում եք, էլի, թե ինչպիսի պանդոկում եմ շարունակ նստում, և սա ինձ հաճելի է, այսինքն՝ ոչ թե հաճելի է, այլ այնպես, էլի, հո հարկավո՞ր է մի տեղ նստել։ Այստեղ այդ խեղճ Կատյան էլ է լինում, տեսա՞ք... Գոնե ես լինեի լավ ուտոզխմող, ակումբային խորտկասեր, թե չէ ա՛յ ինչ կարող եմ ուտել (նա մատով ցույց տվեց սենյակի մի անկյունը, որտեղ մի փոքրիկ սեղանի վրա թիթեղյա ափսեով դրված էր կարտոֆիլով, վատ որակի բիֆշտեքս)։ Հա, դուք ճաշե՞լ եք։ Ես կերել եմ ու էլ չեմ ուզում։ Գինի բոլորովին չեմ խմում։ Բացի շամպայնից, ուրիշ ոչ մի գինի չեմ խմում։ Ամբողջ երեկոյան մի բաժակ շամպայն եմ խմում, այն էլ գլուխս ցավում է։ Պատվիրել էի դա մատուցել, որպեսզի ուժ առնեմ, որովհետև մի տեղ եմ գնալու, և դուք տեսնում եք, որ տրամադրությունս առանձնապես լավ է։ Երբ դուք ինձ այստեղ տեսաք, ես ուշակերտի պես թաքնվեցի այն պատճառով, որ կարծում էի, թե ինձ կխանգարեք, բայց կարծեմ (նա նայեց ժամացույցին) մի ժամ կարող եմ լինել ձեզ հետ. հիմա հինգի կեսն է։ Կհավատա՞ք արդյոք, որ կյանքումս դատարկություն է. լինեի գոնե կալվածատեր, հայր, ուլան, լուսանկարիչ, ժուռնալիստ... Ոչինչ, ոչ մի մասնագիտություն։ Երբեմն նույնիսկ ձանձրալի է։ Հիրավի, կարծում էի, թե դուք ինձ որևէ նոր բան կասեք։

— Բայց ո՞վ եք դուք և ինչո՞ւ եք այստեղ ժամանել։

— Ով եմ ե՞ս Գիտե՞ք, ազնվական եմ, երկու տարի

ղակի դիմելով սրտաբացության,— թեև դուք դուցե ամենավտանգավոր մարդն եք, եթե ուզենաք վնաս հասցնել, սակայն ես չեմ ուզում այլևս որևէ բան թաքցնել։ Ես հիմա ձեզ ցույց կտամ, որ կյանքը ինձ համար այնքան էլ թանկ չէ, ինչպես հավանորեն մտածում եք դուք։ Իմացեք, ես եկել եմ ձեզ ուղղակի ասելու, որ եթե դուք առաջվա պես ինչ-որ դիտավորություն ունեք իմ քրոջ նկատմամբ և եթե դրա համար մտածում եք որևէ բան օգտագործել այն ամենից, ինչ որ բացահայտվել է վերջին ժամանակներում, ապա ես ձեզ կսպանեմ, նախքան դուք ինձ բանտ կնստեցնեք։ Իմ խոսքը հաստատ է. դուք գիտեք, որ ես կկարողանամ կատարել այն։ Երկրորդ, այս ամբողջ ժամանակվա ընթացքում ինձ թվում էր, որ կարծես թե դուք ուզում եք ինձ ինչ-որ բան ասել, եթե այդպես է, ապա ուրեմն շուտ ասացեք, որովհետև ժամանակը թանկ է և դուցե շատ շուտով արդեն ուշ լինի։

— Ո՞ւր եք այդպես շտապում,— հարցրեց Սվիդրիգայլովը՝ հետաքրքրությամբ նայելով նրան։

— Ամեն մեկն իր ուզածն է անում,— մռայլ ու անհամբեր ասաց Ռասկոլնիկովը։

— Դուք ինքներդ հիմա սրտաբացության էիք կոչում, բայց հրաժարվում եք պատասխանել հենց առաջին հարցիս,— ժպտալով ասաց Սվիդրիգայլովը։ — Ձեզ շարունակ թվում է, թե ես ինչ-որ նպատակներ ունեմ, դրա համար էլ կասկածանքով եք ինձ նայում։ Ի՞նչ արած, դա միանգամայն հասկանալի է ձեր վիճակում։ Բայց որքան էլ ես ուզում եմ մտերմանալ ձեզ հետ, այնուամենայնիվ ջանք չեմ թափի ձեզ հակառակը համոզելու։ Աստված վկա, շարժե գլուխ ցավեցնել, ու ես չէի էլ մտադրվում ձեզ հետ խոսել մի որևէ լուրջ բանի մասին։

— Հապա ինչո՞ւ եմ ես ձեզ այդպես հարկավոր եղել։ Չէ՞ որ դուք պտտվում էիք իմ շուրջը։

— Որովհետև դիտողության համար դուք հետաքրքիր անձնավորություն եք։ Դուք ինձ դուր եկաք ձեր վիճակի ֆանտաստիկությամբ, ահա թե ինչով։ Բացի դրանից, դուք այն անձնավորության եղբայրն եք, որն ինձ շատ էր հետաքրքրում, և վերջապես, հենց այդ անձնավորությունից իր ժամանակին ես հաճախ շատ բաներ էի լսում ձեր մասին և

դրանից եզրակացրել էի, որ դուք նրա վրա մեծ ազդեցություն ունեք. մի՞թե սա քիչ է, քա՜հ-քա՜հ-քա՜հ։ Սակայն խոստովանում եմ, որ ձեր հարցը շատ բարդ է ինձ համար ու ես դժվարանում եմ դրան պատասխանել։ Ահա, օրինակ, դուք ինձ մոտ եք եկել ոչ միայն գործով, այլև մի որևէ նոր բան իմանալու։ Այդպե՞ս է, հո այդպե՞ս է,— նենգ ժպիտով վրա էր տալիս Սվիդրիգայլովը,— դե ուրեմն դրանից հետո պատկերացրեք, որ ես ինքս էլ դեռ ճանապարհին, վագոնում հույս էի դնում ձեր վրա, որ դուք էլ ինձ որևէ նոր բան կասեք, որ ինձ կհաջողվի ձեղնից մի որևէ օգուտ տեսնել։ Ահա թե մենք ինչով ենք հարուստ։

— Ի՞նչ օգուտ տեսնել։

— Ի՞նչ ասեմ ձեզ։ Մի՞թե ես այդ գիտեմ։ Տեսնում եք, էլի, թե ինչպիսի պանդոկում եմ շարունակ նստում, և սա ինձ հաճելի է, այսինքն՝ ոչ թե հաճելի է, այլ այնպես, էլի, հո հարկավո՞ր է մի տեղ նստել։ Այստեղ այդ խեղճ կատյան էլ է լինում, տեսա՞ք... Գոնե ես լինեի լավ ուտոզխմող, ակումբային խորտկասեր, թե չէ ա՛յ ինչ կարող եմ ուտել (նա մատով ցույց տվեց սենյակի մի անկյունը, որտեղ մի փոքրիկ սեղանի վրա թիթեղյա ափսեով դրված էր կարտոֆիլով, վատ որակի բիֆշտեքս)։ Հա, դուք ճաշե՞լ եք։ Ես կերել եմ ու էլ չեմ ուզում։ Գինի բոլորովին չեմ խմում։ Բացի շամպայնից, ուրիշ ոչ մի գինի չեմ խմում։ Ամբողջ երեկոյան մի բաժակ շամպայն եմ խմում, այն էլ գլուխս ցավում է։ Պատվիրել էի դա մատուցել, որպեսզի ուժ առնեմ, որովհետև մի տեղ եմ գնալու, և դուք տեսնում եք, որ տրամադրությունս առանձնապես լավ է։ Երբ դուք ինձ այստեղ տեսաք, ես ուշակերտի պես թաքնվեցի այն պատճառով, որ կարծում էի, թե ինձ կխանգարեք, բայց կարծեմ (նա նայեց ժամացույցին) մի ժամ կարող եմ լինել ձեզ հետ. հիմա հինգի կեսն է։ Կհավատա՞ք արդյոք, որ կյանքումս դատարկություն է. լինեի գոնե կալվածատեր, հայր, ուլան, լուսանկարիչ, ժուռնալիստ... Ոչինչ, ոչ մի մասնագիտություն։ Երբեմն նույնիսկ ձանձրալի է։ Հիրավի, կարծում էի, թե դուք ինձ որևէ նոր բան կասեք։

— Բայց ո՞վ եք դուք և ինչո՞ւ եք այստեղ ժամանել։

— Ով եմ ե՞ս։ Գիտե՞ք, ազնվական եմ, երկու տարի

ծառայել եմ հեծելազորում, հետո հենց այնպես թրևում էի այստեղ, Պետերբուրգում, հետո էլ ամուսնացա Մարֆա Պետրովնայի հետ ու ապրում էի գյուղում։ Ահա իմ կենսագրությունը։

— Դուք կարծեմ թուղթ խաղացո՞ղ եք։

— Ոչ, ի՛նչ խաղացող։ Շուլերը խաղացող չէ։

— Իսկ դուք շուլեր եղե՞լ եք։

— Այո, շուլեր էլ եմ եղել։

— Եվ ի՞նչ, ձեզ խփո՞ւմ էին։

— Պատահում էր։ Ի՞նչ կա որ։

— Դե ուրեմն կարող էին մենամարտի կանչել... Եվ առհասարակ, դա թարմացուցիչ է։

— Չեմ հակաճառի ձեզ և այն էլ ասած՝ փիլիսոփայելու վարպետ չեմ։ Խոստովանում եմ ձեզ, որ այստեղ եմ ժամանել ավելի շուտ կանանց առնչությամբ։

— Հենց Մարֆա Պետրովնային թաղելուց անմիջապես հետո՞։

— Հա՛, էլի,— հրճվագին շիտակությամբ ժպտաց Սվիդրիգայլովը։ — Ի՞նչ կա որ։ Դուք կարծես ինչ-որ վատ բան եք համարում այն, որ ես այսպես եմ խոսում կանանց մասին։

— Այսինքն՝ ցոփություն եմ վատ բան համարում, այնպես չէ՞։

— Ցոփությո՞ւնը։ Այ թե որտեղից բռնեցիք։ Սակայն նախ և առաջ ձեզ ըստ կարգի կպատասխանեմ առհասարակ կանանց վերաբերյալ. գիտե՞ք, ես տրամադիր եմ շաղակրատելու։ Ասացեք, ես ինչի՞ համար պիտի ժուժկալ չլինեմ։ Ինչո՞ւ ձեռք քաշեմ կանանցից, եթե նրանց սիրահար եմ։ Դա գոնե զբաղմունք է։

— Ուրեմն դուք այստեղ հենց միայն ցոփության վրա՞ եք հույս դնում։

— Դե ի՛նչ կա որ, թեկուզ ցոփության վրա։ Ցոփությունից եք կպել։ Ես գոնե սիրում եմ հարցը ուղղակի դնել։ Այդ ցոփության մեջ գոնե կա մի ինչ-որ մշտնջենականություն, որը նույնիսկ հիմնված է բնության վրա ու ենթակա չէ ֆանտազիային, մշտավառ ածխակտորի պես մի ինչ-որ բան, որ փոնվում է արյան մեջ և գուցե գեռ երկար ժամանակ,

տարիներ անցնելուց հետո այնքան էլ շուտ չի մարի։ Ինքներդ համաձայնեցեք, մի՞թե դա յուրատեսակ զբաղմունք չէ։

— Այստեղ ի՞նչ կա ուրախանալու։ Դա հիվանդություն է, վտանգավոր հիվանդություն։

— Բա՞ն ասացիք, էլի՛։ Ես համաձայն եմ, որ դա հիվանդություն է, ինչպես և ամեն ինչ, որ անցնում է չափից. այստեղ էլ անպայման հարկ կլինի անցնել չափից, բայց չէ՞ որ նախ՝ դա մեկի մոտ այսպես է լինում, մյուսի մոտ այնպես, և երկրորդ, հասկանալի է, ամեն ինչում պահպանիր չափը, հաշվենկատությունը, որ թեև ստոր է, բայց ի՞նչ արած։ Եթե այդ չլիներ, թերևս մարդ ինքնասպանություն գործեր։ Ես համաձայն եմ, որ կարդին մարդը պարտավոր է տանջվել, բայց և այնպես...

— Իսկ դուք կկարողանայի՞ք ինքնասպանություն գործել։

— Ա՜յ քեզ բան,— տհաճությամբ վրա բերեց Սվիդրիգայլովը,— բարի եղեք, մի խոսեք այդ մասին,— ավելացրեց նա հապճեպորեն և նույնիսկ առանց որևէ սնապարծության, որ արտահայտվում էր առաջվա իր բոլոր խոսքերում։ Նրա դեմքը կարծես նույնիսկ փոխվեց։ — Դե ինչ արած, խոստովանում եմ աններելի թուլություն,— վախենում եմ մահից և չեմ սիրում, երբ խոսում են դրա մասին։ Գիտե՞ք, ես մասամբ միստիկ եմ։

— Հը՛մ, Մարֆա Պետրովնայի ուրվակա՞նը։ Ի՞նչ է, շարունակում է երևա՞լ։

— Այդ մի հիշեցնեք. Պետերբուրգում դեռ չի երևացել. էհ, թող գնա գրողի ծոցը,— ինչ-որ ջղայնոտ տեսքով գոչեց Սվիդրիգայլովը։ — Ոչ, ավելի լավ է չխոսենք այդ մասին... Ի միջի այլոց... հը՛մ, ժամանակը քիչ է, ես չեմ կարող երկար մնալ ձեզ հետ, ափսոս, ձեզ հաղորդելու շատ բաներ կան։

— Կնոջ մո՞տ եք գնալու։

— Այո, կնոջ մոտ, այնպես, էլի՛, պատահական առիթ է... ոչ, ես ուրիշ բաների մասին էի խոսելու։

— Լավ, իսկ նոդկալիությունը, այդ ամբողջ իրադրու-

ծառայել եմ հեծելազորում, հետո հենց այնպես թրևում էի այստեղ, Պետերբուրգում, հետո էլ ամուսնացա Մարֆա Պետրովնայի հետ ու ապրում էի գյուղում։ Ահա իմ կենսագրությունը։

— Դուք կարծեմ թուղթ խաղացո՞ղ եք։

— Ոչ, ի՛նչ խաղացող։ Շուլերը խաղացող չէ։

— Իսկ դուք շուլեր եղե՞լ եք։

— Այո, շուլեր էլ եմ եղել։

— Եվ ի՞նչ, ձեզ խփո՞ւմ էին։

— Պատահում էր։ Ի՞նչ կա որ։

— Դե ուրեմն կարող էին մենամարտի կանչել... Եվ առհասարակ, դա թարմացուցիչ է։

— Չեմ հակաճառի ձեզ և այն էլ ասած՝ փիլիսոփայելու վարպետ չեմ։ Խոստովանում եմ ձեզ, որ այստեղ եմ ժամանել ավելի շուտ կանանց առնչությամբ։

— Հենց Մարֆա Պետրովնային թաղելուց անմիջապես հետո՞։

— Հա՛, էլի,— հրճվագին շիտակությամբ ժպտաց Սվիդրիգայլովը։ — Ի՞նչ կա որ։ Դուք կարծես ինչ-որ վատ բան եք համարում այն, որ ես այսպես եմ խոսում կանանց մասին։

— Այսինքն՝ ցոփություն եմ վատ բան համարում, այնպես չէ՞։

— Ցոփությո՞ւնը։ Այ թե որտեղից բռնեցիք։ Սակայն նախ և առաջ ձեզ ըստ կարգի կպատասխանեմ առհասարակ կանանց վերաբերյալ. գիտե՞ք, ես տրամադիր եմ շաղակրատելու։ Ասացեք, ես ինչի՞ համար պիտի ժուժկալ չլինեմ։ Ինչո՞ւ ձեռք քաշեմ կանանցից, եթե նրանց սիրահար եմ։ Դա գոնե զբաղմունք է։

— Ուրեմն դուք այստեղ հենց միայն ցոփության վրա՞ եք հույս դնում։

— Դե ի՛նչ կա որ, թեկուզ ցոփության վրա։ Ցոփությունից եք կպել։ Ես գոնե սիրում եմ հարցը ուղղակի դնել։ Այդ ցոփության մեջ գոնե կա մի ինչ-որ մշտնջենականություն, որը նույնիսկ հիմնված է բնության վրա ու ենթակա չէ ֆանտազիային, մշտավառ ածխակտորի պես մի ինչ-որ բան, որ փոնվում է արյան մեջ և գուցե գեռ երկար ժամանակ,

տարիներ անցնելուց հետո այնքան էլ շուտ չի մարի։ Ինքներդ համաձայնեցեք, մի՞թե դա յուրատեսակ զբաղմունք չէ։

— Այստեղ ի՞նչ կա ուրախանալու։ Դա հիվանդություն է, վտանգավոր հիվանդություն։

— Բա՜ն ասացիք, էլի՛։ Ես համաձայն եմ, որ դա հիվանդություն է, ինչպես և ամեն ինչ, որ անցնում է չափից. այստեղ էլ անպայման հարկ կլինի անցնել չափից, բայց չէ՞ որ նախ՝ դա մեկի մոտ այսպես է լինում, մյուսի մոտ այնպես, և երկրորդ, հասկանալի է, ամեն ինչում պահպանիր չափը, հաշվենկատությունը, որ թեև ստոր է, բայց ի՞նչ արած։ Եթե այդ չլիներ, թերևս մարդ ինքնասպանություն գործեր։ Ես համաձայն եմ, որ կարդին մարդը պարտավոր է տանջվել, բայց և այնպես...

— Իսկ դուք կկարողանայի՞ք ինքնասպանություն գործել։

— Ա՜յ քեզ բան,— տհաճությամբ վրա բերեց Սվիդրիգայլովը,— բարի եղեք, մի խոսեք այդ մասին,— ավելացրեց նա հապճեպորեն և նույնիսկ առանց որևէ սնապարծության, որ արտահայտվում էր առաջվա իր բոլոր խոսքերում։ Նրա դեմքը կարծես նույնիսկ փոխվեց։ — Դե ինչ արած, խոստովանում եմ աններելի թուլությունս,— վախենում եմ մահից և չեմ սիրում, երբ խոսում են դրա մասին։ Դիտե՞ք, ես մասամբ միստիկ եմ։

— Հը՛մ, Մարֆա Պետրովնայի ուրվակա՞նը։ Ի՞նչ է, շարունակում է երևա՞լ։

— Այդ մի հիշեցնեք. Պետերբուրգում դեռ չի երևացել. էհ, թող գնա գրողի ծոցը,— ինչ-որ ջղայնոտ տեսքով գոչեց Սվիդրիգայլովը։ — Ոչ, ավելի լավ է չխոսենք այդ մասին... Ի միջի այլոց... հը՛մ, ժամանակը քիչ է, ես չեմ կարող երկար մնալ ձեզ հետ, ափսոս, ձեզ հաղորդելու շատ բաներ կան։

— Կնոջ մո՞տ եք գնալու։

— Այո, կնոջ մոտ, այնպես, էլի՛, պատահական առիթ է... ոչ, ես ուրիշ բաների մասին էի խոսելու։

— Լավ, իսկ նոդկալիությունը, այդ ամբողջ իրադրու-

թյան նողկալիությունը ձեր վրա արդեն չի՞ ազդում, դուք ուժ չունե՞ք ձեզ զսպելու։

— Դուք ուժի հավակնություն ո՞ւ ունեք, քա՛հ-քա՛հ-քա՛հ. Դուք հիմա ինձ զարմացրիք, Ռոդիոն Ռոմանիչ, թեև ես նախապես գիտեի, որ այդպես կլինի։ Դուք ինձ հետ ցոփության և էսթետիկայի մասին եք խոսում։ Դուք Շիլլեր եք։ Դուք իդեալիստ եք։ Այդ բոլորը, իհարկե, այդպես էլ պետք է լինի և պետք էր զարմանալ, եթե այդպես չլիներ, բայց և այնպես իրականում դա մի տեսակ տարօրինակ է... Ա՛խ, ափսոս որ ժամանակը քիչ է։ Դուք ամենահետաքրքիր անձնավորությունն եք։ Ի դեպ, դուք սիրո՞ւմ եք Շիլլերին։ Ես շատ եմ սիրում։

— Բայց և այնպես, դուք որքա՞ն պոռոտախոս եք,— մի քիչ զզվելով ասաց Ռասկոլնիկովը։

— Ասված վկա ոչ,— քրքջալով պատասխանեց Սվիդրիգայլովը,— սակայն, չեմ վիճում, թող պոռոտախոս լինեմ. բայց ինչո՞ւ չպոռոտախոսել, երբ դա անվնաս է։ Ես յոթ տարի ապրել եմ գյուղում, Մարֆա Պետրովնայի մոտ, և հիմա հանդիպելով ձեզ պես խելացի մարդուն, խելոք և վերին աստիճանի հետաքրքիր մարդուն, ուղղակի ուրախությամբ եմ զրուցում, մանավանդ որ կես բաժակ գինի եմ խմել և արդեն գլխիս է խփել։ Գլխավորն այն է, որ գայթություն ունի մի հանգամանք, որ ինձ շատ է զբաղեցրել, բայց այդ մասին ես... կլռեմ։ Ո՞ւր եք շտապում,— հանկարծ վախով հարցրեց Սվիդրիգայլովը։

Ռասկոլնիկովը վեր էր կացել։ Նրա տրամադրությունը ծանր էր, նա նեղվում էր, իրեն անհարմար էր զգում, որ այստեղ էր եկել։ Նա համոզվեց, որ Սվիդրիգայլովը ամենադատարկ, ամենանվաստ չարագործն է աշխարհում։

— Դե նստեցեք, էլի, մնացեք,— խնդրում էր Սվիդրիգայլովը,— հրամայեցեք, որ ձեզ գոնե թեյ բերեն։ Դե, նստեցեք, ես դատարկ բաներ չեմ դուրս տա, այսինքն՝ չեմ խոսի իմ մասին։ Ես ձեզ մի որևէ բան կպատմեմ։ Ուզո՞ւմ եք ձեզ պատմեմ, թե ինչպես մի կին, ձեր ոճով ասած, «փրկեց» ինձ։ Դա նույնիսկ պատասխան կլինի ձեր առաջին հարցին, որովհետև այդ անձնավորությունը ձեր քույրն է։ Կարելի՞ է պատմել ամենանակ կանցկացնենք, էլի՞։

— Պատմեցեք, բայց ես հուսով եմ, որ դուք...

— Օ, մի անհանգստանաք։ Այն էլ ասեմ, Ավդոտյա Ռոմանովնան կարող է միայն ամենախոր հարգանք ներշնչել նույնիսկ մի այնպիսի վատթար ու դատարկ մարդուն, ինչպիսին ես եմ։

IV

— Դուք գուցե գիտեք (ասենք, ես ինքս եմ ձեզ պատմել), որ ես նստած էի այստեղ, պարտապանների կալանատանը, խոշոր պարտք ունենալու պատճառով, և դա վճարելու համար ոչ մի միջոց չունեի,— սկսեց Սվիդրիգայլովը։ — Հարկ չկա մանրամասն պատմել, թե ինչպես այն ժամանակ ինձ փրկագնեց Մարֆա Պետրովնան. գիտե՞ք արդյոք, թե երբեմն ինչպիսի խելացնորությամբ կարող է սիրել կինը։ Այդ մի ազնիվ, շատ խելոք կին էր (թեպետև բոլորովին կրթված չէր)։ Պատկերացրեք, որ հենց այդ ազնիվ, բայց խանդոտ կինը շատ անգամ սարսափելի կատաղության հասնելուց և կշտամբանքներ թափելուց հետո որոշեց ինձ հետ յուրատեսակ համաձայնություն կնքել, որը և կատարում էր մեր ամուսնության ամբողջ ժամանակաընթացքում։ Բանն այն է, որ նա շատ մեծ էր ինձնից, բացի այդ, բերանում շարունակ մեխակի ինչ-որ համեմունք էր պահում։ Ես հոգուս մեջ այնքան խոզություն և յուրատեսակ շիտակություն ունեցա, որ նրան ուղղակի հայտարարեցի, որ չեմ կարող նրան բոլորովին հավատարիմ լինել։ Այս խոստովանությունը նրան ուղղակի կատաղության հասցրեց, բայց իմ կոպիտ շիտակությունը կարծես թե նրան մի քիչ դուր եկավ. «Ուրեմն, մտածում է նա, սա չի ուզում խաբել, եթե նախապես այդպիսի հայտարարություն է անում». խանդոտ կնոջ համար այդ էլ բավական էր։ Երկար լացուկոծից հետո մեր միջև մի այսպիսի բանավոր համաձայնություն կայացավ. առաջին, ես երբեք չեմ թողնի Մարֆա Պետրովնային և միշտ կլինեմ նրա ամուսինը, երկրորդ, առանց նրա թույլտվության ոչ մի տեղ չեմ գնա. երրորդ, մշտական սիրուհի երբեք չեմ ունենա. չորրորդ, դրա համար Մարֆա Պետրովնան ինձ թույլ է տալիս երբեմն աչք դնել

թյան նողկալիությունը ձեր վրա արդեն չի՞ ազդում, դուք ուժ չունե՞ք ձեզ զսպելու։

— Դուք ուժի հավակնություն է՞լ ունեք, քա՛հ-քա՛հ-քա՛հ. Դուք հիմա ինձ զարմացրիք, Ռոդիոն Ռոմանիչ, թեև ես նախապես գիտեի, որ այդպես կլինի։ Դուք ինձ հետ ցոփության և էսթետիկայի մասին եք խոսում։ Դուք Շիլլեր եք։ Դուք իդեալիստ եք։ Այդ բոլորը, իհարկե, այդպես էլ պետք է լինի և պետք էր զարմանալ, եթե այդպես չլիներ, բայց և այնպես իրականում դա մի տեսակ տարօրինակ է... Ա՛խ, ափսոս որ ժամանակը քիչ է։ Դուք ամենահետաքրքիր անձնավորությունն եք։ Ի դեպ, դուք սիրո՞ւմ եք Շիլլերին։ Ես շատ եմ սիրում։

— Բայց և այնպես, դուք որքա՞ն պոռոտախոս եք,— մի քիչ զզվելով ասաց Ռասկոլնիկովը։

— Ասված վկա ոչ,— քրքջալով պատասխանեց Սվիդրիգայլովը,— սակայն, չեմ վիճում, թող պոռոտախոս լինեմ. բայց ինչո՞ւ չպոռոտախոսել, երբ դա անվնաս է։ Ես յոթ տարի ապրել եմ գյուղում, Մարֆա Պետրովնայի մոտ, և հիմա հանդիպելով ձեզ պես խելացի մարդուն, խելոք և վերին աստիճանի հետաքրքիր մարդուն, ուղղակի ուրախությամբ եմ զրուցում, մանավանդ որ կես բաժակ գինի եմ խմել և արդեն գլխիս է խփել։ Գլխավորն այն է, որ գոյություն ունի մի հանգամանք, որ ինձ շատ է զբաղեցրել, բայց այդ մասին ես... կլռեմ։ Ո՞ւր եք շտապում,— հանկարծ վախով հարցրեց Սվիդրիգայլովը։

Ռասկոլնիկովը վեր էր կացել։ Նրա տրամադրությունը ծանր էր, նա նեղվում էր, իրեն անհարմար էր զգում, որ այստեղ էր եկել։ Նա համոզվեց, որ Սվիդրիգայլովը ամենադատարկ, ամենանվաստ չարագործն է աշխարհում։

— Դե նստեցեք, էլի, մնացեք,— խնդրում էր Սվիդրիգայլովը,— հրամայեցեք, որ ձեզ գոնե թեյ բերեն։ Դե, նստեցեք, ես դատարկ բաներ չեմ դուրս տա, այսինքն՝ չեմ խոսի իմ մասին։ Ես ձեզ մի որևէ բան կպատմեմ։ Ուզո՞ւմ եք ձեզ պատմեմ, թե ինչպես մի կին, ձեր ոճով ասած, «փրկեց» ինձ։ Դա նույնիսկ պատասխան կլինի ձեր առաջին հարցին, որովհետև այդ անձնավորությունը ձեր քույրն է։ Կարելի՞ է պատմել։ Մանրամասն կանցկացնեք, էլի՞։

— Պատմեցեք, բայց ես հուսով եմ, որ դուք...

— Օ, մի անհանգստանաք։ Այն էլ ասեմ, Ավդոտյա Ռոմանովնան կարող է միայն ամենախոր հարգանք ներշնչել նույնիսկ մի այնպիսի վատթար ու դատարկ մարդուն, ինչպիսին ես եմ։

IV

— Դուք գուցե գիտեք (ասենք, ես ինքս եմ ձեզ պատմել), որ ես նստած էի այստեղ, պարտապանների կալանատանը, խոշոր պարտք ունենալու պատճառով, և դա վճարելու համար ոչ մի միջոց չունեի,— սկսեց Սվիդրիգայլովը։ — Հարկ չկա մանրամասն պատմել, թե ինչպես այն ժամանակ ինձ փրկագնեց Մարֆա Պետրովնան. գիտե՞ք արդյոք, թե երբեմն ինչպիսի խելացնորությամբ կարող է սիրել կինը։ Այդ մի ազնիվ, շատ խելոք կին էր (թեպետև բոլորովին կրթված չէր)։ Պատկերացրեք, որ հենց այդ ազնիվ, բայց խանդոտ կինը շատ անգամ սարսափելի կատաղության հասնելուց և կշտամբանքներ թափելուց հետո որոշեց ինձ հետ յուրատեսակ համաձայնություն կնքել, որը և կատարում էր մեր ամուսնության ամբողջ ժամանակաընթացքում։ Բանն այն է, որ նա շատ մեծ էր ինձնից, բացի այդ, բերանում շարունակ մեխակի ինչ-որ համեմունք էր պահում։ Ես հոգուս մեջ այնքան խոզություն և յուրատեսակ շիտակություն ունեցա, որ նրան ուղղակի հայտարարեցի, որ չեմ կարող նրան բոլորովին հավատարիմ լինել։ Այս խոստովանությունը նրան ուղղակի կատաղության հասցրեց, բայց իմ կոպիտ շիտակությունը կարծես թե նրան մի քիչ դուր եկավ. «Ուրեմն, մտածում է նա, սա չի ուզում խաբել, եթե նախապես այդպիսի հայտարարություն է անում». խանդոտ կնոջ համար այդ էլ բավական էր։ Երկար լացուկոծից հետո մեր միջև մի այսպիսի բանավոր համաձայնություն կայացավ. առաջին, ես երբեք չեմ թողնի Մարֆա Պետրովնային և միշտ կլինեմ նրա ամուսինը, երկրորդ, առանց նրա թույլտվության ոչ մի տեղ չեմ գնա. երրորդ, մշտական սիրուհի երբեք չեմ ունենա. չորրորդ, դրա համար Մարֆա Պետրովնան ինձ թույլ է տալիս երբեմն աչք դնել

ազախինների վրա, բայց ոչ այլ կերպ, քան իր դաղտնի գիտությամբ. հինգերորդ, աստված չանի ես սիրեմ մեր դասի կանանց. վեցերորդ, աստված մի արասցի, եթե ես որևէ կնոջ նկատմամբ բռնկվեմ խորին և լուրջ սիրով, ապա պետք է դա հայտնեմ Մարֆա Պետրովնային։ Վերջին կետի վերաբերյալ Մարֆա Պետրովնան ամբողջ ժամանակվա ընթացքում բավական հանդիստ էր. նա խելացի կին էր, հետևաբար հո չէր կարող ինձ վրա նայել այլ կերպ, քան անառակի և ցոփակլացի վրա, որը չի կարող լուրջ սիրել։ Բայց խելացի կինը և խանդոտ կինը երկու տարբեր բաներ են, և հենց այդ է դժբախտությունը։ Սակայն որոշ մարդկանց մասին անաչառ դատելու համար հարկավոր է նախապես հրաժարվել որոշ կանխակալ հայացքներից և սովորաբար միշ շրջապատող մարդկանց ու առարկաներին ընտելացած լինելու սովորությունից։ Ես իրավունք ունեմ հուսալու, որ դուք ավելի ճիշտ կդատեք, քան որևէ մեկ ուրիշը։ Գուցե դուք Մարֆա Պետրովնայի մասին ծիծաղելի ու անհեթեթ բաներ շատ եք լսել։ Իսկապես, նա որոշ, խիստ ծիծաղելի սովորություններ ուներ. բայց ձեզ ուղղակի կասեմ, որ անկեղծորեն ցավում եմ նրա տեսած անթիվ դառնությունների համար, որոնց պատճառը ես էի։ Եհ, կարծեմ սա բավական է քնքշագույն կնոջ հիշատակին քնքշագին ամուսնու միանդամայն վայելուչ oraison funèbre[1]-ի համար։ Երբ մենք կռվում էինք, ես մեծ մասամբ լռում էի ու չէի ջղայնանում, և այդ ջենտլմենությունը համարյա միշտ հասնում էր նպատակին. դա ազդում էր նրա վրա և նույնիսկ դուր էր գալիս նրան. լինում էին դեպքեր, երբ նա մինչև իսկ հպարտանում էր ինձնով։ Իսկ ձեր քույրիկին նա չհանդուրժեց։ Զարմանալի էր, որ նա ոիսկ արեց այդպիսի գեղեցկուհուն քերել իր տունը իբրև դաստիարակչուհի։ Ես այդ բացատրում եմ նրանով, որ Մարֆա Պետրովնան բոցաշունչ և ընկալունակ կին էր և ուղղակի սիրահարվեց, տառացիորեն սիրահարվեց ձեր քույրիկին։ Եվ ինչպիսի՜ն էր Ավդոտյա Ռոմանովնան։ Ես հենց առաջին հայացքից իմացա, որ բանը վատ

---

[1] Դամբանական (ֆրանս.)։

է, կարող եմ հրապուրվել, և ի՞նչ եք կարծում, որոշեցի մինչև իսկ չնայել նրան։ Բայց Ավդոտյա Ռոմանովնան ինքն արեց առաջին քայլը, հավատո՞ւմ եք, թե ոչ։ Հավատո՞ւմ եք, որ Մարֆա Պետրովնան այնտեղ էր հասնում, որ սկզբում ինձ վրա բարկանում էր ձեր քրոջ մասին իմ մշտական լռության համար, Ավդոտյա Ռոմանովնայի մասին իր անընդհատ և սիրազեղ խոսքերին անպատասխան լինելուս համար։ Ինքս էլ չեմ հասկանում, թե նա ինչ էր ուզում։ Դե իհարկե, Մարֆա Պետրովնան Ավդոտյա Ռոմանովնային պատմեց ինձ վերաբերող բոլոր դաղտնիքները։ Դժբախտաբար նա սովորություն ուներ ուղղակի բոլորին պատմել մեր բոլոր ընտանեկան դաղտնիքները և ամենքին շարունակ դանդատվել, և ի՞նչպես կարող էր չպատմել նաև այդ նոր, հիանալի բարեկամուհուն։ Կարծում եմ, որ նրանք հենց միայն իմ մասին էին խոսում, և Ավդոտյա Ռոմանովնային անտարակույս հայտնի դարձան ինձ վերաբերող բոլոր մռայլ, խորհրդավոր հեքիաթները... գրազ եմ գալիս, որ դուք էլ եք որևէ այդպիսի բան լսել։

— Լսել եմ։ Լուժինը մեղադրում էր ձեզ, որ դուք նույնիսկ երեխայի մահվան պատճառ եք եղել։ Ճի՞շտ է դա։

— Բարի եղեք, թողեք այդ բոլոր դռեհկությունները,— նողկանքով ու դժգոհությամբ ասաց Սվիդրիգայլովը,— եթե դուք անպայման ուզում եք իմանալ այդ ամբողջ անհեթեթությունը, ապա ես երբևէ կպատմեմ ձեզ, իսկ հիմա...

— Ասում էին նաև, որ դուք դյուղում ինչ-որ սպասավոր եք ունեցել և իբր թե նույնպես ինչ-որ բանի պատճառ եք եղել։

— Խնդրեմ, բավական է,— բացահայտ անհամբերությամբ դարձյալ վրա բերեց Սվիդրիգայլովը։

— Դա այն սպասավորը չէ՞, որ մեռնելուց հետո երևում էր ձեր աչքին,— դալիս էր ծխամորճը թուքուն լցնելու... ինքներդ եք այդ ինձ պատմել,— ավելի ու ավելի ջղագրգիռ էր դառնում Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը ուշադրությամբ նայեց Ռասկոլնիկովին, ու վերջինիս թվաց, թե այդ հայացքում կայծակի պես վայրկենաբար շարախինդ քմծիծաղ շողաց, բայց Սվիդրիդայլովը զսպվեց և շատ քաղաքավարի պատասխանեց.

ազախինների վրա, բայց ոչ այլ կերպ, քան իր դաղտնի գիտությամբ. հինգերորդ, աստված չանի ես սիրեմ մեր դասի կանանց. վեցերորդ, աստված մի արասցի, եթե ես որևէ կնոջ նկատմամբ բռնկվեմ խորին և լուրջ սիրով, ապա պետք է դա հայտնեմ Մարֆա Պետրովնային։ Վերջին կետի վերաբերյալ Մարֆա Պետրովնան ամբողջ ժամանակվա ընթացքում բավական հանդիստ էր. նա խելացի կին էր, հետևաբար հո չէր կարող ինձ վրա նայել այլ կերպ, քան անառակի և ցոփակյացի վրա, որը չի կարող լուրջ սիրել։ Բայց խելացի կինը և խանդոտ կինը երկու տարբեր բաներ են, և հենց այդ է դժբախտությունը։ Սակայն որոշ մարդկանց մասին անաչառ դատելու համար հարկավոր է նախապես հրաժարվել որոշ կանխակալ հայացքներից և սովորաբար մեղ շրջապատող մարդկանց ու առարկաներին ընտելացած լինելու սովորությունից։ Ես իրավունք ունեմ հուսալու, որ դուք ավելի ճիշտ կդատեք, քան որևէ մեկ ուրիշը։ Գուցե դուք Մարֆա Պետրովնայի մասին ծիծաղելի ու անհեթեթ բաներ շատ եք լսել։ Իսկապես, նա որոշ, խիստ ծիծաղելի սովորություններ ուներ. բայց ձեզ ուղղակի կասեմ, որ անկեղծորեն ցավում եմ նրա տեսած անթիվ դառնությունների համար, որոնց պատճառը ես էի։ Եհ, կարծեմ սա բավական է քնքշագույն կնոջ հիշատակին քնքշագին ամուսնու միանդամայն վայելուչ oraison funèbre[1]-ի համար։ Երբ մենք կռվում էինք, ես մեծ մասամբ լռում էի ու չէի ջղայնանում, և այդ ջենտլմենությունը համարյա միշտ հասնում էր նպատակին. դա ազդում էր նրա վրա և նույնիսկ դուր էր գալիս նրան. լինում էին դեպքեր, երբ նա մինչև իսկ հպարտանում էր ինձնով։ Իսկ ձեր քույրիկին նա չհանդուրժեց։ Զարմանալի էր, որ նա ոիսկ արեց այդպիսի գեղեցկուհուն բերել իր տունը իբրև դաստիարակչուհի։ Ես այդ բացատրում եմ նրանով, որ Մարֆա Պետրովնան բոցաշունչ և ընկալունակ կին էր և ուղղակի սիրահարվեց, տառացիորեն սիրահարվեց ձեր քույրիկին։ Եվ ինչպիսի՜ն էր Ավդոտյա Ռոմանովնան։ Ես հենց առաջին հայացքից իմացա, որ բանը վատ

---

[1] Դամբանական (ֆրանս.)։

է, կարող եմ հրապուրվել, և ի՞նչ եք կարծում, որոշեցի մինչև իսկ չնայել նրան։ Բայց Ավդոտյա Ռոմանովնան ինքն արեց առաջին քայլը, հավատո՞ւմ եք, թե ոչ։ Հավատո՞ւմ եք, որ Մարֆա Պետրովնան այնտեղ էր հասնում, որ սկզբում ինձ վրա բարկանում էր ձեր քրոջ մասին իմ մշտական լռության համար, Ավդոտյա Ռոմանովնայի մասին իր անընդհատ և սիրազեղ խոսքերին անպատասխան լինելուս համար։ Ինքս էլ չեմ հասկանում, թե նա ինչ էր ուզում։ Դե իհարկե, Մարֆա Պետրովնան Ավդոտյա Ռոմանովնային պատմեց ինձ վերաբերող բոլոր դաղտնիքները։ Դժբախտաբար նա սովորություն ուներ ուղղակի բոլորին պատմել մեր բոլոր ընտանեկան դաղտնիքները և ամենքին շարունակ դանդատվել, և ի՞նչպես կարող էր չպատմել նաև այդ նոր, հիանալի բարեկամուհուն։ Կարծում եմ, որ նրանք հենց միայն իմ մասին էին խոսում, և Ավդոտյա Ռոմանովնային անտարակույս հայտնի դարձան ինձ վերաբերող բոլոր մռայլ, խորհրդավոր հեքիաթները... դրազ եմ գալիս, որ դուք էլ եք որևէ այդպիսի բան լսել։

— Լսել եմ։ Լուժինը մեղադրում էր ձեզ, որ դուք նույնիսկ երեխայի մահվան պատճառ եք եղել։ Ճի՞շտ է դա։

— Բարի եղեք, թողեք այդ բոլոր դռեհկությունները,— նողկանքով ու դժգոհությամբ ասաց Սվիդրիգայլովը,— եթե դուք անպայման ուզում եք իմանալ այդ ամբողջ անհեթեթությունը, ապա ես երբևէ կպատմեմ ձեզ, իսկ հիմա...

— Ասում էին նաև, որ դուք դյուղում ինչ-որ սպասավոր եք ունեցել և իբր թե նույնպես ինչ-որ բանի պատճառ եք եղել։

— Խնդրեմ, բավական է,— բացահայտ անհամբերությամբ դարձյալ վրա բերեց Սվիդրիգայլովը։

— Դա այն սպասավորը չէ՞, որ մեռնելուց հետո երևում էր ձեր աչքին,— դալիս էր ծխամորճը թուքուն լցնելու... ինքներդ եք այդ ինձ պատմել,— ավելի ու ավելի ջղագրգիռ էր դառնում Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը ուշադրությամբ նայեց Ռասկոլնիկովին, ու վերջինիս թվաց, թե այդ հայացքում կայծակի պես վայրկենաբար շարախինդ քմծիծաղ շողաց, բայց Սվիդրիդայլովը զսպվեց և շատ քաղաքավարի պատասխանեց.

— Հենց նա է որ կա։ Ես տեսնում եմ, որ այդ ամենը ձեզ է՛լ է չափազանց հետաքրքրում, ու պարտք կհամարեմ առաջին իսկ հարմար առիթին ըստ ամենայնի բավարարել ձեր հետաքրքրությունը։ Գրողը տանի, ես տեսնում եմ, որ իրոք կարող եմ որևէ մեկին ռոմանտիկ անձնավորություն թվալ։ Դե ինքներդ դատեցեք, թե ես դրանից հետո որչափ պարտավոր եմ շնորհակալ լինել Մարֆա Պետրովնայից, որ նա իմ մասին ձեր քույրիկին այդքան խորհրդավոր ու հետաքրքիր բաներ էր պատմել։ Չեմ համարձակվում դատել դրանց թողած տպավորության մասին. բայց, համենայն դեպս, այդ ինձ համար ձեռնտու էր։ Բնականաբար նողկանք զգալով դեպի ինձ և չնայելով, որ ես միշտ մռայլ և վանող տեսք էի ունենում, Ավդոտյա Ռոմանովնան ի վերջո սկսեց կարեկցել ինձ, խղճալ կորած մարդուն։ Իսկ երբ աղջկա սիրտը կարեկցում է, ապա հասկանալի է, որ դա առավելապես վտանգավոր է նրա համար։ Այստեղ անպայման ցանկություն է առաջանում «փրկել», խելքի բերել, հարություն տալ, ավելի ազնիվ նպատակների կոչել, դեպի նոր կյանք և գործունեություն մղել, դե, հայտնի բան է, թե ինչեր կարելի է երազել այդ ուղղությամբ։ Ես իսկույն գլխի ընկա, որ թռչնակը ինքն է թռչում դեպի թակարդը, ու իմ հերթին պատրաստվեցի նրան ընդունելու։ Դուք կարծես ինձ մոռացե՞լ եք, Ռոդիոն Ռոմանիչ։ Ոչինչ, ինչպես դիտեք, վերջը դատարկ բան դուրս եկավ։ (Գրողը տանի, ինչքա՞ն գինի եմ խմում)։ Գիտե՞ք, ես միշտ, հենց սկզբից ոգեշնչում էի, որ ձեր քրոջը բախտ չէր վիճակվել ծնվելու մեր թվականության երկրորդ կամ երրորդ հարյուրամյակում, տիրակալ իշխանի կամ որևէ կառավարչի կամ Փոքր Ասիայում պրոկոնսուլի տանը։ Անտարակույս, նա կլիներ այն անձանցից մեկը, որոնք նահատակության էին ենթարկվել, և իհարկե կժպտար, երբ իր կուրծքը դաղեին չիկացած ունելիով։ Նա ինքը կմասնվեր դրան, իսկ չորրորդ և հինգերորդ դարերում կգնար եգիպտական անապատ, այնտեղ կապրեր երեսուն տարի, կսնվեր արմատիքներով, հրճվանքներով ու տեսիլքներով։ Նա ինքը հենց այդ է տենչում և ձգտում է որևէ մեկի համար շուտափույթ որևէ տառապանք ընդունել, ու եթե չլինի այդ տառապանքը, նա թերևս պա-

տունանից ներքև նետվի։ Ես լսել եմ մի ինչ-որ պարոն Ռազումիխինի մասին։ Ասում են, որ նա խելացի մարդ է (որ աղգանունից էլ է երևում[1], երևի սեմինարիստ էլ) և թող պահպանի ձեր քրոջը։ Մի խոսքով, ես կարծես թե հասկացել եմ ձեր քրոջը, և դա ինձ համար պատիվ եմ համարում։ Բայց, ինքներդ գիտեք, ծանոթության սկզբում մարդ միշտ էլ մի տեսակ թեթևամիտ ու հիմար է լինում, սխալ հայացքներ է ունենում, չի տեսնում այն, ինչ-որ պետք է տեսնի։ Գրողը տանի, ինչո՞ւ է նա այդպես գեղեցիկ։ Ես մեղավոր չեմ։ Մի խոսքով, իմ մեջ ամենաանզուսպ հեշտասիրության պոռթկում առաջացավ։ Ավդոտյա Ռոմանովնան սարսափելի, լլսված ու չտեսնված չափով ողջախոհ է։ (Տեսեք, ես ձեր քրոջ մասին սա հաղորդում եմ որպես փաստ։ Չնայած իր մեծ խելքին, նա մոլորության չափ ողջախոհ է, և դա կվնասի նրան)։ Մեզ մոտ ընդունվեց մի աղջիկ, իբրև սպասուհի, անունը Պարաշա։ Նա սնաշյա էր։ Նրան նոր էին բերել ուրիշ գյուղից։ Շատ սիրունիկն էր, բայց անհավանականության չափ հիմար։ Ամբողջ բակով մեկ լացուկոծ, աղմուկ բարձրացրեց, ու սկանդալ եղավ։ Մի անգամ, ճաշից հետո, Ավդոտյա Ռոմանովնան այգու մի ծառուղիում ինձ մենակ գտավ, ու դայլայլած պահանջեց ինձնից, որ ես խեղճ Պարաշային հանդիստ թողնեմ։ Այդ համարյա թե մեր առաջին խոսակցությունն էր։ Ես, իհարկե, պատիվ համարեցի կատարել նրա ցանկությունը. աշխատեցի պարտված, շփոթված ձևանալ, մի խոսքով, լավ կատարեցի իմ դերը։ Սկսվեցին հարաբերություններ, խորհրդավոր խոսակցություններ, հորդորանքներ, խրատներ, խնդրանքներ, աղերսանքներ, նույնիսկ արցունքներ, կհավատա՞ք, նույնիսկ արցունքներ։ Ահա թե ինչ ուժի է հասնում աղջիկներից ոմանց տենչը՝ խրատել ուրիշներին։ Իհարկե, ես ամեն ինչ վերադրեցի իմ բախտին, լույս տենչացող և դրան ծարավի ձևացա և ի վերջո դործադրեցի կնոջ սիրտը նվաճելու մեծագույն և հաստատուն միջոցը, մի միջոց, որ երբեք և ոչ ոքի չի խաբի և որը ազդում է բոլոր աղջիկների վրա, առանց

---

[1] Ռազումիխին (разум բառից է,— խելք, բանականություն) (օ. Թ.)։

որևէ բացատրության։ Այդ միջոցը հայտնի է, դա շողոքորթությունն է։ Աշխարհում շիտակությունից ավելի դժվար և շողոքորթությունից ավելի դյուրին բան չկա։ Եթե շիտակության միայն մեկ հարյուրերորդական մասը կեղծ է, ապա իսկույն դիսոնանս է տեղի ունենում, և դրան հետևում է սկանդալը։ Իսկ եթե շողոքորթությունը նույնիսկ ամբողջովին կեղծ է, այդ դեպքում էլ դուրեկան է և հաճույքով է լսվում, թեկուզև կոպիտ հաճույքով։ Եվ որքան էլ կոպիտ լինի շողոքորթությունը, գոնե կիսով չափ անպայման ճշմարտություն է թվում։ Այդպես է լինում հասարակության զարգացման բոլոր աստիճաններում և նրա բոլոր խավերում։ Շողոքորթությամբ նույնիսկ վեստալուհուն էլ կարելի է գայթակղեցնել։ Իսկ սովորական մարդկանց մասին խոսելն էլ ավելորդ է։ Չեմ կարող առանց ծիծաղի հիշել, թե ինչպես մի անգամ գայթակղեցրի իր ամուսնուն, իր երեխաներին նվիրված և իր առաքինություններով տարված մի տիկնոջ։ Որքա՜ն զվարճալի էր դա և ինչպիսի՜ հեշտությամբ կատարվեց։ Տիկինը իսկապես որ գոնե յուրովի առաքինի էր։ Իմ ամբողջ տակտիկան այն էր, որ ես ուղղակի յուրաքանչյուր րոպե տառապյալ էի ձևանում և խոնարհվում էի նրա ողջախոհության առջև։ Ես թունդ շողոքորթում էի, ու հենց որ նա սեղմում էր ձեռքս և նայում ինձ, ես ինձ կըշտամբում էի, որ այդ բանին ուժով եմ հասել, որ նա դիմադրում էր, այնպես էր դիմադրում, որ ես անշուշտ և երբեք ոչինչ չէի ստանա, եթե այսպես անբարոյական չլինեի, որ նա անմեղ լինելով, չէր նախատեսել իմ նենգամտությունը և առանց դիտավորության, ինքն էլ այդ չիմանալով, ենթարկվել էր ինձ և այլն, և այլն։ Մի խոսքով, ես ամեն ինչի հասա, իսկ տիկինս միանգամայն հավատացած էր մնում, թե ինքը անմեղ է ու ողջախոհ և կատարում է իր բոլոր պարտականությունները ու բոլորովին անսպասելիորեն է կործանվել։ Եվ որքա՜ն նա բարկացավ ինձ վրա, երբ ես վերջ ի վերջո նրան հայտարարեցի, թե իմ անկեղծ համոզմամբ նա էլ ճիշտ այնպես հաճույքներ էր փնտրում, ինչպես և ես։ Խեղճ Մարֆա Պետրովնան նույնպես շատ էր ենթարկվում շողոքորթության, ու եթե ես ուզենայի, ապա դեռ նրա կենդանության ժամանակ նրա ամբողջ կալվածքը գրել կտա-

չի ինձ վրա։ (Սակայն ես ուշքաշքելի շատ եմ գինի խմում և շաղակրատում)։ Հուսով եմ, որ դուք չեք բարկանա, եթե ես հիմա ասեմ, որ սկսվել էր նույնպիսի էֆեկտի իրագործումը նաև Ավդոտյա Ռոմանովնայի նկատմամբ։ Բայց ես ինքս հիմար ու անհամբեր էի և փչացրի ամբողջ գործը։ Դեռ առաջ էլ մի քանի անգամ (առանձնապես մի անգամ) Ավդոտյա Ռոմանովնային բոլորովին դուր չեկավ իմ աչքերի արտահայտությունը, կհավատա՞ք դրան։ Մի խոսքով, աչքերս ավելի ու ավելի ուժեղ և անզգուշաբար էր բռնկվում որոշ չափի հուրը, որը վախեցնում էր նրան և ի վերջո նրա համար ատելի դարձավ։ Հարկ չկա պատմել մանրամասնությունները, թե ինչպես մենք անջատվեցինք։ Այստեղ ես դարձյալ հիմարացա։ Սկսեցի ամենակոպիտ կերպով ծաղրի առնել նրա բոլոր հորդորանքներն ու վարվեցողությունը. դարձյալ մեջտեղ եկավ Պարաշան, ինչպես և ուրիշները. մի խոսքով, սաստիկ աղմուկ ու ժխոր սկսվեց։ Օ, եթե դուք, Ռոդիոն Ռոմանովիչ, դեթ մի անգամ ձեր կյանքում տեսնեի՞ք, թե ձեր քրոջ աչքերը ինչպես են երբեմն կայծկլտում։ Ի՞նչ արած, որ ես հիմա հարբած եմ և ահա արդեն մի ամբողջ բաժակ գինի եմ խմել, ես ճշմարտությունն եմ ասում. հավատացնում եմ ձեզ, որ այդ նայվածքը ես տեսնում էի երազումս. ի վերջո ես չէի կարողանում առանել նրա շրջազգեստի շրշյունը։ Ես կարծում էի, թե ընկնավոր կդառնամ, երբեք չէի երևակայել, թե կարող եմ այդպիսի մոլեգնություն հասնել։ Մի խոսքով, անհրաժեշտ էր հաշտվել. բայց դա արդեն անկարելի էր։ Երևակայեցեք, թե ես այն ժամանակ ինչ արեցի. այ թե կատաղությունը մարդուն ինչ աստիճանի թթացման է հասցնում։ Կատաղած վիճակում երբեք և ոչ մի բան մի ձեռնարկեք, Ռոդիոն Ռոմանիչ։ Հաշվի առնելով, որ Ավդոտյա Ռոմանովնան իրոք աղքատ է (ախ, ներեցեք, ես չէի ուզում այդ խոսքն ասել... բայց չէ՞ որ միևնույն է, եթե նույն հասկացողությունն է արտահայտվում), մի խոսքով, իր ձեռքերի աշխատանքով է ապրում, պահում է մորը և ձեզ (ախ, ոտանան տանի, դարձյալ նոթոտվում եք...), ես որոշեցի նրան առաջարկել իմ բոլոր փողերը (ես այն ժամանակ կարող էի տնօրինել մինչև երեսուն հազար ռուբլի), այն պայմանով, որ նա ինձ

հետ փախչի թեկուզ այստեղ, Պետերբուրգ։ Հասկանալի է, որ ես այստեղ կխոստանայի հավերժական սեր, երանություն և այլն, և այլն։ Կհավատա՞ք, ես այն ժամանակ այնքան էի սիրահարվել, որ եթե նա ինձ ասեր՝ մորթիր կամ թունավորիր Մարֆա Պետրովնային և ամուսնացիր ինձ հետ դա անմիջապես կկատարվեր։ Բայց ամեն ինչ կատաստրոֆով վերջացավ, դա արդեն հայտնի է ձեզ, ու ինքներդ կարող եք դատել, թե ես ինչպիսի կատաղության կարող էի հասնել, իմանալով, որ Մարֆա Պետրովնան այդ ժամանակ մեջտեղ էր բերել այդ ամենաստոր պաշտոնյային, Լուժինին, ու քիչ էր մնում հարսանիք սարքեր, որ էապես կլիներ նույնը, ինչ որ ես էի առաջարկում։ Այդպե՞ս է, այո՞, հո այդպե՞ս է։ Ես նկատում եմ, որ դուք սկսել եք ինչ-որ ուշադրությամբ լսել... հետաքրքիր երիտասարդ եք...

Սվիդրիգայլովը անհամբերությամբ բռունցքը խփեց սեղանին։ Նա կարմրատակել էր։ Ռասկոլնիկովը պարզ տեսնում էր, որ նրա վրա թունդ ազդել էր մեկ կամ մեկուկես բաժակ շամպայնը, որ նա խմել էր կում-կում, աննկատելիորեն։ Ռասկոլնիկովը որոշեց օգտվել առիթից։ Սվիդրիգայլովը խիստ կասկածելի էր նրա համար։

— Սրանից հետո ես լիովին համոզված եմ, որ դուք իմ քրոջ համար եք ժամանել այստեղ,— ուղղակի և շիտակությամբ ասաց նա Սվիդրիգայլովին, որպեսզի էլ ավելի գրգռի նրան։

— Օֆ, բավական է,— ասես հանկարծ ուշքի եկավ Սվիդրիգայլովը,— ես հո ձեզ ասել եմ այդ մասին... և բացի դրանից, ձեր քույրը ինձ տանել չի կարողանում։

— Դե, ես դրանում համոզված եմ, այո, չի կարողանում տանել, բայց հիմա բանը այդ չէ։

— Դուք դրանում համոզվա՞ծ եք։ (Սվիդրիգայլովը կկոցեց աչքերը և հեգնանքով ժպտաց)։ Դուք իրավացի եք, նա ինձ չի սիրում, բայց երբեք երաշխավորված մի լինեք ամուսնու և կնոջ կամ սիրեկանի ու սիրուհու գործերում։ Այստեղ միշտ լինում է մի հանգամանք, որը միշտ անհայտ է մնում ամբողջ աշխարհին և հայտնի է լինում միայն նրբանց երկուսին։ Դուք հավատացա՞ծ եք, որ Ավդոտյա Ռոմանովնան ինձ զզվանքով էր նայում։

— Երբ դուք այդ մասին պատմում էիք, ձեր մի քանի խոսքերից ու արտահայտություններից ես նկատեցի, որ դուք հիմա էլ ինչ-որ նպատակներ և բոլորովին անհետաձգելի դիտավորություններ ունեք Դունյայի նկատմամբ. դրանք, իհարկե, ստոր են։

— Ինչպե՞ս։ Ես բերանիցս այդպիսի խոսքեր և արտահայտություններ եմ թոցրել,— պարզամտորեն, վախեցած ասաց Սվիդրիգայլովը՝ ամենևին ուշադրություն չդարձնելով իր դիտավորությունները բնորոշող մակդիրի վրա։

— Դուք հիմա էլ եք դրանք թոցնում ձեր բերանից. ասացեք, ինչի՞ց եք այդպես վախենում։ Ինչո՞ւ հիմա հանկարծ վախեցաք։

— Ե՞ս եմ վախենում։ Ձեզնի՞ց։ Ավելի շուտ դուք կվախենաք ինձնից, cher ami[1]։ Եվ ի՞նչ վայրահաչություն է սա... Սակայն ես հարբեցի, ես այդ տեսնում եմ. քիչ մընաց էլի բերանիցս բան թոցնեի։ Կորչի՛ գինին, է՛յ, չո՛ւր։

Նա վերցրեց շիշը և առանց քաշվելու լուսամուտից դուրս շպրտեց։ Ֆիլիպը չուր բերեց։

— Այդ բոլորը դատարկ բան է,— ասաց Սվիդրիգայլովը՝ թրջելով երեսսրբիչը և դնելով գլխին,— իսկ ես կարող եմ մի խոսքով լռեցնել ձեզ և ցրիվ տալ ու ոչնչացնել ձեր բոլոր կասկածանքները։ Զորօրինակ, գիտե՞ք արդյոք, որ ես ամուսնանում եմ։

— Դուք այդ առաջ էլ եք ինձ ասել։

— Ասե՞լ եմ։ Մոռացա։ Բայց այն ժամանակ ես չէի կարող հաստատ ասել, որովհետև հարսնացու նույնիսկ չէի տեսել. ես միայն մտադրվում էի։ Իսկ հիմա ես արդեն հարսնացու ունեմ, գործը գլուխ է բերվել, ու եթե չլինեին անհետաձգելի գործերը, ես անպայման ձեզ կտանեի նրանց մոտ, որովհետև ուզում եմ ձեզնից խորհուրդ հարցնել։ Օֆ, գրողը տանի, ընդամենը տասը րոպե է մնում։ Տեսեք, նայեցեք ժամացույցին. սակայն ես ձեզ կպատմեմ իրողությունը, որովհետև հետաքրքիր բան է սա. իմ ամուսնությունը, այսինքն՝ յուրատեսակ հետաքրքիր. ո՞ւր, էլի գնո՞ւմ եք։

— Ոչ, ես արդեն հիմա չեմ գնա։

---

[1] Սիրելի բարեկամ (ֆրանս.)։

— Բոլորովի՞ն չեք գնա։ Տեսնենք։ Ես ձեզ այնտեղ կտանեմ, այդ ճշմարիտ է, միայն թե մի այլ ժամանակ, իսկ հիմա դուք շուտով գնալո՛ւ եք։ Դուք գնալու եք աջ կողմը, իսկ ես ձախ կողմը։ Դուք ճանաչո՞ւմ եք այն կնոջը, Ռեսսլիխին, հենց այն Ռեսսլիխին, որի բնակարանում հիմա ես ապրում եմ, հա՞, լսո՞ւմ եք։ Եվ ի՞նչ եք կարծում, հենց նա է, որի մասին ասում են, թե աղջիկ է, անմեղ աղջիկ, լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք։ Հենց նա էլ գլուխ բերեց այս ամենը. ասում է՝ դու ձանձրանում ես, պետք է զվարճանալ։ Իսկ ես հո մոայլ, տխուր մարդ եմ։ Դուք կարծում եք ուրա՞խ եմ. ոչ, մոայլ եմ. վնաս չեմ տալիս, նստում եմ իմ անկյունում. պատահում է, որ երեք օր որևէ մեկի հետ չեմ խոսում։ Իսկ այդ Ռեսսլիխը խարդախ է, ես ձեզ կասեմ, թե ինչ մտադրություն ունի. ես կձանձրանամ, կթողնեմ կնոջս, իսկ կինս կընկնի նրա ճանկը, և նա կնոջս շրջանառության մեջ կդնի մեր խավերում և ավելի բարձր շրջաններում։ Ասում է՝ կա ուժից ընկած մի հայր, պաշտոնաթող աստիճանավոր, բաղկաթոռից պոկ չի գալիս, երրորդ տարին է, որ չի կարողանում քայլել։ Ասում է՝ կա և մայր, խելոք մի կին։ Որդին ծառայում է ինչ-որ նահանգում, չի օգնում։ Մի աղջիկը ամուսնացել է և չի այցելում նրանց, իսկ նրանց խնամքի տակ գտնվում են աղգականների երկու երեխաներ (իբր թե իրենց երեխաները քիչ են), գիմնազիայից էլ վերցրել են դեռ դասընթացը չավարտած մյուս աղջկան, որի տասնըվեց տարին կլրանա մի ամսից հետո, ուրեմն մի ամսից հետո կարելի է նրան ամուսնացնել։ Այսինքն թե ինձ հետ։ Գնացինք. որքա՞ն ծիծաղելի էր. ներկայանում եմ. կալվածատեր եմ, այրի, հայտնի տոհմից, այսինչ կապերը և կապիտալ ունեմ, ի՞նչ անենք որ ես հիսուն տարեկան եմ, իսկ աղջիկը տասնվեց։ Ո՞վ է դրան նայում։ Հը՛մ, հրապուրիչ բան է, չէ՞։ Հո հրապուրի՞չ է, քա՛հ-քա՛հ-քա՛հ։ Օ, մի տեսնեիք, թե ես ինչպես էի երկար ու բարակ խոսում հայրիկի և մայրիկի հետ։ Այդ ժամին հենց միայն ինձ նայելու համար վճարել էր հարկավոր։ Ներս է մտնում աղջիկը, ծնկածալ ողջույն է տալիս, կարո՞ղ եք պատկերացնել, դեռ կարճ շրջազգեստով է, դեռ չբացված կոկոն, շիկնում է, կարմրում ինչպես արշալույս (իհարկե, նրան ասել էին)։ Զգիտեմ թե

գուք ինչպես եք վերաբերվում կանացի դեմքերին, բայց, քանի որ այդ առանվեցամյա հասակը, դեռ մանկական այդ աչիկները, այդ երկչոտությունը և ամոթխածության արցունքները՝ այդ ամենը դեղեցկությունից էլ լավ է, իսկ նա այդ բոլորով հանդերձ ուղղակի պատկեր է։ Շեկլիկ մազեր, փոքրիկ խոպոպիկներ հյուսած, փափլիկ, կարմիր շուրթեր, փոքրիկ տոտիկներ՝ սքանչելի՞ք... Ծանոթացանք, ես հայտնեցի, որ շտապում եմ գնալ տնային գործերով, ու հետևյալ օրը, այսինքն՝ երեկ չէ մյուս օրը մենք նշանվեցինք։ Ու այնուհետև, երբ գնում եմ այնտեղ, նրան իսկույն նստեցնում եմ ծնկներիս և գուրգուրում... Կարմրում է արշալույսի պես, ու ես ամեն բոպե համբուրում եմ. մայրիկը, իհարկե խրատում է նրան, թե դա քո ամուսինն է և այդպես է պահանջվում, մի խոսքով, հիանալի բան։ Հիմիկվա իմ, փեսացուիս, այս վիճակը գուցե ավելի լավ է, քան ամուսնու վիճակը։ Այստեղ, ինչպես ասում են, առկա է la nature ef la vèritè-ն[1], քա՛հ-քա՛հ։ Ես մի-երկու անգամ ղրուցել եմ նրա հետ. շատ խելոք աղջիկ է. երբեմն մի ակնթարթ այնպես է նայում ինձ, որ ուղղակի վառում է։ Գիտե՞ք, նրա գեմքը առնս Ռաֆայելի Մադոննայի դեմքը լինի։ Սիքստինյան Մադոննայի դեմքը հո ֆանտաստիկ է, սգավոր կնոջ դեմք է, գուք այդ չե՞ք նկատել։ Աղջկա դեմքն էլ այդպես է։ Հենց որ մեզ օրհնեցին, հետևյալ օրը ես տարա հաղար հինգ հարյուր ռուբլու բրիլիանտե ու մարգարիտե զարդարանքներ, արդուզարդի արծաթե կանացի մի մեծ զարդատուփ այլևայլ պարագաներով, այնպես որ նրա, Մադոննայի դեմքը նույնիսկ թունդ շառագունեց։ Երեկ ես նրան նստեցրի ծնկներիս, բայց երևի այդ արեցի խիստ անպատկառ, նա շիկնեց, արտասվեց, բայց ձայն չի հանում, կրակի պես վառվում է։ Մի բոպե բոլորը գնացին, հանկարծ ընկնում է վզովս (հենց ինքը առաջին անգամ), գրկում է ինձ երկու ձեռքով, համբուրում է ու երդվում, որ ինձ հնազանդ, հավատարիմ ու բարի կին կլինի, որ կերջանկացնի ինձ, որ ինձ կնվիրի իր ամբողջ կյանքը. իր կյանքի ամեն մի բոպեն, ամեն, ամեն ինչ կզոհաբերի, իսկ այդ բոլորի համար ցանկանում է միայն

---

[1] Բնավանությունը և անկեղծությունը (ֆրանս.)։

իմ հարցանքը, ու ասում է՝ «էլ ուրիշ ոչինչ, ոչինչ, ոչինչ հարկավոր չէ, ոչ մի նվեր»։ Ինքներդ համաձայնեցեք, թե որքան հրապուրիչ է նման խոստովանություն լսել շղարշե շրջազգեստ հագած, սիրունիկ խոպոպիկներով, աղջկական ամոթխածությունից շիկնող, հուզմունքից արտասվող, տասնքվեցամյա այդ հրեշտակից։ Հո հրապուրի՞չ է, հո մի բան արժե՞, չը՞։ Իհարկե, արժե։ Լավ... Մի լսեք... Կգնանք հարսնացուիս մոտ... բայց ոչ հիմա։

— Մի խոսքով, հասակի ու զարգացման հենց այդ հրեշավոր տարբերությունն էլ ձեր մեջ պագշոտություն է գրգռում։ Եվ մի՞թե դուք իրոք այդպես էլ կամուսնանաք։

— Ի՞նչ կա որ։ Անպայման։ Ամեն ոք իր գործը գիտե և բոլորից ավելի ուրախ է ապրում նա, ով բոլորից ավելի լավ է կարողանում ինքն իրեն խաբել։ Քա՛հ-քա՛հ, էլ ի՞նչ եք այդպես առաքինությունից կառչել։ Խնայեցեք, պատվելի, ես մեղսոտ մարդ եմ։ Քա՛հ-քա՛հ-քա՛հ։

— Դուք այնուամենայնիվ տեղավորեցիք Կատերինա Իվանովնայի երեխաներին։ Սակայն... սակայն դուք դրա համար պատճառներ ունեիք... ես հիմա ամեն ինչ հասկանում եմ։

— Ես առհասարակ սիրում եմ երեխաներին, ես շատ եմ սիրում երեխաներին,— քրքջաց Սվիդրիգայլովը։ — Այդ մասին ես նույնիսկ կարող եմ ձեզ պատմել շատ հետաքրքրքիր մի միջադեպ, որը մինչև հիմա էլ շարունակվում է։ Ժամանելուցս հետո հենց առաջին օրը ես գնացի այլևայլ անբարոյական, կեղտոտ տեղեր, յոթ տարի գյուղում լինելուց հետո ուղղակի նետվեցի այդ տեղերը։ Դուք երևի նկատում եք, որ ես չեմ շտապում հանդիպել իմ ընկերախմբին. առաջվա բարեկամներիս ու ընկերներիս։ Որքան կարելի է, նրանցից երկար ժամանակ հեռու կմնամ։ Գիտե՞ք, Մարֆա Պետրովնայի մոտ, գյուղում ինձ մեղցնելու չափ մաշեցին հիշողությունները բոլոր այդ խորհրդավոր տեղերի ու վայրերի մասին, ուր շատ բան կարող է գտնել նա, ով ծանոթ է դրանց։ Սատանան տանի, մարդիկ հարբեցողություն են անում, կրթված երիտասարդությունը անգործությունից տարվում է անիրագործելի երազներով ու անուրջներով, ալլանդակվում թեորիաներով. որտեղից որտեղ ջհուդներ են

մեջտեղ եկել, թաքցնում են փողերը, իսկ մյուսները բոլորն էլ անառակություն են անում։ Այս քաղաքը հենց առաջին ժամերից ինձ վրա փչեց ծանոթ հոտը։ Ես եղա այսպես կոչված մի պարերեկույթում, սարսափելի կեղտոտ միջավայրում (իսկ ես սիրում եմ այդպիսի կեղտոտ տեղերը), դե իհարկե, կատարվում էր կանկան՝ ֆրանսիական անհամեստ պար, որի նմանը չկա և որը առաջ այստեղ չի եղել։ Ահա քեզ առաջադիմություն։ Հանկարծ տեսնում եմ, որ հաճելի հագնված, տասներեք տարեկան մի աղջիկ պարում է մի վիրտուոզի հետ. մի ուրիշն էլ դեմուդեմ նրան է նայում։ Պատի տակ, աթոռին նստել է աղջկա մայրը։ Կարող եք պատկերացնել, թե ինչ էր այդ կանկանը։ Աղջիկը շփոթվում է, կարմրում, վերջապես, դա իր համար վիրավորական է համարում և սկսում է լաց լինել։ Վիրտուոզը վերցնում է նրան, սկսում է պտտել և նրա առջև ծամածռություններ անել, շուրջը բոլորը քրքջում են. այդպիսի վայրկյաններին սիրում եմ թեկուզև նույնիսկ կանկանային հասարակությանը. հա՛, քրքջում են ու գոչում՝ «Տեղն է, այդպես էլ հարկավոր է, թող երեխաներին չբերեն»։ Էհ, թքած դրա վրա, իմ ի՞նչ գործն է, տրամաբանական է դա, թե ոչ, նրանք իրենք են սփոփվում։ Ես իսկույն ինձ համար տեղ նշեցի, նստեցի մոր մոտ, ասացի, որ ես եկվոր եմ, որ այստեղ մարդիկ անքաղաքավարի են, չգիտեն գնահատել իսկական արժանիքները և պատշաճ հարգանք տածել. հասկացրի, որ շատ փող ունեմ. առաջարկեցի նրանց տուն տանել իմ կառքով. տուն հասանք, ծանոթացա (տեղավորվել են տրնվորներից վարձած ինչ-որ խցիկում, հենց նոր են ժամանել)։ Թե մայրը և թե դուստրը հայտարարեցին, որ ինձ հետ ծանոթանալը կարող են ընդունել ոչ այլ կերպ, քան որպես պատիվ. իմացա, որ նրանք մի չոփ էլ չունեն, ժամանել են ինչ-որ բան խնդրելու ինչ-որ ատյանից. առաջարկում եմ փող, իմ ծառայությունները. իմանում եմ, որ նրանք սխալմամբ են գնացել երեկույթին, կարծելով, թե այնտեղ իրոք պարեր են սովորեցնում. առաջարկում եմ իմ աջակցությունը, որպեսզի դեռահաս աղջիկը ֆրանսերեն և պարեր սովորի։ Դա ցնծությամբ են ընդունում, պատիվ են համարում։

92 Ֆ. Ի. Դոստոևսկի

Մինչև հիմա էլ ծանոթ եմ... Ուզո՞ւմ եք գնանք, միայն թե մի ուրիշ ժամանակ։

— Թողեք, թողեք ձեր ստոր, անվայել անեկդոտները, անառակ, ստոր, վատաշոտ մարդ։

— Շիլլեր եք, Շիլլեր, մեր Շիլլերն եք։ Où va-t-elle la vertu se nicher[1]., գիտե՞ք, ես պետք է ձեզ դիտմամբ այսպիսի բաներ պատմեմ, որպեսզի լսեմ ձեր ճչոցները։ Հաճույք է։

— Դե, իհարկե, մի՞թե այս բոպեին ես ինքս ինձ համար ծիծաղելի չեմ,— բարկությամբ քրթմնջաց Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը բարձր քրքջում է. վերջապես, կանչեց Ֆիլիպին, վճարեց ու վեր կացավ։

— Օֆ, ինչպե՛ս հարբած եմ, assez causé[2], հաճույք էր, —ասաց նա։

— Էլ ինչպե՛ս հաճույք չղգայի՞ք,— գոչեց Ռասկոլնիկովը, նույնպես վեր կենալով,— մի՞թե մի որևէ հրեշավոր դիտավորություն ունեցող, փչացած անառակի համար այդպիսի արկածների մասին պատմելը հաճույք չէ. այն էլ այսպիսի հանգամանքներում ինձ նման մարդուն պատմելը... Ոգևորի՛չ է։

— Էհ, եթե այդպես է,— նույնիսկ մի փոքր զարմացած պատասխանեց Սվիդրիգայլովը,— եթե այդպես է, ապա դուք ինքներդ էլ կարգին ցինիկ եք։ Գոնե ահագին նյութ եք պարունակում ձեր մեջ։ Կարող եք շատ, շատ բան գիտակցել... դե, դուք շատ բան անել էլ կարող եք։ Սակայն բավական է։ Անկեղծորեն ցավում եմ, որ ձեզ հետ քիչ խոսեցի, բայց դուք ինձնից չեք պրծնի... Դեռ սպասեցեք...

Սվիդրիգայլովը պանդոկից դուրս եկավ։ Ռասկոլնիկովը հետևեց նրան։ Սվիդրիգայլովը, սակայն, այնքան էլ հարբած չէր. գինին միայն մի ակնթարթ էր խփել գլխին, գինովությունը հետզհետե անցնում էր։ Նա խիստ մտահոգված էր ինչ-որ բանով, չափազանց կարևոր ինչ-որ բանով, ու մռայլվում էր։ Ըստ երևույթին ոպասելիք ուներ, և դա նը-

---

[1] Որտեղ միայն բույն չի դնում առաքինությունը (ֆրանս.)։

[2] Բավական խոսելինք (ֆրանս.)։

բան հուզում էր ու անհանգստացնում։ Ռասկոլնիկովի ներկայության վերջին բոպեներին նա հանկարծ մի տեսակ փոխվեց և բոպե առ բոպե կոպտանում էր ու հեգնանք արտահայտում։ Ռասկոլնիկովը նկատեց այդ ամենը և նույնպես անհանգիստ էր։ Սվիդրիգայլովը խիստ կասկածելի դարձավ նրա համար և նա որոշեց հետապնդել այդ մարդուն։

Նրանք փողոցում էին։

— Դուք գնում եք աջ, իսկ ես ձախ կողմը, կամ թերևս ընդհակառակը. էհ, adieu, mon plaisir[1], մինչև բիրկրալի տեսակցություն։

Եվ նա գնաց աջ, դեպի Սեննայա հրապարակը։

V.

Ռասկոլնիկովը քայլեց նրա ետևից։

— Այդ ի՞նչ է,— ետ նայելով գոչեց Սվիդրիգայլովը,— ես հո կարծեմ ձեզ ասացի...

— Սա նշանակում է, որ ես հիմա ձեզնից չեմ անջատվի։

— Ի-ի-ի՞նչ։

Երկուսն էլ կանգ առան ու երկուսն էլ մի բոպե նայում, ասես հայացքով չափում էին միմյանց։

— Ձեր կիսահարբած վիճակում ձեր բոլոր պատմածներից ես դրականապես եզրակացրի, որ դուք ոչ միայն չեք թողել ձեր ամենաստոր դիտավորությունները իմ քրոջ նկատմամբ, այլև դրանով ավելի շատ եք զբաղված, քան երբևէ,— կտրուկ ասաց Ռասկոլնիկովը։ — Ինձ հայտնի է, որ այսօր առավոտյան քույրս ինչ-որ նամակ է ստացել։ Դուք ամբողջ ժամանակ չէիք կարողանում հանգիստ նստել ձեր տեղում... Դուք, իհարկե, կարող էիք որտեղից որտեղ ինչ-որ կին ճարել, բայց դա ոչինչ չի նշանակում։ Ես ցանկանում եմ անձամբ հավաստիանալ...

Ռասկոլնիկովը հազիվ թե ինքն էլ կարողանար որոշել, թե հիմա ինչ էր ուզում և ինչումն էր անձամբ հավաստիանալ ցանկանում։

---

[1] Մնաս բարով անուշիկս (ֆրանս.)։

— Ահա թե ինչ։ Ուզում եք, որ ես հիմա ոստիկանություն կանչեմ։

— Կանչիր։

Նրանք դարձյալ մի բոպեի չափ կանգնեցին իրար դեմ։ Վերջապես, Սվիդրիգայլովի դեմքը փոխվեց։ Հավաստիանալով, որ Ռասկոլնիկովը սպառնալիքից չի վախեցել, նա հանկարծ բոլորովին ուրախ և բարեկամական տեսք ընդունեց։

— Ինչ մարդ ե՛ք, է՛։ Ես դիտմամբ ձեր գործի մասին չէի խոսում ձեզ հետ, թեև, իհարկե, ինձ տանջում է հետաքրքրությունը։ Ֆանտաստիկ գործ է։ Ուզում էի առայժմ հետաձգել, բայց իրոք դուք ընդունակ եք մեռելին էլ ջղայնացնելու... Դե, գնանք, միայն թե նախապես կասեմ, ես միայն մի բոպեով տուն կմտնեմ փող վերցնելու. հետո կփակեմ բնակարանս, կառք կվերցնեմ ու կգնամ ամբողջ օրը կղզիներում անցկացնելու։ Էլ ինչպե՞ս կարող եք իմ ետևից գալ։

— Ես էլ առայժմ կգնամ, և ոչ թե ձեր բնակարանը, այլ Սոֆյա Սեմյոնովնայի մոտ, ներողություն խնդրելու, որ թաղմանը չեմ եղել։

— Ինչպես որ կամենաք, բայց Սոֆյա Սեմյոնովնան տանը չէ։ Նա բոլոր երեխաներին տարել է մի կնոջ մոտ, մի ազնվական պառավ կնոջ մոտ, որը իմ առաջվա, վաղուցվա ծանոթուհին է և տնօրեն է ինչ-որ որբանոցներում։ Ես հիացրել եմ այդ կնոջը՝ փող մուծելով Կատերինա Իվանովնայի երեք ճուտիկների համար, բացի դրանից, նաև որբանոցների համար. վերջապես, բոլոր մանրամասնություններով, նույնիսկ առանց որևէ բան թաքցնելու նրան պատմել եմ Սոֆյա Սեմյոնովնայի պատմությունը։ Տպավորությունը աննկարագրելի էր։ Ահա թե ինչու Սոֆյա Սեմյոնովնան հենց այսօր կանչված էր ուղղակի № հյուրանոցը, որտեղ ժամանակավորապես, ամառանոցից վերադառնալուց հետո, ներկա է այդ տիրուհին։

— Ոչինչ, ես այնուամենայնիվ կգնամ։

— Ինչպես կուզեք, միայն թե ես ձեզ հետ չեմ լինի, ի՛նձ ինչ։ Ահա և մենք տուն հասանք։ Ասացեք, դուք հո ինձ կասկածանքով եք նայում, որովհետև ես այնքան քա-

ղաքավարի եմ եղել, որ մինչև այժմ ձեզ չեմ անհանգստացրել հարցուփորձով... հասկանո՞ւմ եք։ Դա ձեզ արտասովոր բան է թվացել. գրաղ եմ գալիս, որ այդպես է։ Դե արի ու սրանից հետո քաղաքավարի եղիր։

— Ու դուռն ետևից ականջ դիր։

— Հը՛մ, դուք ա՞յդ եք ակնարկում,— ծիծաղեց Սվիդրիգայլովը,— այո, ես կզարմանայի, եթե ի վերջո այդ մասին դիտողություն չանեիք, քա՛հ-քա՛հ։ Ես թեև որոշ բան հասկացել էի այն ամենից, ինչ-որ դուք այնտեղ... դուրս էիք տալիս և ինքներդ պատմում էիք Սոֆյա Սեմյոնովնային, բայց և այնպես, ի՞նչ է դա. ես գուցե բոլորովին հեռամնաց մարդ եմ և արդեն ոչինչ չեմ կարողանում հասկանալ։ Ի սեր աստծո, բացատրեցեք, սիրելիս, լուսաբանեցեք նորագույն սկզբունքներով։

— Դուք ոչինչ չէիք կարող լսել, էլի՛ ստում եք։

— Ես այդ մասին չեմ խոսում (թեև ես, այնուամենայնիվ, որոշ բան լսում էի), ոչ, ես ասում եմ, որ դուք շարունակ ախ ու վախ եք անում։ Ձեր մեջ Շիլլերն է բոպեն առ բոպեն շփոթվում։ Դե, արի ու ականջ մի դնի դուռն ետևից։ Եթե այդպես է, ապա գնացեք ու հայտարարեցեք իշխանավորներին, թե այսպես ու այսպես, ինձ հետ արտասովոր բան է պատահել, թեորիայում մի փոքրիկ սխալ է եղել։ Իսկ եթե համոզված եք, որ չի կարելի դուռն ետևից ականջ դնել։ իսկ պառավներին կարելի է սղկել ինչով ասես, սեփական հաճույքի համար, ապա շուտափույթ մեկնեցեք որևէ տեղ։ Ամերիկա։ Փախեք, երիտասարդ։ Գուցե դեռ ժամանակ կա։ Ես անկեղծորեն եմ ասում։ Փող չկա՞, ինչ։ Ես ճանապարհի փող կտամ։

— Ես այդ մասին բոլորովին չեմ մտածում,— զզվանքով ընդհատեց Ռասկոլնիկովը։

— Հասկանում եմ (դուք, սակայն նեղություն մի քաշեք. եթե ուզում եք, շատ էլ մի խոսեք). հասկանում եմ, թե ինչ հարցեր են ձեզ ղբաղեցնում, բարոյական՞, թե ինչ. քաղաքացու և մարդու հարցե՞ր։ Դուք այդ մի կողմ թողեք. հիմա դրանք ձեր ինչի՞ն են պետք, քա՛հ-քա՛հ։ Նրա համար, որ դեռևս և քաղաքացի եք և մա՞րդ։ Եթե այդպես է,

ապա հարկավոր չէր քիթ խոթել. չէ՞ որ դա ձեր գործը չէր։ Դե ուրեմն ինքնասպանություն գործեցեք։ Ձե՞ք ուզում, հա՞։

— Երևի դուք ուզում եք դիտմամբ ինձ ջղայնացնել, որ ես այժմ հեռանամ ձեզնից...

— Ա՛յ քեզ տարօրինակ մարդ, մենք հա արդեն տեղ հասանք, համեցեք, բարձրանանք սանդուղքով։ Տեսեք, ահա Սոֆյա Սեմյոնովնայի բնակարանի մուտքը, նայեցեք, ոչ ոք չկա... Ձե՞ք հավատում, հարցրեք Կապերնաումովին։ Սոֆյա Սեմյոնովնան բանալին նրանց է տալիս։ Ահա և ինքը, madame de Կապերնաումովը, հը՞։ Ի՞նչ է (նա մի քիչ խուլ է), գնացե՞լ է, ո՞ւր։ Այ, լսեցի՞ք։ Նա տանը չէ և գուցե մինչև ուշ երեկո չի լինի։ Դե հիմա գնանք ինձ մոտ։ Ձէ՞ ոչ դուք ուզում էիք ինձ մոտ գալ։ Ահա և իմ բնակարանը։ Madame Ռեսլիխը տանը չէ։ Այդ կինը շարունակ հոգսերով է զբաղված, լավ կին է, հավատացնում եմ ձեզ... գուցե նա ձեզ հարկավոր լիներ, եթե դուք մի քիչ ավելի խելոք լիներիք։ Դե հիմա հաճեցեք տեսնել. ես բյուրոյից վերցնում եմ այս հինգ տոկոսանոց տոմսը (ինձ մոտ դրանք շատ են), իսկ սա այսօր դրամի կփոխվի։ Տեսա՞ք, էլ ի՞նչ հարկ կա, որ ես ժամանակ կորցնեմ։ Բյուրոն փակվում է, բնակարանը փակվում է, ու մենք դարձյալ իջնում ենք սանդուղքով։ Ուզո՞ւմ եք կառք վարձենք։ Ես գնալու եմ կղզիները։ Ձէ՞ իք ուզենա գալ։ Ահա ես կառք եմ վերցնում Ելագին կղզին գնալու համար։ Ի՞նչ, հրաժարվո՞ւմ եք, սիրտ չե՞ք անում։ Ոչինչ, կգնանք, էլի։ Կարծեմ անձրև է գալու, ոչինչ, կիջեցնենք կառքի ծածկը...

Սվիդրիգայլովը արդեն կառք էր նստել։ Ռասկոլնիկովը մտածեց, որ իր կասկածանքները գոնե այդ պահին անարդարացի են։ Ոչ մի բառ չպատասխանելով, նա շուռ եկավ ու ետ գնաց դեպի Սեննայա հրապարակը։ Եթե նա ճանապարհին դեթ մի անգամ ետ նայեր, կտեսներ, թե ինչպես Սվիդրիգայլովը կառքով ընդամենը մի հարյուր քայլ անցնելով, վճարեց կառապանին, իջավ և արդեն մայթի վրա էր։ Ռասկոլնիկովը էլ ոչինչ չէր կարող տեսնել և շուռ էր եկել փողոցի անկյունից։ Խորին զզվանքը նրան հեռացրեց Սվիդրիգայլովից։ «Մի՞թե ես կարող էի թեկուզ մի ակնթարթ որևէ բան սպասել այդ կոպիտ չարագործից, այդ վավաշոտ ա-

նառակից ու սրիկայից», ակամա գոչեց նաև Ճշմարիտ է, որ Ռասկոլնիկովը չափազանց հապճեպորեն ու թեթևամտությամբ արտահայտեց իր դատողությունը։ Սվիդրիգայլովի մեջ ինչ-որ մի բան կար, որը նրան տալիս էր գոնե ինքնօրինակություն, եթե ոչ խորհրդավորություն։ Իսկ ինչ որ այդ ամենի մեջ վերաբերում էր քրոջը, ապա Ռասկոլնիկովը այնուամենայնիվ մնում էր այն հաստատ համոզմունքին, որ Սվիդրիգայլովը նրան հանդիստ չէր թողնի։ Բայց արդեն խիստ ծանր ու անտանելի էր մտածել և գլուխ կոտրել այդ ամենի մասին։

Ըստ իր սովորության, մնալով մենակ, դեռ քսան քայլ էլ չանցած, նա խոր մտածմունքի մեջ ընկավ։ Բարձրանալով ջրանցքի կամրջի վրա, նա կանգ առավ բուզրիքի կողքին ու սկսեց նայել ջրին։ Այնինչ նրանից քիչ հեռու կանգնած էր Ավդոտյա Ռոմանովնան։

Ռասկոլնիկովը նրան հանդիպեց այն պահին, երբ բարձրանում էր կամրջի վրա, բայց նրան չնկատեց և մի կողմ անցավ։ Դունեչկան դեռ երբեք փողոցում նրան չէր տեսել այդպիսի վիճակում և վախենալու չափ ապշեց։ Նա կանգ առավ ու չգիտեր՝ կանչի՞ նրան, թե ոչ։ Հանկարծ նա նկատեց Սեննայա հրապարակի կողմից հապճեպ մոտեցող Սվիդրիգայլովին։

Բայց Սվիդրիգայլովը կարծես թե գաղտագողի և զգուշությամբ էր մոտենում։ Նա չբարձրացավ կամուրջը, այլ կանգ առավ քիչ հեռու, մայթի վրա, ամեն կերպ աշխատելով, որ Ռասկոլնիկովը իրեն չտեսնի։ Դունյային վաղուց էր նկատել և նրան նշաններ էր անում։ Դունյային թվաց, որ նա այդ նշաններով խնդրում էր չկանչել եղբորը ու նրան հանդիստ թողնել, ու իրեն, Դունյային իր մոտ էր կանչում։

Դունյան այդպես էլ արեց։ Նա կամացուկ շրջանցեց եղբորը և մոտեցավ Սվիդրիգայլովին։

— Շո՛ւտ գնանք,— շշնջաց Սվիդրիգայլովը,— ես չեմ ցանկանում, որ Ռոդիոն Ռոմանիչը իմանա մեր տեսակցության մասին։ Նախազգուշացնում եմ ձեզ, որ ես նստած էի այստեղից մոտ գտնվող մի պանդոկում, ուր նա ինքն էր եկել ինձ գտնելու, և ես հազիվ պոկվեցի նրանից։ Նա գիտե, որ ես ձեզ նամակ եմ ուղարկել, ու ինչ-որ բան է կառկա-

ծում։ Դե իհարկե, դուք այդ չեք ասել նրան։ Իսկ եթե ոչ դուք, հապա ո՞վ է ասել։

— Ահա մենք արդեն շուտ եկանք փողոցի անկյունից,— ընդհատեց Դունյան,— հիմա եղբայրս մեզ չի տեսնի։ Հայտարարում եմ ձեզ, որ ես ձեզ հետ ավելի հեռու չեմ գնա։ Ամեն ինչ ինձ այստեղ ասացեք. այդ ամենը կարելի է փողոցում էլ ասել։

— Նախ՝ դա ոչ մի կերպ չի կարելի ասել փողոցում. երկրորդ՝ դուք պետք է լսեք նաև Սոֆյա Սեմյոնովնային. երրորդ, ես ձեզ ուրիշ բաներ եմ ցույց տալու... Հա՛, վերջապես, եթե դուք չհամաձայնեք ինձ մոտ գալ, ապա ես հրաժարվում եմ ամեն մի բացատրությունից և անմիջապես հեռանում եմ։ Ընդսմին, ձեզ խնդրում եմ չմոռանալ, որ ձեր սիրելի եղբոր խիստ հետաքրքիր գաղտնիքը ամբողջովին իմ ձեռքում է գտնվում։

Դունյան տատանվելով կանգ առավ և խոցող հայացքով նայում էր Սվիդրիգայլովին։

— Ինչի՞ց եք վախենում,— հանգիստ ասաց Սվիդրիգայլովը,— քաղաքը գյուղ չէ։ Գյուղում էլ դուք ավելի շատ եք վնասել ինձ, քան թե ես ձեզ, իսկ այստեղ...

— Սոֆյա Սեմյոնովնային նախազգուշացրե՞լ եք։

— Ոչ, ես նրան ոչ մի բառ չեմ ասել և նույնիսկ այնքան էլ հավատացած չեմ, թե նա այժմ տանը կլինի։ Ասենք, հավանորեն տանն է։ Նա այսօր թաղել է իր ազգականուհուն, այնպիսի օր չէ, որ հյուր գնա։ Առայժմ ես չեմ ուզում որևէ մեկին ասել հիշատակածս գաղտնիքը և նույնիսկ մասամբ զզջում եմ, որ ձեզ հազորդեցի։ Այստեղ ամենաշնչին անզգուշությունը մատնության է հավասար։ Ես ապրում եմ այստեղ, այս տանը, ահա մենք մոտենում ենք։ Հրե՛ն մեր տան դռնապանը. նա ինձ շատ լավ է ճանաչում. ահա բարևում է. նա տեսնում է, որ ես կնոջ հետ եմ գալիս և, իհարկե, արդեն նկատեց ձեր դեմքը, իսկ դա ձեզ հարկավոր կլինի, եթե դուք շատ եք վախենում և ինձ վրա կասկածում։ Ներեցեք, որ ես այսպես կոպիտ եմ խոսում։ Ապրում եմ տնվորներից վարձած բնակարանում։ Սոֆյա Սեմյոնովնան ապրում է հենց իմ կողքին, նույնպես տնվորներից վարձած բնակարանում։ Ամբողջ հարկում տնվորներ են ապրում։

էլ ինչի՞ց եք վախենում երեխայի պես։ Թե՞ ես այդքան սարսափելի եմ։

Սվիդրիգայլովի դեմքը ծամածռվեց ներողամտության ժպիտից, բայց նա արդեն տրամադիր չէր ժպտալու։ Նրա սիրտը տրոփում էր ու շունչը բռնվում։ Նա դիտմամբ բարձրը էր խոսում, որպեսզի թաքցներ իր աճող հուզմունքը. բայց Դունյան չկարողացավ նկատել այդ առանձնահատուկ հուզմունքը. նրան սաստիկ զզվեցրեց այն դիտողությունը, թե ինքը երեխայի պես վախենում է Սվիդրիգայլովից, թե վերջինս սարսափելի է իր համար։

— Թեև ես գիտեմ, որ դուք... անազնիվ մարդ եք, բայց ես ձեզնից ամենևին չեմ վախենում։ Անցեք առաջ,— ասաց նա ըստ երևույթին հանգիստ, բայց նրա դեմքը խիստ գունատ էր։

Սվիդրիգայլովը կանգ առավ Սոնյայի բնակարանի առաջ։

— Թույլ տվեք իմանալ, տա՞նն է նա։ Ո՛չ։ Անհաջողություն։ Բայց ես գիտեմ, որ նա շատ շուտով կարող է գալ։ Հավանորեն նա գնացել է մի տիկնոջ մոտ, իր որբերի գործով։ Դրանց մայրը մեռել է։ Ես այստեղ էլ եմ մեջ ընկել և տնօրինություն արել։ Եթե Սոֆյա Սեմյոնովնան տասը բոպեից չվերադառնա, ապա հենց այսօր ես նրան կուղարկեմ ձեզ մոտ, եթե ուզում եք։ Ահա և իմ բնակարանը։ Ահա իմ երկու սենյակը։ Դռան մյուս կողմում իմ տանտիրուհու, տիկին Ռեսսլիխի բնակարանն է։ Հիմա նայեցեք այստեղ, ես ձեզ ահա թե ինչ ցույց կտամ. իմ ննջարանից ահա այս դուռը բացվում է դեպի երկու բոլորովին դատարկ սենյակ, որոնք վարձով են տրվում։ Ահա դրանք... Դուք պետք է դրանց մի քիչ ավելի ուշադիր նայեք...

Սվիդրիգայլովը երկու կահավորված, բավական ընդարձակ սենյակ էր գրավում։ Դունեչկան անվստահորեն նայում էր շուրջը, բայց առանձին ոչինչ չնկատեց սենյակների ոչ կահավորման, ոչ էլ դասավորության մեջ, թեև կարելի էր որոշ բան նկատել, օրինակ, Սվիդրիգայլովի բնակարանը գտնվում էր համարյա անբնակ երկու բնակարանների միջև։ Նրա սենյակների մուտքը ոչ թե ուղղակի միջանցքից էր, այլ տանտիրուհու երկու սենյակների միջից, որոնք հա-

մարյա դատարկ էին։ Սվիդրիգայլովը բանալով ննջարանի դուռը, որ փակված էր բանալիով, Դունեչկային ցույց տվեց վարձով տրվող, նույնպես դատարկ բնակարանը։ Դունեչկան կանգ առավ շեմքին, չհասկանալով, թե ինչու են իրեն հրավիրում նայելու, բայց Սվիդրիգայլովը շտապեց բացատրություններ տալ։

— Նայեցեք այստեղ, այս երկրորդ, մեծ սենյակը։ Տեսեք այս դուռը, բանալիով է փակված։ Դռան մոտ աթոռ է գրված, ընդամենը մի աթոռ երկու սենյակում։ Ես սա բերել էի իմ բնակարանից, որ նստեի ու ականջ դնեի։ Այնտեղ, դռան ետևում դրված է Սոֆյա Սեմյոնովնայի սեղանը. այնտեղ նստած էր նա և խոսում էր Ռոգիոն Ռոմանիչի հետ։ Իսկ ես իրար ետևից երկու երեկո, ամեն անգամ երկու ժամ այս աթոռին նստած, ականջ էի դնում, և իհարկե կարող էի որևէ բան իմանալ, ի՞նչ եք կարծում։

— Դուք ակա՞նջ էիք դնում։

— Այո, ականջ էի դնում. հիմա գնանք ինձ մոտ, այստեղ նստելու տեղ էլ չկա։

Նա Ավդոտյա Ռոմանովնային նորից տարավ իր առաջին սենյակը, որ իրրև դահլիճ էր ծառայում, ու հրավիրեց նստել աթոռին։ Ինքը նստեց սեղանի մյուս կողմում, նրանից առնվազն մի սաժեն հեռու, բայց հավանորեն նրա աչքերում բռնկվել էր հենց այն բոցը, որը մի ժամանակ խիստ վախեցնում էր Դունեչկային։ Վերջինս ցնցվեց ու մի անգամ էլ անվստահորեն նայեց շուրջը։ Նրա շարժումը ակամայից էր. ըստ երևույթին նա չէր ուզում անվստահություն ցույց տալ։ Բայց Սվիդրիգայլովի բնակարանի առանձնացած դիրքը ի վերջո շփոթեցրեց նրան։ Նա ուզում էր հարցնել, թե արդյոք տա՞նն է դոնե տանտիրուհին, բայց չհարցրեց... հպարտությունից դրդված։ Բացի դրանից, նրան մի ուրիշ, անհամեմատ ավելի ահավոր միտք էր տանջում, քան ոսկի վախը։ Նրա հոգեվիճակը անտանելի տառապալից էր։

— Ահա ձեր նամակը,— ասաց նա՝ նամակը դնելով սեղանին։ — Մի՞թե հնարավոր է այն, ինչ որ դուք գրում եք։ Դուք ակնարկում եք ինչ-որ ոճիր, որ իբր թե եղբայրս է կատարել։ Դուք շատ պարզ եք ակնարկում, դուք հիմա չեք համարձակվի դրանից հրաժարվել։ Գիտցեք, որ ես առաջ էլ

եմ լսել այդ հիմար հեքիաթը և դրա ոչ մի բառին չեմ հավատում։ Դա գարշելի ու ծիծաղելի կասկածանք է։ Ես գիտեմ այդ պատմությունը, գիտեմ, թե դա ինչպես և ինչից է մոգոնվել։ Դուք ոչ մի ապացույց չեք կարող ունենալ։ Դուք խոստացել եք ապացուցել. դե ուրեմն խոսեցեք։ Բայց նախապես գիտցեք, որ ես ձեզ չե՛մ հավատում, չե՛մ հավատում...

Դունեչկան այդ ասաց մրագ-արագ, շտապելով, ու նրա դեմքը մի ակնթարթ շիկնեց։

— Եթե դուք չհավատայիք, ինչպե՞ս կարող էր պատահել, որ մենակ ինձ մոտ գալու ոիսկ անեիք։ Հապա ինչո՞ւ եկաք, հենց միայն հետաքրքրությունից դրդվա՞ծ։

— Մի տանջեք ինձ, խոսեք, խոսեք։

— Ի՞նչ ասել կուզի, դուք քաջարի աղջիկ եք։ Աստված վկա ես կարծում էի, թե դուք պարոն Ռազումիխինին կխլնդրեք ձեզ ուղեկցել այստեղ։ Բայց նա ոչ ձեզ հետ էր, ոչ էլ ձեր շուրջը. ես այդ տեսա. դա խիզախություն է. ուրեմն ուզում էիք, որ Ռոդիոն Ռոմանիչը չիմանա՞։ Հը՛մ, ձեր մեջ ամեն ինչ աստվածային է։ Ինչ վերաբերում է ձեր եղբորը, ապա ես ձեզ ի՞նչ ասեմ։ Դուք ինքներդ հիմա նրան տեսաք։ Ինչպիսի՞ն է նա։

— Դուք հո միայն դրա վրա չե՞ք հիմնվում։

— Ոչ, հիմնվում եմ հենց իր խոսքերի վրա։ Իրար ետևից երկու երեկո նա գալիս էր այստեղ, Սոֆյա Սեմյոնովնայի մոտ։ Ես ձեզ ցույց տվի, թե նրանք որտեղ էին նստում։ Նա Սոֆյա Սեմյոնովնային լրիվ հաղորդեց իր կատարած ոճիրը։ Նա մարդասպան է։ Նա սպանել է աստիճանավորի վաշխառու կնոջը, որի մոտ ինքն էլ իբեր էր գրավ դնում. սպանել է նաև նրա քրոջը, Լիզավետա անունով առևտրական կնոջը, որը քրոջ սպանության ժամանակ անսպասելի ներս էր մտել։ Երկուսին էլ սպանել էր իր տարած կացնով։ Սպանել էր կողոպտելու համար և կողոպտել էր. վերցրել էր փող և ինչ-որ իրեր... Այս ամենը նա բառ առ բառ հաղորդեց Սոֆյա Սեմյոնովնային, որը գիտե գաղտնիքը, բայց սպանությանը չի մասնակցել ոչ խոսքով, ոչ էլ գործով, այլ ընդհակառակը, այնպես է սարսափել, ինչպես

հիմա դուք սարսափեցիք։ Հանգիստ եղեք, նա Ռոդիոն Ռոմանիչին չի մատնի։

— Այդ անկարելի է,— դալուկ, մեռելագույն շուրթերով քրթմնջաց Դունեչկան. նա շնչասպառ էր լինում,— չի կարող պատահել, դրա համար չկա ոչ մի պատճառ, ոչ մի առիթ... Դա սուտ է, սուտ է։

— Նա կողոպտել է, ահա և ամբողջ պատճառը։ Նա փող և իրեր է վերցրել։ Ճշմարիտ է, հենց իր խոստովանությամբ նա չի օգտվել ոչ փողերից, ոչ էլ իրերից, այլ տարել է ինչոր տեղ և պահել քարի տակ, ուր դրանք հիմա էլ գտնվում են։ Բայց դա այն պատճառով է, որ նա չի համարձակվել դրանք օգտագործել։

— Մի՞թե կարելի է հավատալ, որ նա կարող է գողանալ, կողոպտել, թեկուզ միայն մտածել այդ մասին,— գոչեց Դունյան և աթոռից վեր թռավ։ — Չէ՞ որ դուք նրան ճանաչում եք, տեսել եք, մի՞թե նա կարող է գող լինել։

Նա ասես նվաստացնում էր Սվիդրիգայլովին. նա մոռացավ իր ամբողջ վախը։

— Ավդոտյա Ռոմանովնա, այստեղ հազարավոր ու միլիոնավոր կոմբինացիաներ ու հանգամանքներ կան։ Գողը գողանում է, բայց գիտե, որ ինքը ստոր մարդ է. ես լսել էի մի ազնիվ մարդու մասին, թե փոստ է կողոպտել. ով գիտե, գուցե նա իրոք մտածում էր, թե կարդին գործ է արել։ Հասկանալի է, որ ես, ինչպես և դուք, չէի հավատա, եթե ինձ կողմնակի կերպով հաղորդեին։ Բայց ես հավատացի իմ սեփական ականջներին։ Սոֆյա Սեմյոնովնային նա բացատրում էր բոլոր պատճառները. բայց սա սկզբում իր ականջներին էլ չհավատաց, իսկ աչքերին, իր իսկ աչքերին ի վերջո հավատաց։ Չէ՞ որ Ռոդիոն Ռոմանիչը նրան անձամբ էր հաղորդում։

— Այդ ի՞նչ... պատճառներ են։

— Երկար բան է, Ավդոտյա Ռոմանովնա։ Դե ինչպես ասեմ ձեզ, այստեղ կա յուրատեսակ թեորիա, այն հասկացողությունը, որի համաձայն ես, օրինակ, գտնում եմ, որ եղակի չարագործությունը թույլատրելի է, եթե գլխավոր նպատակը լավ է։ Եղակի չարիք և հարյուր բարի գործ։ Արժանիքներ և անչափ ինքնասիրություն ունեցող երիտասար-

դի համար, իհարկե, վիրավորական է գիտենալ, որ եթե լիներ, օրինակ, ընդամենը մի երեք հազար ռուբլի, նրա ամբողջ կարիերան, ամբողջ ապագան ու կյանքի նպատակը այլ կերպ կձևավորվեին, այնինչ չկա այդ երեք հազարը։ Դրբան ավելացրեց հուզմունքը քաղցից, նեղլիկ բնակարանից, ցնցոտիից, իր սոցիալական անհրապույր դրությունը և դրա հետ մեկտեղ քրոջ և մոր դրությունը պարզ գիտակցելուց։ Առավել ևս այստեղ դեր են խաղում սնափառությունը, հրապարտությունը և սնափառությունը, սակայն, ով գիտե, դուցե և առկա են լավ հակումները... Ես հո նրան չեմ մեղադրում, խնդրեմ այդ չմտածեք, և դա իմ գործն էլ չէ։ Այստեղ եղել է սնփական, յուրօրինակ թեորիա, որի համաձայն իբր թե մարդիկ բաժանվում են երկու կարգի, նյութ և առանձնահատուկ մարդիկ, այսինքն՝ այնպիսի մարդիկ, որոնց համար, ըստ իրենց բարձր դիրքի, օրենք չի գրված, այլ ընդհակառակը, նրանք իրենք են օրենքներ հորինում մնացած մարդկանց, նյութի, նվաստների համար։ Ահ՝ քեզ թեորիա. une thèorie comme une autre[1]. Նապոլեոնը խիստ գրավել էր նրան, այսինքն՝ նրան հատկապես գրավել էր այն, որ հանճարեղ շատ մարդիկ ուշադրություն չէին դարձնում եզակի շարիքին և դա անտեսում էին առանց երկար մտածելու։ Թվում է, որ նա երևակայել էր, թե ինքն էլ հանճարեղ մարդ է, այսինքն՝ որոշ ժամանակ դրանում հավատացած էր եղել։ Նա շատ է տանջվել և հիմա էլ տանջվում է այն մտքից, որ ինքը կարողացել է հորինել թեորիա, բայց ի վիճակի չի եղել առանց երկար մտածելու անտեսել եզակի շարիքը, ուրեմն և հանճարեղ մարդ չէ։ Դե իհարկե, ինքնասիրություն ունեցող երիտասարդի համար դա ստորացուցիչ է, մանավանդ մեր դարում... .

— Հապա խղճի խա՞յթը։ Ուրեմն դուք ժխտո՞ւմ եք նրա ամեն մի բարոյական զգացմունքը։ Մի՞թե նա այդպես է։

— Ախ, Ավդոտյա Ռոմանովնա, հիմա ամեն ինչ պղտորվել է, ասենք երբեք էլ առանձնապես կարգին չի եղել։ Ռուս մարդիկ առհասարակ լայնաթափ մարդիկ են, Ավդոտյա Ռոմանովնա, լայն են, ինչպես իրենց երկիրը, ու շատ-

---

1 Թեորիա է ինչպես ամեն մի թեորիա (ֆրանս.)։

զանց հակված են դեպի ֆանտաստիկականը, խառնաշփոթը. բայց առանց հատուկ հանճարեղության լայնաթափ լինելը փորձանք է։ Հիշո՞ւմ եք, թե ինչպես ես և դուք երկուսով երեկոները այգում, հողաթմբին նստած, ամեն տնգամ ընթրիքից հետո որքան շատ էինք խոսում հենց այսպես, այս թեմայի շուրջը։ Դուք դեռ ինձ կշտամբում էիք հենց այդ լայնաթափ խառնվածքի համար։ Ո՞վ գիտե, գուցե հենց այն ժամանակ էինք խոսում, երբ նա այստեղ պառկած էր լինում և իր մտքերով տարվում։ Մեզնում, կրթված հասարակության մեջ առանձնապես սրբազան ավանդություններ չկան, Ավդոտյա Ռոմանովնա. թերևս որևէ մեկը գրքերից մի կերպ այդ ուղղությամբ գաղափար կազմի կամ տարեդրություններից մի բան դուրս բերի։ Բայց դրանք հո առավելապես ուսյալներ են, և գիտեք, բոլորն էլ յուրատեսակ սահմանափակ մարդիկ են, այնպես որ դա նույնիսկ վայել չէ նրբակիրթ մարդուն։ Սակայն դուք ընդհանրապես գիտեք իմ կարծիքները. ես բնավ ոչ ոքի չեմ մեղադրում։ Ես ինքս փափկակյաց եմ և ինձ այդպես էլ պահում եմ։ Դե, մենք այդ մասին հաճախ ենք խոսել։ Ես նույնիսկ բախտ եմ ունեցել ձեզ հետաքրքրելու իմ դատողություններով... Դուք շատ գունատ եք, Ավդոտյա Ռոմանովնա։

— Ես գիտեմ նրա այդ թեորիան։ Ես ժուռնալում կարդացել եմ նրա հոդվածը այն մարդկանց մասին, որոնց ամեն ինչ թույլատրվում է... Ռազումիխինն էր բերել...

— Պարոն Ռազումիխի՞նը։ Ձեր եղբոր հոդվա՞ծը։ Ժուռնալո՞ւմ։ Այդպիսի հոդված կա՞։ Ես չգիտեի։ Երևի հետաքրքիր է։ Բայց դուք ո՞ւր եք շտապում, Ավդոտյա Ռոմանովնա։

— Ես ուզում եմ տեսնել Սոֆյա Սեմյոնովնային,— թույլ ձայնով ասաց Դունեչկան։— Որտեղի՞ց անցնեմ նրա մոտ։ Գուցե նա եկել է. ես հիմա ուզում եմ անպայման տեսնել նրան։ Թող նա...

Ավդոտյա Ռոմանովնան չկարողացավ խոսքը վերջացնել. նրա շունչը ուղղակի կտրվեց։

— Սոֆյա Սեմյոնովնան մինչև երեկո չի վերադառնա։

Ես այդպես եմ ենթադրում։ Նա ուզում է շատ շուտ գար, եթե չի եկել, ուրեմն շատ ուշ կգա...

— Հը՛մ, ուրեմն դու ստում ես։ Ես տեսնում եմ այդ... դու ստում էիր... դու շարունակ ստում էիր... Ես քեզ չեմ հավատում, չեմ հավատում, չեմ հավատում,— կատաղի, մոլեգնաբար բղավում էր Դունեչկան՝ բոլորովին կորցնելով գլուխը։

Նա համարյա ուշաթափ ընկավ աթոռին, որ Սվիդրիգայլովը հապճեպորեն մոտեցրեց նրան։

— Ավդոտյա Ռոմանովնա, ի՞նչ պատահեց ձեզ, ուշքի եկեք։ Ահա ջուր։ Խմեցեք, մի կում...

Նա Դունյայի վրա ջուր շաղ տվեց։ Դունյան ցնցվեց և ուշքի եկավ։

— Սաստիկ հուզվել է,— հոնքերը կիտելով քրթմնջաց Սվիդրիգայլովը։ — Ավդոտյա Ռոմանովնա, հանգստացեք։ Իմացեք, որ նա բարեկամներ ունի։ Մենք նրան կփրկենք, կազատենք։ Ուզո՞ւմ եք, ես նրան արտասահման տանեմ։ Ես փող ունեմ. ես երեք օրում տումս կճարեմ։ Ինչ վերաբերում է նրա կատարած սպանության, ապա նա դեռ շատ բարի գործեր կանի, այնպես որ այդ բոլորը կհարթվի. հանգրոտացեք։ Դե ի՞նչ պատահեց, ինչպե՞ս եք ձեզ զգում։

— Ջա՛ր մարդ, դեռ ծաղրում էլ է ինձ։ Թողեք գնամ։

— Ո՞ւր, ո՞ւր գնաք։

— Թոդյայի մոտ։ Որտե՞ղ է նա։ Դուք գիտե՞ք։ Դուռը ինչո՞ւ է փակված։ Մենք ներս մտանք այս դռնից, իսկ այժմ դա փակված է բանալիով։ Դուք ե՞րբ կարողացաք բանալիով փակել։

— Հո չէ՞ր կարելի բոլոր սենյակներով մեկ բղավել այն, ինչ որ մենք այստեղ խոսում էինք։ Ես բնավ չեմ ծաղրում. այդ լեզվով խոսելը ձանձրացրել է ինձ։ Ո՞ւր պետք է գնաք այդ վիճակում։ Թե՞ ուզում եք մատնել նրան։ Դուք նրան կատաղության կհասցնեք, և նա կմատնի ինքն իրեն։ Գիտցեք, որ նրան հետամտում են, արդեն գտել են հետքը։ Դուք միայն կմատնեք նրան։ Սպասեցեք. ես նրան տեսել եմ ու հետը խոսել. նրան դեռ կարելի է փրկել։ Սպասեցեք, նստեցեք, մեկաուել մտածենք այդ մասին։ Ես հենց նրա հա-

մար եմ ձեզ կանչել, որ երկուսով խոսենք դրա մասին, կըշռադատենք այդ բանը։ Դե նստեցեք։

— Դուք ի՞նչ կերպ կարող եք փրկել նրան։ Մի՞թե կարելի է նրան փրկել։

Դունյան նստեց։ Սվիդրիգայլովը նստեց նրա կողքին։

— Այդ բոլորը ձեզնից է կախված, ձեզնից և միայն ձեզնից,— ասաց նա համարյա շշնջալով, շփոթվելով, հուզմունքից նույնիսկ չկարողանալով պարզ արտասանել որոշ բառեր։ Նրա աչքերը առկայծում էին։

Դունյան վախեցած ետ քաշվեց նրանից։ Սվիդրիգայլովը նույնպես ամբողջ մարմնով դողում էր։

— Դուք... բավական է ձեր միայն մի խոսքը, և նա փրկված է... Ես... ես նրան կփրկեմ։ Ես փող ու բարեկամներ ունեմ։ Ես անձնագիր կվերցնեմ, երկու անձնագիր, ու կճանապարհեմ նրան։ Մի անձնագիրը նրան, մյուսը՝ ինձ։ Ես ունեմ բարեկամներ, ունեմ գործարար մարդիկ... Ո՞ւզում եք։ Ես ձեզ համար էլ... ձեր մոր համար էլ անձնագիր կվերցնեմ... Ռազումիխինը ձեր ինչի՞ն է պետք։ Ես էլ եմ ձեզ սիրում... Ես անսահման սիրում եմ ձեզ։ Թողեք համբուրեմ ձեր շրջազգեստի ծայրը, թողեք, թողեք։ Ես անկարող եմ լսել դրա շրշյունը։ Ասացեք ինձ՝ արա այդ բանը, ու ես կանեմ։ Ես ամեն ինչ կանեմ։ Ես կանեմ անկարելին։ Ինչին որ դուք հավատում եք, ես էլ կհավատամ։ Ես ամեն, ամեն ինչ կանեմ։ Այդպես մի նայեք ինձ, մի նայեք։ Գիտցեք, որ դրանով սպանում եք ինձ...

Սվիդրիգայլովը նույնիսկ սկսում էր զառանցել։ Նա մի տեսակ շշմեց, ասես հանկարծ խփեցին գլխին։ Դունյան վեր թռավ ու նետվեց դեպի դուռը։

— Բաց արեք, բաց արեք,— բղավում էր նա դռան միջով, կանչում որևէ մեկին և քաշքշում դուռը։ — Բաց արեք, մի՞թե ոչ ոք չկա։

Սվիդրիգայլովը վեր կացավ և ուշքի եկավ։ Դեռ դողացող շրթունքներին թույլ, նենգավոր ու հեգնոտ ժպիտ երևաց։

— Այնտեղ ոչ ոք տանը չէ,— կամացուկ և բառերը շեշտելով ասաց նա,— տանտիրուհին գնացել է, իզուր եք նե-

ղությունն քաշում. բղավում. իզուր տեղը ձեզ հուզմունք եք պատճառում։

— Ո՞րտեղ է բանալին։ Իսկույն բաց արա գուռը, շուտ, ստոր մարդ։

— Ես բանալին կորցրել եմ, չեմ կարողանում գտնել։

— Հա՜-ա՜։ Ուրեմն դա բռնությո՞ւն է,— գոչեց Դունյան, դունատվեց մեռելի պես, նետվեց սենյակի մի անկյունը ու պատսպարվեց այնտեղ դրված սեղանի ետևում։ Նա չէր բղավում. նա ակնապիշ նայում էր իրեն տանջողին ու աչալուրջ հետևում նրա յուրաքանչյուր շարժմանն։ Սվիդրիգայլովն էլ տեղից չէր շարժվում, ու կանգնել էր նրա դիմաց, սենյակի մյուս ծայրում։ Գոնե արտաքուստ նա հանգիստ էր։ Բայց դեմքը դարձյալ գունատ էր։ Հեգնական ժպիտը չէր չքանում նրա դեմքից։

— Դուք հիմա ասացիք «բռնություն» բառը, Ավդոտյա Ռոմանովնա։ Եթե բռնություն է, ապա ինքներդ կարող եք դատել, որ ես միջոցներ եմ ձեռնարկել։ Սոֆյա Սեմյոնովնան տանը չէ. Կապերնաումովները շատ հեռու են, մինչև նրանց բնակարանը կա հինգ փակված սենյակ։ Վերջապես, ես առնվազն երկու անգամ ուժեղ եմ ձեզնից, ու բացի այդ, բնավ չեմ վախենում, որովհետև դուք հետո չեք կարող գանգատվել. հո չե՞ք ուզենա մատնել ձեր եղբորը։ Ձեզ ոչ ոք էլ չի հավատա. կասեն՝ աղջիկը ինչի՞ համար է մենակ գընացել մենակ մարդու բնակարանը։ Այնպես որ, եթե անգամ զոհաբերեք ձեր եղբորը, ապա այս դեպքում էլ ոչինչ չեք ապացուցի. բռնությունն ապացուցելը խիստ դժվար է, Ավդոտյա Ռոմանովնա։

— Ստո՛ր մարդ,— զայրույթով շշնջաց Դունյան։

— Ինչպես կուզեք, բայց նկատի առեք, որ ես դեռ միայն ենթադրաբար եմ խոսել։ Իսկ իմ անձնական համոզմունքով դուք միանգամայն իրավացի եք. բռնությունը գարշելիություն է։ Ես ուզում էի ասել, որ ձեր խղճի վրա բնավ ոչինչ չի ծանրանա, եթե նույնիսկ... եթե նույնիսկ դուք ուզենայիք ձեր եղբորը փրկել կամավոր կերպով, այնպես, ինչպես ես եմ առաջարկում։ Դուք, ուրեմն, ուղղակի ենթարկվել եք հանգամանքներին, դե վերջապես, ուժին, եթե անպայման պետք է ասել այդ բառը։ Մտածեցեք այդ մա-

սին. ձեր եղբոր և ձեր բախտը ձեր ձեռքումն է։ Իսկ ես ամբողջ կյանքումս... կլինեմ ձեր ստրուկը... ես կսպասեմ այստեղ...

Սվիդրիգայլովը նստեց բազմոցին, Դունյայից ութ քայլ հեռավորությամբ։ Դունյան արդեն բոլորովին չէր կասկածում, որ նա վճռել է անպայման գլուխ բերել իր դիտավորությունը։ Չէ՞ որ ճանաչում էր նրան...

Հանկարծ նա գրպանից ատրճանակ հանեց, բարձրացրեց հրահանը, ու ատրճանակը բռնած, ձեռքը դրեց սեղանին։ Սվիդրիգայլովը տեղից վեր թռավ։

— Օ-հո՞, ահա թե ի՞նչ, —գոչեց նա զարմացած, բայց ցասկոտ քմծիծաղ տալով,— դա բոլորովին փոխում է գործի ընթացքը։ Դուք ինքներդ ինձ համար չափազանց հեշտացնում եք գործը, Ավդոտյա Ռոմանովնա։ Այդ որտեղի՞ց եք ատրճանակ ճարել։ Հո պարոն Ռազումիխինը չի՞ տվել։ Վա՛հ, ատրճանակը իմն է, վաղուց ծանոթ է։ Այն ժամանակ ես որքան էի դա փնտրում... Գյուղում հրաձգության դասերը, որ ես պատիվ ունեի ձեզ տալ, ապարդյուն չեն անցել։

— Ատրճանակը ոչ թե քոնն է, այլ Մարֆա Պետրովնայինն է, որին դու սպանեցիր, չարագործ։ Նրա տանը դու անձնապես ոչինչ չունեիր։ Ես սա վերցրի, երբ հասկացա, թե դու ինչի ես ընդունակ։ Երդվում եմ, որ ես քեզ կսպանեմ, եթե համարձակվես թեկուզ մի քայլ անել։

Դունյան սարսափելի զայրացած էր։ Ատրճանակը նա պատրաստ էր պահում։

— Հապա եղբա՞յրդ։ Հետաքրքրությունից եմ հարցնում, — ասաց Սվիդրիգայլովը՝ դեռ նույն տեղում կանգնած։

— Մատնիր, եթե ուզում ես։ Չշարժվես տեղիցդ։ Կկրակեմ։ Դու կնոջդ թունավորել էիր, ես այդ գիտեմ, դու ինքդ ես մարդասպանը...

— Իսկ դուք հաստատ հավատացա՞ծ էիք, որ ես թունավորել էի Մարֆա Պետրովնային։

— Դու. դու ինքդ էիր ակնարկում. դու ինձ ասում էիր թույնի մասին... Ես գիտեմ, դու մեկնել էիր թույն բերելու... դա պատրաստ էիր պահում... Դու, անպայման դու թունավորեցիր... ստոր մարդ։

— Եթե դա նույնիսկ ճշմարիտ լիներ, ապա քեզ համար կկատարվեր... այնուամենայնիվ պատճառը դու կլինեիր։

— Ստում ես։ Քեզ միշտ, միշտ ատել եմ...

— Հրմ, Ավդոտյա Ռոմանովնա, երևի մոռացել եք, թե ինչպես խրատներ տալով, հակվում էիք իմ կողմը ու նվադում... Ես դա աչքերիցդ էի տեսնում. հիշո՞ւմ եք այն երեկոն, լուսինը, սոխակի երգը։

— Ստում ես (Դունյայի աչքերը փայլեցին կատաղությունից), ստում ես, ղրպարտիչ։

— Ստո՞ւմ եմ։ Էհ, թերևս ստում եմ։ Սուտ ասացի։ Կանայք չպիտի հիշեն այդ բաները (Սվիդրիգայլովը քմծիծաղ տվեց)։ Գիտեմ, որ կկրակես, գաղանի ճուտ։ Դե, կրակիր, էլի։

Դունյան բարձրացրեց ատրճանակը։ Նա մեռելի պես գունատ էր։ Խամրած, ստորին շրթունքը դողում էր։ Կրակի նման առկայծող, մեծ, սև աչքերով նա նայում էր Սվիդրիգայլովին, սրտապնդվում, չափ ու ձև անում, սպասում նրա հենց առաջին շարժման։ Սվիդրիգայլովը դեռ երբեք նրան այդչափ գեղեցիկ չէր տեսել։ Ատրճանակը բարձրացնելու րոպեին Դունյայի աչքերից ճառագայթող հուրը ասես վառեց նրան, ու նրա սիրտը ցավագին ճմլվեց։ Նա մի քայլ արեց, ու ճայթքեց կրակոցը։ Գնդակը թռավ նրա մազերի վրայով ու խփեց պատին։ Նա կանգ առավ ու կամացուկ ծիծաղեց։

— Պիծակը կծեց։ Ուղղակի գլխիս է նշան բռնում... Այս ի՞նչ է։ Արյո՞ւն։ — Սվիդրիգայլովը հանեց թաշկինակը, որպեսզի սրբեր արյունը, որ բարակիկ շիթով հոսում էր նրա աջ քունքից. հավանորեն գնդակը մի քիչ քերել էր գանգի մաշկը։ Դունյան իջեցրեց ատրճանակը ու նայեց Սվիդրիգայլովին ոչ թե վախով, այլ ինչ-որ անհեթեթ տարակուսանքով։ Նա կարծես ինքն էլ չէր հասկանում, թե ինչ էր արել և ինչ էր կատարվում։

— Հը՛, վրիպեցիք։ Դե, էլի կրակեցեք, ես սպասում եմ, — կամացուկ ասաց Սվիդրիգայլովը՝ դեռ էլի քմծիծաղ տալով, բայց արդեն մռայլ տեսքով,— ես կկարողանամ բռնել ձեզ, նախքան դուք կբարձրացնեք հրահանը։

Դունեչկան ցնցվեց, արագ բարձրացրեց հրահանը և գարձյալ ատրճանակը ուղղեց Սվիդրիգայլովի վրա։

— Թողեք ինձ,— հուսաբեկ ասաց նա,— երդվում եմ, որ նորից կկրակեմ... Ես... Կսպանեմ...

— Դե ինչ արած... երեք քայլ հեռավորությունից չի է՛լ կարելի չսպանել։ Իսկ եթե չսպանեք... ապա...— Սվիդրիգայլովի աչքերը փայլեցին, և նա էլի երկու քայլ առաջ անցավ։

Դունեչկան իջեցրեց հրահանը, բայց ատրճանակը չբացվեց։

— Ատրճանակը անկանոն եք լցրել։ Ոչինչ, դուք դեռ հրապատիճ ունեք։ Ուղղեցեք, ես կսպասեմ։

Նա Դունյայի առաջ կանգնած էր երկու քայլ հեռավորությամբ, սպասում էր ու նայում նրան մոլի վճռականությամբ, բորբոք ու կրքոտ, ծանր հայացքով։ Դունյան հասկացավ, որ նա ավելի շուտ կմեռնի, քան իրեն բաց կթողնի։ «Եվ... և, իհարկե, ինքը նրան կսպանի երկու քայլի վրա...»։

Հանկարծ նա դեն գցեց ատրճանակը։

— Գցե՛ց,— զարմանքով ասաց Սվիդրիգայլովը և խոր շունչ առավ։ Ինչ-որ մի ծանրություն անմիջապես ընկավ նրա սրտից, և գուցե դա միայն մահվան սարսափի ծանրությունը չէր. այդ րոպեին նա հազիվ թե զգար այդ սարսափը։ Դա փրկություն էր մի ուրիշ, ավելի տխուր ու մռայլ զգացումից, որի ամբողջ ուժը ինքն էլ անկարող կլիներ որոշել։

Նա մոտեցավ Դունյային ու մեղմիկ գրկեց նրա մեջքը։ Դունյան չէր դիմադրում, բայց ամբողջ մարմնով տերևի պես դողալով, աղերսագին նայում էր նրան։ Սվիդրիգայլովը ուզում էր մի բան ասել, բայց նրա շրթունքները ծռմռվում էին, և նա չէր կարողանում բառերը արտասանել։

— Բաց թող ինձ,— աղերսեց Դունյան։

Սվիդրիգայլովը ցնցվեց. այդ դու-ն արդեն այնպես չէր ասված, ինչպես քիչ առաջ։

— Ուրեմն չե՞ս սիրում,— կամացուկ հարցրեց նա։

Դունյան բացասաբար գլխով արեց։

— Եվ... չե՞ս կարող... երբե՞ք,— հուսաբեկ շշնջաց Սվիդրիգայլովը։

— Երբեք,— շշնջաց Դունյան։

Անցավ մի ակնթարթ։ Սվիդրիգայլովի հոգու մեջ այդ ակնթարթում զարհուրելի, համր պայքար էր տեղի ունենում։ Անասելի հայացքով նայում էր նա Դունյային։ Հանկարծ նա ետ տարավ ձեռքը, շուռ եկավ, արագ մոտեցավ պատուհանին ու կանգնեց դրա առաջ։

Անցավ էլի մի ակնթարթ։

— Ահա բանալին։ — (Սվիդրիգայլովը դա հանեց վերարկուի ձախ գրպանից և առանց շուռ դալու, առանց Դունյային նայելու դրեց սեղանին)։ — Վերցրեք, շուտ հեռացեք...

Նա պատուհանից համառորեն դուրս էր նայում։

Դունյան մոտեցավ սեղանին, բանալին վերցնելու։

— Շուտ, շուտ,— կրկնեց Սվիդրիգայլովը դեռ էլի առանց շարժվելու և ետ նայելու։ Այդ բառը ակներևաբար ինչ-որ սարսափելի բան էր արտահայտում։

Դունյան այդ հասկացավ, վերցրեց բանալին, նետվեց դեպի դուռը, արագ բացեց ու դուրս թռավ սենյակից։ Մի րոպեից խելահեղորեն, ինքն իրեն կորցրած, աճապարեց գետի ջրանցքը ու վազ տվեց դեպի № կամուրջը։

Սվիդրիգայլովը էլի երեք րոպե կանգնած էր պատուհանի մոտ. վերջապես, դանդաղ շուռ եկավ, նայեց շուրջը ու ձեռքը դանդաղ տարավ ճակատով մեկ։ Նրա դեմքը ծրոմբռվեց տարօրինակ ժպիտից, ողորմելի, տխուր, թույլ ժպիտից, հուսալքման ժպիտից։ Արյունը, որ արդեն չորացել էր, աղտեղել էր նրա ձեռքի ափը. նա չարացած նայեց արյունին. հետո թրջեց երեսսրբիչը և սրբեց քունքը։ Հանկարծ նրա աչքովն ընկավ ատրճանակը, որ Դունյան շպրտել էր դռան կողմը։ Նա վերցրեց ու զննեց այն։ Դա գրպանի մի փոքրիկ, երեք փամփուշտ տանող, հին կառուցվածքի ատրճանակ էր։ Մեջը դեռ մնում էր երկու լիցք և մի հրապատիճ։ Կարելի էր կրակել մի անգամ։ Սվիդրիգայլովը մի փոքր մտածեց, ատրճանակը դրեց գրպանը և դուրս ելավ։

VI

Այդ ամբողջ երեկոն մինչև ժամը տասը նա անցկացրեց զանազան պանդոկներում և անբարո տեղերում՝ անցնելով մեկից մյուսը։ Որտեղից որտեղ հայտնվեց նաև Կատյան, որը այս անգամ երգում էր մի ուրիշ լակեյական երգ այն մասին, թե ինչպես «ստոր և բռնակալ» ինչ-որ մեկը

Սկսեց համբուրել Կատյային։

Սվիդրիգայլովը խմեցրեց թե Կատյային, թե երգեհոնահարին, երգիչներին, սպասավորներին և թե երկու ինչ-որ գրագիրների։ Այդ գրագիրների հետ նա գլուխ գրեց հատկապես այն պատճառով, որ նրանք երկուսն էլ ծուռ քթերով էին. մեկի քիթը ծռված էր աջ կողմը, մյուսինը՝ ձախ կողմը։ Դա ապշեցրեց Սվիդրիգայլովին։ Ի վերջո գրագիրները նրան տարան մի ինչ-որ զվարճացուցիչ այգի, որտեղ նա վճարեց մուտքի և այլ ծախսերի համար։ Այդ այգում կար մի բարալիկ, եռամյա եղևնի և երեք թուփ։ Կառուցված էր «դահլիճ», փաստորեն օզեստուն, բայց այնտեղ կարելի էր նաև թեյ ստանալ. մի քանի կանաչ սեղաններ և աթոռներ էին դրված։ Հաճախորդներին զվարճացնում էր վատ երգիչների խումբը, ինչպես և մյունխենցի մի հարբած, կարմրաքիթ գերմանացի, որը ծաղրածուի էր նմանվում և չգիտես ինչու խիստ տխուր տեսք ուներ։ Գրագիրները վեճի բռնվեցին ուրիշ ինչ-որ գրագիրների հետ և քիչ մնաց տուրուդմբոց սարքեին։ Սվիդրիգայլովին նրանք դատավոր ընտրեցին։ Քառորդ ժամ դատում էր նա, բայց նրանք այնպես էին բղավում, որ բոլորովին հնարավոր չէր որևէ բան հասկանալ։ Իսկությունն այն էր, որ նրանցից մեկը ինչ-որ իր էր գողացել և նույնիսկ տեղնուտեղը ծախել վրա հասած չհուդի. բայց, ծախելով, չուզեց բաժին հանել իր ընկերոջը։ Ի վերջո պարզվեց, որ վաճառված իրը թեյի գդալ էր, պատկանում էր օզեստանը։ Այստեղ իմացան այդ, ու գործը է՛լ ավելի բարդացավ։ Սվիդրիգայլովը վճարեց գդալի արժեքը, վեր կացավ և դուրս ելավ այգուց։ Ժամը մոտ տասն էր։ Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում նա ոչ մի կաթիլ գինի չխմեց, միայն թեյ պահանջեց, այն էլ պատշաճու-

թյուն պահպանելու համար։ Երեկոն հեղձուցիչ էր ու մռայլ։ Մինչև ժամը տասը բոլոր կողմերից ահավոր սև ամպեր կուտակվեցին. պայթեց որոտը, ու ջրվեժի պես անձրև թափվեց։ Անձրևաջուրը ոչ թե կաթիլներով էր տեղում, այլ առատորեն հոսում, խփում էր գետնին։ Բոպե առ բոպե շոշշողում էր կայծակը, ու մի ցոլքից մինչև մյուսը կարելի էր հաշվել մինչև հինգը։ Սվիդրիգայլովը ամբողջովին թրջված հասավ տուն, փակեց դուռը, բացեց իր բյուրոն, հանեց իր բոլոր փողերը և պատառոտեց երկու-երեք թուղթ։ Այնուհետև փողերը դնելով գրպանը, նա ուզեց փոխել հագուստը, բայց նայելով պատուհանից ու ականջ դնելով ամպրոպին ու անձրևին, ձեռքը թափ տվեց, վերցրեց լայնեզր գլխարկը ու դուրս ելավ առանց բնակարանը փակելու։ Նա գնաց ուղղակի Սոնյայի մոտ։ Սոնյան տանն էր։

Նա մենակ չէր. նրա մոտ էին Կապերնաումովի չորս փոքրիկ երեխաները։ Սոֆյա Սեմյոնովնան նրանց թել էր խմեցնում։ Նա լուռ և քաղաքավարի դիմավորեց Սվիդրիգայլովին, զարմանքով դիտեց նրա թրջված հագուստը, բայց ոչ մի խոսք չասաց։ Անասելի սարսափով բռնված երեխաները անմիջապես դուրս փախան։

Սվիդրիգայլովը նստեց սեղանի մոտ, իսկ Սոնյային խնդրեց նստել իր կողքին։ Սոնյան երկչոտությամբ պատրաստվեց նրան լսելու։

— Ես, Սոֆյա Սեմյոնովնա, գուցե մեկնեմ Ամերիկա,— ասաց Սվիդրիգայլովը,— ու քանի որ մենք հավանորեն վերջին անգամ ենք տեսնվում, ես եկա մի երկու կարգադրություն անելու։ Դուք այսօր տեսե՞լ եք այն տիկնոջը։ Ես գիտեմ, թե նա ձեզ ինչ է ասել, հարկ չկա կրկնել (Սոնյան ինչ-որ շարժում արեց ու կարմրեց)։ Դրանք որոշ կերտվածքի մարդիկ են։ Ինչ վերաբերում է ձեր քույրիկներին ու եղբորը, նրանք իրոք տեղավորված են, նրանց հասանելիք փողերը ամեն մեկի համար ես ստորագրությամբ հանձնել եմ ուր հարկն է, վստահելի ձեռքեր։ Դուք, սակայն, այս ստորագրությունները համենայն դեպս վերցրեք ձեզ մոտ։ Ահա, վերցրեք։ Ը-ըմ, սա վերջացրինք։ Ահա հինգ տոկոսանոց երեք տոմս, ընդամենը երեք հազար ռուբլու։ Սրանք

վերցրեք ձեզ, հատկապես ձեզ, և թող սա մեր մեջ մնա, թող ոչ ոք չիմանա, ինչ էլ որ դուք հետո լսեք։ Դրանք ձեզ հարկավոր կլինեն, որովհետև, Սոֆյա Սեմյոնովնա, ձեզ համար լավ չէ առաջվա պես ապրել և հիմա, հիմա այդպես ապրելու կարիք չի լինի։

— Դուք այնքա՞ն բարերարություն եք արել ինձ, որբերին ու հանգուցյալ մորը, ու եթե մինչև այժմ ես ձեզնից քիչ եմ շնորհակալ եղել... ներողամիտ եղեք։

— Էհ, այդ դատարկ բան է։

— Իսկ այս փողերի համար, Արկադի Իվանովիչ, ես ձեզնից շատ շնորհակալ եմ, բայց ես հիմա դրանց կարիքը չեմ զգում։ Ես ինձ միշտ էլ կկարողանամ կերակրել։ Սա իմ կողմից ապերախտություն մի համարեք. եթե դուք այդպես բարերար եք, ապա այդ փողերը...

— Ձեզ, ձեզ պետք է պատկանեն, Սոֆյա Սեմյոնովնա, և խնդրում եմ այդ մասին երկար չխոսենք, որովհետև ես նույնիսկ ժամանակ էլ չունեմ։ Ձեզ հարկավոր կլինեն։ Ռոգիոն Ռոմանիչի առջև երկու ճանապարհ կա. կամ ինքնասպանություն գործել, կամ գնալ Վլադիմիրկայով[1] (Սոնյան սարսափած նայեց նրան և դողաց)։ Մի անհանդստանաք, ես ամեն ինչ իմացել եմ և հենց նրանից, Ռասկոլնիկովից, ես լեզվիցս թույլ չեմ, ոչ ոքի չեմ ասի։ Դուք նրան լավ եք սովորեցրել, որ ուր հարկն է մեղա գա։ Այդ նրա համար շատ ավելի ձեռնտու կլինի։ Երբ բանը այդտեղ հասնի, նա կգնա Վլադիմիրկայով, իսկ դուք էլ հո կգնաք նրա ետևից, այնպես չէ՞, հո այդպե՞ս է։ Դե որ այդպես է, ուրեմն փողերը հարկավոր կլինեն։ Հենց նրա համար հարկավոր կլինեն. հասկանո՞ւմ եք։ Տալով ձեզ, ես միևնույն է, թե նրան եմ տալիս։ Բացի այդ, դուք խոստացել եք Ամալյա Իվանովնային պարտք վճարել. ես այդ լսել եմ։ Այդ ի՞նչ է, Սոֆյա Սեմյոնովնա, դուք առանց մտածելու այդպիսի պայմաններ ու պարտավորություններ եք վերցնում ձեզ վրա. չէ՞ որ Կատերինա Իվանովնան է պարտք մնացել այդ գեր-

---

[1] Վլադիմիրկա— Մոսկվայից Վլադիմիր քաղաքով դեպի արևելք ձգված խճուղին, որով Սիբիր էին տանում աքսորման և տաժանակրության դատապարտվածներին (Ֆ. Թ.)։

մանուհուն, և ոչ թե դուք, դե ուրեմն թքեիք գերմանուհու վրա։ Չի կարելի այդպես ապրել աշխարհում։ Հա՛, եթե ձեզ երբևէ, ասենք վաղը կամ մյուս օրը որևէ մեկը կհարցնի իմ մասին (ձեզ իհարկե կհարցնեն), դուք մի ասեք, որ ես ձեզ մոտ եկա, փողը բնավ մի ցույց տաք և ոչ ոքի մի ասեք, որ ես եմ տվել։ Դեհ, ցտեսություն։ (Սվիդրիգայլովը վեր կացավ աթոռից)։ Բարևեցեք Ռոդիոն Ռոմանիչին։ Հա՛, փողը առայժմ թողեք պարոն Ռազումիխինի մոտ։ Ճանաչո՞ւմ եք պարոն Ռազումիխինին։ Իհարկե, ճանաչում եք։ Ոչինչ, մարդ է, էլի։ Վաղը կամ... մի ուրիշ օր փողը տարեք ու պահ տվեք նրան։ Իսկ մինչ այդ հուսալի տեղ պահեցեք։

Սոնյան նույնպես վեր կացավ աթոռից և վախեցած նայեց նրան։ Նա շատ էր ուզում ինչ-որ բան ասել, ինչ-որ հարց տալ, բայց առաջին րոպեներին չհամարձակվեց և չգիտեր էլ, թե ինչից սկսի։

— Հապա դուք... դուք հիմա, այսպիսի անձրևին ինչպե՞ս պիտի գնաք։

— Ամերիկա մեկնողը անձրևից չի վախենա, քա՛հ-քա՛հ։ Մնաք բարով, աղավնյակ, Սոֆյա Սեմյոնովնա։ Ապրեցեք, շատ ապրեցեք, դուք ուրիշներին հարկավոր կլինեք։ Հա՛... ասացեք պարոն Ռազումիխինին, որ ես պատվիրեցի բարևել իրեն։ Հենց այսպես էլ հաղորդեցեք՝ Արկադի Իվանովիչ Սվիդրիգայլովը բարևում է։ Անպայման ասացեք։

Սվիդրիգայլովը դնաց՝ Սոնյային թողնելով ապշած, վախեցած վիճակում և ինչ-որ անորոշ ու ծանր կասկածանքների մեջ։

Հետո պարզվեց, որ այդ նույն երեկոյան, մոտ ժամը տասներկուսին, նա խիստ տարօրինակ և անակնկալ մի այցելություն էլ էր կատարել։ Անձրևը դեռ չէր դադարում։ Ամբողջովին թրջված, նա տասնմեկից քսան րոպե անց գընաց իր հարսնացուի ծնողների բնակարանը, որ գտնվում էր Վասիլևսկի կղզում, երրորդ փողոցի և Փոքր պողոտայի անկյունում։ Հազիվ կարողացավ բաց անել տալ դուռը և սկզբում մեծ իրարանցում առաջացրեց։ Բայց Արկադի Իվանովիչը երբ ուզում էր, խիստ հրապուրիչ շարժուձևերով մարդ էր լինում, այնպես որ, անմիջապես փարատվեց հարսնացուի խելամիտ ծնողների սկզբնական (թեև բավա-

կան սրամիտ) ենթադրությունը, թե Արկադի Իվանովիչը որևէ տեղ այնքան է կոնծել ու հարբել, որ ինքն իրեն կորցրել է։ Հարսնացուի գթասիրտ ու խոհեմ մայրը Արկադի Իվանովիչի մոտ քշեց այն բազկաթոռը, որի վրա նստած էր ուժասպառ հայրը, և ըստ սովորության, իսկույն սկսեց մի քանի կողմնակի հարցեր տալ։ Այդ կինը անմիջականորեն գործին վերաբերող հարցեր երբեք չէր տալիս, այլ միշտ մեջտեղ էր բերում ժպիտները և ձեռքերի շփումները, իսկ հետո, եթե հարկավոր էր անպայման ու հաստատապես որևէ բան իմանալ, օրինակ, թե Արկադի Իվանովիչը երբ է նշանակելու հարսանիքը, ապա սկսում էր մեծագույն հետաքրքրությամբ և նույնիսկ ազահորեն հարցեր տալ Փարիզի և այնտեղի պալատական կյանքի մասին, և միայն դրանից հետո, հետզհետե հասնում էր Վասիլևսկի կղզու երրորդ փողոցը)։ Ուրիշ ժամանակ այդ ամենը, իհարկե, հարգանքով էր ընդունվում, բայց այս անգամ Արկադի Իվանովիչը մի առանձին անհամբերություն ցուցաբերեց և կրտրականապես ցանկություն հայտնեց տեսնել հարսնացուին, թեև նրան հենց սկզբից ասել էին, որ հարսնացուն արդեն պառկել է քնելու։ Իհարկե, հարսնացուն եկավ։ Արկադի Իվանովիչը ուղղակի հաղորդեց նրան, որ ինքը պետք է խիստ կարևոր մի գործով առժամապես մեկնի Պետերբուրգից, դրա համար էլ նրան բերել է տասնհինգ հազար ռուբլու այլևայլ արժեթղթեր և խնդրում է դրանք ընդունել իբրև նվեր, քանի որ ինքը վաղուց մտադրվել էր այդ չնչին բանը հարսանիքից առաջ նվիրել նրան։ Այս բացատրություններ, իհարկե, բնավ չէին ապացուցում, թե մի առանձին տրամաբանական կապ կար նվերի, անհապաղ մեկնումի և անպայման անձրևի ժամանակ ու կեսգիշերին գալու միջև, սակայն գործը միանգամայն լավ գնաց։ Նույնիսկ առավելապես անհրաժեշտ ախուվախը, հարցուփորձը և զարմանքը հանկարծ արտասովոր կերպով չափավոր զուսպ դարձան. եկվորին ամենաջերմ շնորհակալություն հայտնվեց, և խելամիտ մոր աչքերում արցունքներ երևացին։ Արկադի Իվանովիչը վեր կացավ, ծիծաղեց, համբուրեց հարսնացուին, շոյեց նրա այտը, ասաց, որ շուտով կժամանի, ու նրա աչքերում նկատելով թեպետև մանկական հետաքրքրու-

թյուն, բայց դրա հետ մեկտեղ նաև մի ինչ-որ շատ լուրջ։ լին հարց, մի փոքր մտածեց, նորից համբուրեց նրան և հենց այստեղ սրտնեղեց, որ ողջամիտ մայրը անմիջապես փակի տակ է պահելու նվերը։ Նա գնաց՝ բոլորին թողնելով խիստ հուզված վիճակում։ Բայց սրտացավ մայրիկը խնդուն ևեթ ցածրաձայն և արագ-արագ խոսելով, փարատեց որոշակի, խորին տարակուսանքները, ասելով, որ Արկադի Իվանովիչը մեծ մարդ է, գործեր ու կապեր ունեցող, հարուստ մարդ է, աստված գիտե, թե ինչ կա նրա գլխում, խելքին փչեց մեկնել և մեկնեց, խելքին փչեց փողը տալ և տվեց, և ուրեմն չպետք է զարմանալ։ Իհարկե, տարօրինակ է, որ նա ամբողջովին թրջված էր, բայց, օրինակ, անգլիացիները է՛լ ավելի տարօրինակ են լինում, և այդ բոլոր բարձր կարգի մարդիկ ուշադրություն էլ չեն դարձնում, թե իրենց մասին ինչ են ասում, ու ոչնչից էլ չեն քաշվում։ Գուցե նա դիտմամբ է այդպես ման գալիս, որպեսզի ցույց տա, թե ոչ ոքից չի վախենում։ Գլխավորը՝ այդ մասին ոչ ոքի ոչ մի խոսք չպետք է ասել, որովհետև աստված գիտե դրանից ինչ դուրս կգա, իսկ փողը պետք է շուտ դնել փակի տակ, և իհարկե այս ամենի մեջ ամենից լավն այն է, որ Ֆեդոսյան խոհանոցում էր գտնվում, և որ գլխավորն է, բոլորովին, բոլորովին, բոլորովին ոչինչ չպետք է հաղորդել այն խարդախ Ռեսսլիխին և այլն, և այլն։ Նստեցին և կամացուկ խոսեցին մինչև ժամը երկուսը։ Զարմացած և մի քիչ տրխուր հարսնացուն ավելի շուտ էր գնացել քնելու։

Մինչ այս, մինչ այն, Սվիդրիգայլովը ուղիղ կեսգիշերին անցավ № կամուրջը և գնաց դեպի Պետերբուրգյան կողմը։ Անձրևը դադարեց, բայց քամին աղմկում էր։ Սվիդրիգայլովը սկսում էր դողալ, ու մի բոպե ինչ-որ առանձին հետաքրքրությամբ և նույնիսկ տարակուսանքով նայեց Մալայա Նևայի սև ջրին։ Բայց շուտով նրան թվաց, որ ջրափում խիստ ցուրտ է. շուտ եկավ ու գնաց դեպի № պողոտան։ Նա շատ երկար, համարյա կես ժամ քայլում էր անծայրածիր № պողոտայով, մթության մեջ հաճախ սայթաքելով փայտե սալարկի վրա, բայց շարունակում էր հետաքրքրությամբ ինչ-որ բան փնտրել պողոտայի աջ կողմում։

Վերջին օրերում այստեղից կառքով անցնելիս մի տեղ, արդեն պողոտայի ծայրում նա նկատել էր փայտաշեն, բայց մեծ մի հյուրանոց, ու որքան հիշում էր, հյուրանոցի անունը կարծես թե Ադրիանոպոլ էր։ Նա չսխալվեց իր հաշիվների մեջ. հյուրանոցը այդ խուլ վայրում այնքան էր աչքի ընկնում, որ անկարելի էր այն չգտնել նույնիսկ խավարում։ Այդ մի երկարաձիգ, փայտե, սևացած շենք էր, որտեղ դեռ լույսեր կային և որոշ աշխուժություն էր տիրում, չնայած ուշ ժամին։ Նա ներս մտավ ու միջանցքում իրեն դիմավորող սպասավորից համար խնդրեց։ Վերջինս հայացքով չափեց Սվիդրիգայլովին, աշխուժացավ և իսկույն նրան տարավ մի հեռու, խեղդուկ և փոքր համար, որ գտնվում էր միջանցքի ծայրում, անկյունում, սանդուղքի տակ։ Ուրիշ ազատ համար չկար. բոլոր համարները զբաղեցրած էին։ Սպասավորը հարցականորեն նայում էր եկվորին։

— Թեյ կա՞,— հարցրեց Սվիդրիգայլովը։

— Այդ կարելի է։

— Էլ ի՞նչ կա։

— Հորթի միս, օղի, խորտիկներ։

— Բեր հորթի միս և թեյ։

— Ուրիշ ոչինչ հարկավոր չէ՞,— նույնիսկ մի փոքր տարակուսելով, հարցրեց սպասավորը։

— Ոչինչ, ոչինչ։

Սպասավորը գնաց իսպառ հիասթափված։

«Երևի լավ տեղ է,— մտածեց Սվիդրիգայլովը,— ի՞նչպես է, որ ես չգիտեի։ Երևի ես որևէ կաֆե-շանտանից վերադարձող, բայց ճանապարհին անախորժություն ունեցած մարդու տեսք ունեմ։ Հետաքրքիր է, սակայն, թե ովքեր են այստեղ իջևանում և գիշերում»։

Նա վառեց մոմը և մանրազնին դիտեց համարը։ Դա շատ փոքր մի վանդակ էր, առաստաղը Սվիդրիգայլովի հասակից էլ բարձր չէր, կար մի պատուհան. անկողինը խիստ կեղտոտ էր, հասարակ, ներկած սեղանն ու աթոռը բռնել էին համարյա ամբողջ տարածությունը։ Պատերը կարծես իրար կպցրած տախտակներից էին, պաստառները կեղտոտված էին, այնքան փոշոտ ու քրքրված, որ նրանց գույնը (դեղին) հազիվ կարելի էր որոշել, իսկ նախշերը բո-

լորովին աննկատելի էին դարձել։ Մի պատը ցածր էր, և առաստաղը ծռված էր դրա վրա, ինչպես այդ սովորաբար լինում է ձեղնահարկերում, իսկ այդ ծռվածքի վերևում ձգվում էր սանդուղքը։ Սվիդրիգայլովը մոմը դրեց սեղանին, նստեց մահճակալի վրա և մտածմունքի մեջ ընկավ։ Վերջապես, նրա ուշադրությունը գրավեց հարևան վանդակից լսվող փսփսոցը, որ երբեմն սաստկանում և համարյա ճչոցի էր հասնում։ Այդ փսփսոցը չէր դադարում այն րոպեից սկսած, երբ նա ներս մտավ։ Նա ականջ դրեց։ Ինչ-որ մեկը նախատում և համարյա լալով կշտամբում էր մի ուրիշին, բայց միայն ձայնն էր լսվում։ Սվիդրիգայլովը վեր կացավ, ձեռքով ծածկեց մոմը, ու պատի մեջ լուսավորված ճեղք նկատեց. մոտեցավ ու սկսեց նայել։ Հարևան համարում, որը նրա համարից մի քիչ մեծ էր, կար երկու հաճախորդ։ Նրանցից մեկը, որ առանց սերթուկի էր, խիստ զանգուր մազերով և կարմիր, բորբոքված դեմքով, կանգնել էր հռետորի կեցվածքով, ոտքերը իրարից հեռու դրած, որպեսզի պահպաներ հավասարակշռությունը, ու ձեռքը խփելով կրծքին, թունդ կշտամբում էր մյուսին, որ սա մուրացկան է և նույնիսկ աստիճան էլ չունի, որ ինքը նրան փրկել է կեղտոտությունից, որ երբ ուզենա, կարող է վռնդել նրան և որ այդ ամենը միայն ամենաբարձրյալի աչքն է տեսնում։ Կշտամբանքի ենթարկվողը նստել էր աթոռին և այնպիսի մարդու տեսք ուներ, որը շատ է ուզում փոշտալ, բայց այդ նրան ոչ մի կերպ չի հաջողվում։ Երբեմն նա պղտոր և ոչխարի հայացքով նայում էր հռետորին. բայց ակներև էր, որ ոչ մի հասկացողություն չուներ, թե ինչի մասին է խոսքը, ու նույնիսկ հազիվ թե որևէ բան էր լսում։ Սեղանի վրա վառվում-վերջանում էր մոմը, դրված էին օղու համարյա դատարկ մի գրաֆին, ըմպանակներ, հաց, բաժակներ, վարունգներ և արդեն վաղուց խմած թեյի ամանեղենը։ Ուշադրությամբ դիտելով այդ տեսարանը, Սվիդրիգայլովը անտարբերությամբ ետ քաշվեց պատի ճեղքից ու դարձյալ նստեց մահճակալին։

Սպասավորը վերադարձավ, բերելով թեյ և հորթի միս, ու չկարողացավ զսպվել ու չհարցնել՝ «էլ ուրիշ ոչինչ հարկավոր չէ՞», ու նորից բացասական պատասխան լսելով,

վերջնականապես հեռացավ։ Սվիդրիգայլովը տաքանալու համար մի բաժակ թեյ խմեց, բայց չկարողացավ թեկուզ մի պատառ ուտել, որովհետև բոլորովին կորցրել էր ախորժակը։ Ըստ երևույթին սկսվում էր տենդը։ Նա հանեց վերարկուն, ժակետը, փաթաթվեց վերմակով ու պառկեց անկողնում։ Նա սրտնեղում էր. «Գոնե այս անգամ առողջ լինեի», մտածեց նա և քմծիծաղ տվեց։ Սենյակում օդը ծանր էր. մոմը աղոտ էր վառվում, դրսում աղմկում էր քամին, ինչ-որ մի տեղ, անկյունում քստքստացնում էր մուկը, ու ամբողջ սենյակում էլ կարծես մկան և ինչ-որ կաշվեղենի հոտ էր տարածված։ Սվիդրիգայլովը պառկել էր ու ասես անրջում էր. մտքերը իրար էին հաջորդում։ Թվում էր, որ նա շատ կուզենար երևակայությամբ գոնե մի որևէ բանի կառչել։ «Երևի պատուհանի տակ մի որևէ այգի կա,— մտածեց նա,— ծառերը շրշում են. որքան չեմ սիրում ծառերի շրշյունը գիշերով, փոթորկի պահին և մթության մեջ, տրհաճ զգացում է»։ Եվ նա հիշեց, թե ինչպես ժամ առաջ անցնելով Պետրովյան զբոսայգու կողքից, նույնիսկ զզվանքով մտածեց դրա մասին։ Նա վերհիշեց նաև № կամուրջը, Մալայա Նևան, ու վերստին ցուրտ զգաց ինչպես այն պահին, երբ կանգնած էր կամրջի վրա։ «Կյանքումս երբեք ջուր չեմ սիրել, նույնիսկ պեյզաժներում պատկերված ջուրը», կրկին մտածեց նա և հանկարծ դարձյալ քմծիծաղ տվեց մի տարօրինակ մտքից. «Թվում է, որ գոնե հիմա պետք է անտարբեր լինեի այդ ամբողջ էսթետիկայի ու կոմֆորտի նկատմամբ, բայց հենց այստեղ պահանջկոտ դարձա ինչպես գազանը, որ անպայման իր համար տեղ է ընտրում... Նրման դեպքում։ Քիչ առաջ հենց հարկավո՞ր էր շուռ գալ դեպի Պետրովյան զբոսայգին։ Երևի խավարից, ցրտից էի խուսափում, քա՜հ-քա՜հ։ Համարյա դուրեկան զգացումներ էին պահանջվում... Հա՛, ինչո՞ւ մոմը չեմ հանգցնում»։ (Նա փչեց մոմը)։ «Հարևաններս պառկեցին», մտածեց նա՝ տեսնելով, որ պատի ճեղքից լույս չի երևում։ Հը՛մ, Մարֆա Պետրովնա, ա՛յ հիմա համեցեք անեիք, հո խավար է, տեղը պիտանի, բոսյեն հարմար։ Բայց արի ու տես, որ հենց հիմա չեք գա...»։

Հանկարծ նա չգիտես ինչու վերհիշեց, թե ինչպես Դունեչկայի նկատմամբ իր դիտավորությունը կատարելուց մի ժամ առաջ ինքը Ռասկոլնիկովին խորհուրդ էր տալիս Դունեչկային հանձնել Ռազումիխինի հսկողության։ «Իրականում ես անշուշտ սեփական քմահաճույքիս համար էի այդ ասում, ինչպես և կռահեց Ռասկոլնիկովը։ Ա՛յ թե ինչպիսի սրիկա է այդ Ռասկոլնիկովը։ Շատ բան է վերցրել իր վրա։ Հետագայում էլ մեծ սրիկա կլինի, երբ անհնթեթությունը դուրս թռչի իր գլխից, իսկ հիմա շատ է ուզում ապրել։ Այս կոզմից նման մարդիկ ստոր արարածներ են։ Էհ, թող գնա գրողի ծոցը, ինչ ուզում է անի, ի՜նձ ինչ»։

Նրա քունը չէր տանում։ Հետզհետե նրան պատկերացավ Դունյայի կերպարը, ու հանկարծ նրա մարմնով դող անցավ։ «Ոչ, հիմա այդ բոլորը պետք է թողնել», սթափվելով, մտածեց նա, «պետք է որևէ ուրիշ բանի մասին մտածել։ Տարօրինակ է և ծիծաղելի. ես ոչ ոքի և երբեք ատելություն չեմ տածել, նույնիսկ վրեժ առնել էլ երբեք առանձնապես չեմ ցանկացել, իսկ չէ՞ որ դա վատ նշան է, վատ նշան։ Վիճել նույնպես չեմ սիրել և վիճելիս չեմ տաքացել՝ այդ էլ վատ նշան է։ Իսկ Դունեչկային այսօր ինչքա՜ն խոստումներ տվի, թյո՛ւ, գրողը տանի։ Հը՛մ, նա հո կարող էր որևէ կերպ ջնջխել ինձ...»։ Նա գարձյալ սսկվեց և ատամներն իրար սեղմեց. գարձյալ Դունեչկայի կերպարը պատկերացավ նրան ճիշտ այնպես, ինչպիսին էր նա, երբ առաջին անգամ կրակելով, սարսափելի վախեցավ, իշեցրեց ատրճանակը ու քարացած նայում էր իրեն, Սվիդրիգայլովին, այնպես որ վերջինս երկու անգամ կկարողանար բռնել նրան, իսկ Դունեչկան ձեռք էլ չէր բարձրացնի պաշտպանվելու համար, եթե ինքը՝ Սվիդրիգայլովը նրան այդ չհիշեցներ։ Նա վերհիշեց, թե ինչպես այն ակնթարթում ինքը խղճաց նրան, սիրտը առես ճմլվեց... «Էհ-էհ՝, գրողը տանի. էլի՜ այս մտքերը. այս ամենը պետք է մոռանալ, մոռանալ...»։

Նա արդեն անդգայանում էր. մեղմանում էր ահեղային գազը. հանկարծ ինչ-որ մի բան շեշտակի անցավ վերմակի տակից, նրա ձեռքի ու ոտքի վրայով։ Նա ցնցվեց «Փու, ատատանա, սա երևի մուկ էր», մտածեց նա, «ախր ես հոբթի

միսը թողել եմ սեղանի վրա...»։ Նա բոլորովին չէր ուզում բացվել, վեր կենալ, մրսել, բայց հանկարծ էլի ինչ-որ տհաճ բան անցավ ոտքի վրայով. նա դեն գցեց վերմակը և վառեց մոմը։ Տենդային սառնությունից դողալով, կռացավ անկողինը զննելու. ոչինչ չկար. նա թափ տվեց վերմակը, ու հանկարծ մուկը թռավ սավանի վրա։ Նա փորձեց բռնել, բայց մուկը չփախավ անկողնից, զիգզագաձև թռավ այս ու այն կողմ, դուրս պրծավ նրա մատների տակից, վազեց ձեռքի վրայով ու հանկարծ նետվեց բարձի տակ. Սվիդրիգայլովը դեն գցեց բարձը, բայց մի ակնթարթ զգաց, որ մուկը թռել է իր թևատակը, ապա վազվզում է մարմնի վրա և արդեն մեջքին է, շապկի տակ։ Նա ջղայնորեն դողաց և արթնացավ։ Սենյակում մութն էր, նա պառկած էր մահճակալի վրա, վերմակով փաթաթված, ինչպես քիչ առաջ. դրսում ոռնում էր քամին։ «Ա՛յ քեզ գարշելի բան», սրտնեղելով մտածեց նա։

Նա վեր կացավ ու նստեց անկողնի ծայրին, մեջքը դեպի պատուհանը։ «Ավելի լավ է բոլորովին չքնել», որոշեց նա։ Սակայն պատուհանից ցուրտ և խոնավություն էր փչում. առանց տեղից վեր կենալու նա վերմակը քաշեց իր վրա ու փաթաթվեց դրանով։ Մոմը չվառեց։ Ոչ մի բանի մասին չէր մտածում և չէր էլ ուզում մտածել, բայց անուրջները վրա էին տալիս մեկը մյուսի ետևից, ծագում էին կցկտուր մրտքեր, որոնք անսկիզբ, անվախճան ու անկապ էին։ Կարծես նա կիսանինջ վիճակում էր։ Ցուրտը թե խավարը, խոնավությունը թե դրսում ոռնող և ծառերը ճոճող քամին նրա մեջ առաջացրին ինչ-որ համառ, ֆանտաստիկ հակում և ցանկություն, բայց նրան շարունակ ծաղիկներ էին պատկերանում։ Նրա երևակայության մեջ բացվեց մի հիասքանչ պեյզաժ. պայծառ, տաք, համարյա շոգ օր, տոն օր, հոգեգալստյան օրը։ Անգլիական ճաշակով, փարթամ, ճոխ, գյուղական կոտեջ, որ ամբողջովին թաղված էր անուշաբույր ծաղկանոցների մեջ, կային մարգեր, որոնք ձգվում էին ամբողջ տան շուրջը. մուտքի սանդուղքը պատած էր պատաուկ բույսերով, վարդերի շարքերով. լուսավոր, զովաշունչ ռանդուղք, որի վրա փարթամ զորգ էր փռված, կողքերին հագվագյուտ ծաղիկներով չինական պուլիկներ էին դրված։

Առանձնապես նրա աչքով ընկան պատուհանների գոգերին գրված ջրով լեցուն պուլիկները, դրանց մեջ աճել էին սպիտակ ու քնքուշ, փունջ-փունջ նարգիզներ, որոնք թեքվել էին իրենց վառ-կանաչ, պարարտ ու երկար ցողունների վրա և թունդ բուրմունք էին տարածում։ Թեև նա նույնիսկ չէր ուզում հեռանալ դրանցից, բայց բարձրացավ սանդուղքով և մտավ մի մեծ, բարձր դահլիճ, ու դեռ ձյալ այստեղ էլ ամենուրեք, պատուհանների գոգերում, դեպի պատշգամբը բացվող դռների մոտ և հենց պատշգամբում ծաղիկներ կային։ Հատակին թարմ, հնձած, բուրավետ խոտ էր փռված, պատուհանները բաց էին, թարմ, թեթև, զով օդը թափանցում էր սենյակը, դրսում ճռվողում էին թռչունները, իսկ դահլիճի մեջտեղում, ատլասե սպիտակ գործվածքով ծածկված սեղանների վրա դագաղ էր դրված։ Այս դագաղը պատած էր սպիտակ դրոդենապլով ու զարդարված էր սպիտակ, խիտ փոթերով։ Ամեն կողմից ծաղկեշղթաներ էին դրված։ Դագաղում, ամբողջովին ծաղիկների մեջ, պառկած էր սպիտակ շղարշե շրջազգեստով մի աղջիկ, ասես մարմարից կերտված, ձեռքերը կրծքի վրա պինդ ծալած։ Արձակված, բաց-շեկլիկ մազերը թաց էին. գլուխը պատած էր վարդերից հյուսված պսակով։ Նրա դեմքի խստաբարո և արդեն ոսկրացած պրոֆիլը կարծես նույնպես մարմարից էր կերտված, գալուկ շուրթերի ժպիտը ինչ-որ ոչ մանկական, անհուն տխրություն ու մեծ բողոք էր արտահայտում։ Սվիդրիգայլովը ճանաչում էր այդ աղջկան։ Դագաղի մոտ չկային ոչ վառվող մոմեր, ոչ էլ սրբապատկեր, ու աղոթքներ չէին լսվում։ Այդ աղջիկը ինքնասպան էր եղել. խեղդվել էր ջրում։ Նա ընդամենը տասնչորս տարեկան էր, բայց արդեն կոտրված էր եղել նրա սիրտը, նա ջուրն էր ընկել իրեն հասցրած վիրավորանքի պատճառով, որը սարսափեցրել ու ապշեցրել էր այդ դեռահաս, մանկահասակ էակին, անտեղի ամոթանքով էր համակել հրեշտակայնորեն մաքուր նրա հոգին և հուսալքման վերջին ճիշն էր պոկել, որը չէր լսվել, այլ լկտիաբար անարգվել էր մութ գիշերով, խավարում, ցրտում, խոնավ հալչոցին, երբ ոռնում էր քամին...

Սվիդրիգայլովը արթնացավ, վեր կացավ անկողնից և մոտեցավ պատուհանին։ Նա խարխափելով գտավ փեղկն

բռնակը և բացեց պատուհանը։ Քամին մոլեգնաբար ներխուժեց նրա փոքրիկ խցիկը ու ասես սառնամանիքային եղյամով պատեց նրա դեմքը և միայն շապկով ծածկված կուրծքը։ Պատուհանի տակ ըստ երևույթին այգու պես մի ինչ-որ բան կար ու թերևս ուտել-խմելու տեղ էր. հավանորեն ցերեկը այստեղ էլ երգում էին երգիչները, ու թեյ էր մատուցվում։ Իսկ այժմ ծառերից ու թփերից կաթիլներ էին թռչում սենյակը, մութն էր ինչպես մառանում, այնպես որ հաղիվհազ կարելի էր նշմարել միայն ինչ-որ մութ բծեր՝ դրսի առարկաները։ Սվիդրիգայլովը կռացած և աբմունկնեերով պատուհանի գոգին հենված, արդեն հինգ րոպե անընդհատ դիտում էր աղջամուղջը։ Գիշերային իավարում ճայթեց թնդանոթի մի կրակոց, ապա՝ երկրորդը։

«Հը՛մ, ազդանշան է, ջուրը վարարում է, մտածեց նա, առավոտյան դեմ կհոսի ցածր տեղերը, փողոցները, կլցվի ներքնահարկերն ու մառանները, ներքնահարկերի մկնեբը դուրս կգան ջրի երեսը, ու թրջված մարդիկ հայհոյանք թափելով, կսկսեն իրենց իրերը քարշ տալ վերին հարկերը... Հիմա ժամը քանիսն է»։ Հենց որ նա այդ մտածեց, մոտիկ մի տեղ պատի ժամացույցը տկտակով և ասես ամբողջ ուժով մեկ աճապարելով, խփեց ժամը երեքը։ «Օհո՛, մի ժամից կլուսանա։ Էլ ի՞նչ եմ սպասում, հիմա դուրս կելնեմ, կգընամ ուղղակի Պետրովյան զբոսայգին. այնտեղ կընտրեմ ամբողջովին անձրևով ողողված մի մեծ թուփ, այնպես որ ուսդ դրան կպավ թե չէ, միլիոնավոր կաթիլներ կթափվեն գլխիդ...»։ Նա պատուհանից ետ քաշվեց, փակեց այն, վառեց մոմը, հագավ բաճկոնակը, վերարկուն, գլխարկը գրեց և մոմը ձեռքին դուրս ելավ միջանցք, որպեսզի գտներ որևէ տեղ, խցիկում, ամեն տեսակ անպետք իրերի ու այրված մոմերի մնացորդների միջև քնած սպասավորին, վճաբեր համարի վարձը և դուրս գար հյուրանոցից։ «Ամենալավ րոպեն է, ավելի լավը չի կարելի ընտրել»։

Նա երկար քայլում էր ամբողջ նեղ ու երկար միջանցքում, ոչ ոքի չէր հանդիպում և արդեն ուզում էր բարձրաձայն կանչել սպասավորին, երբ հանկարծ մի մութ անկյունում, մի հին պահարանի ու դռան արանքում նկատեց ինչ-որ մի տարօրինակ առարկա, կարծես կենդանի արարած։

Մոմը ձեռքին նա կռացավ ու տեսավ մի երեխա, ամենաշատը հինգ տարեկան մի աղջիկ, որը հատակ լվալու փալասի պես թաց շորով էր, դողում ու լալիս էր։ Նա կարծես լվախեցավ Սվիդրիգայլովից և բութ զարմանքով, իր մեծ, սև աչքերով նայում էր նրան ու մերթ հեծկլտում ինչպես այն երեխաները, որոնք երկար լացել են, բայց արդեն սսկըվել և նույնիսկ սփոփվել, մինչդեռ հանկարծ էլի հեծկլտում են։ Աղջկա դեմքը գունատ էր ու մաշված. նա սառել էր ցրտից։ «Ինչպե՞ս է սա ընկել այստեղ. ուրեմն այստեղ թաքնվել է և ամբողջ գիշերը չի քնել»։ Սվիդրիգայլովը սկսեց նրան հարցուփորձ անել։ Աղջիկը հանկարծ աշխուժացավ և արագ-արագ ինչ-որ թոթովեց իր մանկական լեզվով։ Հիշատակվեց «մամիկը», որը «կծեծի», որովհետև ինքը բաժակ է «կոտրել» (կոտրել)։ Աղջիկը անդադար խոսում էր. նրա բոլոր պատմածներից կարելի էր մի կերպ կռահել, որ նա չսիրված երեխա է, որին թակել ու վախեցրել է մայրը, հավանորեն նույն հյուրանոցի շարունակ հարբած մի որևէ խոհարարուհի, որ աղջիկը ջարդել է մոր բաժակը և այնքան է վախեցել, որ դեռ իրիկվանից փախել է. հավանորեն երկար թաքնվել է բակում, որևէ տեղ, անձրևի տակ, վերջապես, եկել է այստեղ, պատսպարվել պահարանի տակ ու նստել ամբողջ գիշեր, լացել, դողացել թրջվածությունից, մթությունից վախենալով, որ այդ ամենի համար այժմ իրեն խիստ կծեծեն։ Սվիդրիգայլովը գրկեց նրան, տարավ իր համարը, նստեցրեց մահճակալին ու սկսեց հանել նրա շորերը։ Աղջկա ծակծկված քոշերը, որ նա հագել էր մերկ ոտքերին, այնքան թաց էին, որ կարծես ամբողջ գիշեր ջրափոսում էին եղել։ Հանելով նրա շորերը, Սվիդրիգայլովը նրան պառկեցրեց անկողնում, ծածկեց, փաթաթեց վերմակով։ Աղջիկը իսկույն քնեց։ Վերջացնելով այդ ամենը, Սվիդրիգայլովը դարձյալ խոր մտածմունքի մեջ ընկավ։

«Ի՞նչ խելքիս փչեց գլխացավանքի մեջ ընկնել», հանկարծ մտածեց նա ծանր և ցասումնալից զգացումով։ «Այ քեզ անհեթեթություն»։ Սրտնեղելով վերցրեց մոմը, որպեսզի գնար և ինչ կերպ էլ լինի գտներ սպասավորին ու շուտ հեռանար այստեղից, «Հապա աղջիկ՞ը», մտածեց նա ցասումնալից, արդեն բանալով դուռը, բայց ետ դարձավ՝ մի

անգամ էլ աղջկան նայելու, թե արդյոք քնա՞ծ է նա և ի՞նչպես է քնած։ Սվիդրիգայլովը զգուշությամբ մի քիչ բարձրացրեց վերմակը։ Աղջիկը քնած էր խոր ու երանավետ քնով։ Նա տաքացել էր վերմակի տակ, և արդեն նրա դալուկ թշիկների վրա կարմրություն էր դուրս տվել։ Բայց, տարօրինակ բան. այդ կարմրությունը ավելի վառ էր և թունդ, քան կարող է լինել մանկական դեմքի սովորական կարմրությունը։ «Դա տենդային կարմրություն է,— մտածեց Սվիդրիգայլովը,— դա կարծես դինուց է, կարծես սրան մի ամբողջ բաժակ գինի են խմեցրել։ Ալ շրթնիկները ասես վառվում են, կրակվում, բայց ի՞նչ է սա... Սվիդրիգայլովին հանկարծ թվաց, թե աղջկա երկար, սև արտևանունքները կարծես երերվում են ու նշան անում, կարծես քիչ բարձրանում են ու նրանց տակից նայում են խորամանկ, սուր, ինչ-որ ոչ մանկականորեն նշան անող աչքերը, ասես աղջիկը ոչ թե քնած է, այլ քնած է ձևանում։ Այո, հենց այդպես է որ կա. աղջկա շրթնիկները բացվում են ժպտալուց. շրթնիկների ծայրերը դողում են, ասես դեռ զսպվում։ Բայց ահա նա արդեն էլ չէր զսպվում. այդ արդեն ծիծաղ է. ինչ-որ մի լկտի, զայրացուցիչ բան է երևում ամենևին էլ ոչ մանկական այդ դեմքի վրա. դա անբարոյականություն է, դա կամելիայի դեմք է, ֆրանսուհիների թվին պատկանող ծախու կամելիայի լկտի դեմք[1]։ Ահա արդեն աղջիկը այլևս չընքաշվելով, երկու աչքերն էլ բաց է անում. դրանք վառվռուն և անամոթ հայացքով նայում են Սվիդրիգայլովին, կանչում նրան, ծիծաղում... Ինչ-որ անսահմանորեն այլանդակ և վիրավորական բան կար այդ ծիծաղի մեջ, այդ աչքերում, երեխայի դեմքի այդ ամբողջ նողկալիության մեջ։ «Ինչպե՞ս թե. հինգ տարեկա՞ն»,— ուղղակի սարսափահար շշընջաց Սվիդրիգայլովը, «ախր սա... սա ի՞նչ բան է»։ Բայց ահա արդեն աղջիկը ամբողջովին կարմրատակած դեմքով շուռ է գալիս նրա կողմը, ձեռքերը պարզում նրան... «Օ՜, օ, անիծված»,— գոչեց սարսափով բռնված Սվիդրիգայլովը՝

---

[1] Կամելիա, այսուհետև՝ թեթևաբարո կին (ըստ Ա. Դյումայի «Կամելիա-զարդ ուիկինը» վեպի)։

ձեռքը բարձրացնելով նրա վրա... բայց հենց այդ րոպեին արթնացավ։

Նա դարձյալ անկողնում է, փաթաթված է վերմակով. մոմը վառված չէ, իսկ պատուհանից արդեն ներս է ընկել ցերեկվա պարզ լույսը։

«Ամբողջ գիշերը մղձավանջ»։ Նա չարացած քիչ բարձրացավ տեղից, զգալով, որ իսպառ թմլացել է. ոսկորները ցավում էին։ Դրսում բոլորովին թանձր մշուշ է, ոչինչ չի կարելի տեսնել։ Հինգերորդ ժամը վերջանալու մոտ է. քնել է ու բաց թողել գնալու ժամը։ Նա վեր կացավ ու հագավ իր ժակետը և վերարկուն, որոնք գեռ թաց էին։ Գրպանում շոշափելով ատրճանակը, հանեց այն և ուղղեց հրապատիճը։ Հետո նստեց, գրպանից հանեց ծոցատետրը և հենց առաջին, առավելապես նկատելի թերթիկի վրա խոշոր տառերով մի քանի տող գրեց։ Կարդալով դրանք, նա կրթնեց սեղանին ու մտածմունքի մեջ ընկավ։ Ատրճանակը և ծոցատետրը արմունկի կողքին էին։ Արթնացած ճանճերը նրոտում էին հորթի չկերված մսի վրա, որ դրված էր սեղանին։ Նա երկար նայում էր ճանճերին և վերջապես, աջ, աղաս ձեռքով փորձեց բռնել նրանցից մեկին։ Երկար ջանք թափեց, բայց չկարողացավ բռնել։ Ի վերջո թողնելով այդ զբաղմունքը, սթափվեց, ցնցվեց, վեր կացավ ու վճռական քայլերով դուրս եկավ սենյակից։ Մի րոպե հետո նա փողոցում էր։

Քաղաքի վրա կաթնագույն, խիտ մշուշ էր իջել։ Սվիդրիգայլովը սկսուն, ցեխոտ, փայտե սալարկով գնաց դեպի Մալայա Նևա։ Նրան պատկերանում էին գիշերվա ընթացքում խիստ վարարած Մալայա Նևայի ջուրը, Պետրովյան կղզին, թաց շավիղները, թաց խոտաբույսերը, թաց ծառերն ու թփերը և վերջապես, հենց այն թուփը... Նա սրտնեղելով դիտում էր տները, որպեսզի մտածեր որևէ ուրիշ բանի մասին։ Պողոտայում ոչ անցորդ, ոչ էլ կառք էր հանդիպում։ Տխուր ու կեղտոտ տեսք ունեին բաց-դեղին, փայտաշեն տնակները, որոնց պատուհանների փեղկերը փակված էին։ Ցուրտն ու խոնավությունը թափանցում էին նրա ամբողջ մարմնի մեջ, և նա մրսում էր։ Երբեմն տեսնում էր բանջարեղենի և այլ խանութների ցուցանակները և ման-

բազնին։ կարդում յուրաքանչյուր ցուցանակը։ Ահա արդեն վերջացավ փայտե սալարկը։ Նա արդեն հասել էր մի մեծ, քարաշեն տան։ Կեղտոտ, մրսած մի շնիկ պոչը քաշած, վազելով անցավ նրա առջևից։ Անզգայության չափ հարբած, շինել հագած մի մարդ երեսնիվայր փռվել էր մայթի վրա։ Սվիդրիգայլովը նայեց նրան ու շարունակեց գնալ։ Ձախ կողմից երևաց մի բարձր դիտանոց[1]։ «Վա՛հ,— մտածեց նա,— ահա և հարմար տեղ, էլ ինչո՞ւ գնամ Պետրովյան զբոսայգին։ Գոնե դա պաշտոնական վկայի ներկայությամբ կլինի...»։ Նա գրեթե քմծիծաղ տվեց այդ նոր մտքից ու դարձավ դեպի № փողոցը։ Հենց այստեղ էր մեծ տունը, դիտանոցը։ Տան փակված, մեծ դարպասի առջև, ուսը դռանը հենած, կանգնել էր զինվորի գորշ վերարկուով, պղնձե, աքիլլեսյան սաղավարտով, կարճահասակ մի մարդ։ Նա քնեած հայացքով, սառը, ծուռ նայեց մոտեցող Սվիդրիգայլովին։ Նրա դեմքի վրա երևում էր այն հավիտենական դժգոհություն արտահայտող տրտմությունը, որ միշտ հատուկ է հրեական ցեղի առանց բացառության բոլոր դեմքերին։ Նրանք երկուսն էլ, Սվիդրիգայլովը և Աքիլլեսը, մի պահ լուռ իրար էին նայում։ Վերջապես, Աքիլլեսին անկարգություն թվաց այն, որ այդ մարդը հարբած չէ, բայց կանգնել է իր առջև, երեք քայլ հեռու, նայում է դեմ առ դեմ և ոչինչ չի ասում։

— Դուք այստեղ ի՞նչ գուզե՞-իք,— ասաց նա առանց շարժվելու, չփոխելով իր մարմնի դիրքը։

— Ոչինչ, աղբերս, բարև,— պատասխանեց Սվիդրիգայլովը։

— Աստեղ ցպեմք է կանգնել։

— Ես, աղբերս, գնում եմ օտար երկրներ։

— Օտար երկրնե՞ր։

— Ամերիկա։

— Ամելիկա՞։

Սվիդրիգայլովը հանեց ատբճանակը և բարձրացրեց Կրահանը։ Աքիլլեսը վեր քշեց հոնքերը։

---

[1] Հրշեջ խմբի դիտանոց (Ծ. Թ.)։

— Է՛յ, այդ ի՞նչ կնատակներ են, աստեղ դրանց տեղը ցե։

— Ախր ինչո՞ւ տեղը չէ։

— Որովհետև տեղը ցե։

— Էհ, բարեկամ, այդ միևնույն է։ Տեղը լավ է. եթե քեզ հարցնեն, ասա, թե ես Ամերիկա եմ մեկնել։

Նա ատրճանակը ուղղեց իր աջ քունքին։

— Է՛յ, աստեղ դա ցի կոպելի, աստեղ դրա տեղը ցէ։ Աքիլլեսը ցնցվեց՝ ավելի ու ավելի լայն բանալով աչքերը։

Սվիդրիգայլովը իջեցրեց հրահանը։

VII

Նույն օրը երեկոյան ժամը յոթին Ռասկոլնիկովը մոտեցավ իր մոր և քրոջ բնակարանին, Բակալեևի տան հենց այն բնակարանին, ուր նրանց տեղավորել էր Ռազումիխինը։ Մուտքը փողոցից էր։ Ռասկոլնիկովը դանդաղ էր մոտենում և կարծես տատանվում էր. ներս մտնե՞ր, թե՞ ոչ։ Բայց նա ոչ մի դեպքում ետ չէր դառնա. այդպես էր որոշել։ «Միևնույն է, հո՛, նրանք դեռ ոչինչ չգիտեն», մտածում էր նա, «իսկ ինձ տարօրինակ համարելու սովորություն ունեն...»։ Նրա կոստյումը սարսափելի էր. կեղտոտ էր, անձրևի տակ էր եղել, պատռված էր ու մաշված։ Նրա դեմքը համարյա այլանդակվել էր հոգնածությունից, վատ եղանակից, ֆիզիկական խոնջությունից և համարյա մի օր ու գիշեր ապրած հոգեկան պայքարից։ Այդ ամբողջ գիշերը նա անցկացրել էր մենակ, աստված գիտե թե որտեղ։ Բայց իր այդ որոշումը հաստատ էր։

Նա ծեծեց դուռը. մայրը բացեց այն։ Դունեչկան տանը չէր։ Նույնիսկ սպասուհի էլ այդ պահին չպատահեց։ Պուլխերիա Ալեքսանդրովնան սկզբում համրացավ բերկրալի զարմանքից. հետո վերցրեց որդու թևը ու նրան ներս տարավ։

— Ահա և դու,— սկսեց նա՝ ուրախությամբ կմկմալով։ — Մի բարկանա ինձ վրա, Ռոդյա, որ ես քեզ այսպես հիմարաբար, արցունքներով եմ դիմավորում. ես ծիծաղում եմ և ոչ թե լաց լինում։ Դու կարծում ես, թե ես լալի՞ս եմ։ Ոչ,

ուրախանում եմ, միայն թե արտասվելու հիմար սովորություն ունեմ։ Այսպես է հորդ մահից հետո, ամեն մի առիթով լալիս եմ։ Նստիր, աղավնյակս, երևի հոգնել ես։ Ես այդ տեսնում եմ։ Ա՛խ, ինչքան ես կեղտոտվել։

— Ես երեկ անձրևի տակ ընկա, մայրիկ...— ասաց Ռասկոլնիկովը։

— Ոչ-ոչ,— վրա բերեց Պուլչերիա Ալեքսանդրովնան՝ ընդհատելով նրան,— դու կարծում էիր, թե ես քեզ հիմա պետք է հարցուփո՞րձ անեմ ըստ իմ առաջվա կանացի սովորության. մի անհանգստանա։ Ես հո հասկանում եմ, ամեն ինչ հասկանում եմ. հիմա ես արդեն ընտելացել եմ այստեղի դրության և հենց ինքս եմ տեսնում, որ այստեղ ավելի խելացի բաներ են լինում։ Ես առմիշտ համոզվել եմ, որ չեմ կարող հասկանալ քո նկատառումները և քեզնից հաշիվ պահանջել։ Ով գիտե դու ինչ գործեր և պլաններ ունես և ինչ մտքեր են ծագում գլխումդ, ինչո՞ւ պետք է ես քաշքշեմ թևիցդ, գե՝ ասա, ինչ ես մտածում։ Ես... ախ, տեր աստված, ի՞նչ եմ շշմածի պես դես-դեն ընկնում... Ես, Ռոդյա, ժուռնալում արդեն երրորդ անգամ կարդում եմ քո հոդվածը, Դմիտրի Պրոկոֆիչն է բերել։ Տեսա թե չէ, ուղղակի ախ քաշեցի. մտածում եմ՝ ինչ հիմարն եմ եղել, ահա թե դու ինչով ես զբաղվում, ահա թե ինչումն է բանը։ Ուսումնականները միշտ էլ այդպես են լինում։ Գուցե թե դու նոր մտքեր ես ունեցել, կշռադատում ես դրանք, ինչո՞ւ քեզ տանջեմ ու շփոթեցնեմ։ Կարդում եմ, սիրելիս և իհարկե շատ բան չեմ հասկանում. դի, դա այդպես էլ պետք է լինի. ո՞րտեղից հասկանամ։

— Ցույց տուր, մայրի՛կ։

Ռասկոլնիկովը վերցրեց թերթը և հարևանցիորեն նայեց իր հոդվածը։ Որքան էլ այդ հակասում էր նրա դրությանը և վիճակին, նրա մեջ առաջացավ այն տարօրինակ, սուր և քաղցր զգացումը, որ առաջանում է հեղինակի սրտում, երբ առաջին անգամ նա իր գրվածքը տպված է տեսնում. այն էլ ասած, այստեղ նշանակություն ուներ նաև քսաներեք տարեկան հասակը։ Դա մի ակնթարթ տևեց։ Մի քանի տող կարդալով, նա մռայլվեց ու սոսկալի թախիծը ճմլեց նրա սիրտը։ Միանգամից նա վերհիշեց վերջին ա-

միսների իր ամբողջ հոգեկան պայքարը։ Զղվանքով ու զզվանքով նա հոգվածը շպրտեց սեղանին։

— Միայն թե, Ռոդյա, որքան էլ ես անխելք եմ, այնուամենայնիվ կարող եմ դատել, որ մեր գիտական աշխարհում շատ շուտով դու կլինես առաջին մարդկանցից մեկը, եթե ոչ ամենաառաջինը։ Եվ ինչպե՞ս էին նրանք համարձակվում մտածել, թե դու խելագարվել ես։ Քա՜հ-քա՜հ-քա՜հ, դու այդ չգիտես, նրանք այդպես էին կարծում։ Ա՜խ, ստոր ճիճուներ, ախր նրանք ո՞րտեղից հասկանան, թե ինչ է բանականությունը։ Ախր Դունեչկան էլ համարյա հավատում էր։ Այ քեզ բան։ Հանգուցյալ հայրդ երկու անգամ նյութ ուղարկեց մի ժուռնալի. սկզբում ոտանավորներ (տետրը կա ինձ մոտ, ես քեզ երբևէ ցույց կտամ), հետո էլ մի ամբողջ վիպակ (ես ինքս էի խնդրել, որ ինձ տար արտագրելու), ու երկուսս էլ որքա՞ն էինք աղոթում, որ ընդունեին, բայց չընդունեցին։ Է՜, Ռոդյա, մի վեց-յոթ օր առաջ, նայելով շորերիդ, դարդ էի անում, մտածում էի, թե դու ինչպես ես ապրում, ինչ ես ուտում և ինչ ես հագնում։ Իսկ հիմա տեսնում եմ, որ էլի անխելք էի, չէ՞ որ երբ ուզենաս, քեզ համար ամեն ինչ կճարես քո խելքով և տաղանդով։ Ուրեմն դու առայժմ այդ չես ուզում անել, որովհետև շատ ավելի կարևոր գործերով ես զբաղվում։

— Դունյան տանը չէ՞, մայրիկ։

— Ոչ, Ռոդյա։ Շատ հաճախ նրան տանը չեմ տեսնում, ինձ մենակ է թողնում։ Շնորհակալություն Դմիտրի Պրոկոֆիչին, գալիս է ինձ մոտ, շարունակ քո մասին է խոսում։ Նա քեզ սիրում է ու հարգում, որդյակս։ Քրոջդ մասին չեմ կարող ասել, թե նա որևէ չափով չի հարգում ինձ։ Ես հո չեմ գանգատվում։ Ես ու նա տարբեր բնավորություն ունենք. նա ինչ-որ գաղտնիքներ ունի. ես ձեզնից ոչ մի գաղտնիք էլ չունեմ։ Իհարկե, ես հաստատ հավատացած եմ, որ Դունյան շատ խելացի է, ու բացի դրանից, սիրում է ինձ էլ, քեզ էլ... բայց չգիտեմ, թե այդ ամենը ուր կհասցնի։ Այ, Ռոդյա, դու հիմա ինձ երջանկացրիր, որ եկար, իսկ նա այստեղ չէ. կգա ու ես կասեմ՝ քո բացակայությամբ եղբայրդ այստեղ էր, իսկ դու ո՞րտեղ էիր բարեհաճում ժամանակ անցկացնել։ Դու ինձ, Ռոդյա, շատ էլ երես մի տա. եթե

կարող ես, եկ, եթե չես կարող, ի՞նչ արած, ես էլի ու էլի կսպասեմ։ Չէ՞ որ այնուամենայնիվ ես կգիտենամ, որ դու սիրում ես ինձ, այդ էլ բավական է ինձ համար։ Կկարդամ քո գրվածքները, բոլորից էլ լուրեր կլսեմ քո մասին, կամ դու կայցելես, սրանից էլ ի՞նչ լավ բան կա։ Ա՛յ, հիմա հո եկար, որ մխիթարես մորդ, ես հո տեսնում եմ...

Այստեղ Պուլխերիա Ալեքսանդրովնան հանկարծ լաց եղավ։

— Էլի՛ այս լացը. մի նայիր ինձ, հիմարիս։ Ա՛խ, տեր աստված, ի՞նչ եմ նստել,— գոչեց նա արագ վեր կենալով, — ախր սուրճ կա, իսկ ես քեզ չեմ էլ հրամցնում։ Ա՛յ թե ինչ է պառավի եսամոլությունը։ Հիմա, այս րոպեիս։

— Մայրիկ, այդ թողեք, ես հիմա կգնամ։ Ես դրա համար չեմ եկել։ Խնդրում եմ, լսեք ինձ։

Պուլխերիա Ալեքսանդրովնան երկչոտ մոտեցավ որդուն։

— Մայրիկ, ինչ էլ որ պատահի, ինչ էլ որ դուք լսեք իմ մասին, դուք ինձ կսիրե՞ք այնպես, ինչպես հիմա,— հանկարծ սրտահույզ հարցրեց Ռասկոլնիկովը, կարծես առանց մտածելու, առանց կշռադատելու իր խոսքերը։

— Ռոդյա, Ռոդյա, ի՞նչ պատահեց քեզ, ինչպե՞ս կարող ես այդպիսի հարց տալ։ Ո՞վ պետք է ինձ որևէ բան ասի քո մասին։ Ես ոչ ոքի չեմ հավատա, ով էլ որ ինձ մոտ դա, ուղղակի դուրս կանեմ։

— Ես եկել եմ ձեզ հավաստիացնելու, որ ես միշտ սիրել եմ ձեզ, ու հիմա ուրախ եմ, որ մենք երկուսով ենք, նույնիսկ ուրախ եմ, որ Դունյան այստեղ չէ,— նույն պոռթկումով շարունակեց Ռասկոլնիկովը,— ես եկել եմ ձեզ ուղղակի ասելու, որ թեև դուք դժբախտ կլինեք, բայց և այնպես գիտցեք, որ ձեր որդին հիմա ձեզ ավելի շատ է սիրում, քան իրեն, և որ այն ամենը, ինչ որ դուք մտածել եք իմ մասին, որ իբր թե ես դաժան եմ ու չեմ սիրում ձեզ... այդ ամենը ճշմարիտ չի եղել։ Ես ձեզ միշտ էլ սիրելու եմ... Էհ, բավական է. ինձ թվում էր, որ այսպես պետք է վարվեի և այսպես սկսեի իմ ասելիքը...

Պուլխերիա Ալեքսանդրովնան լուռ գրկում էր որդուն, սեղմում կրծքին ու մեղմ լալիս էր։

— Չգիտեմ ինչ է պատահել քեզ, Ռոդյա,— վերջապես ասաց նա,— այս ամբողջ ժամանակվա ընթացքում ես կարծում էի, թե մենք ուղղակի ձանձրացնում ենք քեզ, իսկ հիմա տեսնում եմ, որ քեզ մեծ դառնություն է սպասվում, այդ պատճառով էլ դու դարդ ես անում։ Ես այդ վաղուց եմ կանխազգում, Ռոդյա։ Ներիր ինձ, որ խոսեցի այդ մասին. շարունակ դրա մասին եմ մտածում և գիշերները չեմ քնում։ Այս գիշեր քույրդ շարունակ զրանցում էր և քո անունն էր տալիս։ Ես ինչ-որ բան լսեցի, բայց ոչինչ չհասկացա։ Ամբողջ առավոտ այնպես էի, ինչպես մարդ լինում է մահապատժի ենթարկվելուց առաջ, ինչ-որ բան էի սպասում, նախազգում, և ահա կատարվեց սպասածս։ Ռոդյա, Ռոդյա, ո՞ւր ես գնալու, որևէ տե՞ղ ես մեկնելու, թե՞ ինչ։

— Մեկնելու եմ։

— Ես այդպես էլ կարծում էի։ Ես էլ հո կարող եմ մեկնել քեզ հետ, եթե այդ քեզ հարկավոր լինի։ Դունյան էլ. նա սիրում է քեզ, նա շատ է սիրում քեզ. թերևս Սոֆյա Սեմյոնովնան էլ թող գա մեզ հետ, եթե այդ հարկավոր է. տեսնո՞ւմ ես, նրան ես կընդունեմ ինչպես իմ աղջկան։ Դմիտրի Պրոկոֆիչը մեզ կօգնի ճանապարհվելու... բայց... դու... ո՞ւր պիտի մեկնես։

— Մնաք բարով, մայրիկ։

— Ինչպե՞ս թե, հենց այսո՞ր,— ճչաց մայրը, կարծես առմիշտ կորցնում էր որդուն։

— Էլ չեմ կարող մնալ, պետք է գնամ, դա ինձ շատ է հարկավոր...

— Ես չե՞մ կարող քեզ հետ գալ։

— Ոչ, դուք ծունկ չոքեցեք և ինձ համար աղոթեցեք աստծուն։ Ձեր աղոթքը գուցե և հասնի նրան։

— Եկ քեզ խաչակնքեմ, օրհնեմ քեզ։ Այ, այդպես, այդպես։ Օ, տեր աստված, այս ի՞նչ ենք անում։

Այո, Ռասկոլնիկովը ուրախ էր, նա շատ ուրախ էր, որ ինքն ու մայրը երկուսով էին, որ ուրիշ ոչ ոք չկար։ Այդ ամբողջ սարսափելի ժամանակվա ընթացքում առաջին անգամ կարծես թեթևացավ նրա սիրտը։ Նա ծունկ չոքեց մոր առջև, նա համբուրում էր մոր ոտքերը, ու երկուսն էլ ջրկված լալիս էին։ Այս անգամ մայրը չէր զարմանում և հար-

ցեր չէր տալիս։ Նա արդեն վաղուց էր հասկացել, որ որդու հետ ինչ-որ զարհուրելի բան է կատարվում, իսկ հիմա որդու համար ինչ-որ սարսափելի բոպե էր վրա հասել։

— Ռոդյա, սիրելիս, իմ առաջնեկ,— հեկեկալով ասում էր նա,— դու հիմա էլ այնպես ես, ինչպես փոքր հասակումդ էիր, հենց այդպես էլ գալիս էիր ինձ մոտ, այդպես էլ ինձ գրկում էիր ու համբուրում. դեռ այն օրերում, երբ հորդ հետ ապրում էինք աղքատ վիճակում, դու մեզ մխիթարում էիր հենց միայն նրանով, որ մեզ հետ էիր, իսկ երբ ես թաղեցի հորդ, քանի՞-քանի անգամ ես ու դու այսպես գրկված լալիս էինք նրա գերեզմանի վրա։ Ես վաղուց եմ լալիս, որովհետև մայրական սիրտս նախազգացել է դժբախտությունը։ Երբ ես առաջին անգամ քեզ տեսա այն ժամանակ, երեկոյան, երբ մենք նոր էինք ժամանել այստեղ, քո միայն մի հայացքից ամեն ինչ հասկացա, ու սիրտս դողաց, իսկ այսօր, երբ դուռը բացեցի քո առաջ ու նայեցի քեզ, մտածեցի, որ երևի հասել է ճակատագրական ժամը։ Ռո՛դյա, Ռո՛դյա, դու հո հենց այժմ չե՞ս մեկնում։

— Ոչ։

— Դու էլի կգա՞ս։

— Այո... կգամ։

— Ռոդյա, մի բարկանա, ես չեմ էլ համարձակվում քեզ հարցուփորձ տնել։ Գիտեմ, որ չպիտի համարձակվեմ, բայց այնպես, էլի, միայն երկու խոսք ասա ինձ, հեռու տե՞ղ ես մեկնում։

— Շատ հեռու։

— Այնտեղ ծառայելո՞ւ, աշխատելո՞ւ ես, թե՞ ինչ։

— Ինչ որ ասված տա... միայն թե ազոթեցեք ինձ համար...

...Ռասկոլնիկովը քայլեց դեպի դուռը, բայց մայրը կառչեց նրանից և հուսաբեկ հայացքով նայեց նրա աչքերին։ Նրա դեմքը ծռմռվեց սարսափից։

— Բավական է, մայրիկ,— ասաց Ռասկոլնիկովը, խորապես զղջալով, որ խելքին փչել էր այստեղ գալ։

— Հո ընդմիշտ չե՞ս գնում, դու հո կգա՞ս, վաղը կգա՞ս։

— Կգամ, կգամ, մնաք բարով։

Վերջապես, նա պոկվեց մորից։

Երեկոն դով էր, տաք ու պայծառ. եղանակը պարզել էր դեռ առավոտից։ Ռասկոլնիկովը գնում էր իր բնակարանը. նա շտապում էր։ Նա ուզում էր ամեն ինչ վերջացնել մինչև մայրամուտ։ Չէր ուզում մինչև այդ ժամը հանդիպել որևէ մեկին։ Բարձրանալով դեպի իր բնակարանը, նա նկատեց, որ Նաստասյան թողնելով ինքնահոսով զբաղվելը, ուշադրությամբ հետամտում է իրեն և ուղեկցում աչքերով։ «Ինձ մոտ հո չկա՞ որևէ մեկը», մտածեց նա։ Զզվանքով պատկերացրեց Պորֆիրիին, բայց, հասնելով իր սենյակը և բանալով դուռը, նա տեսավ Դունեչկային։ Սա նստել էր մենակ, խոր մտածմունքի մեջ ընկած, ու ըստ երևույթին վաղուց էր սպասում եղբորը։ Ռասկոլնիկովը կանգ առավ շեմին։ Դունեչկան վախվխելով վեր կացավ բազմոցից և ուղիղ կանգնեց նրա դիմաց։ Նրա հայացքը, որ անշարժ սևեռված էր եղբոր վրա, սարսափ և անամոք տխրություն էր արտահայտում։ Ռասկոլնիկովը հենց միայն այդ հայացքից իսկույն հասկացավ, որ քրոջը ամեն ինչ հայտնի է։

— Հը՛, մտնե՞մ քեզ մոտ, թե՞ գնամ,— անվստահ հարցրեց նա։

— Ես ամբողջ օրը Սոֆյա Սեմյոնովնայի մոտ էի. երկուսս էլ քեզ էինք սպասում։ Կարծում էինք, որ անպայման այնտեղ կգաս։

Ռասկոլնիկովը ներս մտավ և ուժասպառ վիճակում նստեց աթոռին։

— Ես ինչ-որ թույլ եմ, Դունյա. խիստ հոգնել եմ. բայց կուզենայի գոնե այս րոպեին միանգամայն հանգիստ վիճակում լինել։

Նա անվստահ նայեց քրոջը։

— Դու ո՞րտեղ էիր ամբողջ գիշեր։

— Լավ չեմ հիշում. գիտե՞ս, քույրս, ես ուզում էի վերջնականապես որոշել իմ անելիքը ու երկար քայլում էի Նևայի մոտակայքում. ես այդ հիշում եմ։ Ուզում էի հենց այնտեղ էլ ջուրն ընկնել, բայց... սիրտ չարեցի...—շշնջաց նա՝ դարձյալ անվստահ նայելով Դունյային։

— Փառք աստծու։ Մենք, ես ու Սոֆյա Սեմյոնովնան հենց դրանից էինք վախենում. ուրեմն դու դեռ հավատում ես, որ պիտի ապրես. փառք աստծու, փառք աստծու։

Ռասկոլնիկովը դառն քմծիծաղ տվեց։

— Ես չէի հավատում, իսկ քիչ առաջ մորս հետ զրկված լալիս էինք. չեմ հավատում, բայց նրան խնդրեցի աղոթել ինձ համար։ Ասված դիտե, թե այդ ինչպես է արվում, Դունեչկա, ես դրանից ոչինչ չեմ հասկանում։

— Դու մայրիկի մո՞տ եղար։ Դու այդ ասացի՞ր նրան, — սարսափահար բացականչեց Դունյան։— Մի՞թե դու համարձակվեցիր ասել։

— Ոչ, չասացի... խոսքերով. բայց նա շատ բան հասկացավ։ Գիշերը նա լսել էր, թե դու ինչպես էիր ղառանցում։ Ես հավատացած եմ, թե նա արդեն կիսով չափ հասկանում է։ Գուցե ես վատ բան արեցի, որ գնացի նրա մոտ։ Նույնիսկ չգիտեմ էլ, թե ինչի համար գնացի։ Ես ստոր մարդ եմ, Դունյա։

— Ստոր մարդ ես, բայց պատրաստ ես տառապանքի գնալ։ Դու հո գնո՞ւմ ես։

— Գնում եմ։ Հենց հիմա։ Այդ ամոթանքից խուսափելու համար էր, որ ես ուզում էի խեղդվել ջրում, Դունյա, բայց, ջրի ափին կանգնած, մտածեցի, որ եթե մինչև այժմ ինձ ուժեղ եմ համարել, ապա թող հիմա չվախենամ ամոթանքից,— ասաց նա առաջ ընկնելով։— Սա հպարտությո՞ւն է, Դունյա։

— Հպարտություն է, Ռոդյա։

Ռասկոլնիկովի մարած աչքերը կարծես թե առկայծեցին. նրան հաճելի էր, որ ինքը դեռ հպարտ է։

— Իսկ դու, քույրս, չե՞ս կարծում, որ ես ուղղակի վախեցա ջուրն ընկնելուց,— հարցրեց նա այլանդակ քմծիծաղով, նայելով քրոջ դեմքին։

— Օ, Ռոդյա, բավական է,— դառը բացականչեց Դունյան։

Երկու րոպե լռություն տիրեց։ Ռասկոլնիկովը նստել էր մռայլված ու նայում էր հատակին. Դունեչկան կանգնել էր սեղանի մյուս կողմում և տանջալից նայում էր նրան։ Ռասկոլնիկովը հանկարծ վեր կացավ.

— Ուշ է, պետք է գնալ։ Ես հիմա գնում եմ ինձ մատնելու։ Բայց ես չգիտեմ, թե ինչի համար եմ գնում ինձ մատնելու։

Դունեչկայի այտերի վրայով խոշոր արցունքներ էին հոսում։

— Դու լալիս ես, քույրս, բայց կարո՞ղ ես ձեռքդ մեկնել ինձ։

— Եվ դու կասկածո՞ւմ էիր։

Դունյան պինդ գրկեց եղբորը։

— Մի՞թե դու, տառապանքի գնալով, արդեն կիսով չափ չես քավում քո ոճրագործությունը,— գոչեց նա՝ եղբորը սեղմելով իր գրկում և համբուրելով նրան։

— Ոճրագործությո՞ւն։ Ի՞նչ ոճրագործություն,— գոչեց Ռասկոլնիկովը ինչ-որ հանկարծակի կատաղությամբ,— ես սպանել եմ գարշելի, վնասակար մի ոջիլ, վաշխառու մի պառավ, որը ոչ ոքի հարկավոր չէր, որին սպանելը հարյուրապատիկ ներելի է, որը չքավորներից հյութ էր քամում, և դա ոճրագործությո՞ւն է։ Ես չեմ մտածում դրա մասին և դա քավելու միտք էլ չունեմ։ Եվ ի՞նչ են բոլոր կողմերից բարբաջում՝ «ոճրագործություն, ոճրագործություն»։ Միայն հիմա եմ պարզ տեսնում իմ փոքրոգության ամբողջ անհեթեթությունը, հիմա, երբ արդեն որոշել եմ տանել այս ավելորդ ամոթանքը։ Որոշել եմ ուղղակի իմ ստորության և անշնորհքության հետևանքով, նաև շահավետության նկատառումով, ինչպես որ առաջարկում էր... այդ... Պորֆիրին...

— Եղբայրս, եղբայրս, այդ ի՞նչ ես ասում։ Չէ՞ որ դու արյուն ես թափել,— հուսաբեկ գոչեց Դունյան։

— Որը բոլորն էլ թափում են,— գրեթե զայրացած վրա բերեց Ռասկոլնիկովը,— որը թափվում և միշտ թափվել է աշխարհում ինչպես ջրվեժ, որը խմում են ինչպես շամպայն և որի համար թագ են դնում Կապիտոլիյում և թագադրվողին հետո մարդկության բարերար են անվանում։ Դու ավելի ուշադիր նայիր այդ ամենին։ Ես ինքս մարդկանց բարիք էի ցանկանում և հարյուրավոր, հազարավոր բարի գործեր կանեի հենց միայն այդ հիմարության փոխարեն, որը նույնիսկ հիմարություն էլ չէ, այլ պարզապես անշնորհքություն է, որովհետև այդ ամբողջ միտքը այնքան էլ հիմար միտք չէր, ինչպես թվում է այժմ, ձախորդության պահին... (ձախորդության պահին ամեն ինչ հիմար բան է թվում)։ Ես ուզում էի այդ հիմարությամբ անկախ դրության

հասնել, առաջին քայլն անել, միջոցներ ձեռք բերել, ու հետո ամեն ինչ կկարգավորվեր, անհամեմատ ավելի մեծ օգուտ կստացվեր... բայց ես, ես առաջին քայլն էլ չկարողացա անել, որովհետև ես ստոր մարդ եմ։ Ահա թե ինչումն է բանը։ Եվ այնուամենայնիվ ձեր աչքերով չեմ նայի իրերին. եթե իմ գործը հաջողվեր, ինձ կմեծարեին, իսկ հիմա թակարդն եմ ընկնում։

— Բայց դա այլ բան է, բոլորովին այլ բան։ Եղբայրս, այդ ինչե՞ր ես ասում։

— Հը՛մ, պատշաճ ձև չէ՛, էսթետիկորեն այնքան էլ լավ ձև չէ... բայց ես բոլորովին չեմ հասկանում, թե ինչու ռումբերով, ուղղակի գրոհով մարդկանց ջնջելը ավելի պատվավոր ձև է։ Էսթետիկայից վախենալը անզորության առաջին նշանն է... Ես այդ երբեք, երբեք այնպես պարզ չեմ թիտակցել, ինչպես հիմա, ու ամենևին էլ այլ կերպ չեմ հասկանում իմ ոճրագործությունը։ Երբեք, երբեք այնպես ուժեղ և համոզված չեմ եղել, ինչպես հիմա...

Ռասկոլնիկովի դալուկ, հոգնատանջ դեմքը նույնիսկ կարմրեց։ Բայց վերջին խոսքերն արտասանելիս նա պատահմամբ նայեց Դունյայի աչքերին և դրանց մեջ այնքա՞ն, այնքա՞ն տանջանք տեսավ իր նկատմամբ, որ ակամայից ուշքի եկավ։ Նա զգաց, որ այնուամենայնիվ դժբախտ է դարձրել այդ երկու խեղճ կանանց։ Այնուամենայնիվ ինքն է դրա պատճառը...

— Դունյա, սիրելիս, եթե ես մեղավոր եմ, ներիր ինձ (թեև ինձ չի էլ կարելի ներել, եթե ես մեղավոր եմ)։ Մնաս բարով, չվիճենք։ Պետք է գնամ, ժամանակն է։ Մի՛ գա իմ ետևից, աղերսում եմ քեզ։ Ես դեռ տեղ պետք է գնամ... Այժմ դու գնա և իսկույն նստիր մայրիկի կողքին։ Աղաչում եմ քեզ, այդպես արա։ Սա իմ վերջին, ամենամեծ խնդրանքն է։ Շարունակ նրա մոտ եղիր. ես նրան թողի տագնապալից վիճակում, որին նա հազիվ թե դիմանա. նա կամ կմեռնի կամ կխելագարվի։ Եղիր նրա հետ։ Ռազումիխինը ձեզ հետ կլինի. ես նրան ասել եմ... Մի լար ինձ համար։ Ես կաշխատեմ ամբողջ կյանքումս լինել և քաջասիրտ, և ազնիվ, թեև մարդասպան եմ։ Գուցե դու երբևէ կլսես իմ անունը։ Ես ձեզ ամոթով չեմ անի, կտեսնես. ես դեռ կապացուցեմ...

հիմա առայժմ ցտեսություն,— շտապեց եզրափակել նա՝ դարձյալ նկատելով ինչ-որ տարօրինակ արտահայտություն Դունյայի աչքերում, իր վերջին խոսքերի ու խոստումների պահին։— Ինչո՞ւ ես այդպես լալիս։ Մի լար, մի լար, հո բոլորովին չե՞նք բաժանվում... Ախ, հա՛, կաց, մոռացա...

Նա մոտեցավ սեղանին, վերցրեց մի հաստ, փոշոտված գիրք, բացեց և թերթերի միջից հանեց փղոսկրի վրա պատկերված մի փոքրիկ ջրաներկ դիմանկար։ Դա տանտիրուհու աղջկա, տենդից մեռած իր նախկին հարսնացուի, հենց այն տարօրինակ աղջկա դիմանկարն էր, որը ուզում էր վանք մտնել։ Ռասկոլնիկովը մի բոպե դիտեց այդ արտահայտիչ, հիվանդագին դեմքը, համբուրեց դիմանկարը և տվեց Դունյային։

— Սրա հետ ես շատ եմ խոսել այդ մասին, միայն սրա հետ,— մտախոհ ասաց նա,— սրան ես շատ բան եմ հաղորդել այն ամենից, ինչ որ հետո այդպես այլանդակորեն կատարվեց։ Մի անհանգստանա,— դիմեց նա Դունյային,— նա ինձ հետ համաձայն չէր, ինչպես և դու, և ես ուրախ եմ, որ նա չկա։ Գլխավորը, գլխավորը այն է, որ հիմա ամեն ինչ կընթանա նոր ձևով, կերկատվի,— գոչեց նա հանկարծ՝ դարձյալ համակվելով տխրությամբ,— բայց արդյո՞ք ես պատրաստված եմ դրան, արդյո՞ք ինքս եմ այդ ուզում։ Ասում են, որ դա հարկավոր է, որպեսզի ես փորձություններ տանեմ։ Ինչի՞ համար, ինչի՞ համար են այդ բոլոր անիմաստ փորձությունները։ Ինչի՞ համար են դրանք, արդյո՞ք ես այն ժամանակ, տանջանքներից, ապուշությունից ճզմրված, քսանամյա տաժանակրությունից հետո ծերունական տկարության մատնված, ավելի լավ կգիտակցեմ ամեն ինչ, քան գիտակցում եմ այժմ, և այդ դեպքում ինչի՞ համար պիտի ապրեմ։ Ինչո՞ւ եմ այժմ համաձայնում այդպես ապրել։ Օ, ես գիտեի, որ ստոր մարդ եմ, երբ այսօր, լուսաբացին կանգնած էի Նևայի ափին։

Վերջապես, երկուսն էլ դուրս եկան։ Ծանր էր Դունյայի հոգեվիճակը, բայց նա սիրում էր եղբորը։ Նա գնաց, բայց մի հիսուն քայլ անցնելով, շուռ եկավ մի անգամ էլ նրան նայելու։ Եղբայրը դեռ երևում էր։ Հասնելով փողոցի անկյունը, նա էլ ետ նայեց. վերջին անգամ իրար հանդիպեցին

նրանց հայացքները, բայց նկատելով, որ քույրը իրեն է նայում, Ռասկոլնիկովը անհամբերությամբ և նույնիսկ սրտնեղելով թափահարեց ձեռքը, որ քույրը գնա, իսկ ինքը կտրուկ շուռ եկավ դեպի մյուս փողոցը։

«Ես դաժան եմ, ես այդ տեսնում եմ», մտածում էր նա՝ մի ըսպե անց խղճահարվելով, որ չղայնությամբ ձեռքով նշան էր արել Դունյային, որ սա գնար։ «Բայց ինչո՞ւ են նրանք ինձ այդպես սիրում, եթե ես դրան չարժեմ։ Երանի թե ես մենակ լինեի և ինձ ոչ ոք չսիրեր, ու ինքս էլ երբեք և ոչ ոքի չսիրեի։ Այս ամենը չէր լինի։ Հետաքրքիր է, մի՞թե դալիք տասնհինգ-քսան տարում հոգիս այնքան կհեզանա, որ ես երկրպագությամբ կնվնվամ մարդկանց առջև, ու ամեն խոսքի վրա ինձ ավազակ կանվանեմ։ Այո, այդպես, հենց այդպես կլինի։ Դրա համար էլ հիմա աքսորում են ինձ, նրանց այդ է հարկավոր... Ահա նրանք բոլորը փողոցով մեկ ետ ու առաջ են թրևում, ու նրանցից ամեն մեկը սրիկա և ավազակ է իր բնավորությամբ. դրանից էլ վատ բան՝ ապուշ է։ Փորձիր խուսափել աքսորից, ու նրանք բոլորը կկատաղեն անչափ զայրույթից։ Օ, որքան եմ ատում նրանց բոլորին։

Նա խորին մտածմունքի մեջ ընկավ. «Հապա ի՞նչ կերպ կարող է պատահել, որ ես ի վերջո առանց առարկությունների խոնարհվեմ նրանց բոլորի առջև, խոնարհվեմ համոզմունքով։ Ինչ կա որ, ինչո՞ւ չէ։ Իհարկե, այդպես էլ պետք է լինի։ Մի՞թե անընդհատ տառապանքի քսան տարիները վերջնականապես չեն ընկճի։ Ջուրը քար է մաշում։ Եվ դրանից հետո ինչո՞ւ, ինչո՞ւ ապրել, ինչո՞ւ եմ ես հիմա գնում մեղա գալու, երբ գիտեմ, որ այդ ամենը կլինի ոչ այլ կերպ, քան հենց այդպես, ինչպես որ գրվում է դրքում»։

Նախորդ օրվանից նա գուցե հարյուրերորդ անգամ էր իրեն տալիս այդ հարցը, բայց այնուամենայնիվ գնում էր։

VIII

Երբ նա մտավ Սոնյայի բնակարանը, արդեն իջնում էր մթնշաղը։ Սոնյան, ամբողջ օրը սարսափելի հուզված, նրան էր սպասում։ Սպասում էին երկուսով՝ ինքը և Դուն-

յան։ Վերջինս եկել էր դեռ առավոտից՝ հիշելով նախորդ օրը Սվիդրիգայլովի ասած այն խոսքերը, թե Սոնյան «դիտե այդ բանը»։ Նենք հաղորդի նրանց երկուսի խոսակցության մանրամասնությունները և այն, թե նրանք ինչպես էին արցունք թափում և որչափ էին համերաշխվում իրար հետ։ Դունյան այդ տեսակցությունից դոնե հանգեց այն սփոփիչ հետևության, որ իր եղբայրը մենակ չի լինի. եղբայրը առաջին անգամ Սոնյային էր ասեն ինչ խոստովանել, հանձին Սոնյայի փնտրել էր մարդուն, երբ իրեն հարկավոր էր եղել մարդը. հենց Սոնյան էլ կդնա նրա ետևից, ուր որ բախտը տանի։ Դունյան այդ մասին չէր հարցնում Սոնյային, բայց դիտեր, որ այդպես էլ կլինի։ Նա Սոնյային նայում էր նույնիսկ մի ինչ-որ պատկառանքով և սկզբում համարյա շփոթեցնում էր նրան այդ պատկառանքի զգացումով, որով վերաբերվում էր նրան։ Քիչ էր մնում, որ Սոնյան նույնիսկ լաց լիներ. ընդհակառակը, նա գտնում էր, որ ինքը արժանի չէ նույնիսկ Դունյային նայելու։ Այն օրվանից, երբ նրանք առաջին անգամ տեսնվեցին Ռասկոլնիկովի մոտ, և Դունյան ուշադրությամբ ու հարգանքով հրաժեշտ ավեց իրեն, Սոնյային, Դունյայի հիասքանչ կերպարը առմիշտ մընաց Սոնյայի հոգու մեջ, որպես ամենադեղեցիկ և անհասանելի տեսիլքներից մեկը իր կյանքում։

Վերջապես, Դունեչկան էլ չհամբերեց և թողեց Սոնյային, որպեսզի գնար եղբոր բնակարանը և այնտեղ սպասեր նրան. Դունեչկային թվում էր, որ եղբայրը ավելի շուտ կդնա այնտեղ։ Մնալով մենակ, Սոնյան անմիջապես սկսեց տանջվել կասկածից, մտածելով, որ դուցե Ռասկոլնիկովը իսկապես ինքնասպանություն դործի։ Դունյան նույնպես վախենում էր դրանից։ Բայց նրանք երկուսն էլ ամբողջ օրը իրար խոսք կտրելով, ամեն կերպ համոզում էին միմյանց, որ այդ չի կարող լինել, ու քանի դեռ միասին էին, հանդիստ էին։ Իսկ այժմ, հենց որ բաժանվեցին, երկուսն էլ հենց միայն այդ մասին էին մտածում։ Սոնյան վերհիշում էր, թե ինչպես նախորդ օրը Սվիդրիգայլովը ասել էր նրան, որ Ռասկոլնիկովի առաջ կա երկու ճանապարհ՝ Վլադիմիրկան կամ... Այն էլ ասած՝ Սոնյան դիտեր Ռասկոլնիկովի սնափառությունը, դոռոզությունը, ինքնասիրությունը

և անհավատությունը։ «Մի՞թե միայն փոքրոգությունը և մահից վախենալը կարող են նրան ստիպել, որ ապրի», ի վերջո հուսաբեկ մտածեց Սոնյան։ Արևն արդեն մայր էր մտնում։ Սոնյան տխուր կանգնել էր պատուհանի առաջ և ակնապիշ դուրս էր նայում, բայց դրսից երևում էր միայն հարևան տան հիմնական, չսպիտակացրած պատը։ Վերջապես, երբ նա արդեն բոլորովին համոզվեց որ Ռասկոլնիկովը մահացել է, վերջինս մտավ նրա սենյակը։

Սոնյայի կրծքից բերկրուն ճիչ թռավ։ Բայց ուշադիր նայելով Ռասկոլնիկովի դեմքին, նա հանկարծ գունատվեց։

— Հա՛, էլի՛,— քմծիծաղելով ասաց Ռասկոլնիկովը,— ես եկա քո խաչերը վերցնելու, Սոնյա։ Դու հո ինքդ էիր ինձ ուղարկում փողոց, մեղա գալու. իսկ հիմա, երբ բանը այդտեղ հասավ, վախեցա՞ր, ի՞նչ է։

Սոնյան ապշած նայում էր նրան։ Սոնյային տարօրինակ թվաց խոսելու այդ տոնը. նրա մարմնով սառը դող անցավ, բայց մի րոպե հետո նա գլխի ընկավ, որ թե այդ տոնը և թե այդ խոսքերը շինծու էին։ Ռասկոլնիկովը նրա հետ խոսելիս հայացքը ուղղում էր դեպի սենյակի մի անկյունը և կարծես խուսափում էր ուղղակի նրա երեսին նայելուց։

— Գիտե՞ս, Սոնյա, ես որոշեցի, որ այդ թերևս ավելի շահավետ կլինի։ Այստեղ մի հանգամանք կա... Երկար պատմություն է, ու պատմելու կարիք էլ չկա։ Միայն թե, գիտե՞ս, ինչն է ինձ վրդովեցնում։ Ինձ բարկացնում է այն, որ այդ բոլոր հիմար, գազանակերպ ռեխները այժմ կշրջապատեն ինձ, աչքները կչռեն ինձ վրա, հիմար հարցեր կտան, որոնց պետք է պատասխանել, մատով ցույց կտան ինձ... Թյո՛։...։ Գիտե՞ս, ես Պորֆիրիի մոտ չեմ գնա. նա ձանձրացրել է ինձ։ Ավելի լավ է գնամ իր բարեկամ Պորոխի մոտ, ա՛յ թե կզարմացնեմ նրան, ա՛յ թե ինչ յուրատեսակ էֆեկտի կհասնեմ։ Հարկավոր է պաղարյուն լինել, վերջին ժամանակներս ես խիստ մաղձոտ եմ դարձել։ Կհավատա՞ս արդյոք, քիչ առաջ ես քրոջս համարյա բռունցքով սպառնացի հենց միայն նրա համար, որ նա շուտ եկավ վերջին անգամ ինձ նայելու։ Սա ուղղակի խոզություն է։ Ա՛խ, ինչ երի հասա։ Դեհ, ո՞ւր են խաչերը։

Ռասկոլնիկովը ասես կորցրել էր գլուխը։ Նա նույնիսկ մի րոպե էլ չէր կարողանում հանգիստ կանգնած մնալ, չէր կարողանում ուշադրությունը կենտրոնացնել որևէ բանի վրա. նրա մտքերը իրար էին խառնվում. ձեռքերը մի քիչ դողում էին։

Սոնյան արկղից լուռ հանեց երկու խաչ, կիպարիսե և պղնձե խաչերը, ինքը խաչակնքվեց, նրան էլ խաչակնքեց և կիպարիսե խաչը կախեց նրա կրծքին։

— Ուրեմն սա սիմվոլ է, որ ես ինձ վրա խաչ (տառապանք) եմ վերցնում, քա՛հ-քա՛հ։ Կարծես թե մինչև հիմա քիչ եմ տառապել։ Կիպարիսից է խաչը, ռամկական է. պղնձե խաչը Լիզավետայինն է, թողնում ես քեզ, հապա՛, ցույց տուր. դա նրա վզի՞ն էր... այն րոպեին։ Ես հիշում եմ ուրիշ երկու խաչ, մեկը արծաթե, մյուսը փոքրիկ սրբապատկերով։ Այն պահին ես դրանք գցեցի պառավի կրծքին։ Ա՛յ թե հիմա դրանք լինեի՞ն, ես հենց դրանք կկախեի կրծքիս... Սակայն ես հա՛ դուրս եմ տալիս, մոռանում գործը. մտքերս մի տեսակ ցրված են... Գիտե՞ս, Սոնյա, ես եկել եմ նախապես քեզ հայտնելու ամեն ինչ, որպեսզի դու գիտենաս... Ուրիշ ոչինչ... Ես միայն դրա համար եկա։ (Հր՛մ. ես կարծում էի, թե ավելին կասեմ)։ Դու հո ինքդ էլ էիր ուզում, որ ես դնամ խոստովանանքի, և ահա բանտ կնստեմ, ու կկատարվի քո ցանկությունը. էլ ինչո՞ւ ես լալիս։ Դու է՞լ։ Մի լար, բավական է. օ՛ֆ, այդ ամենը որքան ծանր է ինձ համար։

Այնուամենայնիվ նա զգացվեց. Սոնյային նայելիս սիրտը ճմլվում էր. «Սա՞ ինչու է մորմոքվում», մտածում էր Ռասկոլնիկովը, «ես սրա ի՞նչն եմ որ. ինչո՞ւ է լալիս, ինչո՞ւ է ցավում ինձ համար, ինչպես մայրս կամ Դունյան։ Խնամելու է ինձ»։

— Խաչակնքիր, աղոթիր գոնե մի անգամ,— դողդոջ, երկչոտ ձայնով խնդրեց Սոնյան։

— Օ, խնդրեմ, ինչքան ուզես։ Ես այդ կանեմ մաքուր սրտով, Սոնյա, մաքուր սրտով...

Սակայն նա ուզում էր ինչ-որ ուրիշ բան ասել։

Նա խաչակնքեց մի քանի անգամ։ Սոնյան վերցրեց իր գլխաշորը և գցեց գլխին։ Դա կանաչ, դրադեղամե գլխա-

չոր էր, հավանորեն այն «ընտանեկան» գլխաշորը, որ իր ժամանակին հիշատակել էր Մարմելադովը։ Ռասկոլնիկովը այդ հիշեց, բայց ոչինչ չհարցրեց։ Հիրավի, նա ինքն էլ էր զգում, որ սարսափելի ցրված է և այլանդակության չափ ուշադրությունդարձ։ Նա վախեցավ դրանից։ Նրան հանկարծ ապշեցրեց նաև այն, որ Սոնյան ուզում է գնալ իր հետ։

— Ի՞նչ ես ասում։ Ո՞ւր։ Կաց, մնա։ Ես մենակ կգնամ,— երկչոտ սրտնեղումով, համարյա վրդովվելով դոշեց Ռասկոլնիկովը, քայլեց դեպի դուռը։— Մի՞թե ինձ ուղեկցող է հարկավոր, —փնթփնթաց նա՝ դուրս գալով սենյակից։

Սոնյան մնաց սենյակի մեջտեղում։ Ռասկոլնիկովը նույնիսկ մնաս բարով էլ չասաց նրան, արդեն մոռացավ նրան. հոգու մեջ խոցող ու խռովահույզ մի կասկած առաջացավ.

«Արդյո՞ք, արդյո՞ք ճիշտ է այս ամենը, դարձյալ մտածեց նա՝ իջնելով սանդուղքից, մի՞թե չի կարելի դեռ սպասել ու վերստին շտկել ամեն ինչ... ու չգնալ խոստովանանքի»։

Բայց նա այնուամենայնիվ գնում էր։ Նա հանկարծ վերջնականապես զգաց, որ չպետք է ինքն իրեն հարցեր տա։ Դուրս գալով փողոց, նա հիշեց, որ Սոնյային հրաժեշտ չէր տվել, որ սա իր կանաչ գլխաշորով մնացել էր սենյակի մեջտեղում, ու լսելով նրա բղավոցը, չէր էլ համարձակվում շարժվել։ Ռասկոլնիկովը մի ակնթարթ կանգ առավ։ Նույն վայրկյանին հանկարծ նրա գլխում ծագեց մի միտք, կարծես նրան վերջնականապես խոցելու համար։

«Ախր ինչի՞ համար, ինչո՞ւ ես հիմա եկա Սոնյայի մոտ։ Ես նրան ասացի, թե գործով եմ եկել. ի՞նչ գործով։ Ամենևին ոչ մի գործ էլ չկար։ Հայտարարեի, որ գնո՞ւմ եմ. հետո՞ ինչ։ Իրոք թե այդ հարկավոր էր։ Սիրո՞ւմ եմ նրան, ինչ է։ Չէ՞ որ ոչ, ոչ։ Հիմա հո նրան վռնդեցի ինչպես շանը։ Նրա խաչե՞րը ինձ հարկավոր եղան, թե ինչ։ Օ, որքան եմ ատորացել։ Ոչ, ինձ հարկավոր էր տեսնել նրա արցունքները, ինձ հարկավոր էր տեսնել նրա վախը, նայել, թե նրա սիրտը ինչպես է ցավում և կտրատվում։ Հարկավոր էր կառչել դեթ որևէ բանից, հապաղել, մարդ տեսնել։ Եվ ես համարձակվեցի այդպես հույս դնել ինքս ինձ վրա, այդպես

երազել իմ մասին, մուրացիկ եմ ես, ոչնչություն եմ ես, ստոր եմ, ստոր»։

Նա գնում էր ջրանցքի ափերով և շուտով տեղ էր հասնելու։ Բայց, հասնելով կամուրջը, նա կանգ առավ ու հանկարծ շուռ եկավ դեպի կամուրջը և անցավ դեպի Սեննայա հրապարակը։

Նա ագահությամբ նայում էր աջ և ձախ, լարված գնում յուրաքանչյուր առարկա և չէր կարողանում ուշադրությունը կենտրոնացնել որևէ բանի վրա. ամեն ինչ վրիպում էր նրա ուշադրությունից։ «Մի շաբաթ, մի ամիս հետո կալանավորների կառեթով, այս կամրջի վրայով ինձ կտանեն որևէ տեղ. այն ժամանակ ես ինչպե՞ս կնայեմ այս ջրանցքին, սա պետք է պահեմ մտքումս», մտածեց նա։ «Ահա մի ցուցանակ, ես այն ժամանակ ինչպե՞ս եմ կարդալու այդ տառերը։ Ահա դրա վրա գրված է таварищество, պետք է հիշել այդ а-ն, а տառը, ու մի ամիս հետո նայել դրան, հենց այդ а-ին. այն ժամանակ ես ի՞նչպես կնայեմ։ Ի՞նչ կզգամ և ի՞նչ կմտածեմ... Աստվա՛ծ իմ, որքա՞ն ստոր պետք է լինի այդ ամենը, իմ այժմյան... մտահոգությունը։ Իհարկե, այդ բոլորը պետք է որ յուրովի հետաքրքիր լինի... (Քա՛հ-քա՛հ-քա՛հ, ինչի՛ մասին եմ մտածում), ես երեխա եմ դառնում, ինքս իմ առջև պոռոտախոսություն եմ անում. լավ է, էլ ի՞նչ եմ ինքս ինձ ամաչեցնում։ Փո՛ւ, ինչ հրմշտոց է։ Ահա այս հաստափորը, որ երևի գերմանացի է, հրեց ինձ. արդյոք գիտե՞ նա, թե ում հրեց։ Երեխա գրկած կինը ողորմություն է խնդրում, հետաքրքիր է, որ նա ինձ իրենից ավելի երջանիկ է համարում։ Ի՞նչ կա որ, կարելի է մի բան տալ ծիծաղի համար։ Վա՛հ, գրպանումս հինգ կոպեկ է մնացել, ո՞րտեղից։ Ա՛ռ, ա՛ռ... Վերցրո՛ւ, մայրիկ»։

— Աստված պահի քեզ,— լսվեց մուրացկանի լացակումած ձայնը։

Ռասկոլնիկովը մտավ Սեննայա հրապարակը։ Նրան տրհաճ, խիստ տհաճ էր մարդկանց հետ շփվելը, բայց նա գնում էր հենց այնտեղ, ուր շատ մարդիկ կային։ Նա աշխարհում ամեն ինչ կտար մենակ մնալու համար. բայց նա ինքը զգում էր, որ ոչ մի բոպե մենակ չի մնա։ Ամբոխի մեջ մի հարբած մարդ անկարգություն էր անում. նա ուզում էր

պարել, բայց մի կողմ էր ընկնում։ Նրան շրջապատեցին։ Ռասկոլնիկովը անցավ բազմության միջով, մի քանի րոպե նայեց հարբածին և հանկարծ կարճ ու կցկտուր քրքջաց։ Մի րոպեից հետո արդեն մոռացավ նրան, նույնիսկ չէր տեսնում հարբածին, թեև նայում էր նրան։ Ի վերջո մի կողմ քաշվեց, նույնիսկ չհիշելով, թե որտեղ է գտնվում. բայց երբ հասավ հրապարակի մեջտեղը, նրա մեջ հուզանք առաջացավ, նրան անմիջապես տիրացավ լոկ մի զգացում, համակեց նրան ամբողջովին՝ թե մարմինը և թե միտքը։

Նա հանկարծ հիշեց Սոնյայի խոսքերը. «Գնա, կանգնիր որևէ տեղ, երկրպագիր ժողովրդին, համբուրիր հողը, որովհետև դու դրա հանդեպ էլ մեղք ես գործել, ու ամբողջ աշխարհին բարձրաձայն ասա՝ «Ես մարդասպան եմ»։ Վերհիշելով այդ, նա ամբողջ մարմնով դողաց։ Ու նրան այնքան էին ընկճել այդ ամբողջ ժամանակվա, մանավանդ վերջին ժամերի թախիծն ու տագնապը, որ նա այնպես էլ հավատաց այդ անխառն, նոր, լիակատար զգացումի հնարավորությանը։ Այն մի ինչ-որ մոլուցքի պես հանկարծ համակեց նրան, հոգու մեջ մի կայծ վառեց ու հանկարծ ամբողջովին բոցավառեց նրան։ Նրա մեջ ամեն ինչ միանգամից մեղմացավ, հորդեցին արցունքները։ Նա իսկույն ևեթ կրթնեց գետնին...

Նա ծունկ չոքեց հրապարակի մեջտեղում, կռացավ մինչև գետին և հաճույքով ու բերկրանքով համբուրեց այդ կեղտոտ գետինը։ Նա վեր կացավ ու մի անգամ էլ երկրպագեց։

— Կոնծել է, հա՜-ա,— ասաց մոտիկ կանգնած մի երիտասարդ։

Հնչեց ծիծաղը։

— Նա Երուսաղեմ է գնում, ազգեր-ազգերք, մնաս բարով է ասում երեխաներին, հայրենիքին, երկրպագում է ողջ աշխարհին, մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգը և նրա հողն է պաչում,— ավելացրեց մի ինչ-որ հարբած քաղքենի։

— Դեռ ջահել տղա է,— մեջ մտավ երրորդը։

— Ազնվականներից է,— բամբ ձայնով ասաց մի ուրիշը։

— Հիմի չես հասկանում, թե ով է ազնվական, ով՝ չէ։

Այս բոլոր արձագանքները և խոսակցությունները զսպեցին Ռասկոլնիկովին և նա չասաց «ես սպանեցի» բառերը,

որ քիչ էր մնում թռչեին նրա լեզվից։ Նա հանգիստ լսեց այդ բոլոր բղավոցները և առանց շուրջը նայելու նրբաքողոցով գնաց ուղիղ դեպի ոստիկանության դրասենյակը։ Նրան մի տեսիլք էր երևացել, բայց դա նրան չէր զարմացրել. նա արդեն նախազգացել էր, որ այդպես էլ պետք է լիներ։ Երբ նա Սեննայա հրապարակում դառնալով ձախ կողմը, երկրպագեց երկրորդ անգամ, իրենից հիսուն քայլ հեռավորությամբ տեսավ Սոնյային։ Սա նրանից թաքնվում էր հրապարակում եղած փայտե բարաքներից մեկի ետևում, ուրեմն դուրս գալով տանից, շարունակ հետամտել էր նրան։ Ռասկոլնիկովը այդ րոպեին զգաց և առմիշտ հասկացավ, որ Սոնյան հիմա շարունակ իր հետ կլինի և իր հետ կգնա թեկուզ մինչև աշխարհի ծայրը, ուր էլ որ բախտն իրեն տանի։ Նրա սիրտը ամբողջովին տակնուվրա եղավ... բայց ահա և ինքը հասավ ճակատագրական վայրը...

Նա բավական վվարթ մտավ բակ։ Հարկավոր էր բարձրանալ երրորդ հարկ։ «Առայժմ դեռ կբարձրանամ», մտածեց նա։ Առհասարակ նրան թվում էր, որ ճակատագրական րոպեն դեռ հեռու է, դեռ շատ ժամանակ է մնում, դեռ կարելի է մտածել շատ բաների մասին։

Դարձյալ նույն աղբը, ձվի կճեպները պատուհանների սանդուղքի վրա, դարձյալ բոլորովին բաց են բնակարանների դռները, դարձյալ նույն խոհանոցները, որոնցից ծխի ու մթերքի վատ հոտ է գալիս։ Ռասկոլնիկովը վաղուց այստեղ չէր եղել։ Նրա ոտքերը թուլանում ու թմրում էին, բայց ընթանում էին։ Նա մի ակնթարթ կանգ առավ, որպեսզի շունչ քաշեր, իրեն կարգի բերեր, մարդավարի ներս մտներ։ «Ինչո՞ւ, ինչի՞ համար» մտածեց նա հանկարծ՝ իմաստավորելով իր բռնած ընթացքը։ «Եթե հարկավոր է խմել այդ դառնության բաժակը, ապա միևնույն չէ՞. որքան գարշ տեսք ունենաս, այնքան լավ»։ Այդ ակնթարթում նրա երևակայության մեջ պատկերացավ Իլյա Պետրովիչ Պորխի կերպարանքը։ «Մի՞թե իսկապես նրա մոտ եմ գնալու։ Արդյո՞ք չի կարելի ուրիշի մոտ գնալ, ասենք՝ Նիկոդիմ Ֆոմիչի մոտ։ Ետ դառնամ ու գնամ հենց վերակացուի բնակարա՞նը։ Գոնե գործը տնային կարգով կգնա... Ո՛չ, ո՛չ, կմտնեմ Պո-

ռոխի, Պորոխի մոտ։ Միանգամից կխմեմ դառնության բաժակը»։

Սարսռելով և հազիվ ուշքը վրան պահելով, նա բացեց ոստիկանության գրասենյակի դուռը։ Այս անգամ այնտեղ շատ քիչ մարդ կար, կանգնել էին մի ինչ-որ դռնապան և էլի մի ինչ-որ ռամիկ մարդ։ Պահապանը չէր էլ նայում միջնորմի ետևից։ Ռասկոլնիկովը անցավ հետևյալ սենյակը։ «Գուցե դեռ կարելի կլինի չասել», անցավ նրա մտքով։ Գրագիրների թվին պատկանող, ոչ պաշտոնական սերթուկով մի անձնավորություն պատրաստվում էր ինչ-որ բան դրել բարձրասեղանի (բյուրոյի) վրա։ Անկյունում տեղավորված էր էլի մի ուրիշ գրագիր։ Զամետովը չկար։ Նիկոդիմ Ֆոմիչը, իհարկե, նույնպես չկար։

— Ոչ ոք չկա՞,— հարցրեց Ռասկոլնիկովը՝ դիմելով բարձրասեղանի առջև կանգնած անձնավորությանը։

— Ո՞ւմ էիք ուզում։

— Օ՜-օ՜-օ՜, ոչ ձայն էր գալիս, ոչ ինքն էր երևում, բայց կար ռուսական ոգին... ինչպե՞ս է ասված հեքիաթում... մոռացել եմ։ Հար-գանք-նե՜-երս,— լսվեց հանկարծ ծանոթ մի ձայն։

Ռասկոլնիկովը դողաց։ Նրա առաջ կանգնած էր Պորոխը, որը հանկարծ դուրս էր եկել երրորդ սենյակից։ «Սա բախտի ճակատագրի կամքն է, ինչո՞ւ է նա այստեղ», մտածեց Ռասկոլնիկովը։

— Մեզ մո՞տ։ Ի՞նչ գործով,— բացականչեց Իլյա Պետրովիչը։ (Ըստ երևույթին նա հիանալի և նույնիսկ մի քիչ հուզված տրամադրության մեջ էր)։ Եթե գործով է, ապա դեռ շուտ եք շնորհ բերել։ Ես ինքս պատահմամբ եմ եկել... Սակայն ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։ Ես շնորհապարտ եմ ձեզ... Ը-ըմ, ի՞նչպես անվանեմ։ Ներեցեք։

— Ռասկոլնիկով։

— Հա՜, էլի, Ռասկոլնիկով։ Եվ մի՞թե դուք կարող էիք ենթադրել, թե ես մոռացել եմ։ Խնդրեմ, դուք ինձ այդպիսին չհամարեք... Ռոդիոն Ռո... Ռո... Ռոդիոնիչ, կարծեմ այդպե՞ս է։

— Ռոդիոն Ռոմանիչ։

— Այո, այո, Ռոդիոն Ռոմանիչ, Ռոդիոն Ռոմանիչ։ Ես

հենց այդ էի ուզում։ Նույնիսկ հաճախ հարցնում էի ձեր մասին։ Խոստովանում եմ ձեզ, այն օրվանից անկեղծորեն վշտանում էի, որ մենք ձեզ հետ այնպես վարվեցինք... Հետո ինձ բացատրեցին, ես իմացա, որ երիտասարդ գրականագետ եք և նույնիսկ դիտնական... և, այսպես ասած, առաջին քայլերն եք անում... Ի, տեր աստված, գրականագետներից ու դիտնականներից ո՞ր մեկը սկզբում յուրահատուկ քայլեր չի արել։ Ես ու կինս, երկուսս էլ գրականություն ենք սիրում, կինս մոլության չափ է սիրում... գրականությունը և գեղարվեստականությունը։ Միայն թե մարդ ազնիվ լինի, իսկ մնացած ամեն ինչն էլ կարելի է ձեռք բերել տաղանդով, գիտելիքով, բանականությամբ, հանճարով։ Վերցնենք, զորօրինակ, գլխարկը. դա ի՞նչ է որ, դատարկ բան է, ես գլխարկը կարող եմ գնել Ցիմմերմանից. բայց ինչ որ գլխարկի տակ է լինում և գլխարկով ծածկվում, ես չեմ կարող գնել... Ես, Ճիշտն ասած, ուզում էի նույնիսկ ձեզ մոտ գալ բացատրվելու, բայց կարծում էի, որ գուցե դուք... Հա՛, չեմ էլ հարցնում. ձեզ իրո՞ք որևէ բան է հարկավոր։ Ասում են՝ ձեր հարազատներն են եկել։

— Այո, մայրս և քույրս։

— Նույնիսկ պատիվ ու բախտ եմ ունեցել հանդիպելու ձեր քրոջը. կրթված և սքանչելի անձնավորություն է։ Խոստովանում եմ, հո ցավում էի, որ այն ժամանակ ձեզ հետ ապաքացած էինք խոսում։ Չտեսնված բան։ Իսկ եթե ես այն ժամանակ ձեր ուշագնացության առիթով ձեզ մի քիչ խեթ նայեցի, ապա դա հետո փայլուն կերպով բացատրվեց. ճիվաղություն և ֆանտաստիկություն։ Ես հասկանում եմ ձեր վայրությունը։ Գուցե ընտանիքի ժամանելու առիթով ուզում եք փոխե՞լ ձեր բնակարանը։

— Ոչ, ես հենց այնպես... եկա մի բան հարցնելու... Կարծում էի, թե այստեղ կգտնեմ Զամետովին։

— Ա՛խ, հա՛, դուք բարեկամացել եք. լսել եմ։ Զամետովը մեզ մոտ չէ, չբռնեցիք նրան։ Այո, մենք զբկվեցինք Ալեքսանդր Գրիգորևիչից։ Երեկվանից այստեղ չի լինում. տեղափոխվել է... տեղափոխվելիս նույնիսկ բոլորի հետ կռվեց... անքաղաքավարություն թույլ տվեց... թեթևամիտ տղա է, ուրիշ ոչինչ. նույնիսկ կարող էր լավ ապագա խոս-

տանալ, դե արի ու լավ վարվիր մեր փայլուն երիտասարդության հետ։ Ուզում է ինչ-որ քննություն տալ, թե ինչ, իսկ մեզ մոտ հո բավական է միայն գրուցել, պոռոտախոսել, դրանով էլ կվերջանա քննությունը։ Նա հո այնպիսին չէ, ինչպես, օրինակ, դուք կամ պարոն Ռազումիխինը, ձեր ընկերը։ Ձեր կարիերան գիտական է, ու ձեզ չեն ընկճի ձախորդությունները։ Կարելի է ասել, որ կյանքի բոլոր գեղեցկությունները ձեզ համար nihilest-են[1], ճգնավոր եք, միանձն, մենակյաց... Գիրք, դրիչ, գիտական հետազոտություններ՝ ահա թե որտեղ է սավառնում ձեր ոգին։ Ես էլ մասամբ... Լիվինգստոնի հիշատակարանը բարեհաճե՞լ եք կարդալ։

— Ոչ։

— Իսկ ես կարդացել եմ։ Ի միջի այլոց, հիմա շատ նիհիլիստներ են մեջտեղ եկել. և դա հասկանալի է. ախր ի՞նչ ժամանակներ են, հարցնում եմ ձեզ։ Սակայն ես ձեզ հետ... Դուք հո, իհարկե, նիհիլիստ չեք. պատասխանեցեք անկեղծորեն, անկեղծորեն։

— Ո-ոչ...

— Ոչ, դիտե՞ք, դուք ինձ հետ անկեղծ եղեք, մի քաշվեք, ասեք այն, ինչ-որ ինքներդ ձեզ կասեիք։ Այլ բան է ծառայությունը, այլ բան է... դուք կարծում էիք, թե ես ուզեցի ասել՝ բարեկամությո՞ւնը։ Ոչ, չկռահեցիք։ Ոչ թե բարեկամությունը, այլ քաղաքացու և մարդու զգացմունքը, մարդասիրության և ամենաբարձրյալի նկատմամբ սիրո զգացմունքը։ Ես կարող եմ լինել պաշտոնական անձ, պաշտոնում, բայց պարտավոր եմ միշտ էլ ինձ զգալ քաղաքացի և մարդ ու հաշիվ տալ... Դուք բարեհաճեցիք խոսք բանալ Զամետովի մասին։ Զամետովը, մեկ էլ տեսար, ֆրանսիական ձևով, որևէ անվայելուչ տան, մի բաժակ շամպայն կամ Դոնի գինի խմելով, սկանդալ է բարձրացնում, ահա թե ինչ է ձեր Զամետովը։ Իսկ ես, այսպես առած, դուցե հայրենաշունչ եմ եղել դործին նվիրված լինելուց և վեհ զգացմունքներից, ու բացի այդ, ունեմ դիրք, աստիճան, պաշտոն եմ գրավում։ Ամուսնացած եմ ու երեխաներ ունեմ։ Կատարում եմ քաղաքացու և մարդու պարտքը, իսկ նա՞

---

[1] Ոչինչ (լատ.)։

ով է, թույլ տվեք հարցնել։ Ձեզ վերաբերվում եմ որպես կրթությամբ աղնվացած մարդու։ Հա՛, այժմ չափից դուրս շատացել են նաև այն տատմերերը՞։

Ռասկոլնիկովը տարակուսանքով, զարմացած նայեց նրան։ Ըստ երևույթին ուտել-խմելու սեղանից քիչ առաջ վեր կացած Իլյա Պետրովիչի խոսքերը նրա առջև հեղվում ու թափվում էին իբրև դատարկ ճնշյուններ։ Բայց նա այնուամենայնիվ մի կերպ հասկանում էր դրանց մի մասը. նա նայում էր հարցականորեն ու չգիտեր, թե այդ ամենը ինչով կվերջանա։

— Ես խոսում եմ մայրերը խուզած այն աղջիկների մասին,— շարունակեց զրուցասեր Իլյա Պետրովիչը,— ես նրանց տատմերեր անվանեցի և գանում եմ, որ այդ անունը միանգամայն հարմար է։ Քա՛հ-քա՛հ, քշում են ակադեմիա, անատոմիա են սովորում. ասացեք, թե որ ես հիվանդանամ, մի՞թե մի այդպիսի աղջկա կկանչեմ ինձ բուժելու. քա՛հ-քա՛հ։

Իլյա Պետրովիչը քրքջում էր, միանգամայն գոհ իր սրախոսություններից։

— Ասենք թե կրթության ծարտվը անչափ մեծ է. բայց հո մի քիչ կրթվելն էլ բավական է։ Ինչո՞ւ չափազանցնել։ Ինչո՞ւ վիրավորել ազնիվ անձնավորություններին, ինչպես այդ անում է սրիկա Զամետովը։ Ինչո՞ւ նա ինձ վիրավորեց, հարցնում եմ ձեզ... Հիմա էլ այնքան են շատացել ինքնասպանությունները, որ դուք չեք էլ կարող պատկերացնել։ Շատերը՝ աղջիկներ, տղաներ, ծերուններ, վատնում են վերջին փողերը և ինքնասպանություն գործում... Այսօր առավոտյան այդպիսի լուր է ստացվել վերջերս ժամանած մի ինչ-որ պարոնի մասին։ Նիլ Պավլիչ, ա՛յ Նիլ Պավլիչ, ի՞նչպես է այն ջենտլմենի ազգանունը, որի մասին հաղորդել էին, թե ինքնասպան է եղել Պետերբուրգյան կողմում։

— Սվիդրիգայլով,— խռպոտ ու անտարբեր ձայնով պատասխանեց ինչ-որ մեկը մյուս սենյակից։

Ռասկոլնիկովը ցնցվեց։

— Սվիդրիգայլո՛վը, Սվիդրիգայլո՛վը ինքնասպա՞ն է եղել,— գոչեց նա։

— Ինչպե՞ս. դուք ճանաչո՞ւմ եք Սվիդրիգայլովին։

— Այո... ճանաչում եմ... Նա վերջերս էր ժամանել...

— Հա՛, էլի, վերջերս էր ժամանել, զրկվել էր կնոջից, հանդուգն բնավորության տեր մարդ էր և հանկարծ ինքնասպան է եղել և այնպես խայտառակ կերպով, որ անկարելի է պատկերացնել... Իր ծոցատետրում մի քանի բառ էր գրել, թե մեռնում է առողջ դատողությամբ և խնդրում է իր մահվան համար ոչ ոքի չմեղադրել։ Ասում են, որ նա փող ուներ։ Դուք ի՞նչպես եք ճանաչել։

— Ես... ծանոթ եմ... քույրս նրանց տանը ապրել էր իբրև դաստիարակչուհի...

— Վա՛հ, վա՛հ... Ուրեմն դուք կարող եք նրա մասին մեզ տեղեկություններ հաղորդել։ Իսկ դա ձեր մտքով է՞լ չի անցել։

— Ես երեկ տեսա նրան... Նա... գինի էր խմում... Ես ոչինչ չգիտեի։

Ռասկոլնիկովը զգում էր, որ կարծես իր վրա ինչ-որ մի բան է ընկել և ճզմում է իրեն։

— Դուք դարձյալ կարծես թե դունատվեցիք։ Մեզ մոտ այստեղ օդը խիստ ծանր է...

— Այո։ Ես պետք է գնամ,— փնթփնթաց Ռասկոլնիկովը,— ներեցեք, անհանգստացրի...

— Օ, խնդրեմ, ինչպես որ կամենաք։ Հաճույք պատճառեցիք, ես ուրախությամբ եմ այդ հայտարարում։

Իլյա Պետրովիչը նույնիսկ մեկնեց ձեռքը։

— Ես ուզում էի միայն... տեսնել Զամետովին...

— Հասկանում եմ, հասկանում եմ, ու հաճույք պատճառեցիք։

— Ես... շատ ուրախ եմ... ցտեսություն...— ժպտաց Ռասկոլնիկովը։

Նա դուրս ելավ. նա օրորվում էր։ Գլուխը պտտվում էր։ Նա չէր զգում, թե ոտքերի վրա է կանգնած։ Նա սկսեց իջնել սանդուղքից՝ աջ ձեռքը հենելով պատին։ Նրան թվաց, թե մի ինչ-որ դռնապան, մատյանը ձեռքին, դեմուդեմ բարձրանալով գրասենյակ, հրեց իրեն, թե մի ինչ-որ շնիկ բարձր հաչում էր ներքևի հարկում. թե ինչ-որ մի կին բղավեց և դրտնակ շպրտեց շնիկի վրա։ Ռասկոլնիկովը իջավ ներքև ու դուրս ելավ բակը։ Այստեղ, բակում, ելքի դռնից

քիչ հեռու կանգնել էր գունատ, քարացած Սոնյան և ահ ու սարսափով նրան էր նայում։ Ռասկոլնիկովը կանգ առավ նրա առաջ։ Սոնյայի դեմքին ինչ-որ հիվանդագին, տանջալից, հուսահատական զգացմունք արտահայտվեց։ Նա ձեռքերն իրար զարկեց։ Ռասկոլնիկովի շուրթերին շփոթմունք արտահայտող այլանդակ, բռնազբոսիկ ժպիտ երևաց։ Նա մի փոքր կանգնեց, քմծիծաղ տվեց ու ետ դարձավ, նորից բարձրացավ դեպի դրասենյակ։

Իլյա Պետրովիչը նստել էր և ինչ-որ թղթեր էր փնտրում։ Նրա առջև կանգնած էր հենց այն մուժիկը, որ քիչ առաջ սանդուղքով բարձրանալիս հրել էր Ռասկոլնիկովին։

— Օ-հո՛, դուք էլի եկաք, որևէ բա՞ն եք թողել... Բայց ի՞նչ է պատահել ձեզ։

Ռասկոլնիկովը գունաթափ շուրթերով, անշարժ հայացքով, կամացուկ մոտեցավ նրան, մոտեցավ սեղանին, ձեռքը հենեց դրան, ուզեց մի բան ասել, բայց չկարողացավ. միայն ինչ-որ անկապ հնչյուններ էին լսվում։

— Դուք ձեզ վատ եք զգում, է՛յ, աթոռ բերեք։ Ահա, նստեցեք աթոռին։ Է՛յ, ջուր բերեք։

Ռասկոլնիկովը ընկավ աթոռին, բայց աչքը չկտրեց խիստ տհաճորեն զարմացած Իլյա Պետրովիչի դեմքից։ Երկուսն էլ մի րոպե նայում էին իրար և սպասում։ Ջուր բերին։

— Պառավին...— սկսեց Ռասկոլնիկովը։

— Ջուր խմեցեք։

Ռասկոլնիկովը ձեռքով ետ մղեց ջուրը և կամացուկ, ընդմիջումներով, բայց պարզորոշ ասաց.

— Պառավին, ատամնաբույժի կնոջը և նրա քրոջը, Լիզավետային, այն ժամանակ ես էի կացնով սպանել և կողոպտել։

Իլյա Պետրովիչը բացեց բերանը։ Ամեն կողմից մարդիկ հավաքվեցին։

Ռասկոլնիկովը կրկնեց իր ցուցմունքը. . . . . .

. . . . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

I

Սիբիր։ Լայն, ամայի գետի ափին գտնվում է մի քաղաք, Ռուսաստանի վարչական կենտրոններից մեկը. քաղաքում բերդ կա, բերդում՝ բանտ։ Արդեն ինը ամիս է, որ բանտում կալանավորված է երկրորդ կարգի աքսորական-տաժանակիր Ռոդիոն Ռասկոլնիկովը։ Նրա ոճրագործության օրվանից համարյա մեկուկես տարի է անցել։

Նրա գործի դատավարությունը առանց մեծ դժվարությունների անցավ։ Ոճրագործը հաստատապես, ճշդիտ ու պարզ կրկնում էր իր ցուցմունքը՝ չխճողելով հանգամանքները, իր օգտին չմեղմացնելով դրանք, չաղավաղելով փաստերը, չմոռանալով ամենաչնչին մանրամասնությունը։ Նա մինչև վերջին մանրամասնությունը պատմեց սպանության ամբողջ պրոցեսը. պարզաբանեց գրավականի (մետաղե թիթեղիկ՝ կպցրած փայտե տախտակի) գաղտնիքը. դա գտնվել էր սպանված պառավի ձեռքում. մանրամասն պատմեց, թե ինչպես էր սպանվածից վերցրել բանալիները, նկարագրեց այդ բանալիները, նկարագրեց սնդուկը և դրա մեջ պահված իրերը. նույնիսկ թվեց սնդուկում եղած առանձին առարկաներից մի քանիսը. պարզաբանեց Լիզավետայի սպանության առեղծվածը. պատմեց, թե ինչպես էր եկել և դուռը ծեծել Կոխը, հետո էլ ուսանողը, հաղորդելով այն ամենը, ինչ որ նրանք իրար հետ խոսել էին. պատմեց, թե ինչպես ինքը, ոճրագործը, այնուհետև իջել էր սանդուղքից ու լսել Նիկոլայի ու Միտկայի ճվճվոցը, ինչպես էր թաքնվել դատարկ բնակարանում, գնացել տուն, ու վերջում մատնանշեց Վոզնեսենսկի

պողոտայի մի բակում, դարպասի մոտ եղած քարը, որի տակ դտնվեցին իրերը և քսակը։ Մի խոսքով, գործը պարզ էր։ Ի միջի այլոց, քննիչները և դատավորները խիստ զարմանում էին, որ նա քսակը և իրերը թաքցրել էր քարի տակ և դրանք չէր օգտագործել, առավել ևս զարմանում էին, որ նա ոչ միայն մանրամասն չէր հիշում իր հափշտակած բոլոր իրերը, այլև սխալվում էր դրանց թվի նկատմամբ։ Անհավանական թվաց այն հանգամանքը, որ նա ոչ մի անգամ չէր բացել քսակը և նույնիսկ չգիտեր, թե դրա մեջ որքան փող կա (քսակում դտնվեց երեք հարյուր տասնյոթ ռուբլի ու վաթսուն կոպեկ. վերևից դրված մի քանի խոշոր թղթադրամներ քարի տակ երկար մնալուց խիստ փչացել էին)։ Երկար փորձում էին պարզել, թե ինչո՞ւ մեղադրյալը միայն այդ հանգամանքի նկատմամբ ստում է, մինչդեռ մյուս բոլոր դեպքերում կամավոր կերպով ճշգրիտ ցուցմունքներ է տալիս։ Վերջապես, ոմանք (մանավանդ հոգեբանները) հնարավոր համարեցին, որ իսկապես նա չի բացել քսակը, ուրեմն և չգիտեր, թե ինչ կար դրա մեջ, ու չգիտենալով, այնպես էլ տարել ու դրել էր քարի տակ, բայց և դրանից եզրակացրին, որ ոճրագործությունը կարող էր կատարվել ոչ այլ կերպ, քան որոշ, ժամանակավոր խելացնորության դեպքում, այսպես ասած, սպանության ու կողոպուտի նկատմամբ հիվանդագին մենամոլության դեպքում, երբ դրանք կատարվում են հենց այնպես, առանց հետագա նպատակների և շահվելու հաշվենկատության։ Մեջտեղ եկավ ժամանակավոր խելացնորության նորագույն մոդայական թեորիան, որ մեր ժամանակներում հաճախ աշխատում են կիրառել որոշ ոճրագործների նկատմամբ։ Այն էլ ասած, Ռասկոլնիկովի վաղուցվա սնամաղձային վիճակի մասին հայտարարեցին շատ վկաներ՝ բժիշկ Զոսիմովը, Ռասկոլնիկովի առաջվա ընկերները, տանտիրուհին, սպասուհին։ Այս ամենի շնորհիվ հանգեցին այն եզրակացության, որ Ռասկոլնիկովը այնքան էլ նման չէ սովորական մարդասպանի, ավազակի ու կողոպտիչի, այլ այստեղ մի ինչ-որ ուրիշ բան կա։ Այս կարծիքը պաշտպանողներին մեծագույն վրդովմունք պատճառեց այն, որ ինքը ոճրագործը գրեթե չէր էլ փորձում պաշտպանել իրեն. վերջում այն հարցերին,

թե հատկապես ի՞նչն էր նրան մղում դեպի մարդասպանություն և ի՞նչը նրան դրդեց կողոպուտ անել, նա միանգամայն պարզ, կոպիտ ճշտությամբ պատասխանեց, որ այդ ամենի պատճառը իր վատթար դրությունն էր, իր աղքատությունը և անօգնականությունը, իր ցանկությունը՝ ապահովել իր կենսական կարիերայի առաջին քայլերը գոնե մի երեք հազար ռուբլու միջոցով, որ հույս ուներ գտնել սպանվածի մոտ։ Իր թեթևամիտ և փոքրոգի բնավորության հետևանքով որոշել էր սպանություն կատարել՝ գտնվելով զրկանքներից ու ձախորդություններից ընկճված վիճակում։ Այն վերջնական հարցերին, թե նրան ի՞նչը դրդեց ներկայանալ իր ոճրագործությունը խոստովանելու, ուղղակի պատասխանեց՝ անկեղծ ղղջումը։ Այդ ամենը համարյա արդեն կոպիտ էր...

Սակայն դատավճիռը ավելի մեղմ եղավ, քան կարելի էր սպասել՝ դատելով ըստ կատարված ոճրագործության, և դուցե հենց այն պատճառով, որ ոճրագործը ոչ միայն չէր ուզում արդարանալ, այլ նույնիսկ իրեն է՛լ ավելի շատ մեղադրելու ցանկություն էր հայտնում։ Գործի բոլոր տարօրինակ և առանձնահատուկ հանգամանքները ուշադրության առնվեցին։ Ոչ մի կասկած չկար, որ մինչև ոճրագործության կատարումը ոճրագործը եղել էր հիվանդագին ու տնանկ վիճակում։ Այն հանգամանքը, որ նա չէր օգտագործել կողոպտած իրերն ու դրամը, բացատրվում էր մասամբ էլ նրանով, որ ոճրագործությունը կատարելիս նրա մտավոր ունակությունները այնքան էլ առողջ վիճակում չեն եղել։ Լիզավետայի անակնկալ սպանության հանգամանքը վերջին ենթադրությունը հաստատող օրինակ համարվեց. մարդը երկու սպանություն է կատարում և միևնույն ժամանակ մոռանում է, որ դուռը բաց էր մնացել։ Վերջապես, մեղադրյալը ներկայանում է իր ոճիրը խոստովանելու, և դա այն ժամանակ, երբ գործը արտասովոր չափով բարդացել էր հուսալքված մոլեկրոնի (Նիկոլայի) իր դեմ տված կեղծ ցուցմունքի հետևանքով, ու բացի դրանից, երբ իսկական ոճրագործի դեմ ոչ միայն պարզ հանցանշաններ, այլև կասկածներ էլ համարյա չկային (Պորֆիրի Պետրովիչը միան-

դամայն կատարել էր իր խոսքը)։ Ի վերջո այս ամենը նը-պաստեց մեղադրյալի պատժի մեղմացման։

Բացի այդ, բոլորովին անսպասելի կերպով հայտնվեցին նաև ուրիշ հանգամանքներ, որոնք խիստ բարենպաստ էին մեղադրյալի համար։ Նախկին ուսանող Ռազումիխինը որ-տեղից-որտեղ տեղեկություններ հավաքեց և ապացույցներ ներկայացրեց, որ ոճրագործ Ռասկոլնիկովը համալսարանում եղած ժամանակ իր վերջին միջոցներով օգնում էր իր մի աղքատ և թոքախտավոր համալսարանական ընկերոջը և կես տարի համարյա պահում էր նրան։ Իսկ երբ այդ ընկերը մեռավ, խնամում էր նրա կենդանի մնացած ծեր և ուժասպառ հորը (ընկերը համարյա տասներեք տարեկան հասակից իր աշխատանքով պահել, կերակրել էր հորը), ի վերջո այդ ծերունուն տեղավորեց հիվանդանոցում, ու երբ սա էլ մեռավ, Ռասկոլնիկովը թաղեց նրան։ Այս բոլոր տեղեկությունները որոշ չափով բարենպաստ ազդեցություն ունեցան Ռասկոլնիկովի բախտը վճռելու վրա։ Նրա նախկին տանտիրուհին, նրա մեռած հարսնացուի մայրը, այրի Զարնիցինան վկայեց, որ երբ իրենք ապրում էին մի ուրիշ տան, Հինգ Անկյան մոտ, Ռասկոլնիկովը հրդեհի ժամանակ, գիշերով, բռնկված մի բնակարանից դուրս բերեց երկու փոքրիկ երեխա ու ինքը այրվածքներ ստացավ։ Այս դեպքը մանրակրկիտորեն հետաքննվեց ու բավական պարզ ապացուցվեց շատ ականատեսների վկայություններով։ Մի խոսքով, բանը վերջացավ նրանով, որ ոճրագործը դատապարտվեց երկրորդ կարգի տաժանակիր աշխատանքի, ընդամենը ութ տարվա ժամկետով, նկատի ունենալով նրա մեղայականը և հանցանքը մեղմացնող մի քանի հանգամանքները։

Դեռ գատավարության սկզբում Ռասկոլնիկովի մայրը հիվանդացավ։ Դունյան և Ռազումիխինը հնարավոր համարեցին դատավարության ամբողջ ընթացքում նրան Պետերբուրգից հեռու պահել։ Ռազումիխինը ընտրեց երկաթուղու վրա գտնվող և Պետերբուրգին մոտիկ մի քաղաք, որպեսզի հնարավորություն ունենար կանոնավոր կերպով հետևել դատավարության բոլոր հանգամանքներին ու միաժամանակ որքան կարելի է հաճախ տեսնվել Ավդոտյա Ռոմանովնայի հետ։ Պուլչերիա Ալեքսանդրովնայի հիվանդու-

Բյունը մի տեսակ տարօրինակ էր, ներվային, և ուզեկցվում էր եթե ոչ կատարյալ, ապա գոնե մասնակի խելացնորությամբ։ Վերադառնալով եղբոր հետ ունեցած վերջին տեսակցությունից, Դունյան մորը տեսավ բոլորովին հիվանդ վիճակում, տաքության ու զառանցանքի մեջ։ Այդ նույն երեկոյան նա Ռազումիխինի հետ պայմանավորվեց, թե ինչ պետք է պատասխանել մորը, եթե սա հարցեր տա որդու մասին։ Երկուսով նույնիսկ մոգոնեցին մի ամբողջ պատմություն, որ իբր թե Ռասկոլնիկովը մեկնել է ինչ-որ հեռավոր վայր, Ռուսաստանի սահմանը, կատարելու մի մասնավոր հանձնարարություն, որը նրան ի վերջո փող և անուն է ընձեռելու։ Բայց նրանց ապշեցրեց այն, որ Պուլլիերիա Ալեքսանդրովնան ինքը ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետագայում այդ մասին ոչինչ չէր հարցնում։ Ընդհակառակը, նա ինքն էլ էր մի ամբողջ պատմություն հնարել որդու հանկարծակի մեկնման մասին. նա արտասվելով պատմում էր, թե ինչպես որդին եկել էր իրեն հրաժեշտ տալու. ակնարկներով իմաց էր տալիս, որ միայն իրեն են հայտնի խիստ կարևոր ու խորհրդավոր շատ հանգամանքներ, որ Ռոդյան շատ ուժեղ թշնամիներ ունի և պետք է նույնիսկ թաքնվի։ Ինչ վերաբերում է Ռոդյայի ապագա կարիերային, ապա նա ասում էր, որ այդ էլ անկասկած փայլուն կլինի, երբ կանցնեն մի քանի թշնամական հանգամանքները. հավատացնում էր Ռազումիխինին, որ իր որդին ապագայում նույնիսկ պետական մարդ կլինի, այդ են ապացուցում նրա հոդվածը և նրա փայլուն գրական տաղանդը։ Այդ հոդվածը նա կարդում էր անընդհատ, երբեմն նույնիսկ բարձրաձայն էր կարդում, քիչ էր մնում քնելիս ծոցը դներ, բայց և այնպես համարյա չէր հարցնում, թե հիմա որտեղ է գտնվում Ռոդյան, չնայելով, որ նույնիսկ խուսափում էին իր հետ այդ մասին խոսելուց, մի բան, որ կարող էր նրա մեջ կասկածներ առաջացնել։ Ի վերջո սկսեցին վախենալ Պուլլիերիա Ալեքսանդրովնայի այդ տարօրինակ լռությունից։ Օրինակ, նա նույնիսկ չէր գանգատվում, որ որդուց նամակներ չեն ստացվում, այնինչ առաջ, ապրելով իրենց քաղաքում, հենց միայն մի հույս և ակնկալություն էր փայփայում՝ շուտով նամակ ստանալ իր սիրելի Ռոդյայից։ Վերջին հանգամանքը

արդեն իսպառ անբացատրելի էր և խիստ անհանգստացնում էր Դունյային. սա մտածում էր, որ մայրը թերևս մի ինչ-որ սարսափելի բան է նախազգում որդու ճակատագրի նկատմամբ և վախենում է հարցեր տալ ու այդպիսով էլ ավելի զարհուրելի լուր իմանալ։ Համենայն դեպս, Դունյան պարզ տեսնում էր, որ Պուլչերիա Ալեքսանդրովնայի բանականությունը առողջ վիճակում չէ։

Մի-երկու անգամ, սակայն, նա խոսակցությունը այնպես տարավ, որ նրան պատասխանելիս անկարելի էր չհիշատակել, թե այդ ժամանակ որտեղ էր գտնվում Ռոդյան. իսկ երբ պատասխանները ակամայից անբավարար ու կասկածելի էին լինում, նա հանկարծ խիստ տխրում էր, մռայլվում ու լռում, և դա շատ երկար էր տևում։ Վերջապես, Դունյան տեսավ, որ դժվար է ստել ու մոգոնել, ու հանգեց այն վերջնական եզրակացության, որ ավելի լավ է թոլորովին լռել որոշ հանգամանքների մասին. բայց հետզհետե ակներևության չափ պարզ էր դառնում, որ խեղճ մայրը ինչ-որ զարհուրելի բան է ենթադրում։ Ի միջի այլոց Դունյան վերհիշեց եղբոր այն խոսքերը, թե Սվիդրիգայլովի հետ իր ունեցած վեճից հետո, այն վերջին ճակատագրական օրվան նախորդած գիշերը մայրը ականջ էր դրել իր՝ Դունյայի, զառանցանքին. արդյո՞ք նա այդ պահին որևէ բան չէր լսել։ Հաճախ, երբեմն էլ մի քանի օրվա և նույնիսկ շաբաթվա մռայլ, նոթոտ լռությունից և լռելյայն արցունքներից հետո հիվանդը մի տեսակ հիստերիկորեն աշխուժանում էր և հանկարծ սկսում էր բարձրաձայն, անդադար խոսել իր որդու մասին, իր հույսերի, ապագայի մասին... Նրա ֆանտազիաները երբեմն խիստ տարօրինակ էին լինում։ Նրան սփոփում էին, նրան «այո» էին ասում (գուցե նա պարզ տեսնում էր, որ իրեն «այո» են ասում միայն սփոփելու համար), բայց նա այնուամենայնիվ խոսում էր...

Ոճրագործի մեղայականից հինգ ամիս անց գործադրվեց նրա դատավճիռը։ Ռազումիխինը նրա հետ տեսնվում էր բանտում, երբ այդ հնարավոր էր լինում։ Սոնյան նույնպես։ Վերջապես, հետևեց նաև անջատումը. Դունյան երդվելով ասում էր եղբորը, որ այդ անջատումը ժամանակավոր է. Ռազումիխինը նույնպես։ Ռազումիխինի երիտասար-

գական, տաք գլխում հաստատապես ամրացավ մի նախագիծ. դալիք երեք-չորս տարում, որքան այդ հնարավոր կլինի, գոնե սկիզբ դնել ապագա կարողության, գոնե մի քիչ փող հավաքել ու տեղափոխվել Սիբիր, ուր հողը ըստ ամենայնի հարուստ է, իսկ աշխատողները, մարդիկ և կապիտալները քիչ են. այնտեղ տեղավորվել հենց այն քաղաքում, ուր լինելու է Ռոդյան և... բոլորը միասին նոր կյանք սկսեն։ Հրաժեշտ տալով, բոլորը լալիս էին։ Ռասկոլնիկովը ամենավերջին օրերում մտատանջության մեջ էր, շատ էր հարցնում մոր մասին, շարունակ անհանգստանում էր նրա համար։ Նույնիսկ շատ էր տանջվում նրա համար, և դա անհանգստացնում էր Դունյային։ Մանրամասն իմանալով մոր հիվանդագին տրամադրությունը, նա խիստ մռայլվեց։ Հայտնի չէ ինչու Սոնյայի հետ միշտ քիչ էր խոսում։ Սոնյան Սվիդրիգայլովի թողած դրամի շնորհիվ արդեն վաղուց պատրաստվել էր մեկնել կալանավորների խմբի ետևից, որի մեջ էր լինելու Ռասկոլնիկովը։ Նա և Ռասկոլնիկովը այդ մասին երբեք և ոչ մի խոսք չասացին միմյանց. բայց երկուսն էլ գիտեին, որ դա այդպես էլ կլինի։ Վերջին հրաժեշտի ժամանակ Ռասկոլնիկովը տարօրինակ ժպտաց՝ լռելով քրոջ և Ռազումիխինի ջերմագին հավաստիացումները նրանց երջանիկ ապագայի մասին, երբ ինքը կազատվի տաժանակրությունից, ու ասաց, որ մոր հիվանդագին վիճակը շուտով փորձությամբ կվերջանա։ Վերջապես, նա և Սոնյան ճանապարհվեցին։

Երկու ամիս հետո Դունեչկան ամուսնացավ Ռազումիխինի հետ։ Հարսանիքը տխուր և լուռ անցավ։ Հրավիրվածների մեջ էին Պորֆիրի Պետրովիչը և Զոսիմովը։ Ամբողջ վերջին ժամանակվա ընթացքում Ռազումիխինը հաստատուն վճիռ ընդունած մարդու տեսք ուներ։ Դունյան կուրորեն հավատում էր, որ նա կկատարի իր բոլոր մտադրությունները, և չէր էլ կարող չհավատալ. այդ մարդու մեջ երկաթե կամք էր նկատվում։ Ի միջի այլոց, նա սկսել էր դարձյալ լսել համալսարանի դասախոսությունները, որպեսզի ավարտեր դասընթացը։ Նրանք երկուսն էլ հաճախ ապագայի պլաններ էին կազմում. երկուսն էլ հաստատապես հուսադրվում էին հինգ տարի հետո տեղափոխվել Սի-

բիր։ Առայժմ հույս էին դնում այնտեղ մեկնած Սոնյայի վրա...

Պուլլխերիա Ալեքսանդրովնան ուրախությամբ օրհնեց աղջկան, Ռազումիխինի հետ ամուսնանալու համար. բայց հարսանիքից հետո կարծես է՛լ ավելի տխրեց ու մտահոգվեց։ Նրան հաճելի բոպե ընձեռելու համար Ռազումիխինը ի միջի այլոց նրան հաղորդեց, թե ինչպես Ռասկոլնիկովը օգնել էր իր ընկեր ուսանողին և վերջինիս զառամյալ հորը, և թե ինչպես նախորդ տարում մահից փրկել էր երկու երեխա, այրվածքներ ստացել և նույնիսկ հիվանդացել։ Առանց այն էլ գիտակցությունը խանգարված Պուլլխերիա Ալեքսանդրովնային այդ երկու լուրերը գրեթե հրճվալից վիճակի հասցրին։ Նա անընդհատ խոսում էր այդ մասին, խոսակցություն էր սկսում նաև փողոցում (թեև Դունյան միշտ ուղեկցում էր նրան)։ Հանրակառքերում, խանութներում, բռնելով իրեն լսող գեթ որևէ մեկին, խոսք էր բաց անում իր որդու մասին, նրա հոդվածի մասին, պատմում էր, թե նա ինչպես էր օգնել ուսանողին, հրդեհից այրվածքներ ստացել և այլն։ Դունեչկան նույնիսկ չգիտեր, թե ինչպես դադարի նրան։ Բացի այդ հրճվալից, հիվանդագին տրամադրության վտանգից, փորձանք էր սպառնում հենց միայն այն հանգամանքը, որ որևէ մեկը նախկին դատական գործի առնչությամբ կարող էր հիշատակել Ռասկոլնիկովի ազգանունը և խոսել այդ մասին։ Պուլլխերիա Ալեքսանդրովնան նույնիսկ իմացավ հրդեհից փրկված երկու երեխաների մոր հասցեն և ուզում էր անպայման նրա մոտ գնալ։ Վերջապես, նրա անհանգստությունը ծայրահեղ չափերի հասավ։ Երբեմն նա հանկարծ սկսում էր լաց լինել, հաճախ հիվանդանում էր և տաքության մեջ զառանցում։ Մի առավոտ նա ուղղակի հայտարարեց, թե ըստ իր հաշիվների շուտով ժամանելու է Ռոդյան, թե ինքը հիշում է, որ նա հրաժեշտի պահին ասել էր՝ ինքը ամիս հետո պետք է սպասել իրեն։ Սկսեց հավաքել բնակարանը ու պատրաստվել հանդիպման, սկսեց զարդարել Ռոդյային հատկացվելիք (իր սեփական) սենյակը, մաքրել կահույքը, լվանալ ու կախտալ նոր վարագույրներ և այլն։ Դունյան անհանգստացավ, բայց լռում էր և նույնիսկ օգնում սենյակը կարգի բերելուն,

եղբորը ընդունելու համար։ Տագնապալի օրվանից հետո, որ անցավ անընդհատ ֆանտազիաներով, բերկրուն անուրջներով ու արցունքներով, գիշերը Պուշկինի Ալեքսանդրովնան հիվանդացավ, առավոտյան տաքության մեջ էր ու կառանցում էր։ Սկսվեց ջերմախտը։ Երկու շաբաթ հետո նա մեռավ։ Ջառանցելիս նա հատ ու կենտ խոսքեր էր ասում, որոնցից կարելի էր եզրակացնել, որ նա ավելի շատ էր կասկած տանում որդու զարհուրելի բախտի նկատմամբ, քան նույնիսկ ենթադրում էին։

Ռասկոլնիկովը երկար ժամանակ տեղեկություն չուներ մոր մահվան մասին, թեև Սիբիրում իր տեղավորվելու հենց սկզբից Պետերբուրգի հետ նամակագրություն էր սկսվել։ Դա սկսվել էր Սոնյայի միջոցով, որը կանոնավոր կերպով յուրաքանչյուր ամիս նամակ էր ուղարկում Պետերբուրգ, Ռազումիխինի անունով, ու յուրաքանչյուր ամիս կանոնավոր կերպով Պետերբուրգից պատասխան էր ստանում։ Սոնյայի նամակները սկզբում Դունյային ու Ռազումիխինին մի տեսակ չոր ու ցամաք և անբավարար էին թվում. բայց ի վերջո նրանք երկուսն էլ գտան, որ ավելի լավ գրել հնարավոր էլ չէր, և այդ նամակներից էլ այնուամենայնիվ վերջին հաշվով միանգամայն լրիվ և ճշգրիտ պատկերացում էր ստացվում նրանց դժբախտ եղբոր դրության մասին։ Սոնյայի նամակները լեցուն էին առօրյա իրականությամբ, Ռասկոլնիկովի տաժանակիր կյանքի ողջ իրադրության պարզ ու ճշգրիտ նկարագրությամբ։ Նամակներում նա չէր շարադրում իր իսկ հույսերը, զուշակություններ չէր անում ապագայի մասին, չէր նկարագրում իր զգացմունքները։ Ռասկոլնիկովի հոգեկան տրամադրության և առհասարակ նրա ամբողջ ներքին կյանքի պարզաբանման փորձերի փոխարեն բերվում էին միայն փաստեր, այսինքն՝ հենց նրա խոսքերը, մանրամասն տեղեկություններ, թե ինչպես է նրա առողջությունը, ինչ ցանկություններ է նա հայտնել այսինչ օրը, տեսակցության ժամանակ, ինչ է խնդրել իրենից՝ Սոնյայից, ինչ է նրան հանձնարարել և այլն։ Այդ բոլոր տեղեկությունները շատ մանրամասն էին հաղորդվում։ Դժբախտ եղբոր կերպարը ի վերջո հանդես եկավ ինքնին, պատկերացավ պարզ ու ճշգրիտ. այստեղ սխալներ չէին կարող

լինել, որովհետև շարունակ ստույգ փաստեր էին հաղորդվում։

Բայց այս տեղեկությունները քիչ էին ուրախացնում Դունյային և նրա ամուսնուն, մանավանդ սկզբում։ Սոնյան անընդհատ հաղորդում էր, որ Ռոդյան միշտ մռայլ է, սակավախոս, և նույնիսկ համարյա բոլորովին չի հետաքրքրվում այն տեղեկություններով, որ ինքը իմանում է ստացվող նամակներից և ամեն անգամ հաղորդում նրան, որ Ռոդյան երբեմն հարցնում է մոր մասին, ու երբ ինքը տեսավ, որ նա, Ռոդյան, արդեն կանխագուշակում է ճշմարտությունը, ի վերջո նրան հաղորդեց մոր մահվան մասին, և զարմանքով տեսավ, որ նույնիսկ մոր մահվան լուրն էլ կարծես թե շատ չազդեց Ռոդյայի վրա, գոնե այդպես էր երևում նրա արտաքին տեսքից։ Սոնյան ի միջի այլոց հաղորդում էր, որ թեև Ռոդյան ըստ երևույթին ինքնամփոփվել է ու ասես մեկուսացել բոլորից, խիստ շիտակ ու պարզ է ընկալում իր նոր կյանքը, որ նա լավ է հասկանում իր դրությունը, առաջիկայում ոչ մի լավ բան չի սպասում, ոչ մի թեթևամիտ հույս չի փայփայում (թեև նրա վիճակում հակառակը պետք է լիներ) ու համարյա ոչ մի բանի վրա չի զարմանում իրեն շրջապատող նոր իրադրության մեջ, որը այնքան քիչ է նմանվում առաջվա որևէ իրադրության։ Սոնյան հաղորդում էր, որ Ռոդյայի առողջությունը բավարար է։ Նա գնում է աշխատանքների, որոնցից չի խուսափում, բայց և չի ձգտում դրանց։ Սոնդի նկատմամբ համարյա անտարբեր է, բայց այդ սնունդը, բացի կիրակի և տոն օրերից, այնքան վատ է, որ նա, վերջապես, Սոնյայից հաճույքով մի քիչ փող ընդունեց, որպեսզի կարողանա ամեն օր թեյ խմել. խնդրում էր չանհանգստանալ մնացած բաների համար, հավատացնելով, որ իր մասին այդ բոլոր հոգացողությունները իրեն միայն սրտնեղություն են պատճառում։ Այնուհետև Սոնյան հաղորդում էր, որ բանտում նա տեղավորված է բոլորի հետ, ընդհանուր շենքում, ինքը չի տեսել նրանց կացարանների ներսը, բայց եզրակացնում է, որ դրանք նեղ են, այլանդակ ու անառողջ. Ռոդյան քընում է տախտակամածի վրա, տակը թաղիք է փռում և չի ուզում իր համար ուրիշ որևէ հարմարություն սարքել։ Նա

այդպես սուղ և աղքատ է ապրում ոչ թե ըստ մի որևէ կանխակալ պլանի կամ դիտավորության, այլ հենց այնպես, դեպի իր բախտը անուշադիր և արտաքուստ անտարբեր լինելու հետևանքով։ Սոնյան ուղղակի գրում էր, որ նա, մանավանդ սկզբում, ոչ միայն չէր հետաքրքրվում իր, Սոնյայի այցելություններով, այլ նույնիսկ համարյա ջղայնանում էր իր, Սոնյայի վրա, սակավախոս էր և նույնիսկ կոպիտ, բայց վերջ ի վերջո այդ տեսակցությունները նրա համար սովորություն և նույնիսկ պահանջ դարձան, այնպես որ նա մինչև իսկ շատ էր տխրում, երբ ինքը, Սոնյան, մի քանի օր հիվանդ էր և չէր կարող այցելել նրան։ Ինքը նրա հետ տեսնվում էր տոն օրերին, բանտի դարպասի մոտ կամ պտհականոցում, ուր Ռոդյային կանչում էին մի քանի բոպեով, իր հետ տեսնվելու, իսկ լի օրերին իրենք տեսնվում են աշխատանքների վայրում, ուր գնում է ինքը, Սոնյան, կամ արհեստանոցներում, կամ աղյուսի գործարաններում, կամ Իրտիշի ափին գտնվող սարայներում։ Իր մասին Սոնյան հաղորդել էր, որ իրեն հաջողվել է քաղաքում նույնիսկ որոշ ծանոթություններ հաստատել և հովանավորություն գտնել, որ ինքը կար անելով է զբաղվում, ու որովհետև քաղաքում մոդիստուհի գրեթե չկա, ինքը նույնիսկ անհրաժեշտ է դարձել շատ տներում։ Սոնյան չէր հիշատակում, որ իր միջոցով Ռասկոլնիկովն էլ է հովանավորվում պետերի կողմից, որ թեթևացրել են նրա աշխատանքները և այլն։ Վերջապես լուր եկավ (Դունյան նույնիսկ որոշ, առանձնահատուկ հուզում և անհանգստություն էր նկատում Սոնյայի վերջին նամակներում), որ Ռոդյան բոլորից խորշում է, որ բանտում տաժանակիրները չեն սիրում նրան, որ նա ամբողջ օրերով լռում է և խիստ գունատ է լինում։ Վերջին նամակում Սոնյան գրել էր, որ նա շատ լուրջ հիվանդացել է ու պառկած է հիվանդանոցում, կալանավորների հիվանդասենյակում...

II

Նա արդեն վաղուց էր հիվանդ. բայց տաժանակիր կյանքի սարսափները, աշխատանքները, վատ սնունդը, գլուխը ածիլելը, կտորանքներից կարված հագուստը՝ այս պայմանները չէին, որ նրան ուժասպառ էին արել. օ, նրա համար ի՞նչ էին այդ բոլոր տանջանքներն ու խոշտանգումները։ Ընդհակառակը, նրա համար նույնիսկ ուրախալի էր աշխատանքը. սաստիկ հոգնելով աշխատանքից, նա գոնե կարողանում էր մի քանի ժամ հանգիստ քնել։ Եվ ի՞նչ նշանակություն ուներ նրա համար սնունդը՝ ուտիճներով լեցուն, անհամ շչին։ Առաջվա կյանքում, ուսանող ժամանակ նա հաճախ այդ էլ չէր ուտենում։ Նրա հագուստը տաք էր ու հարմարեցված էր իր ապրելակերպին։ Նա մինչև իսկ չէր զգում կանդալների ծանրությունը։ Մի՞թե ամաչելու էր իր սափրված գլխի և խայտաբղետ կուրտկայի համար։ Ումի՞ց էր ամաչելու, Սոնյայի՞ց։ Սոնյան վախենում էր նրանից, և մի՞թե նա ամաչելու էր Սոնյայից։

Եվ ի՞նչ. նա ամաչում էր նույնիսկ Սոնյայից, որին դրա համար տանջում էր իր արհամարհական ու կոպիտ վերաբերմունքով։ Բայց սափրված գլխի ու կանդալների պատճառով չէր, որ ամաչում էր նա. նրա հպարտությունը սաստիկ խոցված էր. նա հենց խոցված հպարտությունից էր հիվանդացել։ Օ, որքա՜ն նա երջանիկ կլիներ, եթե կարողանար ինքը իրեն մեղադրել։ Այդ դեպքում նա կտաներ ամեն ինչ, նույնիսկ ամոթանքն ու խայտառակությունը։ Բայց նա խստորեն դատում էր իրեն, և նրա անողոք խիղճը չգտավ առանձնապես զարհուրելի ոչ մի հանցանք նրա անցյալում, բացի միայն սոսկ վրիպումից, որն ամեն մեկն էլ կարող էր անել։ Նա ամաչում էր, որ ինքը, Ռասկոլնիկովը, կործանվել էր այդպես կուրորեն, անհուսալիորեն, խուլ ու հիմար կերպով, կույր բախտի ինչ-որ վճռով, ու պետք է խոնարհվի և հնազանդվի ինչ-որ դատավճռի «անհեթեթության», եթե ուզում է գեթ որևէ չափով իրեն հանգստացնել։

Ներկայումս ապարդյուն ու աննպատակ հուզմունք, իսկ ապագայում՝ միայն անընդհատ զոհաբերություն, որով ոչինչ չի ձեռք բերվի, ահա թե աշխարհում նրան ինչ էր

սպասում։ Եվ ինչի՞ է պետք այն, որ ութ տարուց հետո ինքը կլինի ընդամենը երեսուներկու տարեկան և կարող է դեռ էլի ապրել։ Ինչի՞ համար ապրի։ Ի՞նչը նկատի ունենա, ինչի՞ն ձգտի։ Ապրի հենց միայն գոյություն ունենալու համա՞ր։ Բայց նա առաջ էլ հազար անգամ պատրաստ էր իր գոյությունը տալ գաղափարի համար, հույսի, նույնիսկ ֆանտազիայի համար։ Միայն գոյություն ունենալը միշտ էլ քիչ էր նրա համար. նա միշտ ավելին էր ուզում։ Գուցե զգալով իր իղձերի ուժը, նա այն ժամանակ իրեն այնպիսի մարդ էր համարում, որին ավելի շատ բան է թույլատրված, քան ուրիշին։

Գոնե բախտը նրան զղջում ուղարկեր, այրող զղջում, որ սիրտ է կտրատում, փախցնում քունը, այնպիսի զղջում, որի պատճառած զարհուրելի տանջանքները մարդուն մղում են կախվելու կամ ջրի հորձանուտում խեղդվելու։ Ո, նա կուրախանար դրանից։ Չէ՞ որ տանջանքներն ու արցունքներն էլ կյանք են։ Բայց նա չէր զղջում իր ոճրագործության համար։

Գոնե նա կարողանար չարանալ իր հիմարության վրա, ինչպես և առաջ չարանում էր իր այլանդակ ու հիմար արարքների վրա, որոնք իրեն բանտ հասցրին։ Բայց հիմա, արդեն գտնվելով բանտում, լինելով ազատ, նա վերստին քննեց ու կշռադատեց առաջվա իր բոլոր արարքները ու գրտավ, որ դրանք ամենևին էլ այնպես հիմար ու այլանդակ չէին, ինչպես իրեն թվում էին առաջ, այն ճակատագրական ժամանակներում։

Նա մտածում էր. «Իմ միտքը ինչո՞վ, ինչո՞վ է ավելի հիմար եղել, քան ուրիշ մտքերն ու թեորիաները, որոնք պտտվում ու բախվում են աշխարհում, սկսած այդ աշխարհի գոյության սկզբից։ Բավական է միայն գործին նայել բոլորովին անկախ, լայն և սովորական ազդեցություններից զերծ հայացքով, և այդ դեպքում, իհարկե, իմ միտքը ամենևին էլ... տարօրինակ չի թվա։ Ո, հոռետեսներ և արծաթե հինգ կոպեկանոցի արժեքի իմաստուններ, ինչո՞ւ եք կանգ առնում կես ճանապարհին»։

«Ինչո՞վ է իմ արարքը նրանց այդպես այլանդակ թվում», ասում էր նա ինքն իրեն։ «Նրանով, որ դա չարագործու-

թյո՞ւն է։ Ի՞նչ է նշանակում չարագործություն բառը։ Իմ խիղճը հանգիստ է։ Իհարկե, քրեական հանցագործություն է կատարվել. իհարկե, խախտված է օրենքի տառը և արյուն է թափված, դե ուրեմն հանուն օրենքի տառի վերցրեք իմ գլուխը... ու բավական է։ Իհարկե, այսպիսի դեպքում նույնիսկ մարդկության շատ բարերարներ, որոնք իշխանություն չէին ժառանգել, այլ իրենք էին զավթել այն, հենց իրենց առաջին քայլերն անելիս պետք է որ մահապատժի ենթարկվեին։ Բայց այդ մարդիկ դիմացան իրենց արարքներին, դրա համար էլ նրանք իրավացի են, իսկ ես չդիմացա, հետևաբար իրավունք չունեի ինձ թույլ տալ այդ քայլը»։

Ահա թե ինչն էր նա համարում իր միակ ոճրագործությունը. միայն այն, որ չէր դիմացել դրան և ներկայացել էր խոստովանության։

Նա տանջվում էր նաև այն մտքից, թե ինչո՞ւ ինքնասպանություն չէր գործել։

Ինչո՞ւ էր նա այն օրը կանգնել գետի եզերքին և գերադասել էր խոստովանության ներկայանալը։ Մի՞թե այդքան ուժեղ է ապրելու ցանկությունը և այդքան դժվար է այն հաղթահարել։ Հո հաղթահարե՞ց Սվիդրիգայլովը, որը վախենում էր մահից։

Նա տանջանքով ինքն իրեն տալիս էր այդ հարցը և չէր կարողանում հասկանալ, որ այն ժամանակ էլ, երբ կանգնած էր գետի եզերքին, գուցե նախազգում էր, որ իր մեջ, իր համոզմունքներում խոր կեղծիք կա։ Նա չէր հասկանում, որ այդ նախազգացումը կարող է իր կյանքում գալիք բեկման, իր գալիք հարության, կյանքի նկատմամբ ապագա նոր հայացքի նախանշան լինել։

Նա այստեղ ավելի շուտ հնարավոր էր համարում բնազդի բութ ծանրությունը, որը նա չէր կարող վանել և որի պատճառով դարձյալ ուժ չուներ դիմանալու իր վիճակին (թուլության ու անճարակության հետևանքով)։ Նա նայում էր իր տաժանակիր ընկերներին ու զարմանում. նրանք բոլորն էլ որքա՜ն սիրում էին կյանքը, որքա՜ն թանկ էին գնահատում այն։ Նրանց թվաց, որ բանտում է՛լ ավելի շատ են սիրում և է՛լ ավելի թանկ են գնահատում կյանքը, քան ազատ ապրելիս։ Ինչպիսի՜ սարսափելի տանջանքներ ու

խոշտանգումներ էին տարել նրանցից ոմանք, օրինակ, թափառաշրջիկները։ Մի՞թե նրանց համար այդքան նշանակություն կարող է ունենալ արևի մի որևէ ճառագայթը, մրթին անտառը, դեռ մի-երկու տարի առաջ որևէ տեղ, խուլ վայրում նկատած սառն աղբյուրը, որը տեսնելու մասին թափառաշրջիկը երազում է ինչպես սիրուհուն տեսնելու մասին, երազում տեսնում է այդ աղբյուրը, շուրջը դալարած կանաչուտը, թփերում երգող թռչնակը։ Շարունակելով իր դիտողությունները, նա առավել ևս անբացատրելի օրինակներ էր տեսնում։

Բանտում, իրեն շրջապատող միջավայրում նա, իհարկե, շատ բան չէր նկատում և բոլորովին էլ չէր ուզում նկատել։ Նա ապրում էր կարծես աչքերը փակած. նայելը զզվելի ու անտանելի էր նրա համար։ Բայց ի վերջո շատ բան զարմացնում էր նրան, և նա մի տեսակ ակամայից սկսեց նկատել այն, ինչ որ առաջ չէր էլ ենթադրում։ Իսկ առհասարակ նրան առավելապես զարմացնում էր այն սարսափելի, անանցելի անդունդը, որ կար իր և այդ բոլոր մարդկանց միջև։ Կարծես թե ինքը և նրանք տարբեր աղգերից էին։ Ինքը և նրանք միմյանց վրա անվստահորեն և թշնամաբար էին նայում։ Նա գիտեր և հասկանում էր այդ մեկուսացման ընդհանուր պատճառները. բայց նա առաջ երբեք հնարավոր չէր համարում, որ այդ պատճառները իրոք կարող էին այդչափ խոր և ուժեղ լինել։ Բանտում կային նաև աքսորական լեհեր, քաղաքական հանցագործներ։ Նրանք այդ բոլոր մարդկանց ուղղակի համարում էին տգետներ և սորկամիտներ, նրանց բարձրից էին նայում և արհամարհում։ Բայց Ռասկոլնիկովը չէր կարող այդպես նայել. նա պարզ տեսնում էր, որ այդ տգետները շատ բաներով ավելի խելացի են, քան այդ լեհերը։ Կային նաև այդ մարդկանց նույնպես խիստ արհամարհող ռուսներ՝ մի նախկին ոստ և երկու սեմինարիստ։ Ռասկոլնիկովը պարզ նկատում էր նաև նրանց սխալը։

Բոլորն էլ նրան չէին սիրում և նրանից խուսափում էին։ Ի վերջո սկսեցին նույնիսկ ատել նրան. ինչո՞ւ. նա այդ չգիտեր։ Նրան արհամարհում էին, նրա վրա ծիծաղում,

նրա ոճրագործությունը ծաղրում էին այն մարդիկ, որոնք նրանից ավելի ոճրագործ էին։

— Դու բարին ես,— ասում էին նրան,— մի՞թե դու պետք է կացնով սպանություն կատարեիր. դա ամենևին էլ բարինի գործ չէ։

Մեծ պասի երկրորդ շաբաթում հասավ բոլորի հետ ապաշխարելու նրա հերթը։ Նա գնում էր եկեղեցի, աղոթում մյուսների հետ։ Մի անգամ կռիվ ծագեց, թե ինչի համար, նա ինքն էլ այդ չգիտեր. բոլորը կատաղությամբ հարձակվեցին նրա վրա։

— Դու անաստված ես, դու աստծուն չես հավատում. քեզ պետք է սպանել,— բղավում էին նրա վրա։

Ռասկոլնիկովը նրանց հետ երբեք չէր խոսել աստծու և հավատի մասին, բայց այդ մարդիկ ուզում էին սպանել նրան, որպես անաստվածի. նա լռում էր, չէր առարկում։ Մի կալանավոր, բոլորովին կատաղած, հարձակվեց նրա վրա. Ռասկոլնիկովը հանգիստ էր և լուռ. նրա հոնքն էլ չշարժվեց, ոչ մի դիմագիծը չդողաց։ Պահակը կարողացավ ժամանակին կանգնել նրա և մարդասպանի միջև, թե չէ արյուն էր թափվելու։

Ռասկոլնիկովի համար անլուծելի էր ևս մի հարց. ինչո՞ւ նրանք բոլորը սիրեցին Սոնյային։ Սոնյան նրանց չէր շողոքորթում, տաժանակիրները նրան հանդիպում էին հաղվագեպ, երբեմն միայն աշխատանքների վայրում, երբ նա գալիս էր մի բոպեով, Ռասկոլնիկովին տեսնելու համար։ Այնինչ բոլորը արդեն ճանաչում էին նրան, գիտեին նաև, որ նա այդ տղայի ետևից է եկել, գիտեին, թե ինչպես է ապրում, որտեղ է ապրում։ Սոնյան նրանց փող չէր տալիս, առանձնապես ծառայություն չէր մատուցում։ Միայն մի անգամ, ծննդյան տոնին, բոլոր կալանավորների համար կարկանդակներ և սպիտակ հաց բերեց։ Բայց նրանց և Սոնյայի միջև հետզհետե որոշ, ավելի մոտիկ հարաբերություններ սկսվեցին. նա կալանավորների կողմից նամակներ էր գրում նրանց հարազատներին և ուղարկում փոստով։ Նրանց ազգականները և աղգականուհիները ժամանելով այդ քաղաքը, նրանց ցուցումով իրեր և նույնիսկ փող էին թողնում Սոնյայի մոտ, նրանց հանձնելու համար։ Նրանց կանայք

և սիրուհիները ճանաչում էին Սոնյային, գնում էին նրա մոտ։ Ու երբ նա գնում էր աշխատանքների վայրը, Ռասկոլնիկովին տեսնելու, կամ երբ հանդիպում էր աշխատանքի գնացող կալանավորների խմբին, բոլորը հանում էին գլխարկները, բոլորը բարևում էին. «Քույրիկ, Սոֆյա Սեմյոնովնա, դու մեր քնքուշ, սիրելի քույրիկ», ասում էին այդ փոպիտ, խարանած տաժանակիրները այդ կարճլիկ ու լղարիկ էակին։ Նա ժպտում էր ու բարևում, ու բոլորն էլ սիրում էին նրա այդ ժպիտը։ Սիրում էին նույնիսկ նրա քայլվածքը, շուռ էին գալիս նայելու, թե նա ինչպես է գնում, ու գովաբանում էին նրան. գովաբանում էին նույնիսկ այն բանի համար, որ նա այդպես կարճլիկ էր, ու էլ չգիտեին, թե ինչի համար գովաբանեին։ Նույնիսկ նրա մոտ բուժվելու էին գնում։

Ռասկոլնիկովը մեծ պասի վերջին բոլոր օրերին ու զատկին պառկած էր հիվանդանոցում։ Արդեն ապաքինվելով, նա վերհիշեց իր երազները, որ տեսել էր տաքության ու զառանցանքի մեջ, պառկած վիճակում։ Նա անրջում էր, որ իբր թե ամբողջ աշխարհը մատնված է ինչ-որ սարսափելի, չլսված ու չտեսնված ժանտախտի, որը Ասիայի խորքից տարածվում է դեպի Եվրոպա։ Բոլորը պետք է կործանվեին, բացի խիստ փոքրաթիվ, մի քանի ընտրյալներից։ Հայտնվել էին ինչ-որ նոր տրիխինաներ, միկրոսկոպիկ էակներ, որոնք բույն էին դրել մարդկանց մարմինների մեջ։ Բայց այդ էակները, խելքով ու կամքով օժտված ոգիներ էին։ Այն մարդիկ, որոնց մեջ դրանք թափանցում էին, խենթանում էին, խենթանում ու խելագարվում էին։ Բայց մարդիկ երբեք, երբեք ճշմարտության նկատմամբ իրենց այնպես խելոք ու անդրդվելի չէին համարել, ինչպես իրենց համարում էին վարակվածները։ Երբեք ավելի անդրդվելի չէին համարել իրենց վճիռները, իրենց գիտական հետևությունները, իրենց բարոյական համոզմունքները և հավատալիքները։ Ամբողջ գյուղեր, ամբողջ քաղաքներ և ժողովուրդներ վարակվում էին ու դիվոտում։ Բոլորը անհանգիստ էին և միմյանց չէին հասկանում, ամեն մեկը կարծում էր, որ միայն ինքն է ճշմարտություն ասում, ու նայելով ուրիշներին, տանջվում

էր, կուրծքը ծեծում, լալիս էր ու հեծկլտում։ Չգիտեին, թե ում և ինչպես դատեն, չէին կարողանում համաձայնել, թե ինչը պետք է չարիք և ինչը բարիք համարել։ Չգիտեին ում մեղադրել, ում արդարացնել։ Մարդիկ ինչ-որ անմիտ ցասումով սպանում էին իրար։ Ամբողջ բանակներով իրար վրա էին հարձակվում, բայց բանակները արդեն արշավելով, իրենք էին սկսում միմյանց հոշոտել, շարքերը քայքայվում էին, ռազմիկները իրար վրա էին նետվում, խոցում և սրախողխող էին անում, կծում և ուտում էին իրար։ Քաղաքներում ամբողջ օրը ահազանգ էին տալիս, կանչում բոլորին, բայց թե ով և ինչի համար էր կանչում, այդ ոչ ոք չգիտեր, ու բոլորն էլ անհանգիստ էին։ Թողին ամենասովորական արհեստները, որովհետև ամեն մեկը առաջարկում էր իր մտքերը, իր ուղղումները, ու չէին կարողանում համաձայնության գալ. հողագործությունը կանգ առավ։ Տեղ-տեղ մարդիկ խմբվում էին, համաձայնում որևէ բանի մասին, երդվում էին չբաժանվել, բայց իսկույն բոլորովին ուրիշ որևէ բան էին սկսում, քան հենց այդ պահին իրենք էին առաջարկել, սկսում էին մեղադրել իրար, կռվում էին ու միմյանց կոտորում։ Սկսվեցին հրդեհներ, սով առաջացավ։ Ամեն ինչ և ամենքը կործանվում էին։ Ժանտախտը աճում և շարունակում էր տարածվել։ Ամբողջ աշխարհում միայն մի քանի մարդիկ կարող էին փրկվել, դրանք մաքուր և ընտրյալ մարդիկ էին, կոչված էին մարդկանց նոր ցեղ և նոր կյանք սկսել, նորել ու մաքրել երկիրը, բայց ոչ ոք և ոչ մի տեղ չէր տեսել այդ մարդկանց, ոչ ոք չէր լսել նրանց խոսքերն ու ձայները։

Ռասկոլնիկովին տանջում էր այն միտքը, որ իր հուշերում խիստ տխուր ու սարսափելի է այդ անմիտ զառանցանքը, որ երկար ժամանակ չի անցնում այդ տենդային անրջանքների տպավորությունը։ Չաուկին արդեն երկրորդ շաբաթն էր հաջորդում. գարնանային տաք, պայծառ օրեր էին. բացվեցին կալանավորների հիվանդասենյակի պատուհանները (դրանք վանդակապատ էին. դրանց տակ ժամապահ էր կարգված)։ Ռասկոլնիկովի հիվանդության ամբողջ ընթացքում Սոնյան միայն երկու անգամ կարողացավ նրան

տեսնել հիվանդասենյակում. հարկավոր էր ամեն անգամ թույլտվություն ստանալ, իսկ դա դժվար էր։ Նա հաճախ, սովորաբար իրիկնադեմին, մտնում էր հիվանդանոցի բակը, մտնում էր հենց այնպես, մի րոպե կանգնելու և գոնե հեռվից հիվանդասենյակի պատուհաններին նայելու համար։ Մի անգամ, իրիկնադեմին, արդեն բոլորովին ապաքինված Ռասկոլնիկովը քնեց. արթնանալով, նա պատահմամբ մոտեցավ պատուհանին, ու հանկարծ հեռվում տեսավ Սոնյային, որը կանգնած էր հիվանդանոցի դարպասի մոտ։ Սոնյան կարծես ինչ-որ բան էր սպասում։ Դա կարծես սրտնեղություն պատճառեց Ռասկոլնիկովին. նա ցընցվեց և իսկույն հեռացավ պատուհանից։ Հետևյալ օրը Սոնյան չեկավ, երրորդ օրը նույնպես։ Ռասկոլնիկովը զգաց, որ անհամբերությամբ սպասում է նրան։ Վերջապես, նա դուրս եկավ հիվանդանոցից։ Գալով բանտ, նա կալանավորներից իմացավ, որ Սոֆյա Սեմյոնովնան հիվանդացել է, պառկած է տանը և ոչ մի տեղ չի գնում։

Ռասկոլնիկովը շատ անհանգիստ էր, մարդ էր ուղարկում նրա դրությունը իմանալու։ Շուտով տեղեկացավ, որ նրա հիվանդությունը վտանգավոր չէ։ Իր հերթին իմանալով, որ Ռասկոլնիկովը այդպես թախծում է ու մտահոգվում իր մասին, Սոնյան մատիտով գրված երկտող ուղարկեց նրան, հաղորդելով, որ իրեն լավ է զգում, մի քիչ մրսել էր, ու շուտով, շատ շուտով կգա աշխատանքների վայրը, նրան տեսնելու։ Երբ Ռասկոլնիկովը կարդում էր այդ երկտողը, ուժգին ու ցավագին տրոփում էր նրա սիրտը։

Դարձյալ պայծառ և տաք օր էր։ Վաղ առավոտյան, ժամը վեցին նա գնաց աշխատանքի, գետի ափը, ուր սարայում կառուցված էր թրծիչ հնոց, ալաբաստը լոսելու համար։ Այնտեղ գնացին ընդամենը երեք աշխատող։ Կալանավորներից մեկը պահակի ուղեկցությամբ գնաց բերդ, ինչ-որ գործիք բերելու։ Մյուսը սկսեց փայտ պատրաստել ու գարսել հնոցում։ Ռասկոլնիկովը դուրս եկավ սարայից ու մոտեցավ գետափին, նստեց այնտեղ դարսված գերանների վրա և սկսեց դիտել լայն ու ամայի գետը։ Բարձր ափից երևում էր լայնարձակ շրջակայքը։ Մյուս, հեռավոր

ափից հազիվ ինչ-որ երգ էր լսվում։ Այնտեղ, արևով ողողված անծայրածիր տափաստանում հազիվ նկատելի կետերի նման սևին էին տալիս քոչվորական վրանները (յուրտերը)։ Այնտեղ ազատություն էր, ապրում էին ուրիշ մարդիկ, որոնք բոլորովին նման չէին այստեղի մարդկանց, այնտեղ ասես կանգ էր առել ժամանակը, ասես դեռ չէին անցել Աբրահամի և նրա հյուտերի դարերը։ Ռասկոլնիկովը նստել էր, նայում էր ակնապիշ, անընդհատ. նրա միտքը փոխվում էր անրջանքի, հայեցողության. նա ոչ մի բանի մասին չէր մտածում, բայց մի ինչ-որ թախիծ հուզում ու տանջում էր նրան։

Հանկարծ Սոնյան կանգնեց նրա կողքին։ Նա հազիվ լսելի մոտեցավ ու նստեց նրա մոտ։ Դեռ շատ վաղ էր. առավոտյան ցուրտը դեռ չէր մեղմացել։ Սոնյան իր աղքատիկ, հին վերարկուով էր և կանաչ գլխաշորով։ Նրա դեմքին դեռ մնացել էին հիվանդության նշանները, դեմքը նիհարել էր, գունատվել, սմքել։ Նա սիրալիր և ուրախ ժպտաց Ռասկոլնիկովին, բայց, ըստ իր սովորության, ձեռքը երկչոտությամբ մեկնեց նրան։

Նա միշտ էլ երկչոտությամբ էր ձեռքը մեկնում Ռասկոլնիկովին, երբեմն նույնիսկ ձեռք չէր տալիս, վախենալով, որ նա չի վերցնի այն։ Ռասկոլնիկովը միշտ էլ ասես զզվանքով էր վերցնում նրա ձեռքը, միշտ էլ կարծես սրտնեղությամբ էր դիմավորում նրան, երբեմն համառորեն լռում էր նրա այցելության ամբողջ ընթացքում։ Պատահում էր, որ Սոնյան դողում էր նրա առջև ու խոր տխրությամբ էր հեռանում։ Բայց հիմա նրանց ձեռքերը չէին անջատվում։ Ռասկոլնիկովը հարևանցիորեն և արագ նայեց Սոնյային, ուշինչ չասաց ու նայեց գետնին։ Նրանք երկուսով էին, նրանց ոչ ոք չէր տեսնում։ Պահակը այդ պահին մի կողմ էր քաշվել։

Թե այդ ինչպես պատահեց, Ռասկոլնիկովը ինքն էլ չգիտեր, բայց հանկարծ ինչ-որ մի բան կարծես վերցրեց նրան ու նետեց Սոնյայի ոտքերին։ Նա լալիս էր ու գրկում Սոնյայի ծնկները։ Առաջին ակնթարթում Սոնյան սարսափելի վախեցավ, ու ամբողջովին գունատվեց։ Նա տեղից վեր թը-

ռավ ու դողալով նայեց Ռասկոլնիկովին։ Բայց նա անմիջապես, նույն ակնթարթում ամեն ինչ հասկացավ։ Նրա աչքերում անսահման երջանկություն շողաց. նա ամեն ինչ հասկացավ ու այլևս չէր կասկածում, որ Ռասկոլնիկովը սիրում է, անսահման սիրում է իրեն, որ վերջապես, եկել է այդ րոպեն...

Նրանք ուզում էին խոսել, բայց չէին կարողանում։ Արտասվում էին։ Երկուսն էլ դալկադեմ ու նիհար էին. բայց այդ հիվանդագին ու դալուկ դեմքերին արդեն շողում էր նորոգ դալիքի, նոր կյանքի համար լիակատար հարության արշալույսը։ Սերը նրանց հարություն տվեց, մեկի սիրտը կյանքի հորդառատ աղբյուրներ էր պարունակում մյուսի սրտի համար։

Նրանք որոշեցին սպասել և համբերել։ Նրանք սպասելու էին դեռ յոթ տարի, իսկ մինչև այդ ժամկետը լրանալը որքա՜ն անտանելի տառապանք և ինչպիսի՜ անսահման երջանկություն։ Բայց Ռասկոլնիկովը հարություն էր առել, և նա այդ գիտեր, լիովին զգում էր իր ամբողջ նորացած էությամբ, իսկ Սոնյա՜ն. Սոնյան էլ հո միայն նրա կյանքով էր ապրում։

Նույն օրվա երեկոյան, երբ արդեն փակված էին հանրակացարանները, Ռասկոլնիկովը պառկած էր տախտակամածի վրա ու մտածում էր Սոնյայի մասին։ Այդ օրը նրան նույնիսկ թվաց, որ կարծես թե բոլոր տաժանակիրները, իր նախկին թշնամիները, արդեն իրեն ուրիշ կերպ էին նայում։ Նա մինչև իսկ ինքն էր սկսում խոսել նրանց հետ, ու նրանք սիրալիրությամբ էին պատասխանում։ Նա այժմ այդ հիշեց. այդպես էլ պետք է լիներ. մի՞թե հիմա ամեն ինչ չի փոխվելու։

Նա մտածում էր Սոնյայի մասին։ Նա վերհիշեց, թե ինչպես էր շարունակ տանջում Սոնյային և հոշոտում նրա սիրտը. վերհիշեց նրա դալուկ, նիհար, փոքրիկ դեմքը, բայց այդ վերհուշերը այժմ գրեթե չէին տանջում նրան. նա գիտեր, թե ինչպիսի անսահման սիրով է քավելու Սոնյային իր պատճառած բոլոր տառապանքները։

Եվ ի՞նչ են անցյալի այդ բոլոր, բոլոր տանջանքները։ Ամեն ինչ, նույնիսկ իր ոճրագործությունը, նույնիսկ դատավճիռն ու աքսորը այժմ, առաջին պոռթկումի պահին նրան ինչ-որ արտաքին, տարօրինակ, ասես նույնիսկ իրեն չվերաբերող փաստ էին թվում։ Սակայն նա այդ երեկո չէր կարողանում երկար ու շարունակ մտածել որևէ բանի մասին, միտքը կենտրոնացնել դրևէ բանի վրա. նա այժմ ոչինչ էլ չէր կարող գիտակցորեն լուծել. նա միայն զգացմունքներով էր տարված։ Դիալեկտիկայի փոխարեն վրա էր հասել կյանքը, ու նրա գիտակցության մեջ պետք է ինչ-որ բոլորովին այլ բան առաջանար։

Նրա բարձի տակ դրված էր ավետարանը։ Նա մեքենայաբար վերցրեց այն։ Այդ գիրքը պատկանում էր Սոնյային, հենց այն գիրքն էր, որի մեջ Սոնյան նրա համար կարդում էր աղքատ Ղազարոսի հարությանը վերաբերող տեղերը։ Տաժանակրության սկզբում նա կարծում էր, թե Սոնյան նրա գլուխը տանելու է կրոնով, խոսելու է ավետարանի մասին ու նրան գրքեր է հրամցնելու։ Բայց նրան մեծագույն զարմանք էր պատճառում այն, որ Սոնյան ոչ մի անգամ չխոսեց այդ մասին, ոչ մի անգամ նրան նույնիսկ չառաջարկեց ավետարանը։ Իր հիվանդանալուց քիչ առաջ նա ինքն էր ավետարանը խնդրել Սոնյայից, ու վերջինս դա բերել և լուռ հանձնել էր նրան։ Մինչև այժմ Ռասկոլնիկովը չէր էլ բացել այդ ավետարանը։

Նա հիմա էլ չբացեց այն, բայց գլխում մի միտք ծագեց. «Մի՞թե հիմա նրա համոզմունքները չեն կարող լինել նաև իմ համոզմունքները, մի՞թե իմը չեն նրա զգացմունքները, գոնե նրա ձգտումները»։

Սոնյան նույնպես հուզված էր այդ ամբողջ օրը, իսկ գիշերը նույնիսկ դարձյալ հիվանդացավ։ Բայց նա այնքան երջանիկ էր, այնքան անսպասելիորեն երջանիկ, որ համարյա վախենում էր իր երջանկությունից։ Յոթ տարի, միայն յոթ տարի։ Իրենց երջանկության սկզբում, որոշ վայրկյաններում նրանք երկուսն էլ պատրաստ էին այդ յոթ տարին յոթ օր համարելու։ Ռասկոլնիկովը նույնիսկ չգիտեր էլ, որ նոր կյանքը իրեն ձրի չի տրվում, որ դեռ հարկավոր է

թանկ գնով առնել այն, նրա համար հատուցել մեծ, գալիք սխրագործությամբ...

Բայց այստեղ արդեն սկսվում է մի նոր պատմություն, մարդու աստիճանական վերափոխման պատմությունը, նրա աստիճանական վերածնման, մի աշխարհից հետզհետե մի այլ աշխարհ անցնելու, նոր, մինչև այժմ բոլորովին անհայտ իրականությանը ծանոթանալու պատմությունը։ Այդ կարող էր մի նոր վեպի թեմա լինել, իսկ մեր ներկա վեպը ավարտված է։

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Ես ուզում եմ, որ այն ամենը, ինչ տեսնում եմ, լինի այլ կերպ։

Ձեր մեջ սիրտ չկա, միայն ճշմարտություն է, ուրեմն՝ ճշմարիտ չէ։

Ֆ. Մ. Դոստոևսկի

I

Նպատակը երբեք չի արդարացնում միջոցը, եթե այդ միջոցը հանցագործությունն է։ Մինչդեռ ինչքան ու ինչքան մարդիկ (երբեմն նույնիսկ ժողովուրդներ) ոգբերգական մոլորության մեջ են ընկել, վկայակոչել են նույնիսկ ազգային շահերը, ենթադրելով, որ հանցագործությունը թույլատրելի է, միայն թե նպատակը լավ լինի։

Սակայն հանցագործությունը մնում է հանցագործություն, սակը չի կարող ապիտակ լինել, հանցագործությունը՝ բարի։ Բարի նպատակներով կատարվող հանցագործության դաղափարն այնքան էլ սովորական բան չէ և կարող է կյանքի ու կործանել մարդուն։

Ռոդիոն Ռոմանովիչ Ռասկոլնիկովը՝ Ֆ. Մ. Դոստոևսկու «Ոճիր և պատիժ» վեպի հերոսը, վճռել էր հանցագործություն կատարել, բայց, ինչպես ինքն էր մտածում՝ տրդտրացի և բարի հանցագործություն՝ չգիտենալով, չպատկերացնելով, որ «տարդարացի» հանցագործության մեջ նույնքան չարիք կա, որքան ամեն մի այլ հանցագործության մեջ։

Ստանալ ավելորդ, անպիտան մի մարդու՝ օգնելու համար պետական և օգտակար մարդկանց. ահա մի միտք, որ ծագում է տրամաբանությամբ և ապացուցելի է։ Տրամաբանորե՛ն ապացուցելի։ Իսկ եթե այդ միտքը տրամաբանությունն ավելացնենք նաև անձնազոհության տարրը (գոհում եմ ինձ հանուն այլոց), ապա այդ հրեշավոր գաղափարը կարող է ներկայանալ նույնիսկ լուսապատակի մեջ։

* * *

Վեպի առաջին մասի չորրորդ գլուխը նվիրված է նամակի վերլուծությանը, որտեղ Պուլխերիա Ալեքսանդրովնան որդուն հայտնում է գալիք առաջիկա ամուսնության մասին։ Նույն չորրորդ գլխում նկարագրված միջադեպն այն տնծանոթ աղջկա հետ, որին հարբեցրել էին և խաբել, բատ տմենայնի, տուաջին անգամ. և որին նույն նպատակով սպառում էր գեր պարոնը, ուղղակիորեն առնչվում է նամակի, Ավդոտյա Ռոմանովնայի և

հանցագործության պատճառների հետ (Ռասկոլնիկովը փորձում է պաշտպանել աղջկան և որպեսզի կարողանա նրան տուն ուղարկել, ոստիկանին է տալիս իր վերջին կոպեկները)։

Ռասկոլնիկովը խաբված աղջկան տեսնում է այն ժամանակ, երբ մրոտածված հանցագործության գաղափարը նոր ուժով էր համակել նրան։ Ի գեպ, մոր նամակի մասին մտածելիս, նա, ասես պատահմամբ, հիշում է փողը շահով տվող Ալյոնա Իվանովնային՝ «երկու թզթե մանեթանոցով, ինչպես այն... պառավն է ասում...»։ Խաբված աղջկա հայտնվելը նախապատրաստված է մի այլ զուգահեռով. քույրը՝ Ավդոտյա Ռոմանովնան, և «Սոնեչկա Մարմելադովան, հավերժական Սոնեչկան, քանի գեռ կա աշխարհը»։ Առաջ է գալիս նոր զուգահեռ՝ Ավդոտյա Ռոմանովնան և խաբված աղջիկը։ Ռասկոլնիկովը հիշում է սոցիոլոգներին, որոնք հաշվել են, որ ամեն տարի աղջիկների մի որոշակի տոկոսը դառնում են պոռնիկներ։ «Իսկ ի՞նչ կլինի, եթե Դունեչկան էլ հանկարծ այդ տոկոսի մեջ լինի... Մեկ կամ մյուս տոկոսի մեջ...»։

Ռասկոլնիկովը հասկանում է, որ քույրը իրեն զոհաբերում է եղբորը, մորը փրկելու համար. «Պարզ բան է՝ իր համար, իր բարեհարմարության համար, նույնիսկ մահից ազատվելու համար չի ծախվի, իսկ ուրիշի համար կծախվի։ Սիրելի, պաշտելի մարդու համար կծախվի, ահա թե որն է գործի բուն էությունը. եղբոր համար, մոր համար իրեն կծախի, ամեն ինչ կծախի։ Օ՜, այստեղ մենք հարկավոր դեպքում մեր բարոյական զգացմունքն էլ կխեղդենք. ազատությունը, հանգստությունը, նույնիսկ խիղճը, ամեն, ամեն ինչ հին իրերի վաճառքի շուկա կտանենք։ Թող կորի կյանքը, միայն թե մեր այդ սիրելյալ էակները երջանիկ լինեն։ Դեռ ավելին, մեր սեփական կայուսաբիկան կմոռոնենք, ճիզվիտներից կսովորենք ու, անշուշտ ժամանակավորապես, մենք մեզ կհանգստացնենք, կհամոզենք մեզ, որ այդպես էլ հարկավոր է, իրոք հարկավոր է բարի նպատակի համար, մենք այդպես ենք, որ կանք, ու ամեն ինչ պարզ է ցերեկվա լույսի պես»։

Այսպես Ռասկոլնիկովը խոսում է ոչ միայն քրոջ մասին։ Երրորդ դեմքից (նա) առաջինին անցնելը (մենք) միայն ոճական հնարանք չէ, երբ երկրորդ դեմքի մասին մի քիչ գժգոհությամբ կամ հեգնանքով խոսելիս անցնում ենք առաջին դեմքի հոգնակիին, ինչպես, օրինակ, արված է հետևյալ նախադասության մեջ. «... այստեղ մենք թերևս Սոնեչկայի վիճակից էլ չհրաժարվենք»։ Մեջ բերված օրինակում Ռասկոլնիկովը անեգոտակցորեն առաջին դեմքի հոգնակիի մեջ է առնում և իրեն՝ մենք «և՛ բարոյական զգացմունքը կխեղդենք, և՛ կազուիստիկա կմոռոնենք... մենք այդպես ենք, որ կանք...»։ Այս խոսքերի մեջ երևում է ինքը Ռասկոլնիկովը՝ սպանելու և թալանելու իր գաղափարով։ Նման արտահայտություններով, մի քիչ ավելի հետո խոսվում է հենց Ռասկոլնիկովի մասին. «Այնինչ հարցի դրական լուծման իմաստով ամբողջ անալիզը նա կարծես թե վերջացրել էր, կեղծ դրույթներով ապացույցներ բերելու իր ճարպկությունը տրվել էր ասելու նման, և նա իր մեջ դիտակցական առարկու-

թյուններ չէր գտնում։ Մոր նամակն այն վերջին կաթիլն էր, որ լցրեց բաժակը։

* * *

Վաշխառու պառավի առնչ կատարած փորձնական այցելությունից հետո Ռասկոլնիկովը հանկարծ հասկացավ, որ չի կարող և չի սպանի նրան։ Եվ չսպանեց։ Սակայն պայմաններն անբարենպաստ էին նրա համար։ Մորից նամակ է ստանում (հիշենք, որ Ռասկոլնիկովը համբուրում է նամակը), և անխուսափելիորեն նրա առջև հարց է ծառանում. հարկավոր է հենց հիմա, անմիջապես ինչ-որ բան ձեռնարկել։ Ռասկոլնիկովը հիշում է Մարմելադովին, ահռելի, անելանելի վշտով համակված նրա խոսքերը. «Հասկանո՞ւմ եք դուք արդյոք, հասկանո՞ւմ եք, հարգելի պարոն, թե ինչ է նշանակում, երբ այլևս գնալու տեղ չի լինում... Որովհետև հարկավոր է, որ ամեն մարդ կարողանա գեթ մի որևէ տեղ գնալ»... Նամակը մայրակում է Ռասկոլնիկովին, բորբոքում, ծայրագույն լարման է հասցնում նրա առանց այն էլ թալքայված ջղերը։ Մոր և քրոջ թշվառ վիճակը ստիպում է Ռասկոլնիկովին կատարելու անասելի մի բան, և միաժամանակ նրանց շտապ ժամանումը նրան դնում է բացառիկ վիճակի մեջ. նա՝ մարդասպանը, պետք է շփվի մոր և քրոջ հետ. միայն այդ մտքից կարելի է խելագարվել։ «Հետո, թերևս, ցնցվի, հիշելով, որ ես հիմա իրեն գրկեցի, կասի, թե ես զոհացա իր համբույրը»,— տառապում է Ռասկոլնիկովը այն մտքից, որ պետք է դրկի և հրաժեշտ տա քրոջը։

II

Ռասկոլնիկովի գաղափարը՝ մի սպանություն և հաղար բարի գործ, սմբապնդվում է մեծ անուններով։ Այդ անունները, և դրանց մեջ հատկապես Նապոլեոնի անունը, կարևոր օղակ են ապացույցների տրամաբանական շղթայում և հենց դրանք էլ, մեծ մարդկանց անունները, այդ գաղափարին վսեմ երանգ են տալիս։

Պատահական չէ, որ Ռասկոլնիկովը, հանցագործությունից հետո տանջվելով, փնտրելով իր սխալները, հանգում է հանկարծ «մի անսպասելի, կողմնակի մտքի».

«Նապոլեոն, բուրգեր, Վատերլոո, և՝ կոլեգիական ռեգիստրատորի վարձ, նոզկալի այրին, պառավը, վաշխառուն, կարմիր սնդուկը մահճակալի տակ, դե՛, սա ինչպե՞ս կմարսի թեկուզ Պորֆիրի Պետրովիչը... Որտեղի՞ց մարսի... էսթետիկան կխանգարի՝ որպես թե արդյո՞ք Նապոլեոնը ձեռքը կկարկի պառավի մահճակալի տակ։ Ո՜, անպետքի մեկը...»։

Իր այդ կողմնակի միտքը Ռասկոլնիկովը հետագայում հիշում է Սոնյայի հետ զրուցելիս. «... մի անգամ ես ինձ այսպիսի հարց տվի. եթե, օրինակ. իմ տեղը Նապոլեոնը լիներ և իր կարիերան սկսելու համար չլիներ ոչ Տուլոնը, ոչ Եգիպտոսը, ոչ էլ Մոնբլանով անցնելը, այլ այդ բոլոր

գեղեցիկ և հոյակապ բաների փոխարեն լիներ մի որևէ ծիծաղելի պառավիկ, կոչեցիկան ռեգիստրատորի այրի կին, որին պետք է ապանել, որպեսզի նրա անգուսիից հաներ փողերը (կարիերայի համար, հասկանո՞ւմ ես), ապա նա արդյոք կանե՞ր այդ բանը, եթե ուրիշ ելք չլիներ։ Արդյոք նրան չէ՞ր կասեցնի այն, որ դա ամենևին էլ հոյակապ բան չէ և... մեղսագործություն է»։

Ռասկոլնիկովն իր տեսության մեջ ապանության գեղագիտական կողմն էլ էր քննարկում։ Իհարկե, լավ կշռադատում էր։ Բայց հետո հանկարծ պարզվեց, որ ծայրերն իրար չեն գալիս։

* * *

Ապանությունից հետո շատ բան այլ կերպ եղավ։ Ռասկոլնիկովն ընդունում էր «իշխանով արյուն թափելը»։ Նա գրան էր հանգել, մտածելով Սոլոմոնի, Մուհամեդի, Նապոլեոնի, հասարակության զարգացման օրենքների մասին։ Իրոք թե, ուժեղ անհատները (երբ պետք է եղել) կանգ չեն առել արյուն թափելու առջև։ Խորտակել են նեղկան հանուն լավագույնի։

Հանցագործությունները օրինաչափ են, գտնում է Ռասկոլնիկովը։ Բոլոր մեծերը հանցագործներ են։ Դա հավանորեն շոյում էր նրա լսողությունը։ Ռասկոլնիկովը մարդկանց բաժանում էր սովորական մարդկանց և ուժեղ մարդկանց, որ ընդունակ են «նոր խոսք» ասելու, այդ իսկ պատճառով իրավունք ունեն թափելու սովորական մարդկանց արյունը։ Հավանաբար հենց այդ մտքերը (հանճարներ, նոր խոսք, մարդկություն, հանցագործություններ...) շոյում էին նրա լսողությունն ու երիտասարդական ինքնասիրությունը։

Համենայն դեպս, «կես տարի առաջ», երբ դեռ Ռասկոլնիկովը մտադիր չէր ոչ ապտնելու, ոչ էլ թալանելու, ուժեղ մարդկանց մասին իր հոդվածը շարադրել է անշուշտ, հաճույքով։

* * *

Տատանումները եկան շատ ավելի ուշ, լրջա, գուցե և հենց սմիս անց, երբ սկսեց նախապատրաստվել ապտնությանը։ Եվ որպեսզի հարցը վերջնականապես լուծի, նա տարտկությունները վերագրեց ոչ թե իրեն, այլ՝ գազափարին։ Գաղափարը, իրոք, լավն է, ինքն է վատը, թեև «խղճով արյուն թափելու այդ թույլտվությունը... իմ կարծիքով ավելի տարտփելի է, քան արյուն թափելու պաշտոնական, օրինական թույլտվությունը...»,— ասում է Ռազումիխինը։ Նա մի ամբողջ տմիս գրգռող մենախոսություններ էր արտասանում իր անզորության և տնվճռականության վերաբերյալ։

Ռասկոլնիկովը հրահրում էր ինքն իրեն. «Հը՞մ... այո... ամեն ինչ մարդու ձեռքումն է ու ամեն ինչ նա ալքաթող է անում հենց միայն վախկոտության պատճառով... այդ տրդեն տքսիմտ է...»։ Նրան հրա-

հրում էին հանգամանքները։ Պատահականությունները դառնում էին օրինաչափություն։ Անհրաժեշտ պահին նա պատահմամբ իմանում է, որ Լիզավետան՝ տակոսով փող տվող պառավի քույրը, սանը չի լինելու, անհրաժեշտ պահին պատահմամբ լսում է, թե ինչպես է պանդոկում մի անծանոթ ուսանող այն միտքը զարգացնում (միաք, որ ծագել է Ռասկոլնիկովի գլխում), թե լավ կլիներ սպանել այդ վաշխառու կնոջը։ «Սպանի՛ր նրան ու վերցրու նրա փողերը, ու դու դրանց միջոցով կարող ես օգտակար լինել ամբողջ մարդկությանը և աստվածահաճո գործեր։ Ի՞նչ ես կարծում, մի՞թե այդ փոքրիկ սնիրը չի արգարանա հազարավոր բարի գործերով։ Մի կյանքի փոխարեն հազար կյանք՝ փտումից ու քայքայումից փրկված։ Մեկ մահ և փոխարենը հարյուր կյանք, չէ՞ որ այստեղ հաշիվը պարզ է»։

Սպանի՛ր նրան... Այստեղ այս բայն ու նախադասությունն ամբողջությամբ ունեն ստորոգյալական, պայմանական եղանակ (եթե սպանես)։ Այսպիսին է մեջբերված հոդվածի կոնտեքստը, բայց նախադասության մեջ լսվում է նաև հրաման՝ գնա և սպանիր։ Հավանաբար ենթագիտակցորեն այդպես էլ հասկանում է այդ բառերը Ռոդիոն Ռասկոլնիկովը։ Դեռ ավելին՝ հավանաբար հենց այստեղ, պանդոկում, Ռասկոլնիկովի տեսական մտքերը, որոնք այդ դեպքից մի քանի ամիս առաջ շաղաղրվել էին նրա հոդվածում, առաջին անգամ «արդարացվորվում են» պրակտիկ. գործի դազափարով՝ բարոյապես արդարացված հանցագործությամբ։

Ռասկոլնիկովը գտնում է, որ իր ծրագրած գործը «թվաբանորեն ճիշտ էր։ Նա այդ մատծում է խեղճ ձիուկի մասին տեսած երազից հետո։ Ձիուն սատկացնելու չափ ծեծել էին՝ մտրակով, քեզով, լինգով... Եվ, չնայած թվաբանությանը, մարդկային իր ամբողջ էությամբ նա հասկանում էր, որ չի կարող սպանել ու թալանել։ «Տի՛ր,— ոգևորում էր նա,— ինձ ցույց տուր իմ ճանապարհը, իսկ ես հրաժարվում եմ իմ այս անիծված... ցընորքից»։ Եվ սակայն չհրաժարվեց. կործանեց իրեն, դեմ գնաց իր էությանը։ «Այդ ի՞նչ, ի՞նչ փորձանք եք բերել ձեր գլխին»,— ասում է նրան Սոնյան»։

III

Հանցագործությունից հետո արդեն Ռասկոլնիկովը հիշում է մահվան դատապարտվածի մասին։ Ինչ-որ տեղ նա կարդացել էր, որ մահվան դատապարտվածը «մահից մի ժամ առաջ ասում կամ մտածում է, որ եթե իրեն վիճակվեր ապրել մի որևէ բարձունքի, ժայռի վրա, այնպիսի նեղ տեղում, ուր կարելի լիներ միայն ոտքերը տեղավորել, իսկ շուրջը լիներ անդունդ, օվկիանոս, հավերժական խավար, հավերժական առանձնություն և հավերժական փոթորիկ ու այդպես, ինքը մի աթոռի ասաստծության վրա կանգնած մնար ամբողջ կյանքում, հազար տարի, հավիտենապես, ապա ավելի լավ էր այդպես ապրել, քան այժմ մեռնելը»։

Այդ խոսքերից հետո, որոնք ներշնչված են Վիկտոր Հյուգոյի «Փտ-

բիրի ստեղծագործ տեսարիցը», Ռասկոլնիկովը բացականչում է. «Միայն թե ապրել, ապրել ու ապրել։ Ինչ կերպ էլ որ լինի՝ ապրել... Ինչպիսի՞ ճշմարտություն, ասա՛ր ասված, ինչպիսի՞ ճշմարտություն։ Ստոր է մարդը... Եվ ստոր է նա, ով նրան գրա համար ստոր է անվանում»։

Ցուրաքանչյուր կենդանի էակ ապրում է, եթե որևէ հնարավորություն կա, անգամ ամենաողորմելին, ամենաչնչինը։ Աքսորում Ռասկոլնիկովը զարմանում է. «Մի՞թե նրանց (աքսորականների— Լ. Մ.) համար այդքան նշանակություն կարող է ունենալ արեի մի որևէ ճառագայթը...»։

Ռասկոլնիկովն իր մաքսիմալիզմով (ո՛չ, կյանքը ինձ մի անգամ է տրվում ու այլևս այն չի լինի, ես չեմ ուզում սպասել «համընդհանուր երջանկությանն») հակադրվում է «մի արշին տարածության» վրա ապրելուն։ Դրա համար էլ նա գիմում է հանցագործության։ Սակայն շրջանակը չի բացվում, այլ սեղմվում է։ Կյանքն ավելի անտանելի է դառնում։ Ռասկոլնիկովի բորբոքված գիտակցության մեջ երբեմն բռնկվում էին ստեղծված իրավիճակից դուրս գալու կայծեր. «Իմ կյանքը գեռ չի մեռել զառամ պառավի հետ մեկտեղ... Ես հո համաձայնում էի ապրել մի տրշին տարածության վրա»։

Ի հայտ եկած հույսերը հուսահատության մեկ այլ կողմն են։ Ռասկոլնիկովը թակարդն ընկած գազանի պես անհուսորեն դեսուդեն է նետվում, ինչպես փակ, ստոր տարածության մեջ։ Ռասկոլնիկովի խոսքը ես հուսահատությունից է։ «Սրիկա է մարդը», եթե նա ապրում է, երբ ապրելն իսկ անհնարին է. օրինակ՝ Մարմելադովների ընտանիքը[1], բայց «և սրիկա է նա, ով նրան գրա համար սրիկա է անվանում»։ Այս երկվությունն արտահայտում է Ռասկոլնիկովի հոգեվիճակը. մի կողմից ճիշ է, որ անհնարին է այդպես ապրել («ստոր է մարդը»), մյուս կողմից՝ խղճահարություն, անսահման կարեկցություն խեղճ, կյանքից հալածված մարդկանց նկատմամբ («ստոր է նա...»)։

IV

Իր բարոյական արդարացման համար՝ վկայակոչելով տշխարհի մեծերին և խորհրդածելով նրանց հանցավոր գործունեության մասին՝ Ռասկոլնիկովը ոչ մի տեղ չի ասում, թե հանցագործության իրավունքը տրվել է նապոլեոններին, որպեսզի նրանք օգնեն թշվառներին, «երկյուղած արարածներին»։ Սակայն Ռասկոլնիկովը միայն մեծերի անունները վկայակոչելով չէ, որ արդարացնում է իր հանցագործությունը. դա նրա համար շատ քիչ կլիներ. «Որպեսզի իշխեմ, որպեսզի բարիք գործեմ», առաջին հերթին իշխանություն է պետք։ Ի՞նչ լավ բան կա, որ դու ահա այդպես ընկար փողոց,— ասում է Ռասկոլնիկովը Սոնյային,— Պոլեչկան էլ կգը-

---

[1] *«Մարմելադով. այնպիսի «շաքարային ազգանուն է»,— նկատում է Դոստոևսկին վեպի սեպագիր օրինակներում։ Հավանաբար ինչ-որ կապ կա (ըստ հակադրության) Մարմելադովների այդպիսի ազգանվան և գաղը կյանքի միջև։*

նա։ Ես չեմ ուզում անցնել կոզքով ու լռիչ (վեպի սահգրություններից)։ Բարիք գործելու մասին խորհրդածելիս Ռասկոլնիկովը չի մտածում Նապոլեոնի մասին։ Իր հայացքների ողջ համակարգի համար հենակետային նշանակություն ունեցող այդ միտքը Ռասկոլնիկովն տվելացնում է իրենից։ Նա անընդհատ վերադառնում է այդ մտքին։ Նապոլեոնը վատ օրինակ է։ Ռասկոլնիկովը տարված չէ բարիք գործելու, ամբողջ մարդկության համար «նոր խոսք» ասելու վերացական երազանքներով։ Այդ մեծագոռոզ բառերն ու անունները լիովին համապատասխանում են իրար։ Ռասկոլնիկովը ցանկանում է պաշտպանել կղնկրեա, թշվառ մարդկանց, օրինակ՝ Սոնյային։ Օ՜, որքան է ցանկանում Ռասկոլնիկովը դժբախտներին տալ իր վերջին ունեցածը։ «Բժիշկ դանչեցեք, շուտ, ես կվճարեմ»,— բղավում է Ռասկոլնիկովը՝ հանձին ձիերի սմբակների առակ չափչափված մարդու՝ ճանաչելով Մարմելադովին։ Աչնուհետև, այդ ամբողջ տնարանի ընթացքում լսվում է Ռասկոլնիկովի մտահոգված ձայնը՝ «Ես կվճարեմ, կվճարեմ», «Ես կվճարեմ, ես շնորհակալ կլինեմ», «Նա ուշքի կգա, ես կվճարեմ», «Ես մարդ ուղարկեցի բժիշկ կանչելու, մի անհանգստացեք, ես կվճարեմ»...

Անվերջ կրկնվող «կվճարեմը» (ի դեպ Ռասկոլնիկովը վճարում է ոչ թե գողացած, այլ մոր ուղարկած փողերով) օգնության ճիչ է, դժբախտներին օգնելու պատրաստակամության ճիչ։

* * *

Ռասկոլնիկովն ապրում է քաղաքում, որի փողոցներն, ինչպես բաց վերքեր, չորս կողմից օգնության են կանչում։ Պետք է օգնել երեխա դրկած այս աղքատ կնոջը, այս աղքատ աղջկան, այս պառնիկներին և այս քաղցած, դատապարտված երեխաներին։ «Մի՞թե գու այստեղ, այս ու այն անկյունում չես տեսել երեխաներ, որոնց մայրերն ուղարկում են ողորմություն խնդրելու։ Ես իմանում էի, թե այդ մայրերը որտեղ և ինչպիսի պայմաններում են ապրում,— ասում է Ռասկոլնիկովը Սոնյային։

— Այնտեղ երեխաները լեն կարող մնալ իբրև երեխաներ։ Այնտեղ յոթ տարեկանը անառակ է ու գող։ Բայց լե՞ որ երեխաները Քրիստոսի կերպարն են»։

Փողոցն առավել ամբողջությամբ է ընդգծում և արտահայտում սոցիալական հակասությունները։

* * *

Փողոցը ոչ թե ֆոն է, այլ միջավայր, հող, որտեղ հասունանում է Ռասկոլնիկովի խռովքը։ Արդյո՞ք դա չէ զատեառը, որ Դոստոևսկին տյդքան մանրամասնորեն գրում է, թե ինչ է տեսնում ու զգում Ռասկոլնիկովը Պետերբուրգի փողոցներում, կայսրության մայրաքաղաքում։ Այս դլուխներն ամենաազդեցիկն են վեպում։

«Է՜հ, ի՞նչ ասես, որ էս Պիտերում չկա։ Հորից ու մորից չոկ ամեն բան կա։

— Դրանից չոկ, աղբոր ասեմ, ամեն բան էլ կա»,— քննարկում էին բնակարանը պատատուզ երիտասարդ բանվորները, որտեղ տպրում էր վաշխառու պառավը։

Կայարությունն մայրաքաղաքում, կամ ինչպես Սվիդրիգայլովն է ասում, «ամբողջ Ռուսաստանի վարչական կենտրոնում», տեղ չկա մարգարիտությանը, մայրաքաղաքը թշնամի է մարգուն։

* * *

Մահմեդի և Նապոլեոնի օրինակները, ինչպես մտածում էր Ռասկոլնիկովը, կօգնեն նրան սպանել ու թալանել, քանզի պաշտպանելու է իրավտղուրկներին, սոցիալապես ճնշվածներին։ Սակայն Ռասկոլնիկովին հանցագործության իրավունք ավող այս երկրորդ փաստարկն էլ («խղճով արյուն թափելը») պատմականորեն չի հիմնավորվում։

Այնուհետև, որտեղ Ռասկոլնիկովը, ինչպես թվում էր նրան, ամուր կանգնած է երկու ոտքերի վրա, մի ոտքով կոթծանվում է։ Նրան փորձանքի մեջ է գցում ոչ թե տրամաբանությունը, ոչ թե վերլուծությունը՝ այլ արդարության ձգտող սիրտը։ Սոնյան ասում է նրան. «Եվ ինչպե՞ս է որ, ինչպես է որ դուք ինքներդ ձեր վերջին ունեցածը տալիս եք ուրիշին, բայց սպանել եք կողոպտելու համար»։ Սակայն մյուս ոտքով էլ Ռասկոլնիկովն ամուր չէր կանգնած։

Նապոլեոնին, ասում է նա, ինչպես իսկական աիրակալի, ամեն ինչ թույլատրելի է, նա «չամչախում է Տուլոնը, Փարիզում կոտորած է սարքում»։ Բայց բանն այն է, որ երբ, օրինակ, 1795 թվականին Նապոլեոնը Փարիզում խեղդեց ռոյալիստների ապստամբությունը (Սուրբ Ռոխ եկեղեցու դավիթը, ինչպես գրում են պատմաբանները, լի էր արյունով ու դիակներով), ապա նա, մնացյալից բացի, կատարեց ոչ միայն իր կամքը, այլ՝ շատերի, գտնելով որոշակի շարժման առաջնորդը։ Եվ եթե լքեին ռոյալիստների ապստամբությունը և այն ճնշելու պատասխանատվությունը, այլ լիներ միայն Նապոլեոնը՝ սպանելու իր իրավունքով, ապա նրա համար ամեն ինչ ողբալիորեն կվերջանար։ Եթե տիրակալի իրավունքով նույն Սուրբ Ռոխ եկեղեցու գավթում Նապոլեոնը գեթ մի մտրգ սպաներ, նրան կդատեին որպես սովորական մարդասպանի։

Լև Տոլստոյն ավելի ճիշտ էր հասկանում Նապոլեոնին։ Ճիշտ է, նա մի այլ ժայրտհեղության մեջ է ընկնում «Պատերազմ և խաղաղություն» վեպում՝ ամեն ինչ բացատրելով պատմական հանգամանքներով և ժխտելով անհատական նախաձեռնությունը։ Ռասկոլնիկովն իր տեսությունները մտածելով ժամանակն իր իրադրությունների, ողբալիորեն սխալվում էր՝ ամեն ինչ բացատրելով անհատի գերով, ուժեղ մտրդու արյան իրավունքով։

V

Ռասկոլնիկովը զարմանում էր, թե ինչու չի հիշում Լիզավետային՝ «կարծես չի էլ սպանել»։ Բայց Լիզավետան, ինչպես և Ռասկոլնիկովը, գոհ էր։ Նույն պառավի գոհը։

Դոստոևսկին շարունակ նշում է, որ չնայած Ռասկոլնիկովը սպանել է, բայց նա մարդասպան չէ։ Նա հանցագործությամբ ըմբոստացել է հանցագործության դեմ։ Սակայն նա չհասավ սպասված արդյունքին։ Աշխարհում հանցագործությունների թիվը չնվազեց, ընդհակառակը, մի հանցագործությամբ էլ ավելացավ։

Պյոտր Պետրովիչ Լուժինը՝ Ավդոտյա Ռոմանովնայի փեսացուն, Ռասկոլնիկովի հակոտնյան, առաջին իսկ հանդիպման ժամանակ դաղդացնում է սիրո և կապանների մասին իր տեսությունը (Լուժինը և վաշխառու պառավը Ռասկոլնիկովի համար հավասարարժեք մարդիկ են)։ Ռասկոլնիկովը ասում է Սոնյային. «Լուժինը պետք է ապրեր և նողկալիություններ աներ, թե՞ կատերինա Իվանովնան պետք է մեռներ։

Լուժինն ուզում էր դուր գալ Ռասկոլնիկովին. «Դուրս է եկել, որ ես կիսում էի իմ կապան, կեսը տալիս էի մերձավորիս, ու մենք երկուսս էլ կիսով չափ մերկ լինք մնում։

... Իսկ գիտությունը ասում է՝ ամենից առաջ սիրիր միայն քեզ, որովհետև աշխարհում ամեն ինչ անձնական շահի վրա է հիմնված։ Սիր միայն ինքդ քեզ սիրես, գործդ էլ կդզես, ինչպես հարկն է, կապագ էլ լի կիսվի։ Իսկ անտեսական ճշմարտությունն ավելացնում է, որ հասարակության մեջ որքան շատ լինեն կարգավորված մասնավոր գործերը և, այսպես ասած, ամբողջական կապանները, այնքան նրա համար շատ կլինեն հաստատուն հիմքերը, և նրանում այնքան շատ կկարգավորվի ընդհանուր գործը։ Հետևաբար, վաստակելով միայն և բացառապես ինձ համար, ես հենց գրանով վաստակում եմ ասես թե բոլորի համար և գործն այնպես եմ տանում, որ մերձավորը պատված կապայից մի փոքր ավելի շատ բան սաանա...»։

Լուժինն իր հաշիվներում սխալվեց։ Տգավորություն գործելու փոխարեն նա բացահայտեց իրեն որպես Ռասկոլնիկովի գաղափարական հակոտնյա։ «Ինչ որ դուք քիչ առաջ քարոզում էիք, գրանից հետևություն արեք, և դուրս կգա, որ կարելի է մորթել մարդկանց...»,— նետեց Ռասկոլնիկովը Լուժինին։

Ռասկոլնիկովը ինքը «մորթեց» և ինքն էլ իր տեսությունը հորինեց, բայց Լուժինյան մորթելու տեսությունը նրան խիստ զայրացրեց։ Ռասկոլնիկովյան սպանությունը բոլորովին այլ է, բոզոք է լուժիններիր, շահագործման օրինականացված ձևերի, բռնության ու թալանի դեմ։ Այդպես էլ հակադրվում են միմյանց իշխանություն ձեռք բերելու ռասկոլնիկովյան և լուժինյան գաղափարները, և նրանք՝ Ռասկոլնիկովը և Լուժինը, ամենևին էլ երկվորյակներ չեն։ Ռասկոլնիկովը մորթում էր, որպեսզի չմորթեին։ Նա գտնում էր, որ հանցագործություն էլ կա, հանցագործություն էլ, և որ դրանք բոլորովին տարբեր բաներ են։ Ռասկոլնիկ-

կովը չարաչար սխալվեց և կործանվեց։ Ամեն սեպ չէ, որ սեպով դուրս կգցվի։ «Նա հիանալի ստել է, իսկ բնությանն ապավինել չի կարողացել»,— բնութագրում է Ռասկոլնիկովին Պորֆիրի Պետրովիչը։

Ի դեպ, Պորֆիրի Պետրովիչն իր քննչական հմտությամբ ոչնչով չի գերազանցում հանցագործությունը վերլուծող Ռասկոլնիկովին։ Պորֆիրին, եթե կուզեք, Ռասկոլնիկովի այն «ես»-ն է, որը վարում է քննությունը, համադրում է, վերլուծում։ Հիմնական քննիչն ինքը Ռասկոլնիկովն է։ Պորֆիրի Պետրովիչը (նա ազգանուն անդամ չունի) կարծես օգնության համար է արված նրան։

Դեռ չապանած ու չթալանած, Ռասկոլնիկովն օգնում է մերձավորներին, նրանց է տալիս վերջին ունեցածը, շտապում է բարի գործ կատարել՝ կարծես հավատացնելով մեզ, որ ամենաբարձր ու անհետաձգելի նպատակների համար, իրոք, անհրաժեշտ են Ալյոնա Իվանովնայի փողերը։

Ինքն աղքատ լինելով՝ օգնում է աղքատներին։ Ոչ թե տեսարանում է, այլ պարզապես օգնում։ Եվ որքան բնական, որքան լավն է նա իր այս դերում։ Ռասկոլնիկովը ձգտում է հասնել իր էությանն այդքան բնորոշ վիճակի։ «Օգնելու համար նախ պետք է այդպիսի իրավունք ունենալ»։ Ահա այս արտահայտության սեպագիր տարբերակը. «Որպեսզի դժբախտությանն օգնես, չէ՞ որ պետք է դրա իրավունքն ունենաս, այսինքն՝ հարուստ լինես»։ Այստեղ ուղղակիորեն ասվում է, թե խոսքն ինչ իրավունքի մասին է, և ում պետք է օգնել։ Սակայն սպանելով ու թալանելով՝ Ռասկոլնիկովը ոչ հարստացավ և ոչ էլ օգնելու իրավունք ձեռք բերեց։ Նա ընկավ իր «ես»-ի համար առնչալի, անելանելիորեն սարսափելի, անբնական ու բռնագրաված վիճակի մեջ։

* * *

Երբ ամեն ինչ վերջացած էր՝ Ռասկոլնիկովը գնում էր խոստովանելու, հանկարծ ցանկացավ «զվարճության համար» ողորմություն տալ երեխա գրկած կնոջը։ Իր այս խոսքերով («ողորմություն տալ զվարճության համար») Ռասկոլնիկովը ծաղրում է իրեն, թալանելու և օգնելու իր գաղափարները։ Նա լրջորեն երազում էր պաշտպանել աղքատությունից ճնշվածներին, մինչդեռ անհեթեթություն ստացվեց։ (Փակագծերում նշենք, որ ինքնաբնութագրող խոստովանությունների պահին Ռասկոլնիկովը հանկարծ ասում է Սոնյային. «Նրա համար չսպանեցի, որ միջոցներ ու իշխանություն ստանալով, մարդկության բարերարը դառնայի։ Այդ դատարկ բան է։ Ես սոսկ սպանեցի, սպանեցի ինձ համար, միայն ինձ համար...»)։

* * *

Ռասկոլնիկովն ինչ-որ բանով նման է Մակար Դևուշկինին՝ աղքատ և թշվառ աղքատության մեջ ծիծաղելի առպետին, անսահման բարի սրտով

Դոն Քիշոտին (հայանի է, թե որքան բարձր էր դնահատում Դոստոևսկին Սերվանտեսի վեպը)։ Ռասկոլնիկովը, որպես խեղճերի լիրականացած պաշտպան (նրա այդ ձգտումը ծիծաղելի ու ողբերգական ձևով լիրականացավ), նման է Դոն Քիշոտ ասպետին։ «Ինձ թվում է որ, իրոք, մեծ մարդիկ աշխարհում պետք է մեծ տխրություն ունան»,— ասում է Ռասկոլնիկովը, և նա սքանչելի է իր այդ մեծ տխրության մեջ։ Բայց նա թունավորեց իրեն՝ ուժեղ անհատի իր գաղափարներով, հանցագործությամբ, սեփական «էսը» հաստատելու երազանքով։ Ռասկոլնիկովն ասում է արտաքինից աղդեցիկ, բայց ճիրքուստ կասկածելի աֆորիզմներ. «Ով կարող է շատ բաների վրա թքել, նա էլ օրենսդիր է նրանց մոտ, իսկ ով բոլորից ավելի համարձակություն է ցուցաբերում, նա բոլորից ավելի իրավացի է... Իշխանություն է տրվում միայն նրան, ով համարձակվում է կռանալ ու վերցնել այնտ։ Նա հանգեց իր էությանը ներհակ գաղափարների, որոնք, ասենք, բնորոշ են մեծ հավատաքննչին («Կարամազով եղբայրներ»)։ «Աղատություն, իշխանություն, իսկ գլխավորը՝ իշխանություն։ Բոլոր երկյուղած արարածների, ամբողջ մրջնանոցի վրա»,— բացականչում է Ռասկոլնիկովը, տրոհելով այս նախադասությունն տյնտեղ, որտեղ քերականորեն գրա կարիքը չի զգացվում։ Պետք է լինի. «իսկ գլխավորը՝ իշխանություն բոլոր երկյուղած արարածների, ամբողջ մրջնանոցի վրա...»։ Բայց այսահեղ ուրիշ, ավելի ճիշտ կանոններ են։ Արտահայտության վերջին մասը, որպես ինքնուրույն նախադասություն, Դոստոևսկին սկսում է մեծատառով, որպեսզի արտահայտի իր հերոսի վերջին մունքն ու հոգու ճիչը[1]։

Որդուն ուղարկած նամակում Պուլխերիա Ալեքսանդրովնան գրում է. «Սրտումս վստահ կամ, թե չլինի՞ դու էլ ես տարվել նորագույն, մոդալական անհավատությամբ. եթե այդպես է, ապա ես աղոթում եմ քեզ համար...»։ Մոր անհանգստությունն արդարացվում է։ Նրա որդին, նրա պաշտելի Ռոդյան, ոչ միայն տարվել է մոդայիկ դարձած «անհավատությամբ», այլև հորինել է իր սեփական տեսությունը բացառիկ մարդկանց մասին, ովքեր իրավունք ունեն «իրենց գաղափարի իրագործման համար թույլ տալ սպանություն, արյունահեղություն»։

Սակայն կարդալով այդ թեմայի շուրջ գրված որդու հոդվածը, Պուլխերիա Ալեքսանդրովնան ուրախանում է, և ոչ թե տարտափում։ Հոդվածը դառնում է նրա հպարտության ու խորհրդածությունների առարկան։ Որդին տպագրվում է։ Հորը չհաջողվեց (բանաստեղծություններ էր գրում, հետո մի վիպակ գրեց), իսկ այ, որդին, ավելի տաղանդավոր, ավելի հաջողակ է. «Մեր գիտական աշխարհում շատ շուտով գու կլինես առաջին մարդկանցից մեկը, եթե ոչ ամենառաջինը»։

Սակայն շատ շուտով, ավա՜ղ, սկսվեցին սև օրերը։ Մի տարուց ավելի տանջվելուց հետո, ցնորվածության ու տենդի մեջ իր մահկանացուն կնքեց նրա մայրը։ Ռասկոլնիկովն ուզում էր փրկել մարդկանց, «ուներ

---

[1] Լեղվաբանության մեջ ոճաբանական այս ձևը կոչվում է պարցելացում։

հոյակապ ու հաճելի մի նպատակ», բայց և մոր կորստյան պատճառը դարձավ։ Կորուստները մոլորության մասշտաբների, ողբերգության չափերի վկայությունն են։

* * *

Ռասկոլնիկովի տեսությունը պատկաղերծված է։ Ավելին, նրա հիմնական գաղափարը վարկաբեկվում է «նոր խոսքի» զանազան տարատեսակների տրտատավորությամբ։ Ռազումիխինը եռանգուն կերպով հերքում է հասարակության զարգացման օրենքների մասին եղած պարզունակ ու շինծու պատկերացումները։ «Ամբողջ կենսական գաղտնիքը երկու տպագրական մամուլում է տեղավորվում»։ Ռասկոլնիկովը վճռականորեն համամիտ չէ նրանց հետ, ովքեր գտնում են, որ «սոցիալական սիստեմը, ծագելով որևէ մաթեմատիկական մաքից, անմիջապես կկազմակերպի ամբողջ մարդկությանը ու մի վայրկյանում նրան արդար ու անմեղ կդարձնի, և գա կկատարվի ամեն մի կենդանի պրոցեսից առաջ, առանց որևէ պատմական ու կենդանի ճանապարհ անցնելու»։

Ըստ «Ոճիր և պատիժ» վեպի սյուժեի, այս թեմային երկրորդական տեղ է հատկացված, սակայն Դոստոևսկին չափազանց հետաքրքրվել է դրանով։ Նա (և՛ իր հրապարակախոսության մեջ, և՛ «Կարամազով եղբայրներում») զգուշացնում էր, կոչ էր անում թա կանգնել սխալ ուղիներից, որոնք գուցե և արամարանորեն անթերի են ու գրավիչ, բայց անտեսում են գոյություն ունեցող իրականությունը և այդ իրականության մեջ ապրող մարդուն։ «Միայն տրամաբանությամբ չի կարելի մարդկային բնությունը հաղթահարել»,— վրդովվում է Ռազումիխինը։ Նրա խոսքերն, իհարկե, վերաբերում են նաև Ռասկոլնիկովին, բայց հիմնականում ուղղված են սոցիալիստների, «մեխանիկական սոցիալիզմի» գաղափարների դեմ։

Անդրեյ Սեմյոնովիչ Լեբեզյատնիկովը (Դոստոևսկու վերջաբերմունքը նրա նկատմամբ երևում է ազգանունից. лебезить նշանակում է քծնել, ստորաքարշել) կարծես թե դրդում է Ռազումիխինին՝ հոստատելով, որ «ամեն ինչ միջավայրից է, իսկ մարդն ինքը ոչինչ չէ»։

* * *

Սակայն Լեբեզյատնիկովին հակադրվում է ոչ թե Ռազումիխինը, այլ Լուժինը՝ իր խելքով, իր լկտի եսասիրությամբ ու ագրեսիվ սոցիալիզմով։ Լեբեզյատնիկովը չափազանց զգեհիկ է ու ստոր, որպեսզի նրա հետ բանավիճեր Ռազումիխինը։ Բայց Լուժինն էլ գրեթե չի վիճում Լեբեզյատնիկովի հետ, բավարարվում է միայն առարկություններով։ Լեբեզյատնիկովն ինքն է իրեն մերկացնում, ծաղրում։ Նրան հակատեսակելու կարիք էլ չկա, բավական է լսել նրան.

«Գրոշը տանի, ես երբեմն երազում եմ, որ եթե ինձ մարդու տան,

թու, եթե ես ամուսնանում (լինի գա բուրժուական թե օրինական ամուսնություն, այդ միևնույն է), ես ինքս կարծես թե սիրեկան կրերի կնոջս մոտ, եթե նա երկար ժամանակ սիրեկան լցներ. ընկերս,— կասեի ես իմ կնոջը,— ես քեզ սիրում եմ, բայց նաև ցանկանում եմ, որ դու ինձ հարգես, այլ թե ինչ...»։

Իր աննրբազգացությամբ Լերեզյանիկովն իրոք հավատում է «սոցիալիստական» այդ ամբողջ անհեթեթությանը։ Նա սարսափելի հիմար բաներ է ասում և, իր կարծիքով, սարսափելի անկեղծ. դրա համար էլ, հիշեք ասածս, նա պաշտպանում է Սոնյային, որին լուծիչը ուզում էր անվանարկել որպես գողի։ Լերեզյանիկովի ազնիվ տրտունջը լիովին համապատասխանում է նրա «սոցիալիստական» համոզմունքներին։

Դոստոևսկին «մեխանիկական սոցիալիզմի» մասին ճիշտ էր գրում, սակայն, ավաղ, նա սոցիալիզմը գոհհկացնողների գաղափարները նույնացնում էր իսկական սոցիալիզմի հետ։ «Սոցիալիզմը մարդու վիճակը երբեք կարգավորելու հուսահատական փորձ է միայն։ Նրանք կարգավորում են այն բռնությամբ և ասում, որ հենց դա է ազատությունը։ Իսկ որպեսզի նա չառ էլ չհոխորտա, ապա չափազանց սիրում են հայտնել այն կարծիքը, թե մարդն ինքն էլ միայն մեխանիկա է»,— գրել է Դոստոևսկին «Ոճիր և պատիժ» վեպի նախապատրաստական նյութերում։ Դոստոևսկին տեսնում և ծաղրում էր լերեզյանիկովներին (և նա իրավացի էր), բայց նա սխալվում էր՝ սոցիալիզմը և Չերնիշևսկուն նույնացնելով Լերեզյանիկովի հետ։ Եվ ոչնչումմենոյնիվ, Դոստոևսկու մերկացնող պաթոսը պաշտպանում էր շարժումը գոհհկաբաններից, որոնք ի վիճակի էին կործանել այն։ Լերեզյանիկովները ոչ թե մարմնավորում են սոցիալիստներին, այլ վարկաբեկում են նրանց և չափազանց վտանգավոր են սոցիալիզմի համար։

VIII

Ռասկոլնիկովը կողոպտածից չօգավեց անգամ։ Մինչդեռ Սվիդրիգայլովը, Ռասկոլնիկովի երկվորյակը («Ես արդյոք չասացի՞ որ մեր մեջ մի ինչ-որ ընդհանուր բան կա, հը՞»,— ասում է Սվիդրիգայլովը Ռասկոլնիկովին»), կարելի է ասել, և՛ սպանել է, և՛ կողոպտել, և՛ օգտվել կողոպտածից։ Ավելին, հատկապես Սվիդրիգայլովն օգնեց Սոնյային և Կատերինա Իվանովնայի որբուկներին, նրանց, ում ուզում էր օգնել Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը մի ուրիշ Ռասկոլնիկով է։ Բացատրելով Ավդոտյա Ռոմանովնային, թե ինչու է նրա եղբայրը՝ Ռոդիոն Ռոմանովիչը, մարդ սպանել, նա վկայակոչում է իրեն, պարզվում է, որ ինքն էլ համամիտ է նույն տեսությանը, որն այդպիսի տառապանքով հաստատեցրել ու իր ավարտին էր հասցրել Ռասկոլնիկովը. «Ոչակի չորացրածությունը թույլատրելի է, եթե գլխավոր նպատակը լավ է։ Ոչակի չորիք և հաբյուր բարի գործ։ Սոֆյա Սվիդրիգայլովը չարագործություն էր կատարում տանց մատածելու «ոչի՞լ է. արդյոք, մարդը», թե՞ ոչ, չատապկով, չար-

դարձնելով իր քայլերը՝ Նապոլեոնին վկայակոչելով։ Բարի գործերի մասին միայն անդամ փոխառված է Ռասկոլնիկովից։

Սվիդրիգայլովը խզճի խայթ չի զգացել։ Նա լկտի մարդ է։ «Հասկանում եմ, թե ինչ հարցեր են ձեզ դրաղեցնում,— ասում է նա Ռասկոլնիկովին,— բարոյական՞, թե՝ ինչ. քաղաքացու և մարդու հարցե՞ր։ Դուք այդ մի կողմ թողեք, հիմա դրանք ձեր ինչի՞ն են պետք, քահ-քահ։ Նրա համար, որ դեռևս և՛ քաղաքացի եք, և՛ մարդ։ Եթե այդպես է, ապա հարկավոր չէր բիլը խոթել. չէ՞ որ դա ձեր գործը չէր»։ Այս իմաստով Սվիդրիգայլովն ավելի ամբողջական մարդ է (գաղափարների և խառնվածքի միջև հակասություն չկա)։ Հավանաբար ճիշտ կլիներ ասել, որ նա ամբողջական մարդ էր, քանի դեռ չէր հանդիպել Ավդոտյա Ռոմանովնա Ռասկոլնիկովային։ Սվիդրիգայլովը սիրում էր նրան («ի վերջո, ես չէի կարողանում տանել նրա շրջագդեստի շրշյունը»... «Թողեք համբուրեմ ձեր շրշագդեստի ծայրը, թողեք, թողեք»)։

Ավդոտյա Ռոմանովնային խաբեությամբ իր սենյակ տանելուց հետո Սվիդրիգայլովը նրան թույլ է տալիս հեռանալ, որովհետև սիրում էր։ Թողնում է հեռանալ, երբ կարող էր օգտվել հանգամանքից։ Նա վայելք էր որոնում, իսկ հիմա սեր է ազերբում։ Անառակությունն ու կանայք նրան չեն փրկում, նրան կարող է փրկել միայն սերը, իսկ սեր չկա։ Կյանքը դատարկ է ու անհետաքրքիր։ «Բայց ես անկեղծորեն կասեմ ձեզ, որ շատ եմ ձանձրանում»։ Նա իսկապես շատ բարեգործություններ է կատարում, մինչև կյանքն ինքնասպանությամբ ավարտելը։ Բայց գրքանք չկանգնեցրին Սվիդրիգայլովին, չկապեցին նրան կյանքի հետ։ Նա չափազանց խորն էր դդում, որ տանուլ է տվել կյանքը. որ իր կյանքն անհուսորեն ամայացած է։ Մահվանից առաջ տեսած երազներում նա մերկացնում է իրեն. ինքնասպան ազչիկ..., հնգամյա անառակ..., զրկվելի մուկ՝ անկողնում, ծոցում, ամենուրեք... «Ամբողջ գիշեր մղձավանջ»։ Ըստ էության դասվում է նախկին Սվիդրիգայլովը։ Այս Սվիդրիգայլովը ապառնում է նրան՝ նախկինին, բայց ինքն էլ դեռ շատ թույլ է և գատապարտված է մահվան։ Նա կապանի է ինքն էլ կմեռնի։

Սվիդրիգայլովը շարիք էր գործում և առաջադիմում։ Մարդը նրա մեջ խոսեց ավելի ուշ, մինչդեռ Ռասկոլնիկովի մեջ միշտ էլ ապրում էր մարդը. ահա թե ինչու նա չնայած սպանեց, բայց բարոյական սահմանը խախտել չկարողացավ։ Սվիդրիգայլովը Ռասկոլնիկովի «խղճով աբյուն թափելու» տեսության մեկ այլ ձախողումն էր։ Սվիդրիգայլովը խախտեց այդ սահմանը, նա, ինչպես ասում են, ավելի զարգացած փուլում ցույց տվեց Ռասկոլնիկովի վարդապետության ողջ հրեշավորությունը։

* * *

Ռասկոլնիկովը շարունակում է ապրել, որովհետև հանցագործության դիմելով հանդերձ՝ չկարողացավ խախտել բարոյական սահմանը։

Սվիդրիգայլովն ինքնասպան է լինում, որովհետև նա խախտել էր այդ սահմանը, շատ հեռու էր գնացել։ Սվիդրիգայլովը ուժեղ, հակասական ու

ողբերգական կերպար է։ Նրա մեջ գիվային ու գրավիչ ինչ-որ բան կա (լսեմ ենք այդ խոսքից)։ Այս կերպարը մեր մեջ համակրանք է առաջացնում ոչ միայն այն պատճառով, որ մենք ծանոթանում ենք նրա հետ, երբ իրեն ազնիվ ու մեծահոգի է պահում, այնքան ազնիվ, որ ինքնասպան է լինում, այլև իր խոր մտքով, շատ բան տեսնելու և հասկանալու կարողությամբ։ «Գրողը ասեց, մարդիկ հարբեցողություն են անում, կրթված երիտասարդությունն անգործությունից տարվում է անիրագործելի երազներով ու անուրջներով, այլանգակվում թեորիաներով»։

Տեսություններով այլանդակվող երիտասարդության թվում է նաև Ռոդիոն Ռասկոլնիկովը։

Սվիդրիգայլովը կարողանում է իր անսովոր մտքերին ասացվածքների ձև տալ. «Աշխարհում շիտակությունից ավելի դժվար և շողոքորթությունից ավելի գյուրին բան չկա։ Եթե շիտակության միայն մեկ հորյուրերորդական մասը կեղծ է, ապա իսկույն դիսոնանս է տեղի ունենում, և ընթան հետևում է ականդալը»։ «Ռուս մարդիկ առհասարակ լայնաթափ մարդիկ են, Ավդոտյա Ռոմանովնա, լայն են ինչպես իրենց երկիրը ու շափազանց հակված են գեպի ֆանտաստիկականը, խառնաշփոթը»։ Հետագայում Դոստոևսկու վերջին վեպում՝ «Կարամազով եղբայրներում», Դմիտրին կասի. «Ոչ, լայն է մարդը, նույնիսկ շափազանց լայն, ես կնեղացնեի»։

Ռոֆայելյան տիրամոր մասին Սվիդրիգայլովի գատողությունները մասնագիտորեն հետաքրքիր են. «Սիքսթինյան տիրամոր գեմքը հո ֆանտաստիկ է, խելքը գցած վշտահար գուշակ կնոջ դեմք է, դուք այդ չե՞ք նկատելը։ Նկատել ենք, բայց երբ արդեն կարդացվել էր «Ոճիր և պատիժ» վեպը. հենց դա էլ գատողության ինքնատիպության ու ճշտության վկայությունն է։

Սվիդրիգայլովի խորաթափանցությունն այնպիսին է, որ նրա շատ մտքեր, ինչպես Դոստոևսկու գրքերից շատ բան, ինքնուրույն արժեք են ստանում բոլորովին այլ, հեռավոր ու չգուշակվող կոնտեքստներում։ Ինձ, օրինակ, միշտ թվացել է, որ Սվիդրիգայլովի ահա այս խոսքերը՝ «Ոչ, հոյրենիքում ավելի լավ է, տյուտեղ դոնե ամեն բանի համար ուրիշներին ես մեղադրում ու ինքդ քեզ արդարացնում» ուղղակիորեն վերաբերում են մեզ։ Ինձ նույնիսկ թվում է, որ մենք ուզում ենք ոչ այնքան ուրիշներին մեղադրել, որքան մե՛զ ցույց տալ։ Բայց վերադառնանք մեր թեմային։

Սվիդրիգայլովի կերպարը հարուստ է իր բազմակողմանիությամբ։ Նա հետաքրքիր ու խորն է և՛ որպես Ռասկոլնիկովի երկվորյակ, և՛ որպես ինքնուրույն կերպար, որը թերևս Ռասկոլնիկովից հետո ամենից ավելի աչքի ընկնողն է։

IX

Ռասկոլնիկովը չէր կարող պատիժ չկրել։ Նա ուզում էր դատաստանի առջև կանգնել։ «Ռուսկի վեստնիկի» հրատարակիչ Մ. Ն. Կատկովին գրած իր նամակում (պահպանվել է սևագիր օրինակը) Դոստոևսկին ասում է. «Իմ վեպում ակնարկ կա նաև այն մասին, որ հանցագործության հա-

մար արվող իրավաբանական պատիժը շատ ավելի քիչ է վախեցնում հանցագործին, քան մտածում են օրենսգիրները. դա մասամբ նրանից է, որ հանցագործն ինքն էլ բարոյապես պահանջում է այն»:

Որպեսզի վեպում ավելի խորությամբ բացահայտվի այդ միտքը, Դոստոևսկին ընդգծում է, որ Ռասկոլնիկովը քրեականորեն պատասխանատու չէ, օրենքը նրա համար սարսափելի չէ, քանզի նրան ուղեկցում է հոգողությունը և իր դեմ խոսող ոչ մի հանցանշան չկա։ Եվ որպեսզի լրիվ հանգստացնի հանցագործին, Դոստոևսկին խաղի մեջ է մտցնում նեղկարար Նիկոլային, որը զբաղարտում է ինքն իրեն և պատրաստ է կատարածի համար պատասխան տալ (Ռասկոլնիկովի կատարած հանցանքի)։

Թվում է, թե ապանությունն իր վրա վերցրած Նիկոլայը մեծ ծառայություն է մատուցել Ռասկոլնիկովին։ Սակայն քրեականորեն ազատ հանցագործը բարոյապես դեռևս ազատ չէ։ «Մտածում էի՝ հիմա այդ մարդը կգա, ինքը կգա, այն էլ շատ շուտ. նթե հանցավոր է, ոնպայման կգա,— մտածում է Գորֆիրի Պետրովիչը։— Մի ուրիշը չի դա, իսկ սա կգա»։

«Ոճիր և պատիժ» վեպի վերնագրում իսկ պատիժը հոմանիշ է մարդ բառին։ Չէ՞ որ պատիժն անխուսափելի է, քանի որ հանցագործը մարդ է։ Եթե մարդ է, ուրեմն կպատժվի, ինքն իրեն կպատժի («Մի ուրիշը չի դա, իսկ սա կգա»)։ Ինչպես ասում է Գրիգոր Նարեկացին. «Դատակնիքն է գաժան հատուցմանն, մարդի մտոյանում արձանագրվածս։ Որքան շատ են շանհանգստանալու օրինական հիմքերը, այնքան բարոյապես ավելի շատ է տառապում Ռասկոլնիկովը։ Պատահական չէ, որ ինքն իրեն մատնեց, երբ հայտնվեց «մարդասպանը»։ Հաշտության բարձրագույն կետը դարձավ նաև բարոյական տառապանքի բարձրակետը։ Որքան շատ էին քրեական հայողությունները, այնքան մեծ էր տառապանքը։

Ռասկոլնիկովը կարող էր դիմադրել օրենքին, և բավականին հաջող ելքով։ Այդ մասին նրան ասում է քննիչ Գորֆիրի Պետրովիչը։ Նույն Գորֆիրի Պետրովիչը հասկանում է, որ Ռասկոլնիկովը չի կարող դիմանալ ներքին հակասությանը, խղճի դատապարտանքին։ Ահա թե ինչու Դոստոևսկին գրում է՝ «գտնվելով բանտում և լինելով ազատ...»։

X

Ռասկոլնիկովն ազատություն ձեռք բերեց, երբ ազատվեց իր սարսափելի դաղանիքից, ազատությունը եկավ պատժի հետ միասին։ Եվ այսուհետև, ազատության մեջ, այսինքն բանտում, Ռասկոլնիկովը վերստին, նորից ու նորից խորհրդածում է կատարած հանցագործության մասին, փորձում է գտնել իր ծրագրերի ողբերգական ձախողման պատճառները. «Իմ խիղճը հանգիստ է։ Իհարկե, քրեական հանցագործություն է կատարվել, իհարկե, խախտված է օրենքի տառը և այլուն և թափված, դե ուրեմն հանուն օրենքի տառի վերցրեք իմ գլուխը... ու ավարտվի գնացս։ Իհարկե, այդպիսի գեպքում նույնիսկ մարդասիրության շատ բարձրագույն, սրանք իշխանություն չէին ժառանգել, այլ իրենք էին գալիս ոտ, հենց

իրենց առաջին քայլերն անելիս պետք է որ մահապատժի ենթարկվեին։ Բայց այդ մարդիկ դիմացան իրենց աբարքներին, դրա համար էլ նրանք իրավացի են, իսկ ես չդիմացա, հետևաբար իրավունք չունեի ինձ թույլ տալ այդ քայլը։ Ռասկոլնիկովը վերջապես հանգում է այն մտքին, որ սխալը ոչ թե տխզնով աչյուն թափելու տեսության մեջ է, այլ՝ իր, պարզապես նա այն մարդը չէ, նա անընդունակներից է։

Սակայն այստեղ էլ՝ աքսորում, ազատության մեջ, մարդկային բնությունը չդավաճանեց Ռասկոլնիկովին. նա ենթագիտակցորեն, զգում է իր կողմից արդարացվող տեսության հրեշավորությունը, որը մի անգամ արդեն հասցրեց նրան աղետի։ Ամոթինվելով, նա հիշեց այն երազները, որ տեսել էր տաքության ու զառանցանքի մեջ պառկած վիճակում։ «Դա անրջում էր, որ իբր թե ամբողջ աշխարհը մատնված է ինչ-որ սարսափելի, լսված ու չտեսնված ժանտախտի... Բոլորը անհանգիստ էին ու միմյանց չէին հասկանում, ամեն մեկը կարծում էր, որ միայն ինքն է ճշմարտություն ասում, ու նայելով ուրիշներին՝ տանջվում էր, կուրծքը ծեծում, լալիս էր ու հեծկլտում... Չգիտեին ում մեղադրել, ում արդարացնել։ Մարդիկ ինչ-որ անմիտ ցասումով սպանում էին իրար... Քաղաքներում ամբողջ օրը ահազանգ էին տալիս, կանչում բոլորին, բայց թե ով և ինչի համար էր կանչում, այդ ոչ ոք չգիտեր, ու բոլորն էլ անհանգիստ էին։ Թողեցին ամենասովորական արհեստները, որովհետև ամեն մեկն առաջարկում էր իր մտքերը, իր ուղղումները ու չէին կարողանում համաձայնության գալ. հողագործությունը կանգ առավ։ Տեղ-տեղ մարդիկ խմբվում էին, համաձայնում որևէ բանի մասին, երդվում էին չբաժանվել, բայց իսկույն, բոլորովին ուրիշ որևէ բան էին սկսում, քան հենց այդ պահին իրենք էին առաջարկել, սկսում էին մեղադրել իրար, լսվում էին ու միմյանց կոտորում... Ամբողջ աշխարհում միայն մի քանի մարդիկ կարող էին փրկվել, դրանք մաքուր և ընտրյալ մարդիկ էին, որ կոչված էին մարդկանց նոր ցեղ ու նոր կյանք սկսել, նորել ու մաքրել երկիրը, բայց ոչ ոք և ոչ մի տեղ չէր տեսել այդ մարդկանց, ոչ ոք չէր լսել նրանց խոսքերն ու ձայները»։

Այստեղ խոսվում է Ռասկոլնիկովի տեսության հասարակական վտանգի՝ հանցագործություն կատարելու ընտրյալների իրավունքի մասին։ Այն կարծես թե ներկայացված է հետագա զարգացման մեջ։ Ցույց է տրված, թե ինչ կարող է լինել, երբ այդ տեսությանը հավատան նաև Ռասկոլնիկովի հետևորդները։ Եզրակացությունները աներևակայելի են։ Ընդ որում, բարիք գործելու ռասկոլնիկովյան խոստումն այստեղ չի էլ հիշատակվում։ Բարի գործերը հանցագործության փոխարեն կամ հանցագործության շնորհիվ, միայն խայծ են, պատրանք։

XI

«... Ռասկոլնիկովը հանցագործություն էր գնում՝ մարդկանց հետ միանալու, նրանց օգնելու համար, սակայն հանցագործությունը օտարացրեց նրանից։ Ներսն թվաց, թե այդ բոպեին կարծես մերաստով ինքն իրեն

կտրեց ամենքից և ամեն ինչից։ Այդ մասին էր մտածում Ռասկոլնիկովը, երբ հանցագործությունից հետո կանգնել էր կամրջի վրա, որտեղ տաքշներում, ուսանող ժամանակ, սիրում էր կանգնել և «ակնապիշ դիտել, իրոք հիասքանչ այդ համապատկերը»։ Այդտեղ, հենց այդ բոպեին նա անհաղթահարելի պտանեշ զգաց ոչ միայն իր և մարդկանց, այլև իր անցյալի ու ներկայի միջև։ Նա կտրված է մարդկանցից և ինքն իրենից։

Խառնվածքը երևում է ամեն ինչում։ Եվ առաջին հերթին նրանում, որ Ռասկոլնիկովը կարծես թե չանում էր հեռանալ ինքն իրենից։ Նրա՝ Ռասկոլնիկովի, համար դժվար էր մենակ մնալ Ռասկոլնիկովի հետ։ Այս հանգամանքը հատկապես ընդգծվում է վեպում։ Ալյոնա Իվանովնայի տուն փորձնական այցելությունից հետո «ինչ-որ բան նրան քաշեց դեպի մարդիկ»։ «Մի՞թե գա կլինի»,— սարսափով մտածեց նա, և թողնելով նստարանը, գնաց, համարյա վազեց։ Նա ուզում էր շուտ գալ դեպի տուն, սակայն տուն գնալը նրան հանկարծ խիստ զզվելի թվաց, ահա արդեն երկու ամսից ավելի էր, որ նա այդ բանի մասին էր մտածում հենց տյնտեղ, իր անկյունում, հենց այդ զարհուրելի պահարանում, և նա գընաց անորոշ ուղղությամբ»։ Ռասկոլնիկովը այնպես է շտապում աղտավել գողացածից, կարծես ազատվում է ինքն իրենից, հանցագործից։ «Ամեն ինչ վերջացած է։ Հանցանշաններ չկան»։ Բայց հանցանշաններն իր մեջ էին։ Իսկ ինքն իրեն քարի տակ պահել չէր կարող։

* * *

Ներքին երկվության, օտարացման այդ վիճակը դառնում է բարոյական սարսափելի ողբերգության աղբյուր։ Կատակոմբին ուղղած վերոհիշյալ նամակում ասվում է, որ Ռասկոլնիկովը ստիպված էր մասնել իրեն, «որպեսզի թեկուզ և կործանվի աքսորում, բայց նորից միանա մարդկանց. մարդկանցից կտրված ու բաժանված լինելու զգացումը, որ նա զգաց հանցագործություն կատարելուց անմիջապես հետո, տանջում էր նրան»։

Այս միաքն անցնում է ամբողջ վեպի միջով։ «Առանց մարդու ախր ինչպես կարելի է ապրել։ Հիմա ինչ կլինի քո վիճակը»,— սարսափում է Սոնյան։ Սակայն նրանից առաջ սարսափում է ինքը Ռասկոլնիկովը։ «Օ՜, ինչպես եմ ես հիմա ատում պառավուկին»,— տանջվում է նա։ Ռասկոլնիկովը հիմա նրան ատում էր բոլորովին այլ պատճառով, նա կարծես ծաղրել էր իրեն, արյուն թափելու իր գաղափարի համար դարձել էր խայծ։ Ուրիշ անգամ նա դրա համար «կասպաներ նրան», վաշխառու պառավի նկատմամբ Ռասկոլնիկովի այս երկրորդ՝ սպանությունից հետո առաջացած ատելությունը, նախորդից ավելի ուժեղ էր։ Ու նա երազ է տեսնում, իբրև թե մի ուրիշ անգամ սպանում է իր համար այժմ արդեն կրկնակի ատելի պառավին, իսկ պառավը ծիծաղում է նրա վրա, ձեռք առնում. «կացնի յուրաքանչյուր հարվածից հետո ննջարանից ավելի ու ավելի պարզ էին լսվում ծիծաղն ու փսփսոցը»։

Երազը միստիկա է, հիվանդություն, մինչդեռ Ռասկոլնիկովի հիվանդությունն իրողություն է, նույնքան սարսափելի, որքան երազը։

XII

Ռասկոլնիկովը համոզեց իրեն հանցագործություն կատարել և այդպես ամոթալի ձևով, այդպես ապաշնորհ կերպով խայտառակվեց։ Նա ամաչում էր իրենից։ Ամաչում էր ոչ թե նրա համար, որ չկարողացավ հանցագործ դառնալ, այլ որ չկարողացավ խեղճերի պաշտպանը դառնալ։ Աքսորականները անգամ «արհամարհում էին նրան, ծիծաղում էին նրա հանցագործության վրա»։ Ռասկոլնիկովը պատրաստ էր կրել պատիժը, անգամ ուզում էր դա, բայց որ իր վրա ծիծաղեցնե՞ն Ո՛չ, նա դա չի կարող տանել։ Որոշելով ամեն ինչ խոստովանել՝ Ռասկոլնիկովն ասում է Սոնյային. «Չեմ գնա։ Եվ ի՞նչ պիտի ասեմ. պիտի ասեմ, որ սպանեցի, իսկ փողերը վերցնել չհամարձակվեցի՞, հա՞, քարի տա՞կ թաքցրի... Բայց չէ՞ որ նրանք կծիծաղեն ինձ վրա, կասեն՝ հիմար ես, որ չես վերցրել։ Վախկոտ ես ու հիմար։ Նրանք ոչինչ, ոչինչ չեն հասկանա, Սոնյա՛, և արժանի չեն հասկանալու։ Ինչո՞ւ գնամ»։

Եվ իրոք, Ռասկոլնիկովին չհասկացան. «Անհավանական թվաց այն հանգամանքը, որ նա ոչ մի անգամ չէր բացել քսակը և նույնիսկ չդիտեր, թե դրա մեջ որքան փող կա... Երկար փորձում էին պարզել, թե ինչո՞ւ մեղադրյալը միայն այդ հանգամանքի նկատմամբ ասում է, մինչդեռ մյուս բոլոր դեպքերում կամավոր կերպով ճշգրիտ ցուցմունքներ է տալիս»։ Համանման մի դրվագ էլ նկարագրված է «Կարամազով եղբայրներում»։ Կատերինա Իվանովնան դատարանում պատմում է, թե ինչպես Դմիտրի Կարամազովը քանկացել է օգտվել նրա անելանելի վիճակից (կդաս մոտս, կտանաս հինգ հազար ռուբլին, որով կփրկես հորդ)։ Բայց երբ Կատերինան գնաց նրա մոտ, Կարամազովը ավեց նրան փողերը, խոնարհվեց ու թույլ տվեց գնալ։ Եվ ահա Սկոտոպրիգոնևսկի ընտանիքները (Դմիտրի Կարամազովին դատում էին հենց նույն Սկոտոպրիգոնևսկում) «քիչտա ծաղրով հետո խոսում էին... որ այդ պատմությունը գուցե և այնքան էլ ստույգ չի, հատկապես այնտեղ, որտեղ սպան թույլ է տվել աղջիկան գնալ՝ «իբրև թե միայն հարգանքով խոնարհվելով»։

XIII

Վաշխառու կնոջ առն կատարած փորձնական այցելության ժամանակ, պատուհանից նայելով «պայծառ լուսավորված մայր մտնող արևին», Ռասկոլնիկովը հանկարծ մտածեց. «Ուրեմն այն ժամանակ էլ արևն այսպես լուսավորելու է...»։ Ռասկոլնիկովն ուսումնասիրում էր սենյակը, հատակահում մանրամասները։ Սակայն արևի մասին միտքն («Ուրեմն այն ժամանակ էլ այսպես կլուսավորի արևը») այստեղ նաև այլ նշանակություն ունի. այդ դու կսպանես մարդուն, իսկ արևն առաջվա պես կլուսավորի։ Այստեղ արդեն Ռասկոլնիկովը նախազգում է, որ այն ժամանակ արևն իրեն չի լուսավորի, որ աշխարհը նրա համար փուլ կգա, և ինքը մարդ սպանելով՝ կկորցնի այն՝ այս աշխարհի արևը։

Ռասկոլնիկովը հիվանդագին սրությամբ զգում է, որ աշխարհում իր

համար շատ բան կփոխվի, և սիրաը սեղմվում է օտարացման ցավից. «Մի շաբաթից, մի ամսից հետո կալանավորների կառնքով այս կամրջի վրայով ինձ կտանեն որքէ տեղ, այն ժամանակ ես ինչպե՞ս կնայեմ այս շրանցքին, սա պետք է պահեմ մտքումս,— առկայծեց նրա գլխում։— Ահա մի ցուցանակ, ես այն ժամանակ ինչպե՞ս եմ կարդալու այդ տառերը։ Ահա դրա վրա գրված է «Товарищество». պետք է հիշել այդ Ա-ն, Ա տառը, ու մի ամսից հետո նայել դրան, հենց այդ Ա-ին. այն ժամանակ ես ի՞նչպես կնայեմ, ի՞նչ կզգամ և ի՞նչ կմտածեմ...»

Ա տառի հետ կապված այս անհնչան մանրամասնությունը՝ սխալ գրված բառում, այն շլուզն է, որից կառչում է Ռասկոլնիկովը՝ գիտակցելով իր երազանքի և միաժամանակ իր կյանքի խորտակումը։

Գուցե «Товарищество» բառը պատահական չի՞ վերցված։ Գուցե ինչ-որ տեղ, ենթագիտակցության մեջ շատ թույլ, հազիվհազ առկայծում է այդ բառի նշանակությունը, բայց այնքան թույլ, որ անբացատրելի է։

Եվ մի մանրամասնություն։ Այն տրված է վեպի սկզբում և որոշ խմաստով համանման է վերջին, եզրափակող գլխում Ա տառի մասին մերթերված հատվածին։

Կացինը թևատակին (կացինը կախված է վերարկուի ներսի կողմից) Ռասկոլնիկովը գնում է սպանելու պառավին։ Ճանապարհին նրան գրաստնցնում են բոլորովին կողմնակի մտքեր՝ Յուսուպովյան այգին, շատրվանների կառուցումը, Ամառային այգին և Մարսյան դաշտը, այգիների պակասը քաղաքների առավել խիտ բնակեցված մասերում...

Մանրամասները զուգահեռ են.

ա) Ռասկոլնիկովը գնում է սպանելու և մտածում է կողմնակի բաների մասին։

բ) Ռասկոլնիկովը գնում է խոստովանելու իր սպանությունը և մտածում է կողմնակի բանի մասին։

Ե՛վ առաջին, և՛ երկրորդ դեպքում նա ոչ թե գնում է, այլ տանում է իրեն։ Ռասկոլնիկովի խորհրդածություններն այգիների և քաղաքների առավել խիտ բնակեցված շրջանների մասին զարմացնում են նրան։ Նա զարմանում է իր վրա, իր խոհերի առարկայի վրա, բայց անմիջապես էլ բացատրում է իրեն. «Հավանորեն նրանք, ում մահապատժի են տանում, մտքերով կառչում են բոլոր առարկաներից, որոնք հանդիպում են ճանապարհին»։

* * *

Ի դեպ այս քնարոշ մանրամասնությունը հետաքրքիր է նաև նրանով, որ Ռասկոլնիկովը գնում էր սպանելու (և իրոք սպանեց՝ և ոչ միայն մի մարդու). իսկ ինչպես հետո պարզվեց, նա մահապատժի էր գնում, այսպես ասած, ինքն իրեն կատարյալ էր տանում։ Հետո նա կտա Սոնյային. «Մի՞թե այդպես են գնում սպանելու, ինչպես որ ես այն ժամանակ գնացի։ Ես քեզ երբէք կպատմեմ, թե ինչպես գնացի... Մի՞թե ես պառավին սպանեցի։ Ես ինձ սպանեցի և ոչ թե պառավին։

Իհարկե, պատահականորեն չի հիշում Ռասկոլնիկովը, թե ինչպես է

Նա այն ժամանակ գնացել, նա կարծես վերհիշել է տալիս մեզ վերը նշված բառերը. «Հավանորեն նրանք, ում մահապարժի են ասում...», նել նրանք, ովքեր իրենք են մահապարժի գնում։ Աննա Կարենինան (նրա մեջ արդեն հասունացել էր ինքնասպանության միտքը) գնում է կայարան։ Ճանապարհին նրա գիտակցությունն քնկալում է իր համար կործանվող աշխարհից ինչ-որ մանրամասներ, գիտակցությունը համառորեն կառչում է աշխարհից, աշխարհի մնացորդներից. «Այո, ինչի մասին էի ես վերջում այդքան լավ մտածում,— աշխատում էր հիշել նա.— Տյուակինի՞ coiffeur։ Ոչ, այն չէ»։

* * *

Ի տարբերություն Ռասկոլնիկովի՝ Կարենինան ինքնավերլուծությամբ չի զբաղվում, այդպիսի մանրամասնությամբ չի փորձում բացատրել իր արարքները։ Ռասկոլնիկովը բացատրում է, վերլուծում, նա իր էությամբ այդպիսին է։ Դոստոևսկուն ընդհանրապես գրավում էր վերլուծությունն ու ինքնավերլուծությունը։ Հատկապես դա ավելի ուժեղ է արտահայտվել «Ոճիր և պատիժում»։ Վեպի սևագրություններում այդպես էլ ասված է. «Վեր հանել բոլոր հարցերը։ Վեպը հարուստ չէ դեպքերով։ Խոսքն ավելի շատ ապրումների, խղճի ասելիքների, մարդկային տառապանքի մասին է՝ մանրամասն, երկակի բացատրություններով, հոգեբանական վերլուծություններով։ Թերևս այդ է պատճառը, որ այդքան հեշտ և այդքան դժվար է գրվում այս վեպի մասին։ Դոստոևսկին կարծես ամեն ինչ ասել է՝ ապագա հետազոտողների, քննադատների ու գրականագետների փոխարեն էլ է ասել։ «Ոճիր և պատիժ» վեպը իրագործություններով հարուստ չէ, այլուծեն զարգանում է՝ հենվելով հոգեբանության, վերլուծության և ինքնավերլուծության վրա։ Այստեղից էլ հեղինակին դիմելու (ավելի հաճախ, քան դա սովորաբար լինում է) հրատապ անհրաժեշտությունը. նա կարծես կանխել է վեպի վերլուծությունը։

XIV

Ավգուստա Ռոմանովնան ասում է եղբորը՝ Ռոդիոն Ռասկոլնիկովին. «Եթե ես որևէ մեկին կործանեմ, այդ մեկը հենց ես ինքս կլինեմ։ Ես դեռ ոչ ոքի չեմ մորթել... Ի՞նչ ես այդպես ինձ նայում։ Ինչո՞ւ այդպես զուսնասվիցիր։ Ավգուստա Ռոմանովնան ուզում է ասել և ասում է, որ որոշելով ամուսնանալ Պյոտր Պետրովիչ Լուժինի հետ, նա ոչ մի վատ բան չի անում, որ ազգյուն իր նկատմամբ անարդարացի է։

Սակայն բառն, ինչպես հայտնի է, բազմիմաստ է, և այս կամ այն նշանակությունը (կամ միանգամից մի քանի իմաստները) արտահայտվում է կոնտեքստում։ Դա էլ հենց որոշում է բառի իմաստաբանական սահմանները։ Գեղարվեստական ստեղծագործության մեջ խոսքը կարող է երկակի հասկացվել.

ա) ավյալ նախադասության կոնտեքստում, ինչպես վերը տեսանք,

բ) ամբողջ ստեղծագործության կոնտեքստում։

Ավդոտյա Ռոմանովնան ասում է եղբորը՝ Ռոդիոն Ռասկոլնիկովին. «Ես դեռ ոչ մեկին չեմ մորթել»։ Այս խոսքերն ամբողջ կոնտեքստում այսպիսի նշանակություն ունեն. ես դեռ չեմ մորթել, իսկ դու, եղբայրս, մորթել ես, սպանել ու թալանել ես։ Այս մյուս միտքը հայանի չէ Ավդոտյա Ռոմանովնային, նա չի հասկանում, թե ինչու է եղբայրն այդպես նայում նրան, ինչու է այդպես գունատվել։

Մեզ հետաքրքրող տեսանկյունից ուշադրավ է հետևյալ հատվածը։

Սվիդրիգայլով.

«— Երբ ես ներս մտա ու տեսա, որ դուք պառկած եք փակ աչքերով ու քնած եք ձևանում, իսկույն ինքս ինձ ասացի՝ «սա հենց նա է, որ կա»։

— Այսինքն ո՞վ. ինչի՞ մասին եք խոսում,— գոչեց Ռասկոլնիկովը։

— Ինչի մասի՞ն։ Ճիշտն ասած, չգիտեմ...— սարգամտությամբ ու մի տեսակ շշկլվելով փնթփնթաց Սվիդրիգայլովը։

Իսկ Ռասկոլնիկովը գիտի խոսքն ինչի մասին է՝ սպանության մասին է։ Սվիդրիգայլովը «ճանաչեց» մարդասպանին։

Գործի էությունը հայտնի է միայն Ռասկոլնիկովին և մեկ էլ նրա դաղտնիքներին հաղորդակից ընթերցողին։ Եվ միայն նրանք են լիովին հասկանում տեքստը։ Մարդասպանը հաղորդակցվում է մարդկանց հետ, որոնցից ոմանք չգիտեն և չեն էլ կասկածում, որ նա մարդասպան է, մյուսները, չնայած կասկածում են, բայց չգիտեն, որ նա սպանել է, և միայն ամբողջ վեպի կոնտեքստում են դրսևորվում բառի կարևոր, կողմնակի հայացքից թաքնված իմաստաբանական նրբությունները։ Միաչ քննիչ Պորֆիրի Պետրովիչն է գլխի ընկնում տեքստի երկրորդ պլանի (իմա՝ կոնտեքստի) մասին։ Նա ասում է Ռասկոլնիկովին. «Ձեր յուրաքանչյուր բառը կրկնապատիկ իմաստ ունի, ասես դրա տակ մի ուրիշ բառ էլ է թաքնված»։

* * *

Յուրաքանչյուր բառի ետևում մի այլ բառ կա։ Բացահայտի ետևում թաքնված է գաղտնին, ճակատագրականը, որը և շարադրանքին տալիս է առանձնահատուկ խորություն և շարժում։ Մայրն ասում է որդուն. «Այն ամենը, ինչ որ դու անում ես, հիանալի է»՝ չիմանալով ինչ սարսափելի իմաստ կա իր խոսքերում։ «Այդ ինչպես դուք, այնուամենայնիվ, արյունոտվեցիք,— ասում են Ռասկոլնիկովին, որն օգնում էր տեղափոխել կառքի տակ ցախցախված Մարմելադովին։ «Այո, արյունոտվել եմ... ամբողջովին արյունոտվել»,— պատասխանում է Ռասկոլնիկովը։ Նա ուրիշ, իր թափած արյան մասին էր ասում։ Ահա նա զառանցում է, նրան թվում է, թե ծեծում են տանտիրուհուն. «Արյունը... ի՞նչ արյուն...— սփրթնելով ու դեպի պատը քաշվելով, փնթփնթաց Ռասկոլնիկովը»։

Առանց ետին մտքի ասված խոսքերում իսկ Ռասկոլնիկովը իրեն մերկացնող իմաստ է տեսնում։ Բառերը հետապնդում են Ռասկոլնիկովին։

Բառերը կարծես վերջի վրա լցված աղ լինեն։ Ռազումիխինը հենց այնպես Ռասկոլնիկովին ասում է քննիչ Պորֆիրի Պետրովիչի մասին. «Ինչ գործը գիտե, գիտե... Անցյալ տարի նա սպանության մի գործ պարզեց, որի համարյա բոլոր հետքերը կորած էին։ Շատ, շատ, շատ է ցանկանում քեզ հետ ծանոթանալ»։

* * *

Ռասկոլնիկովը դեռ չի խոստովանել, նա դեռ դիմանում է, դեռ հայտնի չէ, որ մարդասպանն ինքն է, բայց բառերը (հիմնականում հարբած մարդկանց ասած բառերը, որոնց համար Ռասկոլնիկովը կասկածից դուրս է) մերկացնում են նրան որպես մարդասպանի։ Իրականությունը թշնամաբար է արամադրված նրա հանդեպ։ Խոսքն արտացոլում է իրականությունը։ Իրականության հետ ունեցած նրա անհամաձայնությունը միստիկական, հրեշավոր ձևեր է ստանում։ Հայտնվում է հանկարծ քաղքենին. «գետնի տակի մարդը», հարցնում է դռնապանին՝ արդյոք որտեղ է ապրում Ռասկոլնիկովը։ Ռասկոլնիկովը հասնում է նրան, փորձում է խոսել հետը։ Մոայլ անծանոթը զրույցի չի բռնվում։ «Մարդասպան»,— ասում է նա Ռասկոլնիկովին և կրկնում՝ «Դու մարդասպան ես։ Գետնի տակի մարդը Ռասկոլնիկովի համար թշնամական իրականության մարմնավորումն է։

Պատահականորեն ասված բառերն ու դեպքերը Ռասկոլնիկովին պահում են հոգեկան սարսափելի լարվածության մեջ, մշտական տագնապման սահմանագծում։

«Հենց նոր էր ուզում բանալ դուռը, երբ այն ինքը բացվեց։ Նա ցնցվեց ու ընկրկեց։ Դուռը բացվեց դանդաղ ու կամացուկ, ու հանկարծ երևաց երեկվա մարդու կերպարանքը, ասես գետնի տակից դուրս եկավ»։

Ամեն ինչ, ամբողջ կյանքը Ռասկոլնիկովի դեմ էր դուրս եկել։ Ամեն ինչում նա հայտնաբերում է գաղտնի, իր համար թշնամական իմաստ՝ երբեմն պարուրված միստիկական ձևերով, որոնք ի վիճակի են մարդուն հասցնելու հոգեկան ցնցման ծայրահեղ սահմանին։ Ռասկոլնիկովն ապրում է համընդհանուր դավադրության մթնոլորտում։

Ապագա կյանքի, հավիտենականության մասին Սվիդրիգայլովն ասում է նրան. «Երևակայեցեք, որ հանկարծ դրա փոխարեն այնտեղ կլինի գյուղական բաղնիքի նման մի փոքրիկ, մրակալած սենյակ, դրա լոյոր անկյուններում սարդեր, և ահա համակ հավերժությունը»։ Այն ամենը, ինչ Սվիդրիգայլովն ասում է ապագա կյանքի մասին, Ռասկոլնիկովի նեղիկ կյանքի պատկերն է՝ նրա հոգին դեռուղեն է նետվում փոքրիկ սենյակում, որտեղ միայն սարդեր կան։ «Երեկ մի մարդ ինձ ասաց (Սվիդրիգայլովը.— Լ. Մ.), թե մարդուն օգ է հարկավոր, օդ, օդ։

Ես ուզում եմ հիմա դնալ նրա մոտ և իմանալ, թե դրանով ինչ է ուզում ասել»։ Նա խեղդվում է իր սենյակում։ Միակ ելքը պատիժը կրելը և ազատություն ձեռք բերելն է։ Այդ մասին Ռասկոլնիկովին ասում է Պոր-

Ֆիրի Պետրովիչը՝ կրկնելով Սվիդրիգայլովի խոսքերը՝ «Հիմա ձեզ օդ է հարկավոր, օդ, օդ»։

Սակայն օդն ու հանցագործությունը անհամատեղելի երևույթներ են։ Նպատակը երբեք չի արդարացրել միջոցը, եթե այդ միջոցը հանցագործությունն է։ Մինչդեռ ինչքան մարդիկ (երբեմն նույնիսկ ժողովուրդներ) ողբերգականորեն սխալվել են այդ հարցում՝ ենթադրելով, թե հանցագործությունը թույլատրելի է, միայն թե նպատակը լավ լինի։ Երբեմն էլ վկայակոչել են ազգային շահերը։

«Բարի» հանցագործությունը նույն հանցագործությունն է։

* * *

«Հայոց դրերն իրենց ուրվագծերով մարդու մարմնի ապաքինվող վերքի հետքեր են հիշեցնում»— մի առիթով ասել է վրաց բանաստեղծ Ցրիպոն Խալվաշին։

Հայ գրողները, ինչպես և հայ թարգմանիչները, Մեսրոպ Մաշտոցի ժամանակներից ի վեր արել են ամեն ինչ, հայրենիքի մարմնի վերքերը ապաքինելու համար։ Նրանք գրում էին հայոց այրուրենի տառերը՝ ինչպես կարն են դնում վերքի վրա։

Դոստոևսկու վեպերի հայ թարգմանիչները («Ոճիր և պատիժը» թարգմանել է Հ. Մազմանյանը) շարունակում են սվանդույթը։

Հազար տարի է անցել այն ժամանակից, երբ Գրիգոր Նարեկացին գրել է. «Կցորդակի՛ց լեր բժշկապէս, և մի՛ ի խուլգ ընտրութեան կոչէր դատավորարար»։

Ֆեոդոր Դոստոևսկին քննության է կանչում որպես բժիշկ։ Նա ցավակցում է։ Նա նախազգուշացնում է։

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս	5
Երկրորդ մաս	111
Երրորդ մաս	239
Չորրորդ մաս	344
Հինգերորդ մաս	442
Վեցերորդ մաս	539
Հանցագործությունը և մարդը . . .	679

ՖԵՈԴՈՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԴՈՍՏՈԵՎՍԿԻ
ՈՃԻՐ ԵՒ ՊԱՏԻԺ
Վ Ե Պ

ДОСТОЕВСКИЙ ФЕДОР МИХАЙЛОВИЧ

Преступление и наказание
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван. 1980

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ա.Ն. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ն. Գ. Գասոյան

ИБ № 2544.

Հանձնված է շարվածքի 3. 05. 79 թ.։
Ստորագրված է տպագրության 2. 06. 80 թ.։
Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 1 Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 36.96 պայմ. տպագր. մամ., 32,85 հրատ. մամ։
Գրատվեր 101։ Տպաքանակ՝ 50 000։ Գինը՝ 3 ռ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им А. Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.

Die Gesetze der Musik

Dr. Hugo Riemann